32 զատին վրայ կը կաղար : Անոր համար Իսրայէլի որդիքը զատին վրայի ‖ թմրած ջիղը" չեն ուտեր մինչև այսօր . ինչու որ Յակոբին զատին § թմրած ջիղին" դպաւ :

Ն · Ք · ՉՓ · 1739

‡ Յ՝ Աստուծոյ երեսը :
- Գ Լ · Ժ Զ · 13 : Եր · Խ · 11 : Լ Ղ · 20 : Բ Օր · Ե · 24 : Դատ · Գ · 22 : Ժ Գ · 22 : Ես · Գ · 5 :
‖ Կ՝ ամբ. լայիւր
§ Կ՝ ամբ. լայինն

ԳԼ · ԼԲ

1 Յակոբ ու Եսաւ մէկզմէկու հանդիպելով իրարու սէր կը ցուցընեն : 17 Յակոբ Սոկոթովթ կ'երթայ : 18 Սաղեմի մէջ դաշտ մը ծախու առնելով՝ հոն սեղան մը կը շինէ , ու զանիկայ Էլէլոհէ Իսրայէլ կ'անուանէ :

1 Եւ Յակոբ իր աչքերը վեր վերցուց՝ ու նայեցաւ , և ահա Եսաւ կու գար՝ ու անոր հետը չորս հարիւր հոգի : և իր զաւակները Լիայինն՝ ու Ռաքելինն՝ ու երկու
2 աղախիններուն բաժնեց : Եւ աղախինները իրենց զաւակներովը առջևը դրաւ , և Լիան իր զաւակներովը ետևը , և Ռաքելը ու Յովսէփը
3 ետևէն : Եւ ինքը անոնց առջևը անցաւ , ու մինչև իր եղբօրը մօտենալուն , եօթն անգամ խոնարհուեցաւ անոր երեսը կը կակուղցնեմ ,
4 թիւն ըրաւ : Ու Եսաւ զանիկայ դիմաւորելու վազեց , ու գրկեց զանիկայ , և անոր պարանոցին վրայ ինկաւ , ու համբուրեց . և լացին :
5 Ու ան իր աչքերը վեր վերցուց , ու տեսաւ կիներն ու զաւակները , և ըսաւ . Անոնք քու կին ինչ են . և անիկայ ըսաւ . Աստուծոյ քու ծառայիդ պարգևած զաւակներն
6 են : Ան ատենը աղախինները ու անոնց զաւակները մօտեցան , ու
7 խոնարհուեցան թիւն ըրին : Եւ Լիան ալ ու իր զաւակները մօտեցան , ու խոնարհուեցան թիւն ըրին . և ետքը Յովսէփ ու Ռաքել մօտեցան , ու
8 խոնարհուեցան թիւն ըրին : Ու ան ըսաւ . Ա՛ս քու ղբօրոր խումբդ ինչ պիտի ըլլայ , որուն ես պատահեցայ . և Յակոբ ըսաւ . Իմ տիրոջս առջևը
9 շնորհք գտնելու համար է : Ու Եսաւ ըսաւ . Ես շատ ունիմ՝ եղբայր
10 իմ , քու կինդ քեզի ըլլայ : Եւ Յակոբ ըսաւ . Ձէ , կ'աղաչեմ քեզի՝ թէ որ հիմա քու առջևդ շնորհք գտայ , իմ ձեռքէս ընծաս ընդունէ . ինչու որ Ես քու երեսդ՝ Աստուծոյ երեսը տեսնելու պէս
11 տեսայ , և ինծի հաճեցար : Ընդունէ քու ընծադ որ քեզի բերուած է , քանզի Աստուած ողորմեցաւ ինծի , և քանզի Ես ամէն բան ունիմ . և զանիկայ անոր , ու
12 ան ալ ընդունեց : Եւ անիկայ ը-

- Գ Լ · ԼԲ · 6 :

Բ Գ Լ · Ժ Զ · 2 : Խր · 6 : Խգ · 26 :
‡ Գ Լ · ԼԲ · 28 :

Ա Գ Լ · Խ Ե · 14 , 15 :

Ե Գ Լ · Խ · 9 : Աղ · Ա Խ · 3 : Ես · Ը · 18 :

Ղ Գ Լ · ԼԲ · 16 :

Ի Գ Լ · ԼԲ · 5 :

Ը Գ Լ · Խգ · 3 : Բ Թագ · Գ · 13 : Ժգ · 24 , 28 , 32 : Մատ · Ժը · 10 :
§ Եբր · որն նշանակէ նաև Դատ · Ա · 15 : Ա Թագ · Խ · 27 : Լ · 26 : Գ Թագ · Ե · 15 :
Ի Փիլ · Գ · 18 : Բ Գ Թագ · Ե · 23 :

սաւ . Ելևնը երթանք . ու ես
13 քու առջևդ կ'երթամ : Եւ Ցակոբ
ըսաւ անոր . Իմ տէրս գիտէ որ
զաւակները մատղաշ են , ու հետս
եղած հօտերը ու արջառները ձա-
դերով են . և թէ որ մէկ օր մը ըր-
նութեամբ վարեն զանոնք , բոլոր
14 հօտերը պիտի մեռնին : Ուրեմն
թող իմ տէրս իր ծառային առ-
ջևը անցնի . ու ես կամաց կամաց
առջևս եղած անասուններուն ոտ-
քովը ու տղաքներուն ուժովը կ'եր-
թամ , մինչև որ իմ տիրոջս Էսաւի
15 հասնիմ : Եւ Եսաւ ըսաւ . Ուրդ՝
իմ հետս եղող ժողովուրդէն քու
քովդ ձգեմ . և անիկայ ըսաւ .
Ի՞նչ պէտք է . Լթող իմ տիրոջս
16 շնորհք գտնեմ : Ա,յսպէս
Եսաւ այն օրը իր ճամբան դարձաւ
դէպ 'ի Սէիր :
17 Եւ Ցակոբ Սոկքովթ չուեց , ու
իրեն տուն մը շինեց , և իր հօտե-
րուն փարախներ շինեց . անոր հա-
մար ան տեղին անունը *Սոկքովթ
ըսուեցաւ :
18 Եւ Ցակոբ Միջագետքէն դարձած
ատենը՝ †Սիւքեմացւոց Սաղեմ
քաղաքը եկաւ , որ Քանանու երկ-
րին մէջն է , և քաղաքին առջին
19 բանակեցաւ : Եւ իր վրանը կանգ-
նած հարտին կալուածքը Սիւքեմին
հօրը Եմովրին որդիներէն ծախու
առաւ †Հարիւր կտոր ոսկի" :
20 Եւ հոն սեղան մը շինեց , ու Յանուն
‡Էլէլոհէ Իսրայէլ" դրաւ :

ԳԼ · Լ Դ

1 Դինա Սիւքեմէն կը պղծուի : 4 Սիւքեմ կ'ազատէ որ իրեն կնիկ ըլլալու տան զանիկայ : 13 Ցակոբին որդիքը Սիւքեմացիներուն թլփատուիլ կ'առաջարկեն : 20 Եմովր և Սիւքեմ իրենց քաղաքացիները թլփատուելու կը հա-մոզեն : 25 Անոնց թլփատեցնէն ետքը՝ Ցակոբին որդիքը զանոնք կը կոտորեն , 27 ու անոնց քաղաքը կը կողոպտեն : 30 Ցակոբ կը յանդիմանէ Շմաւոնը ու Ղևին :

1 Եւ Լիայէն Ցակոբին ծնած աղ-
ջիկը *Դինա՝ ան երկրին աղ-
2 ջիկները †տեսնելու ելաւ : Ու
ան երկրին իշխանը Խևացի Եմով-
րին որդին Սիւքեմ †տեսաւ զա-
նիկայ , Ե և առաւ ու պառկեցաւ
3 անոր հետ , ու Ենպղծեց զա-
նիկայ : Եւ անոր հոգին Ցակո-
բին Դինա աղջկանը կ,յարեցաւ . ու
սիրեց աղջիկը , և Հաղջիկին ‖քաղց-
4 րութեամբ խօսեցաւ : Ու Սիւքեմ
Ենիր հօրը Եմովրին զրուցեց՝ ըսե-
լով . Ան աղջիկը ինծի կնիկ առ :
5 Եւ Ցակոբ լսեց որ անիկայ իր Դի-
նա աղջիկը պղծեց . բայց իր որդի-
ները իր հօտերուն հետ դաշտն էին .
ու մինչև անոնց գալը Ցակոբ Հլուռ
կեցաւ :
6 Եւ Սիւքեմին հայրը Եմովր դնաց

ՆՀ · ԳԲ · ԽԲ 1739

ԷԾԼ · ԼԲ · 3 ·

ԼԾԼ · ԼԳ · 11 · ԽԷ · 25 · Հռութ · Բ · 13 ·

Ե Ցես . Ժգ · 27 · Դատ . Բ · 5 · Սաղ · Կ · 6 ·

*Ցի՝ փարախներ ·

Ե Ցես . Իգ · 1 · Դատ · Թ · 1 ·

‖ Ցօհ · գ · 23 · Հ Ցես . Իգ · 32 · Ցօհ · գ · 5 ·

† Կամ՝ հարիւր գառնուկի ·

Ե ԾԼ · Լ · 7 · ‡ Ցի՝ Աստուած Իսրայէլի Աստուածը ·

ԽԲ 1732

– ԾԼ · Լ · 21 · Բ Տիտ · Բ · 5 ·

† ԾԼ · գ · 2 · Դատ . Ժգ · 1 ·

* ԾԼ · Ի · 2 · Ե Բ Օր · Իբ · 29 · Ղ Ցես Ես . Ի · 2 · Ովս · Բ · 14 · ‖ Եբր՝ սրտին Ե Դատ . Ժգ · 2 ·

Ե ՍԹագ . Ժ · 27 · ԲԹագ · Ժգ · 22 ·

Ցակոբին , որ անոր հետ խօսի :
ՆՀ · ԳԲ · ԽԲ 1732
7 Եւ Ցակոբին որդիները լսածնուն
պէս՝ դաշտէն եկան . և մարդիկը
դժուարեցան , ու Ընիստ բարկա-
ցան . ինչու որ Ցակոբին աղջկանը
հետ պառկելով՝ Էսրայէլին մէջ
անզգամութիւն ըրաւ , Ետր ասանկ
8 բլլալու չէր : Ու Եմովր խօսեցաւ
անոնց հետ՝ ըսելով . Իմ Սիւքեմ
որդւոյս հոգին ձեր աղջկանը սիրա-
հարեցաւ . կ'աղաչեմ ձեզի , զանի-
9 կայ անոր կնութեան տուէք . Եւ
մեզի հետ խնամութիւն ըրէք . ձեր
աղջիկները մեզի տուէք , ու մեր
10 աղջիկները ձեզի առէք . Եւ մեզի
հետ բնակեցէք , ու Լաս երկիրը
ձեր առջևը պիտի բլլայ . անոր մէջ
բնակեցէք Ե ու առուտուր ըրէք , և
Ե անոր մէջ կալուածքներ ստացէք .
11 Ու Սիւքեմ ըսաւ աղջկանը հօրը ,
ու անոր եղբայրներուն . Թող ձեր
առջևը շնորհք գտնեմ , և ինչ որ
12 ինծի ըսէք , կու տամ : Խնդրե-
ցէք ինծմէ խիստ շատ ԵՒօժիտ ու
ընծայ , ու ինծի ըսածնուդ պէս
պիտի տամ . միայն թէ աղջիկը
ինծի տուէք՝ կնիկ բլլալու համար :
13 Եւ Ցակոբին որդիքը Ետխաբէու-
թեամբ պատասխան տուին Սիւ-
քեմին՝ ու անոր հօրը Եմովրին , ու
ըսին , (քանզի անիկայ իրենց Դի-
14 նա քոյրը պղծեց ,) Եւ ըսին ա-
նոնց . Մենք աս բանը չենք կրնար
ընել , որ մեր քոյրը անթլփատ մար-
դու մը տանք . ինչու որ Ե ատ մեզի
15 ամօթ բան մըն է . Բայց միայն ա-
սով կը հաճինք ձեզի , թէ որ ձեզ-
մէ ամէն արուն թլփատուելով՝ մե-
16 զի պէս բլլաք , Ըն առնենք մեր աղ-
ջիկները ձեզի կու տանք , և ձեր
աղջիկները մեզի կ'առնենք , ու ձե-
զի հետ կը բնակինք , ու ձեզի հետ
17 մէկ ժողովուրդ կ'բլլանք : Բայց
թէ որ մեզի մտիկ չընելով՝ չթլփա-
տուիք , ան ատենը մենք մեր աղ-
18 ջիկը կ'առնենք ու կ'երթանք : Եւ
անոնց խօսքը հաճելի եղաւ Եմով-
րին , ու Եմովրի որդւոյն Սիւքե-
19 մին : Եւ ան պատանին աս բանը
ընելու չուշցաւ . քանզի Ցակոբին
աղջկանը զմայլած էր . և իր հօրը
տանը մէջ եղողներուն Համենէն
պատուականն էր անիկայ :
ԷՍՄՆ · գ · 9 ·
20 Ու Եմովր և անոր որդին Սիւքեմ
իրենց քաղաքին դուռը եկան , ու
իրենց քաղաքին մարդոցը հետ խօ-
21 սեցան՝ ըսելով . Ան մարդիկը խա-
ղաղութեամբ կը վարուին մեզի
հետ . ուստի թող Ե երկրին մէջ
բնակին , ու անոր մէջ առուտուր
ընեն . ինչու որ ահա երկիրը ընդ-
արձակ է անոնց առջևը . Եայ՝
անոնց աղջիկները մեզի կնիկներ

ն · ք · զբ · Խրբ 1732

առնենք , և մեր աղջիկները անոնց
22 տանք ։ Բայց ան մարդիկը մեզի հետ բնակելու , մէկ ժողովուրդ ըլլալու համար միայն ասոր բանով կը հաճին մեզի , որ անոնց թլփատուելուն պէս՝ մեր ամէն արուն թլփա-
23 տուի ։ Անոնց հօտերը , ու անոնց ստացուածքը , և ամէն անասունները մերը չե՞ն ըլլար , միայն թէ մենք անոնց հաճինք , որ մեզի հետ
24 բնակին ։ Ու Եմովրին և անոր որդւոյն Սիւքեմին մտիկ ըրին ան ամէնը՝ որ անոր դրաղաքին դռնէն դուրս կ'ելլէին . և ամէն արու՝ որ անոր քաղաքին դռնէն դուրս կ'ելլէր , թլփատուեցաւ ։

25 Ու եղաւ որ երրորդ օրը երբոր անոնք ցաւին մէջն էին , Յակոբին երկու որդիքը՝ Շմաւոն ու Ղեւի՝ Դինային եղբայրները՝ ամէն մէկը իր սուրը առաւ , և համարձակ քաղաքը մտան , ու սպաննեցին ամէն
26 արուն . Ու Եմովրը և անոր որդին Սիւքեմը սուրի բերնէ անցուցին . և Սիւքեմին տունէն առին
27 Դինան , ու դուրս ելան ։ Եւ Յակոբին որդիքը սպաննուածնեըրուն վրայ եկան , ու քաղաքը կողոպտեցին , իրենց քոյրը պղծել-
28 նուն համար . Անոնց հօտերը , ու անոնց արջառները , ու էշերը , և քաղաքին մէջ եղածը , ու դաշ-
29 տին մէջ եղածը առին . Եւ անոնց բոլոր ստացուածքը ու անոնց բոլոր տղաքները ու կիներն ալ գերի առին , և տուներուն մէջ բոլոր գտնուածը
30 կողոպտեցին ։ Եւ Յակոբ ըսաւ Շմաւոնին ու Ղեւիին . Ձիս ինծի երկրին բնակչացը՝ Քանանացւոց ու Փերեզացւոց մէջը զիս ատելի ընելով՝ զիս փորձանքի մէջ ձգեցիք . Ես ինծի հետ քիչ մարդիկ ըլլալով՝ անոնք իմ վրաս պիտի հաւաքուին , ու զիս պիտի զարնեն , և ես ու իմ տունս
31 պիտի կորսուինք ։ Ու անոնք ըսին . Հապա մեր քոյրը բոզի պէս գործածել պէ՞տք էր անոր ։

ԳԼ · ԼԸ

1 Աստուած Յակոբին Բեթէլ կը խրկէ ։ 2 Յակոբ իր տունը կուռքերէն կը մաքրէ · 6 Բեթէլի մէջ սեղան կը շինէ ։ 8 Դեբորայի մահը ։ 9 Աստուած Բեթէլի մէջ կ'օրհնէ Յակոբը ։ 16 Ռաքէլ՝ Բենիամինը կը ծնանի , ու Եփրաթային ճամբան կը մեռնի ։ 22 Ռուբէն՝ Բաղղային հետ կը նշէ ։ 23 Յակոբի որդիքը ։ 27 Յակոբ Քերբեն կու գայ իր Իսահակ հօրը ։ 28 Իսահակին կենացը օրերը , մահը , ու թաղուիլը ։

1 Ու Աստուած ըսաւ Յակոբին . Ելի՛ վեր դէպ ի Բեթէլ դնա , ու հոն բնակէ , և հոն սեղան մը շինէ Աստուծոյ՝ որ քեզի երբեցաւ , երբոր եղբօրդ Եսաւին երես-
2 սէն փախած առնիդ ։ Եւ Յակոբ

ն · ք · զբ · Խրբ 1732

իր տնեցիներուն ու բոլոր իրեն հետ եղողներուն ըսաւ . Ձեր մէջը եղող օտար աստուածները վերցուցէք , ու սրբուեցէք , և հանդերձները
3 փոխեցէք . Ու ելլելով դէպ ի Բեթէլ վեր երթանք . ու հոն սեղան մը չինեմ Աստուծոյ , որ իմ նեղութեանս օրը ինծի լսեց , ու իմ գացած ճամբուս մէջ ինծի հետ էր ։
4 Եւ իրենց ձեռքը եղած բոլոր օտար աստուածները , ու իրենց ականջները եղած օղերը Յակոբին տուին . և Յակոբ թաղեց զանոնք Սիւքեմի
5 մօտ եղած բլուտին տակը ։ Ու ճամբայ ելան . և իրենց բոլորտիքը եղած քաղաքներուն վրայ Աստուծոյ վախը ինկաւ , ու Յակոբին
6 որդւոցը ետեւէն չհնկան ։ Եւ Յակոբ Քանանու երկրին մէջ եղող Լուզը՝ այսինքն Բեթէլը եկաւ , ինքը ու իր հետ եղող բոլոր ժո-
7 ղովուրդը . Եւ հոն սեղան մը շինեց , ու ան տեղին անունը Էլ Բեթէլ դրաւ . քանզի իր եղբօրը երեսէն փախածատեն Աստուած հոն իրեն երեւցեր էր ։
8 Եւ Ռեբեկային դայեակը Դեբորան մեռաւ , ու Բեթելին վարի կողմը կաղնիին տակը թաղուեցաւ . ու անոր անունը Ալօնպախութ դրուեցաւ ։
9 Եւ Աստուած նորէն երեւցաւ Յակոբին՝ երբոր անիկայ Միջագետէն դարձեր էր , ու օրհնեց զանի-
10 կայ ։ Եւ Աստուած ըսաւ անոր . Քու անունդ Յակոբ է . յետ մէյմին այ քու անունդ Յակոբ չըսուի , հապա Իսրայէլ ըլլայ քու անունդ . ու անոր անունը Իսրայէլ դրաւ ։
11 Եւ Աստուած ըսաւ անոր . Ես Ամենակարող Աստուած եմ . աճիս ու շատնաս . ազգ՝ ու ազգերու բազմութիւն ըլլայ , և քու
12 երանքէդ թագաւորներ ելլեն ։ Ու ան երկիրը որ Աբրահամին և Իսահակին տուի , քեզի պիտի տամ . ու քեզմէ ետքը քու սերունդիդ
13 պիտի տամ ան երկիրը ։ Եւ Աստուած ան տեղը՝ ուր որ անոր հետ խօսեցաւ , անոր քովէն վեր ելաւ ։
14 Ու Յակոբ աբարէ արձան մը կանգնեց ան տեղը՝ ուր որ Աստուած իր հետ խօսեցաւ . և անոր վրան թափելու նուէր մատուց , ու անոր
15 վրան ձէթ թափեց ։ Եւ Յակոբ ան տեղին անունը՝ ուր որ Աստուած իր հետ խօսեցաւ , Բեթէլ դրաւ ։
16 Ու Բեթէլէն ճամբայ ելան , ու դեռ Եփրաթա չհկած քիչ մը ճամբայ մնալով՝ Ռաքէլ ծնաւ , և ծնանած ատենը շատ դժուարութիւն
17 քաշեց ։ Ու եղաւ որ երբ իր ծնանելուն շատ դժուարութիւն կը

Գլ · իգ · 10։

Գլ · խթ · 5 , 6 , 7 ։

Եղ · ե · 21 ։ ա Թագ · ժգ · 4 ։

Եբր · գարշահար

Ե Օր · գ · 27 ։ Սաղ · ճե · 12 ։

Գլ · իբ · 19 ։

Բ Գլ · իբ · 13 ։

Գլ · իե · 43 ։

ն · ք · զբ · Խրբ 1732

Գլ · ժբ · 19 ։ ճկա · իդ · 15 ։

Ե Գլ · լա · 1934 , ճկա · իդ · 2 , 23 · աթագ · է · 3 ։

Եղ · ժթ · 10 ։

Ե Գլ · լբ · 7 , 24 ։ Սաղ · ճէ · 6 ։

Ը Գլ · իբ · 20 ։ լա · 3 , 42 ։

Բ Ովս · բ · 18 ։

Ա ճկա · իդ · 26 ։ Դատ · թ · 6 ։

Ե Եղ · ժե · 16 , իդ · 27 ։ լգ · 24 ։ բ Օր · ժա · 25 ։ ճկա · բ · 9 ։ ե · 1 ։ ա Թագ · ժգ · 15 ։ բ Մն · ժգ · 14 ։

Ա Գլ · իբ · 19 · 22 ։

Ե Ճող · ե · 4 ։

† Յ՝ Բեթելին Աստուածը ։

Ա Գլ · իբ · 13 ։

Ե Գլ · իգ · 59 ։

‡ Յ՝ կաղնի ագոյ ։

Ը Ովս · ժբ · 4 ։

Ե Գլ · ժե · 5 ։

Ա Գլ · լբ · 28 ։

Ը Գլ · ժե · 1 · իբ · 3 , 4 · Եղ · գ · 3 ։

Ա Գլ · ժե · 5 , 6 , 16 · իբ · 3 · իբ · 4 ։

Ա Գլ · ժբ · 7 · ժգ · 15 · իգ · 3 , 4 · իբ · 13 ։

Ե Գլ · ժե · 22 ։

Ը Գլ · իբ · 18 ։

Գլ · իբ · 19 ։

քաշէը , ծնուցիչը բաւ անոր . Մի վախնար . ինչու որ Նաս ալ քեզ
18 որդի է ։ Եւ եղաւ որ երբ անոր հոգին կ'ելլէր , (քանզի մեռաւ ,) անոր անունը *Բենոնի դրաւ . բայց անոր հայրը՝ †Բենիամին կոչեց զա-
19 նիկայ ։ Եւ Յակոբ մեռաւ , ու թաղուեցաւ Եփրաթային ճամ-
20 բան՝ որ Բեթղէհէմ է ։ Եւ Յակոբ անոր գերեզմանին վրայ արձան մը կանգնեց , որ մինչև այսօր Ռաքէլին գերեզմանին արձանն է ։
21 Ու Իսրայէլ ճամբայ ելաւ , և իր վրանը Եդէրի աշտարակին մէկալ
22 կողմը կանգնեց ։ Ու եղաւ որ՝ երբոր Իսրայէլ ան երկիրը կը բնակէր , Ռուբէն գնաց՝ Հու իր հօրը Բաղդա հարճին հետ պառկեցաւ . և Իսրայէլը լսեց ։։

Արդ՝ Յակոբին որդիքը տասը-
23 ուերկու էին ։ Լիայեին որդիքը՝ Յակոբին անդրանիկը Ռուբէն , Շմաւոն , Ղեւի , Յուդա , Իսաքար
24 ու Զաբուղոն . Ռաքելին որդիքը՝
25 Յովսէփ ու Բենիամին . Եւ Բաքելին Բաղդա աղախինին որդիքը՝
26 Դան ու Նեփթաղիմ ։ Եւ Լիայեին Զելփա աղախինին որդիքը՝ Գադ ու Ասեր ։ Ասոնք են Յակոբին որդիքը , որոնք Միջագետի մէջ ծնան անոր ։
27 Եւ Յակոբ եկաւ իր հօրը Իսահակին դէպ 'ի Մամբրէ՝ Աբրահամ ու Իսահակ պանդխտացան ։
28 Եւ Իսահակ օրերը հարիւր ութսուն
29 տարի եղաւ ։ Եւ Իսահակ ծերացած ու օրերը լեցուած՝ աւանդեց հոգին ու մեռաւ , և իր ժողովուրդին խառնուեցաւ . ու Հսաւ ու Յակոբ իր որդիքը թաղեցին զանիկայ ։

ԳԼ · ԼԶ

1 Եսաւին իրեք կիներէն , 6 ու Սէիր լեռը երթալը ։ 9 Անոր որդիքը , 15 և անոնցմէ եկած իշխանները ։ 20 Սէիրի որդիքը ու իշխանները ։ 31 Եդոմի թագաւորները ։ 40 Եսաւէն եկած իշխանները ։

1 Յաւ ասոնք են Եսաւին ծնունդնե-
2 րը՝ որ է Եդոմ ։ Եսաւ իրեն կիներ առաւ Քանանու աղջիկներէն , Քետացի Եղոնին աղջիկը Ադդան , ու Խևացի Սեբեգոնին աղջիկները Անային աղջիկը Ոդիբամային
3 բաման , Եւ Իսմայէլին աղջիկը՝ Նաբէոթին քոյրը Բասեմաթը ։
4 Եւ Ադդա ծնաւ Եսաւին՝ Եղիփազը , ու Բասեմաթ ծնաւ Ռաքուէլը ,
5 Եւ Ոդիբամա ծնաւ Եհուսը ու Եղդոմը և Կորխը . ասոնք են Եսաւին որդիքը՝ որ ծնան իրեն՝ Քանանու երկրին մէջ ,
6 Ու Եսաւ առաւ իր կիներն ու տղաքները և աղջիկները ու իր տան բոլոր մարդիկը՝ և իր հօտերը ու իր բոլոր անասունները՝ և իր բոլոր ստացուածքը՝ որ Քանանու երկրին մէջ ստացաւ , և իր Եղբօրը Յակոբին երեսէն գնաց երկիր մը դրա-
7 նաց . Քանզի որ իրենց ստացուածքը շատ էլլալուն համար՝ չէին կրնար միասեղ բնակիլ . և իրենց հօտերուն պատճառովը՝ իրենց պանդխտութեամբ բնակած երկիրը
8 բաւական չէր իրենց ։ Ու Եսաւ Սէիր լեռը բնակեցաւ . Եսաւը՝ Եդոմն է ։
9 Եւ Սէիր լեռը եղող Եդոմացւոց հօրը Եսաւին ծնունդները ա-
10 սոնք են ։ Եսաւի որդւոցը անունները ասոնք են . Եսաւին կնկանը Ադդային որդին Եղիփազ , և Եսաւին կնկանը Բասեմաթին որ-
11 դին Ռագուէլ ։ Եւ Եղիփազին որդիքը՝ Թեման , Օմար , Սեփո ,
12 և Գոթամ ու Կենէզ էին ։ Եւ Թամնա՝ Եսաւին որդւոյն Եղիփազին հարճն էր , որ Եղիփազին Ամաղէկը ծնաւ . Եսաւին կնկանը
13 Ադդային որդիքը ասոնք էին ։ Եւ Ռագուէլին որդիքը ասոնք են . Նահաթ , Զարա , Սամմա ու Մէզա . ասոնք էին Եսաւին կնկանը
14 Բասեմաթին որդիքը ։ Ու Եսաւին կնկանը Սեբեգոնի աղջկանը Անայի աղջկանը Ոդիբամային որդիքը ասոնք են . և ծնաւ Եսաւին՝ Եհուսը , ու Եղդոմը և Կորխը ։
15 Եսաւի որդւոցմէ եղող իշխանները ասոնք են . Եսաւին անդրանկանը Եղիփազին որդիքը՝ Թեմանի իշխան , Օմար իշխան , Սեփո իշ-
16 խան , Կենէզ իշխան , Կորխ իշխան , Գոթամ իշխան , Ամաղէկ իշխան . Եդոմի երկրին մէջ Եղիփազէն եղող իշխանները ասոնք են . ասոնք Ադդայի որդիքն էին ։
17 Ու Եսաւին որդւոյն Ռագուէլին որդիքը ասոնք են . Նահաթ իշխան , Զարա իշխան , Սամմա իշխան , Մէզա իշխան . Եդոմի երկրին մէջ Ռագուէլէն եղող իշխանները ասոնք են . Եսաւին կնկանը Բասեմաթին որդիքը ասոնք էին ։
18 Ու Եսաւին կնկանը Ոդիբամային որդիքը ասոնք են . Եհուս իշխան , Եղդոմ իշխան , Կորխ իշխան . Եսաւին կնոջմէն՝ Անային աղջիկը եղող Ոդիբամայէն
19 եղած իշխանները ասոնք էին ։ Ասոնք են Եսաւին՝ այսինքն Եդոմին որդիները , և ասոնք են անոնց իշխանները ։
20 Եւ ան երկրին մէջ բնակող Հուռեցի Սէիրին որդիքը ասոնք

ն · ք · գ · Իբր 1729

ԾԳԼ · լ · 24 ։ աթաղ · գ · 20 ։

Իբր 1729

* ՟ի՛ նեղութեանս որդին ։
† ՟ի՛ աջ ձեռքին որդին ։
ՂԳԼ · Իզ · 7 ։
Հառաթ. առ. 2 ։ գ · 11 ։ Միք · ե · 2 ։ Մատ · բ · 6 ։ աթաղ · ժ. 2 ։ բթաղ · ժբ · 18 ։ Միք · գ · 8 ։ Հ ԳԼ · Իթ · 4 ։ ա Պն · ե · 1 ։ Տճս բ թաղ · ժղ · 22 ։ Ի · 3 ։ ա Կոր · ե · 1 ։
ԳԼ · Իզ · 8 ։ Եբ · ա · 2 ։

ր ԳԼ · ժգ · 18 ։ Իդ · 2 ։ 19 ։
ց Ճնս . ժգ · 15 ։ ժե · 13 ։

1716

ԳԼ · ժե · 15 ։ Իե · 8 ։
Տճս գԼ · Իե · 9 ։ Իթ. 31 ։

Իբր 1796

ԳԼ · Իե · 30 ։
ԳԼ · Իզ · 34 ։

Հ Հմր 25 ։

Իբր 1760

ԳԼ · Իբ · 9 ։
Ա Պն . ա . 35 ։

ն · ք · գ · Իբր 1740

ՂԳԼ · ժգ · 6 ։ 11 ։

Ի ԳԼ · ժէ · 8 ։ Իբ · 4 ։
ԳԼ · լբ · 3 ։ բ Օր · բ · 5 ։ Ճնս . իդ · 4 ։
Հմր 1 ։

Ա Պն . ա . 35 ։ Եբ ։

Ի Եզ · ժէ · 8 ։ 14 ։ Թաւ . Իդ · 20 ։ ա Թագ · ժէ . 2 ։ 3 ։ Եբ ։

Իբր 1715

Իբր 1840

Ա Պն . ա . 38 ։

ՂԳԼ · ժգ · 6 ։ բ Օր · բ · 12 · 22 ։

ն · ք · դբ · Իսբ 1840

են . Ղոտան , և Սորաղ , ու Սե-
21 բեգօն , և Ենա , ու Դիսօն , ու Ե-
սեր և Դիսան . ասոնք էին Քոռե-
ցւոց իշխանները Սէիրի որդիքը ե-
22 գովմի երկրին մէջ : Եւ Ղոտանին
որդիքը՝ Քոռի ու Հեմամ էին , ու
23 Ղոտանին քոյրը Թամնա : Եւ Սո-
բաղին որդիքը ասոնք են . Գաղու-
ան , ու Մանաքաթի , և Գեբաղ ,
24 Սեփո ու Օնամ : Եւ Սերեգօնին
որդիքը ասոնք են . Այիա ու Ենա .
աս ան Ենան է , որ իր հօրը Սերե-
գօնին էշերը արածած ատենը՝ ա-
նապատին մէջ ջերմուկները գտաւ :
25 Եւ Ենային որդիքը ասոնք են .
Դիսօն , ու Ենային աղջիկը Ոդիրա-
26 մա : Եւ Դիսօնին որդիքը ասոնք
են . Ամադան , ու Եսբան , և
27 Յեթրան ու Քառան : Եսերին
որդիքը ասոնք են . Բաղդան , ու
28 Զաւան և Ական : Դիսանին
որդիքը ասոնք են . Հուս ու Ա-
29 ռան : Քոռեցւոց իշխանները ա-
սոնք են . Ղոտան իշխան , Սորաղ
իշխան , Սերեգօն իշխան , Ենա իշ-
30 խան , Դիսօն իշխան , Եսեր իշխան ,
Դիսան իշխան . ասոնք են Քոռե-
ցւոց իշխանները Սէիրի երկրին
մէջ՝ իրենց իշխանութեանը հա-
մեմատ :
31 Եւ Հասոնք են ան թագաւոր-
ները՝ որ Եդովմի երկրին մէջ թա-
գաւորեցին , Իսրայէլի որդւոցը վրայ
թագաւոր մը թագաւորելէն ա-
32 ռաջ : Եւ Բէովրին որդին Բաղա
թագաւորեց Եդովմի մէջ . ու ա-
նոր քաղաքին անունը Դէննաբա
33 էր : Եւ Բաղա մեռաւ , ու անոր
տեղը Իոսբացի Զարային որդին
34 Յոբաբը թագաւորեց : Եւ Յոբաբը
մեռաւ , ու անոր տեղը Թեմանա-
ցւոց երկրէն Հուսամը թագաւո-
35 րեց : Եւ Հուսամը մեռաւ , ու
անոր տեղը Բադադին որդին Ադա-
դը թագաւորեց , որ Մովաբի դաշ-
տին մէջ Մադիանացիները կոտո-
րեց . և անոր քաղաքին անունը
36 Աւիթ էր : Եւ Ադադը մեռաւ ,
ու անոր տեղը Մասրեկացի Սա-
37 մղան թագաւորեց : Եւ Սամ-
ղան մեռաւ , ու անոր տեղը Գետին
քովը Իորովթէն եղող Սաուղը
38 թագաւորեց : Եւ Սաուղը մե-
ռաւ , ու անոր տեղը Աքորորին որ-
դին Բաաղանանը թագաւորեց :
39 Եւ Աքորորին որդին Բաաղանանը
մեռաւ , ու անոր տեղը Ադադը
թագաւորեց . և անոր քաղաքին
անունը Փոդով էր . ու անոր կնո-
ջանը անունը Մետաբէել էր , որ
Մէզաբին աղջկանը Մատրեթին
աղջիկն էր :
Իսբ 1496 40 Եւ իրենց տոհմերուն՝ ու իրենց

տեղերուն համեմատ իրենց անուն-
ներովը՝ Եսաւէն եղած Հիշխաննե-
րուն անունները ասոնք են . Թամնա
իշխան , Գաղուա իշխան , Եթեթ
41 իշխան , Ողիբամա իշխան , Էլա իշ-
42 խան , Փինօն իշխան , Կենեզ իշ-
խան , Թեման իշխան , Մարզար
43 իշխան , Մագեդիէլ իշխան , Իրամ
իշխան : Ասոնք են Եդովմի իշխան-
ները իրենց բնակութեանը համե-
մատ՝ իրենց ստացուածքին երկրին
մէջ . աս է Եսաւ Եդովմայեցւոց
հայրը :

ն · ք · դբ · Իսբ 1496

հմ . ա . 51 :

ԳԼ · ԼԷ

1 Յովսեփին եղբայրները զինքը կ'ատեն : 5 Իր երկու երազները : 13 Յակոբ կը խրկէ Յովսեփը որ իր եղբայրները տեսնէ : 18 Իր եղբայրները զանիկայ մեռցնելու կը միաբանին : 21 Ռուբէն զանիկայ կ'ազատէ : 26 Յովսեփ Իսմայէլացիներուն կը ծախուի . 31 ու Յակոբ անոր արիւնոտ պատմուճանէն խաբուելով՝ սուգ կը բռնէ : 36 Յովսէփ՝ Եգիպտոսի մէջ պետափրեսին կը ծախուի :

1 Եւ Յակոբ՝ իր հօրը պանդխտա-
ցած երկրին՝ Քանանու երկրին
2 մէջ բնակեցաւ : Ասոնք են Յա-
կոբին ծնունդները . Յովսէփ տասն-
ուեօթը տարեկան էր , երբոր իր
եղբայրներուն հետ հօտերը կ'արա-
ծէր , և պատանի ըլլալով՝ իր հօրը
կնիկներուն Բաղդային որդիներուն
հետ ու Զեղփային որդիներուն հետ
էր . և Յովսէփ Իանոնց չար լուրը
3 անոնց հօրը կը բերէր : Եւ Իսրայէլ
իր բոլոր որդիներէն աւելի կը սիրէր
Յովսէփը . Ինչու որ Հիր ծերու-
թեանը որդին էր անիկայ . և բազ-
մազոյն պատմուճան մը շինեց ա-
4 նոր : Եւ անոր եղբայրները տեսնե-
լով որ իրենց հայրը կը սիրէ զանի-
կայ իր բոլոր եղբայրներէն աւելի ,
Ատեցին զանիկայ , ու խաղաղու-
թեամբ չէին կրնար խօսիլ անոր
հետ :
5 Եւ Յովսէփ երազ մը տեսաւ , ու
իր եղբայրներուն պատմեց . և ա-
6 նոնք աւելի ատեցին զանիկայ : Ու
ըսաւ անոնց . Կ'աղաչեմ ձեզի ,
մտիկ ըրէք ասիկա իմ տեսած երազս .
7 Ահա մենք դաշտին մէջ որաներ կը
կապէինք , և ահա իմ որաս ելաւ ,
ու շիտակ կանգնեցաւ . և ահա ձեր
որաները անոր բոլորտիքը կայնե-
ցան , ու իմ որայիս երկրպագու-
8 թիւն ըրին : Եւ անոր եղբայրնե-
րը ըսին անոր . Իրաւցնէ մեր
վրայ պիտի թագաւորե՞ս , կամ ի-
րաւցնէ մեր վրայ պիտի տիրե՞ս .
և անոր երազներուն ու խօսքերուն
համար աւելի ատեցին զանիկայ :
9 Եւ ուրիշ երազ մըն ալ տեսաւ , ու
զանիկայ իր եղբայրներուն պատ-
մեց , ու ըսաւ . Ահա երազ մըն ալ
տեսայ , և ահա Արեգը ու լուսինը՝

– Գ · ԺԷ · 8 ; Իգ · 4 ; Իբ · 4 ; Լգ · 7 ; Եբր · Ժա . 9 :

1729

Բ ա թագ · ր · 22 , 23 , 24 :

Ֆ Գ · Խգ · 20 :

Ք Գ · Իէ · 41 ; Խթ 23 :

Ի Գ · Իբ · 6 , 9 ; Խգ · 26 ; Խգ · 14 :

Ես՛ս ԻԼ · Խգ · 29 :

Ն · ք · ՂԲ · 1729

ու տասնումէկ աստղեր ինձի երկրպագութիւն բերին։ 10 Եւ իր հօրը ու իր եղբայրներուն պատմեց. և իր հայրը յանդիմանեց զանիկայ, ու ըսաւ անոր. Ի՞նչ է ասիկա քու տեսած երազդ. միթէ ես ու քու մայրդ և քու եղբայրներդ իրաւցնէ՞ պիտի գանք՝ մինչև գետինը քեզի խոնարհութիւն բերելու։ 11 Ու եղբայրները նախանձեցան անոր. բայց հայրը [1]էր փոթը պահեց ասիկա։

Ե Գծ · Է · 9 ։ Ը Գաս · Է · 28 ։ Ղբ · Բ · 19 ։ 51 ։

Իբր 1729

12 Եւ անոր եղբայրները գացին՝ որ իրենց հօրը հօտերը Սիւքեմի մէջ 13 արածեն։ Եւ Իսրայէլ ըսաւ Յովսեփին. Քու եղբայրներդ Սիւքեմի մէջ չէ՞ն արածեր. եկուր ես քեզ անոնց խրկեմ. ու անիկայ 14 ըսաւ. Ահա ես հա՛ւ։ Եւ ըսաւ անոր. Գնա՝ նայէ թէ քու եղբայրներդ [2]ողջ առողջ են, և հօտերը ողջ են, ու ինծի լուր մը բեր. այսպէս խրկեց զանիկայ Հեբրոնի հովիտէն. և ան ալ Սիւքեմ եկաւ։

Բ ԳԼ · ԻԹ · 6 ։ Է ԳԼ · Լ · 27 ։

15 Եւ մարդ մը գտաւ զանիկայ, որ դաշտին մէջը ասդին անդին կը պտրտէր. և ան մարդը հարցուց անոր ըսելով. Ի՞նչ կը փնտռես։ 16 Եւ անիկայ ըսաւ. Իմ եղբայրներս կը փնտռեմ. կ'աղաչեմ՝ Ըսէ ինձ 17 ծի, անոնք ո՞ւր կ'արածեն։ Եւ ան մարդը ըսաւ. Անոկ ելան. քանզի լսեցի որ Դոթայիմ երթանք՝ կ'ըսէին։ Եւ Յովսեփ իր եղբայրներուն ետևէն գնաց, ու զանոնք Դոթայիմի մէջ գտաւ։ 18 Եւ երբ զանիկայ հեռուէն տեսան, դեռ ինքը անոնց չմօտեցած, [3]զանիկայ

Ե Ա Թագ · ԺԹ · 1 ։ Սաղ · Լա · 13 ։ Լէ · 12 ։ 32 ։ ՂԳ · 21 ։ Մտթ · ԻԷ · 1 ։ Մար · Ժգ · 1 ։ Ցօհ · Ժա · 53 ։ Գոր · Իգ · 12 ։

19 մեռցնելու միաբանեցան. Ու իրարու ըսին. Ահա այն [*]երազ տեսնո-

Ե Ա Թագ · Ժ · 1 ։ Սաղ · Լա · 13 ։ Լէ · 12 ։ 32 ։ ՂԳ · 21 ։ Մտթ · ԻԷ · 1 ։ Մար · Ժգ · 1 ։ Ցօհ · Ժա · 53 ։ Գոր · Իգ · 12 ։

20 ղը'' կու գայ. Ուստի հիմա եկէք մեռցնենք զանիկայ, ու գուբի մը մէջ նետենք, ու ըսենք թէ՝ Չար գազան մը կերաւ զանիկայ. և տեսնենք թէ անոր երազները ինչ պիտի բլլան։ 21 Ու Ռուբէն լսածին պէս՝ անոնց ձեռքէն ազատեց զանիկայ, ըսելով. Չմեռցնենք զանիկայ։ 22 Եւ Ռուբէն ըսաւ անոնց. Արիւն մի թափէք, [4]քար զանիկայ ասգուբը նետեցէք՝ որ անապատին մէջն է, և անոր ձեռք մի զարնէք. — [5]ըսեր՝ որ կարենայ ազատել զանիկայ անոնց ձեռքէն՝ իր հօրը դարձնելու համար։

Ե Ա Թագ · Ժ · 1 ։ Սաղ · Լա · 13 ։ Լէ · 12 ։ 32 ։ ՂԲ · 21 ։ Մտթ · ԻԷ · 1 ։ Մար · Ժգ · 1 ։ Ցօհ · Ժա · 53 ։ Գոր · Իգ · 12 ։

* Եբր. երազնեռու տէրը

Ե Առակ · Ա · 11 ։ 16 ։ Գ · 17 ։ ԻԷ · 4 ։ Հ ԳԼ · Խբ · 22 ։

23 Ու եղաւ որ Յովսէփ իր եղբայրներուն քովը եկածին պէս՝ մերկացուցին Յովսէփը իր պատմուճանէն, զոր [6]ինքն՝ իր վրայի բազմազոյն 24 պատմուճանէն. Եւ առին զանիկայ, ու գուբը նետեցին. և գուբը 25 դատարկ էր, ջուր չկար։ Եւ նստան հաց ուտելու. ու իրենց աչքերը վերցուցին ու տեսան, և ահա Իսմայէլացւոց մէկ կարաւանը կու գար Գաղաադէն, որ իրենց ուղտերը համեմներով, և [7]բալասանով, ու [8]մուռով բեռնաւորած՝ Եգիպտոս տանելու կ'երթային։

Ե Ծն · Ղ · 19 ։ Իբր 1729

Ը Ծն · Ղբ · Իբր 1729

Ը Ծն · Ղ · 28 · 36 ։ Թ Երեմ · Բ · 22 ։ † Կ՚աղանգանոյով

26 Յուդա ըսաւ իր եղբայրներուն. Ի՞նչ օգուտ կ'ըլլայ՝ թէ որ մեր եղբայրը մեռցնենք, ու ծածկենք զանիկայ։ 27 Եկէք Իսմայէլացիներուն ծախենք անիկայ, և մեր ձեռքը անոր չդպչի. ինչու որ անիկայ մեր եղբայրը — մեր մարմինն է. և անոր եղբայրները 28 համձնայն։ Ու երբոր Մադիանացի վաճառականները կ'անցնէին, Յովսեփը դուրէն քաշեցին՝ ու դուրս հանեցին իր [9]եղբայրները, և Իսմայէլացիներուն ծախեցին Յովսեփը [10]քսան [11]արծաթի. անոնք ալ Յովսեփը Եգիպտոս տարին։ 29 Եւ Ռուբէն դէպ ի գուբը դարձաւ, և ահա Յովսեփը գուբին մէջը չէր. ու Իր հանդերձ-

Ժ ԳԼ · Խ · 14 ։ Ա Դատ · Ղ · 3 · ԳԼ · Խհ · 4 · 5 ։ Բ Սաղ · ՃԽ · 17 · Գոր · Է · 9 ։ Գ Ծն Մատ · ԻԷ · 9 ։ Է Ցօհ · Ա · 20 ։

30 ները պատռեց։ Եւ դարձաւ իր եղբայրներուն ու ըսաւ. Տղան չկայ. ու ես ո՞ւր երթամ։

Ը ԳԼ · Խբ · 13 · 36 ։ Երեմ · Լ · 15 ։ Թ Հմր 23 ։

31 Եւ առին Յովսեփին պատմուճանը, ու այծերէն նոխազ մը մորթեցին, և պատմուճանը արիւնը 32 թաթխեցին։ Ու խրկեցին բազմագոյն պատմուճանը, ու իրենց հօրը տարին, ու ըսին. Ա՛ս գտանք մենք. գիտցիր հիմա թէ ասիկա որդուդ պատմուճանն է՝ թէ չէ։

Ժ Հմր 20 ։ ԳԼ · Խգ · 28 ։

33 Եւ անիկայ ճանչցաւ ան, ու ըսաւ. Իմ որդուոյս պատմուճանն է, Հլար գազան մը կերած է զանիկայ. Յովսեփ 34 սէփը անշուշտ փառաւորուեցաւ։ Եւ Յակոբ պատռեց իր հանդերձները, ու քուրձ հագաւ իր մէջքին վրայ. և իր որդուոյն համար շատ օրեր սուգ

Ժ Հմր 29 ։ Բ Թագ · Գ · 31 ։

35 բրաւ։ Ու իր բոլոր որդիները ու իր բոլոր աղջիկները [12]զինքը մխիթարելու ելան. բայց ինքը մխիթարուիլ չէր ուզեր. ու ըսաւ. Ես սուգով պիտի իջնեմ գերեզմանը՝ իմ որդուոյս քովը։ Այսպէս անոր հայրը լացաւ անոր համար։

Բ Բ Թագ · Ժբ · 17 ։

36 Եւ Մադիանացիները ծախեցին զանիկայ Եգիպտոսի մէջ՝ Փարաւոնի [13]ներքինիին՝ պետափրէս գահճապետին։

Գ Ե Ծն · Ղբ · Իբր 1729

Ը Ծն · Ղ · 28 · 36 ։ Թ Երեմ · Բ · 22 ։ † Կ՚աղանգանոյով

ԳԼ · ԼՀ

1 Յուդան՝ Երը, Օնանը և Սելոմը կը ծնանի։ 6 Երը Թամարին հետ կը կարգուի։ 8 Օնանին յանցանքը։ 11 Թամար՝ Սելոմին կը սպասէ. 13 կը խաբէ Յուդան, 27 ու Փարէսը և Զարան երկուօրեակ կը ծնանի։

1 [14]Ու եղաւ որ ան ատենը՝ Յուդա իր եղբայրներուն քովէն իջաւ, ու Ոդողոմացի մէկու մը [15]քով գնաց, 2 որուն անունը Խիրա էր։ Եւ Յու-

Ա ԳԼ · ԺԲ · 1 ։ Բ Ա Մնաց · Բ · 6 ։

‡ [16]՝ պալատականին, ¶ [17]՝ սենեկապետին։

Ն · Ք · ՂՁ · Իսը 1729

ԲԱՄՆ · Բ · 3 ։

Իսը 1727

Է ԾԼ · ԼԲ · 2 ։
Ը ԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 19 ։
Թ ԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 19 ։
Ժ ԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 20 ։
ԺԱ ԾԼ · ԽԱ · 21 ։
ԺԲ ԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 19 ։
ԲԱՄՆ · Բ · 3 ։
ՀԲ ՕՐ · ԻԵ · 5 ։ ՄԱՈՒ · ԻՐ · 24 ։
ԻՐ ՕՐ · ԻԵ · 6 ։

ԼԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 19 ։
Ի ՀՈՒԹ · Ա · 13 ։

ԾՂՒ · ԻՐ · 13 ։

Լ Բ ԹԱԳ · ԺԳ · 39 ։

ՀՑԵՍ · ՝ԺԵ · 10 ։ 57 ։ ԴԱՈՒ · ԺԳ · 1 ։

ՅՆԱԿ · Է · 12 ։
Ղ ՀՊՐ 11 ։ 26 ։

Ֆ ԵՂԿ · ԺԶ · 33 ։
Ց ՀՊՐ 20 ։
Ձ ՀՊՐ 25 ։

դան Ի Շաւա անունով Քանանացիի մը աղջիկը Ի տեսաւ , ու առաւ զա-
3 նիկայ , և մտաւ անոր ։ Ու անիկայ յղացաւ , ու որդի մը ծնաւ . և
4 անոր անունը Ր Էր դրաւ ։ Ու նո-
րէն յղացաւ , ու որդի մը ծնաւ . և
5 անոր անունը Ս Օնան դրաւ ։ Եւ դարձեալ որդի մըն ալ ծնաւ , ու անոր անունը Ղ Սելոմ դրաւ . և եր-
բոր զանիկայ ծնաւ՝ Ց—ՐՆ ՔԱ-
ղերի մէջ էր ։
6 Եւ Ցուդա իր առջինեկ տղուն Էրին Ի կնիկ մը առաւ , որուն ա-
7 նունն էր Թամար ։ Եւ Ը Ցուդային առջինեկը Էր չար էր Տէրոջը առ-
ջեւը . Ի՛ու Տէրը մեռցուց զանիկայ ։
8 Եւ Ցուդան ըսաւ Օնանին . Մտիր Ի քոյր եղբօրդ կնկանը , ու տագրու-
թեան իրաւունքը կատարէ անոր , և
9 քոյր եղբօրդ սերունդ չանէ ։ Եւ Օնան գիտցաւ որ սերունդը Ի իրենը պիտի չըլլայ . անոր համար երբոր իր եղբօրը կնկանը կը մտնէր , ՚ԷՐՀ
գետինը կը թափէր՝ որ իր եղբօրը
10 սերունդ չտայ ։ Եւ աս ըրած բա-
նը Տէրոջը առջին գէշ երեցաւ , ու
11 Ղ զանիկայ ալ մեռցուց ։ Եւ Ցուդա իր Թամար հարսին ըսաւ . Ի Որբևա-
րի՛ նստէ քու հօրդ տունը՝ մինչև որ իմ Սելոմ որդիս մեծնայ . քանզի ըսաւ . Զբլլայ որ աս ալ իր եղ-
բայրներուն պէս մեռնի . և Թամար գնաց ու Ի իր հօրը տունը նստաւ ։
12 Եւ շատ օրերէն ետքը մեռաւ Շաւային աղջիկը՝ Ցուդային կնի-
կը . և Ցուդա Ի մխիթարուեցաւ , ու Թամնա գնաց իր հօտերը աս-
բակտուր ընողներուն՝ ինքը ու իր բարեկամը Ոդողմացի Իրա-
13 ը ։ Եւ զրուցուեցաւ Թամա-
րին՝ ըսելով . Ահա քու սկեսրայրդ հդեպ Ի Թամնա կ՚ելլէ՝ իր ոչխար-
14 ները ասրակտուր ընելու ։ Ան ալ իր որբևարութեան հանդերձները հանեց իր վրայէն , ու քողով մը ծածկուեցաւ՝ ու պլլուեցաւ , և Թամնայի ճամբուն մէջը եղող Ենայիմի դուռը Ն նստաւ . քանզի տեսաւ որ Ղ Սելոմը մեծցաւ , ու ին-
քը անոր կնիկ ըլլալու չտրուեցաւ ։
15 Երբոր Ցուդան տեսաւ զանիկայ , բոզ կարծեց , ինչու որ իր երեսը
16 ծածկեր էր ։ Եւ ճամբան անոր դարձաւ ու ըսաւ . Ընորհք ըրէ , քեզի մտնեմ . քանզի չէր գիտեր Թէ անիկայ իր հարսն է ։ Եւ ա-
նիկայ ըսաւ . Ինծի՞ մտնելու համար
17 ի՞նչ կու տաս ինծի ։ Ան ալ ըսաւ . Ց ԵՍ ԵՒՂ այծի ուլ մը կը խրկեմ հօտերէն . և անիկայ ըսաւ . Ֆ Գրաւ
18 մը կու տա՞ս մինչև խրկելդ ։ Եւ Ց—ՐՆ ըսաւ . Ի՞նչ գրաւ տամ քեզի . ու անիկայ ըսաւ . Ֆ Քու

մատնիդ ու ժապաւէնդ և ձեռքիդ գաւազանը ։—Ր . ան ալ տուաւ անոր , ու մտաւ անոր , և Թ—Մ
19 անկէ յղի մնաց ։ Եւ ելաւ ու գնաց , ու Ի իր վրայէն քօղը հանեց , ու իր
20 որբևարութեան հանդերձները հա-
գաւ ։ Եւ Ցուդա իր բարեկամին Ոդողմացիին ձեռքովը այծին ուլը խրկեց , որ կնկանը ձեռքէն գրաւը
21 առնէ . բայց չգտաւ զանիկայ ։ Եւ ան տեղի մարդոցը հարցուց՝ ըսե-
լով . Ճամբուն վրայ Ենայիմի մէջ եղած բոզը ո՞ւր է . և անոնք ըսին .
22 Հոս բոզ չկար ։ Եւ դարձաւ Ցու-
դային , ու ըսաւ . Զգտայ զանիկայ , և ան տեղի մարդիկն ալ ըսին Թէ՝
23 Հոս բոզ չկար ։ Եւ Ցուդան ըսաւ . Իրեն թող ըլլայ , որ խայտառակ չըլլանք . ահա ես աս ուլը խրկեցի ,
24 ու դուն չգտար զանիկայ ։ Եւ եղաւ որ իրեք ամիսէն ետքը՝ Ցուդային պատմուեցաւ՝ ըսելով . Քու հարսդ Թամար Ը պոռնկեցաւ , նաև ահա պոռնկութենէն յղի մնաց . և Ցու-
դան ըսաւ . Հանեցէ՛ք զանիկայ ,
25 ՚ու այրուի ։ Երբոր զանիկայ դուրս կը հանէին , Ի—ՆԷՐԸ իր սկեսրայ-
րին խրկեց՝ ըսելով . Ես աս բանե-
րուն տիրոջմէն յղի եմ . նաև ըսաւ . Ընորհք ըրէ՝ Ղ գիտցիր Դ Թէ աս մատանին ու ժապաւէնը և գաւա-
26 զանը որո՞ւնն է ։ Եւ Ցուդան Ճանչ-
ցաւ ու ըսաւ . ՚Ընկիկայ ինծմէ արդար է . ինչու որ ՚զանիկայ իմ որդւոյս Սելոմին չտուի . և Էմ-
մէն ալ նորէն չգիտցաւ զանիկայ ։
27 Ու եղաւ որ անոր ծնած ատենը՝ ահա անոր արգանդին մէջ երկուո-
28 րեակ էին ։ Եւ եղաւ որ երբ կը ծննար , Ձ ձեռքը երկրնցուց . և մանկաբարձ առաւ՝ ու անոր ձեռքին վրայ կարմիր դերձան կա-
պեց՝ ըսելով . Առաջ աս ելաւ ։
29 Եւ անիկայ իր ձեռքը ետ քաշածին պէս՝ ահա անոր եղբայրը ելաւ . և Ֆ—ՐՑԸ ըսաւ . Ինչո՞ւ ցանգը պատեցիր . — պատառումը քու վրադ ըլլայ . անոր համար անոր ա-
30 նունը ՚ Փարէս դրուեցաւ ։ Ու ետքը՝ ձեռքին վրայ կարմիր դեր-
ձան ունեցող եղբայրը ելաւ , և ա-
նոր անունը Զարա դրուեցաւ ։

ԳԼ · ԼԹ

1 Ցովսէփ՝ Պետափրէսին տանը մէջ կը յառա-
ջանայ ։ 7 Իր տիկինին փորձութեանը դէմ կը կենայ ։ 13 Մուրհակամբ ամբաստանուելով , 20 բանտը կը ձգուի ։ 21 Բանտին մէջ Ա-
ստուած անոր հետ կ՚ըլլայ ։

1 ‖ Ու Ցովսէփը Եգիպտոս իջեցուցին . և Փարաւոնի ներքինին՝ Եգիպ-
տացի — Պետափրէս զահճապետը Ի ծախու առաւ զանիկայ Իսմայէ-
լացիներուն ձեռքէն , որոնք զանի-

Ն · Ք · ՂՁ · Իսը 1727

Ղ ՀՊՐ 14 ։

Ղ ԾՆՆ · ԺԹ · 2 ։

— ՂԼ · ԻՆ · 9 ։ ԲՕՐ · ԻՐ · 21 ։

Լ ԾԼ · ԼԲ · 32 ։ Ղ ՀՊՐ 18 ։

Լ ԾԼ · ԼԲ · 33 ։ — Ա ԹԱԳ · ԻԳ · 18 ։ — ՀՊՐ 14 ։

Ձ ԾՈՐ · ԼԳ · 31 , 32 ։

— ԾԼ · ԽԶ · 12 ։ ԹՈւ · ԻԶ · 20 ։ Ա ՄՆ · Բ · 4 ։ ՄԱՈՒ · Ա · 3 ։

* ՅՈ՛Վ՝ պատառուած ։

1729

— ԾԼ · ԼԲ · 36 ։ ՍԱՂ · ՃԸ · 17 ։

Ի ԾԼ · ԼԲ · 28 ։

Ն·Ք·ԳՖ· 1729

ֆ ՀՀր 21։ ԳԼ· իա· 22։ իգ· 24, 28։ իբ· 15։ աթագ· ժգ· 18։ ժբ· 14, 28։ Գոր· է· 9։

գ Սաղ· ա· 3։ ի Գլ·ժբ·3։ ժԹ· 19։ ՀՀր 21։ ՂՇն·իդ·2։

ե Գլ·լ·27։

է ա Թագ· ժգ·12։

Ը բ Թագ· ժգ·11։

ժ Ածոկ·գ· 29, 32։

ի Գլ·ի·6։ Ղէ·գ·2։ բԹագ·ժբ· 13։ Սաղ· ծա·4։

լ Ածոկ·է· 13, ՁԷ։

2 կայ Հոն իջեցուցին։ Եւ ֆ Ցէրը Ցովսեփին հետն էր, ու անիկայ յաջողակ մարդ մըն էր. ու իր Եգիպտացի տիրոջը տունն էր անի-
3 կայ։ Եւ անոր տէրը տեսաւ որ Ցէրը անոր հետն է. քանզի Ա ինչ որ ընէր, Ցէրը կը յաջողէր անոր
4 ձեռքովը։ Եւ Ցովսէփ գ շնորհք գտաւ անոր առջևը, ու կը ծառայէր անոր, որ Ղիր տանը վրայ վերակացու ըրաւ զանիկայ, և իր բոլոր ունեցածը անոր ձեռքը յանձ-
5 նեց։ Ու եղաւ որ զանիկայ իր տանը ու իր բոլոր ունեցածին վրայ վերակացու ըրած ժամանակէն՝ ե Ցէրը Եգիպտացիին տունը օրհնեց Ցովսեփին համար. և Թէ տանը մէջ և Թէ դաշտին մէջ անոր բոլոր ունեցածին վրայ Ցէրոջը օրհնու-
6 Թիւնը եղաւ։ Եւ իր բոլոր ունեցածը Ցովսեփին ձեռքը Թողուց. ու ինչ որ ուներ՝ չէր գիտեր, իր կերած հացէն զատ։ Եւ Ցովսէփ էգեղեցիկ էր երեսով՝ ու գեղեցիկ
տեսքով։
7 Եւ եղաւ որ աս բաներէն ետքը՝ անոր տիրոջը կնիկը աչք տնկեց Ցովսեփին վրայ, ու ըսաւ. Ը Պառ-
8 կէ ինծի հետ։ Բայց անիկայ չհաձնեցաւ, ու իր տիրոջը կնկանը ըսաւ. Ահա իմ տէրս տանը մէջ իմ քովս ինչ որ կայ՝ չգիտեր. և
իր բոլոր ունեցածը իմ ձեռքս
9 յանձնեց. Ան տանը մէջ ինծմէ մեծ չկայ. ու բան մը ինծմէ չարգիլեց, քեզմէ ՝ի զատ. ինչու որ դուն անոր կնիկն ես. ժ ուրեմն ես ի՞նչպէս աս մեծ չարութիւնը ընեմ, ու
10 ի Աստուծոյ դէմ մեղանչեմ։ Եւ քանի որ անիկայ օրէ օր Ցովսեփին կը զրուցէր, անիկայ մտիկ չէր ընէր անոր՝ որ հետը պառկի կամ
11 հետը ըլլայ։ Ու եղաւ որ օր մը իր գործին համար տունն եկաւ. և Հոն տանը մէջ տանը մարդիկներէն
12 մէկը չկար։ Ու Ա ինձը բռնեց անոր հանդերձէն՝ ըսելով. Պառկէ ինծի հետ. և անիկայ իր հանդերձը ա-
նոր ձեռքը Թողուց, ու փախաւ
13 դուրս ելաւ։ Ու երբոր տեսաւ՝ որ անիկայ իր հանդերձը Թողուց, ու
14 դուրս փախաւ, Իր տանը մարդիկը կանչեց, և զրուցեց անոնց՝ ըսելով. Նայեցէք, մեզի Եբրայեցի մը բերաւ՝ մեզ խայտառակ ընելու համար. անիկայ ինծի եկաւ՝ ինծի հետ պառկելու համար, ու ես
15 բարձր ձայնով պոռացի. Ու երբոր լսեց իմ բարձր ձայնով պոռալս, իր հանդերձը քովս Թողուց, և
16 փախաւ դուրս ելաւ։ Ու մինչև որ անոր տէրը տունն եկաւ, անոր
17 հանդերձը իր քովը պահեց։ Եւ Իսօսեցաւ անոր ասոնք խօսքերուն պէս՝ ըսելով. Ան Եբրայեցի ծառան՝ որ դուն մեզի բերիր, իս խայտառակ
18 ընելու համար եկաւ ինծի։ Ու երբոր իմ ձայնս վերցուցի ու պոռացի, իր հանդերձը քովս Թողուց,
ու դուրս փախաւ։
19 Եւ եղաւ որ երբ անոր տէրը լսեց իր կնկանը խօսքերը՝ որ զրուցեց իրեն՝ ըսելով. Քու ծառադ ինծի այսպէս ըրաւ, իր բարկութիւնը
20 բորբոքեցաւ։ Եւ Ցովսեփին տէրը առաւ զանիկայ ու Ւ բանտը դրաւ, ան տեղը՝ ուր որ Թագաւորին բանտարկեալները կապուած էին. և
21 հոն բանտին մէջ մնաց։ Բայց Ցէրը Ցովսեփին հետն էր ու ողորմութիւն ցուցուց անոր. և հրամայապետին առջևը շնորհք գտնել
22 տուաւ անոր։ Ու բանտապետը Ցովսեփին ձեռքը յանձնեց բանտին մէջը եղած բոլոր բանտարկեալները. և հոն ամէն գործը տես-
23 նողը անիկայ էր։ Բանտապետը՝ անոր ձեռքը եղած մէկ բանին չէր նայէր. ինչու որ Ցէրը անոր հետն էր, ու անոր ամէն ըրածները Ցէրը կը յաջողէր։

ԳԼ· Խ

1 Փարաւոնին մատակարարը ու հացագործը բանտին մէջ։ 4 Բանտապետը ասոնք Ցովսեփին պահպանութեան կը յանձնէ։ 5 Ցովսէփ ասոնց երազները կը մեկնէ։ 20 որ հոն մեկնութեանը համեմատ կը կատարուին։ 23 Մատակարարին ապերախտութիւնը։

1 Ու եղաւ որ աս բաներէն ետքը՝ Եգիպտոսի Թագաւորին մատակարարը ու հացագործը իրենց տիրոջը Եգիպտոսի Թագաւորին
2 դէմ յանցանք գործեցին։ Եւ Փարաւոն բարկացաւ ի իր երկու ներքինիներուն՝ գլխաւոր մատակարապետին ու հացագործապետին.
3 ի Եւ զանոնք դահձապետին տանը բանտին մէջ բանտարկեց՝ ուր որ
4 Ցովսէփը բանտարկուած էր։ Եւ դահձապետը Ցովսեփին ապսպրեց անոնց համար, ու անիկայ կը ծառայէր անոնց. և անոնք առեն մը բանտը մնացին։
5 Ու Եգիպտոսի Թագաւորին մատակարարը ու հացագործը՝ որոնք բանտին մէջ կապուած էին, երկուքն ալ մէկ գիշեր՝ մէկմէկ երազ տեսան, ամէն մէկուն երազին նշա-
6 նակութիւնը պէս։ Եւ Ցովսէփ առտուանց անոնց եկաւ, ու տեսաւ
7 զանոնք որ խռովեր էին։ Ու իր տիրոջը տունը իր հետ բանտարկուած Փարաւոնին ներքինիներուն հարցուց՝ ըսելով. Ինչո՞ւ համար ձեր երեսները տրտում են այսօր։
8 Եւ անոնք ըսին անոր. Ե երազ տե-

Ն·Ք·ԳՖ· 1729

Ե Եզ· իգ·1։ Սաղ· ճԻ· 3։

ժ Ածոկ·գ· 34·35։

ի Սաղ· ճե· 18։ աՊետ· բ·19։ Ցես գԼ·խ·3, 15։ խա· 14։

Հեզ·գ·21։ ժա·3։ մր· 36։ Սաղ· ճգ·46։ Ածոկ· ժգ· 7։ Դան·ա· 9։ Գոր·է· 9, 10։

յ Գլ·խ·3, 4։

ղ Հմր 2·3։

Խբ 1720 — Ծննմ·ա· 11։

բ Ածոկ·ժգ· 14։

ֆ Գլ·լԹ· 20·23։

Խբ 1718

ա Ծննմ·բ· 2։

Ե Գլ·խա· 15։

ն · ք · գբ · Ի՛ր 1718

ա Տե՛ս գԼ · խա · 16 · Դան · բ · 11, 28 · 47 ·

* Եբր · և ահա՛

սանք , ու զանիկայ մեկնող չկայ · և Յովսէփ բաւ անոնց · Ա Հ՚ որ Աստուծոյ կը վերաբերի անոնց մեկնութիւնը . աղէ պատմեցէք ինծի ։

9 Եւ մատակարարապետը իր երազը պատմեց Յովսեփին , ու ըսաւ անոր . Երազիս մէջ *տեսայ որ" առ-

10 ջևս որթի մը կար . Եւ որթին վրայ իրեք ուռ կային . և ան բողբոջելուն պէս՝ ծաղիկ բացաւ , ու անոր ող-

11 կոյզները խաղող հասցուցին . Եւ Փարաւոնին գաւաթը ձեռքս էր . ու խաղողները առի , և Փարաւոնին գաւաթին մէջ ճմլեցի , ու գաւա-

12 թը Փարաւոնին ձեռքը տուի ։ Եւ Յովսէփ անոր ըսաւ . Ի Աստոր մեկնութիւնը ասն է . իրեք ուռը՝ Հրեք

13 օր է . Իրեք օրէն ետքը Փարաւոն Ի րու գլուխդ պիտի բարձրացընէ ու քեզ նորէն քու պաշտօնիդ պիտի դարձընէ . և Փարաւոնին գաւաթը անոր ձեռքը պիտի տաս՝ անոր մատակարարը եղածիդ առջի սովորու-

14 թեանը պէս ։ Բայց քեզի բարիք եղած ատենը՝ Ի իս միտդ բեր , և կ՚աղաչեմ քեզի՝ ինծի Հրարերարութիւն ըրէ , և զիս Փարաւոնին առջևը յիշելով՝ զիս ասկէ տունէն դուրս

15 հանէ . Քանզի իրաւցընէ գողցուեցայ Եբրայեցւոց երկրէն . ԵՒ հոս ալ բան մը չըրի որ իս ասդուրը նետեն ։

16 Երբոր հացադործապետը տեսաւ որ աղէկ մեկնութիւն տուաւ , ըսաւ Յովսեփին . Ես ալ երազիս մէջ տեսայ՝ որ գլխուս վրայ իրեք

17 †ճերմակ սկահառ ունէի . Եւ ամենուն վրայի սկահառին մէջ հացադործի շինած Փարաւոնին ամէն կերակուրներէն Ի՛ր . ու թռչուն-ները կ՚ուտէին զանոնք գլխուս վր-

18 րայի սկահառէն ։ Եւ Յովսէփ պատասխան տուաւ , ու ըսաւ . Ի Աստոր մեկնութիւնը ասն է . իրեք սա-

19 կառ՝ իրեք օր է . Ի Իրեք օրէն ետքը՝ Փարաւոն վրայէդ պիտի վերցընէ քու գլուխդ , ու քեզ ծառի մը պիտի կախէ . և թռչունները վրայէդ քու մարմնիդ պիտի ուտեն ։

20 Ու եղաւ որ երրորդ օրը՝ Փարաւոնին Ծննդեանը օրն էր , և իր բոլոր ծառաներուն Հխնջոյք ըրաւ . և իր ծառաներուն մէջը՝ մատակարարապետը ու հացադործապետը

21 Ի վեր հանեց . Ու Ղադարձուց մատակարարապետը իր պաշտօնին , և †անիկայ գաւաթը Փարաւոնին

22 ձեռքը տուաւ . Բայց հացադործապետը Ի կախել տուաւ , ինչպէս

23 որ Յովսէփ մեկներ էր անոնց ։ Եւ մատակարարապետը միտքը չբերաւ Յովսէփը , հապա Ի մոռցաւ զանիկայ ։

ԳԼ · ԽԱ

1 Փարաւոն երկու երազ կը տեսնէ ։ 25 Յովսէփ զանոնք կը մեկնէ , 33 ու Փարաւոնին խորհուրդ կու տայ ։ 38 Յովսեփին յատակադիմութիւնը ։ 50 Մանասէին ու Եփրեմին ծնունդը ։ 54 Սովը կը սկսի ։

1 Ու եղաւ որ լման երկու տարիէն ետքը՝ Փարաւոն երազին մէջ տեսաւ՝ որ գետին եղերքը կայներ

2 էր ։ Եւ ահա գետէն գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմնով եօթը երինջներ ելան , ու ‡մարգագետինին վրայ՚՚ կ՚արածուէին ։

3 Եւ ահա անոնց ետևէն՝ գետէն ուրիշ եօթը երինջներ ելան զազիր տեսքով ու նիհար մարմնով , ու Ֆ|-Լ երինջներուն քովը՝ գետին

4 եղերքը կայնեցան . Եւ զազիր տեսքով ու նիհար մարմնով երինջները՝ կերան ան գեղեցիկ տեսքով ու պարարտ երինջները ։ Ետքը

5 Փարաւոն արթընցաւ ։ Եւ քնացաւ , ու երկրորդ անգամ երազին մէջը տեսաւ՝ որ մէկ ծղօտի վրայ եօթը պարարտ ու աղէկ հասկեր

6 կ՚ելլէին ։ Եւ ահա անոնց ետևէն եօթը նիհար ու խորշակահար հաս-

7 կեր կը բուսանէին . Եւ ան եօթը նիհար հասկերը կը կլլէին եօթը պարարտ ու լեցուն հասկերը ։ Եւ Փարաւոն արթընցաւ , և ահա է-

8 րազ էր ։ Ու եղաւ որ առտուանոր հոգին նեղացաւ , ու կանչել տուաւ Եգիպտոսի Հբոլոր մգերը , և ան տեղի բոլոր Հիմաստունները . ու Փարաւոն պատմեց անոնց իր երազները , բայց մէկը չկար՝ որ զանոնք Փարաւոնին մեկնէ ։

9 Ան ատենը մատակարարապետը զրուցեց Փարաւոնին՝ ըսելով . Ա յսօր ես իմ յանցանքներս կը

10 յիշեմ ։ Փարաւոնը Ֆբարկացաւ իր ծառաներուն , Ի ու զիս դահճապետին տուներ բանտը դրաւ , զիս՝

11 ու հացադործապետը . Եւ Ես ու անիկայ մէկ գիշեր երազ տեսանք . ամէն մէկէրնիս իր երազին նշանակութեանը պէս երազ տեսանք ։

12 Եւ հոն մեզի հետ Ի դահճապետին ծառան՝ Եբրայեցի պատանի մը կար , ու անոր պատմեցինք , և ա-

13 նիկայ Հմեկնեց մեզի մեր երազները . ամէն մէկերնիս իր երազին պէս մեկնեցաւ ։ Ու ինչպէս որ Ի անիկայ մեզի մեկնեց , անանկ եղաւ . զիս իմ պաշտօնիս դարձուց , ու զանիկայ կախեց ։

14 Ի Ան ատենը Փարաւոն Ֆ-ԸԸ խրկեց՝ ու կանչեց Յովսէփը , և Հշուտով բանտէն հանեցին զանիկայ . և ածիլուեցաւ , ու իր հանդերձները փոխեց , ու Փարաւոնին եկաւ ։

ն · ք · գբ · 1715

‡ Կ՚ պրբառուներուն մէջը

– Դան · բ · 1 · գ · 5 · 19 ·

Բ Եզ · է · 11 · 22 · Եր · իթ · 14 · Դան · ա · 20 · բ · 2 · գ · 7 ·

‡ Մատ · բ · 1 ·

Ը ԳԼ · խ · 2 · 3 ·

Ի ԳԼ · լթ · 20 ·

Ջ ԳԼ · խ · 5 ·

Ի ԳԼ · լե · 36 ·

Ը ԳԼ · խ · 12 · ԸԸ ·

Ր ԳԼ · խ · 22 ·

Ի Սադ · ճե · 20 ·

Ի Դան · բ · 25 · աթագ · բ · 8 · Սադ · ճժգ · 7 · 8 ·

15 Եւ Փարաւոն ըսաւ Յովսեփին . Ե-
րազ տեսայ , ու զանիկայ մեկնող
մը չկայ . Եւ քեզի համար լսեցի որ
կ'ըսեն , թէ լսած երազդ կը մեկ-
16 նես : Եւ Յովսէփ պատասխան
տուաւ Փարաւոնին՝ ու ըսաւ .
Ես Աստուած պիտի
տայ խաղաղութեան պատասխան
Փարաւոնին :
17 Եւ Փարաւոն ըսաւ Յովսեփին .
Երազիս մէջ տեսայ որ գետին եզեր-
18 քը կայներ էի . Եւ ահա գետէն եօ-
թը երինջներ ելան՝ պարարտ մարմ-
նով ու գեղեցիկ տեսքով , և մար-
գագետինին վրայ կ'արածուէին :
19 Եւ ահա անոնց ետևէն ուրիշ եօթը
երինջներ ելան՝ նիհար ու խիստ
զազիր տեսքով և վտիտ մարմնով ,
որ անոնց պէս զազիր բնաւ չտեսայ
20 Եգիպտոսի բոլոր երկրին մէջ : Եւ
նիհար ու զազիր երինջները կերան
ան առջի եօթը պարարտ երինջնե-
21 րը . Ու անոնց փորը մտնելէնետքը՝
չէր դիտցուեր թէ անոնք անոնց
փորը մտան . հապա անոնց տեսքը
առջինին պէս զազիր էր : Ետքը ար-
22 թընցայ : Եւ դարձեալ երազիս մէջ
տեսայ՝ որ ահա մէկ ծղօտի վրայ
եօթը լեցուն ու աղէկ հասկեր կ'ել-
23 լէին . Եւ ահա անոնց ետևէն եօ-
թը բարակ՝ նիհար ու խորշակա-
24 հար հասկեր կը բուսնէին . Եւ նի-
հար հասկերը կլլեցին ան եօթը ա-
ղէկ հասկերը : Ու պատմեցի մոգե-
րուն , բայց մէկը չկար որ ինծի
մեկնէ :
25 Եւ Յովսէփ ըսաւ Փարաւոնին .
Մէկ է Փարաւոնին երազը . Աս-
տուած իր ընելիքը յայտնեց Փա-
26 րաւոնին : Եօթը աղէկ երինջնե-
րը՝ եօթը տարի են , և եօթը աղէկ
հասկերը՝ եօթը տարի են . երազը
27 մէկ է : Եւ անոնց ետևէն ելած
եօթը նիհար ու զազիր երինջները՝
եօթը տարի է , և եօթը պարապ
ու խորշակահար հասկերը՝ եօթը
28 տարուան սովն է : Փարաւոնին
զրուցած խօսքս ասկէ է . Աստուած
իր ընելիքը Փարաւոնին ցուցուցեր
29 է : Ահա բոլոր Եգիպտոսի երկրին
մէջ եօթը տարի մեծ առատու-
30 թիւն պիտի գայ . Եւ անոնց ե-
տևէն եօթը տարի սով պիտի
գայ , ու Եգիպտոսի երկրին մէջ
բոլոր առատութիւնը պիտի մո-
ռցուի . և սովը պիտի սպառէ եր-
31 կիրը . Ու երկրին մէջ առատու-
թիւնը պիտի չգիտցուի՝ անկէ ետքը
գալու սովին պատճառաւը . ինչու
32 որ խիստ սաստիկ պիտի ըլլայ : Եւ
երազը երկու անգամ Փարաւոնին
կրկնուելուն պատճառը ասկէ է որ՝
ասիկա Աստուծմէ հաստատուած
ցաւ , և Աստուած շուտով պիտի
33 ընէ ան : Ուստի հիմա թող Փա-
րաւոնը հանճարեղ ու իմաստուն
մարդ մը գտնէ , ու զանիկայ Ե-
գիպտոսի երկրին վրայ կեցընէ :
34 Թող Փարաւոն ընէ , ու երկ-
րին վրայ դործակալներ դնէ , ու
Եգիպտոսի երկրին արմիւքներէն
առատութեան եօթը տարիներուն
35 մէջ՝ հինգէն մէկը առնէ : Եւ ան
զալու ազէկ տարիներուն ՚բոլոր
պաշարը ժողվեն , ու Փարաւոնին
ձեռքին տակը ցորեն դիզեն , և
քաղաքներուն մէջ պաշար պահեն :
36 Ու Եգիպտոսի երկրին մէջ ըլլալու
եօթը տարուան սովին դէմ՝ աս
պաշարը երկրին համար պահուի ,
որ երկիրը սովէն չկորսուի :
37 Եւ Ասոր բանը Փարաւոնին աչ-
քին՝ ու անոր բոլոր ծառաներուն
38 աչքին աղէկ երևցաւ : Եւ Փարաւոն
ըսաւ իր ծառաներուն . Կրնա՞նք
գտնել ասոր պէս մէկը՝ որ իր Ներ-
39 սիդին Աստուծոյ Հոգին ունի : Եւ
Փարաւոն ըսաւ Յովսեփին . Որով-
հետև Աստուած աս ամէնը քեզի
ցուցուց , քեզի պէս հանճարեղ ու
40 իմաստուն չկայ : Դուն իմ տանս
վրայ կեցիր , և իմ բոլոր ժողովուր-
դս քու բերանդ նային . Ես միայն
41 աթոռով քեզմէ մեծ ըլլամ : Եւ
Փարաւոն ըսաւ Յովսեփին . Ահա
Ես քեզ Եգիպտոսի բոլոր երկրին
42 վրայ կեցուցի : Եւ Փարաւոն իր
ձեռքէն մատնին հանեց , ու Յով-
սեփին ձեռքը դրաւ , և զանոր
բեհեզէ հանդերձներ հագցուց ,
ու անոր պարանոցը ոսկի մա-
43 տնակ անցուց : Եւ զանիկայ իր
երկրորդ կառքը հեծցուց . ու
կը պոռային անոր առջևէն .
Ծնրադրութիւն ըրէք . և Ե-
գիպտոսի բոլոր երկրին վրայ կե-
44 ցուց զանիկայ : Եւ Փարաւոն ը-
սաւ Յովսեփին . Ես Փարաւոն եմ .
և առանց քեզի բնաւ մէկը իր ձեռ-
քը կամ իր ոտքը չվերցընէ Եգիպ-
45 տոսի բոլոր երկրին մէջ : Ու Փա-
րաւոն Յովսեփին անունը Փսոմփ-
թոմիսանէ դրաւ , և Ասենէթ
քաղաքին՝ պետափրէայ քուրմին աղջիկը
Ասանէթը՝ անոր կնիկ ըլլալու
տուաւ . ու Յովսէփ Եգիպտոսի
երկիրը պտըտելու ելաւ :
46 Եւ Յովսէփ Եգիպտոսի Փարաւոն
թագաւորին առջևը ձլած առե-
նը երեսուն տարեկան էր : Եւ
Յովսէփ Փարաւոնին առջևէն ելաւ ,
ու Եգիպտոսի բոլոր երկիրը պտը-
47 տեցաւ : Եւ առատութեան եօթը
տարիներուն մէջ երկիրը խիստ
48 շատ արդիւնք տուաւ : Ու Եգիպ-
տոսի երկրին մէջ եղած եօթը տա-

Ն · ք · գԲ · 1715
Ը Հմր 12 ։ Սաղ · խե · 14 ։ Դան · ե · 16 ։
Ի Դան · բ · 30 ։ Գոր · գ · 12 ։ բ Կոր · գ · 5 ։
Ժ Գլ · խ · 8 ։ Դան · բ · 22 , 28 , 47 ։ գ : 2 ։
Ա Հմր 1 ։
Բ Հմր 8 ։ Դան · գ · 7 ։
Գ Դան · բ · 28 , 29 , 45 ։ Ցայս · գ · 1 ։
Դ Թագ · բ · 1 ։
Ե Հմր 25 ։
Զ Հմր 47 ։
Է Հմր 54 ։
Ը Գլ · խե · 13 ։
Թ Թու · իգ · 19 ։ Ես · իգ · 10 , 11 ։

Ն · ք · գԲ · 1715
Ժ Գլ · խ · 15 , 19 ։ Ը Սաղ · ճե · 19 ։ Գոր · է · 10 ։
Ի Թու · իե · 18 ։ Ցոր · լբ · 8 ։ Ա-
մոս · բ · 6 ։ Դան · դ · 8 , 18 ։ է · 11 , 14 ։ գ · 3 ։
Ա Սաղ · ճե · 21 , 22 ։ Գոր · է · 10 ։
Բ Դան · գ · 4 ։
Գ Ելթ · գ · 10 ։ բ · 2 , 8 ։
Դ Ելթ · բ · 15 ։
Ե Դան · է · 7 , 29 ։
Զ Ելթ · գ · 9 ։
Է Գլ · իր · 6 ։ իե · 8 , 26 ։ Գոր · է · 10 ։
Ը Յ՝ երկրին փրկիչ ։
Թ Եբր · Օ՝ին

Իրր 1715
Ժ Թագ · ժգ · 21 ։ գ Թագ · ժբ · 6 , 8 ։ Դան. ա · 19 ։

ն · ք · գՁ
Իսր 1715

բինեերուն բոլոր պաշարը ժողվեց , ու քաղաքներուն մէջ դրաւ պաշարը . ո–ի քաղաքին բոլորտիքը եղած արտերուն պաշարը՝ նոյն +–
49 ը–ի մէջը դրաւ ։ Եւ Յովսէփ ծովի աւազին չափ խիստ շատ ցորեն դիզեց . անանկ որ հաշիւ չգալուն համար՝ չափելը ձգեց ։
50 Եւ սովին տարիները գալէն առաջ՝ Յովսեփին երկու որդի ծնաւ , որ Ասենէթ քաղաքին Պետափրեայ քուրմին աղջիկը Ասենէթ ծնաւ
51 անոր ։ Եւ Յովսէփ առջինեկին անունը Մանասէ դրաւ . քանզի ը–ո– . Աստուած ինծի մոռցուց իմ բոլոր վիշտերս , ու իմ հօրս
52 բոլոր տունը ։ Եւ երկրորդին անունը Եփրեմ դրաւ . քանզի ը–ո– . Աստուած իմ տառապանացս երկրին մէջ բաձնեցուց զիս ։
53 Ու Եգիպտոսի երկրին մէջ եղած առատութեան եօթը տարին ան-
54 ցաւ ։ Եւ Յովսեփին ըսածին պէս՝ սովին եօթը տարին դալ սկսաւ . և բոլոր երկիրներուն մէջ սով եղաւ , բայց Եգիպտոսի բոլոր երկրին մէջ
55 հաց կար ։ Ու երբոր Եգիպտոսի բոլոր երկիրը անօթեցաւ , ժողովուրդը հացի համար փարաւոնին աղաղակեց . և Փարաւոն բոլոր Եգիպտացիներուն . Յովսեփին գացէք . ինչ որ ձեզի ըսէ , ան ըրէք ։
56 Ու երկրին բոլոր երեսին վրայ սով եղաւ . և Յովսէփ բացաւ բոլոր շտեմարանները , ու Եգիպտացիներուն պաշար ծախեց . և սաստկացաւ Եգիպտոսի երկրին
57 մէջ ։ Ու բոլոր աշխարհ Եգիպտոս կու գային՝ Յովսեփէն պաշար ծախու առնելու . ինչու որ ամէն երկրի մէջ սովը սաստկացաւ ։

ՆՂ Օր · Թ · 28 ։

ԳԼ · ԽԲ

1 Յակոբ իր տասը որդիքը Եգիպտոս կը խրկէ ցորեն ծախու առնելու համար ։ 16 Յովսէփ զանոնք բանտը կը դնէ՝ լրտես էք ըսելով ։ 18 ու նաբր կ'ազատէ զանոնք ասպիանով՝ որ բնակիները բերեն ։ 21 Յովսէփը ծախելնին միտը բերելով՝ խիղճերնուն մէջ կը խօսվին ։ 24 Շմաւոն իբրև պատանդ կը պահուի ։ 25 Փիւնեները ցորենը առնելով՝ ետ կը դառնան , 29 ու ասոնց բաները Յակոբին կը պատմեն ։ 36 Յակոբ՝ Բենիամինը խրկել չուզեր ։

1707
– Գոր · է · 12 ։

1 Ու – Յակոբ երբ իմացաւ Եգիպտոսի մէջ պաշար ըլլալը , Յակոբ ըսաւ իր որդիներուն . Ինչու՞ մեկ-
2 զմեկու կը նայիք ։ Եւ ըսաւ . Ահա լսեցի որ Եգիպտոսի մէջ պաշար կայ . Հոն իջէք՝ ու անկէ մեզի համար ծախու առէք , որ բ ողջ մնանք
3 ու չմեռնինք ։ Եւ Յովսեփին տասը եղբայրները Եգիպտոս իջան ցո-
4 րեն ծախու առնելու ։ Բայց Յակոբ Յովսեփին եղբայրը Բենիամինը՝

անոր եղբայրներուն հետ չխրկեց . քանզի ըսաւ . Զրլլայ որ փորձանք մը պատահի անոր ։
5 Եւ Իսրայէլին որդիները հոն գացողներուն հետ պաշար ծախու առնելու եկան . քանզի Քանանու
6 երկրին մէջ սով կար ։ Ու Յովսէփ Էան երկրին իշխանն էր . և ինքը երկրին բոլոր ժողովուրդին պաշար կը ծախէր . ու Յովսեփին եղբայրները եկան , ու Երիրենց երեսները մինչև գետինը խոնարհութիւն ըրին
7 անոր ։ Եւ Յովսէփ իր եղբայրները տեսածին պէս՝ ճանչցաւ զանոնք , բայց ինքզինքը անոնց չճանչցուց , ու անոնց հետ խստութեամբ խօսեցաւ , և անոնց ըսաւ . Ո՞ւրկից եկաք . և անոնք ըսին . Քանանու երկրէն կերակուր ծախու առնելու
8 Ի–ն ։ Եւ Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ , բայց անոնք զինքը չճանչ-
9 ցան ։ Եւ Յովսէփ Էանոնց վրայով իր տեսած երազները միտը բերաւ , ու ըսաւ անոնց . Դուք լրտեսներ էք . երկրին տկարութիւնը տես-
10 նելու եկած էք ։ Եւ ըսին անոր . Չէ , տէր իմ , հապա քու ծառաներդ կերակուր ծախու առնելու է-
11 կանք ։ Մենք ամէնքս մէկ մարդու մը որդիներ ենք , մենք շիտակ Ը–Դ ենք . ծառաներդ լրտեսներ չեն ։
12 Եւ անիկայ ըսաւ անոնց . Չէ , հապա երկրին տկարութիւնը տեսնելու
13 եկած էք ։ Եւ անոնք ըսին . Մենք քու ծառաներդ քանանու երկրին մէջ մէկ մարդու մը որդիքը ըլլալով՝ տասնմէկու եղբայրներ ենք . և ահա ո–ի պզտիկը այսօր մեր հօրը քովն
14 է , ու մէկալը չկայ ։ Եւ Յովսէփ ըսաւ անոնց . Ան է որ ձեզի պրուցը՝ ըսելով , թէ դուք լրտեսներ էք .
15 Ասով պիտի փորձուիք . Փարաւոնին կենացը համար՝ դուք ասկէ պիտի չելլէք , թէ որ ձեր պզտիկ եղ-
16 բայրը հոս չգայ ։ Ղրկեցէք մէկը ձեր եղբայրը բերելու իրկեցէք , ու դուք բանտը դրուիք , որ ձեր խօսքերը փորձուին , թէ արդեօք ձեր մէջը ճշմարտութիւն կայ . և թէ չէ , Փարաւոնին կենացը համար՝ դուք
17 լրտեսներ էք ։ Եւ իրեք օր բանտը դրաւ զանոնք ։
18 Եւ երրորդ օրը Յովսէփ ըսաւ անոնց . Ասանկ ըրէք որ ողջ մնաք . Ք–ը–ո–ր ես Աստուծմէ կը վախնամ՝
19 թէ որ դուք շիտակ Ը–Դ էք , ձեր եղբայրներէն մէկը ձեր բանտարկուած տանը մէջ արդիւնք . և դուք գացէք , ձեր տանը անօթութեանը համար պաշար տարէք .
20 Ու Ձեր պզտիկ եղբայրը ինծի բերէք , որ ձեր խօսքերը շիտակ ելլեն , ու չմեռնիք ։ Եւ անանկ ըրին ,

ն · ք · գՁ
1707

Ա Գր 38 ։

Ծ Գոր · է · 11 ։

Ը Գլ · խա · 41 ։

Ը Գլ · լե · 7 ։

Ի Գլ · լե · 5 · 9 ։

Ձ Եբր · մերկութիւնը

Ղ Ես ա թագ · ա · 26 ։ ժէ · 55 ։

Ղ Գն · իե · 43 ։ Նէեմ · է · 15 ։

Ձ Ա Գր 34 ։ Գլ խգ · 5 ։ խգ · 28 ։

Ն·Ք·ՂՔ· 1707

ՀԾՊ·ԼՂ·8, 9։ Ովս·ե· 15։ ԼՂտակ·իա· 13։ Մատ· է·2։ Ի ԳԼ·ԼԵ·21։

21 Ու՝ Ակզմկու ըսին . Իրաւցընէ մեր եղբօրը վրայով յանցաւոր ենք . ինչու որ մենք տեսանք անոր հոգին նեղութիւնը՝ երբոր ինքը մեզի աղաչեց , ու մենք չլրինք . Եանոր համար աս նեղութիւնը վրանիս եկաւ ։ 22 Ռուբէն պատասխան տուաւ անոնց՝ ըսելով . Ես ձեզի չզրուցեցի՞ , ըսելով Թէ , Ցղուն դէմ մեղք մի գործէք . ու դուք մենք չլրիք . և ահա հիմա անոր արիւնը մեզմէ կը պահանջուի ։ 23 Եւ անոնք չէին գիտեր որ Յովսէփ կը հասկրնար . ինչու որ թարգմանը կը հասկրնար ։ 24 Նով կը խօսէր իրենց հետ ։ Եւ անոնցմէ դաւուեցաւ ու լացաւ . և նորէն անոնց դարձաւ , ու խօսեցաւ անոնց հետ . և անոնցմէ Շմաւոնը առաւ , ու անոնց աչքին առջևը կապեց զանիկայ ։

25 Եւբրը Յովսէփ հրաման ըրաւ որ անոնց ամանները ցորենով լեցընեն , ու ամէն մէկուն ուտակը իր քուրձին մէջը դնեն , և անոնց ճամբու պաշար տան ։ Ու Եասանկ ըրաւ անոնց համար ։ 26 Նոնց ։ Եւ անոնք իրենց էշերուն վրայ բեռցուցին ցորենը , ու անկէ գացին ։ 27 Եւ անոնցմէ մէկը՝ իջևանին մէջ իր իշուն կեր տալու համար իր քուրձը բացածին պէս՝ իր ուտակը տեսաւ , որ ահա իր քուրձին 28 բերանն էր ։ Ու իր եղբայրներուն ըսաւ . Իմ ուտակս ետ տրուեցաւ , և ահա հոս իմ քուրձիս մէջն է . ու անոնց սիրտը խռովեցաւ , ու վախնալով իրարու ըսին . Ի՞նչ է աս՝ որ Ասուած մեզի բրաւ ։

29 Ու եկան Քանանու երկիրը իրենց հօրը Յակոբին , և բոլոր իրենց դլուխ եկածները պատմեցին անոր՝ ըսելով . Այն երկրին տէրը եղող մարդը մեզի խստութեամբ խօսեցաւ , ու մեզ երկիրը լրտեսողներու տեղ դրաւ ։ 31 Եւ ըսինք անոր . Մենք շիտակ ենք . մենք լրտեսներ չենք . 32 Մենք՝ մեր հօրը որդիքը՝ տասուերկու եղբայրներ ենք . մէկը չկայ , և ամենէն պզտիկը Քանանու երկրին մէջ մեր հօրը քովն է այսօր ։ 33 Եւ այն երկրին տէրը եղող մարդը ըսաւ մեզի . Ձեր շիտակ ըլլալը ասկէ դիտնամ . ձեր եղբայրներուն մէկը իմ քովս ձդեցէք , և ձեր ընտանեացը անօթութեանը համար գացէք 34 առէք , ու գացէք . Եւ ձեր պզտիկ եղբայրը ինծի բերէք , որ դիտնամ Թէ՝ դուք լրտեսներ չէք . հապա շիտակ ենք . այսպէս ձեր եղբայրը ձեզի կու տամ , ու աս երկրին մէջ առուտուր բրէք ։ 35 Ու եղաւ որ իրենց քուրձերը պարպած

ատեննին , ահա ամէն մէկուն ուտակին ծրարը իր քուրձին մէջն էր . և իրենք ու իրենց հայրն Ել ուտակին ծրարները տեսածնուն պէս՝ վախ- 36 ցան ։ Եւ անոնց հայրը Յակոբ ըսաւ անոնց . Ինծ անորդի թողուցիք . Յովսէփը չկայ , Շմաւոնը չկայ , Բենիամինն ալ պիտի առնէք . ասոնց ամէնը իմ գլխուս եկաւ ։ 37 Եւ Ռուբէն խօսեցաւ իր հօրը՝ ու ըսաւ . Թէ որ ես զանիկայ քեզի չբերեմ , իմ երկու որդիներս մեռցուր . զանիկայ իմ ձեռքս յանձնէ , ու ես քեզի ետ կը բերեմ անիկայ ։ 38 Բայց Ցնէ ըսաւ . Իմ որդիս ձեզի հետ չերթար . ինչու որ Ենոր եղբայրը մեռած է , ու անիկայ մինակ մնաց . և Եթէ որ ձեր երթալու ճամբուն մէջ անոր փորձանք մը պատահելու ըլլայ , իմ ճերմակ մազերս տրտմութիւնով դերեզմանը պիտի իջեցընէք ։

ԳԼ · ԽԳ

1 Ցակոբ դժուարաւ կը համոզուի Բենիամինը խրկելու ։ 15 Յովսէփ իր եղբայրները կ'ընդունի · 31 անոնց խնջոյք մը կ'ընէ ։

1 Այ սակը Եաստկացաւ երկրին 2 մէջ ։ Ու եղաւ որ երբ Եգիպտոսէն բերած պաշարնին կերան հատցուցին , հայրերնին ըսաւ անոնց . Գացէք նորէն մեզի քիչ մը 3 ուտելիք ծախու առէք ։ Եւ Ցուդան զրուցեց անոր ըսելով . Այն մարդը մեզի հաստատ վկայութեամբ խօսելով՝ ըսաւ . Թէ որ ձեր եղբայրը հետերնիդ չըլլայ , 4 իմ երեսս պիտի չտեսնէք ։ Թէ որ մեր եղբայրը մեզի հետ խրկես , կ'իջնենք ու քեզի ուտելիք ծախու 5 կ'առնենք . Բայց Թէ որ չխրկես , չենք իջներ . ինչու որ այն մարդը ըսաւ մեզի . Թէ որ ձեր եղբայրը հետերնիդ չըլլայ , իմ երեսս պիտի 6 չտեսնէք ։ Եւ Իսրայէլը ըսաւ . Ինչո՞ւ համար չարութիւն բրիք ինծի՝ ան մարդուն իմացընելով Թէ 7 ուրիշ եղբայր ունիք ։ Եւ անոնք ըսին . Այն մարդը մեզի համար ու մեր ազգականներուն համար ճշդիւ հարցուց՝ ըսելով . Ձեր հայրը տակաւին ողջ է , ուրիշ եղբայր ունիք . և մենք աս խօսքերուն համեմատ պատասխան տուինք անոր . արդեօք մենք կրնայինք դիտնալ , որ անիկայ պիտի ըսէ Թէ՝ Ձեր եղ- 8 բայրը իջեցուցէք ։ Եւ Ցուդան իր հօրը Իսրայէլին ըսաւ . Ցղան ինծի հետ խրկէ , ու ելլենք երթանք , որ ողջ մնանք ու չմեռնինք , մենք ալ՝ դուն ալ՝ Ե մեր 9 ընտանիքներն ալ ։ Ես երաշխաւոր կ'ըլլամ անոր համար . զանիկայ իմ ձեռքէս պահանջէ . Եթէ որ անի-

Ն·Ք·ՂՔ· 1707

ՀՑԱս գԼ· Խգ·21։

ՀԳԼ·Խգ·14։

Ն ՀՀր 13։ ԳԼ·ԼԵ·33։ Խգ·28։ Ե ՀՀր 4։ ԳԼ· Խգ·29։ Զ ԳԼ·ԼԵ·35։ Խգ·31։

1 Ու սովը ասատկացաւ երկրին — ԳԼ·Խա· 54·57։

Բ ԳԼ·Խր· 20։Խգ·23։

Ե ՀՀր 7։

Է ՀՀր 15, 19, 20։

Ը ԳԼ·ԼԳ·10։

Ն·Ք·Դ·
1707

կայ քեզի չբերեմ , ու քու առջևդ
չկայնեցընեմ , յաւիտեան քեզի
10 յանցաւոր ըլլամ : Քանզի թէ որ
չդադրեցընէք , մինչև հիմա երկրորդ
11 անգամ դարձած կ'ըլլայինք : Եւ
անոնց հայրը Իսրայէլ ըսաւ անոնց .
Եթէ այդպէս է , հիմա ասանկ ըրէք .
Ձեր ամաններուն մէջը երկրին ամե-
նէն աղէկ պտուղներէն առէք , ու
Տ ԳԼ·լբ·20· մարդուն ընծայ տարէք , քիչ մը
Ա՚ակ·ժբ· բալասան , և քիչ մը մեղր , դա-
16 · միւներ , ու զմուռս , փստուղ ու
Ե ԳԼ·լբ·25· 12 նուշ . Եւ ձեռքերնիդ կրկնապա-
Երեմ· բ· տիկ ասանկ առէք , ու ձեր քուրձե-
22 · րուն բերանը եղած ասոկը՝ Ղոր ետ
Ղ ԳԼ· Խբ· բերուեցաւ , ձեռքերնիդ ---- ետ
25 · 35 · տարէք . գուցէ սխալմունք եղած
13 էր . Եղբայրներիդ ալ առէք , ու ե-
լէք նորէն ան մարդուն գացէք .
14 Եւ Ամենակարող Աստուածը ձեզի
շնորհք գտնել տայ ան մարդուն
առջևը , որ ձեր միւսալ եղբայրը ու
Ի Ես·գ· Բենիամինը թող տայ ձեզի . և Ես
16 · թէ որ անզաւակ մնալու եմ , թող
անզաւակ մնամ :
15 Եւ մարդիկը առին աս ընծա-
ները , ու ձեռքերնին կրկնապատիկ
ասոկ առին , նաև Բենիամինը , ու
ելան Եգիպտոս իջան , և Յով-
16 սեփին առջևը կայնեցան : Եւ երբ
Ը ԳԼ·իդ·2· Յովսէփ Բենիամինը անոնց հետ
լԹ·4· իդ· տեսաւ , ըսիր տանը վերակացուին
1· ըսաւ . Ցուն տար -- մարդիկը , ու
Բ ա Թագ· Ի՚ե· 11· * պարարտ կենդանիներ՚՚ մորթէ ,
* Եբր· մար- և պատրաստէ՛ . ինչու որ -- մար-
թելիք դիկը կէսօրին ինծի հետ պիտի ճա-
17 շեն : Եւ ան մարդը Յովսեփին ը-
սածին պէս ըրաւ . ու ան մարդը
Յովսեփին տունը տարաւ մարդիկը :
18 Եւ մարդիկը վախցան Յովսեփին
տունը տարուելնուն համար , ու
ըսին . Առջի անգամին մեր քուր-
ձերուն մէջը դարձած ասոկին հա-
Ֆ Ցոբ· լ· մար կը տարուինք , որ ի՛վրանիս
14 · յարձակի , ու մեր վրայ իյնայ , մեզ
ծառաներ առնէ՝ ու մեր էշերը :
19 Եւ Յովսեփին տանը վերակացուն
եղող մարդուն մօտեցան , ու տանը
20 դրանը մէջ խօսեցան անոր , Ու
Ի ԳԼ·Խբ·3· ըսին . Ո՜հ տէր , Իսկէզ առաջ
10 · կերակուր ծախու առնելու իջանք :
Լ ԳԼ· Խբ· 21 Ու Լեղաւ որ երբ իջևանը եկանք ,
27 , 35 · ու մեր քուրձերը բացինք , ահա
ամէն մէկերնուս ասոկը իր քուր-
ձին բերանն էր , մեր ասոկը
լման կշռադրամը . և զանիկայ մեր
22 ձեռքովը ետ բերինք . Ու ձեռքե-
նուս մէջ ուրիշ ասոկ բերինք՝ կե-
րակուր ծախու առնելու համար .
չենք գիտեր թէ ով դրաւ մեր
23 ասոկը մեր քուրձերուն մէջ : Եւ
անիկայ ըսաւ . Խաղաղութիւն
ձեզի , մի՛ վախնաք . ձեր Աստուածը
և ձեր Հօրը Աստուածը ձեզի գանձ
տուաւ ձեր քուրձերուն մէջ . †Ես
առի ձեր ասոկը՚՚ : Եւ Շմաւոնը
դուրս հանեց անոնց :
24 Ու ան մարդը Յովսեփին տունը
տարաւ մարդիկը , և ջուր տուաւ
-ՆՆՆ , Ի՛ու իրենց ոտքերը լուա-
ցին , ու անոնց էշերուն կեր տուաւ :
25 Եւ անոնք ընծաները պատրաստե-
ցին՝ մինչև Յովսեփին կէսօրուան
գալը . քանզի իմացան որ հոնկ
26 Հոն հաց պիտի ուտեն : Եւ երբ
Յովսէփ տունը եկաւ , իրենց ձեռ-
քը եղած ընծաները անոր մատու-
ցին տանը մէջ , ու Ի՛նչպէս պա-
տիները Ի՚ԼՀվ անոր խոնարհութիւն
27 ըրին : Եւ անոնց Հողջոյթիւնը
Հարցուց՝ ըսելով . Ձեր ձեր
Հայրը՝ Հօրուն վրայով խօսեցաք
ԻՆՉ , աղէկ է . տակաւին ողջ է :
28 Եւ ըսին . Քու ծառադ մեր Հայրը
աղէկ է , տակաւին ողջ է . Ու
ծունկ ու խոնարհութիւն ըրին :
29 Եւ իր աչքերը վերցուց , ու Իր
մօրը որդին՝ իր եղբայրը Բենիա-
մինը տեսաւ , և ըսաւ . Ա՞ն է
ձեր պզտիկ եղբայրը , Հօրուն վրա-
յով խօսեցաք ինծի . ու ըսաւ
ԲԼՆԻ-ՓՆԻ . Աստուած ողորմի քե-
30 զի՛ որդեակ իմ : Եւ Յովսէփ շու-
տով ելաւ . քանզի ի՛ր աղէկը
Ջ գԹագ· գ· գալարեցաւ իր եղբօրը վրայ , և
26 · լալու փնտռէր . ու ներսի
սենեակը մտաւ , ու Ո՜հոն լացաւ :
Յ ԳԼ·Խբ·24· 31 Եւ լուաց իր երեսը , ու դուրս
ելաւ . և զսպեց ինքզինքը , ու
Ն Հմր 25 · 32 ըսաւ . Ն՚Հաց բերէք : Եւ իրեն զատ ,
ու անոնց զատ , և իրեն հետ ուտող
Եգիպտացիներուն զատ դրին .
քանզի Եգիպտացիները Եբրայե-
ցւոց հետ հաց չէին կրնար ուտել ,
Ե ԳԼ·Խգ·34· Եզ·ը·26· ինչու որ Եգիպտացիներուն զզուե-
33 լի էր : Եւ նստան անոր առջևը ,
անդրանիկը իր անդրանկութեանը
պէս , և պզտիկը իր պզտիկու-
թեանը պէս . և մարդիկը իրարու
34 Ն-ԼՀվ կը զարմանային : Եւ անի-
կայ իր առջևէն բաժիններ խրկեց
անոնց . բայց Բենիամինին բաժինը
Ա ԳԼ·Խե·22· մէկալներուն բաժինէն -հինգ ան-
Ղ Ընգ·ա·6· դամ աւելի էր . և խմեցին , ու
Ցոհ·բ·10· Ա՚անոր հետ մէկտեղ զուարթացան :

ԳԼ· ԽԴ

1 Յովսէփ իր եղբայրները ճամբայէն ետ դար-
ձնելու համար հնարք կը բանեցնէ : 14 Յու-
դային խոնարհ ազաչանքը :

1 Ու իր տանը վերակացուին հրա-
ման ըրաւ , ըսելով . Ա՚ս մար-
դոցը քուրձերը տանել կրցած-
նուն չափ ուտելիք լեցուր , ու ա-
մէն մէկուն ասոկը իր քուրձին բե-
2 րանը դիր : Եւ -ՓՆԻ պզտիկին
քուրձին բերանը իմ գաւաթս՝ ար-

Ն·Ք·Դ·Ե· 1707

ծաթի գաւաթը՝ ու իր պաշարին
ստակը դիր ։ Ու անիկայ Յովսեփին
ըսած խօսքին պէս ըրաւ ։
3 Եւ առաւօտուն լուսցածին պէս
մարդիկը խրկուեցան , իրենք՝ ու
4 իրենց էշերը ։ Անոնք քաղաքէն
ելլելով գետ չհեռացած , Յովսէփ
իր տանը վերակացուին ըսաւ ։ Ե-
լէ՛ ան մարդոցը ետևէն վազէ ,
ու անոնց հասիր , և ըսէ անոնց .
Ինչո՞ւ բարիին փոխարէն չար հա-
5 տուցիք . Ա՛ս ան չէ՞ որուն մէջէն իմ
տէրս կը խմէ , ու անով կը հմայէ .
ասանկ ընելով՝ գէշութիւն ըրիք ։
6 Եւ անիկայ հասաւ անոնց . և ըսաւ
7 անոնց ասոնց նոյն խօսքերը ։ Եւ ըսին
անոր . Ինչո՞ւ իմ տէրս ասանկ
խօսքեր կը զրուցէ . քա՛ւ լեցի՛ որ
քու ծառաներդ ասանկ բան մը
– Գէ·խգ·21· 8 ընեն ։ Ահա՛ մեր քուրձերուն բե-
րանը գտած ստակնիս Քանանու
երկրէն քեզի ետ բերինք . ուրեմն
ինչպէս քու տիրոջդ տունէն ար-
ծաթ կամ ոսկի պիտի գողնանք ։
9 Քու ծառաներուդ որուն քովը որ
Բ Գէ·լ·32· գտնուի , Բթող անիկայ մեռնի ,
ու մենք ալ իմ տիրոջս ծառաներ
10 ըլլանք ։ Եւ անիկայ ըսաւ . Հիմա
ձիշդ ձեր ըսածին պէս թող ըլլայ .
որուն քովը որ գտնուի , ան ինծի
ծառայ ըլլայ , ու դուք անպարտ
11 ըլլաք ։ Ուստի ամէն մէկը արագ-
նօք իր քուրձը գետինը իջեցուց ,
ու ամէն մէկը իր քուրձը բացաւ ։
12 Եւ անիկայ մեծէն սկսեց փնտռել ,
ու մինչև պզտիկը նայեցաւ . և
գաւաթը Բենիամինին քուրձին
մէջ գտնուեցաւ ։
Բ Գէ· լէ· 29 , 34 ։ Թու· ժգ· 6 ։ բ Թագ· ա· 11 ։ 13 Ան ատեն Բիրենց հանդերձները
պատռեցին . և ամէն մէկը իր էշը
բեռցուց , ու քաղաքը գարձան ։
14 Եւ Յուդա ու անոր եղբայրները
Յովսեփին տունը եկան , և անիկայ
տակաւին հոն էր , ու Բանոր առջևը
Բ Գէ·լէ·7· 15 գետինը ինկան ։ Եւ Յովսէփ ը-
սաւ անոնց . Ա՛ս ի՞նչ բան է որ ը-
րիք . չէ՞ք գիտեր որ ինծի պէս
Ղ Հմր 5 ։ 16 մարդ մը անշուշտ Բկը հմայէ ։ Եւ
Յուդան ըսաւ . Իմ տիրոջս ի՞նչ
ըսենք , ի՞նչ խօսինք , կամ ի՞նչ-
պէս արդարացընենք ինքզինքնիս .
Աստուած քու ծառաներուդ յան-
ցանքը բռնեց . ահա՛ մենք մեր
Ղ Հմր 9 ։ տիրոջը ծառաներ ենք , մենք ալ՝
անիկա ալ որուն քովը գտաւթը
17 գտնուեցաւ ։ Եւ անիկայ ըսաւ .
Բ Ընտ· ժէ· 15 ։ Բքա՛ւ լեցի՛ որ ես այդպէս ընեմ .
Հա՛ն մարդը՝ որուն քովը գա-
ւաթը գտնուեցաւ , անիկայ ինծի
ծառայ ըլլայ , ու դուք խաղաղու-
թեամբ ձեր հօրը երթ՛ք ։
18 Ան ատեն Յուդան մօտեցաւ ա-
նոր՝ ու ըսաւ . Ո՛վ տէր իմ , չնորհք
ընէ՝ թող քու ծառադ խօսք մը
խօսի իմ տիրոջս ականջներուն , ու
ծառայիդ վրայ բարկութիւնդ
չորրորդի . ինչու որ դուն Փարա-
19 ոնին պէս ես ։ Իմ տէրս իր ծա-
ռաներուն հարցուց՝ ըսելով . Հայր
20 կամ եղբայր ունիք ։ Եւ մենք ը-
սինք մեր տիրոջը , թէ ծեր հայր մը
ունինք , և Բի --ին- էր Բծերու-
թեան --ին- պզտիկ որդի
մը --ն , ու անոր եղբայրը մեռած
է , և միայն անիկայ իր մօրմէն
Բ Գէ· լէ· 3 · մնաց , ու անոր հայրը կը սիրէ զա-
21 նիկայ ։ Եւ քու ծառաներուդ ը-
սիր . Բինծի իջեցուցէք անիկայ ,
Բ Գէ· խ· 15 , 20 · 22 · որ * տեսնեմ ։ Եւ իմ տիրոջս ըսինք .
Ցղան իր հայրը չկրնար ձգել . քանզի
* Եբ·ե·այբ· անոր վրայ դնեմ ։
թէ որ իր հայրը ձգելու ըլլայ ,
23 անիկայ պիտի մեռնի ։ Եւ քու
Բ Գէ· խգ· 3 · 5 · ծառաներուդ ըսիր . Բթէ որ ձեր
պզտիկ եղբայրը ձեզի հետ չիջնէ ,
իմ երեսս ալ պիտի չտես-
24 նէք ։ Ու երբոր քու ծառայիդ իմ
հօրս ելանք , իմ տիրոջս խօսքերը
Լ Գէ· խգ· 2 · 25 պատմեցինք անոր ։ Եւ Բմեր հայրը
ըսաւ . Գացէք նորէն , -- մեզի
քիչ մը կերակուր ծախու առէք ։
26 Եւ մենք ըսինք . Չենք կրնար իջ-
նել . թէ որ մեր պզտիկ եղբայրը
մեր հետը ըլլայ , ան ատենը կ՚իջ-
նենք . ինչու որ պիտի չկրնանք տես-
նել ան մարդուն երեսը , թէ որ մեր
պզտիկ եղբայրը մեր հետը չըլլայ ։
27 Եւ քու ծառադ իմ հայրս ըսաւ
մեզի . Դուք գիտէք որ Բիմ կնիկս
Բ Գէ· խգ· 19 · 28 երկու -ը- ծնաւ ինծի . Եւ մէկը
Բ Գէ·լէ·33· Բձեզմէ փախուստ է , ու
29 մինչև հիմա գինքը չտեսայ ։ Եւ
Լ Գէ· խբ· 36 , 38 · թէ որ Բասիկայ ալ քովէս առ-
նէք , ու անոր փորձանք մը պատա-
հի , իմ ճերմակ մազերս տրտմու-
թիւնով գերեզմանը պիտի իջե-
30 ցընէք ։ Ուստի հիմա՝ երբոր քու
ծառայիդ իմ հօրս երթամ , ու
տղան մեր հետը չըլլայ , Բանոր
Բ Թագ· ժբ· 1 · հոգին տղուն հոգիին հետ կապուած
31 ըլլալով , երբոր տեսնէ թէ տղան
Բը Հնաշ չէ , պիտի մեռնի . և ծա-
ռաներդ՝ քու ծառայիդ մեր հօրը
ճերմակ մազերը տրտմութիւնով
32 գերեզմանը պիտի իջեցընենք ։ Ին-
չու որ ծառադ՝ տղուն համար իմ
հօրս երաշխաւոր եղայ՝ ըսելով .
Յ Գէ· խգ· 9 · Բթէ որ ես անիկայ քեզի չբերեմ ,
իմ հօրս յաւիտեան յանցաւոր ըլ-
33 լամ ։ Ուստի հիմա կ՚աղաչեմ քեզի ,
Ղ Գէ· լբ· 32 · տղուն տեղ՝ ծառադ իմ տիրոջս
ծառայ մնայ , և տղան իր եղբայրնե-
34 րուն հետ ելլէ . քանզի թէ որ
տղան իմ հետս չըլլայ , Բինչպէս
ելլեմ իմ հօրս . չըլլայ որ իմ հօրս
գալու փորձանքը տեսնեմ ։

Ն · ք · գԲ · 1707

ԳԼ · ԽԵ

1 Ցովսէփ զինքը իր եղբայրներուն կը ճանչցընէ . 5 անցած բաները Աստուծոյ նախախնամութեանը տալով՝ կը մխիթարէ զանոնք . 9 ու կը խրկէ որ իր հայրը բերեն : 16 Փարաւոն ասոնց բանին կը հաճի : 21 Ցովսէփ անոնց ճամբուն պաշարը կու տայ , ու զանոնք կը յորդորէ որ խռովութիւն չունենան ճամբին : 25 Ցակոբ իր որդւոյն լուրը առնելով՝ կը զօրանայ :

1 Եւ Ցովսէփ չկրցաւ զսպել ինքզինքը բոլոր իր քովը կայնողներուն առջեւը , ու պոռաց . Քովէս դուրս հանեցէք բոլոր մարդիկը . և երբ Ցովսէփ ինքզինքը իր եղբայրներուն ճանչցուց , քովը մարդ մը
– թու · ժգ · 1 ։ 2 չկեցաւ : Եւ ձայնը վերցընելով լացաւ . ու Եգիպտացիք լսեցին , ու
3 Փարաւոնին տունն ալ լսեց : Եւ Ցովսէփ բսաւ իր եղբայրներուն . Ինչ Ցովսէփն եմ . իմ հայրս տակաւին ողջ է . ու եղբայրները չէին
բ Գոր · է · 13 ։ կրնար պատասխան տալ անոր . ինչու որ անոր առջեւը ապշած կեա-
4 ցին : Եւ Ցովսէփ բսաւ իր եղբայրներուն . Ինձի մօտ եկէք . անոնք
գ Ցոր · դ · 5 ։ իգ · 15 ։ Մաա · ժգ · 26 ։ Մար · գ · 50 ։ ալ մօտ եկան . և բսաւ . Ես ձեր եղբայրը Ցովսէփն եմ , զոր Եգիպ-
դ Գլ · լԷ · 28 ։ 5 տոս զրկեցիք ծախելէդ համար Ի՛մի վշտանաք , ու ձեզի ծանր չերեւնայ . Ընչու որ Աստուած իրրեւ
Ե Ես · խ · 2 ։ բԿոր · բ · 7 ։ Ղ Գլ · ծ · 20 ։ Սաղ · ճՆ · 16 · 17 ։ Տես բԹագ · ժգ · 10 · 11 ։ Գոր · գ · 24 ։ կեց զես ձեր առջեւէն՝ կեանք պա-
6 հելու համար : Քանզի երկրիս վրայ սովին երկրորդ տարին է աս . և տակաւին հինգ տարի կայ՝ որ ոչ
7 վարուցան , ոչ ալ հունձք պիտի : Եւ Աստուած զես ձեր առջեւէն խրկեց՝ որ երկրի վրայ ձեզի
8 սերունդ պահէ , և մեծ ազատու- թիւնով ձեզ ապրեցընէ : Եւ հիմա զես հոս խրկողը դուք չէք , հապա
Է Գլ · խա · 43 ։ Դատ · ժէ · 10 ։ Ցոբ · իԲ · 16 ։ Աստուած է . ու է զես Փարաւոնին հայր՝ և իր բոլոր տանը տէր՝ ու
9 Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրաւ : Շուտով իմ հօրս երթէք , ու բսէք անոր . Այսպէս կ'բսէ քու Ցովսէփ որդիդ . Աստուած բոլոր
Ը Գլ · խե · 1 ։ Եգիպտոսին տէր ըրաւ զես . չու- 10 շանաս՝ ինձի իջնես . Եւ Գեսեմի երկրին մէջ պիտի բնակիս , որ ին-
ձի մօտ ըլլաս , դուն ու քու որդիդ՝ և քու որդւոցդ որդիքը՝ և հօտերդ՝ ու արջառներդ՝ և քու ըս-
11 լոր ունեցածդ . Եւ հոն քեզ պիտի սնուցանեմ . ինչու որ տակաւին հինգ տարի սով կայ . չըլլայ որ
12 դուն՝ ու քու տունդ՝ և քու բոլոր ունեցածդ չգաւորութիւն քաշէք : Եւ ահա ձեր աչքերը ու իմ եղբօրս
Բ Գլ · խր · 23 ։ Բենիամինին աչքերը կը տեսնեն՝ որ 13 բ ձեզի խօսողը իմ բերանս է : Ու Եգիպտոսի մէջ իմ ունեցած բոլոր
փառքս , ու ձեր բոլոր տեսածը պատմեցէք իմ հօրս . և շուտով
Ն · ք · գԲ · 1707
14 բերէք իմ հայրս հոս իջեցուցէք : Եւ իր եղբօրը Բենիամինին պարանոցին վրայ ինկաւ՝ ու լացաւ . Բենիամինն ալ անոր պարանոցին վրայ լացաւ :
15 Եւ իր բոլոր եղբայրները համբուրեց , ու անոնց վրայ լացաւ . և անկէետքը իր եղբայրները իրեն խօսեցան :
16 Եւ աս լուրը Փարաւոնին տանը մէջ լսուեցաւ՝ թէ Ցովսէփին եղբայրները եկեր են . և Փարաւոնին ու անոր ծառաներուն Է հաճելի և-
Է Գլ · խա · 37 ։ 17 զաւ : Եւ Փարաւոն բսաւ Ցովսէփին . Քու եղբայրներուդ բսէ . Այս բրէք . ձեր անասունները բեռցուցէք , ու Քանաան երկիրը գացէք .
18 Եւ ձեր հայրը՝ ու ձեր ընտանիքները առէք , ու ինծի եկէք . և Եգիպտոսի երկրին աղէկ բէջը ձեզի տամ ,
Ը Գլ · իէ · 28 ։ Թու · ժը · 12 · 29 ։ ու Երկրին պարարտութենէն ու-
19 տէք : Եւ քեզի հրաման եղաւ . ասա բրէք . Ձեր տղաքներուն համար ու ձեր կնիկներուն համար Եգիպտոսի երկրէն կառքեր առէք ձեզի ,
20 և ձեր հայրը բերէք՝ ու եկէք : Եւ ձեր կարասիքին * մի նայիք . ինչու որ բոլոր Եգիպտոսի երկրին բարիքը ձերն է :
* Եբր · Ձեր աչքը չխնայէ ։ 21 Եւ Իսրայէլին որդիները անանկ բրին . և Ցովսէփ անոնց կառքեր տուաւ Փարաւոնին Է խօսքին պէս ,
Է Թու · գ · 16 ։ ու ճամբու համար պաշար տուաւ
22 անոնց : Ընծայ ամէն մէկուն զատ զատ փոխելու հանդերձներ տուաւ , բայց Բենիամինին իրեք հարիւր կտր
ժ Գլ · խգ · 34 ։ արծաթ՝ ու Է հինգ ձեռք փոխելու
23 հանդերձ տուաւ : Եւ իր հօրը ասոր պէս բաներ խրկեց . տասը էշ Եգիպտոսի բարիքներով բեռցած՝ և տասը էգ էշ ցորենով ու հացով և ուտելիքներով բեռցած՝ իր հօրը
24 ճամբորդութեանը համար : Ետպէս իր եղբայրները խրկեց , ու գացին . և բսաւ անոնց . Ճամբուն մէջ չկռուիք :
25 Եւ անոնք Եգիպտոսէն ելան , ու դէպ ի Քանաան երկիրը իրենց հօ-
26 րը Ցակոբին գացին . Եւ անոր պատմեցին՝ բսելով . Ցովսէփը տակաւին ողջ է , ու Եգիպտոսի բոլոր երկրին իշխանը անիկայ է : Եւ Ցո-
ի Ցոր · իԲ · 24 ։ Սաղ · ոԻգ · 1 ։ Գոս · իգ · 11 · 41 ։ ԷՀ սիրտը մարեցաւ , քանզի անոնց
27 չհաւատաց : Եւ անոր պատմեցին Ցովսէփին բոլոր խօսքերը որ իրենց բսեր էր , ու երբոր տեսաւ Ցովսէփին խրկած կառքերը զինքը տանելու համար , անոնց հօրը Ցակո-
28 բին հոգին ողջընցաւ : Եւ Իսրայէլ բսաւ . Բաւական է . իմ որդիս Ցովսէփը տակաւին ողջ է . երթամ ու մեռնելէս առաջ տեսնեմ անիկայ :

Ն·Ք·ԳԲ· 1706

ԳԼ·ԽԶ

1 Յակոբ Բերսաբէէի մէջ Ասուածմէ կը քաշա-
լիուի ։ 5 Ընկէ իր ընտանիքովը Եգիպտոս
կ'երթայ ։ 8 Եգիպտոս գացող իր ընտանե-
ցը համրանքը ։ 29 Ցովսէփ իր հայրը Յակոբը
դիմաւորելու կ'ելլէ ։ 31 Կը սորվեցընէ իր
եղբայրներուն՝ թէ ինչ պատասխան պիտի
տան Փարաւոնին ։

1 Նաեւ Իսրայէլ իր բոլոր ունեցածո-
վը ճամբայ ելաւ, ու Բէերսա-
բէէ եկաւ. և իր հօրը Իսահակին
2 Աստուծոյն զոհեր մատուց ։ Ու
Աստուած ի գիշերուան տեսիլքի
մէջ խօսեցաւ Իսրայէլին՝ ու ըսաւ.
Յակո՛բ՝ Յակո՛բ. և անիկայ ըսաւ.
3 Ահա ես հո՛ս։ Եւ ըսաւ Նո՛ր.
Ես եմ Աստուած՝ Հօրդ Աս-
տուածը. Եգիպտոս իջնելու մի
վախնար. ինչու որ հո՛ն մեծ ազգ
4 մը պիտի ընեմ քեզ. Ես քեզի
հետ Եգիպտոս պիտի իջնեմ, նաեւ
բեզ անշուշտ պիտի հանեմ, ու
Յովսէփ պիտի դնէ իր ձեռքը քու
5 աչքերուդ վրայ ։ Եւ Յակոբ ելաւ
Բերսաբէէէն. ու Իսրայէլին որդի-
ները տարին իրենց հայրը Յակոբը՝
ու իրենց տղաքները՝ և իրենց կնիկ-
ները ան կառքերով, որոնք որ
Փարաւոն խրկեց զանիկայ տանելու
6 համար ։ Եւ առին իրենց անա-
սուններն ու իրենց ստացուածքը՝
որ Քանանու երկրին մէջ ստացեր
էին, ու Եգիպտոս եկան՝ Յակոբը
ու անոր բոլոր սերունդը իրեն հետ.
7 Իր որդիները ու իր որդւոցը որդի-
ները իր հետը՝ իր աղջիկները ու
իր որդւոցը աղջիկները՝ և իր բոլոր
սերունդը իր հետը Եգիպտոս բե-
րաւ ։

8 Եւ Ասոնք են Իսրայէլի որդւո-
ցը անունները որ Եգիպտոս եկան.
Յակոբ ու անոր որդիքը. Ի Յա-
9 կորին անդրանիկը Ռուբէն. Եւ
Ռուբէնին որդիքը՝ Ենովք, ու
Փաղղուս, և Եսրոն ու Քարմի ։
10 Եւ Շմաւոնին որդիքը՝ Յամուէլ,
ու Յամին, և Ոհադ, ու Յաքին,
և Սահաո, ու Քանանացի կնկանը
11 որդին Սաուղ ։ Եւ Ղևիին որ-
դիքը՝ Գերսոն, Կահաթ ու Մե-
12 րարի ։ Եւ Յուդային որդիքը՝
Էր, ու Օնան, և Սելոմ, ու Փա-
րէս և Զարա. բայց Էր ու Օնան
Քանանու երկրին մէջ մեռան. և
Փարեսին որդիքը՝ Եսրոն ու Հա-
13 մուլ ։ Եւ Իսաքարին որդիքը՝
Թովղայ, ու Փուա, և Յասուբ ու
14 Սամրոն ։ Եւ Զաբուղոնին որդի-
քը՝ Սարեդ, ու Ելոն և Յաղէլ ։
15 Ասոնք են Լիայի որդիքը, որոնք
Միջագետին մէջ ծնաւ Յակոբին,
ու անոր Դինա աղջիկը. անոր բո-
լոր որդիները ու աղջիկները եր-
16 սունհինգ հոգի էին ։ Եւ Գա-
դին որդիքը՝ Սափոն, ու Ագի,
Սունի, և Եսբոն, Էրի, ու Արոդի
17 և Արելի ։ Եւ Ասերին որդիքը՝
Յեմնա, ու Յեսուա, և Յեսուի, ու
Բարիա, և անոնց քոյրը Սարա.
և Բարիային որդիքը՝ Քաբեր ու
18 Մելքիէլ ։ Ասոնք են Զելփային
որդիքը՝ որն որ Լաբան իր Լիա
աղջիկները տուաւ. և անիկայ ծնաւ
ասոնք Յակոբին՝ տասնուվեց հոգի ։
19 Յակոբին կնկանը Ռաքելին որդի-
20 քը՝ Յովսէփ ու Բենիամին ։ Եւ
Յովսէփին՝ Եգիպտոսի երկրին մէջ
Մանասէն ու Եփրեմ ծնան, որոնք
Արեգ քաղաքին քուրմը Ղևտափերացիին աղջիկը Ասենէթը ծը-
21 նաւ անոր ։ Եւ Բենիամինին որ-
դիքը՝ Բաղա, ու Բոքոր, և Աս-
բէլ, Գերա, ու Նէեման, Էհի,
ու Ռոշ, Մուփիմ, և Որփիմ ու
22 Արեդ ։ Ասոնք են Ռաքելին որդի-
քը՝ որոնք ծնան Յակոբին, ամէնը
23 տասնուչորս հոգի ։ Եւ Դանին
24 որդիքը՝ Հուսիմ ։ Եւ Նեփ-
թաղիմին որդիքը՝ Յասիէլ, ու
25 Գունի, և Յասեր ու Սիլլեմ ։ Ա-
սոնք են Բաղդային որդիքը՝ որն
որ Լաբան իր Ռաքել աղջիկները
տուաւ. ու անիկայ Յակոբին ա-
սոնք ծնաւ, ամէնը եօթը հոգի
26 էին ։ Յակոբին հետ Եգիպտոս
եկող բոլոր հոգիները, որ անոր
երաքէն ելած էին, Յակոբին որ-
դւոցը կնիկներէն զատ՝ ամէնը
27 վաթսունուվեց հոգի էին ։ Եւ
Յովսէփին որդիքը՝ որ Եգիպտոսի
մէջ անոր ծնան, երկու հոգի էին.
Եգիպտոս գացող Յակոբին տանը
բոլորը հոգիները եօթանասուն է-
28 ին ։ Եւ անիկայ Յուդան իր առջևէն
խրկեց Յովսէփին, որ Գեսեմի կո-
ղմերն իրեն. և անոնք Գեսեմի եր-
29 կիրը եկան ։ Եւ Յովսէփ իր կառ-
քը պատրաստեց, ու իր հայրը Իս-
րայէլը դիմաւորելու համար Գեսե-
մի ելաւ. և երբ անոր դէմը ելաւ,
անոր պարանոցին վրայ ինկաւ, ու
30 խել մը ատեն անոր պարանոցին վը-
րայ լացաւ ։ Եւ Իսրայէլը ըսաւ
Յովսէփին. Հիմա քու երեսդ
տեսնելէս ետքը թող մեռնիմ, ին-
31 չու որ տակաւին ողջ ես ։ Եւ Յով-
սէփ իր եղբայրներուն ու իր հօրը
տանը ըսաւ. Ելլեմ, և Փարաւո-
նին պատմեմ, ու ըսեմ անոր. Իմ
եղբայրներս ու իմ հօրս ընտանիքը՝
որ Քանանու երկրին մէջն էին, ին-
32 ձի եկան. Եւ ան մարդիկը հովիւ-
ներ են. ինչու որ խաշնարած տէր են.
և իրենց հօտերը, ու իրենց ար-
ջառները և իրենց բոլոր ունեցածը
33 բերին ։ Եւ ըլլայ որ երբ Փարաւոն

Ն·Ք·ԳԲ· 1706

Յ Թուա·իգ· 15, ճ։
Ն ա Մն·է· 30։
Ղ Գլ·լ·10։
Ո Գլ·իթ· 24։
Ղ Գլ·խգ· 27։
Ղ Գլ·խա· 50։
Լ ա Մն·է· 6·ը·1։
Ո Թուա·իգ· 38։
Ո Թուա·իգ· 39։ ա Մն· է·12։
Լ ա Մն·է· 12։
Ո Թուա·իգ· 42։
Ր ա Մն·է· 13։
Յ Գլ·լ·5· 7։
Ո Գլ·իթ· 29։
Ֆ Ել·ա·5։
Ֆ Գլ·լե·11։
Ֆ Ր Օր·ժ· 22։ Տես Գոր·է· 14։
Ֆ Գլ·լ· 21։
Ո Գլ·խէ·1։
Բ Գլ·խե· 14։
Ֆ Տես Ղա· ր·29, 30։
Ր Գլ·խէ·1։

ձեզ կանչէ , ու ըսէ թէ՝ Ի՞նչ է
34 արհեստիդ . Ըսէք . Քու ծառա-
ներդ Մեր մանկութենէն մինչև
հիմա՝ մենք ալ , մեր հայրերն ալ
Խաչանց տէր ենք . որ Գեսեմի
երկրին մէջ բնակիք . ինչու որ
ամէն հովիւ Եգիպտացւոց առջևը
էգարշելի է ։

ԳԼ . ԽԷ

1 Ցովսէփ իր եղբայրներուն հինգը , 7 ու իր
հայրը Փարաւոնին կը ներկայացընէ . 11 ա-
նոնց բնակութիւն ու ապրուստ կու տայ ։ 13
Բոլոր Եգիպտացւոց ստակը , 16 անասուննե-
րը , 18 ու կալուածքը Փարաւոնին համար
ծախու կ'առնէ ։ 22 Քուրմերուն երկիրը ծա-
խու չառներ ։ 23 Երկրի արմիկներուն հին-
գերորդ մասը թագաւորին տալու պայմանով՝
երկիրը Եգիպտացւոց կու տայ ։ 28 Ցակոբին
տարիքը ։ 29 Ննիկայ կ'երդնցընէ Ցովսէփը
որ զինքը իր հայրերուն հետ թաղէ ։

1 Ցովսէփ եկաւ ու պատմեց
Փարաւոնին՝ ու ըսաւ . Իմ հայրս
ու եղբայրներս , և անոնց հօտերը
ու արջառները , և անոնց բոլոր ու-
նեցածը եկան Քանանու երկրէն , և
2 ահա Գեսեմի երկրին են ։ Եւ իր
եղբայրներուն մէջէն հինգ մարդ ա-
ռաւ , ու զանոնք Փարաւոնին
3 առջևը ներկայացուց ։ Եւ Փա-
րաւոն ըսաւ անոր եղբայրներուն .
Ի՞նչ է ձեր արհեստը . և անոնք
Փարաւոնին ըսին . Քու ծառա-
ներդ հովիւներ ենք , մենք ալ՝ մեր
4 հայրերն ալ ։ Նաև ըսին Փարաւո-
նին . Ելա երկրին մէջ պանդխտա-
նալու եկանք . վասն զի Քանանու
երկրին մէջ սովը սաստկանալուն
համար , քու ծառաներուդ հօտե-
րուն արածելիք չկայ . ուստի հիմա
չնորհք ըրէ՝ ծառաներդ Գեսեմի
5 երկրին մէջ բնակինք ։ Եւ Փա-
րաւոն խօսեցաւ Ցովսեփին՝ ըսե-
լով . Քու հայրդ ու եղբայրներդ
6 քեզի եկան . Եգիպտոսի երկիրը
առջևդ է . քու հայրդ ու եղբայր-
ներդ երկրին ամէնէն ազնիւ տեղը
բնակեցուր . Գեսեմի երկրին մէջ
թող բնակին . և թէ որ անոնց մէջ
ձարպիկ մարդիկ ըլլալը գիտես ,
զանոնք իմ հօտերուս վրայ վերա-
կացու ըրէ ։
7 Եւ Ցովսէփ իր հայրը Ցակոբը
բերաւ , ու Փարաւոնին առջևը
հանեց . և Ցակոբ օրհնեց Փա-
8 րաւոնը ։ Եւ Փարաւոն ըսաւ
Ցակոբին . Քու կենացդ տարի-
9 ներուն օրերը որչափ են ։ Եւ
Ցակոբ ըսաւ Փարաւոնին . Իմ
պանդխտութեանս տարիներուն օ-
րերը հարիւր երեսուն տարի է . Իմ
կենացս տարիներուն օրերը քիչ ու
ցաւով եղան , ու Իմ հայրերուս
պանդխտութեան օրերուն մէջ ե-
ղած իրենց կենացը տարիներուն
10 օրերուն չհասան ։ Եւ Ցակոբ
օրհնեց Փարաւոնը , ու դուրս ելաւ
Փարաւոնին առջևէն ։
11 Եւ Ցովսէփ բնակեցուց իր հայ-
րը ու եղբայրները , և անոնց կա-
լուածք տուաւ Եգիպտոսի երկրին
ամենէն աղէկ կողմը՝ Ռամեսէսի
երկրին մէջ , հրամայեց որ Փարաւոն
12 հրամայեր էր ։ Եւ Ցովսէփ իր
հայրը ու եղբայրները և իր հօրը
բոլոր տունը հաւանիքնե-
րուն համեմատ հացով կը սնու-
ցանէր ։
13 Եւ բոլոր երկրին մէջ հաց չկար .
ինչու որ սովը խիստ սաստկացաւ .
Նոյն Եգիպտոսի երկիրը և Քանանու
երկիրը սովին պատճառովը նուա-
14 ղեցաւ ։ Եւ Ցովսէփ պաշար ծախու
առնողներէն՝ Եգիպտոսի երկրին
մէջ ու Քանանու երկրին մէջ
դտնուած բոլոր ստակը ժողվեց . և
Ցովսէփ Փարաւոնին տունը տա-
15 րաւ ստակը ։ Ու երբոր Եգիպտոսի
երկրին՝ ու Քանանու երկրին մէջ
ստակը հատաւ , բոլոր Եգիպտա-
ցիները եկան Ցովսեփին՝ ու ըսին .
Մեզի հաց տուր . քանզի ստակը
հատնելուն համար ինչո՞ւ մեռնինք
16 քու առջևդ ։ Եւ Ցովսէփ բսաւ .
Ձեր անասունները բերէք , և թէ
որ ստակ չկայ , ձեր անասուններուն
17 փոխարէն տամ ձեզի ։ Եւ անոնք
իրենց անասունները Ցովսեփին բե-
րին , և Ցովսէփ հաց տուաւ անոնց՝
ձիերուն փոխարէն , ու ոչխարնե-
րուն փոխարէն , և արջառներուն
փոխարէն , ու էշերուն փոխարէն .
և ան տարին զանոնք հացով կե-
րակրեց՝ իրենց բոլոր անասուննե-
րուն փոխարէն ։
18 Ու երբոր լմնցաւ ան տարին ,
հետեւեալ տարին եկան անոր՝ ու
ըսին . Մեր տիրոջմէն չենք պա-
հեր որ ստակը հատաւ , և մեր ա-
նասուններն ալ մեր տիրոջը եղաւ .
ալ բան մը չմնաց մեր տիրոջը
առջևը , բայց մեր անձերը ու
19 երկիրը . Ինչո՞ւ համար քու աչքիդ
առջևը մեռնինք , մենք՝ ու մեր
երկիրը . մեզ՝ ու մեր երկիրը հա-
ցով ծախու առ , և մենք մեր երկի-
րովը Փարաւոնին ծառաներ ըլլանք .
և սերմ տուր մեզի՝ որ ապրինք ու
չմեռնինք , և երկիրը ամայի չըլլայ ։
20 Եւ Ցովսէփ բոլոր Եգիպտոսի երկի-
րը Փարաւոնին համար ծախու ա-
ռաւ . քանզի Եգիպտացւոց վրայ
սովը սաստիկ ըլլալուն համար՝
անոնց ամէն մէկը իր արտը ծա-
խեց , ու երկիրը Փարաւոնին եղաւ ։
21 Եւ Եգիպտոսի սահմանին մէկ
ծայրէն մինչև մէկալ ծայրը՝ ժողո-
վուրդը * քաղաքէ քաղաք փո-

Ն . Ք . դԲ . 1706
Ի Գլ . Խե . 2 , 3 ։
Ղ Գլ . Լ . 35 ։ Ղդ . 5 ։ Լէ . 12 ։
Ի Հռ 32 ։
Ը Գլ . Խգ . 32 ։ Եղ . Ը . 26 ։

Ա Գլ . Խզ . 31 ։
Բ Գլ . Խե . 10 ։ Խզ . 28 ։
Գ Գոր . է . 13 ։
Դ Գլ . Խզ . 33 ։
Ե Գլ . Խզ . 34 ։
Զ Գլ . ԺԸ . 13 ։ Բ Օր . Իզ . 5 ։
Է Գլ . Խգ . 1 ։ Գոր . Է . 11 ։
Ը Գլ . Խզ . 34 ։
Թ Գլ . Ի . 15 ։
Ժ Հռ 4 ։
Ի Եբր . Ժա . 9 , 13 ։ Սազ . ԼԹ . 12 ։
Լ Ցոբ . Ժգ . 1 ։
Խ Գլ . ԻԷ . 7 ։ Լէ . 28 ։

Ն . Ք . դԲ . 1706
Ժ Հռ 7 ։
Ա Եզ . ա . 11 ։ Ժր . 37 ։
Բ Հռ 6 ։
Գ Գլ . Ծ . 21 ։
Դ Գլ . Խա . 30 ։ Գոր . Է . 11 ։
Ե Գլ . Խա . 56 ։

1702

Զ Հռ 19 ։

1701

* ԵՒԲ . քաղաքներու

Ն · Ք · ԴԲ · 1701

ՅԵԶԵ · Է · 24 ։ Ն ԳԼ · ԽԱ · 45 ։

22 խաղրեց ։ Յ Միայն Ն քուրմերուն երկիրը ծախու չառաւ . ինչու որ քուրմերը Փարաւոնէն [ ] բաժին ունէին , ու կ'ուտէին [իրենց բաժինը , որ Փարաւոն կու տար անոնց . անոր համար իրենց երկիրը չծախեցին ։ Եւ Յովսէփ բաւ ժողովուրդին . Ահա այսօր ձեզ ու ձեր երկիրը Փարաւոնին համար . արդ՝ ձեզի սերմ [ ] , ու սերմանեցէք 24 երկիրը · Եւ երբէք արդիւնքին հինգէն մկը Փարաւոնին պիտի տաք , ու չորս մասը ձերը պիտի ըլլայ , որ արտին սերմ՝ ու ձեզի և ձեր տանը մէջ եղողներուն՝ ու ձեր տղաքներուն 25 րուն ուտելիք ըլլայ ։ Եւ բսին . Մեզ ապրեցուցիր . Է թող մեր տիրոջը առջևը շնորհք գտնենք , ու 26 Փարաւոնին ծառաներ ըլլանք ։ Եւ Յովսէփ աս օրէնքը հաստատեց Եգիպտոսի երկրին մէջ մինչև այսօր՝ որ հինգէն մկը Փարաւոնին ըլլայ . [բաց [ի Ն քուրմերուն երկրէն՝ որ Փարաւոնինը չեղաւ ։

[ՀՄր 22 ։ Ն ՀՄր 22 ։ Դ ՀՄր 11 ։

27 Եւ Իսրայէլ Դկը բնակեր Եգիպտոսի երկրին մէջ՝ Գեսեմի երկիրը . ու հոն կալուածք ստացան , և Նաճեցան ու խիստ շատցան ։

Է ԳԼ · ԽԶ · 3 ։

1689

28 Եւ Յակոբ Եգիպտոսի երկրին մէջ տասնեւհինգ տարի ապրեցաւ . ու Յակոբին [կենացը տարիներուն օրերը հարիւր քառասունեւհինգ

[ՏԵս ՀՄր 9 ։

29 տարի եղաւ ։ Ու երբոր Իսրայէլին մեռնելու օրերը [մօտեցաւ , կանչեց իր Յովսէփ որդին , ու բսաւ անոր . Թէ որ հիմա քու առջևդ շնորհք գտայ , կ'աղաչեմ քեզի՝ Է ձեռքդ իմ երանքիս տակը դիր , և [ինծի մարդասիրութիւն ու ճշմարտութիւն ըրէ . կ'աղաչեմ քեզի՝ [իս

[Բ ԹԱԳ · ԼԱ · 14 ։ Գ ԹԱԳ · Բ · 1 ։

30 Եգիպտոսի մէջ մի թաղեր . Հապա Յիմ հայրերուս հետ ննջեմ , ու դուն իս Եգիպտոսէն հանես , և [իս անոնց գերեզմանը թաղես ։ Եւ անիկայ բսաւ . Ես քու բսածիդ

Է ՏԵս ԳԼ · Ծ · 25 ։

31 պէս պիտի ընեմ ։ Եւ ինքը բսաւ . ինծի երդում ըրէ . և անիկայ երդում ըրաւ անոր ։ Եւ Իսրայէլ *անկողնին գլխուն վրայ երկրպագութիւն ըրաւ ։

Յ Բ ԹԱԳ · ԺԹ · 37 ։ [ԳԼ · ԽԹ · 29 ։ Ծ · 5 , 13 ։

Իւ ԳԼ · ԽԲ · 2 ։ Գ ԹԱԳ · Ա · 47 ։ ԵԲԲ · Ժա · 21 ։

* Կ՚ գաւազանին

ԳԼ · ԽՀ

1 Յովսէփ իր որդիներովը՝ հօրը հիւանդութեանը տես կ'երթայ ։ 3 Յակոբ իրեն եղած խոստմունքը կը պատմէ · 5 Եփրեմ ու Մանասէ իր որդոցը կարգը կը դնէ · 7 Յովսէփին մօրը գերեզմանին [ւը ըլլալը կ'բսէ · 9 կ'օրհնէ Եփրեմը ու Մանասէն · 17 պղտիկը մեծէն վեր կը դնէ · 21 անոնց նորէն քանան դառնալուն համար կը մարգարէանայ ։

1689

1 Յետ եղաւ որ աս բաներէն ետքը Յովսէփին բսուեցաւ . Ահա քու հայրդ հիւանդ է . և անիկայ իր երկու որդիքը Մանասէն ու

Ն · Ք · ԴԲ · 1689

2 Եփրեմը իր հետ առաւ ։ Եւ Յակոբին պատմուեցաւ ու բսուեցաւ . Ահա քու որդիդ Յովսէփը քեզի կու գայ . և Իսրայէլ ուժովցաւ՝

3 ու անկողինին վրայ նստաւ ։ Եւ Յակոբ բսաւ Յովսէփին . Ամենակարող Աստուածը Քանանու երկիրը՝ [Լուզին մէջ երևցաւ ինծի ,

[ԳԼ · ԻԲ · 13 · 19 ։ ԼԵ · 6 , 9 , ՀԱ ։

4 ու օրհնեց զիս . Եւ բսաւ ինծի . Ահա քեզ պիտի աճեցընեմ, ու շատցընեմ, և քեզ շատ ժողովուրդներու հաչը պիտի ընեմ . և աս երկիրը քեզմէ ետքը քու սերունդիդ Էյաւիտենական կալուածք ըլլալու պի-

Բ ԳԼ · ԺԷ · 8 ։

5 տի տամ ։ Եւ հիմա քու Է երկու որդիքդ՝ որ ծնան քեզի Եգիպտոսի երկրին մէջ՝ քեզի Եգիպտոս գալէս առաջ , իմն են . Եփրեմ ու Մանասէն՝ Ռուբէնին ու Շմաւոնին պէս իմն պիտի ըլլան ։ 6 Եւ անոնցմէ ետքը քու ծնած որդիքդ՝ քու կդ ըլլան . [իրենց ժառանգութեանը մէջ իրենց եղբայրներուն 7 րուն անուններովը կանչուին ։ Եւ ես երբոր Միջագետէն կու գայի , Քանանու երկրին մէջ ան ճամբուն վրայ՝ որ տակաւին Եփրաթա երթալու քիչ մը տեղ կայ , Ռաքէլը մեռաւ իմ քովս . ու զանիկայ հոն Եփրաթային՝ այսինքն Բեթղէհեմին ճամբուն մէջ թաղեցի ։

Է ԳԼ · ԼԵ · 9 · 16 · 19 ։

8 Եւ Իսրայէլ տեսաւ Յովսէփին որդիները՝ ու բսաւ . Ո՞վ են ասոնք ։ 9 Եւ Յովսէփ բսաւ իր հօրը . Իմ որդիներս են՝ որ Աստուած հոս ինծի տուաւ . և անիկայ բսաւ . Շնորհք ըրէ՝ ինծի բեր զա-

Ի ԳԼ · ԼԳ · 5 ։

10 նոնք , Նոր օրհնեմ ։ Ու Իսրայէլին աչքերը ծերութենէն ծանրացած էին , [որ չէր կրնար տեսնել . և զանոնք մօտեցուց անոր , ու Համբուրեց զա-

Ը ԳԼ · ԻԵ · 4 · Ի ԳԼ · ԻԵ · 1 · Ը ԳԼ · ԻԵ · 27 ·

11 նոնք , և գրկեց ։ Ու Իսրայէլ բսաւ Յովսէփին . Բնաւ չէի յուսար որ քու երեսդ տեսնեմ , և ահա Աստուած ինծի քու սերունդդ ալ

Ր ԳԼ · ԽԵ · 26 ·

12 ցուցուց ։ Եւ Յովսէփ հանեց զանոնք անոր ծունկերէն , և իր երեսը մինչև գետինը խոնարհութիւն ը-

13 րաւ ։ Եւ Յովսէփ առաւ անոնց երկուքն ալ՝ Եփրեմը իր աջ ձեռքովը Իսրայէլին ձախ կողմը , և Մանասէն իր ձախ ձեռքովը Իսրայէլին աջ կողմը , ու մօտեցուց

14 անոր ։ Եւ Իսրայէլ իր աջ ձեռքը երկընցուց , ու Եփրեմին գլխուն վրայ դրաւ , որ պղտիկն էր , ու իր ձախ ձեռքը Մանասէին գլխուն վրայ . անիկայ [խորհրդով իր ձեռքերը փոխեց . [ինչու որ Մանասէն

[ՀՄր 19 ։

15 անդրանիկն էր ։ Եւ [օրհնեց զՅովսէփ ու բսաւ . Ան Աստուածը՝ Նոյուն առջևը իմ հայրերս Աբրահա-

Ի ԵԲԲ · Ժա · 21 · Լ ԳԼ · ԺԶ · 1 · ԻԳ · 40 ·

մը ու Իսահակը քալեցին , ան Աստուածը՝ որ ծնած առնէին մինչև
16 այսօր իս կերակրեց , Ան Հրեշտակը՝ Որ իս ամէն չարիքներէն ազատեց , օրհնէ առ տղաքները , և իմ անունս՝ ու իմ Հայրերուս Աբրահամին և Իսահակին անունը առնց վրայ կանչուի , ու երկրին մէջտեղը
17 Իսիտ չառնան : Եւ Յովսէփ երբ տեսաւ որ Հայրը Իր աջ ձեռքը Եփրեմին գլխուն վրայ դրաւ , իրեն Յհաճելի չեղաւ . և իր Հօրը ձեռքը բռնեց՝ որ դանիկայ Եփրեմին գլխուն վրայէն Մանասէին գլխուն
18 վրայ փոխադրէ : Եւ Յովսէփ ըսաւ իր Հօրը . Ո՛չ այդպէս՝ Հայր իմ . ինչու որ անդրանիկը աս է . քու աջ ձեռքդ անոր գլխուն վրայ
19 դիր : Եւ իր Հայրը չուզեց՝ ու ըսաւ . Գիտեմ որդեակ իմ , գիտեմ . ասիկայ ալ Ժողովուրդ պիտի ըլլայ , և ասիկայ ալ մեծ պիտի ըլլայ . բայց Յանոր պզտիկ եղբայրը անկէ աւելի մեծ պիտի ըլլայ , ու անոր սերունդը խիստ մեծ ազգ
20 պիտի ըլլայ : Եւ ան օրը օրհնեց զանոնք ու ըսաւ . Իսրայէլը Ձեզմով օրհնէ , "Աստուած քեզ Եփրեմին պէս և Մանասէին պէս ընէ" ըսելով . ու Եփրեմը Մանասէէն առաջ դրաւ :
21 Եւ Իսրայէլ ըսաւ Յովսեփին . Ահա ես կը մեռնիմ , և Աստուած ձեզի հետ պիտի ըլլայ , ու ձեզ ձեր հայրերուն երկիրը պիտի դարձնէ :
22 Եւ Ես քու եղբայրներէդ մէկ բաժին աւելի տուի քեզի , որ ան Ամորհացիներուն ձեռքէն իմ սրբովս ու աղեղովս առի :

ԳԼ . ԽԹ

1 Յակոբ իր որդիները կը կանչէ զանոնք օրհնելու համար : 3 Ամէն մէկուն օրհնութիւնը : 29 Իր թաղուելուն վրայով անոնց պատուէր կու տայ : 33 Իր մահը :

1 Յու Յակոբ կանչեց իր որդիները ու ըսաւ . Ժողովուեցէք , որ վերջին օրերը ձեր գլխուն դալիքը պատմեմ ձեզի :
2 Ժողովուեցէ՛ք՝ ու ականջ տուէք , ովսէ Յակոբին որդիները , Եու ձեր Հօրը Իսրայէլին մտիկ րրէ՛ք :
3 Ռուբէն , Դիմ անդրանիկս՝ իմ ոյժս Ես ու իմ զօրութեանս սկիզբը , յարդութեան կատարելութիւնը ու զօրութեան կատարելութիւնը դուն Ես :
4 Ջուրի պէս եռացիր , Չառաջինի պիտի չըլլաս . ինչու որ Էքու Հօրդ անկողինը ելար . ան առնոր պղծեցիր — Նէ՛ւ : (Իմ անկողի՛նս ելաւ :)
5 Շմաւոն ու Ղեւի Եղբայրներ Են . Զէնքերնին Յանիրաւութեան գործիքներ են :
6 Իմ Հոգիս Իանոնց խորհուրդներուն չմտնէ , Իմ պատիւս Իանոնց ժողովքին հետ չմիանայ . ինչու որ Իրենց բարկութեամբը մարդ սպաննեցին , և իրենց կամապաշտութեամբը ցուլ ջիղ կարկեցին :
7 Անիծեալ ըլլայ անոնց բարկութիւնը , ինչու որ խիստ էր , ու անոնց սրտմտութիւնը , ինչու որ սաստիկ էր . Ցանոնք Յակոբին մէջ պիտի բաժնեմ , ու զանոնք Իսրայէլին մէջ պիտի ցրեմ :
8 Ո՛վ Յուդա՝ քու եղբայրներդ քեզ պիտի գովեն . Նքու ձեռքդ քու թշնամիներուդ պարանոցին վրայ ըլլայ . Էքուս Հօրդ որդիքը քեզի երկրպագութիւն ընեն :
9 Յուդան Եառիւծի ձագ է . որդեակ իմ՝ կողոպուտէն ելար : Առիւծի պէս ծունկ չոքեց , մատակ առիւծի պէս պառկեցաւ . զանիկայ ով պիտի արթընցնէ :
10 Իշխողութիւնը Յուդայէն պիտի չպակսի , ոչ ալ Անոր ոտքերուն մէջտեղէն Էօրէնադիրը , մինչև որ Սիլովը գայ . Եու ժողովուրդները անոր պիտի Ցազանդին :
11 Ի՛ր յաւանակը որթին պիտի կապէ , ու իր էգ իշուն ձագը ամենէն ազնիւ որթին . իր պատմուճանը գինիով պիտի լուայ , ու իր հանդերձը խաղողի արիւնով :
12 Իր աչքերը գինիէն կարմիր՝ ու իր ակռաները կաթէն ճերմակ պիտի ըլլայ :
13 Զաբուղոնը ծովին եզերքը պիտի բնակի , ու անիկայ նաւերուն հանդիստը պիտի ըլլայ , և անոր սահմանը դէպ ի Սիդոն :
14 Իսաքարը ուժեղ էշ մըն է , որ գոմերուն մէջտեղը կը պառկի .
15 Եւ տեսնելով որ հանգստութիւնը աղէկ էր , ու երկիրը որ գեղեցիկ էր , իր ուսը բեռցընելու խոնարհեցուց , ու հարկատու ծառայ եղաւ :
16 Դանը իր ժողովուրդը պիտի դատէ , Իսրայէլի յեղերէն մէկուն պէս :
17 Դանը ճամբու վրայ օձ մը պիտի ըլլայ , ու ճամբու վրայ իժ մը , որ ձիուն գարշապարը կը խածնէ , անանկ որ հեծեալը ետևը կ՚իյնայ :
18 Ով Տէր՝ քու փրկութեանդ սպասեցի :
19 Գադին՝ գունդ մը վրան պիտի յարձակի . բայց վերջապէս ինքը պիտի յարձակի :

ՆՈՐ ՈՒՂԻՂ 1689

Ի ԳԼ · ԻԲ · 15 ; Ղ · 11 ; 13 , 24 ; Սաղ · ԼԶ · 22 ; ՃԻա · 7 ;
Ե Ամվ · Թ · 12 ; Փր · ԺԱ · 17 ;
Ն Ցես Թու · Իգ · 34 · 37 ;
Հ Հմր 14 ;
Յ ԳԼ · Իբ · 8 ;

Ղ Հմր 14 ;

Ճ Թու · ա · 33 , 35 ; բ · 19 , 21 ; բ Օր · ԼԶ · 17 ; Ցայտ · է · 6 , 8 ;
Ո Հառաջ · գ · 11 , 12 ;
Պ ԵՖր · քեզմով

Չ ԳԼ · Իգ · 4 ; Ե · 24 ;
Շ Ցես · Իգ · 32 ; ա ՄՆ · Ե · 2 ; Ցօհ · գ · 5 ;
Ջ ԳԼ · ԺԱ · 16 ; ԼԶ · 28 ; Ցես · ԺԷ · 14 ; ԵԷ ;

— բ Օր · գ · 30 ; Թու · Իգ · 14 ; Եսա · բ · 2 ; ԼԹ · 6 ; Երեմ · Իգ · 20 ; Դան · բ · 28 , 29 ; Փր · բ · 17 ; Երբ · ա · 2 ;
Բ բ Օր · ԼԶ · 1 ; Ամվ · գ · 7 ;
Դ Սաղ · ԼԶ · 11 ;
Զ ԳԼ · ԽԹ · 32 ;
Է բ Օր · Իա · 17 ; Սաղ · Նբ · 51 ;
Ը ա ՄՆ · Ե · 1 ;
Թ ԳԼ · Լե · 22 ; ա ՄՆ · Ե · 1 ; բ Օր · Իհ · 20 ;

ՆՈՐ ՈՒՂԻՂ 1689

Ժ ԳԼ · ԽԹ · 33 , 34 ;
Ի Ածախ · Ժբ · 9 ;
Լ Ածախ · ա · 15 , 16 ;
Խ Սաղ · Ժգ · 9 ; Լ · 12 ; ԺԷ · 8 ;
Ծ Սաղ · Իգ · 9 ; Եփես · Ե · 11 ;
Կ ԳԼ · Լզ · 26 ;
Հ Ցես · Ժբ · 1 ; Իա · 5 , 6 , 7 ; ՄԿ · գ · 24 , 39 ;
Ձ ԳԼ · ԽԹ · 35 ; բ Օր · Լզ · 7 ;
Ղ Սաղ · Ժբ · 40 ;
Ճ ԳԼ · Խե · 29 ; ա ՄՆ · Ե · 2 ;
Մ Ովս · Է · 4 ; Ցայտ · Ե · 5 ;
Յ Թու · Խ · 24 ; Իգ · 9 ;
Ն Թու · Իգ · 17 ; Երեմ · Լ · 21 ; Զաք · Ժ · 11 ;
Շ բ Օր · Իբ · 57 ;
Ո Սաղ · Կ · 7 ; ՃԲ · 8 ; Թու · Իա · 18 ;
Չ Ես · Ժա · 1 ; Կբ · 11 ; Եզեկ · Իա · 27 ; Դան · Թ · 25 ; Մատ · Իա · 9 ; Ղուկ · ա · 32 , 33 ;
Պ Յի՛ Իսրայէլը , ՁԻ՛ օրհնութիւնը կը վայլէ :
Ջ Եբ · բ · 2 ; Ժա · 10 ; Խբ · 1 , 4 ; Իթ · 6 , 7 ; 22 , 23 ; ԽԷ · 4 , 5 ; Կ · 1 , 3 , 4 , 5 ;
Ռ Ընդ · բ · 7 ; Ղուկ · բ · 30 , 31 , 32 ;
Վ գ Թագ · ԺԲ · 32 ;
Տ Օր · Լզ · 18 , 19 ; Ցես · ԺԹ · 10 , 11 ;
Ր Օր · Լզ · 22 ; Դատ · ԺԲ · 1 , 2 ;
Ս Դատ · ԺԲ · 27 ;
Վ Սաղ · Իե · 6 ; ՃԻԹ · 166 , 174 ; Ես · Իե · 9 ; — բ Օր · Լզ · 20 ; ա ՄՆ · Ե · 18 ;

Ն · Ք · ՉՁ · 1689

20 ՚Աներին հայը պարարտ պիտի
ըլլայ · ու ինքը թագաւորի համա-
դամ կերակուրներ պիտի տայ ։
21 ՚Նեփթաղիմը գեղեցիկ խօսքեր
տուող ազատ թողուած եղջերու
մըն է ։
22 Յովսէփը պտղատու ոստ մըն է ,
աղբիւրի քով փնո՟ւտ պտղաբեր
ոստ մը՝ պա՟ռն բողբոջները պատի
վրայ կ'ելլեն .
23 Աղեղնաւորները ՚վշտացուցին
զանիկայ , ու նետաձիգ եղան ՚ա-
նոր , ուատելին զանիկայ .
24 Բայց անոր ՚աղեղը զօրաւոր
մնաց , և իր ձեռացը բազուկները
ուժովցան , Յակոբին ՚հզօր Ա-
պո՟ւն ձեռքերովը ։ ՚Իսրայէլին
՚վէմը Է՟ղ ՚հովիւը անկէ է ։
25 ՚Ա՟յո՛ւ քու Հօրդ Աստուածմէն
է՝ որ քեզի պիտի օգնէ , ՚և Ամ-
նակարօղէն՝ ՚որ քեզ պիտի օրհնէ ,
վերէն՝ երկինքին օրհնութիւննե-
րովը , ու վարը պառկող խորու-
թեան օրհնութիւններովը , ծիծե-
րուն ու արգանդին օրհնութիւնե-
րովը ։
26 Քու հօրդ օրհնութիւնները՝ *իմ
նախնեացս օրհնութիւններէն՝ ՚մին-
չև յաւիտենական բլուրներուն ա-
գահը՚՚ զօրացան ։ Ըզովսէփին գլու-
խուն վրայ պիտի ըլլան , և անոր
գագաթին վրայ՝ որ իր եղբայրնե-
րէն զատուած է ։
27 Բենիամինը ՚փառատող գայլ
պիտի ըլլայ . առտուանց որսը պի-
տի ուտէ , ու գիշերը կողոպուտը
պիտի բաժնէ ։
28 Ամէն ասոնք Իսրայէլի տասուե-
կու ցեղերն են . և ասիկա՝ որ անոնց
հայրը խօսեցաւ անոնց , ու օրհնեց
զանոնք . ամէն մէկուն օրհնութեանը
29 պէս օրհնեց զանոնք ։ Ու պատուի-
րեց անոնց , ու ըսաւ . Ես ՚իմ ժո-
ղովուրդիս պիտի խառնուիմ . ՚իմ
հայրերուս հետ էան պարին մէջ թա-
ղեցէք զիս , որ Քետացի Եփրոնին
30 արտին մէջն է . Ան պարին մէջ՝ որ
Քանանու երկիրը՝ Մամբրէին դի-
մաց եղող Մաքփելայի արտին մէջն
է , Եորն որ Աբրահամ արտին հետ
մէկտեղ գերեզմանի կալուածքի հա-
մար՝ Քետացի Եփրոնէն ծախու ա-
31 ռաւ ։ ՚Անկէ Աբրահամը՝ ու անոր կնիկը
Սարրան հոն թաղեցին . ՚Իսահակը՝
ու անոր կնիկը Ռեբեկան հոն թա-
ղեցին . ես ալ Լիան հոն թաղեցի ։
32 Ան արտը ու հոն եղած պարը Քետին
որդիներէն ծախու առնուեցաւ ։
33 Եւ Յակոբ երբ լմընցուց իր որդւոց
պատուէր տալը , իր ոտքերը ան-
կողինին մէջ ժողվեց , ու հոգին ա-
ւանդեց , և ՚իր ժողովուրդին խառ-
նուեցաւ ։

Ն · Ք · ՉՁ · 1689

ԳԼ · Ծ

1 Յակոբին մահուանը սուգը ։ 4 Յովսէփ իր
հօրը թաղմանը երթալու համար՝ փարաւոնէն
հրաման կ'առնէ ։ 7 Անոր յաւարկաւորու-
թեան հանդէսը ։ 15 Յովսեփին եղբայրները
ներում կը խնդրեն , ու ան ալ կը մխիթարէ
զանոնք ։ 22 Յովսեփին տարիքը ։ 23 Իր
ազգը երրորդ սերունդը կը տեսնէ ։ 24 Իր
եղբայրներուն կը մարգարէանայ՝ թէ քանա-
նու երկիրը պիտի դառնան ։ 25 Իր ոսկորնե-
րուն համար զանոնք կ'երդմնցընէ ։ 26 Կը
մեռնի ու արկղի մէջ կը դրուի ։

1 Եւ Յովսէփ ՚իր հօրը երեսին վրայ
ինկաւ , ու Է՟լացաւ անոր վրայ ,
2 և համբուրեց զանիկայ ։ Եւ Յով-
սէփ իր բժիշկ ծառաներուն հրա-
մայեց որ ՚իր հայրը զմռսեն . և
3 բժիշկները զմռսեցին Իսրայէլը ։ Եւ
անոր քառասուն օրը լմընցաւ . ինչու-
որ զմռսուածներուն օրերը ասանկ
կը լմըննար . և Եգիպտացիք ՚անոր
համար եօթանասուն օր սուգ բրին ։
4 Եւ երբ անոր սուգին օրերը անցան ,
Յովսէփ ղրուցեց Ֆարաւոնի տա-
նը՝ բսելով . Թէ որ հիմա ձեր առ-
ջևը շնորհք գտայ , կ'աղաչեմ ձեզի՝
Փարաւոնին ականջին ղրուցեցէք
5 ու բսէք . Հիմ հայրս ինծի երդումով
ընել տուաւ՝ բսելով . Ահա ես կը
մեռնիմ . իմ գերեզմանիս մէջը՝
՚որ ես ինծի համար Քանանու երկ-
րին մէջ փորեցի , իս հոն թաղես .
և հիմա շնորհք ըրէ՝ իմ հայրս թա-
6 ղելու ելլեմ , ու նորէն գամ ։ Եւ
Փարաւոն բսաւ . Ելի՛ր , ու թաղէ
քու հայրդ՝ ինչպէս որ անիկայ քե-
զի երդումով ընել տուաւ ։
7 Եւ Յովսէփ իր հայրը թաղելու
ելաւ . և Փարաւոնին բոլոր ծառա-
ները՝ անոր տանը ծերերը՝ ու Ե-
գիպտոսի երկրին բոլոր ծերերը ա-
8 նոր հետ ելան . Նաև Յովսեփին
բոլոր տուները՝ ու անոր եղբայրները՝
և անոր հօրը տունը . միայն իրենց
տղաքները , ու իրենց հօտերը , և
իրենց արջառները Գեսեմի երկրին
9 մէջ թողուցին ։ Եւ անոր հետ
կառքեր ու ձիաւորներ ելան , ու
10 շատ մեծ բանակ մը եղաւ ։ Եւ ե-
կան Ատադին կալը՝ որ Յորդանա-
նու մէկալ կողմն է . հոն շատ ու
խիստ սաստիկ լացով մը ողբացին ,
՚և իր հօրը համար եօթը օր սուգ
11 բրաւ ։ Եւ ան երկրին մէջ բնակող
Քանանացիները երբոր տեսան Ա-
տադին կալին մէջ սուգին հո՟ղբը ,
բսին . Ա՛ս մեծ սուգ մը բլլալու է
Եգիպտացիներուն . անոր համար
անոր անունը ՚Արէլմիսրաիմ դրին ,
որ Յորդանանու մէկալ կողմն է ։
12 Եւ անոր որդիքը բրին անոր՝ ինչ-
13 պէս որ պատուիրեր էր ։ Եւ ՚անոր
որդիքը Քանանու երկիրը տարին
զանիկայ , ու թաղեցին զանիկայ
Մամբրէին դիմացը եղող Մաքփե-

Ն · Ք · ՉՁ · 1689

– ԳԼ · Լ · 4 , 24 · 28 ։ ՚Թ · 20։ Իր · 21 ։ Սաղ · ՃՀԲ · 13 ։
ǂ Յոբ · ԻԹ · 20 ։ Սաղ · Լ՟Ե · 15 ։
+ Սաղ · ՃՂԲ · 2 · 5 ։
՚ ԳԼ · Խե · 11 ։ Խէ · 12 ։ Ծ · 21 ։
ǂ Ես · Իբ · 16 ։
– Սաղ · Ա · 1 ։
Բ ԳԼ · Իբ · 13 · 21 ։ Լե · 3 ։ Խգ · 23 ։
ǂ ԳԼ · Ժէ · 1 ։ Լե · 11 ։
Ծ Բ Օր · ԼԳ · 13 ։
՚՚ Կ՟՛ մըշ-
մրնջնաւոր
լեռներուն
օրհնու-
թիւններէն,
Ի՟ յաւիտե-
նական բլու-
րներուն
վայելչու-
թիւնէն,
Ի Բ Օր · ԼԳ · 15 ։ Ամբ · Գ · 6 ։
Ղ Բ Օր · ԼԳ · 16 ։
Ի Դատ . Ի · 21 , 25 ։ Եզկ · Իբ · 25 · 27 ։
Ը Թուա · ԻԳ · 24 ։ Եսթ . Բ · 11 ։ Եզկ · Լ՟Թ · 10 ։ Զաք · Ժգ · 1 , 7 ։
Ը ԳԼ · Ժե · 15 ։ Խե · 8 ։
Ժ ԳԼ · Խէ · 30 ։ Բ Թագ · ԺԹ · 37 ։
Ի ԳԼ · Ծ · 13 ։
Լ ԳԼ · Իգ · 16 ։
Ի ԳԼ · Իգ · 19 ։ Խե · 9 ։
Ժ ԳԼ · Լե · 29։

ǂ Հմր 29 ։

ԳԼ · Ծ

1 Եւ Յովսէփ ՚իր հօրը երեսին վրայ
ինկաւ , ու Է՟լացաւ անոր վրայ ,
2 և համբուրեց զանիկայ ։ Եւ Յով-
սէփ իր բժիշկ ծառաներուն հրա-
մայեց որ ՚իր հայրը զմռսեն . և
3 բժիշկները զմռսեցին Իսրայէլը ։ Եւ
անոր քառասուն օրը լմընցաւ . ինչու-
որ զմռսուածներուն օրերը ասանկ
կը լմըննար . և Եգիպտացիք ՚անոր
համար եօթանասուն օր սուգ բրին ։
4 Եւ երբ անոր սուգին օրերը անցան ,
Յովսէփ ղրուցեց Ֆարաւոնի տա-
նը՝ բսելով . Թէ որ հիմա ձեր առ-
ջևը շնորհք գտայ , կ'աղաչեմ ձեզի՝
Փարաւոնին ականջին ղրուցեցէք
5 ու բսէք . Հիմ հայրս ինծի երդումով
ընել տուաւ՝ բսելով . Ահա ես կը
մեռնիմ . իմ գերեզմանիս մէջը՝
՚որ ես ինծի համար Քանանու երկ-
րին մէջ փորեցի , իս հոն թաղես .
և հիմա շնորհք ըրէ՝ իմ հայրս թա-
6 ղելու ելլեմ , ու նորէն գամ ։ Եւ
Փարաւոն բսաւ . Ելի՛ր , ու թաղէ
քու հայրդ՝ ինչպէս որ անիկայ քե-
զի երդումով ընել տուաւ ։
7 Եւ Յովսէփ իր հայրը թաղելու
ելաւ . և Փարաւոնին բոլոր ծառա-
ները՝ անոր տանը ծերերը՝ ու Ե-
գիպտոսի երկրին բոլոր ծերերը ա-
8 նոր հետ ելան . Նաև Յովսեփին
բոլոր տուները՝ ու անոր եղբայրները՝
և անոր հօրը տունը . միայն իրենց
տղաքները , ու իրենց հօտերը , և
իրենց արջառները Գեսեմի երկրին
9 մէջ թողուցին ։ Եւ անոր հետ
կառքեր ու ձիաւորներ ելան , ու
10 շատ մեծ բանակ մը եղաւ ։ Եւ ե-
կան Ատադին կալը՝ որ Յորդանա-
նու մէկալ կողմն է . հոն շատ ու
խիստ սաստիկ լացով մը ողբացին ,
՚և իր հօրը համար եօթը օր սուգ
11 բրաւ ։ Եւ ան երկրին մէջ բնակող
Քանանացիները երբոր տեսան Ա-
տադին կալին մէջ սուգին հո՟ղբը ,
բսին . Ա՛ս մեծ սուգ մը բլլալու է
Եգիպտացիներուն . անոր համար
անոր անունը ՚Արէլմիսրաիմ դրին ,
որ Յորդանանու մէկալ կողմն է ։
12 Եւ անոր որդիքը բրին անոր՝ ինչ-
13 պէս որ պատուիրեր էր ։ Եւ ՚անոր
որդիքը Քանանու երկիրը տարին
զանիկայ , ու թաղեցին զանիկայ
Մամբրէին դիմացը եղող Մաքփե-

– ԳԼ · Խգ · 4 ։
Բ Դ Թագ · Ժգ · 14 ։
ǂ Հմր 26 ։ Բ Մն · Ժգ · 14 ։ Մաա · Իգ · 12 ։ Մար · Ժգ · 8 ։ Ժգ · 1 ։ Ղե · Իգ · 1։ ՑՀ · Ժբ · 7 ։ Ժթ · 39 , 40 ։
՚ Թու · Ի · 30 ։ Բ Օր · ԼԳ · 8 ։
Ի Եսթ · Գ · 2։
Ղ ԳԼ · Խէ · 29 ։

Ի Բ Մն · Ժգ · 14։ Ես · Իբ · 16 ։ Մաա · Իէ · 60 ։

Ը Բ Թագ · Ա · 17 ։ Գար · Բ · 2 ։
Ի Դ Թագ · Լ՟Ա · 13 ։ Ցոբ · Բ · 13։

+ Ջ՟՝ սուգ
Եգիպտա-
ցւոց ։

ǂ ԳԼ · Խթ · 29։30։ Գար · Է · 16 ։

Ն·Ք·ԴԲ· 1689

լայի արտին այրին մէջը, որն որ Աբրահամ Հերեզմանի կալուածքի համար ծախու առաւ արտին հետ
14 մէկտեղ քնտացի Եփրոնէն։ Եւ Յովսէփ իր հայրը թաղելէն ետև՝ Եգիպտոս դարձաւ, ինքը՝ ու իր եղբայրները՝ և ան ամէնը՝ որ իրեն հետ իր հայրը թաղելու ելան։
15 Եւ Յովսեփին եղբայրները տեսնելով որ իրենց հայրը մեռաւ, Հրսին ըսին. Գուցէ Յովսէփ ոխ պահելով՝ պիտի հատուցանէ մեզի ան ամէն չարիքը՝ որն որ ըրինք իրեն։ Եւ Յովսեփին պատգամատու խրկեցին՝ ըսելով. Քու հայրդ մեռնելէն առաջ պատուիրեց՝ ըսելէ՝ ու ըսաւ.
17 Յովսեփին ասանկ ըսէք. Հիմա շնորհք ըրէ՝ քու եղբայրներուդ յանցանքը ու անոնց մեղքը ներէ, Հինչու որ քեզի չարութիւն ըրին. և հիմա կ'աղաչենք քեզի՝ Հրէս Յօրդ Աստուծոյն ծառաներուն յանցանքը ներէ։ Եւ Յովսէփ լացաւ՝ երբոր ատոնք Հրեն։
18 Նոնք խօսեցան իրեն։ Ու անոր եղբայրներն ալ գացին, և Հանոր առջևը ինկան, ու ըսին. Ահա մենք քու
19 ծառաներդ ենք։ Եւ Յովսէփ ըսաւ անոնց. Հմի վախնաք. Հմիթէ ես
20 Աստուծոյ տեղն եմ։ Հեւ թէպետ դուք ինծի դէմ չարութիւն խորհեցաք, Հայց ՀԱստուած ան

Ն·Ք·ԴԲ· 1689

ս ԳԼ·խԼ·12։ Մ՚ատ.ԺԱ·44։

յ ԳԼ·ԼԳ·3։ * ԵՀբ. ա. Նոնց սրտին

1635

Ն Ցոր. խր. 16։
ԼԹես. ԼՐ. 39։
* ԳԼ. Լ. 3։

ԼԳԼ. ժԼ. 14։ Խգ. 4։ Խբ. 21։ Եւ. գ. 16, 17։ Երբ. ժա. 22։
Գ ԳԼ. ժԼ. 14։ Խգ. 3։ Լե. 12։ Խգ. 4։
ԼԵւ. ժգ. 19։ Գնաճիդ. 32։ Գոր. Ե. 16։

– Հմր 2։

ղէկի գործելու խորհեցաւ. ա-նանկ որ՝ ան օրուան եղածին պէս՝
21 շատ ժողովուրդ ապրեցնէ։ Եւ հիմա մի՛ վախնաք. Հես ձեզ՝ ու ձեր ընտանիքները պիտի կերակրեմ։ Ա՚յսպէս միխիթարեց զանոնք և բաղցրութեամբ խօսելով։
22 Եւ Յովսէփ Եգիպտոս բնակեցաւ, ինքը՝ և իր Հօրը տունը. և Յովսէփ հարիւր տասը տարի ապ-
23 րեցաւ։ Եւ Յովսէփ՝ Եփրեմին որդիները՝ Հմինչև երրորդ սերունդը տեսաւ, և Մանասէին որդւոյն Հմաքիրին որդիներն ալ ՀՅովսեփին ծունկերուն վրայ ծնան։
24 Եւ Յովսէփ իր եղբայրներուն ըսաւ. Ահա ես կը մեռնիմ, ու ՀԱստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու ձեզ աս երկրէն պիտի հանէ դէպ՚ի ան երկիրը՝ Հորուն համար ինքը երդում ըրաւ Աբրահամին՝ Հսահակին ու Յակոբին։
25 Եւ Յովսէփ Իսրայէլի որդւոցը երդում ընել տուաւ՝ ըսելով. Աստուած անշուշտ ձեզի այցելութիւն պիտի ընէ, ու իմ ոս-
26 կորներս ասկից հանէք։ Եւ Յովսէփ հարիւր տասը տարեկան ըլլով մեռաւ. ու Հզմնասեղին զանիկայ, և տապանի մը մէջ դրին Եգիպտոսի մէջ։

ԳԻՐՔ ԵԼԻՑ

Ն·Ք·ԴԲ· 1706

ԳԼՈՒԽ Ա

1 Յովսեփին մեռնելէն ետքը՝ Իսրայէլի որդիքը կը շատնան։ 8 Նոր թագաւորը թէև կը չարչարէ զանոնք ծանր գործքերով՝ բայց անոնք աւելի կը շատնան։ 15 Մանկաբարձները Աստուածմէ վախնալով՝ արու զաւակները կ'ապրեցնեն։ 22 Փարաւոն կը հրամայէ արու զաւակները գետը նետել։

– Ծն. խգ. 8։ Գ. ղ. 14։

1 Եւ Հեգիպտոս գացող Իսրայէլի որդւոցը անուններն ասոնք են. ամէն մէկը իր տունովը Յակոբին
2 հետ գնաց. Ռուբէն, Շմաւոն,
3 Ղեւի ու Յուդա, Իսաքար, Զա-
4 բուղոն և Բենիամին, Դան ու Նեփթաղիմ, Գադ ու Ասեր։
5 Եւ Յակոբին երանքէն ելած բոլոր հոգիները Հեօթանասուն հոգի էին. Յովսէփ ալ Եգիպտոս էր։
6 Յովսէփն ու անոր բոլոր եղբայրները
7 և բոլոր ան ազգը մեռան։ Եւ Իսրայէլի որդիքը աճեցան ու բազմացան և շատցան ու խիստ զօրա-

Բ Ծն. խգ. 8։ Գ. ղ. 14։
Բ Ծն. խգ. 26, 27։ Հմր 20։ բՕր. ժ. 22։
Ե Ծն. ծ. 26։ Գոր. Ե. 15։

1635

Ե Ծն. խգ. 3։ բՕր. խգ. 5։ Սաղ. ճե. 24։ Գոր. Ե. 17։

ցան. և ան երկիրը անոնցմով լեցուեցաւ։
8 Ուրդ Հեգիպտոսի վրայ մէկ նոր թագաւոր մը ելաւ, որ Յովսէփը
9 չէր ճանչնար։ Եւ անիկայ ըսաւ իր ժողովուրդին. Ահա Իսրայէլի որդւոցը ժողովուրդը մեզմէ շատ ու
10 զօրաւոր են. Հեկէք Հիմաստութիւն բանեցընենք անոնց դէմ, որ չըլլայ թէ շատնան, ու երբոր պատերազմ պատահելու ըլլայ, անոնք ալ մեր թշնամիներուն հետ մէկ ըլլան, ու մեզի դէմ պատերազմին,
11 և աս երկրէս ելլեն։ Անոր համար գործավարներ դրին անոնց վրայ, Որ չարչարեն զանոնք Հիրենց ծանր գործքերովը. և Փարաւոնին շտեմարանի քաղաքները՝ Փիթոմ Հու
12 Ռամսէսը շինեցին։ Եւ որչափ կը չարչարէին զանոնք, այնչափ ալ աւելի կը շատնային ու կ'աճէին. և անոնք Իսրայէլի որդւոցմէն

Ն·Ք·ԴԲ· 1635

Ե Գոր. Ե. 18։

Սաղ. ճն. 24։
Ե Սաղ. ժ. 2։ Ես. 3. 4։
Ը Ցոր. Ե. 13։ Սաղ. ճն. 25։ Առակ. ժգ. 25։ Իս. 30։ Գոր. Ե. 19։

Բ Ծն. ժԼ. 13։ ԳԼ. գ. 7։ բՕր. Իգ. 6։
Ժ ԳԼ. բ. 11։ Ե. 4, 5։ Սաղ. Հաս. 6։
Ե Ծն. խԼ. 11։

Ն · Ք · ՉՔ · 1635

ԼԳԼ · Բ · 23 ։ Չ · 9 ։ Թուս · Ի · 15 ։ Դտր · Է · 19 · 34 ։ Ի Սազ · ՃԱ · 6 ։

Իբր 1635

Բ Ադամ · Ժզ · 6 ։ ¦ Դան · Գ · 16 · 18 ։ Չ · 13 ։ Գտր · Ե · 29 ։

Հ Տես Ցես · Բ · 4 · ԸՀ ։ Բ Թագ · Ժէ · 19 · 20 ։

Յ Ադամ · Ժա · 18 ։ Ամոս · Բ · 12 ։ Ես · Գ · 10 ։ Երե · Ղ · 10 ։

Ղ Տես Ա Թագ · Բ · 35 ։ Բ Թագ · Է · 11 · 13 · 27 · 29 ։ Գ Թագ · Բ · 24 ։ Ժա · 38 ։ Սազ · ՃԻԷ · 1 ։

Իբր 1573

Ե Գտր · Է · 19 ։

13 ձանձրացան ։ Եւ Եգիպտացիք բռնութեամբ կը ծառայեցընէին
14 Իսրայէլի որդիները ։ Եւ Լանոնց կեանքը ծանր գործով՝ Է կաւով՝ ու աղիւսներով՝ և դաշտին ամէն գործովը կը դառնացընէին . ինչ ծառայութիւն որ անոնց ընել տային՝ բռնութեամբ էր ։
15 Եւ Եգիպտոսի թագաւորը խօսեցաւ Եբրայեցւոց մանկաբարձներուն , որոնց մէկուն անունը Սեփրա՝ ու մէկալին անունը Փուա էր ,
16 Ու ըսաւ . Եբրայեցի կիներուն տղաքը առած աւեւնիդ՝ նստարաններուն վրայ նայիք , թէ որ տղայ է՝ մեռցընէք անիկայ , և թէ
17 որ աղջիկ է՝ թող ողջ մնայ ։ Բայց մանկաբարձները Աստուծմէ Ը վախցան , ու ¦ Եգիպտոսի թագաւորին իրենց ըսածին պէս չըրին . հապա
18 արուները ողջ կը թողուին ։ Եւ Եգիպտոսի թագաւորը կանչեց մանկաբարձները , ու ըսաւ անոնց . Ինչո՞ւ աս բանը ըրիք , ու արու-
19 նները ողջ թողուցիք ։ Եւ մանկաբարձները ըսին Փարաւոնին . Քանզի Եբրայեցի կիները Եգիպտացի կիներուն պէս չեն . ինչու որ առոյգ են . մանկաբարձը անոնց
20 չհասած՝ կը ծնանին ։ Յ Անոր համար Աստուած մանկաբարձներուն բարիք ըրաւ . և ժողովուրդը շատ-
21 ցաւ , ու խիստ զօրացաւ ։ Եւ եղաւ որ մանկաբարձները Աստուծմէ վախնալնուն համար , Հանոնց
22 տուներ շինեց ։ Եւ Փարաւոն իր բոլոր ժողովուրդին հրամայեց՝ ըսելով . ¶ Ամէն ծնած տղան գետը նետեցէք , և ամէն աղջիկը ողջ թողուցէք ։

ԳԼ · Բ

1 Մովսէս կը ծնանի , 3 և տապանակով մը շամբերուն մէջ կը ձգուի ։ 5 Փարաւոնին աղջիկը կը գտնէ զանիկայ , ու իրեն որդեգիր կ'ընէ ։ 11 Մովսէս՝ Եգիպտացի մը կը սպաննէ . 13 Եբրայեցի մը կը յանդիմանէ . 15 և Մադիամ փախչելով . 21 Հոն Սեպփորան իրեն կին կ'առնէ ։ 22 Գերսամին ծնունդը ։ 23 Իսրայէլացւոց ազազակը Աստուծոյ կը հասնի ։

1 Եւ ¬ Ղևիին տունէն մէկը գնաց , ու Ղևիին Ի աղջիկը Ի առ-
2 նաւ ։ Եւ կինիկը յղացաւ , ու որդի մը ծնաւ . և Ը անոր գեղեցիկ ըլլալը տեսնելով՝ իրեք ամիս պա-
3 հեց զանիկայ ։ Եւ երբ ալ չէր կրնար պահել անիկայ , պրտուեղէն տապանակ մը առաւ անոր համար , և կպրով ու ձիւթով ծեփեց ան , և տղան մէջը դրաւ , ու գետին և-
4 զերբը եղած շամբին մէջ ձգեց ։ Ե Եւ անոր քոյրը հեռուն կայնեցաւ , որ տեսնէ Թէ ինչ պիտի պատահի
5 անոր ։ Եւ Փարաւոնին աղջիկը գետը իջաւ լուացուելու , և անոր

Ն · Ք · ՉՔ · 1571

աղախինները գետին եզերքը կը պտըտէին . և երբ անիկայ շամբին մէջտեղը տապանակը տեսաւ , իր աղախինը խրկեց , որ բերաւ անի-
6 կայ · Եւ երբոր բացաւ , տղան տեսաւ , և ահա տղան կու լար . և խղճայ անոր վրայ , ու ըսաւ . Ասիկայ Եբրայեցւոց տղաքներէն է ։
7 Եաքը անոր քոյրը ըսաւ Փարաւոնին աղջկան . Երթամ ու քեզի Եբրայեցիներէն ծիծ տուող կնիկ մը կանչեմ , որ տղան անուցանէ
8 քեզի համար ։ Եւ Փարաւոնին աղջիկը ըսաւ անոր . Գնա . և աղջիկը գնաց , ու տղուն մայրը կան-
9 չեց ։ Եւ Փարաւոնին աղջիկը ըսաւ անոր . Ա՛ռ աս տղան՝ որ սընուցանես ինծի համար , ու ես քու վարձդ կու տամ . և կնիկը առաւ
10 տղան ու սնուց անիկայ ։ Երբոր տղան մեծցաւ , Փարաւոնին աղջկանը բերաւ զանիկայ , ու Ի անոր որդին եղաւ · և անոր անունը * Մովսէս դրաւ , ու ըսաւ . Քանզի ջուրէն հանեցի զանիկայ ։
11 Եւ եղաւ որ ան օրերը Ղերբոր Մովսէս մեծցաւ , իր եղբայրներուն ելաւ , ու անոնց Ի ծանր գործերուն նայեցաւ . և տեսաւ Եգիպտացի մը՝ որ իր եղբայրներէն Եբրայեցիին
12 մէկը կը ծեծէր ։ Եւ երբ անդին ասդին նայելով՝ տեսաւ որ մէկը չկայ , Ը սպաներ Եգիպտացին , ու աւազին մէջը թաղեց զանիկայ ։
13 Եւ Ի հետևեալ օրը ելաւ , և ահա երկու Եբրայեցի մարդիկ կը կռուէին իրարու հետ . և ըսաւ անոր՝ որ իրաւունք չուներ . Ինչո՞ւ քու
14 ընկերիդ կը զարնես ։ Եւ անիկայ ըսաւ . Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ . Ի՞ս ¬ Մեռցընելու միտք ունիս , ինչպէս որ Եգիպտացին մեռցուցիր ։ Եւ Մովսէս վախցաւ՝ ու ըսաւ . Անշուշտ աս բանը իմացուած է ։ Եւ
15 երբ Փարաւոն լսեց աս բանը , Մովսէսը մեռցընել կ'ուզէր . բայց Է Մովսէս Փարաւոնին երեսէն փախաւ , ու Մադիամու երկիրը բնակեցաւ . և Ց հորի մը քով նստաւ ։
16 Ի Եւ Մարդիամու քուրմը եօթը աղջիկ ունէր . Ը ու անոնք եկան՝ և ըՈ՛ր քաշեցին , ու իրենց հօրը հօտը խմցընելու համար աւազանները
17 լեցուցին ։ Եւ հովիւները եկան՝ ու վռնտեցին զանոնք . և Մովսէս ելաւ՝ ու ազատեց անոնք , և ¦ անոնց
18 հօտին ըՈ՛ր խմցուց ։ Եւ երբ անոնք իրենց հօրը Հ դարձուցին եկան , անիկայ ըսաւ . Այսօր ի՞նչ
19 պատճառով շուտ եկաք ։ Եւ ըսին . Մկկ Եգիպտացի մը մեզ հովիւնեբուն ձեռքէն ազատեց , և մեզի ալ

Ի Գտր · Է · 21 ։

* ¬՝ Ջուրէն հանուած ։

Ղ Գտր · Է · 23 · 24 · Երե · ԺԱ · 24 · 25 · 26 ։

Ի ԳԼ · Ա · 11 ։

1531

Ը Գտր · Է · 24 ։

Ի Գտր · Է · 26 ։

Ի Գտր · Է · 27 · 28 ։

Ի Գտր · Է · 29 ։ Երե · ԺԱ · 27 ։

Լ Ծն · ԻԳ · 11 ։ ԻԲ · 2 ։

Ի ԳԼ · Գ · 1 ։ Բ Ծն · ԻԳ · 11 ։ ԻԲ · 10 ։ Ա Թագ · Թ · 11 ։

¦ Ծն · ԻԲ · 10 ։

Հ Թես · Ժ · 29 ։ ԳԼ · Գ · 1 ։ Գ · 18 ։ Ժը · 1 · ԸՀ ։

Ն · Բ · Ղ · 1531

Յ ՈՆ · լա · 54 · խգ · 25 · Ը ԳԼ · գ · 25 · ժբ · 2 · ֆ ԳԼ · ժբ · 3 · * ՅՈ՝ Հան պանդխտա- ցած ·

Ժ ԳՈՐ · է · 29 · ԵՐԲ · ժա · 13 · 14 · Ո ԳԼ · է · 7 · ԳՈՐ · է · 30 · Ն ԹՈՒ · ի · 16 · բ Օր · իզ · 7 · Սադ · ժբ · 5 ·

Ը ՈՆ · ժբ · 20 · ԳԼ · գ · 9 · իբ · 23 · 27 · բ Օր · իգ · 15 · Ցակ · է · 4 · - ԳԼ · Ղ · 5 · Ը ԳԼ · Ղ · 5 · Սադ · ՀՆ · 8 · 42 · ՃՂ · 45 · Ղ ՈՆ · ժե · 14 · խզ · 4 · Է ԳԼ · դ · 31 · աՓԱԳ · ա · 11 · բՓԱԳ · ժգ · 12 · Ղա- ա · 25 · - ԳԼ · գ · 7 ·

1491

- ԳԼ · բ · 16 ·

Բ ԳԼ · ժբ · 5 · գՓԱԳ · ժԹ · 8 · ֆ բ Օր · լԳ · 16 · Ես · կգ · 9 · Գոր · է · 30 ·

Ֆ Սադ · ՃԺա · 2 · Գոր · է · 31 ·

Ի բ Օր · լԳ · 16 ·

Ը ԳԼ · ժԹ · 12 · Ցես · ե · 15 · Գոր · է · 33 ·

Ի ՈՆ · իբ · 13 · ՀՃբ 15 · ԳԼ · գ · 5 · Մաա · իբ · 32 · ՄԱր · ժբ · 26 · Ղա- ի · 37 · Գոր · է · 32 ·

Ը Գ ԹԱԳ · ԺԹ · 13 · Ես · Ղ · 1 · 5 · ՆԷԵՄ · Թ · 9 · Սադ · ՃԳ · 44 · Գոր · է · 34 ·

Ր ԳԼ · ա · 11 · Ֆ ԳԼ · բ · 23 · 24 ·

շատ լա՜ր քաշեց , ու հօտին խրմ
20 ցուց ։ Ան ալ բսաւ իր աղջիկնե- րուն . Եւ ո՞ւր է անիկայ . ինչո՞ւ ան մարդը այդպէս թող տուիք . կանչեցէ՛ք անիկայ՝ որ ի՛նդ ուտէ ։
21 Եւ Մովսէս համձեցաւ ան մարդուն հետ բնակիլ , ու անիկայ Հիր Սեպ- փօրա աղջիկը Մովսէսին տուաւ ։
22 Եւ Բ՛ԻՒՀ որդի մը ծնաւ , և անիկայ անոր անունը Գերսամ դրաւ . քանզի բսաւ . Պանդխտ եղայ օտար երկրի մէջ ։
23 Եւ եղաւ որ շատ օրերէն ետքը Եգիպտոսի թագաւորը մեռաւ , և Իսրայէլի որդիքը ծառայութեան պատճառաւ հառաչեցին ու աղա- ղակեցին . և ծառայութեան հա- մար Հանոնց աղաղակը Աստուծոյ
24 եկաւ ։ Եւ Աստուած ՚անոնց հե- ծեծութիւնը լսեց . ու Աստուած Հ՚իշեց Հիր ուխտը՝ որ Աբրահա- մին , Իսահակին ու Ցակոբին հետ
25 ըներ Էր ։ Եւ Աստուած Հնայեցաւ Իսրայէլի որդւոցը վրայ , ու Ա- ստուած ՚գիտցաւ ՚անոնց վի՜ճակը ։

ԳԼ · Գ

1 Մովսէս իր Ցոթոր աներին հօտը կ'արածէ ։ 2 Ա՛յրուող մորենիին մէջ Աստուած կ'երեւնայ Մովսէսին , 9 ու զանիկայ Եգիպտոս կը խրկէ Իսրայէլը փրկելու ։ 14 Աստուծոյ անունը ։ 15 և իր պատգամը Իսրայէլացւոց խրկուած ։

1 Եւ Մովսէս ՚- Մադիամու քուրմին իր Ցոթոր աներին հօտը կ'արա- ծէը . ու հօտը անապատին ետին քշելով՝ Բ՚Աստուծոյ լեռը Քորէբ
2 եկաւ ։ Եւ Տ՚ԵՐոջը հրեշտակը կրակի բոցով մորենիին մէջէն երե- ցաւ անոր . և անիկայ տեսաւ որ ահա մորենին կրակով կը վառէր ,
3 բայց մորենին չէր սպառեր ։ Եւ Մովսէս բսաւ . Հիմա դառնամ ու աս Տ՚մեծ տեսարանը տեսնեմ՝ թէ
4 ինչո՞ւ համար մորենին չայրիր ։ Եւ երը Տ՚ԵՐը տեսաւ որ անիկայ տես- նելու դարձաւ , Աստուած Ի՚մորե- նիին մէջէն կանչեց անոր՝ ու բսաւ . Մովսէս՝ Մովսէս . և անիկայ բսաւ .
5 Ահա հո՜ս եմ ։ Եւ Ա՜ստուած բսաւ . Հոս մի՛ մօտենար . Հ՚կօշիկներդ հա- նի՛ քու ոտքերէդ . ինչու որ ան տեղը՝ որուն վրայ դուն կայներ ես ,
6 սուրբ երկիր է ։ Նաև բսաւ ՚անոր . Ես եմ քու հօրդ Աստուածը՝ Ա՛բ- րահամին Աստուածը՝ Իսահակին Աստուածը ու Ցակոբին Աստուա- ծը . և Մովսէս իր երեսը պահեց . ինչու որ Հ՚Աստուծոյ նայելու վախ- ցաւ ։
7 Եւ Տ՚ԵՐը բսաւ . Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը յիրաւի տեսայ . և Բ՚դրծավարնե- րուն պատճառաւը Բ՚անոնց վէրջ՜- ՚ջ՜ աղաղակը լսեցի . ինչու որ
Հանոնց նեղութիւնները դիտեմ .
8 Եւ զանոնք Եգիպտացւոց ձեռքէն Հազատելու , ու զանոնք ան երկրէն Ի՚ւմէկ աղէկ ու լայնարձակ երկիր մը՝ Բ՚կաթ ու մեղր բղխող երկիր մը՝ Կ՚ՔանաՀացւոց ու Քետացւոց և Ա՚մորհացւոց ու Փերեզացւոց և Խևացւոց ու Ցերուսացւոց տեղը
9 Հանելու Հ՚իջայ ։ Եւ ահա Հիմա Յ՚Իսրայէլի որդւոցը աղաղակը ինծի Հասած է . ու Ը՚գիպտացիներուն անոնց բրած Հարստահարութիւնն
10 ալ տեսայ ։ Ը՚Ուստի եկո՛ւր Հիմա՝ քեզ Փարաւոնին խրկեմ , և իմ ժողովուրդս Իսրայէլի որդիքը Ե-
11 գիպտոսէն Հանես ։ Եւ Մովսէս բսաւ Աստուծոյ . Ո՞ւս ո՞վ եմ՝ որ Փարաւոնին երթամ , ու Իսրայէլի
12 որդիքը Եգիպտոսէն Հանեմ ։ Եւ բսաւ . Հ՚Ընշուշտ ես քեզի Հետ պի- տի ըլլամ . և աս ըլլայ քեզի նշան՝ որ ես քեզ խրկեր եմ . երբոր ժո- ղովուրդը Եգիպտոսէն Հանես , աս լեռանը վրայ պիտի պաշտէք Զ՚Ա- ստուած ։
13 Եւ Մովսէս բսաւ Աստուծոյ . Ա- Հա ես կ'երթամ Իսրայէլի որդւո- ցը՝ ու կ'ըսեմ անոնց . Ձեր Հայրե- րուն Աստուածը իս ձեզի խրկեց . և Է՚ՐՔ՜ըսեն ինծի Թէ՝ Ի՞նչ է ա- նոր անունը , ի՞նչ ըսեմ անոնց ։
14 Եւ Աստուած բսաւ Մովսէսին . Ես եմ ՈՐ Էն ։ Եւ բսաւ . Հ՚այպէս պիտի ըսես Իսրայէլի որդւոցը . Ի՚ս
15 ՈՐ Էն խրկեց ձեզի ։ Եւ դար- ձեալ Աստուած բսաւ Մովսէսին . Ասանկ պիտի ըսես Իսրայէլի որդւո- ցը . Ձեր Հայրերուն Ե՚Հովայ Ա- ստուածը՝ Ա՚բրահամին Աստուածը՝ Իսահակին Աստուածը ու Ցակոբին Աստուածը իս ձեզի խրկեց . Հ՚իմ ա- նունս յաւիտեան աս է , և ազգ
16 ազգ իմ Յ՚իշատակս աս է ։ Գնա ՚Իսրայէլի Ծերերը Մ՚իտէդ ժողվէ , ու ըսէ անոնց . Ձեր Հայրերուն Ե- Հովայ Աստուածը՝ Ա՚բրահամին՝ Ի- սահակին ու Ցակոբին Աստուածը երեցաւ ինծի՝ ըսելով . Ա՚րդարև Ն՚այցելութիւն բրի ձեզի , ու Ե- գիպտոսի մէջ ձեր քաշածը Բ՜ե՜ց .
17 Եւ բսի որ ՚ձեզ Եգիպտոսի չար- չարանքէն՝ դէպ Ի՚ քանանացւոց ու Քետացւոց և Ա՚մորհացւոց ու Փերեզացւոց և Խևացւոց ու Ցե- բուսացւոց երկիրը՝ կաթ ու մեղր
18 բղխող երկիրը Հանեմ ։ Եւ Նա- նոնք քու ձայնիդ մտիկ պիտի ը- նեն . և ՚դուն՝ ու Իսրայէլի ծե- րերը Եգիպտոսի թագաւորին պի- տի մտնէք , ու բսէք անոր . Եբ- րայեցւոց Աստուածը Եհովան ՚մե- ղի Հանդիպեցաւ . և Հիմա կ'աղա- չենք՝ իրէք օրուան ճամբայ եր-

Ն · Բ · Ղ · 1491

Ի ՈՆ · ժբ · 21 · ԳԼ · բ · 25 · Ե ԳԼ · գ · 6 · 8 · ժբ · 15 · Ի բ Օր · ա · 25 · բ · 7 · 8 · 9 · Ծ Հմր 17 · ԳԼ · ժգ · 5 · ԼԳ · 3 · Թաւ · ժգ · 27 · բ Օր · իգ · 9 · 15 · ԵրԱՄ · ժա · 5 · լբ · 22 · Եզկ · ի · 6 ·

Կ ՈՆ · ժե · 18—21 ·

Հ ՈՆ · ժա · 5 · 7 · ժբ · 21 · ե · 24 · Յ ԳԼ · բ · 23 · Ղ ԳԼ · ա · 11 · 13 · 14 · 22 · Ֆ Սադ · ՃԸ · 26 · ՄԻԽ · գ · 4 · Ձ Ես գԼ · գ · 12 · ՓԱԳ · ժբ · 18 · Ես · գ · 5 · 8 · Ե · ԲԱՄ · ա · 6 · Յ ՈՆ · լա · 3 · բ Օր · լա · 23 · Ցես · ա · 5 · Հռով · բ · 31 ·

Ն ԳԼ · գ · 3 · ԵՈՏ · բ · 58 · բ Օր · ա · 20 · ԵՐԲ · ժգ · 8 · Ցայտ · ա · 4 ·

Ը Սադ · ՃԼԸ · 13 · ՈՎԽ · ժբ · 5 ·

- ԳԼ · դ · 29 · Ղ ՈՆ · ե · 24 · ԳԼ · բ · 25 · գ · 31 · Ղա- ա · 68 · Ֆ ՈՆ · ժե · 14 · 16 · Հմր 8 ·

Է ԳԼ · դ · 31 ·

- ԳԼ · Ե · 1 · 3 ·

- Թաւ · իգ · 3 · 4 · 15 · 16 ·

Ն·Ք·ԶԲ· 1491

թանք դէպ 'ի անապատը , որ մեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցա-
19 նենք : Եւ ես գիտեմ որ Եգիպտոսի թագաւորը Հպիտի չթողու ձեզ որ երթաք , *«ոչ ալ» զօրաւոր
20 ձեռքով : Եւ ես †ձեռք պիտի երկրընդնեմ , ու պիտի զարնեմ Եգիպտոսը ‡իմ ամէն հրաշքներովս՝ որ անոր մէջը պիտի բնեմ . և ետքն ձեզ պիտի թողու որ եր-
21 թաք : Եւ §աս ժողովուրդին շնորհք պիտի տամ Եգիպտացւոց առջևը . ու երբոր ելլէք , դատարկ
22 պիտի չելլէք . †Հապա ամէն կնիկ իր դրացիէն՝ ու իր տանը մէջ բնակող կնիկէն՝ արծաթեղէն զարդեր ու ոսկեղէն զարդեր ու հանդերձներ պիտի խնդրէ , և ¶անոնք ձեր որդիներուն ու աղջիկներուն վրայ պիտի դնէք . ու †Եգիպտոսը պիտի կողոպտէք :

ԳԼ · Դ

1 Մովսէսին գաւազանը օձ կ'ըլլայ · 6 իր ձեռքը բորոտ կ'ըլլայ : 10 Մովսէս ան գործին համար չուզեր Եգիպտոս երթալ : 14 Աստուած՝ Ահարոնը անոր օգնական կու տայ : 18 Մովսէս կը դառնայ իր ցեղէն անդրէն : 21 Փարաւոնին խրկուած Աստուծոյ պատգամը : 24 Սեպհորան իր որդին կը թլփատէ : 27 Ահարոն՝ Մովսէսը դիմաւորելու կը խրկուի : 31 Ժողովուրդը ասոնց կը հաւատայ :

1 Եւ Մովսէս պատասխան տուաւ ու ¶¶ ըսաւ . Բայց ահա անոնք ինծի պիտի չհաւատան , ոչ ալ իմ ձայնիս մտիկ պիտի ընեն . քանզի պիտի ըսեն թէ՝ Տէրը քեզի չերեւցաւ :
2 Եւ Տէրը ըսաւ անոր . Ատ քու ձեռքիդմէ՞նչ է . և անիկայ ըսաւ .
3 ¶Գաւազան : Եւ ըսաւ ¶անոր . Գետինը ձգէ ան . և անիկայ գետինը ձգեց , ու օձ եղաւ . և Մովսէս ա-
4 նոր առջևէն փախաւ : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ձեռքդ երկրընդուր՝ ու պոչէն բռնէ . և անիկայ իր ձեռքը երկրընդուց ու զանիկայ բռնեց , և գաւազան եղաւ իր ձեռ-
5 քին մէջ . Որ †հաւատան՝ †թէ ի-
6 րենց հայրերուն Տէր Աստուածը՝ Աբրահամին Աստուածը՝ Իսահակին Աստուածը ու Յակոբին Աստուածը երեւցաւ քեզի :
6 Եւ Տէրը դարձեալ ըսաւ անոր . Հիմա քու ձեռքդ ծոցդ դիր . ու անիկայ իր ձեռքը ծոցը դրաւ . և երբոր դուրս հանեց , ահա իր ձեռքը †ձիւնի պէս ¶բորոտ եղաւ :
7 Եւ Տէրը ըսաւ . Ձեռքդ նորէն ծոցդ դիր . և անիկայ նորէն իր ձեռքը ծոցը դրաւ , և երբոր դուրս հանեց , ահա նորէն իր բնական
8 մարմինին պէս եղաւ : Եւ ըլլայ որ՝ եթէ քեզի չհաւատան , ու առջի նշանին ձայնին մտիկ չընեն , հարկի նշանին ձայնին պիտի հաւատան :
9 Իսկ թէ որ ասոնց երկու նշաններուն ալ չհաւատան , ու քու ձայնիդ ալ մտիկ չընեն , դետին ջուրէն առ , ու ցամաքի վրայ արիւն պիտի ըլլայ :
10 Եւ Մովսէս ըսաւ Տէրոջը . Ո՜հ , Տէր իմ , ես ճարտարախօս չեմ , ոչ երէկուընէ ու միւսոր օրուընէ , ոչ ալ ծառայիդ հետ խօսելէդ ետև . հապա ես ծանրախօս ու ծանր
11 բարբառու եմ : Եւ Տէրը ըսաւ անոր . ¤Ո՞վ տուաւ մարդուն բերան . կամ ո՞վ բրաւ համրը կամ խուլը՝ կամ աչք ունեցողը կամ կոյրը . չէ՞
12 որ ես Տէրս : Ուստի գնա հիմա , ու ես քու բերնիդ հետ պիտի բլլամ , և քեզի պիտի սորվեցընեմ
13 ինչ որ պիտի խօսիս : Եւ անիկայ ըսաւ . Ո՜հ , Տէր իմ , †կ'աղաչեմ՝ §§ղրկելիքդ որու ձեռքով խրկել
14 կ'ուզես՝ խրկէ : Եւ Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ Մովսէսին դէմ , ու ըսաւ . Ղեւտացի Ահարոնը քու եղբայրդ չէ՞ . ես գիտեմ որ անիկայ ճարտարախօս է . նաև ահա էանիկայ քեզ դիմաւորելու պիտի ելլէ , և քեզ տեսածին պէս իր
15 սրտին մէջ պիտի ուրախանայ : Եւ դուն Հիսուսի անոր , ու Ահարոնը բերանը խօսքեր դիր . և ես քու բերնիդ ու անոր բերնին հետ պիտի բլլամ , ու †ձեզի պիտի սորվեցընեմ
16 ինչ որ պիտի ընէք : Եւ քու տեղդ անիկայ թող խօսի ժողովուրդին . և անիկայ քեզի բերնի տեղ բլլայ , ու դուն անոր Աստուծոյ տեղ բլ-
17 լաս : Եւ հաս գաւազանը ձեռքդ առ , որ անով նշանները ընես :
18 Եւ Մովսէս գնաց , ու իր ցեղոջ աներին դարձաւ , ու ըսաւ անոր . Հիմա երթամ , ու Եգիպտոսի մէջ եղող եղբայրներուս դառնամ , և նայիմ թէ տակաւին ո՞ղջ են ասոնք . ու Յեթրո ըսաւ Մովսէսին .
19 Գնա խաղաղութեամբ : Եւ Տէրը Մադիամին մէջ ըսաւ Մովսէսին . Գնա՝ Եգիպտոս դարձիր . ինչու որ քու կեանքդ փնտռող բոլոր մար-
20 դիկը մեռան : Եւ Մովսէս իր կնիկը ու իր որդիները առաւ , և իշու վրայ հեծցուց զանոնք , ու Եգիպտոսի երկիրը դարձաւ . և Մովսէս Աստուծոյ գաւազանը իր ձեռ-
21 քը առաւ : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Երբոր դառնաս՝ Եգիպտոս երթաս , նայէ որ Փարաւոնին առջևը բոլոր †հրաշքները ընես , ո-
րոնք քու ձեռքդ դրի . և ես ա-
նոր սիրտը պիտի պինդացընեմ , ու
22 ժողովուրդը պիտի չթողու : Եւ ըսես Փարաւոնին . Տէրը այսպէս կ'ըսէ . Իսրայէլը իմ որդիս՝ իմ

Ն·Ք·ԶԲ· 1491

ԸԳԼ·Է·19·

Ե ԳԼ·Զ·12·
ԵրեմՏ·ա·6·

ըՍաղ·ղդ·
8·

Ե Նե·Ե·4·
ԵրեմՏ·ա·9·
Մաա·Ժ·
19·Մար·
Ժգ·11·
Ղու·Ժբ·
11·12·Իա·
14·15·

Է Ցես Ցովն·
ա·3·

Ը Հմր 27·ա՛
Թագ·Ժ·
2·3·5·

Ը ԳԼ·Է·1·
2·

Ը Թու·իբ·
38·իգ·5·
12·16·բ
Օր·Ժբ·
18·Եա·
ծա·16·
ԵրեմՏ·ա·
9·

Թ բ Օր·է·
31·

Ի ԳԼ·Է·1·
Ժբ·19·

Ձ Հմր 2·

Ն ԳԼ·բ·15·
23·Մաա·
բ·20·

ԸԳԼ·ԺԷ·9·
Թու·ի·8·
9·

Ճ ԳԼ·գ·20·

Ո ԳԼ·է·3·
13·թԲ·12·
35·Ժ·1·
Ժգ·8·բ
Օր·բ·30·
Ցես·ժա·
20·Եա·կգ·
17·ՑՕՅ·
Ժբ·40·
Հռով·թ·
18·

Յ Ովս·ժա·
1·Հռով·
թ·4·բ
Կոր·գ·18·

Ն ԵրեմՏ·լա·
9·Ցակ·ա·
18·

Ն·Ք·ԶԲ· 1491

ՀՀԳԼ·Ե·2·
Է·4·
*կ՛երթ ոչ՝
†ԳԼ·գ·6·
Է·5·Թ·
15·
‡ԳԼ·է·3·
ԺԱ·9·ըՕր·
գ·22·Նե-
ՀՄ·Թ·10·
Սաղ·ճե·
27·ճԼ·9·
ԵրեմՏ·լբ·
20·Գոր·է·
36·Ցես գԼ·
է—ԺԳ·
§ԳԼ·ԺբՀ·31·
¶ԳԼ·ԺԱ·3·
ԺբՀ·36·
Սաղ·ճզ·
46·Ածա·
ԺգՀ·7·
†Ծն·ԺԼ·
14·ԳԼ·ԺԱ·
2·ԺբՀ·35·
36·
‡Ցոր·իԷ·17·
Ածա·Ժգ·
22·Եզեկ·
լԹ·10·

Ա Հմր 17·20·

Բ ԳԼ·ԺԹ·
9·

Գ ԳԼ·գ·15·

Դ Թու·ԺբՀ·
10·գԹագ·
ա·27·

Ե Օր·լբ·
39·Թու·
ԺբՀ·13·14·
գԹագ·ա·
14·Մաա·
բ·3·

Ն · ք · ԶԲ · 1491

ԼԳԼ · ժա · 5։ ԺԲ · 29։

- Թու · իբ · 22։ Ն Ծն · ԺԷ · 14։ Դ Ցես · է · 2, 3։

23 անդրանիկս է ։ Եւ քեզի կ՚ըսեմ . Իմ որդիս Թող տուր՝ որ իս պաշտէ . բայց Թէ որ անիկայ Թող տալ չուզես , ահա ես քու որդիդ՝ Հանուանդ քու անդրանիկդ կ՚սպաննեմ ։

24 Եւ եղաւ որ ճամբան իջած տեղը՝ Տէրը - անոր պատահեցաւ , և ուզեց

25 Նսպաննել զանիկայ ։ Ուստի Սեպհորան Դաւր քար մը առաւ , ու իր որդւոյն անթլփատութիւնը Թլփատեց , և անոր ոտքերուն ձգեց , ու ըսաւ . Իրաւցընէ դուն ինծի ա-

26 րիւնոտ էրիկ մըն ես ։ Ա՚յսպէս Թող տուաւ զանիկայ . ան ատենը Սեպհորան ըսաւ . Արիւնոտ էրիկ մըն ես , Թլփատութեանը համար ։

27 Եւ Տէրը ըսաւ Ահարոնին . Գնա անապատը Մովսէսը դիմաւորելու . և անիկայ դնաց , ու - Աստուծոյ լեռանը վրայ պատահեցաւ

28 անոր , և համբուրեց զանիկայ ։ Եւ Մովսէս - պատմեց Ահարոնին՝ Ցէրոբոջը բոլոր խօսքերը՝ որ խրկեց զինքը , և բոլոր Նշանները՝ որ իրեն պատուիրեց ։

29 Եւ Մովսէս ու Ահարոն - գացին , ու Իսրայէլի որդւոյը բոլոր ծերերը

30 ժողվեցին ։ Եւ Ահարոն՝ Ցէրոջը Մովսէսին բսած բոլոր խօսքերը զրուցեց - անոնց . ու ժողովուրդին

31 առջևը նշանները բրաւ ։ Եւ ժողովուրդը հաւատաց . և երբոր լսեցին Թէ Տէրը - այցելութիւն բրած է Իսրայէլի որդւոյը , և Թէ անոնց + նեղութիւնները նայած է , + խոնարհեցան ու երկրպագութիւն ըրին ։

Ն · ք · ԶԲ · 1491

ԻԳԼ · ա · 11։

ԼԳԼ · ա · 7, 9։

ԻԳԼ · ա · 11։

23 անդրանիկս է ։ Եւ քեզի կ՚ըսեմ . Իմ որդիս Թող տուր՝ որ իս պաշտէ . բայց Թէ որ անիկայ Թող տալ չուզես , ահա ես քու որդիդ՝ Հանուանդ քու անդրանիկդ կ՚սպաննեմ ։

24 Եւ եղաւ որ ճամբան իջած տեղը՝ Տէրը - անոր պատահեցաւ , և ուզեց

25 Նսպաննել զանիկայ ։ Ուստի Սեպհորան Դաւր քար մը առաւ , ու իր որդւոյն անթլփատութիւնը Թլփատեց , և անոր ոտքերուն ձգեց , ու ըսաւ . Իրաւցընէ դուն ինծի ա-

26 րիւնոտ էրիկ մըն ես ։ Ա՚յսպէս Թող տուաւ զանիկայ . ան ատենը Սեպհորան ըսաւ . Արիւնոտ էրիկ մըն ես , Թլփատութեանը համար ։

ԳԼ · Ե

1 Փարաւոն կը յանդիմանէ Մովսէսը ու Ահարոնը՝ իրենց բերած պատգամին համար , 5 ու Իսրայէլացւոց գործերը կը ծանրացընէ , 15 և անոնց գանգատը կը մերժէ , 20 Ուստի Իսրայէլացիք կը գանգատին Մովսէսէն ու Ահարոնէն ։ 22 Մովսէսն ալ Աստուծոյ կ՚աղաղակէ ։

1 Ետքը Մովսէս ու Ահարոն Փարաւոնին մտան՝ ու ըսին . Իսրայէլին Եհովայ Աստուածը այսպէս կ՚ըսէ . Իմ ժողովուրդս Թող տուր՝ որ անապատին մէջ ինծի

2 - տօնախմբութիւն ընեն ։ Եւ Փարաւոն ըսաւ . Ե՞ Եհովան ով է , որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը Թող տամ . Եհովան չեմ ճանչնար , և Իսրայէլն ալ չեմ

3 Թողուր ։ Եւ անոնք ըսին . Ե՞ Երբայեցւոց Աստուածը մեզի հանդիպեցաւ . հրամայեւ տուր որ իրեք օրուան ճամբայ անապատը երթանք , ու մեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցանենք , որ չըլլայ Թէ ժանտախտով կամ սրով մեզի դէմ

4 Ելլէ ։ Եւ եգիպտոսի Թագաւորը

- Թու · իբ · 22։ Ն Ծն · ԺԷ · 14։ Դ Ցես · է · 2, 3։

Ն Հմր 14։

- ԳԼ · գ · 1։

- Հմր 15, 18։

Ն Հմր 8, 9։

- ԳԼ · գ · 16։

Ր Հմր 16։

Ց ԳԼ · գ · 18։ Հմր 8, 9։

- ԳԼ · գ · 16։

Ֆ ԳԼ · բ · 25 · գ · 7։

Ֆ Ծն · իդ · 26։ ԳԼ · ԺԲ · 27։ ա Պն · իթ · 20։

- ԳԼ · ԺԲ · 9։

Բ դ Թագ · ԺԲ · 35։ Ցոր · իա · 15։

Ֆ ԳԼ · գ · 19։

Ր ԳԼ · գ · 18։

օրուան ձեր վրայ դրուած ազիւս-
20 ներուն թիւէն չպակսեցընէք ։ Եւ
Փարաւոնէն դուրս ելած առուներին՝
հանդիպեցան Մովսէսին ու Ահա-
րոնին , որ կեցեր դիմաւորելու կը
21 սպասէին . եւ ըսին անոնց . Տէրը
ձեզի նայի ու դատէ . ինչու որ
Ի դարշելի ըրիք մեր հոտը Փարաւո-
նին առջևը , ու անոր ծառաներուն
առջևը , մեզ սպաննելու համար
անոնց ձեռքը սուր տալով ։
22 Եւ Մովսէս Տէրոջը դարձաւ՝ ու
ըսաւ . Ով Տէր , ինչո՞ւ աս ժո-
ղովուրդը փորձանքի մէջ ձգեց ,
23 և իս ինչո՞ւ խրկեցիր . Վասն զի
քանի որ քու անունովդ Փարաւո-
նին զրուցելու եկեր եմ , ՚Նէ՚ աս
ժողովուրդը փորձանքի մէջ ձգեց .
ու դուն բնաւ չփրկեցիր քու ժո-
ղովուրդդ ։

ԳԼ · Զ

1 Աստուած իր խոստումները կը նորոգէ՝ իր Ե-
հովայ անունը յայտնելով ։ 14 Ռզդեաններու
թիւն Ռուբենին , 15 Շմաւոնին , 16 Ղևիին՝
ուսկից որ Մովսէսը ու Ահարոնը եղան ։

1 Յե Տէրը ըսաւ Մովսէսին . Փա-
րաւոնին ինչ ընելիքս հիմա պի-
տի տեսնես . որ Հզօր ձեռքով
պիտի թողու զանոնք , ու հզօր
ձեռքով Ի պիտի վռնտէ զանոնք
2 իր երկրէն ։ Եւ Աստուած խօսե-
ցաւ Մովսէսին՝ ու ըսաւ անոր .
3 Ես եմ ԵՀովան . Եւ Աբրահամին՝
Իսահակին ու Յակոբին Ի Ամենա-
կարող Աստուծոյ անունով երև-
ցայ . բայց իմ Ր ԵՀովայ անունովս
4 անոնց չյայտնուեցայ ։ Նաև ա-
նոնց հետ իմ ուխտս հաստատեցի ,
Հոր անոնց տամ Քանանու երկի-
րը , անոնց օտարութեան երկիրը՝
5 ուր որ պանդխտացան ։ Եւ Ի լը-
սեցի ալ Իսրայէլի որդւոցը հառա-
չանքը , որ Եգիպտացիները ծառա-
յեցուցին . ու իմ ուխտս յիշեցի ։
6 Անոր համար Իսրայէլի որդւոցը բ-
սէ . Ես եմ ԵՀովան . և Ի հան ձեզ
Եգիպտացւոց ծանր գործքերուն
տակէն պիտի հանեմ , ու ձեզ
անոնց ծառայութենէն պիտի ա-
զատեմ , և Ի ձեզ երկրնցած բա-
զուկով ու մեծ դատաստաններով
7 պիտի փրկեմ . Եւ Ի ձեզ ինձի
ժողովուրդ պիտի առնեմ , ու Ես
Աստուած պիտի ըլլամ . և
պիտի գիտնաք որ ես Ի Եգիպտա-
ցւոց ծանր գործքերուն տակէն հա-
նող Տէրը՝ ձեր Աստուածը ես եմ ։
8 Եւ ձեզ ան երկիրը պիտի տանիմ ,
որն որ Աբրահամին՝ Իսահակին ու
Յակոբին տալու Ի երդում ըրի՚՚ , ու
ան ձեզի ժառանգութիւն ըլլալու
9 պիտի տամ . Ես եմ Տէրը ։ Եւ
Մովսէս Իսրայէլի որդւոցը ասանկ
զրուցեց . Իսրայէլ անոնք Հոգիի նե-
ղութենէն ու գործին ծանրութե-
նէն մտիկ չըրին Մովսէսին ։
10 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
11 սելով . Մտիր՝ խօսէ Եգիպտոսի
Փարաւոն Թագաւորին՝ որ Իսրա-
յէլի որդիքը իր երկրէն արձակէ ։
12 Եւ Մովսէս խօսեցաւ Տէրոջը
առջևը՝ ըսելով . Ահա Իսրայէլի
որդիքը Հինձի մտիկ չըրին , հապա
Փարաւոնը ինձի ի՞նչպես մտիկ պի-
տի ընէ . որ Ես Ի ծանրալեզու եմ ։
13 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ա-
հարոնին , ու հրամայեց անոնց՝
որ Իսրայէլի որդւոցը ու Եգիպտոսի
Փարաւոն Թագաւորին Ը ր Ի՚՚ , Իս-
րայէլի որդիքը Եգիպտոսի երկրէն
հանելու համար ։
14 Անոնց հայրերուն տուներուն
գլուխները ասոնք են . Ռուբենի
անդրանկականը Ռուբենին որդիքը՝
Ենոքը , Փաղղուս , Եսրոն և Քար-
մի . ասոնք են Ռուբենին տոհմերը ։
15 Եւ Շմաւոնին որդիքը՝ Յամուէլ ,
Յամին , Ոհադ , Յաքին , Սահաւ ,
և Քանանացի կնկանը որդին Սա-
ուուղ . ասոնք են Շմաւոնին տոհ-
16 մերը ։ Եւ Ղևիին որդւոցը ա-
նուններըը իրենց ծնունդներուն հա-
մեմատ ասոնք են . Գերսոն , Կա-
հաթ և Մերարի ։ Եւ Ղևիին
կենացը տարիները հարիւր երեսուն-
17 ուեօթը տարի եղան ։ Գերսոնին
որդիքը իրենց տոհմերուն համե-
18 մատ՝ Ղոբնի ու Սեմէի էին ։ Եւ
Կահաթին որդիքը՝ Ամրամ , Իսա-
հար , Քեբրոն ու Ոզիէլ ։ Եւ Կա-
հաթին կենացը տարիները հարիւր
19 երեսունուերեք տարի եղան ։ Եւ
Մերարիին որդիքը՝ Մոողի ու
Մուսի . Ղևիին տոհմերը իրենց
ծնունդներուն համեմատ ասոնք են ։
20 Եւ Ամրամ իր հօրաքրոջը Ցոբա-
բեդը իրեն կնիկ առաւ , որ ծնաւ
իրեն Ահարոնը ու Մովսէսը ։ Եւ
Ամրամին կենացը տարիները հարիւր
21 երեսունուեօթը տարի եղան ։ Եւ
Իսահարին որդիքը՝ Կորխ , Նա-
22 փեկ և Զեբրի ։ Եւ Ոզիէլին որ-
դիքը՝ Միսայէլ , Եղիսափան և
23 Սէթրի ։ Եւ Ահարոն իրեն կնիկ ա-
ռաւ Ամինադաբին աղջիկը՝ Նաա-
սոնին քոյրը Եղիսաբեթը , և ծնաւ
իրեն Նադաբը ու Աբիհուդը , Եղի-
24 ազարը ու Իթամարը ։ Եւ Կորխին
որդիքը՝ Ասիր , Եղկանա և Աբիա-
սափ . ասոնք են Կորխեցւոց տոհ-
25 մերը ։ Եւ Ահարոնին որդին Եղիա-
զարը Փուտիելին աղջիկներէն իրեն
կնիկ առաւ . և Ի ծնաւ իրեն Փին-
հէսը . ասոնք են Ղևտացւոց հայ-
րերուն գլուխները իրենց տոհմե-
րուն համեմատ ։

Ն · ք · գՀ · 1491

Ը Գլ · գ · 9 ։

Ի Ած · ւդ · 30 ։ աթաց · ժգ · 4 ։ իէ · 12 ։ բթաց · ժ · 6 ։ ամՊ · ժթ · 6 ։

– Գլ · գ · 19 ։
Բ Գլ · ժա · 1 ։ ժբ · 31 ։ 33 ։ 39 ։
Ե Ած · ժէ · 1 ։ լե · 11 ։ խբ · 3 ։
Ր Գլ · գ · 14 ։ Սաղ · կբ · 4 ։ ձգ · 18 ։ Ցօհ · բ · 58 ։ Ցայտ · ա · 4 ։
Ի Ած · ժե · 18 ։ ժէ · 4 ։ 7 ։
Ղ Ած · ժէ · 8 ։ իբ · 4 ։
Ի Գլ · բ · 24 ։
Ը Հմր 2 ։ 8 ։ 29 ։
Բ Գլ · գ · 17 ։ է · 4 ։ բ Օր · իգ · 8 ։ Սաղ · ձա · 6 ։ ՃՂ · 11 ։ 12 ։
Ե Գլ · ժե · 18 ։ բ Օր · է · 8 ։ ամՊ · ժէ · 21 ։ Նէեմ · ա · 10 ։
Ի բ Օր · գ · 20 ։ է · 6 ։ ժգ · 2 ։ իգ · 18 ։ բթաց · է · 24 ։
Լ Ած · ժէ · 7 ։ 8 ։ Գլ · իթ · 45 ։ 46 ։ բ Օր · իթ · 13 ։ Ցայտ · իա · 7 ։
Ի Գլ · ե · 4 ։ 5 ։ Սաղ · ձա · 6
Ե Ած · ժե · 18 ։ իգ · 3 ։ իբ · 13 ։ լե · 12 ։
*Եբր. ձեռքս վեր վերցուցի · տես Ած · ժգ · 22 ։ բ Օր · լբ · 40 ։

Ն · ք · գՀ · 1491

Ի Գլ · ե · 21 ։

Ջ Հմր 9 ։

Ե Հմր 30 ։ Գլ · գ · 10 ։ Եբմ · ա · 6 ։
† Եբր · անթլփատ պատկանելով

Ղ Ած · իգ · 9 ։ ա Մն · ե · 3 ։

Ջ Ած · իգ · 9 ։ ա Մն · գ · 24 ։ Ած · իգ · 10 ։

Ժ Ած · իգ · 11 ։ թաւ · գ · 17 ։ ա Մն · գ · 1 ։ 16 ։

1619

Յ ա Մն · գ · 17 ։ իգ · 7 ։

Ն թաւ · իգ · 57 ։ ա Մն · գ · 2 ։ 18 ։

Է ա Մն · գ · 19 ։ իգ · 21 ։

– Գլ · բ · 1 ։ 2 ։ թաւ · իգ · 59 ։

Է թաւ · ժգ · 1 ։ ա Մն · գ · 37 ։ 38 ։
Ղ Ղև · ժ · 4 ։ թաւ · գ · 30 ։

1630

Է Հաւթ · գ · 19 ։ 20 ։ ա Մն · բ · 10 ։ Մատ · ա · 4 ։
– Ղև · ժ · 1 ։ թաւ · գ · 2 ։ իգ · 60 ։ ա Մն · գ · 3 ։ իգ · 1 ։
– թաւ · իգ · 11 ։
Է թաւ · իե · 7 ։ 11 ։ Ցեսս · իգ · 33 ։

Ն · ք · ՉԿ · 1491

26 Ասոնք են ան Ահարոնը ու Մովսէսը՝ [a]որոնց ըսաւ Տէրը . Իսրայէլի որդիքը իրենց [b]զօրքերովը Եգիպ-
27 տոսի երկրէն հանեցէք ։ Իսրայէլի որդիքը [c]Եգիպտոսէն հանելու համար՝ [d]Եգիպտոսի Փարաւոն թագաւորին խօսողները ասոնք են . ասոնք Մովսէսը ու Ահարոնը ։
28 Եւ ան օրը որ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ Եգիպտոսի երկրին մէջ ,
29 Ան ատենը Տէրը Մովսէսին զրուցեց ըսելով . [e]Ես եմ Եհովան . [f]ամէն ինչ որ քեզի կ'ըսեմ , Եգիպտոսի
30 Փարաւոն թագաւորին խօսէ ։ Եւ Մովսէս Տէրոջը առջևը ըսաւ . Ահա [g]ես [h]ծանրալեզու եմ , ու Փարաւոն ի՞նչպէս մտիկ պիտի ընէ ինծի ։

ԳԼ · Է

4 Աստուած կը քաջալերէ Մովսէսը որ համաձայնի Փարաւոնին առջևը երթալ ։ 7 Մովսէսին տարիքը ։ 8 Ընոր գաւազանը օձ կ'ըլլայ ։ 11 Մոգերն ալ նոյն բանը կ'ընեն ։ 13 Փարաւոնին սիրտը կը կարծրանայ ։ 19 Գետին ջուրը արիւն կը դառնայ ։

1 Ու Տէրը ըսաւ Մովսէսին . Նայէ , քեզ [i]Փարաւոնին աստուած ըրի , ու քու եղբայրդ Ահարոնը
2 [k]քու մարգարէդ ըլլայ . Դուն [l]խօսիս ան ամէնը՝ որ քեզի կը հրամայեմ , և քու եղբայրդ Ահարոնը թող խօսի Փարաւոնին՝ որ Իսրայէլի որդիքը իր երկրէն
3 արձակէ ։ Եւ ես [m]Փարաւոնին սիրտը պիտի պինդցընեմ , ու իմ Ինշաններս և հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ պիտի շատցընեմ ։
4 Եւ Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ . ու Ես իմ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի ձգեմ , և իմ զօրքերս՝ իմ ժողովուրդս Իսրայէլի որդիքը [n]մեծ դատաստաններով պիտի հա-
5 նեմ Եգիպտոսի երկրէն ։ Եւ [o]երբոր իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկընցընեմ՝ ու Իսրայէլի որդիքը ա-նոնց մէջէն հանեմ , [p]պիտի դիտնան Եգիպտացիք՝ թէ ես եմ Տէրը ։
6 Եւ Մովսէս ու Ահարոն [q]Տէրոջը ի-րենց պատուիրածին պէս ըրին . ա-
7 նանկ ըրին ։ Եւ Մովսէս [r]ութսուն տարեկան էր , ու Ահարոն ութսունուերկու տարեկան էր , երբոր Փարաւոնին հետ խօսեցան ։
8 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու
9 Ահարոնին՝ ըսելով . Երբոր Փարաւոն ձեզի խօսի՝ ու ըսէ . [s]Ձեզի համար հրաշք ցուցուցէք . ան ա-տենը Ահարոնին ըսես թէ՝ [t]գաւազանդ առ , ու Փարաւոնին առջևը նետէ . և անիկայ վիշապ պիտի
10 ըլլայ ։ Եւ Մովսէս ու Ահարոն մտան Փարաւոնին՝ ու [u]Տէրոջը պատուիրածին պէս ըրին . և Ահարոն իր գաւազանը նետեց Փարաւո-
11 նին առջևը՝ ու անոր ծառաներուն առջևը , և [v]վիշապ եղաւ ։ Եւ Փարաւոն ալ իմաստունները ու [w]կախարդները կանչեց . և Եգիպտոսի մոգերը՝ անոնք ալ [x]իրենց կախար-
12 դութիւններովը անանկ ըրին . Եւ ամէն մէկը իր գաւազանը նետեց , ու անոնք վիշապներ եղան . բայց Ահարոնին գաւազանը անոնց գա-
13 ւազանները կլլեց ։ Եւ Փարաւոնին սիրտը կարծրացաւ , ու անոնց մըտիկ չըրաւ , [y]ինչպէս որ Տէրը ը-րուցեր էր ։
14 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . [z]Փարաւոնին սիրտը խստացաւ . ժողո-
15 վուրդը արձակել չուզեր ։ Առտուանց Փարաւոնին դնա . ահա անիկայ դէպ 'ի ջուրը կ'ելլէ . ու դուն գետին եզերքը անոր դիմացը կայնէ , և ան [a]օձ դարձած գաւա-
16 զանը ձեռքդ առ , ու ըսէ անոր . [b]Եբրայեցւոց Եհովայ Աստուածը իս քեզի խրկեց՝ ըսելով . Արձակէ իմ ժողովուրդս՝ [c]որ ինծի պաշտօն անապատին մէջ . և ահա մինչև հի-
17 մա մտիկ չըրիր ։ Այսպէս կ'ըսէ Տէրը . [d]Ասով դիտնաս թէ ես եմ Տէրը . ահա ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջի ջուրերուն պիտի զարնեմ , ու [e]արիւն Նպիտի
18 դառնան . Եւ գետին մէջ եղած ձուկերը պիտի մեռնին , ու գետը պիտի հոտի . և Եգիպտացիք [f]պիտի զզուին գետէն ջուր խմելու ։
19 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըսէ Ահարոնին . Գաւազանդ առ , ու [g]ձեռքդ երկընցուր Եգիպտացւոց ջուրերուն վրայ , անոնց առուներուն վրայ , անոնց գետերուն վրայ , ու անոնց լիճերուն վրայ , և անոնց բոլոր ջրակուտակներուն վրայ՝ որ արիւն ըլլան . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝ փայտէ ու քարէ ամաններուն մէջն ալ [h]արիւն ըլ-
20 լան ։ Եւ Մովսէս ու Ահարոն Տէրոջը պատուիրածին պէս ըրին . և Հզաւազանը վերցուց , ու Փարաւոնին առջևը և անոր ծառաներուն առջևը գետին մէջի ջուրերուն զարկաւ , և գետին մէջի բոլոր [i]ջուրը
21 րը արիւն դարձան ։ Եւ գետին մէջ եղած ձուկերը մեռան , ու գետը հոտեցաւ , և Եգիպտացիք [k]չկրցին գետէն ջուր խմել . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ արիւն կար ։
22 [l]Եւ Եգիպտոսի մոգերն ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին . և Փարաւոնին սիրտը կարծրացաւ , ու [m]Տէրոջը ըսածին պէս՝
23 անոնց մտիկ չըրաւ ։ Եւ Փարաւոն դարձաւ՝ ու իր տունը եկաւ , ու
24 [n]սա ալ անոր սրտին չդպաւ ։ Եւ բոլոր Եգիպտացիք գետին բոլոր-

Ն · ք · ՉԿ · 1491

[c] Ել · դ · 3 ։
[d] ր Տիմ. դ · 8 ։
[e] Ծն. խ · 8 ։
[f] Հմր 22 ։ Ել · ը · 7 · 18 ։
[g] Ել · դ · 21 ։ Հմր 4 ։
[h] Ել · ը · 15 ։ ժ · 1 · 20 , 27 ։
[i] Ել · դ · 2 , 3 ։ Հմր 10 ։
[k] Ել · դ · 18 ։
[l] Ել · դ · 12 , 18 ։ ե · 1 · 3 ։
[m] Ել · ե · 2 ։ Հմր 5 ։
[n] Յայտ. ժզ · 4 · 6 ։
[o] Ել · դ · 9 ։
[p] Հմր 24 ։
[q] Ել · ը · 5 , 6 · 16 ։ թ · 22 ։ ժ · 12 , 21 ։ ժդ · 21 , 26 ։
[r] Սաղ · հը · 44 ։ ճե · 29 ։
[s] Հմր 18 ։
[t] Հմր 11 ։
[u] Հմր 8 ։
[v] Ել · է · 12 ։ Հմր 4 ։
[w] Ել · ը · 15 ։ ժ · 1 · 20 , 27 ։
[x] Ել · դ · 2 , 3 ։ Հմր 10 ։
[y] Ել · դ · 18 ։
[z] Ել · դ · 12 , 18 ։ ե · 1 · 3 ։
[a] Ել · դ · 2 ։ Հմր 5 ։
[b] Ել · դ · 16 ։ Երեմ. ա · 10 ։
[c] Ել · դ · 16 ։
[d] Ել · դ · 15 ։
[e] Ել · դ · 21 ։
[f] Ել · դ · 7 ։
[g] Ել · ժա · 9 ։
[h] Ել · ժ · 1 · ժա · 9 ։
[i] Ել · դ · 6 ։
[k] Ել · դ · 20 ։
[l] Հմր 17 ։ Ել · ը · 22 ։ ժդ · 4 , 18 ։ Սաղ · թ · 16 ։
[m] Հմր 2 ։

1491

[n] Որ 13 ։
[o] Ել · է · 4 ։ ժը · 17 , 51 ։ Թուա · լէ · 1 ։
[p] Հմր 13 ։ Ել · լը · 7 ։ լէ · 1 ։ Սաղ · հէ · 20 ։
[q] Ել · է · 1 , 3 ։ է · 10 ։
[r] Հմր 2 ։
[s] Հմր 11 ։ Ել · է · 2 ։
[t] Հմր 12 ։ Ել · դ · 10 ։
[u] Եբր · ան-թլփատ պո կունք-ներով

[v] Ել · է · 11 ։ Ցօշ · բ · 18 ։ դ · 30 ։
[w] Ել · դ · 2 , 17 ։
[x] Հմր 9 ։

ն · ք · զԹ · 1491

տիրը փորձին խմելու ջուրի համար . ինչու որ գետին ջուրն չէին
25 կրնար խմել ։ Եւ Տէրը գետը զարնելէն եւթը օրը լրնցաւ ։

ԳԼ · Ը

1 Եգիպտոսին վրայ դորտեր կը խրկուին ։ 8 Փարաւոն կ'աղաչէ Մովսէսին ։ 12 Մովսէսն ալ աղօթքով զանոնք կը վերցնէ ։ 16 Ծղբը փոչին դէպ 'ի երկինքը կը ցանէ , ու մուն կ'ըլլայ · իսկ մոգերը չեն կրնար նոյնը ընել ։ 20 Ըանաճանճին հարուածը ։ 25 Փարաւոն քիչ մը կը համոզուի · 32 սակայն նորէն կը խստանայ ։

1 Ետ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին մօտիկ , ու ըսէ անոր . Տէրը այսպէս կ'ըսէ . Արձակէ իմ ժո-
– Գլ · գ · 12 , 18 ։ 2 ղովուրդս , որ պաշտեն զիս ։ Եւ թէ որ ես զանոնք արձակել չուզես , ահա ես քու բոլոր սահմաններդ դորտե-
3 րով պիտի զարնեմ ։ Եւ գետը շատ գորտեր պիտի հանէ , ու անոնք պիտի ելլեն , ու քու տանդ՝ և անկողինդ սենեակիդ՝ ու անկողինդիդ՝ և քու ծառաներուդ տուներուն՝ և քու ժողովուրդիդ՝ ու քու թոնիրներուդ՝ և խմորի տաշտերուդ
4 մէջ պիտի մտնեն ։ Եւ գորտերը քու վրադ՝ և ժողովուրդիդ վրայ՝ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ելլեն ։
5 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ահարոնին ըսէ . Ձեռնէրուն վրայ՝ գետերուն վրայ՝ ու լիճերուն
Գլ · է · 19 ։ վրայ Եձեռքդ երկրնցուր քու գաւազանովդ , ու Եգիպտոսի երկրին
6 վրայ գորտեր հանէ ։ Եւ Ահարոն երկրնցուց իր ձեռքը Եգիպտոսի
Ես · հր · 45 ։ ձն · 30 ։ ջուրերուն վրայ . և Ջորտերը ելան՝ ու Եգիպտոսի երկիրը ծածկե-
Գլ · է · 11 ։ 7 ցին ։ Եւ մոգերն ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին , ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին ։
8 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ . ԷԱղաչեցէք Տէրոջը՝ որ ինծմէ ու իմ ժո-
Ը Գլ · թ · 28 , ժ · 17 , Թուա . իա . 7 , դ Թագ . ժգ . 6 , Գոր . ը . 24 ։ ղովուրդէս վերցնէ գորտերը , ու ժողովուրդը պիտի արձակեմ որ
9 Տէրոջը զոհ մատուցանեն ։ Եւ Մովսէս ըսաւ Փարաւոնին . Հրամայէ ինծի , թէ ե՛րբ քեզի համար՝ ու ծառաներուդ համար և ժողովուրդիդ համար աղաչեմ , որ քեզմէ ու քու տուներէդ գորտերը կորսուին , ու միայն գետին մէջը մնան ։
10 Եւ անիկայ ըսաւ . Վաղը ։ Եւ ինքը ըսաւ . Քու խօսքիդ պէս ըլ-
Ի Գլ · թ · 14 , ր Օր · լգ · 26 , դ Թագ · է · 22 , ա Պն . ժէ . 20 , Սաղ . ձգ · 8 , Ես · խզ · 9 , Երեմ . ժ . 6 , 7 ։ 11 ղայ , որ դիտնաս թէ՝ մեր Ի Եհովայ
Աստուծոյն պէս չկայ . Եւ քեզմէ՝ ու քու տուներէդ՝ և քու ծառաներէդ՝ ու քու ժողովուրդէդ գորտերը պիտի վերնան . մի-
12 այն գետին մէջը պիտի մնան ։ Եւ Մովսէս ու Ահարոն՝ Փարաւոնին քովէն ելան . ու Մովսէս Ի Տէրոջը աղաղակեց ան գորտերուն համար՝ որ Փարաւոնին վրայ բերեր էր ։
13 Եւ Տէրը Մովսէսին ըսածին պէս ըրաւ . ու տուներէն՝ դիւղերէն և
14 արտերէն գորտերը մեռան ։ Եւ դէզ դէզ ժողվեցին զանոնք , ու
15 երկիրը հոտեցաւ ։ Բայց երբոր Փարաւոն Ի հանգստութիւն ըլլալը տեսաւ , Լիր սիրտը խստացուց , ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը ըսածին պէս ։
16 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըսէ Ահարոնին . Քու գաւազանդ երկրնցուր , ու երկրի հողին զարկ , որ Եգիպտոսի բոլոր երկրին վրայ
17 մուն ըլլայ ։ Եւ անանկ ըրին . քանզի Ահարոն իր գաւազանովը իր ձեռքը երկրնցուց , ու երկրի հողին զարկաւ , և Ի մարդոց վրայ ու անասուններուն վրայ մուն եղաւ . Եգիպտոսի բոլոր երկրին վրայ երկ-
18 րին բոլոր հողը մուն եղաւ ։ Եւ Ի մոգերն ալ իրենց կախարդութիւններովը այնպէս ըրին՝ որ մուներ հանեն , բայց Ի չկրցան . այսպէս մարդոց ու անասուններուն վրայ
19 մուն եղաւ ։ Եւ մոգերը բսին Փարաւոնին . Ա՛ս Աստուծոյ մատն է . և Փարաւոնին Ի սիրտը կարծրացաւ , ու անոնց մտիկ չըրաւ՝ Տէրոջը բսածին պէս ։
20 Եւ Տէրը բսաւ Մովսէսին . Ընտուանդ կանուխ ելիր , ու Փարաւոնին առջեւը կայնէ . (ահա անիկայ դէպ 'ի ջուրը կ'ելլէ .) և ըսէ անոր . Տէրը այսպէս կ'ըսէ . Ընձ-
21 ռեն . Հապա թէ որ իմ ժողովուրդս չարձակես , ահա ես քու վրադ՝ ու քու ծառաներուդ վրայ՝ և քու ժողովուրդիդ վրայ՝ ու քու տուներուդ վրայ շանաճանճ պիտի խրկեմ , և Եգիպտացւոց տուները շանաճանճով պիտի լեցուին , նաև ան գետինը՝ որուն վրայ անոնք կը
22 քալեն ։ Եւ ան օրը իմ ժողովուրդիս բնակած Ի Գեսեմի երկիրը պիտի որոշեմ , ու հոն շանաճանճ պիտի չըլլայ · որ գիտնաս թէ երկրին
Ի Գլ · թ · 4 , 6 , 26 , ժ · 23 , ժա · 6 , 7 , ժբ · 13 ։ 23 մէջտեղը ես եմ Տէրը ։ Եւ իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջ խորոց մը պիտի դնեմ . վաղը
24 սա նշանը պիտի ըլլայ ։ Եւ Տէրը այնպէս ըրաւ . ու Փարաւոնին տանը՝ և անոր ծառաներուն տուներուն՝ ու Եգիպտոսի բոլոր երկրին վրայ Ի շատ շանաճանճ եկաւ . ա շանաճանճին պատճառովը երկիրը աւրուեցաւ ։
Ի Սաղ · հր · 45 , ձն · 31 ։ 25 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ . Գացէք ձեր Աստուծոյն զոհ մատուցէք

ն · ք · զԹ · 1491

Ք Հմր 30 ։ Գլ · թ · 33 ։ ժ · 18 ։ լբ · 11 ։ Ցակ · ե · 16 , 17 , 18 ։

Ի ժղ · ը · 11 ։ Ես Գլ · է · 14 ։

* կ՚ ոչխ

Ի Սաղ · ձն · 31 ։

Ի Գլ · է · 11 ։

Ի Ղե · ժ · 18 , ր Տիմ · գ · 8 , 9 ։

Հ ա Թագ · գ · 3 , 9 ։ Սաղ · ը · 3 ։ Մատ . ժբ · 28 ։ Ղե · ժա . 20 ։

Ն Հմր 15 ։ Ես Գլ · է · 15 ։

Ո Հմր 1 ։

Ն · Ք · ԳԲ · 1491

Ա Ծն · խգ · 32 · խզ · 34 · բ Օր · է · 25 · 26 · Ժբ · 31 ·

26 — երկրին մէջ , եւ Մովսէս
ըսաւ . Արժան չէ ասանկ ընել .
ինչու որ Եգիպտացւոց գար-
շելի —————— Տէրոջը մեր
Աստուծոյն զոհ պիտի մատու-
ցանենք . թէ որ Եգիպտացւոց
գարշելի —————— իրենց աչքին
առջեւը զոհ մատուցանելու ըլլանք ,
ւ ԳԼ · գ · 18 · 27 պիտի չքարկոծե՞ն մեզ : Մենք ւ ի-
րենք օրուան ճամբայ պիտի երթանք
անապատին մէջ , ու զոհ պիտի մա-
տուցանենք մեր Տէր Աստուծոյն ,
- ԳԼ · գ · 12 · ինչպէս որ - ինքը մեզի պատուիրէ :
28 Եւ Փարաւոն ըսաւ . Ես ձեզ թող
կու տամ որ երթաք անապատին
մէջ ձեր Եհովայ Աստուծոյն զոհ մա-
տուցանէք , միայն թէ շատ հեռու
ւ Ժէր 8 · ԳԼ · Թ · 28 · գ Թագ · ժգ · 6 · չերթաք . ւ Ինծի համար աղաչեցէք :
29 Եւ Մովսէս ըսաւ . Ահա ես քու
քովէդ կ'ելլեմ ու Տէրոջը կ'աղա-
չեմ՝ որ վաղը Փարաւոնէն՝ անոր
ծառաներէն՝ ու անոր ժողովուրդէն
շանաճանճը երթայ . բայց Փարա-
ւոն դ Ժէր 15 · դարձեալ մեզ չխաբէ՝ ժո-
ղովուրդը թող չտալով Տէրոջը զոհ
30 մատուցանելու : Եւ Մովսէս փա-
ւ Ժէր 12 · րաւոնին քովէն ելաւ , ու ւ Տէրոջը
31 աղաչեց : Եւ Տէրը Մովսէսին խօս-
քին պէս ըրաւ , ու Փարաւոնէն՝
անոր ծառաներէն և անոր ժողո-
վուրդէն շանաճանճը վերցուց . մէկ
32 հատ մըն ալ չմնաց : Եւ Փարաւոն
— Ժէր 15 · ԳԼ · դ · 21 · ան անգամին ալ — իր սիրտը խստա-
ցուց , ու ժողովուրդը չարձակեց :

Գ Լ · Թ

1 Ընասնոց մահը : 8 Ոռւեցքներու ու խաղա-
ւարաններու հարուածքը : 22 Կարկուտը : 27
Փարաւոն կարկտին համար կ'աղաչէ Մով-
սէսին . 35 սակայն դարձեալ անոր սիրտը կը
կարծրանայ :

— Գ · բ · 1 · 1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . — Փա-
րաւոնին մօտիր , ու խօսէ անոր .
Եբրայեցւոց Տէր Աստուածը այս-
պէս կ'ըսէ . Արձակէ իմ ժողո-
2 վուրդս՝ որ իս պաշտեն : Քանզի թէ
Բ Գ · բ · 2 · որ Բ —————— արձակել չուզես , ու
տակաւին պինդ բռնես զանոնք ,
ե Գ · է · 4 · 3 Ահա ե Տէրոջը ձեռքը դաշտին մէջ
եղած քու հօտերուդ վրայ ըլլալով ,
ձիերուն՝ էշերուն՝ ուղտերուն՝ ար-
ջառներուն ու ոչխարներուն վրայ
սաստիկ կոտորած մը պիտի ըլլայ :
ը Գ · բ · 22 · 4 Եւ ը Տէրը Իսրայէլի հօտերուն՝ ու
Եգիպտոսի հօտերուն մէջտեղը պի-
տի զատէ . և Իսրայէլի որդւոցը մէկ
5 —————— պիտի չմեռնի : Եւ Տէրը
ժամանակ որոշեց՝ ըսելով . Վաղը
Տէրը ասբանը պիտի ընէ երկրին
6 վրայ : Եւ հետևեալ օրը Տէրը ասբանը ըրաւ , ու Եգիպտացւոց
Ի Սաղ · հբ · 50 · Բոլոր հօտերը մեռան . բայց Իս-
րայէլի որդւոցը հօտերէն մէկը չմե-
7 ռաւ : Եւ Փարաւոն մարդ խրկեց ,

ու ահա Իսրայէլի հօտերէն մէկն ալ
մեռած չէր . և ը Փարաւոնին սիրտը
խստացաւ , ու ժողովուրդը չար-
ձակեց :

Ն · Ք · ԳԲ · 1491

Ա ԳԼ · է · 14 · բ · 32 ·

8 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ու Ա-
հարոնին . Առէք ձեզի ձեռքերնիդ
լեցուն նոցի մոխիր , և Մովսէս դէպ
՚ի երկինքը ցանէ ան՝ Փարաւոնին
9 առջեւը ու Եգիպտոսի բոլոր երկ-
րին մէջ փոշի պիտի ըլլայ , ու Ե-
գիպտոսի բոլոր երկրին մէջ մարդոց
ու անասուններուն վրայ Ի խաղա-
ւարտներ հանող ուռեցքներ պիտի
Ի Ցայտ · ժգ · 2 · 10 ըլլայ : Եւ նոցի մոխիրը առին , ու
Փարաւոնին առջեւը կայնեցան . և
Մովսէս դէպ ՚ի երկինքը ցանեց ան ,
ու մարդոց և անասուններուն վրայ
Ի խաղաւարտներ հանող ուռեցքներ
11 եղան : Եւ Բ մոգերը ուռեցքներուն
Բ Օր · իբ · 27 · պատճառով չկրցան կայնիլ Մով-
Բ ԳԼ · բ · 18 · 19 · բ Տիմ · գ · 9 · սէսին առջեւը . ինչու որ ուռեց-
քները մոգերուն վրայ ալ՝ ու բոլոր
12 Եգիպտացւոց վրայ ալ եղաւ : Եւ
Տէրը կարծրացուց Փարաւոնին
սիրտը . ու անոնց մտիկ չըրաւ ,
Ի ԳԼ · դ · 21 · ինչպէս որ Տէրը Մովսէսին ըսեր
էր :
Ի ԳԼ · բ · 20 · 13 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ա-
ւտուանց կանուխ ելիր , ու Փարա-
ւոնին առջեւը կայնէ , ու անոր ըսէ .
Եբրայեցւոց Տէր Աստուածը ասանկ
կ'ըսէ . Արձակէ իմ ժողովուրդս՝ որ
14 իս պաշտեն . Քանզի ասանգամ
իմ բոլոր հարուածներս պիտի
խրկեմ քու * վրադ՝ և քու ծառա-
ներուդ՝ ու քու ժողովուրդիդ վրայ .
Ես որ գիտնաս թէ բոլոր երկրի մէջ
ԳԼ · բ · 10 · 15 չունի պէս ինձի չկայ : Քանզի հիմա
Ի ԳԼ · գ · 20 · ես իմ ձեռքս պիտի երկնցընեմ՝ որ
քեզ ու քու ժողովուրդդ ժանտ
ախտով զարնեմ , ու երկրէն պիտի
16 կորսուիս : Եւ ի ասոր համար քեզ
ի Հռով · թ · 17 · Տես գԼ · ժգ · 17 · Ռոմ · ժգ · 4 · ա Պետ · բ · 9 · վերցուցի՝ որ իմ զօրութիւնս քեզ
մով ցուցընեմ , ու բոլոր երկրի մէջ
17 իմ անունս պատմուի : Դուն տա-
կաւին իմ ժողովուրդիս դէմ կե-
նալով՝ պիտի չարձակե՞ս զանոնք ,
18 Ահա ես վաղը աս ատեն խիստ սաս-
տիկ կարկուտ պիտի տեղամ , որ ա-
նոր պէս Եգիպտոսի մէջ եղած չէ՝
անոր հաստատուած օրէն մինչև
19 հիմա : Եւ հիմա մարդ խրկէ , —
ժողովէ քու հօտերդ՝ ու ինչ որ ու-
նիս դաշտին մէջ . Վրան ամէն մարդ
ու անասուն որ դաշտին մէջ գըտ-
նուի՝ ու տուները ժողովուած չըլ-
լայ , անոնց վրայ կարկուտ պիտի
20 իջնէ , ու պիտի մեռնին : Փա-
րաւոնին ծառաներէն ով որ Տէրոջը
խօսքէն կը վախնար՝ իր ծառաները
ու հօտերը տուներու մէջ ժողվեց .
21 Եւ ով որ Տէրոջը խօսքին ուշադ-
րութիւն չըրաւ , իր ծառաները ու

ն · ք · գբ · 1491

իր հօտերը դաշտին մէջ թողուց ։
22 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փո-
ւեղդ դէպ ՚ի երկինքը երկրնցուր ,
ու եգիպտոսի բոլոր երկրին մէջ
մարդոց ու անասուններուն վրայ՝
և եգիպտոսի երկրին մէջ եղած
արտերուն բոլոր խոտին վրայ կար-
23 կուտ պիտի գայ ։ Եւ Մովսէս իր
գաւազանը դէպ ՚ի երկինքը երկրն-
ցուց . ու Տէրը որոտում և կար-
կուտ խրկեց , ու երկրին վրայ կրակ
կը վազէր . ու Տէրը եգիպտոսի
24 երկրին վրայ կարկուտ տեղայ ։ Եւ
կարկուտ՝ ու կարկուտին մէջտեղը
խառնուած կրակ եկաւ . անանկ
սաստիկ էր որ եգիպտոսի բոլոր
երկրին մէջ՝ ազգ ըլլալէն հետէ ա-
25 նոր պէս եղած չէր ։ Եւ կարկու-
տը եգիպտոսի բոլոր երկրին մէջ՝
դաշտը եղածին ամէնը՝ մարդէն
մինչև անասուն զարկաւ . և կար-
կուտը դաշտին բոլոր խոտը զար-
կաւ , ու դաշտին բոլոր ծառերը
26 կոտրեց ։ Միայն Գեսեմի երկրին
մէջ՝ ուր որ Իսրայէլի որդիքը էին՝
կարկուտ չեղաւ ։
27 Եւ Փարաւոն հրէշտ խրկեց , ու
կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ը-
սաւ անոնց . Եհովան արդար է , և ես ու
իմ ժողովուրդս չանցաւոր ենք ։
28 Աղաչեցէք Տէրոջը՝ որ Աստուծոյ
որոտումները ու կարկուտը դա-
դարին . ու ձեզ պիտի արձակեմ , և
29 ալ պիտի չկենաք ։ Եւ Մովսէս
ըսաւ անոր . Քաղաքէն դուրս ելլա-
ծիս պէս՝ իմ ձեռքերս Տէրոջը
պիտի երկրնցընեմ , որոտումնե-
րը պիտի դադարին , և ալ կարկուտ
պիտի չըլլայ . որ դիտնաս թէ Հեր-
30 կիրը Տէրոջն է ։ Բայց ես գիտեմ
որ դուն ու քու ծառաներդ տա-
կաւին Տէր Աստուծմէն չէք վախ-
նար ։
31 Եւ քթանը ու գարին զարնուե-
ցան . Հինչու որ գարին հասած էր ,
32 ու քթանը սերմի դացած ։ Բայց
ցորենը ու հաճարը չզարնուեցան .
հինչու որ ուշ կը բուսանին ։
33 Եւ Մովսէս Փարաւոնին քովէն
քաղաքէն դուրս ելաւ , ու Իր
ձեռքերը Տէրոջը երկրնցուց . և
որոտումները ու կարկուտը դադա-
րեցաւ , ու երկրին վրայ անձրեւ
34 չկաթեցաւ ։ Եւ Փարաւոն երբոր
անձրեւին ու կարկուտին և որո-
տումին դադարիլը տեսաւ , նորէն
մեղանչեց , ու սիրտը խստացուց՝
35 ինքը ու իր ծառաները ։ Այսպէս
Հփարաւոնին սիրտը կարծրացաւ ,
ու Իսրայէլի որդիքը չարձակեց ,
ինչպէս որ Տէրը Մովսէսին ձեռ-
քովը բսեր էր ։

ԳԼ · Ը

1 Աստուած կը սպառնայ մարախներ խրկել ։ 7 Փարաւոն իր ծառաներուն աղաչանքէն քիչ մը կը համոզուի Իսրայէլացիները արձակելու ։ 12 Մարախները կու գան ։ 16 որոնց համար Փարաւոն կ'աղաչէ Մովսէսին ։ 21 Խաւարին հարուածը ։ 24 Փարաւոն նորէն կ'աղաչէ Մովսէսին ։ 27 բայց տակաւին անոր սիրտը կը կարծրանայ ։

ն · ք · գբ · 1491

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Մտիր
Փարաւոնին . Հինչու որ ես ա-
նոր սիրտը՝ ու անոր ծառաներուն
սիրտը խստացուցի , որ ասս իմ
նշաններս յուցընեմ անոնց մէջը .
2 Եւ որ պատմես քու որդիիդ՝ ու
քու որդւոյդ որդիին ականջներուն՝
ինչ որ բրի եգիպտացւոց մէջ , և
իմ նշաններս որ անոնց մէջ յու-
ցուցի , որ գիտնաք թէ ես եմ
Տէրը ։
3 Եւ Մովսէս ու Ահարոն մտան
Փարաւոնին , ու ըսին անոր . Եբ-
բայեցւոց Եհովայ Աստուածը այս-
պէս կ'ըսէ . Մինչև ե՞րբ պիտի չը-
կամիս խոնարհիլ իմ առջեւս . ար-
ձակէ իմ ժողովուրդս որ իս պաշ-
4 տեն ։ Վասն զի թէ որ իմ ժողո-
վուրդս արձակել չուզես , ահա վա-
ղը քու սահմաններուդ վրայ հմա-
5 րեաներ պիտի խրկեմ . Ու երկրին
երեսը պիտի ծածկեն , և ՚ի՛նչ պի-
տի չկրնայ տեսնել երկիրը . ու
կարկուտէն ազատուած ձեզի մնա-
ցածը՝ Հպիտի ուտեն , և արտին մէջ
բուսած ձեր բոլոր ծառերը պիտի
6 ուտեն ։ Եւ հքու տուներդ՝ ու
քու բոլոր ծառաներուդ տուները՝
և ամէն եգիպտացւոց տուները
պիտի լեցուին . որ ոչ քու հայ-
րերդ՝ ոչ ալ քու հայրերուդ հայ-
րերը տեսած են՝ իրենց երկրի վրայ
եղած օրէն մինչև այսօր ։ Եւ դար-
ձաւ ու Փարաւոնին քովէն դուրս
ելաւ ։
7 Եւ Փարաւոնին ծառաները ըսին
անոր . Մինչև ե՞րբ ասս հրէշտը ըմե-
զի որոգայթի պիտի ըլլայ . արձակէ
մարդիկը որ իրենց Եհովայ Ա-
ստուածը պաշտեն . տակաւին չե՞ս
գիտեր որ եգիպտոսը աւերուեցաւ ։
8 Եւ Մովսէսը ու Ահարոնը Փարաւո-
նին դարձուցին . և անիկայ ըսաւ
անոնց . Գացէք պաշտեցէք ձեր
Եհովայ Աստուածը . Բայց ովքե՞ր
9 են գացողները ։ Եւ Մովսէս ըսաւ .
Մեր մանկուներովը ու մեր ծե-
րերովը պիտի երթանք , մեր տը-
ղաքներովը ու մեր աղջիկներովը ,
մեր հօտերովը ու մեր արջառներովը
պիտի երթանք . քանզի հտօն պի-
10 տի պահենք Տէրոջը ։ Եւ ըսաւ ա-
նոնց . Տէրը անանկ ձեր հետը ըլլայ ,
ինչպէս որ ես ձեզ ու ձեր տղաք-
ները կ'արձակեմ . զգուշացէք ,

Ն·Ք·Գ·Ք· 1491

քանզի չարիք կան ձեր առջեւը ։
11 Ո՛չ այդպէս . հիմա դուք էրիկ մարդիկներդ գացէք՝ ու Տէրը պաշտեցէք . ինչու որ դուք ատիկայ կ՚ուզէիք ։ Եւ Փարաւոնին առջեւէն վռընտուեցան ։
12 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Երկընցուր քու ձեռքդ Եգիպտոսի երկրին վրայ մարախներուն համար , որ Եգիպտոսի երկրին վրայ ելլեն , և Էրկրին բոլոր խոտը՝ կարկուտէն
13 բոլոր մնացածը ուտեն ։ Եւ Մովսէս երկընցուց իր գաւազանը Եգիպտոսի երկրին վրայ . ու Տէրը բոլոր այն օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արեւելեան հով փչել տուաւ . Ե երբ առտու եղաւ՝ արեւելեան
14 հովը մարախները բերաւ ։ Եւ Մարախները Եգիպտոսի բոլոր երկրին վրայ ելան , ու Եգիպտոսի բոլոր սահմաններուն վրայ իջան . խիստ սաստիկ էին . Ի անոնցմէ առաջ ասանկ մարախ չեղաւ , անոնցմէ ետքն
15 ալ անանկ պիտի չըլլայ ։ Եւ Ծրոլոր երկրին երեսը ծածկեցին , ու երկիրը մթընցաւ , ու Էրկրին բոլոր խոտը՝ և կարկուտէն մնացած ծառերուն ամէն պտուղները կերան . ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ եղած ծառերուն վրայ և արտին խոտերուն վրայ բնաւ կանանչեղէն չմնաց ։
16 Ուստի Փարաւոն շուտով կանչեց Մովսէսը ու Ահարոնը , և ըսաւ . Ես Ձեր Տէր Աստուծոյն՝ ու ձեզի
17 դէմ մեղանչեցի . Եւ հիմա չնորհք ըրէք՝ միայն ասանգամ ներեցէք իմ յանցանքս , ու Ձեր Տէր Աստուծոյն աղաչեցէք՝ որ իմ վրայէս
18 միայն ասիկա մահը վերցընէ ։ Եւ անիկայ Ը Փարաւոնին քովէն դուրս
19 ելաւ , ու Տէրոջը աղաչեց ։ Եւ Տէրը խիստ սաստիկ արեւմտեան հով մը խրկեց , որ մարախները վերցուց , ու Կարմիր ծովը քշեց զանոնք . Եգիպտոսի բոլոր սահմաններուն մէջ մէկ մարախ մը չմնաց ։
20 Բայց Տէրը Կարծրացուց Փարաւոնին սիրտը , ու անիկայ Իսրայէլի որդիքը չարձակեց ։
21 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ձեռքդ դէպ՚ի երկինքը երկընցուր , որ Եգիպտոսի երկրին վրայ խաւար ըլլայ , շօշափելի խաւար մը
22 ըլլայ ։ Եւ Մովսէս իր ձեռքը դէպ՚ի երկինքը երկընցուց , ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ Թանձր
23 խաւար եղաւ երեք օր . Մէկզմէկ չէին տեսներ , և երեք օր մէկը իր տեղէն չելաւ . Բայց Իսրայէլի բոլոր որդիքը իրենց բնակութեանցը մէջ լոյս ունէին ։
24 Եւ Փարաւոն կանչեց Մովսէսը ու

Ն·Ք·Գ·Ք· 1491

Ելք. 8 ։
Ա Հմր 10 ։

ըսաւ . Գացէք՝ պաշտեցէք Եհովան . միայն ձեր հօտերը ու ձեր արջառները մնան . Ձեր ընտանիքներն
25 ալ ձեզի հետ թող երթան ։ Եւ Մովսէս ըսաւ . Պէտք է որ դուն մեր ձեռքը զոհեր ու ողջակէզներ ալ տաս , որ մեր Տէր Աստուծոյն մատուցանենք ։ Եւ մեր հօտերն ալ
26 մեր հետ պիտի երթան՝ անոնցմէ մէկ կճղակ մը չմնալով . Ինչու որ մեր Տէր Աստուածը պաշտելու համար անոնցմէ պարտինք առնել . ու մենք մինչև որ հոն չերթանք , չենք դիտեր թէ ինչով պիտի պաշտենք
27 Տէրը ։ Եւ Տէրը Կարծրացուց Փարաւոնին սիրտը , որ չուզեց ար-
28 ձակել զանոնք ։ Եւ Փարաւոն ըսաւ անոր . Քովէս դնա . զգուշացիր երբ քու անձիդ , մէյմըն ալ իմ երեսս չտեսնես . քանզի ան օրը որ իմ երեսս տեսնես , պիտի մեռնիս ։
29 Նիս ։ Եւ Մովսէս ըսաւ . Ընդկ ըսիր . Էմէյմըն ալ քու երեսդ պիտի չտեսնեմ ։

Ղեր . ժ . 27 ։

ԳԼ . ԺՌ

1 Աստուած կը պատուիրէ Իսրայէլացւոց՝ որ իրենց դրացիներէն ծանրագին բաներ ուզեն ։ 4 Մովսէս կը սպառնայ Փարաւոնին՝ անդրանկաց մահը ։

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւոնին վրայ՝ ու Եգիպտոսի վրայ հարուածմըն ալ պիտի բերեմ , անկէ ետև ձեզ ասկէ պիտի արձակէ . Ե երբոր Յետ արձակէ , ձեզ ասկէ բոլորովին դուրս պիտի ընէ ։
2 Հիմա խօսէ ժողովուրդին ականջներուն , ու ամէն մարդ իր դրացիէն՝ և ամէն կնիկ իր դրացիին Ոսկեղէն զարդեր ու ոսկեղէն զար-
3 դեր խնդրեն ։ Եւ Տէրը շնորհք տուաւ ժողովուրդին՝ Եգիպտացւոց առջեւը . Մովսէս ալ Եգիպտոսի երկրին մէջ Փարաւոնին ծառաներուն առջեւ՝ ու ժողովուրդին առջեւը խիստ մեծ մարդ մըն էր ։
4 Եւ Մովսէս ըսաւ . Տէրը այսպէս կ՚ըսէ . Ես կէս գիշերին Եգիպտոսի
5 մէջտեղը պիտի ելլեմ . Ու Եգիպտոսի երկրին մէջ Ամէն առջինեկը պիտի մեռնի , իր աթոռին վրայ նստող Փարաւոնին առջինեկէն մինչև աղացքին ետևը եղող աղախինին առջինեկը՝ և բոլոր անա-
6 սուններուն առջինեկը ։ Ու Եգիպտոսի բոլոր երկրին մէջ Մեծ աղաղակ պիտի ըլլայ , անանկ որ անոր պէս ոչ եղած է , ոչ ալ նորէն պի-
7 տի ըլլայ ։ Բեւ Իսրայէլի որդւոցը դէմ Մարդէն մինչև անասուն՝ շուն մըն ալ պիտի չշարժէ իր լեզուն . որ դիտնաք թէ Տէրը Եգիպտացւոց ու Իսրայէլի մէջտեղը տար-
8 բերութիւն կ՚ընէ ։ Եւ Ծ աս բոլոր

Ելք . ժ . 31 , 33 , 39 ։
Ելք . գ . 22 ։ ժ . 35 ։
Ելք . գ . 21 ։ ժ . 36 ։ Սաղ . ՃԺ . 46 ։ Բ Թագ . է . 9 ։ Եսթ . Թ . 4 ։
Ելք . ժ . 12 , 23 , 29 ։ Ամով . է . 17 ։
Ելք . ժ . 12 , 29 ։ Ամով . գ . 10 ։
Ելք . ժ . 30 ։ Ամով . է . 17 ։
Ելք . բ . 22 ։ Ը Յես . ժ . 21 ։
Ելք . ժ . 33 ։

Ն · Ք · ԳՓ · 1491

Է Գաս · գ · 10 · բ · 5 · գ Թագ · ի · 10 · գ Թագ · գ · 9 ·

Ը Գլ · գ · 19 · է · 4 · ժ · 1 ·

Թ Գլ · է · 3 ·

Ժ Գլ · ժ · 20 · 27 · Հռով · բ · 5 · թ · 22 ·

— Գլ · ժգ · 4 · բ Օր · ժգ · 1 ·

Բ Ղե · իբ · 19 · 20 · 21 · Մաղ · ա · 8 · 14 · Երր · թ · 14 · ա Պետ · ա · 19 ·

Ի Ղե · իգ · 12 ·

Լ Ղե · իգ · 5 · Թուա · թ · 3 · իբ · 16 · բ Օր · ժգ · 1 · 6 ·

* Եբր · երկու իրիկունների մէջ տեղը · Գլ · ժգ · 12 ·

Խ Գլ · լդ · 25 · բ Օր · ժգ · 3 · Թուա · թ · 11 · ա Կոր · է · 8 ·

Ձ Օր · ժգ · 7 ·

Կ Գլ · իգ · 18 · լդ · 25 ·

*բու ծառաներդ ինձի պիտի իջնեն , ու ինձի խոնարհութիւն ընեն՝ բ-
սելով . Դուն՝ ու բոլոր էգիպ հե-
տեւող ժողովուրդը ելէք . ու ան-
կէ ետքը պիտի ելլեմ : Եւ Մ-Վէ-
սաստիկ բարկութեամբ Փարաւո-
նին քովէն դուրս ելաւ :

9 Եւ Տէրը բսաւ Մովսէսին . Չփա-
րաւոն ձեզի մտիկ պիտի չընէ , որ
10 իմ հրաշքներս շատցնեմ Եգիպ-
տոսի երկրին մէջ : Եւ Մովսէս ու
Ահարոն ասոնք ամէն հրաշքները փա-
րաւոնին առջեւը բրին . և Տէրը
կարծրացուց Փարաւոնին սիրտը ,
ու Իսրայէլի որդիքը իր երկրէն չար-
ձակեց :

ԳԼ · ԺԲ

1 Ցարուցն սկիզբը կը փոխուի : 3 Զառակին առնմանութիւը : 11 ու անոր կանոնները : 15 Անխմոր հաց ուտելու հրամանը : 29 Անդրանկաց մահը : 31 Եգիպտացիք արտորնօր երկրէն դուրս կը հանեն Իսրայէլացիները : 37 որոնք Սոկքովթ կը հասնին : 43 Զառակին վրայով պատուէրներ :

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու
Ահարոնին Եգիպտոսի երկրին
2 մէջ՝ բսելով . Ասիկա ամիսը ձեզի
ամիսներուն սկիզբը ըլլայ . ձեզի
տարւոյն ամիսներուն առաջինը ըլ-
3 լայ : Իսրայէլի բոլոր ժողովքին
զրուցեցէք՝ բսելով . Ասի ամսուն
տասնին՝ ամէն մկր իրեն գառնուկ
մը առնէ՝ էրէց հայրերուն տանը
համեմատ , տանը գլուխ
4 մէկ մկ գառնուկ : Եւ թէ որ մկ
տունը մկ գառնուկին քիչ կու-
գայ , ան մօտը իր տանը քովը և-
զած դրացիին հետ՝ հոգիներուն
համրանքին համեմատ առնէ . գառ-
նուկին վրայով՝ ամէն մկուն իր
5 կերածին չափ հաշիւ ընէք : Ձեր
գառնուկը բ անարատ՝ արու՝ տ մկ
տարեկան ըլլայ . ոչխարներէն կամ
6 այծերէն առնէք ան : Եւ մինչև ասի
ամսուն ժ չորեքտասաներորդ օրը
պահէք ան . ու Իսրայէլի ժողովքին
բոլոր բազմութիւնը մրթին անի-
7 կայ՝ * իրիկուան դէմ '' : Եւ արիւ-
նէն առնեն՝ ու տուներուն երկու
կողմի դրանդեացը ու վերի սեմին
վրայ քսեն , ուր որ զանիկայ պիտի
8 ուտեն : Եւ միսը ան դիշերը ու-
տեն . զանիկայ կրակի վրայ խորո-
ված՝ բ բաղարջով — լեղի խոտերով
9 պիտի ուտեն . Անկէ՝ հում կամ
ջուրի մէջ եփած չուտէք , բայց
ը կրակի վրայ խորոված , անոր գլու-
խը ոտքերովը ու փորոտիքովը մէկ-
10 տեղ — ոչ : Եւ անկէ բան մը
չթողուք մինչև առտու . ու անկէ
ինչ որ առտուան կը մնայ , կրա-
11 կով այրէք : Եւ այսպէս պիտի ու-
տէք ան . ձեր գօտիները մէջքեր-
նիդ՝ ու ձեր կօշիկները ոտքերնիդ՝

Ն · Ք · ԳՓ · 1491

Ը Բ Օր · ժգ · 5 ·

Ր Գլ · ժա · 4, 5 · Ամով · է · 17 ·

Ժ Թագ · լդ · 4 ·

† Ա—՛՝ Խ-
խանձե-
րուն · Գլ · իա · 6 · իբ · 28 · Սպ · ԺԲ · 1 · 6 · Ցօհ · ժ · 34, 35 ·

Ի Գլ · գ · 2 ·

Լ Գլ · ժգ · 9 ·

Խ Ղե · իգ · 4, 5 · գ Թագ · իգ · 21 ·

‡ Եբր · ապ-
գերուն

Ծ Հմր 24 · 48 · Գլ · ժգ · 10 ·

Կ Գլ · ժգ · 6, 7 · իգ · 15 · լդ · 18, 25 · Ղե · իգ · 5, 6 · Թուա · իբ · 17 · բ Օր · ժգ · 3, 8 · ա Կոր · է · 7 ·

Հ Ն · ժէ · 14 · Թուա · թ · 13 ·

Յ Ղե · իգ · 7, 8 · Թուա · իբ · 18, 25 ·

Ղ Գլ · ժգ · 3 ·

Ճ Ղե · իգ · 5 · Թուա · իբ · 16 ·

Մ Ել · իգ · 15 · լդ · 18 · բ Օր · ժգ · 3 · ա Կոր · է · 7, 8 ·

Յ Թուա · թ · 13 ·

Ն Հմր 8 · Թուա · թ · 4 · Ցես · է · 10 · գ Թագ · իգ · 21 · Եզր · զ · 20 · Մատ · իգ · 18, 19 · Մար · ժգ · 12–16 · Ղու · իբ · 7 · ԺԶ ·

Շ Երր · ժա · 28 ·

— Հմր 7 ·

Չ Հմր 12 · 13 ·

Ն·ք·ԳԲ· 1491

Ղեգկ·Թ· 6։ Ցայտ·է· 3։ Թ·4։ Ըրթագ·իդ· 16։ ա Կոր· ժ·10։ Երր· ժա·28։

– Գլ·գ·8։ 17։

– Գլ·ժգ·8։ 14։ բ Օր· լբ·7։ Ցես· գ·6։ Սաղ· Նբ·6։

է ՀՀր 11։

ա Գլ·գ·31։

բ Երր·ժա· 28։

գ Գլ·ժա·4։ – Թես·բ· 17։ լԳ·4։ Սաղ·Նբ· 51։ ՃՆ·36։ ՃլԷ·8։ ՃլԳ· 10։

դ Գլ·գ·23։ ժա·5։

ե Գլ·ժա·6։ Ածկ·իա· 13։ Ամվ· է·17։ Ցածկ· բ·13։

զ Գլ·ժա· 1։ Սաղ·ՃՆ· 38։

է Գլ·ժ·9։

– Գլ·ժ·26։

ը Ծն·իէ· 34։

թ Գլ·ժա· 8։ Սաղ· ՃՆ·38։

ժ Ծն·ի·3։

ի Գլ·բ·3։

ԺԳլ·գ·22։ ժա·2։

ի Գլ·գ·21։ ժա·3։

ը Ծն·ժե· 14։ Գլ·գ· 22։ Սաղ· ՃՆ·37։

ր Թես·լգ· 3·5։

ք Ծն·իէ· 11։

արիւնը տեսնէ, Ցերը ան դրանը վրայէն պիտի անցնի, և Դպիտի չթողու Եաստակիչը՝ որ ձեր տուները մտնէ չէչ զարնելու համար։

24 Եւ աս բանը քեզի ու քու որդւոյդ կանոն ըլլալու համար պահէք յաւիտեան։ Եւ ըլլայ թէ երբոր ան երկիրը գաք՝ որն որ Ցերը ձեզի պիտի տայ Իր ըսածին պէս, աս

26 պաշտօնը պահէք։ Եւ ըլլայ թէ երբոր ձեր որդիքը ձեզի ըսեն թէ՝ Ա՛ս պաշտօնով ինչ ըսել կ՚ուզէք.

27 Ըսէք որ, Է Ասիկայ Ցերոջը զատկին զոհ է, որ անիկայ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդւոյոջը տուներուն վրայէն անցաւ՝ երբոր Եգիպտացիները զարկաւ, ու մեր տուները ազատեց։ Եւ ժողովուրդը Խոնարհեցաւ ու երկրպագութիւն բրաւ։

28 Եւ Իսրայէլի որդիքը գացին, ու Ցերոջը՝ Մովսէսին ու Ահարոնին պատուիրածին պէս ըրին. անանկ ըրին։

29 Եւ եղաւ որ կէս գիշերին Ցերը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը զարկաւ, իր աթոռը նստող Փարաւոնին առջինեկէն մինչև բանտի մէջ եղած գերիին առջինեկը՝ և ամէն անասունին առջինեկը։

30 Եւ Նէ գիշերը ելաւ Փարաւոն՝ ու անոր բոլոր ծառաները՝ և բոլոր Եգիպտացիք, ու Եգիպտոսի մէջ Մեծ աղաղակ մը եղաւ. քանզի տուն մը չկար՝ որ անոր մէջ մեռեալ չըլլար։

31 Եւ Դգիշերով կանչեց Մովսէսը ու Ահարոնը՝ և ըսաւ. Ելէք, ու ելէք իմ ժողովուրդիս մէջէն՝ Ձդուք ալ և Իսրայէլի որդիքն ալ, ու գացէք պաշտեցէք Եհովան՝ ինչպէս որ ը-

32 սիք. Նաև ձեր հօտերը ու ձեր արջառները առէք՝ ինչպէս որ ըսիք, ու գացէք. և Ինա ալ օրհնէ-

33 ցէք։ Եւ Եգիպտացիք բռնադատեցին ժողովուրդը՝ որ շուտով ան երկրէն դուրս իրկեն զանոնք. քանզի ըսին. Ամենս ալ կը

34 մեռնինք։ Եւ ժողովուրդը իրենց զանգուածը դեռ չխմորած՝ իրենց Խմորի տաշտերը իրենց լաթերովը փաթթած ուսերնուն վրայ վեր-

35 ցուցին։ Եւ Իսրայէլի որդիքը Մովսէսին խօսքին պէս ըրին. ու Եգիպտացիներէն Ճարծաթեղէն զարդեր և ոսկեղէն զարդեր ու հան-

36 դերձներ խնդրեցին։ Եւ Ցերը ժողովուրդին շնորհք տուաւ Եգիպտացւոց առջևը, անանկ որ Եիյոց անոնց խնդրածը տուին. ու Ճանոնք կողոպտեցին Եգիպտացիները։

37 Եւ Իսրայէլի որդիքը Ռամեսէն դէպ Սոկքովթ չուեցին. ընտանիքներէն զատ՝ Էվեց հարիւր հազարի չափ հետևակ երիկ մարդիկ

38 էին։ Եւ Ճանոնց հետ խառնիճաղանճ բազմութիւն ալ ելաւ. և ոչխարներ ու արջառներ խիստ

39 մեծ հօտ մրն էին։ Եւ Եգիպտոսէն իրենց Հանած զանգուածէն անխմոր շօթեր եփեցին, ինչու որ խմորեալ չէր. քանզի Եգիպտոսէն վռնտուեցան, ու չէին կրնար ուշանալ. ու իրենց պաշար ալ չէին պատրաստեր։

40 Եւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդւոյոջ բնակած ժամանակը Չորս

41 Հարիւր երսուն տարի էր։ Եւ եղաւ որ չորս հարիւր երսուն տարիներուն վերջը՝ ան նոյն օրը Ցերոջը բոլոր զօրքերը Եգիպտոսի երկրէն

42 ելան։ Ասիկայ Ցերոջը համար պահելու գիշեր մրն է. ինչու որ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեց. ասիկայ գիշերն է Ցերոջը համար Իսրայէլի բոլոր որդիներէն իրենց ազգերուն մէջ պահելու։

43 Եւ Ցերը ըսաւ Մովսէսին ու Ահարոնին. Ա՛ս է Զատկին կանոնը. բնաւ Ոչ օտարական մը անկէ պի-

44 տի չուտէ. Բայց ամէն մարդուն ստակով ծախուծ առած ծառան՝ երբոր Զանիկայ թլփատես, ան

45 տեղ թող ուտէ անկէ։ Օտարական ու վարձկան ծառան անկէ

46 պիտի չուտէ։ Մէկ տան մէջ պիտի ուտուի ան. տունէն դուրս չհանես ան միսէն. ու անոր մէկ

47 ոսկորը պիտի չկոտրէք։ Իսրայէ-

48 լի բոլոր ժողովը ընէ ան։ Եւ երը օտարական մը քու քովդ պանդխտանալու ըլլայ, ու Ցերոջը զատիկ ընելու ըլլայ, անոր ամէն արուն թող թլփատուի, և ան ատենը ան ընելու մօտենայ, ու ինքը երկրին բնակին պէս ըլլայ. քանզի անթլփատ մէկը բնաւ անկէ պիտի

49 չուտէ։ Երկրացիին ու ձեր մէջը բնակող օտարականին Մէկ օրէնք

50 ըլլայ։ Եւ Իսրայէլի բոլոր որդիքը՝ Ցերոջը Մովսէսին ու Ահարոնին պատուիրածին պէս ըրին. ա-

51 նանկ ըրին։ Եւ եղաւ որ՝ ան նոյն օրը Ցերը Եգիպտոսի երկրէն հանեց Իսրայէլի որդիքը Իրենց զօրքերովը։

ԳԼ·ԺԳ

1 Ընդրանիկները Սուրբ Նուիրելու, 3 և զատկի յիշատակութիւնը պահելու, 11 և անասնոց անդրանիկներն ալ Սուրբ Նուիրելու վրայով պատուէրներ։ 17 Իսրայէլ-ցիք Եգիպտոսէն դուրս կ՚ելլեն, և Ցովսեփին ոսկորները հետերնին կ՚առնեն, 20 ու Սինա կու գան։ 21 Սուրբ Իսրայէլացւոց կառաջնորդէ ամպի ու կրակի սիւնով։

1 Ա՛ Ցերը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով. Սրբէ ինծի ամէն անդ-

Ն·ք·ԳԲ· 1491

Ի Ծն·ժբ· 2։ Խգ·3։ Գլ·լբ·26։ Թես·ա· 46։ ժա· 21։

Լ Թես·ժա· 4։

Ի Գլ·գ·1։ ժա·1։ ՀՀր 33։

Ի Ծն·ժե· 13։ Գոր· է·6։ Գաղ· գ·17։

Լ Գլ·է·4։ ՀՀր 51։

Հ բ Օր·ժգ· 6։

Յ Թես·Թ· 14։

Ղ Ծն·ժէ· 12·13։

Ճ Ղէ·իբ· 10։

Յ Թես·Բ· 12։ Ցոհ· ժԹ·33։ 36։

յ ՀՀր 6։ Թես·Թ· 13։

Ն Թես·Թ· 14։

– ՀՀր 12։ 13·15։ Գլ· իբ·29·30։ լԳ·19։ Դէ·իէ· 26։ Թես· գ·13։ բ· 16·17։ ժբ· 15։ բ Օր· ժէ·19։ Գլ·բ·23։

ն · ք · ՉՁ · 1491

բանիկը՝ որ արգանդ կը բանայ Իսրայէլի որդւոցը մէջ , մարդէն ալ՝ 3 անասունէն ալ . ան իմն է ։ Եւ Մովսէս բաւ ժողովուրդին . Ի՛ցի չեչեկ աս օրը որ Եգիպտոսէն՝ ծառայութեան տունէն ելար . ինչու որ Տէրը ձեզ ասկից զօրաւոր ձեռքով հանեց . Ե և խմորեալ հաց 4 պիտի չուտուի ։ Ի Դուք այսօր ելաք , Ապիպ ամսուն մէջ ։ Եւ երբ 5 որ երբ Տէրը Քանանեայց երկիրը՝ որ քեզի տալու համար էր քու հայրերուդ երդում բրաւ , — երկիրը որ կաթ ու մեղր կը բղխէ , ըաս Ամանուն մէջ պիտի կատարես աս պաշտօն ։ 6 Եօթը օր բաղարջ պիտի ուտես , և եօթներորդ օրը տօն երայ 7 Տէրոջը ։ Ան եօթը օրերուն մէջ բաղարջ պիտի ուտուի . ու քովդ խմոր պիտի չտեսնուի . ոչ ալ քու քովդ խմոր պիտի տեսնուի քու բոլոր սահմաններուդ 8 մէջ ։ Եւ հան օրը քու որդւոյդ պիտի պատմես՝ ըսելով . Ա՛ն անոր համար է՝ որ Տէրը երաւ ինծի , երբ 9 որ ես Եգիպտոսէն ելայ ։ Եւ ա՛ սիկայ քեզի Ընչանի համար պիտի ըլլայ ձեռքիդ վրայ , ու քու աչքերուդ մէջտեղը յիշատակի համար , որ Տէրոջը օրէնքը քու բերնիդ մէջ ըլլայ . ինչու որ Տէրը քեզ զօրաւոր ձեռքով հանեց Եգիպտոսէն ։ 10 Ե Ուստի դուն աս կանոնը տարիէ տարի իր աւետնին պիտի պահես ։ 11 Եւ երբ՝ որ Տէրը քեզ քանանացւոց երկիրը տանի՝ ինչպէս որ քեզի ու քու հայրերուդ երդում 12 երաւ , ու զանիկայ քեզի տայ , Ի Ան ամէնը՝ որ արգանդ կը բանայ , Տէրոջը համար պիտի զատես . և քու ունեցած անասունիդ ամէն առջինեկ արուները Տէրոջը պիտի երայ ։ 13 Եւ Իիշուն ամէն առջինեկը ոչխարով մի փրկես . և թէ որ չփրկես՝ անոր վիզը պիտի կտրես . ու քու որդւոցդ մէջ մարդոց ամէն անդրանիկ 14 նիկը Պպիտի փրկես ։ Ֆ Եւ երբ որ երբ քու որդիդ Ո՞ր մ՚՚ քեզի հարցընէ ըսելով . Ի՞նչ է աս . անոր պիտի բսես թէ՝ Զ Տէրը մեզ Եգիպտոսէն՝ ծառայութեան տունէն զօ- 15 բաւոր ձեռքով հանեց . Եւ եղաւ որ երբ Փարաւոն խստացաւ՝ — մեզ արձակել չ—էր , Տէրը Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը՝ մարդու առջինեկէն մինչև անասունի առջինեկը մեռցուց . անոր համար ես ամէն արգանդ բացող արուն Տէրոջը զոհ կ՚րնեմ , ու իմ որդւոցս ամէն առջինեկը կը 16 փրկեմ ։ Եւ ասիկայ քու ձեռքիդ վրայ Ընշանի համար՝ ու աչքերուդ մէջտեղը ճակատնոցի համար բլլայ . ինչու որ Տէրը մեզ Եգիպտոսէն զօրաւոր ձեռքով հանեց ։

ն · ք · ՉՁ · 1491

Ա Հմր 9 ։

17 Եւ եղաւ որ երբ Փարաւոն ժողովուրդը արձակեց , Աստուած զանոնք Փղշտացւոց երկրին ճամբայէն չտարաւ , թէև ան Ճ՚ՀՂՒ մօտ էր . քանզի Աստուած ըսաւ . Ըրլլայ որ ժողովուրդը Ա զղջայ՝ երբոր պատերազմը տեսնէ , ու Եգիպտոս 18 դառնայ . Հապա Աստուած Ը ժողովուրդը կարմիր ծովուն անապատին ճամբայէն պտրտցուց . ու Իսրայէլի որդիքը զունդ զունդ Եգիպ- 19 տոսի երկրէն ելան ։ Եւ Մովսէս՝ Ցովսեփին ոսկորները իր հետը առաւ . ինչու որ անիկայ Իսրայէլի որդւոցը Հաստատ Ղերդում բնել տուաւ՝ ըսելով . Ընդուշտ Աստուած ձեզի այցելութիւն պիտի բնէ , ու իմ ոսկորներս ասկէ հետերնիդ հանեցէք ։

Յ ԳԼ · ԺԳ · 11, 12 ; Թուա · ԺԳ · 1—4 ; Բ Օր · ԺՀ · 16 ։

Ե ԳԼ · ԺԳ · 2 ; Թուա · ԼԳ · 6, ԸԱ ։

20 Եւ Ն Սոկոթովթէն չուեցին , ու Ոթոմին մէջ անապատին ծայրը 21 իջևան բրին ։ Եւ Տէրը անոնց առջևէն կ՚երթար ցօրեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբայ ցուցընելու համար , ու գիշերը կրակի սիւնով՝ անոնց լոյս տալու համար , որ ցօրեկ 22 ու գիշեր երթան ։ Ցօրեկը ամպի սիւնը՝ ու գիշերը կրակի սիւնը՝ ժողովուրդին առջևէն չպակսեցուց ։

Բ Մնաց · Ը · 25 ; Ցես · իդ · 32 ; Գոր · է · 16 ։

Ն Թուա · ԼԳ · 6 ։

ԳԼ · ԺԴ

1 Աստուած Իսրայէլացւոց կ՚իմացընէ իրենց երթալու ճամբան ։ 5 Փարաւոն անոնց ետևէն կ՚իյնայ ։ 10 Իսրայէլացիք տրտնջել կ՚սկսին ։ 13 Մովսէս կը միխիթարէ զանոնք , 15 ու Աստուծմէ հրաման կ՚ընդունի իր բնակիչին համար ։ 19 Ամպը բանակին հետին կը դառնայ ։ 21 Իսրայէլացիք կարմիր ծովին կ՚անցնին . 28 իսկ Եգիպտացիք կը խեղդուին ։

1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե- 2 լով . Խօսէ Իսրայէլի որդւոցը՝ որ դառնան ու Ի Փիհիրօթին առջևը՝ Ի Մագդողին ու ծովին միջտեղը բանակ դնեն . Բէելսեփոնին առջևը՝ անոր դիմացը ծովին քովը 3 բանակ դրէք ։ Եւ Փարաւոն Իսրայէլի որդւոցը համար պիտի ըսէ թէ՝ Երկրին մէջ Մոլորած են , անապատը անոնց բոլորտիքը պա- 4 տեց ։ Եւ Ի Փարաւոնին սիրտը պիտի կարծրացընեմ , ու անոնց ետևէն պիտի իյնայ . ու ես Փարաւոնին վրայ և անոր բոլոր զօրքերուն վրայ Ղպիտի փառաւորուիմ , Ի ու Եգիպտացիք պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։ Եւ անոնք ա- 5 նանկ բրին ։

Ա ԳԼ · Ժգ · 18 ։

Բ Թուա · ԼԳ · 7 ։

Գ Երեմ. Խգ · 1 ։

Դ Սաղ · Հա · 11 ։

Ե Կ՚՚ չիս թուած

Զ ԳԼ · Գ · 21 ; Է · 3 ։

Է ԳԼ · Թ · 16 ; Հմր 17 · 18 ; Հռով · Թ · 17 · 22 · 23 ։

Ը ԳԼ · Է · 5 ։

Ն·Ք·ԳՓ· 1491
ը Սաղ·ճՂ· 25։

խաւ , ըև Փարաւոնին ու անոր ծառաներուն սիրտը ժողովուրդին դէմ դարձաւ՝ ու ըսին . Մենք ինչո՞ւ ըրինք աս բանը , որ Իսրայէլը մեզի ծառայութիւն ընելէն թողուինք ։ 6 Եւ իր կառքը պատրաստց , ու իր ժողովուրդը իր

Ը Գլ·ԺԱ·4։ 7 հետը առաւ ։ Եւ Ը վեց հարիւր ընտիր կառքեր՝ ու Եգիպտոսի բոլոր կառքերը՝ և անոնց ամէն մէկուն վրայ ոստիկաններ առաւ ։

Թ ՀՀմր 4։ 8 Եւ Ցէրը Թ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին սիրտը կարծրացուց , ու անիկայ Իսրայէլի որդւոցը ետևէն ինկաւ . և Ի Իսրայէլի որ-

Ի Գլ·գ·1։ ԺԳ·9։ Թուս· ԼԴ·3։ Լ Գլ· ԺԱ· 9։ Ցես· Իգ·6։ 9 դիքը բարձր ձեռքով ելան ։ Բայց Լ Եգիպտացիք անոնց ետևէն ինկան . Փարաւոնին ամէն ձիերը ՚՚ կառքերը՝ և անոր ձիաւորները ու զօրքերը , և Հասան անոնց՝ որ բանակած էին ծովին մօտ Փիհաիրոթին քովը՝ Բէեղսեփոնին առջեւն ։

10 Եւ երբ Փարաւոն մօտեցաւ , Իսրայէլի որդիքը իրենց աչքերը վերցուցին , և ահա Եգիպտացիք իրենց ետևէն կու գային , ու խիստ վախցան . և Իսրայէլի որդիքը Խ աղաղակեցին Ցէրոջը ։ 11 Եւ ըսին Մովսէսին . Եգիպտոսի մէջ գերեզմաններ չըլլալո՞ւն համար մեզ անապատին մէջ մեռնելու բերիր . ի՞նչ է աս մեզի ըրածդ որ մեզ

Խ Ցես· իգ· 7։ Նէեմ· թ·9։ Սաղ· ԼԳ·17։ ՃՂ· 6։ Ծ Սաղ· ՃՀ· 7·8։ 12 Եգիպտոսէն հանեցիր ։ Ա՞ս չէր ան խօսքը՝ որ քեզի զրուցեցինք Եգիպտոսին մէջ՝ ըսելով . Թող տուր մեզ՝ որ Եգիպտացւոց ծառայութիւն ընենք . քանզի աւելի աղէկ է մեզի Եգիպտացւոց ծառայութիւն ընել , քան թէ անապատին մէջ

Ն Գլ·Ե·21։ Գ·9։ 13 մեռնիլ ։ Եւ Մովսէս ըսաւ ժողովուրդին . Մի վախնաք , կայնեցէք , ու տեսէք Ցէրոջը փրկութիւնը՝ որ այսօր պիտի ընէ ձեզի , ինչու որ աւօրուան ձեր տեսած Եգիպտացիները՝ մէյմըն ալ պիտի չտեսնէք

Հ ԲՄն· ի· 15·17։ Ես· խա· 10 13·14։ 14 յաւիտեան ։ Ցէրը ձեզի համար պիտի պատերազմի , ու դուք Ղ լուռ կեցէք ։

48 Եւ զօրքին հազարապետներուն վերակացուները՝ այսինքն հազարապետները ու հարիւրապետները

49 Մովսէսին մօտեցան . Ու Մովսէսին ըսին . Քու ծառաներդ՝ մեր ձեռքին տակը եղող պատերազմողներուն գումարը առինք , ու մեզմէ

50 մարդ մը պակաս չէ ։ Ուստի ամէն մէկերնիս ինչ որ գտանք՝ Տէրոջը ընծայ բերինք , ոսկիէ զարդեր , շղթաներ , ապարանջաններ , մատնիներ , օղեր ու լանջազեղ կամարներ , որ Տէրոջը առջեւ մեր հոգիներուն քաւութիւն ընենք ։

51 Եւ Մովսէս ու Եղիազար քահանան անոնցմէ ոսկին առին . ամէնն ալ

52 բանուած բաներ էին ։ Եւ հազարապետներէն ու հարիւրապետներէն Տէրոջը մատուցուած ընծային բոլոր ոսկին՝ տասնուվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկղ էր ։

53 Զ պատերազմողներուն ամէն մէկը՝ իրեն համար կողոպուտ առեր էր ։

54 Եւ Մովսէս ու Եղիազար քահանան՝ հազարապետներէն ու հարիւրապետներէն ոսկին առին , և ժողովքի խորանը բերին , որ Տէրոջը առջեւը Իսրայէլի որդւոցը յիշատակ ըլլայ ։

Ն·Ք·ԳՓ· 1452

Տես գլ· ԺԸ· 8, 19 ։

Ա Ելմ 30 ։

Կամարներ ։

Ել·Լ·12, 16 ։

Ա Օր·Ի·14 ։

Ղ Ել·Լ·16 ։

ԳԼ · ԼԲ

1 Ռուբենի և Գադի որդիքը՝ Ցորդանանու անդիի կողմը իրենց ժառանգութիւնը ըլլալ կ'ուզեն ։ 6 Մովսէս զանոնք կը յանդիմանէ , 16 սակայն ան պայմանով հաւանութիւն կու տայ՝ որ իրենց եղբայրներուն օգնեն պատերազմի մէջ ։ 33 Մովսէս ան երկիրը կու տայ անոնց , 39 որոնք պատերազմելով՝ անոր կը տիրեն ։

1 Եւ Ռուբենի որդիքը ու Գադի որդիքը խիստ շատ անասուններ ունէին . ուստի Յազերի երկիրը ու Գաղաադի երկիրը տեսնելով՝ որ ահա ան տեղը անասուն պահելու

2 յարմար տեղ մըն է , Գադի որդիքը ու Ռուբենի որդիքը գացին , ու Մովսէսին , Եղիազար քահանային , և ժողովքի իշխաններուն հետ խօսելով՝ ըսին . Ատարովթը , Դիբոնը , Յազերը , Նեմրան , Եսբոնը , Եղեաղէն , Սեբաման , Նաբոն , Բէաւրան ,

4 երկիրը՝ որ Իսրայէլի ժողովքին առջեւը զարկած երկիրը՝ անասուն պահելու յարմար երկիր մըն է , ու քու ծառաներդ անասուններ ունին .

5 Եւ ըսին . Թէ որ մենք քու առջեւդ շնորհք գտանք , ասիկա երկիրը քու ծառաներուդ կալուածքի համար տրուի . մեզ Յորդանանէն մի՛ անցըներ ։

6 Եւ Մովսէս Գադի որդւոցը՝ ու Ռուբենի որդւոցը ըսաւ . Ձեր եղբայրները պատերազմի երթան , ու

7 դուք աս տեղս նստի՞ք ։ Եւ ինչո՞ւ համար Իսրայէլի որդւոցը սիրտը կը թուլցընէք , որ չանցնին ան երկիրը՝ որն որ Տէրը անոնց տուած

8 է ։ Ձեր հայրերն ալ ասանկ ըրին , երբոր զանոնք Կադէս բառնեայէն խրկեցի երկիրը լրտեսելու համար ։

9 Քանզի մինչև Եսքողի ձորը ելան , ու երկիրը տեսան , և Իսրայէլի որդւոցը սիրտը թուլցուցին , որ չմտնեն ան երկիրը՝ որն որ Տէրը

10 անոնց տուեր էր ։ Եւ նոյն օրը Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ , ու երդում ընելով՝ ըսաւ .

11 Եգիպտոսէն ելած մարդիկներէն՝ քսան տարեկանէն վեր եղողները՝ երբոր սրտով ինծի չհաւանդելնուն համար , բնաւ պիտի չտեսնեն ան երկիրը , որուն համար Աբրահամին , Իսահակին ու Յակոբին երդում

12 բրի Եհոնէ . Բայց՝ ի կենեզեան Յեփոնէի որդին Քաղեբէն , ու Նաւէի որդին Յեսուէն , Եորոնք կատարեցին Տէրոջը հետեւելով՝ ըսաւ Տէրոջը հաւանդ եղան ։

13 Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ , ու զանոնք քառասուն տարի անապատին մէջ պտրտցուց . մինչև որ Տէրոջը առջեւը չարութիւն ընող ազգը

14 բոլորովին սպառեցաւ ։ Եւ ահա դուք ձեր հայրերուն տեղը ելած՝ մեղաւոր մարդոց զաւակներու պես , որ Տէրոջը Իսրայէլի վրայ նորէն աւելցընէք ։

15 Վասն զի թէ որ դուք հանկէ խոտորիք , ան ալ նորէն աս ամբոխը անապատին մէջ պիտի ձգէ . ու դուք աս բոլոր ժողովուրդին կորստեանը պատճառ պիտի ըլլաք ։

16 Եւ անոնք մօտեցան անոր՝ ու ըսին . Մենք աս տեղս մեր անասուններուն համար փարախներ , ու մեր ընտանեացը համար քաղաքներ շինենք .

17 Բայց մենք զէնքերնիս առնենք , ու չուտով Իսրայէլի որդւոցը առջեւէն երթանք , մինչև որ զանոնք իրենց տեղերը տանինք . և մեր ընտանիքը պարսպաւոր քա-

Ա Գլ· ԺԹ· 3, 26 ։

Բ Օր·ա·22 ։

Գ Գլ· ԺԹ· 24, 31 ։ Բ Օր·ա·24, 28 ։

Դ Գլ· ԺԹ· 11, 21 ։ Բ Օր·ա·34 ։

Ե Գլ· ԺԹ· 28, 29 ։ Բ Օր·ա·35 ։ Զ Գլ·ԺԹ·24, 30 ։

Է Գլ· ԺԹ· 24 ։ Բ Օր·ա·36 ։ Յես· ԺԴ·8, 9 ։

Ը Գլ· ԺԹ· 33, 34, 35 ։

Թ Գլ· Իէ· 64, 65 ։

Ժ Բ Օր·ա·34 ։

ԺԱ Բ Օր·Լ·17 ։ Յես· Իր·16, 18 ։ Բ Պե·է·19, ԺԵ·2 ։

ԺԲ Յես·Դ·12, 13 ։

Ն · ք · գ · 1452

զաքներու մէջ բնակին , երկրիս
18 բնակչացը պատճառաւը . Ո-
ւմինչև որ Իսրայէլի որդւոց ամէն
մէկը իր ժառանգութիւնը չժա-
ռանգէ , մենք մեր տուները չդառ-
19 նանք ։ Իսկ մենք Գօրդանանու
անդիի կողմը անոնց հետ ժառան-
գութիւն պիտի չառնենք . ‡ինչու
որ մեր ժառանգութիւնը՝ Գօրդա-
նանու ասդիի կողմը դէպ ’ի արևելք
ինկած է ։
20 Եւ ՛Մովսէս ըսաւ անոնց . Թէ
որ ասանկ ընէք , ու Ցէրոյը առ-
ջևը պատերազմի համար վրանիդ
21 զէնք առնէք , Եւ Ցէրոյը առջևը՝
դուք ամէնդ ալ զէնքերով Գօր-
դանանէն անցնիք , մինչև որ անի-
կայ իր թշնամիները իր առջևէն
22 վռընտէ , Եւ ՛ան երկիրը Ցէրոյը
առջևը նուաճի , անկէ ետև Ն երրոր
ետ դառնաք , Ցէրոյը առջևը՝ ու
Իսրայէլին առջևը անմեղ պիտի ըլ-
լաք . և չաս երկիրը Ցէրոյը առջևը
23 ձեզի կալուածք պիտի ըլլայ ։ Բայց
թէ որ այսպէս չընէք , ահա Ցէրոյը
դէմ մեղք գործեցիք , ու դիտցէք
որ ֊ձեր մեղքը ձեզ պիտի գտնէ ։
24 ՚Ձեր ընտանեացը համար քաղաք-
ներ , ու ձեր հօտերուն համար փա-
րախներ շինեցէք , ու ձեր բերնէն
ելածը ըրէք ։
25 Եւ Գադի որդիքը՝ ու Ռուբենի
որդիքը խօսեցան Մովսէսին՝ ըսե-
լով . Ծառաներդ՝ մեր տիրոջը
պատուիրածին պէս պիտի ընենք ։
26 ֊Մեր զաւակները , մեր կիներնին ,
մեր հօտերը ու մեր բոլոր անասուն-
ները՝ հոս Գաղաադի քաղաքներուն
27 մէջ մնան . Բայց ծառաներդ՝ մեր
տիրոջը ըսածին պէս , ամէնքս ալ
դունդ դունդ պատրաստուինք , ու
Ցէրոյը առջևէն անցնինք պատե-
բազմի համար ։
28 ֊Ան ատենը Մովսէս՝ Եղիազար
քահանային , ու Նաւէի որդւոյն
Յեսուին , և Իսրայէլի որդւոցը ցե-
ղերուն նահապետութեանց իշխան-
ներուն ասս պատուէրը տուաւ՝ ա-
29 նոնց վրայով . Եւ Մովսէս ըսաւ
անոնց . Թէ որ Գադի որդիքը՝ ու
Ռուբենի որդիքը՝ Ցէրոյը առջևը
ամէնքն ալ պատերազմի համար
պատրաստուած՝ ձեզի հետ Գօր-
դանանէն անցնին , ու ան երկիրը
ձեր առջևը նուաճի , ան ատենը
Գաղաադի երկիրը անոնց կալուածք
30 տաք . Բայց թէ որ պատրաս-
տուած ձեզի հետ չանցնին , անոնց
կալուածքը ձեզի հետ քանանու-
31 երկրին մէջ ըլլայ ։ Իսկ Գադի որ-
դիքը և Ռուբենի որդիքը պատաս-
խան տուին՝ ու ըսին . Ցէրը քու
ծառաներուդ ինչպէս որ պատուի-
32 րեց , անանկ պիտի ընենք ։ Մենք
զէնքերնիս առած՝ Ցէրոջը առջևէն
քանանու երկիրը պիտի անցնինք .
բայց մեր ժառանգութեան կա-
լուածքը Յորդանանու ասդիի կող-
33 մը ըլլայ ։ Ուստի ֊Մովսէս անոնց՝
֊յիշեալ Գադի որդւոցը , ու Ռու-
բենի որդւոցը , և Յովսեփեան Մա-
նասէին կէս ցեղին տուաւ Ամո-
հացւոց Հ Սեհոն թագաւորին թա-
գաւորութիւնը , ու Բասանի Ովգ
թագաւորին թագաւորութիւնը ,
երկիրը իր քաղաքներովը՝ ֊֊ երկ-
րին քաղաքներուն բոլորտիքը և-
34 ղած սահմաններովը ։
Եւ Գադի որդիքը ֒պարսպաւոր
քաղաքներ շինեցին , ֊յիշեալ ֒Դե-
35 բոնը , Ատարովթը ու ֒Աբրէրը ,
36 Եւ Ատրօթ սովփանը , Յազերը , ու
37 Յագբեհան , Եւ ֒Բեթնամրան ու
Բեթարանը , և հօտերու փարախ-
ներ ֊Լ ՀԻՆԴՈՅ ։
Ռուբենի որդիքն ալ ֊Եսեբոնը ,
Եղէաղէն ու Կարիաթեմը շինեցին ։
38 Ու ֊Նաբաւը և ֊Բէէլմոնը , ֊որ ա-
սոնց անունները փոխեցին . ու Սէ-
բաման . ու իրենց շինած քաղաք-
ներուն ֊Իրենց անուններըն դրին ։
39 Եւ ֊Մանասեան Մաքիրին որդի-
քը Գաղաադ գացին , ու առին
զանիկայ . և անոր մէջը Բնակող
40 Ամորհացիները վռընտեցին ։ Եւ
Մովսէս՝ ֊Գաղաադը տուաւ Մա-
նասեան Մաքիրին , որ հոն բնակե-
41 ցան ։ Ու ֊Մանասեան Յայիրը
գնաց անոնց գիւղաքաղաքները ա-
ռաւ , ու զանոնք ֊Հաւօթ Յայիր՚
42 անուանեց ։ Եւ Նոբահը գնաց ,
ու Կանաթը ու անոր գեղերը ա-
ռաւ . և զանիկայ իր անունովը՝
Նոբահ կոչեց ։

ԳԼ · ԼԳ

1 Իսրայէլացւոց քառասունեւերկու իջեւաններուն անունները ։ 50 Ասոնցմէ կը պատուիրէ բնակիլ բոլոր քանանացիները ։

1 Մովսէսին ու Ահարոնին ձեռքովը՝
Եգիպտոսի երկրէն իրենց զօր-
քերովը ելլող Իսրայէլի որդւոցը
2 իջեւանները ասոնք են ։ Եւ Մովսէս՝
Ցէրոջը հրամանովը անոնց իջեւան-
ներուն համեմատ՝ անոնց գնացք-
ները գրեց . ու անոնց գնացքնե-
րուն համեմատ՝ անոնց իջեւանները
3 ասոնք են ։ ֊Առաջին ամսուն մէջ՝
֊յիշեալ առաջին ամսուն տասնե-
տասներորդ օրը՝ ֒Բամսեսէն չուեցին .
զատկին հետևեալ օրը Իսրայէլի
որդիքը՝ ֊բարձր ձեռքով ելան բոլոր
Եգիպտացւոց աչքերուն առջևը .
4 Ու Եգիպտացիք իրենց ֊մեռնելիը
կը թաղէին , ֒որանոր Ցէրը անոնց
բոլոր անդրանիկները ջարդեց . և

Ն · ք · գ · 1452

Ե Ցես · իբ · 4։

ֆ Հմր 33 ։ Ցես · ժր · 1 ։ Ժգ · 8 ։

՛ Բ Օր · գ · 18 ։ Ցես · ա · 14 ։ գ · 12 ։ 13 ։

Ո Բ Օր · գ · 20 ։ Ցես · ժա · 23 ։ ժր · 1 ։

Ն Ցես · իբ · 4։

Ւ Բ Օր · գ · 12 ։ 15 ։ 16 ։ 18 ։ Ցես · ա · 15 ։ Ժգ · 8 ։ 32 ։ իբ · 4 ։ 9 ։

֊ Ծն · գ · 7 ։ Խգ · 16։ Եսթ · 12 ։

Ւ Հմր 16 ։ 34 ։ ԷԱ ։

Ղ Ցես · ա · 14 ։

Լ Ցես · գ · 12 ։

֊ Ցես · ա · 13 ։

1491

Ֆ Բ Օր · գ · 14 ։ Ցես · ժգ · 30 ։ ա Մն · բ · 21 ։ 22 ։ 23 ։

† ֊Յայիրի գիւղաքաղաքները · Դատ · ժ · 4 ։ գ Թագ · գ · 13 ։

Ն · ք · գ · 1452

֊ Բ Օր · գ · 12–17 ։ իբ · 8 ։ Ցես · ժբ · 6 ։ Ժգ · 8 ։ իբ · 4 ։

Ա Գլ · իա · 24 ։ 33 ։ 35 ։

֊ Հմր 24 ։

՛ Գլ · լդ · 45, 46 ։

Ֆ Բ Օր · բ · 36 ։

֊ Հմր 3 ։

Ֆ Գլ · իա · 27 ։

Ֆ Ես · խգ · 1 ։

՛ Գլ · իբ · 41 ։

Ֆ Ցես Հմր 3 ։

Եւ · իդ · 13 ։ Ցես · իդ · 7 ։

֊ Կ֊՛֊ Անուններ

֊ Ծն · ժ · 23 ։

Բ Բ Օր · գ · 12 ։ 13 ։ 15 ։ Ցես · ժգ · 31 ։ ժէ · 1 ։

Ֆ Բ Օր · գ · 14 ։ Ցես · ժգ · 30 ։ ա Մն · բ · 21 ։ 22 ։ 23 ։

† ֊Յայիրի գիւղաքաղաքները · Դատ · ժ · 4 ։ գ Թագ · գ · 13 ։

֊ Եւ · ժբ · 2 ։ ժգ · 4 ։

Բ Եւ · ժբ · 37 ։

Ֆ Եւ · ժգ · 8 ։

֊ Եւ · ժբ · 29 ։

Ն·Ք·ԶԲ· 1452

ԻԵԼ·ԺԲ· 12՝ ԺԲ· 11՝ ԵՐ· ԺԹ·1՝ ՑԱՐ·ԺԲ· 8՝

ՀԵԼ·ԺԲ· 37՝

ԻԵԼ·ԺԳ· 20՝

ՀԵԼ·ԺԳ· 2·9՝

ՐԵԼ·ԺԳ· 23՝ ԺԴ· 22·23՝

ԺԵԼ·ԺԴ· 27՝

ԻԵԼ·ԺԶ· 1՝

ՀԵԼ·ԺԷ·1՝ ԺԹ·2՝

1490

ԻԵԼ·ԺԶ·1՝ ԺԹ·1·2՝

ԺԳԼ·ԺՁ· 34՝

ԼԳԼ·ԺՁ· 35՝

ՀԳԼ·ԺԳ· 1՝

ԻՏԵՐԸ անոնց աստուածներուն վրայ դատաստան բրաւ ։

5 ՀԵ ԻսրայէԼի որդիքը՝ Ռամեսէն չուելով՝ Սոկքովթի իլևան ըրին ։

6 Ու ԻՍոկքովթէն չուելով՝ անապատին ծայրը եղած Ոթոմը իլևան ըրին ։

7 Եւ ՀՈթոմէն չուելով՝ դէպ ՚ի Փիահիրոթ դարձան՝, որ Բէելզեփոնին դիմացն է, ու Մագդոլին առջևը իլևան ըրին ։

8 Եւ Փիահիրոթին առջևէն չուելով, ու ՐԾովուն մէջէն անցնելով՝ անապատը ԻՒՆ, և Ոթոմի անապատին մէջ իրեք օրուան ճամբայ քալելով՝ Մեռայ իլևան ըրին ։

9 Եւ Մեռայէն չուելով՝ Ժեղիմը եկան. ու Եղիմի մէջ տասուերկու ջուրի աղբիւր՝ ու եօթանասուն արմաւենի կային. ու հոն իլևան ըրին ։

10 Եւ Եղիմէն չուելով՝ կարմիր ծովուն քովը իլևան ըրին ։

11 Եւ կարմիր ծովէն չուելով՝ ԻՍին անապատը իլևան ըրին ։

12 Եւ Սին անապատէն չուելով՝ Դափկա իլևան ըրին ։

13 Եւ Դափկայէն չուելով՝ Եղուսը իլևան ըրին ։

14 Ու Եղուսէն չուելով՝ ԼՌափիդիմը իլևան ըրին. ու հոն ժողովուրդին համար խմելու ջուր չկար ։

15 Եւ Ռափիդիմէն չուելով՝ ԻՍինայի անապատը իլևան ըրին ։

16 Ու Սինայի անապատէն չուելով՝ ԺԿիբրոթ Հաթթաւան իլևան ըրին ։

17 Եւ Կիբրոթ Հաթթաւայէն չուելով՝ ԼԱսերովթը իլևան ըրին ։

18 Ու Ասերովթէն չուելով՝ ՀՌաթման իլևան ըրին ։

19 Եւ Ռաթմայէն չուելով՝ Ռեմոն փարէսը իլևան ըրին ։

20 Ու Ռեմոն փարեսէն չուելով՝ Լեբնան իլևան ըրին ։

21 Եւ Լեբնայէն չուելով՝ Ռեսսան իլևան ըրին ։

22 Ու Ռեսսայէն չուելով՝ Կեհելաթան իլևան ըրին ։

23 Եւ Կեհելաթայէն չուելով՝ Սոփար լեռը իլևան ըրին ։

24 Ու Սոփար լեռնէն չուելով՝ Քարադան իլևան ըրին ։

25 Եւ Քարադայէն չուելով՝ Մակելոթը իլևան ըրին ։

26 Ու Մակելոթէն չուելով՝ Թահաթը իլևան ըրին ։

27 Եւ Թահաթէն չուելով՝ Թարան իլևան ըրին ։

28 Ու Թարայէն չուելով՝ Մատեկան իլևան ըրին ։

29 Եւ Մատեկայէն չուելով՝ Հասմոնան իլևան ըրին ։

30 Ու Հասմոնայէն չուելով՝ Մոսերոթը իլևան ըրին ։

31 Եւ Մոսերոթէն չուելով՝ Բանէյականը իլևան ըրին ։

32 Ու ՝Բանէյականէն չուելով՝ ՀԳադգադ *լեռը իլևան ըրին ։

33 Եւ Գադգադ լեռնէն չուելով՝ Եոտերաթան իլևան ըրին ։

34 Ու Եոտերաթայէն չուելով՝ Եբրոնան իլևան ըրին ։

35 Ու Եբրոնայէն չուելով՝ ՀԳասիոն գաբերը իլևան ըրին ։

36 Եւ Գասիոն գաբերէն չուելով՝ ՀՍին անապատը՝ այսինքն Կադէսը իլևան ըրին ։

37 Եւ ՀԿադեսէն չուելով՝ Հովը լեռը իլևան ըրին, որ Եդոմի երկրին ծայրն է ։ Ու ՝ԸՀարոն քահանան Ցերոթը հրամանովը Հովը լեռը ելաւ, և հոն մեռաւ, Իսրայէլի որդւոցը Եգիպտոսի երկրէն ելլելուն քառասներորդ տարին՝ հինգերորդ ամսուն առաջին օրը ։

39 Եւ ԸՀարոն՝ Հովը լեռանը վրայ մեռած ատենը՝ հարիւր քսանուիրեք տարեկան էր ։

40 Եւ Քանանու երկրին հարաւային կողմը բնակող ԼԱրադի †քանանացի թագաւորը՝ Իսրայէլի որդւոցը գալը լսեց ։

41 Եւ ՞Հովը լեռնէն չուելով՝ Սելմոնան իլևան ըրին ։

42 Ու Սելմոնայէն չուելով՝ Փունոնը իլևան ըրին ։

43 Ու Փունոնէն չուելով՝ ԼՈբովթը իլևան ըրին ։

44 Եւ ՂՈբովթէն չուելով՝ ՄՈվաբի սահմանին մէջ եղող ԼԻյէ աբարիմը իլևան ըրին ։

45 Եւ Իյէ ՚ԲՒՆ չուելով՝ ՞Դեբոն գադը իլևան ըրին ։

46 Ու Դեբոն գադէն չուելով՝ ՞Գելմոն դէբլաթէմը իլևան ըրին ։

47 Ու Գելմոն դէբլաթէմէն չուելով՝ Նաբաւին առջևը՝ ԼԱբարիմի լեռները իլևան ըրին ։

48 Եւ Աբարիմի լեռներէն չուելով՝ Երիքովի ԴԻՄԸ՝ Ցորդանանու մօտ՝ ՞Մովաբի դաշտերուն մէջ իլևան

49 բրին ։ Ուստի անոնք Ցորդանանու մօտ Մովաբի դաշտերուն մէջ իլևան բրին, Բեթեսիմոթէն մինչև ՐԱբէլսատիմը ։

50 Եւ Ցէրը Մովաբի դաշտերուն մէջ՝ Երիքովի ԴԻՄԸ Ցորդանանու մօտ՝ խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով.

51 Իսրայէլի որդւոցը խօսէ, ու անոնց ըսէ. ՞Երբոր Ցորդանանէն քանացուց երկիրը անցնիք, ՞Ան երկրին բոլոր բնակիչները ձեր առջևէն վռընտէք, ու անոնց բոլոր

Ն·Ք·ԶԲ· 1452

ՑՏԵՍ ՆՈՒ·ԼԳ·27՝ Բ ՕՐ·Ժ·6՝ ԱՄՈՍ·Ա·42՝

ՀՐ ՕՐ·Ժ·7՝

*Կ՚՝ ՍԱՐԸ

1453

ՀԲ ՕՐ·Բ·8՝ ԳԹԱԳ·Թ·26՝ ԻՐ·49՝

ՀԳԼ·Ի·1՝ ԻԷ·14՝

ՀԳԼ·Ի·22՝ 23՝ ԻԱ·4՝

ՆԳԼ·Ի·25՝ 28՝ Բ ՕՐ·Ժ·6՝ Լ·50՝

ԼԳԼ·ԻԱ·1՝ ՃՃ՝

†Կ՚՝ ՔԱՆԱՆԱՑԻՆ

ՀԳԼ·ԻԱ·4՝

ԼԳԼ· ԻԱ· 10՝

ՀԳԼ· ԻԱ· 11՝

ԼԳԼ· ԻԱ· 11՝

ՀԳԼ·ԼԲ·34՝

ՀԵՒՄ·ԽԲ· 22՝

Է ԳԼ· ԻԱ· 20՝ Բ ՕՐ· Լ·49՝

ՀԳԼ·ԻԲ·1՝

Բ ԳԼ·ԻԷ·1՝ ՃՅՈ·Բ·1՝ ՅԲՕՐ·Է·1՝ 2՝ Թ·1՝ ՃՅՈ·Գ·17՝

ՀԵԼ·ԻԳ·24՝ 33՝ ԼԳ·13՝ ԲՕՐ·Է·2՝ 5՝ ԺԲ·3՝ ՃՅՈ·Ժ·12՝ ԴԱՆ·Բ·2՝

Ն · Ք · Դ · 1452

պատկերաւոր կոթողները կործա-
նէք , և անոնց բոլոր թափօու-
կուռքերը կործանէք , ու անոնց
53 բոլոր բարձր տեղերը փլցընէք ։ Եւ
ան երկիրը ձեր իշխանութեանը
տակը անցընելով՝ անոր մէջը բնա-
կիք . քանզի ան երկիրը ձեզի տուի
54 որ ժառանգէք ։ Եւ † ան երկիրը
վիճակով ժառանգէք ձեր տոհմե-
րուն համեմատ . շատոր եղողին
ժառանգութիւնը շատ պիտի տաք ,
ու քիչոր եղողին ժառանգութիւ-
նը քիչ պիտի տաք . մէկ տեղի մը
վիճակը որու որ ելլէ , անոր ըլլայ
[illegible] . ձեր հարցը ցեղերուն
55 համեմատ ժառանգէք ։ Բայց թէ
որ ան երկրին բնակիչները ձեր առ-
ջևէն չվռնտէք , ան ատոնք անոնց-
մէ ողջ թողուցածնիդ՝ † ձեր աչքե-
րուն փուշեր , ու ձեր կողերուն
տատասկներ պիտի ըլլան . ու ձեր
բնակած երկրին մէջ՝ ձեզի թշնա-
56 մութիւն պիտի բնեն ։ Եւ պիտի
ըլլայ որ՝ ինչ որ անոնց ընելու մը-
տածեր էի , Նոյնը պիտի ընեմ ձեզի ։

† ԳԼ · Իգ · 53։ 54 · 55 ։

† Ցես · Իգ · 13 ։ Դատ · բ · 3 ։ Սադ · ՃԺ · 34 · 36 ։ Ցես Եր · Իգ · 33 ։ Եզեկ · իբ · 24 ։

ԳԼ · ԼԴ

1 Երկրին սահմանները ։ 16 Երկիրը բաժնելու համար որոշուած մարդոց անունները ։

1 Նաև Ցերը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
2 սելով . Իսրայէլի որդւոցը պա-
տուիրեա , ու անոնց ըսա . Երբոր
դուք † քանանու երկիրը մտնէք ,
ձեզի ժառանգութիւն իյնալու եր-
կիրը ասպիտի ըլլայ , քանանու-
3 երկիրը իր սահմաններովը . Եւ
† ձեր հարաւային սահմանը՝ Սին
անապատէն մինչև Եդովմ ըլլայ , և
ձեր հարաւային սահմանը արևել-
քէն՝ † Ղովի ծովուն ծայրէն սկսի .
4 Ու ձեր հարաւային սահմանը † Ակ-
րաբիմի զառ՝ի վերը պտրտելով՝
մինչև Սին հասնի , ու անկէ ելլելով՝
† Կադէս բառնեայնի հարաւային
կողմը երթայ , ու † Ասար ադդա-
5 րէն ելլելով՝ Ասեմոնը հասնի . Եւ
Ասեմոնէն † մինչև Եգիպտոսի հե-
ղեղատը պտրտելով՝ ծովուն մէջ
լմննայ սահմանը ։
6 Իսկ ձեր արևմտեան սահմանը մեծ
ծովը ըլլայ . ձեզի արևմտեան սահ-
ման ան ըլլայ ։
7 Եւ ձեր հիւսիսային կողմի սահ-
մանը աս ըլլայ . մեծ ծովէն մինչև
8 † Հովր լեռը նշանակէք . Հովր լեռ-
նէն † մինչև Եմաթը նշանակէք , ու
անկէ սահմանը մինչև † Սեդադը
9 հասնի . Եւ ան սահմանը մինչև
Զեփրոնը ելլէ , ու † Ասար Ենանի
մէջ լմննայ . ձեր հիւսիսային սահ-
մանը աս ըլլայ ։
10 Եւ ձեր արևելեան սահմանին հա-
մար , Ասար Ենանէն մինչև Սեփամ

Ն · Ք · Դ · 1452

11 նշանակէք . Ու աս սահմանը՝ Ա-
յինին արևելեան կողմէն՝ Սեփամէն
Ռիբղա իջնէ . ու աս սահմանը
արևելից կողմէն իջնելով՝ մինչև
† Քինէրեթի ծովուն եզերքը հաս-
12 նի . Եւ աս սահմանը Յորդանան
իջնէ , ու † Ղովի ծովուն մէջ վեր-
ջանայ ։ Աս երկիրը՝ իր շրջակայ
սահմաններովը ձեզի ըլլայ ։
13 Եւ Մովսէս Իսրայէլի որդւոցը
պատուիրեց , ու բսաւ . Ասիկայ է
ան երկիրը՝ որ դուք վիճակով պիտի
ժառանգէք , ինչպէս որ Ցերը հրա-
մայեց ինն ու կէս ցեղի տալու անի ։
14 կայ . † քանզի Ռուբենի որդւոցը
ցեղը՝ իրենց հարցը տուներուն հա-
մեմատ , ու Գադի որդւոցը ցեղը՝
իրենց հարցը տուներուն համեմատ ,
և Մանասէին կէս ցեղը՝ իրենց ժա-
15 ռանգութիւնը առին ։ Աս երկու-
ու կէս ցեղը իրենց ժառանգութիւ-
նը առին Երիքովին դիմաց՝ Յոր-
դանանու ասդիի կողմը՝ դէպ՝ի
արևելք ։
16 Եւ Ցերը խօսեցաւ Մովսէսին՝ ը-
17 սելով . Ասոնք են ան մարդոցը
անունները՝ որոնք երկիրը ժառան-
գութեան համար ձեզի պիտի բաժ-
նեն . † Եղիազար քահանան՝ ու
18 Նաւէին որդին Յեսուն . Եւ ամէն
ցեղէն ալ մէյմէկ նշխան առնէք ,
ան երկիրը ժառանգութեան բաժ-
19 նելու ։ Եւ ան մարդոցը անուննե-
րըասոնք են . Յուդայի ցեղէն՝
20 Յեփոնէին որդին Քաղերը , Շմաւո-
նի որդւոցը ցեղէն՝ Ամիուդին որ-
21 դին Սամուէլը , Բենիամինի ցեղէն՝
22 Քասղոնին որդին Եղազադը , Դանի
որդւոցը ցեղէն իշխան՝ Եգղիին որ-
23 դին Բոկկին , Յովսեփի որդւոցմէ՝
Մանասէի որդւոցը ցեղէն իշխան՝
24 Եփոտին որդին Անիէլը , Ու Եփրեմի
որդւոցը ցեղէն իշխան՝ Սափաթա-
25 նին որդին Կամուէլը , Եւ Զաբու-
ղոնի որդւոցը ցեղէն իշխան՝ Փառ-
26 նակի որդին Եղիսափանը , Եւ Ի-
սաքարի որդւոցը ցեղէն իշխան՝
27 Ազանին որդին Փաղտիէլը , Ու Ա-
սերի որդւոցը ցեղէն իշխան՝ Սելո-
28 միին որդին Ախիուդը , Ու Նեփ-
թաղիմի որդւոցը ցեղէն իշխան՝
29 Ամիուդին որդին Փադայէլը ։ Ա-
սոնք են՝ ՚ որոնց Ցերը
հրամայեց , որ քանանու երկրին
մէջ Իսրայէլի որդւոցը ժառանգու-
թիւն բաժնեն ։

Ն · Ք · Դ · 1452

Լ Գ Թագ · Իգ · 33 ։ Երեմ · լԹ · 5 · 6 ։

† Ր Օր · գ · 17 ։ Ցես · ժա · 2 ։ ԺԹ · 35 ։ Մատ · ժգ · 34 ։ Ղև · ե · 1 ։

† Հմր 3 ։

† Հմր 1 ։ Ցես · ժգ · 1 · 2 ։

† ԳԼ · լր · 33 ։ Ցես · ժգ · 2 · 3 ։

† Ցես · ժգ · 1 · ԺԹ · 51 ։

Ը ԳԼ · ա · 4 · 16 ։

— Ծն · ժէ · 8 ։ բՕր · ա · 7 ։ Սադ · Կր · 55 ։ ՃՆ · 11 ։ Եզեկ · խե · 14 ։

Բ Ցես · ժե · 1 ։ Ցես Եզեկ · խե · 13 · ՃԼ ։

† Ծն · ժգ · 3 ։ Ցես · ժե · 2 ։

† Ցես · ժե · 3 ։

Ի ԳԼ · ժգ · 26 ։ լր · 8 ։

Ղ Ցես Ցես · ժե · 3 · 4 ։

Կ Ծն · ժե · 18 ։ Ցես · ժե · 4 · 47 ։ դ Թագ · բ · 65 ։ Ես · խե · 12 ։

Ը ԳԼ · լգ · 37 ։

Ի ԳԼ · ժգ · 22 ։ դ Թագ · ժգ · 25 ։

† Եզեկ · խե · 15 ։

Լ Եզեկ · խե · 17 ։

ԳԼ · ԼԵ

1 Ղևտացւոց տրուելու քառասնուերեք քա-
ղաքները՝ իրենց արուարձաններովը ։ 6 Անոնց-
մէ վեցը ապաստանի քաղաքներ պիտի ըլլային ։
9 Մարդասպանութեան վրայով օրէնքներ ։

Ն. Ք. գՁ. 1451

31 Մարդասպանի մը համար փրկանք պիտի չընդունուիր ։

1 Եւ Տէրը Մովաբի դաշտերուն մէջ՝ Երիքովի դէմ՝ Յորդանանու մօտ՝ խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով.

– Ցես. ԺԳ. 3, 4 ։ իա. 2 ։ Տես Եզկ. խե. 1, ՁԱ, խը. 8, ՁԱ ։

2 Պատուիրէ Իսրայէլի որդւոցը, որ իրենց ժառանգութեան կալուածքէն Ղեւտացւոց բնակելու քաղաքներ տան. նաև քաղաքներուն բոլորտիքը եղած արուարձանները

3 Ղեւտացւոց պիտի տաք ։ Եւ քաղաքները բնակութեան համար ըլլան անոնց, ու արուարձանները՝ անոնց արջառներուն, *հօտերուն ու բոլոր անասուններուն համար

* Եբր. սուրբ ցուածքին

4 ըլլան ։ Ու Ղեւտացւոց տալու քաղաքներուն արուարձանները՝ քաղաքին պարիսպէն դուրս չուրջանակի հազարական կանգուն ըլլայ։

5 Դուրս-ուրնէն ան-անին ։ Ուստի քաղաքին դուրսը՝ արեւելեան կողմէն երկու հազար կանգուն, հարաւային կողմէն՝ երկու հազար կանգուն, արեւմտեան կողմէն՝ երկու հազար կանգուն, ու հիւսիսային կողմէն՝ երկու հազար կանգուն չափէք. և քաղաքը մէջտեղը պիտի ըլլայ. անոնց քաղաքներուն

6 արուարձանները ասանկ ըլլան ։ Եւ ձեր Ղեւտացւոց տալու քաղաքներէն՝ Ապվեցը ապաստանի քաղաք ըլլալու որոշէք, որ սպաննողը հոն փախչի. ու ասոնցմէ զատ՝ քառասունեւերկու քաղաք պիտի տաք ։

Բ Հմր 13 ։ Բ Օր. դ. 41 ։ Ցես. ի. 2, 7, 8 ։ իա. 3, 13, 21, 27, 32, 36, 38 ։

7 Ղեւտացւոց տալու քաղաքներուդ ամէնը՝ Էքառասունուութը քաղաք ըլլայ. զանոնք իրենց արուարձան-

Է Ցես. իա. 41 ։

8 ներովը տաք ։ Եւ ան քաղաքները՝ որ Թ Իսրայէլի որդւոցը կալուածքէն պիտի տաք, Ի շատուր եղողէն շատ՝ ու քիչուր եղողէն քիչ առնէք. ամէն մէկը իր առած ժառանգութեանը չափովը՝ իր քաղաքներէն Ղեւտացւոց պիտի տայ ։

Թ Գլ. իզ. 54 ։

9 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը-

10 սելով. Խրայէլի որդւոցը խօսիս՝ ու անոնց ըսես. Ղերբոր Յորդանանէն Քանանու երկիրը անցնիք,

11 Ժ Ձեզի քաղաքներ որոշէք, որոնք ապաստանի քաղաքներ ըլլան ձեզի, որ սխալմամբ մարդ զարնող սպան-

ՂԲ Օր. ԺԹ. 2, Ցես. ի. 2 ։

Ժ Եզ. իա. 13 ։

12 նողը հոն փախչի ։ Եւ ան քաղաքները ձեզի ապաստանարան ըլլան՝ արեան վրէժխնդիր եղողէն. ու սպաննողը՝ դատաստանի համար ժողովքին առջեւը չերեւցած՝ չմեռնի ։

ԷՐ Օր. ԺԹ. 6, Ցես. ի. 3, 5, 6 ։

13 Ան ։ Եւ ձեր տալու քաղաքներէն Ի վեցը ձեզի ապաստանի քաղաք ըլ-

Բ Հմր 6 ։

14 լայ ։ Ի քաղաքներուն իրէքը՝ Յորդանանու ադիի կողմը տաք, ու քաղաքներուն իրէքը՝ Քանանու երկրին մէջ տաք. Ե անուն ապաս-

ԺԹ Օր. դ. 41, Ցես. ի. 8 ։

15 տանի քաղաքներ ըլլան ։ Ա վեց քաղաքները Իսրայէլի որդւոցը՝ ու Էօտարականին՝ և ձեր մէջը բնակող պանդուխտին ապաստանարան ըլլան. և ով որ սխալմամբ մարդ մեռցրնէ, հոն փախչի ։

Ն. Ք. գՁ. 1451

Է Գլ. ԺԵ. 16 ։

16 Նիակ թէ որ Ժդ Ը երկաթէ զօրաձիւով մէկը զարնէ մեռցրնէ, անիկայ մարդասպան է. մարդասպանը

Ղեւ. իա. 12, 14 ՂԵ. իզ. 17 ։ Բ Օր. ԺԹ. 11, 12 ։

17 անպատճառ պիտի մեռցուի ։ Կամ թէ որ մահաւիթ բռնաքարով մը մէկու մը զարնէ, որ մեռնի, անիկայ մարդասպան է. մարդասպանը

18 անպատճառ պիտի մեռցուի ։ Կամ թէ որ ձեռքով գործածուելու փայտեղէն մահաւիթ գործիքով մը զարնէ, որ մեռնի, անիկայ մարդասպան է. մարդասպանը ան-

19 պատճառ պիտի մեռցուի. Ի Ըրեան վրէժխնդիրը պիտի մեռցրնէ մարդասպանը. երբոր անոր հանդիպի՝

Ի Հմր 21, 24, 27 ։ Բ Օր. ԺԹ. 6, 12 ։ Ցես. ի. 3, 5 ։

20 Թող մեռցրնէ զանիկայ ։ Կամ Ե թէ որ թշնամութեամբ հրէ մէկը, ու Ն նենդութեամբ վրան Բ Ռ նետելով՝ զանիկայ մեռցրնելու

Ե Ծն. դ. 8 ։ Բ Թագ. գ. 27 ։ Ի. 10 ։ Գ Թագ. բ. 31, 32 ։

21 ըլլայ, կամ թէ թշնամութեան պատճառաւ՝ ձեռքովը զարնէ անոր՝ որ մեռնի, զարնողը անպատճառ մեռցուի. անիկայ մարդասպան է. արեան վրէժխնդիրը երբոր մարդասպանին հանդիպի, զանիկայ մեռցրնէ ։

Ն Եզ. իա. 14 ։ Բ Օր. ԺԹ. 11 ։

22 Բայց թէ որ յանկարծ ու հառանց թշնամութեան հրէ, կամ թէ առանց նենդութեան անոր

Հեզ. իա. 13 ։

23 վրայ մէկ գործիք մը նետէ, կամ թէ առանց տեսնելու, անոր վրայ քնէ և իցէ մահաւիթ քար մը ձգէ, որ մեռնի, և անիկայ անոր թշնամին չէր, ու անոր չարիքը չէր ու-

24 զեր, Յ ԱՆ ատենը ժողովքը սպաննողին ու արեան վրէժխնդրին մէջտեղը՝ ասօրէնքներուս համեմատ

Յ Հմր 12 ։ Ցես. ի. 6 ։

25 դատաստան ընէ. Եւ ժողովքը պիտի ազատէ սպաննողը արեան վրէժխնդրին ձեռքէն, ու ժողովքը զանիկայ նորէն իր ապաւինած ապաստանի քաղաքը դարձրնէ. ու Ղանիկայ հոն պիտի բնակի, մինչև

Ղ Ցես. ի. 6 ։

26 որ Ծ սուրբ եղող օծուած քահանան մեռնի ։ Բայց թէ որ սպաննողը՝ իր ապաւինած ապաստանի քաղաքին սահմանէն անդամ

Ճ Եզ. ԽԵ. 7 ։ Ղև. գ. 3 ։ իա. 10 ։

27 մը դուրս ելլէ, Ու արեան վրէժխնդիրը՝ զանիկայ իր ապաստանի քաղաքին սահմանէն դուրս դտնէ, և արեան վրէժխնդիրը սպաննողը մեռցրնելու ըլլայ, մահապարտ

28 չեպուի. Քանզի անիկայ իր ապաստանի քաղաքը նստելու էր, մինչև որ քահանայապետը մեռնէր. բայց քահանայապետին մեռնելէն ետքը՝ սպաննողը իր կալուածքին

Ո Գլ. ԽԵ. 11 ։

29 երկիրը դառնայ ։ Ասոնք Ո ձեզի

դատաստանի կանոններ ըլլան ձեր ազգերուն մէջ — ձեր բոլոր բնակութեանցը մէջ ։
30 Ո՛վ որ մարդ կը մեռցընէ , ըստ պաննողը ։ վկաներուն բերնովը մեռցուի . բայց մարդ մը մեռցընելու համար , մէկ վկային վկայութիւնը չըլլայ ։
31 Եւ մահապարտ սպաննողին կենացը համար փրկանք չառնէք . քանզի անիկայ անպատճառ մեռցուելու է ։
32 Ու ապաստանի քաղաքը փախչողին համար փրկանք չառնէք , որպէս զի անիկայ իր քաղաքը դառնայ նստի՝ քահանային մահէն առաջ ։ Ուստի ձեր բնակած երկիրը չպղծէք . քանզի արիւնը կը պղծէ երկիրը . ու անոր մէջը թափուած արիւնին համար՝ երկրին քաւութիւն չըլլար , բայց եթէ անիկայ թափողին արիւնովը ։
34 Նովը ։ Ուրեմն ձեր բնակած երկիրը չպղծէք , որուն մէջտեղը ես պիտի բնակիմ . քանզի ես Տէրս կը բնակիմ Իսրայէլի որդւոց մէջը ։

ԳԼ · Լ.Զ

1 Ժառանգութիւն ունեցող աղջիկը՝ 5 իր ցեղէն եղող մէկու մը հետ պիտի կարգուէր , 7 որ չըլլայ թէ ժառանգութիւնը ան ցեղէն վերնայ ։ 10 Սալպաադին աղջիկները՝ իրենց հօրեղբօրորդւոցը հետ կ'ամուսնանան ։

1 Ու Յովսեփի որդւոցը տոհմերէն՝ Մանասէի որդւոյն Մաքիրի որդւոյն Գաղաադին որդւոցը տոհմին իշխանները մօտեցան , ու Մովսէսին առջեւը՝ և Իսրայէլի որդւոցը նահապետութեանց իշխանները ։
2 Ներուն առջեւը խօսեցան , Ու ըսին . Տէրը մեր տիրոջը հրամայեց , որ երկիրը Իսրայէլի որդւոցը վիճակով ժառանգութիւն տայ . ու Տէրը մեր տիրոջը հրամայեց , որ մեր եղբօրը Սալպաադին ժառանգութիւնը՝ անոր աղջիկներուն տայ .
3 Արդ՝ թէ որ անոնք Իսրայէլի որդւոց մէկ ցեղի մը որդւոցը կնիկ ըլլան , անոնց ժառանգութիւնը մեր հայրերուն ժառանգութենէն պիտի վերնայ . ու որ ցեղը մարդոց որ ինչ ըլլան , ան ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի , ու մեր ժառանգութեանը վիճակ
4 կէն պիտի վերնայ ։ Եւ Իսրայէլի որդւոցը Յոբելեան տարին , անոնց ժառանգութիւնը՝ իրենց հարիւներուն ցեղին ժառանգութեանը պիտի խառնուի . ու անոնց ժառանգութիւնը՝ մեր հայրերուն ցեղին ժառանգութենէն պիտի վերնայ ։
5 Եւ Մովսէս՝ Տէրոջը հրամանաւը Իսրայէլի որդւոցը պատուիրեց ու ըսաւ . Յովսեփի որդւոց ցեղը ճիշտակ կը խօսի ։ Սալպաադին աղջիկներուն վրայով Տէրոջը հրամայած ու ըսած խօսքը աս է . Անոնք՝ որոնց որ կը հաճին , թող անոնց կնիկ ըլլան , Միայն թէ իրենց հօրը ցեղին եղողներուն կնիկ ըլլան .
7 Որպէս զի Իսրայէլի որդւոցը ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի . քանզի Իսրայէլի որդւոցը ամէնքն ալ՝ իրենց հայրերուն ցեղին ժառանգութեանը պիտի յարիմ
8 րին ։ Եւ ամէն աղջիկ՝ որ Իսրայէլի որդւոցը ցեղերուն մէջ՝ մէկ կալուածքի մը ժառանգ կ'ըլլայ , իր հօրը ցեղէն եղող մէկու մը կնիկ ըլլայ , որ Իսրայէլի որդւոցը ամէն մէկը իր հայրերուն ժառանգութիւնը ժառանգէ .
9 Եւ ժառանգութիւնը՝ մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի . բայց Իսրայէլի որդւոցը ցեղերուն ամէն մէկը իր ժառանգութեանը յարի ։
10 Եւ Տէրը Մովսէսին ինչպէս որ հրամայեց , Սալպաադին աղջիկները
11 անանկ ըրին ։ Քանզի Սալպաադին աղջիկները՝ Մաալան , Թերսան , Եգդան , Մեղքան ու Նուան՝ իրենց հօրեղբօրորդւոցը հետ կարգուեցան ։
12 Ու Յովսեփեան Մանասէին որդւոցը տոհմերէն եղողներու կնիկ եղան . ու անոնց ժառանգութիւնը՝ իրենց հօրը ցեղին և ազգատոհմին մէջ մնաց ։
13 Ասոնք են ան պատուիրանքները ու դատաստանները , որ Տէրը Մովաբի դաշտերուն մէջ՝ Երիքովի դէմ Յորդանանու մօտ՝ Մովսէսին ձեռքովը Իսրայէլի որդւոցը պատուիրեց ։

Ն · ք · գԹ · 1451

յր Օր · ժէ · 6 ։ ժԹ · 15 ։ Մատ · ժը · 16 ։ ր Կոր · ժգ · 1 ։ Եբր · ժ · 28 ։

Ն Սաղ · ճգ · 38 ։ Մխ · գ · 11 ։

Ղ Նե · թ · 6 ։

Ղ Ա · ժը · 25 ։ ր Օր · իա · 23 ։

Ղ Եզ · ւԹ · 45 · 46 ։

— Գլ · իգ · 29 ։

Բ Գլ · իգ · 55 ։ լգ · 54 ։ Ցես · ժէ · 3 ։

Է Գլ · իէ · 1 · 7 ։ Ցես · ժէ · 3 , 4 ։

Ն · ք · գԹ · 1451

Գ Ղ · իե , 10 ։

Ե Գլ · իէ · 7 ։

Ղ Ժ · 12 ։

Ե գ Թագ · իա · 3 ։

Ը Մն · իգ · 22 ։

Բ Գլ · իէ · 1 ։

Ժ Գլ · իգ · 3 ։ լգ · 50 ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ն · Ք · Զ · 1451

1 Քառասներորդ տարւոյն վերջը՝ Մովսէս Իսրայէլացւոց խօսելով՝ համառօտութեամբ կը պատմէ 6 Աստուծոյ խոստմունքը, 13 իշխաններ կարգելը, 19 երկիրը լրտեսելու համար մարդ խրկելը, 34 անոնց անհաւատութեանը պատճառով Աստուծոյ բարկութիւնը, 41 և անոնց անհնազանդութիւնը։

1 Ա՛սոնք են ան խօսքերը՝ որ Մովսէս բոլոր Իսրայէլին զրուցեց՝ Յորդանանու ասդիի կողմը՝ անապատին մէջ՝ Սուփին դիմացի դաշտը՝ Փառանի, Տոփելի, Ղոբանի, Ասերովթի ու Տիզահապի մէջտեղն

– Ցես · Թ · 1 · 10 · Իր · 4 · 7 ·

2 է (Քորեբէն Բմինչև Կադէս բառնեայ՝ տասնումէկ օր է՝ Սէիր

Բ Թու · Ժգ · 27 · Գլ · Թ · 23 ·

3 լեռանը ճամբայով։) Արդ՝ Էքառասներորդ տարին մեռասաներորդ ամսուն առաջին օրը՝ Մովսէս Իսրայէլի որդւոցը զրուցեց ինչ որ Տէրը անոր պատուիրեր էր անոնց

Դ Թու · Իա · 24 · 33 ·

4 համար, Տ Եսեբոնի մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորը, և Աստարովթի ու Էդրայիի մէջ բնակող Բասանի Ովգ թագաւորը

Ե Թու · Իա · 33 · Ցես · Ժգ · 12 ·

5 զարնելէն ետքը. Յորդանանու ասդիի կողմը Մովաբի երկրին մէջ՝ Մովսէս սկսաւ աս օրէնքը յայտնել, բսելով.

Զ Եվ · գ · 1 ·

6 Մեր Տէր Աստուածը՝ Էքորեբի վրայ մեզի խօսեցաւ՝ ու բսաւ. Աս

Է Ցես Եվ · Ժթ · 1 · Թու · Ժ · 11 ·

7 լեռը կենալնիդ Բհերիք է. Դարձէք՝ չուեցէք, ու գացէք Ամորհացւոց լեռը, և անոր ամէն շրջակայ տեղերը, դաշտերը, լեռները, ու հովիտները, և հարաւային կողմը, ու ծովեզերքը, Քանանացւոց երկիրը, ու Լիբանանը, մինչև մեծ գետը՝ Ը

Ը Ծն · Ժբ · 7 · Ժե · 18 · Ժէ · 7 · 8 · Իզ · 4 · Իբ · 13 ·

8 Եփրատ գետն է։ Ահա ան երկիրը ձեր առջևը դրի. գացէք ու ժառանգեցէք ան երկիրը, որ Տէրը ձեր Հայրերուն՝ Աբրահամին՝ Իսահակին ու Յակոբին երդում ըրաւ որ տայ անոնց՝ ու անոնցմէ ետքը անոնց զաւակներուն։

Թ Ել · Ժբ · 18 · Թու · Ժա · 14 ·

9 Եւ Բան առեր ես ձեզի խօսեցայ՝ ու բսի. Ես մինակ չեմ կրնար ձեզ

Ժ Ծն · Ժե · 5 · Գլ · Ժ · 22 · Իբ · 62 · Բ Ընթագ · Իզ · 3 ·

10 տանիլ. Ձեր Տէր Աստուածը ձեզ շատցուց, և ահա Բդուք այսօր երկինքի աստղերուն չափ շատ էք։

Ժա Ծն · Ժե · 5 · Իբ · 17 · Իզ · 4 · Եվ · Լբ · 13 ·

11 Ձեր Հայրերուն Տէր Աստուածը՝ ձեր եղածէն հազարապատիկ աւելցրնէ ձեզ, ու Եձեզի բսածին պէս

Ժբ Ծն · Ժե · 5 · Իբ · 17 · Իզ · 4 · Եվ · Լբ · 13 ·

12 ձեզ օրհնէ։ Բես մինակ ի՞նչպէս

Ժգ Ընթագ · Իզ · 8 · 9 ·

կրնամ՝ ձեր նեղութիւնը՝ ձեր բեռը ու հակառակութիւնը կրել։

Ն · Ք · Զ · 1451

13 Բ Դուք ձեր ցեղերէն իմաստուն ու հանճարեղ և անուանի մարդիկներ տուէք, ու ես անոնք ձեր վրայ իշխաններ կարգեցի։

Բ Ցես Եվ · Ժբ · 21 · Թու · Ժա · 16 · 17 ·

14 Եվ դուք ինծի պատասխան տուիք, ու բսիք թէ՝ Ան բսած խօսքդ ընելը աղէկ է։

15 Ուստի ես ձեր ցեղերուն երևելիները՝ իմաստուն ու անուանի մարդիկները առի, և զանոնք ձեր վրայ իշխաններ կարգեցի, Ձ՝ հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ, տասնապետներ, ու ոստիկաններ՝

Ել · Ժբ · 25 ·

16 Եւ անատեն ձեր դատաւորներուն պատուիրեցի՝ բսելով. Ձեր եղբայրներուն դատերը մտիկ ըրէք, ու ամէն մարդուն դատը՝ թէ իր հեղբօրը հետ ըլլայ և թէ օտարականի հետ, Ղարգարութեամբ դատեցէք. Դատաստանի մէջ աչառութիւն չընէք. պզտիկին՝ մեծի պէս մտիկ ընէք, բնաւ մարդու մը երեսէ չքաշուիք. քանզի Ձդատաստանը Աստուծոյ է. ու ձեզի դժուար երևցած դատը Ինծի ներկայացուցէք, որ անիկայ մտիկ ընեմ։

17

Ղ Ղեւ · Ժբ · 22 · Ն Գլ · Ժգ · 18 · Ցես · Է · 24 ·

18 Եւ ան ատեն ձեր ամէն ընելու բաները ձեզի պատուիրեցի։

Ղ Ել · Ժբ · 22 · 26 ·

19 Ետքը Քորեբէն չուեցինք. ու ինչպես որ մեր Տէր Աստուածը մեզի պատուիրեր էր, Ամորհացւոց լեռանը ճամբովը՝ ան ձեր տեսած բոլոր Ամեծ ու ահագին անապատէն անցանք, ու Մինչև Կադէս բառնեայ եկանք։ Եւ ձեզի բսի. Դուք

Ա Թու · Ժ · 12 · Գլ · Բ · 15 · Երեմ · Բ · 6 ·

20 Ամորհացւոց լեռը եկաք, որն որ մեր Տէր Աստուածը մեզի կու տայ։

Ն Թու · Ժգ · 27 ·

21 Նայէ, քու Տէր Աստուածդ երկիրը քու առջևդ դրաւ. Ելի՛ ժառանգէ՝ Ինչպէս որ քու Հայրերուդ Տէր Աստուածը քեզի բսաւ. Մի՛ վախնար ու մի՛ զարհուրիր։

Ե Ցես · Ա · 9 ·

22 Եւ դուք ամէնդ իմ քովս եկաք, ու ինծի բսիք. Մեզմէ առաջ մարդիկներ խրկենք, որ երկիրը լրտեսեն մեզի համար, ու մեզի դան պատմեն՝ թէ ինչ ճամբով հոն պիտի ելլենք, ու ինչ քաղաքներու

Ա Թու · Ժգ · 4 ·

23 մէջ պիտի մտնենք։ Եւ աս խօսքը ինծի հաճոյ թուեցաւ, Ձեզմէ

1490

տասուերկու մարդ առի , ամէն մէկ
24 ցեղէն մէյմէկ մարդ : Եւ Նանոնք գացին՝ լեռը ելան , ու մինչև Քադէշ հասան , ու ան երկիրը
25 լրտեսեցին : Եւ ան երկրին պտուղէն ձեռքերնին առնելով՝ մեզի բերին , ու մեզի զրուցեցին ըսելով . Աղէկ է ան երկիրը՝ որ մեր Տէր
26 Աստուածը մեզի կու տայ : Բայց դուք չուզեցիք ելլել , ու ձեր Տէր Աստուծոյն հրամանին դէմ դրիք .
27 Եւ ձեր վրաններուն մէջ տրտնջելով՝ ըսիք . Տէրը մեզատելուն համար՝ Եգիպտոսի երկրէն մեզ դուրս հանեց , որ մեզ Ամորհացւոց ձեռքը մատնէ , ու մեզ կորսընչը-
28 նէ : Ո՞ւր պիտի ելլենք . մեր եղբայրները մեր սիրտերը թուլցուցին , որովհետև ըսին . Ազգը մեզմէ մեծ ու բարձրահասակ է . քաղաքները մեծ , ու մինչև երկինքը պարսպաւոր են . ու հոն նաև
29 Ենակին որդիքը տեսանք : Եւ ես ձեզի ըսի . Մի զարհուրիք , ու ա-
30 նոնցմէ մի՛ վախնաք . Ձեր Տէր Աստուածը՝ որ ձեր առջևէն կ'երթայ , անիկայ ձեզի համար պիտի պատերազմի , ինչպէս որ Եգիպտոսի մէջ ձեր աչքերուն առջևը ձե-
31 զի ըրաւ : Ու անապատին մէջն ալ տեսար որ , ինչպէս մարդ մը իր զաւակը կը տանի , քու Տէր Աստուածդ ալ՝ քու բոլոր քալած ճամբաներուդ մէջը մինչև ասդ տեղ
32 գալդ քեզ անանկ տարաւ : Եւ ասով ալ ձեր Տէր Աստուածոյն չհա-
33 ւատացիք , որ անիկայ ճամբուն մէջ ձեր առջևէն կ'երթար՝ ձեզի իջևանելու տեղ փնտռելու համար , գիշերը կրակի մէջ՝ երթալու ճամբանիդ ձեզի ցուցընելով , ու ցո-
34 րեկն ալ ամպի մէջ : Եւ Տէրը ձեր խօսքերուն ձայնը լսելով՝ բարկացաւ , ու երդում ընելով՝ ըսաւ .
35 Ան մարդիկներէն՝ ասանօրէն ազգէն բնաւ մարդ մը պիտի չտեսնէ ան բարի երկիրը՝ որն որ ձեր հայրերուն տալու երդում ըրի .
36 բայց միայն Յեփոնէին որդին Քաղէբը պիտի տեսնէ ան . ու անոր կոխած երկիրը՝ իրեն ու իր որդւոցը պիտի տամ . որովհետև անիկայ կատարելապէս Տէրոջը հետևեցաւ :
37 Ձեզի համար Տէրը ինծի ալ բարկացաւ՝ ու ըսաւ . Դուն ալ
38 հոն պիտի չմտնես . Նաւէի որդին Յեսուն՝ անիկայ հոն պիտի մտնէ . զօրացուր անիկայ . վասն զի ան էրէլը՝
39 բայէրին : Եւ ան ձեր պզտիկ տղաքը՝ որոնց համար կ'ըսէիք թէ աւար պիտի ըլլան , ու ան ձեր որդիները՝ որ այսօր բաղէկը ու գէշը չեն ճանչնար , անոնք պիտի մտնեն հոն . անոնց պիտի տամ ան
40 էրէլը , ու անոնք պիտի ժառանգեն ան : Բայց դուք ետ դարձէք , ու կարմիր ծովուն ճամբայէն՝ դէպ 'ի անապատը չուեցէք :
41 Ետքը դուք պատասխան տուիք , ու ինծի ըսիք . Մենք Տէրոջը առջևը մեղք գործեցինք . մենք պիտի ելլենք պատերազմինք , ինչպէս որ մեր Տէր Աստուածը մեզի պատուիրեց . ու ամէն մէկերնիդ իր պատերազմական զէնքը առնելով՝ պատրաստութիւն տեսաք՝ լեռը ելլելու :
42 Եւ Տէրը ինծի ըսաւ . Անոնց ըսէ . Մի ելլէք՝ ու մի՛ պատերազմիր . քանզի ես ձեր մէջը չեմ . չըլլայ որ ձեր թշնամիներուն առջևը ջար-
43 դուիք : Ես ալ ձեզի խօսեցայ . բայց դուք մտիկ չըրիք , հապա Տէրոջը հրամանին դէմ դրիք , և էյամառութիւն ընելով՝ լեռը ե-
44 լաք : Ու ան լեռանը վրայ բնակող Ամորհացիները ի մեղուներու պէս ձեր դէմ ելլելով՝ ձեզ հալածեցին , ու Սեիրի մէջ ձեզ զարկին մինչև
45 Հորմա : Եւ դառնալով Տէրոջը առջևը լացիք . սակայն Տէրը ձեր ձայնը չլսեց , ու ձեզի ականջ
46 չդրաւ : Եւ կադեսի մէջ շատ օրեր կեցաք , որչափ օրեր որ հոն կեցաք :

ԳԼ . Բ

1 Մովսէս իր խօսքը շարունակելով՝ կը պատմէ թէ Աստուած ինչպէս արգիլեց Իսրայէլացիները՝ որ Եդոմայեցւոց , 9 Մովաբացւոց , 17 և Ամմոնացւոց հետ պատերազմ չընեն : 24 Ամորհացւոց Սեհոն թագաւորին յաղթութիւն :

1 Ուստի մենք դարձանք ու կարմիր ծովուն ճամբայէն՝ դէպ 'ի անապատը չուեցինք , ինչպէս որ Տէրը ինծի ըսեր էր . ու շատ օրեր Սեիր լեռանը բոլորտիքը պտտեցանք :
2 Յետքը Տէրը ինծի խօսեցաւ՝
3 ու ըսաւ . Դուք հերիք էատ լեռանը բոլորտիքը պտտելնիդ . հիւսիսա-
4 յին կողմը դարձէք : Եւ ժողովուրդին պատուիրէ ու ըսէ . Դուք հիմա Սեիր բնակող ձեր եղբարցը Եսաւի որդւոցը սահմանէն պիտի անցնիք . անոնք ձեզմէ պիտի վախնան , բայց դուք մեծապէս զգուշա-
5 ցէք . Անոնց հետ մի՛ ծեծկռտիք . քանզի ես ձեզի անոնց երկրէն մէկ ոտնաթաթի տեղ մըն ալ տալու չեմ , որովհետև Սեիր լեռը՝ Եսաւին
6 ժառանգութիւն տուեր եմ : Կերակուրը ստակով ծախու առնէք անոնցմէ՝ ու ուտէք , և ջուրն ալ ստակով ծախու առնէք անոնցմէ՝
7 ու խմէք : Քանզի քու Տէր Աստուածդ քու ձեռքիդ ամէն գործքերուն մէջ օրհնեց քեզ . ա-

Ն . ք . գբ . 1451

Ը թագ . է . 15 , 16 ։ Հռով . թ . 11 ։

ե թագ . ժգ . 25 ։

Ն . ք . գբ . 1451

ե թագ . ժգ . 40 ։

* Կ՛ ժողովուրդացաբեր ։ Կ՛ թէ թագաւոր թիւն բրիք

ե թագ . ժգ . 42 ։

ե թագ . ժգ . 44 , 45 ։

ե Սաղ . ճժբ . 12 ։

ե թագ . ժգ . 26 , ըզ ։ ի . 1 , 22 ։ Դատ . ժա . 17 ։

ե թագ . ժգ . 25 ։ ԳԼ . ա . 40 ։

բ Ես . հմգ . 7 , 14 ։

է թագ . ի . 14 , ըզ ։

ը Ես . ի . 8 ։ Ես . իդ . 4 ։

Ն · Ք · ԶԲ · 1451

Նիկայ գիտէ որ դուն աս մեծ անա-
պատին մէջ կը պտըտիս . Էքու Ցէր
Աստուածդ աս քառասուն տարին
քեզի հետ էր , ու բանի մը պակսու-
թիւն չքաշեցիր ։
8 Ղեւտի մենք մեր եղբայրներուն՝
Եսաւի որդւոյը քովէն՝ որոնք Սէիր
կը բնակէին , դաշտի ճամբայէն՝
Ելաթէն ու Գասիոն դաբերէն ան-
ցանք . ու դէպ ի Մովաբի անապատին ճամբայէն անցանք ։
9 Եւ Ցէրը ինծի ըսաւ . Մովաբա-
ցւոց թշնամութիւն մի՛ ըներ , ու
անոնց հետ պատերազմ մի՛ ըներ .
քանզի անոնց երկրէն քեզի ժառան-
գութիւն տալու չեմ . որովհետև
ԸԼրը՝ Ղովտի որդւոյը ժառան-
գութիւն տուի ։ (Ըն տեղը առա-
ջուց Էմիմները կը բնակէին , որոնք
մեծ ու շատոր , ու Ենակիմներուն
պէս երկայնահասակ ազգ մըն էին .
11 Անոնք ալ Ենակիմներուն պէս հսկա-
ներ կը սեպուէին . ու Մովաբացիք
12 անոնց Էմիմ կը կանչէին ։ Եւ
Սէիրը՝ առաջուց Հուռեցիք կը
բնակէին . բայց Եսաւի որդիքը
զանոնք վռնտելով՝ ու իրենց առ-
ջևէն զանոնք ջարդելով՝ անոնց
տեղը բնակեցան . ինչպէս որ Իսրա-
յէլացիք երթին իրենց ժառանգու-
թեանը երկրին , որն որ Ցէրը ա-
13 նոնց տուաւ ։) Հիմա ելէք Զա-
րեդ ձորէն անցէք . ու մենք Զարեդ
ձորէն անցանք ։
14 Մեր պտըտած օրերը՝ Կադէս
բառնեայէն Էլէվ մինչև Զարեդ
ձորէն անցնելնիս՝ երեսունուութը
տարի եղաւ . մինչև որ բանակին
մէջէն պատերազմող մարդոց ան
բոլոր ազգը հատաւ , ինչպէս որ
15 Ցէրը անոնց երդումը բրեր էր ։ Եւ
զանոնք բանակին մէջէն բնաջինջ
ընելու համար՝ Ցէրոջը ձեռքն ալ
անոնց վրայ էր , մինչև որ անոնք
16 հատան ։ Ու երբոր բոլոր պատե-
րազմող մարդիկները ժողովուրդին
17 մէջէն մեռան ու հատան , Ցէրը ինծի
18 խօսեցաւ՝ ըսելով . Դուն այսօր Մո-
վաբին սահմանը եղած Արէն պիտի
19 անցնիս . Ու Ամմոնի որդւոյը սահ-
մանին պիտի մօտենաս . անոնց
թշնամութիւն մի՛ ըներ , և անոնց
հետ մի՛ ճեծկուիր . քանզի Ամմոնի
որդւոյը երկրէն քեզի ժառանգու-
թիւն տալու չեմ . որովհետև անի-
կայ Ղովտի որդւոյը ժառանգու-
20 թիւն տուի ։ (Ըն ալ հսկաներու
երկիր կը սեպուէր . առաջուց ան
տեղը հսկաներ կը բնակէին . ու
Ամմոնացիք անոնց Զամզումիմ կը
21 կանչէին , Որոնք Ենակիմներուն
պէս մեծ ու շատոր և երկայնա-
հասակ ազգ մըն էին . բայց Ցէրը
զանոնք բնաջինջ ըրաւ անոնց առ-
ջևէն , որ վռնտեցին զանոնք , և
22 անոնց տեղը բնակեցան . Ինչպէս
որ Սէիր բնակող Եսաւի որդւոյը
համար՝ Լ ըրաւ , երբոր Հուռեցի-
ները բնաջինջ ըրաւ անոնց առ-
ջևէն . և զանոնք վռնտեցին , ու
անոնց տեղը բնակեցան մինչև աս
23 օրս ։ Եւ Ազացիները՝ որ մինչև
Գազա գիւղաքաղաքներու մէջ
կը բնակէին , զանոնք ալ Կափթո-
րէն ելլող Կափթորացիք ջարդե-
ցին , ու անոնց տեղը բնակեցան ։)
24 Ելէք , չուեցէք , ու Ղառնոն ձո-
րէն անցէք . ահա Եսբոնի թա-
գաւորը՝ Ամորհացի Սեհոնը ու ա-
նոր երկիրը քու ձեռքդ տուի .
սկսէ՝ Նիկայ ժառանգելու , ու ա-
25 նոր հետ պատերազմ ըրէ ։ Այսօր
քու Նոյնէդ վախը ու սոսկումը՝
բոլոր երկինքին տակը եղող ազգե-
րուն վրայ պիտի սկսիմ դնել , ա-
նանկ որ՝ քու համբաւդ լսողները
քու երեսէդ դողան ու տագնա-
պին ։
26 Եւ կադեմոթի անապատէն՝ Ե-
սբոնի Սեհոն թագաւորին խա-
դաղութեան խօսքերով դեսպան-
27 ներ խրկեցի՝ ըսելով . Անցնիմ
քու երկրէդ . մեծ ճամբայէն՝
պիտի երթամ , ոչ աջ կամ ձախ
28 կողմը չեմ խոտորիր ։ Կերակուր
ինծի ստակով ծախէ՝ որ ուտեմ ,
ու ջուրն ալ ինծի ստակով տուր՝
որ խմեմ . Հմայն թէ ոտքերովս
29 անցնիմ . Ինչպէս որ Սէիրը բնա-
կող Եսաւի որդիքը՝ ու Արը բնա-
կող Մովաբացիք ինծի ըրին . մինչև
որ ես Յորդանանէն անցնիմ դէպ ի
ան երկիրը , որն որ մեր Ցէր Ա-
30 տուածը մեզի պիտի տայ ։ Բայց
Եսբոնի Սեհոն թագաւորը չուզեց
որ մենք անկէ անցնինք . ինչու որ
քու Ցէր Աստուածդ՝ անոր հոգին
խստացուցեր էր , ու սիրտը կարծ-
րացուցեր էր , որ զանիկայ քու
ձեռքդ տայ , ինչպէս որ այսօր կը
31 տեսնես ։ Եւ Ցէրը ինծի ըսաւ .
Ահա Սեհոնը ու անոր երկիրը
սկսայ քու ձեռքդ տալու . սկսէ
նուաճելու , որ անոր երկիրը
32 ժառանգես ։ Ուստի Սեհոն՝ ինքը իր բոլոր
ժողովուրդովը՝ Յասսայի մէջ մեր
դէմ ելաւ , որ մեզի հետ պատե-
33 րազմի ։ Եւ մեր Ցէր Աստուածը
զանիկայ մեր ձեռքը մատնեց . ու
մենք անիկայ՝ և անոր որդիքը՝ ու
անոր բոլոր ժողովուրդը զարկինք .
34 Եւ նոյն ատենը անոր բոլոր քա-
ղաքները առինք , ու նուաճ բոլոր քա-
ղաքներուն մէջ եղած էրիկ մար-
դիկները , կնիկները ու տղաքները

Ն · Ք · ԶԲ · 1451

Ն · Ք · ԳԲ · 1451

– ԳԼ · Կ · 2, 26 ։

Բ ԳԼ · Գ · 12։ Դ · 48 ։ Ցես · Ժգ · 9 ։

Է Սաղ · Խդ · 3 ։

Ը Ծն · Լբ · 22 ։ Թուա · իա · 24 ։ ԳԼ · Գ · 16 ։

Ժ Հմր 5 , 9 , 19 ։

– կորսընցուցինք , անոնցմէ մէկ մըն 35 ալ ողջ չթողուցինք · Միայն անասունները՝ ու առած քաղաքներուն 36 աւարները մեզի առինք ։ Բ Ամմոնացոց ձորին եզերքը եղած Արոերէն՝ ու ձորին մէջը եղած քաղաքէն մինչև Գաղաադը՝ բնաւ մեզի դէմ դնող քաղաք մը չեղաւ · Է մեր Տէր Աստուածը ամէնն ալ մեր ձեռքը 37 մատնեց ։ Միայն թէ Ամմոնի որդւոցը երկրին , ու բոլոր Ը Ցաբոկ ձորին կողմերուն , և լեռնային քաղաքներուն , ու Թ մեր Տէր Աստուծոյն բոլոր մեզի արգիլած տեղերուն չմօտեցար ։

ԳԼ · Գ

1 Մովսէս կը պատմէ Բասանի Ովգ թագաւորին յաղթութիւնը ։ 11 անոր մահիճին մեծութիւնը ։ 12 Սեհոնին ու Ովգին երկիրները երկու ու կէս ցեղերուն տրուիլը ։ 23 և թէ ինքը ի՛նչպէս քանանու երկիրը մտնելու արտօնութիւն խնդրեր էր Աստուծմէ ։ 26 և թէ Տէրը հրամայեր էր որ միայն Հեսուէն տեսնէ ։

1 Լ՚Նկէ դարձանք՝ Բասանի ճամբան ելանք · ու – Բասանի Ովգ թագաւորը ինքը իր բոլոր ժողովուրդովը՝ Բ Եդրայիի մէջ մեր դէմը ելաւ պատերազմելու համար ։ 2 Եւ Տէրը ինծի ըսաւ · Ընկէ՛ մի՛ վախնար · վասն զի անիկայ ու անոր բոլոր ժողովուրդը ու երկիրը քու ձեռքդ կու տամ · ու անոր ալ՝ Եսբոնի մէջ բնակող Ամորհացւոց Սեհոն թագաւորին ըրածիդ 3 պէս ըրէ ։ Եւ մեր Տէր Աստուածը՝ Բասանի Ովգ թագաւորն ալ ու անոր բոլոր ժողովուրդը մեր ձեռքը տուաւ · Դ և մենք անանկ ջարդեցինք * զանոնք , որ անոնցմէ* 4 մէկ մըն ալ ողջ չմնաց ։ Եւ նոյն առեն՝ անոր բոլոր քաղաքները առինք · – քաղաք մըն ալ չմնաց , որ անոնցմէ առած չըլլանք · վաթսուն քաղաք՝ Ե՛նէն Բ՚րոլոր Արգովբի գաւառը՝ Բասանի մէջ 5 Ովգին թագաւորութիւնը ։ Անոնց ամէնն ալ՝ բարձր պարիսպներով , դռներով ու դռնափակներով ամրացած քաղաքներ էին · անպատրիպ քաղաքներէն Ի զատ՝ որուն 6 խիստ շատ էին ։ Եւ զանոնք բնաջինջ ըրինք , ինչպէս որ Եսբոնի Սեհոն թագաւորը ըրինք , ամէն քաղաքներու մէջ՝ մարդիկները , կիներն ու տղաքները կորսընցընինք 7 լով · Սակայն բոլոր անասունները , ու քաղաքներուն աւարները մեզի 8 առինք ։ Եւ ան նոյն ժամանակին՝ Յորդանանու անդիի կողմը եղող Ամորհացւոց երկու թագաւորներուն ձեռքէն առինք երկիրը՝ Արնոն ձորէն մինչև Հերմոն լեռը ։ 9 Սիդոնացիք Է Հերմոնին՝ Սարիոն կ՚ըսէին · բայց Ամորհացիք զանիկայ 10 Սանիր կը կոչէին ։ Բ Բոլոր դաշտի քաղաքները՝ բոլոր Գաղաադը՝ ու Բ բոլոր Բասանը՝ մինչև Սելքա ու Եդրայի՝ Բասանի մէջ եղած Ովգին թագաւորութեանը քաղաքները 11 – Քանզի Է հսկաներուն Ժ մնացորդէն՝ Լ միայն Բասանի Ովգ թագաւորը մնացեր էր · ահա անոր մահիճը՝ որ երկաթէ մահիճ մըն է , Ի Ամմոնի որդւոցը Րաբբային մէջը Ձ – Է · երկայնութիւնը ինը կանգուն է , ու լայնութիւնը չորս կանգուն է , մարդու կանգունով ։ 12 Եւ նոյն ժամանակին մէջ՝ աս մեր առած երկիրը՝ Բ Արնոն ձորին վրայ եղող Արոերէն մինչև Գաղաադ լեռանը կէսը՝ իր քաղաքներովը՝ Ռուբենեանց ու Գադեանց 13 տուի · Ո Գաղաադին մնացածը՝ ու բոլոր Բասանը՝ Ա-Ի Ովգին թագաւորութիւնը՝ – բոլոր Արգովբի գաւառը՝ բոլոր Բասանին հետ՝ որ Հսկայից երկիր կ՚ըսուէր , 14 Մանասէի կէս ցեղին տուի ։ Ե-Ն Մանասեան Յայիրը բոլոր Արգովբի գաւառը առաւ՝ Լմինչև Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը , ու Ֆ անոնք իր անունովը մինչև այսօր ‡ Բասան Հաւօթ Յայիր" կոչեց ։ 15 Եւ ես՝ Ա Յայիրը՝ Գաղաադը Մաքիրին տուի ։ 16 Եւ Գաղաադէն մինչև Արնոն ձորը՝ (Ա-Ի ձորին մէջտեղը՝ որ սահմանն է ,) ու մինչև Ա Ամմոնի որդւոցը սահմանը Ելբ Յաբոկ ձորը՝ Ռուբենեանց Ն ու 17 Գադեանց տուի , նաև դաշտը Յորդանանու սահմանովը՝ Քենեռեթէն – մինչև դաշտային ծովը՝ Ա-Ի Լմինչև Աղի ծովը , արևելեան կողմը եղած Ասեդովթ փասգային տակը ։

18 Եւ ան առեն ձեզի պատուիրեցի , ու ըսի · Ձեր Տէր Աստուածը աս երկիրը ձեզի ժառանգութիւն տուաւ · – ո զինուոր ընդ ամէնդ որ կտրիճներ էք , զէնքերնիդ առէք , ու Իսրայէլի որդւոցը՝ ձեր եղբայրը 19 ներուն առջևը անցէք · Բայց ձեր կիներնիդ՝ ձեր որդիները ու ձեր անասուններդ , (որովհետև ձեր անասուններուն շատ ըլլալը գիտեմ ,) թող մնան ձեր քաղաքներուն մէջ՝ 20 որոնք ես ձեզի տուի , մինչև որ Տէրը ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգստացընէ , ու մինչև որ անոնք ալ ժառանգեն ան երկիրը՝ որն որ ձեր Տէր Աստուածը Յորդանանու անդիի կողմը անոնց պիտի տայ · ու ետքը Ձ ձեզմէ ամէն մէկը դառնայ իր ժառանգութեանը՝ որն որ ես ձեզի տուի ։

21 Ան առեն – Յեսուին պատուի-

Ն · Ք · ԳԲ · 1451

Ը Ա Մն · ա · 23 ։

Ի ԳԼ · Գ · 49 ։ Ա Ցես · Ժբ · 5 ։ Ժգ · 11 ։

Ձ Ծն · Ժգ · 5 ։

Ի Կ՛ – բազմութեանէն՝ Լ Ամով · բ · 9 ։

Ղ Բ թագ · Ժբ · 26 ։ Ե բեմ · խթ · 2 ։ Եզեկ · իա · 20 ։

Ա ԳԼ · Բ · 36 ։ Ցես · Ժբ · 2 ։

Ձ Թուա · լբ · 33 ։ Ցես · Ժբ · 6 ։ Ժգ · 8 , ԼԲ ։

Հ Ցես · Ժգ · 29 ։

Յ Ա Մն · բ · 22 ։

Ղ Ցես · Ժգ · 13 ։ Բ թագ · գ · 3 ։ Ժ · 6 ։

Ֆ Թուա · լբ · 41 ։

‡ Յ՛ Յայիրի գիւղաքաղաքներուն Բասանը

Ի Թուա · լբ · 39 ։

Յ Թուա · իա · 24 ։ Ցես · Ժբ · 2 ։

Ն Բ թագ · իդ · 5 ։

Ղ Թուա · Լդ · 11 ։

– ԳԼ · Գ · 49 ։ Թուա · Լդ · 11 ։ Ցես · Ժբ · 3 ։

Ղ Ծն · Ժգ · 3 ։

Ղ Թուա · լբ · 20 , ԼԲ ։

Ղ Ցես · իբ · 4 ։

– Թուա · իէ · 18 ։

Ն·Ք·Ղ·Ե· 1451

րեցի՝ բանելով . Քու աչքերդ տեսան
ինչ որ ձեր Տէր Աստուածը աս եր-
կու թագաւորներուն բրաւ . ա-
նանկ ես պիտի ընե Տէրը ան ամէն
թագաւորութիւններուն , * որոնց
22 վրայ դուն պիտի երթաս" . Ա-
նոնցմէ չվախնաք . վասն զի "ձեր
Տէր Աստուածը ինքը կը պատե-
23 րազմի ձեզի համար : Եւ Էան ա-
տենը Տէրոջը աղաչեցի , ու բսի .
24 Ով Տէր Եհովայ , դուն սկսեցիր
Ր քու մեծութիւնդ ու քու զօրա-
ւոր ձեռքդ քու ծառայիդ ցուցը-
նելու . վասն զի Երկինքին մէջ
կամ երկրիս վրայ ո՛վ է ան աս-
տուածը , որ քու գործքերուդ ու
քու զօրութեանդ պէս Ֆ*ը՛ Հ ը-
25 նելու կարող ըլլայ : Շնորհք ըրէ
որ անցնիմ , ու Ց տեսնամ Յորդանանու մէ-
կալ կողմի բարի երկիրը , ան բարի
լեռը ու Լիբանանը տեսնեմ :
26 Բայց Տէրը "ձեր պատճառովը ին-
ձի սրդողելով՝ իմ խնդիրքս չըն-
դունեց . և Տէրը ինձի բսաւ . Ալ
հերիք է քեզի . մէյմըն ալատ բա-
27 նը ինձի չզրուցես . Ֆասգայիին
գագաթը ելիր , ու դէպ 'ի արև-
մուտք , հիւսիս , հարաւ ու արևելք
աչքերդ վերցուր , ու քու աչքերովդ
դիտէ . քանզի դուն ան Յորդա-
28 նանէն պիտի չանցնիս : Ու Ցե-
սուէն պատուէր տալով՝ անիկայ
զօրացուր , ու անոր սիրտ տուր .
քանզի անիկայ պիտի անցնի աս
ժողովուրդին առջևը , և քու դի-
տելու երկիրդ անիկայ պիտի ժա-
29 ռանգեցընէ անոնց : Ուստի մենք
Ց հովիտին մէջը՝ Բեթփեգովրի դի-
մացը նստանք :

ԳԼ · Դ

1 Մովսես Աստուծոյ հնազանդելու կը յորդորէ Իսրայէլացիները · 41 ու Յորդանանու ադիի կողմը իրեք ապաստանի քաղաք կը զատէ :

1 Ա՛ւ հիմա ով Իսրայէլ՝ "իմ քեզի
սորվեցուցած կանոններս ու դա-
տաստաններս մտիկ ըրէ , որ ընե-
լով՝ ողջ մնաք , ու մտնէք ժա-
ռանգէք ան երկիրը՝ որն որ ձեր
2 հայրերուն Տէր Աստուածը ձեզի կու-
տայ : Ֆ Ձեզի պատուիրած խօսքիս
վրայ բան մը չաւելցընէք , ու անկէ
բան մը չպակսեցընէք , այլ ձեր
Տէր Աստուծոյն պատուիրանքները
պահէք , որոնք ես ձեզի կը պա-
3 տուիրեմ : Ձեր աչքերը տեսան
ինչ որ Տէրը Ֆ Բէլփեգովրին բրաւ .
վասն զի քու Տէր Աստուածդ՝ Բել-
փեգովրին ետևէն գացող բոլոր
մարդիկները ձեր մէջէն կորսընցուց :
4 Բայց դուք որ ձեր Տէր Աստուծոյն
յարեցաք , ամէնդդ այսօր ողջ էք :
5 Ահա ձեզի կանոններ ու դատաս-

տաններ սորվեցուցի , ինչպէս որ իմ
Տէր Աստուածս ինծի պատուիրեց ,
որ զանոնք 'ի գործ դնէք ան երկրին
մէջ , ուր որ պիտի մտնէք ժառան-
6 գելու համար : Ուստի դուք ՚ոնոր
պահեցէք ու ըրէք . վասն զի "ձեր
իմաստութիւնը ու հանճարը աս
պիտի ըլլայ ազգաց առջևը , որոնք
աս բոլոր կանոնները լսելով՝ պիտի
ըսեն . Իրաւցընէ աս մեծ ազգը՝
իմաստուն ու հանճարեղ ժողովուրդ
7 մըն է : Քանզի Էո՛ր ազգը ՚ոյնչափ
մեծ է , որ Ըիր աստուածները իրեն
մօտ ըլլան , ինչպէս որ մեր Եհովայ
Աստուածը ինչ ժամ է ամէն բանի
8 մէջ՝ որ անկէ կը խնդրենք : Ու
Էո՛ր ազգը այնչափ մեծ է՝ որ իմ
այսօր ձեր առջևը դրած աս բոլոր
օրէնքիս նման՝ արդար կանոններ ու
9 դատաստաններ ունենայ : Միայն
քեզ ազէկ նայէ , ու քու Էհոգւոյդ
շատ զգուշութիւն ըրէ , որ Ըչըլլայ
թէ աչքերուդ տեսած բաները մոռ-
նաս , և չըլլայ թէ՝ կենացդ բոլոր
օրերուն մէջ քու սրտէդ ելլեն . այլ
Բ անոնք քու որդիներուդ , ու որ-
դւոյդ որդիներուն սորվեցընես :
10 Ֆ Ան օրը՝ որ դուն Քորեբը քու Տէր
Աստուծոյդ առջևը կեցեր էիր , Տէ-
րը ինծի բսաւ . Ժողովուրդը ինծի
ժողվէ , ու իմ խօսքերս լսել պիտի
տամ անոնց . որպէս զի սորվին
ինծմէ վախնալը՝ որչափ օրեր որ
երկրի վրայ պիտի ապրին , ու իրենց
11 որդիներուն ՚ոլ սորվեցընեն : Եւ
դուք մօտենալով՝ լեռանը տակը
կայնեցաք . ու Էլեռը՝ խաւարով ,
ամպով ու մառախուղով Ֆ՚ոչ
Ֆ՚ոո՚ , Ֆմինչև երկինքը" կրակով
12 կր բորբոքէր : Ես Ձեր կրակին
մէջէն ձեզի խօսեցաւ . Էդուք ՚ոնոր
խօսքերուն ձայնը լսեցիք . ու նմա-
նութիւն մը չտեսաք , Ֆ Բայց միայն
13 ձայն լսէիք : Եւ իր ուխտը Ֆտաք
պատուիրանքները ձեզի իմացուց ,
ու պատուիրեց որ անոնք ընէք . և
Ֆզանոնք երկու հատ քարէ տախ-
14 տակներու վրայ գրեց : Եւ Ձան
ատենը Տէրը ինծի պատուիրեց , որ
ձեզի կանոններ ու դատաստաններ
սորվեցընեմ , որ զանոնք 'ի գործ
դնէք ան երկրին մէջ , ուր որ պիտի
մտնէք ժառանգելու համար :
15 Ֆ Ուրեմն ձեր հոգիներուն ազէկ
զգուշութիւն ըրէք . որովհետև ան
օրը՝ որ Տէրը Քորեբ լեռը կրակին
մէջէն ձեզի խօսեցաւ , բնաւ Ֆ՚նմա-
16 նութիւն մը չտեսաք : Ձրլլայ որ
Ֆ անօրինիք՝ ու Ձեզի կուռք մը
Ֆ՚որ և իցէ բանի պատկերը՝ Ըթէ
արուի և թէ էգի նմանութիւնը ,
17 Կ՚ երկրի վրայ եղող անասունի
մը նմանութիւնը , Ֆ՚օդին մէջ

Ն·Ք·Ղ·Ե· 1451

Ե Ցոր · իբ · 28 : Սաղ · ժթ · 7 : ճժա · 10 : Առակ · ա · 7 :
Ը Ելս · ժդ · 11 : Բ Թագ · է · 22 : Սաղ · հա · 19 : Ձգ · 8 : ՚ժթ · 6 : 8 :
Ի Ելս · գ · 8 : ԳԼ · դ · 22 :
Լ Թուա · ի · 12 : իէ · 14 : ԳԼ · ա · 37 : լա · 2 : լբ · 51 : 52 : լդ · 4 : Սաղ · ճգ · 32 :
Խ Թուա · իէ · 12 :
Ծ Թուա · իէ · 18 : 23 : ԳԼ · ա · 38 : լա · 3 : 7 :
Կ ԳԼ · դ · 46 : լդ · 6 :
Հ Ղև · ժթ · 37 : ի · 8 : իբ · 31 : ԳԼ · է · 1 : ը · 1 : Եզկ · ի · 11 : Հոով · ժ · 5 :
Ձ ԳԼ · ժբ · 32 : Ցես · ա · 7 : Առակ · ւ · 6 : ժող · ժբ · 13 : Ցայտ · իբ · 18 : 19 :
Ղ Թուա · իէ · 4 : ըէ : Ցես · իբ · 17 : Սաղ · ճգ · 28 : 29 :

տաններ սորվեցուցի , ինչպէս որ իմ
Տէր Աստուածս ինծի պատուիրեց ,
որ զանոնք 'ի գործ դնէք ան երկրին
մէջ , ուր որ պիտի մտնէք ժառան-
6 գելու համար : Ուստի դուք ՚ոնոր
պահեցէք ու ըրէք . վասն զի "ձեր
իմաստութիւնը ու հանճարը աս
պիտի ըլլայ ազգաց առջևը , որոնք
աս բոլոր կանոնները լսելով՝ պիտի
ըսեն . Իրաւցընէ աս մեծ ազգը՝
իմաստուն ու հանճարեղ ժողովուրդ
7 մըն է : Քանզի Էո՛ր ազգը ՚ոյնչափ
մեծ է , որ Ըիր աստուածները իրեն
մօտ ըլլան , ինչպէս որ մեր Եհովայ
Աստուածը ինչ ժամ է ամէն բանի
8 մէջ՝ որ անկէ կը խնդրենք : Ու
Էո՛ր ազգը այնչափ մեծ է՝ որ իմ
այսօր ձեր առջևը դրած աս բոլոր
օրէնքիս նման՝ արդար կանոններ ու
9 դատաստաններ ունենայ : Միայն
քեզ ազէկ նայէ , ու քու Էհոգւոյդ
շատ զգուշութիւն ըրէ , որ Ըչըլլայ
թէ աչքերուդ տեսած բաները մոռ-
նաս , և չըլլայ թէ՝ կենացդ բոլոր
օրերուն մէջ քու սրտէդ ելլեն . այլ
Բ անոնք քու որդիներուդ , ու որ-
դւոյդ որդիներուն սորվեցընես :
10 Ֆ Ան օրը՝ որ դուն Քորեբը քու Տէր
Աստուծոյդ առջևը կեցեր էիր , Տէ-
րը ինծի բսաւ . Ժողովուրդը ինծի
ժողվէ , ու իմ խօսքերս լսել պիտի
տամ անոնց . որպէս զի սորվին
ինծմէ վախնալը՝ որչափ օրեր որ
երկրի վրայ պիտի ապրին , ու իրենց
11 որդիներուն ՚ոլ սորվեցընեն : Եւ
դուք մօտենալով՝ լեռանը տակը
կայնեցաք . ու Էլեռը՝ խաւարով ,
ամպով ու մառախուղով Ֆ՚ոչ
Ֆ՚ոո՚ , Ֆմինչև երկինքը" կրակով
12 կր բորբոքէր : Ես Ձեր կրակին
մէջէն ձեզի խօսեցաւ . Էդուք ՚ոնոր
խօսքերուն ձայնը լսեցիք . ու նմա-
նութիւն մը չտեսաք , Ֆ Բայց միայն
13 ձայն լսէիք : Եւ իր ուխտը Ֆտաք
պատուիրանքները ձեզի իմացուց ,
ու պատուիրեց որ անոնք ընէք . և
Ֆզանոնք երկու հատ քարէ տախ-
14 տակներու վրայ գրեց : Եւ Ձան
ատենը Տէրը ինծի պատուիրեց , որ
ձեզի կանոններ ու դատաստաններ
սորվեցընեմ , որ զանոնք 'ի գործ
դնէք ան երկրին մէջ , ուր որ պիտի
մտնէք ժառանգելու համար :
15 Ֆ Ուրեմն ձեր հոգիներուն ազէկ
զգուշութիւն ըրէք . որովհետև ան
օրը՝ որ Տէրը Քորեբ լեռը կրակին
մէջէն ձեզի խօսեցաւ , բնաւ Ֆ՚նմա-
16 նութիւն մը չտեսաք : Ձրլլայ որ
Ֆ անօրինիք՝ ու Ձեզի կուռք մը
Ֆ՚որ և իցէ բանի պատկերը՝ Ըթէ
արուի և թէ էգի նմանութիւնը ,
17 Կ՚ երկրի վրայ եղող անասունի
մը նմանութիւնը , Ֆ՚օդին մէջ

Ե Ցոր · իբ · 28 : Սաղ · ժթ · 7 : ճժա · 10 : Առակ · ա · 7 :
Ը Ելս · ժդ · 11 : Բ Թագ · է · 22 : Սաղ · հա · 19 : Ձգ · 8 : ՚ժթ · 6 : 8 :
Ի Ելս · գ · 8 : ԳԼ · դ · 22 :
Լ Թուա · ի · 12 : իէ · 14 : ԳԼ · ա · 37 : լա · 2 : լբ · 51 : 52 : լդ · 4 : Սաղ · ճգ · 32 :
Խ Թուա · իէ · 12 :
Ծ Թուա · իէ · 18 : 23 : ԳԼ · ա · 38 : լա · 3 : 7 :
Կ ԳԼ · դ · 46 : լդ · 6 :
Հ Ղև · ժթ · 37 : ի · 8 : իբ · 31 : ԳԼ · է · 1 : ը · 1 : Եզկ · ի · 11 : Հոով · ժ · 5 :
Ձ ԳԼ · ժբ · 32 : Ցես · ա · 7 : Առակ · ւ · 6 : ժող · ժբ · 13 : Ցայտ · իբ · 18 : 19 :
Ղ Թուա · իէ · 4 : ըէ : Ցես · իբ · 17 : Սաղ · ճգ · 28 : 29 :
Ղ Ելս · իբ · 28 : Սաղ · ժթ · 7 : ճժա · 10 : Առակ · ա · 7 :
Ճ Երթագ · է · 28 :
Մ Ղ Սաղ · խգ · 1 : ճխե · 18 : ճխը · 14 : Ես · ծե · 6 :
Յ Առակ · գ · 23 :
Ն Առակ · գ · 1 : 3 : գ · 21 :
Շ Ծն · ժբ · 19 : ԳԼ · գ · 7 : ժա · 19 : Սաղ · հը · 5 : 6 : Եփս · գ · 4 :
Ո Ելս · ժթ · 9 : 16 : ի · 18 : Երբ · ժբ · 18 : 19 :
Չ Ելս · ժթ · 18 : ԳԼ · է · 23 :
Պ Եբր · մինչև երկինքը կրակին սիրտը
Ջ ԳԼ · է · 4 · 22 :
Ռ Հմր 33 : 36 :
Ս Ելս · ի · 22 : Գ Թագ · ժթ · 12 :
Վ ԳԼ · թ · 9 · 11 :
Տ Ել · լդ · 28 :
Ր Ելս · իդ · 12 : լա · 18 :
Ց Ելս · իա · 1 : ԳԼ · իբ · իդ :
Փ Ցես · իգ · 11 :
Ք Հես · ի · 18 :
Օ Ելս · լբ · 7 :
Ֆ Ելս · ի · 4 : 5 : Հմր 23 : ԳԼ · է · 8 :
ԵՒ Հոով · ա · 23 :

Ն · Ք · ԶԲ · 1451

թռչող թևաւոր թռչունի մը նը-
18 մանութիւնը , կամ երկրի վրայ սո-
ղոսնող սողունի մը նմանութիւնը ,
կամ երկրին տակը՝ ջուրերու մէջ
եղող ձուկի մը նմանութիւնը շի-
19 նէք : Նաև չըլլայ որ՝ աչքերդ
երկինքը վերցընելով , ու արևը
կամ լուսինը կամ աստղերը , ամ-
ենայն երկինքին բոլոր զարդը տեսնելով՝
խաբուիս , ու անոնց երկրպագու-
թիւն ընես , և անոնք պաշտես .
որովհետև քու Տէր Աստուածդ՝
զանոնք բոլոր երկինքին տակը ե-
ղող ազգերուն համար կարգաւորեց :
20 Բայց Տէրը ձեզ առաւ , ու ձեզ
երկաթի հնոցէն՝ եգիպտոսէն
հանեց , որ իրեն սեպհական ժո-
ղովուրդըլլաք , ինչպէս որ այսօր
է՛ : :
21 Եւ Տէրը ձեր պատճառաւը ին-
ծի սրդողելով՝ երդում ըրաւ , որ
Յորդանանէն չանցնիմ , ու չմտնեմ
ան բարի երկիրը՝ որն որ քու Տէր
Աստուածդ քեզի կու տայ ժա-
22 ռանգելու համար : Արդ՝ ես աս
երկրիս մէջ պիտի մեռնիմ , ու
Յորդանանէն պիտի չանցնիմ .
բայց դուք պիտի անցնիք , ու ան
բարի երկիրը պիտի ժառանգէք :
23 Զգույշ կեցիք , չըլլայ որ՝ ձեր Տէր
Աստուծոյն ձեզի հետ ըրած ուխտը
մոռնաք , ու ձեզի կուռք մը՝ ամէն
որ և իցէ բանի մը նմանութիւնը
շինէք , որն որ քու Տէր Աստուածդ
24 քեզի արգիլեց : Քանզի Էքու Տէր
Աստուածդ մաշող կրակ է . անի-
կայ նախանձոտ Աստուած է :
25 Երբոր դուք որդիներ՝ ու որդւոց
որդիներ ծնանելու ըլլաք , և ան
երկրին մէջ շատ ատեն նստելու ըլ-
լաք , ու ան ատենը թէ որ անօրի-
նիք , և կուռք մը կամ որ և իցէ
բանի նմանութիւնը շինէք , ու
ձեր Տէր Աստուածոյն առջևը չա-
րութիւն ընէք՝ ու զանիկայ բար-
26 կացընէք , Ա՛յսօր երկինքը ու
երկիրը ձեզի վկայ կը բռնեմ , որ
դուք անպատճառ շուտով պիտի
կորսուիք ան երկրէն , որն որ Յոր-
դանանէն անցնելով՝ պիտի ժա-
ռանգէք . ան տեղը կեանքերնիդ
երկար պիտի չըլլայ . այլ բոլո-
27 վին բնաջինջ պիտի ըլլաք : Եւ
Տէրը ձեզ ազգերուն մէջը պիտի
իջեցուց. (քանզի իր տունը բեր-
դին պարսպին վրայ էր, ու ինքը
16 պարսպին վրայ կը բնակէր.) Եւ
անոնց ըսաւ. Լեռը գացէք, չըլլայ
որ հալածողները ձեզի հանդիպին,
ու հոն իրեք օր պահուեցէք, մին-
չև որ հալածողները ետ դառ-
նան, անկէ ետև ձեր ճամբան գա-
17 յէք։ Եւ ան մարդիկը անոր ըսին.
Ահա մենք ատ [y]մեզի ընել տուած
երդումէդ [z]ազատ պարտ
18 կ'ըլլանք. [a]Երբոր մենք երկի-
րը մտնենք, ասս կարմիր դերձանէ
չուանը ան պատուհանին վրայ կա-
պես, ուսկից որ մեզ իջեցուցիր.
և քու հայրդ՝ մայրդ՝ եղբայրներդ՝
ու քու հօրդ բոլոր տունը՝ քու-
19 քովդ ասս տանը մէջ ժողվես. Ու
[b]ումեք որ քու տանդ դռնէն
դուրս ելլէ, անոր արիւնը իր գլ-
խուն վրայ ըլլայ. մենք անպարտ
ենք. բայց քու քովդ [c]տանը մէջ
բոլոր եղողներուն թէ որ ձեռք մը
դպչի, [d]անոնց արիւնը մեր գլխուն
20 վրայ ըլլայ։ Եւ թէ որ ասս մեր բա-
նը [e]հետ չյայտնես, ան ատեն
քու մեզի ընել տուած երդումէդ
21 անպարտ կ'ըլլանք։ Ու [f]Ռահաբ ըսաւ.
Ձեր խօսքերուն պէս՝ անանկ թող
ըլլայ. և թողուց զանոնք, ու ա-
նոնք գացին. և ան կարմիր չուանը
պատուհանին վրայ կապեց։
22 Եւ անոնք անկէ լեռնակողմը գա-
ցին, ու հոն իրեք օր նստան, մին-
չև որ հալածողները ետ դարձան.
ու հալածողները զանոնք ամէն
ճամբու մէջ փնտռեցին, բայց
23 չգտան։ Ան ատեն ան երկու մար-
դիկը ետ դառնալով՝ լեռնէն վար
իջան, և անցնելով՝ Նաւէի որդւոյն
Յեսուին գացին, ու իրենց պատա-
հած բոլոր բաները անոր պատմե-
24 ցին. Եւ Յեսուին ըսին. Իրաւ-
[g]Տէրը ան բոլոր երկիրը մեր
ձեռքը տուաւ. ու ան երկրին բո-
լոր բնակիչները մեր երեսէն [h]հալե-
ցան։

Գ Լ · Գ

1 Յեսու Յորդանան կու գայ։ 2 Ոստիկանները կ'իմացընեն ժողովուրդին թէ ինչ կարգով պիտի անցին։ 7 Տէրը կը քաջալերէ Յեսուն. 9 ան ալ կը քաջալերէ ժողովուրդը։ 14 Յորդանանու ջուրերը կը բաժնուին։

Ն · Ք · ԳՓ · 1451

---

a Թուա. իե. 1։
b Մատ. ա. 5։
c Երր. ժա. 31։ Յակ. բ. 25։
d Եբր. պատճան։
e Սազ. ճիե. 1։ Առակ. իա. 30։
f Տես բ Թագ. ժէ. 19, 20։
g Տես Ել. ա. 17։ բ Թագ. ժթ. 19։
h Ելհ. ժե. 15։
i Ել. ժգ. 21։ Գլ. դ. 23։
j Թուա. իա. 24, 34, 35։
k Ել. ժե. 14, 15։
l Գլ. ե. 1։ է. 5։ կա. ժգ. 7։
m Եբր. Հոգի
n Ր Օր. դ. 39։
o Տես ա Թագ. ի. 14, 15, 17։
p Տես ա Տիմ. ե. 8։
q Հմր 18։
r Յես ա. 24։ Մատ. ե. 7։
s Դատ. ա. 24։ Մատ. ե. 7։
t Դատ. թ. 25։
u Տես Ել. իգ. 31։ Գլ. դ. 23։
v Ել. ի. 7։
w Հմր 12։
x Գլ. դ. 23։
y Ել. ժգ. 12։
z Յես. իե. 25։
a Մատ. իե. 25։
b Ել. իգ. 2։ Գլ. դ. 2։ Ես. ա. 1։ Ե. 1։ Ժե. 1։ Ժզ. 1։ Ի. 1։ Ի. 1։ Ի

Ն · ք · ՂՓ · 1451

1 Եւ Յեսու առտուանդ կանուխ ե-
լաւ . և ինքը ու բոլոր Իսրայէլի
որդիքը Սատիմէն չուեցին , ու
մինչև Յորդանան եկան . և անդնա-
2 լէն առաջ հոն իջևան ըրին : Ու
3 իրեք օրէն եղաւ՝ ոստիկանները
րանակին մէջէն անցան . Եւ ժողո-
վուրդին պատուիրելով՝ ըսին .
Երբոր ձեր Տէր Աստուծոյն ուխ-
տին տապանակը տեսնէք , ու
Ղեւտացի քահանաները՝ որ զանիկայ
կը տանին , դուք ալ ձեր տեղերէն
ելէք , ու անոր ետևէն գացէք .
4 Բայց ձեր ու անոր միջտեղը՝ երկու
հազար կանգունի չափ միջոց պիտի
ըլլայ . անոր չմօտենաք , որ երթա-
լու ճամբանիդ գիտնաք . քանզի
ասկէ առաջ աս ճամբայէն անցած
5 չէք : Եւ Յեսու ժողովուրդին ը-
սաւ . Սրբեցէք ձեր անձերը . քան-
զի Տէրը վաղը ձեր մէջը հրաշքներ
6 պիտի ընէ : Անկէ ետև Յեսու քա-
հանաներուն խօսեցաւ՝ ըսելով .
Ուխտին տապանակը վերցուցէք ,
ու ժողովուրդին առջևը անցէք :
Ուստի անոնք ուխտին տապանակը
վերցուցին , ու ժողովուրդին առ-
ջևէն գացին :
7 Եւ Տէրը բսաւ Յեսուին . Այսօր
պիտի սկսիմ բոլոր Իսրայէլին աչ-
քին առջևը քեզ մեծցնելու , որ
գիտնան թէ ինչպէս որ Մովսէսին
հետ էի , քեզի հետ եմ պիտի :
8 Ուխտին տապանակը վերցնող քահանան-
երուն պատուիրելով՝ ըսես . Երբոր
Յորդանանու ջուրին եզերքը հաս-
նիք , Յորդանանու մէջը կայնե-
ցուք :
9 Ու Յեսու Իսրայէլի որդւոցը ը-
սաւ . Հոս մօտեցէք , և ձեր Տէր
Աստուծոյն խօսքերը մտիկ րրէք :
10 Ու Յեսու բսաւ . Ասով պիտի գիտ-
նաք , որ Կենդանի Աստուածը ձեր
մէջն է , ու ձեր առջևէն՝ քանա-
նացիները՝ քետացիները՝ խևացի-
ները՝ փերեզացիները՝ գերգեսա-
ցիները՝ Ամորհացիները ու Յերու-
սաղէմները բոլորովին պիտի վռնդ-
11 ուի . Ահա բոլոր երկրիս Տէրոջը
ուխտին տապանակը ձեր առջևը
պիտի անցնի Յորդանանու մէջ .
12 Եւ հիմա դուք Իսրայէլի ցեղերէն
տասներկու մարդ առէք՝ ամէն
13 ցեղէն մէյմէկ մարդ . Ու երբոր
բոլոր երկրիս Եհովայ Տէրոջը
տապանակը վերցնող քահանայից
ոտքերը Յորդանանու ջուրին մէջը
մտնեն , Յորդանանու ջուրը պիտի
կտրի , ու վերէն իջնող ջուրը
կարկառակոյտի մը պէս պիտի
կայնի :
14 Ու երբոր ժողովուրդը՝ Յորդա-

Ն · ք · ՂՓ · 1451

նանէն անցնելու համար իրենց վը-
րանէրէն չուեցին , ուխտին տա-
պանակը վերցնող քահանաները
ժողովուրդին առջևէն գացին .
15 Ու տապանակը վերցնողները մինչև
Յորդանան հասնելով , տապանակը
վերցնող քահանաներուն ոտքերը
ջուրին եզերքը մխուածին պէս՝
(ինչու որ Հունձքի բոլոր ժամա-
նակը՝ Յորդանանու լիքը առա-
տանալով՝ իր բոլոր եզերքները կը
16 կոխէ ,) Ան առեն վերէն իջնող
ջուրը կայնեցաւ , ու Սարթանին
քովը եղող Ադամ քաղաքէն շատ
հեռու կարկառակոյտի մը պէս
բարձրացաւ . ու Դաշտի ծովը՝
Աղի ծովը իջնողը լմընցաւ
կտրեցաւ . և ժողովուրդը Երիքովի
17 դիմացը անցաւ : Ու Տէրոջը ուխ-
տին տապանակը վերցնող քահա-
նաները՝ Յորդանանու մէջը ցամա-
քի վրայ հաստատ կայնեցան . Ու
բոլոր Իսրայէլը ցամաքով անցաւ ,
մինչև որ բոլոր ժողովուրդին Յոր-
դանանէն անցնիլը լմընցաւ :

Ե · ք · ՂՓ · 1451

ԳԼ · Դ

1 Տասներկու մարդ կ'որոշուին՝ որ Յորդանանէն յիշատակի համար տասներկու քար առնեն : 9 Ուրիշ տասներկու քար ալ Յորդանանու մէջտեղը կը կանգնեն : 10 , 19 Ժողովուրդը կ'անցնի : 14 Աստուած Յեսուին պատիւ կու տայ : 20 Տասներկու քարերը Գաղգաղայի մէջ կը կանգնեն :

1 Եւ երբոր բոլոր ժողովուրդին
Յորդանանէն անցնիլը լմընց-
ցաւ , Տէրը խօսեցաւ Յեսուին՝ ու
2 բսաւ . Ժողովուրդէն տասներկու
մարդ առէք , ամէն ցեղէն մէյմէկ
3 մարդ , Ու անոնց պատուիրելով՝
բսէք . Ասկէ՝ Յորդանանու մէջէն՝
քահանայից ոտքերուն կոխած
տեղէն՝ ձեզի տասներկու քար
վերցուցէք . և զանոնք ձեր հետը
տարէք , ու դրէք Ձան տեղը՝ ուր
որ աս գիշեր իջևան պիտի ընէք :
4 Եւ Յեսու Իսրայէլի որդւոցմէ իր
որոշած տասներկու մարդիկը կան-
չեց , ամէն ցեղէն մէյմէկ մարդ .
5 Ու Յեսու անոնց բսաւ . Յորդա-
նանու մէջը՝ ձեր Տէր Աստուծոյն
տապանակին առջևը անցէք , ու
Իսրայէլի որդւոցը ցեղերուն թիւո-
վը՝ ամէն մէկերնիդ ձեր ուսերուն
վրայ մէյմէկ քար վերցուցէք ինկ .
6 Որ ասիկայ ձեր մէջը նշան ըլլայ .
Երբոր վաղը ձեր որդիքը չէզ
հարցնելու ըլլան՝ ու բսեն թէ՝ Ա
7 քարերը ինչ ըլուի ձեզի . Ա-
նոնց բսէք . Քանզի Տէրոջը ուխտի
տապանակին առջևէն Յորդա-
նանու ջուրերը կտրուեցան . երբ-
որ անիկայ Յորդանանէն կ'անցնէր՝
Յորդանանու ջուրը կտրեցաւ . ու

Ե · ք · ՂՓ · 1451

Գոր · ե · 45 ,

Հիր 13 ,

Գլ · գ · 18 ,
ե · 10 , 12 ,
Ես Մն · ժբ ·
15 , Երեմ ·
ժբ · 5 , Խթ ·
19 ,
Դատ · գ ·
12 , է · 46 ,
Ել Օր · գ ·
17 ,
Ես Նե · ժգ ·
3 , Թուա · լգ ·
3 ,

Ես Ել ·
ժգ · 29 ,

Ել Օր · ԽԷ ·
2 , Գլ · գ ·
17 ,
Գլ · գ · 12 ,

Գլ · գ · 18 ,

Ել Օր · ժթ ·
19 ,
Ես Յեր ·
ժբ · 5 , Խթ ·
19 ,

Ես Ել · ժգ ·
29 ,

Ել Օր · է ·
26 , Թագ ·
ժէ · 26 , Դ
Թագ · ժբ ·
4 , Ովս · ա ·
10 , Մաս ·
ժգ · 16 , Ա
Թես · ա · 9 ,
Ես Ել · լդ · 2 ,
Բ Օր · է · 1 ,
Սաղ · խգ ·
2 ,
Հիր 18 ,
Միք · գ · 13 ,
Զաք · գ ·
14 , ը · 5 ,
Գլ · գ · 2 ,
Հիր 11 ,
Հիր 15 , 16 ,

Ես Յես ·
ը · 33 ,
Բ Օր · լ ·
9 , 25 ,

Ես Ել · ժթ ·
12 ,

Ել · ժթ ·
10 , 14 , 15 ,
Ղե · ի · 7 ,
Թուա · ժա ·
18 , Գլ · է ·
13 , Թագ ·
ժգ · 5 , Ես
վէ · բ · 16 ,
Ես Թուա · գ ·
15 ,

Ել Գլ · գ · 14 ,
Մն · ԻԹ ·
25 , Բ Մն ·
ա · 1 ,
Գլ · ա · 5 ,
Հիր 3 ,

Հիր 17 ,

Ես Յես ·
Ա Օր · ժ ·
26 , Թագ ·
ժէ · 26 , Դ
Թագ · ժԲ ·
4 , Ովս · ա ·
10 , Մաս ·
ժգ · 16 , ա
Թես · ա · 9 ,
Ես Ել · լդ · 2 ,
Բ Օր · է · 1 ,
Սաղ · խգ ·
2 ,
Հիր 18 ,
Միք · գ · 13 ,
Զաք · գ ·
14 , ը · 5 ,
Գլ · գ · 2 ,
Հիր 11 ,
Հիր 15 , 16 ,

Ես Ել · ժգ ·
26 ,
Ես Ել · ժգ ·
14 , Բ
Օր · գ · 20 ,
Սաղ · խգ ·
1 , Նե · 3 ,
4 , 5 , 6 ,
Ես Գլ · գ · 13 ,
16 ,

Ես Յես ·
Ա Մն · ժբ ·
15 , Երեմ ·
ժբ · 5 , Խթ ·
19 ,

Ես Նե · ժգ ·
12 , է · 46 ,

Ես Ել · ժգ ·
12 ,

Ես Յես ·
ը · 33 ,

Ես Ել · ժգ ·
10 , 14 , 15 ,
Ղե · ի · 7 ,
Թուա · ժա ·
18 , Գլ · է ·
13 , Թագ ·
ժգ · 5 , Ես
վէ · բ · 16 ,
Ես Թուա · գ ·
15 ,

Ես Ել · ժգ ·
29 ,

Ես Ել · ժգ ·
26 ,
Ես Ել · ժգ ·
14 , Բ
Օր · գ · 20 ,
Սաղ · խգ ·
1 , Նե · 3 ,
4 , 5 , 6 ,
Ես Գլ · գ · 13 ,
16 ,

ն · ք · գբ · 1451

աս քարերը Իսրայէլի որդւոց մէջը յիշատակի համար պիտի ըլլան յա-
8 ւիտեան : Եւ Իսրայէլի որդիքը Ցե-
սուին պատուիրածին պէս ըրին .
ու Գորգանանու մէջէն տասներ-
կու քար առին՝ Իսրայէլի որդւոցը
ցեղերուն թուովը , ինչպէս որ Տէ-
րը Ցեսուին հրամայեր էր , և զա-
նոնք իրենց հետը իջևանի տեղը
9 տարին , ու հոն դրին : Եւ Ցեսու ե-
րէք տասներկու քարեր ել կանգ-
նեց Գորգանանու մէջը , ուխտին
տապանակը վերցընող քահանայից
ոտքերուն կեցած տեղը , ու մինչև
10 աս օրս հոն են : Եւ տապանակը
վերցընող քահանաները Գորգանա-
նու մէջը կայնեցան , մինչև որ Ցե-
սու լմընցուց ան բոլոր խօսքը , որն
որ Տէրը Ցեսուին պատուիրեց՝ ժո-
ղովուրդին ըսելու , ինչպէս որ
Մովսէս Ցեսուին պատուիրեր էր .
և ժողովուրդը արտորալով անցաւ :
11 Ու երբոր բոլոր ժողովուրդին անց-
նիլը լմընցաւ , ան ատենը Տէրոջը
տապանակը ու քահանաները ժո-
ղովուրդին առջևը անցան :
ը Թու · լբ · 20 , 27 , 28 ։ 12 Եւ ը Ռուբենի որդիքը ու Գադի
որդիքը և Մանասէի կէս ցեղը ըս-
պառազինեալ՝ Իսրայէլի որդւոցը
առջևը անցան , ինչպէս որ Մովսէս
13 անոնց ըսեր էր . քառասուն հազարի
չափ պատրաստուած զօրք Տէրոջը
առջևը՝ պատերազմի համար երի-
քովի դաշտը անցան :
բ Գլ · դ · 7 ։ 14 Նոյն օրը Տէրը՝ բոլոր բ Իսրայէլին
աչքերուն առջևը Ցեսուն մեծցուց ,
ու անոր կենացը բոլոր օրերուն
մէջ՝ Մովսէսէն վախցածնուն պէս
15 անկէ կը վախնային : Եւ Տէրը
ք Ել · իե · 16 · 22 ։ 16 խօսեցաւ Ցեսուին՝ ըսելով . ք Վը-
կայութեան տապանակը վերցընող
քահանաներուն հրաման ըրէ որ
17 Գորգանանէն ելլեն : Ուստի Ցե-
սու՝ քահանաներուն հրամայեց , ու
18 ըսաւ . Գորգանանէն ելէք : Ու
երբոր Տէրոջը ուխտին տապանակը
վերցընող քահանաները Գորգա-
նանու մէջէն ելան , և քահանայից
ոտքերուն թաթերը ցամաքի վրայ
եր Գլ · դ · 15 ։ կոխեցին , Գորգանանու ջուրը իր
տեղը դարձաւ , ե ու առջինին պէս
իր բոլոր եզերքներուն վրայ քա-
լեց :
19 Եւ առաջին ամսուն տասներորդ
օրը՝ ժողովուրդը Գորգանանէն
ղ Գլ · ե · 9 ։ դուրս ելլելով , ղ Գաղգաղայի մէջ
Երիքովի արևելեան կողմը իջևան
ի Հմր 3 ։ 20 բրին : Եւ Էան տասներկու քա-
րը՝ որ Գորգանանէն առեր էին ,
Ցեսու Գաղգաղայի մէջ կանգնեց .
21 Եւ Իսրայէլի որդւոցը խօսեցաւ՝
ժ Հմր 6 ։ ըսելով . ժ Վաղը՝ թէ որ ձեր որդի-
քը իրենց հայրերուն հարցընելու
ըլլան՝ ու ըսեն թէ՝ Ա՛ս քարերը

ն · ք · գբ · 1451

22 ինչ են . Ձեր տղոցը իմացընէք՝
ըսելով . Իսրայէլը աս Գորգանանէն
23 ցամաքով անցաւ . Որովհետև ձեր
Տէր Աստուածը ձեր առջևէն
Գորգանանու ջուրերը ցամքեցուց՝
մինչև որ դուք անցաք , ինչպէս որ
ձեր Տէր Աստուածը Կարմիր ծովուն
մէջն ել բրաւ , հորն որ ցամքեցուց
մեր առջևէն մինչև որ մենք ան-
24 ցանք . Որպէս զի ե երկրիս ամէն
ազգերը գիտնան՝ որ Տէրոջը ձեռքը
զօրաւոր է , և դուք ե ձեր Տէր
Աստուածէն միշտ վախնաք :

ԳԼ · Ե

1 Քանանացիք կը վախնան : 2 Ցեսու կը նորոգէ թլփատութիւնը : 10 Գաղգաղայի մէջ զատիկը կ'ընեն : 12 Մանանան իջևնէն կը դադարի : 13 Հրեշտակ մը կ'երևնայ Ցեսուին :

1 Ու երբոր ել լսեցին Ամորհացւոց բո-
լոր թագաւորները , որոնք Գոր-
դանանու ասդին արևմտեան կողմը
ի բնակէին , ու քանանացւոց բոլոր
թագաւորները , որոնք ծովեզեր-
քին քովը ի բնակէին , թէ Տէրը
Իսրայէլի որդւոցը առջևէն՝ մինչև
անոնց անցնիլը Գորգանանու ջու-
րերը ցամքեցուցեր է , անոնց սիրտը
հալեցաւ , ե ու Իսրայէլի որդւոցը
երեսէն՝ անոնց վրայ համարձակու-
թիւն չմնաց :
2 Ն ատենը Տէրը Ցեսուին բսաւ .
Քեզի ժ սուր դանակներ շինէ , ու
դարձիր Իսրայէլի որդիքը նորէն
3 թլփատէ : Եւ Ցեսու իրեն սուր
դանակներ շինեց , ու Բլուր ան-
թլփատից ը Ռ Ռ Ռ

Ն·Ք·ԳԲ· 1451

8 մէջ թլփատած չէին զանոնք ։ Ու երբոր բոլոր ժողովուրդին թլփատուիլը լմընցաւ , բանակին մէջ իրենց տեղը նստան , մինչև որ ողջ
9 ջացան ։ Անատեն Տէրը Յեսուին ըսաւ . Այսօր † Եգիպտոսի նախատինքը ձեր վրայէն *վերցուցի . ուստի ան տեղին անունը մինչև աս
10 օրս † Գաղգաղա ըսուեցաւ ։ Եւ Իսրայէլի որդիքը Գաղգաղայի մէջ բանակեցան . ու Լամնուն չորեքտասաներորդ օրը իրիկուան դէմ՝ Երիքովի դաշտերուն մէջը զատիկը
11 ըրին ։ Եւ զատկին հետեւեալ օրը ան երկրին պտուղէն բաղարջ կերան , ու նոյն օրը բոհրած ցորեն ալ կերան ։
12 Եւ հետեւեալ օրը երբոր ան երկրին պտուղէն կերան , Իմանանան դադարեցաւ . ու անկէ ետքը Իսրայէլի որդւոցը համար՝ ալ մանանայ չէր գտնուեր . և ան տարին Քանանու երկրին պտուղէն կերան ։
13 Ու երբոր Յեսու Երիքովի մօտ էր , աչքերը վերցնելով տեսաւ որ՝ ահա † իր դիմացը մէկ մարդ մը կայներ էր , և անոր ձեռքը մերկ սուր մը կար . ու Յեսու անոր մօտենալով՝ անոր ըսաւ . Մեզմէ՞ ես , թէ մեր
14 թշնամիներէն ես . Եւ անիկայ ըսաւ . Չէ , այլ ես ‡ Տէրոջը զօրավարն եմ , — հիմա եկայ ։ Եւ Յեսու † երեսի վրայ դետինը խնկաու երկրպագութիւն րրաւ , և անոր ըսաւ . Իմ տէրս իր ծառային ի՞նչ
15 կը հրամայէ ։ Ու Տէրոջը զօրավարը Յեսուին ըսաւ . Ոտքերէդ կօշիկներդ հանէ . քանզի կայնած տեղդ սուրբ է . և Յեսու այնպէս ըրաւ ։

ԳԼ · Զ

1 Երիքովը կը գոցուի ։ 2 Աստուած Յեսուին կ'իմացընէ թէ ի՛նչպէս պիտի պաշարէ զանիկայ ։ 12 Քաղաքին բոլորտիքէն կը դառնան ։ 17 Ան քաղաքը պիտի նզովուէր ։ 20 Պարիսպները վար կ'իյնան ։ 22 Ռախաբ կ'ազատուի ։ 26 Յեսու կ'անիծէ Երիքովը նորէն չշինողը ։

1 Ու Երիքովը Իսրայէլի որդւոցը ‡ պատճառաւ ամուր կերպով մը փակուած էր . ելլող ու մտնող
2 չկար ։ Եւ Տէրը Յեսուին ըսաւ . Նայէ՝ Երիքովը ու անոր թագաւորը՝ և զօրաւոր կորիճները ի քու
3 ձեռքդ տուի ։ Ուստի ամէն պատերազմական մարդիկները քաղաքին բոլորտիքը դառնալով՝ մէկ անգամ քաղաքին բոլորտիքը պտր-
4 տիք . վեց օր ասանկ բնես ։ Եւ տապանակին առջևը՝ եօթը քահանայ եօթը ‖ Գօրելեան փողերը առնեն . ու եօթներորդ օրը քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պտր-
5 տիք , և † քահանաները փողերը ‡ ընդունեն . Ու երբոր Գօրելեան եղջիւրները ուժով ընդունին , և դուք փողերուն ձայնը լսէք , բոլոր ժողովուրդը մեծ աղաղակ մը հանէ . և քաղաքին պարիսպները վար պիտի իյնան , ու ժողովուրդին ամէն մէկը շիտակ յառաջ երթ-ը-վ ներս պիտի մտնէ ։
6 Եւ Նաւէի որդին Յեսուն՝ քահանաները կանչեց , ու անոնց ըսաւ . Ուխտին տապանակը վերցուցէք , ու Տէրոջը տապանակին առջևէն եօթը քահանայ եօթը
7 Գօրելեան փողեր առնեն ։ Ետքը ժողովուրդին ըսաւ . Անցէք՝ ու քաղաքին բոլորտիքը պտըտեցէք , և զինուորները Տէրոջը տապանա-
8 կին առջևը անցնին ։ Ու երբոր Յեսու ժողովուրդին պատուիրեց , եօթը քահանաները՝ որ եօթը Գօրելեան փողերը ունէին , Տէրոջը առջևը անցնելով՝ փողերը ընդունին , ու Տէրոջը ուխտին տապանակը անոնց ետևէն կ'երթար ։
9 Եւ զինուորները՝ փողերը ընդունող քահանաներուն առջևէն կ'երթային , † բայց վերջապահները՝ տապանակին ետևէն . — ‡ Հա-նէրը փողերը ընդունելով կ'երթա-
10 յին ։ Եւ Յեսու՝ ժողովուրդին պատուիրելով՝ ըսաւ . Բո— աղաղակ մի՛ հանէք , և ձայներնիդ չլսուի , ու ձեր բերնէն խօսք մը չելլէ , մինչև ան օրը՝ որ ես ձեզի ըսեմ թէ , Աղաղակ հանեցէք .
11 անատենը աղաղակեցէք ։ Ուստի Տէրոջը տապանակը քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պտրտելէն ետև բանակը դարձան , ու գիշերը բանակին մէջը մնացին ։
12 Եւ Յեսու առտուանոյ կանուխ ելաւ , ու քահանաները Տէրոջը
13 տապանակը վերցուցին ։ Եւ եօթը Գօրելեան փողերը կրող եօթը քահանաները Տէրոջը տապանակին առջևէն կ'երթային՝ փողերը ընդունելով , ու զինուորները անոնց առջևէն կ'երթային , ու վերջապահները Տէրոջը տապանակին ետևէն . և ‡ Հա-նէրը փողերը ընդ-
14 ունելով կ'երթային ։ Երկրորդ օրն ալ քաղաքին բոլորտիքը մէկ անգամ պտրտելով՝ բանակը դարձան . Վեց օր այսպէս րրին ։
15 Ու եօթներորդ օրը կանուխ ելան՝ արշալուսին ծագածատենը , ու քաղաքին բոլորտիքը եօթը անգամ պտրտեցան նոյն կերպով . միայն թէ ան օրը՝ քաղաքին բոլորտիքը եօթը
16 անգամ պտրտեցան ։ Ու եօթներորդ անգամին երբոր քահանաները փողերը ընդունեցին , Յեսու ժողո-

Ն·Ք·ԳԲ· 1451

‡ Թուա· Ժ· 8 ։

Դ Թուա· Ժ· 25 ։

Ի Օր·Լ· 25 ։

Ն·Ք·ԳՔ· 1451

վուրդին ըսաւ . Աղաղակեցէք . քանզի Տէրը ՚ի քաղաքը ձեր ձեռ-
17 քը տուաւ ։ Եւ քաղաքը ու բո-
լոր անոր մէջը եղածը՝ Տէրոջմէ նզոված ըլլան . միայն Ռահաբ պոռնիկը Ղմեր իւրկած լրտեսները պահելուն համար ողջ մնայ , թէ ինքը և թէ իրեն հետ տանը մէջ
18 բոլոր եղողները ։ Բայց դուք Ի-
մէն կերպով զգուշանաք նզովա-
ծէն . չըլլայ որ նզովածէն առնե-
լով՝ Ի՛՛՛՛Լ նզոված ըլլաք , ու Իսրայէլի բանակը նզովքի մէջ ձգե-
լով , Ըզանիկայ նեղութեան հան-
19 դիպցընէք ։ Եւ բոլոր արծաթը ու ոսկին՝ և պղնձէ ու երկաթէ ամաններըը՝ Տէրոջը համար սուրբ ըլլան . Տէրոջը գանձը մըտ-
նեն ։
20 Ուստի ժողովուրդը աղաղակեց . որովհետև փողերը հնչեցան . ու երբոր ժողովուրդը փողերուն ձայնը լսեց , ու ժողովուրդը բարձրաձայն աղաղակեց , Ի պարիսպները վար ինկան . և ժողովուրդին ամէն մէկը շիտակ յառաջ քաղաքը մտնելով՝
21 քաղաքը առին . Ու Ի բոլոր քաղա-
քին մէջը եղողը՝ այր և կին՝ երի-
տասարդ և ծեր՝ արջառ՝ ոչխար ու էշ՝ սուրի բերնէ ՛ՆՇՆԻԼՎ կոր-
22 ընցուցին ։ Եւ Յեսու ան երկիրը լրտեսող երկու մարդոցը ըսաւ . Ան պոռնիկ կնկանը տունը գացէք , ու Ի ինչպէս որ անոր երդում ըրիք , կնիկը ու անոր ամէն ունեցածը
23 անկէ դուրս հանեցէք ։ Ուստի ան լրտես երիտասարդները գացին , ու Ռահաբը և անոր հայրը ու մայրը ու եղբայրները՝ և անոր ամէն ու-
նեցածը դուրս հանեցին , ու անոր բոլոր ազգատոհմն ալ դուրս հա-
նեցին , և զանոնք Իսրայէլի բանա-
24 կին դուրսը կեցուցին ։ Ու քա-
ղաքը՝ և բոլոր անոր մէջը եղածը կրակով այրեցին . Ի միայն արծա-
թը ու ոսկին , և պղնձէ ու երկաթէ ամանները՝ Տէրոջը տանը գանձին
25 մէջը դրին ։ Այսպէս Յեսու ողջ պահեց Ռահաբ պոռնիկը՝ ու անոր հօրը տունը՝ և անոր ամէն ունեցա-
ծը . ու Ի անիկայ Իսրայէլի մէջ բնակեցաւ մինչև այսօր . քանզի ա-
նիկայ պահեց ան լրտեսները՝ որոնք Յեսու խրկեր էր Երիքովը լրտեսե-
լու համար ։
26 Եւ ան առեն Յեսու երդում ընելով՝ ըսաւ . Ի Տէրոջը առջև ա-
նիծեալ ըլլայ ան մարդը՝ որ ելլէ ու աս Երիքով քաղաքը շինէ . իր անդրանիկովը անոր հիմերը դնէ , ու անոր դռներն ալ իր պզտիկ տղովը կանգնէ ։
27 Ի Եւ Տէրը Յեսուին հետ էր . ու

անոր համբաւը բոլոր երկրին մէջ տարածուեցաւ ։

ԳԼ·Է

1 Իսրայէլացիք կը յաղթուին Գայիի բնակիչնե-
րէն ։ 6 Յեսու աս բանիս համար Աստուծոյ կը բողոքէ ։ 10 Աստուած կ'իմացընէ անոր՝ թէ ինչ պարտի ընել ։ 16 Աքարը վճռակով կը բռնուի ։ 19 Անոր խոստովանութիւնը ։ 22 Ջանիկայ իր բոլոր ունեցածովը Աքորի ձորին մէջ կը կոխընցընեն ։

1 Հայց Իսրայէլի որդիքը նզովքի վրայով յանցանք գործեցին . քանզի Յուդայի ցեղէն Զարայի որդւոյն Զաբդիի որդւոյն Քար-
միին որդին ՚Աքարը՝ նզովածէն առաւ , ու Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի որդւոցը վրայ բորբոքե-
ցաւ ։
2 Եւ Յեսու Երիքովէն մարդիկ-
ներ խրկեց դէպ 'ի Գայի , որ Բե-
թաւանէն մօտ է , ՚ի Բեթէլէն ա-
րեւելեան կողմն է , և խօսեցաւ ա-
նոնց ըսելով . Ելէք ու ան երկիրը լրտեսեցէք . և ան մարդիկը ելան՝
3 ու Գային լրտեսեցին ։ Եւ Յե-
սուին դարձան , ու անոր ըսին . Բոլոր ժողովուրդը չելլէ , գՈՅՆ եր-
կու կամ իրեք հազար մարդու չափ ելլեն , ու Գային զարնեն . բոլոր ժողովուրդը հոն տանելով մի՛ յոգ-
նեցըներ . քանզի անոնք քիչ են ։
4 Ուստի ժողովուրդէն իրեք հազարի չափ մարդ հոն ելան . Ի բայց Գա-
5 յիի մարդոցը առջևէն փախան . Եւ Գայիի մարդիկը՝ անոնցմէ երեսուն-
ուվեց մարդու չափ զարկին . քան-
զի զանոնք դրանը առջևէն մինչև Սերարիմը հալածեցին , ու զա-
՚ի վայրին վրայ զանոնք զարկին . ուս-
տի Ի ժողովուրդին սիրտը հալեցաւ ու ջուրի պէս եղաւ ։
6 Եւ Յեսու Ի իր հանդերձները պատռելով՝ Տէրոջը տապանակին առջևը երեսին վրայ գետինը ինկաւ մինչև իրիկուն , թէ ինքը և թէ Իսրայէլի ծերերը , ու Ի իրենց
7 գլխուն վրայ հող ցանեցին ։ Եւ Յեսու ըսաւ . Ո՜Հ՝ Տէր Եհովայ , Ընչո՞ւ համար աս ժողովուրդը Յորդանանու ադիի կողմը անցու-
ցիր , որ մեզ Ամորհացւոց ձեռքը մատնես , ու մեզ կորսընցընես . և-
րանի թէ Յորդանանու անդիի
8 կողմը գոհ ըլլալով մնայինք ։ Ո՜Հ Տէր՝ Իսրայէլը իր թշնամիներուն առջևը կռնակ դարձընելէն ետև՝
9 ալ ես ի՞նչ ըսեմ . Որովհետև Քա-
նանացիները ու երկրին բոլոր բնա-
կիչները լսելով՝ մեզ պիտի պաշա-
րեն , ու Ի մեր անունը երկրիս վրա-
յէն բոլորովին պիտի վերցընեն . ան առեն Ը.քու մեծ անունդ ի՞նչ պիտի ընես ։

Ն·Ք·ԳՔ· 1451

Յ ԳԼ·Թ·1, 3 ։

* Կ՛՛՛ Ջամբրիի . ա Մն. բ. 6 ։ — ԳԼ· իր· 20 ։ ա Մն. բ·7 ։

Բ Ղե. իզ· 17 ։ բ Օր· իբ· 25 ։

Ի ԳԼ·բ·9, 11 ։ Ղե. իզ· 36 ։ Սաղ· իբ·14 ։ Ե Ծն. լե· 29, 34 ։

Ի ա Թագ. գ· 12 ։ բ Թագ· ա. 2 ։ Ժգ· 19 ։ Նէեմ· Թ·1 ։ Յոբ· բ·12 ։

Ը Եզ· ի·22 ։ գ Թագ. գ· 10 ։

ն · ք · գԲ · 1451

10 Եւ Տէրը Յեսուին ըսաւ . Ոտքի վրայ ելիր . ինչո՞ւ համար այսպէս
11 երեսիդ վրայ ինկեր ես . Իսրայէլը մեղք գործեց , և իմ անոնց հրամայած ուխտս զանց ըրին . քանզի նզովածէն առին , ու գողութիւն ըրին , և խաբեցին , ու նաև իրենց կարասիքներուն մէջը դրին .
12 Ուստի Իսրայէլի որդիքը պիտի չկրնան իրենց թշնամիներուն առջևը կենալ . իրենց թշնամիներուն առջևը կռնակ պիտի դարձընեն , քանզի Ինզոված եղան . ես ալ ձեր հետը պիտի չըլլամ , թէ որ դուք նզովուածը ձեր մէջէն բնաջինջ չը-
13 նէք : Ելիր , ժողովուրդը սրբէ , ու ըսէ . Վաղուան համար սրբուեցէք . քանզի Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ . Ով Իսրայէլ՝ ձեր մէջը նզոված կայ . մինչև որ նզովածը ձեր մէջէն չվերցընէք , դուք թշնամիներուդ առջևը պիտի
14 չկրնաս կենալ : Ուստի առտուանդ ձեր ցեղերովը մօտենաք , ու Տէրը որ ցեղը վճռով բռնելու ըլլայ , անիկայ իր ազգատոհմերովը մօտենայ . և Տէրը որ ազգատոհմը բռնելու ըլլայ , անիկայ իր տուներովը մօտենայ . ու Տէրը որ տունը բռնելու ըլլայ , անիկայ իր մարդիկ-
15 ներովը մօտենայ . Եւ ով որ նզովածով բռնուի , կրակով պիտի այրուի , թէ ինքը և թէ իր ամէն ունեցածը . քանզի Տէրոջը ուխտը զանց ըրաւ , ու Իսրայէլի մէջ ամօթանզամութիւն ըրաւ :
16 Ուստի Յեսու առտուանդ կանուխ ելաւ , ու Իսրայէլը իր ցեղերովը մօտեցուց , և Յուդայի ցեղը բռնա-
17 նուեցաւ . Ու Յուդայի ազգատոհմները մօտեցընելուն , Զարայեանց ազգատոհմը բռնուեցաւ . ու Զարայեանց տոհմը մարդիկներովը մօտեցընելուն , Զաբդին բռնուեցաւ .
18 Եւ իր անոր տունը մարդիկներովը մօտեցընելուն , Յուդայի ցեղէն Զարայի որդւոյն Զաբդիի որդւոյն Քարմիին որդին Աքարը բռնուե-
19 ցաւ : Եւ Յեսու Աքարին ըսաւ . Որդիս՝ Իսրայէլի Տէր Աստուծոյն փառք տուր , ու խոստովանէ՛ անոր եղիր , և ինծի րսածդ հիմա ինծի յայտնէ՛ ,
20 ինծմէ մի՛ պահեր : Ու Աքարը պատասխան տուաւ Յեսուին , և ըսաւ . Իրաւցընէ ես Իսրայէլի Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցի , ու
21 ասանկ ասանկ բան մը ըրի . Աչքիններն՝ աւարին մէջը մէկ աղուոր Բաբելոնի վերարկու մը՝ ու երկու հարիւր սիկղ արծաթ՝ և լիսուն սիկղ ծանրութեամբ մէկ ոսկի լեզու մը տեսայ , ու անոնց

ն · ք · գԲ · 1451

ցանկալով առի . և ահա անոնք իմ վրանիս մէջ հողին տակը պահուած են , ու արծաթը անոր տակն է :
22 Ուստի Յեսու լրաբերներ խրկեց . ու անոնք վրանը վազեցին . և ահա վրանին մէջը պահուած էր ան , ու
23 արծաթը անոր տակն էր . Եւ զանոնք վրանին մէջէն առնելով՝ Յեսուին ու բոլոր Իսրայէլի որդւոցը բերին , և զանոնք Տէրոջը առջևը դրին :
24 Ան առնը Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Զարայեան Աքարը , ու ան արծաթը՝ և վերարկուն՝ ու ոսկի լեզուն՝ և անոր տղաքը՝ աղջիկները՝ արջառները՝ էշերը՝ ոչխարները՝ վրանը ու անոր ամէն բանը առին , և զանոնք Աքորի
25 ձորը հանեցին : Ու Յեսու ըսաւ . Ինչո՞ւ համար դուն մեզ նեղեցիր . Տէրը այսօր քեզ պիտի նեղէ . Ու ամբոխի բոլոր Իսրայէլը զանիկայ քարերով քարկոծեցին , ու զանոնք քարերով քարկոծելէն ետև՝ կրակով
26 այրեցին : Ետքը Ներոջ վրայ մէկ մեծ քարակոյտ մը դիզեցին , որ մինչև այսօր : Ու Տէրը իր սաստիկ բարկութենէն դադարեցաւ . ասոր պատճառաւ ան տեղին անունը Աքորի ձոր ըսուեցաւ մինչև ասօր :

ՀՌԱԿ · ԺԶ · 33 ։

Ց Ցես ա թագ · ԺԳ · 38 , 39 ։

ՂՀԻՐ 11 ։
Ֆ ՆԻՆ · ԼԴ · 7 ։ Դատ · Ի · 6 ։

Ա ա թագ · ԺԳ · 42 ։

Բ Ցես ա թագ · Գ · 5 ։ ԵրԵմ · ԺԳ · 16 ։ Ցօհ · Թ · 24 ։

Գ Թուռ · Ե · 6 , 7 ։ Բ Մն · Լ · 22 ։ Սաղ · Ծա · 3 ։ Դան · Թ · 4 ։

Դ ա թագ · ԺԳ · 43 ։

ԳԼ · Ը

1 Աստուած կը քաջալերէ Յեսուն ։ 3 Գայի քաղաքը առնուելուն հնարքը ։ 29 Գայիին թագաւորը կը կախուի ։ 30 Յեսու սեղան մը կը շինէ · 32 քարերու վրայ կը գրէ օրէնքը · 33 և բոլոր օրհնութիւնները ու անէծքները ժողովուրդին առջևը կը կարդայ ։

1 Եւ Տէրը Յեսուին ըսաւ . Մի վախնար , ու մի զարհուրիր . բոլոր պատերազմող մարդիկները հետդ առ , ու ելիր դէպ՝ ի Գայի դուն . Ահա Գայիի թագաւորը ու անոր ժողովուրդը և անոր քաղաքը ու անոր երկիրը քու ձեռքդ տուի .
2 Եւ Երիքովին ու անոր թագաւորին րրածդիդ պէս , Գայիին ու անոր թագաւորին ալ ընես . միայն թէ անոր աւարը ու անասուններըը ձեզի առնէք : Քաղաքին ետևի կողմէն դարաններ պատրաստես ։
3 Ուստի Յեսու ու բոլոր պատերազմող մարդիկները ոտք ելան , որ Գայիի վրայ երթան . և Յեսու երսուն հազար զօրաւոր մարդ ընտրեց , ու զանոնք դիշերով խրկեց .
4 Եւ անոնց պատուիրելով՝ ըսաւ . Նայեցէք , քաղաքին ետևէն՝ ան քաղաքին համար դարանի մէջ պիտի նստիք . քաղաքէն շատ մի՛ հեռանաք , և ամէնքնիդ ալ պատ-
5 րաստ ըլլաք . Ու ես իմ հետս եղող բոլոր ժողովուրդով քաղաքին պի-

Ե Բ Օր · ա · 21 , է · 18 , Լ · 8 ։ Գ Լ · ա · 9 ։

Բ Գ Լ · Գ · 2 ։

Զ Գ Լ · Գ · 21 ։

Է Բ Օր · Ի · 14 ։

Ը Դատ · Ի · 29 ։

Ե Բ Օր · ժԷ · 5 ։

Զ Գ Լ · Բ · 29 ։ Բ Թագ · ԺԸ · 17 ։ Ողբ · Գ · 53 ։

Է Բ Օր · ԺԳ · 17 ։ Բ Թագ · Իա · 14 ։

Ը ՂՀԻՐ 24 ։ Եսդ · 10 ։ Ովբ · 15 ։

Թ Ցր Նեղութեան , Լմ՛ խռովութեան

Ն · ք · գԲ · 1451

Ղ Դատ · ի · 32 ։

տի մեռնենամ . ու երբոր անոնք առջի անգամին պէս մեզի դէմ ելլեն , Տէրոջմէ պիտի փախչինք ,
6 չէնք · Ու անոնք մեր ետևէն պիտի ելլեն , մինչև որ զանոնք քաղաքէն զատենք . որովհետև անոնք պիտի ըսեն Թէ , Մեր առջևէն փախան առջի անգամին պէս . ու մենք ա-
7 նոնց առջևէն պիտի փախչինք ։ Ան ատենը դուք դարանէն ելլէք , ու քաղաքը առնէք . քանզի ձեր Տէր Աստուածը զանիկայ ձեր ձեռքը
8 պիտի տայ ։ Ու երբոր քաղաքը առնէք , քաղաքը կրակով այրէք . Տէրոջը բսածին պէս ընէք . Տե՛ս հրաման ես տուի ձեզի ։
9 Յեսու զանոնք խրկեց , ու անոնք գացին դարանը նստան՝ Բեթէլի ու Գայիի միջտեղը , Գայիի արևմտեան կողմէն . և Յեսու այն գիշերը ժողովուրդին մէջը մնաց ։
10 Ու Յեսու առտուանց կանուխ ելաւ՝ ու ժողովուրդը աչքէ անցուց , և ինքը Իսրայէլի ծերերուն հետ՝ ժողովուրդին առջևէն դէպ 'ի
ը Հմր 5 ։ 11 Գայի գնաց . ըԵւ իր հետը եղող բոլոր պատերազմական մարդիկներն ալ ելան , ու մօտենալով՝ քաղաքին առջևը գացին , ու Գայիի հիւսիսային կողմը բանակեցան . և անոնց ու Գայիի միջտեղը մէկ ձոր
12 մը կար ։ Եւ հինգ հազարի չափ մարդ առաւ , ու զանոնք դարանի մէջ նստեցուց Բեթէլի ու Գայիի
* Կ՚ըսի՝ Գայիին միջտեղը՝ *քաղաքին արևմտեան
13 կողմը ։ Ու ժողովուրդը քաղաքին հիւսիսային կողմը դրաւ բոլոր բանակը , ու քաղաքին արևմտեան
Ր Հմր 4 ։ կողմը Ր դարանը . և Յեսու այն գիշերը ձորին մէջը գնաց ։
14 Ու երբոր Գայիի թագաւորը զԱյ՚ը տեսաւ , քաղաքին մարդիկներովը շուտով ու կանուխ դուրս ելաւ , որ ինքը ու իր բոլոր ժողովուրդը՝ որոշ ժամանակով մը դաշ-
ֆ Դատ · ի · 34 ։ ժղ · Թ · 12 ։ տի վրայ Իսրայէլի դէմ պատերազմին , ու Ֆչէր գիտեր որ քաղաքին ետևը իրեն համար դարան պ՚ըրա-
15 ծ՚ած էր ։ Եւ Յեսու ու բոլոր
Ի Դատ · ի · 36 , ըԸ ։ Իսրայէլը Ւանոնց առջևը գիրենք զարնուածի պէս ցուցրնելով՝ անա-
16 պատին ճամբան փախան ։ Ու քաղաքին մէջը եղող բոլոր ժողովուրդը ժողովուեցաւ որ զանոնք հալածեն , ու Յեսուին ետևէն իյնալով՝
17 քաղաքէն զատուեցան ։ Եւ Գայիի ու Բեթէլի մէջ մարդ չմնաց՝ որ Իսրայէլին ետևէն չելլէ . ուստի քաղաքը բաց թողուցին , ու Իսրայէլին ետևէն իյնան ։
18 Եւ Տէրը Յեսուին բսաւ . Ձեռքդ եղած նիզակը դէպ 'ի Գայի երկրնցուր . քանզի զանիկայ քու ձեռքդ

Ն · ք · գԲ · 1451

պիտի տամ . և Յեսու ձեռքը եղած նիզակը դէպ 'ի քաղաքը երկրնց-
19 ցուց · Ու դարանակալները շուտով իրենց տեղէն ելան , և անիկայ իր ձեռքը երկրնցուցածին պէս , վազեցին քաղաքը մտան , ու առին անիկայ , և շուտով մը քաղաքը
20 կրակով բռընկցուցին ։ Ու Գայիի բնակիչները ետևնին դարձան տեսան որ՝ ահա քաղաքին ծուխը մինչև երկինքը կ՚ելլէր . և անոնք հոս կամ հոն փախչելու կարողութիւն չունէին . ու անապատը փախչող ժողովուրդն ալ՝ իր ետևէն ինկող-
21 ներուն վրայ դարձաւ ։ Եւ Յեսու ու բոլոր Իսրայէլը երբոր տեսան որ դարանակալները քաղաքը առին , ու քաղաքին ծուխը վեր կ՚ելլէր , իրենք ալ ետ դարձան , ու Գայիի
22 մարդիկները զարկին ։ Մէկալներն ալ քաղաքէն անոնց դէմ ելան . ուստի մէկ կողմանէ ասոնք՝ ու մէկալ կողմանէ ալ անոնք բլլալով , Գ-յէէ Ո-ըԹէՒՆԵՐԸ Իսրայէլացւոց միջտեղը մնացին . ու զանոնք զար-
ը Օր · է · 2 ։ կին՝ մինչև որ Ւանոնցմէ մարդ մը
23 ողջ չմնաց ու չազատեցաւ ։ Եւ Գայիի թագաւորը ողջ բռնեցին , ու զանիկայ Յեսուին բերին ։
24 Ու երբոր Իսրայէլացիք՝ Գայիի բոլոր բնակիչները՝ գերենք հալածողները դաշտին ու անապատին մէջ ջարդեցին , ու անոնց ամենն ալ սուրի բերնէ իյնալով՝ հատան , բոլոր Իսրայէլացիք Գայի դարձան , ու զանիկայ սուրի բերնէ անցու-
25 ցին ։ Եւ ան օրը ինկածներուն ամենը՝ թէ էրիկ մարդ և թէ կնիկ մարդ , տասուերկու հազար էր , Ա-ՅԻՒՆ՝ Գայիի բոլոր մարդիկները ։
26 Ու Յեսու նիզակով երկրնցուցած ձեռքը ետ չքաշեց , մինչև որ Գայիի բոլոր բնակիչները բնաջինջ ըրաւ ։
27 Ի Բայց Իսրայէլացիք՝ անասուններն ու քաղաքին աւարը իրենց առին , Տէրոջը Ր Յեսուին հրամայած խօս-
Ր Հմր 2 ։ 28 քին համեմատ ։ Եւ Յեսու՝ Գային այրեց , ու զանիկայ Ա-ՄՆՆՕՒԵՆԱՒՈՐ աւերակներու դէզ ըրաւ մինչև
Ա Օր · ԺԳ · 16 ։ 29 այսօր . ՀԵւ Գայիի թագաւորը ծառի մը կախեց մինչև իրիկուն . Յու արևը մտնելուն՝ Յեսու հրամայեց որ անոր մեռած մարմինը ծառէն վար իջեցընեն . և զանիկայ քաղաքին դրանը առջևը նետեցին , ու Ւանոր վրայ մէկ մեծ քարակոյտ մը դիզեցին , որ Ը-ՒՆՈՅ մինչև այսօր ։
Հ Գլ · ժ · 26 ։ Սաղ · ճԺ · 40 ։ ճԺ · 5 ։ Յ Օր · իա · 23 ։ Գլ · ժ · 27 ։ Ղ Գլ · է · 26 ։ ժ · 27 ։
30 Ան ատենը Յեսու՝ Իսրայէլի Տէր Աստուծոյն սեղան մը շինեց Ճգե-
Ճ Օր · իէ · 4 , 5 ։ 31 բաղ լեռան վրայ , Ինչպէս որ Տէրոջը ծառան Մովսէս Իսրայէլ որդւոցը պատուիրեր էր . ա՛ Մովսէ-
Մ Ել · ի · 25 ։ Բ Օր · իէ · 5 , 6 ։

Ն·Ք·ԴԲ· 1451

սին օրինաց գրքին Մէջի գրուածին պէս՝ Ցեռ— — սեղանը ամբողջ քարերէ չինէց , որոնց վրայ երկաթ չէր դպած . և ոչ անոր վրայ Ցէրօղը ողջակէզներ ու խաղաղութեան
32 զոհեր մատուցին : Եւ Նհոն ան քարերուն վրայ գրեց Մովսէսին օրինաց երէից օրինակը , որն որ Իս-
33 րայէլի որդւոցը առջևը գրեց : Ու բոլոր Իսրայէլը՝ և անոնց ծերերը՝ ու ոստիկանները՝ և դատաւորները՝ տապանակին մէկ կողմէն ու մէկալ կողմէն՝ Ցէրօղը ուխտին տապանակը վերցնող Ղևտացի քահանայներուն առջևէն կ'երթային , թէ՝ օտարականները և թէ բնակները . անոնց կէսը Գարիզէն լեռանը կողմը՝ ու կէսն ալ Գեբաղ լեռանը կողմը (ինչպէս որ Ցէրօղը ծառան Մովսէս պատուիրեր էր , որ առաջ Իսրայէլի ժողովուրդ-
34 դը օրհնեն : Եւ անկէ ետև Դօրէնքին բոլոր խօսքերը կարդաց , Լեռ օրհնութիւնները և թէ անէծքները , ինչ որ գրուած էր օրինաց գրքին
35 Մէջը : Մովսէսին բոլոր պատուիրածներէն բնաւ խօսք մը չմնաց , որ զանիկայ Ցեսու Իսրայէլի բոլոր ժողովքին՝ և —անոց կնիկներուն ու տղաքներուն՝ և անոնց Մէջը պտրտող —օտարականին առջևը չկարդայ :

ԳԼ · Թ

1 Թագաւորները կը միաբանին Իսրայէլին դէմ : 3 Գաբաւոնացիք խաբէութեամբ խաղաղութեան ուխտ մը ձեռք կը բերեն : 16 ասոր համար յաւիտենական ծառայութեան կը դատապարտուին :

1 Ու երբոր Ցորդանանու ասդիի կողմը եղող բոլոր Թագաւորները՝ —րեռ լեռան վրայ , դաշտի վրայ , ու —մեծ ծովուն բոլոր եզերքը՝ մինչև Լիբանանին դիմացը եղ-
2 ած Քեռևէնի , —ոհէնի Քհետացիք , Ամորհացիք , Քանանացիք , Փերեզացիք , Խևացիք ու Ցեբուսացիք
2 — Քանէրը լսեցին , Միաբանութեամբ Ժողովուեցան՝ որ Ցեսուին ու Իսրայէլին դէմ պատերազմին :
3 Բայց Գաբաւոնի բնակիչները Երբոր լսեցին ինչ որ Ցեսու Երի-
4 քովին ու Գայիին բրեր էր , Իրենք ալ վարպետութիւն մը բանեցուցին . գացին պաշարներ պատրաստեցին , ու իրենց էշերուն վրայ հին քուրձեր , ու հին՝ պատռած ու *կարկրտած գինիի տիկեր դրին ,
5 Եւ իրենց ոտքերուն կօշիկները հին-ցած ու կարկրտած էին , ու վրանին ալ հին լաթեր —էն . և բոլոր իրենց պաշար —ը հացը՝ չորցած
6 — մլած էր . Ու Ղրանակը գացին Ցեսուին՝ Գաղգաղայի Մէջ , և

անոր ու Իսրայէլի մարդիկներուն բանին . Մենք հեռու երկրէ կու գանք , ուստի հիմա մեզի հետ դաշնակցու-
7 թիւն բրէք : Ան ատենը Իսրայէլի մարդիկները ան Խևացիներուն բանին . Գուցէ դուք մեր Մէջը կը բնակիք . ու ըձեզի հետ ի՞նչպէս
8 դաշնակցութիւն ընենք : Բայց անոնք Ցեսուին ըսին . Ծմենք քու ծառաներդ ենք . և Ցեսու անոնց ըսաւ . Դուք ո՞վ էք , և ո՞ւրկից-
9 կու գաք . Ու անոր ըսին . Ծքու ծառաներդ խիստ հեռու երկրէ եկած են՝ քու Եհովայ Աստուծոյդ անունը համար . քանզի Էանոր համբաւը՝ ու Եգիպտոսի Մէջ բոլոր
10 ըրածները լսեցինք . Ո— նաև Ցորդանանու անդիի կողմը Բևոհղ Ամորհացւոց Լերկու թագաւորներուն՝ Եսերոնի Սեհոն թագաւորին ու Աստարովթ Բևոհղ Բասանի Ովգ թագաւորին դէմ բոլոր երբ-
11 ները ըևէին : Եւ մեր ծերերը ու մեր երկրին բոլոր բնակիչները մեզի խօսեցան՝ ու ըսին . Ձեռքերնիդ ճամբու համար պաշար առէք , և զանոնք դիմաւորելու գացէք , ու անոնց ըսէք . Մենք ձեր ծառաներն ենք . հիմա մեզի հետ դաշ-
12 նակցութիւն բրէք : Ան օրը՝ որ մենք ելանք ձեզի գալու համար , աս պաշարի հացերնիս մեր տուներէն տաք առինք . և ահա հիմա
13 չորցած ու մղլած են . Եւ աս գինիի տիկերը նոր էին , երբոր լեցուցինք , բայց ահա պատռած են . ու աս մեր հանդերձները և կօշիկները՝ ճամբուն խիստ երկայնութեանը հա-
14 մար հինցան : Ու †անոնց պաշարին նայելով՝ ան մարդիկները ընդունեցին" , Ի ու Ցէրօղը չհարցու-
15 ցին : Եւ Ցեսու †անոնց հետ խաղաղութիւն բրաւ , ու անոնց ուխտեց՝ որ զանոնք ապրեցընէ . և ժողովքին իշխաններն —ը անոնց երդում բրին :
16 Ու անոնց հետ դաշնակցութիւն ընելէն իրէք օր ետքը՝ լսեցին որ անոնք իրենց դրացիներն են , ու ի-
17 րենց Մէջը կը բնակին : Եւ Իսրայէլի որդիքը չուելով՝ երրորդ օրը անոնց քաղաքները մտան . ու անոնց քաղաքները Գաբաւոն՝ Կեփիրա՝ Բէ-
18 րովթ և Կարիաթարիմ էին : Ու Իսրայէլի որդիքը զանոնք չզարկին . Հբանզի ժողովքին իշխանները՝ Իսրայէլի Տէր Աստուծոյն —ովնով անոնց երդում բրեր էին . բայց բոլոր ժողովքը իշխաններուն դէմ տրտընջեցին :
19 Եւ ամէն իշխանները՝ բոլոր ժողովքին ըսին . Մենք Իսրայէլի Տէր Աստուծոյն —ովնով անոնց եր-

Ն·Ք·ԴԲ· 1451

Ե ԳԼ · ԺԱ · 19 ։

ըԵԼ·ԻԳ · 32։ Ը Օր · Է · 2 ։ Ի · 16։ Դատ· Բ · 2 ։

Ը Օր·Ի·11։ Դ Թագ · Ժ · 5 ։

Ժ Օր·Ի·15։

Ի ԵԼ·ԺԱ · 14։ Ցես · Բ · 10։

Լ Թու · Իա · 24 , 33 ։

Ն·Ք·ԴԲ· 1451

† Կ—՛՝ Ի—ըՆվ մարդիկը անոնց պաշարէն առին ,

Ի Թու · ԻԷ · 21 ։ Ես · Լ · 1 , 2 ։ Տես Դատ · ա · 1։ աԹագ · իբ · 10 ։ Իգ · 10 ։ 11 ։ Լ · 8 ։ Բ Թագ · Բ · 1։ Է · 19 ։

Ձ ԳԼ · Ժա · 19 ։ Բ Թագ · Իա · 2 ։

Ղ ԳԼ · Ժբ · 25 , 26 , 28։ Եզբ · Բ · 25 ։

Հ Յոզ · Է · 2 ։ Սաղ · Ժե · 4 ։

Ն · Ք · ԶՓ · 1451

դում ըրինք , ու հիմա չենք կրնար
20 անոնց դպչիլ ։ Անոնց այսպէս ը-
նենք . զանոնք ողջ թողունք , որ
Յ մեր վրայ բարկութիւն չգայ՝ ա-
նոնց երդում ընելնուս համար ։
21 Ուստի իշխանները անոնց ըսին .
Թող ողջ մնան . բայց Հրոլոր ժո-
ղովքին փայտակուտորներ ու ջրկիր-
ներ ըլլան . Հ իշխանները --
ըսէրէներ էր՝ , ինչպէս որ իշխան-
ները ՙանոնց ըսին ։
22 Եւ կոչեց Յեսու զանոնք կանչեց , ու
անոնց խօսեցաւ՝ ըսելով . Ինչու՞
համար մեզ խաբեցիք ու ըսիք թէ՝
՛Ձեզմէ շատ հեռու ենք , ու Յդուք
23 մեր մէջը կը բնակիք . Ուրեմն դուք
հիմա Ներձեալ էք , ու իմ Ա-
տուածոյս տանը համար՝ ձեզմէ ծա-
ռայ , Ն փայտակուտոր ու ջրկիր չը-
24 պակսի ։ Եւ անոնք Յեսուին պա-
տասխան տուին՝ ու ըսին . Քանզի
քու ծառաներդ ստուգիւ իմացան ,
որ քու Եհովայ Աստուածդ ի՞ր
ծառային Մովսէսին հրամայեր է
-- բոլոր երկիրը ձեզի տալու , ու
-- երկրիս բոլոր բնակիչները ձեր
առջևէն բնաջինջ ընելու . ուստի
Ն մենք ձեր պատճառաւ՝ մեր ան-
ձերուն համար շատ վախցանք , ու
25 ասոր բանը ըրինք ։ Եւ ահա հիմա
Ղքու ձեռքդ ենք . քեզի ինչ որ
համոյ ու արդար կ'երևնայ , ան ըրէ
26 մեզի ։ Ուստի անոնց այնպէս ըրաւ ,
և զանոնք Իսրայէլի որդւոցը ձեռ-
քէն ազատեց , ու զանոնք չմեռ-
27 ցուցին ։ Եւ Յեսու նոյն օրը՝
Ն փայտակուտոր ու ջրկիր ըրաւ զա-
նոնք ժողովքին ու Տէրոջը սեղա-
նին համար , ար ՙՏէրոջը ընտրելու
տեղը ֆ--ին մինչև ասօրս ։

ԳԼ · Ժ

1 Հինգ թագաւորներ Գաբաւոնի դէմ կը պա-
տերազմին ։ 6 Յեսու՝ անոր օգնութեան կը
հասնի ։ 10 Աստուած կը պատերազմի անոնց
հետ կարկուտներով ։ 12 Արեգակը ու լու-
սինը անշարժ կը կենան՝ Յեսուին խօսքովը ։
16 Հինգ թագաւորները այրի մը մէջ կը պա-
հուին ։ 21 Յեսու անկէ դուրս հանել կու
տայ զանոնք , 24 ու անոնց հետ անարգանօք
վարուելով՝ 26 կը կախէ զանոնք ։ 28 Իսրա-
յէլի որդիքը ուրիշ եօթը թագաւորներ ալ
կը յաղթեն ։ 43 Յեսու՝ Գազգազա կը դառ-
նայ ։

1 Ու երբոր Երուսաղեմի Ադոնիսե-
դեկ թագաւորը լսեց թէ , Յե-
սու Գային առաւ , ու զանիկայ բո-
լորովին կործանեց . -- Ե՛ր ինչ որ
Երիքովին ու անոր թագաւորին ը-
րաւ , Գայիին ու անոր թագաւորին
-- Լ այնպէս ըրաւ . և թէ Գա-
բաւոնի բնակիչները Իսրայէլացւոց
հետ հաշտութիւն ըրին , ու անոնց
2 մէջը մնացին , Շատ վախցան Ի-
ր -- իր ՙողովրդէրը . քանզի Գա-

Ն · Ք · ԶՓ · 1451

բաւոնը՝ թագաւորանիստ քաղա-
քի մը պէս՝ մեծ քաղաք մըն էր ,
ու անիկայ Գայիէն մեծ էր , և անոր
3 բոլոր մարդիկները զօրաւոր էին ։ Ա-
սոր համար Երուսաղեմի Ադոնիսե-
դեկ թագաւորը՝ Քերմոնի Հոհամ
թագաւորին՝ Յերիմութի Փիրամ
թագաւորին՝ ու Լաքիսի Յափիե
թագաւորին՝ ու Էգղոնի Դաբիր
թագաւորին ՙրէր խրկեց՝ ըսելով .
4 Ինծի ելէք , ու ինծի օգնութիւն
ըրէք որ Գաբաւոնը զարնենք .
Էքանզի Յեսուին հետ ու Իսրայէլի
որդւոցը հետ հաշտութիւն ըրաւ ։
5 Ուստի Ամորհացւոց հինգ թագա-
ւորները՝ Երուսաղեմի թագաւորը ,
Քերմոնի թագաւորը , Յերիմութի
թագաւորը , Լաքիսի թագաւորը
-- Էգղոնի թագաւորը Հժողովե-
ցան , և իրենք ու իրենց բոլոր բա-
նակները ելան , և Գաբաւոնին
քովը բանակ դրին , ու անոր դէմ
պատերազմ ըրին ։
6 Եւ Գաբաւոնի բնակիչները՝
Ի Գաղգազայի մէջ բանակը Յե-
սուին ՙրէր խրկեցին՝ ըսելով . Քու
ծառաներէդ ձեռքդ մի՛ քաշեր ,
շուտով մեզի՛ ել , մեզ ազատէ , ու
մեզի օգնութիւն ըրէ . քանզի լեռ-
նաբնակ Ամորհացւոց բոլոր թա-
գաւորները մեր վրայ ժողովուեցան ։
7 Եւ Յեսու՝ ինքը ու Էիրէն հետ բո-
լոր պատերազմական մարդիկը՝ և
զօրքին բոլոր զօրաւորները Գաղգա-
8 զայէն ելան ։ Ու Տէրը Յեսուին
ըսաւ . Ի՞նոնցմէ մի՛ վախնար .
քանզի զանոնք քու ձեռքդ տուի .
Էրնաւ անոնցմէ մէկը պիտի չկարե-
9 նայ քու առջևդ կայնիլ ։ Եւ Յե-
սու՝ Գաղգազայէն բոլոր գիշերը
քալելով՝ յանկարծակի անոնց վրայ
10 հասաւ ։ Ու Տէրը Էխռովեցուց
զանոնք Իսրայէլին առջևը , և զա-
նոնք Գաբաւոնի ՙօդ մեծ կոտորա-
ծով մը կոտրեց , ու զանոնք Էբե-
թորոն ելլելու ճամբուն վրայ հա-
լածեց , և զանոնք մինչև Ի՞զեկա
11 ու Մակեդա զարկաւ ։ Ու երբոր
անոնք Իսրայէլին առջևէն կը փախ-
չէին , ու Բեթորոնէն վար կ'իջ-
նէին , Տէրը անոնց վրայ երկինքէն
Ի--րէ--ՙ մեծ քարեր նետեց մինչև
Ազեկա , ու մեռան . կարկուտին
քարերէն մեռնողները՝ Իսրայէլի
որդւոցը սրով մեռցուցածներէն
շատ էին ։
12 Ան ատեն Յեսու Տէրոջը հետ
խօսեցաւ , ան օրը՝ որ Տէրը Ամո-
հացիները Իսրայէլի որդւոց ձեռքը
տուաւ , ու Իսրայէլին առջևը ը-
սաւ . Ի՛ Արև , դուն Գաբաւոնին
դիմացը կայնէ . լո՛ւսին , դուն ալ
Հ Այեղոնի ձորին դիմացը Ի--ՙէ ։

Ն · Ք · ԶՓ · 1451

Ի Յեր 1 · Գլ · Թ · 15 ։

Ե Գլ · Թ · 2 ։

Ի Գլ · Ե · 10 ։ Թ · 6 ։

Ե Գլ · Ը · 1 ։

Ի Գլ · Ժա · 6 ։ Դատ · Դ · 14 ։
Ե Գլ · Ա · 5 ։

Ի Դատ · Դ · 15։ աԹագ · Է · 10 · 12 ։ Սաղ · Ժը · 14 ։ Ես · Իը · 21 ։
Ե Գլ · Ժգ · 3 · 5 ։
Ի Գլ · Ժե · 35 ։

Ե Սաղ · Ժը · 13 , 14 ։ Հէ · 17 ։ Ես · Լ · 30 ։ Ցայտ · Ժգ · 21 ։

Ի Ես · Իը · 21 ։ Ամր · Դ · 11 ։
Հ Դատ · Ժը · 12 ։

Ն · Ք · ԶՓ · 1451

Յ Տես Բ Թագ · Իա · 1 , 2 , 6 ։ Ե-
զեկ · Ժէ · 13 , 15 , 18 , 19 ։ Զաք · Ե · 3 , 4 ։ Մալ · Գ · 5 ։ Ղ Օր · ԻԹ · 11 ։

ֆ Յեր 15 ։

՛ Յեր 6 , 9 ։
՝ Յեր 16 ։

՞ Ծն · Թ · 25 ։

՟ Յեր 21 , 27 ։

՞ Ել · Իգ · 32 ։ Բ Օր · Է · 1 , 2 ։

՟ Ել · Ժե · 14 ։

Ղ Ծն · Ժշ · 6 ։

Ղ Յեր 21 , 23 ։

՟ Բ Օր · Ժբ · 5 ։

՟ Գլ · Ը · 21 ։

Ի Գլ · Բ · 22 , 26 , 28 ։

Ի Գլ · Թ · 15 ։

Ղ Ել · Ժե · 14 , 15 , 16 ։ Բ Օր · Ժա · 25 ։

Ն·Ք·ԴԸ· 1451

13 Ու արևը կայնեցաւ, և լուսինը իր տեղը մնաց, մինչև որ ժողովուրդը իր թշնամիներէն վրէժ առաւ։ Մի՞թէ ասիկայ *Ուղղութեան դրքին մէջը գրուած չէ՞, ուստի արևը երկինքին մէջտեղը կայնեցաւ, ու լման մէկ օրի մը չափ
14 մնալու չարտորաց։ Անոր պէս օր մը չեղաւ, ոչ առաջ ու ոչ ետքը, որ Տէրը մարդու ձայնը լսեց. քանզի †Տէրը Իսրայէլի համար պատերազմեցաւ։
15 ‡Ետքը Յեսու ու անոր հետ բոլոր Իսրայէլը՝ Գաղգաղա բանակը
16 դարձան։ Եւ հինգ թագաւորները փախան, ու Մակեդա այրի մը մէջ
17 պահուեցան։ Եւ Յեսուին պատմուեցաւ՝ ըսելով. Ան հինգ թագաւորները Մակեդա այրի մը մէջ
18 պահուած գտնուեցան։ Եւ Յեսու ըսաւ. Ա՛յրին բերանը մեծ քարեր գլորեցէք՝ ու անոր վրայ մարդիկներ դրէք, որ պահպանու-
19 թիւն ընեն. բայց դուք մի՛ կայնիք, ձեր թշնամիները հալածեցէք, ու անոնց ետևիննելը զարկէք, և անոնց թող մի՛ տաք որ իրենց քաղաքները մտնեն. քանզի ձեր Տէր Աստուածը զանոնք ձեր
20 ձեռքը մատնեց։ Ու երբոր Յեսու Իսրայէլի որդւոցը հետ զանոնք խիստ մեծ կոտորածով մը կոտրեց, ու զանոնք հատցուց լմընցուց, և անոնց փախստականները պարսպա-
21 ւոր քաղաքներու մէջ մտան, Բոլոր ժողովուրդը խաղաղութեամբ Մակեդա՝ բանակը Յեսուին դարձաւ. Յո՛ Իսրայէլի որդւոցը դէմ բնաւ մէկը իր լեզուն չշարժեց։
22 Ան ատենը Յեսու ըսաւ. Ա՛յրին բերանը բացէք, ու այրէն ան հինգ թագաւորները հանեցէ՛ք ինծի բե-
23 բե։ Եւ այնպէս ըրին. ու այրէն ան հինգ թագաւորները՝ Երուսաղէմի թագաւորը՝ Երրոնի թագաւորը՝ Գերիմութի թագաւորը՝ Լաքիսի թագաւորը՝ Եգղոնի թագաւորը հանեցին անոր
24 ա՛րբի։ Ու երբոր ան թագաւորները Յեսուին բերին հանեցին, Յեսու Իսրայէլի բոլոր մարդիկները կանչեց, ու իրեն հետ գացող պատերազմողաց գլխաւորներուն ըսաւ. Մօտեցէ՛ք, ու ձեր ոտքերը ան թագաւորներուն պարանոցները վրայ դրէք. և անոնք մօտեցան, ու իրենց ոտքերը անոնց պա-
25 րանոցներուն վրայ դրին։ Եւ Յեսու անոնց ըսաւ. Ա՛մի վախնաք ու մի՛ զարհուրիք, ուժովցէ՛ք և քաջասիրտ եղէք. քանզի †Տէրը ասանկ պիտի ընէ ձեր ամէն թշնամիներուն, որոնց հետ որ դուք պի-
26 տի պատերազմիք։ Եւ անկէ ետև Յեսու զանոնք զարկաւ մեռցուց, ու զանոնք հինգ ծառէ կախեց. և ծառերուն վրայ մինչև իրիկուն
27 կախուած մնացին։ Ու արևը մտնելուն՝ Յեսու հրամայեց, ու զանոնք ծառերուն վրայէն իջեցուցին, և իրենց պահուած այրին մէջը նետեցին զանոնք, ու այրին բերանը մեծ քարեր դրին, ար կա-
28 նան մինչև այսօր։ Եւ Յեսու նոյն օրը Մակեդան առաւ. ու զանիկայ սուրի բերնէ անցուց, և անոր թագաւորը՝ ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կոտորընցուց, և մէկը ողջ չթողուց. ու Մակեդայի թագաւորին անանկ ըրաւ, ինչպէս որ Երիքովի թագաւորին ըրած էր։
29 Ետքը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Մակեդայէն Լբնա անցան, ու Լբնային դէմ պատերազ-
30 մեցան. Եւ Տէրը զանիկայ ալ անոր թագաւորովը՝ Իսրայէլին ձեռքը մատնեց, և զանիկայ ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, և մէկը ողջ չթողուցին. և անոր թագաւորին անանկ ըրին, ինչպէս որ Երիքովի թագաւորին ըրած էր։
31 Ետքը Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Լբնայէն Լաքիսը անցան, և անոր քովը բանակելով,
32 անոր դէմ պատերազմեցան. Եւ Տէրը՝ Լաքիսը Իսրայէլին ձեռքը մատնեց, և զանիկայ երկրորդ օրը առնելով, զանիկայ ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին, ինչպէս որ Լբնային ըրած էին։
33 Ան ատենը Գազերի Հօրամ թագաւորը Լաքիսին օգնութիւն ընելու եկաւ. և Յեսու զանիկայ ու անոր ժողովուրդը կոտրեց, անանկ որ՝ անոնցմէ մէկը ողջ չմնաց։
34 Ետքը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Լաքիսէն Եգղոն անցան, և անոր քովը բանակելով, անոր
35 դէմ պատերազմ ըրին. Եւ զանիկայ նոյն օրը առնելով՝ սուրի բերնէ անցուցին. ու Յե՛՛՛ նոյն օրը՝ անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կոտրընցուց, ինչպէս որ Լաքիսին ըրած էր։
36 Ետքը Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլը Եգղոնէն Քերրոն եկան, ու անոր դէմ պատերազմ ըրին.
37 Եւ զանիկայ առնելէն ետքը՝ սուրի բերնէ անցուցին զանիկայ ու անոր թագաւորը, և անոր բոլոր քաղաքները, ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները. և մէկը ողջ չթողուցին, ինչպէս որ Եգղոնին ըրին.

Ն·Ք·ԴԸ· 1451

Յրթագ·ա· 18։
* Կ՛ր Ուղղին
Ես· Ը· 8։
Ել Օր· ա· 30։ Հմր 42։ Գւ· իգ· 3։ ‡ Հմր 43։
Յեղ·ժա·7։
Սաղ· ճէ· 40։ ճԺ·5։ ճխթ· 8։ 9։ Ես· իգ· 5, 6։ Մաղ· գ· 3։
Ել Օր· լ· 6, 8։ Գւ· ա· 9։
† Ր Օր· գ· 21։ Է· 19։
Ել·Ը·29։
Ել Օր·իա· 23։ Գւ·Ը· 29։
Ել·Ը·21։
Ես գԼ· ժգ· 13։ ժե· 13։ Դատ· ա· 10։

Ն · Ք · ԳՓ · 1451

այսպէս զանիկայ ու անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորսընցուց ։
38 Եփրը Յեսու և իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Դաբիր դարձաւ , ու
39 անոր հետ պատերազմեցաւ . Եւ զանիկայ ու անոր թագաւորը և անոր բոլոր քաղաքները առին , ու զանոնք սուրի բերնէ անցուցին . և անոր մէջ գտնուած բոլոր հոգիները կորսընցուցին , ՚ի մկը ողջ չթողուցին . ինչպէս որ Քերրոնին ըրաւ , և ինչպէս որ Լիբնային ու անոր թագաւորին ըրաւ , անանկ ալ Դաբիրին ու անոր թագաւորին ըրաւ ։
40 Եւ Յեսու բոլոր լեռնային՝ հարաւային՝ դաշտային՝ ու լեռնէրուն տակը եղած երկիրները և անոնց բոլոր թագաւորները զարկաւ , ՚ի մկը ողջ չթողուց , հապա ամէն շնչաւորը մեռցուց , ինչպէս որ Իսրայէլին Տէր Աստուածը պատուիրեր էր ։
41 Եւ Յեսու կադէս բառնեայէն մինչև Գազա , ու բոլոր Գոսոմի երկիրը մինչև Գաբաւոն՝
42 զանոնք զարկաւ ։ Եւ աս բոլոր թագաւորները ու անոնց երկիրը՝ Յեսու մէկէն առաւ . զքանզի Իսրայէլին համար՝ Իսրայէլի Տէր Աստուածը պատերազմ կ՚ընէր ։ Եւ
43 Յեսու ու իրեն հետ բոլոր Իսրայէլը՝ Գաղգաղա բանակը դարձան ։

Ն · Ք · ԳՓ · 1451

Տես Գէ · ԺԱ · 15 ։ Դատ · Ա · 11 ։

Ել Օր · Ի · 16 ։ 17 ։ Ես · Ժ · 19 ։ Գէ · ԺԱ · 16 ։ Հմր 14 ։

ԳԼ · ԺԱ

1 Քանի մը թագաւորներ Մառովնի ջուրին քովը կը յաղթուին ։ 10 Հասորը կը բռնուի ու կրակով կ՚այրուի ։ 16 Յեսու ան բոլոր երկիրը կ՚առնէ ։ 21 Ենակիմները կը կորզէ ։

1450

1 Եւ Հասորի Յաբին թագաւորը երբոր ՚ի Խնդրը լսեց , Մադոնի Յոբաբ թագաւորին՝ և ՚ի Սամրօնի թագաւորին ու Աքսափի թագաւորին՝ Եւ Հիւսիսային լեռները՝ ու ՚ի Քենեռեթի հարաւային դաշտը ու Հովիտը և արևմտեան կողմը՝ Դովրի դաւառներուն մէջը եղող
3 թագաւորներուն՝ Արևելեան ու արևմտեան կողմը եղող Քանանացիներուն՝ Ամորհացիներուն՝ Քետացիներուն՝ Փերեզացիներուն ու լեռնաբնակ Յեբուսացիներուն՝ և Հերմոնին տակը Մասփայի երկիրը եղող Խևացիներուն Մոբտ
4 խրկեց ։ Ուստի անոնք իրենց բոլոր բանակներովը ՚ի շատ ժողովուրդով ելան , ՚ի ծովուն եղերքը եղող աւազին չափ բազմաթիւ էին . և հեծեալ խիստ շատ ձիեր ու
5 կառքեր ՚ի ։ Եւ աս բոլոր թագաւորները միարանելով՝ մէկտեղ գային Մառովնի ջուրին քովը բանակեցան , որ Իսրայէլին հետ պատերազմին ։

Ես Գէ · ԺԱ · 15 ։ Դատ · Ա · 11 ։

Գէ · ԺԷ · 11 ։ Դատ · Ա · 27 ։ Գ Թագ · Գ · 11 ։

Գէ · ԺԳ · 11 ։ Ես · Լ · 49 ։ Դատ · Գ · 3 ։ Գէ · Ժ · 3 ։ Ես · Իբ · 17 ։ Լբ · 12 ։ Դատ · Է · 12 ։ Ա Թագ · ԺԳ · 5 ։

6 Եւ Տէրը Յեսուին ըսաւ . Մի՛ վախնար . քանզի վաղը աս ատենս՝ ես անոնց ամէնը Իսրայէլին առջևը կոտրուելու պիտի մատնեմ . ՚ի անոնց ձիերուն ջիղերը պիտի կտրես , ու անոնց կառքերն
7 ալ կրակով այրես ։ Ուստի Յեսու և իրեն հետ բոլոր պատերազմական ժողովուրդը՝ յանկարծակի Մառովնի ջուրին քովը անոնց դէմ երթալով՝ վրանին յարձակեցան ։
8 Եւ Տէրը զանոնք Իսրայէլին ձեռքը տուաւ , ու զանոնք զարկին , և մինչև մեծ Սիդոնը ու ՚ի Մասրեփոթմայիմը , և մինչև Մասփայի Հովիտը դէպ՚ի արևելք հալածեցին , ու զանոնք զարկին՝ մինչև որ անոնցմէ մէկ
9 կը չազատեցաւ ։ Եւ Յեսու անոնց այնպէս ըրաւ , ինչպէս որ Տէրը իրեն ըսեր էր . անոնց ձիերուն ջիղերը կտրեց , ու անոնց կառքերը կրակով այրեց ։
10 Եւ նոյն ատենը Յեսու դարձաւ՝ Հասորը առաւ , ու անոր թագաւորը սրով մեռցուց . քանզի Հասորը առաջուց աս բոլոր թագաւորութիւններուն գլուխն էր . Եւ անոր մէջ գտնուած բոլոր հոգիները սուրի բերնէ անցուցին , ու բնաջինջ ըրին . բնաւ մէկ շնչաւոր մը չմնաց . ու Հասորը կրակով այ-
12 րեց ։ Ուստի Յեսու աս թագաւորներուն բոլոր քաղաքները՝ ու անոնց բոլոր թագաւորները առաւ , և զանոնք սուրի բերնէ անցընելով՝ բնաջինջ ըրաւ , ինչպէս որ Տէրոջը ծառան Մովսէս պատուիրեր
13 էր ։ Բայց Իսրայէլ չայրեց ան քաղաքները՝ որոնք իրենց հողաբլուրներուն վրայ կը կենային , բայց միայն
14 Հասորը՝ որ Յեսուն այրեց ։ Եւ աս քաղաքներուն բոլոր աւարը ու անասունները՝ Իսրայէլի որդիքը իրենց առին . բայց բոլոր մարդիկները սուրի բերնէ անցուցին , մինչև որ զանոնք բնաջինջ ըրին , ՚ի բնաւ մէկ շնչաւոր մը չթողուցին ։
15 ՚ի Ինչպէս որ Տէրը իր Մովսէս ծառային պատուիրեր էր , անանկ ՚ի Մովսէս Յեսուին պատուիրեց , ու Յեսուն ՚ի այնպէս ըրաւ . ՚ի ինչ որ Տէրը Մովսէսին պատուիրեր էր , բնաւ անոնց մէկը զանց չըրաւ ։
16 Ուստի Յեսու ան բոլոր երկիրը առաւ , Լեռնակողմը՝ ու բոլոր հարաւային կողմը՝ Եւ բոլոր Գոսոմի երկիրը՝ Հովիտը ու դաշտը՝ և Իսրայէլի լեռը ու անոր Հովիտը՝
17 Մէկիրը ելլող քալակ լեռնէն մինչև Հերմոն լեռանը տակը Լիբանանու Հովտին մէջը եղող Բաաղգադը՝ և անոնց բոլոր թագաւորները բռնեց , ու զանոնք զարկաւ մեռցուց ։

Ն · Ք · ԳՓ · 1450

Գէ · Ժ · 8 ։

Բ Թագ · Բ · 4 ։

Գէ · ԺԳ · 6 ։

Ա Հմր 6 ։

Թուա · ԼԳ · 52 ։ Բ Օր · Է · 2 ։ Ի · 16 ։ 17 ։

Ես Գէ · ԺԱ · 11 ։ 12 ։

Ել Օր · Է · 2 ։ Հ Գէ · Ա · 7 ։

Գէ · Ժ · 8 ։ Գէ · Ժ · 41 ։

Գէ · Ժ · 7 ։

Ե Օր · Է · 24 ։ Գէ · Ժ · 7 ։

18 Ցեսու ասս բոլոր թագաւորներուն հետ շատ օրեր պատերազմ ըրաւ։
19 Գաբաւոնի մէջ բնակող Խևացիները՝ ի զատ՝ Իսրայէլի որդւոցը հետ հաշտութիւն ընդ. քաղաք մը չկար. ամէնն ալ պատերազմով
20 առին. Քանզի Աստուծոյ սրտին կարծրանալը՝ ու պատերազմով Իսրայէլին դէմ դնելնին Ցերոջմէն եղաւ, որ անոնց ողորմութիւն չըլլալով՝ զանոնք կորսընցընէ ու բնաջինջ ընէ, Հինչպես որ Տէրը Մովսէսին պատուիրեր էր։
21 Եւ ան ատենը Ցեսու գնաց՝ ու լեռներէն՝ Քերրոնէն, Դաբիրէն, Ընաբէն ու Յուդայի բոլոր լեռներէն Ենակիմները կոտրեց. Ցեսու զանոնք՝ իրենց քաղաքներովը Ջկտեղ
22 կորսընցուց։ Եւ Իսրայէլի որդւոցը երկրին Ջէ՛ չմնաց, բայց միայն Գազայի, Գէթի ու Ազովդի Ջ մնացին։
23 Ու Ցեսու բոլոր երկիրը առաւ, Հինչպես որ Տէրը Մովսէսին պատուիրեր էր, և Ցեսու զանիկայ Իսրայէլին ժառանգութիւն տուաւ, անոնց ցեղերուն բաժիններուն համեմատ. ու երկիրը պատերազմէն հանդստացաւ։

ԳԼ. ԺԲ

1 Ըն երկու թագաւորները՝ որոնց երկիրները Մովսէս առաւ ու բաժին ըրաւ։ 7 Յորդանանու Ջկալ դին եղած երսունուՋկ թագաւորները՝ որոնք Ցեսու զարկաւ։

1 Ասոնք են ան երկրին թագաւորները՝ որ Իսրայէլի որդիքը զանոնք զարկին, ու անոնց երկիրները առին, Յորդանանու անդիի կողմը դէպ ի արևելք, Առնոն ձորէն Մինչև Հերմոն լեռը՝ արևելեան
2 կողմին բոլոր դաշտովը, Եսերոնի Ջ բնակող Ամորհացւոց Սհոն թագաւորը, որ անիկայ՝ Առնոն ձորին եզերքը եղող Արոերէն, և ձորին Ջէջտեղէն, ու Գազաադին կէսէն Մինչև Ամմոնի որդւոցը սահ-
3 մանը եղած Յաբոկ ձորը, նաև Դաշտին, արևելեան կողմէն Մինչև Քինէրեթի ծովը, ու արևելեան կողմէն Բեթեսիմոթի ճամբան, ու հարաւային կողմէն Ազեդովմի փասգային տակը՝ Մինչև դաշտի ծովը՝ Ջէհոն Մինչև Աղի ծովը կը տի-
4 րէր. Ու Հսկաներուն մնացորդէն Բասանի Ովգ թագաւորին սահմանը՝ Որ անիկայ Աստարովթի
5 ու Եդրայիի Ջէ կը բնակէր, Եւ կը տիրէր Հերմոն լեռանը, ու Սելքայի և բոլոր Բասանի Մինչև Գեսուրացւոց ու Մաքաթացւոց սահմանը, ու մինչև Գաղաադին կէսը, Ջէ Եսեբոնի Սհոն թագաւորին սահմանն էր։
6 Որին սահմանն էր։ Ասոնք Տէրոջը ծառան Մովսէս Իսրայէլի որդւոցը հետ զարկաւ, ու Ջէ Ռուբենեանց, Գադեանց ու Մանասէի կէս ցեղին ժառանգութիւն տուաւ։
7 Եւ ասոնք են երկրին թագաւորները, Որ Ցեսու ու Իսրայէլի որդիքը զարկին Յորդանանու ասդիի կողմէ դէպ ի արևմուտք, Լիբանանու Հովտին Ջէջը եղող Բաաղգադն Մինչև Քալակ լեռը, որ Սէիրը կ'ելլէ. և Ցեսու Ռուբենեանց՝ Իսրայէլի ցեղերուն ժառանգութիւն տուաւ իրենց վիճակնե-
8 րուն համեմատ. Լեռներուն՝ ու Հովիտներուն՝ ու դաշտերուն Ջէջը՝ ու լեռներուն ստորոտները՝ և անապատը, ու Հարաւային կողմը Քետացիները՝ Ամորհացիները՝ Քանանացիները՝ Փերեզացիները՝ Խևացիները ու Յեբուսացիները։
9 Սացիները՝ Երիքովի թագաւորը Ջկ. Բեթէլի քովը եղող Գա-
10 յիի թագաւորը Ջկ. Երուսաղեմի թագաւորը Ջկ. Քեբրոնի
11 թագաւորը Ջկ. Յերիմութի թագաւորը Ջկ. Լաքիսի թագաւորը Ջկ. Եգղոնի թագաւորը Ջկ.
12 Գազերի թագաւորը Ջկ. Դաբիրի թագաւորը Ջկ. Գադերի
13 թագաւորը Ջկ. Հորմայի թագաւորը Ջկ. Արադի թագաւորը Ջկ. Լիբնայի թագաւորը Ջկ.
14 Ադողոմի թագաւորը Ջկ. Մակեդայի թագաւորը Ջկ. Բեթէլի
15 թագաւորը Ջկ. Թափուայի թագաւորը Ջկ. Ոփերի թագաւորը
16 Ջկ. Փափեկի թագաւորը Ջկ. Լասարոնի թագաւորը Ջկ. Մադոնի
17 թագաւորը Ջկ. Հասորի թագաւորը Ջկ. Սիմրոն մառոնի թագաւորը Ջկ. Աքսափի թագաւորը
18 Ջկ. Թանաքի թագաւորը Ջկ.
19 Մակեդդովի թագաւորը Ջկ. Կադեսի թագաւորը Ջկ. Կարմելոս եղած Ջեկնեամի թագաւորը Ջկ.
20 Դովրի գաւառին Ջէջը՝ Դովրի թագաւորը Ջկ. Գազաղազային
21 Գոյիմի թագաւորը Ջկ. Թերսայի թագաւորը Ջկ. Թագաւորներուն ամէնը երսունուՋկ էին։

ԳԼ. ԺԳ

1 Դեռ չառնուած երկրին սահմանները։ 8 Երկուք ու կէս ցեղերուն ժառանգութիւնը։ 14, 33 Տէրը ու իրեն մատուցուած զոհերը Ղևիին ժառանգութիւնը պիտի ըլլային։ 15 Ռուբենին ժառանգութեանը սահմանները։ 22 Բաղաամին մեռցուիլը։ 24 Գադին, 29 և Մանասէի կէս ցեղին ժառանգութեանը սահմանները։

Ն·Ք·ԳԲ· 1445

— Տես գլ· ԺԳ· 10։ իդ· 1։

Բ Դատ. գ· 1։

է Ցովել· գ· 4։

Ը Հմր 13։ Բ Թագ· գ· 3։ ԺԳ· 37 38։

Ի Երեմ· բ· 18։

Լ Դատ. գ· 3։ ա Թագ· գ· 4, 16։ Սոփ· բ· 5։

Ի Բ Օր· բ· 23։

Ը Գլ· ԺԹ· 30։

Ի Տես Դատ· ա· 34։

Ժ Գթագ· ե· 18։ Սաղ· ՃԳ· 7։ Եզեկ· իէ· 9։

Ի Գլ· ԺԲ· 7։

Լ Գլ· ԺԱ· 8։

Ի Տես գլ· իգ· 13։ Դատ· բ· 21, 23։

Ժ Գլ· ԺԳ· 1, 2։

Ա Ես ասացի ձեզ, Ես եմ Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Բ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Գ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Դ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Ե Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Զ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Է Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Ը Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Թ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Ժ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԱ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԲ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԳ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԴ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԵ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԶ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԷ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԸ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

ԺԹ Ես ասացի ձեզ, Ես եմ Տէր Աստուած ձեր։ Մի՛ վախենայք Ամորհացւոց աստուածներէն, որոց երկրին մէջ դուք կը բնակիք։ Բայց ինձ չլսեցիք։

Յ ԹՈՒ · իա · 21 · 33 · Բ Օր · Բ · 32 · գ · 1 ·

Ն ՏԵՍ ԴԱՏ · Ժա · 25 ·

Լ ԹՈՒ · Իբ · 5 · Բ Օր · Իգ · 4 ·
Ր Օր · Իգ · 5 ·
Ղ ԹՈՒ · Իգ · 11 · 20 · Իդ · 10 ·
Ղ ԳԼ · գ · 14 · 17 · գ · 10 · 11 · 12 ·
Ը ԳԼ · է · 1 · Ժ · 1 · Ժա · 1 ·

Ր ԵԼ · Իգ · 28 · Բ Օր · է · 20 ·

Ր ՍԱՂ · Խգ · 3 · 6 ·

Ճ Բ Օր · գ · 10 · 11 · ԳԼ · Ժա · 13 ·

Ր Բ Օր · Ժ · 12 · ԱԹԱԳ · Ժբ · 24 ·

ն ԾՆ · լե · 4 ·
Բ ԳԼ · Իգ · 2 ·

է ԱԹԱԳ · Ժ · 19 ·

Ր ԾՆ · Ժա · 26 · 31 ·

վախցէք , և անոր ր հաւատարմու-
թեամբ ու ճշմարտութեամբ ծա-
ռայութիւն ըրէք , և զան ա-
տուածները՝ որոնց ձեր հայրերը
գետին անդիի կողմը ու Եգիպ-
տոսի մէջ ծառայութիւն ըրին ,
մէկդի ձգեցէք , և Տէրը պաշտե-
15 ցէք ։ Բայց թէ որ Տէրոջը ծա-
ռայութիւն ընելը՝ ձեզի հաճոյ
չերեւնար , ընտրեցէք այսօր
թէ որ պիտի պաշտէք , Գետին
անդիի կողմը ձեր հայրերուն պաշ-
տած աստուածները , թէ Ամո-
հացւոց աստուածները որ դուք ա-
նոնց երկրին մէջը կը բնակիք .
բայց ես ու իմ տունս Եհովան
պիտի պաշտենք ։
16 Եւ ժողովուրդը պատասխան
տուաւ՝ ու ըսաւ . Քաւ լեցի , որ
մենք Եհովան թողունք և ուրիշ
17 աստուածներ պաշտենք . Քանզի
Եհովան ինքն է մեր Աստուածը" ,
որ մեզ ու մեր հայրերը Եգիպտոսի
երկրէն՝ ծառայութեան տունէն
հանեց , և ինքը մեր աչքերուն առ-
ջեւը այս մեծ նշանները ըրաւ , ու
մեզ պահեց մեր ամէն գացած ճամ-
բուն մէջը և ամէն ազգերուն մէջը ,
18 որոնց մէջէն որ անցանք ։ Ու Եհո-
վան բոլոր ազգերը՝ ու երկրիս
մէջ բնակող Ամորհացիները մեր
առջեւէն վռնտեց . մենք ալ Եհո-
վան պիտի պաշտենք , որովհետեւ
մեր Աստուածը ինքն է ։
19 Եւ Յեսուա ժողովուրդին ըսաւ .
Դուք չէք կրնար Եհովան պաշ-
տել . քանզի անիկայ սուրբ Աս-
տուած է . ու անիկայ նախանձոտ
Աստուած ըլլալով՝ ձեր յան-
ցանքները ու մեղքերը չներեր ։
20 Քանզի երբոր Եհովան թողուք
ու օտար աստուածները պաշտէք ,
չան առնէր պիտի դառնայ , ու ձեզ
բարիք ընելուն տեղը" ձեզ
չարչարելով բնաջինջ պիտի ընէ ։
21 Եւ ժողովուրդը Յեսուին ըսաւ .
Ձէ . հապա մենք Եհովան պիտի
պաշտենք ։
22 Ու Յեսուա ժողովուրդին ըսաւ .
Դուք ձեր անձանց վկայ էք , որ
դուք ձեզի Եհովան ընտրեցիք՝
զանիկայ պաշտելու համար . (ու
23 անոնք ըսին . Վկայ ենք .) Ուրեմն
հիմա ձեր մէջը եղած օտար աս-
տուածները վերցուցէք , և ձեր
սիրտը Իսրայէլի Տէր Աստուծոյն
24 դարձուցէք ։ Ու ժողովուրդը Յե-
սուին ըսաւ . Մենք մեր Տէր Աս-
տուածը պիտի պաշտենք , ու ա-
նոր խօսքը մտիկ ընենք ։
25 Եւ նոյն օրը Յեսուա ժողովուր-
դին հետ ուխտ ըրաւ , ու Սիւքե-
մի մէջ անոր կանոն ու դատաստան
26 դրաւ ։ Եւ Յեսուա էս խօսքերը՝
Աստուծոյ օրինաց գրքին մէջը գր-
բեց , ու մէկ մեծ քար մը առաւ ,
և զանիկայ Տէրոջը սրբարանին մէ-
ջը եղած Եբեւկինիին տակը կանգ-
27 նեց ։ Ու Յեսուա բոլոր ժողովուր-
դին ըսաւ . Ահա աս քարը մեզի
վկայ ըլլայ . քանզի հասիկայ Տէրո-
ջը մեզի հետ խօսած բոլոր խօսքերը
լսեց . ուստի անիկայ ձեզի վկայ
ըլլայ , որ չըլլայ թէ ձեր Աստուա-
28 ծը ուրանաք ։ Ետքը Յեսուա ժո-
ղովուրդը արձակեց . ամէն մարդ
իր ժառանգութեանը ։
29 Ետքը աս բաներէն Տէրոջը
ծառան Նաւեան Յեսուն մեռաւ ,
հարիւր տասը տարեկան ։
30 Ու զանիկայ՝ իր ժառանգութեանը
սահմանին մէջը՝ Գաաս լեռանը
հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը՝
Թամնաթ սարային մէջը թաղե-
ցին ։
31 Եւ Յեսուէն երբոր օրերուն մէջը ,
ու Յեսուէն ետքը ողջ մնացող՝ և
Իսրայէլի համար Տէրոջը բրած ա-
մէն գործքերը գիտցող ծերերուն
բոլոր օրերուն մէջը՝ Իսրայէլը Տէ-
րոջը ծառայութիւն րրաւ ։
32 Եւ Յովսեփին ոսկորները՝ որ
Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հա-
ներ էին , Սիւքեմի մէջ թաղե-
ցին՝ ադարակին ան մասին մէջ ,
Հորն որ Յակոբ՝ Սիւքեմի հօրը Ե-
մովրին որդիներէն հարիւր կտոր
արծաթի" ծախու առեր էր . ու
անիկայ՝ Յովսեփի որդւոցը ժա-
ռանգութիւնը եղաւ ։
33 Ահարոնի որդին Եղիազարն ալ
մեռաւ , ու զանիկայ՝ Եփրեմի լեռը՝
անոր որդւոյն Փենհեսին տրուած
բլուրին վրայ թաղեցին ։

Ն · ք · գԴ · Իրր 1427

ր Ծն . ժէ . 1 ։ ի . 5 ։ բ Օր . ժբ . 13 ։ Ած . ՃԺԹ . 1 ։ բ Կոր . ա . 12 ։ Եփես . գ . 24 ։ ց Հմր 2 . 23 ։ Ղև . ժէ . 7 ։ Եզեկ . ի . 18 ։

– Եզեկ . ի . 7 , 8 ։ իգ . 3 ։

† Տես Հռոմ . ա . 15 ։ գԹագ . ժբ . 21 ։ Եզեկ . ի . 39 ։ Ցոն . գ . 67 ։

+ Հմր 14 ։

ֈ Եր . իգ . 24 , 32 , 33 ։ լԴ . 15 ։ բ Օր . ժգ . 7 ։ ԻԹ . 18 ։ Դատ . գ . 10 ։

‡ Ծն . ժբ . 19 ։

* Կ՚ըսէ՝ մեր Եհովայ Աստուածը ինքն է ,

– Մատ . գ . 24 ։

Բ Ղև . ժԹ . 2 ։ աԹագ . գ . 20 ։ Ած . գԹ . 5 , 9 ։ Եսա . ե . 16 ։

† Եր . ի . 5 ։

Ֆ Եր . իգ . 21 ։

Ե ա Մն . իբ . 9 ։ բ Մն . ժէ . 2 ։ Եզր . բ . 22 ։ Եսա . ա . 28 ։ կե . 11 , 12 ։ Ենմ . ժէ . 13 ։

Ղ Գ . իգ . 15 ։ Եսա . կգ . 10 ։ Գօր . է . 42 ։

† Եբ . բնե . լէն հարը՝

Ի Ած . ՃԺԹ . 173 ։

Ն · ք · գԴ · Իրր 1427

ը Հմր 14 ։ Ծն . լե . 2 ։ Դատ . ժ . 16 ։ աԹագ . է . 3 ։

Բ Տես Եր . ժե . 25 ։ գԹագ . ժա . 17 ։

ֈ Հմր 26 ։

Է բ Օր . լ . 24 ։

Լ Տես Դատ . Թ . 6 ։

Ի Ծն . լե . 4 ։

Ֆ Տես Ծն . իր . 18 ։ ԳԼ . գ . 3 ։

Ն Տես Ծն . լա . 48 , 52 ։ բ Օր . լա . 19 , 21 , 26 ։ ԳԼ . իր . 27 , 28 , 34 ։

հր Օր . լբ . 1 ։

Իրր 1426

Ց Դատ . բ . 6 ։

Ը Դատ . բ . 8 ։

Ֆ Գե . ժԹ . 50 ։ Դատ . բ . 9 ։

Ժ Տես բ Օր . ժա . 2 ։ լա . 13 ։

Յ Դատ . բ . 7 ։

Ն Ծն . ժ . 25 ։ Եր . ժգ . 19 ։

Ը Ծն . լԴ . 19 ։

‡ Կ՚ըսէ՝ դառնակի

Իրր 1420

– Եր . գ . 25 ։ Դատ . ի . 28 ։

ԳԻՐՔ ԴԱՏԱՒՈՐԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Ն · Ք · ԳՔ · իրր 1425

1 Յուդայի ու Շմաւոնի ցեղերուն գործերը ։ 4 Ադոնիբեզեկ իրաւունքով կը պատժուի ։ 8 Երուսաղէմը կ'առնուի ։ 10 Քեբրոնը կ'առնուի ։ 11 Դոթնիէլ՝ Դարիրը առնելուն համար, Աքսան իրեն կնութեան կը տրուի ։ 16 Կինեցիները Յուդայի հետ կը բնակին ։ 17 Հորման, Գազան, Ասկաղոնը ու Ակկարոնը կ'առնուին ։ 21 Բենիամինեանց գործերը ։ 22 Յովսեփի որդիքը Բեթէլը կ'առնեն ։ 30 Զաբուղոնի, 31 Ասերի, 33 Նեփթաղիմի, 34 ու Դանի ցեղերուն գործերը ։

1 Եւ եհոսուին մեռնելէն ետքը՝ Իսրայէլի որդիքը Տէրոջը հարցուցին, ու ըսին. Մեզի համար՝ քանանացւոց վրայ առաջ ո՞վ ելլէ՝

– Թուա · իէ · 21 ։ Դւ · ի · 18 ։

2 անոնց հետ պատերազմելու ։ Եւ Տէրը ըսաւ. Յուդան թող ելլէ. ահա երկիրը անոր ձեռքը տուի ։

Բ Ծն · խթ · 8 ։

3 Եւ Յուդա՝ իր եղբօրը Շմաւոնին ըսաւ. Ինծի հետ իմ վիճակս ելիր, ու քանանացւոց հետ պատերազմինք, և ես ալ քեզի հետ քու վիճակդ երթամ. ու Շմաւոն անոր

Է Հմր 17 ։

4 հետը գնաց ։ Եւ Յուդա ելաւ, ու Տէրը՝ քանանացիները ու Փերեզացիները անոնց ձեռքը տուաւ. ու անոնցմէ Բեզեկի մէջ տասը հազար մարդ կոտրեցին ։

Ը Թագ · ժա · 8 ։

5 Եւ Բեզեկի մէջ Ադոնիբեզեկը գտնելով՝ անոր հետ պատերազմեցան, ու քանանացիները և Փերեզացիները զարկին ։ Եւ Ադոնիբեզեկ փախաւ. բայց անոնք անոր ետևէն իյնալով՝ ընկերայ բռնեցին, ու անոր ձեռքերուն ու ոտքերուն մեծ մատները

6 կտրեցին ։ Եւ Ադոնիբեզեկ ըսաւ. Ձեռքերնուն ու ոտքերնուն մեծ մատները կտրած եօթանասուն թագաւորներ՝ իմ սեղանիս տակը հաւաքոնտիները կը ժողվէին. ես ինչպէս որ ըրի, Աստուած ալ ինծի այնպէս հատուցում ըրաւ ։ Եւ զանիկայ Երուսաղէմ տարին, ու հոն մեռաւ ։

Ղ · իդ · 19 ։ աթագ · ժե · 33 ։ Ցակ · բ · 13 ։

7 Եւ Ցուդայի որդիքը Երուսաղէմի հետ պատերազմ ընելով՝ զանիկայ առին, ու սուրի բերնէ անցընելով՝ քաղաքը կրակով այրեցին ։

Ղ Ցես · ժ · 63 ։

8 Եւ Ցուդայի որդիքը Երուսաղէմի հետ պատերազմ ընելով՝ զանիկայ առին, ու սուրի բերնէ անցընելով՝ քաղաքը կրակով այրեցին ։

Ե Ցես · ժ · 36 ։ ժա · 21 ։ ժե · 13 ։

9 Ետքը Ցուդայի որդիքը վար իջան, որ լեռնակողմը՝ ու հարաւային կողմը՝ ու դաշտի մէջ բնակող քանանացւոց դէմ պա-

10 տերազմին ։ Եւ Ցուդա՝ Քեբրոնի մէջ բնակող քանանացիներուն վրայ գնաց. (ու Քեբրոնին անունը առաջուց Կարիաթ արբա էր.) և անոնք Սեսային, Աքիմանը ու Թոլմին զար-

11 կին ։ Եւ անկէ Դաբիրի բնակիչները վրայ գնաց. (ու Դաբիրին անունը առաջուց Կարիաթ սեփեր

12 էր.) Եւ Քաղէբ ըսաւ. Ո՛վ որ Կարիաթ սեփերը զարնէ ու առնէ, իմ աղջիկս Աքսան անոր կնու-

13 թեան պիտի տամ ։ Ուստի Քաղէբին պզտիկ եղբօրը Կենեզին որդին Գոթնիէլը ընդունելով առաւ զանիկայ. և Քաղէբ իր աղջիկը Աք-

14 սան անոր կնութեան տուաւ ։ Ու երբոր աղջիկը անոր կ'երթար, զանիկայ յորդորեց որ իր հօրմէն ագարակ մը ուզէ. և էշէն վար իջաւ. ու Քաղէբ ըսաւ անոր.

Ը Ցես · ժե · 18 · 19 ։

15 Քեզի ի՞նչ եղաւ ։ Եւ աղջիկը անոր ըսաւ. Ինծի օրհնութիւն տուր. որովհետև ինծի հարաւային երկիր մը տուիր, ինծի ջուրի աղբիւրներ ալ տուր ։ Ուստի Քաղէբ վերի աղբիւրները ու վարի աղբիւրները տուաւ անոր ։

Ի Ծն · լդ · 11 ։

16 Եւ Մովսէսին աներոջը Կենեզիին որդիքը՝ Ցուդայի որդւոցը հետ Արմաւենեաց քաղաքէն՝ Արադի հարաւային կողմը եղող Ցուդայի անապատը ելան, ու գացին ժողովուրդին հետ բնակեցան ։

Բ Գւ · դ · 11 · 17 ։ աթագ · ժե · 6 ։ ա Մն · բ · 55 ։ Երեմ · լե · 2 ։

17 Եւ Ցուդա իր եղբօրը Շմաւոնին հետ գնաց. ու Սեփաթի մէջ բնակող քանանացիները զարկին, և զանիկայ նզովեցին, ու անունը Երմաւ կոչեցին ։

Իրր 1425

Ա Բ Օր · լդ · 3 ։ Հ Թուա · իա · 1 ։ Յ Թուա · ժ · 32 ։ Ղ Հմր 3 ։ Ճ Թուա · իա · 3 ։ Ցես · ժԹ · 4 ։ * Յր՝ Նզովք ։ * Ցես · ժա · 22 ։ Ա Հմր 2 ։ գ Թագ · ժբ · 7 ։ Ն Ցես · ժէ · 16 · 18 ։ Շ Թուա · ժդ · 24 ։ Բ Օր · ա · 36 ։ Ցես · ժդ · 9 · 13 ։ ժե · 13 · 14 ։ * Տես Ցես · ժե · 63 ։ ժբ · 28 ։

18 Եւ Յուդա՝ Գազան ու անոր սահմանը, և Ասկաղոնը ու անոր սահմանը, և Ակկարոնը ու

19 անոր սահմանները առին ։ Եւ * Տէրը Յուդային հետ էր, ու անիկայ լեռնանը տիրեց. բայց հովիտներուն բնակիչները չկրցաւ վռնտել, քանզի անոնք * երկաթէ կառքեր

20 ունէին ։ Ու Քեբրոնը Քաղէբին տուին, ինչպէս որ Մովսէս ըսեր էր. ու անկէ Ենակին իրեք որդիները վռնտեց ։

21 * Եւ Բենիամինի որդիքը՝ Երու-

ն · ք · ղԲ · Իսր 1425

սաղէմի մէջ բնակող Եբրուսացի-
ները չվռնտեցին . ու Եբրուսացիք
Բենիամինի որդւոցը հետ Երուսա-
ղէմի մէջ բնակեցան մինչև ասօր ։
22 Եւ Յովսեփին տունն ալ Բե-
թէլի վրայ ելան . և ու Տէրը անոնց
23 հետն էր ։ Եւ Յովսեփին տունը՝
Բեթէլը լրտեսեցին . (ու ան քա-
ղաքին անունը առաջուց Լուզ
24 էր .) Եւ պահապանները մարդ մը
տեսան որ ան քաղաքէն կ'ելլէր ,
ու անոր ըսին . Ընորհք ըրէ , քա-
ղաքը մտնելու կողմը մեզի ցու-
ցուր , ու քեզի ողորմութիւն կ'ը-
25 նենք ։ Եւ անիկայ՝ քաղաքը մտնե-
լու կողմը ցուցուց անոնց . ու քա-
ղաքը սուրի բերնէ անցուցին , բայց
ան մարդը և անոր բոլոր ազգատոհ-
26 մը թող տուին . Ու ան մարդը
հետացաւ երկիրը գնաց , և հոն
մէկ քաղաք մը շինեց , ու անոր
անունը Լուզ կոչեց . և մինչև ասօր
անոր անունը ասի է ։
27 Ու Մանասէն՝ Բեթսանը և ա-
նոր գիւղաքաղաքները , Թանաքը
ու անոր գիւղաքաղաքները , Դով-
րի բնակիչները և անոր գիւղաքա-
ղաքները , Եբղաամի բնակիչները
ու անոր գիւղաքաղաքները , Մա-
կեդդովի բնակիչները ու անոր գիւ-
ղաքաղաքները չզարկաւ . և Քա-
նանացիք կամակորութեամբ ասի
28 երկրին մէջ բնակեցան ։ Ու երբոր
Իսրայէլը ուժովցաւ , քանանացի-
ները հարկատու ըրաւ , բայց զա-
նոնք բոլորովին չվռնտեց ։
29 Եփրեմն ալ՝ Գազերի մէջ բնա-
կող քանանացիները չվռնտեց . ուս
քանանացիք անոր հետ Գազերի
մէջ բնակեցան ։
30 Զաբուղոնը՝ Կեթրոնի բնակիչ-
ները և Նաաղոլի բնակիչները չը-
վռնտեց . ու քանանացիք անոնց
մէջը բնակելով , հարկատու եղան ։
31 Ասերը՝ Ակքովի բնակիչները , ու
Սիդոնի , Ախլաբի , Աքզիբի ,
Ելբայի , Ափեկի ու Րոոբի բնա-
32 կիչները չվռնտեց . Հապա Աս-
բենք՝ ան երկիրը բնակող քա-
նանացւոց մէջը բնակեցան , որով-
հետև զանոնք չվռնտեցին ։
33 Նեփթաղիմը՝ Բեթսամիսի բը-
նակիչները ու Բեթանաթի բնա-
կիչները չվռնտեց . Հապա ան եր-
կիրը բնակող քանանացւոց մէջը
բնակեցաւ . և Բեթսամիսին ու
Բեթանաթին բնակիչները անոր
հարկատու եղան ։
34 Եւ Ամորհացիք՝ Դանի որդիները
լեռան վրայ նեղը ձգեցին . քանզի
անոնց թող չտուին որ հովիտները
35 իջնեն ։ Ու Ամորհացիք կամակո-
րութեամբ Հարես լեռը , Այղո-
նի ու Սաղաբինի մէջ բնակեցան .
բայց երբոր Յովսեփին տանը ձեռքը
ուժովցաւ , անոնք հարկատու ե-
36 ղան ։ Եւ Ամորհացւոց սահմանը՝
Ակրաբիմի զառ՝ի վերէն՝ Վէմին
՝ի վեր էր ։

ն · ք · ղԲ · Իսր 1425

ֆ Թուս · լդ · 4 ։ Ցես · ժե · 3 ։

Գլ · Բ

1 Հրեշտակ մը Բոքիմի մէջ ժողովուրդը կը յան-
դիմանէ ։ 6 Ցեսուէն ետքը եկող նոր սերունդին
ըրած չարութիւնը ։ 14 Աստուծոյ անոնց
վրայ բարկանալը ու գթալը ։ 20 Աստուած
քանանացիներուն միջոցովը Իսրայէլը կը
փորձէ ։

1 Յու Տէրոջը հրեշտակը Գաղգաղա-
յէն Բոքիմը ելաւ , ու ըսաւ .
Ձեզ Եգիպտոսէն հանեցի , և ձեզ
ան երկիրը բերի , որուն համար ձեր
հայրերուն երդում ըրեր էի . ու
ըսի որ՝ Ձեզի հետ ըրած ուխտս
2 յաւիտեան պիտի չաւրեմ . Եւ
դուս երկրին բնակչացը հետ դաշ-
նակցութիւն մի՛ ընէք , զանոնց
սեղանները փլցուցէք . բայց դուք
իմ խօսքիս ձայնդութիւն չը-
րիք . ինչո՞ւ համար աս բանը ը-
3 րիք ։ Եես ալ ըսի . Զանոնք ձեր
առջևէն պիտի չվռնտեմ , հապա
անոնք ձեզի թշնամի , ու անոնց
աստուածներն ալ ձեզի ծորոգայթ
4 պիտի ըլլան ։ Ու երբոր Տէրոջը
հրեշտակը՝ բոլոր Իսրայէլի որդւոցը
աս խօսքերը ըսաւ , ժողովուրդը
5 ձայնը վերցընելով՝ լացաւ ։ Եւ
ան տեղին անունը Բոքիմ կոչե-
ցին . ու հոն Տէրոջը զոհ մատու-
ցին ։
6 Ու երբոր Յեսուս ժողովուրդը
արձակեց , Իսրայէլի որդիքը՝ ամէն
մէկը իր կալուածքը գնաց , երկիրը
7 ժառանգելու համար ։ Եւ ժողո-
վուրդը՝ Եեսուին բոլոր օրերուն
մէջ , ու Եեսուէն ետքը ողջ մնա-
ցող՝ և Իսրայէլի համար Տէրոջը ը-
րած ամէն մեծ գործքերը տեսնող
ծերերուն բոլոր օրերուն մէջ՝ Տէրո-
8 ջը ծառայութիւն ըրին ։ Եւ Տէ-
րոջը ծառան Եեսու Նաւեան՝ հա-
9 րիւր տասը տարեկան մեռաւ . Ու
զանիկայ իր ժառանգութեանը
սահմանին մէջ՝ Գասս լեռանը
հիւսիսային կողմը՝ Եփրեմի լեռը
Թամնաթ Սարեսին մէջը թաղե-
10 ցին ։ Եւ ան դարուն բոլոր մարդիկ-
ները իրենց հայրերուն խառնուե-
ցան . ու անոնցմէ ետքը մէկ ուրիշ
ազգ մը ելաւ , որ Տէրը ու Իսրա-
յէլի համար անոր ըրած գործքերը
չճանչցան ։
11 Եւ Իսրայէլի որդիքը Տէրոջը առ-
ջևը չարութիւն ըրին , ու Բահա-
12 ղիմը պաշտեցին . Եւ Տէրոջը հին
իրենց հայրերուն Տէր Աստուածը ,
որ զիրենք Եգիպտոսի երկրէն հա-

ն · ք · ղԲ · Իսր 1425

– Հմր 5 ։

Բ Ել · ժե · 7 ։

դ Բ Օր · է · 2 ։ Բ Բ Օր · ժբ · 3 ։

է Հմր 20 ։ Սաղ · ճգ · 34 ։

ղ Ցես · իդ · 13 ։

է Գլ · գ · 6 ։ ը Եզ · իդ · 33 ։ լդ · 12 ։ բ Օր · է · 16 ։ Սաղ · ճգ · 36 ։

* Յն՝ լացողներ ։

ը Ցես · իբ · 6 ։ իդ · 28 ։

Իսր 1444

թ Ցես · իդ · 31 ։

ժ Ցես · իդ · 29 ։

ի Ցես · իդ · 30 ։

Իսր 1426

լ Ող Ցես · ժթ · 50 ։ իդ · 30 ։ Եբ-
րայեցի թուա-
նախօսութեան ։

է Ել · ե · 2 ։ ա թագ · բ · 12 ։ ա Մն · իբ · 9 ։ Եբ-
րմ · թ · 3 ։ իբ · 16 ։ Գաղ · գ · 8 ։ բ Թես · ա · 8 ։ Տիտ · ա · 16 ։

Իսր 1406

ժ Բ Օր · լ · 16 ։

Ն·Ք·ԶԲ· Իսբ 1406

ներ էր , ու Հօտար աստուածներու եւեւէ զացին , Յ-ԻՆՆ իրենց բոլորտիքը եղող ազգաց Է-ՆԷ մէ աստուածներուն , ու Հանոնց երկրպագութիւն ըրին , և Տէրը սրդողէ 13 ցուցին ։ Ուստի Տէրը Թոդուցին , Ն և Բահաղը ու Աստարովթը պաշ- 14 տեցին ։ Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ , ու Ֆզանոնք կողոպտիչներուն ձեռքը մատնեց , ու զանոնք կողոպտեցին . և Ֆզանոնք շրջակայ թշնամիներուն ծախեց , ու ալ Ֆչէին կրնար իրենց 15 թշնամւոց առջեւը կայնիլ ։ Ո ւր որ երթային , Տէրոջը ձեռքը անոնց վրայ էր չարիք ընել— համար , ինչպէս որ Տէրը ըսեր էր , և Ինչպէս որ անոնց երդուեր էր . ու խիստ մեծ նեղութեան մէջ էին ։

16 Եւ Տէրը դատաւորներ Հանեց , որոնք կողոպտիչներուն ձեռքէն ա- 17 զատեցին զանոնք ։ Սակայն իրենց դատաւորներուն ալ մտիկ չըրին , ու Հօտար աստուածներու եւեւէ Էր-ԼՎ՝ պոռնկութիւն ըրին , ու անոնց երկրպագութիւն ըրին . շուտով խոտորեցան ան ճամբայէն՝ որուն մէջը իրենց Հայրերը կը քալէին Տէրոջը հրամաններուն Ի՞ազանդելով . Բայց ասոնք այն- 18 պէս չըրին ։ Ու երբոր Տէրը անոնց դատաւորներ կը Հանէր , Տէրը դատաւորին հետը ըլլալով՝ դատաւորին բոլոր օրերը՝ զանոնք իրենց թշնամիներուն ձեռքէն կ՚ազատեր . քանզի անոնց նեղութիւն տուողներուն ու չարչարողներուն երեսէն՝ անոնց Հեծութիւններուն Համար Տէրը կը զղջար ։ 19 Ու երբոր Նան դատաւորը մեռնէր , կը դառնային նորէն օտար աստուածներու եւեւէ կ՚երթային , զանոնք կը պաշտէին , և անոնց երկրպագութիւն կ՚ընէին , ու իրենց Հայրերէն աւելի անօրէնութիւն կ՚ընէին . իրենց ըռ գործքերէն , ու իրենց *Ծուռ ճամբայէն չէին դա- 20 նար ։ Ուստի Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքելով՝ ըսաւ . Որովհետեւ աս ազգը՝ իրենց Հայրերուն պատուիրած ուխտս *զանց ընելով՝ իմ ձայնիս չհազան- 21 դուեցին չըրին , Ես ալ այսուհետեւ անոնց առջեւէն բնաւ մէկը պիտի չվռնտեմ ան ազգերէն , որոնք Յեսու իր մեռած ատենը թո- 22 ղուց , Որպէս զի անոնցմով Իսրայէլը փորձեմ , թէ արդեօք իրենց Հայրերուն պէս զգուշութիւն պիտի ընեն Տէրոջը ճամբան քալելու , 23 թէ չէ ։ Ուստի Տէրը աս ազգերը թող տուաւ , և շուտով չվռնտեցին , ու զանոնք Գեսուին ձեռքը չմատնեց ։

Ն·Ք·ԶԲ· Իսբ 1406

Գ Լ · Գ

1 Իսրայէլը՝ փորձելու համար պահուած ազգերը ։ 6 Իսրայէլը անոնց հետ Հաղորդակցութիւն ընելով՝ կռապաշտութիւն կ՚ընէ ։ 9 Գոթոնիէլ՝ Քուսարսաթեմին ձեռքէն կ՚ազատէ զանոնք ։ 15 և Ետվդ՝ Էգղոնէն , 31 ու Սամգար՝ Փղշտացիներէն ։

1 Ե՛ւ ասոնք են ազգերը՝ որոնք Տէրը թող տուաւ , որ անոնցմով Իսրայէլը՝ Յ-ԻՆՆ Քանանացւոց բոլոր պատերազմները ամէն 2 չգիտցողները փորձէ . (Միայն ասոր Համար՝ որ Իսրայէլի որդւոցը սերունդը՝ մանաւանդ առաջուց չգիտցողները պատերազմ սորվին ու 3 դիտնան .) Ֆփղշտացւոց հինգ նահապարութիւնները , և բոլոր Քանանացիները՝ ու Սիդոնացիները՝ Լիբանան լեռը բնակող Խևացիները՝ Բաաղ-Երմոն լեռնէն մինչև Ե- 4 մաթի մուտքը ։ Ֆանոնցմով պիտի փորձէր Իսրայէլը , որ գիտնայ թէ արդեօք պիտի Ղազանդին Տէրոջը պատուիրանքներուն , որոնք Մովսէսին ձեռքովը անոնց Հայրերուն հրամայեր էր ։ 5 Ֆ Եւ Իսրայէլի որդիքը՝ Քանանացւոց՝ Քետացւոց՝ Ամորհացւոց՝ Փերեզացւոց՝ Խևացւոց ու Ցերուսացւոց մէջը բնակեցան . Եւ Հանոնց աղջիկները իրենց կնիկ առին , ու իրենց աղջիկները՝ ՚ւ անոնց տղոցը տուին , և անոնց աստուածները 7 ները պաշտեցին ։ Ընե Իսրայէլի որդիքը՝ Տէրոջը առջեւը չարութիւն րրին , և իրենց Տէր Աստուածը մոռնալով՝ Ի-Բահաղիմը ու 8 Ֆ Աստարովթը պաշտեցին ։ Եւ Տէրոջը բարկութիւնը Իսրայէլի վրայ բորբոքեցաւ , ու զանոնք Միջագետի Ք-Քուսարսաթեմ թագաւորին ֎ ձեռքը մատնեց . և Իսրայէլի որդիքը ութը տարի ծառայութիւն ըրին Քուսարսաթեմին ։ 9 Եւ զը Իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին . ու Տէրը Իսրայէլի որդւոցը փրկիչ մը Հանեց , Քաղէբին պզտիկ եղբօրը կենդանի որդին Է-Գոթոնիէլը , որ զանոնք ազա- 10 տեց ։ Եւ Ֆ Տէրոջը Հոգին անոր վրայ ըլլալով՝ Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ՚ընէր . ու երբոր պատերազմի ելաւ , Տէրը Միջագետի Քուսարսաթեմ թագաւորը անոր ձեռքը տուաւ . և անոր ձեռքը Քուսարսաթեմին դէմ զօրա- 11 ցաւ ։ Ու երկիրը քառասուն տարի Հանդստացաւ . և Կենեզեան Գոթոնիէլը մեռաւ ։

12 ֆՈւ Իսրայէլի որդիքը նորէն Տէրոջը առջեւը չարութիւն ըրին . և

Ն·Ք·ԶԲ· Իսբ 1406

Իսբ 1402

Իսբ 1394

Իսբ 1354

Ն · ք · դԲ · Իրր 1354

Հ ա թագ · ժբ · 9 ։

յ Գլ · ե · 14 ։

ղ Գլ · ա · 16 ։

ե բ Օր · իբ · 40 ։

Իրր 1336

ժ Հմր 9 ։ Սաղ · ծբ · 34 ։

յ Գլ · ի · 16 ։

* Եբր · աչ ձեռքը գոցուած մարդ

† Կ—ժ՝ Թըզալափ

Ծերոջը առջևը չարութիւն ընել- նուն համար՝ Ցերը ՚Մովաբի Էգ- ղոն թագաւորը Իսրայէլին դէմ 13 ուժովցուց · Եւ անիկայ Ամմոնի ու յԱմաղեկի որդիքը իր քովը ժողվեց, և գնաց Իսրայէլը զարկաւ, ու ղԵրմաւենացւոց քաղաքին տի- 14 րեց ։ Եւ Իսրայէլի որդիքը ե՚Մովա- բի Էգղոն թագաւորին տասնուու- թը տարի ծառայութիւն ըրին ։

15 Ու Իսրայէլի որդիքը ժ՚Ցերոջը աղաղակեցին · և Ցերը անոնց մէկ փրկիչ մը հանեց, Բենիամինեան Գերայի որդին Ետուդը՝ որ ժ*ահե- կագործ էր · ու Իսրայէլի որդիքը անոր ձեռքովը՝ Մովաբի Էգղոն 16 թագաւորին ընծայ խրկեցին ։ Եւ Ետուդ մէկ †կանգնաչափ երկայնու- թեամբ երկսայրի սուր մը շինեց իրեն, ու զանիկայ լաթերուն տա- կէն՝ իր աջ ազդրին վրայ կապեց ։ 17 Եւ ընծան Մովաբի Էգղոն թագա- ւորին տարաւ · (ու Էգղոն խիստ 18 գեր մարդ մըն էր ·) Ու երբոր ըն- ծան տուաւ լմընցուց, ընծան կրող 19 մարդիկները ետ խրկեց · Եւ ինքը ՚Գաղգաղայի մօտ եղած ‡քարա- հանքէն ետ դարձաւ, ու ըսաւ · Ո՛վ թագաւոր՝ քեզի մէկ ծածուկ խօսք մը ունիմ · և անիկայ ըսաւ · Լուռ ‖կեցիր · ու բոլոր անոր քովը 20 կայնողները դուրս ելան ։ Եւ Ետուդ անոր քովը մտնեցաւ · ու անիկայ նստեր էր իրեն յատկացեալ ՚ա- մառնային վերնատանը մէջ · և Ետուդ ըՆոր ըսաւ · Քեզի Աստու- ծոյ կողմանէ մէկ խօսք մը ունիմ · ու անիկայ աթոռին վրայէն ելաւ ։ 21 Եւ Ետուդ իր ձախ ձեռքը երկրն- ցընելով՝ սուրը իր աջ ազդրին վրայէն քաշեց, ու անոր փորը խո- 22 թեց, Ա՚յնպէս որ՝ երկաթին և- տևէն կոթն ալ ներս մտաւ · ու դի- րուցը երկաթը բռնեց, անանկ որ՝ սուրը անոր փորէն չկրցաւ հանել, 23 ու աղբը դուրս ելաւ · Եւ Ետուդ սրահը ելաւ, ու վերնատանը դռնե- րը անոր վրայէն գոցեց՝ ու կղպեց · 24 Եւ ինքը ելաւ ֆնոց ։ Ու անոր ծառաները գացին նայեցան՝ որ ահա վերնատանը դռները կղպուած էին · ու ըսին · Անիկայ անտարա- կոյս իր ամառնային սենեակին մէջը ըզ§հարկաւորութեան գացած է՞ ։ 25 Եւ անոնք սպասեցին, մինչև որ ա- մչցան · բայց ահա վերնատանը դռները չէր բանար · ու բանալին առին բացին · և ահա իրենց տէրը 26 գետնի վրայ ինկած մեռած էր ։ Ու քանի որ անոնք կը տնտրնային, Ետուդ փախաւ, և բարահանքէն անցնելով՝ ողջ առողջ Սէիրա հա- սաւ ։

27 Ու երբոր հասաւ, ՚Եփրեմի լե- ռանը վրայ ըփող Ջշեցուց · և Իս- րայէլի որդիքը անոր հետ ան լեռ- նէն վար իջան, ու ինքը անոնց 28 առջևէն ՚Էբր— ։ Եւ անոնց ըսաւ · Իմ ետևէս եկէք · քանզի ՚Ցերը ձեր թշնամիները՝ Մովաբացիքը ձեր ձեռքը տուաւ · ուստի անոր ետևէն իջան, և ‡Մովաբին —ՂԼՔՆ՝ —Ցորդանանու անցքերը բռնեցին, ու թող չտուին որ մարդ մը անց- 29 նի ։ Եւ ան ժամանակը Մովաբէն՝ տասը հազարի չափ մարդ կոտրե- ցին, —բոնց ամէնն ալ յաղթան- դամ ու զօրաւոր մարդիկներ էին · 30 և մէկը չկրցաւ փախչիլ ։ Ու ան օրը Մովաբ՝ Իսրայէլին ձեռքին տակը նուաճեցաւ · ու —երկիրը ութսուն տարի հանգստացաւ ։

31 Էհ Եւ անկէ ետև՝ Ընաթին տղան Սամեգարը ելաւ, ու —եզներու խը- թանով մը Փղշտացիներէն վեց հարիւր մարդ կոտրեց · ըև ասիկայ ալ ՚Իսրայէլը ազատեց ։

Գլ · Դ

1 Դերբորան ու Բարակ՝ Ցաբինին ու Սիսարային ձեռքէն Իսրայէլը կ՚ազատուի ։ 18 Ցայէլ կը մեղքնէ Սիսարա զօրագլուխը ։

1 Եւ Ետուդին մեռնելէն ետքը —Իսրայէլի որդիքը Ցերոջը առ- 2 ջևը նորէն չարութիւն ըրին, Ու Ցերը Բմատնեց զանոնք Քանանա- ցւոց Ցաբին թագաւորին ձեռքը, որ ՚Հասորի մէջ կը թագաւորէր · և անոր զօրագլուխը ՏՍիսարան էր, ու Խազազայ Արիսոթին մէջը կը 3 բնակէր ։ Եւ Իսրայէլի որդիքը Ցե- րոջը աղաղակեցին · քանզի անիկայ ինը հարիւր ՚երկաթէ կառքեր ու- նէր · ու անիկայ քսան տարի Խա- րայէլի որդիքը սաստիկ նեղեց ։

4 Եւ ան ատենը Դերբորա մարգա- րէուհին՝ Ղաբիդոթի կնիկը՝ Իս- րայէլի մէջ դատաւորութիւն կ՚ը- 5 նէր ։ ըՈւ անիկայ Եփրեմի լեռա- նը վրայ՝ Ռամայի ու Բեթէլի մէջ- տեղը՝ Դերբորայի արմաւենիին տա- կը կը բնակէր · և Իսրայէլի որ- դիքը դատաստանի համար անոր 6 կ՚ելլէին ։ Ու Դերբոր —ղրկ խրկեց, և ՚Նեփթաղիմի Կադեսէն Աբի- նոամի որդին Բարակը կանչեց, ու անոր ըսաւ · Իսրայէլին Ցէր Ա- ստուածը Էհէյ չհրամայե՞ց՝ ըԵԼՔ · Գնա՝ Թաբոր լեռը ելիր, ու Նեփ- թաղիմի որդւոցմէ և Զաբուղոնի որդւոցմէ քու հետդ տասը հա- 7 զար մարդ առ, Ու ես՝ Ցաբինին զօրագլուխը Սիսարան, և անոր կառքերը ու զօրաց բազմութիւնը Էբու դիմացդ պիտի հանեմ ՚Կիսոն հեղեղատին քովը, ու զանիկայ քու

Ն · ք · դԲ · Իրր 1336

Ղ Ցես · ժէ · 15 ։ Գլ · է · 24 ։ ժէ · 1 ։ ժթ · 1 ։

Գ Գլ · ե · 14 ։ գ · 34 ։ ա թագ · ժգ · 3 ։

Ղ Գլ · է · 9, 15 ։ ա թագ · ժէ · 47 ։

‡ Կ—ժ՝ Մովաբի Երիեր Էրի—ը— —Ցես · բ · 7 ։ Գլ · ժբ · 5 ։

ա Հմր 11 ։ Ղ Գլ · ե · 6, 8 ։ ա թագ · ժգ · 19, 22 ։ ա թագ · ժէ · 47, 50 ։

ը Գլ · բ · 16 ։

յ Գլ · գ · 1, 3, ՁԸ ։ ժ · 7, 17 ։ ժա · 4, ՁԸ ։ ա թագ · գ · 1 ։

Իրր 1316

— Գլ · բ · 19 ։

Բ Գլ · բ · 14 ։

ֆ Ցես · ժա · 1, 10 ։ ժթ · 36 ։

ՏՍ ա թագ · ժբ · 9 ։ Սաղ · ձգ · 9 ։

Ի Հմր 13, 16 ։

Ղ Գլ · ա · 19 ։

Ի Գլ · ե · 8 ։ Սաղ · ճզ · 42 ։

ըԾՆ · լե · 8 ։

Իրր 1296

Բ Ցես · ժթ · 37 ։

Ճ Եբր · ժա · 32 ։

Ի Եղ · ժգ · 4 ։

Ղ Գլ · ե · 21 ։ գ թագ · ժբ · 40 ։ Սաղ · ձգ · 9, 10 ։

Ն·Ք·ԳՓ· Իրր 1296

8 ձեռքդ պիտի մատնեմ ։ Եւ Բա-
րակ անոր ըսաւ . Թէ որ դո՞ւն ինձ
իմ հետս երթաս , կ'երթամ . բայց
Թէ որ իմ հետս չերթաս , չեմ եր-
9 թար ։ Եւ անիկայ ըսաւ . Ան-
շուշտ ես քու հետդ պիտի երթամ .
բայց քու երթալու ճամբուդ մէջ
դուն փառք մը չես ստանար , քան-
զի Տէրը Ի Սիսարան մէկ կնկան մը
ձեռքը պիտի մատնէ ։ Ու Դեբօրա
ելաւ Բարակին հետը կադէս գնաց ։
10 Եւ Բարակ՝ Ի Զաբուղոնը ու Նեփ-
թաղիմը կադէսի մէջ ժողվեց , և
տասը հազար Ի մարդով ելաւ . Դե-
բօրան ալ անոր հետը ելաւ ։
11 (Ու Մովսէսին աներոջը Հոբաբ-
բին որդիներէն՝ Ի կենեցի քարերը՝
կենեցիներէն զատուեր էր , ու իր
վրանը Ի կադէսի մօտ՝ Սանանիմի
կաղնիին քովը կանգներ էր ։)
12 Ան ատենը Սիսարային իմացու-
ցին , որ Աբինոամի որդին Բարակը
13 Թաբօր լեռը ելեր է ։ Եւ Սիսարա
իր բոլոր կառքերը՝ ինը հարիւր եր-
կաթէ կառքերը , ու իր հետը ե-
ղող բոլոր զօրքը՝ ազգաց Արիսո-
թէն կիսոն հեղեղատը ժողվեց ։
14 Եւ Դեբօրա ըսաւ Բարակին .
Ո՛տք ելլէ , քանզի Տէրը այսօր Սի-
սարան քու ձեռքդ մատնեց . Ի՞մի-
թէ Տէրը քու առջեւդ չելա՞ւ ։ Ու
Բարակ Թաբօր լեռնէն իջաւ , և իր
հետը տասը հազար մարդ կար ։
15 Ու Տէրը՝ Սիսարան , և բոլոր կառ-
քերը , ու բոլոր բանակը՝ Բարակին
առջեւը սուրի բերնով խորտակեց .
և Սիսարա կառքէն վար իջաւ , ու
16 ոտքով փախաւ ։ Եւ Բարակ՝ կառ-
քերը ու բանակը մինչև ազգաց Ա-
րիսոթը հալածեց , ու Սիսարային
բոլորը բանակը սուրի բերնով ին-
կաւ , ու մարդ մը չմնաց ։
17 Եւ Սիսարա ոտքով՝ կենեցի Փա-
բերին կնկանը Յայելին վրանը փա-
խաւ . քանզի Հասորի Յաբին Թա-
գաւորին՝ ու կենեցի Փաբերին տա-
նը մէջտեղը խաղաղութիւն կար ։
18 Ուստի Յայէլ՝ Սիսարան դիմաւո-
րելու ելաւ , ու անոր ըսաւ . Ձէր
իմ՝ դարձիր , ինծի՛ դարձիր , մի՛
վախնար ։ Ուստի անիկայ դէպ՝ ի
վրանը անոր դարձաւ , և Ինքը ա-
նիկայ մէկ լաթով մը ծածկեց ։
19 Ու անիկայ կնկանը ըսաւ . Շնորհք
բրէ՝ ինծի քիչ մը ջուր տուր որ
խմեմ , քանզի ծարաւած եմ ։ Ան
ալ Ի կաթին տիկը բացաւ , ու անոր
խմցուց . ետքը զանիկայ ծածկեց ։
20 Եւ անիկայ կնկանը ըսաւ . Վրանին
դուռը կեցիր , ու թէ որ մարդ մը
գայ , քեզի հարցընէ՝ ու ըսէ թէ՝
Ա՛ն տեղս մարդ կա՞յ . Ձկայ ըսես ։
21 Ու քաբերին կնիկը Յայէլ՝ Ի վրա-

Ն·Ք·ԳՓ· Իրր 1296

նին մէկ ցիցը առաւ , և ուռն ալ
ձեռքը բռնելով՝ կամացուկ մը ա-
նոր քովը գնաց , ու ցիցը անոր ծա-
մերքը մխելով՝ մինչև գետինը գա-
մեց , և անիկայ յոգնած ըլլալուն
համար խորունկ քնոյ մէջ էր . այս-
22 պէս մեռաւ ։ Եւ ահա Բարակը՝
Սիսարային եւեւէն կը վազէր . և
Յայէլ զանիկայ դիմաւորելու ելաւ ,
ու անոր ըսաւ . Եկուր , քու փնտ-
րուած մարդդ քեզի ցուցընեմ .
ու անիկայ կնկանը հետ ներս մը-
տաւ . և ահա Սիսարան մեռած
պառկեր էր , ու ցիցը անոր ծամե-
լիքին մէջն էր ։
23 Եւ Ի Ատուած ան օրը՝ քանա-
նացւոց Յաբին թագաւորը Իսրա-
յէլի որդւոց առջեւը կորագլուխ ը-
24 րաւ ։ Ու քանանացւոց Յաբին
թագաւորին դէմ Իսրայէլի որդւոց
ձեռքը օրէ օր կը զօրանար , մինչև
որ քանանացւոց Յաբին թագաւո-
րը բնաջինջ ըրին ։

ԳԼ · Ե

1—31 Դեբօրային ու Բարակին երգը ։

1 Յու ան օրը Դեբօրան ու Աբի-
նոամի որդին Բարակը՝ երգեցին
ու ըսին .
2 Իսրայէլի զօրավարացը առաջ-
նորդելուն , Բ՛ու ժողովուրդին յօ-
ժարակամ անձնանուէր ըլլալուն
համար՝ Տէրը օրհնեցէ՛ք ։
3 Ո՛վ թագաւորներ՝ մտիկ ըրէ՛ք ,
ով նախարարներ՝ ականջ դրէ՛ք .
ես Տէրոջը պիտի երգեմ , Իսրայէլի
Տէր Ատուածոյն սաղմոս պիտի ը-
սեմ ։
4 Ո՛վ Տէր՝ Երբոր դուն Սէիրէն
ելար , ու Եդոմի դաշտէն չուեցիր ,
Երկիրը շարժեցաւ , երկինքը Ինչ-
տեղաց , ամպերն ալ ջուր կաթե-
ցուցին ։
5 Ի Տէրոջը երեսէն լեռները հալե-
ցան . Ի Իսրայէլի Տէր Ատուածոյն
երեսէն Սինան ալ հա՛լ-ը՛ա՛ ։
6 Ի Ընաթի որդւոյն Սամգարին օ-
րերը՝ Ի Յայելին օրերը՝ Ի մեծ ճամ-
բաները * անկոխ էին" . ու ճանա-
պարհորդները խոտորնակ ճամբա-
ներէ կ'երթային ։
7 Իսրայէլի մէջ զօրավարներ չմնա-
ցին . չմնացին , մինչև որ ես Դեբօ-
րա ելայ , մինչև որ ելայ Ի Իսրայէլի
մէջ մայր ը՛ա՛ ։
8 Ի Նոր աստուածներ ընտրեցին .
ան ատենը էրիւոց դռներուն մէջ
պատերազմ եղաւ . Իսրայէլի քառասուն հազար զօրքէն
մէջը՝ վահան կամ նիզակ երևցա՞ւ ։
9 Իմ սիրտս՝ Իսրայէլի իշխաննե-
րուն վրայ է . Ի ով ժողովուրդին

– Տէս Եւ · ԺԱ · 1 ։ Սաղ · ԺԵ · ին վեր-
նագիրը ։
Բ Ր Մն · ԺԷ · 16 ։
Ի Ր Օր · ԼԴ · 1 ։ Յ Սաղ · Բ · 10 ։
Ք Ր Օր · ԼԴ · 2 ։ Սաղ · ԿԸ · 7 ։
Ի Ր Թագ · ԻԲ · 8 ։ Սաղ · ԿԸ · 8 ։ Ես · Կդ · 3 ։ Ա՛մ · դ · 3 · 10 ։
Ղ Ր Օր · դ · 11 ։ Սաղ · ՂԵ · 5 ։
Ի Ել՝ · ԺԹ · 18 ։
Ը ԳԼ · դ · 31 ։
Ի ԳԼ · դ · 17 ։
ՅՂԷ · ԻԶ · 22 ։ Բ Մն · ԺԵ · 5 ։ Ես · ԼԴ · 8 ։ Ողբ · ա · 4 ։ դ · 18 ։
* Եբր · պակսեցան .
Ի Ես · ԽԹ · 23 ։
Լ Ր Օր · ԼԲ · 16 ։ ԳԼ · Բ · 12 · 17 ։
Ի Ա Թագ · ԺԴ · 19 · 22 ։ ԳԼ · դ · 3 ։ Յ Հմր 2 ։

անձնանուէր. եղողները, Տէրը օրհնեցէք։
10 Ձերմակ էշերու վրայ հեծնողներ, դատաստանի առեանը նըստողներ, ու ճամբու վրայ պտրտողներ՝ զրուցեցէք,
11 Աղեղնաւորներուն ձայնէն ջուր հանելու տեղերուն մէջ. հոն ՚Տէրոջը արդարութիւնները, ու Իսրայէլի մէջ անոր զօրավարացը արդարութիւնները պատմեն. ան ատենը Տէրոջը ժողովուրդը դռները իջան։
12 Արթնցիր, արթնցիր ով Դեբորա. արթնցիր, արթնցիր, երգ ըսէ. ով Բարակ՝ ելլէ՛ր. ով Աբինոամի որդի՝ գրաւ գերութիւնդ գերի բրէ։
13 Ան ատենը փախստականները՝ ժողովուրդին զօրաւորներուն վրայ յարձակեցան. Տէրը ինծի հետ զօրաւորներուն դէմ իջաւ։
14 Եփրեմի արմատէն եղողները՝ Ամաղեկին վրայ էջան. Բենիամինը քու ետեւէդ քու ժողովուրդիդ մէջ էր. Մաքիրէն իշխաններ, ու Զաբուղոնէն՝ դպրի դրիչ բռնողներ իջան։
15 Եւ Իսաքարի զօրավարները Դեբորային հետ, ու Իսաքարն ալ Բարակին պէս՝ իր ոտքերովը հովիտը խրկուեցաւ. Ռուբենի տոհմերուն մէջը մեծ յուզմունք կար.
16 Ինչո՞ւ համար փարախներուն մէջը նստար, որ հօտերուն մայելը լսես։ Ռուբենի տոհմերուն մէջը մեծ տարակուսանք կար։
17 Գաղաադը Յորդանանու անդին կողմը կը բնակէր, ու Դանը ինչո՞ւ համար նաւերու մէջ պանդուխտ մնաց։ Ասերը ծովուն եղերքը կը նստէր, ու իր նաւահանգիստներուն քովը կը բնակէր։
18 Զաբուղոնը ու Նեփթաղիմը մեռնելու ժողովուրդ մըն է, որ դաշտին բարձր տեղութիւնքը՝ զինքը մահուան վտանգի մէջ կը դնէ։
19 Թագաւորները եկան, պատերազմ բրին. ան ատենը Քանանացւոց թագաւորները Մակեդովի ջուրին քովը՝ Թանաքի մէջ պատերազմ բրին. Հաստակ չշահեցան։
20 Երկինքէն պատերազմ բրին. աստղերը իրենց շրջաններէն՝ Սիսարային դէմ պատերազմ բրին։
21 Կիսոն հեղեղատը՝ ան հին հեղեղատը՝ Կիսոն հեղեղատը զանոնք քշեց տարաւ։ Ով իմ անձս՝ ոտնակոխ զօրութիւնը կոխեցիր։
22 Ան ատենը ձիերուն սմբակները՝ սաստիկ վազելուն համար կտոր կտոր եղան, զօրաւորներուն վազքնելովը։
23 Տէրոջը հրեշտակը բաւ. Մարոզը նզովեցէք. անոր բնակիչները սաստիկ նզովեցէք. քանզի Տէրոջը օգնութեանը՝ զօրաւոր Ընթերցուածք դէմ՝ Տէրոջը օգնութեանը չէկան։
24 Կենեցի Քաբերին կինը Յայէլ՝ կիներուն մէջը օրհնեալ ըլլայ. վրաններու մէջ կիներէն աւելի օրհնեալ ըլլայ։
25 Ջուր ուզեց. կաթ տուաւ. իշխանաց ամանով կոգի մատուցց։
26 Անիկայ իր ձեռքը ցիցին, ու իր աջ ձեռքը՝ հիւսան ուրին երկրպագուց, և Սիսարային զարնելով՝ գլուխը ճեղքեց. ու ջիջը անոր ծամելքը մխելով՝ խոցեց։
27 Անիկայ ծռեցաւ, ցաւելն ոտքերուն մէջը ինկաւ փռուեցաւ. ոտքերուն մէջը ծռեցաւ ինկաւ. ուր որ ծռեցաւ, հոն մեռած ինկաւ։
28 Սիսարային մայրը պատուհանէն նայեցաւ, ու վանդակին ետեւէն կանչվռտեց. ինչո՞ւ համար անոր կառքը կ'ուշանայ գալու. ինչո՞ւ անոր կառքերուն քայլերը ետ կը մնան։
29 Անոր իմաստուն տիկիններուն անոր պատասխան տուին. ինքն ալ իր խօսքերուն պատասխանը իրեն կու տար.
30 Անշուշտ անոնք աւար գտան. ղէ՛ր բաժնելու վրայ են. ամէն կտրիճի համար՝ մէկ կամ երկու աղջիկ, Սիսարային համար՝ գոյնզգոյն աւար մը, գոյնզգոյն նրկարագործ աւար մը, երկու կողմը բանուած ու գոյնզգոյն վզնոցներ աւար ըրած ղէրի ըլլան։
31 Ով Տէր՝ քու բոլոր թշնամիներդ այսպէս կորսուին. իսկ զանիկայ սիրողները, Ի՛ր զօրութեամբը ելլող Արեւուն պէս ըլլան։

Ու երկիրը քառասուն տարի հանգստացաւ։

Գլ. Զ

1 Իսրայէլացիք Տէրոջը դէմ մեղանչելով՝ Մադիանացիներէն կը նեղուին։ 8 Մարգարէ մը զանոնք կը յանդիմանէ։ 11 Հրեշտակ մը Գեդէոնը կը խրկուի Իսրայէլը ազատելու համար։ 17 Գեդէոնին զոհը կրակով կը սպառի։ 25 Գեդէոն Բահաղին սեղանը կը փլցնէ, ու իր չինած սեղանին վրայ աղջիկ կը մատուցանէ։ 28 Յովաս իր որդին կը պաշտպանէ, և զանիկայ Ցերոբաաղ կ'անուանէ։ 33 Գեդէոնին զօրքը։ 36 Գեդէոնին տրուած նշանները։

1 Իսրայէլի որդիքը Տէրոջը առջեր չարութիւն բրին. ու Տէրը զանոնք եօթը տարի Բ Մա-

ն · ք · գՀ · Իսր 1296

ե Գլ · ժ · 4 ։ ժբ · 14 ։
զ Սպղ · ՋՀ · 32 ։
է Սպղ · ՃՀ · 2 ։ ՃԽե · 5 ։
ը Կ՛ — բաժնողներուն ։ Ի՛ — ժողովուրդներուն
ղ Թագ · ժբ · 7 ։ Սպղ · ՃԽե · 7 ։
ի Սպղ · ծէ · 8 ։
ձ Սպղ · կը · 18 ։
ղ Սպղ · խԹ · 14 ։
ն Գլ · գ · 27 ։
շ Գլ · գ · 18 ։
ո Թռ · լբ · 39 · 40 ։
չ Գլ · գ · 14 ։
պ Կ՛ · Հեզեաններուն
ջ Թռ · լբ · 1 ։
ռ Կ՛ · Հօտերուն մէջ արինգի ձայնը
ս Ել · Ժ · 25 · 31 ։ Թ · Ցես · ժԹ · 29 · 31 ։
վ Գլ · գ · 10 ։
տ Գլ · գ · 16 ։ Սպղ · խգ · 12 ։ Ես · ՀՃ · 30 ։
ր Ցես · Ցես · ժ · 11 ։ Սպղ · Հէ · 17 · 18 ։
ց Գլ · գ · 15 ։
ւ Գլ · գ · 7 ։

23 Ցերոջը հրեշտակը բաւ. Մարոզը նզովեցէք. անոր բնակիչները սաստիկ նզովեցէք. քանզի Տէրոջը օգնութեանը՝ զօրաւոր Ընթերցուածք դէմ՝ Տէրոջը օգնութեանը չէկան։
24 Կենեցի Քաբերին կինը Յայէլ՝ կիներուն մէջը օրհնեալ ըլլայ. վրաններու մէջ կիներէն աւելի օրհնեալ ըլլայ։
25 Ջուր ուզեց. կաթ տուաւ. իշխանաց ամանով կոգի մատուցց։
26 Անիկայ իր ձեռքը ցիցին, ու իր աջ ձեռքը՝ հիւսան ուրին երկրպագուց, և Սիսարային զարնելով՝ գլուխը ճեղքեց. ու ջիջը անոր ծամելքը մխելով՝ խոցեց։
27 Անիկայ ծռեցաւ, ցաւելն ոտքերուն մէջը ինկաւ փռուեցաւ. ոտքերուն մէջը ծռեցաւ ինկաւ. ուր որ ծռեցաւ, հոն մեռած ինկաւ։
28 Սիսարային մայրը պատուհանէն նայեցաւ, ու վանդակին ետեւէն կանչվռտեց. ինչո՞ւ համար անոր կառքը կ'ուշանայ գալու. ինչո՞ւ անոր կառքերուն քայլերը ետ կը մնան։
29 Անոր իմաստուն տիկիններուն անոր պատասխան տուին. ինքն ալ իր խօսքերուն պատասխանը իրեն կու տար.
30 Անշուշտ անոնք աւար գտան. ղէ՛ր բաժնելու վրայ են. ամէն կտրիճի համար՝ մէկ կամ երկու աղջիկ, Սիսարային համար՝ գոյնզգոյն աւար մը, գոյնզգոյն նրկարագործ աւար մը, երկու կողմը բանուած ու գոյնզգոյն վզնոցներ աւար ըրած ղէրի ըլլան։
31 Ով Տէր՝ քու բոլոր թշնամիներդ այսպէս կորսուին. իսկ զանիկայ սիրողները, Ի՛ր զօրութեամբը ելլող Արեւուն պէս ըլլան։

Ու երկիրը քառասուն տարի հանգստացաւ։

ն · ք · գՀ · Իսր 1296

— ա Թագ · ժէ · 47 ։ ժբ · 17 ։ իե · 28 ։
ի Գլ · իա · 9։10 · Նէեմ · գ · 5 ։
ձ Գլ · գ · 17 ։
ղ Գծ · ա · 28 ։
ն Գլ · գ · 19 ։
շ Գլ · գ · 21 ։
ո Բ Եզ · ժե · 9 ։
չ Սպղ · ՃԳ · 9 · 10 ։
պ Սպղ · ժԹ · 5 ։
ջ Բ Թագ · իգ · 4 ։

Գլ · Զ

1 Իսրայէլացիք Տէրոջը դէմ մեղանչելով՝ Մադիանացիներէն կը նեղուին։ 8 Մարգարէ մը զանոնք կը յանդիմանէ։ 11 Հրեշտակ մը Գեդէոնը կը խրկուի Իսրայէլը ազատելու համար։ 17 Գեդէոնին զոհը կրակով կը սպառի։ 25 Գեդէոն Բահաղին սեղանը կը փլցնէ, ու իր չինած սեղանին վրայ աղջիկ կը մատուցանէ։ 28 Յովաս իր որդին կը պաշտպանէ, և զանիկայ Ցերոբաաղ կ'անուանէ։ 33 Գեդէոնին զօրքը։ 36 Գեդէոնին տրուած նշանները։

1 Իսրայէլի որդիքը Տէրոջը առջեր չարութիւն բրին. ու Տէրը զանոնք եօթը տարի Բ Մա-

Իսր 1256
— Գլ · բ · 19 ։
Բ Ամբ · գ · 7 ։

Ն·Ք·ԶԿ· Իսր 1256

2 դիանայցոց ձեռքը մատնեց ։ եւ Մադիանացոց ձեռքը Իսրայէլի վրայ ուժովցաւ ։ — Իսրայէլի որդիքը Մադիանացոց պատճառաւը՝ իրենց համար †լեռներու մէջ խոռոչներ , քարայրներ և պատնէշներ
3 շինեցին ։ Ու երբոր Իսրայէլացիք սերմ կը ցանէին , Մադիանացիք անոնց վրայ կ'ելլէին . և †Ամաղեկացիք *ու արեւելքի բնակիչներն
4 ալ կ'ելլէին . եւ անոնց դէմ բանակ կազմելով՝ Ղազային բերքը կ'աւերէին մինչև Գազա , ու Իսրայէլին ապրուստ մը չէին թողուր , ոչ ոչխար՝ ոչ արջառ և ոչ էշ .
5 քանզի անոնք իրենց հօտերովը ու վրաններովը կ'ելլէին , և †մարախի պէս բազմութեամբ կու գային . թէ անոնք և թէ անոնց ուղտերը չէին համրուեր . ու Իւրաքեվ երկիրը կու գային զանիկայ աւերելու
6 համար ։ Եւ Իսրայէլը Մադիանացոց պատճառաւը շատ աղքատացաւ . ու Իսրայէլի որդիքը ‡Տէրոջը աղաղակեցին ։
7 Ու երբոր Իսրայէլի որդիքը Տէրոջը աղաղակեցին Մադիանացոց
8 պատճառաւը , Տէրը Իսրայէլի որդւոյը մէկ մարգարէ մը խրկեց . Ինք անիկայ բսաւ անոնց . Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Ես ձեզ Եգիպտոսէն հանեցի , ու ձեզ ծառայութեան տունէն դուրս բե-
9 րի , եւ ձեզ Եգիպտացւոց ձեռքէն , ու բոլոր ձեզի նեղութիւն տուողներուն ձեռքէն ազատեցի , և †զանոնք ձեր առջևէն վռնտե-
10 լով՝ անոնց երկիրը ձեզի տուի . Ու ձեզի բսի . Ես եմ ձեր Եհովայ Աստուածը . †մի վախնաք Ամօրհացւոց աստուածներէն , որոնց երկրին մէջ կը բնակիք . բայց դուք իմ խօսքս մտիկ չըրիք ։
11 Եւ Տէրոջը հրեշտակը եկաւ , ու †Աբիեզերեան Ոփրային բևեկնին տակը նստաւ , որ Եփրային մէջն էր . ու անոր որդին Գեդէոնը Ցմանին մէջ ցորեն կը ծեծէր՝ Մադիանացոց երեսէն փախցընելու
12 համար ։ Եւ †Տէրոջը հրեշտակը անոր երևցաւ , ու բսաւ . Ով զօրաւոր կտրիճ , Տէրը †քու հետդ է ։
13 Եւ Գեդէոն անոր բսաւ . Ո՛հ՝ Տէր իմ , թէ որ Տէրը մեր հետն է , ինչո՞ւ համար ասոնք բոլոր բանները մեր դլուխը եկաւ . և Ո՞ւր են անոր ամէն հրաշքները , զորոնք մեր Հայրերը մեզի կը պատմեն՝ բսելով թէ՝ Տէրը մեզ Եգիպտոսէն հանեց . բայց հիմա Տէրը †մեզ երեսէ ձգեց , ու մեզ Մադիանացոց ձեռքը
14 մատնեց ։ Եւ Տէրը անոր նայեցաւ , ու բսաւ . Ուստ քու զօրութիւնովդ

Ն·Ք·ԶԿ· Իսր 1249

դնա , որ Իսրայէլը Մադիանացոց ձեռքէն ազատես . ‡չէ՞ որ ես քեզ
15 խրկեցի ։ Ու անիկայ անոր բսաւ . Ո՛հ՝ Տէր իմ , Իսրայէլը ինչո՞վ ազատեմ . ահա *իմ ազգատոհմս՝ Մանասէի ցեղէն պինտ աղքատն է , ու ես իմ հօրս տանը պինտ պզտիկն
16 եմ ։ Եւ Տէրը անոր բսաւ . †Ես անշուշտ քու հետդ պիտի ըլլամ , ու Մադիամը՝ մէկ մարդու մը պէս
17 պիտի զարնես ։ Եւ անիկայ անոր բսաւ . Կ'աղաչեմ , թէ որ ես քու աչքիդ առջևը շնորհք գտայ , †ինձի նշան մը ցուցուր , որ ‡իրաւ†մ ըլէ
18 ինձի հետ խօսողը դուն ես ։ Կ'աղաչեմ որ ասկէ չերթաս , մինչև որ ես քեզի դամ , իմ ընծաս բերեմ , ու քու առջևդ դնեմ ։ Եւ անիկայ բսաւ . Ես կը սպասեմ , մինչև որ
19 դուն դառնաս ։ *Ու Գեդէոն ներս մտաւ , այծերէն ուլ մը և մէկ արդու պէլուրէ բաղարջ շօթեր պատրաստեց . միսը սակառի մը մէջ դրաւ , ու արդանակն ալ պտուկի մը մէջ դրաւ , և անոր առջևը հանեց բևեկնիին տակը՝ ու †անոր մա-
20 տուց ։ Եւ Աստուծոյ հրեշտակը անոր բսաւ . Միսը ու բաղարջ շօթերը առ , ասս վէմին վրայ դիր ,
21 ու †արդանակը թափէ ։ Եւ անիկայ անանկ ըրաւ ։ Ետքը Տէրոջը հրեշտակը իր ձեռքի գաւազանին ծայրը երկնցուց , ու միսին և բաղարջ շօթերուն դպաւ . ու Հվէմէն կրակ ելլելով՝ միսը և բաղարջ շօթերը այրեց . ու Տէրոջը հրեշտակը անոր աչքերուն առջևէն գնաց ։
22 Եւ Գեդէոն †տեսաւ որ անիկայ Տէրոջը հրեշտակն է . ու Գեդէոն բսաւ . Ո՛հ՝ Տէր Եհովայ , *որ Տէրոջը հրեշտակը երես առ երես տե-
23 սայ ։ Բայց Տէրը անոր բսաւ . Հաստատուն եղիր , պիտի չմեռնիս ։
24 Եւ Գեդէոն հոն Տէրոջը սեղան մը շինեց , ու անոր անունը *†Եհովաշալօմ կոչեց , որ մինչև աս օրս †Աբիեզերեանց Եփրային մէջը կեցած է ։
25 Եւ ան գիշերը Տէրը անոր բսաւ . Քու հօրդ զուարակը՝ ու եօթը տարեկան երկրորդ զուարակը առ , և քու հօրդ ունեցած Բահաղի սեղանը փլցուր , ու †Աշերի անտառն †կէ
26 կտրէ . Եւ ‡ասս ապառաժ քարին դլուխը՝ օրինաւոր կերպով *քու Տէր Աստուծոյդ սեղան մը շինէ , ու երկրորդ զուարակը առ , և քու կտրած անտառիդ փայտերովը ող-
27 ջակէզ ըրէ ։ Ու Գեդէոն իր ծառաներէն տասը մարդ առաւ , և Տէրոջը իրեն բսածին պէս ըրաւ , ու իր հօրը տունէն , և քաղաքին

Ն·Ք·ԶԿ· Իսր 1249

Ցես·ա·9 ։ Գէ·գ·6 ։
ՀՏես ա Թագ·թ·21 ։
*ԵՔր·հա-զարաւորս·տես Միք·ե·2 ։
ՀԵլ·գ·12 ։ Ցես·ա·5 ։
ՆԵլ·գ·1–8 ։ ՀՄր 36 ։ 37 ։ գ Թագ·ի·8 ։ Սաղ·ԺԷ·17 ։ Ես·ե·11 ։
ԼԾն·ԺԸ·3 ։ 5 ։ Գէ·ԺԳ·15 ։
*Ծն·ԺԸ·6 ։ 7 ։ 8 ։
ԼԳէ·ԺԳ·19 ։
ՂՏես ՚գ Թագ·ԺԸ·33 ։ 34 ։
ԼՂե·թ·24 ։ գ Թագ·ԺԸ·38 ։ բ Մն·է·1 ։
—Գէ·ԺԳ·21 ։
*Ծն·ԺԳ·13 ։ ւԸ·30 ։ ԵԼ·ւգ·20 ։ Գէ·ԺԳ·22 ։
ՀԴան·Ժ·19 ։
*ՏԵս Ծն·իր·14 ։ ԵՀ·ԺԷ·15 ։ Ե-րեմ·ւգ·16 ։ Եզեկ·իր·35 ։
†Ֆ՚Տէր խաղաղութեան, կամ՝ խաղաղութիւն Տեառն ։
ՃԳէ·ը·32 ։
ՃԵլ·ւգ·13 ։ բ Օր·է·5 ։
‡կամ՝ աս ամբողջս գլուխն բայց տեղը

մարդիկներէն վախնալով — Բ—նը
ցորեկը ընելու՝ գիշերը ըրաւ ։
28 Ու երբոր քաղաքին մարդիկները
առաւօտուն կանուխ ելան , տեսան
որ Բահաղին սեղանը փլած , և ա-
նոր քովի անտառը կտրած , ու երկ-
րորդ զուարակը՝ շինուած սեղանին
29 վրայ՝ ողջակէզ եղած էր ։ Ուստի
իրարու ըսին . Ա՛ս բանը ո՞վ ըրաւ .
և աղէկ մը փնտռեցին ու քննեցին .
ու ըսուեցաւ Թէ՝ Ա՛ս բանը Ցովա-
30 սին որդին Գեդէօնը ըրաւ ։ Եւ
քաղաքին մարդիկները Ցովասին ը-
սին . Որդիդ դուրս հանէ՝ որ մեռ-
նի , քանզի Բահաղին սեղանը փըլ-
ցուցեր , ու անոր քովի անտառը
31 կտրեր է ։ Եւ Ցովաս՝ իր վրան
եկող բոլոր մարդիկներուն ըսաւ .
Միթէ Բահաղին իրաւունքը դո՞ւք
պիտի պաշտպանէք , կամ թէ զա-
նիկայ դո՞ւք պիտի ազատէք . ով
որ անոր իրաւունքը պաշտպանէ ,
թող մեռցուի մինչև առտու . թէ
որ անիկայ աստուած է , թող ին-
քը իր իրաւունքը պաշտպանէ անոր
դէմ , իր սեղանը փլըցնելուն հա-
32 մար ։ Եւ նոյն օրը զանիկայ — *Ցե-
րոբաաղ անուանեց . քանզի ըսաւ .
Թող Բահաղ իր իրաւունքը պաշտ-
պանէ անոր դէմ , իր սեղանը փլը-
ցընելուն համար ։
33 Եւ բոլոր †Մադիանացիները ,
Ամաղեկացիները ու արևելքի բնա-
կիչները միկտեղ ժողովուեցան , ու
ցատանելով՝ †Յեզրայելի
34 հովիտին մէջ բանակեցան ։ Եւ
*Տէրոջը Հոգին Գեդէօնին վրայ
հանգչեցաւ , ու անիկայ †փող հրն-
չեցուց . և Աբիեզերեանք անոր ե-
35 տևէն ժողովուեցան ։ Ու բոլոր Մա-
նասէին պատգամաւորներ խրկեց ,
ան ալ անոր ետևէն ժողովուեցաւ .
և Ասերին , Զաբուղոնին ու Նեփ-
թաղիմին — պատգամաւորներ խրր-
կեց . ու անոնք դացին զանոնք դի-
մաւորելու ։
36 Եւ Գեդէօն Աստուծոյ ըսաւ .
Թէ որ ըսածիդ պէս Իսրայէլը իմ
— Տէս Եւ · 37 ձեռքովս ազատելու ես , — Ահա ես
գ · 3 , 4 , 6 , կալին մէջը բուրդի գզաթ մը կը
7 ։ դնեմ . Թէ որ մինակ գզաթին վրայ
ցօղ՝ ու բոլոր գետնին վրայ չորու-
թիւն ըլլայ , անատենը պիտի գիտ-
նամ՝ որ ըսածիդ պէս Իսրայէլը իմ
38 ձեռքովս պիտի ազատես ։ Եւ այն-
պէս եղաւ . վասն զի առաւօտուն
կանուխ ելաւ , ու գզաթը քամեց ,
և գզաթէն ցօղը հանեց , — ր կոնք
39 մը լեցուն ջուր եղաւ ։ Ան ատենը
Բ՝ Ան · Ժբ · 32 ։ Գեդէօն Աստուծոյ ըսաւ . Բ՝քու
բարկութիւնդ իմ վրաս չբորբոքի ,
ու մինակ ասանգամ — Լ խօսիմ .
միայն ասանգամ գզաթովը փոր-

ձեմ . հիմա մինակ գզաթին վրայ
չորութիւն , ու բոլոր գետնին վրայ
40 ցօղ ըլլայ ։ Եւ ան գիշերը Ա-
ստուած այնպէս ըրաւ . մինակ գը-
զաթին վրայ չորութիւն՝ ու բոլոր
գետնին վրայ ցօղ եղաւ ։

ԳԼ · Է

1 Գեդէոնի բանակին երսունեւերկու հազար մարդացնէն՝ իրենք հարիւր հոգին կ'ընտրուին ։ 9 Գեդէոն Մադիանացիի մը երազը ու մեկնութիւնը լսելով՝ կը քաջալերուի ։ 16 Փողերով՝ ու սափորներու մէջ դրուած ջահերով՝ իր բանեցուցած հնարքը ։ 24 Եփրեմի որդիքը Օրէբը ու Զէբը կը բռնեն կը մեռցընեն ։

1 Ու — Ցերոբաաղ՝ այսինքն Գեդէ- — ԳԼ · Ե · 32 ։
օնը ու անոր հետ եղող բոլոր
ժողովուրդը կանուխ ելան , Հարօ-
դի աղբիւրին քովը բանակեցան .
ու Մադիամու բանակը անոր հիւ-
սիսային կողմը՝ դէպ 'ի Մօրէի
2 բլուրը՝ հովիտին մէջն էր ։ Եւ Տէրը
ըսաւ Գեդէօնին . Քու հետդ եղող
ժողովուրդը շատ է . չ՛ — ՚ԼԷր
Մադիամ անոնց ձեռքը տալ . չըլ-
այ որ Իսրայէլը Բ՝ինձի դէմ պար- Բ ր Օր · ը · 17 ։ Ես · ժ · 13 ։ ա Կոր · ա · 29 ։ բ Կոր · գ · 7 ։ Բ ր Օր · ի · 8 ։
ծենայ ու ըսէ թէ՝ Իմ ձեռքս զիս
3 ազատեց ։ Ուստի հիմա քարող
կարդալ տաս՝ որ ժողովուրդը լսէ ,
ու ըսես . Բ՝Ո՛վ որ վատասիրտ ու
երկչոտ է՝ թող ետ դառնայ , և
շուտով Գաղաադ լեռնէն երթայ .
ու ժողովուրդէն քսանուերկու հա-
զար հո՛գի ետ դարձան , ու տասը
4 հազար մնացին ։ Եւ Տէրը ըսաւ Գե-
դէօնին . Ժողովուրդը տակաւին
շատ է . ջուրին քովը իջեցուր զա-
նոնք , ու հոն քեզի համար զանոնք
փորձեմ . և որուն համար քեզի
ըսեմ Թէ՝ Ատիկայ քու հետդ եր-
թայ , անիկայ քու հետդ թող եր-
թայ , ու որուն համար քեզի ըսեմ
Թէ՝ Ատիկայ քու հետդ չերթայ ,
5 անիկայ թող չերթայ ։ Ուստի ժո-
ղովուրդը ջուրին քովը իջեցուց .
և Տէրը Գեդէօնին ըսաւ . Ո՛վ որ
շունի լափելուն պէս ջուրը լեզուա-
վը լափէ , անիկայ զատ կայնեցը-
նես , ու ով որ խմելու համար իր
ծունկերուն վրայ ծռի , — Ն՛Ի՛Ց — Լ
6 Ը՝ՆԵՑԱՒ ։ Եւ ձեռքը բերանը
դնելով լափողներուն թիւը՝ իրեք
հարիւր մարդ էր . և բոլոր մնացած
ժողովուրդը իրենց ծունկերուն վը-
րայ ծռեցան ջուր խմելու համար ։
7 Ու Տէրը Գեդէօնին ըսաւ . Ե՛Ս — Ա թագ · ժգ · 6 ։
իրեք հարիւր մարդիկներով՝ որոնք
ջուրը լափեցին , ձեզ պիտի ազա-
տեմ , և Մադիամը քու ձեռքդ
պիտի մատնեմ . ու բոլոր ՀԱՑ՝Ի
ժողովուրդը՝ ամէն մարդ իր տեղը
8 երթայ ։ Ուստի ժողովուրդը իրենց
ձեռքը պաշար առին և իրենց փո-
ղերն — Լ ։ Եւ Գեդէօն Իսրայէլը

Ն · Ք · ԶԴ · Իբր 1249

ն · ք · զՔ · Ի՛ՐՐ 1249

բոլոր մարդիկները՝ ամէն մէկը իր վրանը խրկեց, բայց ան իրեք հարիւր մարդը իր քովը պահեց. ու Մադիամու բանակը՝ անոր տակը՝ հովիտին մէջն էր։

ԻՆՆ · Խզ · 2 · 3։

9 Եւ նոյն Է գիշերը՝ Տէրը անոր ըսաւ. Ոտք ելլէ, իջիր բանակը իջիր. քանզի զանիկայ քու ձեռքդ 10 մատնեցի։ Եւ թէ որ դուն իջնելու կը վախնաս, Նէ՛ դուն քու ծառադ Փուրային հետ բանակը

ՂՀՇ 13։14։ 15։ Տես Ժն · իդ · 14։ ա Թագ. ԺԳ · 9 · 10։

11 իջիր. Եւ Ղպիտի լսես թէ անոնք ինչ կը խօսին. անկէ ետև քու ձեռքերդ պիտի ուժովնան, որ բանակը իջնես։ Ուստի ինքը և իր ծառան Փուրա՝ բանակին մէջի Է դուն-

Ի Եզ · ԺԳ · 18։

12 դերուն ծայրը իջան։ Ու Մադիամի, և Ամաղէկը, ու բոլոր արևելցիները՝ մարախներու պէս բազմութեամբ հովիտին մէջ պառկեր էին, և անոնց ուղտերը անթիւ էին, ու ծովուն եղերքը եղող աւազին չափ

Ը Գէ · Գ · 5 · 33 · Բ · 10։

13 շատ էին։ Եւ Գեդէօն հոն երթալով՝ ընէց որ մէկ մարդ մը իր ընկերին երազ կը պատմէր, ու կ'ըսէր. Ես երազ մը տեսայ. և ահա մէկ գարեղէն հաց մը դէպ 'ի Մադիամու բանակը կը գլորուէր, և վրանի մը հասնելով՝ զանիկայ զարկաւ, որ ինկաւ. ու գլխիվար դարձուց, և

14 վրանը ինկաւ։ Ու անոր ընկերը պատասխան տուաւ, և ըսաւ. Ասիկայ ուրիշ բան չէ, բայց միայն Իսրայէլացի Յովասի որդւոյն Գեդէօնին սուրը. Աստուած՝ Մադիամը ու բոլոր բանակը անոր ձեռքը մատներ է։

15 Ու երբոր Գեդէօն երազին պատմութիւնը ու անոր մեկնութիւնը լսեց, Տէր՛ն երկրպագութիւն ըրաւ, և Իսրայէլին բանակը դարձաւ, ու ըսաւ. Ոտք ելլէք, քանզի Տէրը Մադիամու բանակը ձեր

16 ձեռքը տուեր է։ Եւ ան իրեք հարիւր մարդը իրեք դունդի բաժնելով՝ ամենուն ձեռքը փողեր ու պարապ սափորներ տուաւ, և սափորներուն մէջն ըՀ ջահեր դրաւ.

17 Ու անոնց ըսաւ. Ինծի նայեցէք՝ և անանկ ըրէք. ու երբոր բանակին եղերքը հասնիմ, ես ինչպէս որ ընեմ, դուք ալ այնպէս ըրէք։

18 Ու երբոր ես ու բոլոր իմ հետս եղողները՝ փողը ֆչեցընենք, ան ատենը դուք ալ բոլոր բանակին չորս կողմը փողերը ֆչեցուցէք, և ըսէք. Տէրոջը ու Գեդէօնին սրը։

19 րը։ Եւ Գեդէօն ու անոր հետ եղող հարիւր մարդը՝ կէս գիշերուան պահուն սկիզբը՝ երբոր պահապանները նոր դրած էին, բանակին եղերքը հասան, և փողերը ֆչեցընելով՝ ձեռքերնուն մէջը և-

20 զած սափորները կոտրտեցին։ Ան ատենը իրեք գունդն ալ փողերը ֆչեցուցին, ու սափորները կոտրտեցին, ու ձախ ձեռքով՝ ջահերը, և աջ ձեռքով՝ փողերը բռնելով ֆչեցընելու համար, կը պոռային սրը Ի՛ՀՈՎԱՅ. Տէրոջը ու Գեդէօնին

21 սուրը։ Եւ Իամէն մարդ բանակին բոլորտիքը՝ իր տեղը կայներ էր. Ու բոլոր բանակը վազելով և ա-

22 ղաղակելով կը փախչէին։ Ու երբոր ան իրեք հարիւր մարդը Է ֆչեցին փողերը ֆչեցուցին, Տէրը բոլոր բանակին մէջ Ամէն մարդուն սուրը Է իր ընկերին վրայ դարձուց. և զօրքը մինչև Բեթասետան դէպ 'ի Սարերան, սր մինչև Աբէլմեհուլային սահմանը Ե Տաբբաթ փախաւ։

Ե Սպ · Ժդ · 9։ Եզ · Թ · 4։

23 Ու Իսրայէլացիք՝ Նեփթաղիմէն, Ասերէն և բոլոր Մանասէէն ժողվուեցան, ու Մադիանացւոց ե-

24 տևէն ինկան։ Եւ Գեդէօն Է Եփրեմի բոլոր լեռնակողմը պատգամաւորներ խրկեց, ըսելով. Մադիանացիները դիմաւորելու իջէք, և անոնց առջևէն ջուրերը բռնեցէք մինչև Բեթբարա, նաև Յորդանանը։ Ուստի Եփրեմի բոլոր մարդիկները ժողվուեցան, ու Ի ջուրերը բռնեցին մինչև Հբեթբարա, նաև

Է Գէ · Գ · 27։

Է Գէ · Գ · 28։ Հ Յես · ա · 28։

25 Յորդանանը։ Եւ Ի Մադիամու երկու իշխանները Օրէբը ու Զէբը բռնեցին. Օրէբը՝ ՀՕրէբի վէմին քովը մեռցուցին, ու Զէբը՝ Զէբի Ճնձանին քովը մեռցուցին. և Մադիանացիները հալածեցին, ու Օրէբին և Զէբին գլուխները՝ Գեդէօնին բերին Ֆ Յորդանանու ան-

Ի Գէ · Բ · 3։ Սաղ · Ձգ · 11։ Ղես · Ժ · 26։

Ֆ Գէ · Բ · 4։

ԳԼ · Ը

1 Գեդէօն Եփրեմի որդւոց սիրտը կ'իջեցընէ։ 4 Սոկքովթի ու Փանուէլի բնակիչները Գեդէօնին զօրքը կերակրելը կը մերժեն։ 10 Գեդէօն կը բռնէ Զեբէէն ու Սալմանան. 13 և դառնալով՝ Սոկքովթի ու Փանուէլի բնակիչները կը ջարդէ։ 17 Գեդէօն իր եղբայրները մահուանը վրէժը Զեբէէն ու Սալմանայէն կ'առնէ. 22 և չ'ուզեր ժողովուրդին վրայ իշխան ըլլալու։ 24 Անոր չինած եփուդը կռապաշտութեան պատճառ կ'ըլլայ։ 28 Մադիամ կը նուաճի։ 29 Գեդէօնին որդիքը, ու իր մահը։ 33 Իսրայէլացւոց կռապաշտութիւնը ու ապերախտութիւնը։

1 Ու Եփրեմացիք անոր ըսին. Ա՛ս մեզի ըրած բանդ ինչ պիտի ըլլայ, որ Մադիամու դէմ պատերազմելու գացիր, և մեզ չկանչեցիր. ու անոր հետ սաստիկ վէճ

– Տես գ · Ժբ · 1։ բ Թագ. Ժթ. 41։

2 ըրին։ Եւ անիկայ անոնց ըսաւ. Ես հիմա ձեզի պէս ինչ բան ըրի. Եփրեմին ճռաքաղութիւնը՝ Աբիեզերի այգկութէն լաւագոյն չէ՞

3 արդեօք։ Ֆ Աստուած Մադիամու իշխանները՝ Օրէբը ու Զէբը ձեր ձեռքը տուաւ. ես ձեզի պէս ինչ

Ֆ Գէ · Է · 24, 25։ Փիլ · Բ · 3։

ան կրցայ ընել ։ Ան խօսքը ը-
սածին պէս՝ †անոնց սիրտը հան-
դարտեցաւ ։
4 Եւ Գեդէօն Յորդանան եկաւ ,
ու ինքը և իր հետը եղող իրեք հա-
րիւր մարդիկը անցան . թէպէտ և
նուաղած էին , բայց ընդ-դէն կը հա-
5 լածէին ։ Ու †Սոկքովթի մարդիկ-
ներուն ըսաւ . Շնորհք ըրէք ,
եւեէս եկող ժողովուրդին հացի
նկանակները տուէք , քանզի նուա-
ղած են . ու ես Մադիամու թագա-
ւորներուն՝ Զեբէէին ու Սաղմա-
նայինն եւեէն ինչ կը հալածեմ ։
6 Եւ Սոկքովթի իշխանները ըսին .
†Միթէ Զեբէէին ու Սաղմանային
ձեռքը արդէն քու ձեռքիդ մէջն
է , որ Ենք քու զօրքիդ հաց
7 տանք ։ Ու Գեդէօն ըսաւ . Ու-
րեմն երբոր Տէրը Զեբէէն ու
Սաղմանան իմ ձեռքս տայ , †ձեր
մարմինները անապատին փուշ-
ներովը ու տատասկներովը պի-
8 տի ծեծեմ ։ Եւ անկէ Փա-
նուէլ ելաւ , ու անոնց ալ այնպէս
ըսաւ . բայց Փանուէլի մարդիկները՝
Սոկքովթի մարդիկներուն տուած
պատասխանին պէս՝ պատասխան
9 տուին ։ Ու Փանուէլի մարդիկ-
ներուն ալ խօսեցաւ , ըսելով .
Երբոր †խաղաղութեամբ դառնամ ,
†ատ աշտարակը պիտի փլցնեմ ։
10 Եւ Զեբէէ ու Սաղմանա , և ա-
նոնց հետ անոնց բանակը , — Կա-
րկէդմէի բնակիչներուն բոլոր բանա-
կէն մնացած չորէ՝ ամէնը տասնու-
հինգ հազարի չափ մարդ կարկառի
մէջ էին . ու ինկած մեռածները՝
Հարիւր քսան հազար սուսերա-
11 մարկ մարդիկներ էին ։ Եւ Գեդէօն
Ենոբահի ու Յոգբեհայի արևելեան
կողմէն՝ վրանաբնակներուն ճամ-
բովը ելաւ , ու բանակը զարկաւ .
քանզի բանակը †անհոգ կը կենար ։
12 Եւ Զեբէէն ու Սաղմանան փա-
խան . ու Գեդէօն անոնց ետևէն
իյնալով՝ Մադիամու երկու թա-
գաւորները՝ Զեբէէն ու Սաղմանան
բռնեց , ու բոլոր բանակը տակնու-
վրայ ըրաւ ։
13 Եւ Յովասին որդին Գեդէօնը՝
*արևը չելած" պատերազմէն ետ
14 դարձաւ . Ու Սոկքովթի մարդիկ-
ներէն երիտասարդ մը բռնեց , և
անոր հարցուց . ու անիկայ՝ Սոկ-
քովթի իշխանները ու ծերերը՝ եօ-
թանասունհինգ մարդ գրեց՝
15 ***** անոր ։ Եւ Գեդէօն Սոկ-
քովթի բնակիչներուն եկաւ , ու
ըսաւ . Ահա Զեբէէն ու Սաղմա-
նան՝ որոնց համար †դուք նախատե-
ցիք՝ ըսելով . Միթէ Զեբէէին ու
Սաղմանային ձեռքը արդէն քու
ձեռքիդ մէջն է , որ մենք քու
նուաղած մարդիկներուդ հաց
16 տանք ։ Ուստի քաղաքին ծերե-
րը առաւ , և անապատէն փուշեր
ու տատասկներ †ուղղ , և անոնց-
մով Սոկքովթի մարդիկները պատ-
17 ժեց ։ Ու †Փանուէլի †աշտա-
րակը փլցուց , և քաղաքին մար-
դիկները կոտրեց ։
18 Ու Զեբէէին և Սաղմանային ը-
սաւ . †Թաբօրի մէջ մեռցուցած
մարդիկներնիդ ինչպէս †էրտնիներ
էին ։ Ու անոնք ըսին . Ինչպէս ես
դուն , անոնք ալ այնպէս էին . ա-
մէն մէկը թագաւորի տղու կը նմա-
19 նէր ։ Եւ անիկայ ըսաւ . Անոնք
իմ եղբայրներս՝ մօրս տղաքներն
էին . կենդանի է Տէր , թէ որ
դուք զանոնք ողջ թողուիք , ես
20 ձեզ չէի մեռցներ ։ Ու իր անդ-
րանիկ տղուն՝ Յեթերին ըսաւ .
Ելիր , ասոնք մեռցուր ։ Բայց պա-
տանին իր սուրը չքաշեց . քանզի
մանկահասակ ըլլալով՝ վախցաւ ։
21 Ուստի Զեբէէ ու Սաղմանա ըսին .
Դուն ելիր որ մեզ զարնես . քանզի
մարդուս ուժը իր հասակին համե-
մատ կ'ըլլայ . և Գեդէօն ոտք ելաւ ,
ու †Զեբէէն և Սաղմանան մեռցուց .
ու անոնց ուղտերուն պարանոցին
վրայ եղած մահիկները առաւ ։
22 Եւ Իսրայէլի մարդիկները Գե-
դէօնին ըսին . Մեր վրայ թագա-
ւորէ , դուն ու քու որդիդ և քու
որդւոյդ որդին . որովհետև մեզ
Մադիամու ձեռքէն ազատեցիր ։
23 Ու Գեդէօն անոնց ըսաւ . Ես ձեր
վրայ չեմ թագաւորեր , ոչ ալ իմ
որդիս ձեր վրայ պիտի թագաւորէ .
Ն ձեր թագաւորը Տէրը ըլլայ ։
24 Ետքը Գեդէօն անոնց ըսաւ .
Ձեզմէ բան մը պիտի խնդրեմ .
ամէն մարդ իր աւարին օղերը ինծի
տայ . (Քանզի անոնք Իսմայէլացի
25 ըլլալով՝ ոսկիէ օղեր ունէին ։) Ու
անոնք ըսին . Խոլոր սրտով կու
տանք . ուստի լաթ մը փռեցին ,
ու ամէն մարդ իր աւարին օղերը
26 հոն ձգեց ։ Եւ ան իր ուզած ոսկի
օղերուն կշիռը՝ հազար եօթը հա-
րիւր †սիկլ ոսկի եղաւ . մահիկնե-
րէն , դինեերէն , ու Մադիամու
թագաւորներուն վրայի ծիրանի
պատմուճաններէն , և անոնց ուղ-
տերուն պարանոցին վրայ եղած
27 մանեակներէն՝ ի զատ ։ Ու Գեդէ-
օն *անոնցմով եփուդ մը շինեց , և
իր եփրա քաղաքին մէջը դրաւ .
ու բոլոր Իսրայէլը †հոն անոր ե-
տևէն էրթալով՝ պոռնկեցաւ . և
Գեդէօնին ու անոր տանը Ծորո-
դայթ եղաւ ։
28 Այսպէս Մադիամ՝ Իսրայէլի որ-

ն · ք · զԿ · Էր 1249

†Առակ . ժե . 1 ։

†Ծն . լԷ · 17 ։ Սաղ · կ · 6 ։

†Ծն . գ թագ . ի · 11 ։ Ծն . ա թագ . իե · 11 ։ †Հմր 16 ։

†Ծն . լր · 30 ։ գ թագ . ժր · 25 ։

†գ թագ . իր · 27 ։ †Հմր 17 ։ †Գլ · է · 12 ։

†Գլ · ի · 2 ։ 15 ։ 17 ։ 25 ։ գ թագ . գ · 26 ։ †Թուռ . լր · 35 · 42 ։ †Գլ . ժր · 27 ։ աթես . ե · 3 ։ †Սաղ . ձգ · 11 ։

*կ—՛Ուրիշ գաւ՝ի վերէն

†Հմր 6 ։

ն · ք · զԿ · Էր 1249

†Հմր 7 ։

†գ թագ . ժր · 25 ։ †Հմր 9 ։

†Գլ · դ · 6 ։ Սաղ · ձթ · 12 ։

†Սաղ · ձգ · 11 ։

*Սաղ . ձգ . 11 ։

†Ծն . իե · 13 ։ լե · 25 ։ 28 ։

†Գլ · ժէ · 5 ։ †Գլ · ղ · 24 ։ †Սաղ · ճղ · 89 ։ †ր Օր . է · 16 ։

դուց առջևը նուաճեցաւ . և չյանդգնեցաւ հետևիլ չկրցաւ գլուխ վերցրնել . ու Գեդէօնին օրերը՝ երկիրը քառասուն տարի հանգստացաւ ։

29 Եւ Յովասին որդին Յերոբաաղը գնաց , ու իր տանը մէջ նստաւ ։

30 Եւ Գեդէօն եօթանասուն տղայ ունէր իր երանքէն ելած . քանզի շատ

31 կիներ ունէր ։ Ու Սիւքեմի մէջ ունեցած հարճն ալ անոր տղայ մը ծնաւ , և անոր անունը Աբիմելէք

32 դրաւ ։ Ու Յովասին որդին Գեդէօն՝ բարի ծերութեամբ մեռաւ , և թաղուեցաւ ։

33 Եւ յետ Գեդէօն մեռածին պէս՝ Իսրայէլի որդիքը դարձան ու բան հաղիմին ետևէն էրթալով պոռնկեցան , ու Բահաղ բերիթը իրենց

34 աստուած ըրին ։ Եւ Իսրայէլի որդիքը չյիշեցին իրենց Տէր Աստուածը , որ զերնէք ազատեր էր իրենց բոլորտիքը եղած ամէն թըշ-

35 նամիներուն ձեռքէն ։ Ու Յերոբաաղին (այսինքն Գեդէօնին) տան՝ անոր Իսրայէլին ըրած բոլոր բարութեանը համեմատ , գթութիւն չըրին ։

ԳԼ . Թ

1 Աբիմելէք Սիւքեմացւոց հետ խորհուրդ ընելով՝ ու իր եղբայրները սպանելով՝ թագաւոր կ'ըլլայ ։ 7 Յովթամ առակով մը զանոնք կը յանդիմանէ , ու անոնց կործանումը կը գուշակէ ։ 22 Գաաղ՝ Սիւքեմացւոց հետ կը միաբանի Աբիմելէքին դէմ ։ 30 Զերուլ՝ ասբանը անոր կ'իմացընէ ։ 34 Աբիմելէք զանոնք կը յաղթէ , ու աղ կը ցանէ քաղաքը ։ 46 Բերբիթ աստուծոյն աշտարակը կ'այրէ ։ 50 Թեբեսի մէջ երկանաքարի կտորով մը կ'բսպանուի ։ 56 Յովթամին անէծքը կը կատարուի ։

1 Ու Յերոբաաղին տղան Աբիմելէքը՝ Սիւքեմ իր մօրը եղբայրներուն գնաց . և անոնց հետ՝ ու իր մօրը հօրը բոլոր ազգատոհմին հետ

2 խօսեցաւ , ըսելով . Շնորհք ըրէք՝ Սիւքեմի բոլոր բնակչացը ականջներուն զրուցեցէք թէ՝ Ձեզի որը աղէկ է . Յերոբաաղին բոլոր որդւոցը՝ եօթանասուն մարդոց ձեր վրայ թագաւորելը , թէ մէկ մարդուն ձեր վրայ թագաւորելը . և միտերնիդ բերէք , որ ես ձեր ոսկր

3 կորը ու ձեր մարմինն եմ ։ Ուստի իր մօրը եղբայրները՝ անոր վրայով ամէն աս խօսքերը Սիւքեմի բոլոր բնակչացը ականջներուն զրուցեցին . ու անոնց սիրտը Աբիմելէքին դարձաւ . քանզի ըսին թէ՝ Անիկայ

4 մեր եղբայրն է ։ Եւ Բահաղ բերիթին տունէն եօթանասուն կտոր արծաթ տուին անոր . ու Աբեմելէք՝ անոնցմով դատարկա-

կեաց ու սրիկայ մարդիկներ վարձքով բռնեց . և անոր ետևէն գացին ։

5 Ու Եփրայի մէջ իր հօրը տունը մտաւ , և իր եղբայրները Յերոբաաղին որդիքը՝ եօթանասուն հոգին մէկ քարի մը վրայ սպաննեց . բայց Յերոբաաղին պզտիկ տղան Յովթամը՝ պահուելով ողջ մնաց ։

6 Ետքը բոլոր Սիւքեմի բնակիչները , և Մելօնին բոլոր տունը՝ ժողվուելան , ու գացին Սիւքեմի մէջ Բարձանի կաղնիին քովը Աբիմելէքը թագաւոր ըրին ։

1 Եւ Փղշտացիք Աստուծոյ տապա- նակը առին , ու զանիկայ Ե– 2 բևնեզերէն ‖Ազովտոս տարին ։ Եւ Փղշտացիք Աստուծոյ տապանակը առին , ու զանիկայ Բ Դագոնի տու- նը տարին , և Դագոնին քովը դրին ։ 3 Ու հետևեալ օր Ազովտացիք –ն կանուխ ելլելով , տեսան որ Դագոնը Ցերոջը տապանակին առջևը † երեսի վրայ գետինը ինկեր էր . ու անոնք Դագոնը վերցուցին 4 Ր իր տեղը դրին ։ Եւ հետևեալ օ- րը՝ Ր–րյէ–լ առաւօտուն կանուխ ելան , ու տեսան որ Դագոնը Ցե- րոջը տապանակին առջևը երեսի վրայ գետինը ինկեր էր , և Դագո- նին գլուխը ու ձեռքերուն երկու ափը կոտրած՝ ⁂ սեմին վրայ էին– էր , և միայն § Դագոնին մարմինը" 5 մնացեր էր ։ (Ան պատճառաւ Դագոնի քուրմերը՝ ու Դագոնի տունը բոլոր մտնողները՝ մինչև աս օրս Ազովտոս եղող Դագոնի սե- 6 մին վրայ չեն կոխեր ։) Անկէ ետև Ց Ցերոջը ձեռքը Ազովտացւոց վրայ ծանրացաւ , ու ը զանոնք կորսըն- ցուց , և զանոնք Ազովտոսի ու ա- նոր սահմաններուն մէջը Բ թանչքի ուռեցքներով զարկաւ ։ 7 Եւ Ազովտոսի բնակիչները ա- սանկ ըլլալը տեսնելով , ըսին . Ի- սրայէլի Աստուծոյն տապանակը մեր քովը չկենայ . քանզի անոր ձեռքը մեր վրայ՝ ու մեր աստուծոյն Դա- 8 գոնին վրայ ծանրացաւ ։ Եւ ⁂ղ- ղ խրկեցին , ու Փղշտացւոց բոլոր նա- խարարները իրենց քովը ժողվեցին , ու ըսին . Իսրայէլի Աստուծոյն տապանակը ի՞նչ ընենք . ու ըսին . Իսրայէլի Աստուծոյն տապանակը Գէթը փոխադրուի ։ Ու Իսրա- յէլի Աստուծոյն տապանակը Գէթը 9 փոխադրեցին ։ Եւ զանիկայ հոն փոխադրելէն ետքը , ⁂ Ցերոջը ձեռ- քը ան քաղաքին վրայ ըլլալով՝ Ր մեծ խռովութիւն էր– . ու Ը քա- ղաքին մարդիկը պզտիկէն մինչև մեծը զարկաւ . և անոնց վրայ թանչքի ուռեցքներ երևցան ։ 10 Եւ Աստուծոյ տապանակը Ակ- կարոն խրկեցին . ու երբոր Աստու- ծոյ տապանակը Ակկարոն մտաւ , Ակկարոնացիք կանչվրտուելով բ- սին . Իսրայէլի Աստուծոյն տապա- նակը մեզի բերին՝ որ մեզ ու մեր 11 ժողովուրդը մեռցընեն ։ Եւ ⁂ղ- ղ խրկելով՝ Փղշտացւոց բոլոր նախա- րարները ժողվեցին , ու ըսին . Ի-

Ի Սամ . Նը . 61 ։
Ը Գլ . Բ . 34 ։ Սամ . Նը . 64 ։
Ր Բթագ . ա . 2 ։
⁂ Ցես . է . 6 ։ Բթագ . ժգ . 19 ։ Ժե . 32 ։ Նէեմ . թ . 1 ։ Ցոր . բ . 12 ։
† Գլ . ա . 9 ։
* Եբր . կացած
Բ Բթագ . ա . 4 ։
† Կ–ղ՝ կըռնակին
⁂ Ես . Լե . 17 ։
‡‡ Գլ . ԺԳ . 3 ։ ‡ Ջ՝ անպատիւ ։
§ Սամ . իգ . 3 ։ Նը . 61 ։

– Գլ . գ . 1 ։ է . 12 ։
‖ Ուր՝ Աշդոդ
Բ Դատ . ԺԶ . 23 ։
⁂ Ես . ԺԹ . 1 ։ Խզ . 1 . 2 ։
Ր Ես . Խզ . 7 ։
Ի Երեմ . ծ . 2 ։ Եզեկ . գ . 4 . 6 ։ Մխ . ա . 7 ։
§ Կ–ղ՝ ձուկը . Եբր . Դագոնը ։
Ց Ես . Սոփ . ա . 9 ։
Ե Ելս . Է . 11 ։ Ել . Թ . 3 ։ Սամ . լբ . 4 ։ Դոր . Ժգ . 11 ։
Ը Գլ . գ . 5 ։ Բ Օր . Իր . 27 ։ Սամ . Նը . 66 ։
⁂ Բ Օր . բ . 15 ։ Գլ . է . 13 ։ Ժր . 15 ։
Է Հմր 11 ։
Լ Հմր 6 ։ Սամ . Նը . 66 ։

Ն·Ք·ՂԴ· Իսր 1141

ՅՀՊ 6, 9։

Իսր 1140

— Ծն·խա· 8։ Եզ·է· 11։ Դան· բ·2։է·7։ Մատ·բ· 4։

Բ Եզ·իգ· 15։ բ Օր· ժղ·16։ է Ղև·է·15, 16։ Ը ՀՊ 9։

Է Ցես ՀՊ 17։18։ Ցես·ժգ· 3։ Դատ· գ·3։

ՂԿ·է·6։ Է Ցես·է· 19։ Ես· խբ·12։ Մաղ·բ· 2։Ցօհ·Թ. 24։ Ը Կ·է·3· 4։7։ Ի Ցես գԼ· է·6։11։ Սաղ·լԹ· 10։ Ժ Եզ·է·13։ ը·15։ ժգ· 17։ Է Եզ·ժբ· 31։ Լ բ Թագ· ղ·3։ Է Թես·ժԹ· 2։

բայէլի Աստուծոյն տապանակը Թող տուէք երթայ, և իր տեղը դառնայ, որ մեզ ու մեր ժողովուրդը չմեռցընէ. քանզի բոլոր քաղաքին մէջը մահառիթ սոսկում մը կար, Էո՜ հոն Աստուծոյ 12 ձեռքը խիստ ծանրացեր էր։ Եւ չմեռած մարդիկները՝ թանչքի ուռեցքներով զարնուեցան. ու քաղաքին աղաղակը երկինքը ելաւ։

ԳԼ·Զ

1 Եօթը ամիսէն ետքը Փղշտացիք խորհուրդ կ'ընեն՝ Թէ ինչպէս պարտին տապանակը ետ խրկել։ 10 Ջանիկայ նոր սայլի մը վրայ կը դնեն ընծաներով, և դէպ'ի Բեթսամիս կը խրկեն։ 19 Բեթսամիսացիք կը զարնուին՝ տապանակին մէջը նայելնուն համար։ 21 ու Կարիաթարիմի բնակիչը լուր կը խրկեն, որ գան տապանակը տանին։

Իսր 1140

1 Եւ Տէրոջը տապանակը Փղշտացւոց երկրին մէջը եօթը ամիս 2 մնաց։ Ու Փղշտացիք Էրէից քուրմերը ու բաղդ նայողները կանչեցին՝ ու ըսին. Եհովային տապանակին ի՞նչ ընենք. մեզի իմացուցէք Թէ զանիկայ ինչո՞վ իր տեղը 3 խրկենք։ Անոնք ալ ըսին. Թէ որ Իսրայէլի Աստուծոյն տապանակը խրկէք, զանիկայ Էպարապ չխրկէք. հապա անպատճառ էյանքանչքի պատարագ տուէք անոր. ան ատենը կը բժշկուիք, ու Ձեզի յայտնի կ'ըլլայ Թէ ինչու համար անոր ձեռքը ձեր վրայէն չերթար։ 4 Եւ անոնք ըսին. Անոր ի՞նչ տեսակ պատարագ մատուցանենք։ Ու անոնք ըսին. Էփղշտացւոց նախարարուն Թուովը հինգ ոսկեղէն Թանչքի ուռեցքներ՝ ու հինգ ոսկի մուկ ընծայ։ Քանզի ձեր ամենուն վրայ՝ և ձեր նախարարներուն վրայ՝ մի և նոյն հարուածը 5 եղաւ։ Եւ հիմա ձեր Թանչքի ուռեցքներուն պատկերները, ու ձեր ջերկիրը աւրող մուկերուն պատկերները շինեցէք, ու Էիսրայէլի Աստուծոյն փառք տուէք. կարելի է որ իր ձեռքը՝ ձեր վրայէն, Ըձեր աստուածներուն վրայէն ու ձեր երկրին վրայէն Իվերացնէ։ 6 Ընչո՞ւ Եւ ինչո՞ւ համար ձեր սիրտերը կը խստացընէք, Էինչպէս որ Եգիպտացիք ու Փարաւոն իրենց սիրտերը խստացուցին. չէ՞ որ Աստուած անոնց մէջը հրաշալի գործքեր ընելէն ետքը՝ Էզանոնք Թող 7 տուին որ երթան։ Հիմա Լմէկ նոր սայլ մը շինեցէք, ու երկու հատ կաթնատու երինջ առէք, Էոր անոնց վրայ բնաւ լուծ դրուած չըլլայ. ու երինջները սայլին լծեցէք, և անոնց ձագերը անոնց 8 ետևէն տուն դարձուցէք. Ու Եհովային տապանակը առէք, և զանիկայ սայլին վրայ դրէք, ու Էան ոսկեղէն *պատկերները՝ որ դուք յանցանքի համար անոր ընծայ պիտի տաք, պզտիկ արկղով մը անոր մէկ կողմը դրէք. ու զանիկայ 9 խրկեցէք որ երթայ. Եւ նայեցէք, Թէ որ իր սահմանին ճամբովը Բեթսամիսը ելլէ, աս մեծ չարիքը մեզի ընողը անիկայ է. ապա Թէ ոչ՝ Հգիտնանք որ անոր ձեռքը բնաւ մեզի դպած չէ, հապա աս բանը դիպուածով պատահեր է մեզի։

10 Եւ ան մարդիկները այսպէս ըրին. երկու հատ կաթնատու երինջ առին, ու զանոնք սայլին լծեցին, և անոնց ձագերը տան մէջ գոցե- 11 ցին։ Ու Տէրոջը տապանակը, և ոսկի մուկերուն, ու իրենց Թանչքի ուռեցքներուն պատկերներուն պզտիկ արկղը սայլին վրայ դրին։ 12 Ու երինջները չիտակ Բեթսամիսի ճամբան բռնեցին, ու մեծ ճամբայէն բառաչելով կ'երթային, և աջ կամ ձախ կողմը չխոտորեցան. ու Փղշտացւոց նախարարները մինչև Բեթսամիսին սահմանը անոնց 13 ետևէն գացին։ Եւ Բեթսամիսացիք հովիտին մէջը ցորենի հունձք կը Ընձէին, ու իրենց աչքերը վերցընելով տապանակը տեսան, ու տեսնելնուն համար ուրախացան։ 14 Եւ սայլը Բեթսամիսացի Յեսուին արտը մտաւ, ու հոն կայնեցաւ. և հոն մէկ մեծ քար մը կար. ու սայլին փայտերը ճեղքեցին, և ան երինջները Տէրոջը ողջակէզ մատուց- 15 ցին։ Ու Ղևտացիք՝ Տէրոջը տապանակը, և անոր հետ եղող ոսկի պատկերներուն պզտիկ արկղը վար իջեցուցին, ու ան մեծ քարին վրայ դրին. և ան օրը Բեթսամիսի մարդիկը Տէրոջը ողջակէզներ ու 16 զոհեր մատուցին։ Ու Փղշտացւոց հինգ նախարարները՝ Էոնոնք տեսնելէն ետքը՝ նոյն օրը Ակկարոն 17 դարձան։ Եւ ան ոսկեղէն Թանչքի ուռեցքները՝ որ Փղշտացիք յանցանքի համար Տէրոջը ընծայ տուին, ասոնք էին. Մէկ հատ մը՝ Ազովտոսի համար, մէկ հատ մը՝ Գազայի համար, մէկ հատ մը՝ Ասկաղոնի համար, մէկ հատ մը՝ Գեթի համար, — մէկ հատ մը՝ Եկ- 18 կարոնի համար։ Եւ ոսկի մուկերը՝ Փղշտացւոց հինգ նախարարներուն բոլոր քաղաքներուն Թուովն էին, պարսպաւոր քաղաքէն մինչև անպարիսպ գեղը, ու մինչև ան մեծ քարը՝ որուն վրայ Տէրոջը տապանակը դրուեցաւ. — մինչև աս

Ն·Ք·ՂԴ· Իսր 1140

Բ ՀՊ 4, 5։
* Եբր·ա· Նօթները՝

Ցես·ժե· 10։

Հ ՀՊ 3։

Ղ ՀՊ 4։

օրս ՝ն ֆորը Բեթսամիւսացի Ցեսուին արտին մէջը կը ի՞նայ ։

19 Եւ ֆՏէրը Բեթսամիւսին մարդիկները զարկաւ . քանզի անոնք Տէրոջը տապանակին մէջը նայեցան . ու ժողովուրդէն հիսուն հազար եօթանասուն մարդ զարկաւ . և Տէրը ժողովուրդին մէջը մեծ կոտորած ընելուն համար , ժո-

20 ղովուրդը սուգ բռնեց ։ Ու Բեթսամիւսի մարդիկը ըսին . ֆԱս սուրբ Տէր Աստուծոյն առջևը ո՞վ կրնայ կայնիլ . ու մեր քովէն ո-

21 ո՞ւն ելլէ ։ Եւ ֆԿարիաթարիմի բնակիչներուն պատգամաւորներ խրկեցին՝ ըսելով . Փղշտացիք Տէրոջը տապանակը ետ բերին . իջէք , ու զանիկայ ձեր քովը հանեցէք ։

ԳԼ · Է

1 Կարիաթարիմի բնակիչները Ուրինադաբին տուներ կը տանին տապանակը , ու անոր որդին Եղիազարը կ'օրհնեն որ տապանակին պահպանութիւնը ընէ ։ 2 Քանի տարիէն ետքը՝ 3 Իսրայէլացիք Սամուելին յորդորանքովը՝ Մասփայի մէջ հանդիսաւոր կերպով կ'ապաշխարեն ։ 7 Երբոր Սամուէլ կ'աղօթէ ու ոչխակէզ կը մատուցանէ , Տէրը որոտումով ու կայծակով Փղշտացիները կը լարդէ Արձենզերի մէջ ։ 13 Փղշտացիք կը նուաճին ։ 15 Սամուէլ խաղաղութեամբ և բարեպաշտութեամբ Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէ ։

1 Ու ֊Կարիաթարիմի մարդիկը գացին , ու Տէրոջը տապանակը ՚ն՚էք հանեցին , և զանիկայ տարին ֆԲրինադաբին տունը՝ որ բլուրին վրայ էր . ու անոր որդին Եղիազարը *որոշեցին որ Տէրոջը տապա-

2 նակին պահպանութիւնը ընէ ։ Եւ տապանակը Կարիաթարիմի մէջ դրուած օրէն ետքը շատ օրեր անցաւ , ու քսան տարի եղաւ , և Իսրայէլի բոլոր տունը Տէրոջը ետևէն հառաչեցին ։

3 Ան ատենը Սամուէլ Իսրայէլի բոլոր տանը խօսեցաւ՝ ըսելով . Թէ որ դուք ձեր բոլոր սրտովը ֆՏէրոջը դարձեր էք , ֆձեր մէջէն օտար աստուածները ու ֆԱստարովթը վերցուցէ՛ք , և ձեր սիրտերը Տէրոջը պատրաստեցէք , ու ֆմիայն զանիկայ պաշտեցէք . ու անիկայ Փղշտացւոց ձեռքէն ձեզ պիտի ազա-

4 տէ ։ Եւ Իսրայէլի որդիքը ըՒա-հաղիմը ու Աստարովթը վերցուցին , ու միայն Տէրոջը ծառայուցին ։

5 Թիւն բրին ։ Եւ Սամուէլ ըսաւ . ֆԲոլոր Իսրայէլը Մասփայի մէջ ժողվեցէք , ու ձեզի համար Տէրոջը

6 աղօթք ընեմ ։ Եւ Մասփայի մէջ ժողովեցան . ֊ու ջուր քաշեցին , և Տէրոջը առջևը թափեցին . ու ֊ան օրը ծոմ բռնեցին , և հոն բսին . ՚Տէրոջը դէմ մեղք գործեցինք ։ Եւ Սամուէլ Մասփայի մէջ Իսրայէլի որդւոցը դատաւորութիւն ըրաւ ։

7 Ու երբոր Փղշտացիք լսեցին որ Իսրայէլի որդիքը Մասփայի մէջ ժողովուեր են , Փղշտացւոց նախարարները Իսրայէլին դէմ ելան . ու Իսրայէլի որդիքը ՚՚ լսելով , Փղշ-

8 տացւոց երեսէն վախցան ։ Եւ Իսրայէլի որդիքը Սամուէլին ըսին . Ի Ընդհատ մեր Տէր Աստուծոյն աղաղակէ՛ մեզի համար , որ մեզ

9 Փղշտացւոց ձեռքէն ազատէ ։ Ու Սամուէլ մէկ կաթնկեր գառնուկ մը առաւ , ու զանիկայ բոլորովին ողջակէզ ըրաւ Տէրոջը . և ֆՍամուէլ Իսրայէլի համար Տէրոջը աղաղակելով ՚՚ըՀ՚ ըՀ՚՚ . ու Տէրը անոր պատասխան տուաւ ։

10 Ու երբոր Սամուէլ ողջակէզը կը մատուցանէր , Փղշտացիք մօտեցան՝ որ Իսրայէլի դէմ պատերազմ ընեն . ևս Տէրը նոյն օրը Փղշտացւոց վրայ մեծ ձայնով մը որոտաց , ու զանոնք խռովեցուց . ու Իսրայէլին

11 առջևը զարնուեցան ։ Եւ Իսրայէլի մարդիկը Մասփայէն ելլելով՝ Փղշտացիները հալածեցին , ու մինչև Բեթքարվրի տակը զանոնք կոտ-

12 րեցին ։ Ան ատենը Սամուէլ ֊մէկ քար մը առաւ , և Մասփային ու Սենին մէջտեղը կանգնեց , ու անոր անունը ֆԱբենեզեր կոչեց , ըսելով . Տէրը մինչև աս տեղս մեզի

13 օգնեց ։ ՚Եւ Փղշտացիք կորագրելուխ եղան , ու ֆՄ՚էյմրն ալ Իսրայէլի սահմանին մէջ չմտան . և Սամուելին բոլոր օրերը՝ Տէրոջը

14 ձեռքը Փղշտացւոց վրայ էր ։ Ու Փղշտացիք Իսրայէլէն որչափ քաղաքներ որ առեր էին , Ակկարոնէն մինչև Գէթը , ֆԻսրայէլին ետ տրուեցան . ու Իսրայէլ անոնց սահմանները Փղշտացւոց ձեռքէն ազատեց . և Իսրայէլի ու Ամորհացւոց մէջտեղը խաղաղութիւն կար ։

15 Եւ Սամուէլ ՚իր կենացը բոլոր օրերուն մէջը՝ Իսրայէլը դատեց ։

16 Ու տարուէ տարի Բեթէլը , Գաղգաղան ու Մասփան կ'երթար կը պտրտէր , և բոլոր ան տեղուանքը

17 Իսրայէլը կը դատէր ։ Ու ՚՚ն՚էք ֊Ռամա կը գառնար . քանզի իր տունը հոն էր . և հոն կը դատէր Իսրայէլը . ու հոն ֊Տէրոջը սեղան շինեց ։

ԳԼ · Ը

1 Իսրայէլացիք՝ Սամուէլի որդւոցը դէշ կառավարութենէն համբերանալով , թագաւոր կ'ուզեն ։ 6 Սամուէլ ցաւագին սրտով աղօթք կ'ընէ , ու Աստուծմէ կը մխիթարուի . 10 և ժողովուրդին կ'իմացընէ թագաւորին վարմունքը ։ 19 Աստուած կը պատուիրէ Սամուելին՝ որ ժողովուրդին խնդիրքը կատարէ ։

Ն · ք · դէ · Իրբ 1140

ֆ Ցես Եւ · ժթ · 21 ։ Թուա · գ · 5 ։ 15 ։ 20 ։ բ Թագ · է · 7 ։

՚բ Թագ · է · 9 ։ Մաղ · գ · 2 ։

֊ Ցես · ժը · 14 ։ Դատ · ժը · 12 ։ ա Մն · ժգ · 5 · 6 ։

— Գէ · է · 21 ։ Սաղ · ճլը · 6 ։

ՠ բ Թագ · է · 4 ։

*Եբր՝ սրբեցին

ֆ բ Օր · է · 2—10 ։ գ Թագ · բ · 48 ։ Ես · ծե · 7 ։ Ովս · է · 1 ։ Ցովել · բ · 12 ։

ՠՆ · լե · 2 ։ Ցես · իդ · 14 ։ 23 ։

Իրբ 1120

Ի Դատ · բ · 13 ։

Ն բ Մն · լ · 19 ։ Ցոբ · ժա · 13 ։ 14 ։

Ի բ Օր · է · 13 ։ ժ · 20 ։ ժգ · 4 ։ Մատ · գ · 10 ։ Ղու · գ · 8 ։

Ը Դատ · բ · 11 ։

Ի Դատ · ի · 1 ։ գ Թագ · իե · 23 ։

՚ բ Թագ · ժգ · 14 ։

Ի Ներեմ · թ · 1 ։ 2 ։ Դան · թ · 3 ։ 4 ։ 5 ։ Ցովել · բ · 12 ։

Ն Դատ · ժ · 10 ։ գ Թագ · ը · 47 ։ Սաղ · ճէ · 6 ։

Ն · ք · դէ · Իրբ 1120

Ի Ես · լէ · 4 ։

֊ Սաղ · դթ · 6 ։ Երեմ · ժե · 1 ։

ֆ Ցես Ցես · ժ · 10 ։ Դատ · գ · 15 ։ ե · 20 ։ Գէ · բ · 10 ։ բԹագ · իբ · 14 ։ 15 ։

Հ Ծն · իբ · 18 ։ լո · 45 ։ լե · 14 ։ Ցես · ղ · 9 ։ իդ · 26 ։

՚ Գէ · դ · 1 ։

֊ ՚՚ · օգնութեան քար ։ Ղատ · ժգ · 1 ։

ֆ Գէ · ժգ · 5 ։

՚ Հմր 6 ։ Գէ · ժը · 11 ։ Դատ · բ · 16 ։

՚ Գէ · ը · 4 ։

Ն Դատ · իա · 4 ։

1 Ա՚ երբոր Սամուէլ ծերացաւ, [=] իր որդիները Իսրայէլի վրայ [b] դա-
2 տաւոր դրաւ։ Եւ [b] իր անդրանիկ որդւոյն անունը Յովէլ, ու երկրորդին անունը Աբիա էր, [--] Բերսաբէէի մէջ դատաւորութիւն կ՚ը-
3 նէին։ Եւ անոր որդիքը [c] անոր ճամբաներուն մէջը չգալեցին. հապա [d] ագահութեան ետեւէ իյնալով՝ նկալառք կ՚առնէին, և իրա-
4 ւունքը կը ծռէին։ Ու Իսրայէլի ամէն ծերերը ժողովուեցան, ու [e] Հա-
5 մա Սամուէլին գացին, եւ անոր ըսին. Ահա դուն ծերացեր ես, ու քու որդիքդ քու ճամբաներուդ մէջը չեն քալեր. [---] հիմա [f] մեր վրայ թագաւոր մը դիր, որ ամէն ազգերուն պէս՝ մեզ [g] կառավարէ։
6 Ու [---] բանը Սամուէլին առջեւը դէշ երեւցաւ, որ ըսին թէ՝ Մեզի մէկ թագաւոր մը տուր, որ մեզ կառավարէ. ու Սամուէլ Տէրոջը աղօթք ըրաւ։
7 Եւ Տէրը Սամուէլին ըսաւ. Ժողովուրդին խօսքը՝ ու ա-նոնց քեզի ամէն ըսածը մտիկ ըրէ. քանզի [h] անոնք քեզ չեն մերժեր, այլ [i] ինծի կը մերժեն, որ անոնց
8 վրայ չթագաւորեմ։ Ըանոնք ե-գիպտոսէն հանած օրէս մինչեւ ասօրս՝ ինչ որ ըրին՝ ինծի թող տալով, և ուրիշ աստուածներու ծառայութիւն ընելով, նոյնը քեզի
9 ալ կ՚ընեն։ Ու հիմա դուն անոնց խօսքը մտիկ ըրէ. բայց անոնց յայտնի վկայութիւն ընես, ու [j] անոնց վրայ իշխելու թագաւորին վարմունքը անոնց իմացընես։
10 Եւ Սամուէլ Տէրոջը բոլոր խօսքերը՝ իրմէն թագաւոր ուզող ժո-
11 ղովուրդին զրուցեց. Ու ըսաւ. [k] Ձեր վրայ իշխելու թագաւորին վարմունքը ասիկայ պիտի ըլլայ. [l] Ձեր տղաքը պիտի առնէ, ու [m] Ն-նէ՛ իրեն համար՝ իր կառքերուն ու ձիերուն վրայ պիտի դնէ. և իր կառքերուն առջեւէն պիտի վազեն.
12 Ու իրեն հազարապետներ ու յիսնապետներ պիտի ընէ, և իր արտերը պիտի հերկեն, ու հունձքերը ձգեն, և իր պատերազմական զէնքերը ու կառքերուն գործիքները
13 շինեն։ Եւ ձեր աղջիկները պիտի առնէ, որ [n] ղազդործ, խոհարար ու
14 հայթփեաց ըլլան։ Եւ [o] ձեր ընտիր արտերը, այգիները ու ձիթենիները առնելով՝ իր ծառաներուն պիտի
15 տայ։ Եւ ձեր հունտերուն ու ձեր այգիներուն տասանորդը պիտի առնէ, ու զանիկայ [p] իր ներքինիներուն ու ծառաներուն պիտի տայ։
16 Եւ ձեր ծառաները ու աղախիններըը, ու ձեր պինտ ազնիւ կտրիճները, և ձեր էշերը պիտի առնէ, ու իր
17 ծառայութեանը գործածէ։ Ձեր հօտերուն տասանորդը պիտի առնէ, ու դուք անոր ծառաներ պիտի ըլ-
18 լաք։ Ան օրը դուք ձեր ընտրած թագաւորին պատճառաւը պիտի աղաղակէք. բայց Տէրը [q] ան օրը ձեզի պատասխան պիտի չտայ։
19 Սակայն ժողովուրդը [r] Սամուէլին խօսքը մտիկ ընել չուզելով՝ ըսին. Չէ, անպատճառ մեր վրայ թա-
20 գաւոր մը ըլլայ. Ու մենք ալ [s] բոլոր ազգերուն պէս ըլլանք, և մեր թագաւորը մեզ կառավարէ. ա-նիկայ մեր առջեւէն ելլէ, ու մեր [t] պատերազմներուն մէջ առաջնոր-
21 դութիւն ընէ՚։ Եւ Սամուէլ ժողովուրդին բոլոր խօսքերը լսեց, ու զանոնք Տէրոջը ականջներուն զրուց-
22 ցեց։ Եւ Տէրը Սամուէլին ըսաւ. [u] Անոնց խօսքը մտիկ ըրէ, ու անոնց վրայ թագաւոր մը դիր։ Ան ատենը Սամուէլ Իսրայէլի մարդիկներուն ըսաւ. Թող ամէն մարդ իր քաղաքը երթայ։

ԳԼ. Թ

1 Սաուղ իր հօրը էշերը գտնելու յոյս չունենալով՝ 6 իր ծառային խրատովը, 11 ու աղջիկներուն առաջնորդութեամբը, 15 Աստուծոյ յայտնութեանը համեմատ, 18 Սամուէլին կու գայ։ 19 Սամուէլ խնճոյքին կը հրաւիրէ Սաուղը. 25 ու անոր հետ գաղտուկ խօսակցութիւն ընելէն ետքը՝ զանիկայ ճամբայ կը հանէ։

1 Ա՚ Բենիամինի [v] ցեղէն [=] կիս անունով զօրաւոր մարդ մը կար. ու անիկայ Բենիամինեան Ափիայի որդւոյն Բեքովրաթի որդւոյն Սերորի որդւոյն Աբիէլին որդին էր։
2 Եւ անիկայ որդի մը ունէր, որուն անունը Սաուղ էր. անիկայ կըտրիճ ու դեղեցիկ էր, ու Իսրայէլի որդւոց մէջ անկէ դեղեցիկ մարդ չկար. [w] Բոլոր ժողովուրդէն՝ ուսէն վեր՝ երկայն էր։
3 Եւ Սաուղին հօրը կիսին էշերը կորսուեցան, ու կիսը իր որդւոյն Սաուղին ըսաւ. Մանչերուն մէկը հետդ առ, ու ելլե՛ գնա էշերը
4 փնտռէ։ Ան ալ Եփրեմի լեռնէն անցաւ, և [x] Սալիսա երկրէն ալ անցնելով, չգտան. եւրը Սաղիմի երկրէն անցան, ու հոն ալ չէին. անկէ Բենիամինեանց երկիրը անցնելով, հոն ալ չգտան։
5 Ո՚ երբոր անոնք [y] Սուփի երկիրը եկան, Սաուղ իր հետը եղող մանչուն ըսաւ. Եկուր ետ դառնանք, չըլլայ որ իմ հայրս էշերուն հոգը թողու, ու մեզի համար հոգայ։
6 Բայց անիկայ անոր ըսաւ. Ահա աս քաղաքիս մէջը [z] Աստուծոյ մարդը կայ, ու անիկայ պատուաւոր մարդ մըն է. [a] անոր ամէն ըսածը ան-

---

Ն·ք·գբ· իբր 1112

[=] Տես Դատ. ժ·4։ Ժր·14։ բազդատելով Դատ. ե·10 ին հետ։
[b] Ր Օր·ժգ·18։ բ Մն·ժթ·5։
իբր 1095
[c] ա Մն·գ·28։
[d] Երեմ. իբ·15·16·17։
[e] Եզ. ժր·21։ ա Տիմ. գ·3։ ջ·10։
ՂՐ Օր·ժգ·19։ Սազ·ժե·5։
[f] Հմր 19, 20։ բ Օր·ժէ·14։ Ովս·ժգ·10։ Գոր·ժգ·21։
[g] Եբր·դատ։
[h] Տես Եզ·ժզ·8։
[i] Գլ·ժ·19։ ժր·17·19։ Ովս·ժգ·10·11։
[j] Հմր 11։
[k] Տես բ Օր·ժէ·16·ԺԷ։ Գլ·ժ·25։ ԼԳլ·ժգ·52։
[l] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[m] Ծն·լե·36։
[n] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[o] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[p] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[q] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[r] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[s] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[t] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[u] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[v] Ն·ք·գբ· իբր 1095
[w] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[x] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[y] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[z] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։
[a] Ղ Թագ·ժ·7։ Տես Եզեկ·խզ·18։

Ն·Ք·ԳԲ· Իրբ 1095

չուշտ կը կատարուի . հիմա հոն երթանք , գուցէ մեր երթալու
7 ճամբան մեզի իմացընէ : Եւ Սաուղ իր մանչուն ըսաւ . Բայց թէ որ երթալու ըլլանք , ձան մարդուն ի՞նչ տանինք . քանզի մեր ամաններուն հացը պակսեցաւ , ու Աստուծոյ մարդուն տանելու ընծայ մը չունինք . քովերնիս ի՞նչ ունինք :
8 Եւ մանչը նորէն Սաուղին պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Ահա իմ քովս մէկ սիկղին չորրորդ մասը արծաթ կայ . զանիկայ Աստուծոյ մարդուն կու տամ , որ մեր ճամ-
9 բան մեզի իմացընէ : (Առաջուց Իսրայէլի մէջ մէկ մարդ մը երբոր Աստուծոյ հարցընելու կ'երթար , այսպէս կ'ըսէր . Եկուր տեսանողին երթանք . քանզի այսօր մարգարէ ըսուածը առաջուց տեսանող կ'ը-
10 սուէր :) Եւ Սաուղ իր մանչուն ըսաւ . Աղէկ ըսիր , եկուր երթանք . ու Աստուծոյ մարդուն բնակած
11 քաղաքը գացին : Ո՝ երբոր անոնք զառ՝ի վերէն դէպ՝ի քաղաքը կ'ելլէին , Ջրքանի մը աղջիկներ գտան , որ ջուր հանելու ելեր էին , ու ա-
12 նոնց ըսին . Տեսանողը հո՞ն է . Եւ աղջիկները անոնց պատասխան տուին ու ըսին . Հա՛ է . ահա քու առջեդ է . հիմա շուտ ըրէ , քանզի ժողովուրդը այսօր՝ բարձր տեղւոյն վրայ՝ զոհ ընելուն համար , անիկայ
13 այսօր քաղաքը եկաւ . քաղաքը մտնելնուդ պէս՝ զանիկայ հոն կը գտնէք , քանի որ անիկայ բարձր տեղը ելած չէ՝ կերակուրուտելու համար . քանզի մինչև անոր գալը՝ ժողովուրդը կերակուր չուտեր . ո-րովհետև անիկայ կ'օրհնէ զոհը , ո-անկէ ետքը հրաւիրուածները կ'ուտեն . հիմա ելէք . քանզի հիմա կը
14 գտնէք զանիկայ : Եւ անոնք քաղաքը ելան , ու երբոր անոնք քաղաքին մէջը կը մտնէին , ահա Սամուէլ բարձր տեղը երթալով՝ ա-նոնց դէմը ելաւ :
15 Եւ Սաուղին գալէն օր մը առաջ՝ Տէրը Սամուէլին էյայտներ էր ,
16 ու ըսեր էր թէ՝ Վաղը աս ատենս Բենիամինի երկրէն քեզի մէկ մարդ մը պիտի խրկեմ , ե՛ւ զանիկայ իմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ իշխան օծես , որ անիկայ իմ ժողովուրդս Փղշտացւոց ձեռքէն ազատէ . քանզի՝ ժողովուրդիս Նէղու-թիւնը նայեցայ . որովհետև անոր
17 աղաղակը ինծի հասաւ : Ու երբոր Սամուէլ Սաուղը տեսաւ , Տէրը անոր ըսաւ . Ահա՛ է քեզի ըսած մարդս . ասիկայ իմ ժողովուրդիս
18 վրայ պիտի իշխէ : Եւ Սաուղ դրանը մէջտեղը Սամուէլին մօտե-

Ն·Ք·ԳԲ· Իրբ 1095

ցաւ , ու ըսաւ . Ցեսանողին տունը ո՞ւր է , կ'աղաչեմ ինծի ցուցուր :
19 Եւ Սամուէլ պատասխան տուաւ Սաուղին՝ ու ըսաւ . Ցեսանողը ես եմ , իմ առջեւս բարձր տեղը ելիր , քանզի այսօր ինծի հետ կերակուր պիտի ուտէք . և վաղը քեզ կը խրկեմ , ու բոլոր սրտիդ մէջի և-
20 ղածը քեզի կը պատմեմ : Եւ երկուքին իրեք օրուընէ՝ի վեր կորսուած էշերուդ համար մի՛ հոգար . քանզի անոնք գտնուած են . ու ո՞վ Իսրայէլի բոլոր *փափաքը որո՞ւն է . քեզի ու քու հօրդ բոլոր տանը
21 չէ՞ : Եւ Սաուղ պատասխան տուաւ ու ըսաւ . Ես Իսրայէլի ցեղերուն ե պզտիկն պզտիկէն՝ Բենիամինեան չե՞մ , ու իմ ազգատոհմս Բենիամինի ցեղին բոլոր ազգատոհմներուն պզտիկը չէ՞ . ուստի ինչո՞ւ համար ինծի ատանկ խօսք զրուցե-
22 ցիր : Եւ Սամուէլ առաւ Սաուղը ու անոր մանչը , ու զանոնք ի-ւրեանց սրահը տարաւ , և զանոնք կոչնականներուն գլուխը նստեցուց , որոնք երեսուն մարդու չափ էին :
23 Ու Սամուէլ խոհարարին ըսաւ . Բէր ան բաժինը , որն որ քեզի տուի , ու քեզի պատուիրեցի որ
24 զանիկայ քովդ պահես : Եւ խոհարարը՝ ազդրը վրայի մասը վերցնելով , զանիկայ Սաուղին առջեւը դրաւ : Եւ Սամուէլ ըսաւ . Ահա-ւասիկ մնացածը . զանիկայ առջեդ դիր ու կեր . քանզի երբոր ըսի որ ժողովուրդը †հրաւիրեմ , ան վայրկեանէն՝ի վեր անիկայ քեզի համար պահուած է . ու ան օրը Սաուղ՝ Սամուէլին հետ կերաւ :
25 Եւ բարձր տեղէն քաղաքը իջան . ու Սամուէլ ընդ տանը տանիքին վրայ Սաուղին հետ
26 խօսեցաւ : Եւ առաւօտուն կանուխ ելան , ու լուսացածին պէս՝ Սամուէլ Սաուղը տանիքը կանչեց , ու ըսաւ . Ելիր ու քեզ պիտի խրկեմ : Եւ Սաուղ ելաւ . ու ինքը և Սամուէլը մէկտեղ դուրս
27 ելան : Երբոր անոնք քաղաքին ծայրը կ'իջնէին , Սամուէլ ըսաւ Սաուղին . Մանչուն ըսէ , որ մեր առջեւը անցնի . (և անիկայ անցաւ .) ու հիմա դուն հո՛ կեցիր , որ Աստուծոյ պատգամը քեզի իմացընեմ :

ԳԼ · Ժ

1 Սամուէլ՝ Սաուղը կ'օծէ , 2 ու իրեք նշաններուն կանխասացութիւնը ընելով՝ կը քաջալերէ զանիկայ : 9 Սաուղին սիրտը կը փոխուի ու կը մարգարէանայ : 14 Իր հօրեղբօրմէն կը պահէ իր թագաւոր օծուիլը : 17 Սաուղ վիճակով թագաւոր կ'ընտրուի Մասփայի մէջ : 26 Ժողովուրդին զանազան զգացումները անոր վրայով :

Ն·Ք·ԳԲ· Իրբ 1095

Ղ Ցես Դաս· գ·18 ։ Ժգ· 17 ։ գԹագ· Ժգ·3 ։ գ Թագ· գ· 42 ։ ը·8 ։

Ե Ծն · իե · 22 ։

ԸԹագ·իգ· 11 ։ գԹագ· Ժէ·13 ։ ա Մն·իգ·28 ։ իթ·29 ։ բ Մն·Ժգ·7· 10 ։ Եա·լ· 10 ։ Ամո· է·12 ։

Ի Ծն · իգ · 11 ։

Ե գԹագ·գ· 2 ։

Ի Ծն · լա · 34 ։ Գլ· Ժգ·2 ։

Ղ Գլ·Ժե·1 ։ Գոր·Ժգ· 21 ։

Ի Գլ·ի·2 ։ Ե Գլ·Ժ·1 ։

Ել·ը·25 ։ գ·7·9 ։

Հ Գլ· Ժգ· 12 ։ Ոփ· Ժգ·11 ։

Ղ Ես·Դաս· ը·15 ։

Ե Գլ· Ժե· 17 ։

Ե Ես·Դաս· ը·15 ։

Ղ Ա·է·32· 33 ։ Եզեկ· իգ·4 ։

†Կ՛ հրաւիրեր եմ ,

Ղ Օր·իբ· 8 ։ բԹագ· ժա· 2 ։ Գոր·Ժ·9 ։

1 Ա՛ւ ասաց Սամուէլ եղին շիլոյ առաւ, ու անոր գլխուն վրայ թափեց, ու համբուրեց, ու ըսաւ. Չէ՞ որ Տէրը քեզ իր ժառանգութեան վրայ իշխան օծեց։
2 Այսօր ինծմէ գացած ատենդ՝ Բենիամինի սահմանը՝ Սելսահի մէջ՝ Ռաքելին գերեզմանին քովը երկու մարդ պիտի գտնես, ու քեզի պիտի ըսեն. Գտնուեցան ան էշերը՝ որոնք փնտռելու գացած էիր. և ահա քու հայրդ էշերուն հոգը թողուց, ու ձեզի համար կը հոգայ, ու կ'ըսէ. Ցղուս համար ի՞նչ ընեմ։
3 Նէմ։ Ու երբոր անկէ անդին երթաս, և թաբօրի կաղնին հասնիս, հոն իրեք մարդ քեզի պիտի հանդիպին, որոնց մէկը իրեք ուլ, մէկը իրեք հացի նկանակ ու մէկն ալ տիկ մը գինի տանելով՝ Աստուծոյ
4 Ծոյ կ'ելլեն դէպ ի Բեթէլ։ Ու էքու ողջութիւնդ հարցընելով, քեզի երկու հաց պիտի տան. դուն ալ անոնց ձեռքէն պիտի առնես։
5 Անկէ ետքը Աստուծոյ բլուրը պիտի երթաս, ուր որ Փղշտացւոց բերդապահ զօրքը կ՚ինայ. ու երբոր հոն քաղաքը մտնես, մարգարէից դունդի մը պիտի հանդիպիս, որոնք ի բենց առջևէն տաւիղ, թմբուկ, սրինգ ու քնար ունենալով՝ կմարգարէանան։
6 Եւ Տէրոջը Հոգին պիտի գայ, ու անոնց հետ մարգարէութիւն պիտի ընես. և դուն պիտի փոխուիս, ուրիշ մարդ մը պիտի ըլլաս։
7 Ու երբոր աս նշանները քու վրադ գան, ձեռքէդ եկածը ընես. քանզի Աստուած քու հետդ է։
8 Եւ ինծմէ առաջ Գաղգաղա իջնես. և ահա ես քեզի պիտի իջնեմ, ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուցանելու համար. և դուն եօթը օր սպասես, մինչև որ ես քեզի գամ, ու քու ընելու գործդ քեզի իմացընեմ։
9 Ու երբոր անիկայ իր կռնակը դարձուց՝ Սամուէլին քովէն երթալու համար, Աստուած անոր մէկ ուրիշ սիրտ մը տուաւ. և նոյն օրը աս բոլոր նշանները կատարուեցան։
10 ցան։ Ու երբոր հոն բլուրը եկան, ահա մարգարէից դունդ մը անոր առջևը ելաւ. և անոր վրայ Աստուծոյ Հոգին եկաւ, ու անոնց մէջը մարգարէութիւն ըրաւ։
11 Եւ ամէն անոնք որ զանիկայ առաջուց կը ճանչնային, երբոր տեսան որ անիկայ մարգարէներուն հետը մարգարէութիւն կ՚ընէ, ժողովուրդը իրարու ըսին. Աս ի՞նչ բան է՝ որ Կիսին որդւոյն հանդիպեր է. Սաուղն ալ մարգարէներուն մէջն է։
12 Անոնցմէ ալ մէկը պատասխան տուաւ ու ըսաւ. Հապա ա նոնց հայրը ո՞վ է։ Անոր համար ասիկայ մէկ առակ մը եղաւ. Սաուղն ալ մարգարէներուն մէջն է։
13 Ու երբոր մարգարէութիւն ընելը լմընցուց, բարձր տեղը եկաւ։
14 Եւ Սաուղին հօրեղբայրը՝ անոր ու անոր մանչուն ըսաւ. Ո՞ւր գացիք։ Ու անիկայ ըսաւ. Էշերը փնտռելու. բայց երբոր տեսանք որ
15 չկան, Սամուէլին գացինք։ Եւ Սաուղին հօրեղբայրը ըսաւ. Սամուէլը ձեզի ի՞նչ ըրուցեց, պատմէ՛
16 ինծի։ Ու Սաուղ իր հօրեղբօրը ըսաւ. Էշերուն գտնուիլը մեզի յայտնապէս իմացուց։ Բայց թագաւորութեան վրայով Սամուէլին ըսած խօսքը անոր չյայտնեց։
17 Եւ Սամուէլ՝ ժողովուրդը Մասփայի մէջ Տէրոջը առջևը ժողովեց։
18 Ու Իսրայէլի որդւոյը ըսաւ. Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ես Իսրայէլը Եգիպտոսէն հանեցի, ու ձեզ Եգիպտացւոց ձեռքէն՝ և ձեզի նեղութիւն տուող բոլոր թագաւորներուն
19 ձեռքէն ազատեցի։ Ու դուք այսօր ձեր Աստուածը մերժեցիք, որ ձեր ամէն չարիքներէն ու նեղութիւններէն ձեզ ազատեց, ու անոր ըսիք. Ընպատճառ մեր վրայ մէկ թագաւոր մը դիր։ Ուրեմն հիմա ձեր ցեղերովը ու հազարաւորներովը Տէրոջը առջևը կայ-
20 նեցէք։ Ու երբոր Սամուէլ Իսրայէլին ամէն ցեղերը մօտեցուց, վիճակը Բենիամինի ցեղին ելաւ։
21 Եւ երբ Բենիամինի ցեղը ազգատոհմիներովը մօտեցուց, ու վիճակը Մատրիին ազգատոհմին ելաւ. ետքը Կիսի որդւոյն Սաուղին ելաւ. բայց երբոր զանիկայ փնտռեցին,
22 անիկայ չգտնուեցաւ։ Եւ նորէն Տէրոջը հարցուցին, թէ Արդեօք ան մարդը հոս կու գայ. ու Տէրը ըսաւ. Ահա անիկայ կարասիներուն
23 մէջտեղը պահուած է։ Եւ վազելով՝ զանիկայ անկէ առին, ու ժողովուրդին մէջտեղը կայնեցաւ. և Երբոլոր ժողովուրդէն՝ ուսէն վեր՝
24 երկայն էր։ Ու Սամուէլ բոլոր ժողովուրդին ըսաւ. Տէրոջը ընտրած մարդը տեսա՞ք, որ բոլոր ժողովուրդին մէջը անոր պէս չկայ. և բոլոր ժողովուրդը աղաղակեց՝
25 ու ըսաւ. Կեցցէ արքայ։ Եւ Սամուէլ թագաւորութեան կանոնները ժողովուրդին զրուցեց, ու զանոնք գիրքի մը մէջ գրեց, ու Տէ-

– Գլ·Թ· 16, Ժգ·13; Գթագ·Թ· 3, 6։
Բ Սագ·Ր· 12։
Էբ Օր·ԼԲ· 9; Սագ·Նբ· 71։
Թ Գոր·Ժգ· 21։
Ի Ցես·Ժբ· 28։
Լ Նա·Լե· 19, 20։
Ե Նա·Իբ· 22; Լե·1, 3, 7։
Ը Դատ·Ժբ· 15։
Ը Հմր 10։
Ժ Գլ·Ժգ·3։
Ի Գլ·Թ·12։
ԼԸ·Ժե·20, 21; Գթագ·Գ·15; Ա Կոր·Ժգ·1։
Խ Թես·Ժա· 25; Գլ·Ժգ·13։
Ծ Հմր 10; Գլ·ԺԹ· 23, 24։
Կ Ել·Գ·8; Ղս·Բ·12։
Հ Դատ·Թ· 33։
Յ Դատ·Գ· 12։
Ղ Գլ·Ժա· 14, 15; Ժգ·4։
Ճ Գլ·Ժգ·8։
Մ Հմր 5։
Յ Գլ·ԺԹ· 20։
Ն Հմր 6։

Ղ Գլ·ԺԹ· 24; Մատ·Ժգ·54, 55; Ցես·Է· 15; Գոր·Գ·13։
1095
– Գլ·Է·5, 6։
Ղ Դատ·Ժա· 11; Ի·1; Գլ·Ժա· 15։
Ղ Դատ·Գ· 8, 9։
* ԵԲԲ·Թագաւորներուն
Ղ Գլ·Ը·7, 19; Ժբ·12։
– Ցես·Է· 14, 16, 17; Գոր·ա· 24, 26։
– Գլ·ԻԳ·2, 4, 10, 11։
Ղ Գլ·Թ·2։
Բ Թագ·Ի·6։
Բ Գթագ·ա· 25, 39; Գ Թագ·Ժա· 12։
Ց Ցես Բ Օր·Ժէ·14, ՃԸ; Գլ·Ը·11։

Ն·Ք·ԳՔ· 1095

– Դատ. ի· 14 ։ Գլ· ժա· 4 ։
‡ Գլ· ժա· 12 ։
+ ր Օր· ժգ· 13 ։
ւ ր Թագ· ը· 2 ։ գ Թագ· գ· 21 ։ ժ· 25 ։ ր Մն· ժէ· 5 ։ Սաղ· հր· 10 ։ Մատ· բ· 11 ։

բոլոր առջևը դրաւ· և Սամուէլ բոլոր ժողովուրդը արձակեց, որ
26 ամէն մարդ իր տունը երթայ ։ Սաւուղն ալ – Գաբաա իր տունը գնաց· ու խել մը զօրաւոր մարդիկներ անոր հետը գացին, որոնց
27 սիրտը Աստուած դրդեց ։ ‡Բայց +չար մարդիկները ըսին· Ասիկայ մեզ ինչպէս պիտի ազատէ· ուստի զանիկայ քամահրեցին, ւ ու անոր ընծայ մը չտարին· բայց անիկայ լուռ կեցաւ ։

ԳԼ· ԺԱ

1 Նաաս՝ Գաղաադու Յաբիսի բնակչացը նախատալից պայման մը կ'առաջարկէ ։ 4 Անոնք ալ պատգամաւորներ կը խրկեն, ու Սաւուղին ձեռքը կ'ազատուին ։ 12 Անոր վրայ Սաւուղ կը զօրանայ, ու իր թագաւորութիւնը կը հաստատուի ։

– Գլ· ԺԲ· 12 ։
1 Յե – Ամմոնացի Նաասը ելաւ, ու ‡Գաղաադու Յաբիսի դէմ բանակեցաւ· և Յաբիսի բոլոր բնակիչները Նաասին ըսին· ‡Մեզի հետ դաշնակցութիւն ըրէ, ու քեզի
2 ծառայենք ։ Բայց Ամմոնացի Նաասը անոնց ըսաւ· Ձեզի հետ ասպայմանով դաշնակցութիւն կ'ընեմ, որ ձեր ամենուն աջ կողմի աչքը փորեմ, ու ասբանը բոլոր
Իսրայէլին վրայ +նախատինք դնեմ ։ 3 Եւ Յաբիսի ծերերը անոր ըսին· Մեզի եօթը օր ժամանակ տուր, որ Իսրայէլին բոլոր սահմանները պատգամաւորներ խրկենք, ու թէ որ մեզ ազատող չըլլայ, ան ատենը քեզի *անձնատուր կ'ըլլանք" ։
4 Ուստի պատգամաւորները ‡Սաւուղին Գաբաան գացին, և ժողովուրդին ականջներուն ասխօսքերը զրուցեցին· ու Ղբոլոր ժողովուրդը
5 ձայներնին վերցնելով լացին ։ Եւ ահա Սաւուղ արտէն կու գար իր եղներուն ետևէն· ու Սաւուղ ըսաւ· Ժողովուրդին ինչ եղաւ որ կու լան· ու Յաբիսի բնակչացը
6 խօսքերը անոր պատմեցին ։ ‡Եւ ասխօսքերը որ լսեց, Աստուծոյ Հոգին Սաւուղին վրայ եկաւ, ու անոր բարկութիւնը խիստ բորբոքեցաւ ։
7 Եւ զոյգ մը եզ առաւ, ու ըզանոնք կտոր կտոր ըրաւ, ու պատգամաւորներուն ձեռքովը Իսրայէլին բոլոր սահմանները խրկեց՝ ըսելով· Ով որ Սաւուղին ետևէն ու Սամուէլին ետևէն չգայ, անոր եզներուն այսպէս պիտի ընեն ։ Եւ ժողովուրդին վրայ Տէրոջը վախը ինկաւ· ու ‡ելնելը † մէկ մարդու մը պէս եղան ։
8 Եւ Սեզեկի մէջ համրեց զանոնք, ու Իսրայէլի որդիքը ըրկը հարիւր հազար, և Յուդայի
9 մարդիկը երեսուն հազար էին ։ Ու

Ն·Ք·ԳՔ· 1095

ւ Դատ· ի· 11· Ա Թես· դ· 16 ։
‡ Դատ· ի· 19 ։
+ Ա Թես· ե· 2 ։
† Ելք· ժդ· 31 ։

եկող պատգամաւորներուն ըսին· Գաղաադու Յաբիսի բնակիչներուն այսպէս ըսէք· վաղը երբոր արևը տաքնայ՝ ձեզի ազատութիւն պիտի ըլլայ ։ Ուստի երբոր պատգամաւորները գացին, և Յաբիսի բնակիչներուն – Բանը իմացուցին, ա-
10 նոնք ուրախացան ։ Ու Յաբիսի բնակիչները ըսին Ամմոնացիներուն· Վաղը † ձեզի անձնատուր կ'ըլլանք, ու ձեր աչքերուն ինչ որ հաճելի
11 ըլլայ, ան ըրէք մեզի ։ Եւ հետեւեալ օրը ‡Սաւուղ ժողովուրդը իրենք դունդի բաժնեց, ու առաւօտեան պահուն բանակին մէջը մտան· ու մինչև որ օրը տաքցաւ, Ամմոնացիները զարկին· և մնացածները այնպէս ցրուեցան՝ որ անոնցմէ երկու հոգի միասին չմնաց ։
12 Ան ատենը ժողովուրդը Սամուէլին ըսաւ· Սաւուղը մեր վրայ թագաւոր պիտի ըլլայ՝ ըսողը ո՞վ է· Յանմարդիկները տուէք որ
13 մեռցնենք ։ Ու Սաւուղ ըսաւ· Ո՛չ այսօր մարդ մը չմեռցուի· քանզի այսօր †Տէրը Իսրայէլին համար փրկութիւն ըրաւ ։
14 Եւ Սամուէլ ժողովուրդին ըսաւ· Եկէք ‡ Գաղգաղա երթանք, ու հոն թագաւորութիւնը նորէն
15 հաստատենք ։ Ուստի բոլոր ժողովուրդը Գաղգաղա գացին, ու հոն ‡Գաղգաղայի մէջ Տէրոջը առջևը Սաւուղը թագաւոր ըրին, և հոն Տէրոջը առջևը – խաղաղութեան զոհեր մատուցին· ու Սաւուղ՝ և բոլոր Իսրայէլի մարդիկը հոն մեծ ուրախութիւն ըրին ։

ւ Գլ· ժ· 27 ։
յ Տես Ղա· ժթ· 27 ։
Ղ ր Թագ· ժթ· 22 ։
† Ել· ժդ· 13, 30 ։ Գլ· ժթ· 5 ։
‡ Գլ· ժ· 8 ։
յ Գլ· ժ· 17 ։
– Գլ· ժ· 8 ։

ԳԼ· ԺԲ

1 Սամուէլ իր անմեղութեանը համար կը վկայէ, 6 ու ժողովուրդին ապերախտութիւնը կը յանդիմանէ· 16 ու իր պօթքովը հունձքի ժամանակ որոտում ու անձրև բերելով՝ զանոնք կը վախցնէ, 20 և կը մխիթարէ զանոնք Աստուծոյ ողորմութիւնը յիշեցնելով ։

1 Յե Սամուէլ բոլոր Իսրայէլին ըսաւ· Ահա դուք ինծի ինչ որ զրուցեցիք, ես – ձեր խօսքը մտիկ
2 ըրի, ու ‡ձեր վրայ թագաւոր դրի ։ Եւ ահա հիմա †ձեր առջևէն թագաւորը կ'երթայ· Տբայց ես ծերացայ, ու մազերս ճերմկցան· և ահա իմ որդիքս ձեզի հետ են· ու ես իմ մանկութենէս մինչև աս
3 օրս ձեր առջևը քալեցի ։ Ահա ես հոս կայներ եմ· Տէրոջը առջևը ու ‡անոր օծեալին առջևը ինծի համար յայտնապէս զրուցեցէք, թէ ձես որուն եզր առի, ու որուն էշը առի, որուն զրկանք կամ անիրաւութիւն ըրի, ու որուն ձեռքէն կաշառք առի, և անով †իմ աչքերս գոցեցի·
4 ու ես ձեզի հետ դարձընեմ ։ Եւ ը-

– Գլ· ը· 5· 19, 20 ։
‡ Գլ· ժ· 24· ժա· 14, 15 ։
† Թուա· իե· 17 ։ Գլ· ը· 20 ։
Տ Գլ· ը· 1· 5 ։
† Ելք· ի· 1 ։ Ա Թես· ե· 23 ։
‡ Ելք· իթ· 6 ։ ր Թագ· ա· 14, 16 ։
Ղ Թուա· ժգ· 15 ։ Գոր· ի· 33 ։ ա Թես· ը· 5 ։
† ր Օր· ժգ· 19 ։

սին . Մեզի զրկանք կամ անիրաւութիւն բրած չես , ու բնաւ մարդ 5 դուն ձեռքէ բան մը առած չես : Եւ անիկայ ըսաւ անոնց . Այսօր Տէրը ու անոր օծեալը ձեզի վկայ ըլլան , որ դուք ընդհմ ձեռքիս մէջը բան մը չգտաք : Եւ անոնք ըսին . Վկայ 6 ընե՛ն : Ան առենը Սամուէլ ժողովուրդին ըսաւ . Մովսէսը ու Ահարոնը ընտրողը , և ձեր հայրերը եգիպտոսի երկրէն հանողը Տէրն է : 7 Ու հիմա առաջ եկէք , և ձեզի հետ Տէրոջը առջեւը քննեմ ան բոլոր արդարութիւնները՝ որ Տէրը ձեզի 8 ու ձեր հայրերուն ըրաւ : Երբոր Յակոբ եգիպտոս գնաց , հո՛ն ձեր հայրերը Տէրոջը աղաղակեցին . և Տէրը Մովսէսը ու Ահարոնը խրկեց , որոնք ձեր հայրերը եգիպտոսէն դուրս հանեցին , ու զանոնք ասոնց տեղը բնակեցուցին : Բայց անոնք իրենց Տեր Աստուածը մոռցան . անիկայ ալ զանոնք՝ Հասորի զօրագլուխը եղող Սիսարային ձեռքը՝ ու Փղշտացւոց ձեռքը՝ և Մովաբի թագաւորին ձեռքը մատնեց , ու անոնց հետ պատերազմ ըրին : 10 Եւ Տէրոջը աղաղակելով ըսին . Մենք մեղք գործեցինք . քանզի Տէրը թողուցինք , և Բահաղիմին ու Աստարովթին ծառայութիւն ըրինք . և հիմա մեզ մեր թշնամիներուն ձեռքէն ազատէ , ու քեզի 11 ծառայութիւն պիտի ընենք : Ուստի Տէրը Երոբաաղը , Բեդանը , Եփթայէն ու Սամուէլը խրկեց , և ձեր չորս կողմի թշնամիներուն ձեռքէն ձեզ ազատեց . ու ապահովուց 12 Թեւամբ բնակեցաք : Ու երբոր տեսաք որ Ամմոնացւոց Թագաւորը Նաաս ձեր վրայ կու գայ , ինծի ըսիք . Չէ , անպատճառ մեր վրայ Թագաւոր մը ըլլայ . Թէպէտև ձեր Թագաւորը ձեր Տէր Աստուածն էր : Եւ հիմա ահա ան Թագաւորը , Հորն որ ընտրեցիք ու ուզեցիք . ահա Տէրը ձեր վրայ Թագաւոր մը դրաւ : 14 Թէ որ Տէրոջմէ վախնաք , ու անոր ծառայութիւն ընէք , և անոր խօսքին ձազանգ ըլլաք , ու Տէրոջը պատուիրանքին դէմ չկենաք , ան առենը Թէ դուք և Թէ ձեր Թագաւորը՝ որ ձեր վրայ կը Թագաւորէ , ձեր Տէր Աստուծոյն ետևէն պիտի 15 երթաք : Բայց Թէ որ Տէրոջը խօսքին ձազանգութիւն չընէք , ու Տէրոջը հրամանին դէմ կենաք , ան առենը Տէրոջը ձեռքը ձեր վրայ ու ձեր հայրերուն վրայ պիտի 16 ըլլայ : Եւ հիմա կայնեցէք ու տեսէք ան մեծ բանը՝ որ Տէրը ձեր աչ- 17 քերուն առջեւը պիտի ընէ : Այսօր ցորենի հունձքի ժամանակ չէ՞ . ես Տէրոջը պիտի աղաղակեմ , և անիկայ որոտում ու անձրեւ պիտի խրկէ , որ հասկընաք ու տեսնէք Թէ՝ դուք Տէրոջը առջեւը մեծ չարութիւն ըրիք՝ ձեզի Թագաւոր մը ուզելով : 18 Ան առենը Սամուէլ Տէրոջը աղաղակեց , ու Տէրը նոյն օրը որոտում ու անձրեւ տուաւ . և բոլոր ժողովուրդը Տէրոջմէն ու Սամուէլ- 19 էն խիստ վախցաւ : Ու բոլոր ժողովուրդը Սամուէլին ըսաւ . Քու Տէր Աստուածդ աղօթք ըրէ քու ծառաներուդ համար՝ որ չմեռնինք . քանզի մեր ամէն մեղքերուն վրայ չարութիւնն ալ աւելցուցինք՝ 20 որ մեզի Թագաւոր ուզեցինք : Եւ Սամուէլ ժողովուրդին ըսաւ . Մի վախնաք . դուք ընդհ՛ ամբողջ չարութիւնը ըրիք , սակայն Տէրոջմէ մի՛ խոտորիք , ու բոլոր սրտովիդ 21 Տէրոջը ծառայութիւն ըրէք . Եւ դէպ մի՛ խոտորիք . Քանզի ոչինչ բաներու ետևէ գո՛ն կ՛ելլա՛ , որ անոնք չեն օգուտ մը ընելու՝ ու չեն ազատելու կարող չեն . Ինչու 22 որ անոնք ոչինչ են : Քանզի Տէրը իր մեծ անունին համար՝ իր ժողովուրդը չթողուր . որովհետև Տէրը ուզեց ձեզ իրեն ժողո- 23 վուրդ ընել : Բայց ես , քա՛ լիցի՝ որ Տէրոջը դէմ մեղք գործեմ , ձեզի համար աղօթք ընելէն ետ կենալով . Հապա ես ձեզի Բաղէկ ու շիտակ ճամբան պիտի 24 սորվեցընեմ : Միայն Թէ Տէրոջմէն վախցէք , և ճշմարտութեամբ բոլոր սրտովիդ անոր ծառայութիւն ըրէք . քանզի Նոյնաբս որ անիկայ ձեզի համար ինչ մեծ բաներ 25 ըրաւ : Իսկ Թէ որ չարութիւն ընէլը շարունակէք , Թէ դուք և Թէ ձեր Թագաւորը կ՛պիտի կորսուիք :

ԳԼ· ԺԹ

1 Սաուղին ընտրած զօրքը : 3 Անիկայ Երբայեցիները Դաղդազայի մէջ կը կանչէ Փղշտացւոց դէմ , որոնց պահապան զօրքերը զարկեր էր Գաբաաթան : 5 Փղշտացւոց անթիւ զօրքը : 6 Իսրայէլացւոց խռովութիւնը : 8 Սաուղ Ամենաբանալով Սամուելի համար սպասելէն՝ զոհը կը մատուցանէ : 11 Սամուէլ կը յանդիմանէ զանիկայ : 17 Փղշտացւոց ի-րենք ուաբառաւ գունդերը : 19 Փղշտացւոց վարպետութեամբ վարուելովը՝ Իսրայելի մէջ դարբին չգտնուիր :

1 Երբ Յեսսէ որդիները եղա՛ն , Սաուղ մէկ տարուան Թագաւոր էր . ու երբոր Իսրայելի վրայ երկու տարի Թագաւորութիւն ըրաւ , 2 Սաուղ՝ Իսրայէլէն իրեք հազար մարդ ընտրեց իրեն համար . երկու հազարը Սաուղին հետ Մաքմաս ու Բեթէլի լեռն էին , և հազարն

Աման·իդ· 1 ։
Ցես·ժ·12։ Գլ·է·9, 10 ։ Ցակ· է·16, 17, 18 ։
Գլ·ը·7 ։
Ել·ժդ· 31 ։ Ցես Եզր·ժ·9 ։
Եւ·Թ.28։ ժ.17։ Ցակ· է·15 ։ ա Ցօհ·է·16։
Օր·ժա· 16 ։
Երեմ.ժդ· 19 ։ Ամր· բ·18 ։ ա Կոր·ը·4 ։
Ցես·է·9։ Սաղ·ՃԳ· 8 ։ Երեմ. ժդ·21 ։ Եզկ·ի·9, 14 ։
Ղ Թագ·գ· 13 ։ Սաղ· ղղ·14 ։
Ր Օր·է·7, 8 ։ ժդ·2 ։ Մաղ·ա·2 ։
Գոր·ժր· 5 ։ Հով·ա· 9 ։ Կղ·ա· 9 ։ ր Տիմ· ա·3 ։
Ըգթագ·ր· 36 ։ ըՄն· գ·27 ։ Երեմ.գ·16 ։
Սաղ·լդ· 11 ։ Աման· գ·11 ։
Յհզ·ժր· 13 ։
Լես·է·12 ։
Ր Օր·ժ· 21 ։ Սաղ· ՃԳ·2, 3 ։
Ր Օր·իբ· 36 ։
Ցես·իգ· 20 ։

Ն·Բ·ՂԴ· 1093

ՍԳԼ·Ժ·26։

ԲԳԼ·Ժ·5։

ՀԵՆ·ԼԴ·30։ԵԼ·Ե·21։

ՐԴԱՕ·Զ·2։

ԷԳԼ·Ժ·8։

ՔԿՐ՞·ԱՒԵԼՈՒՂ՝

ՂԲՄՆ·Ժ·9։

ԷԳԼ·Ժ·11։

ԼՈՒ Ցոփնաթանին հետ Բէնիամինի Գաբաան էր. ու մնացած ժողովուրդը՝ ամէն մարդ իր վրանը խրկեց։

3 Եւ Ցոփնաթան Գաբայի մէջ եղող Փղշտացւոց Պահապան զօրքերը զարկաւ, ու Փղշտացիք լսեցին։ Ան առենը Սաուղ բոլոր երկրին մէջը փող ՚ի ՚ի ՚ի տուաւ, ըսելով. Եբրայեցիները թող լսեն։

4 Եւ բոլոր Իսրայէլը լսեց որ Սաուղ Փղշտացւոց պահապան զօրքերը զարկաւ, և Իսրայէլ Փղշտացւոց առջևը առելի եղաւ. ու ժողովուրդը Գաղգաղայի մէջ

5 Սաուղին քովը ժողվուեցան։ Եւ Փղշտացիք Ձ ժողվուեցան, որ Իսրայէլի դէմ պատերազմ ընեն. Ե ԱՆԱՀ երեսուն հազար կառք՝ ու վեց հազար ձիաւոր ՈՒՆԻՆ, և ժողովուրդը ծովուն եղերքը եղող աւազին չափ շատ էր. ու ելան՝ և Բեթաւանին արևելեան կողմը

6 Մաքմասի մէջ բանակեցան։ Ու Իսրայէլի մարդիկները զիրենք նեղութեան մէջ տեսան. և ժողովուրդը խիստ չփոթած ըլլալով՝ Տայերու, Թուփերու, Ժայռերու, աշտարակներու ու փոսերու

7 մէջ պահուեցան։ Ու Եբրայեցիք Ցորդանանէն Գադի ու Գաղաադի երկիրը անցան. բայց Սաուղ դեռ Գաղգաղայի մէջ էր. ու բոլոր ժողովուրդը դողալով անոր ետևէն կ՚երթային։

8 Եւ անիկայ Սամուելին որոշած ժամանակին չափ եօթը օր սպասեց. բայց Սամուէլ Գաղգաղա չգալուն համար՝ ժողովուրդը ա-

9 նոր քովէն ցրուեցաւ։ Ու Սաուղ ըսաւ. Ողջակէզը և խաղաղութեան զոհը ինծի մօտ բերէք. ու ինքը

10 ողջակէզը մատուց։ Ու երբոր ա-նիկայ ողջակէզը մատուցանելը լըմընցուց, ան առենը Սամուէլ եկաւ. և Սաուղ ելաւ զանիկայ

11 դիմաւորելու ու բարևելու։ Ու Սամուէլ ըսաւ. Ի՞նչ ըրիր։ Եւ Սաուղ ըսաւ. Տեսայ որ ժողովուրդը իմ քովէս կը ցրուի, ու դուն ժամ որոշած օրերուդ մէջ չեկար, ու Փղշտացիք Մաքմասի մէջ

12 ժողուած են, Ու ըսի. Փղշտացիք հիմա իմ վրաս՝ Գաղգաղա պիտի իջնեն, ու ես Տէրոջը առջևը աղօթք ըրած չեմ. ուստի Համար-ձակութիւն ընելով՝ ողջակէզը մա-

13 տուցի։ Ու Սամուէլ ըսաւ Սաուղին. Չգիմարութիւն ըրիր, որ Էքու Տէր Աստուծոյդ քեզի պատուիրած պատուիրանքները չպահեցիր. քանզի հիմա Տէրը քու թագաւորութիւնդ Իսրայէլի վրայ

Ն·Բ·ՂԴ· 1093

ՃԳԼ·Ժե·28։

ՔՍԱՂ·ՀԹ·20։ԴԱՐ·ԺԳ·22։

ՃԳԼ·ԺԳ·2։

ՄԿ՞՝ ԳԱ-ՐԱՆ·ՀՄՐ 3։

ՃՑԵՍ·Ժբ·23։

ԼՑԵՍ·Ժչ·3։Ժբ·13, 14։

ՃՆՀԵՄ·Ժ3·34։

ՃՏԵՍ Դ ԹԱԳ·ԻԳ·14։ԵՐԵՄ·ԻԳ·1։

ՏԴԱՕ·Ե·8։

ՀԳԼ·ԺԳ·1, 4։

ինչև յաւիտեան պիտի հաստա-

14 տէր. ՃԲայց հիմա քու թագաւորութիւնդ հաստատ պիտի չըլլայ։ ՔՏէրը իրեն համար՝ իր սրտին համեմատ մարդ մը կը փնտռէ, որուն որ Տէրը իշխան պիտի կարգէ իր ժողովուրդին վրայ. քանզի դուն Տէրոջը քեզի պատուիրած հրամանը չպահեցիր։

15 Ետքը Սամուէլ ելաւ, ու Գաղգաղայէն Բենիամինի Գաբաան դնաց։ Եւ Սաուղ իր քովը գտնուող ժողովուրդը համրեց, ու ՃՎեց հարիւրի չափ մարդ էին։

16 Ու Սաուղ և անոր որդին Ցոփնաթանը ու անոնց հետ գտնուող մարդիկները՝ Բենիամինի †Գաբաան կը նստէին. ու Փղշտացւոց բանակը Մաքմասի մէջ էր։

17 Եւ Փղշտացւոց բանակէն իրիք դունդ աւարառու ելաւ. դունդին մէկը՝ դէպ ՚ի Եփրայի ճամբան՝

18 Սուալի երկիրը դարձաւ. Եւ դունդին մէկը դէպ ՚ի ԼԲեթորոնի ճամբան դարձաւ. ու մէկալ դունդը դէպ ՚ի անապատը դարձաւ, որ Սերոյիմի հովիտը նայող սահմանին ճամբան ՔՆէյ։

19 Եւ ՃԻսրայէլի բոլոր երկրին մէկ դարբին մը չէր գտնուեր. քանզի Փղշտացիք ըսեր էին թէ՝ Ըրլլայ որ Եբրայեցիք սուր կամ

20 նիզակ շինեն։ Ու բոլոր Իսրայէլացիք՝ ամէն մէկը իր բրիչը, խոփը, տապարը ու բահը շինտկելու համար, Փղշտացւոց Էրէրը կ՚իջնէ-

21 ին։ Բայց բրիչներուն, խոփերուն, եռաժանի գործիքներուն ու տապարներուն համար, և խթանները սրելու համար խարտոցներ ունէին։

22 Ուստի անանկ եղաւ որ պատերազմին օրը՝ Սաուղին ու Ցոփնաթանին հետ եղող բոլոր ժողովուրդին ձեռքը Նսուր կամ նիզակ չէր գըտնուեր. միայն Սաուղին ու անոր որդւոյն Ցոփնաթանին քովը կը գտնուէր։

23 Հ Ու Փղշտացւոց պահապան զօրքը Մաքմասի կիրճը ելան։

ԳԼ·ԺԴ

1 Ցոփնաթան՝ առանց իր հօրը, քահանային և ժողովուրդին գիտնալուն՝ կ՚երթայ, ու հրաշքով մը Փղշտացւոց պահապան զօրքերը կը զարնէ։ 15 որոնց վրայ Աստուծոյ վախը իջնալով՝ կը սկսին միկնիկ զարնել։ 17 Սաուղ՝ քահանային պատասխանին չսպասելով, թշնամւոց վրայ կը յարձակի։ 21 Իսկ գերի բռնուած Իսրայէլացիները, ու պահուըտածները ալ անոր հետ կը միանան Փղշտացւոց դէմ։ 24 Սաուղին անմտաբար երդում բնել տալովը՝ յաղթութիւնը ետ կը մնայ։ 32 Սաուղ ժողովուրդը կը զսպէ արիւն ուտելէն։ 35 Անդան մը կը շինէ։ 36 Ցոփնաթան վճռակով կը բռնուի. բայց ժողովուրդը կ՚ազատէ զանիկայ։ 47 Սաուղին զօրութիւնը ու անոր գերդաստանը։

Ն·Ք·ԶԲ· Իբր 1187

1 Ա[ե]ւ եղաւ որ՝ մէկ օր մը Սաւուղին որդին Ցովնաթանը իր զէնքերը կրող մանչուն բսաւ . Եկուր , անդիի կողմը եղող Փղշտացւոց պահապան զօրքին անցնինք . բայց իր 2 հօրը չիմացուց : Ու Սաւուղ Գաբաային ծայրը՝ Մագրոնի մէջ եղող նռնենիին տակը կը նստէր . և անոր հետ եղող ժողովուրդը մօտ 3 վեց հարիւր մարդու չափ էր : Ու Հեղիի որդւոյն Փենհէսի որդւոյն Իքաբովթին եղբօրը Աքիտովբին որդին Աքիան՝ Սելովի մէջ Տէրոջը քահանան էր , որ Եփուտ կը հագնէր . ու ժողովուրդը Ցովնաթ 4 անին երթալը չէր գիտեր : Եւ ան կիրճերուն մէջը , ուակից որ Ցովնաթան Փղշտացւոց պահապան զօրքին անցնիլ կ՚ուզէր , մէկ կողմանէ մէկ քարաժայռ մը՝ ու մէկալ կողմանէ մէկ քարաժայռ մը կար , որոնց մէկուն անունը Բազէս՝ 5 ու մէկալին անունը Սենա էր : Ան քարաժայռներուն մէկը՝ հիւսիսային կողմը՝ Մաքմասին դիմացն էր , ու մէկալը հարաւային կողմը՝ 6 *Գաբաային դիմացն էր : Եւ Ցովնաթան իր զէնքերը կրող մանչուն բսաւ . Եկուր ասանկ անթլփատներուն պահապան զօրքին անցնինք , կարելի է որ Տէրը մեր ձեռքովը բան մը ընէ . քանզի Տէրոջ համար չիարդով կամ քիչ բիարդով ազատելու կողմէ արգելք մը չկայ Տէ- 7 րոջը առջեւը : Ու իր զէնքերը կրողը անոր բսաւ . Իոլոր քու սրտիդ մէջը եղածը ըրէ . յառաջ դրնա . ես քեզի հետ եմ քու 8 ուզածիդ պէս : Եւ Ցովնաթան բսաւ . Հիմա մենք ան մարդիկներուն անցնինք . ու անոնց երև- 9 նանք . թէ որ մեզի այսպէս բսեն . կայնեցէք՝ մինչև որ մենք ձեզի դանք , ան ատենը մեր տեղը կայ- 10 նինք , ու անոնց չելլենք : Բայց թէ որ այսպէս բսեն . Մեզի՛ ելէք , ան ատենը ելլենք . քանզի Տէրը զանոնք մեր ձեռքը տուած է . ու 11 *Ասիկայ մեզի նշան ըլլայ : Ու երբոր երկուքնին Փղշտացւոց պահապան զօրքին երևցան , Փղշտացիք բսին . Ահա Եբրայեցիք իրենց պահուրտած ծակերէն դուրս կ՚ել- 12 լեն : Եւ պահապան զօրքերը Ցովնաթանին ու անոր զէնքերը կրողին պատասխան տուին ու բսին . Մեզի՛ ելէք , ու ձեզի մէկ բան մը իմացընենք . և Ցովնաթան իր զէնքերը կրողին բսաւ . Իմ ետևէս ելի՛ր . քանզի Տէրը զանոնք Իսրայէ- 13 լին ձեռքը կու տայ : Ու Ցովնաթան ձեռքերովը ու ոտքերովը ելաւ , և անոր զէնքերը կրողն ալ անոր ետևէն . ու Ցովնաթանին առջևը ինկան . անոր զէնքերը կրողն ալ անոր ետևէն կը մեռցը- 14 ներ : Եւ Ցովնաթան ու անոր զէնքերը կրողը աս առաջին կոտորածին մէջ՝ քսան մարդու չափ մեռցուցին կէս լծավարի չափ գետ- 15 նի վրայ : Ու բանակին մէջը՝ դաշտին մէջը՝ ու բոլոր ժողովուրդին մէջը էխռովութիւն եղաւ . պահապան զօրքերը ու †աւարառուներն ալ զարհուրեցան , ու երկիրը դողաց , անանկ որ Աստուծոյ ‡ահագին վախ մը ինկաւ :

Ն·Ք·ԶԲ· Իբր 1087

16 Եւ Բենիամինի Գաբաայէն Սաուղին դէտերը տեսան որ՝ ահա ան բազմութիւնը †մեծ շփոթութեան մէջ է , ու երթալով կը ցրուի : 17 Եւ Սաւուղ իր հետը եղող ժողովուրդին բսաւ . Ընդ՚ անցուցէք , ու նայեցէք որ մեզմէ ով գացեր է . ուստի անոնք անցուցին , և ահա Ցովնաթանը ու անոր զէն- 18 քերը կրողը չկար : Ան ատենը Սաւուղ Աքիային բսաւ . Աստուծոյ տապանակը մօտեցուր . քանզի ան ատենը Աստուծոյ տապանակը 19 Իսրայէլի որդւոցը հետն էր : Ու երբոր Սաւուղ Հքահանային հետ կը խօսէր , Փղշտացւոց բանակին մէջի աղմուկը երթալով կը շատնար . և Սաւուղ բսաւ քահանային . 20 Ձեռդ քաշէ : Ու Սաւուղ և իր հետը եղող բոլոր ժողովուրդը մէկտեղ ժողվուեցան , ու մինչև պատերազմին տեղը գացին . և ահա †ամէն մարդ իր սուրը իր ընկերին վրայ դ՚րյ՚՚ցէր էր , ու շատ մեծ 21 խռովութիւն մը ‡եր : Եւ ան Եբրայեցիները՝ որ առաջուց Փղշտացւոց հետ էին , ու շրջակայ երկիրներէն անոնց հետ բանակը ելեր էին , անոնք ալ Սաւուղին ու Ցովնաթանին հետ եղող Իսրայէլին հետ 22 միացան : Ու Եփրեմի լեռանը վրայ †պահուրտած Իսրայէլի բոլոր մարդիկները՝ Փղշտացւոց փախչիլը լսելով , անոնք ալ անոնց ետևէն պա- 23 տերազմին մէջը մտան : ‡Եւ ան օրը Տէրը ազատեց Իսրայէլը . ու պատերազմը †Բեթաւանը անցաւ :

24 Եւ ան օրը Իսրայէլի մարդիկները տագնապեցան . քանզի Սաւուղ †ժողովուրդին երդում ընել տուեր էր՝ ըսելով . Ո՛վ որ մինչև իրիկուն հաց ուտէ՝ անիծեալ ըլլայ . որպէս զի իմ թշնամիներէս վրէժ առնեմ . ու բոլոր ժողովուրդը բերանը հաց 25 չդրաւ : Եւ բոլոր †ժողովուրդը մէկ անտառ մը մտաւ , ու գետնի 26 երեսին վրայ մեղր կար : Ու երբոր ժողովուրդը անտառը մտաւ , տեսաւ որ մեղր կը վազեր . բայց ձեռ-

Ն·Ք·ԶԲ· Իբր 1187

– Գլ· ժգ· 15 ։

Բ Գլ·գ·21 ։

‡ Գլ· իբ· 9 ։ 11 ։ 20 ։ Ել· ---։ Աքիմելէք ։

† Գլ·բ·28 ։

† Գլ· 23 ։

* Կ՚՚՝ Գաբային

Ղ Դատ· է· 4 ։ 7 ։ բ Մն· ժգ· 11 ։

† Ցես Ցն· իդ· 14 ։ Դատ· է· 11 ։

Ն·Ք·ԶԲ· Իբր 1087

ԸԳթագ·է· 7 ։ Ցոր·ԺԸ· 11 ։

Բ Գլ· ժգ· 17 ։

‡ Ցն· լե· 5 ։

† Հմր 20 ։

Լթու· իէ· 21 ։

Է Դատ· է· 22 ։ բ Մն· ի· 23 ։

† Գլ· ժգ· 6 ։

‡ Ել·ժգ·30 ։ Սաղ· խգ· 6 ։ 7 ։ Ովս· ա· 7 ։

Հ Գբ ժգ·5 ։

† Ցես· ղ· 26 ։

† Եբէր· հրկիրը· տես բ Օր· թ· 28 ։ Մատ· գ· 5 ։

Ղել·գ·8 ։ Թու· ժգ· 28 ։ Մատ· գ·4 ։

Ն·Ք·ԶՓ· Իսր 1087

քը բերնին մտեցընող չկար . քանզի Ժողովուրդը երդումին վախցաւ ։
27 Եւ Ցոնվաթան չլսեց , երբոր իր հայրը Ժողովուրդին երդումը ընել տուաւ . ուստի իր ձեռքի դաւազանին ծայրը երկրնցուց , ու զանիկայ մեղրին խորիսխին մէջը խոթեց . ու իր ձեռքը բերանը տանելով ,
28 աչքերը բացուեցան ։ Ան առնոր Ժողովուրդէն մէկը պատասխան տուաւ ու ըսաւ . Քու հայրդ Ժողովուրդին մեծ երդումը ընել տուաւ՝ ըսելով . Անոյսը հաց ուտող մարդը անիծեալ ըլլայ ։ Եւ Ժողովուրդը
29 նուաղած էր ։ Ու Ցոնվաթան ըսաւ . Իմ հայրս Ժողովուրդը նեղութեան մէջ ձգեց . նայեցէք , աս մեղրէն քիչ մը ուտելուս պէս՝
30 աչքերս բացուեցան . Ալ որչափ աւելի՝ թէ որ Ժողովուրդը այսօր իր թշնամիներէն գտած աւարը կրնանալով ուտէր . քանզի հիմա Փղշտացւոց մէջ *աւելի մեծ կոտորած կ'ըլլար" ։
31 Եւ ան օրը անոնք՝ Փղշտացիները Մաքմասէն մինչև Այեղոնը զարկին . ու Ժողովուրդը խիստ նուաղեցաւ ։
32 ղեցաւ ։ Եւ Ժողովուրդը աւարին վրայ իյնալ . ու ոչխարները , արջառները , և որթերը առին , ու գետնի վրայ մորթեցին . ու Ժողո-
33 վուրդը †արիւնովը կերաւ ։ Եւ Սաւուղին իմացուցին ու ըսին . Անա Ժողովուրդը Տէրոջը դէմ կը մեղանչէ , քանզի արիւնով կ'ուտէ ։ Եւ անիկայ ըսաւ . Անօրէնութիւն ըրիք . հիմա ինձի մէկ մեծ քար մը
34 գլորեցէք ։ Ու Սաւուղ ըսաւ . Ժողովուրդին մէջը ցրուեցէք , և անոնց ըսէք . Ամէն մարդ իր արջառը ու իր ոչխարը ինձի մօտեցընէ , ու հոս մորթէ և ուտէ , ու արիւնով ուտելով՝ Տէրոջը դէմ մեղք չգործէ ։ Ուստի բոլոր Ժողովուրդը՝ ամէն մարդ իր ձեռքովը ան գիշերը իր արջառը մօտեցուց , ու հոն մոր-
35 թեց ։ Եւ Սաւուղ ‡Տէրոջը սեղան շինեց , աս էր Տէրոջը համար Սկսած շինած առջի սեղանը ։
36 Եւ Սաւուղ ըսաւ . Գիշերով Փղշտացւոց ետևէն իջնենք , ու մինչև որ առաւօտը ծագէ՝ զանոնք թալնենք , ու անոնցմէ մարդ մը չթողնենք . և անոնք ըսին . Քու աչքերուդ ինչ որ հաճոյ է՝ ան ըրէ ։ Ուսկայն քահանան ըսաւ . Հոս Աստուծոյ
37 քովը մօտենանք ։ Եւ Սաւուղ Աստուծոյ հարցուց՝ ըսելով . Փղշտացւոց ետևէն իջնե՞մ . զանոնք Իսրայէլին ձեռքը պիտի տանս ։ Բայց †ան օրը պատասխան չտուաւ անոր ։
38 Ան առնոր Սաւուղ ըսաւ . Հոս մօտեցէք՝ Ժողովուրդին բոլոր իշխանները , և հասկըցէք ու տեսէք թէ այսօր աս մեղքը որո՞ւնն է ։
39 Քանզի Իսրայէլը ազատող Տէրը կենդանի է որ՝ թէ որ իմ որդւոյս Ցոնվաթանին ալ ըլլայ , անպատճառ պիտի մեռնի . ու բոլոր Ժողովուրդին մէջը անոր պատասխան
40 տուող մը չկար ։ Ան առնոր ամենայն բոլոր Իսրայէլին ըսաւ . Դուք մէկ կողմը կայնեցէք , ու ես և իմ որդիս Ցոնվաթանը միւս կողմը կայնինք . ու Ժողովուրդը Սաւուղին ըսաւ . Աչքերուդ հաճոյ երևցա-
41 ծը ըրէ ։ Եւ Սաւուղ Իսրայէլի Տէր Աստուծոյն ըսաւ . Ճշմարտութիւնը յայտնէ . Եւ Ցոնվաթանը ու Սաւուղը վիճակով բռնուեցան , ու Ժողովուրդը ազատ մնաց ։
42 Եւ Սաւուղ ըսաւ . Իմ վրաս՝ ու իմ որդւոյս Ցոնվաթանին վրայ վիճակ ձգեցէք . ու Ցոնվաթանը բռնա-
43 նուեցաւ ։ Եւ Սաւուղ Ցոնվաթանին ըսաւ . Ինծի իմացուր թէ ի՞նչ ըրիր . ու Ցոնվաթան անոր իմացուց ու ըսաւ . Ձեռքիս դաւազանին ծայրովը քիչ մը մեղր կերեր եմ . ահա ես պիտի մեռ-
44 նիմ ։ Եւ Սաւուղ ըսաւ . Աստուած ինծի այսպէս ու ասկէ աւելի ընէ՝ Վոր անշուշտ պիտի մեռնիս ,
45 Ցոնվաթան ։ Բայց Ժողովուրդը Սաւուղին ըսաւ . Ցոնվաթա՞ն պիտի մեռնի , ան որ այսօր Իսրայէլի մէջ աս մեծ փրկութիւնը ըրաւ . քան լեցի , Տէրոջը կենդանի է որ՝ անոր գլխուն մէկ մազը գետինը պիտի չիյնայ . քանզի այսօր Աստուծով յաղթութիւն րրաւ ։ Այսպէս Ժողովուրդը Ցոնվաթանը ա-
46 զատեց , ու անիկայ չմեռաւ ։ Եւ Սաւուղ Փղշտացիներէն ետ դարձաւ , ու Փղշտացիք իրենց տեղը գացին ։
47 Ուստի Սաւուղ սկսաւ Իսրայէլի վրայ թագաւորել . ու բոլոր շրջակայ թշնամիներուն հետ՝ Մովաբին հետ , և Ամմոնի որդւոցը հետ , Եդոմի հետ , Սուբայի թագաւորներուն հետ , ու Փղշտացւոց հետ պատերազմ ըրաւ . և որ կողմը որ դարձաւ , յաղթութիւն
48 ըրաւ ։ Ու †զօրք ժողվելով " Ամաղեկը զարկաւ , և ազատեց Իսրայէլը՝ իր կողոպտիչներուն ձեռքէն ։
49 Ու ‡Սաւուղին որդիքը՝ Ցոնվաթան , Ցեսուի ու Մելքիսաւէ էին . և անոր երկու աղջիկներուն անունները՝ առջինին անունը՝ Մերովը , ու պզտիկին անունը Մեղ-
50 քող էր ։ Եւ Սաւուղին կնկանը անունը Աքինոամ էր՝ Ախիմասին աղջիկը , ու անոր զօրավարին ա-

Ն·Ք·ԶՓ· Իսր 1087

* Կամ՝ չատ մեծ կոտորած չեղաւ ։
† Ղեւ·գ·17 ։ է·26 ։ Ժէ·10 ։ Ժթ·26 ։ Բ Օր·Ժբ·16 , 23 , 24 ։
‡ Ել·է·17 ։
† Կամ՝ քահանային ըսելով՝ ։ Գլ·Ժ·3 , 7 ։
‡ Գլ·լա·2 ։ Ա Մն·ը·33 ։

- Բ Թագ·Ժբ·5 ։
- Ակ·Ժ·33 ։ Դտր·ա·24 ։ Ցես·է·16 ։ Գլ·Ժ·20 , 21 ։
- Ցես·է·19 ։
- Հմր 27 ։
- Հռութ·ա·17 ։
- Հմր 39 ։
- Բ Թագ·Ժգ·11 ։ Գ Թագ·ա·52 ։ Ղռ·Իա·18 ։
- Գլ·Ժա·11 ։
- Բ Թագ·Ժ·6 ։

Ն·Ք·ՂԲ· Ի՛ր 1087

նուն ԱբենՆեր էր՝ Սաւուղին հօր։
51 եղբօրը Ներին որդին ։ †Եւ կին՝ Սաւուղին հայրն էր, ու Աբենների հայրը Ներ՝ Աբիելին որդին էր ։
52 Եւ Սաւուղին բոլոր օրերը՝ Փղշտացւոց դէմ սաստիկ պատերազմ կար. ու Սաւուղ ամէն տեսած զօրաւոր մարդը և ամէն ուժի տէր եղողը †իր քովը կը ժողվէր ։

† Գ·Ե·11 ։

ԳԼ· ԺԸ

1 Սամուէլ կը խրկէ Սաւուղը՝ որ երթայ Ամաղէկը ջարդէ ։ 6 Սաւուղ կենցաղներուն մարգարէութիւն կը ցուցընէ ։ 8 Ագագին, ու աւարին ազկներուն կը խնայէ ։ 10 Սամուէլ կ'իմացընէ Սաւուղին թէ Աստուած ինչպես մերժեց զանիկայ իր անհնազանդութեանը համար ։ 24 Սաւուղ կը խոնարհի ։ 32 Սամուէլ Ագագը կը մեռցընէ ։ 34 Սամուէլ ու Սաւուղ կը զատուին ու իրենց տեղը կ'երթան ։

Իր 1079 — Գլ· Թ· 16 ։

1 Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղին. — Տէրը զիս՝ իր Իսրայէլ ժողովուրդին վրայ քեզ թագաւոր օծելու խրկեց. ու հիմա Տէրոջը խօսքերուն ձայնը մտիկ ըրէ ։ 2 Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Միտքս բերի ինչ որ Ամաղէկը ըրաւ Իսրայէլին. անոր Եգիպտոսէն ելած ատենը՝ Ճամբուն մէջ անոր դէմ դնելով ։ 3 Հիմա գնա, ու Ամաղէկը զարկ, և †անոր բոլոր ունեցածը նզովածի պէս բնաջինջ ըրէ, ու անոր չխնայես. և էրիկ մարդէն մինչև կնիկ մարդը, ու տղայէն մինչև կաթնկերը, արջառէն մինչև ոչխարը, և ուղտէն մինչև էշը մեռցրնես ։

Բ Եւ·ԺԷ·8, 14 ։ Թուս· Իդ· 20 ։ Բ Օր·Իե·17, 18, 19 ։ † Ցես· Ջ· 17, 21 ։

4 Ուստի Սաւուղ ժողովուրդը կանչեց, ու Տեղաիմի մէջ զանոնք համրեց, որ երկու հարիւր հազար հետեւակ զօրք էին, ու Ցուդայեանք 5 ալ տասը հազար ։ Եւ Սաւուղ մինչև Ամաղեկացւոց մէկ քաղաքը գնաց, ու հեղեղատին մէջը դարա- 6 նակ եղաւ ։ Եւ Սաւուղ †Կենեցիներուն ըսաւ. Գացէք, զատուեցէք, — Ամաղեկացւոց մէջէն իջէք, չըլլայ որ ձեզ անոնց հետ մկտեղ զարնեմ. քանզի Ղուք բոլոր Իսրայէլի որդւոցը ողորմութիւն ըրիք, անոնց Եգիպտոսէն ելած ատենը ։ Ուստի Կենեցիները Ամաղեկացւոց մէջէն գաղուեցան ։ 7 Եւ Սաւուղ՝ †Եւիլայէն մինչև Եգիպտոսին դիմացի ըՇուրը՝ Ամա- 8 ղէկը զարկաւ. Ու †Ամաղեկին թագաւորը Ագագը ողջ բռնեց, ու †բոլոր ժողովուրդը սուրի բերան ։ 9 Նով ջարդեց ։ Բայց Սաւուղ ժողովուրդին հետ՝ †Ագագը, և ոչխարներուն ու արջառներուն աղէկները ու *գերբերը, և գառները, ու ամէն պատուական բաները խնայեցին, և չուզեցին զանոնք ջարդել, հապա բոլոր անարգ ու անպիտան անասունները ջարդեցին ։

Ն·Ք·ՂԲ· Ի՛ր 1079

10 Եւ Տէրոջը խօսքը Սամուէլին եւ 11 ըսաւ, ըսելով. †Սաւուղը թագաւոր ընելուս զղջացի. Հանգի՛ն ինձմէ ետ դարձաւ, ու իմ խօսքերս չկատարեց ։ Եւ Սամուէլ տրտմեցաւ, ու բոլոր գիշերը Տէրոջը աղաղակեց ։ 12 Ու Սամուէլ առաւօտուն կանուխ ելաւ, որ երթայ Սաւուղը դիմաւորէ. և Սամուէլին իմացուցին՝ ու ըսին. Սաւուղը Կարմէղոս եկաւ, և ահա իրեն համար †յաղթութեան նշան՝ կանգնեց, ու անկէ դառնալով անցաւ, ու Գաղգաղա իջաւ ։

† Գլ· Ժգ· 13 ։ Հմր 3, 9 ։ † Հմր 35 ։ Գլ·Ժգ·1 ։ † Ցես· Ժե· 55 ։ † Եսթ·Ա՚ևգ

13 Եւ Սամուէլ Սաւուղին քովը գնաց. ու Սաւուղ անոր ըսաւ. Ղուն Տէրոջմէն օրհնեալ ըլլաս. 14 Տէրոջը խօսքը կատարեցի ։ Եւ Սամուէլ ըսաւ. Հապա ասոնց ոչխարներուն ձայնը ինչ պիտի ըլլայ՝ որ իմ ականջիս կու գայ, ու արջառ- 15 ներուն ձայնը որ ես կը լսեմ ։ Եւ Սաւուղ ըսաւ. Զանոնք Ամաղեկացիներէն բերին. †քանզի ժողովուրդը պինդ ազկ ոչխարները ու արջառները ողջ թողուցին, որ զանոնք քու Տէր Աստուծոյդ զոհ մատուցանեն. սակայն մնկալները 16 ջարդեցինք ։ Ան ատենը Սամուէլ ըսաւ Սաւուղին. Կեցիր որ քեզի պատմեմ ինչ որ Տէրը աս գիշեր ինծի խօսեցաւ ։ Ան ալ անոր ը- 17 սաւ. Խօսէ ։ Եւ Սամուէլ ըսաւ Սաւուղին. ‡Ահա դուն †որ քու աչքերուդ պզտիկ կ'երեւնայիր, Իսրայէլի որդւոցը ցեղերուն գլուխ եղար, ու Տէրը քեզ Իսրայէլի վրայ 18 թագաւոր օծեց. Եւ Տէրը քեզ մկ ճամբայ մը խրկեց՝ ըսելով. Գնա, ու ան մեղաւոր Ամաղեկացիները նզովածի պէս ջարդէ, և անոնց դէմ պատերազմ ըրէ, մինչև 19 որ զանոնք բնաջինջ ընես. Իսկ դուն ինչու համար Տէրոջը ձայնին չհնազանդութիւն չըրիր, ու աւարին վրայ իյնալով՝ Տէրոջը առջևը չա- 20 րութիւն ըրիր ։ Եւ Սաւուղ ըսաւ Սամուէլին. ‡Ահա ես Տէրոջը ձայնին հնազանդութիւն ըրի, ու Տէրը զիս որ ճամբան որ խրկեց, ան ճամբան գացի, և Ամաղեկի թագաւորը Ագագը բերի, ու Ամաղեկը նզո- 21 վածի պէս բնաջինջ ըրի ։ †Սակայն ժողովուրդը ան աւարէն ոչխարներ ու արջառներ առաւ, նզովածներէն պինդ աղկները՝ որ Գաղգաղայի մէջ քու Տէր Աստուածդ զոհ մատուցանեն ։ 22 Ծոյդ զոհ ընեն ։ Եւ Սամուէլ ըսաւ. †Միթէ Տէրոջը առջևը ողջակէզները ու զոհերը՝ Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ

† Գլ· Ժգ· 13 ։ ‡ Հմր 15 ։ † Սադ·Ծ·8, 9 ։ Առակ· Իա·3 ։ Ես· ա·11, 12, 13, 16, 17 ։ Երեմ· է· 22, 23 ։ Միք·Գ·6, 7, 8 ։ Երե· Ժ·6, 7, 8, 9 ։

Ն · ք · ՂՖ · ԻԲԲ 1079

= ՀՈՂ · Ե · 1 ։ Ովս · գ · 6 ։ Մաս · Ե · 24 ։ Թ · 13 ։ Ժբ · 7 ։ Մար · Ժբ · 33 ։

Ա Օր · Ժբ · 10 ։

* ԵՔԲ · ու · Նայնութիւն ու թերափիմ

¬ Գ Ա · Ժգ · 14 ։

Ձ Տես Բ Թագ · Ժբ · 13 ։

= ԵՁ · իգ · 2 ։ Ա Ռաք · իԹ · 25 ։ Ես · Ծաւ · 12 · 13 ։

- Տես գԶ · բ · 30 ։

Ձ գ Թագ · Ժա · 30 ։

¬ Գ Ա · իբ · 17 · 18 ։ գ Թագ · Ժա · 31 ։

բ Թես · իգ · 19 ։ Եզեկ · իգ · 14 ։ բ Տիմ · բ · 13 ։ Տիտ · ա · 2 ։

ց Ցօհ · Ե · 44 ։ Ժբ · 43 ։

- ԵՁ · Ժե · 11 ։ Թես · Ժգ · 45 ։ Տես Դատ · ա · 7 ։

† Գ Ա · Ժա · 4 ։

†Տես գԶ · ԺԹ · 24 ։

։ ՀՅբ 11 ։ Գ Ա · Ժգ · 1 ։

‡ ՀՅբ 11 ։

Հաճոյ է · ահա ¬ պաղատանդութիւնը՝ զոհէն , ¬¬ Խո՛ւ մտիկ ընելը՝
էր ։ 32 Սադովկին՝ Նաթանին մեռածը թագաւոր
կ'օծուի ։ ու ժողովուրդը ուրախութեան հան-
դեսը կը կատարէ ։ 41 Ցոլնաթան ասլ լուրը
առնելով , Ադոնիային կոչնականները կը ցը-
րուին ։ 50 Ադոնիա սեղանին եղիբներուն
քովը կը փախչի ։ իսկ Սողոմոն կ'արձակէ զա-
նիկայ այն պայմանով՝ որ այնուհետև բարի
վարմունքը մը ունենայ ։

1 Ի՛ւ Դաւիթ թագաւորը ծերացած
ու տարիքը առած ըլլալով ,
զանիկայ հանդերձներով կը ծած-
2 կէին , բայց չէր տաքնար ։ Եւ
ծառաները անոր ըսին . Մեր թա-
գաւոր տիրոջը համար մէկ կոյս
աղջիկ մը փնտռեն՝ որ թագաւորին
առջևը կայնի , զանիկայ դարմանէ ,
ու անոր ծոցը պառկի , որ մեր
3 թագաւոր տէրը տաքնայ ։ Ու Իս-
րայէլի բոլոր սահմաններուն մէջ
մէկ գեղեցիկ աղջիկ մը փնտռեցին .
– Ցես·ԺԹ· 18։ և Սունամացի Աբիսակը գտան ,
ու զանիկայ թագաւորին բերին ։
4 Եւ ան աղջիկը խիստ գեղեցիկ էր .
ու անիկայ թագաւորը կը դարմա-
նէր , ու անոր սպասաւորութիւն
կ'ընէր . բայց թագաւորը զանիկայ
չգիտցաւ ։
Բ Ր Թագ· գ·4։ 5 Ան ատենը Բ Ադոնիան Հպարտացաւ ու ըսաւ . Ես
Ե Ր Թագ· ԺԵ·1։ թագաւոր ըլլամ . և Ե իրեն համար
կառքեր ու ձիաւորներ պատրաս-
տեց , և հիսուն մարդ , որ իր առ-
6 ջևէն վազեն ։ Եւ անոր Հայրը ա-
նոր կենացը մէջ ամենևին յանդի-
մանած չէր զանիկայ , ըսելով թէ՝
Ի՞նչու այդպէս ըրիր . և անիկայ
Ե Ր Թագ· գ·3, 4։ ա Մն·գ·2։ խիստ գեղեցիկ էր . Ե ու անոր մայրը
զանիկայ Աբիսողոմին եղբը ծներ
7 էր ։ Եւ անիկայ խօսքը մէկ ըրաւ
Ղարուհեայի որդւոյն Ցոլաբին
Բ Ր Թագ· բ·25։ ՂԳԼ·Բ·22, 28։ հետ , ու Բ Աբիաթար քահանային
հետ , Ղորոնք Ադոնիային հետևե-
լով՝ անոր օգնութիւն կ'ընէին ։
8 Բայց Սադովկ քահանան , ու Ցո-
վիադայի որդին Բանեան , և Նա-
թան մարգարէն , ու Բ Սեմէին , և
Ռէին , ու Ը Դաւիթին զօրաւոր
մարդիկները՝ Ադոնիային հետ չէ-
9 ին ։ Եւ Ադոնիա Բ Ոզելէթի աղբիւ-
րին մօտ եղող Զոողելէթի քարին
քովը՝ ոչխարներ , արջառներ ու
գեր անասուններ մորթեց . և իր
ամէն եղբայրները՝ թագաւորին
որդիքը , ու Ցուդայի բոլոր մար-
դիկները՝ թագաւորին ծառաները
10 հրաւիրեց . Բայց Նաթան մարգա-
րէն , ու Բանեան , և զօրաւորները ,
ու իր Սողոմոն եղբայրը չհրաւի-
րեց ։
11 Եւ Նաթան՝ Սողոմոնին մօրը
Բերսաբէին հետ խօսեցաւ՝ ու ը-
սաւ . Չլսեցիր որ Բ Ադդիթի որդին
Ադոնիան թագաւոր եղաւ , ու մեր
Բ Ր Թագ· գ·4։ 12 տէրը Դաւիթ չիմացաւ ։ Ուրեմն
հիմա եկուր քեզի խրատ մը տամ ,
որ քու կեանքդ ու քու որդւոյդ
13 Սողոմոնին կեանքը ազատես ։ Եկի՛ր
Դաւիթ թագաւորին քովը գնա ,
ու անոր ըսէ . Ո՛վ Տէր իմ թա-
գաւոր՝ դուն քու աղախինիդ եր-
դում չըրիր , ու չըսի՞ր որ Բ Ինձ-
Է Ա Մն·Իր· 9։ մէ ետքը քու որդիդ Սողոմոնը թա-
գաւոր պիտի ըլլայ , և իմ աթոռս
անիկայ պիտի նստի . ու ինչու՞
համար Ադոնիան թագաւոր եղաւ ։
14 Ահա դուն ան տեղը թագաւորին
հետ խօսած առենդ՝ ես ալ ետևէդ
կու գամ , ու քու խօսքերդ կը ը-
րայցնեմ ։
15 Եւ Բերսաբէ՝ ներքին սենեակը
մտաւ թագաւորին քովը . և թա-
գաւորը շատ ծերացած էր . ու
Սունամացի Աբիսակը թագաւորին
16 սպասաւորութիւն կ'ընէր ։ Եւ
Բերսաբէ գլուխը ծռեց , ու թա-
գաւորին երկրպագութիւն ըրաւ ։
Ու թագաւորը ըսաւ . Ի՞նչ կ'ու-
17 զես ։ Եւ անիկայ ըսաւ անոր .
Ո՛վ Տէր իմ , Դուն քու աղախի-
նիդ՝ քու Տէր Աստուծոյդ անու-
նովը երդում ըրիր , ըսելով . Ինձմէ
Է Ր Ա Կր 13։30։ եղբը քու որդիդ Սողոմոնը թա-
գաւոր պիտի ըլլայ , ու իմ աթոռս
18 ան պիտի նստի . Եւ ահա հիմա

Ն·Ք·ՂԴ· 1015

Ադոնիան թագաւոր եղած է , ու դուն չիմացար , ով տէր իմ թա-
19 գաւոր . Ե եւ անիկայ շատ արջառներ՝ ու գէր անասուններ՝ ու ոչխարներ մորթեց , և թագաւորին բոլոր որդիները , ու Աբիաթար քահանան , և Յովաբ զօրապետը հրաւիրեց , բայց քու ծառադ Սո-
20 ղոմոնը չհրաւիրեց ։ Հիմա ով տէր իմ թագաւոր , բոլոր Իսրայէլին աչքերը քու վրադ են , որ անոնց իմացընես թէ՝ իմ թագաւոր տիրոջս աթոռը իրմէ ետքը ով պիտի
21 նստի . Եթէ ոչ՝ երբոր իմ թագաւոր տէրս իր հայրերուն հետ քնանայ , ես ու իմ որդիս Սողոմոնը յանցաւոր պիտի սեպուինք ։
22 Ու երբոր անիկայ թագաւորին հետ կը խօսէր , Նաթան մարգա-
23 րէն եկաւ ։ Եւ թագաւորին իմացուցին ու ըսին թէ՝ Ահա Նաթան մարգարէն Ի՛ա՛ . ու անիկայ ներս մտաւ թագաւորին առջևը , ու երեսը մինչև գետինը Ե՛Ւ՛Լ՛Վ՛ թագաւորին երկրպագութիւն ը-
24 րաւ . Եւ Նաթան ըսաւ . Ով տէր իմ թագաւոր , դո՞ւն ըսիր որ՝ Ինծմէ ետքը Ադոնիան թագաւոր պիտի ըլլայ , ու իմ աթոռս անի-
25 կայ պիտի նստի . Քանզի անիկայ այսօր իջաւ , և շատ արջառներ , ու գէր անասուններ , ու ոչխարներ մորթեց . և թագաւորին բոլոր որդիները , զօրավարները , ու Աբիաթար քահանան հրաւիրեց . և ահա անոնք անոր առջևը կ'ուտեն , կը խմեն ու կ'ըսեն . Կեցցէ
26 արքայ Ադոնիա ։ Բայց զիս քու ծառադ , ու Սադովկ քահանան , և Յովհադայի որդին Բանեան , ու քու
27 ծառադ Սողոմոնը չկանչեց ։ Այս բանը արդեօք իմ թագաւոր տիրոջս ձեռքովը եղաւ , ու քու ծառայիդ չիմացուցիր՝ թէ քեզմէ ետքը իմ թագաւոր տիրոջս աթոռը ով պիտի նստի ։
28 Եւ Դաւիթ թագաւորը պատասխան տուաւ ու ըսաւ . Բերսաբէն ինծի կանչեցէք ։ Եւ անիկայ թագաւորին առջևը եկաւ , ու թագաւորին առջևը կայնեցաւ ։
29 Եւ թագաւորը երդում բրաւ , ու ըսաւ . Յիմ անձս ամէն նեղութենէ ազատող Տէրը կենդանի է որ ,
30 Ինչպէս որ քեզի Իսրայէլին Տէր Աստուծովը երդում բրի , ու ըսի թէ՝ Ինծմէ ետքը քու որդիդ Սողոմոնը թագաւոր պիտի ըլլայ , ու իմ տեղս իմ աթոռիս վրայ անիկայ պիտի նստի . ահա այսօր այն-
31 պէս պիտի ընեմ ։ Ան ատենը Բերսաբէն երեսը մինչև գետինը ծռելով՝ թագաւորին երկրպագութիւն ը-
րաւ ու ըսաւ . Իմ Տէրս Դաւիթ թագաւորը յաւիտեան ողջ կե-
32 նայ ։ Եւ Դաւիթ թագաւորը ըսաւ . Սադովկ քահանան , ու Նաթան մարգարէն , և Յովհադայի որդին Բանեան ինծի կանչեցէք ։ Ու ա-
նոնք թագաւորին առջևը եկան ։
33 Եւ թագաւորը անոնց ըսաւ . Ձեր տիրոջը ծառաները ձեր հետը առէք , ու իմ որդիս Սողոմոնը յիմ ջորիիս վրայ հեծցուցէք , ու զա-
34 նիկայ Գեհոնը իջեցուցէք . Եւ Սադովկ քահանան ու Նաթան մարգարէն Հոն զանիկայ Իսրայէլի վրայ թագաւոր օծեն . ու փող ՚ի՛ Ջ՛ Ե՛ Ց՛ Ու՛ Ց՛ Ե՛ Ք՛ Ք՛ արքայ Սողոմոն . Եւ անոր ետևէն
35 ելէք , ու անիկայ թող գայ ու իմ աթոռս նստի , և իմ տեղս անիկայ թագաւոր ըլլայ . քանզի ես հրամայեցի , որ անիկայ Իսրայէլի վրայ ու Յուդայի վրայ իշխան ըլ-
36 լայ ։ Ան ատենը Յովհադայի որդին Բանեան՝ թագաւորին պատասխան տուաւ , ու ըսաւ . Ամէն . իմ թագաւոր տիրոջս Տէր Աս-
37 տուածն ալ այդպէս ըսէ ։ Ինչպէս որ Տէրը իմ թագաւոր տիրոջս հետն եր , Սողոմոնին հետն ալ այնպէս ըլլայ , ու Դանոր աթոռը իմ տիրոջս Դաւիթ թագաւորին
38 աթոռէն մեծ ընէ ։ Ան ատենը Սադովկ քահանան , Նաթան մարգարէն , Յու Յովհադայի որդին Բանեան , և Քերեթիները ու Փելեթիները իջան , ու Սողոմոնը Դաւիթ թագաւորին ջորիին վրայ հեծցուցին , ու զանիկայ Գեհոն
39 տարին ։ Եւ Սադովկ քահանան խորանէն Եղին եղջիւրը առաւ , ու Սողոմոնը օծեց . և փողը ՚ի՛ Ջ՛ Ե՛ Ց՛ Ու՛ Ց՛ Ե՛ Ք՛ Ք՛ , Ու բոլոր ժողովուրդը կ'ըսէր .
40 Կեցցէ արքայ Սողոմոն ։ Եւ բոլոր ժողովուրդը անոր ետևէն կ'ելլէին . ու ժողովուրդը սրինգներ Ջ՛ Ե՛ Ց՛ Ու՛ Ց՛ Ե՛ Ք՛ Ք՛ նելով մեծ ուրախութեամբ մը կ'ուրախանային , անանկ որ անոնց ձայնէն գետինը * կը դղրդէր ։
41 Եւ Ադոնիա ու անոր բոլոր բազմականները լսեցին . ու անոնք կերակուրէն ելեր էին . և Յովաբ փողին ձայնը լսելով՝ ըսաւ . Ի՞նչ պիտի ըլլայ աս դղրդման ձայնը որ
42 քաղաքէն կ'ելլէ ։ Երբոր անիկայ տակաւին կը խօսէր , ահա Աբիաթար քահանային որդին Յովնաթանը եկաւ . ու Ադոնիա ըսաւ . Եկուր . քանզի դուն քաջ մարդ մըն ես , ու բարի աւետիս պիտի
43 տաս ։ Եւ Յովնաթան պատասխան տուաւ , ու Ադոնիային ըսաւ . Շիտակը աս է որ՝ մեր տէրը Դա-

Ն·Ք·ՂԴ· 1015

՚ Նէեմ. բ· 8 ։ Դան . բ· 4 ։

՚ բ Թագ . ի· 6 ։

յ Ցես Նաթ . գ· 8 ։

Ն բ Մն . լբ· 30 ։

Լ ա Թագ . ժ· 1 ։ ժգ· 8, 12 ։ բ Թագ . բ· 4 ։ ե· 3 ։ Գլ· ժթ . 16 ։ դ Թագ . թ· 3 ։ ժա . 12 ։

՚ բ Թագ . ժե· 10 ։ դ Թագ . թ· 13 ։ ժա . 14 ։

Լ Ցես . ա· 5, 17 ։ ա Թագ . ի· 13 ։

՚ Հմր 47 ։

Լ բ Թագ . բ· 18 ։ իգ· 20—23 ։

՚ Եւ . լ· 23 ։ 25, 32 ։ Սադ . ԺԹ . 20 ։

՚ ա Մն . իթ· 22 ։

Վ ա Թագ . ժ· 24 ։

* Եբր · կը ձեղքուէր ։

՚ բ Թագ · ժբ· 27 ։

Ի Հմր 7 ։ 8 ։ 9 ։ 25 ։

Ե Հմր 19 ։

Հ ա Թագ . ժ· 24 ։

Յ բ Թագ · գ· 9 ։

Ղ Հմր 17 ։

Ն · Ք · ԶԲ · 1015

ւիթի թագաւորը՝ Սողոմոնը թա-
44 գաւոր ըրաւ . Ու թագաւորը՝ Սա-
դովկ քահանան , և Նաթան մար-
գարէն , ու Յովիադայի որդին Բա-
նեան , և Քերեթհները ու Փելեթի-
ները անոր հետը խրկեց . ու զա-
նիկայ թագաւորին Ջորիին վրայ
45 հեծցուցին . Եւ Սադովկ քահանան
ու Նաթան մարգարէն զանիկայ
Գեհոնի մէջ թագաւոր օծեցին , ու
անկէ ուրախութեամբ ելան . ու
քաղաքը դղրդեցաւ . Ա՛ձեր լսած
46 ձայնը աս է : Նաև Սողոմոն՝ թա-
գաւորութեան աթոռին վրայ նըս-
47 տաւ . Եւ թագաւորին ծառաներն
ալ մեր տէրը Դաւիթ թագաւորը
օրհնելու եկան , ու ըսին . Յիս-
ուսածագ Սողոմոնին անունը քու
անունէդ աւելի մեծցընէ , ու անոր
աթոռը քու աթոռէդ աւելի բարձ-
բացընէ : Եւ թագաւորը իր ան-
կողնին վրայ երկրպագութիւն ը-
48 րաւ : Նաև թագաւորը այսպէս
ըսաւ . Իսրայէլին Տէր Աստուածը
օրհնեալ ըլլայ , որ այսօր իմ աթո-
ռիս վրայ նստող մը տուաւ , ու իմ
49 աչքերս տեսան : Եւ Ադոնիային
բոլոր կոչնականները զարհուրեցան ,
ու ելան և ամէն մէկերնին իրենց
ճամբան գացին :
50 Եւ Ադոնիա Սողոմոնին երեսէն
վախցաւ , ու ելաւ գնաց , ու սե-
51 ղանին եղջիւրները բռնեց : Եւ Սո-
ղոմոնին պատմեցին ու ըսին . Ահա
Ադոնիան՝ Սողոմոն թագաւորէն
վախցաւ , և ահա անիկայ սեղանին
եղջիւրները բռնեց , ու ըսաւ . Սո-
ղոմոն թագաւորը այսօր ինծի եր-
դումբ ընէ որ իր ծառան սրով պիտի
52 չմեռցընէ : Ու Սողոմոն ըսաւ ,
Թէ որ անիկայ առաքինի ըլլայ ,
անոր մէկ մազը գետինը պիտի չիյ-
նայ . բայց թէ որ անոր վրայ չա-
րութիւն գտնուի , ան առնը պիտի
53 մեռնի : Եւ Սողոմոն թագաւորը
մարդ խրկեց . ու զանիկայ սեղանէն
վար իջեցուցին : Եւ անիկայ եկաւ ,
ու Սողոմոն թագաւորին երկրպա-
գութիւն ըրաւ . ու Սողոմոն անոր
ըսաւ . Ցունդ գնա :

Ն · Ք · ԶԲ · 1015

– Ծն · խէ · 29 , բ Օր · լ · 14 :

Բ Ցես · իգ · 14 :

* Եբր · երիկ մարդ

է բ Օր · ժէ · 19 , 20 :

ԺԲ Օր · իթ · 9 , Ցես · ա · 7 , ա Պն · իր · 12 , 13 :

է ա Թագ · ժբ · 5 , 14 , 30 :

ՀԲ Թագ · է · 25 :

է Սաղ · ճլբ · 12 :

ը Թագ · ի · 3 :

Ի բ Թագ · է · 12 , 13 , Գէ · բ · 25 :

ի բ Թագ · գ · 39 , ժբ · 5 , 12 , 14 , ժթ · 5 , 6 , 7 :

իբ Թագ · գ · 27 :

ԼԲ Թագ · ի · 10 :

է Հմր 9 , Ա-մակ · ի · 26 :

ի բ Թագ · ժթ · 31—38 :

լ բ Թագ · թ · 7 , 10 , ժթ · 28 :

հ բ Թագ · ժէ · 27 :

յ բ Թագ · ժգ · 5 :

ՀԲ Թագ · ժթ · 18 :

ճ բ Թագ · ժթ · 23 :

Եզ · ի · 7 , Ցոբ · թ · 28 :

յ Ցես Ն · Իր · 38 , խդ · 31 :

Գէ · ա · 21 , Գոր · բ · 29 , ժգ · 36 :

ԼԲ Թագ · է · 7 :

ա բ Թագ · է · 4 , ա Պն · իթ · 26 , 27 :

Գէթ երթալուն համար , մահուան կը դատապարտի :

1 Ու երբոր Դաւիթին մեռնելու օրերը մօտեցան , իր որդւոյն Սողոմոնին պատուէր տուաւ՝ ըսե-
2 լով . Ես ահա ես ամէն երկրին ճամբան կ'երթամ . իսկ դուն ուժով-
3 ցիր , ու * քաջասիրտ եղիր . Եւ քու Տէր Աստուծոյդ պահպանութիւնը պահէ , որ անոր ճամբաներուն մէջը քալես , ու անոր կանոնները , պատուիրանքները , դատաստանները ու վկայութիւնները պահես , ինչպէս որ Մովսէսին օրինաց գրքին մէջը գրուած է . որպէս զի ինչ որ ընես , և ուր որ երեսդ դարձընես , յաջողութիւն գտնես .
4 Որպէս զի Տէրը Ձիր խօսքը հաստատէ , որն որ ինծի համար խօսեցաւ՝ ըսելով . Եթէ որ քու որդիքդ իրենց ճամբաներուն զգուշութիւն ընեն , ու իմ առջեւս բոլոր սրտով , բոլոր հոգիով ու ճշմարտութեամբ քալեն , Իսրայէլի աթոռին վրայէն քեզմէ մարդ պակաս պիտի չըլլայ :
5 Եւ դուն դիտես ինչ որ Ջարուհայի որդին Յովաբը ինծի ըրաւ , ինչ որ Իսրայէլին երկու զօրավարներուն՝ Ներեան Աբենների ու Յեթերեան Ամեսայիին ըրաւ . քանզի զանոնք մեղուց , ու խաղաղութեան ատենը պատերազմի արիւն թափեց , և իր մէջքի գօտիին ու ոտքի կօշիկներուն վրայ պատե-
6 րազմի արիւն սրսկեց : Ուրեմն դուն ք քու իմաստութիւնդ ի գործ դնես , ու անոր ճերմակ մազերը խաղաղութեամբ գերեզմանը չիջե-
7 ցընես : Բայց Գաղաադացի Բերզելիին որդւոցը ողորմութիւն ընես , ու քու սեղանէդ ուտողներուն հետ ըլլան . քանզի երբոր քու եղբօրդ Աբիսողոմին երեսէն փախայ , ինծի այնպէս մօտեցան :
8 Եւ ահա Բաւուրիմացի Բենիամինեան Գերային որդին Սեմէին քու քովդ է . ու անիկայ՝ Մանայիմը գացած օրս՝ ինծի ծանր անէծք տուաւ . բայց Երբոր անիկայ ինձ դիմաւորելու համար Յորդանան իջաւ , Տէրոջմով երդուեցայ թէ ա-նոր՝ ու ըսի . Քեզ սրով չեմ մե-
9 ռնիր : Եւ հիմա զանիկայ անմեղ չսեպես . քանզի դուն խելացի մարդ ես , ու անոր ինչ ընելիքդ գիտես . և անոր ճերմակ մազերը յարիւնով գերեզմանը իջեցընես :
10 Ու Դաւիթ իր հայրերուն հետ քնացաւ , ու Դաւիթի քաղաքին
11 մէջ թագուեցաւ : Եւ Դաւիթին Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը՝ քառասուն տարի էր . Եօթը տարի Քեբրոնի մէջ թագա-

Ն·Ք·ՂԲ· 1015

ՀԱՄՍ·ԻԹ· 23 ։ Բ ՄՆ· ա·1 ։

1014

¤ա Թագ· ժԶ·4·5 ։

ԼԳԼ·ա·5 ։

¤ա ՄՆ·իբ· 9·10 ։ իբ· 5·6·7 ։ Ա-ռակ·իա· 30 ։ Դան· բ·21 ։

* ԵՔԲ· իմ երեսս մի՛ դարձներ ։ Սաղ·ճԼԲ· 10 ։

¤ԳԼ·ա·8· 4 ։

ՀԵԼ·Ի·12 ։

¤Ցես Սաղ· խե·9 ։

ԲԳԼ·ա·7 ։

ՅՀաւթ·ա· 17 ։

¤Բ Թագ·է· 11·13 ։ ա ՄՆ·իբ·10 ։

ւորութիւն ըրաւ , ու երսունուվրեք տարի Երուսաղեմի մէջ Թագաւորութիւն ըրաւ ։

12 Եւ Սողոմոն իր հօրը Դաւիթին աթոռը նստաւ . ու անոր թագաւորութիւնը շատ հաստատ եղաւ ։

13 Եւ Ադդիթի որդին Ադոնիան՝ Սողոմոնին մօրը Բերսաբէին գնաց . ու Բէր-Բէն անոր ըսաւ . Խաղաղութեամ՞ր եկար . ու անիկայ ըսաւ . Խաղաղութեամբ .

14 Եւ ըսաւ . Քեզի մէկ խօսք մը ու-

15 նիմ . ու անիկայ ըրաւ . Խօսէ՛ . Եւ անիկայ ըսաւ . Դուն գիտես որ թագաւորութիւնը Իմն էր , ու բոլոր Իսրայէլին երեսը իմ վրաս էր , որ թագաւոր ըլլամ . բայց թագաւորութիւնը դարձաւ , ու իմ եղբօրս եղաւ . քանզի անոր

16 Ցերոյմէ եղաւ ։ Եւ հիմա ես քեզմէ մէկ խնդիրք մը կը խնդրեմ . *ինծի չէ չըսես ։ Ու Բէր-Բէ

17 անոր ըսաւ . Խօսէ՛ ։ Եւ անիկայ ըսաւ . Կ'աղաչեմ , Սողոմոն թագաւորին ըսէ (քանզի անիկայ քեզի չէ չըսեր ,) որ Սունամացի

18 Աբիսակը ինծի կնիկ տայ ։ Ու Բերսաբէ ըսաւ . Աղէկ , ես քեզի համար թագաւորին կը խօսիմ ։

19 Եւ Բերսաբէ՝ Սողոմոն թագաւորին գնաց , որ Ադոնիային համար անոր հետը խօսի . ու թագաւորը զանիկայ դիմաւորելու համար ոտք ելաւ , ու Ւանոր երկրպագութիւն ըրաւ . ու երբոր իր աթոռը նըստաւ , թագաւորին մօրը համար ալ աթոռ դնել տուաւ . ¤ և անիկայ

20 անոր աջ կողմը նստաւ . Ու ըսաւ . Ես քեզմէ մէկ պզտիկ խնդիրք մը կը խնդրեմ . ինծի չէ չըսես ։ Եւ թագաւորը անոր ըսաւ . Խնդրէ՛ մայր իմ . քանզի քեզի չէ պիտի

21 չըսեմ ։ Ու անիկայ ըսաւ . Սունամացի Աբիսակը եղբօրդ Ադոնիա-

22 յին կնիկ տրուի ։ Եւ Սողոմոն թագաւորը պատասխան տուաւ , ու իր մօրը ըսաւ . Դուն ինչո՞ւ Ադոնիային համար Սունամացի Աբիսակը կը խնդրես . անոր համար թագաւորութիւնն ալ խնդրէ , (քանզի անիկայ իմ մեծ եղբայրս է ,) անոր՝ ու ՚Աբիաթար քահանային՝ և Շարուհեան Յովաբին

23 համար ։ Ու Սողոմոն թագաւորը Ցերոյմով երդում ըրաւ , ու ըսաւ . ՚Աստուած ինծի այսպէս՝ ու ասկէ աւելի ընէ , որ Ադոնիա ատ խօսքը իր կենացը

24 դէմ խօսեր է . Եւ հիմա ղիս հաստատողը , ու զիս իմ հօրս Դաւիթին աթոռը նստեցրնողը , և ¤իր բսածին պէս՝ ինծի տուն շինող Ցերը կենդանի է , որ Ադոնիան այսօր

25 պիտի մեռնի ։ Ու Սողոմոն Թագաւորը՝ Յովհադայի որդին Բանեան խրկեց . ու զարկաւ զանիկայ , որ մեռաւ ։

26 Եւ Թագաւորը Աբիաթար քահանային ըսաւ . †Անաթովթ՝ քու ագարակդ գնա . քանզի դուն մեռնելու արժանի ես , բայց այսօր քեզ չեմ մեռցներ . +որովհետև իմ հօրս Դաւիթին առջևը Տէր Եհովային տապանակը վերցուցիր . °ու իմ հօրս ամէն քաշած նեղութիւններ

27 րուն մասնակից եղար ։ Ու Սողոմոն՝ Աբիաթարը Տէրոջը քահանայութենէն հանեց . որ Սիլովի մէջ Հեղիին տանը համար ‡Տէրոջը բսած խօսքը կատարուի ։

28 Եւ աս լուրը մինչև Յովաբին հասաւ . (քանզի Յովաբ Թէպետև Աբիսողոմին հետևող չէր , բայց ¤Ադոնիային հետևող եղաւ .) ու ան առանը Յովաբ Տէրոջը խորանը փախաւ , ու Բսեղանին եղջիւրները

29 բռնեց ։ Եւ Սողոմոն Թագաւորին իմացուցին Թէ՝ Յովաբ Տէրոջը խորանը փախաւ , և ահա անիկայ սեղանին քովն է . ու Սողոմոն՝ Յովհադայի որդին Բանեան խրկեց , ու ըսաւ . Գնա՛ անիկայ զարկ ։

30 Եւ Բանեա Տէրոջը խորանը Յովբէն գնաց , ու անոր ըսաւ . Թագաւորը այսպէս կ'ըսէ . Դուրս ելլէր . ու անիկայ ըսաւ . Ո՛չ , ես հոս պիտի մեռնիմ . ու Բանեա՝ Թագաւորին պատմեց ու ըսաւ . Յովաբ այսպէս ըսաւ , ու ինծի

31 այսպէս պատասխան տուաւ ։ Եւ Թագաւորը անոր ըսաւ . †Անոր ըսածին պէս ըրէ՛ , ու զանիկայ մեռցուր , և զանիկայ Թաղէ՛ . ՚որ իմ վրայէս , ու իմ հօրս տանը վրայէն Յովաբին Թափած անմեղ արիւնը

32 վերցընես ։ Եւ Տէրը Բանոր Բ-ֆ-ի արիւնը անոր գլուխը դարձրնէ . որովհետև անիկայ առանց իմ հօրս Դաւիթին գիտութեանը՝ երկու իրմէ արդար Ւու աղէկ մարդիկներուն , Իսրայէլի սպարապետին՝ Ներներան Աբեններին , ու Յուդայի սպարապետին՝ ՀՅեթերեան Ամասային վրայ յարձակեցաւ , ու զա-

33 նոնք սրով մեռցուց ։ Ուստի անոնց արիւնը Յովաբին գլուխը ու անոր Բ սերունդին գլուխը դառնայ յաւիտեան . ²բայց Դաւիթին՝ ու անոր սերունդին՝ և անոր տանը՝ ու անոր աթոռին՝ Տէրոջը կողմանէ յաւիտեան խաղաղութիւն ըլլայ ։

34 Եւ Յովհադայի որդին Բանեան ելաւ , ու անոր վրայ յարձակեցաւ , ու զանիկայ մեռցուց . և անիկայ անապատին մէջ՝ իր տունը թա-

35 ղուեցաւ ։ Ու Թագաւորը անոր

Ն·Ք·ՂԲ· 1014

Ցես·իա· 18 ։

+ա Թագ·իգ· 6 ։ Բ Թագ· ժե·24,29 ։

°ա Թագ·իբ· 20 , 23 ։ Բ Թագ·ժե· 24 ։

‡ա Թագ·բ· 31—35 ։

¤ԳԼ·ա·7 ։

Բ ԳԼ·ա·50 ։

¤Թուա·լե· 33 ։ Բ Օր· ժԹ·13 ։ իա· 8·9 ։

Ի Դատ·Թ· 24,57 ։ Սաղ· է·16 ։

ՂՐ ՄՆ·իա· 13 ։

Ի Թագ·գ· 27 ։

ՃԲ Թագ·ի· 10 ։

Ի Թագ·գ· 29 ։

²Առակ·իե· 5 ։

տեղը զօրքերուն վրայ՝ Ցովիադային որդին Բանեան դրաւ. ու Թագաւորը Սադովկ քահանան Աբիաթարին տեղը դրաւ։

36 Եւ Թագաւորը Դ՚ըդ խրկեց, Սեմէին կանչեց, ու անոր ըսաւ. Քեզի Երուսաղեմի մէջ տուն մը շինէ, ու հոն նստէ, ու անկէ՝ ասդին

37 կամ անդին չելլես. Քանզի ալէկ գիտնաս որ, թէ որ ելլես, ու Կեդրոն հեղեղատը անցնես, նոյն օրը անպատճառ պիտի մեռնիս. Ես քու արիւնդ քու գլուխդ պիտի

38 ըլլայ։ Եւ Սեմէի՝ Թագաւորին ըսաւ. Ա՛ս խօսքդ բարի է. իմ Թագաւոր տէրս ինչպէս որ ըսաւ, քու ծառադ այնպէս պիտի ընէ։ Ուստի Սեմէի շատ օրեր Երուսաղեմի մէջ նստաւ։

1011

39 Ու իրեք տարիէն եղաւ Սեմէիին երկու ծառաները՝ Գեթի Թագաւորին՝ Մաաքայի որդւոյն Ենքուսին քովը փախան. ու Սեմէիին իմացուցին՝ ըսելով. Ահա քու ծա-

40 ռաներդ Գեթի մէջ են։ Եւ Սեմէի ելաւ, ու իր իշուն համեցը դրաւ, ու իր ծառաները փնտռելու համար Գեթ գնաց Ենքուսին քովը. և Սեմէի գնաց՝ ու իր ծա-

41 ռաները Գեթէն բերաւ։ Ու երբոր Սեմէիին Երուսաղեմէն Գեթ երթալը ու դառնալը Սողոմոնին

42 պատմեցին, Ան ատեներ Թագաւորը Դ՚ըդ խրկեց, ու Սեմէին կանչեց, ու անոր ըսաւ. Չէ՞ որ քեզի Տէրոջմով երդում ընել տուի, և քեզի վկայութիւն ըրի ու ըսի Թէ, Աղէկ գիտնաս որ երբ-ա-ա-ղէն ելած ու ասդին կամ անդին գացած օրդ՝ անպատճառ պիտի մեռնիս. ու դուն ինծի՝ Լսած խօս-

43 քըս բարի է՝ ըսիր. Ուրեմն ինչո՞ւ համար Տէրոջը երդումին ու քեզի տուած պատուէրիս չդազանդուս

44 Թիւն չըրիր։ Եւ Թագաւորը Սեմէիին ըսաւ. Դուն իմ հօրս Դաւիթին դէմ քու ըրած Յ բոլոր չարութիւնդ գիտես, *որուն քու սիրտդ Ա կը վկայէ՝. ուստի Տէրը Ադոնէ չարութիւնդ քու գլուխդ

45 պիտի դարձընէ. Բայց Սողոմոն Թագաւորը օրհնեալ, ու Դաւիթին աթոռը Տէրոջը առջեւը յաւիտեան հաստատ պիտի ըլլայ։

46 Եւ Թագաւորը Ցովիադային որդւոյն Բանեային հրաման տուաւ. ու անիկայ ելաւ, ու զարկաւ զանիկայ, որ մեռաւ։ Եւ Թագաւորութիւնը Սողոմոնին ձեռքին մէջ հաստատուեցաւ։

ԳԼՈՒԽ Գ

1 Սողոմոն՝ փարաւոնին աղջիկը իրեն կնիկ կ՚առնէ։ 2 Բարձր տեղերը զոհ մատուցա-

Նեղը սովորութիւն ըլլալով՝ Սողոմոն Գարաւոնի մէջ զոհեր կը մատուցանէ։ 5 Սողոմոն Գարաւոնի մէջ՝ Աստուծոյ առաջարկած բաներէն՝ իմաստութիւնը ընտրելուն համար, իմաստութիւն՝ հարստութիւն ու պատիւ կը առնայ։ 16 Սողոմոն երկու պոռնիկ կնիկներուն դատաստանը իմաստութեամբ կըտրելուն համար՝ խիստ անուանի կ՚ըլլայ։

Ն · Ք · ԶԴ · 1014

1 Եւ Սողոմոն՝ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին հետ խնամութիւն ըրաւ, ու Փարաւոնին աղջիկը առաւ, ու զանիկայ Դաւիթին քաղաքը բերաւ, մինչև որ իր տունը ու Տէրոջը տունը, ու Երուսաղէմին շրջակայ պարիսպը շի-

2 նեց լմընցուց։ Ասկայն ժողովուրդը բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէր. քանզի մինչև անօրերը Տէրոջը անուանը տուն շինուած չէր։

3 Եւ Սողոմոն Տէրը կը սիրէր, Հու իր հօրը Դաւիթին կանոնները կը քալէր. միայն Թէ բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցա-

4 նէր ու խունկ կը ծխէր։ Եւ Թագաւորը Գաբաւոն գնաց, որ հոն զոհ մատուցանէ. Քանզի մեծ բարձր տեղը անիկայ էր. Սողոմոն այն սեղանին վրայ հազար ողջակէզ

5 զոհեց։ Ո՚ Գաբաւոնի մէջ Տէրը Սողոմոնին երեւցաւ Գիշերուան երազով. և Աստուած ըսաւ. Խնդրէ մի՛ խնդրէ, որ քեզի տամ։ Ու

6 Սողոմոն ըսաւ. Դուն քու ծառայիդ իմ հօրս Դաւիթին մեծ ողորմութիւն ըրիր, ինչպէս որ անիկայ Քու առջեւդ ճշմարտութեամբ, արդարութեամբ և ուղիղ սրտով քեզի հետ քալեց, ու անոր՝ այս մեծ ողորմութիւնը պահեցիր, ու իր աթոռը նստող որդի մը տուիր անոր, ինչպէս որ այսօր Ի՚Երևաց։

7 Եւ հիմա ով Տէր Աստուած իմ, դուն քու ծառադ՝ իմ հօրս Դաւիթին տեղը Թագաւոր ըրիր. Հապայց ես պզտիկ տղայ մըն եմ. Ես

8 Ելլել ու մտնել չեմ գիտեր. Ու քու ծառադ քու Ընտրած ժողովուրդիդ մէջն է, որ անհիկայ շատ՝ Անթիւ ու անհամար ժողո-

9 վուրդ մըն է։ Ո՚ Ուստի քու ծառայիդ Իմաստուն սիրտ տուր, Որ քու ժողովուրդդ դատէ, ու Բարին ու չարը որոշէ. քանզի աս քու մեծ ժողովուրդդ ով կրնայ

10 դատել։ Եւ աս խօսքը՝ Յոյնեան Սողոմոնին աս բանը խնդրելը՝ Տէրոջը այքերուն հաճոյ եղաւ։

11 Ու Աստուած անոր ըսաւ. Որովհետև աս բանը խնդրեցիր, ու Քեզի շատ օրեր չխնդրեցիր, ու քեզի Հարստութիւն չխնդրեցիր, ու քու Թշնամիներուդ հոգին չխնդրեցիր, հապա իրաւունքը

Ն · Ք · ԶԴ · 1014

– Գլ. է · 8։ Թ · 24։

Բ Թագ. ե · 7։

Գլ. է · 1։

Գլ. գ ·

Գլ. Թ · 15, 19։

Ղ Ղ. ժէ · 3, 4, 5։ Բ Օր. ժ · 2, 4 · 5։ Գլ. իբ · 44։

Ե Օր. գ · 5։ ա · 16, 20։ Սաղ. լա · 23։ Հռով. բ · 28։ Ա Կոր. բ · 3։

Ջ Ելք 6 · 14։ Բ Մն. ա · 3։

Յ Մն. ժգ · 39։ Բ Մն. ա · 3։

Ի Գլ. Թ · 2։ Բ Մն. ա · 7։

Ղ Թես. ժբ · 6։ Մատ. ա · 20։ բ · 13, 19։

Ե Մն. ա · 8, ՃԼ։

Ծ Գլ. բ · 4։ Թ · 4։ Դ Թագ. ի · 3։ Սաղ. ժե · 2։

Ի Գլ. ա · 48։

Համ. ԽԹ · 1։

Ի Թես. իե · 17։

Ղ Օր. է · 6։

Ժ Ես. ժգ · 16։ ժե · 5։

Բ Մն. ա · 10։ Առակ. բ · 3—9։ Ցակ. ա · 5։

Ե Եբր. լ · 4։ Յ Սաղ. հր · 1, 2։

Ն Եբր. ե · 14։

Ը Ցակ. գ · 3։

Յ Բ Թագ. ժգ · 5։

*Եբր. որն որ քու սիրտդ գիտէ։

Ա Սաղ. է · 16։ Եզեկ. ժէ · 19։

Ե Առակ. իե · 5։

Ք Հռ 12։ Բ Մն. ա · 1։

Ն · ք · ղԲ · 1014

* ԵԲր · լսե · ա Ցօ՛ · ե · 14 , 15 ։ Ղ Գ՛ · գ · 29 , 30 , 31 ։ ե · 12 ։ ժ · 24 ։ ժող · ա · 16 ։ Ղ Մաա · գ · 33 ։ Եփե · գ · 20 ։ Ղ Գ՛ · գ · 21 , 24 ։ ժ · 23 , 25 , ՃՃ ։ Ա-ռակ · գ · 16 ։ Գ՛ · ժե · 5 ։ Սաղ · զա · 16 ։ Առակ · գ · 2 ։ Ղ Ես · խա · 7 ։ Ես · խ · 20 ։ Գ՛ · ը · 65 ։ Եսթ · ա · 3 ։ Դան. ե · 1 ։ Մար · գ · 21 ։ ը Թես · իե · 2 ։

* իմանալու իմաստութիւն խնդրե-
12 ցիր · "Ահա քու խօսքիդ պէս
ըրի · Ահա քեզի իմաստուն ու
հանճարեղ սիրտ տուի , այնպէս
որ՝ քեզմէ առաջ քեզի պէս մէկը
եղած չէ , ու քեզմէ ետքն ալ քու
13 նմանդ պիտի չելլէ ։ Նաև զքու
չխնդրածդ ալ քեզի տուի , թէ
Հարստութիւն և թէ փառք ·
այնպէս որ՝ քու Թագաւորաց մէջ քեզի
14 պէս մէկը չգտնուի ։ Եւ թէ որ
իմ ճամբաներուս մէջը քալես՝ իմ
հրամաններս ու պատուիրանքներս
պահելով , "ինչպէս որ քու Հայրդ
Դաւիթ քալեց , ան ատենը "քու
15 օրերդ պիտի շատցընեմ ։ Ու Սո-
ղոմոն Հարթընցաւ , և ահա երազ
էր · ու Երուսաղէմ գնաց , ու Ցէ-
րոջը ուխտին տապանակին առջևը
կայնեցաւ , և ողջակէզներ մատուց ,
ու խաղաղութեան զոհեր ըրաւ , ու
"իր բոլոր ծառաներուն կոչունք
ըրաւ ։
16 Ան ատենը երկու պոռնիկ կնիկ-
ներ Թագաւորին եկան , ու Հանոր
17 առջևը կայնեցան ։ Եւ կնիկներէն
մէկը ըսաւ · Ո՛վ տէր իմ , "ըղջ-
ինծի · ես ու աս կնիկը մէկ տան մը
մէջ կը բնակինք · ու Նոյն տանը
մէջ ասոր քովը ԹՂՅ Հը ծնայ ։
18 Եւ իմ ծնանելուս երրորդ օրը՝ աս
կնիկն ալ ԹՂՅ Հը ծնաւ · ու մենք
մէկտեղ էինք · տանը մէջ մեր Հե-
տը օտար մարդ չկար · Հապա տա-
նը մէջ մենք երկու-քնիս ՓՆԻ ԷինՀ ։
19 Եւ աս կնկանը տղան գիշերով մե-
ռաւ · քանզի ասիկայ անոր վրայ
20 պառկեցաւ · Ու կէս գիշերուն ե-
լաւ , և քու աղախինիդ քնացած
առնը՝ իմ տղաս քովէս առաւ ,
ու զանիկայ իր ծոցը պառկեցուց ,
ու իր մեռած տղան իմ ծոցս պառ-
21 կեցուց ։ Ու երբոր առաւօտուն ե-
լայ , որ տղուս ծիծ տամ , ահա ա-
նիկայ մեռած էր · ու առաւօտուն
մտադրութեամբ անոր նայեցայ , և
ահա անիկայ իմ ծնած տղաս չէր ։
22 Իսկ միւս կնիկը բսաւ · Ձէ · Հա-
պա ողջ եղողը իմ տղաս է , ու մե-
ռածը քու տղադ է ։ Եւ ասիկայ
բսաւ · Ձէ · Հապա մեռածը քու
տղադ է , ու ողջ եղողը իմ տղաս
է · ու Թագաւորին առջևը ԽՕՍԵ-
23 կը խօսէին ։ Ան ատենը Թագա-
ւորը բսաւ · Ասիկայ կ'ըսէ՝ Իմ
տղաս աս ողջ եղողն է , ու մեռա-
ծը քու տղադ է · ու անիկայ կ'ը-
սէ՝ Ձէ , Հապա մեռածը քու տղադ
24 է , ու ողջ եղողը իմ տղաս է · Եւ
Թագաւորը բսաւ · Ինծի մէկ սուր
մը բերէք · ու Թագաւորին առջևը
25 սուր մը բերին ։ Եւ Թագաւորը
բսաւ · Ողջ եղողը տղան կտրեցէք ,
երկու կտոր ընէք · ու կէսը մէկուն ,
26 ու կէսն ալ մէկալին տուէք ։ Ան
ատենը ողջ տղուն մայրը եղող
կնիկը՝ Թագաւորին պատասխան
տուաւ , ու իր տղուն վրայ ողջոյ-
նքը գալարելուն Համար , ասանկ ըսաւ ·
Ո՛վ տէր իմ , "ողջոյն ինծի · ողջ
տղան անոր տուէք , ու զանիկայ
մի՛ մեռցընէք ։ Բայց միւսը ըսաւ ·
Ոչ ինծի ըլլայ , ոչ քեզի · ԸՆԿՆՈՂ-
27 ՁեղքեցէՔ ։ Եւ Թագաւորը պա-
տասխան տուաւ , ու ըսաւ · Ողջ
տղան աս կնկանը տուէք , ու չըլ-
լայ որ զանիկայ մեռցընէք , ԻՆՔ
28 անոր մայրը ասիկայ է ։ Եւ բոլոր
Իսրայէլը Թագաւորին կտրած դա-
տաստանը լսելով՝ Թագաւորէն
վախցան · քանզի տեսան որ անոր
վրայ "Աստուծոյ իմաստութիւնը
կայ՝ դատաստան ընելու Համար ։

Գ Լ · Դ

1 Սողոմոնին իշխանները · 7 Անոր տասներկու պաշտօնատարները՝ որոնք իրեն ռճիկ կու տային ։ 20 , 24 Սողոմոնին Թագաւորութեանը խաղաղութիւնը ու ընդարձակութիւնը ։ 22 Անոր ամէն օրուան ռճիկը ։ 26 Անոր ախոռները ։ 29 անոր իմաստութիւնը ։

1 Ու Սողոմոն Թագաւորը բոլոր
Իսրայէլի վրայ Թագաւոր էր ։
2 Ու անոր իշխանները ասոնք էին ·
Սադովկի որդին Ազարիան քահա-
3 նայ էր · †Սիսային որդիքը Ելիքո-
րէփը ու Աքիան ատենադպիրներ
էին · և "Աքիղուդի որդին Յովսա-
4 փատը յիշատակաց դպիր էր · Ու
ՖՅովիադայի որդին Բանեան զօր-
քերուն վրայ էր · և Սադովկը ու
5 ‡Աբիաթարը քահանաներ էին · Ու
Նաթանի որդին Ազարիան Տ-
ՂՐՅ գործակալներուն վրայ էր ·
ու Նաթանի որդին Զաբուդը ‡նա-
խարար ու †Թագաւորին բարե-
6 կամն էր · Ու Աքիսարը տանը հը-
րամանատարն էր · ու Աբդայի որ-
դին Ադոնիրամ հարկերուն վրայ
էր ։
7 Եւ Սողոմոն բոլոր Իսրայէլի վրայ
տասներկու գործակալներ ունէր ,
ու անոնք՝ Թագաւորը ու անոր
տունը կը կերակրէին · "կերակ-
րելը ամէն մէկուն՝ տարին մէկ ամիս
8 կ'իյնար ։ Եւ անոնց անուններ
ասոնք են · Եփրեմի լեռան մէջ՝
9 ‖Բենհուրը · Մաքասի , Սաղաբինի ,
Բեթսամիսի , ու Ելոն Բեթհանա-
10 նի մէջ՝ §Բենդակարը · Արաբովթի
մէջ՝ ‡Բենհեսեդը , որուն Նը Սո-
քոյէբէր Սոքովը ու բոլոր Ողերի եր-
11 կիրը · Բոլոր Դովրի գաւառին մէջ՝
††Բենաբինադաբը · Սողոմոնին աղ-
ջիկը Տափաթը՝ ասոր կնիկն էր ·
12 Թանաքի ու Մակեդդովի մէջ , ու

Ն · ք · ղԲ · 1014

ե Կ՛՝ Սուսային , տես ա Մն · ժբ · 16 ։
– ր Թագ · բ · 16 ։ ի · 24 ։
Բ ԳԼ · բ · 35 ։
‡ Տես գԼ · բ · 27 ։
† ՀՃր 7 ։
‡ ԵՔր · քահանայ · ր Թագ · ը · 18 ։ ի · 26 ։
† ր Թագ · ժե · 37 ։ ժգ · 16 ։ ա Մն · իե · 33 ։
Ղ ԳԼ · ե · 14 ։

‖ Յ՛՝ Ովսի որդին ։
§ Յ՛՝ Դեկոբի որդին ։
‡ Յ՛՝ Հեսեդի որդին ։
†† Յ՛՝ Աբինադաբի որդին ։

ե Ծն · խգ · 30 ։ Ես · խթ · 15 ։ Երեմ. լա · 20 ։ Ովս · ժա · 8 ։

– Հճր 9 , 11 , 12 ։

Ցեզրայելին տակը՝ Սարթանին քովը եղող բոլոր Բեթսանին մէջ՝ ու Բեթսանէն մինչև Ըրէլմաուլա , — մինչև Եկմամին անդիի կողմը , Ա-
13 քիղուդի որդին Բասանան . Ռամովդ գաղաադի մէջ՝ * Բէնդաբերը . Գաղաադի մէջ եղող Մանասեան Յայիրին գիւղաքաղաքները , ու Բասանի մէջ եղող Արգովբի նահանգը , վաթսուն մեծ պարսպաւոր ու պղնձանիգ քաղաքները անոր ։
14 Վէր-Բէրէն ։ Մանայիմի մէջ՝ Ադ-
15 դովի որդին Ախինադաբը . Նեփթաղիմի մէջ՝ Ախիմասը . ասիկայ ալ Սողոմոնին աղջիկը Բասեմաթը
16 կնիկ առաւ . Ասերի ու Բաալոթի մէջ՝ Քուսիի որդին Բասանան .
17 Իսաքարի մէջ՝ Փարուայի որդին
18 Յովսափատը . Բենիամինի մէջ՝
19 Էլայի որդին Սեմէին . Գաղաադի երկիրը՝ ու Ամորհացւոց Սեհոն թագաւորին՝ ու Բասանի Ովգ թագաւորին Երկիրը՝ Ուրիի որդին Գաբերը . ու ան երկրին մէջ փոյն մէկ դործակալ մը կար ։
20 Ցուդան ու Իսրայէլը շատ էին , ծովուն եզերքը եղող աւազին չափ շատ էին . կ՚ուտէին , կը խմէին , ու ուրախ էին ։
21 Թիւն կ՚ընէին ։ Եւ Սողոմոն Եփրատ գետէն մինչև Փղշտացւոց երկիրը , ու մինչև Եգիպտոսի սահմանը , Բոլոր թագաւորութիւններուն վրայ կ՚իշխէր . և անոր Բնծաներ կը բերէին , ու Սողոմոնին ծառայութիւն կ՚ընէին՝ անոր կեանցը բոլոր օրերուն մէջ ։
22 Եւ Սողոմոնին մէկ օրուան ռոճիկը — էր . երսուն քոռ նաշխ , ու
23 վաթսուն քոռ ալիւր , Ցասը գէր արջառ , ու քսան արօտական արջառ , ու Հարիւր ոչխար . բայ Ի եղջերուներէն , այծեամներէն , Վիթերէն ու գիրցուցած Թռչուն-
24 ներէն ։ Քանզի անիկայ Գետին բոլոր ասդիի կողմին՝ Թափսայէն մինչև Գազա՝ Գետին ասդիի կողմը եղող Բոլոր թագաւորներուն վրայ կ՚իշխէր . ու Ի իր բոլորտիքը եղողներուն հետ խաղաղութիւն ունէր ։
25 Եւ Սողոմոնին բոլոր օրերուն մէջ՝ Ցուդան ու Իսրայէլը՝ Դանէն մինչև Բերսաբէէ , Ը իւրաքանչիւր մարդ իր որթին տակը ու իր թզենիին տակը ապահովութեամբ Ժ կը նստէր ։
26 Եւ Սողոմոն իր Ի կառքի ձիերուն համար՝ Չորսուն հազար ախոռ ունէր , ու տասներկու հազար
27 ձիաւոր ։ Եւ Ն ան գործակալները՝ ամէն մէկը իր ամսուն մէջ՝ Սողոմոն թագաւորը , ու Սողոմոն թագաւորին սեղանը բոլոր մօտեցող-
ները կը կերակրէին՝ մէկ բան մը
28 պակաս չընելով . Նաև ձիերուն ու Երիվարներուն համար՝ անոնց եղած տեղը՝ ամէն մէկը իր վրայ դրուած հարկին չափովը գարի ու յարդ կը բերէին ։
29 Եւ Աստուած Սողոմոնին իմաստութիւն ու խիստ շատ հանճար , և սրտի լայնութիւն տուաւ , ծովուն եզերքը եղող աւազին չափ ։
30 Ու Սողոմոնին իմաստութիւնը՝ բոլոր Արեւելցիներուն իմաստութենէն , ու Եգիպտացւոց բոլոր իմաստութենէն աւելի էր ։ Եւ
31 անիկայ Եամէն մարդոցմէ իմաստուն էր . Եզրահացի Եթմանէն , ու Մաուղի որդւոցմէն Եմանէն , Քալքօլէն ու Դարդայէն իմաստուն էր . ու բոլոր շրջակայ ազգերուն
32 մէջ անուանի եղաւ ։ Եւ Հանիկայ իրեք հազար առակ խօսեցաւ , ու Անոր երգերը հազար
33 ու հինգ էին ։ Եւ անիկայ ծառերուն վրայ խօսեցաւ , Լիբանանի եղևինէն՝ մինչև պատի վրայ բուսնող զոպան . ու նաև անասնոց վրայ , թռչուններու վրայ , սողուններու վրայ , ու ձուկերու
34 վրայ խօսեցաւ ։ Եւ Ամէն ժողովուրդներէն , — անոր իմաստութեանը համբաւ լսող երկրիս բոլոր թագաւորներէն՝ Սողոմոնին իմաստութիւնը մտիկ ընելու կու գային ։

ԳԼ · Ե

1 Քիրամ շնորհաւորութեան համար՝ պատգամաւորներ խրկելով Սողոմոնին , կ՚իմանայ որ անիկայ Տէրոջը տաճար չինելու է · 6 և Սողոմոն կը խնդրէ որ աս շինութեանս հարկաւոր բլլալու փայտերը՝ Քիրամ հոգայ ։ 7 Քիրամ գնատուած կը փառաւորէ Սողոմոնին համար , և անկէ իր ընտանեացը համար կերակուր խնդրելով , ինքն ալ անոր փայտեր կը խրկէ ։ 13 Սողոմոնին գործավարներուն ու բանւորներուն թիւը ։

1 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը իր ծառաները Սողոմոնին խրկեց . քանզի լսեր էր որ անոր Հօրը տեղը զանիկայ թագաւոր օծեր են . Վասն զի Քիրամ միշտ Դաւիթը
2 կը սիրէր ։ Սողոմոն ալ Քիրամին
3 հրէշտ խրկեց , ու ըսաւ . Դուն դիտես որ իմ Հայրս Դաւիթ չկրցաւ իր Տէր Աստուծոյն անուանը տուն շինել , Ան պատերազմներուն պատճառաւ՝ որոնք անոր բոլորտիքը պատեր էին , մինչև որ Տէրը զանոնք անոր ոտքին թաթերուն տա-
4 կը դրաւ ։ Հայդ հիմա իմ Տէր Աստուածս Եամէն կողմանէ ինծի հանդրստութիւն տուաւ . Թշնամի չկայ , ու ձախորդ պատահար մը չկայ ։
5 Եւ ահա ես կ՚ըսեմ որ իմ Տէր Աստուծոյս անուանը տուն մը շինեմ ,

Ն · Ք · ԳԸ · 1014

Ե Ելթ · Բ · 14 ։ Մխք · ա · 13 ։

* Յր · Գաբաւնի որդին ։ Ի Թագ · Լ · 41 ։ Ը Բ Օր · Գ · 4 ։

Ա ԳԼ · Գ · 12 ։

Ե Ես · Գ · 12 ։ Ղ Ծն · իե · 6 ։ Ղ Ցես Գօր · է · 22 ։ Է ԳԼ · Գ · 12 ։ — ա Մն · Ժե · 19 ։ Սաղ · ձթ · ին վերնագիրը ։ Ը Ցես ա Մն · Բ · 6 ։ գ · 33 ։ Ժե · 19 ։ Սաղ · ձբ · ին վերնագիրը ։ Թ Ա ած · ա · 1 ։ Ծագ · Ժբ · 9 ։ Ժ Երգ · ա · 1 ։

Ի Բ Օր · Գ · 8 ։

Ա Ծն · իր · 17 ։ Գէ · Գ · 8 ։ Ա ած · Ժգ · 28 ։

Բ Սաղ · հր · 3 · 7 ։ Մխք · գ · 4 ։

Գ Ծն · Ժե · 18 ։ Ցես · ա · 4 ։ Ե Ր Մն · Թ · 26 ։ Սաղ · հր · 8 ։

Զ Սաղ · կբ · 29 ։ հր · 10 · 11 ։

Ը Գ — Ժամանակագրութեան համար՝ տե՛ս Ծննդոց ԺԱ · 10 ։ Ել · Ժ · 40 ։ Ա Մն · զ · 1 ։ Ա Ես · Ժ · 14 ։ Ա Մկ · զ · 1 ։ Ա Ես · Ա · 1 ։ Ա Մկ · զ · 1 ։ Ա Մն

Ն · ք · ղԿ · 1014

Ինչպէս որ Տէրը իմ Հօրս Դաւիթին հետ խօսեցաւ՝ ըսելով . Քու որդիդ՝ որ քու տեղդ քու աթոռիդ վրայ պիտի նստեցրնեմ՝ անիկայ իմ անունս պիտի շինէ ։ Ու հիմա հրաման ըրէ, որ ինծի համար Լիբանանէն եղևիններ կտրեն . ու իմ ծառաներս քու ծառաներուդ հետ ըլլան . և քու ծառաներուդ վարձքը քու ամէն ըսածիդ պէս՝ քեզի կու տամ . քանզի դուն գիտես որ՝ մեր մէջը Սիդոնացւոց պէս փայտ կտրող վարպետ մարդ չկայ ։

Եր Թագ · է · 13 ։ ա Մն · ժէ · 12 ։ իբ · 10 ։

Ու երբոր Քիրամ՝ Սողոմոնին խօսքերը լսեց, շատ ուրախացաւ, ու ըսաւ . Այս մեծ ժողովուրդին վրայ Դաւիթին իմաստուն որդի տուող Տէրը այսօր օրհնեալ ըլլայ ։

Եր Մն · բ · 8 ։ 10 ։

Եւ Քիրամ՝ Սողոմոնին հրէշտ խրկեց՝ ըսելով . Ինծի խրկած խոսքդ լսեցի . ես եղևնափայտի ու մայրփայտի համար քու ամէն կամքդ պիտի կատարեմ ։ Իմ ծառաներս Լիբանանէն ծովը իջեցրնեն . ու ես զանոնք լաստեր շինելով, մինչև ինծի ցուցուցած տեղդ՝ ծովէն տանիմ, և հոն զանոնք քակեմ, ու դուն վերցրնես . դուն ալ իմ տանս պաշար տալով՝ իմ կամքս կատարես ։

Եր Մն · բ · 16 ։

Տես Եզր · գ · 7 ։ Եզեկ · իէ · 17 ։ Գոր · ժբ · 20 ։

Եւ Քիրամ՝ Սողոմոնին ուզածին չափ եղևնափայտ ու մայրփայտ

Տես բ Մն · բ · 10 ։

փայտ կու տար ։ Ու Սողոմոն՝ Քիրամին տանը համար քսան հազար քոռ ցորեն, ու երկու հարիւր մար մաքուր եղ՝ պաշար կու տար ։ Սողոմոն Քիրամին՝ տարուէ տարի

*Երբ · քսան քոռ ձէ · ծուած եղ

12 առանկ կու տար ։ Եւ Տէրը Սողոմոնին իմաստութիւն տուաւ, Ինչպէս որ անոր խոստացեր էր . ու Քիրամին ու Սողոմոնին մէջտեղը խաղաղութիւն կար . ու երկուքին դաշնակցութիւն ըրին ։

Ղկ · է · 12 ։

Եւ Սողոմոն թագաւորը բոլոր Իսրայէլէն †մարդ ժողվեց . ու ժողվածը երսուն հազար մարդ եղաւ ։

†Կ՚ մարդաշարակ

Եւ զանոնք յաջորդաբար՝ ամիսը տասնական հազար հոգի Լիբանան կը խրկէր, ուր մէկ ամիս Լիբանանը կը կենային, ու երկու ամիս իրենց տունը . ու Ադոնիրամ՝

Թկ · է · 6 ։

մարդահարկին վրայ էր ։ Եւ Սողոմոն եօթանասուն հազար բեռնակիր, ու լերը ութսուն հազար

Թկ · ի · 21 ։ Բ Մն · բ · 17 , 18 ։

փայտ կտրող ունէր, բաց՝ ի Սողոմոնին իրեք հազար իրեք հարիւր գլխաւոր գործակալներէն՝ որոնք գործը բանող ժողովուրդին վրայ

Կ՚իշխէին ։ Եւ թագաւորը հրամայեց որ մեծ ու պատուական քարեր կտրեն, որ տանը հիմը հատ-

Ա Մն · իբ · 2 ։

շուած քարերով դնեն ։ Ու Սողոմոնին վարպետները, ու Քիրամին վարպետները, և Գեբալացիք՝

Եզեկ · իէ · 9 ։

փայտերը ու քարերը տաշեցին ու պատրաստեցին՝ տանը շինութեանը համար ։

Ն · ք · ղԿ · 1014

ԳԼ · Զ

1 Սողոմոնի տաճարին շինութիւնը · 5 անոր սեղնեակները ։ 11 Աստուծոյ խոստմունքը անոր վրայով ։ 15 Տաճարին ձեղունը ու զարդերը · 23 քերովբէները · 31 դռները · 36 գաւիթը ։ 37 Տաճարին շինութեանը ժամանակը ։

1 Եւ Իսրայէլի որդւոցը Եգիպտոսի երկրէն ելլելուն չորս հարիւր ութսուներորդ տարին, — Սողոմոնին Իսրայէլի վրայ թագաւորելուն չորրորդ տարին, Զիւս ամսուն՝ այսինքն երկրորդ ամսուն մէջ Տէրոջը տունը †շինելու սկսաւ՝ ։

1012

Բ Մն · գ · 1 , 2 ։

Գոր · է · 47 ։ † Եբր · կը շինէր ։

2 Եւ Սողոմոն թագաւորին Տէրոջը համար շինած †տանը երկայնութիւնը վաթսուն կանգուն, լայնութիւնը քսան, ու բարձրութիւնը

† Տես Եզեկ · խա · 1 , ճ ։

3 երսուն կանգուն էր ։ Եւ Տանը տաճարին առջևի սրահը քսան կանգուն երկայնութիւն ունէր, որ տանը լայնութեանը չափ էր . և անոր լայնութիւնը տանը առջևէն՝ տասը

4 կանգուն էր ։ Եւ տանը ‖վանդակ

‖Կ՚՝ Ներսէն լայն դուրսէն նեղ · տես Եզեկ · խ · 16 ։ խա · 16 ։

5 կապատ պատուհաններ շինեց ։ Ու տանը պատին բոլորտիքը՝ տանը պատին կցուած †դստիկոններ շինեց, թէ տաճարին և թէ դաբիրին բոլորտիքը . և յօդեր շուրջանակի

† Տես Եզեկ · խա · 6 ։

6 սենեակներ շինեց ։ Վարի կարգին լայնութիւնը հինգ կանգուն, ու միջին վեց կանգուն, ու երրորդին լայնութիւնը եօթը կանգուն էր . քանզի դուրսէն տանը բոլորտիքը միջոցներ ձգեց Իսրայէլը հետզհետէ՝

Բ Ճր 16 , 19 , 20 , 21 , 31 ։

7 որ տանը պատին մէջը չմտնեն ։ Ու երբոր տունը կը շինուէր, քարահանքին մէջ պատրաստուած քարերով կը շինուէր . այնպէս որ անոր շինուած ատեն՝ մուրճի, կամ տապարի, և երկաթէ գործիքի մը ձայն չլսուեցաւ տանը մէջ ։

Տես բՕր · իէ · 5 , 6 ։ Գկ · ե · 18 ։

8 Միջին կարգին դուռը՝ տանը §աջ կողմն էր . ու շրջանակաւոր սանդուխներով միջին կարգը, ու միջին կարգէն երրորդ կարգը կ՚ելլէին ։

§ Յ՚՝ Հարաւային ։

9 Եւ տունը շինեց, ու զանիկայ լմընցուց . ու տանը ձեղունը եղևնափայտի տախտակներով դրուագա-

Բ Ճր 14 · 38 ։ 1005

10 զարդ շինեց ։ Եւ բոլոր տանը վրայ ‖հինգ կանգուն բարձրութեամբ շինեց . ու եղևնափայտերով տանը կցուած էր ։

‖Կ՚՝ շրջանակը

11 Եւ Տէրոջը խօսքը Սողոմոնին և-

12 ըսաւ՝ ըսելով . Ինծի որ դուն սա տունը կը շինես, եթէ որ իմ կանոններովս քալես, ու իմ դատաստաններս՝ ի գործ դնես, և իմ բոլոր պատուիրաններս պահես՝ ա-

Ղկ · բ · 4 , Թ · 4 ։

Ն·Ք·ԶԴ· 1005

Ընթաց·է· 13 ։ ա ՄՆ իր · 10 ։ ՚Ելս·իե·8 ։ Ղև · իգ · 11 ։ բ Կոր · գ·16 ։ Ցայս· իա · 3 ։ Ի ԲՕր·լա·6 ։ Ա Հմր 38 ։ Ի Հմր 16 ։

նոնց մէջը քալելով , ան աւուրը քու վրադ պիտի հաստատեմ ան խօսքը՝ ինչ որ քու հօրդ Դաւիթին խոսեր
13 եմ . Ու ՚Իսրայէլի որդւոցը մէջ պիտի բնակիմ , ու իմ ժողովուրդս Իսրայէլը չպիտի լքեմ ։
14 Ա Եւ Սողոմոն տունը շինեց , ու
15 գանիկայ լմընցուց ։ Ու տանը պատերը անոր ներսի դիէն՝ Իյատակէն մինչև պատերուն վերի ծայրը , եղևնափայտի տախտակներով շինեց . ու տանը յատակը մայր փայտի տախտակներով պատեց ։ Եւ
16 տանը եւեւի կողմէն քսան կանգուն՝ յատակէն մինչև պատին ծայրը , եղևնափայտի տախտակներով շինեց . ու ան ներսի միջոցը դարիրին՝ սրբութեանց սրբութիւն
17 նին համար շինեց ։ Իսյց տունը՝ այսինքն առջևի տաճարը քառասուն
18 կանգուն էր ։ Եւ տանը մէջ եղող եղևնափայտերուն վրայ՝ գնդակներ ու բացուած ծաղիկներ փորագրուած էր . ամէնը եղևնափայտ էր , ամենևին քար մը չէր ե-
19 րևնար ։ Եւ դարիրը ներքին տանը մէջ պատրաստեց , որ հոն Ցերոջը
20 ուխտին տապանակը դնէ ։ Ու դարիրին երեսը քսան կանգուն էր , և անոր լայնութիւնը քսան կանգուն , ու բարձրութիւնը քսան կանգուն էր . և զանիկայ մաքուր ոսկիով պատեց . եղևնա-
21 փայտէ սեղանն ալ պատեց ։ Ուստի Սողոմոն տանը ներսի կողմը մաքուր ոսկիով պատեց . ու դարիրին առջևը՝ ոսկի շղթաներով ՚Ի վր-փոր մը անցուց , և զանիկայ ոսկիով
22 պատեց ։ Ու բոլոր տունը ոսկիով պատեց առանց տեղ մը ձգելու . և դարիրին քովի բոլոր սեղանն ալ ոսկիով պատեց ։
23 Եւ Դարիրին մէջը՝ *նոճիէ հերկու քերովբէները շինեց . անոնց երկայնութիւնը տասը կանգուն էր ։
24 Եւ քերովբէին մէկ թևը հինգ կանգուն , ու քերովբէին մէկալ թևը հինգ կանգուն էր . ՚Ի թևին ծայրէն մինչև ՚Ի-Լ թևին ծայրը տասը
25 կանգուն էր ։ Ու մէկալ քերովբէին ալ՝ տասը կանգուն էր . երկու քերովբէներուն չափ ու ձևը
26 մէկ էր ։ Մէկ քերովբէին բարձրութիւնը տասը կանգուն էր , ու մէկալ քերովբէինն ալ նոյնչափ էր ։
27 Ու քերովբէները ներքին տանը մէջ դրաւ . ու Ե քերովբէները իրենց թևերը կ՚երկրնցնէին . մէկուն թևը մէկ պատին կը դպչէր , ու մէկալ քերովբէին թևը մէկալ պատին կը դպչէր . և անոնց ՚Ի-Լ թևերը տանը մէջտեղը թև թևի կը
28 դպչէին ։ Ու քերովբէները ոսկիով պատեց ։
29 Եւ տանը բոլոր պատերուն վրայ՝ քերովբէներ , արմաւենիներ ու բացուած ծաղիկներ քանդակաձև փորագրեց , թէ՛ ներսի կողմը և թէ
30 դուրսի կողմը ։ Ու տանը ներսի ու դուրսի յատակը ոսկիով պատեց ։
31 Եւ դարիրին դռները նոճիէ փեղկեր շինեց , որոնց դռնդիքներով մկուեղ դռներն հինգերորդ մասն
32 էին ։ Ու նոճիէ շինուած երկու փեղկերուն վրայ՝ քերովբէներ , արմաւենիներ ու բացուած ծաղիկներ փորագրեց , և զանոնք ոսկիով պատեց , քերովբէներուն ու արմաւենիներուն վրայ ալ ոսկին տարածելով ։
33 Նոյնպէս ալ տաճարին դռները քրաւ . նոճիէ դռնդիքներ շինեց ,
34 որոնք դռներն չորրորդ մասն էին ։ Ու դռները երկու փեղկերը մայր փայտէ էին . մէկ փեղկը երկու կտորէ ըլլալով՝ կը ծալլուէր , ու մէկալ փեղկը երկու կտորէ ըլլալով՝ կը
35 ծալլուէր ։ Եւ անոնց վրայ քերովբէներ , արմաւենիներ ու բացուած ծաղիկներ փորագրեց . և դրուագներուն վրայ յարմարցուած ոսկիով պատեց ։
36 Ու ներքին գաւիթը իրէք կարգ տաշուած քարերով , ու մէկ կարգ եղևնափայտի †հեծաններով շինեց ։
37 ‡Ցերոջը տանը հիմը՝ չորրորդ տարին Զիւ ամսուն մէջ դրուե-
38 ցաւ . Ու մետասաներորդ տարին Բուլ ամսուն՝ այսինքն ութերորդ ամսուն մէջ՝ տունը իրեն վերաբերեալ ամէն բաներովը լմընցաւ ։ Եւ յոգևս ՚Հօթը տարուան մէջ շինեց անիկայ ։

Ի Եւ·է·1 ։ 3 , 6 ։ * Կ՚ տայ՝ վայրենի ձիթենի նիւ , Էջր · իւղալի փայտէ ։ Հ Եւ·է·7 , 8 ։ 9 ։ բՄՆ· գ · 10 ։ 11 ։ 12 ։

Յ Եւ·իե·20 ։ է·9 ։ բՄՆ· ե · 8 ։

† Կ՚ տաշուած կոճղերով ‡ Հմր 1 ։ ՚ Բազդատէ՛ Հմր 1 ։

Գ Լ · Ի

1 Սողոմոնին տանը , 2 Լիբանանի անտառին տունը , 6 սիւներուն սրահին , 7 դատաստանի սրբարանին , 8 ու Փարաւոնի աղջիկին տանը շինութիւնը ։ 13 Երկու սիւները , 23 ծուլածոյ ծովը , 27 տասը մեքենովթիները , 38 տասը աւազանները ։ 40 և բոլոր կարասիները՝ որոնք Քիրամ շինեց ։

1 Ա Եւ Սողոմոն իր տունը տասուերեք տարուան մէջ շինեց . ու
2 լմընցուց իր բոլոր տունը ։ Եւ Լիբանանի անտառին տունն ալ շինեց . երկայնութիւնը հարիւր կանգուն , ու լայնութիւնը հիսուն կանգուն , ու բարձրութիւնը երսուն կանգուն . չորս կարգ եղևնափայտէ սիւներու վրայ ՚Ի-Ե , ու սիւներուն վրայ եղևնափայտէ հե-
3 ծաններ ՚Ի-Ե . Ու նաև եղևնափայտէ յարկ մը շինեց ան գերան-

Ն·Ք·ԶԴ· 1005

1005 էն մինչև 992 – Ցե՛ս Գլ · Թ · 10 ։ բ ՄՆ · ը · 1 ։

Ն · Ք · ՂԴ · 1005

ներուն վրայ , որոնք քառասունու-
հինգ սիւներու վրայ էին . — —
4 կարգը տասնուհինգ էր ։ Եւ իրեք
կարգ իրարու դիմացէ դիմաց շա-
րուած վանդակաւոր պատուհան-
5 ներ կային ։ Ու բոլոր դռները ու
դրանդիքները քառակուսի էին . և
վանդակաւոր պատուհանները իրա-
րու դիմացէ դիմաց իրեք կարգ է-
ին ։
6 Եւ սիւներուն սրահը շինեց . եր-
կայնութիւնը յիսուն կանգուն , ու
լայնութիւնը երսուն կանգուն . ու
անոնց առջևը սրահ մը՝ ու անոնց
առջևը սիւներ ու *սանդուխ մը
* Կ՚ը՛ վայ-
րագաւիթ
7 կար ։ Նաև աթոռին սրահը շինեց ,
ուր որ դատաստան կ՚ընէր . — —
Նիւ-ց առեանի սրահ կ՚ը——եր . ու
† ԵԲՐ · յա-
տակը
անիկայ յատակէն մինչև †ձեղունը
եղևնափայտով ծածկուած էր ։
8 Եւ իր նստած տանը —ը ասր
գործիս պէս ուրիշ գաւիթ մը
կար , տանը ու սրահին մէջտեղը .
ու Փարաւոնին աղջկանը համար՝
Բ ԳԼ · գ · 1 ·
բ Մն · ը · 11 ·
Բորն որ Սողոմոն իրեն ինկ առեր
էր , ասր սրահին պէս տուն մը շի-
9 նեց ։ Ասոնց ամէնը՝ ներսէն ու
դուրսէն , և հիմէն մինչև առաս-
տաղը , ու դուրսի կողմէն մինչև
մեծ գաւիթը , տաշուած քարերու
չափով՝ սղոցած ազնիւ քարերով
10 ը——ր էր ։ Հիմն ալ թանկագին
քարերէ էր . մեծ քարերէ՝ տասը
կանգուն քարերէ , ու ութը կան-
11 գուն քարերէ էր ։ Ու վերը տա-
շուած քարերուն չափովը՝ ազնիւ
12 քար ու եղևնափայտ էր ։ Եւ մեծ
գաւիթին չորս կողմը՝ ու Տէրոջը
տանը ներքին գաւիթը և տանը
‡ Ցօհ . ժ ·
23 ։ Գոր ·
գ · 11 ·
‡սրահը՝ իրեք կարգ տաշուած քա-
րերով ու մէկ կարգ եղևնափայտի
հեծաններով չ——ր էր ։
13 Եւ Սողոմոն թագաւորը մ——ր
խրկեց , ու Տիւրոսէն Տ քիրամը
Տ բ Մն · գ ·
11 ։ Տե՛ս
Հմր 40 ։
14 բերել տուաւ . Ի Նիկայ Նեփթա-
ղիմի ցեղէն որբևարի կնկան մը որ-
դի էր , ու Հանոր Հայրը Տիւրացի
Ր բ Մն · բ ·
14 ։
Ջ բ Մն · գ ·
16 ։
Ի Եւ · լ · 3 ·
ԼԶ · 1 ·
պղնձագործ մըն էր . և ի—ս մ——ը՝
պղնձէ ամէն տեսակ գործքերը գոր-
ծելու մեծ հմտութիւն , խմաստու-
թիւն ու դիտութիւն ունէր . և
Սողոմոն թագաւորին եկաւ , ու
անոր ամէն գործքը կատարեց ։
Ը գ Թագ ·
ի՛ · 17 · բ
Մն · գ · 15 ·
գ · 12 · Ե-
րեմ . ծր ·
21 ·
15 Եւ —ին-ց Հպղնձէ երկու սիւն
ձուլեց . մէկ սիւնին երկայնութիւ-
նը տասնուութը կանգուն , ու շոր-
ջապատը տասուերկու կանգուն
էր . —յ—գե— էր երկրորդ սիւնինն —լ ։
16 Եւ սիւներուն գլուխը դնելու հա-
մար՝ պղնձէ երկու խոյակ ձու-
լեց . մէկ խոյակին բարձրութիւ-
նը հինգ կանգուն , ու մէկալ խո-
յակին բարձրութիւնը հինգ կան-
17 գուն էր ։ Ե— սիւներուն գլուխը
եղող խոյակներուն համար՝ մէկ
խոյակին համար եօթը՝ ու մէկալ
խոյակին համար եօթը ցանցակերպ
— շղթայագործ հիւսուած զար-
18 դեր կ՚ինէ ։ Ա յսպէս սիւները շի-
նեց . ու մէկ ցանցակերպ զարդին
վրայ շուրջանակի երկու կարգ
նո——եր շ——ը , որ ի—ն-ին գլուխը
եղած խոյակը նուռերով ծած-
կուի . մէկալ խոյակին ալ այն-
19 պէս բրաւ ։ Եւ սրահին մէջի սիւ-
ներուն գլուխը եղող խոյակները
չորս կանգուն էին՝ շուշանաձև շի-
20 նուածքով ։ Ու երկու սիւներուն
վրայի խոյակներուն , ու ցանցա-
կերպ զարդին մօտ եղող փորին
վրայէն ալ նո——եր կար . ու ‡երկու
խոյակներուն՝ վրայ Ր կարգով շա-
րուած երկու հարիւր նուռ կար ։
‡ Կ՚ը՛ երկ-
րորդ խոյա-
կին
Ր Տե՛ս Մն ·
գ · 16 · գ ·
13 · Երեմ ·
ծր · 23 ·
21 Եւ սիւները Հտաճարին սրահին
մէջը կանգնեց . ու աջ կողմի սիւնը
կանգնելով , անոր անունը ‖Յաքին
կոչեց , ու ձախ կողմի սիւնը կանգ-
նելով , անոր անունը §Բոոզ կո-
22 չեց ։ Եւ սիւներուն գլխուն վրայ
շուշանաձև գործ ի—ր . այսպէս
սիւներուն գործը լմընցաւ ։
Ժ բ Մն · գ ·
17 ·
Ի ԳԼ · գ · 3 ·
‖ Յ՚ պիտի
հաստատէ ։
§ Յ՚ անոր
մէջը զօրու-
թիւն ։
23 Եւ Հծովը ձուլածոյ շինեց . ու մէկ
շրթունքէն մինչև մէկալ շրթունքը
տասը կանգուն էր , ու բոլորաձև
էր . և անոր բարձրութիւնը հինգ
կանգուն , ու անոր շրջապատը եր-
24 սուն կանգուն էր ։ Ու անոր շոր-
ջ թունքին տակը շուրջանակի ամէն
կողմէն դնդակներ շարուած էին .
Ը ծովուն բոլորտիքը մէկ կանգունի
մէջ՝ տասնական փո——ներ կար . ու
դնդակները երկու կարգ էին , ո-
րոնք ը—ը ձուլած առեններին ձուլեր
Լ Թագ ·
ի՛ · 13 · բ ·
Մն · գ · 2 ·
Երեմ . ծր ·
17 ·
Ի բ Մն · գ ·
3 ·
25 էին ։ Ընկ—յ Ի տասուերկու եզնե-
րու վրայ կը կենար . ո—ն իրեքը
դէպ ՚ի հիւսիս , իրեքը դէպ ՚ի
արևմուտք , իրեքը դէպ ՚ի հարաւ ,
ու իրեքը դէպ ՚ի արևելք կը նա-
յէին , ու ծովը անոնց վրայ էր , և
ամենուն ետևի կողմը դէպ ՚ի ներս
Ծ բ Մն · գ · 4 ·
5 · Երեմ ·
ծր · 20 ·
26 ո—յն-ը էր ։ Ու անոր թանձրու-
թիւնը չորս մատնաչափ էր , և շոր-
ջ թունքը գաւաթի շրթունքի պէս
էր , ու վրան շուշանի ծաղիկներ ը-
ն——ը էր . ‖ երկու հազար մար
կ՚առնէր ։
‖ Տե՛ս բ Մն ·
գ · 5 ·
27 Եւ պղնձէ տասը ‡ մեքենովթի շի-
նեց . —ին մէկ մեքենովթին երկայ-
նութիւնը չորս կանգուն , ու լայ-
նութիւնը չորս կանգուն , և բարձ-
‡ Յ՚ խա-
րիսխ , կ—՛
խարխափանք
պատուան-
դան
28 րութիւնը իրեք կանգուն էր ։ Ու
մեքենովթները այսպէս շինուած
էին , անոնք սպառուածներ ունէին ,
և սպառուածները եզերքներուն
29 մէջտեղն էր ։ Ու եզերքներուն
մէջտեղը եղող սպառուածներուն

Ն·ք·գ·
1005

* Կ՚նայե՛ պէս

վրայ՝ առիւծներ, եղներ ու քերովբէներ կար. ու եզերքներուն վրայ՝ վերի կողմը * խարիսխն էր. ու առիւծներուն ու եղներուն տակը
30 կախուած զարդեր կար։ Եւ անոնք մէկ մէքենովթը պղնձէ չորս անիւ ու պղնձէ առանցքներ ունէր, ու չորս ոտքերը ուսեր էին անոնց. ու ամէն կախուած զարդին քովը ա-
31 ւազանին տակը ձուլածոյ ուսեր կար։ Եւ անոր բերանը խոյակին մէջէն դէպ 'ի վեր՝ մէկ կանգուն էր. ու անոր բերանը խարիսխի գործքի պէս բոլորաձև էր, ու մէկ ու կէս կանգուն էր. և բերնին վրայ ալ քանդակներ ու սպա-
32 ռուածներ կային, քառակուսի և ոչ բոլորաձև։ Ու սպառուածներուն տակը չորս անիւ կար. և անիւներուն առանցքները մէքենովթին վրայ էին, ու անոնք մէկ անիւին բարձրութիւնը մէկ ու
33 կէս կանգուն էր։ Եւ անիւներուն շինուածքը կառքի անիւներուն շինուածքին պէս էր. անոնց առանցքները, շրջանակները, շառաւիղները ու գունտերը՝ բոլորը
34 ձուլածոյ էին։ Եւ անոնք մէկ մէքենովթին չորս անկիւններուն վրայ չորս ուս կար. և ուսերը նոյն
35 իսկ մէքենովթէն էին։ Ու մէքենովթին գլուխը՝ կէս կանգուն բարձրութեամբ բոլորակ մը կար. ու մէքենովթին գլխուն վրայ էջերը ու սպառուածները իրմէ
36 էին։ Ու եզերքներուն տախտակներուն վրայ ու սպառուածներուն վրայ՝ քերովբէներ, առիւծներ ու արմաւենիներ քանդակուած էր, ամէն մէկ տեղին չարմարութեանը համեմատ. ու անոնց բոլորտիքը
37 կախուած զարդեր կար։ Ձասը մէքենովթներն ալ այսպէս բրաւ. ամենուն ձուլուածքը, չափ ու ձևը մէկ էր։
Հբմն·գ·6· 38 Եւ հատը հատ պղնձէ աւազան շինեց. անոնք մէկ աւազանը քառասուն մարով կը լեցուէր. ու անոնք մէկ աւազանը չորս կանգուն էր. ու հատը մէքենովթներուն վրայ
39 մէկմէկ աւազան կար։ Եւ հինգ մէքենովթը տանը աջ կողմը՝ ու հինգ մէքենովթը տանը ձախ կողմը դրաւ. ու ծովը տանը աջ կողմը՝ հարաւոյ դէմ՝ դէպ 'ի արևելք դրաւ։
40 Եւ Քիրամ՝ աւազանները, թիակները ու կոնքերը շինեց. ու Քիրամ կատարեց ան բոլոր գործքերը՝ որ Ցէրոջը տանը համար Սողոմոն թագաւորին կը շինէր.
41 Ձ՚ւյնպէս երկու սիւները, ու սիւներուն գլուխը եղող խոյակներուն

Ն·ք·գ·
1005

երկու գունտերը, և սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար երկու
42 ցանցակերպ զարդերը, Ու երկու ցանցակերպ զարդերուն չորս հարիւր նուռերը, ՝յնպէս սիւներուն վրայի խոյակներուն երկու գունտերը ծածկելու համար՝ անոնք մէկ ցանցակերպ զարդին վրայ երկու
43 կարգ նուռեր։ Եւ տասը մէքենովթները, ու մէքենովթներուն
44 վրայի տասը աւազանները, Ու մէկ ծովը, ու ծովին տակի տասուերը-
45 կու եզները, Եւ կաթսաները, ու թիակները, ու կոնքերը. և ասոնք բոլոր կարասիները որ Քիրամ Սողոմոն թագաւորին շինեց Ցէրոջը տանը համար, փայլուն պղնձէ էին։
46 Թագաւորը զանոնք Ցորդանանու դաշտին մէջ թանձր հողի մը վրայ ձուլել տուաւ, Սոկքովթի ու
47 Սարթանի մէջտեղը։ Եւ Սողոմոն ասոնց կարասիները ամենայնը ձգեց. վասն զի խիստ շատ էին. ոչ պղնձին կշիռքը համբարանքի չէր գար։
48 Եւ Սողոմոն՝ Ցէրոջը տանը բոլոր կարասիները շինեց. ոսկի սեղանը, ու վրան առաջաւորութեան հացը դրուելու ոսկի սեղանները,
49 նը, Եւ դաբիրին առջևի գուտ ոսկիէ աշտանակները, որոնց հինգը աջ կողմն էին, ու հինգը ձախ կողմը. և ոսկիէ ծաղիկները, ու ճրագները, ու ունելիները, Եւ գուտ ոսկիէ գաւաթները, բազմակալնեը, կոնքերը, խնկամանները և բուրվառները, ու ներքին տանը՝ Ձ՚ւյնսրբութեանց սրբութիւնին դռներուն, ու տանը՝ Ձ՚ւյնտաճարին դռներուն ոսկի ծղնիները։
51 Ձ՚ւյսպէս Ցէրոջը պաշտարին համար՝ Սողոմոն թագաւորին բոլոր շինած գործքերը լմընցան. ու Սողոմոն Դաւիթ հօրը Դաւիթին նուիրած բաները՝ արծաթը ու ոսկին ու անօթները տարաւ, Ցէրոջը տանը գանձերուն մէջը դրաւ։

Գ Ա Գ · Ը

1 Ցաճարին նաւակատեաց հանդէսը։ 12, 54 Սողոմոնին օրհնութիւնը։ 22 անոր ազօթքը։ 62 անոր մասուցած խաղաղութեան զոհերը։

1 Ձ՚ն ատենը Սողոմոն Իսրայէլի ծերերը, ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդւոց նահապետները, Սողոմոն թագաւորին քովը՝ Երուսաղէմ ժողվեց, Որ Ցէրոջը ուխտին տապանակը Դաւիթին քաղաքէն՝ այսինքն Սիոնէն
2 հանեն։ Եւ Իսրայէլի բոլոր մարդիկները եօթներորդ ամսուն՝ Ընթանի ամսուն մէջ՝ տոնին առթ-

---

Ա·Մն·ե·2· ՃՃ։
Բ Թագ·գ·17։
Է Թագ·ե·7·9։ գ·12· 16։
Գ ԳՂ·իգ·34։ Բմն·է·8։

Ն. Ք. ՉՓ. 1004

ՆՐ. ԳԼ. 15, Ր Օր. ԼՈ. 9, ՃԱԾ. Գ. 3, 6, Ա ՄՆ. ԺԱ. 14, 15,

ՂԵՒ. Գ. 4, ԲՄՆ. Ա. 3,

ԲԹԱԳ. Գ. 13,

ԸԹԱԳ. Գ. 17,

ԲՆԵ. ԽԶ. 33, 34, ԹՒ. Գ. 19,

ՃԳՒ. Գ. 27,

Ի ԵԼ. ԽՆ. 14, 15,

ԼԲՄՆ. Ե. 9,

Ի ԵԼ. ԽՆ. 21, Ր Օր. Ժ. 2,

ԻՐ Օր. Ժ. 5, ԵԶՐ. Թ. 4,

ՅԵԼ. Խ. 20,

ՀՆԵ. ԼԳ. 27, 28, Ր Օր. Գ. 13, ՀԺՐ 21,

ՅՆԵ. Խ. 34, 35, Ր ՄՆ. Ե. 13, 14, Է. 2,

ՂՐ ՄՆ. Գ. 1, ՃՃ,

ՃՂՃ. ԺԳ. 2, ՍԱՂ. ՃՐ. 11, ԳԷ. 2,

ՃԲԹԱԳ. Է. 13,

ՃՍԱՂ. ՀՂԲ. 14,

ՆԲԹԱԳ. Գ. 18,

Ն ՂԻ. Ա. 68,

ՈՐԹԱԳ. Է. 5, 25,

ՂԲ ԹԱԳ. Է. 6, Ր ՄՆ. Գ. 5, ՃՃ,

ՊՀԺՐ 29, Ր Օր. ԺՐ. 11,

Ը Ա ԹԱԳ. ԺԳ. 1, Բ ԹԱԳ. Է. 8, Ա ՄՆ. ԻԲ. 4,

նը՝ Սողոմոն Թագաւորին քովը
3 Ժողովուեցան ։ Ու Իսրայէլի բոլոր
ծերերը եկան . Ու քահանաները
4 տապանակը վերցուցին ։ Եւ Տէ-
րոջը տապանակը , Ուու Ժողովքի
խորանը , և խորանին մէջը եղած
բոլոր սուրբ անօթները հանեցին .
ու զանոնք քահանաները ու Ղե-
5 տացիները հանեցին ։ Եւ Սողոմոն
Թագաւորը ու անոր քովը ժող-
ովուած Իսրայէլին բոլորը Ժողովքը
անոր հետ՝ տապանակին առջևը ըլ-
լալով , Ոչխարներ ու արջառներ
կը զոհէին , այնչափ շատ որ անթիւ
6 ու անհամար էին ։ Եւ քահանա-
ները ԸՏէրոջը ուխտին տապանակը
ներս տարին Ի իր տեղը՝ տանը դարի-
բը՝ սրբուհիւն սրբութեանցը , ՚ի
Ք երովբէներուն թևերուն տակը
7 Ցրէ. Քանզի քերովբէները տապա-
նակին տեղ ը վրայ էբ ևնց թևերը
կը տարածէին , ու քերովբէները
վերէն կը ծածկէին տապանակը ու
8 անոր ձողերը ։ Եւ ՚ձողերը երկըն-
ցուցին , այնպէս որ ձողերուն ծայ-
րերը ԵՒսրբութիւնէն կ՚երևնային
դարիրին առջևը . բայց դուրսէն
չէին երևնար . ու մինչև աս օրս հոն
9 են ։ Ի Տապանակին մէջը ուրիշ
բան չկար , Ը բայց միայն երկու քա-
րէ տախտակները՝ որ Մովսէս Փո-
րեբի մէջ Ն հոն դրաւ . Հորոնցմով
Տէրը Իսրայէլի որդւոցը հետ՝ ա-
ռնոց Եգիպտոսի երկրէն ելած ա-
10 տենը ուխտ ըրաւ ։ Ու երբոր քա-
հանաները սրբութիւնէն ելան ,
11 ամպը Ն լեցուց Տէրոջը տունը . Եւ
ամպին պատճառաւը քահանանե-
րը չէին կրնար հոն կենալ , որ Ի-
րէնց պաշտօնը կատարեն . վասն զի
Տէրոջը փառքը Տէրոջը տունը լե-
ցուցեր էր ։

12 Ղ Ան ատենը Սողոմոն ըսաւ . Տէ-
րը ըսաւ որ ինքը Ֆ մառախուղի մէջ
13 կը բնակի ։ Ա Ես քեզի բնակու-
թեան համար տուն , Ա ու յաւի-
տեան քու նստելուդ համար տեղ
14 շինեցի ։ Եւ թագաւորը իր երեսը
դարձուց , ու Ն Իսրայէլի բոլոր ժո-
ղովքը օրհնեց . ու Իսրայէլի բոլոր
ժողովքը ոտքէ վրայ կայներ էին .
15 Եւ անիկայ ըսաւ . Ն Օրհնեալ ըլլայ
Իսրայէլի Տէր Աստուածը , որ Ր իր
բերնովը իմ հօրս Դաւիթին խօսք
տուաւ , ու իր ձեռքովը կատարեց .
16 քանզի ըսաւ . Ն Իմ ժողովուրդս
Իսրայէլը Եգիպտոսէն հանած օրէս
Ա ի վեր՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն
բնաւ մէկ քաղաք մը չընտրեցի
տուն շինելու համար , որ Դ իմ ա-
նունս հոն ըլլայ . բայց Ն Դաւիթը
ընտրեցի , որ իմ ժողովուրդիս
Իսրայէլին վրայ Ք ահ ա ր ըլլայ ։
17 Եւ Ր իմ հայրս Դաւիթի միտք ու-
նէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն
18 անունը տուն մը շինէ . Ր Բայց
Տէրը իմ հօրս Դաւիթին ըսաւ .
Որովհետև դուն միտք դրիր , որ
իմ անունս տուն շինես , աղէկ
ըրիր որ Ա ՚ի ՚նէը միտք դրիր .
19 Սակայն Ն տունը դուն պիտի չշի-
նես , հապա քու որդիդ , որ քու
երանքէդ պիտի ելլէ , անիկայ իմ
20 անունս՝ տունը պիտի շինէ ։ Եւ
Տէրը իր ըսած խօսքը կատա-
րեց , ու ես իմ հօրս Դաւիթին
տեղը յաջորդեցի , ու Ր Տէրոջը ը-
սածին պէս՝ Իսրայէլի աթոռը
նստայ , ու Իսրայէլի Տէր Աստու-
ծոյն անունը՝ Ա տունը շինեցի .
21 Եւ հոն տեղ մը պատրաստեցի տա-
պանակին համար , որուն մէջը Ի-
նչ ՚ Տէրոջը ուխտը , որն որ մեր
հայրերուն հետ ըրաւ , երբոր զա-
նոնք Եգիպտոսի երկրէն դուրս հա-
նեց ։

22 Եւ Սողոմոն ՚ Տէրոջը սեղանին
առջևը Իսրայէլի բոլոր ժողովքին
դիմացը կայնելով , Ր ձեռքերը դէպ
23 ՚ի երկինքը տարածեց , Ու ըսաւ .
Ո՛վ Տէր Աստուած Իսրայէլի , վե-
րը երկինքը ու վարը երկրի վրայ
Ք ըզի պէս Աստուած չկայ , որ
Ր քու առջևդ իրենց բոլոր սրտովը
քալող ծառաներուդ հետ Ո ուխտ
24 ու ողորմութիւն կը պահես . Դուն
քու ծառայիդ՝ իմ հօրս Դաւիթին
ըրած խոստմունքդ պահեցիր , ու
բերնովդ ըսածդ ձեռքովդ կատա-
րեցիր , ինչպէս որ այսօր Կ՚երևայ ։
25 Եւ հիմա ով Տէր Աստուած Իսրա-
յէլի , պահէ ան խոստմունքդ , որն
որ քու ծառայիդ՝ իմ հօրս Դա-
ւիթին ըրիր , ու ըսիր . Ֆ Իմ առ-
ջևս Իսրայէլի աթոռին վրայ նս-
տող մարդ՝ քեզմէ պակաս պիտի
չըլլայ . միայն թէ քու որդիդ ի-
րենց ճամբաներուն զգուշութիւն
ընէն , ու իմ առջևս քալեն , ինչ-
պէս որ դուն իմ առջևս քալեցիր ։
26 Ր Եւ հիմա ով Աստուած Իսրայէլի ,
թող քու ծառայիդ՝ իմ հօրս
Դաւիթին ըսած խօսքդ հաստա-
տուի ։
27 Բայց Բ միթէ Աստուած իրաւ ը-
նէ Ե երկրիս վրայ պիտի բնակի Ր .
ահա երկինքը ու Ե երկնից երկին-
քը քեզ չեն կրնար պարունակել .
ո՛ւր կը մնայ աս իմ շինած տունս ։
28 Սակայն ով Տէր Աստուած իմ , քու
ծառայիդ աղօթքին ու խնդրուած-
քին նայէ , որ քու ծառայիդ այսօր
քու առջևդ ըրած պաղատանքը ու
29 աղօթքը լսես . Որպէս զի աս տանը
վրայ գիշեր ցորեկ քու աչքերդ բաց
ըլլան , ան տեղ ը վրայ՝ որուն

Ն. Ք. ՉՓ. 1004

Ր ԹԱԳ. Է. 2 ՈՄՆ. ԺԷ. 1 ։

Ր ՄՆ. Գ. 8, 9 ։

Վ Ր ԹԱԳ. Է. 5, 12, 13, ԳԼ. Է. 3, 5,

Ր ՄՆ. ԻԲ. 5, 6 ։

Ր ՀԺՐ 9 ։ Ր Օր. ԼՈ. 26,

Ր ՄՆ. Գ. 12, ՃՃ ։

ՐՆԵ. Թ. 33, ԵԶՐ. Թ. 5, ԵՍ. Ա. 15 ։

Ք ԵԼ. ԺԷ. 11, ՐԹԱԳ. Է. 22 ։

Ք ՅՈՒ. ԺԷ. 1, ԳԼ. Գ. 6, Գ ԹԱԳ. Ի. 3 ։

Ր Օր. Է. 9, ՂԵՒ. Ա. 5, ԴԱՆ. Թ. 4 ։

Ֆ ԳԼ. Բ. 4, Ր ԹԱԳ. Է. 12, 16 ։

Ր ԹԱԳ. Է. 25 ։

Ի Ր ՄՆ. Բ. 6, ԵՍ. ԿԶ. 1, ԵՐԵՄ. ԻԳ. 24, ԳՈՐ. Է. 49, ԺԷ. 24 ։

Ի Ր ԿՈՐ. ԺԲ. 2 ։

համար ըսիր Թէ՝ Իմ անունս հոն պիտի ըլլայ . այնպէս որ՝ աս տեղը քու ծառայիդ ըրած աղօթքը լսես ։
30 Եւ քու ժողովուրդիդ Իսրայէլին աս տեղը ըրած աղօթքները լսես . այո՛ քու բնակութեանդ տեղէն երկինքէն լսես , ու լսածատենդ ներես ։
31 Թէ որ մէկը իր ընկերին դէմ մեղանչէ , ու անկէ երդում ընել տալու համար՝ անոր երդում առաջարկէ , ու երդումը աս տունը
32 քու սեղանիդ առջեւը գայ , Անատենը դուն երկինքէն լսես ու կատարես , ու քու ծառաներդ դատես , Եւ յանցաւորը դատապարտես , ու անոր *ըրածը անոր գլուխը բերես . և արդարը արդարացնես , ու անոր արդարութեանը չափովը անոր հատուցում ընես ։
33 Եւ Թէ որ քու ժողովուրդդ Իսրայէլը՝ քեզի դէմ մեղանչելնուն համար՝ իրենց թշնամիներուն առջեւը յաղթուին , ու Քեզի դառնան և քու անունդ փառք տան , ու աս տանս մէջ քեզի աղօթք ու աղաչանք ընեն , Ան ատենը դուն երկինքէն լսես , և քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղքը ներես , ու անոնց հայրերուն տուած երկիրդ՝ զանոնք դարձընես ։
35 Թէ որ անոնց քեզի դէմ մեղք գործելուն համար Երկինքը գոցուի , ու անձրեւ չգայ . ու անոնք աս տեղս քեզի աղօթք ընեն , և քու անունդ փառք տան , ու զանոնք նեղելուդ համար՝ իրենց մեղքերէն
36 դառնան , Ան ատենը դուն երկինքէն լսես , և քու ծառաներուդ ու քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղքը ներես , որ Եանոնց սորվեցընես Եան ազէկ ճամբան , որուն մէջը պիտի քալեն . ու քու ժողովուրդիդ ժառանգութիւն տուած երկրիդ վրայ անձրեւ տաս ։
37 Երբ որ երկրի վրայ սով , կամ ժանտախտ , կամ խորշակահարութիւն , կամ սրմոխոց դալուկ , կամ մարախ , կամ թրթուր ըլլայ , կամ անոնց թշնամիները զանոնք իրենց †բնակած երկրին մէջը նեղեն , կամ որ և իցէ հարուած կամ հիւանդութիւն ըլլայ ,
38 Քու բոլոր ժողովուրդէդ Իսրայէլէն որ և իցէ մարդ՝ աղօթք մը ու խնդրուածք մը ընելու ըլլայ , ու իւրաքանչիւր մարդ իր սրտին ախտը ճանչնալով՝ ձեռքերը դէպ 'ի աս տունը երկրնցընէ ,
39 Ան ատենը դուն երկինքէն՝ քու բնակութեանդ տեղէն լսես , ու ներես , ու ընես . և ամէն մարդու՝ իր բոլոր ճամբաներուն համեմատ հատուցում ընես , անոր սիրտը գիտնալուդ համար . վասն զի Դու լոյս մարդոց որդիներուն սիրտը միայնակ գիտես .
40 Նակ դուն գիտես . Որպէս զի քեզմէ վախնան երկնից բոլոր օրերուն մէջը՝ որչափ ժամանակ որ մեր հայրերուն տուած երկրիդ վրայ պիտի ապրին ։
41 Ու քու ժողովուրդէդ Իսրայէլէն չեղող՝ և հեռաւոր երկրէ մը քու անունդ համար եկող օտարականն
42 (Վասն զի քու մեծ անունդ ու հզօրաւոր ձեռքդ ու երկրնցած բազուկդ պիտի լսեն ,) Թէ որ դայ ու աս տանս մէջ աղօթք ընէ ,
43 Դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն լսես , և օտարականին քեզի ըրած ամէն խնդրուածքը կատարես , Որ երկրիս ամէն ժողովուրդները քու անունդ ճանչնան , ու քու ժողովուրդիդ Իսրայէլին պէս Քեզմէ վախնան , և գիտնան Թէ աս իմ շինած տանս վրայ քու անունդ կոչուած է ։
44 Երբոր քու ժողովուրդդ իր թշնամիին դէմ պատերազմի երթայ ան ճամբով՝ որ դուն պիտի խրկես զանոնք , Թէ որ անոնք աս քու ընտրած քաղաքիդ , ու քու անունդ համար աս իմ շինած տանս կողմը Նայելով՝ Տէրոջը աղօթք ընեն ,
45 Երկինքէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , և անոնց իրաւունք ընես ։
46 Երբոր քեզի դէմ մեղք գործեն , (Քանզի մեղք չգործող մարդ չկայ ,) ու անոնց բարկանալով՝ զանոնք թշնամիին ձեռքը մատնես , ու անոնց գերեվարները Թշնամիին հեռու կամ մօտ երկիրը գերի տանի ,
47 Նին զանոնք , Եթէ որ ան իրենց գերութեան երկրին մէջը զղջի դան ու դառնան , և իրենց գերվարներուն երկրին մէջը քեզի աղաչեն ու Ընթան . Մեղք գործեցինք , անօրէնութիւն ու անիրաւութիւն ըրինք . Եւ Թէ որ զանոնք գերի տանող թշնամիներուն երկրին մէջը՝ Իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգիովը քեզի դառնան , ու իրենց երկրին՝ որ իրենց հայրերուն տուիր , և քու ընտրած քաղաքիդ , ու քու անունդ համար իմ շինած տանս կողմը Նայելով՝ քեզի աղօթք
49 ընեն . Դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , ու անոնց
50 իրաւունք ընես , Եւ քու ժողովուրդիդ քեզի դէմ ըրած մեղքը ու բոլոր յանցանքը ներես . ու Նայնպէս ընես՝ որ անոնց գերեվարները անոնց վրայ գթան , և անոնց ողորմութիւն ընեն . Քանզի Դանոնք

Ն · Ք · Ը · 1004

Դ Օր · Ժ · 11 ։
Ի Մն · Ի · 9 ։ Նէեմ · ա · 6 ։
Ղեւ · Իր · 11 ։ Ղև · ե · 1 ։
Ի Օր · Ի · 1 ։
* Եբր · Ճամբան
Ղև · Իզ · 17 ։ Բ Օր · Իը · 25 ։
Ղև · Իզ · 39 , 40 ։ Նէեմ · ա · 9 ։
Ղև · Իզ · 19 ։ Բ Օր · Իը · 23 ։
Ա Պտ · Իե · 4 ։ Իե · 11 ։ Գդ · 12 ։ Հպտ · 8 ։
Ա Թագ · Ժբ · 23 ։
Ղև · Իզ · 16 , 25 , 26 ։ Բ Օր · Իը · 21 , 22 , 27 , 38 , 42 , 52 ։ Բ Մն · Ի · 9 ։
† Եբր · Դրա-ներուն
Ն · Ք · Ը · 1004

Դ Թագ · Ժզ · 7 ։ Ա Մն · Իը · 9 ։ Պտ · Ժա · 4 ։ Երեմ · Ժէ · 10 ։ Դոր · ա · 24 ։
Պտ · Ճլ · 4 ։
Բ Օր · գ · 24 ։
Դ Թագ · Ժէ · 46 ։ գ Թագ · Ժթ · 19 ։ Պտ · կ · 2 ։ Ա Պտ · Ճբ · 15 ։
Ա Թագ · Ը · 36 ։ Առակ · Ի · 9 ։ Ժող · է · 20 ։ Յակ · գ · 2 ։ ա Ցօհ · ա · 8 , 10 ։
Ղև · Իզ · 34 , 44 ։ Բ Օր · Իը · 36 , 64 ։
Ղև · Իզ · 40 ։
Նէեմ · ա · 6 ։ Պտ · Ճզ · 6 ։ Դան · Թ · 5 ։
Երեմ · Իթ · 12 , 13 , 14 ։
Դան · ը · 10 ։
Եզր · է · 6 ։ Պտ · Ճզ · 46 ։
Բ Օր · Թ · 29 ։ Նէեմ · ա · 10 ։

Ն · Ք · ՁԲ · 1004

Ա Բ Օր · դ · 20 · Երեմ · ժա · 4 ·

քու ժողովուրդդ ու քու ժառանգութիւնդ են , որ զանոնք Եգիպտոսէն՝ Երկաթի նոցին մէջէն հանեցիր ։
52 Եւ քու ծառային եւ քու ծառայիդ խնդրուածքին ու քու ժողովուրդիդ Իսրայէլին խնդրուածքին՝ քու ա՛յդ ամէն լսելու համար , որ ամէն ատեն որ կանչեն քեզի ըրած ամէն աղաղակը
53 լսես ։ Քանզի երկրին ամէն ժողովուրդներէն դուն զատեցիր անոնք , որ քու ժառանգութիւնդ ըլլան . – ինչպէս որ քու ծառայիդ Մովսէսին ձեռքովը խօսեցար , երբոր մեր հայրերը Եգիպտոսէն հանեցիր , ով Տէր Եհովայ ։

– Ել · ժթ · 5 ։ Բ Օր · թ · 26 , 29 ։ ժդ · 2 ։

54 Երբոր Սողոմոն աս բոլոր աղօթքը ու խնդրուածքը Տէրոջը ըրաւ լմընցուց , Տէրոջը սեղանին առջեւէն եղաւ , ուր որ ձեռքը դէպ ՚ի երկինքը երկընցուցած ծունկ չոքեր
55 էր , Ու ոտքի վրայ կայնելով , ՚Իսրայէլին բոլոր ժողովքը բարձր ձայնով օրհնեց ,
56 ու ըսաւ . Օրհնեալ ըլլայ Տէրը , որ իր բոլոր բսածին համեմատ՝ իր Իսրայէլ ժողովուրդին հանգստութիւն տուաւ , Ու իր ծառային Մովսէսին ձեռքովը խօսած ամէն բարի խօսքերէն բնաւ
57 մէկ խօսք մը դեռ ինկած չ՚ենկաւ ։ Մեր Տէր Աստուածը մեզի հետ ըլլայ , ինչպէս որ մեր հայրերուն հետ էր . ՚ու մեզ չթողու , ու մեզ երեսկ
58 չդարձնէ , Եւ մեր սիրտը իրեն դարձնէ , որ իր բոլոր ճամբաներուն մէջը քալենք , ու պահենք իր պատուիրանքները , կանոնները ու իրաւունքները , որոնք մեր հայրերուն
59 պատուիրեց ։ Եւ Տէրոջը առջեւը մատուցած աս պաղատանքի խօսքերս՝ յորեկու գիշեր մեր Տէր Աստուծոյն մօտենան , որ օրէ օր պատահած գործքերուն մէջը՝ իր ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին
60 իրաւունք բնէ . ՚Որ երկրիս ամէն ժողովուրդները դիտեն , թէ – Եհովան ինքն է Աստուածը , Ուրիշ
61 մը չկայ ։ Ու ձեր սիրտը մեր Տէր Աստուծոյն առջեւը ուղիղ ըլլայ , որ աս օրուան պէս՝ անոր կանոններուն մէջ քալէք , ու անոր պատուիրանքները պահէք ։
62 Եւ թագաւորը ու բոլոր Իսրայէլը անոր հետ՝ Տէրոջը առջեւը
63 զոհեր մատուցին ։ Եւ Սողոմոն Տէրոջը մատուցած խաղաղութեան զոհին համար՝ քսանուերկու հազար արջառ , ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ . և թագաւորը ու բոլոր Իսրայէլի որդիքը Տէրոջը
64 տանը նաւակատիքը ըրին ։ Ն՚ն օրը թագաւորը Տէրոջը տանը առջեւը եղող գաւիթին մէջտեղը սրբեց . քանզի ՚ն ողջակէզները ,

Ա Բ Մն · դ · 1 ։

հացի ընծաները , ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց . վասն զի ՚ն Տէրոջը առջեւի պղնձէ սեղանը պզտիկ կու գար աս ողջակէզները , հացի ընծաները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը ընդունելու ։
65 Եւ ան ատենը Սողոմոն ու անոր հետ բոլոր Իսրայէլը՝ մէկ մեծ ժողով մը՝ Եմաթի մտքէն մինչեւ Եգիպտոսի հեղեղատը՝ մեր Տէր Աստուծոյն առջեւը ՚եօթը օր՝ ու եօթը օր Ա՛ , յաւնդ տաւնու-
66 ցորս օր Տոն ըրին ։ Ե՛ Սողոմոն ութերորդ օրը ժողովուրդը արձակեց , որոնք թագաւորը օրհնեցին , ու իրենց վրանները գացին , զուարթ սրտով մը ու բախանալով ան բոլոր բարիքներուն համար , որ Տէրը իր Դաւիթ ծառային ու իր Իսրայէլ ժողովուրդին ըրաւ ։

– Թաւ · լդ · 8 ։ Ցես · ժգ · 5 ։ Դատ · գ · 3 ։ դ Թագ · ժգ · 25 ։

Բ Նն · ժե · 18 ։ Թաւ · լդ · 5 ։

Գ Լ · Թ

1 Աստուած Սողոմոնին հետ ուխա կ՚րնէ տեսիլքի մէջ ։ 10 Սողոմոնին ու Քիրամին իրարու խրկած ընծաները ։ 15 Սողոմոնին գործքերուն մէջը՝ օտարազգիները անոր ստորին ծառաներն էին , և Իսրայէլացիք պատուաւոր ծառաները ։ 24 Փարաւոնին աղջիկը իր տունը կը փոխադրուի ։ 25 Սողոմոնին տարեկան հանդիսաւոր զոհերը ։ 26 Սողոմոնին նաւերը Ոփիրէն ոսկի կը բերեն ։

Ա Մն · է · 9 , 10 ։

Ա Ն · Ք · ՁԲ · 1004

Իբր 992

1 – Երբոր Սողոմոն՝ Տէրոջը տունը , Բ ու թագաւորական տունը , և ՚իր սրտին բոլոր ուզած բաները
2 շինեց լմընցուց , Տէրը Սողոմոնին նորէն երեւցաւ , Տ ինչպէս որ Գաբաւոնի մէջ երեւցեր էր ։
3 Բաւոնի մէջ երեւցեր էր ։ Եւ Տէրը անոր ըսաւ . Ի՛մ առջեւս բրած աղօթքդ ու պաղատանքդ լսեցի . Ես աս շինած տունդ սրբեցի , Զոր իմ անունս յաւիտեան հոն դնեմ . Ի՛ու իմ աչքերս ու սիրտս միշտ հոն պի-
4 տի ըլլան ։ Եւ թէ որ դուն իմ առջեւս՝ Հրու Հօրդ Դաւիթին քալածին պէս , Ի կատարեալ սրտով և ուղղութեամբ քալես , ու բոլոր քեզի պատուիրածներս ընես , ու իմ կանոններս ու դատաստաններս
5 պահես , Ն՚ն ատենը քու թագաւորութեանդ աթոռը Իսրայէլի վրայ յաւիտեան պիտի հաստատեմ , ՚ինչպէս որ քու Հօրդ Դաւիթին խօսեցայ՝ ըսելով . Իսրայէլի աթոռին վրայ քեզմէ մարդ պակաս պի-
6 տի չըլլայ ։ Եթէ որ դուք կամ ձեր որդիքը ինծմէ խոտորիք , ու ձեր առջեւը դրած պատուիրանքներս ու կանոններս չպահէք , ու երթաք ուրիշ աստուածներու ծառայութիւն ընէք , և անոնց երկրպագութիւն ընէք ,
7 դուն Իսրայէլը պիտի չընջեմ ան երկրին վրայէն , որն որ իրենց տուի . ու

Բ Թագ · ե · 12 , 16 ։ Գէ · ը · 4 ։ ղ · 12 ։ Մն · իբ · 10 ։ Սաղ · ՃԼը · 12 ։

Բ Թագ · է · 14 ։ Բմն · է · 19 , 20 ։ Սաղ · ՃԹ · 30 , ՃԸ ։

Ե Օր · դ · 26 ։ դ Թագ · ժէ · 23 ։ իե · 21 ։

Ն · Ք · ԳԲ · Իրր 992

Ի իմ անուանս համար աս սրբած տունս երեսէս պիտի ձգեմ . ե և Իսրայէլը բոլոր ազգաց մէջ առակ
8 ու կատակ պիտի ըլլայ : Եւ [1] աս բարձր տանը համար՝ ամէն քովէն անցնողը պիտի զարմանայ , ու սու֊ լելով պիտի ըսէ . [2]Ինչո՞ համար աս երկրիս ու աս տանս այս֊
9 պէս ըրաւ : Եւ պիտի ըսեն . Վասն զի անոնք իրենց Տէր Աստուածը թողուցին , որ անոնց հայրերը ե֊ դիպտոսի երկրէն հաներ էր , ու ու֊ րիշ աստուածներու յարեցան , և անոնց երկրպագութիւն ու ծառա֊ յութիւն ըրին . աս պատճառաւ Տէրը անոնց վրայ աս բոլոր չարիք֊ ները բերաւ :

Ն · ք · գբ · Իրր 992

Ի Երեմ . է . 14 :

ե Օր · իբ · 37 : Սաղ · խդ · 14 : [1] Բ Մն . է . 21 : [2] Օր · ւթ . 24 , 25 , 26 : Երեմ . իբ . 8 , 9 :

10 [3]Եւ Սողոմոն երկու տունը՝ Տէ֊ րոջը տունը ու թագաւորական տունը քսան տարուան մէջ շինեցին
11 Տիւրոսի թագաւորը Փի֊ րամ՝ եղևնափայտերով , մայր փայ֊ տերով , ու ոսկիով , անոր ամէն ուզածին համեմատ Սողոմոնին օգ֊ նութիւն ընելուն համար , Սողոմոն թագաւորն ալ ան տասնը քաղաք տուաւ Գալիլեայի
12 երկրին մէջ : Ու Փիրամ Տիւրո֊ սէն ելաւ , որ Սողոմոնին իրեն տուած քաղաքները տեսնէ . և իր
13 աչքերուն հաճոյ չերևցան . Ու ը֊ սաւ . Ե՛ղբայր , աս ի՛նչ քաղաքներ էն՝ որ ինծի տուիր . [4]ու անոնց ա֊ նունը [*]Քաբօղի երկիր կոչեց մինչև
14 աս օրս : Եւ Փիրամ՝ թագաւորին հարիւր քսան տաղանդ ոսկի խըր֊ կեց :
15 Ու [5]Սողոմոն թագաւորին դրած հարկին պատճառը աս էր՝ որ Տէ֊ րոջը տունը , իր տունը , ու [6]Մե֊ լլօնը , ու Երուսաղէմի պարիսպը , [7]Հասորը , [8]Մակեդդովը ու [9]Գա֊
16 զերը շինէ : (Քանի Եգիպտոսի Փարաւոն թագաւորը ելլելով՝ Գա֊ զերը առեր , ու զանիկայ կրակով այրեր էր , և ան [10]քաղաքին մէջը բնակող Քանանացիները մեռցընե֊ լով , զանիկայ իր աղջկանը՝ Սողո֊ մոնին կնկանը օժիտ տուեր էր :)
17 Ու Սողոմոն՝ Գազերը ու [11]Վարի
18 Բեթորոնը շինեց , Նաև [12]Բաալե֊ թը ու Թադմորը երկրին անապա֊
19 տին մէջ , Եւ Սողոմոնին բոլոր բըջ֊ տեմարանի քաղաքները , ու [13]կառ֊ քերուն քաղաքները , ու ձիաւոր֊ ներուն քաղաքները , և ան բոլոր շէնքերը , որ Սողոմոն [14]ուզեց շինել Երուսաղէմի մէջ , Լիբանանի մէջ , ու իր տէրութեանը բոլոր երկրին մէջ :
20 Ինչ բոլոր ժողովուրդները՝ որ Ամորհայիներէն , Քետացիներէն , Փերեզացիներէն , Եւսացիներէն ու

Գ · ե

21 Իսրայէլէ որդւոցմէ չէին , Այլ անոնց զաւակները , որ անոնցմէ ետքը ան երկրին մէջ մնացեր էին , [15]ու Իսրայէլի որդիքը չէին կրցեր զանոնք բնաջինջ ընել , Սողոմոն զանոնք [16]հարկատու ծառայ ը֊
22 րաւ մինչև ցայսօր : Բայց Սողոմոն՝ Իսրայէլի որդիներէն իրեն [17]ծառայ չըրաւ . Հապա անոնք էր պատե֊ րազմական մարդիկները , իր [18]պա֊ լատականները , իշխանները , զօ֊ րավարները , ու իր կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներն
23 էին : Սողոմոնին գործքին վրայ [19]հինգ հարիւր յիսուն գլխաւոր իշ֊ խաններ կային , որոնք բանւոր ժո֊ ղովուրդին վրայ կ'իշխէին :
24 Իսկ [20]Փարաւոնին աղջիկը Դաւի֊ թին քաղաքէն ելաւ , — [21]ինք տունը՝ որն որ Սողոմոն անոր համար շիներ էր . — ան ատենը Մելլոնը շի֊ նեց :
25 Եւ Սողոմոն տարին իրեք ան֊ գամ Տէրոջը համար շինած սեղա֊ նին վրայ ողջակէզներ ու խաղա֊ ղութեան զոհեր կը մատուցանէր , և Տէրոջը առջևի [22]վրայ խունկ կը ծխէր :
26 Ու Երբոր տունը լմընցուց , Սո֊ ղոմոն թագաւորը Եդովմի երկրին մէջ՝ կարմիր ծովուն եղերքը՝ Ելա֊ թին քովը եղող [23]գասիոնգաբերի
27 մէջ [24]նաւեր շինեց : Եւ Փիրամ՝ Սողոմոնին ծառաներուն հետ , ծո֊ վու [25]քարտուղարները հմուտ եղող իր նաւավար ծառաները ան նաւե֊
28 րով խրկեց : Ու անոնք [26]Ոփիր գացին , և անկէ չորս հարիւր քսան տաղանդ ոսկի առին , ու Սողոմոն Թագաւորին բերին :

Ն · ք · գբ · Իրր 992

[1] Դատ . ա . 21 , 27 , 29 : գ · 1 :
[2] Ցես . ժե . 63 : ժէ . 12 :
[3] Դատ . ա . 28 :
[4] Ցես Ցե . Թ · 25 , 26 : Եզր · բ · 55 , 58 : Նեհեմ . է . 57 : ժա . 3 :
[5] Ղե . իե . 39 :
[6] Եբբ . ծա֊ ռաները :
[7] Տես բ Մն . ը · 10 :
[8] Դւ . գ · 1 : բ Մն . ը · 11 :
[9] Դւ . է . 8 :
[10] բ Թագ . ե . 9 : Գւ . ժա . 27 : բ Մն . ւբ · 5 :
[11] Թաւ . լդ . 35 : բ Օր . ը · 8 : Գւ . իբ . 49 :
[12] բ Մն . ը · 17 , 18 :
[13] Դւ . ժ . 11 :
[14] Ցես . ժբ . 27 :

Գ · ժ

1 Սաբայի Թագուհին Սողոմոնին իմաստութեանը վրայ կը զարմանայ : 14 Սողոմոնին ոսկին . 16 անոր վահանները . 18 անոր փղոսկրեայ աթոռը . 21 անոր սամանները . 24 անոր բերուած ընծաները . 26 անոր կառքերը ու ձիերը :

1 [1]Սաբայի Թագուհին Սողոմոնին համբաւը լսեց , ու եկաւ [2]որ խրթին հարց֊
2 մունքներով զանիկայ փորձէ : Եւ անիկայ Երուսաղէմ եկաւ խիստ շատ զօրքով , խունկեր՝ ու խիստ շատ ոսկի՝ ու պատուական քարեր բեռցած ուղտերով . և Սողոմոնին քովը գնաց , ու բոլոր իր սրտին
3 մէջը եղածը անոր զրուցեց : Եւ Սողոմոն անոր բոլոր հարցմունքնե֊ րը բացատրեց . ու բնաւ անանկ մէկ խօսք մը չկար , որ Թագաւորը չը֊
4 հասկրնայ ու չբացատրէ անոր : Եւ Սաբայի Թագուհին՝ Սողոմոնին բոլոր իմաստութիւնը , ու անոր

[1] Բ Մն . Թ . 1 , եե : Մատ . ժբ . 42 : Ղուկ . ժա . 31 :
[2] Տես Դատ . ժդ · 12 : Առակ . ա . 6 :

5 շինած տունը , Եւ անոր սեղանին
կերակուրները , ու անոր ծառանե-
րուն *բնակարանները , և սպասա-
ւորներուն կայնուածքը , ու ա-
նոնց հագուստները , և անոր մատ-
ռուակները , Եւ †Տէրոջը տունը
ելլելու սանդուխը" տեսնելով ,
6 խելքը գլխէն գնաց . Եւ թագաւո-
րին ըսաւ . Քու վիճակիդ ու իմաս-
տութեանդ վրայով իմ երկրիս
մէջ լսած խօսքերս ճշմարիտ են ե-
7 ղեր . Բայց ես ան խօսքերուն չհա-
ւատացի , մինչև որ ՚ՆՅՄԸ եկայ
ու իմ աչքերովս տեսայ . և ահա
ինծի՝ ՚՚՚ որ կէսը չպատմեցին . քու
իմաստութիւնդ ու երջանկու-
թիւնդ իմ լսած համբաւէս աւելի
8 է : †Երանի քու մարդիկներուդ՝
երանի աս քու ծառաներուդ՝ ո-
րոնք միշտ քու առջևդ կայնելով
քու իմաստութիւնդ կը լսեն :
9 Քու Եհովայ Աստուածդ օրհնեալ
ըլլայ , որ քեզի հաճեցաւ , ու քեզ
Իսրայէլի աթոռին վրայ դրաւ . Ե-
հովան Իսրայէլը յաւիտեան սիրե-
լուն համար , քեզ թագաւոր ը-
րաւ , Նոր իրաւունք ու արդարու-
10 թիւն ընես : Եւ †թագաւորին՝
հարիւր քսան տաղանդ ոսկի , ու
խիստ շատ խունկեր , ու պատուա-
կան քարեր տուաւ : Ալ անկէ
եւս այնչափ շատ խունկ չեկաւ ,
որչափ որ Սաբայի թագուհին Սո-
ղոմոն թագաւորին տուաւ :
11 Եւ Քիրամին նաւերը՝ որ Ոփի-
րէն ոսկի կը բերէին , Ոփիրէն խիստ
շատ †ալմուկ փայտեր ու պա-
12 տուական քարեր բերին : Եւ
թագաւորը ալմուկ փայտէն յենա-
րաններ շինեց՝ Տէրոջը տանը ու
թագաւորական տանը համար , և
քնարներ ու տաւիղներ՝ երգեցող-
ներուն համար . ասանկ էալմուկ
փայտ բնաւ չեկաւ , ու չերեւցաւ
մինչև յայսօր :
13 Ու Սողոմոն թագաւորը Սաբայի
թագուհիին բոլոր ուզած ու խընդ-
րած բաները տուաւ , Սողոմոն
թագաւորը իր ‡առատաձեռնու-
թեամբը անոր տուածէն 'ի զատ :
Եւ անիկայ իր ծառաներուն հետ
դարձաւ իր երկիրը գնաց :
14 Ու մէկ տարուան մէջ Սողոմոնին
եկած ոսկիին կշիռը՝ վեց հարիւր
վաթսունուվեց տաղանդ ոսկի էր .
15 Առուտուր ընողներէն , ու վաճա-
ռականներէն , և Ա|Ռարաբացւոց
բոլոր թագաւորներէն , ու երկրին
նախապարներէն ՚՚՚ 'ի զատ :
16 Եւ Սողոմոն թագաւորը կռածոյ
ոսկիէ երկու հարիւր վահան շինեց .
՚՚ ՚ՆՆ մէկ վահանին համար վեց
17 հարիւր ՚ՒՒՂ ոսկի գնաց , †կռա-
ծոյ ոսկիէ իրեք հարիւր ասպար ալ
ՂՒՒՉ . ՚՚ ՚ՆՆ մէկ ասպարին իրեք
մնաս ոսկի գնաց . ու թագաւորը
Լիբանանի անտառին տունը դրաւ
զանոնք :
18 ¦Եւ թագաւորը փղոսկրէ մեծ
աթոռ մը շինեց , ու զուտ ոսկիով
19 պատեց զանիկայ . Ա՛ս աթոռը վեց
աստիճան ունէր . ու աթոռին վե-
րի ծայրը եւեէն բոլորշի էր , և նըս-
տելու տեղը մէկ կողմէն ու մէկալ
կողմէն յենարաններ ունէր , ու
յենարաններուն քովը երկու ա-
20 ռիւծներ կը կայնէին : Եւ հոն վեց
աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն
ու մէկալ կողմէն տասներկու ա-
ռիւծներ կը կայնէին . բոլոր թա-
գաւորութիւններու մէջ ասանկ
բան մը շինուած չէր :
21 Ու Սողոմոն թագաւորին բոլոր
խմելիքի ամանները ոսկի էին . և
Լիբանանի անտառին տանը բոլոր
ամանները զուտ ոսկի էին . արծա-
թէ չկար . ԻՒՂ որ ՚ՆՒՀ Սողոմո-
նին օրերը՝ բանի մը տեղ չէր սե-
22 պուեր : Վասն զի թագաւորը ծո-
վու վրայ՝ Քիրամին նաւերուն հետ
†Թարսուսցի նաւեր ունէր . Թար-
սուսցի նաւերը իրեք տարին անգամ
մը՝ ոսկիով , արծաթով , փղոս-
կրով , և կապիկներով , ու սիրա-
մարդներով բեռնաւորուած կու
գային :
23 Եւ Սողոմոն թագաւորը հա-
րստութեան ու իմաստութեան
կողմանէ՝ երկրիս բոլոր թագաւոր-
24 ներէն մեծ եղաւ : Ու բոլոր երկիրը
կը փափաքէր Սողոմոնին երեսը
ՊՒՆԼԸ , և անոր իմաստութիւնը
լսելու , որն որ Աստուած անոր սրտին
25 մէջը դրեր էր : Ու անոնց ամէնը
տարուէ տարի իրենց ընծաները կը
բերէին , ՚ՄՒՒՒՆ՝ արծաթէ աման-
ներ , ոսկիէ ամաններ , հանդերձ-
ներ , զէնքեր , խունկեր , ձիեր ու
ջորիներ :
26 Եւ Սողոմոն †կառքեր ու ձիա-
ւորներ ժողվեց , ու անիկայ հազար
չորս հարիւր կառք , ու տասներ-
կու հազար ձիաւոր ունէր . ու
զանոնք կառքերու քաղաքներուն
մէջը , ու Երուսաղէմի մէջ՝ թա-
27 գաւորին քովը տեղաւորեց : †Եւ
թագաւորը Երուսաղէմի մէջ՝ ար-
ծաթը քարերու պէս հասարակ ըն-
ծաւ ըրաւ , ու եղևնափայտը շատու-
թենէն՝ դաշտի մէջ եղող մոլա-
28 թզենիներուն պէս ըրաւ : Եւ
Սողոմոնին ձիերը Եգիպտոսէն կու
գային . ու թագաւորին վաճա-
ռականներուն կարաւանը մէկ որո-
շուած գնով մը կ'ԷՒՒՐ երամակներ
29 ծախու կ'առնէին : Ու Եգիպտոսէն

Ն · Ք · դԲ · Իսր 992

* Կ՚ ժա-ղովս ·

† ա ՄՆ · իշ · 16 ·

† Կ՚ Տէրոջը տանը մէջ բուած ոգեկութիւնը

Բ Ոաակ · բ · 34 ·

Ե Գլ · ե · 7 ·

Ը Թագ · բ · 15 · Սաղ · Ղբ · 2 · Ոաակ · բ · 15 ·

Ի Սաղ · Ղբ · 10 , 15 ·

Ը Գլ Թ · 27 ·

Ի ՐՄՆ · բ · 8 · Թ · 10 · 11 ·

Ժ ՐՄՆ · Թ · 11 ·

Ի ՐՄՆ · Թ · 10 ·

‡ ԵՒՐ · Ձիաքին Նամանման

Ա ՐՄՆ · Թ · 24 · Սաղ · Ղբ · 10 ·

Կ՚ խառնիճաղանձ ժողովուրդներուն

Ի Գլ · Ժգ · 26 ·

Ն · Ք · դԲ · Իսր 992

Ի Գլ · ե · 2 ·

Ա ՐՄՆ · Թ · 17 , ԼԱ ·

Ա ՐՄՆ · Թ · 20 , ԼԱ ·

Ը Գլ · գ · 12 · 13 · դ · 36 ·

Ե Գլ · գ · 26 · Ր ՄՆ · ա · 14 · Թ · 25 · Ժ ՐՕր · Ժե · 16 ·

Ա ՐՄՆ · ա · 15—17 ·

Ե ՐՕր · Ժե · 16 · Ր ՄՆ · ա · 16 · Թ · 28 ·

Ն·Ք·ՂՁ· Իրր 992

Ը Ցես·ա· 4։ դ Թագ· է·6։

մէկ կառք մը դուրս ելլելուն՝ վեց հարիւր արձաթով վեր կու գար, ու մէկ ձին՝ հարիւր յիսուն արծաթով. Ը ու ձեռքովը այնպէս կը հանէին։

ԳԼ· ԺԱ

1 Սողոմոնին կնիկները ու հարճերը 4 անոր ծերութեան ատենը՝ զանիկայ կռապաշտութեան կը դարձընեն։ 9 Աստուած սպառնալիքներ կ'ընէ անոր։ 14 Սողոմոնին հակառակորդները, Ադադ՝ որ Եդիպտոսի մէջ իբրև հիւր ընդունուած էր, 23 ու Ռազոն՝ որ Դամասկոսի մէջ կը թագաւորէր, 26 և Ներոբովամ՝ որուն համար Աքիան մարգարեացաւ։ 41 Սողոմոնին գործքերը, իր թագաւորութեանը օրերը, ու մահը։ Ներոբովամ անոր տեղը կը յաջորդէ։

– Նէեմ· ժգ·26։
Բ Օր·ժէ·17։

1 Եւ Սողոմոն թագաւորը՝ Փարաւոնին աղջիկէն՝ ի զատ Բ շատ օտարազգի կիներ, Մովաբացի, Ամմոնացի, Եդովմացի, Սիդոնացի, Քետացի կը-
2 նիկներ սիրեց. Ան ազգերէն՝ որոնց համար Տէրը Իսրայէլի որդւոցը ըսեր էր. Ընոնց քովը մի մտնէք, ու անոնք ալ ձեր քովը չմտնեն, որ ձեր սիրտերը իրենց աստուածներուն չդարձընեն, Սողոմոն սի-
3 րով անոնց յարեցաւ։ Եւ անիկայ եօթը հարիւր իշխանազուն կնիկ, ու իրեք հարիւր հարճ ունէր. ու անոր կնիկները անոր սիր-

Իրր 984
Ժ Օր·ժէ·17։ Նէեմ· ժգ·26։
Ի ԳԼ·ը·61։
Ղ ԳԼ·Թ·4։

4 տր խոտորցուցին։ Եւ Սողոմոնին ծերութեան ժամանակը Թանոր կնիկները անոր սիրտը՝ օտար աստուածներու դարձուցին, ու Իանոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ՝
5 Ղիր հօրը Դաւիթին սրտին պէս կատարեալ չէր։ Եւ Սողոմոն՝ Սիդոնացւոց աստուծոյն Ի Աստարովթին ետևէն, ու Ամմոնացւոց գար-
6 շելի Մեղբոմին ետևէն գնաց։ Եւ Սողոմոն՝ Տէրոջը առջևը չարութիւն ըրաւ, ու Ր Տէրոջը ետևէն՝ իր հօրը Դաւիթին պէս կատարեալ
7 ոտքով չգնաց։ Ան ատենը Սողոմոն՝ Երուսաղեմին դիմացը եղող լեռանը վրայ Մովաբացւոց գարշելի քամովսին համար Բարձր տեղ մը շինեց, ու Ամմոնացւոց գարշելի
8 Մողբին համար ալ։ Եւ իր բոլոր օտարազգի կնիկներուն համար ալ այնպէս ըրաւ, որոնք իրենց աստուածներուն խունկ կը ծխէին ու զոհ կը մատուցանէին։
9 Եւ Տէրը Սողոմոնին բարկացաւ, վասն զի անիկայ Ի իր սիրտը խոտորցուց Իսրայէլի Տէր Աստուծմէն, Ե ան որ երկու անգամ իրեն երևցաւ, ու հաս բանիս համար պատուիրեց որ ուրիշ աստուածներու ետևէ չերթայ. բայց անիկայ Տէ-
10 րոջը պատուէրը չպահեց։ Եւ Տէրը Սողոմոնին ըսաւ. Որովհետև Է դուն ասանկ ըրիր՝ և իմ ուխտս ու քեզի պատուիրած կանոններս չպահեցիր, Ը Թագաւորութիւնդ անշուշտ քեզմէ պիտի պատռեմ, ու քանիկայ քու ծառայիդ պիտի տամ։
12 Միայն Թէ աս բանը քու օրերուդ մէջը չեմ ըներ, քու հօրդ Դաւիթին համար. Բայց զանիկայ քու որդւոյդ ձեռքէն պիտի պատռեմ։
13 Սակայն բոլոր Թագաւորութիւնը պիտի չպատռեմ. Ը Ա իմ ծառայիս Դաւիթին համար, ու Ձիմ ընտրած Երուսաղեմիս համար Ե քու որդւոյդ մէկ ցեղ մը պիտի տամ։
14 Եւ Տէրը Ժ Սողոմոնին դէմ մէկ թշնամի մը հանեց, Յեդովմի Թագաւորին սերունդէն Եդով-
15 մայեցի Ադադը. Ի վասն զի Դաւիթ Եդովմի մէջ եղած ատենը, երբոր Ցովաբ զօրագլուխը մեռցուածները թաղելու համար ելաւ, Ն ու Եդովմի մէջ բոլոր արուները մեռցուց.
16 (Որովհետև Ցովաբ բոլոր Իսրայէլին հետ՝ հոն վեց ամիս նստաւ, մինչև որ Եդովմայեցւոց բոլոր ա-
17 րուները մեռցուց.) Ան ատենը Ադադ իր հօրը քանի մը Եդովմայեցի ծառաներուն հետ փախաւ որ Եգիպտոս երթայ. ու Ադադ դեռ
18 պզտիկ տղայ էր։ Եւ անոնք Մադիամէն ելան՝ ու Փառան եկան, և Փառանէն իրենց հետ մարդիկներ առին, ու Եգիպտոս եկան Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին, որ անոր տուն տուաւ, ու անոր ռճիկ կապեց, ու անոր երկիր տուաւ։
19 Եւ Ադադ՝ Փարաւոնին առջևը շատ շնորհք գտաւ. ու Փ Ան իր կնկանը քոյրը՝ Թահփենէս Թագուհիին քոյրը՝ անոր կնիկ տուաւ։
20 Եւ Թահփենէսին քոյրը Ափ Ան որդի մը ծնաւ, որ Գանեբաթ Ան Ե Ան. ու Թահփենէս զանիկայ Փարաւոնին տանը մէջ մեծցուց. ու Գանեբաթ՝ Փարաւոնին տունը՝ Փարաւոնին որդւոցը մէջն էր։
21 Ե Ու երբոր Ադադ Եգիպտոսի մէջ լսեց Թէ, Դաւիթ իր հայրերուն հետ քնացեր է, ու Ցովաբ զօրապետը մեռեր է, Ադադ՝ Փարաւոնին ըսաւ. Արձակէ զիս, որ իմ երկիրս
22 երթամ։ Եւ Փարաւոն անոր ըսաւ. Իմ քովս քու Ի՞նչդ պակաս է, որ քու երկիրդ երթալ կ'ուզես։ Ու անիկայ ըսաւ. Ոչ, Բ Ան Ը Ան Ժ Ան, բայց անպատճառ արձակէ զիս։
23 Եւ Աստուած անոր դէմ մէկ Ա Ան Թշնամի մը հանեց, Յելիադային որդին Ռազոնը, որ իր տիրոջը՝ Սուբայի Ադրազար Թա-

Ն·Ք·ՂՁ· Իրր 984

Ե Եբր·ասի-կայ քու քովդ եղաւ։
Հ Հմր 31։ ԳԼ· ժբ·15, 16։

Յբ Թագ·է· 15։ Սաղ· ԽԹ·33։
Ղբ Օր·ժբ· 11։
Ը ԳԼ·ժբ· 20։
Ժ Մն·ա· 26։
Յբ Թագ·բ· 14։ ա Մն· ժբ·12, 13։
Ն Թես·իդ· 19։ բ Օր· ի·13։

Բ Թագ·ը· 8։

24 գաւորին քովէն փախեր էր ։ Ու
անիկայ իր քովը մարդիկներ ժողո-
վեց , և դնդապետ եղաւ . և ու երբ-
որ Դաւիթի զանոնք կոտրեց , Դա-
մասկոս գացին ու հոն բնակեցան ,
ու Դամասկոսի մէջ թագաւորու-
25 Թիւն ըրին ։ Ուստի Ռ֊ը՝ Սողո-
մոնին բոլոր օրերուն մէջ՝ Իսրայէ-
լին Թշնամի եղաւ , Ադադին ըմ֊
չարութենէն՝ի զատ . ու Իսրայէլին
նեղութիւն կու տար , և Ասորւոց
վրայ կը թագաւորէր ։
26 Եւ Սողոմոնին ծառան՝ Սարե-
դայէն Եփրաթացի Ն֊նաբատի որ-
դին Ցերոբովամն ալ , որուն մայրը
որբևարի կնիկ մըն էր Սարուա ա-
նունով , Ն֊թագաւորին դէմ ձեռք
27 վերցուց ։ Ու թագաւորին դէմ
ձեռք վերցընելուն պատճառը աս
էր . ՚երբոր Սողոմոն Մելոնը շի-
նեց , և իր հօրը Դաւիթին քաղա-
28 քին փլած տեղը գոցեց , Ցերոբո-
վամ խիստ ուժով մարդ մը ըլլա-
լով , ու Սողոմոն տեսնելով որ
անիկայ գործուներայ կարի՛ մըն է ,
զանիկայ Յովսեփի տանը բոլոր
29 բեռներուն վրայ դրաւ ։ Եւ եղաւ
որ ան ժամանակը Ցերոբովամ Ե-
րուսաղեմէն դուրս ելաւ . ու Ճամ-
բուն մէջ ՚Սիլովնացի Աքիա մար-
գարէն անոր հանդիպեցաւ . և ա-
նիկայ նոր վերարկու մը հագեր էր .
ու դաշտին մէջը երկուքնին մինակ
30 էին ։ Եւ Աքիա անոր վրայի նոր
վերարկուն բռնեց , ու զանիկայ
տասներկու կտոր պատռեց ։
31 Եւ Ցերոբովամին ըսաւ ։ Տասը
կտորը քեզի՝ առ . քանզի ՚Իսրա-
յէլին Տէր Աստուածը այսպէս կ՚ը-
սէ . Ահա Սողոմոնին ձեռքէն Թա-
գաւորութիւնը պիտի պատռեմ ,
ու տասը ցեղը քեզի պիտի տամ ։
32 Եւ իմ ծառայիս Դաւիթին հա-
մար՝ ու Իսրայէլին բոլոր ցեղերէն
ընտրած Երուսաղէմ քաղաքիս հա-
մար՝ մէկ ցեղ մը անոր ըլլայ .
33 ՚Որովհետև զիս Թողուցին , ու
Սիդոնացւոց աստուածոյն Աստա-
րովթին , և Մովաբացւոց աստու-
ծոյն Քամովսին , ու Ամմոնի որ-
դւոցը աստուածոյն Մելքոմին եր-
կրպագութիւն ըրին , և իմ Ճամ-
բաներուս մէջը չգալեցին , որ իր
հօրը Դաւիթին պէս՝ իմ աչքիս
ուղիղ եղածը , ու իմ կանոններս
ու դատաստաններս՝ի գործ դնեն ։
34 Սակայն անոր ձեռքէն բոլոր Թա-
գաւորութիւնը պիտի չառնեմ , ու
զանիկայ իր կենացը բոլոր օրերուն
մէջ իշխան պիտի Թողում , իմ
պատուիրանքներս ու կանոններս
պահող իմ ընտրած ծառայիս Դա-
35 ւիթին համար ։ Բայց ՚անոր որ-
դւոյն ձեռքէն Թագաւորութիւնը
պիտի առնեմ , ու տասը ցեղը քեզի
36 պիտի տամ ։ Եւ անոր որդւոյն մէկ
ցեղ մը պիտի տամ , որ ՚իմ ծա-
ռաս Դաւիթը իմ առջեւս միշտ մէկ
ճրագ մը ունենայ Երուսաղէմ քա-
ղաքին մէջ՝ որն որ ընտրեցի իմ ա-
37 նունս հոն դնելու համար ։ Ու քեզ
պիտի առնեմ , և սրտիդ բոլոր
ուզածին պէս Թագաւորութիւն
պիտի ընես , ու Իսրայէլի վրայ
38 Թագաւոր պիտի ըլլաս ։ Եւ Թէ
որ իմ բոլոր քեզի պատուիրածնե-
րուս ջաղանդութիւն ընես , ու իմ
Ճամբաներուս մէջը քալես , և իմ
ծառայիս Դաւիթին ըրածին պէս՝
իմ կանոններս ու պատուիրանք-
ներս պահելով՝ իմ առջեւս ուղիղ
եղածը ընես , անատենը ֊ես քեզի
հետ պիտի ըլլամ , ու ֊քեզի մնա-
յուն տուն պիտի շինեմ , ինչպէս
որ Դաւիթին շինեցի , ու Իսրայէլը
39 քեզի պիտի տամ ։ Եւ ասոր հա-
մար Դաւիթին սերունդը պիտի
40 չարչարեմ , բայց չէ Թէ միշտ ։ Ու
Սողոմոն՝ Ցերոբովամը մեռցընել
ուզեց , բայց Ցերոբովամ ելաւ
Եգիպտոս փախաւ , ֊֊ Եգիպտոսի
Սիսակ Թագաւորին քովը ֊֊ ,
ու մինչև Սողոմոնին մեռնիլը Ե-
գիպտոս մնաց ։
41 Եւ ՚Սողոմոնին մնացորդ պատ-
մութիւնը , ու անոր բոլոր ըրած-
ները , ու անոր իմաստութիւնը ,
ահա Սողոմոնին պատմութեանը
42 գրքին մէջ գրուած չէն ։ ֊Եւ Սո-
ղոմոնին Երուսաղեմի մէջ բոլոր
Իսրայէլի վրայ Թագաւորութիւն
ըրած օրերը՝ քառասուն տարի է-
43 ղաւ ։ ՚Ու Սողոմոն իր հայրերուն
հետ քնացաւ , և իր հօրը Դաւի-
թին քաղաքին մէջը Թաղուեցաւ .
ու անոր որդին ֊Ռոբովամ՝ անոր
տեղը Թագաւոր եղաւ ։

Գ Լ · Ժ Բ

1 Իսրայէլացիք Ռոբովամ Թագաւոր ընելու
համար Սիւքեմի մէջ ժողվուելով՝ Ցերոբովա-
մին միջոցովը անկէ կը խնդրեն որ իրենց վրայ
դրուած լուծը Թեթևցընէ ։ 6 Ռոբովամ՝
երիտասարդներուն խորհրդովը ծերերուն խր-
բատը մերժելով՝ խստութեամբ կը պատաս-
խանէ անոնց ։ 16 Տասը ցեղերը կ՚ապստամ-
բին , ու Ադորամը կը մեռցընեն . ասոր վրայ
Ռոբովամ կը փախչի ։ 21 Ռոբովամ բանակ
կը կազմէ , բայց Սեմայիային կ՚արգիլուի ։ 25
Ցերոբովամ իր Թագաւորութիւնը զօրացնե-
լու համար քաղաքներ կը շինէ ։ 26 ու երկու
որթերուն կռապաշտութիւնը կը հաստատէ ։

1 Եւ ֊Ռոբովամ Սիւքեմ գնաց .
վասն զի բոլոր Իսրայէլը զանի-
կայ Թագաւոր ընելու համար
2 Սիւքեմ գացեր էր ։ Ու ֊Նաբա-
տեան Ցերոբովամ՝ որ Սողոմոն
Թագաւորին երեսէն փախած՝ Ե-
գիպտոս կը բնակէր , դեռ ֊Ե-

Ն · ք · ղ · Իրր 984
Ը Թագ · բ · 3 ։ ժ · 8 ։ 18 ։
Գ Գէ · ժբ · 2 ։ բ Մն · ժգ · 6 ։
Ը Թագ · ի · 21 ։
֊ Գէ · Թ · 24 ։
Իրր 980
֊ Գէ · ժդ · 2 ։
Վ Ցես ա Թագ · ժե · 27 ։ իդ · 5 ։
֊ Հմ 11 , 13 ։
Բ Հմ 5 , 6 , 7 ։
Գ Գէ · ժբ · 16 , 17 ։
Ն · ք · ղ · Իրր 980
֊ գ Թագ · ժե · 4 ։ գ Թագ · բ · 19 ։ Սաղ · ճբ · 17 ։
֊ Գէ · ժա · 5 ։
֊ Բ Թագ · է · 11 , 27 ։
֊ բ Մն · Թ · 29 ։
֊ բ Մն · Թ · 30 ։
֊ բ Մն · Թ · 31 ։
Իրր 975
Բ Մաս · ա · 7 ։
֊ բ Մն · ժ · 1 , ՟ ։
Ը Գէ · ժա · 26 ։
֊ Գէ · ժա · 40 ։

Ն · Ք · ՂԲ · 975

զիպտոսի մէջ էր երրոր ա-
3 ֆեանը լսեց , եւ Հոդբ խրբ-
կելով զանիկայ կանչեցին . ու ճե-
րոբովամ և Իսրայէլի բոլոր ժողով-
քը եկան , ու Ռոբովամին հետ խո-
4 սեցան ու ըսին . Քու հայրդ մեր
Բ Թագ · ը · 11—18 · Գէ · դ · 7 ։ վրայ Բ ծանր լուծ մը դրաւ . դուն
հիմա քու հօրդ խիստ ծառայու-
թիւնը , ու մեր վրայ դրած ծանր
լուծը թեթեւցուր , ու քեզի ծա-
5 ռայութիւն ընենք ։ եւ անիկայ
ըսաւ անոնց . Գացէք՝ ու իրեք օ-
րէն ետքը ինծի դարձէք . ու ժո-
ղովուրդը գնաց ։
6 Եւ Ռոբովամ Թագաւորը խոր-
հուրդ հարցուց ան ծերերուն՝ որ իր
հօրը Սողոմոնին առջեւը կը կայնէին
երրոր անիկայ ողջ էր , ու ըսաւ .
Դուք ինծի ի՞նչ խորհուրդ կու
տաք , որ աս ժողովուրդին պա-
7 տասխան տամ ։ եւ անոր խօսեցան
Ի Թագ · ժ · 7 ։ Ածակ · ժե · 1 ։ ու ըսին . Եթէ որ դուն այսօր աս
ժողովուրդին ծառայ ըլլաս , ու ա-
նոնց ծառայութիւն ընես , և անոնց
բարի խօսքեր ըսելով պատասխան
տաս , ան ատեն անոնք քեզի միշտ
8 ծառայ կ՚ըլլան ։ Բայց Ռոբովամ ծե-
րերուն իրեն տուած խորհուրդը
մերժեց , ու իր առջեւը կայնող ե-
իր հետը մեծցած երիտասարդներուն
9 խորհուրդ հարցուց . Եւ անոնց ը-
սաւ . Դուք ի՞նչ խորհուրդ կու
տաք , որ աս ժողովուրդին պա-
տասխան տամ . քանզի անոնք ինծի
խօսեցան , ու ըսին . Քու հօրդ մեր
10 վրայ դրած լուծը թեթեւցուր ։ Ու
անոր հետ մեծցած երիտասարդնե-
րը անոր խօսեցան ու ըսին . Քու
հայրդ մեր լուծը ծանրացուց , ու
դուն մեր վրայէն թեթեւցուր՝ ըսող
ժողովուրդին այսպէս խօսիս , ու
անոնց այսպէս ըսես . Իմ պզտիկ
մատս՝ իմ հօրս մէջքէն հաստ է .
11 Իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր
է , բայց ես ձեր լուծը աւելի պիտի
ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խա-
րազաններով խրատեր է , բայց ես
ձեզ կարիճներով պիտի խրատեմ ։
12 Եւ Ճերոբովամ ու բոլոր ժողո-
վուրդը երրորդ օրը Ռոբովամին ե-
կան , ինչպէս որ թագաւորը ըսեր
էր թէ՝ Երրորդ օրը ինծի եկէք ։
13 Ու թագաւորը ժողովուրդին խըս-
տութեամբ պատասխան տուաւ ,
և ծերերուն իրեն տուած խրատը
14 մերժելով , Երիտասարդներուն խոր-
հուրդին պէս անոնց հետ խօսեցաւ ,
ու ըսաւ . Իմ հայրս ձեր լուծը ծան-
րացուցեր է , բայց ես ձեր լուծը
աւելի պիտի ծանրացընեմ . իմ
հայրս ձեզ խարազաններով խրա-
տեր է , բայց ես ձեզ կարիճներով
15 պիտի խրատեմ ։ Եւ թագաւորը
ժողովուրդին խօսքը մտիկ չըրաւ .
վասն զի Աստուծմէ եղաւ ,
որ Տէրը Սիլոնացի Ախիային ձեռ-
քովը Նաբատեան Ճերոբովամին
16 ըսած խօսքը հաստատէ ։ Ու երրոր
բոլոր Իսրայէլը տեսաւ որ թագա-
ւորը իրենց մտիկ չըրաւ , ժողո-
վուրդն ալ թագաւորին պատաս-
խան տուին ու ըսին . Մենք Դա-
ւիթին քովը ի՞նչ բաժին ունինք ,
ու Յեսսէի որդւոյն քովը ժառան-
գութիւն չունինք . ով Իսրայէլ՝
ձեր վրաններդ դարձէ՛ . ով Դա-
ւիթ՝ հիմա դուն քու տունդ հոգա .
ու Իսրայէլը իրենց վրաններդ գա-
17 ցին ։ Բայց Յուդայի քաղաքնե-
Բ Գէ · ժա · 13 · 36 ։ րուն մէջ բնակող Իսրայէլի որդւո-
ցը վրայ՝ Ռոբովամը թագաւոր ե-
18 ղաւ ։ Եւ Ռոբովամ թագաւորը
Ա Գէ · դ · 6 · ե · 14 ։ երրոր հարկերուն վրայ եղող Ա-
դորամը խրկեց , բոլոր Իսրայէլը
զանիկայ քարերով քարկոծեցին ,
ու մեռաւ ։ Եւ Ռոբովամ թագա-
ւորը արտորալով կառքը հեծաւ ,
19 որ Երուսաղէմ փախչի ։ Այսպէս
Իդ Թագ · ժէ · 21 ։ Իսրայէլը Դաւիթի տունէն ապըս-
տամբեցաւ մինչև աս օրս ։
20 Եւ բոլոր Իսրայէլը Ճերոբովամին
դառնալը լսելով՝ Հոդբ խրկեցին ,
ու զանիկայ ժողովքին մէջը կան-
չեցին , և զանիկայ բոլոր Իսրայէ-
լի վրայ թագաւոր դրին , ու Յու-
դայի ցեղէն՝ի զատ Դաւիթին տա-
Ա Գէ · ժա · 13 · 32 ։ 21 նը ուրիշ հետևող մը չկար ։ Եւ
Ռոբովամ Երուսաղէմ մտաւ , ու
Բ Մն · ժա · 1 ։ բոլոր Յուդայի տունէն ու Բենիա-
մինի ցեղէն հարիւր ութսուն հա-
զար ընտիր պատերազմողներ ժող-
վեց , որ Իսրայէլի տանը հետ պա-
տերազմին , ու թագաւորութիւնը
Սողոմոնի որդւոյն Ռոբովամին դար-
ձընեն ։
22 Եւ Աստուծոյ մարդուն Սեմա-
յիային՝ Աստուծոյ խօսքը եղաւ՝
Բ Մն · ժա · 2 ։ 23 ըսելով . Սողոմոնի որդւոյն Յու-
դայի Ռոբովամ թագաւորին , ու
բոլոր Յուդայի տանը , ու Բենիամի-
նին , և մնացորդ ժողովուրդին խօ-
24 սիս , ու ըսես . Տէրը այսպէս կ՚ը-
սէ . Մի ելլէք , ու Իսրայէլի որ-
դւոցը՝ ձեր եղբայրներուն հետ մի
պատերազմիք . ամէն մարդ թող
իր տունը դառնայ . Ես վասն զի աս
Ա Հմր 15 ։ բանը ինծմէ եղաւ ։ Եւ Տէրոջը
խօսքը մտիկ ըրին , ու Տէրոջը ը-
սածին պէս՝ * ետ դարձան ։
* Կ՚երթալէն Տես Դատ · թ · 45 ։ 25 Ու Ճերոբովամ Եփրեմի լեռանը
Յ Դատ · բ · 17 ։ վրայ Սիքեմը շինեց , ու հոն բը-
նակեցաւ . և անկէ ելլաւ , Յ Փա-
26 նուէլը շինեց ։ Ու Ճերոբովամ իր
սրտին մէջը ըսաւ . Հիմա թագա-
ւորութիւնը Դաւիթին տանը պի-
27 տի դառնայ ։ Թէ որ աս ժողո-

Ն·Ք·ԳԲ· 975

ՂԲ Օբ·ժբ· 5, 6։

վուրդը Երուսաղէմ Ղ Ցէրոջը տուն ը ելլէ զոհ ընելու համար, ան ատենը աս ժողովուրդին սիրտը իրենց տիրոջը Ցուդայի Ռոբովամ թագաւորին պիտի դառնայ, և զիս պիտի մեռցընեն, ու Ցուդայի Ռոբովամ թագաւորին պիտի դառ-

ֆԳ Թագ·ժ· 29 · ժե · 16։

28 նան։ Եւ թագաւորը խորհուրդ ըրաւ, ու ֆերկու հատ ոսկիէ որթ շինեց. ու անոնց ըսաւ. *Ասկէ ետև ձեզի Երուսաղէմ ելլել պէտք չէ՝ ով Իսրայէլ, *ահա քու աստուածներդ՝ որ քեզ Եգիպտոսի

*Կ՚Ել·լբ·4, 8։

29 երկրէն հանեցին։ Ու մէկը ⁂Բեթէլի մէջ դրաւ, ու մէկալն ալ Դանի

⁂Յն·իբ· 19։ Ում·գ· 15։

30 մէջ դրաւ։ Եւ ասիկա մեղքի պատճառ եղաւ. վասն զի ժողովուրդը մինչև Դան կ՚երթար ան-

Ն Դատ·ժբ· 29։

31 րկուն առջևը երկրպագանելու։ Բարձր տեղերու վրայ կատուններ շինեց. և Ղժողովուրդին ցած մարդիկներէն քուրմեր ըրաւ, որոնք Ղևիի որդւոյմէ չէին։

Ղ Գլ·ժգ· 34։ գԹագ· ժէ· 21։

32 Ու ցերորդ ամսուն մէկը՝ ամսուն տասնուհինգերորդ օրը, Ցուդայի մէջ տօն տօնին պէս տօն սահմանեց, ու սեղանին վրայ †զոհեր մատուց՝. Բեթէլի մէջ այսպէս ըրաւ, ու իր շինած որթերուն զոհեր մատուց. և բարձր տեղերուն համար ըրած Ղքուրմերը Բեթէլի մէջ դրաւ։

Ա Գլ·ժգ· 32։ Թում· գ· 10։ Գլ· ժգ· 33։ գ Թագ· ժէ· 32։ բ Մն· ժա· 14։ 15։ Եզկ· խգ· 7, 8։

33 Ու ՚իր մտքէն ընտրած ամսուն մէջ՝ ամսուն տասնուհինգերորդ օրը՝ Բեթէլի մէջ իր շինած սեղանին վրայ զոհեր մատուց, ու Իսրայէլի որդւոցը տօն սահմանեց, ու սեղանին վրայ †զոհեր մատուցանելով՝ ՚խունկ ծխեց՝։

Ղ Ա՚մով· է· 13։

՚Թում· ժե· 39։

†Կ՚Ել·խունկ ծխելու եղաւ։

՚Գլ·ժգ·1։

ԳԼ·ԺԳ

1 Ցերոբովամին ձեռքը կը չորնայ, Բեթէլի մէջ իր շինած սեղանին վրայով մարգարէութիւն ընողին դէմ չարութիւն մտածելուն համար, 6 և մարգարէին աղաթքովը կը բժշկուի։ 7 Ան մարգարէն թագաւորին ընելու պատիւը մերժելով՝ Բեթէլէն կ՚երթայ։ 11 Մէկ ծեր մարգարէ մը խաբելով՝ ետ կը դարձնէ զանիկայ, 20 որ Աստուծմէ կը յանդիմանուի, 23 ու առիւծէ մը կը մեռցուի։ 26 ու ծեր մարգարէն զանիկայ կը թաղէ, 31 և անոր մարգարէութիւնը կը հաստատէ։ 33 Ցերոբովամին կամակորութիւնը։

՚Գլ·ժբ· 32·33։

1 Ու ՚երբոր Ցերոբովամ՝ խունկ ծխելու համար սեղանին քովը կը կայներ, ահա Բ Աստուծոյ մարդ մը Ցէրոջը խօսքովը Ցուդայէն Բեթէլ

Բ գ Թագ· իգ·17։

2 եկաւ։ Եւ Ցէրոջը խօսքովը սեղանին կանչեց ու ըսաւ. Ո՛վ սեղան, ով սեղան, Ցէրը այսպէս կ՚ըսէ. Ահա Դաւիթին տանը որդի մը պիտի ծնանի ‡Յովսիա անունով, և քու վրադ խունկ ծխող բարձր տեղերուն քուրմերը՝ քու վրադ

Գ Թագ·իգ·15·16։

պիտի զոհէ, ու քու վրադ մարդոց
3 ոսկորներ պիտի այրեն։ Եւ նոյն օրը Ժնշան մը տալով՝ ըսաւ. Ցէրոջը խօսելուն նշանը աս է. ահա սեղանը պիտի պատռի, ու վրայի մխիրը պիտի թափի։

Ն·Ք·ԳԲ· 975

ԺԵս·է·14։ Ցօ·բ·18։ ա Կոր·ա· 22։

4 Ու երբոր թագաւորը Աստուծոյ մարդուն Բեթէլի մէջ սեղանին համար կանչած խօսքը լսեց, Ցերոբովամ սեղանին վրայէն ձեռքը երկընցուց, ու ըսաւ. Աս ՚բռնեցէք. և անոր վրայ երկընցուցած ձեռքը չորցաւ, ու զանիկայ իրեն դարձընելու կարող չեղաւ։

5 Եւ Աստուծոյ մարդուն Ցէրոջը խօսքովը տուած նշանին պէս՝ սեղանը պատռեցաւ, ու մխիրը սեղանէն թափեցաւ։ Եւ թագաւորը Աստուծոյ մարդուն պատասխան տուաւ ու ըսաւ. Ժքու Ցէր Աստուծոյդ առջևը աղաչէ, ու ինծի համար աղօթք ըրէ, որ ձեռքս ինծի դառնայ։ Ան ատենը Աստուծոյ մարդը Ցէրոջը առջևը աղաչեց. և թագաւորին ձեռքը իրեն դարձաւ, ու առջինին պէս եղաւ։

Ժ Ել·ը·8։ թ·28։ ժ· 17։ Թում· իա·7։ Գոր· ը·24։ Ցակ· ե·16։

7 Եւ թագաւորը Աստուծոյ մարդուն ըսաւ. Ինծի հետ տուն եկուր, և քիչ մը կերակուր կեր՝, ու Ղքեզ

Եբէր·էրէտ զօրացո՛ւր։

8 զի պարգև տամ։ Եւ Աստուծոյ մարդը թագաւորին ըսաւ. Ժթէ որ ինծի քու տանդ կէսն ալ տաս, քեզի հետ պիտի չերթամ, ու աս տեղս հաց պիտի չուտեմ, ոչ ալ

Ղ ա Թագ· թ·7։ գ Թագ· ե· 15։

9 ջուր խմեմ. Վասն զի Ցէրը իր խօսքովը ինծի այսպէս պատուիրեց ու ըսաւ. ԸՀաց չուտես, ու ջուր չխմես, ու դացած ճամբայէդ

Ժ Թում· իբ· 18։ իդ·13։

10 չդառնաս։ Ուստի անիկայ ուրիշ ճամբով դնաց, ու Բեթէլ դացած ճամբովը չդարձաւ։

Ը ա Կոր·ե· 11։

11 Եւ Բեթէլի մէջ ծեր մարգարէ մը կը բնակէր. ու անոր որդիքը եկան, ու Աստուծոյ մարդուն նոյն օրը Բեթէլի մէջ բոլոր ըրած գործքերը անոր պատմեցին, և անիկայ թագաւորին ինչ խօսքեր որ ըրուցեր էր, զանոնք ալ իրենց հօրը

12 պատմեցին։ Ու անոնց հայրը ա-նոնց ըսաւ. Ո՞ր ճամբայէն դնաց։ Եւ անոր որդիքը Ցուդայէն եկող Աստուծոյ մարդուն դացած ճամ-

13 բան §ցուցուցին։ Ու իր որդուցը ըսաւ. Էշը պատրաստեցէք ինծի. և անոնք անոր համար էշը պատրաստեցին, ու անիկայ վրան հեծաւ.

§Կ՚Ել· սեր էին։

14 Եւ Աստուծոյ մարդուն ետևէն գընաց, ու զանիկայ բևեկնիի մը տակ նստած գտաւ, ու անոր ըսաւ. Ցուդայէն եկող Աստուծոյ մարդը դուն ես. և անիկայ ըսաւ. Ես

15 եմ։ Ու անոր ըսաւ. Ինծի հետ

16 տունն եկուր, ու հաց կեր։ Եւ ա-

Ն·Ք·ԳՀ· 975

Նիկայ ըսաւ . Ի՞նչեղ հետ չեմ կրնար դառնալ ու քու դուռդ մըտնել . ոչ ալ աս տեղս քեզի հետ հաց պիտի ուտեմ , ու ոչ ջուր
17 խմեմ . Վասն զի Ե Տէրոջը խօսքովը ինծի ըսուեցաւ . Հոն հաց չուտես , ջուր ալ չխմես , ու գացած ճամ-
18 բայէդ չդառնաս : Բայց անիկայ ըսաւ անոր . Ես ալ քեզի պէս մարգարէ եմ , ու մէկ հրեշտակ մը ինծի հետ Տէրոջը խօսքովը խօսեցաւ ու ըսաւ . Զանիկայ քեզի հետ քու տունդ դարձուր՝ որ հաց ուտէ , ու ջուր խմէ : Սուտ
սուտ զրուցեց անոր :
19 Ան տունը անոր հետը դարձաւ , և անոր տունը հաց կերաւ , ու ջուր
20 խմեց : Ու երբոր անոնք սեղանը նստեր էին , Տէրոջը խօսքը զանիկայ դարձնող մարգարէին եղաւ .
21 Ու անիկայ Յուդայէն եկող Աստուծոյ մարդուն կանչելով՝ ըսաւ . Տէրը այսպէս կ'ըսէ . Որովհետև դուն Տէրոջը խօսքին անշնազանդութիւն ըրիր , ու քու Տէր Աստուծոյդ քեզի պատուիրած պա-
22 տուէրը չպահեցիր , Եւ դարձար , ու հաց կերար ու ջուր խմեցիր Ե անոր տեղը՝ որուն համար քեզի ըսած էր որ հաց չուտես ու ջուր չխմե՛ս , քու մեռելդ քու հայրերուդ գերեզմանը պիտի չմտնէ :
23 Եւ հաց ուտելէն ու ըմբ խմելէն ետքը՝ անիկայ իր ետ դարձուցած
24 մարգարէին էշը պատրաստեց . Ան ալ գնաց . ու ճամբուն մէջ Լմէկ առիւծ մը գտաւ զանիկայ ու մեռցուց . և անոր մեռելը ճամբուն վրայ փռուած մնաց . և էշը անոր քովը կայներ էր , առիւծն ալ մե-
25 ռելին քովը կայներ էր : Եւ ահա՜ Ն՜ի՜ քանի մը մարդիկ անցնելով՝ ճամբուն վրայ փռուած մեռելը ու մեռելին քովը կայնող առիւծը տեսան . ու գացին ան ծեր մարգարէին բնակած քաղաքին մէջը
26 պատմեցին : Եւ զանիկայ ճամբայէն դարձնող մարգարէն երբոր լսեց , ըսաւ . Անիկայ՝ Տէրոջը խօսքին անշնազանդութիւն ընող Աստուծոյ մարդն է . ու Տէրը զանիկայ առիւծին տուեր է , որ զանիկայ պատառելով մեռցուցեր է , Տէրոջը անոր ըսած խօսքին հա-
27 մեմատ : Եւ իր որդուոցը խօսեցաւ ու ըսաւ . Ինծի համար էշը պատրաստեցէք . ու անոնք պատ-
28 րաստեցին : Եւ գնաց անոր մեռելը գտաւ , որ ճամբուն վրայ փռուած էր . ու էշը ու առիւծը մեռելին քովը կայներ էին . առիւծը մեռելը կերած չէր ,
29 ոչ ալ էշը պատառեր էր : Եւ

Ն·Ք·ԳՀ· 975

ան մարգարէն Աստուծոյ մարդուն մեռելը վերցուց , ու զանիկայ իշուն վրայ դրաւ , ու զանիկայ դարձուց . և ծեր մարգարէն քաղաքը մտաւ , որ լալով զա-
30 Նիկայ թաղէ . Եւ անոր մեռելը իր գերեզմանին մէջը դրաւ . ու Ե՜վ՜այ եղբայր ը՜հ՜ը՜վ , անոր վրայ լացին ,
31 Ու զանիկայ թաղելէն ետքը՝ իր որդուոցը խօսեցաւ ու ըսաւ . Երբոր ես մեռնիմ , զիս Աստուծոյ մարդուն թաղուած գերեզմանին մէջը թաղէ՛ք . Ի՞մ ոսկորներս անոր ոս-
32 կորներուն քովը դնէք . Վասն զի Բեթէլի մէջ եղող սեղանին համար , ու Սամարիայի քաղաքներուն մէջ եղող ամէն բարձր տեղերու կառ-
տուններուն համար՝ Հանոր Տէրոջը խօսքովը կանչած խօսքը անպատճառ պիտի կատարուի :
33 Յետ բանէն ետքը Ցերոբովամ իր չար ճամբայէն չդարձաւ . մանաւանդ նորէն ժողովուրդին ցած մարդիկներէն բարձր տեղերուն Ղբուրմեր կ'ընէր . ամէն ուզողը կ'օրհներ . ու անիկայ բարձր տեղերուն քուրմ
34 կ'ըլլար : Եւ աս բանը Ցերոբովամին տանը մեղքի պատճառ եղաւ , նաև Հանոր երկրիս երեսէն կորսուելուն ու բնաջինջ ըլլալուն :

ԳԼ· ԺԴ

1 Ցերոբովամ իր որդւոյն Աբիային հիւանդանալուն համար՝ իր կնկանը հագուստը փոխել կու տայ , ու զանիկայ ընծաներով Սելով կը խրկէ Ախիա մարգարէին : 5 Ախիա Աստուծոյ յայտնութեամբը Աստուծոյ դատաստանը կը ցուցընէ անոր : 17 Աբիա կը մեռնի ու կը թաղուի : 19 Նադաբ՝ Ցերոբովամին յաջորդը կ'ըլլայ : 21 Ռոբովամին չար վարմունքը : 25 Սիսակ Երուսաղէմը կը կողոպտէ : 29 Աբիա՝ Ռոբովամին յաջորդը կ'ըլլայ :

1 Ն՚ԱՆ ատենը Ցերոբովամին որդին
2 Աբիան հիւանդացաւ : Ու Ցերոբովամ իր կնկանը ըսաւ . Ելիր , կերպարանքդ փոխէ , այնպէս որ Ցերոբովամին կնիկը ըլլալդ չգիտցուի , ու Սելով դնա . ահա Ախիա մարգարէն հոն է . անիկայ էր՝ որ ինծի համար ըսաւ Թէ ես ժողովուրդին վրայ թագաւոր պիտի ըլ-
3 լամ . Ու ձեռքդ տասը հաց , և բլիթներ , ու մէկ սափոր մեղր առ , ու անոր դնա . անիկայ քեզի պիտի պատմէ ինչ որ տղուն պիտի պա-
4 տահի : Եւ Ցերոբովամին կնիկը այնպէս ըրաւ . ու ելաւ Ե Սելով գընաց , և Ախիային տունը մնաւ . բայց Ախիային աչքերը ծերութենէն տկարացեր էին , ու չէր կրնար տեսնել :
5 Եւ Տէրը Ախիային ըսաւ . Ահա Ցերոբովամին կնիկը՝ իր տղուն համար քեզի բան հարցընելու կու գայ .

956

վան զի անիկայ հիւանդ է . անոր այսպէս ու այսպէս խօսիս . ու անիկայ գալու ատենը անծանօթ
6 կերպարանքով ձեւ ի՛նչ ։ Ու երբոր անիկայ դռնէն ներս կը մտնէր , ընքիա անոր ոտքերուն ձայնը լսածին պէս , ըսաւ . Ո՛վ Ցերոբովամին կնիկը՝ եկուր , դուն ինչո՞ւ ատանկ անծանօթի կերպարանք մտեր ես . բայց ես քեզի խիստ լուր ղրկե-
7 խրկուեցայ ։ Գնա , Ցերոբովամին ըսէ . Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ . Որովհետև քեզ ժողովուրդին մէջէն բարձրացուցի , ու քեզ իմ ժողովուրդիս Իսրայէլին
8 վրայ իշխան ըրի , եւ Թագաւորութիւնը Դաւիթին տունէն պատռեցի , ու զանիկայ քեզի տուի . ու դուն՝ ինչ պատուիրանքներս պահող , ու իմ առջեւս ուղղութիւն ընելու համար իր բոլոր սրտովը ինծի նազանդ եղող իմ Դաւիթ ծառայիս պէս չեղար .
9 Ա՛նանաւանդ բոլոր քեզմէ առաջ եղողներէն աւելի չարութիւն ըրիր , ու գնա բարկացընելու համար՝ դացիր քեզի ուրիշ աստուածներ ու ձուլածոյ կուռքեր շինեցիր , ու
10 զիս ետիդ նետեցիր . Ասոր համար ահա Ցերոբովամին տանը վրայ չարիք պիտի բերեմ , ու Ցերոբովամին ամէն երիկ մարդիկները Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը պիտի կոտորեմ , և Ցերոբովամին տունը պիտի աւլեմ , ինչպէս որ աղբը կ'աւլեն , մինչեւ որ
11 հատնի ։ Ցերոբովամին քաղաքի մէջ մեռնողը՝ շուները պիտի ուտեն , ու դաշտի մէջ մեռնողը՝ երկինքի թռչունները պիտի ուտեն .
12 քանզի Տէրը խօսեցաւ ։ Եւ դուն ելի՛ր , քու տունդ գնա . ու Էքու ոտքերդ քաղաքին մէջը մտած ա-
13 տենը տղան պիտի մեռնի . Ու բոլոր Իսրայէլը լալով զանիկայ պիտի թաղեն . վասն զի Ցերոբովամէն՝ միայն անիկայ գերեզման պիտի մտնէ . որովհետև Իսրայէլի Տէր Աստուծոյն առջեւը Ցերոբովամին տանը մէջ՝ բարի բան մը գտաւ .
14 Նոր վրայ գտնուեցաւ ։ Եւ Տէրը իրեն համար Իսրայէլի վրայ մէկ թագաւոր մը պիտի հանէ , որ անիկայ ի՛նոյն օրը Ցերոբովամին տունը պիտի կոտորէ . ու ալ ի՞նչ ճաց . գրեթէ հիմա ձեւ ի՛ոտքոնէ
15 — բռնը ։ Եւ Տէրը ջուրերու մէջ եղող շարժուն եղէգի պէս՝ Իսրայէլը պիտի զարնէ , ու Իսրայէլը պիտի խլէ աս բարի երկրիս երեսէն , որն որ անոնց հայրերուն տուեր էր , ու զանոնք Գետին անդին կողմը պիտի ցրուէ , որով-

հետև Տէրը բարկացընելով իրենց Աստարովթի կուռքեր՝ շինեցին .
16 Եւ Իսրայէլը երեսէ պիտի ձգէ , Ցերոբովամին մըրած մեղքերուն համար , ու Իսրայէլին ալ մեղանչել տալուն համար ։
17 Ան տատնը Ցերոբովամին կնիկը ելաւ գնաց , ու Թրսա մտաւ . ու անիկայ տանը դռնէն ներս մտա-
18 ծին պէս , տղան մեռաւ ։ Եւ զանիկայ թաղեցին . ու բոլոր Իսրայէլը անոր վրայ լացին , Ցերոբովամ իր ծառային Ախիա մարգարէին ձեռքովը խօսեր էր ։
19 Ու Ցերոբովամին մնացորդ պատմութիւնը՝ թէ ինչպէս պատերազմ ըրաւ , և թէ ինչպէս թագաւորեց , ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը
20 գրուած է ։ Եւ Ցերոբովամին թագաւորութիւն ըրած օրերը քսանուերկու տարի եղաւ , ու իր հայրերուն հետ քնացաւ . ու անոր տեղը՝ անոր որդին Նադաբը թագաւոր եղաւ ։
21 Եւ Սողոմոնին որդին Ռոբովամ Ցուդայի մէջ թագաւորեց . Ռոբովամ քառասունմէկ տարեկան էր երբոր թագաւոր եղաւ . և տասնուեօթը տարի Թագաւորութիւն ըրաւ Երուսաղէմի մէջ , այնտեղ ան քաղաքին մէջ՝ որն որ Տէրը Իսրայէլին ամէն ցեղերէն ընտրեց՝ իր անունը հոն դնելու համար . Ու անոր մայրը Ամմոնացի էր Նաամա
22 անունով ։ Եւ Ցուդայեանք ու Տէրոջը առջեւը չարութիւն ըրին . ու իրենց ըրած մեղքերովը՝ իրենց հայրերուն բոլոր ըրածէն աւելի
23 զանիկայ բարկացուցին ։ Եւ անոնք ալ ամէն բարձր բլուրներուն վրայ , ու Համէն կանանչ ծառերուն տակը բարձր տեղեր , ու արձաններ , և Աստարովթի կուռքեր
24 շինեցին ։ Ու երկրին մէջ Սոդոմական մեղք ալ գործողներ կային , ու Տէրոջը Իսրայէլի որդւոցը առջեւէն վռնտած ազգերուն բոլոր գարշելի բաներուն նման կ'ընէին ։
25 Եւ Ռոբովամ թագաւորին հինգերորդ տարին՝ Եգիպտոսի Սիսակ թագաւորը Երուսաղէմի վրայ
26 ելաւ . Ու Տէրոջը տանը գանձերը ու թագաւորին տանը գանձերը առաւ . ամէնն ալ առաւ . Սողոմոնին շինած բոլոր ոսկիէ ասպար-
27 ներն ալ առաւ ։ Եւ Ռոբովամ թագաւորը անոնց տեղը պղնձէ ասպարներ շինեց , ու զանոնք թագաւորական տանը դուռը պահպանութիւն ընող սուրհանդակաց ոստիկաններուն ձեռքը

Ն · Բ · ԳԲ · 956

Ա Տէո Բ Թագ · Ժբ · 7 · 8 ։ ԳԼ · Ժգ · 2 ։
Բ ԳԼ · Ժա · 31 ։
Գ ԳԼ · Ժա · 33 · 38 ։ Ժե · 5 ։
Դ Եբր · իմ նահէտ և կող
Է ԳԼ · Ժբ · 28 ։ Բ Մն · Ժա · 15 ։
Ը Նէեմ · Թ · 26 ։ Սաղ · Ծ · 17 ։ Եզեկ · իգ · 35 ։

Իբր 956

Ա ԳԼ · Ժե · 29 ։
Բ ԳԼ · իա · 21 ։ գ Թագ · Թ · 8 ։
Գ Բ Օր · լբ · 36 ։ գ Թագ · Ժգ · 26 ։
Դ ԳԼ · Ժգ · 4 ։ իա · 24 ։
Ե Հմր 17 ։
Զ Բ Մն · Ժբ · 12 ։ ԺԹ · 3 ։
Է ԳԼ · Ժե · 27 ։ 28 ։ 29 ։
Ը Կա՛ · այսօր
Թ գ Թագ · Ժե · 6 ։ Սաղ · Ծբ · 5 ։
Ժ Ցճե · իգ · 15 ։ 16 ։
ԺԱ գ Թագ · Ժե · 29 ։
ԺԲ Ել · լգ · 13 ։ Բ Օր · Ժբ · 3 · 4 ։

Ն · Բ · ԳԲ · Իբր 956

‡ Կա՛ · անատներ
՛ ԳԼ · Ժբ · 30 ։ Ժգ · 34 ։ Ժե · 30 ։ 34 ։ Ժզ · 2 ։
՜ ԳԼ · Ժզ · 6 ։ 8 ։ 15 ։ 23 ։ Երդ · գ · 4 ։
Ն Հմր 12 ։
Շ Հմր 13 ։

Բ Մն · Ժգ · 2 · ՁԱ ։

954

Ը Բ Մն · Ժբ · 13 ։

975

Ա ԳԼ · Ժա · 36 ։
Ը Հմր 31 ։

972

Բ Մն · Ժբ · 1 ։
Գ Բ Օր · լբ · 21 ։ Սաղ · Ղբ · 58 ։ ա Կոր · Ժ · 22 ։
Ե Ես · Ծէ · 5 ։
Զ Բ Օր · Ժբ · 2 ։ Եզեկ · Ժզ · 24 · 25 ։
Է դ Թագ · Ժէ · 9 · 10 ։

971

Ը Բ Օր · իգ · 17 ։ ԳԼ · Ժե · 12 ։ իբ · 46 ։ գ Թագ · իգ · 7 ։
Թ ԳԼ · Ժա · 40 ։ Բ Մն · Ժբ · 2 ։
Ժ Բ Մն · Ժբ · 9 · 10 · 11 ։
ԺԱ ԳԼ · Ժ · 17 ։

Ն·ք·ղ· 971

28 յանձնեց ։ Ու երբոր Թագաւորը Ցերոբովամ տուն կ'երթար, սուրհանդակները զանոնք կը կրէին, ու էր՝ զանոնք սուրհանդակներուն խուրջը կը դարձընէին ։

ՐԱՄՆ·ԺԲ· 15 ։

29 Եւ Յորոբովամին ետեւորդ պատմութիւնը, ու անոր ամէն բրածը՝ ահա Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց դրքին մէջը գրուած

ՖԳԼ·ԺԲ· 24 ։ ԺԵ· 6 ։ ՐԱՄՆ· ԺԲ· 15 ։

30 է ։ Ու Յորոբովամին և Ցերոբովամին մէջտեղը միշտ պատերազմ

958 ՐԱՄՆ·ԺԲ· 16 ։

31 կար ։ Եւ Յորոբովամ իր հայրերուն հետ քնացաւ, ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջը Թաղուեցաւ. Եւ անոր մայրը Ամմինացի էր Նաամա անունով. ու անոր տեղը՝ անոր որդին Աբիան Թագաւոր եղաւ ։

ՖԲՀԺԲ 21 ։ ՐԲՄՆ·ԺԲ· 16 ։ ՄԱԹ· 1 ։ ԵՔԲ· Աբիամ

ԳԼ· ԺԵ

1 Աբիային դէշ վարմունքը ։ 7 Ասա անոր տեղը կը յաջորդէ ։ 9 Ասային բարի վարմունքը · 16 Բաւասային ու իրեն մէջտեղը եղած պատերազմը պատճառ կ'ըլլայ որ Ինքը Բնադարին հետ դաշնակցութիւն կ'ընէ ։ 23 Ցովնափատ՝ Ասային տեղը կը յաջորդէ ։ 25 Նադարին դէշ վարմունքը ։ 27 Բաւասա ապստամբելով՝ Աբիային մարդահամարութիւնը ի գործ կը դնէ ։ 31 Նադարին մահը ։ 33 Բաւասային դէշ վարմունքը ։

958 ՐԱՄՆ·ԺԴ· 1 ։

1 Եւ Նաբատեան Ցերոբովամին թագաւորութեանը տասնուութերորդ տարին՝ Աբիա Ցուդայի վրայ թագաւորեց ։

2 Երուսաղէմի մէջ իրեք տարի թագաւորութիւն ըրաւ. Ու անոր մօրը անունը Մաաքա էր, որ Աբիսողոմին աղջիկն էր ։

ԲՐՄՆ·ԺԱ· 20 ։ 21 ։ 22 ։ ԲՐՄՆ·ԺԳ· 2 Ուրիէլ Գաբաացի Ուրիելին աղջիկը ։

3 Եւ անիկայ իրմէ առաջ իր հօրը բրած բոլոր մեղքերուն հետեւեցաւ. ու Տաճոր սիրտը իր Տէր Աստուծոյն հետ կատարեալ չէր, իր հօրը Դաւիթին պէս ։

ՐԳԼ·ԺԱ· 4 ։ ՍԱՂ· ՃԺԹ· 80 ։ ԲԳԼ·ԺԱ· 32 ։ 36 ։ ՐՄՆ·ԻԱ· 7 ։ ԼԳԼ·ԺԱ· 36 ։ ԲԳԼ·ԺԳ· 8 ։

4 Թին սրտին պէս ։ Բայց Դաւիթին սիրոյն համար՝ անոր Տէր Աստուածը Երուսաղէմի մէջ անոր մէկ ճրագ մը տուաւ, անկէ ետքը անոր որդին նստեցընելով, ու Երուսաղէմ

ԸՐԹԱԳ· ԺԱ· 4 ։ 15 ։ ԺԲ· 9 ։

5 սաղէմը հաստատելով. Որովհետեւ Դաւիթ՝ Տէրոջը առջեւը ուղղութիւն ըրաւ, ու իր կենացը բոլոր օրերուն մէջ բնաւ անոր պատուիրանքներէն չխոտորեցաւ, Ուրիայի բանէն զատ ։

ԲԳԼ·ԺԳ· 30 ։

6 Ու Աբիային ետեւորդ պատմութիւնը, և անոր բոլոր բրածը՝ ահա Ցուդայի Թագաւորներուն յիշատակաց դրքին մէջը գրուած է. ու Աբիային ու Ցերոբովամին մէջտեղը

ՖԲՄՆ·ԺԳ· 2 ։ 3 ։ 22 ։

8 պատերազմ կար ։ Եւ Աբիա իր հայրերուն հետ քնացաւ. ու Դաւիթի քաղաքին մէջը թաղեցին. և անոր տեղը՝ անոր որդին Ասան Թագաւոր եղաւ ։

955 ԻՐՄՆ·ԺԳ· 1 ։

9 Իսրայէլի Ցերոբովամ Թագաւորին քսաներորդ տարին՝ Ասա Ցուդայի վրայ Թագաւոր եղաւ ։

10 Երուսաղէմի մէջ քառասունմէկ տարի Թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Մաաքա էր, Աբիսողոմին աղջիկն էր ։ Եւ Ասա իր հօրը Դաւիթին պէս՝ Տէրոջը առջեւը ուղղութիւն ըրաւ ։

11 Ու Սոդոմական մեղք գործողները երկրէն վերցուց, և իր հայրերուն շինած բոլոր կուռքերը բնջիկնջ ըրաւ ։ Ու իր մայրը Մաաքան տիկնութենէն հանեց. քանզի անիկայ Աստարովթի կուռք մը շիներ էր. և Ասա անոր կուռքը կոտրեց, ու Կեդրոն հեղեղատին մէջը այրեց ։

12 Բայց բարձր տեղերը չվերցան. սակայն Ասային Սիրտը իր Ամբողջ բոլոր օրերուն մէջ՝ Տէրոջը հետ կատարեալ էր ։

13 Եւ իր հօրը նուիրած բաները ու իր նուիրած բաները՝ արծաթը ու ոսկին ու անօթները՝ Տէրոջը տունը տարաւ ։

14 Եւ Ասային ու Իսրայէլի Բաասա Թագաւորին մէջտեղը՝ անոնց բոլոր

15 օրերուն մէջ պատերազմ կար ։ Ու Իսրայէլի Թագաւորը Բաասա Ցուդայի դէմ ելաւ. և Ռամաան շինեց, որ Ցուդայի Ասա Թագաւորին ել-

16 լող մտնող մարդ չմնողաւ. Ուստի Ասա Տէրոջը տանը գանձերուն մէջը՝ ու Թագաւորական տանը գանձերուն մէջը մնացած բոլոր արծաթը ու ոսկին առաւ, և իր ծառաներուն ձեռքը տուաւ, ու Ասա Թագաւորը՝ Դամասկոս բնակող Ասորւոց Թագաւորին՝ Ենհադի որդւոյն Տաբրեմոնի որդւոյն Բենհադադին խրկեց զանոնք, ու ըսաւ ։

17 Իմ ու քու մէջդ, և իմ հօրս ու քու հօրդ մէջը դաշնակցութիւն կայ. ահա քեզի արծաթ ու ոսկի ընծայ խրկեցի. արի Իսրայէլի Բաասա Թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ ալրէ, որ անի-

18 կայ իմ վրայէս ետ քաշուի ։ Ու Բենհադադ՝ Ասա Թագաւորին խօսքը մտիկ ըրաւ. և իր զօրքերուն իշխանները Իսրայէլի քաղաքներուն վրայ խրկեց, ու Իյոնը, Դանը, Աբէլբեթմաաքան, ու բոլոր Քենէրեթը, ու բոլոր Նեփթաղիմի

19 երկիրը գարկաւ։ Եւ Բաասա Խօսքը լսելով, Ռաման շինելէն ետ կեցաւ, ու Թերսայի մէջ նստաւ ։

20 Ուն ատենը Ասա Թագաւորը բոլոր Ցուդայի Արբիներէն կանչեց առանց մէկը ձգելու, որոնք Բաասային շինած Ռամայի քարերը ու փայտերը վերցուցին. և Ասա Թա-

ՆՔՂ· 955

ՐԱՄՆ·ԺԵ· 15 ։

ՖԳԼ·ԺԲ· 24 ։ ԺԵ· 6 ։ ՐՄՆ· ԺԲ· 15 ։

958 ՐՄՆ·ԺԲ· 16 ։

ՖՀՄՐ 21 ։ ՐՄՆ·ԺԲ· 16 ։ ՄԱԹ· 7 ։ ԵՔԲ· Աբիամ

ՐՄՆ·ԺԴ· 1 ։

ԲՐՄՆ·ԺԱ· 20 ։ 21 ։ 22 ։ ԲՐՄՆ·ԺԳ· 2 Ուրիէլ Գաբաացի Ուրիելին աղջիկը ։

ԲԳԼ·ԺԱ· 4 ։ ՍԱՂ· ՃԺԹ· 80 ։ ԲԳԼ·ԺԱ· 32 ։ 36 ։ ՐՄՆ·ԻԱ· 7 ։ ԼԳԼ·ԺԱ· 36 ։ ԲԳԼ·ԺԳ· 8 ։

ԸՐԹԱԳ· ԺԱ· 4 ։ 15 ։ ԺԲ· 9 ։

ԲԳԼ·ԺԳ· 30 ։

ՖԲՄՆ·ԺԳ· 2 ։ 3 ։ 22 ։

955 ԻՐՄՆ·ԺԳ· 1 ։

ՆՔՂ· 955

ԻՐՄՆ·ԺԵ· 15 ։

ՖՅ· ՄԱԹ ՄԸՐ· տես ՀՄՐ 2 ։ ԼՐՄՆ·ԺԳ· 2 ։

ԻՐՐ 951

ԲԳԼ·ԺԳ· 24 ։ ԻՐ· 47 ։

ԲՐՄՆ·ԺԵ· 16 ։

ԵԼ·ԼԲ· 20 ։

ՀԳԼ·ԻՐ· 44 ։ ՐՄՆ·ԺԵ· 17 ։ 18 ։

ՅՏԱՍ ՀՄՐ 3 ։

ԼՐՄՆ·ԺԳ· 1 ։ ԼԱ ։

ՓՏԱՍ·ԺԲ· 25 ։

ՅՏԱՍ ԳԼ· ԺԲ· 27 ։

ՅԳԼ·ԺԱ· 23 ։ 24 ։

ՆՐՄՆ·ԺԳ· 2 ։

ԼԳԹԱԳ·ԺԵ· 29 ։

ՊԴԱԹ·ԺԲ· 29 ։

ԼԲԹԱԳ·Ի· 14 ։

ՊՐՄՆ·ԺԳ· 6 ։

գաւորը անոնցմով Լ Բենիամինի Գաբան ու ՚Մասփան շինեց ։

23 Եւ Ասային բոլոր միացորդ պատ-
մութիւնը, ու անոր բոլոր զօրու-
թիւնը, ու բոլոր ըրածը, և անոր
շինած քաղաքները՝ ահա Յուդայի
թագաւորներուն յիշատակաց դրբ-
քին մէջը գրուած են. բայց ՚անի-
կայ իր ծերութեանատենը ոտքե-
24 րու ցաւ ունէր ։ Ու Ասա իր հայ-
րերուն հետ քնացաւ, և իր հայ-
րերուն հետ իր Հօրը Դաւիթին
քաղաքին մէջը թաղուեցաւ. Ու-
րամ անոր տեղը՝ անոր որդին ՚Յովա-
փատ թագաւոր եղաւ ։
25 Եւ Յուդայի Ասա թագաւորին
երկրորդ տարին՝ Ելբոովամի որ-
դին Նադաբը Իսրայէլի վրայ թա-
գաւոր եղաւ. ու անիկայ Իսրայէլի
վրայ երկու տարի թագաւորու-
26 թիւն ըրաւ, Եւ Ելբոովը առջևը
չարութիւն ըրաւ ։ ու իր Հօրը
ճամբուն մէջ քալեց, ու ՚անոր
ըրած մեղքին մէջ՝ որով Իսրայէլին
27 մեղանչել տուաւ ։ Եւ Իսաքարի
տունէն՝ ՚Ահիայի որդին Բաասան
անոր դէմ դաւ դնելով սպաննեց
անոր Գեթեթոնին քովը զարկաւ, երբոր
Նադաբ բոլոր Իսրայէլի հետ Գա-
28 բաթոնը պաշարեր էր. Եւ Յու-
դայի Ասա թագաւորին երրորդ
տարին՝ Բաասա մեռցուց զանի-
կայ, ու անոր տեղը թագաւոր ե-
29 ղաւ. Եւ ինքը թագաւոր եղածին
պէս՝ Ելբոովամին բոլոր տունը
զարկաւ. ոչ ՚Ելբոովամին խօսքին հա-
մեմատ՝ որ իր ծառային Սիլովնացի
Ահիա մարգարէին ձեռքովը խօսեր
էր, Ելբոովամին բնաւ մէկ շնչա-
ւոր մը ողջ չթողուց, ու զանիկայ
30 բնաջինջ ըրաւ՝ ՚Ելբոովամին
մեղքերուն համար՝ որոնցմով մե-
ղանչել տուեր էր, ու Իսրայէլին մեղան-
չել տուեր էր, Իսրայէլին Տէր Աս-
տուածը բարկացընելով ։
31 Եւ Նադաբին միացորդ պատմու-
թիւնը, ու անոր բոլոր ըրածը՝ ա-
հա Իսրայէլի թագաւորներուն յի-
շատակաց դրբին մէջը գրուած է ։
32 ՚Եւ Ասային ու Իսրայէլի Բաասա
թագաւորին մէջտեղը՝ անոնց բոլոր
օրերուն մէջը պատերազմ կար ։
33 Յուդայի Ասա թագաւորին եր-
րորդ տարին՝ Ահիայի որդին Բաա-
սան՝ Թերսայի մէջ բոլոր Իսրայէլի
վրայ թագաւոր եղաւ, ոչ քսան-
ուչորս տարի [illegible] ։
34 ը ։ Եւ անիկայ Տէրոնը առջևը
չարութիւն ըրաւ, ու ՚Ելբոովամին
ճամբուն մէջ քալեց, և անոր
մեղքին մէջ՝ որով անիկայ Իսրա-
յէլին մեղանչել տուեր էր ։

Գլ. ԺԶ

1 Ցեհուին մարգարէութիւնը Բաասային դէմ ։
6 Էլա իր Հօրը տեղը կը յաջորդէ ։ 8 Զամբրի
Էլային դէմ դաւաճանութիւն ընելով՝ անոր
տեղը կ'անցնի ։ 11 Ցեհուին մարգարէութիւնը
Զամբրիին ձեռքովը կը կատարուի ։ 15 Ժո-
ղովուրդը Ամրին թագաւոր կ'ընէն. ու Զամբ-
րի յուսահատելով՝ ինքզինքը կ'այրէ ։ 21 Ժո-
ղովուրդին մէջ երկպառակութիւն պատճա-
ռելով՝ Ամրի՝ թաբնիին դէմ յաղթող կը
գտնուի ։ 23 Ամրի՝ Սամարիան կը շինէ ։ 25
Անոր գէշ վարմունքը ։ 27 Ը քաւար անոր
տեղը կը յաջորդէ ։ 29 Ը քաւարին խիստ գէշ
վարմունքը ։ 34 Ցեհուին անէծքը՝ Երիքովը
նորոգող Ցիելին վրայ կը կատարուի ։

1 Եւ Բաասային համար՝ Ցերոնը
խօսքը ՚Անանիի որդւոյն Ցեհուին
2 եղաւ՝ ըսելով. ՚Որովհետև քեզ
փոշիէն բարձրացուցի, ու քեզ իմ
ժողովուրդիս Իսրայէլին վրայ իշ-
խան դրի, և ՚դուն Ցերոբովամին
ճամբան գացիր, ու իմ ժողովուր-
դիս Իսրայէլին մեղանչել տուիր,
ու անոնց մեղքերովը զիս բարկա-
3 ցուցիր, Ահա ես ՚՚Բաասան ու ա-
նոր տունը՚՚ բնաջինջ պիտի ընեմ,
և քու տունդ Նաբաատեան Ելբո-
բովամին տանը պէս պիտի ընեմ ։
4 Ը Բաասային քաղաքի մէջ մեռնո-
ղը՝ շուները պիտի ուտեն, ու
դաշտի մէջ մեռնողը՝ երկինքի
թռչունները պիտի ուտեն ։
5 Եւ Բաասային միացորդ պատ-
մութիւնը, ու անոր ըրածը, ու
զօրութիւնը՝ ՚ահա Իսրայէլի թա-
սաւ որ պատերազմը իր վրայ սաստ-
կացաւ , իր հետը եօթը հարիւր
սուսերամերկ զօրք առաւ , որ մին-
չև Եդովմի թագաւորը ճեղքեն
27 անցնին . բայց չկրցան ։ Ուստի
առաւ իր անդրանիկ որդին՝ որ իր
տեղը պիտի թագաւորէր , ու զա-
նիկայ պարսպին վրայ ողջակէզ ը-
րաւ . և Իսրայէլացւոց դէմ մեծ
բարկութիւն եղաւ . ու անոր վրա-
յէն ետ քաշուեցան , ու երկիրը դարձան ։

ԳԼ · Դ

1 Եղիսէ՝ որբևարիին եղը կը շատցընէ · 8 բարի Սունամացիին զաւակ մը կը խոստանայ · 18 անոր մեռած տղան կը յարուցանէ · 38 Գազգաղայի մէջ թունաւոր ապուրը կը բժշկէ · 42 Հարիւր մարդը քսան հացով կը կշտացընէ ։

— գԹագ · ի · 35 ։

1 Եւ Մարգարէից որդւոցը կնիկնե-
րէն մէկ կնիկ մը Եղիսէին աղա-
ղակելով ըսաւ . Քու ծառադ երկիւ-
ղած ըլլալը դիտես . և
պարտատէրը եկաւ Բոր իմ երկու
Բ Ցէս Ղև · ին · 39 ։ Մատ · ժբ · 25 ։ 2 որդիներս իրեն ծառայ առնէ ։ Ու
Եղիսէ անոր ըսաւ . Քեզի ի՞նչ ը-
նեմ . ըսէ ինծի , տունը ի՞նչ ու-
նիս ։ Եւ անիկայ ըսաւ . Քու ա-
* Կամ՝ ա-
ծուելու մը չափ
ղախինդ տանը մէջ * աման մը" եղէն
3 ի զատ՝ ուրիշ բան մը չունի ։ Ու
Եղիսէ անոր ըսաւ . Գնա դուրսէն
քու բոլոր դրացիներդ քեզի պա-
րապ ամաններ ուզէ , ու քիչ մի՛
4 ուզեր . Եւ ներս մտիր՝ քու վրա-
յէդ ու քու որդւոդդ վրայէն դու-
ռը գոցէ , և ետ եղ ան բոլոր ա-
մաններուն մէջը պարպէ , ու լե-
5 ցուածը վերցուր ։ Ու անիկայ ա-
նոր քովէն գնաց . ու իր վրայէն
ու իր որդւոցը վրայէն դուռը գո-
ցեց . անոնք անոր կը մատուցընէին ,
6 ու անիկայ կը լեցնէր ։ Ու երբոր
ան ամաններըը լեցուեցան , իր որ-
դւոյն ըսաւ . Ինծի ուրիշ աման
մատեցուր . ու անիկայ ըսաւ անոր .
Ուրիշ աման չկայ . ան ատենը եղը
7 կայնեցաւ ։ Եւ Իսկը գնաց Աստու-
ծոյ մարդուն պատմեց . ու անիկայ
ըսաւ . Գնա եղը ծախէ , ու պարտքդ
վճարէ . և աւելցածովը՝ դուն ու
քու որդիքդ ապրեցէք ։
Բ Ցէս · ԺԹ · 18 ։ 8 Ու մէկ օր մը երբոր Եղիսէ Սու-
նամէն կ՚անցնէր , հոն մէկ երևելի
կնիկ մը կար , որ զանիկայ հաց ու-
տելու ստիպեց . ու ԽՍՒԸ քանի որ
ՆԻՔ կ՚անցնէր , հաց ուտելու հա-
9 մար հոն կ՚իջնէր ։ Եւ ՆՈՆ Իսկը
իր էրկանը ըսաւ . Ահա գիտեմ որ
ասիկայ Աստուծոյ մէկ սուրբ մարդն
է , որ միշտ մեր քովէն կ՚անցնի .
10 Հիմա մէկ պզտիկ վերնատուն մը
շինենք պատին վրայ , ու հոն անոր
համար՝ անկողին , սեղան , աթոռ ,
ու աշտանակ դնենք , որ երբոր մեզի
11 գայ՝ հոն իջնէ ։ Եւ եղաւ որ մէկ
օր մը անիկայ հոն եկաւ , ու վեր-
նատունը մտաւ , ու հոն պառկե-
12 ցաւ . Եւ իր մանչուն Գէեզիին ը-
սաւ . Սունամացի կնիկը կանչէ .
ու զանիկայ կանչեց . և անոր առջևը
13 կայնեցաւ ։ Ու անիկայ իր մանչուն
ըսաւ . Անոր ըսէ . ահա դուն մեզի
համար ասօրոր աշխատանքը քա-
շեցիր . քեզի ի՞նչ ընեմ . թագա-
ւորին կամ զօրագլուխին բանէ մը
ունի՞ս . և անիկայ բսաւ . Ես իմ
ժողովուրդիս մէջը կը բնակիմ ։
14 Ու Եղիսէ ըսաւ . Անոր ի՞նչ ը-
նել , ու Գէեզի ըսաւ . Ի-
րաւ ըրնէ անիկայ զաւակ չունի , ու
15 անոր էրիկը ծերացեր է ։ Ու Ե-
ղիսէ ըսաւ . Զանիկայ կանչէ . և
զանիկայ կանչեց . ու դրանը մէջ
16 կայնեցաւ ։ Ու Եղիսէ ՆՈՒՆ ըսաւ .
†Գալ տարի՞ ասատենս՝ գիրկդ †Եբր · կե-
նաց ժամա-
նակին. Ծն.
ժբ · 10 · 14 ։
Ա Հմր 28 ։
որդի մը պիտի ունենաս ։ Եւ ա-
նիկայ ըսաւ . Չէ , ով տէր իմ՝
մարդ Աստուծոյ , Էքու աղախինիդ
17 սուտ մի՛ զրուցեր ։ Ու կնիկը
յղացաւ , ու հետևեալ տարին նոյն
ատենը որդի մը ծնաւ , ինչպէս որ
Եղիսէ անոր ըսեր էր ։
18 Եւ տղան մեծցաւ . ու մէկ օր մը
իր հօրը գնաց ՚ձողներուն քովը ։
19 Եւ իր հօրը ըսաւ . Գլո՛ւխս գը-
լո՛ւխս . ան ալ մանչուն ըսաւ .
20 Անիկայ իր մօրը տար ։ Ու զանի-
կայ վերցուց , ու անոր մօրը տա-
րաւ . և անիկայ մինչև կէս օր անոր
ծունկերուն վրայ նստաւ , ու մե-
21 ռաւ ։ Եւ կնիկը վեր ելաւ , ու

զանիկայ Աստուծոյ մարդուն անկողնին մէջը պառկեցուց , ու դուռը գոցեց ու ելաւ . 22 Եւ իր էրիկը կանչեց՝ ու ըսաւ . Կ՚աղաչեմ՝ ինծի մանչերուն մկուն հետ էշ մը խրկէ , որ շուտով մինչև Աստուծոյ մարդուն քովը երթամ , ու ետ դառնամ : 23 Նամ ։ Եւ անիկայ ըսաւ . Ի՞նչ կայ որ դուն այսօր անոր պիտի երթաս . ամսագլուխ չէ , շաբաթ չէ : Ու 24 անիկայ ըսաւ . Ողջութիւն ։ Ու էշը պատրաստել տուաւ , և մանչուն ըսաւ . Քշէ գնա , ու մինչև որ քեզի չըսեմ , քշելէն ետ մի՛ կենար 25 ինծի համար : Եւ Կարմեղոս լեռը երթալով՝ Աստուծոյ մարդուն քովը գնաց : Ու երբոր Աստուծոյ մարդը դիմացէն զանիկայ տեսաւ , իր մանչուն Գէեզիին ըսաւ . Ահա 26 Սունամացի կինիկը ։— ։— . Հիմա վազէ դիմաւորէ զանիկայ , ու ասոր ըսէ . Ողջ առո՞ղջ ես . էրիկդ ողջ առո՞ղջ է . տղան ողջ առո՞ղջ է : Եւ անիկայ ըսաւ . Ողջ առողջ 27 ։— : Ու ։Իւիը լեռը Աստուծոյ մարդուն եկաւ , և ։անոր ոտքերուն փաթթուեցաւ . ու Գէեզի մտեցաւ որ զանիկայ ետ քաշէ , բայց Աստուծոյ մարդը ըսաւ . Թող տուր զանիկայ . քանզի անոր սիրտը ցաւած է . ու Տէրը ինծմէ պահեց , ու ինծի չյայտնեց : 28 Եւ ։Իւիը ըսաւ . Ես իմ տիրոջմէս որդի խնդրեցի՞ . ըես չըսի՞ որ՝ Զիս մի՛ խաբեր : 29 Ու անիկայ Գէեզիին ըսաւ . ։Մէջդ գօտի կապէ , և իմ գաւազանս ձեռքդ առ ու գնա . և թէ որ մարդու մը հանդիպիս , ։անոր բարև մի՛ տար . ու թէ որ մէկ մարդ մի՛ քեզի բարև տայ , պատասխան մի՛ տար . և իմ գաւազանս 30 զանս տղուն երեսին վրայ դիր : Իսկ տղուն մայրը ըսաւ . ։Տէրը կենդանի է , ու քու անձդ կենդանի է , որ քեզ պիտի չթողում : Ու Եղիսէ ելաւ անոր ետևէն գնաց : 31 Բայց Գէեզի անոնց առջևը անցաւ , ու գաւազանը տղուն երեսին վրայ դրաւ . սակայն ոչ ձայն կար , և ոչ զգացում . ուստի զանիկայ դիմաւորելու դարձաւ , և անոր պատմեց՝ ու ըսաւ . Տղան ։չարթնցաւ : 32 Եւ երբոր Եղիսէ տունը մտաւ , ահա տղան մեռած ։— իր 33 անկողինին վրայ պառկած էր : Ու ։Ներս մտնելով , երկուքնուն վրայէն դուռը գոցեց , և Տէրոջը աղօթք 34 ըրաւ . Ու ելաւ տղուն վրայ պառկեցաւ . և իր բերանը անոր բերնին վրայ , ու իր աչքերը անոր աչքերուն վրայ , ու իր թաթերը անոր թաթերուն վրայ դրաւ , և ։անոր վրայ կծկեցաւ , ու տղուն մարմինը 35 տաքցաւ : Եւ դարձաւ տանը մէջ մէյմը աս կողմը՝ ու մէյմը ան կողմը պտրտեցաւ , ։ու ելաւ անոր վրայ կծկեցաւ . և Հտղան եօթը անգամ փռնդաց , ու տղան աչքերը 36 բացաւ : Ան ատենը Գէեզիին կանչեց՝ ու ըսաւ . Սունամացի կինիկը կանչէ . ու զանիկայ կանչեց . և անոր եկաւ . ու Եղ։ե ։որ ըսաւ . 37 Ցղաղ ։ա : Եւ ։Իւիը ներս մտնելով՝ անոր ոտքերը ինկաւ , ու գետնէն խոնարհութիւն ըրաւ , և ։իր տղան առնելով դուրս ելաւ :

38 Ու եղիսէ ։Գաղցաղա դարձաւ . և ան երկրին մէջը ։սով կար . ու մարգարէից որդիքը ։անոր առջևը կը նստէին . ու անիկայ իր մանչուն ըսաւ . Մեծ կաթսան ։Իւիէն վրայ դիր , և մարգարէից որդիներուն 39 ապուր եփէ : Ու մէկը դաշտը ելաւ որ խոտեր ժողվէ , ու մէկ վայրենի բոյս մը գտաւ , և անկէ հանդերձ լեցուն վայրենի վարունգ ժողվեց , ու եկաւ՝ զանոնք ապուրին կաթսային մէջը մանրեց . քանզի 40 զի չէին ճանչնար : Եւ ան մարդիկներուն առջևը դրին որ ուտեն . ու երբոր ան ապուրէն կերան , պոռալով ըսին . Կաթսային մէջը ։մահ կայ՝ ով մարդ Աստուծոյ . 41 ու չկրցան ուտել : Եւ անիկայ ըսաւ . Ալիւր բերէք . ու ։զանիկայ կաթսային մէջը նետեց , ու ըսաւ . Ժողովուրդին առջևը դիր որ ուտեն . ան ատենը կաթսային մէջը վնասակար բան մը չկար :

42 Եւ ։Բահաղ սաղիսայէն մարդ մը եկաւ . ։ու Աստուծոյ մարդուն՝ երախայրիներէ ։Իւ։։ հացեր՝ քսան հատ գարեղէն հաց , ու թարմ հասկեր բերաւ իր պարկովը : Եւ անիկայ ըսաւ . Ժողովուրդին 43 տուր որ ուտեն : Եւ անոր ծառան ըսաւ . Ինչա՞ չէ որ հարիւր մարդոց առջևը դնեմ . բայց անիկայ ըսաւ . Ժողովուրդին տուր որ ուտեն . քանզի Տէրը այսպէս կ՚ըսէ . ։Պիտի ուտեն ու պիտի աւելնայ : 44 Եւ անոնց առջևը դրաւ . ու կերան , և Տէրոջը ըսածին պէս ։աւելցաւ :

ԳԼ · Ե

1 Նէեման՝ դերի բռնուած աղջկան մը ծանուցանելովը՝ Սամարիա կը խրկուի , որ իր բորոտութենէն բժշկուի : 8 Եղիսէ զանիկայ Յորդանան խրկելով՝ բորոտութիւնը կը բժշկէ . 15 ու Նէեմանին պարգևները չընդունելով՝ երկրին հողէն կու տայ անոր : 20 Գէեզի՝ իր տիրոջը անունովը Նէեմանը խաբելուն համար՝ բորոտութեամբ կը պատժուի :

1 Նէ Ասորւոց թագաւորին զօրագլուխը ։Նէեման՝ իր տիրոջը առջևը ։մեծ ու յարգելի մարդ մըն էր . քանզի Տէրը անոր ձեռքովը

Ն · ք · գ · 895

Ղ Գ Թագ · ժէ · 21 ։ Ղ Գ · ը · 1 ։ 5 ։

Ն · ք · գ · 895

Ե Գ Թագ · ժէ · 28 ։ Եբր · ժա · 35 ։

Իբր 891

Ա Գ · բ · 1 ։ Ա Գ · ը · 1 ։ Բ Գ · բ · 3 ։ Ղ · ժ · 39 ։ Գոր · իբ · 3 ։

Ա Գ · բ · 25 ։

Ե Մատ · իբ · 9 ։

Ը Հմր 16 ։

Ի Գ Թագ · ժբ · 46 ։ Գ · թ · 1 ։

Ա Ղ · ժ · 4 ։

Ի Ցես Եր · է · 19 ։ ժգ · 16 ։ Գ · բ · 8 · 14 ։ Գոր · ժթ · 12 ։ Ը Գ · բ · 2 ։

Ի Ցօ · ժա · 11 ։

Ա Հմր 4 ։ Մատ · գ · 6 ։

Ի Գ Թագ · ժէ · 20 ։

Հ Գ Թագ · ժէ · 21 ։ Գոր · ի · 10 ։

Ն · ք · գ · 895

Ե Գ Թագ · ժէ · 21 ։ Ղ Գ · ը · 1 ։ 5 ։

Ե Գ Թագ · ժէ · 28 ։ Եբր · ժա · 35 ։

Իբր 891

Ա Գ · բ · 1 ։ Բ Գ · ը · 1 ։ Գ Գ · բ · 3 ։ Ղ · ժ · 39 ։ Գոր · իբ · 3 ։

Ը Եւ · ժ · 17 ։

Ա Ցես Եւ · ժէ · 25 ։ Գ · բ · 21 ։ Ցօ · թ · 6 ։

Լ Թագ · թ · 4 ։

Ղ Թագ · թ · 7 ։ Ա Կոր · թ · 11 ։ Գաղ · գ · 6 ։

Ի Ղ · թ · 13 ։ Ցօ · գ · 9 ։

Ա Ղ · թ · 17 ։ Ցօ · գ · 11 ։

Ա Մատ · ժգ · 20 ։ ժէ · 37 ։ Ցօ · գ · 13 ։

Ն · ք · ղԲ · Իսր 894

Ասուրոց փրկութիւն տուեր էր . ու
աս մարդը զօրաւոր կտրիճ մըն էր ,
2 բայց բորոտ էր : Եւ Ասուրոց դուն-
դերը ելլելով՝ Իսրայէլի երկրէն մէկ
պզտիկ աղջիկ մը գերի առեր էին .
ու անիկայ Նէեմանին կնկանը քովը
3 էր : Եւ անիկայ իր տիկնոջը ը-
սաւ . Երանի թէ իմ տէրս՝ Սա-
մարիա եղող մարգարէին առջևը
ըլլար . ան ատենը զանիկայ իր բո-
4 րոտութենէն կը բժշկէր : Ու Նէե-
ման գնաց իր տիրոջը պատմեց , ու
ըսաւ . Իսրայէլի երկրէն եղող աղ-
ջիկը այսպէս ու այնպէս խօսեցաւ :
5 Եւ Ասուրոց թագաւորը ըսաւ .
Գնա ուրեմն . ես Իսրայէլի թագա-
ւորին նամակ կը խրկեմ : Ու ա-
նիկայ գնաց . և †իր ձեռքը տասը
տաղանդ արծաթ , ու վեց հազար
ոսկի , ու տասը ձեռք փոխելու
6 հանդերձ առաւ : Եւ Իսրայէլի
թագաւորին բերաւ նամակը , *որ
այսպէս գրուած էր՝ . Ըրդ՝ երբոր
աս նամակը քեզի հասնի , †գիտցած
ըլլաս որ՝ իմ ծառաս Նէեմանը քեզի
կը խրկեմ , որ զանիկայ իր բորո-
7 տութենէն բժշկես : Ու երբոր Իս-
րայէլի թագաւորը նամակը կար-
դաց , իր հանդերձները պատռեց ,
ու ըսաւ . Միթէ ես Աստուած եմ ,
որ մեռցընելու ու ապրեցընելու իրաւունք ունիմ , որ ասիկայ ինծի
մարդ մը խրկեր է՝ իր բորոտութե-
նէն բժշկելու համար . ուստի աղէկ
գիտցէք , ու տեսէք , որ ասիկայ
ինծմէ պատճառ մը կը փնտռէ :
8 Ու երբոր Աստուծոյ մարդը Եղի-
սէն լսեց՝ որ Իսրայէլի թագաւորը
իր հանդերձները պատռեր է , թա-
գաւորին հետ խրկեց՝ ու ըսաւ .
Ինչո՞ւ հանդերձներդ պատռեցիր .
թող անիկայ ինծի գայ , ու գիտ-
նայ թէ Իսրայէլի մէջ մարգարէ
9 կայ : Եւ Նէեման իր ձիերովը ու
կառքովը գնաց , ու Եղիսէին տա-
10 ռը դուռը կայնեցաւ : Ու Եղիսէն
մարդ մը խրկեց անոր՝ ըսելով .
Գնա †Յորդանանու մէջ եօթը ան-
գամ լուացուէ , և մարմինդ քեզի
11 կը դառնայ , ու կը մաքրուիս : Ու
Նէեման բարկացաւ ու գնաց՝ ըսե-
լով . Ահա ես կ'ըսէի որ անիկայ
անտարակոյս իմ քովս պիտի գայ ,
ու կայնի , և իր Եհովայ Աստու-
ծոյն անունը պիտի կանչէ , ու ձեռ-
քը ան տեղւոյն վրայ պիտի երե-
ցընէ , ու բորոտութիւնը բժշկէ :
12 Դամասկոսի Աբանա ու Փարփար
գետերը Իսրայէլին բոլոր ջուրերէն
աղէկ չէ՞ն . միթէ չե՞մ կրնար ա-
նոնց մէջը լուացուիլ ու մաքրուիլ .
և դարձաւ բարկութենով գնաց :
13 Իսկ անոր ծառաները մօտեցան , ու

Ն · ք · ղԲ · Իսր 894

անոր խօսեցան ըսելով . Ով հայր ,
Ե՛ր մարգարէն քեզի մէկ մեծ բան
մը ըսէր , պիտի չընէի՞ր . ո՛ւր
մնաց որ անիկայ քեզի՝ Լուացուէ
14 ու պիտի մաքրուիս՝ ըսաւ : Ան
ատենը անիկայ իջաւ , ու Աստու-
ծոյ մարդուն խօսքին համեմատ՝
եօթը անգամ Յորդանանու մէջ
լուացուեցաւ . ու Ղանոր մարմինը
պզտիկ տղու մը մարմինին պէս
եղաւ , ու †մաքրուեցաւ :
15 Եւ անիկայ իր բոլոր բանակովը
Աստուծոյ մարդուն դարձաւ , ու
գնաց անոր առջևը կայնեցաւ , ու
ըսաւ . Ահա հիմա գիտցայ՝ որ բո-
լոր երկրի վրայ Աստուած չկայ ,
բայց միայն Իսրայէլի մէջ . ուստի
հիմա կ'աղաչեմ , քու ծառայէդ
16 ընծայ մը ընդունէ : Բայց անիկայ
ըսաւ . Ի՛ր՝ որուն առջևը կը
կայնիմ , կենդանի է որ պիտի չըն-
դունիմ . ու զանիկայ ստիպեց՝ որ
ընդունի . բայց անիկայ չհաճեցաւ :
17 Ու Նէեման ըսաւ . Ուրեմն քու
ծառայիդ՝ — Էրէէ՛ հողէն երկու
ջորիի բեռ չտրուի՞ . քանզի քու
ծառադ մէկմէն ալ ուրիշ աս-
տուածներու ողջակէզ կամ զոհ
պիտի չընէ , բայց միայն Եհովային :
18 Ցէրը աս բանիս համար քու ծա-
ռայիդ թողութիւն տայ , — յանձն
երբոր իմ տէրս Ռեմոնի տունը
մտնէ հոն երկրպագութիւն ընելու
համար , և †անոր իմ ձեռքիս վրայ
կռթընելովը , ես ալ Ռեմոնի տանը
մէջ ծռիմ , աս բանիս՝ — յանձն
Ռեմոնի տանը մէջ իմ ծռելուս
համար , Ցէրը քու ծառայիդ թո-
19 ղութիւն տայ : Եւ Եղիսէ անոր
ըսաւ . Գնա խաղաղութեամբ . և
անիկայ անոր քովէն գնաց , —
Էքիչ մը ճամբայ —։

Ն · ք · ղԲ · Իսր 894

20 Եւ Աստուծոյ մարդուն Եղիսէին
մանչը Գէեզին ըսաւ . Ահա իմ
տէրս աս Ասորի Նէեմանին խնա-
յեց , ու անոր ձեռքէն՝ անոր բե-
րածը չառաւ . Ցէրը կենդանի է որ
ես անորետևէն կը վազեմ , և անկէ
21 բան մը կ'առնեմ : Ու Գէեզի
Նէեմանին ետևէն վազեց . ու Նէե-
ման երբոր տեսաւ որ — յանձն իր
ետևէն կը վազէ , իր կառքէն ի-
ջաւ զանիկայ դիմաւորելու , ու ը-
22 սաւ . Ողջո՞ւթիւն է : Եւ անի-
կայ ըսաւ . Ողջութիւն է . իմ
տէրս զիս խրկեց ու կ'ըսէ . Ահա
հիմա Եփրեմի լեռնէն մարգարէից
որդիներէն երկու մանչ եկաւ ին-
ձի . շնորհք ըրէ , անոնց համար
տաղանդ մը արծաթ , ու երկու
23 ձեռք փոխելու հանդերձ տուր : Ու
Նէեման ըսաւ . Շնորհք ըրէ՝ եր-
կու տաղանդ առ . և զանիկայ բըռ-

Ա Թագ · Թ · 8 ; ԳԼ · ը · 8 , 9 ։

* ԵՖր · ըսե-ԼՎ ։

† ԵՖր · ահա՛

Ե ՅՆ · Լ · 2 ; ԲՕր · լբ · 39 ; աթագ · ը · 6 ։

† Ցճս · ԳԼ · դ · 41 ; ՑՕՏ · Թ · 7 ։

Ղ Ցոր · Լգ · 25 ։

Ի Ղս · գ · 27 ։

ը Դան · բ · 47 ; գ · 29 ; ջ · 26 , 27 ։

‡ ԵՖր · օրՆուԹիւն ՅՆ · Լգ · 11 ։

Ի ԳԼ · գ · 14 ; Ի ՅՆ · ժգ · 23 ; Տճս Մատ · ժ · 8 ; Գոր · ը · 18 , 20 ։

Ի ԳԼ · Ե · 2 , 17 ։

Լ ՅՆ · լե · 16 ։

Ն · ք · ՂԲ · Իրր 894

նագատեց . ու երկու պարկի մէջ երկու տաղանդ արծաթ ՚ը— , ու երկու ձեռք ալ փոխելու հանդերձ ծրարեց . և իր ծառաներէն երկուքին տուաւ , որ անոր առջևէն տա-

* Կ—՛ ա-ռանձին տե-ղը

24 րին : Ու երբոր *բլուրը եկաւ , ա-նոնց ձեռքէն առաւ , ու տանը մէջ պահեց , և ան մարդիկները ճամ-

25 բեց , ու գացին . Եւ ինքը ներս գնաց իր տիրոջը առջևը կայնեցաւ . ու եղիսէ անոր ըսաւ . Ո՛վ Գէեզի՝ ո՞րսկից կ— ֊—. և անիկայ ըսաւ .

26 Ծառադ մէկ տեղ մը չգնաց : Ու եղի-է անոր ըսաւ . Երբոր ան մարդը իր կառքէն քեզ դիմաւորելու դարձաւ , միթէ իմ հոգիս հո՞ չըգնաց . ատ հիմ արծաթ առնելու , և հանդերձներ , ու ձիթենիներ , և պղինձներ , ու ոչխարներ , և արջառներ , ու ծառաներ , ու աղախիններ

Ի ա ՏԻՄ · Ղ · 10 :

27 առնելու ատո՞ւն է : Ուրեմն Նէեմանին բորոտութիւնը Էլեզէ ու քու սերունդիդ փակչի յաւիտեան : Եւ անիկայ՝ անոր առջևէն ձիւնի պէս բորոտեալ ելաւ :

Բ Ել · գ · 6 : Թուա · ժբ · 10 : Գլ · ժե · 5 :

ԳԼ · Զ

1 Եղիսէ հրաման կու տայ մարգարէից որդիներուն՝ որ երթան իրենց բնակարանները մեծցընեն , ու երկաթը կը լողացընէ : 8 Եղիսէ՝ Ասորւոց թագաւորին խորհուրդը կը յայտնէ Իսրայէլի թագաւորին : 13 Եղիսէն բռնելու համար՝ Դոթայիմ խրկուած զօրքը կուրութեամբ կը զարնուին , 19 ու Սամարիա տարուելով՝ խաղաղութեամբ նա կը խրկուին : 24 Սամարիայի մէջ պատնած սովին պատճառաւ՝ կնիկները իրենց զաւակները կ'ուտեն : 30 Թագաւորը մարդ կը խրկէ որ Եղիսէն սպաննէ :

Իրր 893 — Գլ · դ · 38 ։

1 Ու —մարգարէից որդիքը Եղիսէին ըսին . Ահա աս տեղս՝ ուր որ մենք քու առջևդ կը նստինք , մեզի

2 նեղ է : Երթանք ուրեմն մինչև Յորդանան . ու ան տեղէն ամէն մէկերնիս մէյմէկ գերան առնենք , ու հոն մեզի բնակելու տեղ շինենք . Ըսաւ .

3 Եւ անիկայ ըսաւ . Գացէք : Ու —ննդ մէկը ըսաւ . Շնորհք ըրէ , քու ծառաներուդ հետ եկուր .

4 և անիկայ՝ Կու գամ՝ ըսաւ . Ու անոնց հետ գնաց . և Յորդանան

5 հասնելով՝ ծառեր կտրեցին : Ու երբոր մէկը գերան մը կը կտրէր , ՚ո—ո—ին երկաթը ջուրին մէջը ինկաւ . ուստի անիկայ պոռալով ըսաւ . Ո՛հ , տէր իմ , ան ալ փոխ

6 առնուած էր : Եւ Աստուծոյ մարդը ըսաւ . Ո՞ր ինկաւ . ու անիկայ ան տեղը ցուցուց անոր : Ու Բ Եղիսէ փայտ մը կտրեց՝ ու հոն նետեց . ու երկաթը ջուրին երեսը

Բ Տես Գ Ե · բ · 21 ։

7 ելաւ : Եւ —նոր ըսաւ . Զ—ն—ս վերցուր . ան ալ ձեռքը երկընցուց , ու զանիկայ առաւ :

8 Եւ Ասորւոց թագաւորը՝ Իսրա-

Ն · ք · ՂԲ · Իրր 893

յէլի դէմ պատերազմ կ'ընէր . ու իր ծառաներուն հետ խորհուրդ ըրաւ , ու ըսաւ . Այս ինչ կամ այն

9 ինչ տեղը բանակ դնեմ : Եւ Աստուծոյ մարդը Իսրայէլի թագաւորին հաղորդ խրկեց՝ ըսելով . Զգուշացիր , որ ան տեղէն չանցնիս . վասն զի Ասորիները հոն իջած են :

10 Ու Իսրայէլի թագաւորը Աստուծոյ մարդուն ըսած տեղը հաղորդ խրկելով՝ տեղեկացաւ , ու անկէ զգու-

11 շացաւ † շատ անգամ : Եւ ասոր բանին համար Ասորւոց թագաւորին սիրտը նեղանալով՝ իր ծառաները կանչեց , ու անոնց ըսաւ . Ձե՞ք յայտներ ինձի , թէ մերիններէն ով կայ որ Իսրայէլի թագաւորին

† Բէր · ո՛չ մէկ ու ո՛չ երկու

12 Ը—ր կը Իւիե : Ու ծառաներուն մէկը ըսաւ . Ձկայ —ռա՛կ ֊ելը՝ ով տէր իմ թագաւոր . Հապա Իսրայէլի մէջ եղող Եղիսէ մարգարէն՝ քու պառկելու սենեակիդ մէջը խօսած խօսքերդ Իսրայէլի թագաւորին կը

13 յայտնէ : Եւ անիկայ ըսաւ . Գացէք , ու անոր ուր ըլլալը տեսէք , որ զանիկայ բռնել տամ : Եւ անոր պատմեցին , ու ըսին . Ահա անիկայ Դոթայիմի մէջ է :

Ծ · լբ · 17 ։

14 Ուստի անիկայ՝ ձիեր , ու կառքեր , ու բազմաթիւ զօրքեր խրկեց հոն , որոնք գիշերով գացին , և

15 քաղաքը պաշարեցին : Եւ Աստուծոյ մարդուն ծառան առաւօտուն կանուխ ելաւ , ու դուրս գընաց . և ահա զօրքեր , ձիեր ու կառքեր՝ քաղաքը պաշարեր էին . ու մանչը անոր ըսաւ . Ո՛հ , տէր

16 իմ , ի՞նչ ընենք : Ու եղի-է ըսաւ . Մի վախնար . քանզի Տ մեզ հետ եղողները՝ անոնց հետ եղողնե-

Ծբ Մն · լբ · 7 : Սազ · ծե · 18 : Հռով · ը · 31 ։

17 րէն շատ են : Ու Եղիսէ աղօթք ըրաւ ու ըսաւ . Ո՛վ Տէր՝ ասոր աչքերը բաց որ տեսնէ : Եւ Տէրը մանչուն աչքերը բացաւ . ու տեսաւ որ ահա լեռը՝ Եղիսէին չորս կողմը Հրեղէն ձիերով ու կառք-

Ի Գլ · բ · 11 : Սազ · լԳ · 7 : կը · 17 : Ջաք · ա · 8 : գ · 1—7 :

18 րով լեցուն էր : Ու երբոր անոնք եղի-էին քովը իջան , Եղիսէ Տէրոջը աղօթք ըրաւ , ու ըսաւ . Կ'աղաչեմ , ասոնց ‡ կուրութեամբ զարկ . և ՚Տէրը զանոնք կուրութեամբ զարկաւ՝ Եղիսէին խօսքին

‡ Կ—՛ շլացութեամբ

՚Ը՚Ն · ժթ · 11 ։

19 համեմատ : Ան ատենը Եղիսէ ասոնց ըսաւ . Ճամբան աս չէ , ու քաղաքը ասկայ չէ . հետևէս եկէք՝ որ ձեզ ձեր փնտռած մարդուն տանիմ . և զանոնք Սամարիա տարաւ :

20 Ու երբոր Սամարիա եկան , Եղիսէ ըսաւ . Ո՛վ Տէր՝ ասոնց աչքերը բաց որ տեսնեն : Եւ Տէրը անոնց աչքերը բացաւ , ու տեսան . և ահա Սամարիայի մէջ էին :

21 Եւ Իսրայէլի թագաւորը զանոնք

տեսնելով՝ Եղիսէին ըսաւ . Ո՛վ
22 Հայր իմ՝ զարնե՞մ , զարնե՞մ : Եւ
անիկայ ըսաւ . Մի զարներ . միթէ
քու սրովդ ու աղեղովդ գերի բըռ-
նած ներդ կը զարնե՞ս . Հանուն առ-
ջին հաց ու ջուր դիր , որ ուտեն
խմեն , ու իրենց տիրոջը երթան :
23 Եւ անոնց՝ մէկ մեծ կոչունը մը ը-
րաւ . ու կերան խմեցին . ու զա-
նոնք ետ խրկեց . ու իրենց տիրոջը
գացին . և Ասուրոց գունդերը
մէյմըն ալ Իսրայէլի երկիրը չե-
կան :

Իր 892

24 Եւ անկէ ետքը՝ Ասուրոց Բենա-
դադ թագաւորը իր բոլոր բանակը
ժողվեց , ու ելաւ Սամարիան պա-
25 շարեց : Եւ Սամարիայի մէջ մեծ
սով եղաւ , քանզի զանիկայ պաշա-
րեր էին , այնպէս որ մէկ իշուս գլու-
խը՝ ութսուն հինգ արծաթի , ու մէկ
կապիճին չորրորդ մասը աղաւնիի
աղբը՝ հինգ հինգ արծաթի ծախուե-
26 ցաւ : Ու երբոր Իսրայէլի թագա-
ւորը պարսպին վրայէն կ'անցնէր ,
մէկ կնիկ մը անոր աղաղակեց ու
ըսաւ . Ո՛վ տէր իմ թագաւոր՝
27 օգնէ՛ ինձի : Եւ անիկայ ըսաւ . Թէ
որ Տէրը քեզի չօգնէ , ես քեզի
ո՞րկից օգնեմ , կալո՞ն թէ ջնձա-
28 նէն : Ու թագաւորը անոր ըսաւ .
Քեզի ի՞նչ եղաւ : Եւ անիկայ
ըսաւ . Ան կնիկը ինծի ըսաւ որ՝
Քու տղադ տուր , ու այսօր զանի-
կայ ուտենք , և իմ տղաս վաղը
Բ Ղե . իզ . 29 ուտենք : Ուստի Ես իմ տղաս եփե-
29 ցինք , և զանիկայ կերանք . ու երկ-
րորդ օրը անոր ըսի . Ցղաղ տուր
որ ուտենք . բայց անիկայ իր տղան
30 պահեց : Եւ թագաւորը ան կրնա-
կանը խօսքը լսածին պէս՝ Ես իր հան-
դերձները պատռեց , ու պարսպին
վրայէն անցած ատենը , ժողովուր-
դը տեսաւ որ , ահա ներսէն՝ անոր
31 մարմնոյն վրայ քուրձ կար : Եւ
անիկայ ըսաւ . Հնաստուած ինծի
այսպէս՝ ու ասկէ աւելի ընէ , թէ
որ այսօր Սափատեան Եղիսէին
32 գլուխը իր վրայ մնայ : Ու Եղիսէ իր
տունը կը նստէր , ու Ծերերը անոր
հետ կը նստէին . և Թագաւորը իր
առջևէն մարդ մը խրկեց անոր . ու
խրկուած մարդը դեռ չեկած՝ Ե-
ղիսէ Ծերերուն ըսաւ . Իմ տես-
նէ՞ք որ աս Ե մարդասպանի որդին
գլուխս առնելու Հրդ խրկեց . Նա-
յեցէ՛ք , ան մարդը եկածին պէս՝
դուռը գոցեցէ՛ք , ու զանիկայ դրա-
նը քովը բռնեցէ՛ք . միթէ անոր
տիրոջը ոտքերուն ձայնը անոր
33 ետևէն չէ՞ : Ու երբոր անոնց հետ
կը խօսէր , ահա ան խրկուած մար-
դը անոր քովը իջաւ , ու ըսաւ .
Ահա աս չարիքը Տէրոջմէն է . ինչ

Ն · ք · ՂԲ · Իր 893

Է Հաւ . ԺԸ · 20 ·

Է Գլ . ե . 2 · Հմր 8 · 9 ·

Իր 892

Ե Ղե . իգ · 29 · բ Օր · իբ · 53 · 57 ·

Ե գ Թագ · իա · 27 ·

Է Հաւթ . ա · 17 · գ Թագ · ԺԹ · 2 ·

Լ Եղկ · բ · 1 · ի · 1 ·

Ի Ղս . ԺԳ · 32 ·

Ե գ Թագ · ԺԸ · 4 ·

Է Ցոբ . բ · 9 ·

ասկէ եւս Տէրոջմէն ի՞նչ պիտի
յուսամ :

Ն · ք · ՂԲ · Իր 892

Գ Լ · Ի

1 Եղիսէ Սամարիայի մէջ պատահելու անհաւա-
տալի առաւօտեան կը նախագայնէ : 3 Ձորս
բորոտներ համարձակութիւն ընելով Ասորւոց
բանակը մտնելու , անոնց փախչելուն լուրը կը
բերեն : 12 Թագաւորը լրտեսներու միջոցով
ան լուրին ճշմարիտ ըլլալը տեսնելով՝ Ասո-
րւոց վրանները կը կողոպտէ : 17 Ան իշխանը՝
որ առաւօտեան համար Եղիսէին բըսած մար-
գարէութեանը չհաւատաց , դրան պահպանու-
թիւնը իրեն յանձնուած ըլլալով՝ ամբոխէն
ոտնակոխ կ'ըլլայ ու կը մեռնի :

1 Ու Եղիսէ բսաւ . Տէրոջը խօսքը
մտիկ ըրէք . Տէրը այսպէս կ'ը-
սէ . Վաղը աս ատենս Սամարիայի — Հմր 18 · 19 ·
դրանը մէջ՝ մէկ դրիւ բարակ ալիւ-
րը՝ մէկ սիկղ ՚րդ-ին , ու երկու
դրիւ գարին՝ մէկ սիկղի դէմ ծա-
2 խայ : Եւ ան զօրապետը՝ որուն Բ Հմր 17 · 19 ·
ձեռքին վրայ թագաւորը կը կըռ- 20 · Տես գլ
թռներ , Աստուծոյ մարդուն պա- ե · 18 ·
տասխան տուաւ՝ ու բսաւ . Ի՞նչ
որ Տէրը երկինքը պատուհաններ ‡ Մաղ · գ ·
ալ շինէ , միթէ ատիկայ ըլլալո՞ 10 ·
բան է : Եւ անիկայ ըսաւ . Դուն
քու աչքերովդ պիտի տեսնես , բայց
անկէ պիտի չուտես :

3 Ու Դրանը առջևը չորս բորոտ Դ Ղե . ԺԳ · 46 ·
մարդիկներ կային . և անոնք իրա-
րու ըսին . Ինչո՞ւ հոս նստինք մին-
4 չև որ մեռնինք . թէ որ ըսենք՝ թէ
քաղաքը մտնենք , քաղաքին մէջ
սով կայ , ու հոն պիտի մեռնինք ,
և թէ որ հոս մնանք , նոյնպէս պի-
տի մեռնինք . ուրեմն եկէ՛ք Ասո-
րւոց բանակը դիմենք . թէ որ մեզ
ողջ թողուն՝ կ'ապրինք , ու թէ որ
5 մեզ մեռցընեն՝ կը մեռնինք : Եւ
մութ ատեն ելան որ Ասորւոց բա-
նակը երթան . ու մինչև Ասորւոց
բանակին ծայրը գացին . և ահա
6 հոն մարդ մը չկար . Քանզի Տէրը Ի ր Թագ · է · 24 · Գլ · ԺԹ · 7 · Ցոբ · ԺԸ · 21 ·
բու ձայն , ու ձիերու ձայն , մէկ
մեծ զօրքի մը ձայն լսել տուաւ . և
իրարու ըսին . Ահա Իսրայէլի թա-
գաւորը՝ Ջհետացւոց թագաւոր- Ջ Թագ · ԺԹ · 29 ·
ները ու Եգիպտացւոց թագաւոր-
ները վարձքով բռնեց որ մեր վրայ
7 գան : Ու ելան մութուն փա- Է Սաղ · խը · 4 · 5 · 6 · Ասակ · իբ · 1 ·
խան . և իրենց վրանները , ու
ձիերը , ու էշերը , Ե բանակը եղա-
ծին պէս՝ թողուցին , ու իրենց
անձը ապրելո՛ւ համար փախան :
8 Եւ աս բորոտները մինչև բանակին
ծայրը գացին , ու մէկ վրան մը
մտնելով՝ կերան ու խմեցին . և
անկէ արծաթ , ու ոսկի , ու հան-
դերձներ վերցուցին , ու գացին
պահեցին . ու ետ դառնալով՝ մէկ
ուրիշ վրան մը մտան , և անկէ
ալ վերցուցին , ու գացին պահ-
9 ցին : Ետքը իրարու ըսին . Ադէկ

չէ մեր ըրածը . աս օրս աւետեաց
օր է , ու մենք լուռ կեցեր ենք . թէ
որ մինչև առաւօտեան լոյսը սպա-
սենք , *չէր անօրէնութեանը պա-
տիժը պիտի կրենք" . ուստի հիմա
եկէք երթանք , ու թագաւորին
10 տունը պատմենք : Եւ գացին քա-
ղաքին դռնապանին պոռացին , ու
անոնց պատմեցին ու ըսին . Մենք
Ասորւոց բանակը մտանք . և ահա
հոն մարդ՝ կամ մարդու ձայն չկայ ,
բայց միայն ձիերը կապուած , ու է-
շերը կապուած , ու վրաններն ա-
11 այնպէս կեցեր էն : Եւ դռնապան-
ները պոռացին , ու թագաւորին
տանը ներսը իմացուցին :
12 Ու թագաւորը գիշերով ելաւ ,
և իր ծառաներուն ըսաւ . Ասորի-
ներուն մեզի ըրած բանը ես ձեզի
պատմեմ . անոնք մեր անօթի ըլ-
լալը գիտնալով՝ բանակէն ելած
են , ու դաշտին մէջը պահուած
են՝ ըսելով . Երբոր անոնք քաղա-
քէն դուրս ելլեն , զանոնք ողջ
13 բռնենք , ու քաղաքը մտնենք : Եւ
անոր ծառաներուն մէկը պատաս-
խան տուաւ՝ ու ըսաւ . Թող մնա-
ցած ձիերուն հինգը առնեն , որոնք
հոս մնացած են . ահա անոնք բոլոր
Իսրայէլին բազմութեանը պէս է-
ղան , [որոնք հոս մնացած են .
ահա անոնք բոլոր Իսրայէլին բազ-
մութեանը պէս եղան ,] որ հատ-
նելու վրայ է . և հոն խրկենք ու
14 տեսնենք : Ու †երկու կառք առին
իրենց ձիերովը" . և թագաւորը
Ասորւոց բանակին ետևէն խրկեց՝
15 ու ըսաւ . Գացէք նայեցէք : Ու
անոնք մինչև Յորդանան՝ անոնց
ետևէն գացին . և ահա բոլոր ճամ-
բան լեցուն էր հանգերձներով ու
ամաններով՝ որոնք Ասորիները ար-
տորալով փախած աւելնին ձգեր
էին : Եւ պատգամաւորները ետ
դարձան ու թագաւորին պատմե-
ցին :
16 Ան աւեները ժողովուրդը ելաւ , ու
Ասորւոց բանակը կողոպտեց . ու
‡Տերոջը խօսքին համեմատ՝ մէկ
ղրուշ բարակ ալիւրը՝ մէկ սիկղ ար-
ժողալով փախած աւելնին ձգեր
էին : Եւ պատգամաւորները ետ
դարձան ու թագաւորին պատմե-
ցին :
17 սիկղլ ‡ծախուեցաւ : Եւ թա-
գաւորը դրանը վերակացու դրաւ
ան զօրապետը՝ որուն ձեռքին
վրայ ինքը կը կռթնէր . ու ժո-
ղովուրդը դրանը մէջ զանիկայ
կոխկրտուեցին , ու մեռաւ , *Ա-
ստուծոյ մարդուն խօսքին համե-
մատ՝ որ խօսեր էր , թագաւորը
18 անոր քովը իջած աւեները : Ու ե-
ղաւ՝ ինչպէս որ Աստուծոյ մարդը
թագաւորին խօսեր էր՝ ըսելով .
‡Վաղը աս աւեներս Սամարիայի
դրանը մէջ երկու դրիւ գարին՝ մէկ
սիկղ արժողալով , ու մէկ դրիւ բարակ
ալիւրը՝ մէկ սիկղլ պիտի ծախուի .
19 Եւ ան զօրապետը Աստուծոյ մար-
դուն պատասխան տուեր ու ըսեր
էր . Թէ որ Տէրը երկինքը պա-
տուհաններ ալ շինէ , միթէ աս-
կայ ըլլալու բան է . ու Ուրիշ
մը ըսեր էր . Ահա դուն քու
աչքերովդ պիտի տեսնես , բայց ան-
20 կէ պիտի չուտես . Այսպէս եղաւ
անոր . քանզի ժողովուրդը զանի-
կայ դրանը մէջ կոխկրտեցին , ու
մեռաւ :

ԳԼ . Ը

1 Սունամացի կնիկը որվէն պատճառաւը եօթը
տարի իր երկրէն կը հեռանայ . իսկ թագաւո-
րը Եղիսէին հրաշքներուն պատմութիւնը լսե-
լով՝ ետ կու տայ անոր կալուածքը : 7 Դա-
մասկոս՝ Բենադադէն ընծայով մը Եղիսէին խըր-
կուելով Դամասկոսի մէջ , անոր մարգարէու-
թիւնը լսելէն ետև՝ իր տէրը կը մեռցնէ , ու
անոր տեղը կ'անցնի : 16 Յուդայի Յովրամ
թագաւորին չար վարմունքը : 20 Եդովմը
ու Լիբնան կ'ապստամբին : 23 Ոքոզիա՝
Յովրամին տեղը կը յաջորդէ : 25 Ոքոզիային
չար վարմունքը : 28 Ախիկայ Յեզրայել կ'եր-
թայ՝ վերաւորուած Յովրամին տեսութիւն
ընելու :

1 Եղիսէ խօսեցաւ ան կնկանը , Իբր 891
որուն տղան ողջընցուցեր էր , – ԳԼ . դ . 35 :
ու ըսաւ . Ելիր դուն քու ընտա-
նիքովդ գնա . և ուր որ կրնաս ,
հոն պանդխտութիւն բռնէ . վասն
զի Տէրը †սովը կանչեց . և ահա կու- † Սաղ . ևե .
դայ՝ եօթը տարի աս երկրիս վրայ 16 : Անգ .
2 Ե-ը- : Ու ան կնիկը ելաւ , ու ա . 11 :
Աստուծոյ մարդուն բանին պէս
ըրաւ . և ինքը իր ընտանիքովը գը-
նաց՝ ու Փղշտացւոց երկրին մէջ
եօթը տարի պանդխտութիւն ը-
րաւ :
3 Ու եօթը տարին լմընալէն ետ- Իբր 885
քը՝ ան կնիկը Փղշտացւոց երկրէն
դարձաւ , և իր տանը համար ու իր
արտին համար թագաւորին բողո-
քելու գնաց :
4 Ու թագաւորը Աստուծոյ մար- ‡ ԳԼ . ե . 27 :
դուն մանչուն ‡Գէեզիին հետ խօ-
սեցաւ՝ ու ըսաւ . Եղիսէին ըրած
բոլոր մեծ Ե-ր-ը-ը ինձի պատմէ :
5 Ու երբոր անիկայ թագաւորին կը Թ ԳԼ . դ . 35 :
պատմէր , թէ ինչպէս անիկայ †մե-
ռած ողջ ողջընցուց , ահա ան
կնիկը՝ որուն տղան ողջընցուցեր
էր , իր տանը համար և իր արտին
համար թագաւորին կը բողոքէր .
ու Գէեզի ըսաւ . Ո վ տէր իմ թա-
գաւոր՝ աս է ան կնիկը , ու աս
է անոր տղան՝ որն որ Եղիսէն ող-
6 ջընցուց : Եւ թագաւորը կնկանը
հարցուց . ու անիկայ անոր պատ-
մեց : Ու թագաւորը մէկ ներքինի
մը տուաւ անոր , ու ըսաւ . Անոր
ամէն ստացուածքը , նաև երկիրը

Ն . ք . գբ . Իբր 892

* Եբր . անօ-
րէնութիւ-
նը մեզ պի-
տի գտնէ :

† Կ-՛ . եր-
կու զրպ
ձիեր առին :

‡ Եբր . և-
ղաւ :

* ԳԼ . գ . 32 ;
Հմր 2 :

‡ Հմր 1 :

Ն · Ք · ԳՔ · ԽԲ 885

885

թողած օրէն մինչև հիմա էր արտին բոլոր արդիւնքը իրեն դարձուր ։
7 Ու Եղիսէ Դամասկոս գնաց ։ Եւ Ասորւոց Բենադադ թագաւորը հիւանդացեր էր . ու անոր պատմեցին ու ըսին թէ՝ Աստուծոյ
8 մարդը հոս եկաւ ։ Եւ թագաւորը Ազայելին ըսաւ . Ձեռդ ընծայ առ , ու գնա Աստուծոյ մարդը դիմաւորէ , ու Տանոր միջոցովը Տէրոջը հարցուր , թէ արդեօք աս հիւանդութենէս պիտի
9 առողջանամ ։ Եւ Ազայէլ զանիկայ դիմաւորելու գնաց . ու ձեռքը ընծայ առաւ , այսինքն Դամասկոսի բոլոր բարիքներէն քառասուն ուղտ բեռնաւորած , ու գնաց և անոր առջևը կայնեցաւ՝ ու ըսաւ . Քու որդիդ Ասորւոց Բենադադ թագաւորը զիս քեզի խրկեց՝ ըսելով . Արդեօք աս հիւանդու-
10 թենէս պիտի առողջանամ ։ Ու Եղիսէ անոր ըսաւ . Գնա անոր ըսէ . Անշուշտ պիտի առողջանաս . բայց Տէրը ինծի ցուցուց , որ ե-
11 նիկայ անշուշտ պիտի մեռնի ։ Եւ աչքերը անթարթափ կերպով տրնկեց , մինչև որ անիկայ ամչցաւ . ու
12 Աստուծոյ մարդը լացաւ ։ Եւ Ազայէլ ըսաւ . Իմ տէրս ինչո՞ւ կու լայ ։ Ու անիկայ ըսաւ . Անոր համար որ՝ Տ Իսրայէլի որդւոցը բնաջինջ ընելու չարութիւնդ դիտեմ . ա-նոնց ամրոցները կրակով պիտի այրես , ու անոնց կտրիճները սրով պիտի մեռցնես , և Տանոնց պզտիկ տղաքը գետինը պիտի զարնես , ու
13 յղի կիներները պիտի ճեղքես ։ Եւ Ազայէլ ըսաւ . Քու ծառադ ի՞նչ Հշուն է , որ այս մեծ բանները ընէ ։ Ու Եղիսէ ըսաւ . Տ Տէրը ինծի ցուցուց , որ դուն Ասորւոց վրայ թա-
14 գաւոր պիտի ըլլաս ։ Եւ անիկայ Եղիսէին քովէն եկաւ , ու իր տիրոջը գնաց . ու անիկայ անոր ըսաւ . Եղիսէն քեզի ի՞նչ ըսաւ . և անիկայ ըսաւ . Ինծի ըսաւ որ՝
15 անշուշտ պիտի առողջանաս ։ Ու հետևեալ օրը՝ անիկայ * հաստ լաթ՚ մը առաւ , ջուրը թաթխեց , ու անոր երեսին վրայ փուեց . և անիկայ մեռաւ . ու Ազայէլ անոր տեղը թագաւոր եղաւ ։

892

16 Եւ Իսրայէլի թագաւորին Աքաաբեան Յովրամին հինգերորդ տարին՝ երբոր Յովսափատ Դէ-Յուդայի վրայ կը թագաւորէր , Յուդայի Յովսափատ թագաւորին որդին Տ Յովրամ թագաւոր եղաւ ։
17 Անիկայ երեսունուերկու տարեկան էր՝ երբոր թագաւոր եղաւ , ու Երուսաղեմի մէջ ութը տարի թա-
18 գաւորութիւն ըրաւ ։ Եւ Աքիկայ Աքաաբին տանը ըրածին պէս՝ Իսրայէլի թագաւորներուն ճամբան բռնեց . քանզի Աքաաբին աղջիկը ասոր կնիկ եղաւ . ու ասիկայ Տէրոջը առջևը չարութիւն ըրաւ ։
19 Սակայն Տէրը Յուդան կորսընկընել չուզեց , իր Դաւիթ ծառային սիրոյն համար . Ինչպէս որ անոր խօսք տուեր էր , որ Քէ՛ անոր և Քէ՛ անոր որդւոցը միշտ մէկ ճրագ մը տայ ։
20 Անոր օրերը՝ Եդովմայեցիք Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան , Ու իրենց վրայ թագաւոր մը
21 դրին ։ Ու Յովրամ էր բոլոր կառքերը հետը առաւ , ու Սայիր անցաւ . և գիշերով ելաւ , ու իր չորս կողմը առնող Եդովմայեցիները ու կառքերու իշխանները զարկաւ . և ժողովուրդը իրենց վրաննները փա-
22 խան ։ Բայց Եդովմայեցիք՝ Յուդայի ձեռքին տակէն ապստամբեցան մինչև աս օր ։ Այն ատենը Լբնան ևս ապստամբեցաւ ։
23 Եւ Յովրամին մնացորդ պատմութիւնը , ու բոլոր ըրածները՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց դրքին մէջը գրուած է ։
24 Ու Յովրամ իր հայրերուն հետ քնացաւ , ու իր հայրերուն հետ Դաւիթի քաղաքին մէջը թագուեցաւ . և անոր որդին Ոքոզիան անոր տեղը թագաւոր եղաւ ։

885

25 Իսրայէլի Աքաաբեան Յովրամ թագաւորին երկոտասաներորդ տարին՝ Յուդայի Յովրամ թագաւորին որդին Ոքոզիան թագաւոր ե-
26 ղաւ ։ Ոքոզիա քսանուերկու տարեկան էր , և երբոր թագաւոր եղաւ , ու Երուսաղեմի մէջ մէկ տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Գոթողիա էր , որ Իսրայէլի Ամրի թագաւորին աղ-
27 ջիկն էր ։ Եւ անիկայ Աքաաբին տանը ճամբուն մէջ քալեց , ու Աքաաբին տանը պէս՝ Տէրոջը առջևը չարութիւն ըրաւ . քանզի Ա-
28 քաաբին տանը փեսան էր ։ Եւ անիկայ Աքաաբեան Յովրամին հետ՝ Ասորւոց Ազայէլ թագաւորին վրայ Ռամոթի դաղաադը զբնաց պատերազմելու համար . և Ասորիք Յովրամը վիրաւորեցին ։
29 Եւ Յովրամ թագաւորը դարձաւ որ Ցեզրայելի մէջ բժշկուի ան վէրքերէն՝ որ Ասորիները անոր տուեր էին Ռամոթի մէջ , Ասորւոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմ ըրած ատենը . ու Յուդայի Թագաւորը Յովրամի որդին Ոքոզիան Ցեզրայէլ իջաւ , Աքաաբին որդին Յովրամը տեսնելու համար . քանզի անիկայ հիւանդ էր ։

Ն · Ք · ԳՔ · 892

Հ Հմր 26 ։

Ե Թագ · Ը · 13 ։ Գ Թագ · Ժա · 36 ։ Ժե · 4 ։ Բ Մն · Խա · 7 ։

Ը Ծն · Խէ · 40 ։ Բ Մն · Խա · 8 , 9 , 10 ։

Գ Թագ · Իբ · 48 ։

Ծ Ծն · Խէ · 40 ։

Բ Մն · Խա · 10 ։

Ն Բ Մն · Իբ · 1 ։

Բ Մն · Իբ · 6 ՝Ը–Ի Աքաբիա , Ի–Բ Մն · Խա · 17 · — Խէ · 23 ՝Ը–Ի Յովաբաղ ։

Ը Տն Բ Մն · Իբ · 2 ։

Տն Հմր 18 ։

Ն Բ Մն · Իբ · 3 , 4 ։

884

Ղ Բ Մն · Իբ · 5 ։

Ե Գ · Թ · 15 ։

Հմր 28 ։

Ե Եբ · Ութ · մայի

Գ · Ե · Թ · 16 ։ Բ Մն · Իբ · 6 , 7 ։

Ն · Ք · ԳԲ · 884

Գ Լ · Թ

1 Եղեսե՝ մարգարէից որդիներէն մէկը պատուէրներով կը խրկէ, որ Գէուն Թագաւոր օծէ Ռամովթ գաղաադի մէջ։ 4 Անիկայ ալ իրեն ապստրուած գործքը կատարելէն ետքը՝ կը փախչի։ 11 Զինուորները Թագաւոր կը նատեցընեն Գէուն, որ Նաբովթին արիւնին մէջ Յովրամը կը մեռցընէ։ 27 Ոքզիա՝ Գուրի մէջ կը մեռցուի, ու Երուսաղէմի մէջ կը թաղուի։ 30 Հպարտ Գեզաբէլը պատուհանէ մը վար ձգուելով՝ շուներուն կերակուր կ'ըլլայ։

1 Եւ Եղիսէ մարգարէն՝ մարգարէից որդիներուն մէկը կանչեց, ու անոր ըսաւ. Գօտիդ մէջդ կապէ, ու աս եղին շիշը ձեռքդ առ, և Ռամովթ գաղաադը գնա։

2 Ու երբոր հոն երթաս, Նամեսսեան Յովսափատին որդին Գէուն գտիր, ու մտնելով՝ զանիկայ իր եղբայրներուն մէջէն վերցուր, և զանիկայ

3 ներքին սենեակ մը տար։ Ու Եղին շիշը առ, և անոր գլուխը թափէ, ու ըսէ. Ցերը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեցի. ու դուռը բանաս՝ ու փախչելու

4 չուշանաս։ Եւ ան մանչը՝ ան նոքահասակ մարգարէն՝ Ռամովթ գաղաադը գնաց։

5 Ու երբոր հո՛ն հասաւ, ահա զօրքի իշխանները նստեր էին. և ա՛նիկայ ըսաւ. Ո՛վ իշխան, քեզի խօսք մը ունիմ. ու Գէուս ըսաւ. Մեր ամենէն որո՞ւն. ու անիկայ

6 ըսաւ. Քեզի՛, ո՛վ իշխան։ Եւ Գէո՛ւ ելաւ՝ ներս մտաւ. ու անիկայ եղը անոր գլուխը թափեց, ու անոր ըսաւ. Ի՛սրայէլին Ցեր Աստուածը այսպէս կ'ըսէ. Քեզ Ցերոջը ժողովուրդին՝ Իսրայէլին վրայ

7 թագաւոր օծեցի. Եւ քու տիրոջդ Աքաաբին տունը զարնես, որ իմ ծառաներուս՝ մարգարէներուն արիւնին համար, ու Ցերոջը բոլոր ծառաներուն արիւնին համար, ի Գեզաբելին ձեռքէն վրէժ առնեմ։

8 Ու Աքաաբին բոլոր տունը բնաջինջ պիտի ըլլայ. և Աքաաբին ըԲոլոր երիկ մարդիկները, ու ի Իսրայէլի մէջ գոցուածը ու ձգուածը ի պիտի

9 կորսընցընեմ. Եւ Աքաաբին տունը Նաբատի որդւոյն Երոբովամին տանը պէս՝ ու Աքիայի որդւոյն Բաասային տանը պէս պիտի ը-

10 նեմ. Ի Ու Գեզաբէլը՝ Գեզրայէլի ագարակին մէջ շուները պիտի ուտեն, ու ոՆի՛ոյ թաղող պիտի չըլլայ։ Ետքը դուռը բացաւ, ու փախաւ։

11 Եւ Գէու իր տիրոջը ծառաներուն ելաւ. ու անոր ըսին. Ողջո՞ւ թի՛ւն է. ի ա՞ս անմիտը ինչո՞ւ քեզի եկաւ։ Եւ անիկայ անոնց ըսաւ. Դուք ան մարդը, ու անոր խօսքե-

12 րը գիտէք։ Եւ անոնք ըսին. ուռա

Ն · Ք · ԳԲ · 884

է. պատմէ՛ մեզի հիմա. ան ալ ըսաւ. Անիկայ ինծի այսպէս ու այսպէս խօսեցաւ՝ ըսելով. Ցերը այսպէս կ'ըսէ. Քեզ Իսրայէլի վը-

13 րայ թագաւոր օծեցի։ Ան ատենը շուտով իւրաքանչիւրմէն մարդ իր հանդերձը առաւ, ու սանդուխին գլխուն վրայ՝ անոր տակը դրին, ու փող ինչեցընելով՝ ըսին. Գէուն թագաւ-

14 որ եղաւ։ Այսպէս Նամեսսեան Յովսափատին որդին Գէուն՝ Յովրամին դէմ գլուխ վերցուց։ (Իսկ Յովրամ բոլոր Իսրայէլի հետ Ասորւոց Ազայէլ թագաւորին երեսէն Ռամովթ գաղաադը կը պահպա-

15 նէր. Սակայն ՀՅովրամ թագաւորը՝ Ասորւոց Ազայէլ թագաւորին հետ պատերազմ ըրած ատենը՝ Ասորիներուն տուած վէրքերէն առողջանալու համար՝ Յեզրայէլ դարձեր էր։) Եւ Գէու ըսաւ. Թէ որ կը հաճիք, փախստական մը աս քաղաքէս դուրս չելլէ, որ երթայ

16 ու բե՛ր Յեզրայէլի մէջ պատմէ։ Եւ Գէու հեծաւ, ու Յեզրայէլ դնաց. քանզի Յովրամ հոն պառկած էր. և ՅՈւզդայի Ո.քոզիա թագաւորը՝ Յովրամը տեսնելու իջեր

17 էր։ Ու Յեզրայելի մէջ աշտարակին վրայ դէտ մը կայներ էր, որ Գէուի դունդին գալը տեսնելով, ըսաւ. Ես մէկ դունդ մը կը տեսնեմ։ և Յովրամ ըսաւ. Մէկ ձիաւոր մը առ, ու անոնց դիմացը խրրկէ, ու թող ըսէ. Խաղաղութի՞ւն

18 է։ Եւ ձիաւորը զանիկայ դիմաւորելու գնաց. ու ըսաւ. Թագաւորը այսպէս կ'ըսէ. Խաղաղութի՞ւն է. ու Գէու ըսաւ. Դուն խաղաղութիւնը ի՞նչ պիտի ընես. ետիս անցիր։ Եւ դէտը պատմեց ու ըսաւ. Պատգամաւորը մինչև անոնց քովը գնաց, բայց չդարձաւ։

19 Ու մէկ ուրիշ ձիաւոր մը խրկեց. անիկայ ալ անոնց գնաց, ու ըսաւ. Թագաւորը այսպէս կ'ըսէ. Խաղաղութի՞ւն է։ Եւ Գէու ըսաւ. Դուն խաղաղութիւնը ի՞նչ պիտի

20 ընես. ետիս անցիր։ Ու դէտը պատմեց ու ըսաւ. Մինչև անոնց քովը գնաց, բայց չդարձաւ. և աս ընթացքը Նամեսսեան Գէուին ընթացքին կը նմանի. քանզի կատաղաբար կը քշէ։

21 Ան ատենը Յովրամ ըսաւ. Կապէ՛ պատրաստէ. ու անոր կառքը պատրաստեցին, և Իսրայէլի թագաւորը ՀՅովրամ, ու Յուդայի Ո.քոզիա՝ ամէն մէկը իր կառքովը Գէուն դիմաւորելու ելան, ու զանիկայ Յեզրայելացի Նաբովթին ագարակին մէջը գտան։

22 Եւ Յովրամ՝ Գէուն տեսնելուն պէս՝

ընաւ . Ով Ցէու՝ խաղաղութի՛ւն է . ու անիկայ ըսաւ . Ի՞նչպէս խաղաղութիւն ։՝ըլլայ , քանի որ քու մօրդ Ցեզաբելին պոռնկութիւնները ու կախարդութիւնները կը
23 շատնան ։ Եւ Ցովրամ ձեռքերը դարձուց՝ ու փախաւ , ու Ո.քոզիա՝ յին ըսաւ . Ով Ո.քոզիա՝ դաւաճանութիւն կայ ։ Եւ Ցէու * Էր
24 աղեղը ուժով քաշեց՝ , ու Ցովրամ ուսերուն մէջտեղէն զարկաւ , ու նետը անոր սրտէն ելաւ , և անիկայ
25 իր կառքին մէջը կ՚ծկեցաւ ։ Ու Ցէու իր զօրագլուխին Բադեկարին ըսաւ . Առիկայ վերցուր , Ցեզրայելացի Նաբովթին կալուածքի ագարակին մէջը նետէ , քանզի մի տրդ բեր որ երբոր ես ու դուն անոր հօրը Աքաաբին ետևէն յիշը՝ վայ հեծած՝ քովէքով կ՚երթայինք ,
ֆգ Թագ . ի . 29 ։ ֆ Տէրը անոր դէմ աս վճիռը տուաւ .
26 Տէրը կ՚ըսէ որ՝ Իրաւցընէ երէկ Նաբովթին արիւնը ու անոր որդւոցը արիւնը տեսայ , ու ֆքեզի աս ագարակին մէջը պիտի հատուցանեմ ,
ֆգ Թագ . ի . 19 ։ կ՚ըսէ Տէրը ։ Անոր համար հիմա վերցուր զանիկայ աս ագարակին մէջը նետէ , Տէրոջը բանին համեմատ ։
27 Եւ Ցուդայի Ո.քոզիա Թագաւորը ՚՚ իմնը տեսնելով՝ պարտէզի տանը ճամբային փախաւ . ու Ցէու անոր ետևէն իյնալով՝ ըսաւ . Ասիկայ ալ կառքին վրայ զարկէք . ՚՚ Եղ՚՚ Ցերղամի քովը եղող Գուր բլուրին վրայ . ու Ի՛՚զ՚՚
յ Մակեդդով փախաւ , ու հոն մե
28 ռաւ ։ Եւ անոր ծառաները զանիկայ կառքով Երուսաղէմ տարին , ու զանիկայ Դաւիթի քաղաքը իր դերեզմանին մէջ՝ իր հայրերուն հետ թաղեցին ։
29 Եւ Ո.քոզիա՝ Աքաաբի որդւոյն Ցովրամին մետասաներորդ տարին՝ Ցուդայի վրայ Թագաւոր եղեր էր ։
30 Եւ Ցէու՝ Ցեզրայէլ եկաւ . ու երբոր Ցեզաբէլ լսեց , ՚իր աչքերուն ծարոյր դրաւ , և իր դլուխը զարդարեց , ու պատուհանէն կը
31 նայէր ։ Ու երբոր Ցէու դռնէն ներս կը մտնէր , անիկայ ըսաւ . ՚Մ՚իթէ իր տէրը մեղցընող Զամբրին յաջողութիւն ֆ՚՚ ։ Եւ
32 Ցէու իր երեսը դէպ ՚ի պատուհանը վերցուց , ու ըսաւ . Ինծի հետ ո՞վ կայ , ո՞վ . ու երկու իրէք ներ
33 քինները անոր նայեցան ։ Ան ատենը ըսաւ . Զանիկայ վար նետեցէք . ու զանիկայ վար նետեցին . և անոր արիւնէն պատին ու ձիերուն վրայ ցամքեց . ու կոխկրտեց զ
34 նիկայ ։ Եւ ինքը ներս մտաւ , ու

կերաւ խմեց , ու ըսաւ . Հիմա աս անիծած կնկանը հոգ տարէք , ու զանիկայ թաղեցէք . քանզի ՚թագա
35 ւորի աղջիկ է ։ Եւ զանիկայ թաղելու գացին . բայց անոր գագաթէն՝ ու ոտքերէն՝ ու ձեռքերուն թաթերէն ՚ի զատ՝ ուրիշ բան մը
36 չգտան ։ Եւ դարձան անոր պատմեցին . ու անիկայ ըսաւ . Աս է Տէրոջը խօսքը՝ որ իր ծառային Թեզբացի Եղիայուն ձեռքովը խօսեցաւ՝ ըսելով . Ցեզաբելին մարմինը Ցեզրայելի ագարակին մէջ
37 շուները պիտի ուտեն . Ու Ցեզաբելին դիակը՝ Ցեզրայելի ագարակին մէջ՝ Դարտի երեսի վրայ եղող աղբի պէս պիտի ըլլայ , այնպէս որ չըսուի թէ՝ Ասիկայ Ցեզաբէլն է ։

ընդ . բ . գէ . 884

* Էէր . պատզով իր ձեռքը լեցուց ,

ե գ Թագ . իա . 23 ։

է Մաղ . ձգ . 10 ։

ԳԼ . ծ

1 Ցէու Նամակներ խրկելով՝ Ա.քաաբին եօթանասուն որդիները գլխատել կու տայ . 8 ու աս բանը կ՚արդարացընէ՝ Եղիային մարգարէութիւնը յիշելով . 12 Հովիւներու բեթակադին քովը՝ Ո.քոզիային քառասունեւերկու եղբայրները կը մեռցընէ ։ 15 Ցէու իրեն ընկեր կ՚առնէ Ցովնադաբը , 18 ու խորամանկութիւնով՝ Բահաղին երկրպագութիւն բնողներուն ամէնն ալ բնաջինջ կ՚ընէ ։ 29 Ցէու Ցերոբովամին բրած մեղքերուն կը հետևի ։ 32 Ադայէլ՝ Իսրայէլը կը նեղէ ։ 34 Ցովքազ՝ Ցէուին տեղը կը յաջորդէ ։

1 Եւ Ա.քաաբ Սամարիայի մէջ եօթանասուն որդի ունէր . ու Ցէու նամակ մը գրեց , և Սամարիա խրկեց Ցեզրայելի իշխաններուն , ՚՚ ծերերուն , և Ա.քաաբին որդւոցը հոգաբարձուներուն՝ ու
2 բսաւ . Երբոր աս նամակս ձեզի հասնի , ահա ձեր տիրոջը որդիքը ձեր քովն են . ու կառքեր , ու ձիեր , և պարսպաւոր քաղաք , ու
3 զէնքեր ֊ն ունիք . Ուրեմն ձեր տիրոջը որդիներէն որն որ աղէկ ու յարմար կը դատէք , ՚՚ներ՚՚ իր հօրը աթոռին վրայ նստեցուցէք , ու ձեր տիրոջը տանը համար պա
4 տերազմ բրէք ։ Ու անոնք խիստ շատ վախցան , ու ըսին . Ահա երկու Թագաւորներ չկրցան անոր առջևը կայնիլ , ու մենք ի՞նչպէս
5 պիտի կայնինք ։ Եւ պալատին հազարապետը , ու քաղաքապետը , ու ծերերը , և հոգաբարձուները՝ Ցէուին ՚՚ղ՚՚ խրկեցին ու ըսին . Մենք քու ծառաներդ ենք . ու մեզի ինչ որ հրամայես , պիտի բնենք . բնաւ մէկը Թագաւոր պիտի չդնենք . քու աչքերուդ աղէկ երևցածը բրէ ։
6 Եւ անոնց նորէն նամակ մը գրեց՝ ըսելով . Թէ որ դուք իմ հետս էք , ու իմ խօսքս մտիկ կ՚ընէք , ձեր տիրոջը որդւոցը գլուխները առէք , ու վաղը աս ատենս ինծի

ընդ . բ . գէ . 884

ե գ Թագ . ժզ . 31 ։

884

իբր 886 Աս ժամանակը սկսեց Թագաւորել իբրև փոխանորդ իր հօրը՝ անոր հիւանդութեանը ատենը . բ Մն . իա . 18 , 19 ։ Բայց Ցովրամին 12 երորդ տարին սկսեց մինակ Թագաւորել գԼ . 25 ։

իբր 884 Ն Եզեկ . իգ . 40 ։ Ա գ Թագ . ժզ . 9—20 ։

Ն·Ք·ՂՓ· 884

Ցեղրայէլ եկէք . ու թագաւորին որդիքը եօթանասուն հոգի էին , ու զանոնք մեծցընող՝ քաղաքի մե-
7 ծերուն քովն էին : Եւ նամակը անոնց հասածին պէս՝ թագաւորին որդիները բռնեցին , ու – եօթանասուն հոգի մորթեցին , և անոնց գլուխները կողովներու մէջ դրին ,
8 ու անոր խրկեցին Ցեզրայէլ : Եւ լրաբեր մը եկաւ , ու անոր պատմեց՝ ըսելով . Թագաւորին որդւոց գլուխները բերին : Եւ անիկայ ըսաւ . Զանոնք մինչև առտու դրանը քովը դրէք երկու դէզ ընելով :
9 Ու առտուանց դուրս ելաւ կայնեցաւ , և բոլոր ժողովուրդին ըսաւ . դուք արդար էք . ահա ես իմ տիրոջս դէմ դլուխ վերցուցի , ու զանիկայ սպաննեցի . բայց ասոնք
10 ամէնը ո՞վ սպաննեց : Հիմա գիտցէք որ Տէրոջը խօսքէն ոչ բան մը գետինը պիտի չկրնայ , որն որ Տէրը Աքաաբին տան համար խօսեցաւ . ու Տէրը Իր ծառային Եղիայէին ձեռքովը ըսածը ըրաւ :
11 Եւ Ցեզրայէլի մէջ Աքաաբին տունէն բոլոր մնացածները , ու անոր բոլոր մեծ նախարարները , և մտերիմ բարեկամները , ու քուրմերը սպաննեց , այնպէս որ անոր մնացորդ մը չթողուց :
12 Անկէ ետքը ելաւ Սամարիա դընաց . — ճամբուն վրայ հովիւնե-
13 րու *Բեթակադին հասնելով , Ցեզրայէլի թագաւորին եղբայրները գտաւ , ու անոնց ըսաւ . Դուք ո՞վ էք : Եւ անոնք ըսին . Ա.քոզիային եղբայրներն ենք , ու թագաւորին որդիները՝ ու թագուհիին որդիները ողջունելու իջանք :
14 Ան ատենը անիկայ ըսաւ . Ասոնք ողջ բռնեցէք . ու զանոնք ողջ բռնեցին , և Բեթակադի ջրհորին քովը մեռցուցին զանոնք , որ քառասունուերկու հոգի էին . ու անոնց մէկը ողջ չթողուց :
15 Եւ անկէ դնաց . ու իր դիմացը ելլող Ռեքաբի որդին Յովնադաբը գտաւ , ու անոր բարև տուաւ ու ըսաւ . Ինչպէս որ իմ սիրտս քու սրտիդ հետ ուղիղ է , արդեօք քու սիրտդ ալ այնպէս ուղիղ է . և Յովնադաբ ըսաւ . Այո : Ուրեմն ձեռքդ տուր : Ու անիկայ ձեռքը տուաւ . ու զանիկայ կառքին
16 մէջ իր քովը առաւ , Եւ ըսաւ . Ինծի հետ եկուր , ու Տէրոջը համար ունեցած նախանձաւորութիւնս տես . այսպէս անոր կառքը
17 հեծցուցին զանիկայ : Եւ Սամարիա դնաց , ու Սամարիայի մէջ Աքաաբին բոլոր մնացածները զարկաւ , մինչև որ զանիկայ բնաջինջ

Ն·Ք·ՂՓ· 884

ըրաւ , ան խօսքին համեմատ որ Տէրը Եղիայի խօսեր էր :
18 Եւ Եհու բոլոր ժողովուրդը ժողվեց , ու անոնց ըսաւ . Աքաաբը Բահաղին քիչ ծառայութիւն ըրաւ . Եհու անոր շատ ծառայու-
19 թիւն պիտի ընէ : Եւ հիմա Բահաղին բոլոր մարգարէները , բոլոր ծառաները , ու բոլոր քուրմերը ինծի կանչեցէք , — մարդ մը պակաս չըլլայ . քանզի Բահաղին մեծ զոհ պիտի ընեմ" : ամէն հոն չգտնուողը պիտի չապրի . ասիկայ Եհու խարէութեամբ ըրաւ , որ Բահաղին ծառայութիւն ընողները
20 բնաջինջ ընէ : Եւ Եհու ըսաւ . Բահաղին համար տօնախմբութիւն մը սահմանեցէք . ու ծանուցում
21 ըրին : Եւ Եհու բոլոր Իսրայէլին դրկեց , ու Բահաղին բոլոր ծառայութիւն ընողները եկան , ու չեկող մարդ չմնաց . և Բահաղին տունը եկան . ու Բա-
22 հաղին տունը ծայրէ՛ի ծայր լեցաւ : Եւ հանդերձապետին ըսաւ . Բահաղին բոլոր ծառայութիւն ընողներուն պատմուճաններ հանէ . ու պատմուճանները հա-
23 նեց անոնց : Եւ Եհու Ռեքաբի որդւոյն Յովնադաբին հետ՝ Բահաղին տունը մտաւ , ու Բահաղին ծառայութիւն ընողներուն ըսաւ . փնտռեցէք նայեցէք , չըլլայ որ հոս ձեզի հետ Եհովային ծառաներէն մէկը դտնուի , բայց միայն Բահա-
24 ղին ծառայութիւն ընողները : Եւ զոհեր ու ողջակէզներ ընելու մտան . ու Եհու իրեն համար դուրսը ութսուն մարդ կայնեցուց , ու անոնց ըսաւ . Ով որ ձեր ձեռքը տուած մարդիկներէս ձերբ ազատէ , իր անձը անոր անձին տեղը պիտի ըլլայ :
25 Ու երբոր ողջակէզը ըրաւ լմընցուց , Եհու սուրհանդակներուն ու զօրապետներուն ըսաւ . Գացէք , ասոնք մեռցուցէք . մարդ մը դուրս չելլէ : Ու զանոնք սուրէ անցուցին . և սուրհանդակները ու զօրապետները զանոնք նետեցին . ու ետքը Բահա-
26 ղին տանը քաղաքը մտան . Եւ Բահաղին տանը հարձանները հանեցին , ու զանոնք կրակով այրե-
27 ցին : Եւ Բահաղին արձանը կործանեցին , ու Բահաղին տունը փլցուցին , ու զանիկայ արտաքնոց
28 ըրին մինչև ասօր : Այսպէս Եհու՝ Իսրայէլէն բնաջինջ ըրաւ
29 Բահաղը : Սակայն Եհու՝ Իսրայէլին մեղանչել տուող Նաբատեան Եզերովամին մեղքերէն՝ այսինքն Բեթելի ու Դանի մէջ եղող ոսկիէ որթերէն ետ չկեցաւ :
30 Եւ Տէրը Եհուին ըսաւ . Որով-

Ի·Գ·ԹԱԳ· ԺԹ·21 ։

Ա·Գ·ԹԱԳ· Ժ·31·32 ։

Ի·Գ·ԹԱԳ· ԻԲ·6 ։

† ԵՍԴ· ու ՆԻՄ·

‡ ԵՍԴ· ՍԲՐԱ-ՅԵՑ·

Բ·ԹԱԳ· Ժ·32 ։

Ե·ԹԱԳ· Ժ·39 ։

Ժ·ԹԱԳ· Ժ·23 ։

Յ ԵԶՐ· Գ· 11 ։ ԴԱՆ· Բ·5 ։ Գ· 29 ։

Ա·Գ·ԹԱԳ· Ժ·28·29 ։

* Կ՚ԱՍԱԲԱԿՈՒՐ ԸՆԼՈՒ ՄՈՒՆԸ Ի ԳԼ·Բ·29 ։ ԲՄՆ·ԻԲ·8 ։

Ա ՄՆ·Բ· 55 ։ Ի ԵՐԻՄ· ԼԵ· 6 ։ ՃՃ ։

Ը ԵԶՐ· Ժ· 19 ։

Ի·Գ·ԹԱԳ· ԺԹ·10 ։

Ի ԳԼ·Թ·8 ։ Բ ՄՆ·ԻՐ· 8 ։

Ն · ք · գ · 884

հետև դուն իմ աչքերուս առջևը ուղիղ եղածը՝ ի գործ դնելով՝ աղէկ ըրիր , — Ա.քահարին տանը՝ բոլոր իմ սրտիս մէջը եղածին համեմատ ըրիր , ‡ քու որդիդդ մինչև չորրորդ ազգը՝ Իսրայէլի աթոռին
31 վրայ պիտի նստին : Բայց ցէու Իսրայէլի Տէր Աստուծոյն օրէնքին մէջը՝ բոլոր սրտով քալելու զգուշութիւն չըրաւ , — ‡ Իսրայէլին մեղանչել տուող Եղրոբոամին մեղքերէն ետ չկեցաւ :
32 Ան օրերը Տէրը սկսաւ Իսրայէլը * կոտրել . և ‡ Ազայէլ Իսրայէլացւոց բոլոր սահմաններուն մէջը
33 զանոնք զարկաւ , Յորդանանէն դէպ՝ ի արևելք բոլոր Գաղաադացւոց երկիրը , — Գադեացիները , Ռուբենեանները , ու Մանասեանները , Արնոն ձորին վրայ եղող Արոերէն մինչև Գաղաադը ու Բասանը :
34 Եւ ցէուին մնացորդ պատմութիւնը , ու ամէն ըրածը , ու բոլոր զօրութիւնը՝ ահա Իսրայէլի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած է : Եւ ցէու
35 իր հայրերուն հետ քնացաւ . ու զանիկայ Սամարիայի մէջ թաղեցին . և անոր որդին Յովաքազ
36 անոր տեղը թագաւոր եղաւ : Ու ցէուին Իսրայէլի վրայ Սամարիայի մէջ թագաւորութիւն ըրած օրերը՝ քսանուութը տարի էր :

Ն · Ա՛մով · ա · 3 ,

Ն · ք · գ · 878

դակները կանչեց , և զանոնք իր քովը Տէրոջը տունը բերաւ , ու անոնց հետ ուխտ ըրաւ , ու Տէրոջը տանը մէջ անոնց երդումը ընել տուաւ , ու թագաւորին որդին ա-
5 նոնց ցուցուց : Եւ անոնց պատուիրելով՝ ըսաւ . Ձեր ընելու բանը աս է . ձեր երրորդ մասը՝ որ Շաբաթ օրը պիտի մտնեն , թագաւորին տանը պահապանութիւն
6 ընեն . Ու երրորդ մասը՝ Սուրի դուռը , ու երրորդ մասն ալ՝ սուր-հանդակաց ետևի դուռը կ'ըլլայ . և այսպէս տանը պահպանութիւնը ը-
7 նէք որ մարդ մը չմտնէ : Ու ձեզմէ երկու գունդը՝ որ Շաբաթ օրը պիտի ելլեն , թագաւորին բոլորտիքը՝ Տէրոջը տա-
8 նը պահպանութիւն ընեն : Եւ ամէն մարդ իր զէնքերը ձեռքը՝ թագաւորին չորս կողմը առնէք . ու կարգերէն ներս մտնողը սպանուի . ու թագաւորին հետը ըլլաք , անոր ելած ու մտած աեեն :

Ե ա Մն · Թ · 25 ,

Ղ Մն · իգ · 8 ,

9 Եւ Հարիւրապետները՝ Յովիադա քահանային բոլոր պատուիրածները ըրին . ու ամէն մէկը իր մարդիկները առաւ , թէ շաբաթ օրը մտնողները , և թէ շաբաթ օրը ելլողները , ու Յովիադա քահանա-
10 յին քովը եկան : Եւ քահանան՝ Տէրոջը տունը եղած Դաւիթ թագաւորին նիզակները ու վահանները
11 հարիւրապետներուն տուաւ : Ու սուրհանդակները ամէն մարդ իր զէնքը ձեռքը՝ տանը աջ կողմէն մինչև ձախ կողմը՝ սեղանին ու տանը քովը՝ թագաւորին բոլորտիքը
12 կայնեցան : Եւ թագաւորին որդին հանեց , ու անոր վրայ թագը ու վկայութիւնը դրաւ . և զանիկայ թագաւոր ըրին , ու օծեցին , ու ծափ զարնելով՝ ըսին . Կեցցէ արքայ :

Ե ա Թագ · ժ · 24 ,

13 Եւ Գոթողիա՝ երբոր † վազող ժողովուրդին ձայնը լսեց , Տէրոջը
14 տունը ժողովուրդին եկաւ . Ու տեսաւ որ ահա թագաւորը բուն սովորութեան Իսիւնին քովը կայներ էր , և զօրապետները ու փողերը թագաւորին քովն էին , ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախանալով՝ փողեր կը շչեցնէին . ան ատեն Գոթողիա իր հանդերձները պատռեց , ու պոռաց . Դաւաճանու-
15 թիւն է , դաւաճանութիւն : Եւ Յովիադա քահանան՝ զօրքերուն վրայ եղող հարիւրապետներուն հրամայեց , ու անոնց ըսաւ . Ասիկայ կարգերուն մէջէն հանեցէք , ու ասոր ետևէն գացողը սրով մեռցուցէք . (քանզի քահանան ըսեր էր որ Տէրոջը տանը մէջ չմեռցուի :)

Ը ա Մն · իգ · 12 , ե ,
† կ՛ սուրհանդակներուն ,
Բ Գւ · իգ · 3 ։ բ Մն · լդ · 31 ,

ԳԼ · ԺԱ

1 Գոթողիա՝ բոլոր թագաւորի որդիքը կորդած աեեն , Յովաս իր Յոասբէկ հօրաքրոջը ձեռքովը կ'ազատուի , ու վեց տարի Աստուծոյ տանը մէջ կը պահուի : 4 Յովիադա՝ հարիւրապետներուն պատուէրներ տալով , եօթներորդ տարին թագաւոր կ'օծէ Յովաս : 13 Գոթողիա կը սպաննուի : 17 Յովիադա՝ Աստուծոյ երկրպագութիւնը ընելը նորէն կը հաստատէ :

884 — Գւ · բ · 26 ։ Բ Ր Մն · իր · 10 ։ ‡ Ր Մն · իր · 11 ։

1 Եւ Աթոզիային մայրը Գոթողիա՝ իր որդւոյն մեռնիլը տեսնելով , ելաւ բոլոր † թագաւորական
2 սերունդը բնաջինջ ըրաւ : Բայց Յովրամ թագաւորին աղջիկը՝ Յոսաբէէ՝ Աքոզիային քոյրը Յոասբէէ՝ Աքոզիային որդին Յովասը առաւ , ու թագաւորին սպաննուած որդւոյոց մէջէն գողցաւ զանիկայ՝ ու անոր դայեակը . և Գոթողիային երեսէն անկողիններու սենեակին մէջը պահեցին զանիկայ , ու չմեռցուեցաւ :
3 Եւ անիկայ անոր հետ վեց տարի Տէրոջը տանը մէջ պահուեցաւ . ու երկրին վրայ Գոթողիա թագաւորութիւն կ'ընէր :

878 — Ր Մն · իգ · 1 , ե ,

4 Ու † եօթներորդ տարին՝ Յովիադան մարդ իրկեց , և հարիւրապետները՝ թիկնապահները ու սուրհան-

Ն·Ք·ԳԲ· 878

16 Եւ անոր վրայ ձեռքերնին երկընցուցին . ու երբոր անիկայ թագաւորական տունը մտնող ձիերուն ճամբայէն կ'երթար , Հոն մեռցուեցաւ ։

Բ Մն·Իգ·16։

17 Եւ Ցովիադա՝ Ցէրոջը , ու թագաւորին ու ժողովուրդին մէջտեղը ուխտ ըրաւ , որ Ցէրոջը ժողովուրդը ըլլան . Ինաև թագաւորին ու

Է Թագ·ե·3։

18 ժողովուրդին մէջտեղը ։ Ու երկրին բոլոր ժողովուրդը Բահաղին տունը մտան , և զանիկայ կործանեցին , ԵՒ անոր սեղանները ու կուռքերը Է կտոր կտոր ըրին , և Բահաղին քուրմը Մատթանը՝ սեղաններուն առջեւը սպաննեցին . ու Էքահանան Ցէրոջը տանը մէջ պաշտօնեաներ

Ղ ԹԼ·Ժ·26։

Ի Օր·ԺԲ·3։ Բ Մն·Իգ·17։ Ի Բ Մն·Իգ·18, ՃԼ։

19 դրաւ ։ Եւ հարիւրապետները , Թիկնապաշները , ու սուրհանդակներն , ու երկրին բոլոր ժողովուրդը առաւ . և Թագաւորը Ցէրոջը տունէն իջեցուցին , ու սուրհանդակաց դրանը ճամբայէն Թագաւորին տունը մտան . և անիկայ Թագաւորներուն աթոռին վրայ նստաւ ։

20 Ու երկրին բոլոր ժողովուրդը ուրախացաւ , ու քաղաքը հանդարտուԹեան մէջ էր . իսկ Գոթողիան՝ Թագաւորական տանը

Ե Բ Մն·Իգ·1։

21 մեռցուցին ։ Եօաս եօԹը տարեկան էր , երբոր Թագաւոր եղաւ ։

ԳԼ·ԺԲ

1 Ցովաս ազէկ կերպով կը կառավարէ ժողովուրդը՝ Ցովիադային բոլոր օրերուն մէջ . 4 տաճարը Նորոգելու հրաման կ'ընէ ։ 17 Ազայէլ՝ Երուսաղէմի վրայ երԹալէն կը դառնայ , սուրբ գանձերը իրեն ընծայ ուրուելուն համար ։ 19 Ցովաճին ծառաները դինքը կը սպաննեն , ու Ամասիան անոր տեղը կը յաջորդէ ։

Բ Մն·Իգ·1։

1 Եհուին եօԹներորդ տարին՝ Ցովաս Թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ քառասուն տարի ԹագաւորուԹիւն ըրաւ . ու անոր մօրը անունը Սաբիա էր , Բէերսաբէէ ։

2 Ցոյեան ։ Եւ Ցովաս Ցէրոջը առջեւը ուղղուԹիւն ըրաւ ան բոլոր օրերուն մէջ՝ որ Ցովիադա քահանան

Բ Գ Թագ·Ժ·6·14։ Իր·44։ ԳԼ·Ժգ·4։

3 անոր կը սորվեցընէր ։ Բայց Բարձր տեղուանքը չվերցան . ժողովուրդը տակաւին բարձր տեղերու վրայ զոհ կը մատուցանէին , ու խունկ կը ծխէին ։

Է ԳԼ·Իր·4։ Ը Եզ·Լ·13։ Ի Ղե·Իե·2։

4 Եւ Ցովաս՝ քահանաներուն ըսաւ . Է Ցէրոջը տունը բերուած սուրբ բաներուն բոլոր ստակը , Ը համրուած մարդոց ստակը , Ի գինը կրտրուած անձինքներուն ստակը , և ան բոլոր ստակը՝ որ Ա մարդ մը Ցէրոջը տունը բերելու կամք կ'ընէ ,

Ղ Եզ·Լե·5։ Ա Մն·Իթ·9։

5 քահանաները՝ ամէն մարդ իրենց ճանչորներէն առնեն , ու տանը փլած տեղուանքը իրենք նորոգեն , ուր որ փլած տեղ մը գտնուի ։

6 Սակայն Ցովաս Թագաւորին քսաներորդ երեքերորդ տարին՝ Էքահանները տանը փլած տեղուանքը

7 չնորոգեցին ։ Եւ Ցովաս Թագաւորը Էբէն կանչեց Ցովիադա քահանան , ու ուրիշ քահանաները , և անոնց ըսաւ . Տանը փլած տեղուանքը ինչո՞ւ չէք նորոգեր . ու հիմա ձեր ճանչորներէն դադրեցէք ստակ մի՛ առնէք , հապա զանիկայ տանը փլած տեղերուն համար

8 տուէք ։ Եւ քահանաները հաւանեցան Թի տուին , որ իրենք ստակ չառնեն ժողովուրդէն , *ոչ ալ տանը փլած տեղուանքը նորոգեն՝ ։

9 Եւ Ցովիադա քահանան Մէկ սրտուկ մը առաւ , ու անոր վրան ծակ մը ծակեց , ու զանիկայ սեղանին քովը՝ Ցէրոջը տունը մտնողներուն աջ կողմը դրաւ . և դուռը սպասող քահանաները Ցէրոջը տունը բերուած բոլոր ստակը հոն

10 կը դնէին ։ Ու երբոր կը տեսնէին որ անոթուկին մէջ ստակը շատցեր է , Թագաւորին դրագիրը ու մեծ քահանան կ'ելլէին , ու Ցէրոջը տունը գտնուած ստակը համրելով՝

11 կը ծրարէին . Եւ պատրաստուած ստակը՝ Ցէրոջը տանը Էրդիէն վրայ դրուած բանւորներուն ձեռքը կու տային , որ անոնք Ցէրոջը տանը մէջ գործող հիւսերուն , ու շինող-

12 ներուն , Եւ որմնադիրներուն , ու քարահատներուն վճարեն . նաև Ցէրոջը տանը փլած տեղուանքը նորոգելու համար՝ փայտեր ու տաշուած քարեր ծախու առնեն , և տանը նորոգուԹեան համար բոլոր պէտք եղած բաներուն ծախք ընեն ։

13 Բայց Ցէրոջը տունը բերուած ստակէն՝ Ի Ցէրոջը տանը համար արծաթէ դաւաթներ , բազմակալներ , կոնքեր , փողեր , ու ոսկիէ ամաններ , կամ արծաթէ ամաններ

14 ամենևին չշինուեցաւ . քանզի բանւորներուն կու տային զանիկայ , որ անով Ցէրոջը տունը նորոգեն ։

15 Եւ որոնց ձեռքը որ կը յանձնէին ան ստակը՝ բանւորներուն տալու համար , Էանոնցմէ հաշիւ չէին առներ . քանզի անոնք հաւատարմութեամբ

16 ԹեամբԼ կ'աշխատէին ։ Ե Ցանցանքի ստակը ու մեղքի ստակը՝ Ցէրոջը տունը չէր մտներ . Էանիկայ քահանաներուն կ'ըլլար ։

17 Անատեն Ի Ասորւոց Ազայէլ Թագաւորը ելաւ՝ ԳԹթի դէմ պատերազմ ըրաւ , ու զանիկայ առաւ . ետքը Ազայէլ իր երեսը դարձուց ,

18 որ Երուսաղէմի վրայ ելլէ ։ Եւ Յուդայի Թագաւորը Ցովաս՝ իր հայրերուն Յուդայի Թագաւորներուն՝ Ցովսափատին , ու Ցովրամին

Ն·Ք·ԳԲ· 856

Ի Բ Մն·Իգ·5։ Ը Բ Մն·Իգ·6։

* Կամ՝ անանց նորոգելու տանը փլած տեղուանքը ։

Ի Բ Մն·Իգ·8, ՃԼ։

Բ Մն·Իգ·14։

Է ԳԼ·Իբ·7։

Ը Ղե·Լ·15, 18։

Ի Ղե·Լ·7։ Թուա·Ժբ·9։

Իրբ 840

Ի ԳԼ·Բ·12։

Ա Ցե՛ Բ Մն·Իգ·23։

մին , և Ոքոզիային հնուիրած բոլոր
սուրբ բաները , ու իր նուիրածը ,
և Ցերոբէ տանը ու թագաւորական
տանը գանձերուն մէջը գտնուած
բոլոր ոսկին առաւ , ու Ասորւոց
Ազայէլ թագաւորին խրկեց . այս-
պէս անիկայ Երուսաղէմի վրայէն
* ետ քաշուեցաւ " ։
19 Եւ Ցովասին մնացորդ պատմու-
թիւնը , ու անոր բոլոր ըրածը՝ ա-
հա Ցուդայի թագաւորներուն յի-
շատակաց դրքին մէջը գրուած է ։
20 Եւ նանոր ծառաները ոտք ելան ,
ու անոր դէմ դաւաճանութիւն ը-
րին . ու Ցովասը զարկին Մելօնի
տանը մէջ , որ Սիլլայի ճամբան
21 բին վրայ է ։ Եւ անոր ծառաները՝
Սամեթի որդին Ցովզաբար , ու
Սովմերի որդին Ցովզաբադ՝ զանի-
կայ զարկին . ու մեռաւ . և զանի-
կայ իր հայրերուն հետ՝ Դաւիթի
քաղաքին մէջը թաղեցին . ու անոր
տեղը անոր որդին Ամասիան թա-
գաւոր եղաւ ։

ն · ք · գէ · իրր 840

հգ Թագ. ժե. 18։ Գլ. ժը. 15 , 16 ։

* Եբր. ելաւ ։

նգլ. ժգ. 5։ բ Մն. իգ. 25 ։

839

ղբՄն. իգ. 26 Յ'ըՈւ Զաբադ ։

ճբՄն. իգ. 27 ։

ԳԼ. ԺԳ

16 խրկող մարդուն ասանկ ըսէք . Ցէրը այսպէս կ'ըսէ . Ահա Ես այս տեղիս ու անոր բնակիչներուն վրայ չարիք պիտի բերեմ , այսինքն Ցուդայի թագաւորին կարդացած գրքին ամէն խօսքերը .
17 Որովհետև զիս թողուցին , և ուրիշ աստուածներու խունկ ծխեցին , որ իրենց ձեռքերուն բոլոր գործքերովը զիս բարկացընեն . ուստի այս տեղիս վրայ իմ բարկութիւնս պիտի բորբոքի , ու պիտի չմարի ։
18 Բայց Ի Ցերոբը հարցընելու համար ձեզ խրկող Ցուդայի թագաւորին ասանկ ըսէք . Իսրայէլի Ցէր Աստուածը այսպէս կ'ըսէ՝ լսած խօսքերուդ համար .
19 Որովհետև հքուսիրտդ կակղացաւ , ու Ցերոբը առջևը Ի խոնարհեցար , երբոր լսեցիր իմ խօսքս , Թէ այս տեղիս վրայ ու

Ն · Ք · ՂԴ · 624

Ի Ր Օր · Լ · 24 , ՃՃ ։ Ր Ա Ր ՄՆ · ԼԴ · 14 , ՃՃ ։

Ի Ր Օր · ԼԹ · 20 Ի'ԸՐԴՈՅ ԱՐԴՕՆ ։

Ի Ր ՄՆ · ԼԴ · 22 ։

* ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԵՆԱՅԻ

Ի Ր Օր · ԼԹ · 27 · Դան · Թ · 11 , 12 , 13 , 14 ։

Ի Ր Օր · ԼԹ · 25 , 26 , 27 ։

Ի Ր ՄՆ · ԼԴ · 26 , ՃՃ ։

Բ Ա Ղ · Ծ · 17 , Ե · Ժէ · 15 ։ Ղ Գ Թագ · ԻԲ · 29 ։

անոր բնակիչներուն վրայ ՚աւերում ու ՚անէծք պիտի բլլայ , և քու հանդերձներդ պատռեցիր , ու իմ առջևս լացիր . ես ալ լսեցի , 20 կ'ըսէ Տէրը : Անոր համար ահա ես քեզ քու հայրերուդ պիտի խառնեմ , ու ՚խաղաղութեամբ քու գերեզմանիդ մէջ պիտի ամփոփուիս . և աս տեղիս վրայ իմ բերելու բոլոր չարիքները՝ քու աչքերդ պիտի չտեսնեն : Ու անոնք թագաւորին պատասխան բերին :

ԳԼ . ԻԳ

1 Ցովսիա հանդիսաւոր ժողովքի մը մէջ՝ անդիքը կարդալ կու տայ : 3 Անիկայ Տէրոջը ուխտը կը նորոգէ . 4 կռապաշտութիւնը կը կործանէ . 15 Բեթէլի սեղանին վրայ մեռելոց ոսկորներ կ'այրէ , ինչպես որ մարգարէութիւն եղած էր : 21 Ցովսիա խիստ հանդիսաւոր զատիկ մը կ'ընէ . 24 կախարդները ու բոլոր պղծութիւնները բնաջինջ կ'ընէ : 26 Աստուծոյ վերջին բարկութիւնը Ցուդայի դէմ : 29 Ցովսիա յանդգնութեամբ փարաւոն Նեքաւովին վրայ երթալով՝ Մակեդովի մէջ կը մեռցուի : 31 Ցովաքազ անոր տեղը կը յաջորդէ . բայց փարաւոն Նեքաւով զանիկայ բանտարկելով՝ Ցովակիմը թագաւոր կը նստեցնէ : 36 Ցովակիմին չար վարմունքը :

1 Յե- թագաւորը ՚Յուդ խրկեց . ու Ցուդային ու Երուսաղէմին բոլոր ծերերը անոր քովը ժողվուեցան : 2 Եւ թագաւորը , ու անոր հետ Ցուդայի բոլոր մարդիկները , ու Երուսաղէմին բոլոր բնակիչները , ու քահանաները , և մարգարէները , ու պզտիկէն մինչև մեծը բոլոր ժողովուրդը Տէրոջը տունը ելան . և ՚Տէրոջը տանը մէջ գտնուած ուխտի գրքին բոլոր խօսքերը 3 րը անոնց *առջևը կարդաց : Եւ թագաւորը ՚սիւնին քովը կայնեցաւ , ու Տէրոջը առջևը ուխտ բրաւ , որ ան գրքին մէջը գրուած ուխտին խօսքերը հաստատելու համար՝ Տէրոջը ետևէն երթայ , և անոր պատուիրանքները , ու վկայութիւնները , ու կանոնները բոլոր սրտով ու բոլոր հոգիով պահէ . և բոլոր ժողովուրդը ուխտին հաստատեցաւ : 4 Նուիրիւն տուաւ : Ու թագաւորը ՚քեղկիա քահանայապետին , ու երկրորդ աստիճանի քահանաներուն , և դրան պահապաններուն հրամայեց , որ Բահաղին համար՝ ու ՚Աստարովթին համար՝ ու երկինքին բոլոր զօրութիւններուն համար շինուած գործիքներուն համար՝ Տէրոջը տաճարէն դուրս հանեն . ու զանոնք Երուսաղէմէն դուրս՝ Կեդրոնի դաշտավայրին մէջ այրեց , ու անոնց մոխիրը Բեթէլ 5 տարաւ : Եւ Ցուդայի թագաւորներուն՝ Ցուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմին բոլորտիքը բարձր տեղերու վրայ դրած խունկ ծխող Էքուրմերը , և Բահաղին , արեգակին , ու լուսնին , և ՚համաբէլա կենդանակերպներուն , ու Երկինքին բոլոր զօրութիւնները խունկ ծխողները վերցուց . 6 Եւ Աստարովթի կուռքը Տէրոջը տունէն՝ Երուսաղէմին դուրսը Կեդրոն հեղեղատը հանեց , ու զանիկայ Կեդրոն հեղեղատին մէջը այրեց , ու ծեծեց փոշի բրաւ , ու փոշին ՚ժողովուրդին որդւոցը գերեզմանները 7 ներուն վրայ ցանեց . Եւ Տէրոջը տանը մէջ գտնուող ՚Սոդոմական մեղքը գործողներուն տուները փլեցուց , ՚ուր որ կնիկները Աստարովթին †վարագուրներ կը գործէին 8 ին : Ու Ցուդայի քաղաքներէն բոլոր քահանաները Երուսաղէմ բերաւ , ու ՚Գաբայէն մինչև Բերսաբէէ՝ պղծեց ան բարձր տեղուանքը , որոնց մէջը քահանաները խունկ կը ծխէին . և քաղաքի իշխանին՝ Եսուին դրանը բերանը՝ քաղաքին դրանը ձախ կողմը եղող դռներուն 9 բարձր տեղուանքը փլցուց : Բայց բարձր տեղերուն քահանաները՝ Երուսաղէմ եղող Տէրոջը սեղանը չէին ելլեր , ՚հապա իրենց եղբայրներուն 10 ներուն մէջ բաղարջ կ'ուտէին : Ու ՚Ենովմի որդւոյն Ձորին մէջը եղող ՚Տոփեթը պղծեց , ՚որ մարդ մը իր տղան կամ աղջիկը Մողոքին համար կրակէ չանցընէ : 11 Ու Նաև վերցուց Տէրոջը տանը դրանը առջևէն ան ձիերը , որ Ցուդայի թագաւորները արեգակին նուիրեր էին , և անոնք Փարուրիմ եղող Նաթանմելէք Ներքինիին սենեակին քովը էին . ու արեգական կառքերը կրակով այրեց : 12 Եւ ՝Ահազին վերնատանը տանիքին վրայ՝ Ցուդայի թագաւորներուն շինած սեղանները , ու Տէրոջը տանը երկու գաւիթներուն մէջ Մանասէին շինած սեղանները՝ թագաւորը փլեցուց , ու անկէ բնաջինջ բրաւ , և անոնց հողը Կեդրոն հեղեղատը նետեց : 13 Ու Երուսաղէմին դիմացը՝ Աւպականութեան լեռան աջ կողմը՝ Իսրայէլի ՚Սողոմոն թագաւորին Սիդոնացւոց գարշելիին՝ Աստարովթին համար , ու Մովաբացւոց գարշելիին՝ քամովսին համար ու Ամմոնի որդւոց գարշելիին՝ Մեղքոմին համար շինած բարձր տեղին : 14 Ցուանքը՝ թագաւորը պղծեց . Եւ ՚արձանները խորտակեց , ու Աստարովթի կուռքերը կոտրտեց , ու անոնց տեղը մարդու ոսկորներով լեցուց :

15 Ու Բեթէլի սեղանն ալ , և Իսրայէլին մեղանչել տուող ՚Երոբովամին շինած բարձր

Ն . ք . գՓ . 624
ՂԳԼ . Իշ . 31 , 32 :
՚Երեմ . իշ . 6 : Խզ . 22 :
/ Սաղ . լՀ . 37 : Ես . ծէ . 1 , 2 :
Բ ՊՆ . լԳ . 29 , 30 , ԽԱ :
Բ ԳԼ . Իբ . 8 :
* ԵՀԲ . ա . կանիներուն
՚ ԳԼ . ժա . 14 : 17 :
Բ ՊՆ . լԳ . 3 , 7 :

Ն . ք . գՓ . 624
Ի ՈՎ . ժ . 5 : Սոփ . ա . 4 :
ՂԳԼ . իա . 3 :
Ի ԳԼ . իա . 7 :
Ը Բ ՊՆ . լԳ . 4 :
Ր գ Թագ . ժգ . 24 : ժե . 12 :
՚ Եզեկ . ժգ . 16 :
† ԵՀԲ . տուներ
Ի գ Թագ . ժե . 22 :
Լ ՏԹ Եզեկ . խգ . 10–14 :
Խ ՈԹագ . բ . 36 :
Ծ ՏԹ . ժե . 8 :
Ի Ես . լ . 33 : Երեմ . է . 31 : ժԹ . 6 : 11—13 :
Հ ՂԼ . ժբ . 21 : Բ Օր . ժբ . 10 : Եզեկ . իգ . 37 , 39 :
Յ ՏԹ Երեմ . ժԹ . 13 : Սոփ . ա . 5 :
ՂԳԼ . իա . 5 :
Ճ գ Թագ . ա . 7 :
Ֆ Եղ . իգ . 24 : Բ Օր . է . 5 , 25 :
Յ գ Թագ . ժբ . 28 , 33 :

տեղը՝ (ան սեղանը ու բարձր տեղն ալ) փլցուց, և բարձր տեղը պրեց ու փոշի դարձուց, ու Աստարովթի
16 կուռքը պրեց։ Եւ Յովսիա դարձաւ, ու հոն լեռանը վրայի գերեզմանները տեսաւ, և մարդ խրկեց՝ գերեզմաններուն միջէ ոսկորները առաւ, ու սեղանին վրայ պրելով՝ զանիկայ պղծեց, ըստ Տէրոջը խօսքին համեմատ, որն որ աս բանները խօսող Աստուծոյ մարդը բարձր ձայ-
17 նով խօսեր էր։ Եւ ըսաւ. Ի՞նչ պիտի ըլլայ աս կոթողը՝ որ ես կը տեսնեմ. ու քաղաքին մարդիկը անոր ըսին. Անիկայ Աստուծոյ մարդուն գերեզմանն է, որ Յուդայէն եկաւ, ու Բեթէլի սեղանին վրայ աս քու ըրած բաներդ
18 խօսեցաւ։ Եւ ըսաւ. Զանիկայ թողուցէք. անոր ոսկորները մարդ մը տեղէն չշարժէ. ուստի անոր ոսկորներուն՝ Սամարիայէն եկող մարգարէին ոսկորնե-
19 րուն հետ թող տուին։ Ու Յովսիա՝ Սամարիայի քաղաքներուն միջի բոլոր բարձր տեղերուն տուներն ալ վերցուց, որ Իսրայէլի թագաւորները զանոնք շինելով՝ Տէրը բարկացուցեր էին. ու Բեթէլի միջ բոլոր ըրածին պէս՝ անոնց
20 ը ըրաւ։ Եւ հոն գտնուած բարձր տեղերուն բոլոր քուրմերը սեղաններուն վրայ եմորթեց, ու անոնց վրայ մարդու ոսկորներ այրեց.ետքը Երուսաղէմ դարձաւ։
21 Եւ թագաւորը բոլոր ժողովուրդին պատուիրեց՝ ըսելով. Զերդ Տէր Աստուծոյն զատիկ ըրէք, Ինչպէս որ աս ուխտի գրքին միջը
22 գրուած է։ Քանզի Իսրայէլը դատող դատաւորներուն օրերէն՝ ի վեր՝ և Իսրայէլի թագաւորներուն ու Յուդայի թագաւորներուն բոլոր օրերն ալ՝ աս զատկին պէս եղած
23 չեր. Հայց Յովսիա թագաւորին տասնուութերորդ տարին աս զատիկը Տէրոջը եղաւ Երուսաղէմի միջ։
24 Ու նաև Յովսիա՝ փհուկները, նշանագէտները, ու թերափիմները, ու կուռքերը, և Յուդայի երկրին միջ՝ ու Երուսաղէմի միջ երևցած բոլոր գարշութիւնները վերցուց, որ քհղկիա քահանային՝ Տէրոջը տունը գտած գրքին միջը գրուած օրէնքին խօսքերը հաս-
25 տատէ։ Եւ անկէ առաջ անոր նման թագաւոր մը չեղաւ, որ իր բոլոր սրտովը՝ ու բոլոր հոգիովը՝ ու բոլոր զօրութիւնովը Տէրոջը դառնայ՝ Մովսէսին բոլոր օրէնքին համեմատ. ոչ ալ անկէ ետքը անոր
26 նմանը ելաւ։ Հայց Տէրը՝ Յուդայի վրայ բորբոքած իր մեծ ու սաստիկ բարկութենէն ետ չդարձաւ՝ ան բոլոր չար գործքերուն՝ համար, որոնցմով Մանասէ զանիկայ
27 բարկացուցեր էր։ Եւ Տէրը ըսաւ. Ես Յուդան ալ իմ երեսէս պիտի ձգեմ, ինչպէս որ Իսրայէլը ձգեցի. ու պիտի մերժեմ աս քաղաքը՝ իմ ընտրած Երուսաղէմն, ու աս տունը՝ որուն համար ըսի թէ՝ Իմ անունս հոն ըլլայ։
28 Եւ Յովսիային միւսոյդ պատմութիւնը, ու անոր բոլոր ըրածը՝ ահա Յուդայի թագաւորներուն յիշատակաց գրքին միջը գրուած է։
29 Անոր օրերը Եգիպտոսի թագաւորը Փարաւոն Նեքաւով՝ Ասորեստանի թագաւորին վրայ Եփրատ գետը ելաւ. ու Յովսիա թագաւորը անոր դէմ ելլելու գնաց. ու անիկայ Մեգիդոյի տեսած պէս՝ զանիկայ մեռցուց։
30 Մէջ։ Եւ անոր ծառաները անոր մարմինը Մակեդդովէն կառքով Երուսաղէմ բերին, ու զանիկայ իր գերեզմանին մէջը թաղեցին. ու երկրին ժողովուրդը Յովսիային որդին Յովաքազը առին ու օծեցին, և զանիկայ իր հօրը տեղը թագաւոր դրին։
31 Յովաքազ քսանուիրեք տարեկան էր՝ երբոր թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ իրեք ամիս թագաւորութիւն ըրաւ. և անոր մօրը անունը Ամիտաղ էր, ան Լիբնացի
32 Երեմիային աղջիկն էր։ Եւ անիկայ իր հայրերուն բոլոր ըրածին պէս՝ Տէրոջը առջեւը չարութիւն ը-
33 րաւ։ Ու Փարաւոն Նեքաւով զանիկայ Եմաթի երկիրը Ռիբղայի մէջ բանտարկեց, որ Երուսաղէմի մէջ թագաւորութիւն չընէ. ու երկրին վրայ՝ հարիւր տաղանդ արծաթ, ու տաղանդ մը ոսկի հարկ
34 դրաւ։ Եւ Փարաւոն Նեքաւով Յովսիային որդին Եղիակիմը՝ անոր հօրը Յովսիային տեղը թագաւոր դրաւ, ու անոր անունը փոխեց՝ Յովակիմ ըսէց. Հայց Յովաքազը առաւ եգիպտոս տարաւ.
35 ու անիկայ հոն մեռաւ։ Եւ Յովակիմ ան արծաթը ու ոսկին Փարաւոնին տուաւ. բայց երկրին վրայ հարկ դրաւ, ան արծաթը Փարաւոնին պատուիրածին պէս տալու համար. ան երկրին ժողովուրդէն՝ ամէն մարդուն վրայ դրուած հարկին համեմատ՝ արծաթը ու ոսկին առաւ, որ Փարաւոն Նեքաւովին տայ։
36 Երբոր Յովակիմ թագաւոր եղաւ՝ քսանուհինգ տարեկան էր, ու Երուսաղէմի մէջ տասնումէկ

Ն. Ը. ՂԴ. 624

Ն Գ Թագ. ԺԳ. 2։

Ն Գ Թագ. ԺԳ. 1, 30։

Ն Գ Թագ. ԺԳ. 31։

Ն Եզր. կանչեց։

Ն Գ Թագ. ԺԳ. 2։

Ն Տ՚ես բՄՆ. ԼԴ. 6, 7։

Ն Գ Թագ. ԺԳ. 2։

Ն Եղ. իր. 20։ Գ Թագ. ԺԸ. 40։ Գ Ն. Ժա. 18։

Ն բՄՆ. ԼԴ. 5։

Ն բՄՆ. ԼԸ. 1։

Ն Եղ. Ժր. 3։ Ղե. իգ. 5։ Թուա. Թ. 2։ բՕր. Ժզ. 2։

Ն բՄՆ. ԼԸ. 18, 19։

Ի՚ր 623

Ն Գ Ն. ԼԸ. 6։ Ն Ծ՚Ն. Լ. 19։

Ն Ղե. ԺԹ. 31։ Ի. 27։ բ Օր. Ժը. 11։

Ն Գ Ն. Ժը. 5։

Ն. Ը. ՂԴ. Ի՚ր 623

Ն Գ Ն. Ի. 11, 12։ Իգ. 3, 4։ Երեմ. Ժե. 4։

Ն Եզր. գալարութիւնը Ներուն

Ն Գ Ն. ԺԷ. 18, 20։ Ժը. 11։ Ի. 13։

Ն Գ Թագ. ը. 29։ Թ. 8։ Գ Ն. Ի. 4, 7։

610

Ն բՄՆ. ԼԸ. 20։

Ն Գ Ն. ԺԴ. 8։ Ն Ձաք. Ժը. 11։

Ն բ Մն. ԼԸ. 24։

Ն բՄՆ. ԼԳ. 1։

Ն Տ՚ես աՄՆ. գ. 15։ Եզրեմ. Իր. 11։

Ն Գ Ն. Իգ. 18։

Ն Գ Ն. Ի. 6։ Երեմ. Ծր. 27։

Ն բր Մն. ԼԳ. 3։

Ն Ժր Մն. ԼԳ. 4։

Ն Տ՚ես գ Ն. Իգ. 17։ Դան. ա. 7։

Ն Մ՚ատ. ա. 11։

Ն Երեմ. Իր. 11, 12։ Եզեկ. ԺԹ. 3, 4։

Ն Հմր 33։

Ն Յ՚Ե. 17։ Ն Ն. Ի. 11։ Ն Գ Ն. Ի. 5։

Ն · Ք · ԳԲ · 610

տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Զաբիդա էր , ից Ռումացի Փադայիային աղջիկն
37 էր : Եւ անիկայ իր հայրերուն բոլոր ըրածին պէս՝ Տէրոջը առջևը չարութիւն ըրաւ :

ԳԼ · ԻԴ

1 Ցովակիմ նախ Նաբուգոդոնոսորին կը Տնազանդի . ետքը անոր դէմ ապստամբելով՝ ինքը իր կործանմանը պատճառ կ'ըլլայ : 5 Ցովաքին անոր տեղը կը յաջորդէ : 7 Եգիպտոսի թագաւորը՝ Բաբիլոնի թագաւորէն կը յաղթուի : 8 Ցովաքինին չար վարմունքը : 10 Երուսաղէմ կ'առնուի , ու անոր բնակիչները Բաբիլոն գերի կը տարուին : 17 Սեդեկիա թագաւոր կ'ըլլայ , ու չար կերպով կը թագաւորէ մինչև Ցուդայի վերջին կործանումը :

607 606 603 600 1 — Նոր օրերը՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը ելաւ . ու Ցովակիմ իրեք տարի անոր ծառայ եղաւ . ու էփէը դարձաւ՝ անոր
2 դէմ ապստամբեցաւ : Եւ Տէրը անոր վրայ Քաղդեացւոց դունդերը , ու Ասորւոց դունդերը , և Մովաբացւոց դունդերը , ու Ամմոնի որդւոց դունդերը խրկեց . զանոնք Ցուդայի վրայ խրկեց , որ զանիկայ կործանէ ։ Տէրոջը խօսքին համեմատ՝ որն որ իր ծառաներուն մարգարէներուն ձեռքովը խօսեր էր ։
3 Իրաւցընէ ասիկայ Տէրոջը հրամանովը եղաւ Ցուդային , որ զանիկայ իր առջևէն վերժէ՝ Մանասէին ըրած բոլոր մեղքերուն համար ,
4 Եւ նաև անոր թափած անմեղ արիւնին համար . քանզի Երուսաղէմը անմեղ արիւնով լեցուց . ու Տէրը չուզեց որ ներէ ։
5 Եւ Ցովակիմին մնացորդ պատմութիւնը , ու անոր բոլոր ըրածը՝ ահա Ցուդայի թագաւորներուն յիշատակաց գրքին մէջը գրուած է ։
599 6 Նու Ցովակիմ իր հայրերուն հետ քնացաւ . և անոր տեղը՝ անոր որդին Ցովաքինը թագաւոր եղաւ ։
7 Ու Եգիպտոսի թագաւորը անկէ ետքը մէյմըն ալ իր երկրէն չելաւ . քանզի Բաբիլոնի թագաւորը Եգիպտոսի հեղեղատէն մինչև Եփրատ գետը՝ Եգիպտոսի թագաւորին ամէն ունեցածը առեր էր ։
8 Ցովաքին տասնուութ տարեկան էր՝ երբոր թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ իրեք ամիս թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Նեհուսթա էր , ից Երուսաղէմացի Եղնաթանին աղջիկն
9 էր : Եւ անիկայ իր հօրը բոլոր ըրածին պէս՝ Տէրոջը առջևը չարութիւն ըրաւ ։
10 Ան ատենը Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ծառանները Երուսաղէմ ելան , ու քաղաքը
11 պաշարուեցաւ : Եւ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը քաղաքին վրայ եկաւ , երբոր անոր ծառաները զանիկայ պաշարեր
12 էին : Ու Ցովաքին թագաւորը Ցովաքին՝ իր մօրը ու ծառաներուն և իշխաններուն ու ներքինիներուն հետ՝ Բաբիլոնի թագաւորին ելաւ . Ու Բաբիլոնի թագաւորը՝ ի իր թագաւորութեանը ութերորդ տարին՝ զանիկայ բռնեց ։
13 Եւ անկէ Տէրոջը տանը բոլոր գանձերը , ու թագաւորին տանը գանձերը հանեց . ու կոտրտեց ան ամէն ոսկեղէն անօթները , որոնք Իսրայէլի Սողոմոն թագաւորը Տէրոջը տաճարին համար շիներ էր՝
14 Տէրոջը բանին համեմատ : Եւ Երոլոր Երուսաղէմը , ու ամէն իշխանները , և ամէն զօրաւոր մարդիկները , տասը հազար գերի , ու ամէն հիւսերը ու դարբինները քշեց տարաւ . երկրին ժողովրդոցը աղքատներէն՝ի զատ մարդ մը
15 չմնաց : Եւ Ցովաքինը Բաբիլոն փոխադրեց . ու թագաւորին մայրը , ու թագաւորին կիներուն , և անոր ներքինիները , ու երկրին զօրաւորները Երուսաղէմէն Բաբիլոն
16 գերի տարաւ : Եւ Երոլոր զօրաւոր մարդիկը եօթը հազար մարդ , ու հազար հիւս ու դարբին , որոնց ամէնն ալ պատերազմող կտրիճներ էին , Բաբիլոնի թագաւորը գերի տարաւ :
17 Նոնք Բաբիլոն թագաւորը անոր տեղը՝ Բաբիլոնի թագաւորը անոր տեղը Մաթանիան Անոր հօրեղբայրը Սեդեկիայի փոխեց ։
18 Սեդեկիա քսանուվեց տարեկան էր՝ երբոր թագաւոր եղաւ , ու Երուսաղէմի մէջ տասնուվեց տարի թագաւորութիւն ըրաւ . և անոր մօրը անունը Ամիտաղ էր , ից Լերնացի Երեմիային աղջիկն էր ։
19 Եւ անիկայ Ցովակիմին բոլոր ըրածին պէս՝ Տէրոջը առջևը չարութիւն
20 ըրաւ : Քանզի Տէրոջը բարկութիւնը Երուսաղէմին ու Ցուդային վրայ էր , մինչև որ զանոնք իր երեսէն ձգէ . անոր համար Սեդեկիա՝ Բաբիլոնի թագաւորէն ապստամբեցաւ ։

ԳԼ · ԻԵ

1 Երուսաղէմ կը պաշարուի : 4 Քաղքացիք Սեդեկիան կը բռնեն . անոր տղաքը կը սպանեն , ու անոր աչքերը կը կուրացընեն : 8 Նաբուզարդան՝ քաղաքը կ'աւրէ , ու աղքատ երկրագործներէն՝ի զատ՝ Սկսալ Ճացածները գերի կը տանի . 13 տաճարին անօթները ու գանձերը կը կողոպտէ : 18 Գլխաւորները Ռիբղայի մէջ կը մեռցուին : 22 Գոդողիա՝ որ ան Ճացած ժողովուրդին վրայ կուսակալ դրուեր էր , կը մեռցուի . ու ժողովուրդը ե-

Ն · Ք · ԳԲ · 599

Երեմ . իգ · 1 , իթ · 1 , 2 , Եզեկ · ԺԷ · 12 ։
Երեմ . իե · 1 ։
Տես Երեմ . ծբ · 28 ։
Տես գԼ · իե · 27 ։
Գլ · ի · 17 , Ես · լԹ · 6 ։
Տես Դան . ե · 2 , 3 ։
Երեմ . ի · 5 ։
Երեմ . իգ · 1 ։
Տես Երեմ . ծբ · 28 ։
Ա Թագ . ԺԳ · 19 , 22 ։
Գլ · իե · 12 ։ Երեմ . ի · 7 ։
Ր Մն · լզ · 10 ։ Եսթ · բ · 6 ։ Երեմ . իբ · 24 , ից ։
Տես Երեմ . ծբ · 28 ։
— Երեմ . լէ · 1 ։
Ա Մն · գ · 15 ։ Ր Մն · լզ · 10 ։
Գլ · իգ · 34 ։ Ր Մն · լզ · 4 ։
Ը Ր Մն · լզ · 11 ։ Երեմ . լէ · 1 ։ ծբ · 1 ։
— Գլ · իգ · 31 ։

593

— Ր Մն · լզ · 12 ։

Ը Ր Մն · լզ · 13 ։ Եզեկ · ԺԷ · 15 ։

դիպաոս կը փախչի ։ 27 Եղմաբովդաք կը բարձրացընէ Ցովաքիմը իր պալատին մէջ ։

Ն · Ք · ԳԲ · 590

1 Եւ եղաւ որ՝ տարին թագաւորութեան իննսերորդ տարին տասներորդ ամիսը՝ ամսուն տասներորդ օրը՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրքովը Երուսաղէմի վրայ եկաւ , ու անոր դիմացը բանակեցաւ . և անոր դէմ շուրջանակի պատնէշներ շինեցին .
2 Ու մինչև Սեդեկիա թագաւորին մետասաներորդ տարին՝ քաղաքը
3 պաշարման մէջ էր ։ Եւ Յամսուն իննին՝ քաղաքին մէջը սաստիկ սով կար , ու երկրին ժողովուրդը հաց
4 չունէր . Եւ քաղաքին պարիսպը ճեղքուեցաւ , ու բոլոր պատերազմողները գիշերով՝ թագաւորի պարտէզին քովը եղող երկու պարսպին մէջի դրանը ճամբայէն Քաղդէացիք քաղաքին բոլորտիքը կեցեր էին . ու
5 Սեդեկիայի աչքերը կուրացուցին , և զինքը շղթաներով կապեցին , ու Բաբիլոն տարին ։
6 Եւ Բաբիլոնի թագաւորը՝ Նաբուգոդոնոսոր թագաւորին Երուսաղէմի տասներորդ տարին հինգերորդ ամիսը՝ Յամսուն եօթներորդ օրը՝ Բաբիլոնի թագաւորին ծառան՝ Նաբուզարդան դահճապետը եկաւ , Ու Տէրոջը տունը Եւ թագաւորին տունը այրեց , ու Երուսաղէմին բոլոր տուները , ու ամէն մեծ տունները կրակով այրեց ։ Եւ դահճապետին հետը եղող քաղդէացւոց բոլոր զօրքերը՝ Երուսաղէմին շրջակայ պարիսպները փլցուցին ։ Ու քաղաքին մնացած ժողովուրդին մնացորդը , ու Բաբիլոնի թագաւորին իյնող փախստականները , ու մնացած բազմութիւնը՝ Նաբուզարդան դահճապետը գերի տարաւ ։ Եւ դահճապետը երկրին աղքատներէն թողուց՝ այգեզործներ ու երկրագործներ ըլլալու համար ։
13 Եւ քաղդէացիք Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ սիւները ու մեքենովթները , ու Տէրոջը տանը մէջ եղող պղնձէ ծովը կտոր կտոր ըրին , ու անոնց պղինձը Բաբիլոն

14 տարին ։ Եւ թաղարները , ու թիակները , և բազմակալները , ու խնկամանները , ու պաշտօնի համար գործածուած բոլոր պղնձէ անօթ-
15 ները առին ։ Եւ դահճապետը ոսկիէ ու արծաթէ բուրվառները ու
16 կոնքերը առաւ՝ . Նոյն Սողոմոնին՝ Տէրոջը տանը համար շինած երկու սիւները , մէկ ծովը , ու մեքենովթները . բոլոր այս գործիքներուն
17 պղինձը կշռի չէր գար ։ մէկ սիւնին բարձրութիւնը տասնուութը կանգուն էր , և անոր վրայ պղնձէ խոյակ կար . ու խոյակին բարձրութիւնը իրեք կանգուն էր . և խոյակին վրայ շուրջանակի ցանցակերպ զարդ ու նուռներ կային , ամէնն ալ պղնձէ էին . ու մկալ սիւնն ալ ցանցակերպ զարդով այնպէս էր ։
18 Եւ դահճապետը առաջին քահանան Սարայիան՝ ու երկրորդ քահանան Սոփոնիան՝ ու իրեք
19 դռնապանները առաւ . Եւ քաղաքէն մէկ ներքինի մը առաւ , որ անիկայ պատերազմող մարդիկներուն զօրագլուխն էր . ու Թագաւորին առջևը կայնողներէն՝ քաղաքին մէջը գտնուած հինգ մարդ , ու երկրին ժողովուրդը զինուորութեան գրող՝ զօրքին մեծ գրագիրը , և քաղաքին մէջը գտնուած երկրին
20 ժողովուրդէն վաթսուն մարդ ։ Ու Նաբուզարդան դահճապետը զանոնք առաւ , ու Բաբիլոնի թագաւորին՝ Ռեբղա տա-
21 րաւ ։ Եւ Բաբիլոնի թագաւորը զանոնք զարկաւ , ու Եմաթի երկրին Ռեբղային մէջ զանոնք մեռցուց ։ Այսպէս Յուդան իր երկ-
22 րէն գերի տարուեցաւ ։ Բայց Յուդայի երկրին մէջը մնացած ժողովուրդը՝ որ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը հետ թողուցեր էր , անոնց վրայ Սափանեան Ակիկամին որդին Գոդողիան կուսակալ դրաւ ։
23 Եւ զօրաց բոլոր իշխանները իրենց մարդիկներովը երբոր լսեցին որ Բաբիլոնի թագաւորը Գոդողիան կուսակալ ըրեր է , Գոդողիային՝ Մասփա եկան . այսինքն Նաթանիայի որդին Իսմայէլը , Կարէի որդին Յոհանանը , ու Թանհումեթի որդին Նետոփաթացի Սարայիան , ու Մաքաթիի որդին Յեզոնիան , Թէ իրենք և Թէ իրենց մարդիկները ։
24 Ու Գոդողիա անոնց՝ ու անոնց մարդիկներուն երդում բրաւ , ու անոնց բսաւ . Քաղդէացիներուն ծառայութիւն ընելէն՝ մի վախնաք . — երկրիս մէջ բնակեցէք , և Բաբիլոնի թագաւորին

Ն · Ք · ԳԲ · 588

Եզ · իէ · 3 ։ գ Թագ · է · 45 ։ 50 ։

* Կ՚բուրվառները ու կոնքերը աոաւ , ինչ որ ոսկիէ էր · էբէսոսկի , ու ինչ որ արծաթէ էր՝ էբէս· արծաթ .

՛ գ Թագ · է · 47 ։

՛՛ գ Թագ · է · 15 ։ Երեմ· ծբ · 21 ։

Ն Երեմ· ծբ · 24 , ՀԸ ։

Ը Ա Մն · գ · 14 ։ Եզր · է · 1 ։

Երեմ· իա · 1 ։ իԲ · 25 ։

† Եբր · և բնաւ տեսնողներէն · Եսթ · ա · 14 ։

Տես Երեմ· ծբ · 25 ։

Գղ · իգ · 33 ։ բ Օբ · իբ · 36 · 64 ։ Գլ · իգ · 27 ։

Երեմ· խ · 5 ։

Երեմ· խ · 7 , 8 , 9 ։

‡ Կ՚ծառաներէն

ծառայութիւն ըրէք , ու ձեզի ա-
ղէկ պիտի ըլլայ ։
25 Եւ ՚եղաւ որ եօթներորդ ամիսը՝
թագաւորաց սերունդէն եղող ե-
ղիսամայի որդւոյն Նաթանիայեն
որդին Իսմայէլը տասը մարդով ե-
կաւ . ու Գադողիան զարկին , ու
մեռաւ , նոյնպէս ալ անոր հետ
Մասփա եղող Հրէաները ու քաղ-
26 դէացիները ։ Եւ բոլոր ժողովուր-
դը պզտիկէն մինչև մեծը՝ ու զօրաց
իշխանները ելան Եգիպտոս գա-
ցին . քանզի քաղդէացիներէն
վախցան ։
27 ՚Ու եղաւ որ Յուդայի Յովաքին
թագաւորին գերութեանը երսուն-
ուեօթներորդ տարին երկոտասա-
ներորդ ամիսը՝ ամսուն քսանուեօթ-
ներորդ օրը , Բաբիլոնի Եղմարով-
դաք թագաւորը՝ իր թագաւոր ե-
ղած տարին , Յուդայի Յովաքին
թագաւորին ՚գլուխը բարձրա-
ցուց , ու ՚ելլէյ բանտէն հանէց .
28 եւ անոր հետ քաղցրութեամբ խօ-
սեցաւ , ու անոր աթոռը՝ Բաբի-
լոնի մէջ իր հետը եղող թագա-
29 ւորներուն աթոռէն վեր դրաւ . Եւ
անոր բանտի լաթերը փոխեց . ու
անիկայ իր կենացը բոլոր օրերուն
մէջ՝ ՚միշտ անոր առջևը հաց կ՚ու-
30 տէր ։ Եւ անոր ռոճիկը միտաւև
ռոճիկ ըլլալով , անոր կենացը բո-
լոր օրերուն մէջ՝ թագաւորին կող-
մէն օրէ օր անոր կը տրուէր ։

ն · ք · գբ · 588

= Երեմ. խա. 1, 2 ։

Ա Երեմ. խգ · 4, 7 ։

562

= Երեմ. ծբ · 31, ճ ։

ն · ք · գբ · 588

բ Տճս Ես · Խ · 13, 20 ։

ՅրԹագ. թ. 7 ։

ԸՈՒՆԿԻՆ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Ադամ սերունդը մինչև Նոյ ։ 5 Յաբեթի որդիքը ։ 8 Քամի որդիքը ։ 17 Սեմի որդիքը ։ 24 Սեմի սերունդը մինչև Աբրահամ ։ 29 Իսմայէլի որդիքը ։ 32 Քետուրայի որդիքը ։ 34 Աբրահամի սերունդը՝ Իսահակ ։ 43 Եդովմի թագաւորները ։ 51 Եդովմի իշխանները ։

ն · ք · գբ · 4004, ճ

= Ես . գ · 25, 26 ։ և . 3, 6 ։

1 Ադամ , =Սէթ , Ենովս , (2) Կայ-
նան , Մաղաղիէլ , Յարեդ ,
3 Ենովք , Մաթուսաղայ , Ղամէք ,
4 Նոյ · Սէմ , Քամ ու Յաբեթ ։
5 Բ Յաբեթին որդիքը՝ Գոմեր , Մա-
գոգ , Մադայ , Յաւան , Թոբէլ ,
6 Մոսոք ու Թիրաս էին ։ Եւ Գո-
մերին որդիքը՝ Ասքանաս , *Րիփաթ
7 ու Թորգոմա էին ։ Եւ Յաւանին
որդիքը՝ Եղիսայ , Թարսիս , Կի-
տացիք ու †Դոդացիք էին ։
8 Ք Քամին որդիքը՝ Քուշ , Մեսո-
բոմ , Փուտ ու Քանան էին ։
9 Եւ Քուշին որդիքը՝ Սաբա , Եւի-
լա , Սաբաթա , Ռեգմա ու Սեբէ-
թաքա էին ։ Եւ Ռեգմայի որ-
10 դիքը՝ Սաբա ու Դեդան էին ։ Եւ
Քուշ Ծնաւ Ներրովդը . ասիկայ
սկսաւ երկրի վրայ զօրաւոր ըլլալ ։
11 Եւ Մեսրեմ Ծնաւ Ղուդացիներ-
րը , Ենամացիները , Ղաբացիներ-
12 րը , Նեփթուքացիները , Պաթու-
րեսացիները , ու Քասղուքացիներ-
րը , (ուսկից որ Փղշտացիք ելան ,)
13 ու Կափթորացիներն ալ ։ Եւ
Ղանան Ծնաւ իր անդրանիկը Սի-
14 դոնը , նաև Գետը , Յերուսացին ,
15 Ամորհացին , Գերգեսացին , Խեւա-
16 ցին , Արուկեցին , Սինացին , Ա-
րուադացին , Սամարացին ու Ամա-
թացին ։
17 Ե Սեմին որդիքը՝ Եղամ , Ասուր ,
Արփաքսադ , Ղուդ , Արամ , Հուս ,
Հուլ , Գաթեր ու ԸՄոսոք էին ։
18 Եւ Արփաքսադ Ծնաւ Սաղան , և
19 Սաղա Ծնաւ Եբերը . Ու Եբերին
երկու որդի Ծնան . մէկուն անունը
‡Փաղէկ էր , քանզի երկիրը անոր
օրերը բաժնուեցաւ . և անոր եղ-
20 բօրը անունը Յեկտան էր ։ Ու
Թ Յեկտան Ծնաւ Եղմոդադը , Սա-
21 ղաբը , Ասարմաթը , Յարաբը , Ու-
22 զալը , Դեկղան , Գե-
23 բաղը , Աբիմայէլը , Սաբան , Ոփիրը ,
Եւիլան ու Յոբաբը . ամէն ասոնք
Յեկտանին որդիքն էին ։
24 Ժ Սեմ , Արփաքսադ , Սաղայ ,
25 Ի Եբեր , Փաղէկ , Ռագաւ , (26) Սե-
27 րուգ , Նաքովր , Թարայ , ԼԱբ-
րամ , այսինքն Աբրահամ ։
28 Աբրահամին որդիքը՝ Ի Իսահակ
29 ու Ժ Իսմայէլ էին ։ Անոնց Ծնունդ-
ները ասոնք են . Իսմայէլին անդ-
րանիկը՝ Նաբէոթ , ետքը Կեդար ,
30 Ադբեէլ , Մաբսամ , Մասմա ,
Դումա , Մասէ , ՀՓոդադ , Թե-
31 մա , Յետուր , Նափիս ու Կեդմա .
Իսմայէլի որդիքը ասոնք էին ։
32 Եւ Աբրահամին հարճին՝ Ն Քե-
տուրային որդիքը . անիկայ Ծնաւ
Զեմրանը , Յեկտանը , Մադանը ,
Մադիանը , Յեսբոկը ու Սուվէն ։
Ու Յեկտանին որդիքը՝ Սաբա ու
33 Դեդան էին ։ Եւ Մադիանին որ-
դիքը՝ Գեփա , Ափէր , Ենովք ,

ն · ք · գբ · 4004, ճ

Ի Ծն . ժ . 22 ։ ժա . 10 ։

Ը Ծն . ժ . 23 ։ Ա Ը՚ը-ի Մաշ ։

‡ Յի՝ բաժա-
նում . Ծն . ժ . 25 ։

Ր Ծն . ժ . 26 ։

* Կ՚ Դի-
փաթ .

† Կ՚ Ռո-
դացիք

Ֆ Ծն . ժ . 6, ճ ։

Ժ Ծն . ժա . 10 , ճ ։ Ղու . գ · 36 · ճ ։

Ի Ծն . ժա . 15 ։

Լ Ծն . ժէ . 5 ։

Խ Ծն . իա . 2, 3 ։

Ծ Ծն . ժզ . 11, 15 ։

Կ Ծն . իե . 13—16 ։

Հ Ծն . իե . 15 ։

Իրբ 1853

Յ Ծն . իե . 1, 2 ։

Արիդա ու Ելզագա էին . ասոնք ամէնը քեռուրային որդիքն էին ։
34 Եւ Աբրահամ ծնաւ Իսահակը ։ Իսահակին որդիքը՝ Եսաւ ու Իս-
35 րայէլ էին ։ Եսաւին որդիքը՝ Ե-
ղիփազ , Ռագուէլ , Ցեուս , Ելդղոմ
36 ու Կորխ էին ։ Եղիփազին որդիքը՝ Թեման , Օմար , Սեփո , Գոթամ ,
կենէզ , Թամնա ու Ամաղէկ էին ։
37 Ռագուէլին որդիքը՝ Նահաթ , Զա-
38 րա , Սամմա ու Մէզա էին ։ Ու
Սէիրին որդիքը՝ Ղոտան , Սոբաղ ,
Սեբեգօն , Աննա , Դիսօն , Եսեր ու
39 Դիսան էին ։ Եւ Ղոտանին որդի-
քը՝ Քոռի ու Հեմամ էին . և Թամնա՝ Ղոտանին քոյրն էր ։
40 Սոբաղին որդիքը՝ Գաղուան , Մա-
նաքաթի , Գեբաղ , Սեփո ու Օնամ
էին ։ Ու Սեբեգօնին որդիքը՝ Ա-
41 յիա ու Աննա էին ։ Աննային որդին
Դիսօն . ու Դիսօնին որդիքը՝
Ամրան , Եսբան , Ցեթրան ու Քա-
42 ռան էին ։ Եսերին որդիքը՝ Բաղ-
ղան , Զաաւան ու Յական էին ։
Դիսանին որդիքը՝ Հուս ու Առան
էին ։
43 Եւ ասոնք են ան թագաւորնե-
րը՝ որ Եդովմի երկրին մէջ թա-
գաւորեցին , Իսրայէլի որդւոցը
վրայ թագաւոր մը թագաւորելէն առաջ . Բէովրի որդին Բաղան .
ու անոր քաղաքին անունը Դին-
44 նաբա էր ։ Եւ Բաղան մեռաւ , ու
անոր տեղը Բոսրացի Զարային որ-
45 դին Յոբաբը թագաւորեց ։ Եւ
Յոբաբը մեռաւ , ու անոր տեղը
Թեմանացւոց երկրէն Հուսամը
46 թագաւորեց ։ Եւ Հուսամը մե-
ռաւ , ու անոր տեղը Բադադին
որդին Ադադը թագաւորեց , որ
Մովաբի դաշտին մէջ Մադիանա-
ցիները կոտորեց . և անոր քաղա-
47 քին անունը Աւիթ էր ։ Եւ Ա-
դադը մեռաւ , ու անոր տեղը Մաս-
րեկացի Սամղան թագաւորեց ։
48 Եւ Սամղան մեռաւ , ու անոր
տեղը Գետին քովը Ռոռովթին և-
49 ղող Սաուղը թագաւորեց ։ Եւ Սա-
ուղը մեռաւ , ու անոր տեղը Աքո-
բորին որդին Բաաղանանը թագա-
50 ւորեց ։ Եւ Բաաղանանը մեռաւ , ու
անոր տեղը Ադադը թագաւորեց .
և անոր քաղաքին անունը Փոգով
էր . ու անոր կնկանը անունը Մե-
տաբեէլ էր , որ Մէզաաբին աղջի-
կանը Մատրեթին աղջիկն էր ։
51 Եւ Ադադին մեռնելէն ետքը՝
Եդովմի իշխանները եղան . Թամ-
նա իշխան , Գաղուա իշխան , Ցե-
52 թամ իշխան , Ողիբամա իշխան ,
53 Էլա իշխան , Փինօն իշխան , Կե-
նէզ իշխան , Թեման իշխան , Մաբ-
54 զար իշխան , Մագեդիէլ իշխան ,
Իրամ իշխան . Եդովմին իշխանները
ասոնք էին ։

ԳԼ . Բ

1 Իսրայէլի որդիքը ։ 3 Ցուդայի սերունդը՝ Թամարէն ։ 13 Ցեսսէի որդիքը ։ 18 Եսրոնեան քաղերին սերունդը ։ 21 Եսրոնի սերունդը՝ Մաքիրի աղջիկն ։ 25 Ցերամիէլի սերունդը ։ 34 Սեսանի սերունդը ։ 42 Քաղերի սերունդին մէկ ուրիշ ճիւղը ։ 50 Ովբեան քաղերին որդիքը ։

1 Իսրայէլի որդիքը ասոնք են .
Ռուբէն , Շմաւոն , Ղեւի , Ցու-
2 դա , Իսաքար , Զաբուղոն , Դան ,
Ցովսէփ , Բենիամին , Նեփթաղիմ ,
Գադ ու Ասեր ։
3 Ցուդայի որդիքը՝ Էր , Օնան ու
Սելօմ էին . Էրը՝ իրեքը՝ Քանանա-
ցի Շաւային աղջիկէն ծնան անոր .
ու Ցուդային անդրանիկը Էր՝ Ե-
րոջը առջեւը չար բլլալուն հա-
մար , Տէրը զանիկայ մեռցուց ։
4 Եւ անոր հարսը Թամար՝ Փարէսը
ու Զարան ծնաւ անոր ։ Ցուդային
բոլոր որդիքը հինգ էին ։
5 Փարեսին որդիքը՝ Եսրոն ու
6 Համուլ էին ։ Եւ Զարային որ-
դիքը՝ Զամբրի , Եթան , Եման ,
Քալքօլ ու Դարա ։ Ամէնը հինգ
7 էին ։ Եւ Քարմիին որդին՝ Աքար
էր , որ Նզովածով մեղք գործեց ,
ու Իսրայէլը նեղութեան մէջ ձգ-
8 եց ։ Ու Եթանին որդին՝ Ազա-
9 րիա էր ։ Ու Եսրոնին որդիքը՝ ո-
րոնք անոր ծնան , Ցերամէլ , Ռա-
մ ու Քելուբա էին ։
10 Եւ Ռամ ծնաւ Ամինադաբը ,
ու Ամինադաբ ծնաւ Ցուդայի որ-
11 դւոց իշխանը Նաասոնը , Եւ Նաա-
սոն ծնաւ Սալմոնը , ու Սալմոն
12 ծնաւ Բոոսը , Եւ Բոոս ծնաւ Ովբէդը , ու Ովբէդ ծնաւ Եսսէն ,
13 Եւ Եսսէ ծնաւ իր անդրանիկը՝
Եղիաբը , ու երկրորդը՝ Աբինադա-
14 բը , ու երրորդը՝ Սամաան , Չոր-
րորդը՝ Նաթանայէլը , Հինգերորդը՝
15 Հռադդային , Վեցերորդը՝ Ասոմը ,
16 Եօթներորդը՝ Դաւիթը ։ Եւ
անոնց քոյրերը՝ Ճարուհեա ու Ա-
բիդեա էին ։ Ու Ճարուհեային
որդիքը իրեք էին . Աբեսսա , Ցո-
17 վաբ ու Ասայէլ ։ Եւ Աբիգեա
ծնաւ Ամեսային . ու Ամեսային
հայրը՝ Իսմայէլացի Ցեթերն էր ։
18 Ու Եսրոնի որդին Քաղերը՝ էր
կնիկէն Ազուբայէն Ցերիոթը ծը-
նաւ . և ասոր որդիքը ասոնք են .
19 Ցասեր , Սովբաբ ու Արդօն ։ Ու
երբոր Ազուբա մեռաւ , Քաղեբ
իրեն Եփրաթը , որ ա-
20 նոր ծնաւ Ովբը ։ Եւ Ովբ ծնաւ
Ուրին , ու Ուրի ծնաւ Բեսելէլը ։
21 Եւ ետքը Եսրոն՝ Գաղաա-
դու հօրը Մաքիրին աղջիկը մը-

Ն . Ք . ՂԲ . Իրբ 1853

Ը Ն . Ի . 2 , 3 ։
Թ Ն . Իե . 25 , 26 ։
Ժ Ն . ԼԲ . 9 , 10 ։

Ի Ն . ԼԲ . 20 ։

Ն Ն . ԼԲ . 25 ։
Ա Ն . ԼԲ . 26 Յ՝Ը---ի Ամադան ։
Բ Ն . ԼԲ . 27 Յ՝Ը---ի Ական ։

Իրբ 1676
Գ Ն . ԼԲ . 31 , ՃԼ ։

Ն . Ք . ՂԲ . Իրբ 1496

1752 , Ճ
Դ Ն . ԽԹ . 32 ։ Լ . 5 ։ Լե . 18 , 22 ։ Խ . 8 , ՃԼ ։

Ե Ն . ԼԳ . 3 ։ Խ . 12 ։ Թու . Իշ . 19 ։
Զ Ն . ԼԳ . 2 ։
Է Ն . ԼԳ . 7 ։

Ը Ն . ԼԳ . 29 , 30 ։ Մատ . ա . 3 ։

Թ Ն . Խ . 12 ։ Հռութ . դ . 18 ։
Ժ Ցես . Է . 1 Յ՝Ը---ի Զաբդի ։
Ի Գ Թագ . դ . 31 ։
Ձ Կ--՛ Դարդա ։
ԺԱ Ցես . ՂԼ . դ . 1 ։
ԺԲ Ցես . ՂԼ . 18 ։ Է . 1 ։
ԺԳ Մատ . ա . 3 , 4 ։

Իրբ 1471
ԺԴ Եբր . Բատ

Իրբ 1090
ԺԵ Կ--՛ Քաղեր . անս Հմր 18 , 42 ։
ԺԶ Հռութ . դ . 19 , 20 ։ Մատ . ա . 4 ։
ԺԷ Թագ . ա . 7 ։ Բ . 3 ։
ԺԸ Հռութ . դ . 21 ։ Մատ . ա . 4 ։
ԺԹ Ա Թագ . ԺԶ . 6 ։ Հրթագ . Բ . 18 ։
Ի Ցես . Բ Թագ . ԺԷ . 25 ։

Իրբ 1471
Ի Հմր 50 ։

ԺԱ Եզ . Լ . 2 ։
ԺԲ Թու . Իե . 1 ։

ն · ք · գէ · Իսր 1471

տաւ , ու զանիկայ առաւ . և ինքը վաթսուն տարեկան էր . ու անի-
22 կայ Սեղուբը ծնաւ անոր : Եւ Սեղուբ ծնաւ Ցայիրը . ու ասիկայ Գաղաադու երկրին մէջ քսանու-
23 իրեք քաղաք ունէր : ♪ Ու *Գեսուրը , ու Արամը" , Ցայիրի գիւղաքաղաքները , կանաթը ու անոր գեղերը՝ վաթսուն քաղաք առաւ անոնցմէ . ասոնց ամէնը՝ Գաղաադու
24 Հօրը Մաքիրին որդւոցն էր : Ու †Եսրոն՝ քաղէբ Եփրաթայի մէջ մեռնելէն ետքը , Եսրոնին կնիկը Աբիան" անոր ծնաւ Թեկուէին
25 Հայրը Ասքուրը : Ու Եսրոնին անդրանկանը Եբամէլին որդիքը ասոնք էին . անդրանիկը՝ Հռամ , Բունա , Օրէն ,
26 Ասոմ -- Աբիա : Եւ Եբրամէլը մէկ ուրիշ կնիկ մը ունէր , ու անոր անունը Ատարա էր . անիկայ Օնա-
27 մի մայրը եղաւ : Ու Եբրամէլին անդրանկանը Հռամին որդիքը ասոնք էին . Մաաս , Ցամին ու Ա-
28 կոր : Եւ Օնամի որդիքը՝ Սամայի ու Ցադայ էին : Եւ Սամայիին որդիքը՝ Նադար ու Աբիսուր էին :
29 Եւ Աբիսուրին կնկանը անունը Աբիհայիլ էր , որ անոր ծնաւ Աբ-
30 բանը ու Մովղեդը : Եւ Նադաբին որդիքը՝ Սաղադ ու Ափփեմ էին . ու Սաղադ անորդի մեռաւ :
31 Եւ Ափփեմին որդին՝ Ցեսսի , ու Ցեսսիին որդին՝ Սեսան , ու Ես-
32 սանին որդին Աղայի էր : Եւ Սամայիին եղբօրը՝ Ցադայիին որդիքը , Ցեթեր ու Ցովնաթան էին . ու
33 Ցեթեր անորդի մեռաւ : Եւ Ցովնաթանի որդիքը՝ Փաղէթ ու Զազա էին : Եբրամէլին որդիքը ասոնք էին :
34 Եւ Սեսան տղաքներ չունեցաւ , բայց միայն աղջիկներ : Ու Սեսան՝ Ցարբա անունով Եգիպտացի ծա-
35 ռայ մը ունէր . Ու Սեսան իր աղջիկը՝ իր Ցարբա ծառային կնիկ տուաւ . որ անոր՝ Եթթին ծնաւ :
36 Ու Եթթի ծնաւ Նաթանը , և
37 Նաթան ծնաւ *Զաբադը , Ու Զաբաթ ծնաւ Ոփղալը , և Ոփղալ
38 ծնաւ Ովբէդը , Ու Ովբէդ ծնաւ Ցէուն , և Ցէու ծնաւ Ազարիան ,
39 Ու Ազարիա ծնաւ Քեղղեսը , և
40 Քեղղես ծնաւ Եղեասան , Ու Եղեասա ծնաւ Սասոմն , և Սասոմ
41 ծնաւ Սեղղումը , Ու Սեղղում ծնաւ Ցեկամիան , և Ցեկամիա ծնաւ Եղիսաման :
Իսր 1471, ք
42 Ու Եբրամէլին եղբօրը Քաղէբին որդիքը . անոր անդրանիկը Մեսա՝ Զիփի Հայրն էր , ու Քեբրոնի Հայ-
43 րը՝ Մարեսայի որդին էր : Եւ Քեբրոնի որդիքը՝ Կորհ , ու Թափուա ,
44 և Րոկոմ ու Սեմա էին : Ու Սեմա ծնաւ Հռաամը՝ Ցարկաամի Հայրը ,
45 ու Րոկոմ ծնաւ Սամայիին : Եւ Սամայիին որդին Մաոն էր . ու Մաոնը՝ Բեթսուրին Հայրն էր :
46 Եւ Քաղէբին հարճը Գեփան ծնաւ Առանը , Մոսան ու Գաղէզը . և
47 Առան ծնաւ Գաղէզը : Ու Ցադայիին որդիքը՝ Հռադեմ , Ցովաթամ , Գեսան , Փաղէտ , Գեփա
48 ու Սագաֆ էին : Եւ Քաղէփին հարճը Մաաքան ծնաւ Սեբերը ու
49 Թաբանան . Նաև ծնաւ Մադմանայի Հայրը Սագաֆը , ու Մաքաբենայի Հայրը ու Գաբաայի Հայրը Շաւան . և Քաղէբին աղջիկը՝ Աքսա էր :
50 Եփրաթի անդրանկանը Ովբի որդւոյն Քաղէբին որդիքը ասոնք էին . Կարիաթարիմի Հայրը Սո-
51 բաղ , Բեթլէհեմի Հայրը՝ Սաղմոն ,
52 Բեթգադերի Հայրը՝ Հարեփ : Եւ Կարիաթարիմի Հօրը Սորաղին որդիքը՝ Հարօէ , -- Մանագաթա-
53 ցւոց կէսն էին : Եւ Կարիաթարիմի տոհմերը՝ Ցեթերացիք , Փութացիք , Սամաթացիք ու Մասարացիք էին . Սարաացիք ու Եսթա-
54 ւուղացիք ասոնցմէ ելան : Սաղմոնին որդիքը՝ Բեթլէհեմ , Նետոփաթացիք , Ատարովթ , Ցովաբին տունը , ու Մանաքաթացւոց
55 կէսը , ու Սարացիք էին : Եւ Գաբեսի մէջ բնակող դպիրներուն տոհմերը Թարգաթացիք , Սամաթացիք , Սովկաթացիք . ասոնք՝ Ռեքաբի տանը Հօրմէն՝ Եմաթէն ելլող Կենեցիք էին :

Գ Լ · Գ

1 Դաւիթին որդիքը : 10 Անոր սերունդը մին-
չև Սեդեկիա : 17 Ցեքոնիային յաջորդները :

1 Եւ Գաւիթին Քեբրոնի մէջ ծնած որդիքը ասոնք էին . անդրանիկը Ամնոն՝ Ցեզրայէլացի Աբիհոամէն , երկրորդը Դանիէլ՝ Կարմելացի Աբիգայէլէն ,
2 երրորդը Աբիսողոմ՝ Գեսուրի թագաւորին Թողմիին աղջկանը Մաաքային որդին , չորրորդը Ադոնիա՝ Ագգիթին
3 որդին , Հինգերորդը Սափատիա՝ Աբիտալէն , վեցերորդը Ցեթրամ՝
4 իր կնիկէն՝ Եգղայէն : Այս վեցը անոր ծնան Քեբրոնի մէջ . և Հոն եօթը տարի ու վեց ամիս թագաւորութիւն ըրաւ . ու Երուսաղեմի մէջ երեսուներիք տարի թագաւորութիւն ըրաւ :
5 Ու Երուսաղեմի մէջ ասոնք ծնան անոր . Սամուա , Սովբաբ , Նաթան ու Սողոմոն . -- չորսը՝ Բաթսուայէլի աղջիկէն՝ Բեբսաբէէն ,
6 Եբհ . Եւ Ցեբաար , ու Եղիսամա ,

ն · ք · գէ · Իսր 1471, ք

ւ Ցես . ժե . 17 ։
Դ Հմր 19 ։

ւ Դատ . ա . 16 ։
– Երեմ . լե . 2 ։

Իսր 1053, ք
– բ Թագ . գ . 2 ։
բ Ցես . ժե . 56 ։
† բ Թագ . գ . 3 Յ՚ը---ն Քիլոբ ։
ա բ Թագ . գ . 5 ։
ե բ Թագ . բ . 11 ։
Ը բ Թագ . ե . 5 ։
ի բ Թագ . ե . 14 ։ Գլ · ժգ · 4 ։
ը բ Թագ . ժբ · 24 ։
Ք բ Թագ . ժա · 3 Յ՚ը---ն Էլիամ ։
‡ կ–՛ Եղիսամա . բ Թագ . ե . 15 ։

7 ու Եղիփազէտ, Եւ Նոբա, ու Նա-
8 փեկ, և Գափիէ, Ու Եղիսամա,
ու ՛Եղիադա ու Եղիփազէտ. Ի-
9 սրա՛ինն էին. Ամէնն ալ Դաւիթին
որդիներն էին, հարճերուն որդի-
ներէն, ու անոնց քրոջմէն՝ Թա-
մարէն ՝ի զատ։
10 Եւ Սաղոմոնին որդին Ռոբովամ
էր. անոր որդին Աբիա, անոր որ-
դին Ասա, անոր որդին Յովսա-
11 փատ, Անոր որդին Յովրամ, անոր
որդին ՛Ոքոզիա, անոր որդին Յո-
12 վաս, Անոր որդին Ամասիա, անոր
որդին ՛Ազարիա, անոր որդին Յո-
13 վաթամ, Անոր որդին Ահազ, ա-
նոր որդին Եզեկիա, անոր որդին
14 Մանասէ, Անոր որդին Ամոն, ա-
15 նոր որդին Յովսիա։ Եւ Յովսիա-
յին որդիքը, անդրանիկը Յօհա-
նան, երկրորդը Յովակիմ, եր-
րորդը Սեդեկիա, չորրորդը Սող-
16 ղում էր։ Ու Յովակիմին որդիքը,
անոր որդին Յեքոնիա, անոր որդին
17 Սեդեկիա էր։ Ու Յեքոնիային որ-
դիքը՝ Ասիր. անոր որդին Սաղա-
18 թիէլ. Նաև Մելքիրամ, Փա-
դայիա, Սանէսար, Յեկամիա,
19 Ովսամա ու Նադաբիա էին։ Եւ
Փադայիային որդիքը Զօրաբաբէլ
ու Սեմէի էին. ու Զօրաբաբելին
որդիքը՝ Մեսուղամ ու Ընանիա.
ու անոնց քոյրը Սաղոմիթ էր.
20 Նաև Ասուբա, ու Ոհղ, և Բա-
բաքիա, ու Ասադիա և Յովսաբե-
21 սեդ. Հինգ էին։ Եւ Ընանիային
որդիքը՝ Փաղատիա ու Եսայի էին.
*Հռափայիային որդիքը, Ռոնայի
որդիքը, Արդիային որդիքը, Սե-
22 քենիային որդիքը՝։ Ու Սեքենիա-
յին որդին՝ Սեմայիա էր. ու Սե-
մայիային որդիքը՝ Հքետտուս, և
Իգաղ, ու Բերիա, և Նաարիա
23 ու Սափատ. վեց էին։ Եւ Նաա-
րիայի որդիքը՝ Եղհովէնայի, ու
Եզեկիա ու Եզրիկամ. Իրեք էին։
24 Ու Եղհովէնայիին որդիքը՝ Ովդու-
իա, ու Եղիասիբ, և Փաղայիա,
ու Ակկուբ, և Յօհանան, ու Դա-
ղայիա և Ընանի. եօթն էին։

Գ Լ · Դ

1 Յուդայի սերունդը։ 5 Եսրոնին մեռնելէն
ետքը՝ իրեն ծնած Ասքուրէն յառաջ եկած սե-
րունդը։ 9 Գաբեսին ու անոր աղօթք ընե-
լուն վրայով։ 21 Սելոմի սերունդը։ 24
Շմաւոնի սերունդը, ու քաղաքները. 39 ա-
նոնք Գեդովրին՝ ու Սէիր լեռը բնակող Ամա-
ղեկացիներուն վրայ կը տիրեն։

1 Յուդայի որդիքը՝ Փարէս, Ես-
րոն, ու Քարմի, և Ովր ու Սորագ
2 էին։ Եւ Սորագին որդին Բ՚ռէա-
յիան՝ Յեթը ծնաւ. ու Յեթ՝ Ա-
քիմային ու Ղաադը ծնաւ. Սա-
3 բաստոց տոհմերըասոնք են։ Ու

Ետամի †Հօրմէն ասոնք եղան. Յեզ-
րայէլ, ու Յեսմա ու Յեդբաս. և
անոնց քրոջը անունը Եսելեփօն
4 էր։ Ու Գէդովրի հայրը Փանուէլ,
և Ովսայի հայրը Եզեր էր. ասոնք
Բեթլէհեմի հօրը՝ Եփրաթի անդ-
րանկանը ‡Ովրին որդիքն էին։
5 Ու Թեկուէի հայրը Ասքուր եր-
կու կնիկ ունէր, Եղասա ու Նաա-
6 րա. Եւ Նաարա անոր ծնաւ Ոքո-
զամը, Ոփերը, Թեմանը ու Ա-
հասթարին. Նաարային որդիքը
7 ասոնք էին։ Ու Եղասայի որդիքը՝
Սարեթ, Սահառ ու Եթնան էին։
8 Եւ Կովս ծնաւ Ենովրը, Սօբե-
բան, ու Հառումի որդւոյն Ահար-
հելին տոհմերը։
9 Եւ Գաբես՝ իր եղբայրներէն
Ժփառաւոր էր. ու անոր մայրը ա-
նոր անունը ‡Գաբես դրաւ, ըսե-
լով. Զանիկայ տրտմութեամբ
10 ծնայ։ Եւ Գաբես՝ Իսրայէլի Ա-
տուծոյն աղաղակեց, ու ըսաւ. Ե-
րանի թէ ամէն կողմանէ զիս օրհ-
նես, ու իմ սահմանս մեծցընես, և
քու ձեռքդ ինծի հետ ըլլայ, ու
զիս չարէն ազատես, որ ինծի
տրտմութիւն չըլլայ։ Եւ Ա-
տուած անոր խնդիրքը կատարեց։
11 Ու Սուհայի եղբայրը Քեղուբ՝
Մահիրը ծնաւ, որ անիկայ Եսթօնի
12 հայրն էր։ Եւ Եսթօն ծնաւ Բեթ-
ռափան, ու Փասէն, և Իրնահասին
հայրը Թանան. ասոնք Հռեքայի
13 մարդիկներն էին։ Ու Կենազի որ-
դիքը՝ Ղոթոնիէլ ու Սարայիա
էին. և Գոթոնիէլին որդին Ա-
14 թաթ էր։ Ու Մաոնաթայի ծնաւ
Եփրան. և Սարայիա ծնաւ Յո-
վաբը՝ ‖Խեզքարասիմի հայրը.
(քանզի անոնք արհեստաւորներ
15 էին։) Ու Յեփոնեան Քաղերին
որդիքը՝ Իրու, Էլա ու Նաամ էին.
16 ու Էլային որդին՝ Կենազ էր։ Եւ
Յալելելի որդիքը՝ Զիփ, Զիփա,
17 Թիրիա ու Ասարէլ. Ու Եզրային
որդիքը՝ Յեթեր, Մօրադ, Ափեր
ու Յաղօն էին. ու ===որ Բ՚ինէը ծը-
նաւ Մարիամը, և Սամայիին, ու
18 Եսթեմովէ հայրը Յեսբան. Եւ
անոր կնիկը Յուդիան ծնաւ Գե-
դովրի հայրը Յարեդը, Սոքովի
հայրը Քաբերը, ու Զանովհի հայ-
րը Յեքթիէլը. և Մօրադին առած
Փարաւոնի աղջկանը՝ Բեթիային
19 որդիքը ասոնք էին։ Ու ===որ կընի-
կանը Նահամին քրոջը՝ Ովդիային
որդիքը՝ Կեիլային հայրը Գարմին,
ու Մաաթացի Եսթեմոին էր։
20 Եւ Սիմոնի որդիքը՝ Ամնոն, Հռի-
նա, Բենհանան ու Թիղոն էին. ու
Յեսսիին որդիքը՝ Զոհեթ ու Բեն-
զոհեթ էին։

Ն · ք · գԲ · Խբ 1053, ՃՃ

՛Գլ · ԺԳ · 7 ի՚ըռւթ Բաղդադա։
Ի Ցես բ Թագ · ե. 14 · 15 · 16 · Ա բ Թագ · Ժգ · 1։
Ի գ Թագ · Ժա. 43։ Ժե. 6։
՛՛բ Մն. ի. 17 ի՚ըռւթ Ցովաքազ · Ի-ի Խր · 6 ի՚ըռւթ Ազարիա։
Ի գ Թագ. Ժե. 30 ի՚ըռւթ Ոզիա։

Ն · ք · գԲ · 1300, ՃՃ

† Կ՚՝ որդիքը

‡ Գլ · բ · 50։
Գլ · բ · 24։

Ի Ծն · լԶ · 19։
‡Ի՚՝ տրտմութիւն։

ՂՑես · Ժե · 17։

‖Ի՚՝ արհեստաւորաց ձորին
Ի Նէեմ. Ժա. 35։

*Կ՚՝ անոր որդին Հռափայիա, անոր որդին Ռոնայ, անոր որդին Արդիա, անոր որդին Սեքենիա։
Հ Եզր · բ · 2։

1300, ՃՃ

— Ծն · լԲ · 29 · իզ · 12։
Բ Գլ · բ · 52 ի՚ըռւթ Հաբօթ։

21 Եւ ԷԳուդայի որդւոյն Սելոմին որդիքը՝ Ղէբայի հայրը էր, ու Մարեսայի հայրը Ղասադա, և Ասբէայի տանը՝ բէզեզադործներուն
22 տանը տոհմերն էին. Նաև Ցովաղիմի, և Քուզեբայի մարդիկները, ու Ցովասը և Սարափը՝ որոնք Մովաբի մէջ տէրութիւնը ունեցան, ու Յասուբի լեհէմ, *ու Ադդէբա-
23 բիմ աթթիկիմ՝՝: Ասոնք բրուտներ, և պարտէզներու ու փարախներու մէջ բնակողներ էին. Թագաւորին քովը անոր գործքին համար հոն կը բնակէին:
24 Շմաւոնի որդիքը՝ Նամուէլ, Յամին, Յարիբ, Զարա, ու Սաա-
25 ուղ. Անոր որդին Սեղղում, անոր որդին Մասմա, անոր որդին
26 Մասմա. Ու Մասմայի որդիքը, անոր որդին Ամուէլ, անոր որդին
27 Զաքուր, անոր որդին Սեմէի. Եւ Սեմէի տասնուվեց տղայ ու վեց աղջիկ ունէր. բայց անոր եղբայրները շատ տղաքներ չունէին. ու անոնց բոլոր տոհմերը Ցուդայի որ-
28 դւոցը չափ չշատցան. Եւ անոնք †Բեերսաբէէի, ու Մօղադայի, ու
29 Ասեր սուաղի, Եւ Բաղայի, ու Ա-
30 սեմի, և Թուղադի, Ու Բաթուէլի,
31 ու Հորմայի, և Սիկեղակի, Ու Բեթմարքաբաովթի, և †Ասեր սուսիմի, ու Բեթբարէէի և Սագարիմի մէջ բնակեցան. մինչև Դաւիթին թագաւոր եղած ատենը ասոնք էին
32 անոնց քաղաքները, Ու անոնց գեղերը՝ Նոր Եթամ, Ային, Ռեմմոն, Թորան ու Ասան. հինգ քա-
33 ղաք՝ Եւ ասոնց քաղաքներուն բոլորտիքը եղած բոլոր գեղերը մինչև Բահաղը. անոնց բնակութիւնները
34 ու †վճռակները ասոնք էին՝ Ու Մոսոբաբ, և Ցամլէք, ու Ամա-
35 սիայի որդին Ցոսա, Եւ Ցովէլ, ու Ասիելի որդւոյն Սարայիայի որդւոյն
36 Ցոսաբիայի որդին Ցէուն, Ու Եղովէնայի, ու Ցակոբայ, և Ցասուբիա, ու Ասայիա, և Ադիել, ու
37 Ցեսիմիէլ, ու Բանեա, Եւ Սեմայիայի որդւոյն Սամարիի որդւոյն Ցեդայիայի որդւոյն Աղոնի որդւոյն
38 Սեփեդիի որդին Զիզան՝ Ասոնունները՝ իրենց տոհմերուն մէջ իշխաններ էին. ու անոնց աղգատոհմերը խիստ շատ-
39 ցան՝ Եւ իրենց անասուններուն համար արօտ փնտռելով՝ Գեդովրի մուտքը գացին մինչև ձորին արևե-
40 լեան կողմը. Եւ առատ ու աղէկ արօտ գտան. ու ան երկիրը ընդարձակ էր, և խաղաղութեան ու հանդարտութեան մէջ էր. քանզի առաջ՝ Քամէն եղողները հոն կը
41 բնակէին՝ Եւ ասոնունները՝ գրուածները՝ Ցուդայի Եզեկիա թագաւորին օրերը գացին, ու անոնց վրանները և հոն գտնուած բոլոր նակարանները Էզարկին, ու զանոնք բնաջինջ ըրին մինչև ասօրա, և անոնց տեղը բնակեցան. վասն զի հոն իրենց հօտերուն համար արօտ
42 էր՝ Ու անոնցմէ՝ Սիմէոնի Շմաւոնի որդիներէն հինգ հարիւր մարդ Սեիր լեռը գացին, իրենց վրայ Ցեսսիի որդիքը՝ Փաղատիան, Նեարիան, Հռափայիան ու Ոզիէլը
43 իշխան ՚՚Ն՚՚ւով. Եւ †Ամաղեկին փախստական մնացորդները զարկին, ու մինչև ասօրա հոն բնակեցան:

ԳԼ. Ե

1 Իր անդրանկութենէն զրկուած Ռուբենին անդրանգը մինչև գերութիւնը. 9 անոնց բնակութիւնը, ու Հագարացւոց վրայ ըրած յաղթութիւնը՝ 11 Գադի որդւոցը գլխաւոր մարդիկը՝ ու բնակութիւնները՝ 18 Ռուբենեանց, Գադեանց, ու Մանասէի կէս ցեղին թիւը ու յաղթութիւնները՝ 23 Կէս ցեղին բնակութիւնները ու գլխաւոր մարդիկները՝ 25 Անոնց գերութիւնը իրենց մեղքին համար:

1 Եւ Իսրայէլին անդրանկանը Ռուբենին որդիքը՝ (քանզի ՚՚անդրանիկը անիկայ էր. բայց †իր հօրը անկողինը պղծելուն համար, †իր անդրանկութեան իրաւունքը Իսրայէլի որդւոյն՝ Ցովսեփին որդւոցը տրուեցաւ. ու ազգահամարին մէջ
2 անդրանիկի պէս չգրուեցաւ՝ Իսկ †Ցուդա իր եղբայրներէն զօրաւոր եղաւ. ու անկէ †իշխաններ Էլան. բայց անդրանկութեան իրաւունքը
3 Ցովսեփինն էր՝) Իսրայէլին անդրանկանը Ռուբենին որդիքը՝ Ենովք, Փաղղուս, Եսրոն ու Քարմի էին՝ Ցովսելին որդիքը, անոր
4 որդին Սեմայիա, անոր որդին Գոգ,
5 անոր որդին Սեմէի, Անոր որդին Միքա, անոր որդին Ռէայիա, ա-
6 նոր որդին Բաալ, Անոր որդին Բէերա, որն որ †Ասորեստանի թագաւորի փաղասար թագաւորը գերի տարաւ. անիկայ Ռուբե-
7 նեանց իշխանն էր՝ Եւ անոր եղբայրները՝ իրենց տոհմերովը ՚՚երբոր ազգահամարին մէջ գրուեցան, ՚՚Ն՚՚ց գլխաւորը՝ Ցէիէլն էր, եղբը
8 Զաքարիան, Եւ Ցովելի որդւոյն Սեմայի որդւոյն Ազազին որդին՝ Բաղան. ասիկայ †Արոերի մէջ, ու ՚՚նէ մինչև Նաբաւ, ու Բէէլմոն
9 բնակեցաւ. Եւ արևելեան կողմը՝ Եփրատ գետէն մինչև անապատը բնակեցաւ. քանզի անոնց անասուները †Գաղաադու երկրին մէջ
10 շատցեր էին՝ Ու Սաուղին օրերը՝ անոնք պատերազմ բրին †Հագարացւոց հետ, որոնք իրենց ձեռքը ինկան. ու Գաղաադու բոլոր ա-

ն. ք. գ.Ե. 1300, ԸԸ
ԸՆ. լը. 1, 5; Ել. 12:
* կ՚ըսէ՝ բայց ՚՚Ն՚՚ հին բաներ են:
Ն. ք. գ.Ե. իրր 715
Ի Գ Թագ. ԺԸ. 8:
Բ Ցես. ա Թագ. Ժե. 8; է. 17; բ Թագ. Ը. 12:
Բ Ցես. խզ. 10, և Եզ. զ. 15, և Թու. իզ. 12 Լ՚ԸՆ՚Ի Ցամուէլ՝
†Ցես. ԺԹ. 2:
†Ցես. ԺԹ. 5 Լ՚ԸՆ՚Ի Ասեր սուսա:
Լ Ցես. ԺԹ. 8 Լ՚ԸՆ՚Ի Բաալգէթ բէեր:
† կ՚ըսէ՝ ազգարանութիւնները
իրր 715
1300, ԸԸ
ՆՆ. խթ. 32; խԹ. 3:
Բ Ընդ. լե. 22; խԹ. 4:
‡ Ընդ. խը. 15, 22:
Բ Ընդ. խթ. 8, 10; Սաղ. կ. 7; ՃԸ. 8; Ի Մխ. ե. 2; Մաա. բ. 6:
Ղ Ընդ. իզ. 9; Ել. գ. 14; Թու. իզ. 5:
Ի Գ Թագ. ԺԵ. 29; ԺԶ. 7:
Ը Ցես հԾ 17:
Բ Ցես. ԺԳ. 15, 16:
†Ցես. իր. 9:
Ի Ընդ. իե. 12:

Ն · Ք · ԳՒ · 1300 , ՃՀ

Ղ ՑԽ · Ժգ · 11 , 24 ։

բևէլեան կողմերը՝ անոնց վրաննե-
րուն մէջը բնակեցան ։
11 Եւ Գադի որդիքը ասոնց դիմա-
ցը՝ Բասանու երկրին մէջ բնակե-
12 ցան մինչև Սելքա · Գլխաւորը՝
Յովէլ , ու երկրորդը՝ Սափամ ,
ետքը Յանայի , ու Սափատ՝ Բա-
13 սանի մէջ ։ Եւ անոնց եղբայրները
իրենց ազգատոհմներուն համեմատ ,
Միքայէլ , Մեսուղամ , Սաբէէ ,
Յովրէ , Յաքան , Զիա , ու Եբեր ,
14 եօթն էին ։ Ասոնք Բուզի որդւոյն
Յաքդովի որդւոյն Գեսիսայի որ-
դւոյն Միքայէլի որդւոյն Գաղաա-
դի որդւոյն Յարոայի որդւոյն Հու-
րիի որդւոյն Աբիխըլէլն որդիքն Ե-
15 ին ։ Անոնց ազգատոհմներուն իշ-
խանը՝ Գունիի որդւոյն Աբդիէլէն
16 որդին Աքին էր ։ Եւ անոնք Գա-
ղաադու մէջ , Բասանի ու անոր
[1] ԳԼ · ԽԵ · 29 · գիւղաքաղաքներուն մէջ , ու Իսա-
բոնի բոլոր արուարձաններուն մէջ՝
մինչև անոնց սահմանները բնակե-
[2] դ Թագ · Ժե · 5 , 32 · 17 ցան ։ Ամէն ասոնք Ցուդայի [3] Յո-
[4] դ Թագ · Ժգ · 16 , 28 · վաթամ Թագաւորին օրերը , ու
Իսրայէլի [4] Երոբոամ Թագաւո-
րին օրերը՝ ազգահամարին մէջ
գրուեցան ։
18 Ռուբենի որդիքը , ու Գա-
դեանք , ու Մանասէի կէս ցեղը՝
քառասունուչորս հազար եօթը հա-
րիւր վաթսուն զօրաւոր , վահան
ու սուր կրող , և աղեղ քաշող ,
պատերազմ սորված , ու պատե-
19 րազմի ելլող մարդիկներ էին ։ Եւ
[5] Ծն · Իե · 15 ։ Գւ · ա · 81 ։ անոնք Հագարացւոց , [5] Ցետուրա-
ցւոց , Նափեսացւոց , ու Նոդա-
Իսր 1300, ՃՀ 20 բացւոց հետ պատերազմ բրին , Եւ
[6] Ց Ես · Հմր 22 ։ անոնց յաղթեցին . ու Հագարա-
ցիք և բոլոր անոնց հետ եղողները
անոնց ձեռքը տրուեցան . քանզի
անոնք պատերազմի մէջ Աստուծոյ
Ել Սպ · Իր · 4 , 5 · աղաղակեցին , ու անոնց լսեց .
21 վասն զի Աստոր ապաւինեցան ։ Եւ
անոնց անասունները՝ հինսուն հա-
զար ուղտ , ու երկու հարիւր հինսուն
հազար ոչխար , ու երկու հազար
էշ , և հարիւր հազար մարդ գերի
22 բրին . (Քանզի շատերը մեռած ին-
կան . ինչու որ [6] պատերազմը
[6] դ Թագ · Ժե · 29 · Ժէ · 6 · Աստուծմէ էր .) ու մինչև [7] գերու-
թիւնը՝ անոնց տեղը բնակեցան ։
23 Եւ Մանասէի որդւոյոյը կէս ցեղը
ան երկրին մէջ բնակեցան , Բա-
սանէն մինչև Բաալհերմոնը , Սա-
նիրը , ու Հերմոն լեռը . [8] Նոքա բազ-
24 մաթիւ էին ։ Եւ անոնց ազգա-
տոհմներուն իշխանները ասոնք Ե-
ին · Ափեր , Ցեսսի , Եղիէլ , Եզրի-
էլ , Երեմիա , Ովդուիա ու Ցաքդի-
էլ , [9] զօրաւոր՝ քաջ ու ա-
նունի մարդիկներ էին , ու իրենց
ազգատոհմներուն իշխաններն էին ։
25 Եւ իրենց հայրերուն Աստուծոյն
դէմ ապստամբեցան , ու ան երկ-
րին ազգացը [7] Աստուածներուն ե-
տևէն էրթալով պոռնկեցան , որ Ա-
ստուած զանոնք անոնց առջևէն
26 բնաջինջ բրած էր ։ Եւ Իսրայէլին
Աստուածը՝ Ասորեստանի [10] Փուղ
Թագաւորի հոգին՝ ու Ասորեստա-
նի [11] Թագղաթ փաղասար Թագա-
ւորին հոգին գրգռեց , ու Ռուբե-
նեանները , Գադեանները , ու Մա-
նասէին կէս ցեղը գերի բրաւ , և
զանոնք [12] Քաղան , ու Քաբովրը ,
ու Հարան , ու Գովզան գետը տա-
րաւ մինչև աս օրս ։

Իսր 1300, ՃՀ

[7] դ Թագ · Ժէ · 7 ։

Իսր 771

[8] դ Թագ · Ժե · 19 ։

Իսր 740

[9] դ Թագ · Ժե · 29 ։

[10] դ Թագ · Ժէ · 6 ։ Ժբ · 11 ։

ԳԼ · Զ

1 Ղևիի որդիքը ։ 4 Քահանայից ազգահամարը մինչև գերութիւնը ։ 16 Գերսոնին , Մերարիին , ու Կահաթին տոհմերը ։ 49 Ահարոնին պաշտօնը , ու անոր սերունդը մինչև Աբիմաաս ։ 54 Քահանայից ու Ղեւտացւոց քաղաքները ։

1 Ղևիի որդիքը՝ [1] Գերսոն , Կահաթ
2 [2] ու Մերարի էին ։ Եւ Կահա-
թին որդիքը՝ Ամրամ , Իսահառ ,
3 Քեբրոն ու Ոզիէլ էին ։ Եւ Ամ-
բամին որդիքը՝ Ահարոն , Մովսէս
ու Մարիամ էին ։ Ու Ահարոնին
որդիքը՝ [3] Նադաբ , Աբիուդ , Ե-
4 ղիազար ու Իթամար էին ։ Եղիա-
զար Ծնաւ Փենէհէսը , [4] Փենէհէս
5 Ծնաւ Աբիսուան , Եւ Աբիսուա
Ծնաւ Բոկկին , ու Բոկկի Ծնաւ
6 Ոզին , Եւ Ոզի Ծնաւ Զարհիան , ու
7 Զարհիա Ծնաւ Մարիոթը , ու Մա-
րիոթ Ծնաւ Ամարիան , և Ամարիա
8 Ծնաւ Աքիտովը , Ու [5] Աքիտով
Ծնաւ Սադովկը , ու [6] Սադովկ Ծնաւ
9 Աքիմաասը , Եւ Աքիմաաս Ծնաւ
Ազարիան , ու Ազարիա Ծնաւ Յո-
10 հանանը , Եւ Յոհանան Ծնաւ Ա-
զարիան . (Ասիկայ էր որ Սողոմո-
նին Երուսաղէմը շինած Տաճա-
րին մէջ Քահանայութիւն բրաւ .)
11 Ու [7] Ազարիա Ծնաւ Ամարիան , և
12 Ամարիա Ծնաւ Աքիտովը , Ու Ա-
քիտով Ծնաւ Սադովկը , ու Սա-
13 դովկ Ծնաւ Սեղղումը , Եւ Սեղ-
ղում Ծնաւ Քեղկիան , ու Քեղկիա
14 Ծնաւ Ազարիան , Եւ Ազարիա
Ծնաւ Սարայիան , ու Սարայիա
15 Ծնաւ Յովսադակը ։ Եւ Յովսադակ
գնաց , [8] երբոր Տէրը Յուդան ու
Երուսաղէմը Նաբուգոդոնոսո-
րին ձեռքովը փոխադրեց ։
16 Ղևիի որդիքը՝ [9] Գերսոն , կա-
17 հաթ ու Մերարի էին ։ Ու Գեր-
սոնին որդւոյոյը անուններն ասոնք
18 էին · Ղոբենի ու Սեմէի ։ Եւ կա-
հաթին որդիքը՝ Ամրամ , Իսա-
19 հառ , Քեբրոն ու Ոզիէլ էին ։ Մե-
րարիին որդիքը՝ Մոողի ու Մուսի

Ն · Ք · ԳՒ · Իսր 1300, ՃՀ

Ա Թագ · Ժէ · 7 ։

Իսր 771

Ա Թագ · Ժե · 19 ։

Իսր 740

Ն Թագ · Ժե · 29 ։

Ն Թագ · Ժէ · 6 ։ Ժբ · 11 ։

[1] Ծն · Խգ · 11 ։ Եւ · գ · 16 ։ Թուա · Իգ · 57 ։ Գւ · Իգ · 6 ։ Հմր 16 ։

[2] Ել · Ե · 1 ։

[3] Ղև · Ժ · 1 ։

[4] Ր Թագ · Բ · 17 ։

[5] Ա Թագ · Ժ · 27 ։

[6] Ա Թագ · գ · 8 ։ Մն · գ ։

[7] Ցեսր Մն · Իգ · 17 , 18 ։

[8] Ցես Եզր · է · 3 ։

[9] Ընկեմ. Ժա · 11 ։

Ա Թագ · Իե · 18 ։

[10] Ել · գ · 16 ։ Հմր 1 ։

Ն·Ք·ԳԲ· Իսր1300, ԷՀ

ԵՒ ասոնք էին՝ զհատացուց տոհմերը իրենց հայրերուն համեմատ ։
20 Գերսոնին՝ Ռեհէլը · անոր որդին Ղոբենի , անոր որդին Ցեհէ , անոր
ՏՀԺ· 42 · 21 որդին Յոամմա , Անոր որդին Ցովաք , անոր որդին Ադդով , անոր որդին Զարա , անոր որդին Ցաթրի էր ։
22 Կահաթին որդիքը · անոր որդին Ամինադաբ , անոր որդին Կորխ ,
23 անոր որդին Ասիր , Անոր որդին Եղկանա , անոր որդին Աբիասափ ,
24 անոր որդին Ասիր , Անոր որդին Թահաթ , անոր որդին Ուրիէլ , անոր որդին Ոզիա , ու անոր որդին
25 Սաւուղ էր ։ Ու Եղկանային որ-
ԼՏԱՎ ՀԺՐ 35 · 36 · 26 դիքը՝ Նամեսայի , Ախիմոթ , Ո-Եղկանա էին · Եղկանային որդիքը · անոր որդին Սուփի , ու անոր
27 որդին Նահաթ , Անոր որդին Եղիաբ , անոր որդին Ցերոամ , անոր
28 որդին Եղկանա էր ։ Ու Սամուէլին որդիքը , անոր անդրանիկը՝ Ցօ-վէլ , ու երկրորդը՝ Աբիա էր ։
ՏՀԺ 38 · ա Թագ · ը · 2 · 29 Մերարիին որդիքը՝ Մոողի · անոր որդին Ղոբենի , անոր որդին
30 Սհմի , անոր որդին Ոզա , Անոր որդին Սամաա , անոր որդին Անդիա , անոր որդին Ասայիա էր ։
Իսր1280, ԷՀ ՏԳԼ · ԺԳ · 1 · 31 Ու ասոնք էին որ Դաւիթ երգեցողութեան պաշտօնին վրայ դրաւ Ցերոջը տանը մէջ՝ տապանակին
32 հանգստանալէն ետքը · Ու անոնց պաշտօնը՝ ժողովքի խորանին առջևը օրհնութիւն երգել էր , մինչև որ Սողոմոն Երուսաղէմի մէջ Ցերոջը տունը չհնեց · ու իրենց կարգին համեմատ՝ իրենց պաշտօնին վրայ
33 կը կենային ։ Ու իրենց որդիներովը կեցողները ասոնք էին · Կահաթեանց որդիներէն Երգեցող Եմանը՝ Ցովելին որդին , Ը՛ Սա-
34 մուելին որդին , Ը՛ Եղկանային որդին , Ը՛ Ցերոամին որդին , Ը՛ Եղկելին որդին , Ը՛ Թո-
35 վային որդին , Ը՛ Սուփիին որդին , Ը՛ Եղկանային որդին , Ը՛ Մահաթին որդին , Ը՛
36 Ամեսայիին որդին , Ը՛ Եղկանային որդին , Ը՛ Ցովելին որդին , Ը՛ Ազարիային որդին , Ը՛
37 Ը՛ Սոփոնիային որդին , Ը՛ Թահաթին որդին , Ը՛ Ասիրին
ՏԵՒ· Ա· 24 · որդին , Ը՛ Աբիասափին որ-
38 դին , Ը՛ Կորխին որդին , Ը՛ Իսահարին որդին , Ը՛ կահաթին որդին , Ը՛ Ղևիին որդին ,
39 Ը՛ Իսրայելին որդին էր · Եւ անոր աջ կողմը կայնողը՝ իր եղբայրը Ասափն էր · Ը՛ Ասափ՝ Բարաքիային որդին , Ը՛ Սա-
40 մայիին որդին , Ը՛ Միքայէլին որդին , Ը՛ Բահասիա-
յին որդին , Ը՛ Մեղքիային
41 որդին , Որ Ը՛ Ադդայիին որդին , Ը՛ Զարայիին որդին , Ը՛
42 Ադդայիային որդին , Որ Ը՛ Եթանին որդին , Ը՛ Զամմայիին որ-
43 դին , Ը՛ Սեմէիին որդին , Որ Ը՛ Ցեհէին որդին , Ը՛ Գերսոնին
44 որդին , Ը՛ Ղևիին որդին էր · Ու անոնց եղբայրները՝ Մերարիին որդիքը ձախ կողմը կային · Եթան՝ Կիսեային որդին , Ը՛
45 Աբդիին որդին , Ը՛ Մալուքին որդին , Որ Ը՛ Ասաբիային որդին , Ը՛ Ամասիային որդին , Ը՛
46 Քեղկիային որդին , Որ Ը՛ Ամասիին որդին , Ը՛ Բանիին որ-
47 դին , Ը՛ Սամերին որդին , Որ Ը՛ Մոողիին որդին , Ը՛ Մուսիին որդին , Ը՛ Մերարիին որ-
48 դին , Ը՛ Ղևիին որդին էր ։ Ու անոնց եղբայրները՝ Ղևտացիք Աստուծոյ տանը խորանին ամէն ծառայութեանը նուիրուած էին ։
49 Բայց Ահարոն ու անոր որդիքը՝ ողջակէզի սեղանին վրայ ողջակէզ ու խունկի սեղանին վրայ խունկ կը մատուցանէին , սրբութեանց սրբութիւնին ամէն գործը կատարելով , ու Իսրայէլին համար քաւութիւն ընելով , ան ամենուն համեմատ՝ որ Աստուծոյ ծառան
50 Մովսէս պատուիրեր էր ։ Եւ Ահարոնին որդիքը ասոնք էին · Անոր որդին Եղիազար , անոր որդին Փի-
51 նեհէս , անոր որդին Աբիսուա , Անոր որդին Բոկկի , անոր որդին Ո-
52 զի , անոր որդին Զարիա , Անոր որդին Մարիոթ , անոր որդին Ամա-
53 րիա , անոր որդին Ախիտով , Անոր որդին Սադովկ , անոր որդին Ախիմաաս ։
54 Եւ կահաթի տոհմին՝ Ահարոնի որդւոցը բնակութիւնները ասոնք էին , իրենց գեղերովը ու իրենց սահմաններովը · քանզի անվիճա-
55 կը անոնց եղաւ ։ Եւ Յուդայի երկրին մէջ Քեբրոնը՝ ու անոր շրջակայ արուարձանները անոնց
56 տուին · Բայց ան քաղաքին արտերը ու անոր գեղերը՝ Յեփոնեան
57 Քաղեբին տուին ։ Եւ Յուդայի քաղաքներէն՝ Ահարոնի որդւոցը Քեբրոնը տուին (որ ապաստանի քաղաք էր) , ու Լբնան՝ իր արուարձաններովը , և Ցաթիրը ու Եսթեմովը՝ իր արուարձաններովը ,
58 Եւ Քիլէնը՝ իր արուարձաններովը , Դաբիրը՝ իր արուարձան-
59 ներովը , Եւ Ասանը՝ իր արուարձաններովը , ու Բեթսամիսը՝ իր ա-
60 րուարձաններովը · Եւ Բենիամինի ցեղէն Գարան՝ իր արուարձաններովը , ու Գաղեմէթը՝ իր արուար-

Ն·Ք·ԳԲ· Իսր1280, ԷՀ

ԼՑԱՎ· ԻԱ ։

ՏՀԺ· ԺԳ· 13· ԺԵ· 13 ։

ՀՕ ԻԱ· 13 ։

ՆՀՄ· Ը· 15 Ի՛ԶՈՒԹ ՔՕՂՈՄ ։

ԼՑԱՎ· ԻԱ· 16 Ի՛ԶՈՒԹ ԱՀԻՆ ։

ՀՕ· ԻԱ· 18 Ի՛ԶՈՒԹ ԳԱՂԵՄԻ ։

ձաններովը , և Ենաթովթը՝ իր արուարձաններովը . անոնց տոհմերուն ամէն քաղաքները՝ տասուիրեք քաղաք էին ։

61 Ու աս Կեղէն տոհմերէն մնացած կահաթի որդւոցը՝ Մանասէին կէս ցեղէն՝ Հ վիճակով տասը քաղաք տրուեցաւ ։

62 Ու Գերսոնի որդւոցը՝ իրենց տոհմերուն համեմատ՝ Իսաքարի ցեղէն , Ասերի ցեղէն , ու Նեփթաղիմի ցեղէն , ու Բասանի մէջ Բաղամի ցեղէն՝ տասուիրեք քաղաք տրուեցաւ ։

63 Մերարիի որդւոցը՝ իրենց տոհմերուն համեմատ՝ Ռուբենի ցեղէն , ու Գադի ցեղէն , և Զաբուղոնի ցեղէն՝ վիճակով Կտասուերկու քաղաք տրուեցաւ ։

64 Ու Իսրայէլի որդիքը աս քաղաքները իրենց արուարձաններովը

65 Ղևտացիներուն տուին ։ Եւ Ցուդայի որդւոցը ցեղէն , ու Շմաւունի որդւոցը ցեղէն , ու Բենիամինի որդւոցը ցեղէն՝ վիճակով՝ աս անուններով կիշուած քաղաքները

66 տուին ։ Եւ Կահաթի որդւոցը տոհմերուն կալուածքի քաղաքները Եփրեմի ցեղէն էր ։

67 Ու անոնց՝ Եփրեմի լեռանը վրայ Սիքեմը տուին , (որ ապաստանի քաղաքներէն էր ,) ու անոր արուարձանները , և Գազերը՝ իր արուարձաններովը ,

68 Ու Եկեմամը՝ իր արուարձաններովը , և Բեթորոնը՝ իր արուարձաններովը ,

69 Ու Այղոնը՝ իր արուարձաններովը , և Գեթրեմոնը՝ իր արուարձաններովը ,

70 Ու Մանասէի կէս ցեղէն՝ Ները՝ իր արուարձաններովը , և Բերղաամը՝ իր արուարձաններովը՝ կահաթի որդւոցը մնացած տոհմին տուին ։

71 Գերսոնի որդւոցը՝ Մանասէի կէս ցեղին տոհմէն՝ Բասանի մէջ Գովզանը՝ իր արուարձաններովը , ու Աստարովթը՝ իր արուարձաններովը ,

72 Ու Իսաքարի ցեղէն՝ Կադէսը՝ իր արուարձաններովը , Դաբարաթը՝ իր արուարձաններովը ,

73 Ու Ռամովթը՝ իր արուարձաններովը , և Ենեմը՝ իր արուարձաններովը .

74 Ու Ասերի ցեղէն՝ Մասաղը՝ իր արուարձաններովը , և Աբդօնը՝ իր արուարձաններովը ,

75 Ու Քուկոկը՝ իր արուարձաններովը , և Բոորը՝ իր արուարձաններովը .

76 Ու Նեփթաղիմի ցեղէն Գալիլեայի մէջ՝ Կադեսը՝ իր արուարձաններովը , և Համմոնը՝ իր արուարձաններովը , ու Կարիաթեմը՝ իր արուարձաններովը տուին ։

77 Եւ մնացածներուն՝ Մերարիի որդւոցը Զաբուղոնի ցեղէն Ռեմոնը՝ իր արուարձաններովը , Թաբօրը՝ իր արուարձաններովը .

78 Ու Երիքովի Յորդանանու անդիի կողմը՝ Յորդանանու արևելեան կողմը՝ Ռուբենի ցեղէն՝ անապատի մէջ Բոսորը՝ իր արուարձաններովը , ու Յասսան՝ իր արուարձաններովը ,

79 Եւ Կադեմոթը՝ իր արուարձաններովը , ու Մեփաաթը՝ իր արուարձաններովը .

80 Ու Գադի ցեղէն՝ Գաղաադի մէջ Ռամովթը՝ իր արուարձաններովը , ու Մանայիմը՝

81 իր արուարձաններովը , Ու Եսբոնը՝ իր արուարձաններովը , և Յազերը՝ իր արուարձաններովը տուին ։

ԳԼ · Ի

1 Իսաքարի , 6 Բենիամինի , 13 Նեփթաղիմի , 14 Մանասէի , 20 , 24 ու Եփրեմի որդիքը ։ 21 Եփրեմին կրած նեղութիւնը Գերի մարգոյժ ։ 23 Բարիա կը ծնանի անոր ։ 28 Եփրեմացոց բնակութիւնները ։ 30 Ասերի որդիքը ։

3 նամ ։ Եւ Ցովաբ ըսաւ . Տէրը՝ իր ժողովուրդը որչափ որ է , հարիւրապատիկ աւելցնէ . ով տէր իմ թագաւոր՝ միթէ անոնց ամէնը իմ տիրոջս ծառաները չե՞ն . իմ տէրս ինչո՞ւ աս բանը կը փնտռէ . ինչո՞ւ համար Իսրայէլին 4 յանցանքի պատճառ կըլլայ ։ Բայց երբոր թագաւորին խօսքը Ցովաբին վրայ աստկացաւ , Ցովաբ ելաւ , ու բոլոր Իսրայէլի մէջ պտըտեցաւ , ու Երուսաղէմ եկաւ ։ 5 Եւ Ցովաբ ժողովուրդին համրանքին ցուցակը Դաւիթին տուաւ . ու Իսրայէլին ամէնը՝ հազար անգամ հազար ու հարիւր հազար սուր քաշող մարդ էր . և Ցուդան չորս հարիւր եօթանասուն հազար
‡ Գր. Ել. 24. 6 սուր քաշող մարդ էր ։ ‡Ղակային ղեւտացիները ու Բենիամինեանները անոնց մէջ չհամրեց . քանզի թագաւորին խօսքը Ցովաբին զզուելի էր ։ 7 Եւ աս բանը Աստուծոյ առջեւը դէշ երեւնալուն համար՝ Իսրայէլը 8 պարկաւ ։ Ու Դաւիթ Աստուծոյ
Բ Թագ · իդ · 10 ։ Ի Թագ · ժբ · 13 ։ ըսաւ . Ես բանը ընելովս մեծ մեղք գործեցի . ու հիմա կ'աղաչեմ՝ քու ծառայիդ մեղքը ներէ , քանզի մեծ յիմարութիւն ըրի ։
Ղ Տես ա Թագ · թ · 9 ։ 9 Եւ Տէրը Դաւիթին Ղտեսանողին՝ Գադին խօսեցաւ ու ըսաւ . 10 Գնա ու Դաւիթին խօսէ՝ ըսելով . Տէրը այսպէս կ'ըսէ . Ես քեզի երեք բան կ'առաջարկեմ . անոնցմէ մէկը 11 ընտրէ որ քեզի ընեմ ։ Եւ Գադ՝ Դաւիթին եկաւ ու անոր ըսաւ . Տէրը այսպէս կ'ըսէ . Ընտրէ քեզի՝
Ի Բ Թագ · իդ · 13 ։ 12 Եկամ իրեք տարուան սով , կամ իրեք ամիս քու թշնամիներուդ երեսէն փախչիս , ու քու թշնամիներուդ սուրը հեղ հասնի , և կամ իրեք օր Տէրոջը սուրը՝ այսինքն ժանտախտ ըլլայ երկրիս մէջը , ու Տէրոջը հրեշտակը Իսրայէլին բոլոր սահմաններուն մէջը կոտորած ընէ . և հիմա տես , դիս խրկողին ի՞նչ պատասխան տանիմ ։ 13 Ու Դաւիթ ըսաւ Գադին . Խիստ մեծ նեղութեան մէջ եմ . հիմա Տէրոջը ձեռքը իյնամ , քանզի անոր գթութիւնը խիստ շատ է . ու
Ը Բ Թագ · իդ · 16 ։ 14 մարդու ձեռք չիյնամ ։ Եւ Տէրը Իսրայէլին վրայ ժանտախտ խրկեց , ու Իսրայէլէն եօթանասուն հազար
Ի Տես Ներ · գ · 6 ։ 15 մարդ ինկաւ ։ Եւ Աստուած հրեշտակ մը խրկեց Երուսաղէմ , որ զանիկայ կորսընցընէ . ու երբոր կը կորսընցընէր , Տէրը նայեցաւ , ու աս չարիքին վրայ սիրտը խղաւ , և կոտորած ընող հրեշտակին ըսաւ . Հերիք է , ալ ձեռքդ քաշէ . ու Տէրոջը հրեշտակը Ռաւնային կալին քովը կը Ցերուսացի
Ն · Ք · ԴԲ · 1017 Ի Բ Մն · գ · 1 ։ 16 վը կայներ էր ։ Եւ Դաւիթ իր աչքերը վերցուց , ու Տէրոջը հրեշտակը տեսաւ , որ երկրին ու երկինքին մէջտեղը կայներ էր , ու ձեռքը մերկ սուր մը կար , որ Երուսաղէմի վրայ երկընցուցեր էր . անատենը Դաւիթ ու ծերերը քուրձեր հագած՝ երեսնուն վրայ
17 ինկան ։ Եւ Դաւիթ Աստուծոյ ըսաւ . Ահա ես պատուիրեցի որ ժողովուրդը համրեն , ու ես եմ որ մեղանչեցի , ու մեծ չարութիւն ըրի . բայց աս ոչխարները ի՞նչ ըրին . ով Տէր Աստուած իմ՝ քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ . բայց քու ժողովուրդիդ վրայ չըլլայ *զանիկայ բնաջնջելու համար" ։
* Եբր · հարուածի համար ։ Ի Բ Մն · գ · 1 ։ 18 Եւ Տէրոջը հրեշտակը Գադին ըսաւ . Դաւիթին ըսես որ ելլէ , ու Ցերուսացի Ռաւնային կալին մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ ։
19 Եւ Դաւիթ վեր ելաւ՝ Գադին Տէրոջը անունովը ըսած խօսքին հա-
20 մաձայն ։ Ու Ռաւնա դարձաւ , ու հրեշտակը տեսաւ , և իր չորս որդիքը իր հետը պահուեցան . (քան-
21 զի Ռաւնա ցորեն կը ձեծէր ։) Ու Դաւիթ Ռաւնային եկաւ . և Ռաւնա նայեցաւ , ու Դաւիթը տեսնելով՝ կալէն ելաւ , ու երեսը մինչև գետինը Դաւիթին երկրպագութիւն
22 ըրաւ ։ Անատենը Դաւիթ Ռաւնային ըսաւ . Ա՛ կալին տեղը ինձի տուր , որ հոն Տէրոջը սեղան մը շինեմ , (զանիկայ լեցուն գնով տուր ինձի ,) ու ժողովուրդին
23 վրայէն հարուածը վերնայ ։ Եւ Ռաւնա՝ Դաւիթին ըսաւ . Զանիկայ քեզի առ . ու իմ տէրս թագաւորը իր աչքին աղէկ երեւցածը թող ընէ . ահա եղները ողջակէզի համար , ու կամեսայները փայտի համար , ու ցորենը հացի ընծայի համար կու տամ , ամէնն ալ կու
24 տամ ։ Եւ Դաւիթ թագաւորը Ռաւնային ըսաւ . Չէ , հապա ես անշուշտ լեցուն գնով ծախու պիտի առնեմ . քանզի քու կդ եղածը Տէրոջը համար պիտի չառնեմ , ոչ ալ ձրի ողջակէզ մատու-
Ի Բ Թագ · իդ · 24 ։ 25 ցանեմ ։ Ու Դաւիթ ան տեղուն համար՝ կշիռով վեց հարիւր սիկղ
26 ոսկի տուաւ Ռաւնային ։ Եւ Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց , ու ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց , և Տէրոջը աղաղակեց . ու Երկինքէն կրակով՝ ողջակէզի սեղանին վրայ ա-
Ի Ղե · թ · 24 , Բ Մն · գ · 1 · ե · 1 ։ 27 նոր պատասխան տուաւ ։ Եւ Տէրը հրեշտակին խօսեցաւ , ու անիկայ սուրը իր պատեանը դարձուց ։

Ն·Ք·Գ·Ե· 1017

28 Ան առենը Դաւիթ տեսնելով որ Տէրը Ցերուսաղի Ովնայեան կալին մէջ իրեն պատասխան տուաւ, ան
29 տեղը զոհեր մատուց։ Իսկ Մովսէսին՝ անապատին մէջ շինած Տ֊ՏԷրոջը խորանը ու ողջակէզի սեղանը՝ ան առենը Գաբաւոնի բարձր տեղն
30 էր. Բայց Դաւիթ Աստուծոյ հարցնելու համար՝ չկրցաւ անոր առջևը երթալ, քանզի Տէրոջը հրեշտակին սուրին երեսէն վախցաւ։

ԳԼ·ԻԲ

1 Դաւիթ՝ տաճարին համար որոշուած տեղը գիտնալով՝ անոր շինութեանը հարկաւոր եղած բաները առաւօրէն կը պատրաստէ. 6 ու Սողոմոնին կ'իմացընէ Աստուծոյ խոստումնալիրը, ու նաև անոր պարտաւորութիւնը տաճարը շինելու վրայով. 17 Իշխաններուն կը պատուիրէ, որ իր որդւոյն ձեռնտու ըլլան։

1 Ու Դաւիթ ըսաւ. Անիկայ է Տէր Աստուծոյն տունը, ու անիկայ է Իսրայէլի ողջակէզին սեղանը։
2 Եւ Դաւիթ հրամայեց որ Իսրայէլի երկրին մէջ գտնուղ Հօտարազինները ժողվին. ու Աստուծոյ տունը շինելու համար՝ քարատհատներ դրաւ, որ տաշուած քարեր
3 պատրաստեն։ Եւ Դաւիթ գրան փեղկերուն բևեռներուն համար ու շրջանակներուն համար՝ խիստ շատ երկաթ պատրաստեց, և այնչափ շատ պղինձ՝ Հոր կշռոքի չէր գար.
4 Ու ¤֊ԹՐԱՖ եղևնափայտին համբանքը չկար. քանզի Տիդոնացիք և Տիւրացիք Դաւիթին շատ եղևնափայտեր կը բերէին։
5 Եւ Դաւիթ ըսաւ. Իմ որդիս Սողոմոնը փափուկ տղայ մըն է, ու Տէրոջը շինուելու տունը մեծ՝ բարձրը՝ ու ամէն երկիրներու մէջ անուանի ու փառաւոր պիտի ըլլայ. հիմա անոր համար պատրաստութիւն տեսնեմ. և Դաւիթ իր մեռնելէն առաջ՝ խիստ շատ պատրաստութիւն տեսաւ։
6 Ետքը իր որդին Սողոմոնը կանչեց, ու անոր պատուիրեց որ Իսրայէլի Տէր Աստուծոյն տուն շինէ։
7 Ու Դաւիթ Սողոմոնին ըսաւ. Որդեակ իմ՝ Աստիս մէջը ունենայի Հոր իմ Տէր Աստուծոյս անուանը
8 տուն շինեմ. Բայց Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով. Դուն շատ արիւն թափեցիր, ու մեծ պատերազմներ ըրիր. դուն իմ անուանս տուն պիտի չշինես. քանզի իմ առջևս գետնի վրայ շատ արիւն
9 թափեցիր. Ահա քեզի որդի մը պիտի ծնանի. անիկայ հանգստութեան մարդ պիտի ըլլայ. և զանիկայ Հիր ամէն շրջակայ թշնամիներէն պիտի հանդչեցընեմ. քանզի անոր անունը Սողոմոն պիտի ըլ-

Ն·Ք·Գ·Ե· Իբր 1017

լայ. ու անոր օրերուն մէջ Իսրայէլին խաղաղութիւն ու հանդարտու-
10 թիւն պիտի տամ։ Անիկայ իմ անուանս տուն պիտի շինէ. ու Անիկայ ինծի որդի պիտի ըլլայ, ու ես անոր հայր պիտի ըլլամ. և անոր թագաւորութեան աթոռը Իսրայէլի մէջ յաւիտեան պիտի հաս-
11 տատեմ։ Ուրեմն որդեակ իմ, Տէրը քու հետդ ըլլայ, ու յաջողութիւն գտնես, և քու Տէր Աստուծոյդ տուն շինես, ինչպէս որ
12 քեզի համար խօսեցաւ։ Միայն թէ Տէրը Քեզի իմաստութիւն ու հանճար տայ, և քեզ Իսրայէլի վրայ հաստատէ, որ քու Տէր Աս-
13 տուծոյդ օրէնքը պահես։ Ան ատենը յաջողութիւն կը գտնես, եթէ զգուշութեամբ՝ի գործ դնես ան կանոնները ու դատաստանները, որոնք որ Տէրը Մովսէսին պատուիրեց Իսրայէլի համար. Հզօրացիր ու քաջասիրտ եղիր, մի՛ վախնար ու
14 մի՛ զարհուրիր։ Եւ ահա ես իմ †նեղութիւններուս մէջ" Տէրոջը տանը համար՝ հարիւր հազար տաղանդ ոսկի, ու հազար անգամ հազար տաղանդ արծաթ պատրաստեցի. իսկ պղինձը ու երկաթը շատութեանը համար Հկշռոքի չգար. փայտեր ու քարեր ալ պատրաստեցի, ու անոնց վրայ դուն ալ աւելցընես։ Եւ դուն քու քովդ խիստ
15 շատ արուեստաւորներ, քարահատներ, որմնադիրներ, հիւսեր, ու
16 ամէն գործքի համար ամէն †Հոգի վարպետ մարդիկները ունիս։ Ոսկիին, արծաթին, պղնձին ու երկաթին համրանքը չկայ. ելիր, ու ‡աս գործին ձեռք զարկ", ու Տէրը քու հետդ ըլլայ։
17 Եւ Դաւիթ Իսրայէլի բոլոր իշխաններուն պատուիրեց, որ իր որդւոյն Սողոմոնին ձեռնտու ըլլան.
18 Ո֊ԸՍՍ. Ահա ձեր Տէր Աստուածը ձեր հետն է, և անիկայ ձեզ ամէն կողմանէ հանգստացուց. որովհետև աս երկրիս բնակիչները իմ ձեռքս տուաւ. ու երկիրը Տէրոջը առջևը ու անոր ժողովուրդին առ-
19 ջևը հնազանդեցաւ։ Եւ հիմա ձեր սիրտը ու ձեր հոգին՝ ձեր Տէր Աստուածը խնդրելուն տուէք, և ելէք Տէր Աստուծոյն սրբարանը շինեցէք, որ Տէրոջը ուխտին տապանակը ու Աստուծոյ սուրբ անօթները՝ Տէրոջը անուանը համար շինուած տունը տանիք։

Ե·ԹԳ·Է· 13, գթագ·ա·5, Գվ·ԺԷ·12, 13, իբ·6։

Ա Ընդ·ա·5։

Ի ՀՇՐ 16։

Ժգթագ·գ· 9, 12։ Սագ·Ժբ·1։

Ձ ՑԵՍ. ա. 7, 8։ Գվ·իբ·7։

Հբ Օր·լ· 7, 8։ ՑԵՍ. ա·6, 7, 9։ Գվ·իբ·20։ †Կ֊՛՝ ազգատոհմ

Ղ ՀՇՐ 3։

Ճ ԵՍՐ·բԽ՛, ՂՀՇՐ 11։

Ճ Բ Օր·Ժբ·10։ ՑԵՍ. իբ·4։ բ թագ·է·1։ Գվ·իԷ·25։

Ր Ա ԹԳ·Ե· 6։

Ս Ա ՄՆ·ԺԲ·3։

Տ ԳԹԳ·Ե· 6·21։ բՄՆ. է·7։ գ·11։

Ն ՀՇՐ 7։ գթագ·է·8։

Ա Ընդ·է· 2։ գթագ·բ·17։ Գվ·ԺԷ·1։ իբ·2։

Ի Բ Օր·Ժբ·5·11։

Ը ԺԹագ·է· 3։ Գվ·իբ·3։

Ի Գվ·իբ·5։

Ժ ԳԹագ·դ· 25։ է·4։

* Ֆ՝ խագաղարար։

1 Դաւիթ ծերացած ըլլալով՝ Սողոմոնը թագաւոր կ'ընէ։ 2 Ղեւտացւոց թիւը ու դասակարգութիւնը։ 7 Գերսոնեանց ճիւղերը։

Ն·Ք·ԴԲ· 1015

12 Կահաթի որդիքը՝ 21 Մերարիի որդիքը՝ 24 Ղևտացւոց պաշտօնը։

1 Նաև Դաւիթ ծերացած ու օրերը լեցուած ըլլալով, իր որդին Սողոմոնը Իսրայէլի վրայ թագաւոր
2 դրաւ։ Եւ Իսրայէլի բոլոր իշխանները, նաև քահանաները, ու Ղևիները
3 տացինները ժողվեց։ Ու Ղևտացիները՝ երեսուն տարեկանէն վեր եղող էրիկ մարդիկները մէկիկ մէկիկ համրուելով, անոնց թիւը
4 երեսունուութը հազար էր։ Դատաւորս. Անոնցմէ քսանուչորս հազարը՝ Տէրոջը տանը գործքին վրայ, ու վեց հազարը՝ վարակայուներ ու դատաւորներ ըլ-
5 լան, Ու չորս հազարը՝ դռնապաններ, ու չորս հազարը՝ օրհնելու համար Դաւիթի շինած նուագարաններովս։
6 Տէրոջը օրէնքները ըլլան։ Եւ Դաւիթ զանոնք բաժնեց, Ղևիի որդուոցը՝ Գերսոնին, Կահաթին ու Մերարիին դասակարգութիւնները ցուցնելով։
7 Գերսոնեաններէն՝ Ղադան ու
8 Սեմէի էին. Ղադանին որդիքը՝ առջինը Ցեքիէլ, ետքը Զեթամ,
9 ու Յովէլ՝ իրեք էին։ Սեմէիին որդիքը՝ Սաղոմոթ, Ազիէլ ու Ուրան՝ իրեք էին.ասոնք Ղադանին տոհ-
10 մերուն իշխաններն էին։ Եւ Սեմէիին որդիքը՝ Ցեթ, Զիզա, Ցեուս ու Բարիա էին.ասոնք Սեմէի-
11 ին որդիքը։ չորս հոգի էին։ Եւ առջինը՝ Ցեթ, ու երկրորդը՝ Զիզա էր. բայց Ցեուս ու Բարիա շատ որդիներ չունեցան համար, մէկ ազգատոհմ հաշուելու համար։
12 Կահաթի որդիքը՝ Ամրամ, Իսահար, Քեբրոն ու Ոզիէլ՝ չորս
13 էին։ Ամրամին որդիքը՝ Ահարոն ու Մովսէս էին. և Ահարոն ինքը՝ ու իր որդիքը յաւիտեան որոշուելու համար՝ ամենասուրբ բաներուն մէջ իրենց սուրբ պաշտօնը կատարելու, Տէրոջը առջևը խունկ ծխելու, անոր ծառայութիւն ընելու, ու անոր անունով յաւիտեան օրհնե-
14 լու համար։ Եւ Աստուծոյ մարդուն՝ Մովսէսին որդիքը՝ Ղևիի
15 ցեղին հետ համրուեցան։ Մովսէսին որդիքը՝ Գերսամ ու Եղիա-
16 զար էին։ Գերսամին որդիքը՝ առ-
17 ջինը Սուբայէլ էր։ Ու Եղիազարին որդիքը՝ առջինը Հռաբիա էր. ու Եղիազար ուրիշ որդիներ չուներ. բայց Հռաբիային որդիքը
18 խիստ շատցան։ Իսահարին որդի-
19 քը՝ առջինը Սաղոմոթ էր։ Քեբրոնին որդիքը՝ առջինը Ցերիա, երկրորդը՝ Ամարիա, երրորդը՝ Ցազիէլ, չորրորդը՝ Ցեկամամ էր։

Ն·Ք·ԴԲ· 1045

20 Ոզիէլին որդիքը՝ առջինը Միքա, երկրորդը՝ Ցեսիա էր։
21 Մերարիի որդիքը՝ Մոողի ու Մուսի էին. Մոողիին որդիքը՝ Ե-
22 ղիազար ու Կիս էին։ Ու Եղիազար ուղիղ մեռաւ. անիկայ որդիներ չունէր, հապա միայն աղջիկներ ունէր. ու զանոնք իրենց եղբայրնե-
23 րը Կիսին որդիքը առին։ Մուսիին որդիքը՝ Մոողի, Եդեր ու Ցերիմովթ՝ իրեք էին։
24 Ասոնք Ղևիի որդիքն էին իրենց ազգատոհմներուն համեմատ, ու անունով մէկիկ մէկիկ համրուած էքսան տարեկանէն վեր՝ Տէրոջը տանը սպասաւորութիւնը կատարողներուն տոհմապետներն էին։
25 Քանզի Դաւիթ ըսեր էր. Իսրայէլի Տէր Աստուածը Իր ժողովուրդը հանգստացուց, ու յաւիտեան Երուսաղէմի մէջ պիտի բը-
26 նակի. Ու Ղևտացիք ալ՝ Խորանը ու անոր պաշտօնին համն անօթները՝ ալ սրբոհիկ պիտի չկր-
27 բեն։ Քանզի Դաւիթին վերջին խօսքերովը՝ Ղևիի որդուոցմէ քսան տարեկանէն վեր եղողնե-
28 րը համրուեցան. Որովհետև անոնց պաշտօնը՝ Տէրոջը տանը ծառայութեանը մէջ Ահարոնի որդուոցը օգնութիւն ընել, դաւիթներու ու սենեակներու վերակացու ըլլալ, բոլոր սուրբ բաները մաքրել, ու Աստուծոյ տանը ծառայութիւնը
29 կատարել էր. Նաև առաջաւորութեան հացին, ու հացի ընծայի նաշխին, և Հանիմոր լաւաշնեբուն, ու տապակի մէջ եփած և տապկուած բաներուն, ու բոլոր չափերուն վերակացութիւնը ընել,
30 Եւ ամէն առտու ու իրիկուն՝ Տէրը օրհնելու ու գովելու համար ոտքի
31 վրայ կայնիլ, Ու շաբաթի օրերը, ամսագլուխները, ու մեծ տօներու մէջ Տէրոջը բոլոր ողջակէզները իրենց թուովը ու իրենց օրէնքովը՝ միշտ Տէրոջը առջևը մատու-
32 ցանել, Ու Տէրոջը տանը ծառայութեանը համար Ժողովքի խորանին պահպանութիւնը, և սրբարանին պահպանութիւնը, ու իրենց եղբայրներուն՝ Ահարոնի որդուոցը պահպանութիւնը ընել էր։

ԳԼ·ԻԴ

1 Ահարոնի որդուոցը վիճակով բաժնուելուց դասակարգութիւններու բաժնուիլը։ 20 Կահաթեանք 27 ու Մերարեանք վիճակով կը բաժնուին։

1 Նաև Ահարոնի որդուոցը դասակարգութիւնները եղան. Ահարոնի որդիքը՝ Նադաբ, Աբիհուդ,
2 Եղիազար ու Իթամար էին։ Եւ

Ա·ԹԱԳ·Ա· 33-39։ ՓԼ·ԻԲ·5։

ԻՐԲ 1045

Բ ԹԱՐ·Գ·3, 47։

Ե Օր·ԺԳ·18։ ՓԼ·ԻԳ·29։ Բ ՄՆ·ԺԹ·8։

Զ ՏԵՎ Բ ՄՆ·ԻԹ·25, 26։ ԱՄՈՎ·Գ·5։

Է ԵԼ·Գ·16։ ԹԱՐ·Իշ·57։ ՓԼ·Գ·1, ՃԱ։ Բ ՄՆ·Բ·14։ ԻԹ·25։

Ը ՓԼ·ԻԳ·21։

Թ ԵԼ·Գ·18։

Ժ ԵԼ·Գ·20։

Ի ԵԼ·ԻԲ·1։ ԵԶՐ·Ե·4։

Լ ԵԼ·Լ·7։ ԹԱՐ·ԺԳ·40։ ԱԹԱԳ·Բ·28։

Խ Օր·ԻԱ·5։

Ծ ԹԱՐ·Գ·23։

Կ ՏԵՎ ԳԼ·ԻԳ·23, 24, 25։

* ԵԶՐ·ԿՈՒՆԵՑԱՆ։

Հ ԵԼ·Բ·22։ ԺԲ·3·4։

Ձ ՓԼ·ԻԳ·20։ ԻԳ·24։

Ղ ՓԼ·ԻԳ·25։

Ճ ՓԼ·ԻԳ·22։

Մ ՓԼ·ԻԳ·23։

Յ ՓԼ·ԻԳ·20։

Ն ՓԼ·ԻԳ·26։

Շ ԳԼ·ԻԳ·29։

Ո ԳԼ·ԻԳ·28։

Չ ՏԵՎ ԹԱՐ·ԼԳ·6, 8։

Պ ՓԼ·ԻԳ·30։

Ջ ԹԱՐ·Ժ·17, 21։

Ռ ՀԱՐ 27։ ՏԵՎ ԹԱՐ·Ա·3, Գ·3, Բ·24։ ԵԶՐ·Գ·8։

Վ ԳԼ·ԻԲ·18։

Տ ԼԵՒ·Գ·16։ ԹԱՐ·Իշ·57։ ՓԼ·Գ·1, ՃԱ։

Ր ԻՐԲ 1015

Ց ԵԼ·ԻԹ·30։

Ւ ՂԱ·Գ·20։ ՓԼ·ԹԻ·29, ՃԱ։

Փ ՂԱ·Բ·4։

Ք ՂԱ·Բ·5։ 7։

Օ ՂԱ·ԺԹ·35։

Ֆ ԹԱՐ·Ժ·10։ ԱՂ·Ա·3։

ՈՒՂ·ԻԳ·4։

Ֆ ԹԱՐ·Ա·53։

Ֆ ԹԱՐ·Գ·6—9։

Ն·Ք·ԳԲ· 1015
Բ Թագ· գ· 4, իգ· 61,

Բնադաբ ու Ելիհուդ իրենց հօրը առջևը մեռան, ու անոնք որդիներ չունեցին. ու Եղիազար ու Իթամար
3 քահանայ եղան։ Եւ Դաւիթ, ու Եղիազարի որդիներէն Սադովկ, ու Իթամարի որդիներէն Աբիմելէք՝ զանոնք բաժնեցին իրենց համրանքովը իրենց պաշտօնին համար։
4 Ու Եղիազարի որդուոցը մէջ գտնուած իշխանները՝ Իթամարի որդուոցը մէջ քան զանոնք շատ էին. ու զանոնք այսպէս բաժնեցին. Եղիազարի որդուոցը համար տասնուվեց իշխան՝ իրենց ազգատոհմերուն համեմատ, ու Իթամարի որդուոցը համար ութը իշխան՝ իրենց ազգատոհմերուն համեմատ։
5 Եւ ասոնք ու անոնք վիճակով բաժնուեցան. քանզի սրբարանին իշխանները ու Աստուծոյ դռնէն իշխանները՝ Եղիազարի որդիներէն ու Իթամարի որդիներէն էին։
6 Ու Ղեւտացիներէն՝ Նաթանայելի որդին Սեմայիա դպիրը՝ թագաւորին ու իշխաններուն, և Սադովկ քահանային, ու Աբիաթարի որդւոյն Աբիմելէքին, և քահանայից ու Ղեւտացւոց նահապետներուն առջևը՝ մէկ ազգատոհմ մը Եղիազարէն առնելով, ու մէկ ազգատոհմ մը Իթամարէն առնելով՝ զանոնք գրեց։
7 Եւ առաջին վիճակը՝ Յովարիբին
8 ելաւ, երկրորդը՝ Ցեդայիային, երրորդը՝ Հարիմին, չորրորդը՝ Սէորիմին,
9 հինգերորդը՝ Մելքիա-
10 յին, վեցերորդը՝ Միամինին, եօթներորդը՝ Ակկոսին, ութերորդը՝
11 Աբիային, իններորդը՝ Ցեսուին,
12 տասներորդը՝ Սեքենիային, Մեսաասանեերորդը՝ Եղիասիբին, երկոտասանեերորդը՝ Ցակիմին,
13 երեքտասանեերորդը՝ Ոփփային, չորեքտասանեերորդը՝ Ցեսբէաբին,
14 տասնըհինգերորդը՝ Բեղգային, վեչտասանեերորդը՝ Իմմերին,
15 տասնըվեցերորդը՝ Եզիրին, եօթնուտասանեերորդը՝ Փեթայիային, քսաներորդ-
16 որդը՝ Ափեսսին, իննուտասանեերորդը՝ Եհեզկիելին, քսանումեկերորդը՝
17 Յաքինին, քսանուերկուերորդը՝ Գամուլին, քսանուերեքերորդը՝ Դաղայիային, քսանուչորսերորդը՝
18 Մաազիային։ Ասոնք են անոնց կարգադրութիւնը իրենց պաշտամանց համար, որ Տէրոջը տունը մտնելու համար՝ իրենց հօրը Ահարոնին ձեռքովը իրենց պաշտօնին համեմատ, ինչպէս որ Իսրայէլին Տէր Աստուածը անոր պատուիրեր էր։
20 Ու Ղեւիի որդուոցը մնացորդները եղան. Ամրամի որդիներէն՝ Սուբայէլ. Սուբայէլին որդիներէն՝
21 Ցադայիա. Ռեհաբիայէն՝ Հառաբիային որդիներէն առջինը՝
22 Ցեսիա. Իսահարի որդիներէն՝ Սաղոմոթ. Սաղոմոթին որդիներէն՝
23 Եհն Ցեթ. Ու Երիէրոնի որդիներէն՝ Ամարիա, երկրորդը՝ Ամարիա, երրորդը՝ Ցազիէլ, չորրորդը՝
24 Ցեկամամ. Ոզիելի որդիներէն՝ Միքա. Միքային որդիներէն՝ Սամիր.
25 Միքային եղբայրը՝ Ցեսիա. Ցեսիային որդիներէն՝ Զաքարիա։
26 Մերարիի որդիքը՝ Մոողի ու Մուսի էին. Ցազիայի որդին Բենո.
27 Մերարիի որդիքը Ցազիայէն՝ Բենո, Սոհամ, Զաքուր ու Եբրի
28 էին։ Մոողիէն՝ Եղիազարը՝ որ անիկայ որդիներ չունէր։
29 Կիսէն՝ Կիսին որդիներէն՝
30 Ցերամէլ էր։ Մուսիին որդիքը՝ Մոողի, Եդեր ու Ցերիմովթ էին։ Ղեւտացւոց որդիները իրենց տոհմերուն համեմատ՝ ասոնք էին։
31 Եւ ասոնց համար ալ իրենց եղբարցը Ահարոնի որդուոցը պէս՝ Դաւիթ թագաւորին, ու Սադովկին, ու Աբիմելէքին, և քահանայից ու Ղեւտացւոց տոհմապետներուն առջևը վիճակ ձգեցին, թէ տոհմապետներուն և թէ առնոնց պզտիկ եղբայրներուն համար։

ԳԼ· ԻԵ

1 Երգեցողներուն թիւը ու պաշտօնը. 8 անոնց՝ վիճակով քահանայից դասակարգութիւնները բաժնուիլը։

1 Ու Դաւիթ ու զօրքին իշխանները՝ Ասափին, Եմանին ու Իդիթունին որդիներէն՝ քնարներով, տաւիղներով ու ծնծղաներով մարգարէութիւն ընողները որոշեցին՝ պաշտօնին համար. ու իրենց պաշտօնին համեմատ՝ ասոնք ծառայութիւնը ընող մարդիկներուն համրանքը ասիկայ էր։
2 Ասափի որդիներէն՝ թագաւորին քովը մարգարէութիւն ընող Ասափին ձեռքին տակը՝ Ասափին որդիքը՝ Զաքուր, Յովսէփ, Նաթա-
3 նիա և Ասարէլա էին։ Իդիթունէն՝ Իդիթունի որդիքը՝ Գոդողիա, Եզրի, Եսայի, Սուբէ, Ասարիա ու Մատաթիա՝ վեց էին. ու իրենց հօրը Իդիթունին ձեռքին տակն էին, որ քնարով Տէրոջը գոհութիւն ու օրհնութիւն երգելով՝ մարգարէութիւն կ'ընէր։
4 Եմանէն՝ Եմանին որդիքը՝ Բոկքիա, Մաթանիա, Ոզիէլ, Սուբայէլ, Ցերիմովթ, Ընանիա, Անանի, Եղիաթա, Գեդողաթի, Ռոմամթիեզեր, Ցեսբակասա, Մեղեթի, Ցոթիր ու Մագիովթ
5 էին։ Ասոնց ամէնը Եմանին որ-

Ն·Ք·ԳԲ· 1015
Ա Թագ· գ· 4, իգ· 61,
Ա Գր·Ից·17,
Ա Գր·Ից·18,
Ա Գր·Ից·19,
Իգ· 31,
Բ Եզ·գ·19,
Գր·Ից·21,
Բ Գր·Իգ· 22,
Ա Գր·Իգ· 23,
Իսր 1015
Ա Գր·գ·33, 39, 44,
Ա Նեեմ. Ժր· 4, 17, Ղեւ· ա·5,
Բ Ճար 14 ի՛ը Ցեսբրեա,
Ա Ցես Ճր 17,
Ա Գր·Թ·25,
Ա Գր·Իգ·16,
* կ՛ Ղեւրիէլ· տես Ճր 18,

ն · ք · ՂԴ · Իբր 1015

դիքն էին , որ թագաւորին տեսա-
նողն էր՝ Աստուծոյ խօսքերուն
մէջ եղչխրը վերցընելու . ու Ա-
տուած՝ Եմանին տասնուչորս տղայ
6 ու իրեք աղջիկ տուեր էր : Ասոնք
ամէնը Աստուծոյ տանը պաշտօնին
համար՝ ծնծղաներով , տաւիղնե-
րով ու քնարներով՝ իրենց հօրը
ձեռքին տակը՝ Ցերոյնը տանը եր-
գերը կ'երգէին . և՛ Ասափ , Իդի-
թմուն ու Եմման՝ թագաւորին ձեռ-
7 քին տակն էին : Եւ անոնց թիւը՝
Ցերոյնը երգերը սորված իրենց եղ-
բայրներուն հետ , չորեքհարիւր բոլոր
հանճարեղներուն ։ ։ երկու հա-
րիւր ութսունուվեց էր :
8 Եւ իրենց յաջորդական պաշտօ-
նին համար՝ պզտիկը ու մեծը ,
Դ վարպետը ու աշակերտը՝ միասեղ
9 վիճակ ձգեցին : Եւ առաջին վի-
ճակը՝ Ասափի ։ ։ ։ Ցովսեփին
ելաւ . երկրորդը՝ Գոդոդիային , որ
ինքը ու իր եղբայրները ու որդի-
10 քը՝ տասուերկու հոգի էին . եր-
րորդը՝ Զաքուրին , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը՝ տասուեր-
11 կու հոգի էր . Չորրորդը՝ Եզրիին ,
որ իր որդիներովը ու եղբայրներովը
12 տասուերկու հոգի էր . Հինգերոր-
դը՝ Նաթանիային , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը տասուերկու
13 հոգի էր . Վեցերորդը՝ Բոկբիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներո-
14 վը՝ տասուերկու հոգի էր . Եօթ-
ներորդը՝ Ցեսարէլային , որ իր որ-
դիներովը ու եղբայրներովը՝ տա-
15 սուերկու հոգի էր . Ութերորդը՝
Եսայիին , որ իր որդիներովը ու
եղբայրներովը՝ տասուերկու հոգի
16 էր . Իններորդը՝ Մաթանիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներո-
17 վը՝ տասուերկու հոգի էր . Տասնե-
րորդը՝ Սեմէիին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասուերկու
18 հոգի էր . Մետասաներորդը՝ Ազա-
րիելին , որ իր որդիներովը ու եղ-
բայրներովը՝ տասուերկու հոգի էր .
19 Երկոտասաներորդը՝ Ասաբիային ,
որ իր որդիներովը ու եղբայրներովը
20 տասուերկու հոգի էր . Երեքտա-
սաներորդը՝ Սուբայելին , որ իր որ-
դիներովը ու եղբայրներովը՝ տա-
21 սուերկու հոգի էր . Չորեքտասա-
ներորդը՝ Մատաթիային , որ իր
որդիներովը ու եղբայրներովը՝ տա-
22 սուերկու հոգի էր . Հնգետասա-
ներորդը Երիմովթին , որ իր որդի-
ներովը ու եղբայրներովը՝ տասու-
23 երկու հոգի էր . Վեցտասաներոր-
դը՝ Անանիային , որ իր որդիներո-
վը ու եղբայրներովը՝ տասուերկու
24 հոգի էր . Եօթնուտասաներորդը՝
Ցեսբակասային , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասուերկու
25 հոգի էր . Ութուտասներորդը՝
Անանիին , որ իր որդիներովը ու
եղբայրներովը՝ տասուերկու հոգի
26 էր . Իննուտասներորդը՝ Մեղէթի-
ին , որ իր որդիներովը ու եղբայր-
ներովը՝ տասուերկու հոգի էր .
27 Քսաներորդը՝ Եղիաթային , որ իր
որդիներովը ու եղբայրներովը՝ տա-
28 սուերկու հոգի էր . Քսանումէկե-
րորդը՝ Ցոթիրին , որ իր որդիներո-
վը ու եղբայրներովը՝ տասուերկու
29 հոգի էր . Քսանուերկուերորդը՝
Գեդոդաթիին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասուերկու
30 հոգի էր . Քսանուերեքերորդը՝
Մազիովթին , որ իր որդիներովը
ու եղբայրներովը՝ տասուերկու
31 հոգի էր . Քսանուչորսերորդը՝
Ռոմամթիեզերին , որ իր որդինե-
րովը ու եղբայրներովը՝ տասուեր-
կու հոգի էր :

ն · ք · ՂԴ · Իբր 1015

Գ Լ · Ի Զ

1 Դռնապաններուն դասակարգութիւնները : 13 Դռներուն պահպանութիւնը վիճակով ա-
նոնց կը յանձնուի : 20 Ցերոյնը գանձերուն
վերակացու բնորոշած Ղեւտացիները : 29
Ոստիկաններ ու դատաւորներ :

1 Դռնապանաց դասակարգութիւն-
ները . Կորխեաններէն՝ Ասափի
որդիներէն՝ Կորէին որդին ՝ Մա-
2 սեղամիան էր : Ու Մասեղամիայի
որդիքը՝ անդրանիկը Զաքարիա ,
երկրորդը՝ Եդիէլ , երրորդը՝ Զա-
բադիա , չորրորդը՝ Ցաթնիէլ ,
3 Հինգերորդը՝ Եղամ , վեցերորդը՝
Ցոհանան , եօթներորդը՝ Եղեհովե-
4 նայի էին : Եւ Աբդեդոմի որդի-
քը՝ անդրանիկը Սեմայիա , երկ-
րորդը՝ Ցովզաբադ , երրորդը՝ Ցո-
վահ , չորրորդը՝ Սաքար , հինգե-
5 րորդը՝ Նաթանայէլ , վեցերորդը՝
Ամիէլ , եօթներորդը՝ Իսաքար ,
ութերորդը՝ Փեղաղթի . քանզի
Աստուած *ղանիկայ օրհներ էր :
6 Ու անոր որդւոյն Սեմայիային որ-
դիներ ծնան , որոնք իրենց հօրը
տանը իշխաններ եղան . քանզի ա-
7 նոնք զօրաւոր կորիճներ էին : Սե-
մայիային որդիքը՝ Ոթնի , Ռափա-
յէլ , Ովբէդ , Եղզաբադ , †Ա֊քի-
ով , Բենհայիլ՝ , Եղիուս ու Սամա-
8 քիա էին : Ասոնք ամէնը Աբդե-
դոմի որդիներէն էին , ։ ։ իրենք ու
իրենց որդիքը և իրենց եղբայրները՝
ծառայութեան համար զօրաւոր
ու կորիճ մարդիկներ՝ Աբդեդոմին
9 վաթսունուերկու էին : Եւ Մա-
սեղամիան՝ տասնուութը զօրաւոր
10 որդիներ ու եղբայրներ ունէր : Ու
Մերարիի որդւոյմէ Ը Ոսան որդի-
ներ ունէր . դլխաւորը Սամարի էր .

– Հմր 14 Ի֊ե֊
ւէ Աղե-
ւիա .

* ՟ի՝ Աբդե-
դոմը . տես
գլ · ԻԳ · 14 ։

† կ՟՝ անոր
եղբայրները
զօրաւոր
մարդիկ ։

Ը Գլ · ԻԷ · 38 ։

քանզի թէպէտև անիկայ անդրանիկ չէր , բայց սնոր հայրը զանի-
11 կայ գլուխ ըրաւ . Երկրորդը՝ Քեղկիա , երրորդը՝ Ցաբազեա , չորրորդը՝ Զաքարիա էր .* Ուսայիին բոլոր որդիները ու եղբայրը-
12 ները՝ տասուիրեք էին ։ Դոնայաններուն դասակարգութիւնները սսոնց տղոց էբլա գլխաւոր մարդիկներու , որ իրենց եղբայրներուն հետ պահպանութիւն ընելով՝
13 Տէրոջը տանը մէջ ծառայեն ։ Եւ պզտիկը ու մեծը հաւասարապէս վիճակ ձգեցին իրենց ազգատոհմներուն համեմատ՝ ամէն մէկ դրան
14 համար ։ Եւ արեւելեան կողմին վիճակը՝ Սեղեմիայիին ելաւ . ետքը անոր որդւոյն՝ խելացի ու խորհրդական Զաքարիայիին համար վիճակ ձգեցին , ու անոր վիճակը հիւսիսային կողմը ելաւ ։
15 Աբդեդոմին՝ հարաւային կողմը , ու անոր որ-
16 դւոցը՝ Բեթասուփիմը ։ Սուփիմին և Ուսայիին՝ արեւմտեան կողմը էլաւ՝ Սալեքեթին դրանը քովը՝ Տվեր ելլող ճամբուն վրայ . ու մէկ պահպանութիւնը մէկալ պահպա-
17 նութեանը դիմացն էր ։ Արեւելեան կողմը՝ վեց Ղեւտացի , հիւսիսային կողմը՝ օրը չորս , հարաւային կողմը՝ օրը չորս , ու Ասուփիմի կողմը՝
18 երկերկուք էին ։ Փարպարին կողմը դէպ ի արեւմուտք սանդուխին ճամբան՝ չորս , ու Փարպարը՝ եր-
19 կու դռնապաններուն դասակարգութիւնները սսոնք էին ։
20 Ու Ղեւտացիներէն՝ Ասուծոյ տանը գանձերուն ու նուիրական
21 գանձերուն վրայ՝ Ախիան էր ։ Գերսոնացի Ղադանին ազգատոհմներուն իշխաններէն՝ Գերսոնացի Ղադանին որդիներէն՝ Ցեհիէլն
22 էր ։ Ցեհիէլին որդիքը՝ Զեթամ , ու անոր եղբայրը Յովէլ՝ Տէրոջը
23 տանը գանձերուն վրայ էին ։ Ամրամեաններէն , Իսահարեաններէն , Քեբրոնեաններէն ու Ոզիե-
24 լեաններէն ։ Մովսէսի որդւոյն Գերսամին որդին Սուբայէլը՝ գանձերուն վերակացուն էր ։
25 Եւ անոր եղբայրները Եղիազարին որդիէ . անոր որդին Հռաբիա , անոր որդին Եսայի , անոր որդին Յովրամ , անոր որդին Զեքրի , ու
26 անոր որդին Շաղոմոթ էր ։ Ան Շաղոմոթը ու անոր եղբայրները՝ Դաւիթ թագաւորին , ու տոհմից իշխաններուն , ու հազարապետներուն , և հարիւրապետներուն , ու
27 զօրաց իշխաններուն նուիրած ամէն սուրը գանձերուն վրայ էին ։ Որոնք պատերազմներէն ու աւարէն՝
28 Տէրոջը տանը շինութեանը համար նուիրեր էին . Նաև Սամուէլ Տեսանողին , ու Կիսեան Սաուղին , ու Ներեան Աբենններին , և Յոաբու Զարուհեան Յովաբին նուիրած բոլոր նուէրները՝ Սաղոմոթին ու անոր եղբայրներուն ձեռքին տակն էին ։
29 Իսահարեաններէն՝ Քոնոնիա ու անոր որդիքը՝ արտաքին գործքերու համար՝ Իսրայէլի վրայ Տոստիկաններ ու դատաւորներ էին ։
30 Քեբրոնեաններէն՝ Ասաբիա ու անոր եղբայրները՝ հազար եօթը հարիւր զօրաւոր մարդիկներ՝ Յորդանանու ասդիի կողմը դէպ ի արեւմուտք՝ Տէրոջը ամէն գործքին համար ու թագաւորին ծառայութեանը համար՝ Իսրայէլի վրայ ոս-
31 տիկաններ էին ։ Քեբրոնեաններէն՝ Քեբրոնեաններուն ազգատոհմին իշխանը Եեբիա էր . Դաւիթին թագաւորութեանը քառասներորդ տարին՝ անոնք համրուեցան , ու Գաղաադու Երացերի մէջ՝ անոնց մէջ զօրաւոր կտրիճներ գտնուեցան ։
32 Եւ անոր եղբայրները՝ երկու հազար եօթը հարիւր զօրաւոր մարդիկներ — տոհմերու իշխաններ էին . և Դաւիթ թագաւորը զանոնք՝ Ռուբենեանց , Գադեանց , ու Մանասեանց կէս ցեղին վրայ դրաւ , Աստուծոյ և թագաւորին ամէն գործքին համար ։

ԳԼ . ԻԷ

1 Տասուերկու գործակալները տասուերկու ամիսներուն համար ։ 16 Տասուերկու ցեղերուն տասուերկու իշխանները ։ 23 Ժողովուրդը համրելը կը խափանուի ։ 25 Դաւիթին մասնաւոր գործակալները ։

1 Ու Իսրայէլի որդւոցմէ իրենց համրանքովը՝ ազգատոհմի նահապետներէն , ու հազարապետներէն , և հարիւրապետներէն , ու անոնց ոստիկաններէն՝ դասակարգութեանց ամէն գործքին մէջը՝ թագաւորին ծառայութիւն ընողներուն , և տարւոյն ամէն ամիսներուն մէջը՝ ամէն ամիս մտնողներուն ու ելլողներուն — մէկ մէկ դասը՝ քսան-
2 ուչորս հազար հոգի էր ։ Առաջին ամսուն համար առաջին դասին վրայ Զաբդիելի որդին — Ցեսբաամին էր . ու անոր դասը քսանուչորս
3 հազար հոգի էր ։ Առաջին ամսուն ամէն զօրավարներուն իշխանը՝ Փա-
4 րեսին որդիներէն էր ։ Ու երկրորդ ամսուն դասին վրայ՝ Ախոքացի Դովդան էր . ու Մակղոթ անոր դասին իշխանն էր . ասոր դասն ալ
5 քսանուչորս հազար հոգի էր ։ Երրորդ ամսուն համար երրորդ զօրա-

* Եբր . տուր նր հաստատելու

ն · ք · գե · Իսր 1015

ե Հմր 1 Ի-ռահ Մասեղաիա ։

ե Գլ · իգ · 4 ։

է Գլ · իգ · 19 ։

ը Տես Գես · իս · 39 ։

թ Գլ · իգ · 4 ։

ժ Գլ · ի · 17 ։ ի Գլ · իգ · 8 ։ իթ · 8 ։

ի Գլ · իգ · 16 ։

ի Գլ · իգ · 18 ։

ն · ք · գե · Իսր 1015

— Տես բ Թագ · իգ · 8 ։ Գլ · ժա · 11 ։

բ բ Թագ · իգ · 2 ։

պետը՝ Զովիադայի որդին Բանեան մեծ քահանան էր . ու անոր դասը
6 քանուչորս հազար հոգի էր : Ա-
Բանեան՝ երսունէն զօրաւոր էր ,
ու երսունին վրայ էր . և անոր որ-
դին Ամիզաբադը անոր դասին մէջն
7 էր : Չորրորդ ամսուն համար չոր-
րորդ ընտրեալը՝ Զովաբին եղբայրը
Ասայէլը , ու անկէ ետքը անոր
որդին Զաբադիան էր . և անոր դա-
սը քանուչորս հազար հոգի էր :
8 Հինգերորդ ամսուն համար հինգե-
րորդ զօրապետը՝ Եզրացի Սամա-
ովթին էր . ու անոր դասը քսանու-
9 չորս հազար հոգի էր : Վեցերորդ
ամսուն համար վեցերորդ ընտրեալը՝
Թեկուացի Իկդեսին որդին Իրա-
բան էր . ու անոր դասը քսան-
10 ուչորս հազար հոգի էր : Եօթ-
ներորդ ամսուն համար Եօթներորդ
ընտրեալը՝ Եփրեմի որդւոցմէ Փե-
լոնացի Հեզրէսն էր . ու անոր
դասը քսանուչորս հազար հոգի էր :
11 Ութերորդ ամսուն համար՝ ութե-
րորդ ընտրեալը՝ Զարայեանց Իով-
սացի Սոփերքն էր . ու անոր դասը
12 քսանուչորս հազար հոգի էր : Ին-
ներորդ ամսուն համար իններորդ
ընտրեալը՝ Բենիամինեաններէն Ա-
նաթովթացի Աբիեզերն էր . և ա-
նոր դասը քսանուչորս հազար հոգի
13 էր : Տասներորդ ամսուն համար
տասներորդ ընտրեալը՝ Զարայեանց
Նետոփաթացի Մաարան էր . ու
անոր դասը քսանուչորս հազար
14 հոգի էր : Մետասաներորդ ամսուն
համար մետասաներորդ ընտրեա-
լը՝ Եփրեմի որդւոցմէ՝ Փարաթո-
նացի Բանեան էր . և անոր դասը
15 քսանուչորս հազար հոգի էր : Եր-
կոտասաներորդ ամսուն համար եր-
կոտասաներորդ ընտրեալը՝ Գոթո-
նիելի Քերոնդին՝ Նետոփաթացի
Ալադն էր . ու անոր դասը քսան-
ուչորս հազար հոգի էր :
16 Եւ Իսրայէլի ցեղերուն վրայ՝
էր . Ռուբենի ցեղին իշխան՝
Զէքրիի որդին Եղիազար , Շմա-
ւոնի ցեղին՝ Մաաքայի որդին Սա-
17 փատիա , Ղևիի ցեղին՝ Կամուէլի
որդին Հասաբիա , Ահարոնի որ-
18 դւոյն՝ Սադովկ , Յուդայի ցեղին՝
Դաւիթին եղբայրներէն՝ Եղիուա ,
Իսաքարի ցեղին՝ Միքայէլի որդին
19 Ամրի , Զաբուղոնի ցեղին՝ Երդիա-
յի որդին Իսմայիա , Նեփթաղիմի
ցեղին՝ Եզրիէլի որդին Ազրիմովթ ,
20 Եփրեմի որդւոցը՝ Ազազիայի որդին
Ովսէէ , Մանասէի կէս ցեղին՝ Փա-
21 դայիայի որդին Յովէլ , Գաղաադ
եղող Մանասէի կէս ցեղին՝ Զաքա-
րիայի որդին Իդդով , Բենիամինի
ցեղին՝ Աբէններու որդին Յասիէլ ,
22 Դանի ցեղին՝ Յերոամի որդին Ա-
զարիէլ : Իսրայէլի ցեղերուն իշ-
խաններըասոնք էին :
23 Եւ Դաւիթ՝ քանի տարեկանէն
վար եղողները չհամրեց . վասն զի
Տէրը ըսեր էր որ Իսրայէլը երկին-
քին աստղերուն չափ պիտի շատցը-
24 նէ : Ծարուհեայի որդին Յովաբը
սկսաւ համրել , բայց չվմրնցուց .
ու անոր համար Իսրայէլի վրայ
բարկութիւն եկաւ . և ան համ-
րանքը Դաւիթ Թագաւորին յի-
շատակաց դրքին մէջ չմտաւ :
25 Ու Թագաւորին գանձերուն վրայ՝
Ադիէլի որդին Ազմաթն էր . և
դաշտը՝ քաղաքները և գեղերը
ու աշտարակները եղող շտեմա-
րաններուն վրայ՝ Ոզիայի որդին
26 Յոնաթանն էր . Եւ արտը բանող
երկրագործներուն վրայ՝ Քեղուբի
27 որդին Եզրին էր . Ու այդիներուն
վրայ՝ Ռամաթացի Սեմէին էր . ու
այդիներուն ‡ բերքերուն , — գինիի
շտեմարաններուն վրայ՝ Սեփամացի
28 Զաբդին էր . Եւ դաշտը եղող
ձիթենիներուն ու մոլաթզենինե-
րուն վրայ՝ Գադերացի Բաաղա-
նանն էր . ու եղի շտեմարաններուն
29 վրայ՝ Յովասն էր . Ու Սարոնի մէջ
եղող արօտական արջառներուն
վրայ՝ Սարոնացի Սհտրան էր . ու
հովիտներու մէջ եղող արջառնե-
րուն վրայ՝ Ադղլի որդին Սափատ
30 էր . Եւ ուղտերուն վրայ՝ Իսմայէ-
լացի Ովբիլն էր . ու էշերուն վրայ՝
31 Մերոնոթացի Յադայիան էր . Եւ
հօտերուն վրայ՝ Հադարացի Յա-
զիզն էր : Ասոնք ամէնը՝ Դաւիթ
Թագաւորին ստացուածոցը վերա-
կացուներն էին :
32 Ու Դաւիթին հօրեղբայրը Յով-
նաթան խորհրդական էր . անիկայ
խելացի ու դիտուն մարդ մըն էր .
և Հաքեմոնիի որդին Եհդիէլը՝ Թա-
33 գաւորին որդւոցը հետ էր . Ու Ա-
քիտոփէլ՝ Թագաւորին խորհրդա-
կանը , և Արաքացի Քուսին՝ Թա-
34 գաւորին բարեկամն էր . Ու Ա-
քիտոփելէն ետքը՝ Բանեայի որդին
Յովիադան , ու Աբիաթարն էին .
ու Թագաւորին զօրագլուխը՝ Յո-
վաբն էր :

ԳԼ . ԻԸ

1 Դաւիթ հանդիսաւոր ժողովքի մը մէջ ծա-
նուցանելով իր վրայով Աստուծոյ ունեցած
հաճութիւնը , ու իր որդւոյն Սողոմոնին հա-
մար բրած խոստումները , դանոնք կը յորդորէ
որ Աստուծմէ վախնան . 9 , 20 կը յորդորէ
նաև իր որդին Սողոմոնը՝ որ տաճարը շինէ .
11 ու անոր ի նչ ձևով ըլլալուն օրինակը կու
տայ :

1 Եւ Դաւիթ՝ Իսրայէլին բոլոր իշ-
խանները , — ցեղերուն իշխաննե-
րը , ու Թագաւորին ծառայութիւն

Ն . ք . դէ . Իրբ 1015

* կամ՝ Նա-
խարար . գ
Թագ . գ .
5 :

Ի Ծն . ժե .
5 :

Իրբ 1017

ե բ Թագ .
իգ . 15 ; Գլ .
խ . 7 :

Իրբ 1015

Ի Գլ . ժա .
28 :

Ե Գլ . ժա .
27 :

Ը բ Թագ .
իա . 18 ; Գլ .
ժա . 29 :

Ը Գլ . ժա .
28 :

Ի բ Թագ .
իգ . 28 ; Գլ .
ժա . 30 :

Ի Գլ . ժա .
31 :

Ի Գլ . ժա .
30 :

Լ Գլ . իգ .
30 :

† կամ՝ Ե-
դեար . ա
Թագ . ժգ .
6 :

‡ Եբր . մկի
բաներուն ,

Ն . ք . դէ .
Իրբ 1015

Ի Ծն . ժե .
5 :

Ե բ Թագ .
ժե . 12 :

Զ բ Թագ .
ժե . 37 ; ժգ .
16 :

Ի գ Թագ . ա .
7 :

Ի Գլ . ժա . 6 :

— Գլ . իե .
16 :

ընող † դասերուն իշխանները, և հազարապետները, ու հարիւրապետները, և թագաւորին ու անոր որդուոյը բոլոր ստացուածոց ու ընչից ‡ վերակացուները, ներքինիները, ¶ զօրաւորները, ու զօրքին բոլոր կտրիճները՝ Երուսաղէմի մէջ
2 ժողվեց։ Եւ Դաւիթ թագաւորը ոտքի վրայ կայնեցաւ, ու ըսաւ. Ով իմ եղբայրներս ու իմ ժողովուրդս՝ ինծի մտիկ ըրէք. Իմ սրտիս մէջը ունեցայ՝ որ Տէրոջը ուխտի տապանակին, ու մեր Աստուծոյն ոտիցը Հպատուանդանի համար՝ մէկ հանգստեան տուն մը շինեմ. ու շինելու պատրաստութիւն
3 տեսայ. Բայց Աստուած ինծի ըսաւ. Դուն իմ անունս տուն պիտի չշինես. քանզի դուն պատերազմի մարդ ես, ու *շատ արիւն"
4 թափեցիր։ Եւ Իսրայէլին Տէր Աստուածը իմ հօրս բոլոր տունէն ընտրեց, որ յաւիտեան Իսրայէլին վրայ թագաւոր ըլլամ. քանզի առաջնորդը՝ Ցուդայէն, ու Ցուդայի տունէն՝ † իմ հօրս տունը ընտրեց. ու † իմ հօրս որդուոյը մէջէն ինծի հաւնեցաւ, որ վրաս բոլոր Իսրայէլի վրայ թագաւոր
5 ընէ։ Եւ իմ բոլոր որդիներէս՝ (որովհետև Տէրը ինծի շատ որդիներ տուաւ,) Իմ որդիս Սողոմոնը ընտրեց, որ Իսրայէլի վրայ՝ Տէրոջը թագաւորութեան աթոռը նստի.
6 Ու ինծի ըսաւ. † Քու որդիդ Սողոմոն՝ ինքը պիտի շինէ իմ տունս ու իմ սրահներս. քանզի զանիկայ ինծի որդի ընտրեցի, ու ես անոր
7 հայր պիտի ըլլամ. Եւ անոր թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ, ¶ թէ որ ան օրուան պէս՝ իմ հրամաններս ու դատաստաններս † գործ դնելու մէջ յա-
8 րատևէ։ Ու հիմա բոլոր Իսրայէլին՝ Տէրոջը ժողովին առջեւ՝ ու մեր Աստուծոյն լսելովը Տէր Աստուծոյն պատուիրանքները պահեցէք ու զգուշութեամբ որոնեցէք, որ ‒ բարի երկիրը ժառանգէք, ու ձեզմէ ետքը ձեր որդուոյը ժառանգութիւն թողուք յաւիտեան։
9 Եւ դուն՝ որդեակ իմ Սողոմոն, գիտցիր Աստուածը ճանչցիր, ու անոր՝ † կատարեալ սրտով ու յօժար կամքով ծառայութիւն ըրէ. քանզի Տէրը ամէն սիրտերը կը քննէ, ու ամէն մտաց խորհուրդները կը ճանչնայ. ‡ Թէ որ զանիկայ փնտռես, † պիտի գտնես", և թէ որ զանիկայ թողուս, անպէտ քեզ յա-
10 ւիտեան պիտի մերժէ։ Հիմա նայէ որ * Տէրը քեզ ընտրեց՝ Իր սրբա-

Ն. ք. գե. տրր 1015

† Գլ. իե. 1, 2։
‡ Գլ. իե. 25։
¶ Գլ. ժա. 10։

իր թագ. է. 2։ Սաղ. ճլը. 3, 4, 5։

ղ Սաղ. ղթ. 5։ ճլը. 7։

իր թագ. է. 5, 13։ գ թագ. է. 3։ Գլ. ժէ. 4։ իր. 8։
* Եբր. արիւններ
ը ա թագ. ժզ. 7—13։
Ընդ. խթ. 8։ Գլ. ե. 2։ Սաղ. կ. 7։ նր. 68։
թ ա թագ. ժզ. 1։
ի ա թագ. ժզ. 12, 13։
Լ Գլ. գ. 1։ ճ։ իդ. 1։
Ի Գլ. իբ. 9։

ծր թագ. է. 13, 14։ Գլ. իր. 9, 10։ բ Մն. ա. 9։

¦ Գլ. իր. 13։

Հ երեմ. թ. 24։ Ովս. գ. 1։ Յօն. ժէ. 3։
ն գ թագ. ի. 3։ Սաղ. ճա. 2։
ղ ա թագ. ժզ. 7։ գ թագ. բ. 39։ Գլ. իհ. 17։ Սաղ. է. 9։ ճլթ. 2։ Առակ. ժէ. 3։ Երեմ. ժա. 20։ ժէ. 10։ ի. 12։ Յայտ. բ. 23։
ֆր Մն. ժե. 2։
† Եբր. պիտի գտնուի քեզի։
/ Հմր 6։

Ն. ք. գե. տրր 1015

յ Յես. Եւ. իե. 40։ Հմր 19։

‡ Կ՛ըսէ՝ իր մտքին մէջ ունեցած

ն Գլ. իկ. 20։

20 րանին համար տուն մը շինելու. զօրապիր, ու ‒ ‒ ‒ ‒ կատարէ։
11 Եւ Դաւիթ իր որդւոյն Սողոմոնին՝ † սրահին, ու անոր սենեակներուն, և անոր գանձարաններուն, ու անոր վերնատուններուն, և անոր ներքին շտեմարաններուն, ու քաւութիւնին տանը դաղափարը
12 տուաւ. Եւ ‡ Հոգիին ազդեցութեամբը իրեն յայտնած՝ բոլոր բաներուն՝ Տէրոջը տանը գաւիթներուն, ու բոլորտիքը եղող ամէն սենեակներուն, և † Աստուծոյ տանը շտեմարաններուն, ու նուիրուած բաներուն գանձարաններուն
13 գաղափարը ‒ ‒ ‒ ‒. Նաև քահանայից ու Ղևտացւոց դասակարգութիւններուն համար, ու Տէրոջը տանը պաշտօնին ամէն գործքին համար, և Տէրոջը տանը ծառայութեանը ամէն անօթներուն հա-
14 մար ‒ ‒ ‒ ‒ ‒ ‒ ‒ ‒. Ո՛ ամէն պաշտօններուն ամէն ոսկի անօթներուն կշռոքը, ‒ ամէն արծաթէ անօթներուն, ‒ ամէն պաշ-
15 տօնի անօթներուն ‒ կշռոքը, Եւ ամէն ոսկիէ աշտանակներուն, ու անոնց ամէն ոսկիէ ճրագներուն կշռոքը, և ամէն արծաթէ աշտանակին, ու անոր ճրագներուն, ամէն մէկ աշտանակին գործածութեանը համեմատ՝ կշռոքը ‒ ‒ ‒ ‒.
16 Եւ առաջաւորութեան սեղաններուն ամէն մէկ սեղանին համար՝ ոսկիին կշռոքը, ու արծաթէ սեղաններուն համար՝ արծաթին կշռոքը։
17 Նաև, Եւ մաքուր ոսկիէ մսհաններուն, ու կոնքերուն, և բաժակներուն, ու ոսկիէ տաշտերուն համար՝ ամէն մէկ տաշտին կշռոքը, և արծաթէ տաշտերուն համար՝ ամէն
18 մէկ տաշտին կշռոքը ‒ ‒ ‒. Ու խունկի սեղանին համար կշռոքով մաքուր ոսկի, և Երկնից Կառքը տարածող՝ ու Տէրոջը ուխտին տապանակը ծածկող Հքերովբէից կառքին դաղափարին համար՝ ոսկի
19 ‒ ‒ ‒. Ամ բոլոր բաները՝ ըսաւ դաղափարին բոլոր գործքերը՝ * Տէրը իր ձեռքին դրովը ինծի յայտնեց՝ ըսաւ։
20 Եւ Դաւիթ իր որդւոյն Սողոմոնին ըսաւ. Զօրացիր, ու քաջասիրտ եղիր, ու ‒ ‒ ‒ ‒ կատարէ. մի՛ վախնար, ու մի՛ զարհուրիր. քանզի Տէր Աստուածը՝ իմ Աստուածս քեզի հետ է. Ան նիկայ քեզ պիտի չթողու, ու քեզ երեսէ պիտի չձգէ, մինչև որ Տէրոջը տանը ծառայութեանը բոլոր գործ-
21 քերը լմնցընես։ Եւ ահա Հքահանայից ու Ղևտացւոց դասերը՝ Աստուծոյ տանը բոլոր ծառայու-

ն Ել. իե. 18—22։ ա թագ. գ. 4։ գ թագ. գ. 23. ճ։
* Տես Եւ. իե. 40։ Հմր 11. 12։

ն Որ. լ. 7, 8։ Յես. ա. 6, 7, 9։ Գլ. իր. 13։

դ Յես. ա. 5։

է Գլ. իդ։ իե. իզ։

Ն · Ք · ԳՁ · Իսր 1015

– Ել · լԹ · 25 , 26 ; ԼՂ · 1 , 2 ։

թեանը համար են . ու ամէն ծառայութեան համար՝ ամէն գործքի մէջ՝ – ամէն յաժարակամ իմաստունները քեզի հետ են . և իշխանները ու բոլոր ժողովուրդը քու ամէն հրամանիդ կը նային ։

ԳԼ · ԻԹ

1 Դաւիթ՝ իր օրինակովը ու յորդորանքովը 6 պատճառ կ'ըլլայ որ իշխանները ու ժողովուրդը կամաւոր ընծաներ կը մատուցանեն ։ 10 Դաւիթին շնորհակալութիւնը ու աղօթքը ։ 20 Ժողովուրդը զԱստուած օրհնելով ու զոհ մատուցանելով , Սողոմոնը թագաւոր կը նստեցընեն ։ 26 Դաւիթին թագաւորութեանը օրերը ու մահը ։

1015

1 Եւ Դաւիթ թագաւորը բոլոր ժողովքին ըսաւ . Իմ որդիս Սողոմոնը՝ որ Աստուած միայն անիկայ ընտրեց , – փափուկ տղայ մըն է , ու գործքը մեծ է · քանզի –– պալատը մարդու համար չէ , հապա

– գ Թագ · դ · 7 ; Գլ · իր · 5 ; Առակ · դ · 3 ։

2 Տէր Աստուծոյ համար է ։ Ուստի ես իմ բոլոր կարողութեամբս՝ իմ Աստուծոյս տանը համար՝ ոսկիէ ըաւլը– բոնէրուն համար՝ ոսկի , ու արծաթեղէններուն համար՝ արծաթ , և պղնձեղէններուն համար՝ պղինձ , –– երկաթեղէններուն համար՝ երկաթ , և փայտեղէններուն համար՝ փայտ , –– Բ եղնդնաքարեր , և գամելու ւոբեր , ու զարդի համար՝ գոյնզգոյն քարեր , և ամէն տեսակ պատուական քարեր , ու մարմարիոն քարեր առատօրէն

Բ Տես Ես · ծգ · 11 · 12 ; Ցայտ · իա · 18 , ըճ ։

3 պատրաստեցի ։ Ու նաև իմ Աստուծոյս տանը վրայ մեծ սէր ունենալուս համար , սրբարանի տանը համար ամէն պատրաստած բաներս 'ի զատ , իմ յատուկ գանձիս մէջը եղած ոսկին ու արծաթն – ը իմ Աստուծոյս տանը համար տուի ,

4 Ոփիրի ոսկիէն՝ իրեք հազար տաղանդ ոսկի , ու եօթը հազար տաղանդ մաքուր արծաթ՝ որ անոնցմով տուներուն որմունքը պատեն .

Դ Թագ · թ · 28 ։

5 Ոսկիէ ըաւլը– բոնէրուն համար ոսկի , ու արծաթեղէններուն համար արծաթ , ու արուեստաւորներուն ձեռքովը ըաւլը– ամէն տեսակ գործքին համար հոգւոյ էրծը տալ . և այսօր ՅեղՀ իր կամքովը Տէրոջը " ընծայ տուող " ով կայ ։

* Եբր · իր ձեռքը լեցնող

6 Ան ատենը † տոհմից իշխանները , ու Իսրայէլի ցեղերուն իշխանները , և հազարապետները , ու հարիւրապետները , և Թագաւորին գործքին վերակացուները՝ յաժար կամ

† Գլ · իե · 1 ։

7 մար ընծայ բերին , Ու Աստուծոյ տանը գործքին համար՝ հինգ հազար տաղանդ և տասը հազար դրամ ոսկի , ու տասը հազար տաղանդ արծաթ , և տասնուութը հազար տաղանդ պղինձ , ու հարիւր

Ե Թագ · ժ · 26 ։

հազար տաղանդ երկաթ տուին ։

8 Եւ ոքուն քովը որ քարեր գտնուեցաւ , Գերսոնացի Ղեբիելին ձեռքովը Տէրոջը տանը գանձին ընծայ

9 յեցին ։ Ու ժողովուրդը՝ անոնց կամաւոր ընծաներ մատուցանելուն համար ուրախացան . քանզի Թ կամաւոր ընծան բոլոր սրտով մատուցին Տէրոջը . ու Դաւիթ թագաւորն ալ խիստ շատ ուրախացաւ ։

Ա Ընդ · իե · 21 ։

Ե Ընդ · իե · թ · 7 ։

10 Եւ Դաւիթ բոլոր ժողովքին աչքին առջեւը Տէրը օրհնեց . ու Դաւիթ ըսաւ . Ով Տէր՝ մեր Հօրը Իսրայէլին Աստուածը , յաւիտենից մինչև յաւիտեանս օրհնեալ ես .

11 Ով Տէր՝ ըմեծութիւնը , զօրութիւնը , փառքը , յաւիտենականութիւնը ու վայելչութիւնը քուկդ է . քանզի բոլոր երկինքի ու երկրի վրայ եղածը թ–կ է . ով Տէր՝ թագաւորութիւնը քուկդ է , ու դուն իբրև գլուխ ամէնէն

Ը Մատ · գ · 13 ; ա Տիմ · ա · 17 ; Ցայտ · և · 13 ։

12 բարձրացած ես ։ Բ Եւ հարստութիւնը ու փառքը քեզմէ է , ու ամէնուն իշխանը դուն ես . և զօրութիւնը ու կարողութիւնը քու ձեռքիդ մէջն է . և ամէնը մեծցնելը ու ուժովցնելը՝ քու ձեռքդ

Բ Հռով · ժա · 36 ։

13 է ։ Եւ հիմա ով մեր Աստուածը՝ քեզի գոհութիւն կու տանք , ու քու փառաւորեալ անունդ կ'օրհ–

14 նենք ։ Բայց ես ով եմ , ու իմ ժողովուրդս ով է , որ այսպէս կամաւոր ընծայ տալու կարող ըլլանք . քանզի ամէն բան քեզմէ է , ու

15 † քու կիններէդ քեզի տուինք ։ Վասն զի ‡ մենք քու առջեւդ՝ մեր բոլոր հայրերուն պէս՝ օտարականներ ու պանդուխտներ ենք . երկրի վրայ եղած մեր օրերը շուքի պէս է , ու ‡ մնա–

† Եբր · քու ձեռքէդ

‡ Յաղ · լԹ · 12 ; Երր · ժա · 13 ; ա Պետ · բ · 11 ։

16 յուն բան" մը չկայ ։ Ով Տէր Աստուած մեր , քեզի՝ քու սուրբ անունդդ շինուելու տանը համար ասոնք մեր պատրաստած բոնէրուն բոլոր առատութիւնը քու ձեռքէդ է ,

Ի Ցոր · ժգ · 2 ; Յաղ · գ · 9 ; Ես · 11 ; Ծխգ · 4 ։

‡ Եբր · ապրիլնութիւն

17 ու ամէնն ալ քուկդ է · Եւ գիտեմ՝ ով Աստուած իմ՝ որ Նախրտերը կը փորձես , և Ուղղութիւնը կը սիրես . ասոնց ամէնը ես ուղիղ սրտով ու յօժար կամքը ընծայ ըրի . ու հիմա հոս գտնուած ժողովուրդդ ուրախութեամբ տեսայ , որ քեզի կամաւոր ընծայ կը մա–

Լ Թագ · ժգ · 7 ; Գլ · իբ · 9 ; Ի Առակ · ժա · 20 ։

18 տուցանեն ։ Ով մեր հայրերուն՝ Աբրահամին , Իսահակին ու Իսրայէլին Տէր Աստուածը , ասիկայ յաւիտեան քու ժողովուրդիդ սրտին խորհուրդներուն մէջը պահէ , ու ‖ անոնց սիրտը քեզի ‖ ուղղէ ։

Ա Յաղ · ժ · 17 ։

‖ Կամ՝ հաստատէ ։

19 Եւ † իմ որդուս Սողոմոնին կատարեալ սիրտ տուր , որ քու պատուիրանքներդ , վկայութիւններդ ու

† Ա Յաղ · Ղբ · 1 ։

ն · ք · գբ · 1015

կանոններդ պահէ, և ամէնը՝ ի գործ դնէ, ու շինէ ան պալատը՝ որուն համար հպատրաստութիւն տեսեր եմ։

20 Եւ Դաւիթ բոլոր ժողովքին ըսաւ. Հիմա ձեր Տէր Աստուածը օրհնեցէք. ու բոլոր ժողովքը իրենց հայրերուն Տէր Աստուածը օրհնեցին, և ծռելով՝ Տէրոջը ու թագաւորին երկրպագութիւն ըրին։ 21 Ու հետևեալ օրը զոհեր ու ողջակէզներ մատուցին Տէրոջը. հազար զուարակ, հազար խոյ, հազար գառն, անոնց թափելու նուէրներովը. ու բոլոր Իսրայէլին համար շատ 22 զոհեր մատուցին։ Եւ ան օրը Տէրոջը առջևը մեծ ուրախութիւնով կերան խմեցին. ու Դաւիթին որդին Սողոմոնը նորէն թագաւոր ըրին. յԱնիւյ Տէրոջը համար թագաւոր, ու Սադովկը քահանայ օծեցին։ 23 Եւ Սողոմոն իր հօրը Դաւիթին տեղը՝ Տէրոջը աթոռին վրայ թագաւոր նստաւ, ու յաջողութիւն գտաւ. և բոլոր Իսրայէլը 24 անոր ունդանդեցաւ։ Ու ամէն իշխանները ու զօրաւորները, և Դաւիթ թագաւորին բոլոր որդիներն ալ՝ Սողոմոն թագաւորին ենթացան։ 25 Ան Տէրը՝ բոլոր Իսրայէլին առջևը՝ Սողոմոնը խիստ մեծցուց, և անոր այնպէս թագաւորութեան փառք տուաւ, որ անկէ առաջ Իսրայէլի վրայ թագաւոր եղողի մը ամենևին եղած չէր։ 26 Այսպէս Յեսսէի որդին Դաւիթ բոլոր Իսրայէլի վրայ թագաւորեց։ 27 Թիւն ըրաւ. յԵ անոր Իսրայէլի վրայ թագաւորութիւն ըրած օրերը քառասուն տարի եղաւ. յՔեբրոնի մէջ՝ եօթը տարի թագաւորութիւն ըրաւ, ու Երուսաղէմի մէջ՝ երեսունուերկու տարի թագաւորութիւն 28 ըրաւ։ Եւ երբարի ծերութեամբ մեռաւ, կեանքէն՝ մեծութենէն ու փառքէն իր բաղձանքը առած. և անոր տեղը՝ անոր որդին Սողոմոն 29 նը թագաւոր եղաւ։ Ու Դաւիթ թագաւորին առաջին ու վերջին գործքերը՝ ահա Սամուէլ տեսանողին գրքին մէջը, ու Նաթան մարգարէին գրքին մէջը, և Գադ տեսանողին գրքին մէջը գրուած են, 30 Նաև անոր բոլոր թագաւորութիւնը, ու քաջութիւնը, ու թէ անոր, թէ Իսրայէլին, և թէ երկիրներուն ամէն թագաւորութեանցը պատահած դիպուածները։

ն · ք · գբ · 1015

ես գթագ · գ · 13 ։ բ Մն · ա · 12 ։ ժող · բ · 9 ։

յ բ թագ · ե · 4 ։ գ թագ · բ · 11 ։

յ բ թագ · ե · 5 ։

ե Ծն · իե · 8 ։ ե Գո · իգ · 1 ։

յ գ թագ · ա · 35 ։ 39 ։

ե ժող · բ · 2 ։

* Եբր · ձեռք տուին. տե՛ս Ծն · իդ · 2 ։ խե · 29 ։ բ Մն · է · 8 ։ Եզեկ · ժե · 18 ։

- Դան · բ · 21 ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ն · ք · գբ · 1015

ԳԼՈՒԽ Ա

1 Գարաւոնի մէջ Սողոմոնին մատուցած հանդիսաւոր զոհը։ 7 Սողոմոն՝ իմաստութիւնը բնորելուն համար՝ Աստուծմէ կ'օրհնուի։ 13 Սողոմոնին ուժը ու հարստութիւնը։

1 Եւ Դաւիթի որդին Սողոմոն իր թագաւորութեանը մէջ զօրացաւ. ու Անոր Տէր Աստուածը անոր հետ էր, ու զանիկայ խիստ 2 մեծցուց։ Եւ Սողոմոն բոլոր Իսրայէլին՝ հազարապետներուն, հարիւրապետներուն, դատաւորներուն, ու բոլոր Իսրայէլին ամէն տոհմապետներուն խօսեցաւ։ 3 Եւ Սողոմոն ու բոլոր ժողովքը անոր հետ՝ գաբաւոնի բարձր տեղը գացին. քանզի Տէրոջը ծառային Մովսէսին՝ անապատին մէջ շինած՝ Աստուծոյ ժողովքի խորանը հոն 4 էր. Ումիայն թէ Դաւիթ՝ Աստուծոյ տապանակը Կարիաթարիմէն իր պատրաստած տեղը հաներ էր. քանզի Երուսաղէմի մէջ անոր վրան մը կանգներ էր. Սակայն Ովբեդան Ուրիին որդւոյն Բեսելէլին շինած բագնէկ սեղանը՝ հոն Տէրոջը խորանին առջևն էր. և Սողոմոն ու 6 ժողովքը զանիկայ փնտռեցին։ Եւ Սողոմոն՝ հոն Տէրոջը առջևը ժողովքի խորանին պղնձէ սեղանին երթալով՝ անոր վրայ հազար ողջակէզ մատուց։

7 ՅԱն գիշերը Աստուած Սողոմոնին երևցաւ, ու անոր ըսաւ. Խնդրէ, 8 քեզի ի՞նչ տամ։ Եւ Սողոմոն Աստուծոյ ըսաւ. Դուն իմ Հօրս Դաւիթին մեծ ողորմութիւն ըրիր, ու զիս՝ անոր տեղը թագաւոր ըրիր. 9 Հիմա ով Տէր Աստուած՝ իմ Հօրս Դաւիթին ըրած խոստումնդ հաստատ ըլայ. Քանզի դուն զիս՝ երկրիս հողին չափ շատ ժողովուրդի 10 վրայ թագաւոր ըրիր։ Յ Հիմա ինծի իմաստութիւն ու գիտութիւն տուր, որ աս ժողովուրդիս առջևը ելլեմ ու մտնեմ. վասն զի աս քու

ն · ք · գբ · 1015

ե Եզ · լ · 2 ։ ը Եզ · իե · 1 · 2 ։ լբ · 1 · 2 ։

† Կ՚ վասն մատուց ։

ի գ թագ · գ · 4 ։

յ գ թագ · գ · 5 · 6 ։

է ա Մն · իբ · 5 ։

ե գ թագ · գ · 7 · 8 ։

է գ թագ · գ · 9 ։

յ թես · իե · 17 ։ բ Օր · լ · 2 ։

ն · ք · գբ · 1015

ես գթագ · գ · 13 ։ բ Մն · ա · 12 ։ ժող · բ · 9 ։

յ բ թագ · ե · 4 ։ գ թագ · բ · 11 ։

յ բ թագ · ե · 5 ։

ե Ծն · իե · 8 ։ ե Գո · իգ · 1 ։

յ գ թագ · ա · 35 ։ 39 ։

ե ժող · բ · 2 ։

* Եբր · ձեռք տուին. տե՛ս Ծն · իդ · 2 ։ խե · 29 ։ բ Մն · է · 8 ։ Եզեկ · ժե · 18 ։

- Դան · բ · 21 ։

ն · ք · գբ · 1015

ե Եզ · լ · 2 ։ ը Եզ · իե · 1 · 2 ։ լբ · 1 · 2 ։

† Կ՚ վասն մատուց ։

ի գ թագ · գ · 4 ։

յ գ թագ · գ · 5 · 6 ։

է ա Մն · իբ · 5 ։

ե գ թագ · գ · 7 · 8 ։

է գ թագ · գ · 9 ։

յ թես · իե · 17 ։ բ Օր · լ · 2 ։

Ն · Ք · ԳԲ · 1015

Ա Գ Թագ · գ · 11 · 12 · 13 ·

Հա ԱՌ · ԻԹ · 25 · ԳԼ · Թ · 22 · Ժող · ը · 9 ·

Ա Գ Թագ · գ · 26 · Ժ · 26 · Եզ · ԳԼ · Թ · 25 ·

Ա Գ Թագ · Ժ · 27 · ԳԼ · Թ · 27 · Ցար · ԻԲ · 24 ·

Ա Գ Թագ · Ժ · 28 · 29 · ԳԼ · Թ · 28 ·

— Գ Թագ · ե · 5 ·

* ԵՔԲ · բսաւ ·

Բ Գ Թագ · ե · 15 · Հմր 18 ·

† ԵՔԲ · Համ բէց ·

Է Գ Թագ · ե · 1 ·

Բ ԱՌ · Ժգ · 1 ·

մեծ ժողովուրդդ ով կրնայ դա-
11 տել ։ Եւ Աստուած Սողոմոնին
ըսաւ . Որովհետեւ քու սրտիդ մէջը
ասիկայ եղաւ , ու հարստութիւն ,
ստացուածք , փառք , և քու
թշնամիներուդ հոգին չխնդրեցիր ,
ու երկար կեանք ալ չխնդրեցիր ,
հապա քեզի իմաստութիւն ու գի-
տութիւն խնդրեցիր , որ դատես
իմ ժողովուրդս՝ որուն վրայ քեզ
12 թագաւոր ըրի , Ո՛րբեմ իմաստու-
թիւն ու գիտութիւն տրուի քեզի ,
և հարստութիւն , ստացուածք ու
փառք ալ պիտի տամ քեզի . ա-
նանկ որ՝ քեզմէ առաջ եղող թա-
գաւորներուն այնպէս եղած չէ , ու
քեզմէ ետքը ի՛ւնէրբեն ալ այնպէս
13 պիտի չըլլայ ։ Եւ Սողոմոն Գաբա-
աւոնի բարձր տեղէն՝ ժողովքի խո-
րանին առջևէն՝ Երուսաղէմ դար-
ձաւ , ու Իսրայէլի վրայ թագաւո-
րութիւն ըրաւ ։
14 Եւ Սողոմոն կառքեր ու ձիաւոր-
ներ ժողվեց . ու անիկայ հազար
չորս հարիւր կառք՝ ու տասներ-
կու հազար ձիաւոր ունեցաւ . և
զանոնք կառքի քաղաքներուն մէ-
ջը , ու թագաւորին քովը Երուսա-
15 ղեմի մէջ տեղաւորեց ։ Ու թա-
գաւորը Երուսաղէմի մէջ արծաթը
ու ոսկին քարերու պէս ըրաւ , ու
եղևնափայտը շատութենէն՝ դաշտի
մէջ եղող մոլաթզենիներուն պէս
16 ըրաւ ։ Եւ Սողոմոնին ձիերը Ե-
գիպտոսէն կու գային . ու թա-
գաւորին վաճառականներուն կա-
րաւանը՝ մէկ որոշուած գնով մը
Կ՛երթա՛ Երամակներ ծախու կ՛առ-
17 նէին . Ու Եգիպտոսէն մէկ կառք
մը դուրս ելլելուն՝ վեց հարիւր
արծաթով վեր կը հանէին , ու մէկ
ձին՝ հարիւր հիսուն Ա՛րծա՛ւով . ու
Քետացւոց բոլոր թագաւորներուն
համար , և Ասորւոց բոլոր թագա-
ւորներուն համար ալ՝ անոնց ձեռ-
քովը այնպէս կը հանէին ։

ԳԼ · Բ

1 · 17 Սողոմոնին դործաւորները՝ տաճարը շինե-
լու համար ։ 3 Սողոմոն՝ Քիրամին վարպետներ
ու շինութեան համար նիւթ կ՛ուղէ ։ 11 Քի-
րամին ալ բարեկամարէն պատասխան կը խրկէ ։

1 Ա՛ Սողոմոն * միտքը դրաւ" որ Ե-
ղովջը անուանը տուն՝ ու իր թա-
2 գաւորութեանը տուն շինէ ։ Ու
Բ Սողոմոն եօթանասուն հազար
բեռնակիր՝ ու լեռը Հ՛ուն կտրող
ութսուն հազար մարդ † ընտրեց , և
անոնց վրայ իրեք հազար վեց հա-
րիւր վերակացու դրա՛ ։
3 Ու Սողոմոն Է Տիւրոսի թագաւո-
րին Քիրամին հ՛ղա՛ խրկեց՝ , ու ը-
սաւ . Ք Ինչպէս որ իմ հօրս Դաւի-

Ն · Ք · ԳԲ · 1015

Ի Հմր 1 ·

Ղեւ · Լ · 7 ·
Ի Ել · Ի՛ե · 30 ·
ՂՏ · Իդ · 8 ·
Ը Թես · Իբ · 3 · 9 · 11 ·

թին ըրիր , ու անոր եղևնափայտեր
խրկեցիր՝ որ իրեն բնակելու համար
4 տուն շինէ , Ահա Ես իմ Ե՛ղ Ա-
տուծոյս անուանը տուն կը շինեմ ,
որ անոր նուիրուի , Ղանոր առջևը
անուշահոտ խունկ ծխուի , ու Ի՛միշտ
առաջաւորութեան հացը դրո՛ւի , և
ըառտու ու իրիկուն , շաբաթները ,
և ամսագլուխները ու մեր Ե՛ղ Ա-
տուծոյն տօներուն օրէրը՝ ողջակէզ-
ներ մատո՛ւցո՛ւի . ասիկայ Իսրայէ-
լին յաւիտենական պարտաւորու-
5 թիւնն է ։ Եւ ան տունը որ Ես կը
շինեմ , մեծ ըլլո՛ւ է . քանզի
Մեր Աստուածը՝ ամէն աստուած-
6 ներէն մեծ է . Ք Ու անոր տուն շի-
նելու ով կարող է . քանզի եր-
կինքը , ու երկնից երկինքը չեն
կրնար պարունակել զանիկայ , ու-
րեմն ես ով եմ , որ անոր տուն
շինեմ . միայն թէ անոր առջևը
խունկ ծխելու համար պէղ պիտի
7 գո՛ւրգո՛ւի ։ Եւ հիմա ինծի մէկ ի-
մաստուն մարդ մը խրկէ , որ ոսկին ,
արծաթը , պղինձը , երկաթը , ծի-
րանեղոյնը , կարմիրը և կապուտակը
բանիլ գիտնայ , ու քանդակագոր-
ծութիւն ալ գիտնայ , որ իմ քովս
Ցուդայի ու Երուսաղեմի մէջ և-
ղող՝ Ի՛մ Հօրս Դաւիթին պատ-
րաստած իմաստուններուն հետ
8 ըլլայ ։ Ու Եւ ինծի Լիբանանէն ե-
ղևնափայտեր , մայր փայտեր ու
Խալմուկ փայտեր խրկէ . քանզի
Ես գիտեմ որ քու ծառաներդ
Լիբանանէն փայտ կտրելը գիտեն .
և ահա իմ ծառաներս քու ծառա-
9 ներուդ հետ ըլլո՛ւն , Ու ինծի խիստ
շատ փայտեր պատրաստեն . քանզի
իմ շինելու տունս մեծ ու փառաւոր
10 ըլլալու է ։ Ք Եւ ահա Ես քու ծա-
ռաներուդ՝ փայտ կտրող բանուո-
ղներուն՝ քսան հազար քոռ ծե-
ծուած ցորեն , ու քսան հազար
քոռ գարի , ու քսան հազար մար
դինի , ու քսան հազար մար եղ կու-
տամ ։
11 Եւ Տիւրոսի Քիրամ թագաւորը
Սողոմոնին նամակ խրկեց՝ ու ըսաւ .
Ա՛ Ցերը իր ժողովուրդը սիրելուն
համար՝ քեզ անոնց վրայ թագաւոր
12 դրաւ ։ Եւ Քիրամ ըսաւ . Հ՛եր-
կինքը ու երկիրը ստեղծող Իսրա-
յէլին Ցեր Աստուածը Ե՛օրհնեալ ըլ-
լայ , որ Դաւիթ թագաւորին՝ խո-
հեմութիւն ու գիտութիւն ունե-
ցող իմաստուն որդի մը տուաւ , որ
անիկայ Ցերոջը տուն , ու իր թա-
գաւորութեանը տուն պիտի շինէ ։
13 Եւ հիմա իմ Է վարպետս Քիրամը
կը խրկեմ՝ , որ հանճարեղ ու իմաս-
14 տուն մարդ մըն է . Ը Ընիկայ Դանի
աղջիկներէն եղող կնկան մը որդի

Ա Գ Թագ · Ժ · 9 · ԳԼ · Թ · 8 ·
Հ Նե · ա · 2 · Սաղ · լդ · 6 · Ես · 25 · Ծիգ · 8 · ՃԼգ · 5 · 6 · Գոր · գ · 24 · Ժգ · 14 · Ցաց · Ժ · 6 ·
Ա Գ Թագ · ե · 7 ·

Բ ԵՔԲ · Հաշ՛ո՛ ·

Ա Գ Թագ · է · 13 · 14 ·

Ն·Ք·Գ·
1015

է , ու անոր հայրը Ցեւրացի է . ա-
նիկայ՝ ոսկի , արծաթի , պղինձ , եր-
կաթ , քարեր ու փայտեր , Նաև
ծիրանեգոյնի , կապուտակի , բեհե-
զի և կարմիրի վրայ բանելու կող-
մանէ , ու ամէն տեսակ քանդակը
քանդակելու կողմանէ յաջողակ է .
և քու իմաստուններուդ հետ , ու
քու Հօրդ Դաւիթին՝ իմ տիրոջս
իմաստուններուն հետ՝ իրեն ամէն
առաջարկուած բանին հնարքը կը
15 գտնէ : Եւ հիմա իմ տէրս իր ը-
սած ցորենը ու գարին , եղը ու
դինին իր ծառաներուն թող խրկէ .
16 Ու մենք Լիբանանէն՝ քեզի հար-
կաւոր եղածին չափ փայտեր կը
կտրենք , և զանոնք ծովէն լաստեր
ընելով Յոպպէ կը բերենք քեզի ,
ու դուն զանոնք Երուսաղէմ հա-
նէ :
17 Ու Սողոմոն Իսրայէլի երկրին մէ-
ջը եղող բոլոր օտարազգի մարդիկ-
ները՝ իր Հօրը Դաւիթին համրե-
լէն ետքը համրեց. և անոնք հարիւր
յիսնուհիւրեք հազար վեց հարիւր
18 հոգի գտնուեցան . Ու անոնցմէ եօ-
թանասուն հազար բեռնակիր , ու
լեռը կտրող ութսուն հա-
զար , ու զանոնք բանեցընելու հա-
մար՝ իրեք հազար վեց հարիւր վե-
րակացու ըրաւ :

ԳԼ· Գ

1 Տաճարին տեղը ու շինութեան սկզբնաւորու-
թիւնը : 3 Անոր չափերը ու զարդերը : 11 Քե-
րովբէները : 14 Վարագոյրը ու սիւները :

1012
— գ Թագ· զ·
1, ճ ;
Բ Նն· իր·
2 , 14 ;
Ⅎ ա Մն· իա·
18 , իր· 1 ;

1 Ապա Սողոմոն սկսաւ Տէրոջը տունը
շինել Երուսաղէմի մէջ՝ Մօրիա
լեռանը վրայ՝ ուր որ Տէրը անոր
Հօրը Դաւիթին երեւցեր էր , ան
տեղը՝ որն որ Դաւիթ Ցերուսացի
Ոնայիին կալին մէջը պատրաստեր
2 էր : Եւ իր թագաւորութեանը
չորրորդ տարին՝ երկրորդ ամսուն
երկրորդ օրը սկսաւ շինել :
3 Ու Աստուծոյ տունը շինելու հա-
մար՝ Սողոմոնին դրած հիմը ասիկայ
էր . առջի չափով՝ վաթսուն կան-
գուն երկայն , ու քսան կանգուն
4 լայն էր : Եւ դիմացը եղող սրա-
հին երկայնութիւնը՝ տանը լայ-
նութեամբը քսան կանգուն , ու
բարձրութիւնը հարիւր քսան էօ-
թը էր . ու զանիկայ ներսէն մա-
5 քուր ոսկիով պատեց : Եւ մեծ
տունը մայր փայտով ծածկեց , ու
զանիկայ մաքուր ոսկիով պատեց ,
ու անոր վրայ արմաւենիներ ու
6 շղթաներ փորագրեց : Եւ շքե-
ղութեան համար՝ տունը պա-
տուական քարերով զարդարեց .
7 ու ոսկին՝ Փարուիմի ոսկի էր : Եւ
տանը գերանները , սեմերը , պա-

Ն·Ք·Գ·
1012

տերը ու դռները ոսկիով պատեց .
ու պատերուն վրայ քերովբէներ
քանդակեց :
8 Եւ սրբութեանց սրբութիւնին
տունը շինեց . անոր երկայնութիւ-
նը տանը լայնութեանը պէս՝ քսան
կանգուն , ու լայնութիւնը քսան
կանգուն էր . և զանիկայ վեց հա-
րիւր տաղանդի չափ մաքուր ոսկի-
9 ով պատեց : Ու բևեռներուն կը-
շիռը յիսուն սիկղ ոսկի էր .
ու վերնատուները ոսկիով պա-
10 տեց : Եւ սրբութեանց սրբու- Ⅎ գ Թագ·
թիւնին տանը մէջ երկու քանդա- զ· 23 , ճ ;
կագործ քերովբէներ շինեց , ու զա-
11 նոնք ոսկիով պատեց . Եւ քերով-
բէներուն թեւերը քսան կանգուն
երկայնութիւն ունէին . մէկ թեւը
հինգ կանգուն էր , ու տանը պա-
տին կը դպչէր , և միւս թեւը հինգ
կանգուն էր , ու մէկալ քերովբէին
12 թեւին կը դպչէր . Մէկալ քերովբէին
ալ մէկ թեւը հինգ կանգուն էր , ու
տանը պատին կը դպչէր , ու միւս
թեւը հինգ կանգուն էր , ու մէկալ
13 քերովբէին թեւին կցուած էր : Ա-
ս քերովբէներուն տարածուած թեւե-
րուն երկայնութիւնը՝ քսան կանգուն
էր . ու անոնք իրենց ոտքերուն
վրայ կայնած էին , ու անոնց երեսը
դէպ ի տունը կը նայէր : Ⅎ Կամ՝ Ներս
14 Եւ ըվարագոյրը՝ կապուտակէ , ըեւ· իգ·
ծիրանիէ , կարմիրէ ու բեհեզէ շի- 31 , Մաա·
նեց , ու անոր վրայ քերովբէներ իգ· 51 ;
գործեց : Երբ· Թ· 3 ;
15 Եւ տանը առջևը՝ երեսունու- Ⅎ գ Թագ· է·
հինգ կանգուն երկայնութեամբ եր- 15—21 ; եւ
կու սիւն շինեց , ու ամէն մէկուն բիմ· ծր·
վրայի խոյակը հինգ կանգուն էր : 21 ;
16 Եւ դաբիրին մէջի ընտրեալ գե- Ⅎ գ Թագ· է·
ղերով շղթաներ շինեց , ու սիւներուն 20 ;
վրայ դրաւ . և հարիւր նուռ շի-
նեց , ու շղթաներուն անցուց :
17 Եւ սիւները տաճարին առջևը Ⅎ գ Թագ· է·
կանգնեց , մէկը աջ կողմն՝ ու մէ- 21 ;
կալը ձախ կողմն . և աջ կողմը
եղողն անունը Յաքին , ու ձախ
կողմը եղողն անունը Բոոզ կոչեց :

ԳԼ· Դ

1 Պղնձէ սեղանը : 2 Ջուրերու ծովը տասներ-
կու եզներու վրայ : 6 Տասը աւազանները ,
աշտանակները ու սեղանները : 9 Գաւիթնե-
րը , ու պղնձէ գործիքները : 19 Ոսկեղէն
անօթները :

1 Ու պղնձէ սեղան մը շինեց , եր- — Եզ· իե· 1·
կայնութիւնը քսան կանգուն , 2 ; գ Թագ·
և լայնութիւնը քսան կանգուն , ու ժգ· 14 ; Ե-
բարձրութիւնը տասը կանգուն : զեկ· խգ·
2 Եւ ձուլածոյ ծովը շինեց . ա- 13 , 16 ;
մէկ շրթունքէն մինչև մէկալ շըր- Ⅎ գ Թագ· է·
թունքը տասը կանգուն էր , ու 23 ;
բոլորաձև էր , և անոր բարձրու-

Ն·Ք·ԳՁ· 1012

թիւնը հինգ կանգուն էր, ու անոր շրջապատը երսուն կանգուն էր.
3 եւ անոր տակը շուրջանակի ամէն կողմէն եղներու նմանութիւններ կային. ծովուն բոլորտիքը մէկ կանգունի մէջ տասնական էջեր։ — եղները երկու կարգ էին, որոնք ձուլած աւեններին ձուլերէ էին։ Աւե-
4 ւոյ տասուերկու եզներու վրայ կը կենար, որոնց իրեքը դէպ 'ի հիւսիս, իրեքը դէպ 'ի արեւմուտք, իրեքը դէպ 'ի հարաւ, ու իրեքը դէպ 'ի արեւելք կը նայէին, ու ծովը անոնց վրայ էր, և ամենուն ետեւի կողմը դէպ 'ի ներս
5 դարձած էր։ Ու անոր թանձրութիւնը չորս մատնաչափ էր, և շրթունքը գաւաթի շրթունքի պէս էր, — վրան շուշանի ծաղիկներ կերտուած էր, ու իրեք հազար մար կ'առնէր։
6 Եւ տասը աւազան շինեց. ու հինգը աջ կողմը ու հինգն ալ ձախ կողմը դրաւ՝ լուացման համար. ողջակէզները անոնց մէջը կը լուային. բայց ծովը քահանայից համար էր, որ հոն լուացուին։
7 Եւ տասը ոսկեղէն աշտանակները շինեց իրենց օրինակին համեմատ, ու զանոնք տաճարին մէջը դրաւ. հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը։
8 Եւ տասը սեղան շինեց, ու զանոնք տաճարին մէջը դրաւ. հինգը աջ կողմը ու հինգը ձախ կողմը. ու հարիւր ոսկեղէն կոնքեր շինեց։
9 Եւ քահանայից գաւիթը, ու մեծ գաւիթը, և գաւիթին դռները շինեց, ու անոնց փեղկերը պղնձով պատեց։
10 Ծովը աջ կողմը՝ հարաւոյ դէմ դէպ 'ի արեւելք դրաւ։
11 Ու Քիրամ՝ կաթսաները, թիակները ու կոնքերը շինեց. և Քիրամ կատարեց ան բոլոր գործերը՝ որ Աստուծոյ տանը համար Սողոմոն
12 թագաւորին կը շինէր. Այսինքն երկու սիւները, ու երկու սիւներուն գլուխը եղող խոյակները, և սիւներուն գլուխը եղող խոյակներուն երկու դունտերը ծածկելու համար երկու ցանցակերպ
13 գարդերը, Ու երկու ցանցակերպ գարդերուն չորս հարիւր նուռերը, այսինքն՝ սիւներուն վրայի խոյակներուն երկու դունտերը ծածկելու համար՝ ամէն մէկ ցանցակերպ գարդին վրայ երկու կարգ նուռեր.
14 Եւ մեքենովթներն շինեց, ու մեքենովթներուն վրայի աւազանները
15 շինեց. Մէկ ծովը ու անոր տա-
16 կի տասուերկու եզները. Եւ կաթսաները, ու թիակները, ու մսա-

Ն·Ք·ԳՁ· 1012

հանները, և անոնց բոլոր գործիքները՝ Ցերոբովամ Սողոմոն թագաւորին՝ փայլուն պղնձէ շինեց
17 անոր վարպետը Քիրամ՝ Թագաւորը զանոնք Յորդանանու դաշտին մէջ թանձր հողի մը վրայ ձուլել տուաւ Սոկքովթի ու Սարեդայի մէջտեղը։
18 Եւ Սողոմոն ասոնց բոլոր կարասիները խիստ շատ շինեց. քանզի պղինձը կշռոքի չէր
19 գար։ Ու Սողոմոն՝ Աստուծոյ տանը բոլոր կարասիները շինեց. նաև ոսկի սեղանը, ու անոնց սեղանները՝ որոնց վրայ հառաջա-
20 բերութեան հացը էր դրուէր. Եւ մաքուր ոսկիէ աշտանակները, ու անոնց ճրագները՝ դաբիրին առջեւը վառելու համար ըստ սովորու-
21 թեան։ Եւ մաքուր ոսկիէ ծաղիկները, ու ճրագները, և ունելիները, մաքուր ոսկիէ բազմակալները, տաշտերը, խնկամաններըը, ու բուրվառները. և տանը դռները՝ ներսի սրբութեանց սրբութիւնին ներսի դռանները փեղկերը, և տանը՝ այսինքն տաճարին դռանները փեղկերը ոսկիէ էին։

ԳԼ· Ե

1 Նուիրուած դանձերը։ 2 Տապանակին հանդիսաւոր կերպով դարիրի մէջ դրուիլը։ 11 Երբոր Աստուած կ'օրհնէ, անիկայ տեսանելի կերպով իր հաճութեանը նշան մը կուտայ։

1 Ու Սողոմոնին Ցերոբովամ տանը համար շինած բոլոր գործը լմընցաւ. ու Սողոմոն իր հօրը Դաւիթին նուիրած բաները, և արծաթը, ու ոսկին, ու բոլոր անօթները տարաւ, և Աստուծոյ տանը դանձին մէջ դրաւ։
2 Ապա Սողոմոն՝ Իսրայէլի ծերերը, ու ցեղերուն բոլոր իշխանները, Իսրայէլի որդւոց նահապետները՝ Երուսաղէմի մէջ ժողվեց, որ Ցերոբովամ ուխտին տապանակը Դաւիթին քաղաքէն՝ այսինքն
3 Սիոնէն հանեն։ Եւ Իսրայէլի բոլոր մարդիկները եօթներորդ ամսուն տօնին առներ՝ թագաւորին
4 քովը ժողվուեցան։ Ու Իսրայէլի բոլոր ծերերը եկան. ու Ղեւտացիները
5 տապանակը վերցուցին։ Եւ տապանակը, ու ժողովքի խորանը, և խորանին մէջը եղած բոլոր սուրբ անօթները հանեցին. զանոնք քահանաները — Ղեւտացիները հանեցին։
6 Ու Սողոմոն թագաւորը ու անոր քովը ժողվուած Իսրայէլին բոլոր ժողովքը՝ տապանակին առջեւը ըլլալով, ոչխարներ ու արջառներ կը զոհէին, այնչափ շատ՝ որ անթիւ ու անհամար էին։

Ն·Ք·ԳՁ· 1012

ՀԳթագ·Է· 24, 25, 26։
Ա Տճ գ թագ·է· 26։
Ի գթագ·է· 38։
* Ելք·ողջակէզի գործը
Ղգթագ·է· 49։
Ի Եզ·իե·31, 40։ ալն·իբ·12, 19։
Ըգթագ·է· 48։
Ի գթագ·ղ· 36։
Ի գթագ·է· 39։
Ի Տճ գ թագ·է· 49։
Լգթագ·է· 41։
Ի Տճ գ թագ·է· 20։
Ի գթագ·է· 27, 43։

1005 — գթագ·է· 51։
1004 Բ գթագ·ը· 1, ճ։
Ի գթագ·ղ· 12։
Գգթագ·ը· 2։
Ի Տճ գլ·է· 8, 9, 10։
ՀԳթագ·է· 14, 45։
Հգթագ·է· 46։
Ա կ՛ Սարթանի·գ թագ·է· 46։
Ի գթագ·է· 47։
Ղգթագ·է· 48, 49, 50։
Ֆ Ել·իե·30։
Ֆ Ել·իե·20, 21։
Ֆ Ել·իե·31, ճ։

Ն · Ք · ԶԲ · 1004

7 Եւ քահանաները Տէրոջը ուխտին տապանակը ներս տարին իր տեղը՝ տանը դարիրը՝ սրբութիւն սրբութեանցը, — քերովբէներուն թեւերուն տակը 8 բե։ Ու քերովբէները տապանակին տեղւոյն վրայ՝ էրէց թեւերը կը տարածէին. և քերովբէները տապանակը ու անոր ձողերը վերէն կը 9 ծածկէին։ Եւ ձողերը երկընգույին. և ձողերուն ծայրերը տապանակէն՝ դարիրին առջեր կ'երեւնային, բայց դուրսէն չէին երեւնար. 10 ու ընդհանուր աս օրս հոն է։ Տապանակին մէջը ուրիշ բան չկար, բայց միայն երկու տախտակները, որ Մովսէս Խորեբի մէջ հոն դրաւ. որոնցմով Տէրը Իսրայէլի որդւոցը հետ ուխտ րրաւ, անոնց Եգիպտոսէն ելած ատեն։

11 Ու երբոր քահանաները սուրբ տեղէն ելան, (վասն զի բոլոր հոն գտնուող քահանաները սրբուեր էին, չէ թէ իրենց յաջորդական 12 կարգը պահելով. Ը Ու երգեցող Ղեւտացիներուն բոլորը՝ Ասափին, Եմանին — Իդիթունին, և անոնց որդիներուն ու եղբայրներուն հետ՝ բեհեզներ հագած, ծնծղաներով՝ տաւիղներով ու քնարներով՝ սեղանին արեւելեան կողմը կայնեցան. Բև անոնց հետ հարիւր քսան քահանայ փող կը շչեցընէին.) 13 Ու երբոր փող շչեցընողները ու երգեցողները միաբերան մէկ ձայնով Տէրը կ'օրհնէին ու կը գովէին, և փողերով, ծնծղաներով, ու երգոց նուագարաններով ձայներնին վերցընելով՝ Տէրը կ'օրհնէին, ըոեըվ. ֊ Գոհացէ՛ք Տէր-ջէն, ինչու որ բարի է, ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է.

Ան ատենը Տէրոջը տունը ամպով լեցուեցաւ։ 14 Եւ ամպին պատճառաւ քահանաները չէին կրնար հոն կենալ, որ էրէց պաշտօնը կատարեն. Է քանզի Տէրոջը փառքը Աստուծոյ տունը լեցուցեր էր։

Ն · Ք · ԶԲ · 1004

4 Եւ անիկայ ըսաւ. Օրհնեալ ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ իր բերնովը իմ Հօրս Դաւիթին խօսաբ տուաւ, ու իր ձեռքովը կատարեց. 5 քանզի ըսաւ. Իմ ժողովուրդս Եգիպտոսի երկրէն հանած օրէս՝ի վեր՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն ընաւ մէկ քաղաք մը չընտրեցի տուն շինելու համար, որ իմ անունս հոն ըլլայ, ու մարդ մը չընտրեցի, որ իմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ 6 իշխան ըլլայ. Է Հապա Երուսաղէմը ընտրեցի, որ իմ անունս հոն ըլլայ. ու Դաւիթը ընտրեցի, որ իմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ ըե֊է֊ 7 ֊ր ըլլայ։ Եւ Է իմ Հայրս Դաւիթ միտք ունէր որ Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը տուն մը շինէ. 8 Բայց Տէրը իմ Հօրս Դաւիթին ըսաւ. Որովհետև դուն միտդ դրիր որ իմ անունս տուն շինես, աղէկ ըրիր որ աս բանը միտդ դրիր. 9 Սակայն տունը դուն պիտի չշինես. Հապա քու որդիդ՝ որ քու երանքէդ պիտի ելլէ, անիկայ իմ անունս 10 տուն պիտի շինէ։ Եւ հիմ՝ Տէրը իր ըսած խօսքը կատարեց, ու ես իմ Հօրս Դաւիթին տեղը յաջորդեցի, ու Տէրոջը ըսածին պէս՝ Իսրայէլի աթոռը նստայ, ու Իսրայէլի Տէր Աստուծոյն անունը՝ ֊֊ 11 տունը շինեցի։ Եւ հոն դրի տապանակը՝ Տէրոջ ուխտը, որն որ Իսրայէլի որդւոցը հետ ըրաւ։

12 Է Ու Տէրոջը սեղանին առջեւ՝ Իսրայէլի բոլոր ժողովրդին դիմացը կայնելով, ձեռքերը տարածեց. 13 (Քանզի Սողոմոն պղնձէ խարիսխ մը շինելով՝ զանիկայ դաւիթին մէջտեղը դրեր էր. անոր երկայնութիւնը հինգ կանգուն, ու լայնութիւնը հինգ կանգուն, ու բարձրութիւնը իրեք կանգուն էր. և ինքը անոր վրայ կայնեցաւ, ու Իսրայէլի բոլոր ժողովրդին առջեւը ծունկ չոքեց, ու ձեռքերը դէպ՝ի երկինքը տարածեց.)

14 Եւ ըսաւ. Ով Տէր Աստուած Իսրայէլի, էերկինքի մէջ՝ ու երկրի վրայ քեզի պէս Աստուած չկայ, որ քու առջեւդ իրենց բոլոր սրտովը քալող ծառաներուդ հետ ուխտ ու 15 ողորմութիւն կը պահես. Բ Դուն քու ծառայիդ՝ իմ Հօրս Դաւիթին ըրած խոստումնդ պահեցիր, ու բերնովդ ըսածդ ձեռքովդ կատարեցիր, ինչպէս որ այսօր կ'երեւի։ 16 Նոյ։ Եւ հիմա ով Տէր Աստուած Իսրայէլի, պահէ ան խոստումնդ, որն որ քու ծառայիդ՝ իմ Հօրս Դաւիթին ըրիր, ու ըսիր. Է Իմ առջեւս Իսրայէլի աթոռին վրայ

ԳԼ· Ջ

1 Սողոմոն՝ ժողովուրդը օրհնելէն եաև, զԱստուած կ'օրհնէ։ 12 Տաճարին նուակատեաց օրը՝ պղնձէ կայսրանին վրայ Սողոմոնին մատուցած աղօթքը։

1 Ըն ատենը — Սողոմոն ըսաւ. Տէրը ըսաւ որ ինքը Բ մառախուղի մէջ 2 կը բնակի։ Բայց ես քեզի բնակութեան համար տուն՝ ու յաւիտեան քու նստելուդ համար տեղ 3 շինեցի։ Եւ թագաւորը իր երեսը դարձուց, ու Իսրայէլի բոլոր ժողովը օրհնեց. ու Իսրայէլի բոլոր ժողովը ֊֊է վո֊ կայներ էին։

Ն · Ք · ՉՁ · 1004

Ի Սադ · ՃԼԲ · 12 ։

նստող մարդ՝ քեզմէ պակաս պիտի չըլլայ . Իսկայն թէ քու որդիդ ի-
րենց ճամբաներուն զգուշութիւն
ընէն , ու իմ օրէնքիս մէջը քալեն ,
ինչպէս որ դուն իմ առջեւս քալե-
17 ցիր ։ Եւ հիմա ով Տէր Աստուած
Իսրայէլի , թող քու ծառայիդ՝
Դաւիթին ըսած խօսքդ հաստա-
տուի ։
18 Բայց միթէ Աստուած իրաւ երկրի
երկիս վրայ մարդոց հետ պիտի
Ղ Գ · Բ · 6 ։ Ե՝ · կդ · 1 ։ Գոր · է · 49 ։ բնակի . Նայա երկինքը ու երկնից
երկինքը քեզ չեն կրնար պարունա-
կել . ո՛ւր կը մնայ ասիմ շինած
19 տունս ։ Սակայն ով Տէր Աս-
տուած իմ , քու ծառայիդ աղօթ-
քին ու խնդրուածքին նայէ , որ
քու ծառայիդ այսօր քու առջեւդ
բրած պաղատանքը ու աղօթքը
20 լսես . Որպէս զի աս տունը վրայ
գորեկ ու գիշեր քու աչքերդ բաց
ըլլան , ան տեղւոյն վրայ՝ որուն
համար բսիր թէ՝ քու անունդ հոն
պիտի դնես . այնպէս որ՝ աս տե-
ղը քու ծառայիդ բրած աղօթքը
21 լսես ։ Ուրեմն քու ծառայիդ՝ և
քու ժողովուրդիդ Իսրայէլին աս
տեղը բրած աղօթքները լսես . այո
քու բնակութեանդ տեղէն՝ եր-
կինքէն լսես , ու լսած ատենդ նե-
րես ։
22 Թէ որ մէկը իր ընկերին դէմ
մեղանչէ , ու ան ալ երդում ընել
տալու համար՝ անոր երդում ա-
ռաջարկէ , ու երդումը աս տունը՝
23 քու սեղանիդ առջեւը գայ , Ան ա-
տենը դուն երկինքէն լսես ու կա-
տարես , ու քու ծառաներդ դա-
տես , և յանցաւորը դատապար-
տես , ու անոր բրածը անոր գլուխը
բերես . և արդարը արդարացընես ,
ու անոր արդարութեանը չափովը
անոր հատուցում ընես ։
24 Եւ Թէ որ քու ժողովուրդդ Իս-
րայէլը՝ քեզի դէմ մեղանչելուն
համար՝ իրենց թշնամիներուն առ-
ջեւը յաղթուին , ու դէպ դառնան
և քու անունդ փառք տան , ու
աս տանս մէջ քու առջեւդ աղօթք
25 ու աղաչանք ընեն , Ան ատենը
դուն երկինքէն լսես , և քու ժողո-
վուրդիդ Իսրայէլին մեղքը ներես .
ու անոնց՝ և անոնց հայրերուն
տուած երկիրդ դարձընես զանոնք ։
Ի գ Թագ · ԺԷ · 1 ։ 26 Թէ որ անոնց քեզի դէմ մեղք
գործելուն համար երկինքը գո-
ցուի , ու անձրեւ չգայ . ու անոնք
աս տեղս քեզի աղօթք ընեն , և քու
անուանդ փառք տան , ու զանոնք
նեղելուդ համար՝ իրենց մեղքերէն
27 դառնան , Ան ատենը դուն երկին-
քէն լսես , և քու ծառաներուդ ու
քու ժողովուրդիդ Իսրայէլին մեղ-
քը ներես , որ անոնց սորվեցընես
ան աղէկ ճամբան՝ որուն մէջը պի-
տի քալեն . ու քու ժողովուրդիդ
ժառանգութիւն տուած երկրիդ
վրայ անձրեւ տաս ։
28 Թէ որ երկրի վրայ սով , կամ
ժանտախտ , կամ խորշակահարու-
թիւն , կամ արբեցուցիչ դալարիկ , կամ
մարախ , կամ թրթուր ըլլայ ,
կամ անոնց թշնամիները զանոնք
իրենց *բնակած երկրին մէջը նե-
ղեն , կամ որ և իցէ հարուած կամ
29 հիւանդութիւն ըլլայ , Քու բոլոր
ժողովուրդէդ Իսրայէլէն որ և իցէ
մարդ՝ աղօթք մը ու խնդրուածք
մը ընելու ըլլայ , ու իւրաքանչիւր
մարդ իր սիրտը ու ցաւը ճանչնա-
լով՝ ձեռքերը դէպ ի աս տունը
30 երկրնցընէ , Ան ատենը դուն եր-
կինքէն՝ քու բնակութեանդ տե-
ղէն լսես , ու ներես . և ամէն մար-
դու՝ իր բոլոր ճամբաներուն հա-
մեմատ հատուցում ընես , անոր
սիրտը դիտնալուդ համար . վասն
զի Իմարդոց որդիներուն սիրտը
31 միայակ դուն գիտես . Որպէս զի
քեզմէ վախնան ու քու ճամբանե-
րուդ մէջը քալեն բոլոր իրենց օրե-
րուն մէջը , որչափ ժամանակ որ մեր
հայրերուն տուած երկրիդ վրայ
պիտի ապրին ։
32 Ու հքու ժողովուրդէդ Իսրայէլէն
չեղող՝ և հեռաւոր երկրէ մը քու
մեծ անուանդ համար՝ և զօրաւոր
ձեռքիդ համար՝ ու բարձր բազու-
կիդ համար եկող օտարականն ալ՝
թէ որ գայ ու աս տանս մէջ ա-
33 ղօթք ընէ , Դուն երկինքէն քու
բնակութեանդ տեղէն լսես , և օ-
տարականին քեզի բրած ամէն
խնդրուածքը կատարես , որ երկրիս
ամէն ժողովուրդները քու անունդ
ճանչնան , ու քու ժողովուրդիդ
Իսրայէլին պէս քեզմէ վախնան , և
գիտնան թէ աս իմ շինած տանս
վրայ քու անունդ կոչուած է ։
34 Երբոր քու ժողովուրդդ իր
թշնամիին դէմ պատերազմի եր-
թայ ան ճամբով՝ որ դուն պիտի
իրկես զանոնք , թէ որ անոնք աս
քու ընտրած քաղաքիդ , ու քու
անուանդ համար աս իմ շինած
տանս կողմը Նայելով՝ քեզի աղօթք
35 ընեն , Երկինքէն անոնց աղօթքը
ու խնդրուածքը լսես , և անոնց
իրաւունք ընես ։
36 Երբոր քեզի դէմ մեղք գործեն ,
(քանզի Ոմեղք չգործող մարդ չը-
կայ ,) ու անոնց բարկանալով՝ զա-
նոնք թշնամիին ձեռքը մատնես ,
ու անոնց գերեվարները հեռու կամ
մօտ երկիր մը գերի տանին զանոնք ,
37 Թէ որ ան իրենց գերութեան երկ-

Ն · Ք · ՉՁ · 1004

Ի Գվ · Ի · 9 ։

* Եբր · գրա-
ներուն

Ի ա Մն · Իը · 9 ։

Հ Ցօ · Ժը · 20 ։ Գոր · Ը · 27 ։

Ի Առակ · Ի · 9 ։ Ժող · Է · 20 ։ Ցակ · գ · 2 ։ ա Ցօ · ա · 8 ։

Ն · ք · գԲ · 1004

բին մէջը զեղջի դան ու դառնան , և իրենց գերութեան երկրին մէջը քեզի աղաչեն ու ըսեն . Մեղք գործեցինք , անօրէնութիւն ու անի-
38 րաւութիւն ըրինք . Եւ ի՞ր անոնք իրենց գերութեան երկրին մէջը՝ ուր որ գերի տարուած են , իրենց բոլոր սրտովը ու իրենց բոլոր հոգիովը քեզի դառնան , ու իրենց երկրին՝ որ իրենց հայրերուն տուիր , և քու ընտրած քաղաքիդ , ու քու անունիդ համար իմ շինած տանս
39 կողմը նայելով՝ աղօթք ընեն , Դուն երկինքէն քու բնակութեանդ տեղէն անոնց աղօթքը ու խնդրուածքը լսես , ու անոնց իրաւունք ընես , և քու ժողովուրդիդ քեզի
40 դէմ ըրած մեղքը ներես ։ Հիմա ով Աստուած իմ , աս տեղը ա-չքերդ բաց ըլլան , ու քու ականջ-
41 ներդ մտիկ ընեն ։ Եւ հիմա ով Տէր Աստուած , ելիր հանգստութեանդ տեղը երթիր , դուն՝ ու քու զօրութեանդ տապանակը . ով Տէր Աստուած՝ քու քահանաներդ փրկութիւն հագնին , և քու սուրբերդ բարութիւնով ուրախանան ։
42 Ով Տէր Աստուած՝ քու օծեալիդ երեսը մի՛ անարգեր . յիշէ՛ քու ծառայիդ Դաւիթին ըլլալ ողորմութիւնները դէպ ի քեզ ։

Ն · ք · գԲ · 1004

ը ա Մն · ժե · 16 ։

* կ՚ըսէ՝ Դաւիթին օրհնութիւնը իրենց ձեռքը ՝նայելով ։

Բ Գե · ե · 12 ։

Բ գ Թագ · ը · 64 ։

Ե Ագ · ճլը · 8 , 9 , 10 , 16 ։ ե ա Մն · իբ · 2 ։

Բ գ Թագ · ը · 65 ։

Ե Ցես · ժգ · 3 ։

Ա Նէեմ · թ · 25 ։

Ա Ագ · ճլը · 1 ։ Ես · ժե · 3 ։

Բ գ Թագ · ը · 66 ։

Գ Լ · Ը

1 Աստուած երկինքէն կրակ խրկելով՝ Սողոմոնին աղօթքին ընդունելի ըլլալը կը յայտնէ , ու տաճարը փառքով կը լեցնէ . ժողովուրդն ալ Տէրոջը երկրպագութիւն կ՚ընէ ։ 4 Սողոմոն Նաղխաւոր զոհը ։ 8 Սողոմոն՝ տաղաւարահարաց տօներ ու սեղանին նաւակատեաց տօներ կատարելէնետքը , ժողովուրդը կ՚արձակէ ։ 12 Աստուած Սողոմոնին կ՚երեւնայ , ու պայմանով անոր խոստումնքներ կ՚ընէ ։

1 Ու երբոր Սողոմոն իր աղօթքը
Բ Գե · ը · 54 ։
Բ Ղե · թ · 24 ։ Դատ · ղ · 21 ։ գ Թագ · ժբ · 38 ։ ա Մն · իա · 26 ։
Բ գ Թագ · բ · 10 , 11 ։ Գե · ե · 13 , 14 ։ Եզեկ · ժ · 3 , 4 ։
Բ Գե · ե · 14 ։
Բ Գե · ե · 13 ։ Ագ · ճկգ · 1 ։
Ե ա Մն · ժգ · 41 ։ Գե · ի · 21 ։
Բ գ Թագ · բ · 62 , 63 ։

լմընցուց , Բերկինքէն կրակ իջաւ , ու ողջակէզները և զոհերը սպառեց . ու Տէրոջը փառքը
2 տունը լեցուց ։ Եւ քահանաները չէին կրնար Տէրոջը տունը մտնել . քանզի Տէրոջը փառքը Տէրոջը
3 տունը լեցուցեր էր ։ Ու բոլոր Իսրայէլի որդիքը կրակին իջնելը՝ և տանը վրայ Տէրոջը փառքին հանդիսը կը տեսնէին . ու երեսի վրայ գետինը իյնալով՝ քարայատակին վրայ երկրպագութիւն ըրին , ու Տէրը օրհնեցին , Ըոր բարի է , Ըոր անոր ողորմութիւնը յաւիտեան է ։
4 Եւ թագաւորը ու բոլոր ժողովուրդը Տէրոջը առջեւը զոհեր կը
5 մատուցանէին ։ Եւ Սողոմոն թագաւորը քսանուերկու հազար արջառ , ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ . այսպէս թա-
6 գաւորը ու բոլոր ժողովուրդը Աստուծոյ տանը նաւակատիքը ըրին ։
Եւ քահանաները իրենց պահպանութեանը համեմատ կը կայնէին , ու Ղեւտացիները՝ Տէրոջը երգոց նուագարաններովը՝ որոնք Դաւիթ թագաւորը շիներ էր Տէրը գովելու համար , որ անոր ողորմութիւնը յաւիտեան է , *երբոր Դաւիթ անոնց ձեռքովը Տէրը օրհնեց" . ու Ըքահանաները անոնց դիմացը փողերը կը հնչեցնէին . ու բոլոր Իսրայէլը ոտքի վրայ կայներ էր ։
7 Եւ Սողոմոն Տէրոջը տանը առջեւը եղող գաւիթին մէջտեղը սրբեց՝ . քանզի ողջակէզները ու խաղաղութեան զոհերուն ճարպերը հոն մատուց . որովհետեւ Սողոմոնին շինած պղնձէ սեղանը՝ ողջակէզները , ու հացի ընծաները ու ճարպերը չէր կրնար պարունակել ։
8 Եւ անատենը Սողոմոն ու անոր հետ բոլոր Իսրայէլը՝ խիստ մեծ ժողով մը՝ Եմաթի մուտքէն մինչև Եգիպտոսի հեղեղատը՝ եօթը օր
9 տօն ըրին ։ Եւ ութերորդ օրը մեծ ժողովք ըրին . քանզի եօթը օր սեղանին նաւակատիքը՝ ու եօթը օր
10 տօնը կատարեցին ։ Ու Ըեօթներորդ ամսուն քսանուիրեքերորդ օրը՝ ժողովուրդը արձակեց , որ-նէ իրենց վրանները ՝երթն , զուարթ սրտով մը ուրախանալով ան բարիքներուն համար՝ որ Տէրը Դաւիթին , Սողոմոնին , ու իր Իսրայէլ ժողովուրդին ըրեր էր ։
11 Եւ Սողոմոն Տէրոջը տունը՝ ու թագաւորական տունը լմընցուց . ու Տէրոջը տանը մէջ , և իր տանը մէջ՝ Սողոմոնին սիրտը ինչ որ շինել ուզեց , ամէնն ալ յաջողեցաւ ։
12 Ու Տէրը գիշերով Սողոմոնին երեւցաւ , և անոր ըսաւ . Քու աղօթքդ լսեցի , ու աս տեղը ընտրեցի , որ ինծի զոհի տուն ըլլայ ։
13 Ըթէ որ երկինքը գոցեմ՝ որ անձրեւ չըլլայ , և թէ որ մարախին պատուիրեմ՝ որ երկիրը ուտէ , կամ թէ որ իմ ժողովուրդիս մէջը
14 ժանտախտ խրկեմ . Ու իմ անունովս կոչուած ժողովուրդս՝ Ըթէ որ խոնարհին , ու աղօթք ընեն , ու իմ երեսս խնդրեն , և իրենց չար ճամբաներէն դառնան , Ես ալ երկինքէն պիտի լսեմ , ու անոնց մեղքը ներեմ , ու անոնց երկիրը
15 պիտի բժշկեմ ։ Հիմա Ըաս տեղս ՝նայելով աղօթքին՝ իմ աչքերս բաց՝ ու ականջներս մտիկ
16 ընող պիտի ըլլան ։ Եւ հիմա Ըաս տունը ընտրեցի ու սրբեցի , որ իմ անունս յաւիտեան հոն ըլլայ . ու իմ

Ե Գե · ը · 40 ։

Ա Գ թագ · ը · 3 ։ Գե · ը · 6 ։

ա՛չքերս ու սիրտս ամէն ատեն հոն
17 պիտի ըլլայ։ Ու թէ որ դուն իմ առջեւս՝ քու հօրդ Դաւիթին քա-
լածին պէս քալես, ու բոլոր ինչ պատուիրածներս ընես, և իմ կա-
նոններս ու դատաստաններս պա-
18 հես, ես տեսնեմ քու թագաւորու-
թեանդ աթոռը պիտի հաստա-
տեմ, ինչպէս որ քու հօրդ Դաւի-
թին հետ ուխտ ըրի՝ ըսելով.
Քեզմէ Իսրայէլի վրայ իշխող
19 մարդ պակաս պիտի չըլլայ։ Բայց
թէ որ դառնաք, ու ձեր առջեւը
դրած կանոններս ու պատուիրանք-
ները թողուք, ու երթաք ուրիշ
աստուածներու ծառայութիւն
ընէք, և անոնց երկրպագութիւն
20 ընէք, Ես տեսնեմ ձեզ արմատի
պիտի խլեմ ան երկրին վրայէն՝ որն
որ ձեզի տուի. և ա՛ս տունը՝ որ
իմ անուանս համար սրբեցի, ե-
րեսէս պիտի ձգեմ, ու զանիկայ
բոլոր ազգաց մէջ առակ ու կատակ
21 պիտի ընեմ։ Ես բարձր տա-
նը համար՝ ամէն քովէն անցնողը
պիտի զարմանայ, ու պիտի ըսէ.
22 Տէրը ինչո՞ւ համար ա՛ս երկրիս ու
ա՛ս տանս այսպէս ըրաւ։ Ես պիտի
ըսեն. Վասն զի իրենց Հայրերուն
Տէր Աստուածը թողուցին, որ
զանոնք Եգիպտոսի երկրէն հաներ
էր, ու ուրիշ աստուածներու չա-
րեցան, և անոնց երկրպագութիւն
ու ծառայութիւն ըրին. ա՛ս պատ-
ճառով անոնց վրայ ա՛ս բոլոր չա-
րիքները բերաւ։

Գ Լ · Ը

1 Սողոմոնին շինութիւնները։ 7 Իսրայէլա-
ցւոց մէջ ողջ թողուած հեթանոսները՝ Սո-
ղոմոն հարկատու ծառաներ կ'ընէ, բայց Իս-
րայէլացիները իշխաններ կ'ընէ։ 11 Փարաւո-
նին աղջիկը իր տունը կը փոխադրուի։ 12
Սողոմոնին տարեկան հանդիսաւոր զոհերը։
14 Սողոմոն՝ քահանաները ու Ղեւտացիները
իրենց պաշտօններուն վրայ կը կեցնէ։ 17
Նաւերը Ոփիրէն ոսկի կը բերեն։

1 Ու Սողոմոն Տէրոջը տունը ու իր
տունը քսան տարուան մէջ շի-
2 նելէնետքը, Սողոմոն ան քաղաք-
ները ալ շինեց, որոնք Քիրամ
Սողոմոնին տուեր էր, ու հոն Իս-
3 րայէլի որդիները բնակեցուց։ Ու
Սողոմոն Սուբայի Եմաթը դնաց,
4 ու անոր տիրեց։ Ու անապատին
մէջ Թադմորը շինեց, ու ան բոլոր
5 շտեմարանի քաղաքները՝ որոնք Ե-
մաթի Էլէէն մէջ շինեց. Ու վերի
Բեթորոնը և վարի Բեթորոնը՝
պարիսպներով, դռներով ու նի-
գերով ամրացած քաղաքներ շինեց.
6 Նաև Բահաղեթը, ու Սողոմոնին
բոլոր շտեմարանի քաղաքները, ու
կառքերուն բոլոր քաղաքները, ու

ձիաւորներուն քաղաքները, և ան
բոլոր շէնքերը՝ որ Սողոմոն ուզեց
շինել Երուսաղէմի մէջ, Լիբանանի
մէջ, ու իր տէրութեանը բոլոր
երկրին մէջ։
7 Ան բոլոր ժողովուրդները՝ որ
Քետացիներէն, Ամորհացիներէն,
Փերեզացիներէն, Խեւացիներէն ու
Ցեբուսացիներէն մնացեր էին, և
8 Իսրայէլի որդիքը զանոնք բոլո-
րովին կորնչուցած չէին, Սողոմոն
զանոնք հարկատու ըրաւ մինչև
9 ցայսօր։ Ու Սողոմոն իր գործքին
համար՝ Իսրայէլի որդիներէն ծա-
ռաներ չըրաւ. հապա անոնք պա-
տերազմական մարդիկներ, ու իր
զօրավարներուն իշխանները, և իր
կառքերուն ու ձիաւորներուն վե-
10 րակացուներն էին։ Ու Սողոմոն
թագաւորին գլխաւոր իշխանները
երկու հարիւր յիսուն էին, որոնք ժողովուրդին վրայ կ'իշխէին։
11 Ու Սողոմոն՝ Փարաւոնին աղջի-
կը Դաւիթի քաղաքէն՝ անոր հա-
մար շինած տունը հանեց. վասն զի
ըսաւ. Իմ կինիկս Իսրայէլի թագա-
ւորին՝ Դաւիթին տունը չնստի.
ինչու որ Տէրոջը տապանակին մը-
տած տեղուանքը սուրբ են։
12 Ան ատենը Սողոմոն սրահին առ-
ջեւը շինած Տէրոջը սեղանին վրայ՝
13 ողջակէզներ մատուց Տէրոջը։ Ու
Մովսէսին պատուիրածին համե-
մատ Շաբաթներու, ամսագլուխներու,
ու Հանդիսաւոր տոներուն մէջ՝
տարին իրեք անգամ՝ այսինքն բա-
ղարջակերաց տոնին, շաբաթներու
տոնին, ու տաղաւարահարաց տո-
14 նին կը մատուցանէր։ Ու իր հօրը
Դաւիթին կանոնովը՝ քահանա-
ներուն դասերը իրենց պաշտամանը
վրայ, ու Ղեւտացիները իրենց
պահպանութեանցը վրայ՝ ամէն օ-
րուան որոշուածին պէս՝ քահանա-
ներուն առջեւը օրհնելու ու սպա-
սաւորութիւն ընելու համար, և
դռնապաններն ալ իրենց դաս-
րուն կարգովը՝ ամէն մէկ դուռը
դրաւ. քանզի այսպէս էր Աստու-
ծոյ մարդուն Դաւիթին հրամանը։
15 Ու քահանաներուն ու Ղեւտացինե-
րուն համար, և դանձարաններուն
համար՝ ամէն բանի մէջ թագաւո-
16 րին հրամանէն դուրս չելան։ Ու
Սողոմոնին ամէն գործքը՝ Տէրոջը
տանը հիմը դրուած օրէն՝ մինչև
անոր լմընալը՝ պատրաստուած
էր։ Այսպէս կատարուեցաւ Տէ-
րոջը տունը։

Ն · Ք · ԳԲ · 1004

յԳ Թագ. Թ. 4, ՃԻ։

Ն ԳԼ · Ը · 16։

Ը Ղ Ե · Իզ · 14, 33։ Բ Օր · Իր · 15, 36, 37։

* Եբր · զանոնք

† Եբր · անոնց

Բ Օր · Իթ · 24։ Երեմ. Իր · 8, 9։

Ն · Ք · ԳԲ · 992

‡ Գ Թագ. Թ. 20, ՃԻ։

Ա Գ Թագ. Թ. 23։

Բ Տե՛ս Գ Թագ. Թ. 1, 6, 8։ Թ. 24։

Ղ Եզ. Իթ. 38։ Թուոց. Իբ. 3, 9, 11, 26։ Իթ. 1, ՃԻ։

Ե Եզ. Իգ. 14։ Բ Օր. Ժզ. 16։

Ը Ա Մնաց. Իգ. 1։

Ը Ա Մնաց. Իե. 1։

Ա Մնաց. Թ. 17։ Իզ. 1։

992

Ա Գ Թագ. Թ. 10, ՃԻ։

Բ Գ Թագ. Թ. 17, ՃԻ։

‡ Կ՚ըսէ՝ կարգաւորած

17 Ան առնեը Սողոմոն եղովմի երկրին մէջ՝ ծովեզերքը եղող Էգաոիոնգաբերը ու Ելաթը դնաց ։
18 Եւ Ի՛քիրամ՝ իր ծառաներուն ձեռքովը նաւեր՝ ու ծովու ճարպետ Ի՛ր հմուտ եղող ծառաներ խրկեց անոր . ու Սողոմոնին ծառաներուն հետ Ոփիր գացին , և անկէ չորս հարիւր յիսուն տաղանդ ոսկի առին , ու Սողոմոն Թագաւորին բերին ։

Գ Լ . Թ

1 Սաբայի Թագուհին՝ Սողոմոնին խմաստութեանը վրայ կը զմայլի ։ 13 Սողոմոնին ոսկին . 15 անոր վահանները . 17 անոր փղոսկրեայ աթոռը . 20 անոր ամանները . 23 անոր բերուած բնծաները . 25 անոր կառքերը ու ձիերը . 29 անոր Թագաւորութեանը օրերը ու մահը ։

Ե՛ւ Սաբայի Թագուհին Սողոմոնին համբաւը լսեց , ու Սողոմոնը խրթին հարցմունքներով փորձելու համար Երուսաղէմ եկաւ խիստ շատ զօրքով , և խունկեր , ու շատ ոսկի , և պատուական քարեր բեռցած ուղտերով . և Սողոմոնին քովը գնաց , ու բոլոր իր սրտին մէջը եղածին վրայով անոր հետ խօսեցաւ ։ 2 Եւ Սողոմոն անոր բոլոր հարցմունքները բացատրեց . ու բնաւ անանկ մէկ խօսք մը չկար , որ Սողոմոն չհասկընայ ու չբացատրէ անոր ։ 3 Եւ Սաբայի Թագուհին՝ Սողոմոնին իմաստութիւնը , ու անոր շինած տունը , 4 եւ անոր սեղանին կերակուրները , ու անոր ծառաներուն * բնակարանները , և սպասաւորներուն կայնուածքը , ու անոնց հագուստները , և անոր մատուռակները , ու անոնց հագուստները , ու Ցերոջը տունը ելլելու սանդուխը տեսնելով , խելքը գլխէն գնաց . 5 Եւ Թագաւորին բսաւ . Քու վիճակիդ ու իմաստութեանդ վրայով իմ երկրիս մէջ լսած խօսքերս ճշմարիտ են եղեր . 6 բայց ես ան խօսքերուն չհաւատայի , մինչև որ ես եկայ , ու իմ աչքերովս տեսայ . և ահա քու իմաստութեանդ շատութեանը կէսը ինծի չպատմուեցաւ . դուն զերազանց ես քան համբաւէդ՝ 7 որ ես լսեցի ։ Երանի քու մարդիկներուդ՝ ու երանի ասոնք քու ծառաներուդ՝ որոնք միշտ քու առջեւդ կայնելով քու իմաստութիւնդ կը 8 լսեն ։ Քու Եհովայ Աստուածդ օրհնեալ ըլլայ , որ քեզի հաճեցաւ , ու քեզ իր աթոռին վրայ դրաւ , որ քու Ցերը Աստուածդդ համար թագաւոր ըլլաս . քու Աստուածդ՝ Իսրայէլը սիրելուն համար՝ ու զանիկայ յաւիտեան հաստատելու համար , քեզ անոնց վրայ թագաւոր դրաւ , որ իրաւունք ու արդարութիւն գործադրես ։ 9 Թիւն ընես ։ Եւ Թագաւորին՝ հարիւր քսան տաղանդ ոսկի , ու խիստ շատ խունկեր , և պատուական քարեր տուաւ . ու Սաբայի Թագուհիին՝ Սողոմոն Թագաւորին տուած խունկերուն պէս չկար ։ 10 Եւ Քիրամին ծառաները ու Սողոմոնին ծառաները՝ Ոփիրէն ոսկի կը բերէին , Էալմուկ փայտեր ու պատուական քարեր ալ 11 բերին ։ Եւ Թագաւորը էալմուկ փայտէն՝ Ցերոջը տանը ու Թագաւորական տանը աստիճաններ , ու երգեցողներուն համար՝ քնարներ ու տաւիղներ շինեց . և անոնց պէս՝ անկէ առաջ Ցուդայի երկրին մէջը չէր երեւցած ։ 12 Ու Սողոմոն Թագաւորը Սաբայի Թագուհիին բոլոր ուզած ու խնդրած բաները տուաւ , ան բաներէն 'ի զատ՝ որ անիկայ Թագաւորին բերաւ . և անիկայ իր ծառաներուն հետ դարձաւ իր երկիրը գնաց ։ 13 Ու մէկ տարուան մէջ Սողոմոնին եկած ոսկիին կշիռը՝ վեց հարիւր վաթսունուվեց տաղանդ ոսկի էր , 14 Առուտուր բնողներուն , ու վաճառականներուն , և Արաբացւոց բոլոր Թագաւորներուն , ու երկրին նախարարներուն՝ Սողոմոնին բերած ոսկիէն ու արծաթէն 'ի զատ ։ 15 Եւ Սողոմոն Թագաւորը կռածոյ ոսկիէ երկու հարիւր վահան շինեց . մէկ վահանին համար վեց հարիւր հատ կռածոյ ոսկի գնաց ։ 16 Կռածոյ ոսկիէ իրեք հարիւր ասպար ալ շինեց . մէկ ասպարին իրեք հարիւր հատ ոսկի գնաց . ու Թագաւորը Լիբանանի անտառին տունը դրաւ զանոնք ։ 17 Եւ Թագաւորը փղոսկրէ մեծ աթոռ մը շինեց , ու զանիկայ մաքուր ոսկիով պատեց ։ 18 Ու աթոռը վեց աստիճան , ու ոսկիէ պատուանդան մը ունէր , որոնք աթոռին կից էին . և նստելու տեղը մէկ կողմէն ու մէկալ կողմէն չէնարաններ ունէր , ու չէնարաններուն քովը երկու առիւծներ կը կայնէին ։ 19 Եւ հոն վեց աստիճաններուն վրայ՝ մէկ կողմէն ու մէկալ կողմէն տասներկու առիւծներ կը կայնէին . բնաւ մէկ Թագաւորութեան մէջ ասանկ բան մը շինուած չէր ։ 20 Ու Սողոմոն Թագաւորին բոլոր խմելիքի ամանները ոսկի էին . և Լիբանանի անտառին տունը բոլոր ամանները զուտ ոսկի էին . արծաթ չկար . ինչ որ անիկայ Սողոմոնին օրերը բանի մը տեղ չէր սեպուեր ։ 21 Քանզի Թագաւորին նաւերը

Ն . ք . գ . 992 — Իսր 992

Ե գ թագ . 26 ։ Ա ր Օր . ր . 8 ։ գ թագ . ժգ . 22 ։ Ե գ թագ . թ . 27 ։ գ Ա . թ . 10 ։ 13 ։

Իսր 992 — գ թագ . ժ . 1 ։ ԵՐ Մատ . ժբ . 42 ։ Ղ ա . ժա . 31 ։

* կ՛ ժողովը ։

Ն . ք . գ . 992 — Իսր 992

Բ գ Ա . ր . 18 ։ Բ գ թագ . ժ . 11 ։

Ն · Ք · ԳԲ · Իսր 992

ւերը քիրամին ծառաներուն հետ թարսիս կ'երթային . թարսիսի նաւերը իրեք տարին անգամ մը՝ ոսկիով , արծաթով , փղոսկրով , կապիկներով ու սիրամարգներով բեռնաւորուած կու գային ։

22 Եւ Սողոմոն թագաւորը հարբուտութեան ու իմաստութեան կողմանէ՝ երկրիս բոլոր թագաւորներէն 23 րէն մեծ եղաւ ։ Ու երկրի բոլոր թագաւորները կը փափաքէին Սողոմոնին երեսը դէմ առնել , և անոր իմաստութիւնը լսելու , որն որ Աստուած անոր սրտին մէջը դրեր էր ։ 24 Ու անոնց ամէնը տարուէ տարի իրենց ընծաները կը բերէին , սպիտակ արծաթէ ամաններ , ոսկիէ ամաններ , հանդերձներ , զէնքեր , խունկեր , ձիեր ու ջորիներ ։

Բ Գ Թագ · գ · 26 ։ Ժ · 26 ։ Գլ · ա · 14 ։

25 Եւ Սողոմոն Բ ձիերու ու կառքերու համար չորս հազար ախոռներ , ու տասներկու հազար ձիաւոր , ու զանոնք կառքերու քաղաքներուն մէջը ու Երուսաղէմի մէջ՝ թագաւորին քովը տեղաւորեց ։ Ու Ե Եփրատ գետէն մինչև Փղշտացւոց երկիրը՝ ու մինչև Եգիպտոսի սահմանը՝ Հրոլոր թագաւորներուն վրայ կ'իշխէր ։ Ե Եւ թագաւորը Երուսաղէմի մէջ՝ արծաթը քարերու պէս հասարակ ըրաւ , ու եղևնափայտը շատութենէն՝ դաշտի մէջ եղող մոլաթզենիներուն պէս ըրաւ ։ Ը Եւ Սողոմոնին համար՝ Եգիպտոսէն ու ամէն երկիրներէն ձիեր կը հանէին ։

Ի Ն · ժե · 18 ։ Սաղ · Ծբ · 8 ։

Ղ Թագ · դ · 21 ։ Ե Թագ · ժ · 27 ։ Գլ · ա · 15 ։

Ը Գ Թագ · ժ · 28 ։ Գլ · ա · 16 ։

29 Ե Եւ Սողոմոնին առաջին ու վերջին պատմութեանը մնացորդը՝ Նաթան մարգարէին գրքին մէջը , ու Ե Սիլովնացի Աքիային մարգարէութեանը մէջ , և Ի Ադդով տեսանողին՝ Նաբատեան Ցերոբովամին վրայով Ջ տեսիլքներուն մէջը

Ի Գ Թագ · ժա · 41 ։

Ե Գ Թագ · ժա · 29 ։ Ի Գլ · Ժր · 15 ։ ժգ · 22 ։

30 գրուած են ։ Ա Ու Սողոմոն բոլոր Իսրայէլին վրայ՝ Երուսաղէմի մէջ քառասուն տարի թագաւորութիւն

Ա Գ Թագ · ժա · 42 , 43 ։

975

31 բրաւ ։ Եւ Սողոմոն իր հայրերուն հետ քնացաւ , ու զանիկայ իր Հօրը Դաւիթին քաղաքին մէջը թաղեցին . և անոր տեղը՝ անոր որդին Ռոբովամ թագաւոր եղաւ ։

Գլ · ժ

1 Իսրայէլացիք Ռոբովամ թագաւոր ընելու համար Սիւքեմի մէջ ժողվուելով՝ Ցերոբովամին միջոցով անկէ կը խնդրեն որ իրենց վրայ դրուած լուծը թեթևցընէ ։ 6 Ռոբովամ ծերերուն խրատը մերժելով՝ իր տնդամ կից պատանիներուն տուած խորհուրդին համաձայնած՝ խստութեամբ կը պատասխանէ ա-նոնց ։ 16 Ցասը ցեղերը կ'ապստամբին ու Ադորամ կը մեռցընեն . ասոր վրայ Ռոբովամ կը փախչի ։

Ա Գ Թագ · ԺԲ · 1 , ԼԱ ։

1 Ա Ռոբովամ Սիւքեմ գնաց . վասն զի բոլոր Իսրայէլը զանիկայ թագաւոր ընելու համար Սիւքեմ էր եկեր ։ 2 Եւ երբ Նաբատեան Ցերոբովամը՝ որ Բ Սողոմոն թագաւորին երեսէն փախած՝ Եգիպտոս կը բնակէր , ա Բ-ը լսեցին 3 Եգիպտոսէն դարձաւ ։ Եւ Ղ-ԲԴ խրկելով՝ զանիկայ կանչեցին . ու Ցերոբովամը և բոլոր Իսրայէլը եկան , ու Ռոբովամին հետ խօսեցան 4 ու ըսին . Քու հայրդ մեր վրայ ծանր լուծ մը դրաւ . ու հիմա քու հօրդ խիստ ծառայութիւնը , ու մեր վրայ դրած ծանր լուծը թեթևցուր , ու քեզի ծառայութիւն 5 ընենք ։ Եւ անիկայ բսաւ անոնց . Իրեք օրէն եկէք ինծի դարձեք . ու ժողովուրդը գնաց ։

6 Եւ Ռոբովամ թագաւորը խորհուրդ հարցուց ան ծերերուն՝ որ իր հօրը Սողոմոնին առջևը կը կայնէին երբոր անիկայ ողջ էր , ու բսաւ . Դուք ինծի ի՞նչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պատասխան տամ ։ 7 Եւ անոր խօսեցան ու ըսին . Թէ որ աս ժողովուրդին հետ քաղցրութեամբ վարուիս , ու անոնց հաճելի ըլլաս , ու անոնց բարի խօսքեր զրուցես , ան ատենը անոնք միշտ քեզի ծառայ կ'ըլլան ։ 8 Բայց անիկայ ծերերուն իրեն տուած խորհուրդը մերժեց , ու իր առջևը կայնող ա իր հետը մեծցած երիտասարդներուն խորհուրդ հարցուց . Եւ անոնց ըսաւ . Դուք ի՞նչ խորհուրդ կու տաք , որ աս ժողովուրդին պատասխան տամ . քանզի անոնք ինծի խօսեցան , ու ըսին . Քու հօրդ մեր վրայ դրած լուծը 10 թեթևցուր ։ Ու անոր հետ մեծցած երիտասարդները անոր խօսեցան ու ըսին . Քու հայրդ մեր լուծը ծանրացուց , ու դուն մեր վրայէն թեթևցուր՝ բսող ժողովուրդին այսպէս խօսիս , ու անոնց այսպէս ըսես . Իմ պզտիկ մատս՝ 11 իմ հօրս մէջքէն հաստ է . Եւ հիմա իմ հայրս ձեր վրայ ծանր լուծ դրեր է , բայց ես ձեր լուծը աւելի պիտի ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես չէզ կարիճներով պիտի խրատեմ ։

12 Եւ Ցերոբովամ ու բոլոր ժողովուրդը երրորդ օրը Ռոբովամին եկան , ինչպէս որ թագաւորը բսեր էր թէ՝ Երրորդ օրը ինծի դարձէք ։ 13 Ու թագաւորը անոնց խստութեամբ պատասխան տուաւ . և Ռոբովամ թագաւորը ծերերուն 14 խորհուրդը մերժելով , երիտասարդներուն խորհուրդին պէս անոնց հետ խօսեցաւ , ու բսաւ . Իմ հայրս ձեր լուծը ծանրացուցեր է , բայց ես զանիկայ աւելի պիտի

Ն · Ք · ԳԲ · Իսր 975

Բ Գ Թագ · ժա · 40 ։

ծանրացընեմ . իմ հայրս ձեզ խարազաններով խրատեր է , բայց ես յիւ կարիճներով ղեխ էր-
15 ՚ի : Եւ Թագաւորը Ժողովուրդին խօսեր մտիկ չըրաւ . ՚վասն զի աս բանը Աստուածմէ եղաւ , որ Տէրը ՚Սիլօնացի Աքիային ձեռքովը՝ Նաբատեան Ցերոբովամին ըսած խօսքը հաստատէ :
16 Ու երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ , որ Թագաւորը իրենց մտիկ չըրաւ , ժողովուրդն ալ Թագաւորին պատասխան տուին ու ըսին . Մենք Դաւիթին քովը ի՞նչ բաժին ունինք . ու Եսսէի որդւոյն քովը ժառանգութիւն չունինք . ով Իսրայէլ՝ Թող ամէն մարդ իր վրանը գնայ . ով Դաւիթ՝ հիմա դուն քու տունդ հոգա . ու բոլոր Իսրայէլը իրենց վրանները գացին ,
17 Բայց Ցուդայի քաղաքներուն մէջ բնակող Իսրայէլի որդւոցը վրայ՝
18 Ռոբովամ Թագաւոր եղաւ : Եւ Ռոբովամ Թագաւորը երբոր Հարկերուն վրայ եղող Ադորամը խրկեց , Իսրայէլի որդիքը զանիկայ քարերով քարկոծեցին , ու մեռաւ : Եւ Ռոբովամ Թագաւորը արտորալով կառքը հեծաւ , որ
19 Երուսաղէմ փախչի : Եւ Իսրայէլը Դաւիթի տունէն ապըստամբեցաւ մինչև աս օրս :

ԳԼ . ԺԲ

1 Ռոբովամ զօրք կը ժողվէ Իսրայէլը հնազանդեցընելու համար , բայց Սեմայիայէն կ'արգիլուի : 5 Իր Թագաւորութիւնը կը զօրացընէ պարիսպներ շինելով ու պաշարներ ժողվելով : 13 Քահանաները ու Ղեւտացիները , և անոնք որ Աստուծմէ կը վախնային՝ Ցերոբովամէն մերժուելով , կ'երթան Ցուդային Թագաւորութիւնը կը զօրացընեն : 18 Ռոբովամին կիներն ու որդիները :

1 Ու Ռոբովամ Երուսաղէմ եկաւ , ու Ցուդայի ու Բենիամինի տունէն հարիւր ութսուն հազար ընտիր պատերազմողներ ժողվեց , որ Իսրայէլի հետ պատերազմ բնեն , ու Թագաւորութիւնը Ռո-
2 բովամին դարձընեն : Բայց ՚Աստուծոյ մարդուն Սեմայիային՝ Տէ-
3 րոջը խօսքը եղաւ՝ ըսելով . Սողոմոնի որդւոյն Ցուդայի Ռոբովամ Թագաւորին , ու Ցուդայի ու Բենիամինի մէջ եղող բոլոր Իսրայէ-
4 լացիներուն խօսիս , ու ըսես . Տէրը այսպես կ'ըսէ . Մի ելլէք , ու ձեր եղբայրներուն հետ մի՛ պատերազմիք . ամէն մարդ Թող իր տունը դառնայ . վասն զի աս բանը ինծմէ եղաւ : Եւ Տէրոջը խօսքը մտիկ ըրին , ու Ցերոբովամին վրայ երթալէն ետ կեցան :
5 Եւ Ռոբովամ Երուսաղէմ բնակեցաւ . ու Ցուդայի մէջ պարսպա-
6 պաւոր քաղաքներ շինեց : Բեթղեհեմ , Ետամ , Թեկուէն ,
7 Լեհէմ , Ետամ , Թեկուէն , Բեթսուրը , Սոքովը , Ոդողոմ , Գեթը ,
8 Մարեսան , Զիփը , Ադորայիմը ,
9 Լաքիսը , Ազեկան , Սարաան , Այեղոնը ու Քերբոնը շինեց , որոնք Ցուդայի ու Բենիամինի մէջ պարսպա-
11 պաւոր քաղաքներ էին : Եւ պարիսպները ամրացուց , ու անոնց մէջ զօրապետներ , և կերակուրի , ու ձէթի , ու գինիի շտեմարաններ ,
12 Ու ամէն մէկ քաղաքին մէջ վահաններ ու նիզակներ դրաւ . և զանոնք խիստ շատ ամրացուց . ու Ցուդան ու Բենիամինը անոր հպատակ էին :
13 Եւ բոլոր Իսրայէլի մէջ եղող քահանաները ու Ղեւտացիները՝ իրենց բոլոր սահմաններէն անոր քո-
14 վը ժողվուեցան . (Քանզի Ղեւտացիք ՚իրենց արուարձանները ու կալուածքները Թողուցին , և Ցուդայի Երուսաղէմ գացին . վասն զի Ցերոբովամ ու անոր որդիքը՝ զանոնք Ձէրոջը քահանայութենէն մերժեցին .
15 յուդենէն մերժեցին . Եւ անիկայ բարձր տեղերուն համար , ու Դիւացի համար , ու իր շինած Ուրթերուն համար Իրեն քուրմեր
16 դրաւ :) Եւ անոնց ետևէն՝ Իսրայէլի բոլոր ցեղերէն՝ Իսրայէլի Ձէր Աստուածը ՚սրտանց փնտռողները՚ իրենց Հայերուն Ձէր Աստուծոյն զոհ ընելու համար Երու-
17 սաղէմ կ'երթային : Ու Ցուդայի Թագաւորութիւնը զօրացուցին , և Սողոմոնին որդին Ռոբովամը իրեք տարուան մէջ ուժովցուցին . քանզի իրեք տարի Դաւիթին ու Սողոմոնին ճամբովը քալեցին :
18 Եւ Ռոբովամ՝ Դաւիթի որդւոյն Ցերիմովթին աղջիկը Մայելէթը իրեն կնիկ առաւ . Նաև Եսսէի որդւոյն Եղիաբին աղջիկը Աբիքէլը .
19 Ու անիկայ որդիներ ծնաւ անոր . Ցեուսը , Սամարիան ու Զահամը :
20 Եւ անկէ ետքը Աբիսողոմին աղջիկը ՚Մաաքան առաւ , որ անոր ծնաւ Աբիան , Եթթին , Զիզան ու Սա-
21 ղոմիթը : Եւ Ռոբովամ՝ Աբիսողոմին աղջիկը Մաաքան իր բոլոր կնիկներէն ու հարճերէն աւելի կը սիրէր . (վասն զի անիկայ տասնուութը կնիկ՝ ու վաթսուն հարճ առեր էր . և քսանուութը տղայ ու
22 վաթսուն աղջիկ ծնաւ .) Եւ Ռոբովամ՝ Մաաքայի որդին Աբիան գլուխ դրաւ , որ՝ իր եղբայրներուն վրայ իշխան . քանզի զանիկայ
23 Թագաւոր ընելու վրայ էր : Ու խելացութիւն ընելով՝ իր բոլոր տղաքները՝ բոլոր Ցուդայի ու Բենիամինի գաւառներուն մէջ՝ բոլոր

Ն . ք . գՓ . Իրր 975

՚ա Թագ . բ . 25 , գ Թագ . ժբ . 15 , 24 :

՚գ Թագ . ժա . 29 :

Ն . ք . գՓ . Իրր 975

974

՚ Թաւ . լե . 2 :

՚գ Թագ . ժբ . 28 :

Ղ գ Թագ . ժբ . 19 :

Ղ Գէս . ժէ . 7 ; ա Կոր . ժ . 20 :

Ղ գ Թագ . ժբ . 28 , ժգ . 9 ; Ովս . ժգ . 2 :

Ե Տես գւ . ժե . 9 , լ . 11 , 18 :

՚ Եբր . փընտռելու համար իրենց սիրտը տուողները

Ա գ Թագ . ժբ . 21 , ՚՚ :

Բ Գէ . ժբ . 1 :

Բ Գէ . ժբ . 15 :

՚գ Թագ . ժե . 2 ; Ի՛ գւ . ժգ . 2 ՚՚ Եբր՝ Միքայիա՝ Ուրիէլին աղջիկը

Ե Տես բ Օր . ԻԵ . 15 , 16 , 17 :

պարսպաւոր քաղաքներուն մէջ
* տեղաւորեց, և անոնց առատ ապ-
րուստ կու տար. ու շատ կնիկներ
փնտռեց։

ԳԼ · ԺԲ

1 Ռոբովամ՝ Տէրը Թող տալուն համար՝ Սիսա-
կին միջոցովը կը պատժուի։ 5 Ռոբովամ ու
իշխանները՝ Սեմայիային քարոզութեամբը
դարձի գալով, կործանումէ ազատ կը մնան,
բայց կը կողոպտուին։ 13 Ռոբովամին թա-
գաւորութեանը օրերը ու մահը։

1 Ռ– Երբոր Ռոբովամին թագաւո-
րութիւնը հաստատուեցաւ, ու
ինքը զօրացաւ, Բ Տէրոջը օրէնքը
թողուց. ու անոր հետ բոլոր Իս-
րայէլն ալ։
2 Բ Եւ Ռոբովամ թագաւորին հին-
գերորդ տարին՝ Եգիպտոսի Սիսակ
թագաւորը Երուսաղէմի վրայ ե-
լաւ. (քանզի Տէրոջը դէմ ապրս-
3 տամբութիւն բերեր էին.) Ռ–Ի–յ
հազար երկու հարիւր կառքով, ու
վաթսուն հազար ձիաւորով Ե– .
ու անոր հետ Եգիպտոսէն եկած
ժողովուրդը անթիւ էր, –յ–Ի–ն
Ք Լիբեացիք, † Սովկիացիք, ու Ե-
4 թէովպացիք. Եւ Գուդային պա-
րսպապաւոր քաղաքները առաւ, ու
5 մինչև Երուսաղէմ եկաւ։ Եւ Ի Սե-
մայիա մարգարէն եկաւ Ռոբովամին
ու Գուդայի իշխաններուն՝ որոնք
Սիսակին երեսէն Երուսաղէմ ժող-
վուեր էին, ու անոնց ըսաւ. Տէրը
այսպէս կ'ըսէ. Ղ–ուք զիս թողու-
ցիք, ու ես ալ ձեզ Սիսակին ձեռ-
6 քը կը թողում։ Եւ Իսրայէլի
իշխանները ու թագաւորը Ի խոնար-
հեցան՝ ու ըսին. Ճ Տէրը արդար է։
7 Ու երբոր Տէրը անոնց խոնարհիլը
տեսաւ, Բ Տէրոջը խօսքը Սեմայիա-
յին եղաւ՝ ըսելով. Անոնք խոնար-
հեցան, պիտի չկորսընցնեմ զա-
նոնք. Հապա անոնց քիչ մը ազա-
տութիւն պիտի տամ. ու իմ
բարկութիւնս Սիսակին ձեռքովը
Երուսաղէմի վրայ պիտի չթափի.
8 Սակայն Ա անոր ծառաները պիտի
ըլլան, որ Իմ ծառայութեանս՝
ու երկրի թագաւորներուն ծառա-
յութեանը Պ–բ–ե–Ռ–ն պիտ-
9 նան։ Ա Ու Եգիպտոսի Սիսակ թա-
գաւորը Երուսաղէմի վրայ ելաւ, և
Տէրոջը տանը գանձերը՝ ու թագա-
ւորին տանը գանձերը առաւ. ա-
մէնն ալ առաւ. Սողոմոնին Ի շինած
10 ոսկիէ ասպարներն ալ առաւ։ Եւ
Ռոբովամ թագաւորը անոնց տեղը
պղնձէ ասպարներ շինեց, ու զա-
նոնք՝ թագաւորական տանը դուռը
պահպանութիւն ընող Ի սուրհան-
դակաց ոստիկաններուն ձեռքը
11 յանձնեց։ Ու երբոր թագաւորը
Տէրոջը տունը կ'երթար, սուրհան-

դակները կու գային զանոնք կը
կրէին, ու Ի–ե–ը զանոնք սուրհան-
դակներուն խուցը կը դարձընէին։
12 Ուստի անոր խոնարհելուն համար
Տէրոջը բարկութիւնը անկէ դար-
ձաւ, ու Ը–Ի–յ բոլորովին չկորսըն-
ցուց. Նաև Գուդայի մէջ աղէկ
բաներ կային։
13 Եւ Ռոբովամ թագաւորը Երու-
սաղէմի մէջ զօրացաւ, ու թագա-
ւորութիւն բրաւ. ու Ի երբոր Ռո-
բովամ թագաւորեց, քառասունու-
մէկ տարեկան էր, ու տասնուեօթը
տարի թագաւորութիւն բրաւ Ե-
րուսաղէմի մէջ, –յ–Ի–ն Ն ան քա-
ղաքին մէջ՝ որն որ Տէրը Իսրայէլի
ամէն ցեղերէն ընտրեց՝ իր անունը
հոն դնելու համար. ու անոր մայրը
Ամմոնացի էր Նաամա անունով։
14 Եւ անիկայ չարութիւն բրաւ.
քանզի իր սիրտը չուղղեց որ Տէրը
15 փնտռէ։ Ու Ռոբովամին առաջին
ու վերջին գործքերը՝ ահա Սեմայիա
մարգարէին գրքին մէջ՝ Ղ ու Ադ-
դով տեսանողին ազգաբանութեա-
նը մէջ գրուած են։ Ե Եւ Ռոբո-
վամին ու Ջերոբովամին մէջտեղը
16 միշտ պատերազմ կար։ Ու Ռոբո-
վամ իր հայրերուն հետ քնացաւ,
և Դաւիթի քաղաքին մէջը թա-
ղուեցաւ. ու անոր տեղը Ւ անոր
որդին Աբիան թագաւոր եղաւ։

ԳԼ · ԺԳ

1 Աբիա՝ Ռոբովամին տեղը անցնելով, Ջերոբո-
վամին դէմ պատերազմ կ'երթ։ 4 Իր փաստին
իրաւացի ըլլալը կը յայտնէ։ 13 Ու Ասատէյ
ապատինելով՝ Ջերոբովամը կը յաղթէ։ 21 Ա-
բիային կնիկները ու որդիները։

1 –Ջերոբովամ թագաւորին տաս-
նուութ երորդ տարին՝ Գուդայի
2 վրայ Աբիան թագաւորեց։ Անի-
կայ Երուսաղէմի մէջ իրեք տարի
թագաւորութիւն բրաւ. և անոր
մօրը անունը Բ Միքայիա էր, ––
Գաբաացի Ուրիէլին աղջիկն էր.
և Աբիային ու Ջերոբովամին մէջ-
3 տեղը պատերազմ կար։ Եւ Աբիա
զօրաւոր ու պատերազմող զօրքե-
րով՝ չորս հարիւր հազար ըն-
տիր մարդիկներով պատերազմելու
պատրաստուեցաւ. Ջերոբովամն
ալ անոր դիմացը եկաւ՝ ութ հա-
րիւր հազար ընտիր՝ զօրաւոր ու
պատերազմող մարդիկներով։
4 Եւ Աբիա՝ Եփրեմի լեռնակողմը
Սեմարիմ լեռանը վրայ կայնեցաւ՝
ու ըսաւ. Ո–մ Ջերոբովամ ու բո-
լոր Իսրայէլ՝ ինձի մտիկ բրէք.
5 Դուք գիտնալու չէ՞ք որ Իսրայէլի
Տէր Աստուածը Թ Իսրայէլի վրայ
թագաւորելը՝ յաւիտեան Դաւի-
թին ու անոր որդւոցը տուած է

Ն · Բ · Դ · 974

* Ե Բ · յբ-
րուէց ։

972

– Գ Լ · ժա · 17 ։
Բ գ թագ · ժգ · 22, 23, 24 ։
Ե գ թագ · ժգ · 24, 25 ։

971

Թ Գ Լ · ժգ · 8 ։
† Կ–՛ Տբ-
րոգդոգա-
յիք ։
Ի Գ Լ · ժա · 2 ։

Ջ Գ Լ · ժե · 2 ։

Ի Ճակ · դ · 10 ։
Ը Եզ · Թ · 27 ։

Ի գ թագ · ժա · 28, 29 ։

Ժ Ցես · Ե ա · իգ · 13 ։
Ի Բ Օր · իբ · 47 · 48 ։

Լ գ թագ · ժգ · 25, 26 ։

Խ գ թագ · ժ · 16 · 17 ։ Գ Լ · Թ · 15 · 16 ։

Ծ Ցես · բ թագ · ը · 18 ։

Ն · Բ · Դ · 971

Ե Ցես · Ծն · ժբ · 24 ։ գ թագ · ժգ · 13 ։ Գ Լ · ժԲ · 3 ։

Հ գ թագ · ժգ · 21 ։

Ձ Գ Լ · գ · 6 ։

Ջ Գ Լ · Թ · 29 · ժգ · 22 ։

Ե գ թագ · ժգ · 30 ։

Ձ գ թագ · ժգ · 31 ։

958

– գ թագ · ժե · 1, Ճ ։

Բ Ցես · գԼ · ժա · 20 ։

957

Ե Ցես · ժբ · 22 ։

Թ բ թագ · ե · 12 · 13 · 16 ։

6 Խաղի ուխտով ։ Եւ Դաւիթի որդուոյն Սողոմոնին ծառան Նաթանեան Գերոբովամը ոտք ելաւ , ու
7 Ղիր տիրոջմէն ապստամբեցաւ . Եւ անոր քովը Խ դատարկակեաց ու անօրէն մարդիկներ ժողվուեցան , ու Սողոմոնին որդուոյն Ռոբովամին դէմ կեցան . քանզի Ռոբովամ մանկահասակ ու փափկասիրտ ըլլ-
8 լով՝ անոնց դէմ չդրաւ ։ Եւ հիմա դուք շատոր ըլլալնուդ համար , ու Գերոբովամին Ճ ձեզի չհնազանդած աստուածները՝ ան ոսկիէ որթերը ձեր քովը ըլլալուն համար , Դաւիթին որդուոյը ձեռքը եղող Տէրոջը թագաւորութեանը դէմ կենալ կը մը-
9 տածէք ։ Խ Միթէ դուք Տէրոջը քահանաները՝ Ահարոնի որդիները՝ ու Ղեւտացիները դուրս չըրի՞ք , և ոբէլ երկիրներուն ժողովրդոցը պէս ձեզի քուրմեր չըրի՞ք ան բոլոր մբդէլնէրը , Խ որոնք մկ զուարա-
կով ու եօթը խոյերով կու գային Էզերնք նուիրելու , որ չաստուածա-
10 ներու քուրմ ըլլան ։ Բայց մեր Աստուածը Եհովան է , ու մենք զանիկայ չթողուցինք . և Տէրոջը ծառայութիւն ընող քահանաները Ահարոնի որդիքն են . ու Ղեւտացիները էրէնց պաշտօնին վրայ են .
11 Ն Եւ ամէն առտու ու ամէն իրիկուն Տէրոջը ողջակէզներ կը մոթոցնէն , ու անուշահոտ խունկ կը ծխեն , Խ ու մաքուր սեղանին վրայ առա-
ջաւորութեան հացերը կը շրէն , Խ և ամէն իրիկուն վառելու համար՝ ոսկիէ աշտանակը ու անոր ճրագները կը պոթոցնէն . քանզի մենք մեր Տէր Աստուծոյն պահպանութիւնը կը պահենք . բայց դուք
12 զանիկայ մերժեցիք ։ Եւ ահա Աստուած ինքը մեր հետն է՝ մեր իշխանը ըլլալու . Նեաև անոր քահանաները ազդարարութեան փողերով , որ ձեզի դէմ ՚ի՛ղեցընեն . ով Իսրայէլի որդիք , Հձեր հայրերուն Տէր Աստուծոյն հետ մի՛ պատերազմիք . քանզի դուք յաջողութիւն պիտի չգտնէք ։
13 Բայց Գերոբովամ դարանակալները դարձուց , որ անոնց ետևէն դան . ու Իսրայէլացիք Գուդայեանց առջևն էին , ու դարանակալները
14 անոնց ետևն էին ։ Եւ Գուդայեանք դարձան նայեցան որ պատերազմը իրենց առջևէն ու ետևէն էր , ու Տէրոջը աղաղակեցին , և քահանաները փողերը ՚ի՛ղեցուցին .
15 Ո Գուդայի մարդիկը աղաղակ վերցուցին . ու երբոր Գուդայի մարդիկը աղաղակեցին , Աստուած՝ Ն Գերոբովամը ու բոլոր Իսրայէլը Աբիային ու Գուդային առջևը
16 զարկաւ ։ Եւ Իսրայէլի որդիքը Գուդային առջևէն փախան . ու Աստուած անոնց ձեռքը մատնեց
17 զանոնք ։ Եւ Աբիա ու իր զօրքը մեծ կոտորած ըրին անոնց մէջը . ու Իսրայէլէն հինգ հարիւր հազար ընտիր մարդիկ վերաւորուած ին-
18 կան ։ Ըն ատենը Իսրայէլի որդիքը նուաճեցան , ու Գուդայի որդիքը Հիրենց Հայրերուն Տէր Աստուծոյն ապաւինելնուն համար ոյժ գտան ։
19 Եւ Աբիա Գերոբովամը հալածեց , ու անկէ քաղաքներ առաւ , Ցէ-
խէն Բեթէլը ու անոր գեղերը , և Գեսանան ու անոր գեղերը , ու
20 Եփրոնը ու անոր գեղերը ։ Եւ Գերոբովամ՝ Աբիային օրերուն մէջը մէյմն ալ չկրցաւ ոյժ գտնել . ու Տէրը Հզանիկայ զարկաւ , ու Ցմեռաւ ։
21 Եւ Աբիա ուժովցաւ , ու իրեն տասնուչորս կնիկ առաւ . և քսանուերկու տղայ ու տասնուվեց աղ-
22 ջիկ ծնաւ ։ Ու Աբիային մնացորդ պատմութիւնը , և անոր գործքերը ու խօսքերը՝ Ոադդով մարգարէին յիշատակարանին մէջը գրուած է ։

ԳԼ · ԺԴ

1 Ասա՝ Աբիային տեղը յաջորդելով՝ կոտպաշտութիւնը կը վերցընէ . 6 ու խաղաղութիւն ունենալով՝ իր թագաւորութիւնը կը զօրացընէ բերդերով ու զօրքերով ։ 9 Ասա՝ Աստուծոյ ազդակելով՝ Զարային կը յաղթէ , ու Եթէովպացիներէն խիստ շատ աւար կ՚առնէ ։

1 Ու Աբիա իր Հայրերուն հետ քնացաւ , ու զանիկայ Դաւիթի քաղաքին մէջը թաղեցին . և անոր տեղը՝ անոր որդին Ասա թագաւոր եղաւ . ասոր օրերը՝ երկիրը տասը
2 տարի հանդստութիւն դտաւ ։ Ու Ասա իր Տէր Աստուծոյն առջևը
3 բարի և ուղիղ եղածը ըրաւ . Ու օտար սոթոցնէրէնէն սեղանները , ու Խ բարձր տեղերը վերցուց , և Խ ար-
ձանները կոտրտեց , Ծ ու Աստարովթի կուռքերը կտոր կտոր ըրաւ .
4 Եւ Գուդային հրամայեց որ իրենց Հայրերուն Տէր Աստուածը փընտռէն , ու օրէնքը ու պատուիրանք-
5 ները կատարեն ։ Եւ Գուդային ամէն քաղաքներէն բարձր տեղեանքը , ու արեգական կուռքերը վերցուց . ու իր առջևը թագաւորու-
6 թիւնը հանդիստ էր ։ Եւ անիկայ Գուդայի մէջ պարսպատոր քաղաքներ շինեց . քանզի ան տարիներուն մէջ երկիրը հանդստութիւն կը վայելէր , ու անոր հետ պատերազմ ընող չկար . վասն զի Տէրը անոր
7 հանդստութիւն տուաւ ։ Եւ Ասա Գուդային բսաւ . Ան երկիրը քանի որ մեր Ճիշխանութեանը տակն է՝ , ան քաղաքները շինենք , ու զանոնք

955

— գ թագ . ժե . 8 , ճ ;

Խբբ 951

Բ Տես գ թագ . ժե . 14 ։ Գլ . ժե . 17 ։

Է Եւ լգ . 13 ։

941

Ծ գ թագ . ժա . 7 ։

Ճ Էբբ . առ ՝ լեռն է ։

Ի Թագ . ժբ . 19 ։
Ղ գ Թագ . ժա . 26 ։ ժբ . 20 ։
Ի Դաս . թ . 4 ։
Ը գ Թագ . ժբ . 28 ։ ժգ . 9 ։ Ովս . ը . 6 ։
Բ Գլ . ժա . 14 ։ 15 ։
Ժ Եզ . իթ . 35 ։
Ի Տես Եզ . իթ . 1 ։ Ղև . ը . 2 ։
Լ Գլ . բ . 4 ։
Ի Ղև . իգ . 6 ։
Ժ Եզ . իե . 20 ։ 21 ։ Ղև . իգ . 2 ։ 3 ։
Ի Թագ . ժ . 8 ։
Հ Գոր . ե . 39 ։
Ն Գլ . ժգ . 12 ։

Ղ ա Մն . ե . 20 ։ Սաղ . իբ . 5 ։
Ժ Ցես . ժե . 9 ։
Ի ա Թագ . իե . 38 ։
Ի գ Թագ . ժգ . 20 ։
Ն Գլ . ժբ . 15 ։

պարիսպներով՝ աշտարակներով՝ դռներով ու նիգերով շրջապատենք . քանզի մենք մեր Տէր Աստուածը փնտռեցինք , ⁓ փնտռելնուս համար՝ ամէն կողմանէ մեզի հանգստութիւն տուաւ : Եւ շինեցին , ու յաջողութիւն
8 գտան : Եւ Ասա՝ Ցուդային վահան ու նիզակ կրող իրեք հարիւր հազար զօրք , ու Բենիամինէն՝ ասպար կրող ու աղեղ քաշող երկու հարիւր ութսուն հազար զօրք ունէր . ասոնք ամէնը զօրաւոր կըտրիճներ էին :
9 Ու Եթէովպացի Զարան հազար անգամ հազար զօրքով ու իրեք հարիւր կառքով անոնց վրայ եկաւ ,
10 ու մինչև Մարեսա եկաւ : Եւ Ասա անոր դիմացը ելաւ . ու Մարեսայի Սեփաթա ձորին մէջ պատերազմի
11 շարուեցան : Եւ Ասա իր Տէր Աստուծոյն աղաղակեց , ու ըսաւ . Ով Տէր՝ զքու առջեդ տարբերութիւն մը չկայ թէ շատով և թէ քիչով օգնութիւն ընելու մէջ . մեզի օգնութիւն ըրէ՝ ով Տէր Աստուած մեր , որովհետև քեզի ապաւինեցանք , ու քաս բազմութեանս վրայ քու անունովդ եկանք . ով Տէր , մեր Աստուածը դուն ես . մի՛ թողուր որ մարդը քեզի դէմ
12 զօրանայ : Եւ Տէրը Եթէովպացիները Ասային ու Ցուդային առջեւը զարկաւ . ու Եթէովպացիք
13 փախան : Եւ Ասա ու անոր հետ եղող ժողովուրդը՝ զանոնք մինչև Գերարա հալածեցին . ու Եթէովպացիք ինկան , և անոնց վրայ կենդանութիւն չմնաց . քանզի Տէրոջը առջեւը ու անոր բանակին առջեւը խորտակեցան . ու խիստ շատ աւար առին :
14 Եւ Գերարայի բոլորտիքը եղող ամէն քաղաքները զարկին . քանզի Եանոնց վրայ Տէրոջը վախը ինկաւ . ու ամէն քաղաքները կողոպտեցին . վասն զի
15 անոնց մէջը շատ աւար կար : Եւ հօտերուն վրաններն ալ զարկին , ու խիստ շատ ոչխար և ուղտ առին , ու Երուսաղէմ դարձան :

ԳԼ · Ա Ե

1 Ասա՝ Ցուդային հետ ու Իսրայէլէն պանդխտ եղողներուն հետ Ազարիա մարգարէին խօսքերէն քաջալերուելով՝ Աստուծոյ հետ հանդիսաւոր ուխտ մը կ'ընէ . 16 իր մայրը Մաքան տիկնութենէն կը հանէ՝ անոր կռապաշտութենեանը համար . 18 ու նուիրուած բաները Աստուծոյ տունը կը տանի , ու երկար ժամանակ խաղաղութիւն կը վայելէ :

1 Ու Ովդեդի որդւոյն Ազարիային վրայ Աստուծոյ Հոգին եկաւ .
2 Եւ Ասային առջեւը ելլելով՝ ըսաւ անոր . Ով Ասա , ու բոլոր Ցուդա ու Բենիամին , ինծի մտիկ ըրէք . Տէրը ձեզի հետ կ'ըլլայ , քանի որ դուք անոր հետ էք . ու եթէ որ զանիկայ փնտռէք , զանիկայ կը գտնէք . բայց եթէ որ զանիկայ թողուք , անիկայ ալ ձեզ պիտի
3 թողու : Եւ Իսրայէլը երկար ժամանակ առանց ճշմարիտ Աստուծոյ , առանց ուսուցանող քահանայի , ու առանց օրէնքի մնացեր
4 էր . Բայց Իրենց նեղութեանը մէջ՝ Իսրայէլի Տէր Աստուծոյն դարձան , ու զանիկայ փնտռելով՝ գըտան : Եւ Էն ատեններն ելլողին ու մտնողին ապահովութիւն չկար . քանզի երկիրներուն բոլոր բնակչացը մէջ շատ խռովութիւններ
6 կար . Եւ ազգ ազգի հետ , ու քաղաք քաղաքի հետ կը զարնուէր . ինչու որ Աստուած ամէն նեղութիւններով զարհուրեցուց
7 զանոնք : Եւ հիմա դուք զօրացէք , ու ձեռքերնիդ չթուլնայ . վասն զի ձեր գործքին վարձքը կայ :
8 Եւ Ասա ասս խօսքերը՝ ու Ովդեդ մարգարէին մարգարէութիւնը լսելով՝ զօրացաւ , և Ցուդայի ու Բենիամինի բոլոր երկրէն , ու Եփրեմի լեռնէն իր առած քաղաքներէն պղծութիւնները վերցուց , ու Տէրոջը դիմաց սրահին առջևը եղող
9 Տէրոջը սեղանը նորոգեց . Եւ բոլոր Ցուդան ու Բենիամինը , ու Եփրեմէն և Մանասէէն ու Շմաւունէն անոնց քովը գտնուած պանդուխտները ժողվեց . քանզի Իսրայէլէն շատ մարդիկ անոր կողմը անցան , տեսնելով որ անոր Տէր Աստուածը
10 անոր հետն է : Եւ անոնք՝ Ասային թագաւորութեանը տասնուհինգերորդ տարւոյն երրորդ ամիսը Երուսաղէմի մէջ ժողվուեցան . Ու
11 ան օրը իրենց Եբերած աւարէն Տէրոջը զոհ ըրին . եօթը հարիւր արջառ ու եօթը հազար ոչխար .
12 Եւ Ուխտ ըրին որ իրենց հայրերուն Տէր Աստուածը բոլոր սրտով
13 ու բոլոր հոգիով խնդրեն . Եւ ով որ Իսրայէլին Տէր Աստուածը չփնտռէ , թէ պզտիկ և թէ մեծ , թէ էրիկ մարդ և թէ կնիկ ըլլայ՝
14 մեռցուի : Ու մեծ ձայնով , և ցնծութեամբ , ու փողերով , ու եղջիւրներով՝ Տէրոջը երդումի ըրին :
15 Եւ բոլոր Ցուդան ան երդումին վրայ ուրախացաւ . քանզի իրենց բոլոր սրտովը երդում ըրին , ու Իրենց բոլոր կամքովը խնդրելով՝ գտան զանիկայ . ու Տէրը ամէն կողմանէ հանգստացուց զանոնք :
16 Եւ Ասա թագաւորը իր մայրը Մաաքան ալ տիկնութենէն հանեց . վասն զի անիկայ Աստարով-

ն · ք · գ · 941

Ե Ցակ · գ · 8 ։
զ Ելմր 4 · 15 ։ ա Մն · իր · 9 ։ Գլ · լդ · 12 , 13 ։ Ե րեմ · իթ · 13 ։ Մաա · է · 7 ։
ը Գլ · իդ · 20 ։
Թ Ովս · գ · 4 ։
ժ Ղկ · ժ · 11 ։
ի Ր Օր · գ · 29 ։
ձ Դատ. ե. 6 ։

ն · ք · գ · 941

Ր Մաա · իդ · 7 ։

‡ Ըստ Լ Ա · Ե · Ր · Ե Ա · Ր · Ե · Ր զ ։ Ովզեդի որդւոյն Ազարիա

ծ Գլ · ժգ · 19 ։

ի Գլ · ժա · 16 ։

լ Գլ · ժգ · 15 ։
խ Գլ · ժգ · 13 ։

ծգ Թագ · իդ · 8 ։ Գլ · լդ · 31 ։ Նէեմ · ժ · 29 ։
կ Եզ · իր · 20 ։

հր Օր · ժգ · 5 , 9 , 15 ։

յ Հմր 2 ։
ղ Ցր՝ Մեծ մայրը · տես գ Թագ · ժե · 2 , 10 ։
ճ գ Թագ · ժե · 13 ։

ն · ք · գ · 951

Ի Գլ · ժգ · 8 ։

ղ Ցես · ժե · 44 ։

Ի Ել · ժգ · 10 ։ Գլ · ժգ · 14 ։ Սաղ · իր · 5 ։
ը ա Թագ · ժգ · 6 ։
* Եբր · տըկարով

Ր ա Թագ · ժէ · 45 ։ Ռաթ · ժը · 10 ։

ժ Գլ · ժգ · 15 ։

ի Ծն · ժ · 19 ։ ի · 1 ։

լ Ծն · լե · 5 ։ Գլ · ժէ · 10 ։

խ Ցր՝ Հովիւներուն

— Թաւ · իդ · 2 ։ Դատ · գ · 10 ։ Գլ · ի · 14 ։ իդ · 20 ։

Ն · Ք · ՂԲ · 941

Թին կուռք չիներ էր . իսկ Ասա անոր կուռքը կոտրեց ու փշրեց , ու Կեդրոն հեղեղատին մէջը այրեց ։
17 Բայց ¶բարձր տեղուանքը Իսրայէլին չվերցան . սակայն Ասային սիրտը իր [1]Ա֊ՆԻ բոլոր օրերուն մէջ՝
18 ուղիղ էր ։ Եւ իր հօրը նուիրած ու իր նուիրած բաները՝ արծաթը , ու ոսկին , ու անօթները՝ Աստուծոյ տունը տարաւ ։ Ու մինչև Ասային թագաւորութեանը երեսունհինգերորդ տարին՝ պատերազմ չեղաւ ։

ԳԼ · Ժ Զ

1 Ասա՝ Աստրիներուն օգնութեամբը՝ Ռաման չինելէն կը դադրեցնէ Բասասան ։ 7 Ան բանիս վրայով Անանիէն յանդիմանութիւն լսելուն համար՝ բանտը կը դնէ զանիկայ ։ 12 Ասա իր հիւանդութեան առնը՝ Աստուծմէ օգնութիւն չփնտռեր , հապա բժիշկներէն ։ 13 Անոր մահը ու թաղումը ։

940 Որ է տասը ցեղերուն Ցուդային բաժնուելէն հետէ , որուն վրայ Ասա թագաւորեր աս առնը ։

1 Ասային թագաւորութեանը երեսունուվեցերորդ տարին՝ Իսրայէլի Բասասա թագաւորը Ցուդային դէմ ելաւ , ու Ռաման շինեց , ¶որ Ցուդայի Ասա թագաւորին ելլող
2 մնող մը չթողու ։ Եւ Ասա Տէրոջը տանը՝ ու թագաւորին տանը գանձերէն արծաթ ու ոսկի հանեց , ու Դամասկոս բնակող Ասուրոց թագաւորին՝ Բենհադադին
3 խրկեց՝ ըսելով . Իմ ու քու մէջդ , և իմ հօրս ու քու հօրդ մէջը դաշնակցութիւն կայ . ահա քեզի արծաթ ու ոսկի կը խրկեմ . եկուր , Իսրայէլի Բասասա թագաւորին հետ ունեցած դաշնակցութիւնդ աւրէ , որ անիկայ իմ վրայէս ետ քաշուի ։
4 Ու Բենհադադ Ասա թագաւորին խօսքը մտիկ ըրաւ . և իր զօրագլուխները Իսրայէլի քաղաքներուն վրայ խրկեց . ու Իյօնը , Դանը , Աբէլմայիմը , ու Նեփթաղիմի բոլոր շտեմարանի քաղաքները զարկին ։ 5 Եւ Բասասա ¶որ լսեց՝ Ռաման շինելէն ետ կեցաւ , ու
6 գործը դադրեցուց ։ Ուստի Ասա թագաւորը բոլոր Ցուդան առաւ , ու Բասասային շինած Ռամայի քարերը ու փայտերը վերցուցին . ու անոնցմով Գաբան ու Մասփան շինեց ։
7 Եւ ան առնը ¶Անանի տեսանողը Ցուդային Ասա թագաւորին եկաւ , ու անոր ըսաւ . Որովհետև դուն Ասորւոց թագաւորին ապաւինեցար , ու քու Տէր Աստուծոյդ չապաւինեցար , անոր համար Ասորւոց թագաւորին զօրքը քու ձեռքէդ ազատեցաւ ։ 8 քեզ ազատեցաւ ։ Միթէ Եթէոպացիք ու Ղիբէացիք խիստ շատ կառքերով ու ձիաւորներով՝ բազմաթիւ զօրք չէի՞ն . բայց որովհետև դուն Տէրոջը ապաւինեցար , զանոնք քու ձեռքդ մատ֊
9 նեց . Քանզի Տէրոջը աչքերը բոլոր երկիրը կը դիտեն , որ իրեն ուղղ սրտով յարողները ուժովցնէ . Ըդուն ասոր բանիս մէջ տգիտութիւն ըրիր . ասկէետքը ¶պատերազմներ պիտի ունենաս ։ 10 Եւ Ասա ան տեսանողին որդողեցաւ , ու զանիկայ բանտը դրաւ . վասն զի աս բանիս համար խիստ բարկացաւ անոր . ու ան առնը Ասա ժողովուրդէն մէկ քանիները հարըստահարեց ։
11 Եւ Ասային առաջին ու վերջին պատմութիւնը՝ ահա Ցուդայի ու Իսրայէլի թագաւորներուն գրքին
12 մէջը գրուած է ։ Եւ Ասա իր թագաւորութեանը երեսունիններորդ տարին՝ ոտքի չհիւանդացաւ . ու անոր հիւանդութիւնը ծանրացաւ . և իր հիւանդութեանը մէջն ալ Տէրը չփնտռեց , հապա բժիշկ֊
13 ները ։ Եւ Ասա իր հայրերուն հետ քնացաւ . ու անիկայ իր թագաւորութեանը քառասուն֊
14 ումկերորդ տարին մեռաւ ։ Ու զանիկայ Դաւիթի քաղաքին մէջը՝ իրեն համար փորած դերեզմանը թաղեցին . և զանիկայ խունկերով ու իւղագործի արուեստին զանազան բաղադրութիւններովը լեցուն անկողինի մը մէջ պառկեցուցին , ու անոր վրայ ¶խիստ շատ խո֊ն֊ջ֊ներ ծխեցին ։

ԳԼ · Ժ Ը

1 Ցովսափատ՝ Ասային տեղը յաջորդելով՝ առղէկ կերպով կը կառավարէ ու յաջողութիւն կը գտնէ ։ 7 Ղեւացիներ ու իշխաններ կը խրկէ , որ Աստուծոյ օրէնքը Ցուդային սորվեցընեն ։ 10 Աստուծոյ վախը Ցովսափատին թշնամիներուն վրայ բլլալով՝ անոնցմէ անանք անոր բնծաներ կը բերեն ու հարկ կու տան ։ 12 Անոր մեծութիւնը , պաշտօնատարները ու զօրքերը ։

1 Ու անոր տեղը՝ անոր որդին ¶Ցովսափատը թագաւոր եղաւ , ու Իսրայէլի դէմ զօրացաւ ։
2 Եւ Ցուդային ամէն պարսպաւոր քաղաքներուն մէջը զօրքեր դրաւ . ու Ցուդայի երկրին մէջը՝ ու Եփրեմի քաղաքներուն մէջը բերդապահ
3 զօրքեր դրաւ ։ Եւ Տէրը Ցովսափատին հետն էր . քանզի անիկայ իր հօրը Դաւիթին առջի ճամբաներուն մէջը քալեց , ու Բահադիմի
4 չփնտռեց , հապա իր հօրը Աստուածը փնտռեց , անոր պատուիրանքներուն մէջը քալելով , և չէ թէ ¶Իսրայէլին րրածին պէս
5 ընելով ։ Եւ Տէրը թագաւորութիւնը անոր ձեռքին մէջը հաս֊

Ն · Ք · ՂԲ · 941

Ե Գլ · Ժ · 3 ։ 5 ։ գ Թագ · Ժ · 14 , ԼԱ ։

Ե Գլ · Ժ · 26 ։ Երեմ · Ի · 2 ։ Մատ · Ժ · 3 ։

Ե գ Թագ · Ժ · 23 ։

Ե Երեմ · Ժ · 5 ։

914

Ե գ Թագ · Ժ · 24 ։

Ե Նշն · Ծ · 2 ։ Մար · Ժ · 1 ։ Ցօհ · Ժթ · 39 , 40 ։

Ե Գլ · Ի · 19 ։ Երեմ · Լդ · 5 ։

— գ Թագ · Ժ · 24 ։

Ե Գլ · Ժ · 8 ։

Ե գ Թագ · Ժ · 28 ։

տատեց . ու բոլոր Ցուդան Երուսաղէմին ընծաներ կու տար . Եւ անոր հարստութիւնը ու փառքը
6 շատցաւ . Ու անոր սիրտը Տէրոջը ճամբաներուն մէջը բարձրացաւ . և Ղանիկայ բարձր տեղերը՝ ու Աստարովթի կուռքերն ալ Ցուդայէն վերցուց ։
7 Եւ իր թագաւորութեանը երորդ տարին՝ իր իշխանները՝ Բենհայիլը , Աբդիան , Զաքարիան , Նաթանայէլը ու Միքիան խրկեց , Էոր Ցուդայի քաղաքներուն մէջը
8 սորվեցընեն . Եւ անոնց հետ էին Սեմայիա , Նաթանիա , Զաբադիա , Ասայէլ , Սեմիրամովթ , Յովնաթան , Ադոնիա , Տուբիա ու Տոբադոնիա Ղեւտացիները . Նաև անոնց հետ Եղիսամա ու Յովրամ
9 քահանաները . Էու Ցուդայի մէջ կը սորվեցընէին , ու Տէրոջը օրինաց գիրքը անոնց հետն էր , և Ցուդային ամէն քաղաքները կը պտրտէին , ու ժողովուրդին կը սորվեցընէին ։
10 Եւ Ցուդայի բոլորտիքը եղող երկիրներուն բոլոր թագաւորութիւններուն վրայ Էտէրոջը վախը ինկաւ , ու Յովսափատին հետ
8 Եւ անիկայ հինգերորդ ամսուն
մէջ՝ թագաւորին եօթներորդ
9 տարին՝ Երուսաղէմ եկաւ. քան-
զի առաջին ամսուն առաջին օրը՝
Բաբիլոնէն ելլելու սկսաւ. ու
Աստուծոյ բարի ձեռքը անոր
վրայ ըլլալով՝ հինգերորդ ամսուն
առաջին օրը՝ Երուսաղէմ եկաւ։
10 Վասն զի Եզրաս իր սիրտը պատ-
րաստեց՝ որ Տէրոջը օրէնքը փնտ-
րտէ, ու կատարէ, ու Իսրայէլի
մէջ †օրէնք ու դատաստան սորվե-
ցընէ։
11 Եւ ասիկայ է ան նամակին օրի-
նակը՝ որն որ Արտաշէս թագաւորը
տուաւ Եզրաս քահանային ու դպի-
րին, որ Տէրոջը Իսրայէլին տ՛՛՛՛
պատուիրանաց և օրինաց խօսքե-
րուն դրիչն էր։
12 †Թագաւորաց թագաւորը Ար-
տաշէս՝ Եզրաս քահանային՝ երկնից
Աստուծոյն օրինացը կատարեալ
13 գրչին, և այլն։ Հրաման կու տամ
որ՝ իմ թագաւորութեանս մէջը ե-
ղող Իսրայէլի ժողովուրդէն, ու
անոր քահանաներէն, ու Ղեւտա-
ցիներէն՝ ամէն իրենց կամքովը Ե-
րուսաղէմ ելլել ուզողները քեզի
14 հետ ելլեն. Վասն զի տ՛՛՛՛ թա-
գաւորին ու անոր եօթը խորհր-
դականներուն կողմանէ կը խրա-
կուիս, որ քու ձեռքդ եղող քու
Աստուծոյդ օրէնքովը ճշդան ու
15 Երուսաղէմը քննես, Եւ տանիս
ան արծաթը ու ոսկին, որն որ
թագաւորը ու անոր խորհրդական-
ները՝ իրենց կամքովը ընծայ տուին
Իսրայէլի Աստուծոյն՝ †որուն բնա-
կութիւնը Երուսաղէմի մէջ է.
16 †Նաև Բաբիլոնի բոլոր դաշտին
մէջը գտած բոլոր արծաթդ ու ոս-
կիդ, որն որ ժողովուրդը ու քա-
հանաները Երուսաղէմի մէջ եղող
իրենց Աստուծոյն տանը համար՝
կամաւոր ընծայի պէս պիտի մա-
17 տուցանեն, Որ ան ստակով անյա-
պաղ՝ զուարակներ, խոյեր, դառ-
ներ, ու անոնց հացի ընծաները ու
թափելու նուէրները ծախու առ-
նես, ու զանոնք Երուսաղէմ ե-
ղող ձեր Աստուծոյն տանը սեղա-
18 նին վրայ մատուցանես. Եւ ինձ-
ցած արծաթով ու ոսկիով՝ քեզի
ու քու եղբայրներուդ ինչ որ պատ-
շաճ կ'երևնայ ընել, ձեր Աստու-
19 ծոյն կամացը համեմատ ընէք։ Եւ
ան անօթները, որ քու Աստուծոյդ
տանը պաշտօնին համար՝ քեզի տր-
ուեցան, Երուսաղէմի Աս-
20 տուծոյն առջևը դո՛ր յանձնէ։ Եւ
ուրիշ ինչ որ քու Աստուծոյդ տա-
նը համար պէտք ըլլայ, որ քեզի կր
վայլէ տալ, զանիկայ թագաւորին
21 գանձատունէն տաս։ Ու ես՝ Ար-
տաշէս թագաւորս՝ յԻ՛՛՛՛

Ն·Ք·ԳՔ· 457

ԳԼ· Ը

1 Եզրասին ընկերները՝ որոնք Բաբիլոնէն եւ դարձան ։ 15 Եզրաս՝ Ադդովին մարդ կը խրկէ , անկէ տաճարին համար պաշտօնեաներ ուղելով · 21 ծոմ կը պահէ · 24 գանձերը քահանայից պահպանութեանը կը յանձնէ ։ 31 Անավայէն Երուսաղէմ կու գան ։ 33 Գանձերը տաճարին մէջը կը կշռուին ։ 36 Թագաւորին հրովարտակը իշխաններուն կը յանձնուի ։

1 Ա֊ Արտաշէս թագաւորին թագաւորութեանը առնէն՝ ինձի հետ Բաբիլոնէն ելլողներուն տոհմապետները , ու համրանքը ասոնք
2 են ։ Փենհէսի որդիներէն՝ Գերսոն , Իթամարի որդիներէն՝ Դանիէլ , Դաւիթի որդիներէն՝ Քատ֊
3 տուս , Սեքենիայի որդիներէն՝ Փարոսի որդիներէն՝ Զաքարիա , ու անոր հետ հարիւր յիսուն էրիկ
4 մարդ համրուեցան · Փահաթ Մովաբի որդիներէն՝ Զարհայի որդին Եղհովէնայի , ու անոր հետ երկու
5 հարիւր էրիկ մարդ · Սեքենիայի որդիներէն՝ Ցազիելի որդին , ու անոր հետ իրեք հարիւր էրիկ մարդ ·
6 Եւ Ադինի որդիներէն՝ Ովնաթանի որդին Աբեդ , ու անոր հետ յի֊
7 սուն էրիկ մարդ · Ու Եղամի որդիներէն՝ Գոթոդեայի որդին Եսայի , ու անոր հետ եօթանասուն
8 էրիկ մարդ · Եւ Սափատիայի որդիներէն՝ Միքայելի որդին Զաբադիա , ու անոր հետ ութսուն
9 էրիկ մարդ · Յովաբի որդիներէն՝ Եհեքիելի որդին Աբդիա , ու անոր հետ երկու հարիւր տասնուութը
10 էրիկ մարդ · Եւ Սաղոմիթի որդիներէն՝ Յոսեփիայի որդին , ու անոր հետ հարիւր վաթսուն էրիկ
11 մարդ · Եւ Բեբայիի որդիներէն՝ Բեբայիի որդին Զաքարիա , ու անոր հետ քսանուութը էրիկ մարդ ·
12 Եւ Ազգադի որդիներէն՝ Ակատանի որդին Յոհանան , ու անոր հետ հա֊
13 րիւր տասը էրիկ մարդ · Եւ Ադոնիկամի որդիներէն վերջինները՝ որոնց անունները ասոնք էին · Եղիփաղէտ , Ցէիել ու Սեմայիա , և անոնց հետ վաթսուն էրիկ մարդ ·
14 Եւ Բագուէի որդիներէն՝ Ութայի , ու Զաբուդ , ու անոնց հետ եօթանասուն էրիկ մարդ ։
15 Եւ ասոնք՝ Ահավա վազող դեռին եզերքը ժողվեցի , ու հոն իրեք օր իջևան բրինք · և ժողովուրդը ու քահանաները աչքէ անցուցի , ու հոն Ղևտացւոց որդիներէն չգտայ ։ Ան ատենը Եղիազար , Արիէլ , Սեմայիա , Եղնաթան , Ցարիբ , Եղնաթան , Նաթան , Զաքարիա ու Մեսուղամ իշխանները , ու Յովարիբ ու Եղնաթան
17 իմաստունները կանչել տուի · Եւ

Ն·Ք·ԳՔ· Իբր 457

զանոնք՝ Քասիփիա ըսուած տեղը եղող Ադդովի իշխանին՝ պատուէրներով խրկեցի , ու Քասիփիա ըսուած տեղը եղող Ադդովին , ու անոր եղբարցը՝ Նաթանայիմներուն զրուցուելու խօսքերը՝ Տանոնց բերանը դրի , որ մեր Աստուծոյն տանը համար մեզի պաշտօնեաներ բե֊
18 րեն ։ Ու մեր Աստուծոյն բարի ձեռքը մեր վրայ ըլլալուն համար , Իսրայէլեան Ղևիին որդւոյն Մոոզիին որդիներէն Իմկ հանճարեղ մարդ մը , այսինքն Սարաբիան ու անոր որդիները ու եղբայրները՝
19 տասնուութը բերին մեզի · Նաև Ասաբիան , ու անոր հետ Մերարիի որդիներէն՝ Եսային ու անոր եղբայրները , ու անոնց որդի֊
20 ները՝ քսան չորս · Ու Նաթանայիմներէն , որ Դաւիթ ու իշխանները Ղևտացւոց ծառայութեանը տուեր էին , ամէնը իրենց անուններովը յիշուած՝ երկու հարիւր քսան Նաթանայիմներ ։
21 Եւ հոն Ահավայի գետին քովը՝ Ծոմապահութիւն քարոզեցի , որ Հոնարհինք մեր Տէր Աստուծոյն առջևը , ու անկէ Իյաջող ճամբորդութիւն խնդրենք՝ մեզի ու մեր ընտանեացը և մեր բոլոր ըն֊
22 տացուածքին համար · Վասն զի ճամբուն մէջ մեզ թշնամիներէն պաշտպանելու համար թագաւորէն զօրք ու ձիաւորներ ուզելու ամչցայ · որովհետև թագաւորին ըսեր էինք թէ՝ Մեր Աստուծոյն ձեռքը բոլոր զանիկայ փնտռողներուն վրայ է Լաւութեամբ , ու անոր զօրութիւնը ու բարկութիւնը Ամէն անոնց վրայ՝ որ զանի֊
23 կայ կը թողուն ։ Ուստի ծոմ բռնեցինք , ու աս բանիս համար՝ մեր Աստուծմէն ուղղութիւն խնդրեցինք · ու անիկայ մեր խնդրուածքը ընդունեց ։
24 Եւ քահանայից իշխաններէն տասուերկու Սերեբիան , Ասաբիան , ու անոնց հետ իրենց եղբայրներէն տասը
25 Սերեբիան , Եւ Հարծաթը , ու ոսկին , ու անօթները , նաև թագաւորին , ու անոր խորհրդականներուն , ու իշխաններուն , և հոն գտնուող բոլոր Իսրայէլին՝ մեր Աստուծոյն տանը համար տուած ընծաները՝
26 կշռով անոնց յանձնեցի ։ Ու վեց հարիւր յիսուն տաղանդ արծաթ , և հարիւր տաղանդ արծաթէ ամաններ , ու հարիւր տաղանդ
27 ոսկի , Եւ քսան ոսկի տաշտ զարական դրամէ , ու մխտուր ու փայլուն և ոսկիի պէս պատուական պղնձէ երկու աման՝ կշռով ա֊

Ա֊ Ցես ա ԹագԺգ· 3, 19 ։
Բ֊ Նեհ·ը· 7, Թ·4,5։
Գ֊ ա Մն·գ· 22 ։
Դ֊ Գլ·բ·3։
Ե֊ Ցես գլ·բ· 43 ։
Զ֊ Բ Մն·ի· 3 ։
Է֊ Ղև·Ժգ· 29, իգ·29; Ես·ծը·3, 5 ։
Ը֊ Սաղ·ճ·8։
Թ֊ Ցես ակոր· Թ·15 ։
Ժ֊ Գլ·է·6, 9, 28 ։
Ի֊ Սաղ·ւգ· 18, 19, ւգ· 15, 22, Հբռով·ը·28 ։
Լ֊ Սաղ·ւգ· 16 ։
Խ֊ Բ Մն·ԺԵ· 2 ։
Ծ֊ ա Մն·ե· 20, բ Մն· ւգ·13, Ես·ԺԹ· 22 ։
Կ֊ Գլ·է·15, 16 ։

Ն·ք·ղԲ· իրր 457

յՂԱ· ի· 6, 7, 8, բ Օր·ԼԳ·8, ՂՂԱ· իբ· 2, 3, թես. գ· 4, 15, 19, 20,

28 Նոյնպէս յանձնեցի, ու անոնց ըսի· Դուք ՝ Տէրոջը նուիրուած էք, — անօթներն ալ նուիրուած են. և արծաթը ու ոսկին՝ ձեր կարցը Տէր Աստուծոյն կամաւոր ընծայ մըն

29 է· Արթուն կացէք, ու պահեցէք, մինչև որ կշռեմ Տէրոջը տանը սենեակներուն մէջ՝ քահանայից՝ ու Ղեւտացւոց իշխաններուն, ու Իսրայէլի տոհմապետ-

30 ներուն առջևը կշռէք։ Եւ քահանաները ու Ղեւտացիները՝ արծաթը ու ոսկին ու ամանները՝ կշիռքով առին, որ Երուսաղէմ մեր Աստուծոյն տունը տանին։

31 Եւ առաջին ամսուն երկուտասաներորդ օրը՝ Ահավայի գետէն չուեցինք Երուսաղէմ երթալու համար, ու Աստուծոյն ձեռքը մեր վրայ էր, ու մեզ ճամբան թշնամիին ու դարանակալին ձեռ-

32 քէն ազատեց· Ու Երուսաղէմ եկանք, և հոն իրեք օր նստանք։

33 Ու չորրորդ օրը՝ արծաթը, ու ոսկին, ու անօթները՝ մեր Աստուծոյն տանը մէջ՝ Ուրիա քահանային որդւոյն Մերամոթին ձեռքը՝ ու անոնց հետ՝ Գեսուի որդին Յովզաբադ, ու Բանուիի որդին Նովադիա Ղեւտացիները կային։ Ամէնը

34 թուով ու կշիռքով յԱյնմոմէնէ. ու ան ատենը բոլոր կշիռքը գրուեցաւ։

35 Գերութեան որդիքը՝ որոնք դերութենէն դարձած էին, Իսրայէլի Աստուծոյն ողջակէզներ մատուցին· բոլոր Իսրայէլին համար տասնեւերկու զուարակ, իննսունուվեց խոյ, եօթանասունուեօթը գառն, — մեղքի պատարագի համար՝ տասնեւերկու նոխազ· — ամէնը

36 Տէրոջը ողջակէզ մատուցին։ Եւ անոնք թագաւորին հրովարտակը՝ գետին սատրափներուն ու իշխաններուն տուին· անոնք ալ՝ ժողովուրդին ու Աստուծոյ տանը ձեռնտու եղան։

ԳԼ· Թ

1 Ժողովուրդը ատար ազգաց հետ խնամութիւն ընելուն համար՝ եղբաս սուգ կ'ընէ· 5 ու գործած մեղքերը խոստովանելով՝ Աստուծոյ աղօթք կ'ընէ։

457

1 Ու երբոր ասոնք բաները կատարուեցան, իշխանները ինծի մատեցան, ու ըսին· Իսրայէլի ժողովուրդը, ու քահանաները, ու Ղեւտացիները՝ — — երկիրներուն ժողովուրդներէն չզատուեցան, հետ քանանացւոց, քետացւոց, փերեզացւոց, Յերուսացւոց, Ամմոնացւոց, Մովաբացւոց, Եգիպտացւոց ու Ամորհացւոց պղծութեանց պէս։

2 Թիւներուն պէս՝ անոնց աղջիկներէն առին իրենց համար ու իրենց որդւոցը համար՝ եւ սուրբ սերունդը խառնուեցաւ· ու իշխանները ու ոստիկանները ասոնց մեղքը գործելու

3 մէջ առաջինները եղան։ Եւ ասոնք լսածիս պէս՝ հանդերձս ու վերարկուս պատռեցի, և գլխուս ու մօրուքիս մազերը փետռեցի,

4 ու ապշած նստայ։ Ան ատենը դերութենէն դարձողներուն յանցանքին պատճառաւ՝ Իսրայէլի Աստուծոյն խօսքերէն բոլորը վախցողները իմ քովս ժողվուեցան· ու ես մինչև իրիկուան զոհին ապշած նստայ։

5 Եւ իրիկուան զոհին ոտքս տառապանքէս ելայ, ու պատռած հանդերձներովս ու վերարկուովս՝ ծնկան վրայ եկայ, ու ձեռքերս իմ Տէր Աստուծոյս առջևը

6 տարածեցի, ու ըսի· Ով Աստուած իմ՝ ես կ'ամչնամ, ու իմ երեսս քեզի վերցընելու չեմ համարձակիր, ով Աստուած իմ· վասն զի մեր անօրէնութիւնները մեր գլխէն վեր բարձրացան, ու մեր յանցանքը մինչև երկինքը ելաւ։

7 Մեր հայրերուն օրերէն՝ ի վեր՝ մենք մեծ յանցանքի մէջ ենք մինչև այս օրս· ու մեր անօրէնութիւններուն համար՝ մենք ու մեր թագաւորները՝ մեր քահանաները՝ երկիրներու թագաւորներուն ձեռքը՝ սուրի, գերութեան, յափշտակութեան ու հերևսի սևութեան տրուեցանք, ինչպէս որ այսօր կ'երևի։

8 Հիմա քիչ մը առեն մեր Տէր Աստուծմէն ողորմութիւն եղաւ, որ մեզի փրկութիւն շնորհէ, ու իր սրբութեանը տեղին մէջ մեզ հաստատէ՝, որ մեր Աստուածը մեր աչքերը լուսաւորէ, ու մեր ծառայութեանը մէջ մեզի քիչ մը

9 հանգստութիւն տայ։ Վասն զի մենք ծառայ էինք, բայց մեր Աստուածը մեզ երեսէ չձգեց մեր ծառայութեանը մէջ· հապա մեզի հանգստութիւն տալու, ու մեր Աստուծոյն տունը կանգնելու, և անոր աւերակները նորոգելու, ու մեզի Ցուդայի մէջ ու Երուսաղէմի մէջ պարսպապատ տեղ մը տալու համար, պարսից թագաւորներուն

10 առջևը մեզի շնորհք գտնել տուաւ։ Եւ հիմա ով Աստուած մեր՝ ասկէ ետքը ի՞նչ բանք· քանզի քու պա-

11 տուիրանքներդ թողուցինք, որ

Ն·ք·ղԲ· 427

ֆԵԼ· Լղ· 16, բ Օր· է·3, Նէեմ. ժգ· 23,

ֆԵԼ· ԺԹ· 6, իբ· 31, բՕր·է·6, ԺԳ· 2,

ի Ա՞ր·ղ· 14,

ՂՑբ·ա· 20,

ի Ա՞ղ·ՀԿգ· 4,

ըԳԼ·Ժ·3, Ես·կգ·2,

ֆԵԼ·ԽԹ· 39,

ֆԵԼ·Թ· 29, 33,

իԴԱՆ·Թ· 7, 8,

ԼՄՂ·լբ· 4,

իրՄՆ·իբ· 9, Ցայ·Ժբ·5,

ֆՄՂ·ճղ· 6, Դան.Թ· 5, 6, 8,

ֆբ Օր·իբ· 36, 64, Նէեմ.Թ.30,

հԴԱՆ·Թ· 7, 8,

*ԵՔԲ·մեզի բևեռ մը տայ· Ես· իբ·23,

յՄՂ·ԺԳ· 3, լՂ·5, ՂՆէեմ.Թ. 36,

ֆՄՂ·ճկԸ· 23,

ՀԵ·է·2, յԳԼ·է·28,

Ն · Ք · ՂԲ · 457

քու ծառաներուդ մարդարէներուն ձեռքովը պատուիրեցիր՝ ըսելով . Ան երկիրը՝ որ պիտի մտնէք զանիկայ ժառանգելու համար , գարշելի երկիր մըն է , երկիրներու ազգերուն գարշելի պղծութիւններովը լեցուն . որովհետև զանիկայ ձեզի չտայինք ի ծայր իրենց անմաքրութեամբը

ՆԳԼ · Գ · 21 ·

ՆԵՂ · Գ · 16 ·

12 լեցուցեր են ։ Ուրեմն ՚ձեր աղջիկները անոնց որդւոցը չտաք , ու անոնց աղջիկները ձեր որդւոցը համար չառնէք , և յաւիտեան անոնց խաղաղութիւնը ու երջանկութիւնը չփնտռէք , որպէս զի ուժովնաք , ու ան երկրին բարիքը ուտէք , ու ՚ձեզմէ՚ ձեր որդւոցը յաւիտենական ժառանգութիւն

ԵՐՕր · Իգ · 6 ·

ՂԱռակ · Ժգ · 22 ։ Ի · 7 ·

13 թողուք ։ Ու մեր չար գործերուն համար , ու մեր մեծ յանցանքին համար՝ ՚՚ բոլոր բաները մեր վրայ գալէն ետքը (թէպէտև դուն ով Աստուած մեր՝ Ն ՚ի՚ չպատժեցիր մեր մեղացը չափ , հապա մեզի այս-

ԼՍող · Ճգ · 10 ·

14 պէս փրկութիւն տուիր ,) պի՞տի էր որ նորէն ՚քու պատուիրանքներդ զանց ընէինք , և ՚աս գարշելի ազգերուն հետ խնամութիւն ընէինք . միթէ դուն Ամէն պիտի չսրդողէիր , ու մեզ պիտի չպահռէիր , մինչև որ ՚ՆՀԵ մնացորդ ու-

ՀԵՐ 2 ։ ՆԵՒՀՄ. Իգ · 23 ։ 27 ։ ԼԵՕր · Թ · 8 ։ ՚ՆԵՒՀՄ. Թ · 33 ։ Դան · Թ · 14 ։

15 ազատուած մը չմնար ։ Ո՛վ Ցէր Աստուած Իսրայէլի , ՚դուն արդար ես . վասն զի մենք մինչև աս օրս ողջ մնացինք . ահա մենք ՚մեր յանցանքովը չքու առջեւդ ենք . Թէպէտև աս պատճառաւ ՚՚քու առջեւդ չենք կրնար կայնիլ ։

ՐԵՄՍ · Ի · 9 ։

Բ Դան · Թ · 20 ։

ՆՀԵՄ. Իգ · 27 ։

ԵՐՄՍ · ԼԲ · 31 ։

Գ Լ · Ժ

1 Սէքենիա կը յորդորէ Եզրասը՝ որ օտար ազգաց հետ եղած ամուսնութիւնները խափանէ ։ 6 Եզրաս սուգ բռնելով՝ ժողովուրդը կը ժողվէ ։ 9 Ժողովուրդը՝ Եզրասին յորդորանքը կը զգան , ու կը խոստանան որ այնուհետև ան մեղքէն հրաժարին ։ 15 Ան բանը գլուխ կը տարուի ։ 18 Օտարազգի կիներ ունեցողներուն անունները ։

1 ՚՚Ու երբոր Եզրաս՝ լալով ու ՚՚Աստուծոյ տանը առջեւը գետինը ինկած՝ ՚՚ աղօթքը ու խոստովանութիւնը կ՚ընէր , Իսրայէլէն խիստ շատ բազմութիւն՝ երիկ ու կնիկ մարդիկ , ու տղաքներ՝ անոր քովը ժողվուեցան . և ժողովուրդը

2 խիստ շատ լացաւ ։ Ու Եղամի որդիներէն՝ Ցեքիէլի որդին Սէքենիան՝ Եզրասին պատասխան տուաւ ու ըսաւ . Մենք ՚մեր Աստուծոյն դէմ մեղք գործեցինք , ու երկրին ժողովուրդներէն օտար կնիկներ առինք . բայց հիմա աս բանիս մէջն

3 ՚Լ Իսրայէլի համար յոյս կայ ։ Եւ հիմա ՚մեր Աստուծոյն առջեւը ուխտ ընենք , որ բոլոր կնիկները ու անոնցմէ ծնածները՝ իմ տիրոջս , ու մեր Աստուծոյն ՚ի հրամանէն ՚՚վախցողներուն խրատովը հանենք , և ՚՚ ՚ՏՐՅՆ օրէնքին համեմատ թող

4 ըլլայ ։ Ելիր , վասն զի աս գործը քեզի կ՚իյնայ . մենք ալ քեզի հետ կ՚ըլլանք . ՚ զօրացիր ու ըրէ ։

5 Ու Եզրաս ելաւ , և քահանայից իշխաններուն , Ղեւտացիներուն , ու բոլոր Իսրայէլին ՚երդում՚ ընել տուաւ որ աս խօսքիս պէս ընեն .

6 և անոնք երդում՚ ըրին ։ Ու Եզրաս՝ Աստուծոյ տանը առջեւէն ելաւ , ու Եղիասիբի որդւոյն Ցոհանանին սենեակը գնաց . և հոն մնալով՝ ՚Հաց չկերաւ , ու ջուր չխմեց . վասն զի գերութենէ եկածներուն յանցանքին համար

7 սուգ կը բռնէր ։ Եւ Ցուդայի ու Երուսաղէմի մէջ մունետիկ կանչել տուին , որ բոլոր գերութենէ եկածները Երուսաղէմ ժողովուին .

8 Ու մինչև իրեք օր ով որ չգար՝ իշխաններուն ու ծերերուն հրամանին համեմատ , անոր բոլոր ստացուածքը *նզոված պիտի ըլլար , ու ինքը գերութենէ դարձողներուն ժողովքէն պիտի զատուէր ։

9 Եւ Ցուդայի ու Բենիամինի բոլոր մարդիկները ան իրեք օրուանը մէջ՝ այսինքն իններորդ ամսուն քսաներորդ օրը՝ Երուսաղէմի մէջ ժողվուեցան . և ՚՚ բոլոր ժողովուրդը ՚՚ գործիս համար՝ ու սաստիկ անձրևներուն համար՝ դողալով նստան Աստուծոյ տանը հրապա-

10 րակին մէջ ։ Ու Եզրաս քահանան ելաւ , ու անոնց ըսաւ . Դուք մեղք գործեցիք , և օտար կնիկներ առնելով՝ Իսրայէլին յանցանքը

11 աւելցուցիք ։ Ու հիմա ձեր հայրերուն Ցէր Աստուծոյն ՚՚ԼՔ իյնէր խոստովանեցէք , և անոր հաճոյ եղածը ըրէք , ու ՚երկրիս ժողովուրդներէն ու օտար կնիկներէն զատուեցէք ։

12 Ան ատենը բոլոր ժողովը պատասխան տուին , ու բարձր ձայնով ըսին . †Մեր պարտքն՚ է որ անանկ՝ քու ըսածիդ պէս ընենք .

13 Բայց ժողովուրդը շատ՚ ու ժամանակը անձրեւոտ է , ու դուրս տեղ չենք կրնար կայնիլ . և ասիկայ մէկ օրուան կամ երկու օրուան գործ չէ . քանզի շատերնիս աս

14 բանիս մէջ յանցաւոր ենք ։ Հիմա մեր իշխանները բոլոր ժողովքին համար կայնին , ու մեր քաղաքներուն մէջը բոլոր օտար կնիկ առնողները որոշուած ժամանակներու մէջ դան . և ամէն մէկ քաղաքին ծերերը ու դատաւորները անոնց հետը ըլլան , մինչև որ աս

Ն · Ք · ՂԲ · 457

ԵՐՕր · Է · 2 ։ 3 ։

ՂԳԼ · Թ · 4 ։

ԵՄՍ · Իբ · 10 ։

ՃՆԵՀՄ. Ե · 12 ։

ՖՐՕր · Թ · 18 ։

*Կ՚գրաւել

ՃՑես · Ա Թագ · Ժբ · 18 ։

ՃՑես. Է. 19 ։ ՂԱռակ · Իբ · 13 ։ ԼՀԵՐ 3 ։

†ԵՀԲ · Մ՚ր վրայ

Ն · Ք · ՂԲ · 457

ԻՐ ՄՆ · Հ · 8 ։ ՚ Կ–՛ ՄԻՒՆ

բանիս համար Իմր Աստուծոյն սաստիկ բարկութիւնը մեզմէ դառնայ ։

15 *Ուստի Ասայելի որդին Յովնաթանը , ու Թեկուայի որդին Յազիան աս գործիս վրայ կայնեցան , ու Մեսուղամ , ու Ղևտացի Սաբեթան անոնց օգնութիւն ըրին ։

16 Եւ գերութենէ ելածները այնպէս ըրին . ու Եզրաս քահանան , ու քանի մը տոհմապետներ իրենց տոհմերուն համեմատ՝ (ամէնն ալ իրենց անուններովը) ընտրուեցան . ու տասներորդ ամսուն առաջին օրը՝ աս գործը քննելու նստան . Եւ

17 բոլոր օտար կնիկ առնող մարդիկներուն գործը առաջին ամսուն առաջին օրը լմընցուցին ։

456

18 Ու քահանայից որդիներէն օտար կնիկ առնողներ ---ն գտնուեցան . Յովսեդեկեան Յեսուին որդիներէն ու եղբայրներէն՝ Մասսիա , Եղիա-

19 զար , Յարիբ ու Գոդողիա . Եւ իրենց կնիկները արձակելու † խօսք տուին . ու † յանցաւոր ըլլալով՝ իրենց յանցանքին համար հօտերէն

20 մէյմէկ խոյ ---ն ։ Ու Եմմերի որդիներէն՝ Անանի ու Զաբադիա .

21 Ու Հարիմի որդիներէն՝ Մասսիա , Եղիա , Սեմայիա , Եհիէլ ու Ո-

22 զիա . Եւ Փասուրի որդիներէն՝ Եղովէնայի , Մասսիա , Իսմայէլ , Նաթանայէլ , Յովզաբադ ու Ե-

23 ղեասա . Ու Ղևտացիներէն՝ Յովզաբադ , Սեմէի , Կովղիա , այսինքն Կովղիտա , Փեթայիա , Յուդա ու Եղիաւեր . Ու դռնապաններէն՝

24 25 Սեղղում , Յէլէմ և Ուրի . Ու Իսրայէլէն՝ Փարոսի որդիներէն՝ Ռամիա , Յեզեա , Մելքիա , Միամին , Եղիազար , Մելքիա ու Բանայիա .

26 Նեա . Ու Եղամի որդիներէն՝ Մաթանիա , Զաքարիա , Յեհիէլ ,

27 Աբդի , Յերիմովթ ու Եղիա . Եւ Զաթուի որդիներէն՝ Եղովէնայի , Եղիասիբ , Մաթանիա , Յերիմովթ ու Զաբադ ու Ազիզա . Եւ

28 Բեբայիի որդիներէն՝ Յովհանան , Անանիա , Զաբբայ --- Աթլայ .

29 Եւ Բանիի որդիներէն՝ Մեսուղամ , Մալուք , Ադայիա , Յասուբ , Սա-

30 ղ ու Ռամովթ . Եւ Փահաթ Մովաբի որդիներէն՝ Եղնա , Քաղէլ , Բանեա , Մասսիա , Մաթանիա , Բեսելէէլ , Բանուի ու Մանասէ .

31 Ու Հարիմի որդիներէն՝ Եղիազար , Յեսիա , Մելքիա , Սեմայիա ,

32 Շմաւոն , Բենիամին , Մալուք ---

33 Սամարիա . Հասումի որդիներէն՝ Մաթթանայ , Մատտաթա , Զաբադ , Եղիփաղէտ , Յերեմի , Մանասէ

34 --- Սեմէի . Բանիի որդիներէն՝

35 Մաադայ , Ամրամ , Ուէլ , Բա-

36 նեա , Բադայիա , Փեղուհայ , Ուա-

37 նիա , Մերամոթ , Եղիասիբ , Մաթթանիա , Մաթթանայ , Յասասու ,

38 Բանի , Բանուի , Սեմէի , (39) Սե-

40 ղեմիա , Նաթան , Ադայիա , Մաք-

41 նադբայ , Սասայ , Սարայ , Ազա-

42 րիէլ , Սեղեմիա , Սամարիա , Սեղ-

43 ղում , Ամարիա --- Յովսէփ . Նաբաւի որդիներէն՝ Յէհիէլ , Մատթիթիա , Զաբադ , Զերինա , Յա-

44 դայի , Յովէլ --- Բանեա ։ Ամէնք ամէնը օտար կնիկներ առեր էին . ու անոնցմէ ոմանք՝ զաւակ բերած կնիկներ ունէին ։

Ն · Ք · ՂԲ · 456

† ԵՍՔ · ՀՆԱ-ԳԵՐՆԻՆ ՅՂԱ · Գ · 4 , 6 ։

ԳԻՐՔ ՆԱՀԱՄԱՑ

ՆԱՀ. ԳԼ. 446

ԳԼՈՒԽ Ա

1 Նէեմիա՝ Ընտիէն լսելով Երուսաղէմի դրժբաղդութիւնը, սուգ կ'ընէ, ծոմ կը պահէ, ու կ'աղօթէ։ 5 Ընոր աղօթքը։

– ԳԼ. Ժ. 1։

1 Քաղիայի որդւոյն Նէեմիային խօսքերը։

Ու եղաւ որ՝ Քասղև ամսուն մէջ՝ Արտաշէս Թագաւորին քսաներորդ տարին՝ երբոր ես Շուշան մայրաքաղաքն էի, Անանի անունով եղբայրներէս մէկը, ու քանի մը ցուդայի մարդիկներ էնէն ելան. և անոնց՝ գերութենէ ազատուած ու մնացած Հրէաներուն վրայով՝ ու Երուսաղէմին վրայով հարցուցի։

3 Եւ ինծի ըսին. Գերութենէ ազատուած մնացածները՝ հոն գաւառին մէջը՝ մեծ նեղութեան ու անարդութեան մէջ են, ու Երուսաղէմին պարիսպը փլած, և անոր դռները կրակով այրուած են։

4 Ու երբոր ես ա խօսքերը լսեցի, նստայ լացի. ու քանի մը օր սուգ բռնեցի, և ծոմ պահելով՝ երկնից Աստուծոյն առջևը աղօթք ըրի,

5 ու ըսի. Ո՛Տ, Տ՛Ցէր Աստուած երկնից, որ մեծ ու ահեղ Աստուած ես, ու քեզ սիրողներուն և քու պատուիրանքներդ պահողներուն՝ ուխտ ու ողորմութիւն կը

6 պահես. կ'աղաչեմ, քու ականջներդ թող մտիկ ընեն, ու աչքերդ բաց ըլլան, որ լսես քու ծառայիդ աղօթքը, որն որ քու ծառաներուդ Իսրայէլի որդւոյը համար հիմա ցորեկ ու գիշեր քեզի կը մատուցանեմ, և խոստովանելով Իսրայէլի որդւոյը մեղքը, որով քեզի դէմ մեղանչեցինք. քանզի Թէ ես՝ և Թէ իմ հօրս

7 տունը մեղք գործեցինք. Ցիրաւի ըմենք քու առջևդ անօրէնութիւններ ըրինք, ու քու ծառայիդ Մովսէսին տուած պատուիրանքներդ, կանոններդ ու դատաստան։

8 Ներդ չպահեցինք։ Ա՛յն կ'աղաչեմ՝ յիշէ ան խօսքը, որ քու ծառայիդ Մովսէսին պատուիրեցիր, բսելով. Թէ որ յանցանք ընէք, ես ձեզ ազգերու մէջ պիտի ցրեմ.

9 բայց Թէ որ ինծի դառնաք, ու իմ պատուիրանքներս պահէք, ու զանոնք կատարէք, և ձեզմէ ցրուածները Թէև երկրիս ծայրը ըլլան, զանոնք անկէ պիտի ժողվեմ, ու ան տեղը պիտի տանիմ՝ որն որ ընտրեցի իմ անունս հոն

10 դնելու համար։ Եւ հիմա անոնք՝ քու մեծ ուժովդ ու զօրաւոր ձեռքովդ ազատած ծառաներդ ու ժողովուրդդ են։ 11 Ո՛Տ Ցէր, հիմա քու ծառայիդ աղօթքը, ու քու անունդդ վախնալու փափաք ունեցող ծառաներուդ աղօթքը խնդրանքդ թող լսէ. և այսօր քու ծառայիդ յաջողութիւն տուր, ու աս մարդուն առջևը ինծի շնորհք դանել տուր։ Վասն զի ես թագաւորին հմատուական էի։

ՆԱՀ. ԳԼ. 446

ԼԲ Օր. Լ. 4։

* ԵՔԲ. երկնից

Ի Բ Օր. Թ. 29։ Դան. Թ. 15։

Ե Ես. Իդ. 8։ Երբ. Ժգ. 18։ ¶ Հմր 6։

Հ Գլ. Բ. 1։

ԳԼ. Բ

1 Արտաշէս՝ Նէեմիային որոմութեանը պատճառը կ'իմանայ, ու նամակներ ու պատուէրներ տալով՝ զանիկայ Երուսաղէմ կը խրկէ։ 9 Նէեմիա Երուսաղէմ կու գայ. իսկ Հրէից թշնամիները անոր գալուն վրայ կը տրտմին։ 12 Անիկայ գաղտուկ կ'երթայ՝ պարսպին փլած տեղուանքը տեսնելու։ 17 Նէեմիա կը յորդորէ Հրէաները որ պարսպին շինութիւնը սկսին, թշնամեաց խօսքերուն ականջ չդնելով։

1 Ու եղաւ որ Նիսան ամսուն մէջը՝ Արտաշէս թագաւորին քսաներորդ տարին՝ անոր առջևը գինի կար, և ես գինին առի, ու թագաւորին տուի. ու անոր առջևը ես

2 տրտում երես չէի եղեցած։ Եւ թագաւորը ինծի ըսաւ. Ինչո՞ւ երեսդ տրտում է, որովհետև հիւանդ չես. ատիկայ ուրիշ բան չէ, բայց եթէ սրտի տրտմութիւն.

3 ու ես խիստ շատ վախցայ։ Ըն ատենը թագաւորին ըսի. Թագաւորը յաւիտեան ողջ կենայ. ինչպէս իմ երեսս տրտում չըլլայ, որ իմ հարցս գերեզմաններուն տեղը եղող Էքաղաքը աւերակ՝ ու անոր դռները կրակով այրած են։

4 Եւ թագաւորը ինծի ըսաւ. Դուն ինծմէ ի՞նչ կը խնդրես աս բանիս վրայով։ Ըն ատենը երկնից Ա-

5 տուծոյն աղօթք ըրի. Ու թագաւորին ըսի. Թէ որ թագաւորին հաճոյ կ'երևնայ, ու Թէ որ քու ծառադ քու առջևդ շնորհք գրտաւ, զիս Հրէաստան խրկես իմ

ԽԲԲ 445

– Եզր. Է. 1։

Բ Գլ. Ա. 11։

Ի Առակ. Ժե. 13։

Ե Գ Թագ. Ա. 31։ Դան. Բ. 4։ Ե. 10։ Չ. 6։ 21։

Ի Գլ. Ա. 3։

Հարցս գերեզմաններուն քաղաքը ,
6 որ զանիկայ չինեմ : Եւ Թագաւորը ինծի բսաւ . (ու Թագուհին անոր քովը նստեր էր .) Քու ճամբորդութիւնդ որչափ առեն պիտի քշէ , ու ե՞րբ պիտի դառնաս . և Թագաւորին հաճոյ երեցաւ որ զիս խրկէ . ես ալ անոր ժամանակ
7 որոշեցի : Ու Թագաւորին բսի . Թէ որ Թագաւորին հաճոյ կ'երեւնայ , ինծի նամակներ տրուի Գետին միւս կողմը եղող իշխաններուն , որ զիս անցընեն , մինչև որ Հրեաս-
8 տան երթամ , Ու մէկ նամակ մը Ասափին՝ որ Թագաւորական * պարտէզին պահապանն է , որպէս զի ինծի փայտ տայ , Աստուծոյ տանը աշտարակին դռները , և քաղաքին պարիսպը , ու մնելու տունս չինելու համար : Եւ Թագաւորը ինծի տուաւ . վասն զի ես իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս էր :
445 9 Ու Գետին միւս կողմը եղող իշխաններուն գացի , ու Թագաւորին նամակները անոնց տուի . և Թագաւորը իմ հետս զօրապետներ
10 ու ձիաւորներ խրկեց : Ու երբոր Սանաբաղատ Որոնացին՝ ու Ամմոնացի ծառան Ցուբիան լսեցին , շատ նեղացան , որ Իսրայէլի որդուոյր աղէկութիւնը փնտռելու հա-
11 մար մարդ մը եկաւ : Ու Երուսաղէմ եկայ , և հոն իրեք օր մնացի :
12 Ու ես քանի մը մարդոց հետ՝ գիշերով ելայ . ու ինչ որ իմ Աստուածս սրտիս մէջը դրեր էր Երուսաղէմին համար ընելու , զանիկայ մարդու մը չզրուցեցի , և ինծի հետ՝ իմ հեծած անասունէս 'ի զատ՝ ուրիշ անասուն մը չկար :
13 Եւ գիշերով Ձորի դռնէն՝ վիշապի աղբիւրին առջևէն Աղբիւրի դուռը ելայ , ու Երուսաղէմին փլած պարիսպները ու կրակէն այ-
14 րած դռները զննեցի : Եւ Աղբիւրի դուռը ու Թագաւորին աւազանը անցայ , ու տակս եղող անա-
15 սունին անցնելու տեղ չկար : Եւ գիշերով Հեղեղատէն վեր ելայ՝ ու պարիսպը զննեցի . ու դարձայ Ձորի դռնէն մտայ , ու այսպէս նորէն
16 իմ տեղս եկայ . Եւ ոստիկանները իմ ուր երթալս ու ինչ ընելս չիմացան . ու Հրեաներուն , կամ քահանաներուն , կամ ազնուականներուն , կամ ուրիշներուն՝ որոնք գործը կ'ընէին , մինչև հիմա չզրուցեցի :
17 Ետքը անոնց բսի . Դուք կը տեսնէք աս թշուառութիւնը՝ որուն մէջը կը գտնուինք , և թէ ինչպէս Երուսաղէմը աւերակ , ու անոր
դռները կրակով այրուած են . եկէք Երուսաղէմին պարիսպը շինենք , որ այսուհետև ծնաստինք այլևս նախատանք չրլլանք :
18 Եւ ինծի ցոյց տուի իմ Աստուծոյս բարի ձեռքը իմ վրաս ըլլալը , ու Թագաւորին ինծի բսած խօսքերն ալ անոնց պատմեցի . ու անոնք բսին . Ելլենք շինենք . և իրենց ձեռքերը ուժովցուցին՝ բարի գործին համար :
19 Բայց Որոնացի Սանաբաղատը , ու Ամմոնացի ծառան Ցուբիան , և Արաբացի Գեսամը լսելով՝ մեզ ծաղր ըրին , ու մեզ քամահրելով՝ բսին . Ա՞ս ձեր ըրած գործը ի՞նչ պիտի ըլլայ . Ուզե՞ք դուք թագաւորին ապստամբի՞լ :
20 Եւ անոնց պատասխան տուի , ու բսի . Երկնից Աստուածը՝ ինքը մեզի յաջողութիւն պիտի տայ , ու մենք՝ որ անոր ծառաներն ենք , պիտի ելլենք ու շինենք , բայց դուք Երուսաղէմի մէջ բաժին , իրաւունք ու յիշատակ չունիք :

ԳԼ . Գ

1-32 Պարիսպը շինող մարդոց անունները ու անոնց կարգը :

1 Ու մեծ քահանան Եղիասիբ , և անոր քահանայ եղբայրները ելան , ու Ոչխարաց դուռը շինեցին . անոնք զանիկայ նուիրեցին , և անոր փեղկերը կանգնեցին . ու զանիկայ մինչև Մէային աշտարակը , մինչև Հանանայելի աշտարակը նուի-
2 րեցին : Եւ անոր քովը՝ Երիքովի մարդիկը շինեցին . ու անոնց քովը՝
3 Իմրիի որդին Զաբուդը շինեց : Եւ Ձկանց դուռը՝ Սենայայի որդիքը շինեցին . անոնք զանիկայ շինեցին , ու անոր փեղկերը , փականքը ու
4 նիգևերը անցուցին : Եւ անոնց քովը՝ Ակկուսի որդւոյն Ուրիայեան որդին Մերամոթը նորոգեց . ու անոնց քովը՝ Մասիզաբելի որդւոյն Բարաքիայեան որդին Մեսուղամը նորոգեց . և անոնց քովը՝ Բաանայի
5 որդին Սադովկը նորոգեց : Ու անոնց քովը՝ Թեկուացիք նորոգեցին . բայց անոնց մեծերը Տիրեանց Ցերոջը գործին իրենց վիզը չծռե-
6 ցին : Եւ Հին դուռը՝ փասէի որդին Յովիադան ու Բասոդիայի որդին Մեսուղամը նորոգեցին . անոնք զանիկայ շինեցին , ու անոր փեղկերը , փականքը ու նիգերը
7 անցուցին : Եւ անոնց քովը՝ Գաբաւոնացի Մելատիան , ու Մերոնոթացի Յադոնը , և Գաբաւոնի ու Մասբայի մարդիկները շինեցին , մինչև Գետին աս կողմը եղող իշ-
8 խանին Թաթոռը : Անոր քովը՝ ոսկերիչներէն Հարհայայի որդին

Ն . Ք . ՂՓ . Իրր 445
Ն . Ք . ՂՓ . Իրր 446
ՂԳԼ . Ե . 14 ; Ժգ . 6 ;
* Կ՚ ան-տառին
Ի ԳԼ . Գ . 7 ;
ԸԵԶՐ . Ե . 5 ; Է . 6 , 9 , 28 ; ՀԺՐ 18 ;
Ի ԵԶՐ . Բ . 32 ;
Ի Բ ՄՆ . ԻԳ . 9 ; ԳԼ . Գ . 13 ;
Ի ԳԼ . Ա . 3 ; ՀԺՐ 17 ;
ՂԳԼ . Գ . 15 ;
Ի Բ ԹԱԳ . Ժե . 23 ; ԵՐԵՄ . ԼԱ . 40 ;
ԹԳԼ . Ա . 3 ; Սաղ . ԽԹ . 13 ; ՀԲ . 4 ; ԵՐԵՄ . ԻԹ . 9 ; Եզկ . Ե . 14 , 15 ; Իր . 4 ;
Ն ՀԺՐ 8 ;
ՀԲ ԹԱԳ . Բ . 7 ;
ՅՍաղ . ԽԹ . 13 ; ՀԲ . 4 ; Ե . 6 ;
ՂԳԼ . Զ . 6 ;
Ֆ ԵԶՐ . Դ . 3 ;
— ԳԼ . Ժբ . 10 ;
Բ ՑՈՒ . Ե . 2 ;
Ֆ ԳԼ . Ժբ . 39 ;
Ֆ ԵՐԵՄ . ԼԱ . 38 ; Զաք . Ժգ . 10 ;
Ի ԵԶՐ . Բ . 34 ;
ՂԲՄՆ . ԼԴ . 14 ; ԳԼ . Ժբ . 39 ; ՄՓ . Ա . 10 ;
Ի ՑԵՒ ԳԼ . Ջ . 1 ; Է . 1 ;
Ը ԴԱՆ . Է . 23 ;
Ի ԳԼ . Ժբ . 39 ;
ՃԳԼ . Բ . 8 ;

Ն · ք · գՔ · 445

Ոզիէլը նորոգեց . ու անոր քովը՝ դեղագործներուն որդին Ննանիան նորոգեց . ու Երուսաղէմը՝ մինչև
9 Հլայն պարիսպը Թողուցին ։ Եւ անոնց քովը՝ Երուսաղեմի կէս մասին իշխանը՝ Ովրի որդին Հռափա-
10 յիան նորոգեց ։ Եւ անոնց քովը՝ ու իր տանը դիմացը՝ Հարումափի որդին Յեդայիան նորոգեց . ու անոր քովը՝ Ասաբանէայի որդին
11 Փետոուսը նորոգեց ։ Միւս բաժինը , Լու փուռերու աշտարակը՝ Հարիմի որդին Մելքիան , ու Փահաթ մովաբի որդին Ասուբը նո-
12 րոգեցին ։ Եւ անոր քովը՝ Երուսաղեմի կէս մասին իշխանը՝ Ալոհեի որդին Սեղդումը՝ ինքը ու իր աղ-
13 ջիկները նորոգեցին . Հ Զորի դուռը՝ Անոնը , ու Զանովհի բնակիչները նորոգեցին . անոնք զանիկայ շինեցին , ու անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուցին . ու պարիսպէն հազար կանգուն Հնէգին՝
14 մինչև Հ Աղբից դուռը ։ Եւ Աղբից դուռը՝ Բեթհաքարմայի կողմանց իշխանը՝ Ռեքաբի որդին Մելքիան նորոգեց . զանիկայ ան շինեց , ու անոր փեղկերը , փականքը ու նիգե-
15 րը անցուց ։ Եւ Աղբիւրի դուռը՝ Մասփայի կողմանց իշխանը՝ Քողղէի որդին Սեղդունը նորոգեց . զանիկայ ան շինեց , ու ծածկեց . և անոր փեղկերը , փականքը ու նիգերը անցուց . ու Թադաւորի պար-
տէզին մօտ եղող Սիլովայի աւազանին պարիսպը՝ մինչև Դաւիթի քաղաքէն իջնող աստիճանները
16 Հնէց ։ Անկէ ետքը՝ Բեթսուրի կէս մասին իշխանը՝ Ազբուքի որդին Նէեմիան նորոգեց , մինչև Դաւիթին գերեզմաններուն դիմացը , ու մինչև Հշինծու աւազանը , ու մինչև
17 Բեթհաքարիրը ։ Անկէ ետքը՝ Ղեւտացիք նորոգեցին . Բանիի որդին Հռէհումը . անոր քովը՝ Կէիլայի կէս մասին իշխանը Ասբիան՝
18 իր տեղուանքը նորոգեց ։ Անկէ ետքը անոնց եղբայրները՝ Կէիլայի կէս մասին իշխանը՝ Ենադադի որ-
19 դին Բաւային նորոգեց ։ Եւ անոր քովը՝ Մասփայի իշխանը՝ Ցեսուի որդին Եզերը՝ միւս բաժինը նորո-
գեց , Հյինէն Ղ-ը-ղէն դարձուածքը , ու զինապանը ելլելու տ-ջ-ն
20 դիմացն է ։ Անկէ ետքը՝ միւս բաժինը Դ-ը-ղէն դարձուածքէն մինչև մեծ քահանային Եղիասիբին տանը դուռը՝ Զաբբայի որդին Բարուքը
21 փութով նորոգեց ։ Անկէ ետքը միւս բաժինը՝ Եղիասիբին տանը դունէն մինչև Եղիասիբին տանը ծայրը՝ Ակկուսի որդւոյն Ուրիային
22 որդին Մերամոթը նորոգեց ։ Եւ

Ն · ք · գՔ · 445

անկէ ետքը քահանաները՝ դաշտի
23 բնակիչները նորոգեցին ։ Ու անկէ ետքը՝ Բենիամինը ու Ասուբը իրենց տուներուն առջևը նորոգեցին . անկէ ետքը՝ Անանիայի որդւոյն՝ Մասասիային որդին Ազարիան՝ իր
24 տանը դիմացը նորոգեց ։ Անկէ ետքը՝ միւս բաժինը՝ Ազարիայի տունէն մինչև տ-ր-ղէն դարձուածքը՝ մինչև անկիւնը ,
25 Ենադադի որդին Բանուին նորոգեց ։ Ե-ուզայի որդին Փաղաղը՝ դ-ր-դէն դարձուածքին դիմացը , ու Հբանտի դաւիթին քովը եղող թագաւորին վերի պալատին դուրսի աշտարակը
Ջինէց . — անոր ետևէն՝ Փարոսի որ-
26 դին Փադայիան Ջինէց ։ Եւ Նաթանայիմները՝ Ոփաղ կը բնակէին , մինչև արևելեան կողմը եղող Ջուրի դրանը դիմացը , ու
27 դուրսի աշտարակը Նր-ֆէնէն ։ Անկէ ետքը միւս բաժինը՝ դուրսի մեծ աշտարակին դիմացէն մինչև Ոփաղի պարիսպը՝ Թեկուացիք նորոգեցին ։
28 Ձիերու դռնէն վեր՝ քահանաները նորոգեցին՝ ամէն մարդ իր տանը
29 դիմացը ։ Անկէ ետքը՝ Իմմերի որդին Սադովկը՝ իր տանը դիմացը նորոգեց . ու անկէ ետքը արևելեան դրանը պահապանը՝ Սեքենիայի որդին Սեմայիան նորոգեց ։
30 Անկէ ետքը միւս բաժինը՝ Սելեմիայի որդին Ննանիան , ու Սեղեփի վեցերորդ որդին Ասոնը նորոգեց . անկէ ետքը՝ Բարաքիայի որդին Մեսուղամը՝ իր սենեակին դիմացը
31 նորոգեց ։ Անկէ ետքը՝ *Սարեփիի որդին Մելքիան՝ մինչև Նաթանայիմներուն ու վաճառականաց տունը Մափկաթի դրանը դիմացը՝ ու մինչև †անկիւնը ելլելու տեղը"
32 նորոգեց ։ Եւ անկիւնը ելլելու տեղէն մինչև Ոչխարաց դուռը՝ ոսկերիչները ու վաճառականները նորոգեցին ։

Գ Լ · Դ

1 Երբոր Թ-նամիները ծաղր կ'ընէն , Նէեմիա ազօթք կ'ընէ , ու գործը կը շարունակէ . 7 ու Թ-նամիներուն բարկութիւնը ու գաղտի խորհուրդը իմանալով՝ պահապաններ կը դնէ . 13 գործը բանողներուն կը հրամայէ որ վրանին զէնք առնեն , 19 ու անոնց պաշտպաններ կու-
տայ ։

1 Ու երբոր Սանաբաղատ լսեց որ մենք պարիսպը կը շինենք , սիրտը նեղացաւ , ու շատ սրդողելով՝
2 Հրէաները ծաղր բրաւ ։ Եւ իր եղբարցը ու Սամարիայի զօրքին առջևը խօսեցաւ , ու բաւ . Ա՛ս տկար Հրէաները ի՞նչ կը շինեն . միթէ թոյլտուութիւն կ'ըլլայ ա-
նոնց . միթէ զոհ պիտի զոհեն , ու այսօր լմընցընեն . միթէ այրած քարերը փոշիի դէզերէ՞ն պիտի կեն-

Գ Լ · ժ · 10 · 19 ։

* Կ-ի՛ ոսկերչի

* Կ-ի՛ անկան վերնաոտնը

Ն·Ք·Գ·445

3 դանացընէն ։ Եւ բ Ամմինադայի Ցուբիան անոր քովը էր , ու ըսաւ . Թէ որ աղուէս մըն ալ ելլէ անոնց շինածին վրայ , անոնց քարէ պարիսպը պիտի փլըլնէ ։

բ Գլ·բ·10, 19։

4 Ընկ մեր Աստուածը՝ լսէ . վասն զի նախատուեցանք . ու դ անոնց նախատինքը իրենց գլուխը դարձուր , ու զանոնք գերութեան երկրի մէջ աւար ըլլալու մատնէ .

դ Սաղ·Ճիգ·3, 4։

5 Եւ Էանոնց անօրէնութիւնը մի ծածկեր . ու քու առջեւդ անոնց մեղքը չջնջուի . քանզի շինողներուն առջեւը բարկացուցին ։

ե Սաղ·Ճ·12։ Առակ·գ·34։

6 Եւ պարիսպը շինեցինք . ու բոլոր պարիսպը մինչև կէսը զ հասաւ . վասն զի ժողովուրդը գործելու սիրտ ունէր ։

զ Հմր 1։

Է Սաղ·կթ·27, 28։ Ճթ·14, 15։ Երեմ·ժը·23։

7 Ու Ղերբոր Սանբարաղատ , ու Ցուբիա , և Արաբացիք , ու Ամմինացիք , ու Ազովտացիք լսեցին , որ Երուսաղէմին պարիսպներուն նորոգութիւնը յառաջ կ'երթայ , ու փլած տեղուանքը սկսեր են շինուիլ , շատ սրդողեցան ։

Է Սաղ·ձգ·3, 4, 5։

8 Եւ Էամէնքը մէկտեղ խօսք ըրին , որ գան Երուսաղէմին դէմ պատերազմ ընեն , ու անոր վնաս

Ը Սաղ·ծ·15։

9 տան ։ Բայց Ըմենք մեր Աստուծոյն աղօթք ըրինք , ու թ դէզ անոնցմէ գիշեր-ցերեկ հսկող գորեկ ու գիշեր անոնց դէմ պահապաններ

թ Եզր·ա·նոնց երեսէն

10 դրինք ։ Եւ Ցուդան ըսաւ . Բեռնակիրներուն ուժը հատաւ , ու հողը շատ է . մենք պիտի չկրնանք

11 պարիսպը շինել ։ Ու մեր թշնամիները կ'ըսէին . Չգիտնան , ու չտեսնեն , մինչև որ մենք անոնց մէջը մտնենք , ու զանոնք սպաննենք , և անոնց գործը խափանենք ։

12 Ու եղաւ որ՝ անոնց քովը բնակող Հրէաները մեզի եկան , և տասը անգամ մեզի ըսին Թէ՝ Ամէն կողմանէ ուր որ դառնաք , մեր վրայ պիտի յարձակին ։

13 Ուստի ցած տեղուանքը՝ պարըսպին ետեւը , ժ բարձր տեղուանքը՝ ժողովուրդը իրենց ազգատոհմներուն համեմատ բ-ձիւով կայնեցուցի , ու իրենց սուրերովը , նիզակներովը ու աղեղներովը կայնեցուցի ։ Եւ նայեցայ , ու ելայ , և իշխաններուն ու ոստիկաններուն ու մնացած ժողովուրդին ըսի . Ընոնց երեսէն մի՛ վախնաք . յիշեցէք Տէրը՝ որ մեծ ու ահեղ է , և էմեր եղբայրներուն , տղաքներուն , աղջիկներուն , կիներուն ու տուներուն համար պատերազմ ըրէք ։

‡ Կ՚՝ լոր տեղուանքը։ Ը՚՝ յարկերու տակ

ժ Թուս·ժգ·9։ բՕր·ա·29։

ը Բ Օր·ժ·17։

Էբ Թագ·ժ·12։

15 Ու երբոր մեր թշնամիները լսեցին որ մենք իմացեր ենք , և Աստուած անոնց խորհուրդը յղուեց . ու մենք ամէնքս պարիսպը վերադարձանք , ամէն մէկը իր գործին ։

Ն·Ք·Գ·445

16 Եւ ան օրէն ՚ի վեր՝ իմ մարդիկներուս կէսը կ'աշխատէին , ու կէսն ալ՝ նիզակներ , ասպարներ , աղեղներ ու զրահներ կը բռնէին . ու իշխանները Ցուդայի բոլոր ‖ազգատոհմներուն ետեւը կը կայնէին ։

‖ Եզր·տա·նը

17 Պարիսպը շինողները , ու բեռնակիրները , — բեռցընողները՝ — մէկ ձեռքը իր մէկ գործովը կը բանէր , ու

18 միւս կէսովը զէնքը կը բռնէր ։ Եւ շինողներուն ամէն մէկը՝ իր սուրը մէջքը կապած՝ կը գործէր . ու

19 փողհարը իմ քովս էր ։ Եւ ազնուականներուն , ու ոստիկաններուն ու մնացած ժողովուրդին ըսի . Ա- գործը մեծ ու ընդարձակ է , ու մենք պարսպին վրայ ցրուած

20 ենք , Ե իրարմէ հեռու էք . Ո՞ւր փողին ձայնը ուր տեղ որ լսէք , հոն մեր քովը ժողովուրդ . Ընդէ համար մեր Աստուածը պատերազմ

Ե Եւ·ժգ·14, 25։ բ Օր·ա·30։ գ·22։ ի·4։ Ցես·իգ·10։

21 պիտի ընէ ։ Ու մենք ս-ովը գործը կ'ընէինք . և էառաւօտուընէն կէսը արշալոյսին ծագած աստղերուն մինչև աստղերուն ելնցած ատենը՝

22 նիզակներ բռնած կը կնայէին . Եւ ան ատենը ժողովուրդին ըսի . Ամէն մարդ իր ծառային հետ՝ գիշերները Երուսաղէմի մէջ մնայ , որ գիշերը մեզի համար պահպանութիւն ընէ , ու ցորեկը գործէ ։

23 Ու ես , ու իմ եղբայրներս , և իմ ծառաներս , ու իմ ետեւէս եկող պահապան մարդիկները՝ ամենեին մեր հանդերձները չէինք հաներ , § լուացուելու ատենէն ՚ի զատ" ։

§ Եզր·ամէն մէկը լուրը կը խրկէր ։

ԳԼ·Ե

1 Հրէայք իրենց պարտքերուն , գրաւներուն ու ծառայութեանը համար կը գանգատին ։ 6 Նէեմիա վշտառուները կը յանդիմանէ , և ուխտ բնել կու տայ անոնց՝ որ ետ դարձնեն իրենց առած գրաւները ։ 14 կը թողու իր ռոճիկը , ու հիւրասիրութիւն կ'ընէ ։

1 Ձու — ժողովուրդը ու անոնց կիներն՝ իրենց Ե եղբարցը Հրէաներուն դէմ մեծ գանգատ ըրին ,

— Եսա·ե·7։ Բ Ղե·իե·35, 36, 37։ բ Օր·ժե·7։

2 եւ ոմանք կ'ըսէին . Մենք մեր տղաքներովը ու աղջիկներովը շատ ենք . ուտելիք ծախու առնենք , ու ուտենք որ ապրինք ։

3 Ոմանք ալ կ'ըսէին . Մենք մեր արտերը , այգիները , ու տուները գրաւի կը դնենք , որ սովի համար

4 ուտելիք ծախու առնենք ։ Եւ ոմանք կ'ըսէին . Թագաւորին հարկ ը-ը- համար՝ մեր արտերուն ու այգիներուն վրայ ստակ փոխ առ-

5 նինք ։ Ու հիմա էմեր մարմինը՝ մեր եղբայրներուն մարմինին պէս է , ու մեր որդիքը՝ անոնց որդւոցը պէս . և ահա մենք ը մեր տղաքները

է Ես·ծը·7։

ը Եւ·իա·7։ Ղե·իե·39։

Ն · ք · գԲ · 445

ու աղջիկները ծառայութեան կը ծախենք . և արդէն մեր աղջիկներէն աղախին ըլլալու ծախուածներ կան , ու մեր ձեռքը կարողութիւն չկայ . որովհետև մեր արտերը ու այգիները ուրիշներուն չ՚են ։

6 Ու երբոր ես անոնց աղաղակը՝ ու ասոնք խօսքերը լսեցի , խիստ դժուա-

7 րեցայ ։ Ես մտքիս մէջ խորհելէն ետև՝ ազնուականները ու ոստիկանները յանդիմանեցի , ու անոնց ըսի . Դուք ամէնդ ալ ձեր եղբայրներէն վաշխ կ՚առնէք . ու

8 անոնց դէմ մեծ ժողովք ըրի ։ Ան ատենը անոնց ըսի . Մենք հեթանոսներու ծախուած մեր Հրէայ եղբայրները՝ մեր կարողութեանը չափ ձեծախու առինք , ու հիմա դուք ձեր եղբայրնե՞րը կը ծախէք , կամ անոնք մեզի ծախուի՞ն . և անոնք լռեցին , ու չկրցան պատասխան

9 տալ ։ Ու ըսի . Ատ ձեր րրածը աղէկ բան չէ . պէտք չէ՞ որ Ի մեր Աստուծոյն վախովը քալէք , ետր մեզի թշնամի եղող ազգերուն նա-

10 խատինք չըլլանք ։ Ես ալ , ես իմ եղբայրներս ու ծառաներս ալ՝ ստակ ու ցորեն փոխ տուած ենք անոնց . Բայց հիմա ասոնք պարտքը

11 անոնց չներենք ։ Ես ձեզի կ՚ա-ղաչեմ , որ այսօր անոնց ետ դարձնէք անոնց արտերը , այգիները , ձիթենիները ու տուները . նաև ստակին , ցորենին , գինիին ու եղին հարիւրին մէկը՝ որ անոնցմէ կը

12 պահանջէք ։ Եւ անոնք ըսին . Ետ պիտի դարձնենք , ու անոնցմէ բո՛ն մը պիտի չպահանջենք . ինչպէս որ ըսիր , այնպէս պիտի ընենք ։ Ան ատենը քահանաները կանչեցի , ու անոնց երդում ընել

13 տուի , որ ասանկ ընեն . Նաև *հանդերձս ծալեցի ու ըսի . Ո՛վ որ ասոնք բանը չկատարէ , իր տունէն ու իր վաստակէն՝ Աստուած այսպէս թօթվէ , ու այսպէս թօթվուած ու դատարկ ըլլայ ։ Եւ բոլոր ժողովքը՝ Ամէն ըսին , ու Տէրը օրհնեցին . Ու ժողովուրդը ասոնք բանը կատարեց ։

14 Եւ Յուդայի երկրին մէջ անոնց իշխանը եղած օրէս՝ Արտաշէս թագաւորին քսաներորդ տարիէն Լմինչև երսունուերկուերորդ տարին՝ տասուերկու տարի՝ Թէ ես և Թէ իմ եղբայրներս Ի†իշխանու-

15 թեան ուռճիկը չառինք՝՝ ։ Բայց ինծմէ առաջ եղող նախորդ իշխանները ժողովուրդին բեռ կ՚ըլլային , ու անոնցմէ հաց ու գինի կ՚առնէին , քառասուն սիկղ արծաթէն ՝ի զատ . անոնց ծառաներն ալ ժողովուրդին բռնութիւն կ՚ը-

Ն · ք · գԲ · 445

Ի 2Մր 9 ։
Ել Կոր · ժա · 9 ։ ժբ · 13 ։

Հբ Թագ · Թ · 7 ։ գ Թագ · ժբ · 19 ։
Յգ Թագ · գ · 22 ։

Ղ Հմր 14 ։ 15 ։

ֆ Գլ · ժգ · 22 ։

ԳԼ · Զ

1 Սանաբազատ՝ խորամանկութեամբ , երկիւղալի լուրերով , ու վարձքով բռնուած մարգարէներու միջոցով կը ջանայ որ Ղեմահան վախցընէ ։ 15 Ան գործիս լմընալուն վրայ՝ թշնամիները կը վախնան ։ 17 Թշնամիներուն ու Յուդայի ազնուականներուն միջեւերը դաղտուկ նաղորդակցութիւն կ՚ըլլայ ։

1 Ու երբոր Սանաբազատ , Ցուբիա , ու Արաբացի Գեսամ , ու մեր միւս թշնամիները լսեցին , որ ես պարիսպը շինեցի , ու հոն փլած տեղ մը չմնաց , (Բ Թէպէտև մինչև ան ատենը դռներուն փեղկերը դր-

2 րած չէի ,) Սանաբազատ ու Գեսամ †ինծի հրդ խրկեցին՝ ու ըսին . Եկուր , Տ Ովնովի դաշտին գեղերուն մէջը իրարու հետ տեսնուինք . բայց անոնք †ինծի չա-

3 րութիւն ընել կը խորհէին ։ Եւ անոնց պատգամաւորներ խրկեցի ու ըսի . Ես մեծ գործով մը զբաղած եմ , ու չեմ կրնար իջնել . ինչո՞ւ համար գործը դադարի , երբոր զանիկայ թողում , ու ձեզի իջնեմ ։

4 Եւ անոնք ինծի չորս անգամ ասանկ խօսքեր խրկեցին . ես ալ անոնց նոյն պատասխանը տուի ։

5 Ու հինգերորդ անգամին՝ Սանաբազատ նոյն խօսքերով իր մանչը ինծի խրկեց , ձեռքը մէկ բաց

6 թուղթով մը՝ Որուն մէջը այսպէս գրուած էր . Ազգաց մէջը լսուելա , ու Գեսամ կ՚ըսէ՝ որ Հրէաները ապստամբիլ կը խորհիք . դուն անոր համար կը շինես պարիսպը , որ անոնց թագաւոր

7 ըլլաս , ‡ինչպէս որ կ՚բսուի՞՝ ։ Ու նաև Երուսաղէմի մէջ մարգարէներ հաստատեցիր , որ քարոզեն ու քեզի համար բսեն , Թէ՝ Ն՚ի-

Ն · ք · գԲ · 445

– Գլ · բ · 10 · 19 ։ դ · 1 · 7 ։

Բ Գլ · գ · 1 · 3 ։

ֆ Առակ · իգ · 24 · 25 ։
Բ ՝՝ Մն · ը · 12 ։ Գլ · ժա · 35
Ի Սաղ · լէ · 12 · 32 ։

Ղ Հմր 19 ։

‡ Եբր · ասի խօսքերուն համեմատ ։

Ի Ել · իբ · 25 ։ Ղա · իե · 36 ։ Եզեկ · իբ · 12 ։

Ղ Ղա · իե · 48 ։

Ի Ղա · իե · 36 ։

Ը բ Թագ · ժբ · 14 ։ Հռով · բ · 24 ։ 2Պետ · բ · 12 ։

Բ Եզր · ժ · 5 ։ Երեմ · լդ · 8 ։ 9 ։
* Եբր · ծոցս ։ Բ Մաա · ժ · 14 ։ Գոր · ժգ · 51 ։ ժբ · 6 ։

Է գ Թագ · իգ · 3 ։

Լ Գլ · ժգ · 6 ։

Ի Ցճս ա Կոր · Թ · 4 · 15 ։

† Եբր · իշխանի հացը չկերանք ։

Ն · ք · գՖ · 445

Հրէաստանի թագաւոր է . ու հիմա աս խօսքերը թագաւորին ականջը պիտի հանի . ուրեմն եկուր որ մեկտեղ խորհուրդ ընենք ։
8 Բայց ես անոր ՚ըսի՝ խրկեցի՝ ու ըսի . Բանը քու ըսած խօսքերուդ պէս չէ . հապա ատոնք դուն քու
9 սրտէդ ՚նարեցիր ։ (Վասն զի անոնց ամէնը մեզ կը վախցընէին՝ ըսելով . Թող անոնց ձեռքը ան գործէն թուլնայ , որ չկատարուի ։ Ու հիմա ՚Վ Ցէր՝ իմ ձեռքերս ուժովցուր ։)
10 Ու ես Մեհաբէելի որդւոյն Դալայիայի որդւոյն Սեմայիային տունը մտայ . և անիկայ փակ էր , ու ըսաւ . Եկո՛ւր մեկտեղ Աստուծոյ տունը՝ տաճարին մէջը երթանք , ու տաճարին դռները գոցենք . վասն զի քեզ մեռցընելու կու գան . ու անոնք գիշերով պիտի գան քեզ մեռցընելու ։
11 Ու ես ըսի . Մի՞թէ ինծի պէս մարդը կը փախչի՞ . և ով կայ ինծի պէս որ տաճարը մտնէ ապրելու համար .
12 չեմ մտներ ։ Ու աղէկ հասկըցայ որ զանիկայ Աստուած խրկած չէր , հապա Ե իմ վրաս մարգարէութիւնը Ե՛ԼԻՂԷՆ խօսեցաւ . վասն զի Ցուբիա ու Սանաբաղատ զանիկայ
13 վարձքով բռներ էին ։ Ե՛ ասոր համար վարձքով բռներ էին զանիկայ , որ ես վախնամ՝ ու ասանկ ընելով՝ ՚մեղանչեմ , որ զիս բամբասելու , ու իմ անունս աւրելու
14 պատճառ մը ունենան ։ ԷՈՎ Աստուած իմ՝ Ցուբիան ու Սանաբաղատը աս իրենց գործոցը համեմատ , ու Նովադիա Ի՛մարգարէուհին , ու զիս վախցընող միւս մարգարէները յիշէ ։
15 Եւ պարիսպը Ելուլ ՙՀՆԳԱՆ քսանուհինգերորդ օրը՝ լիսուներեք-
16 կու օրուան մէջ լմընցաւ ։ Ու երբոր մեր ամէն թշնամիները լսեցին , մեր բոլորտիքը եղող ամէն ազգերը վախցան ու շատ ամչցան , ու Ի՛մացան որ աս գործը մեր Աստուծոյն օգնականութեամբը կատարուեցաւ ։
17 Եւ ան օրերը՝ Ցուդայի ազնուականներէն Ցուբիային շատ նամակներ կ՚երթար . Ցուբիայէն ալ ա-
18 նոնց կու գար . Վասն զի Ցուդայի շատ մարդիկները անոր հետ երդումով միաբաներ էին . քանզի անիկայ Արահեան Սեքենիային փեսան էր . ու անոր որդին Յովհաննէսը՝ Բարաքիայի որդւոյն Մեսուլլամին աղջիկը առեր էր ։ Նաև իմ առջեւս անոր աղէկութիւնները կը զրուցէին , ու իմ խօսքերս անոր կը հասցընէին . Ե՛ Ցուբիա Ի՛նձ նա-
մակներ կը խրկէր զիս վախցընելու համար ։

Ն · ք · գՖ · Իբր 445

ԳԼ · Է

1 Նէեմիա՝ Երուսաղէմին պահպանութիւնը Անանիին ու Անանիային կը յանձնէ ։ 5 Առջի անգամ Բաբիլոնէն դարձող 9 Ժողովուրդին , 39 քահանաներուն , 43 Ղեւտացիներուն , 46 Նաթանայիմներուն , 57 Սողոմոնի ծառաներուն , 63 և իրենց ազգաւտոմարը կորսընցուցած քահանաներուն ցուցակը ։ 66 Անոնց ամբողջ թիւը՝ իրենց սեպհականութիւններովը ։ 70 Անոնց մասուցած ընծաները ։

1 Ու երբոր պարիսպը լմընցաւ , ես դռներուն փեղկերը անցուցի . ու դռնապաններ , երգեցողներ ու
2 Ղեւտացիներ դրուեցան . Եւ իմ եղբայրս Անանին , ու պալատին իշխանը Անանիան՝ (որ հաւատարիմ , ու շատերէն աւելի Ի՛Աստուծմէ վախցող մարդ մըն էր ,) Երուսա-
3 ղեմի վրայ դրի , Ու անոնց ըսի . Մինչեւ որ արեւը չտաքնայ , Երուսաղեմին դռները չբացուին . և իրենց ներկայութեամբը դռները գոցեն , ու նիգերը դնեն , ու Երուսաղեմի բնակիչներէն պահապաններ կարգեն , ամէն մէկը իր պահպանութեանը մէջ , ու ամէն մէկը իր տանը դիմացը ։
4 Քաղաքը ընդարձակ ու մեծ էր . բայց մէջի ժողովուրդը քիչ էր , ու
5 տուներ չշինուած չէր ։ Եւ իմ Աստուածս իմ սրտիս մէջը դրաւ , որ ազնուականները , ոստիկանները ու ժողովուրդը ժողվեմ որ արձանագրուին . ու առջի անգամ Ե՛ԼԻՂՆԷ ելլողներուն մէկ ազգաբանութեան գիրքը գտայ . ու անոր մէջը ՚ՅՍՂԷ- գրուած գտայ ։
6 Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին տարած գերիներէն ելլող Գաւառի բնակիչները աստնք էին , որոնք Երուսաղէմը ու Ցուդան գարձան , ամէն մէկը իր քաղաքը ։
7 Ու Զօրաբաբելին , Յեսուին , Նէեմիային , Ազարիային , Ռաամիային , Նաեմանիին , Մուրթքէին , Բաղասանին , Մասփարաթին , Բագուէին , Նաւումին ՝՝ Բաանային հետ եկան ։ Ե՛ ՝՝ էր Իսրայէլի ժողովուրդին մարդոցը
8 թիւը . Փարոսի որդիքը՝ երկու հազար հարիւր եօթանասունուերը ։
9 կու . Սափատիայի որդիքը՝ երեք
10 հարիւր եօթանասունուերկու . Ա-
րահի որդիքը՝ վեց հարիւր հիսուն
11 ուերկու . Փահաթ Մոաբի որդիքը՝ Յեսուի ու Յովաբի որդիներէն՝ երկու հազար ութը հարիւր տասն-
12 ուութը . Եղամի որդիքը՝ հազար
13 երկու հարիւր հիսունուչորս . Զաթուի որդիքը՝ ութը հարիւր քառա-
14 սունուհինգ . Զաքքայի որդիքը՝
15 եօթը հարիւր վաթսուն . Բանուիի

Իբր 445

– ԳԼ · գ · 1 ·

Ե ԵԶԿ · 2 · 6 ·

Ե ԵԶԿ · Ժգ · 22 ·

Ե Դ · Ժգ · 29 ·

Ե ԵԶԿ · Ժգ · 17 ·

Իբր 445

Ե ԳԼ · բ · 10 · գ · 1 · 7 · գ 1 ·

Ե Ա՛Զ · ՃԻԳ · 2 ·

Իբր 536

Ե ԵԶԲ · բ · 1 · ՀԱ ·

Ն · Ք · ԶԿ · Իրր 536

որդիքը՝ վեց հարիւր քառասունու-
16 ութը · Բերայիի որդիքը՝ վեց հա-
17 րիւր քսանուութը · Ազզադի որ-
դիքը՝ երկու հազար իրեք հարիւր
18 քսանուերկու · Ադոնիկամի որդի-
քը՝ վեց հարիւր վաթսունուեօթը ·
19 Բագուէի որդիքը՝ երկու հազար
20 վաթսունուեօթը · Ադինի որդիքը՝
21 վեց հարիւր յիսունուհինգ · Ատերի
որդիքը Եզեկիայէն՝ իննսունուու-
22 թը · Հասումի որդիքը՝ իրեք հա-
23 րիւր քսանուութը · Բեսէիի որդի-
24 քը՝ իրեք հարիւր քսանուչորս · Ա-
րիփեի որդիքը՝ հարիւր տասուերկու ·
25 Գաբաւոնի որդիքը՝ իննսունու-
26 հինգ · Բեթլէհեմի ու Նետոփայի
մարդիկը՝ հարիւր ութսունուու-
27 թը · Անաթովթի մարդիկը՝ հարիւր
28 քսանուութը · Ազմաւեթի տանը
մարդիկները՝ քառասունուերկու ·
29 Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բե-
րովթի մարդիկը՝ եօթը հարիւր
30 քառասունուիրեք · Ռամայի ու Գա-
բայի մարդիկը՝ վեց հարիւր քսան-
31 ուվեց · Մաքմասի մարդիկը՝ հարիւր
32 քսանուերկու · Բեթելի ու Գայիի
մարդիկը՝ հարիւր քսանուիրեք ·
33 Միւս Նաբաւին մարդիկը՝ յիսուն-
34 ուերկու · Միւս Եղամին որդիքը՝
հազար երկու հարիւր յիսունու-
35 չորս · Հարիմի որդիքը՝ իրեք հա-
36 րիւր քսան · Երիքովի որդիքը՝ իրեք
37 հարիւր քառասունուհինգ · Ղովզի,
Ադիդի ու Ոնովի որդիքը՝ եօթը
38 հարիւր քսանուվեց · Սենասյի որ-
դիքը՝ իրեք հազար ինը հարիւր ե-
սուն ։

39 Քահանաները՝ Յեսուի տունէն՝
Յեդայիայի որդիքը՝ ինը հարիւր
40 եօթանասունուիրեք · Ն Եմմերի
որդիքը՝ հազար յիսունուերկու ·
41 Փասուրի որդիքը՝ հազար երկու
42 հարիւր քառասունուեօթը · Ը Հա-
րիմի որդիքը՝ հազար տասնուեօթն
էին ։

43 Ղեւտացիները՝ Ոդզուիայի որ-
դիներէն՝ Յեսուի — Կադմիէլի որ-
դիքը՝ եօթանասունուչորս էին ։

44 Երգեցողները՝ Ասափի որդիքը՝
հարիւր քառասունուութն էին ։

45 Դռնապանները՝ Սեղղումի որդի-
քը, Ատերի որդիքը, Յեղմոնի
որդիքը, Ակկուբի որդիքը, Ատի-
տայի որդիքը, Սուբայի որդիքը՝
հարիւր երսունուութն էին ։

46 Նաթանայիմները — Ցիխա, Եփ-
Սիայի որդիքը, Ասուփայի որդի-
47 քը, Յարաովթի որդիքը, Կերոսի
որդիքը, Սիայի որդիքը, Փադոնի
48 որդիքը, Ղաբանայի որդիքը, Ա-
գաբայի որդիքը, Սաղմէի որդի-
49 քը, Անանի որդիքը, Գեդդէլի որ-
50 դիքը, Գահարի որդիքը, Ռէայիա-
յի որդիքը, Ռասինի որդիքը, Նե-
51 կոդայի որդիքը, Գազամի որդիքը,
Ողայի որդիքը, Փասէի որդիքը,
52 Բասիի որդիքը, Մովանիմի որդի-
53 քը, Նեփուսիմի որդիքը, Բակ-
բոկի որդիքը, Ակուփայի որդիքը,
54 Արուրի որդիքը, Բասաղոթի որ-
դիքը, Մէիդայի որդիքը, Արսայի
55 որդիքը, Բարկոսի որդիքը, Սիսա-
րայի որդիքը, Թամայի որդիքը,
56 Նեսիայի որդիքը, Ատիփայի որ-
57 դիքը · Սողոմոնի ծառաներուն որ-
դիքը՝ Սոտէի որդիքը, Սոփերաթի
58 որդիքը, Փարեդայի որդիքը, Ցե-
ղայի որդիքը, Դերկոնի որդիքը,
59 Գեդդէլի որդիքը, Սափատիայի
որդիքը, Ատտիլի որդիքը, Փա-
քարաթ ասեբայիմի որդիքը, Ա-
60 մոնի որդիքը · Բոլոր Նաթանա-
յիմները, ու Սողոմոնի ծառանե-
րուն որդիքը՝ իրեք հարիւր իննսունուերկու էին ։

61 Ու Թելմելայէն, Թելարսայէն, Քերուբէն, Ադդօնէն ու Եմմերէն եկողները ասոնք էին, և իրենց հայրերուն տունը ու իրենց սերունդը՝ այսինքն Իսրայէլէն ըլլալնին ցուցընելու կարող չեղան ·
62 Դաղայիայի որդիքը, Ցուբիայի որդիքը, Նեկոդայի որդիքը՝ վեց հարիւր քառասունուերկու ։
63 Եւ քահանաներէն՝ Աբայիայի որդիքը, Ակկուսի որդիքը, Բերզելլի որդիքը՝ որ էառ Գաղաադացի Բերզելլեին աղջիկներէն կնիկ առնելով՝
64 անոնց անունովը կոչուեցաւ · Ասոնք իրենց ազգաբանութեան դիրքը փնտուեցին, բայց չկրցան գըտնել · ու անմաքուր սեպուելով՝
65 քահանայութենէ արգիլուեցան ։ Եւ *Աթարսաթան անոնց ըսաւ · Մինչև որ Ուրիմով ու Թումիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն չուտեն ։
66 Բոլոր ժողովը միասին՝ քառասունուերկու հազար իրեք հարիւր
67 վաթսուն հոգի էր · բայց ի անոնց ծառաներէն ու աղախիններէն, որոնք եօթը հազար իրեք հարիւր երսունուեօթն էին · ու անոնց մէջը երկու հարիւր քառասունուհինգ այր և կին երգեցողներ կային ։
68 Անոնց ձիերը եօթը հարիւր երսունուվեց, ջորիները երկու հարիւր
69 քառասունուհինգ, ուղտերը չորս հարիւր երսունուհինգ, — էշերը վեց հազար եօթը հարիւր քսան էին ։
70 Ու տոհմերու իշխաններէն ոմանք՝ գործին համար ընծայ տուին · Թաթարսաթան՝ հազար դրամ ոսկի, յիսուն սկաւառակ, — հինգ հարիւր երսուն քահանայական պատ-

Ն · Ք · ԶԿ · Իրր 536

Ե Ցե՛ս հմր 12 ։

Ե՛ՄՆ · իգ · 7 ։
Ը՛ՄՆ · իգ · 14 ։
Ե Ցե՛ս ԱՆՆ · Թ · 12 · իգ · 9 ։
Ը՛ՄՆ · իգ · 8 ։
Ե Եզր · բ · 40 ։

* Կ՛ տեսնուի տես գԼ · ը · 9 · ԺԲ · 26 ։

Ե ԳԼ · ը · 9 ։

Ե Եզր · բ · 59 ։

71 մուճան տուաւ գանձին ։ Եւ տոհմերու իշխաններէն ոմանք գործաւորութեան գանձին Հ քսան հազար դրամ ոսկի , ու երկու հազար երկու հարիւր մնաս արծաթ տուին ։
72 Եւ մնացած ժողովուրդին տուածները՝ քսան հազար դրամ ոսկի , ու երկու հազար մնաս արծաթ , ու վարսունուհինգ քահանայական պատմուճան էր ։ Եւ քահանաները , ու Ղեւտացիները , և դռնապանները , ու երգեցողները , և ժողովուրդէն եղողները , ու Նաթանայիմները , և բոլոր Իսրայէլը՝ իրենց քաղաքներուն մէջը բնակեցան . Եւ երբոր եօթներորդ ամիսը հասաւ , Իսրայէլ որդիքը իրենց քաղաքներուն մէջն էին ։

Գ Լ · Ը

1 Իսրայէլացւոց ջերմեռանդութիւնը օրէնքը կարդալու ու մարիկ ընելու մէջ ։ 9 Նէեմիա , Եզրաս , ու Ղեւտացիք կը մխիթարեն ժողովուրդը ։ 13 որոնք լսելու ու սորվելու յօժարամտութիւն ունէին ։ 16 Տաղավարահարաց տօնը կը պահուի ։

1 Եւ բոլոր ժողովուրդը մէկ մարդու մը պէս Ի Ջուրի դրանը առջևը եղող հրապարակին մէջը ժողվուեցան , ու եզրաս Ի դպիրին ըսին , որ Մովսէսին օրինաց գիրքը բերէ , որն որ Տէրը Իսրայէլին պատուիրած էր ։ 2 Ու Ը օրինաց եօթներորդ ամսուն առջի օրը՝ եզրաս քահանան Ի օրինաց Ի Ի ժողովին առջևը բերաւ , որ էրիկ ու կնիկ մարդիկներէ , ու ամէն լսելու ու հասկընալու կարողութիւն ունեցողներէն 3 ներէ Բ-վ-ր-Ե էր · Եւ զանիկայ՝ Ջուրի դրանը առջևը եղող հրապարակին մէջը առտուընէ մինչև կէս օրը՝ էրիկ ու կնիկ մարդիկներուն ու հասկընալու կարողներուն առջևը կարդաց . և բոլոր ժողովուրդը իրենց ականջները օրինաց գրքին 4 դուէր էին ։ Ու եզրաս դպիրը յատուկ սաոր համար շինուած փայտեղէն բեմին վրայ կայնեցաւ . ու անոր քովը աջ կողմը՝ Մատաթիան , Սեման , Անաիան , Ուրիան , Քեղկիան ու Մասսիան , և ձախ կողմը՝ Փադայիան , Միսայէլը , Մելքիան , Հասսումը , Ասբադանան , Զաքարիան ու Մեսուղամը 5 կայնեցան ։ Ու եզրաս գիրքը բացաւ բոլոր ժողովուրդին աչքերուն առջևը . վասն զի ինքը բոլոր ժողովուրդէն բարձր էր . ու զանիկայ բացածին պէս՝ բոլոր ժողովուրդը 6 Ղոտբի վրայ ելաւ ։ Ան առաջ եզրաս՝ Եհովան մեծ Աստուածը օրհնեց . ու բոլոր ժողովուրդը Ի ձեռքերնին վերցուցին , Ը ու Ամէն , Ամէն՝ ըսին . և Ի իրենց երեսին վրայ դետինը ծռելով՝ Ցերօջը երկրպագութիւն ըրին ։ 7 Ու Յեսուա , Բանի , Սարաբիա , Ցամին , Ակկուբ , Սաբեթա , Ովդիա , Մասսիա , Կովղիտա , Ազարիա , Ցովզաբադ , Անան , Փաղայիա , ու Ղեւտացիք՝ Ի օրէնքը ժողովուրդին կը հասկըցընէին . և ժողովուրդը իրենց կարգին կայներ էին ։ 8 Ովը կարդացին Աստուծոյ օրինաց գիրքը յստակ կերպով կարդացին , ու միտքը տալով՝ կարդացածնին հասկրցուցին ։ 9 Ի Ու Նէեմիա Աթարսաթան , ու եզրաս քահանան — դպիրը , և ժողովուրդին հասկըցընող Ղեւտացիները՝ բոլոր ժողովուրդին ըսին . Ի Այս օրս՝ ձեր Տէր Աստուծոյն սուրբ օր Ջն է . Ի սուգ մի ընէք , ու մի լաք . վասն զի բոլոր ժողովուրդը կու լայինէ երբոր օրէնքին 10 խօսքերը կը լսէին ։ Եւ անոնց ըսաւ . Գացէք , պարարտ բաներ կերէք , ու անուշ բաներ խմեցէք , ու պատրաստութիւն չունեցողներուն Ի բաժիններ խրկեցէք . քանզի աս օրս՝ մեր Տէրոջը սուրբ օր Ջն է , ու մի տրտմիք . վասն զի Տէրոջը ուրախութիւնը 11 ձեր զօրութիւնն է ։ Ան առաջ Ղեւտացիք բոլոր ժողովուրդը լռեցուցին՝ ըսելով . Լուռ կեցէք , քանզի ասիկայ սուրբ օր է , ու մի 12 տրտմիք ։ Եւ բոլոր ժողովուրդը ուտելու ու խմելու , ու Ի բաժիններ խրկելու , և մեծ ուրախութիւն ընելու գացին . վասն զի իրենց բացատրուած խօսքերը Ի հասկըցան ։ 13 Ու երկրորդ օրը՝ բոլոր ժողովուրդին տոհմապետները , քահանաները ու Ղեւտացիները՝ եզրաս դպիրին քովը ժողվուեցան , որ օրինաց Ի Ի մէջը գրուած դատաստանը 14 ուսանին ։ Եւ գտան որ Տէրը Մովսէսին ձեռքովը հրամայեր է , որ եօթներորդ ամսուն տօնին առնեն՝ Իսրայէլ որդիքը Ղեւտաւարաններու մէջ բնակին , 15 Նաև իրենց ամէն քաղաքներուն մէջ , ու Ե Երուսաղէմի մէջ Ի հրատարակեն ու քարոզեն ըսելով . Լեռը ելէք , Ի ու ձիթենիի ոստեր , Նոճիի ոստեր , ու մրտենիի ոստեր , և արմաւենիի ոստեր , ու տերևախիտ ծառերու ոստեր բերէք , որ տաղաւարներ շինէք , ինչպէս որ 16 գրուած է ։ Եւ ժողովուրդը ելաւ ու բերաւ . ու ամէն մարդ Ի իր տանիքին վրայ , ու իր գաւիթին մէջը . և Աստուծոյ տանը գաւիթներուն մէջը , ու Ջուրի դրանը հրապարակին մէջը , Ը ու Եփրեմի դրանը հրապարակին մէջը՝ իրենց տաղաւարներ շինեցին ։ Ու դերութենէ 17

Ն · ք · գՁ · Իրր 536
ԼԶզր · ր · 69 ։
Ի Եզր · գ · 1 ։
Իրր 445
— Եզր · գ · 1 ։
Բ ԳԼ · գ · 26 ։
Ե Եզր · է · 6 ։
Ը ՂԼ · իգ · 24 ։
Ի ր Օր · լ · 11 , 12 ։
Ղ Դատ . գ · 20 ։
Ի Ոզր · գ · 41 ։ ա Տիմ. ր · 8 ։
Ը ա Պր · ժգ · 16 ։
Ի Եւ · գ · 31 ։ Ժր · 27 ։ ր Մն · ի · 18 ։
Ն · ք · գՁ · Իրր 445
Ի Եզր · ր · 63 ։ Գւ · է · 65 ։ ժ · 1 ։
Ը ր Մն · լե · 3 ։ Հմր 8 ։
Ի ՂԼ · իգ · 24 ։ Թոս · ԻԹ · 1 ։
Ե ր Օր · ժգ · 14 , 15 ։ ՅՂ · գ · 4 ։
Ի Եթ · Թ · 19 · 22 ։ Ցայս · ժա · 10 ։
Ե Հմր 10 ։
Ի Հմր 7 , 8 ։
Ղ ՂԼ · իգ · 34 , 42 ։ ր Օր · ժգ · 13 ։
Ճ ր Օր · ժգ · 16 ։
Ի ՂԼ · իգ · 4 ։
Ի ՂԼ · իգ · 40 ։
Ր Օր · իր · 8 ։
ԼԳԼ · ժր · 37 ։
— գ Թագ · ժգ · 18 ։ Գւ · ժր · 39 ։

դարձողներուն բոլոր ժողովքը՝ տաղաւարներ շինեցին , ու տաղաւարներու մէջ նստան . վասն զի Իսրայէլի որդիքը՝ նաւեան ցեսուին օրերէն մինչև ան օրը՝ այնպէս բրած չէին . ու խիստ մեծ ուրախութիւն եղաւ ։ 18 Եւ Դաւթի օրէն մինչև գերի օրը՝ ամէն օր Աստուծոյ օրինաց գիրքը կարդացուեցաւ . ու եօթը օր տօն ըրին . և ութերորդ օրը հանդիսաւոր ժողով եղաւ , ի նչպէս որ հրամայուած էր ։

ԳԼ · Թ

1 Ժողովրդին հանդիսաւոր ծոմապահութիւնը ու ապաշխարանքը ։ 4 Ղեւտացիք՝ բարեպաշտութեամբ կը խոստովանին , թէ՝ Աստուծոյ բարութիւնը և թէ իրենց չարութիւնը ։

1 Եւ՝ ասն ամսուն քսանուչորսերորդ օրը՝ Իսրայէլի որդիքը՝ ծոմով , քուրձերով , ու վրանին հող ։ 2 Եւ՝ Իսրայէլի որդիքը բոլոր օտարազգիներէն զատուեցան . ու ։ Եւ՝ կայնելով՝ իրենց մեղքերը ու իրենց հայրերուն անօրէնութիւնները խոստովանեցան ։ 3 Եւ իրենց տեղը կայնելով՝ օրուան չորրորդ մասը՝ իրենց Տէր Աստուծոյն օրինաց դրքէն կարդացին , ու չորրորդ մասը՝ իրենց Տէր Աստուծոյն խոստովանութիւն ու երկրպագութիւն ըրին ։

4 Եւ ցեսու , Բանի , Կադմիէլ , Սաբանիա , Բունի , Սարբիա , Բանի ու Քենանի Ղեւտացիները բեմին վրայ ելան , ու իրենց Տէր Աստուծոյն բարձր ձայնով աղաչեցին ։ 5 Եւ ցեսու , Կադմիէլ , Բանի , Ասաբանիա , Սարբիա , Ոզիա , Սարանիա ու Փեթայիա Ղեւտացիները ըսին . Եկէք , ձեր Տէր Աստուածը յաւիտեանս յաւիտենից օրհնեցէք ։

Օրհնեալ ըլլայ Է քու փառաւոր անունդ , ու ամէն օրհնութենէ ու գոհութենէ բարձր ըլլայ ։ 6 Դուն՝ միայն դուն Տէր ես . երկինքը , Է երկինից երկինքը , և ամեն բոլոր զօրքերը , երկիրը՝ ու բոլոր անոր վրայ եղածը , ծովերը՝ ու բոլոր անոնց մէջը եղածը Բ դուն բոլորդ կեցուցիչ ես . և Գ ամենուն դուն կեանք տալու , ու երկնից զօրքերը քեզի երկրպագութիւն կ՚ընեն ։ 7 Դուն ես ան Տէր Աստուածը՝ որ Է Աբրամը ընտրեցիր , և զանիկայ քաղդեացւոց Ուր Է՚ելլէն հանեցիր , ու անոր անունը 8 Աբրահամ դրիր . Եւ անոր սիրտը քու առջեւդ Է հաւատարիմ գտար , ու անոր հետ Ը ուխտ բրիր որ քանանացւոց , քետացւոց , Ամորհացւոց , Փերեզացւոց , Եբուսացւոց ու Գերգեսացւոց երկիրը անոր սերունդին տաս . ու Է քու խօսքդ հաստատեցիր . վասն զի արդար ես .

4 Մխամխտներուն սրամտութիւն տալու համար , ա երիտասարդներուն գիտութիւն և հանճար :

5 Իմաստունը թող լսէ , ու իր իմաստութիւնը աւելցնէ , ու

8 Որ անոնց թագաւորները շղթաներով կապեն , ու անոնց ազնուականները երկաթէ կապանքներով ,

9 Որ գրուած դատաստանը անոնց վրայ կատարեն . Ասիկա անոր բոլոր սուրբերուն փառքն է : Ալէլուիա :

Ն · ք · ՂՔ · Իրբ 1000

ա Թագ · դ · 32 : Գլ · ժ · 1 , իե · 1 : Ծաղ · ժբ · 9 :
Բ Գլ · բ · 1 , 9 :
է Գլ · Թ · 4 :
թ Գլ · Թ · 9 :

հանճարեղ մարդը խոհեմութիւն ստանայ ,

6 Առակը ու *նմանութիւնը հասկընալու համար , ա Իմաստուններուն խօսքերը , ու անոնց խրթնաբանութիւնները :

7 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է , Յիմարները իմաստութիւնը ու կրթութիւնը կ'անարգեն :

8 Որդեակ իմ՝ Հօրդ խրատը մտիկ ըրէ , ու քու մօրդ †օրէնքը մի՛ մերժեր .

9 Քանզի Անոնք քու գլուխդ՝ շնորհաց պսակ , և քու պարանոցդ՝ մանեակներ պիտի ըլլան :

10 Որդեակ իմ՝ Թէ որ մեղաւորները քեզ գլխէ հանել ուզեն , դուն Հանդց հաւանութիւն մի՛ տար :

11 Թէ որ բսեն . Մեզի հետ եկուր , Արեան համար դարանամուտ ըլլանք , անմեղ մարդուն համար ա-

Ն · ք · ՂՔ · Իրբ 1000

* Կ՛ Նկատութիւնը

Ի Սաղ · Հը · 2 :
Ղ Ցոր · իբ · 28 : Սաղ · ճժա · 10 : Գլ · Թ · 10 : Ժող · ժբ · 13 :
Ի Գլ · գ · 1 : ղ · 20 :
† Յ՝ վարժութիւնը
Ը Գլ · գ · 22 :
Ի Ես · լԹ · 7 , Ճ : Սաղ · ա · 1 : Եփես · ե · 11 :
Ք Երեմ · ե · 26 :

ռանց պատճառի ծածուկ տեղ ըս-
պասեն ։
12 Զանոնք դերեզմանի պէս ողջ
ողջ՝ և էգուբը իջնողներուն պէս
ամբողջ կլլենք ։
13 Ամէն տեսակ պատուական ստա-
ցուածք գտնենք , ու մեր տուները
աւարով լեցընենք ։
14 Քու վիճակդ մեր մէջը ձգէ . ա-
մէնքս մէկ քսակ ունենանք ։
15 Ո՛րդեակ իմ՝ Լանոնց հետ ճամ-
բայ մի՛ երթար . Լանոնց շաւիղէն
քու ոտքերդ ետ պահէ ։
16 Ք-քանզի անոնց ոտքերը չարու-
թեան կը վազեն , և արիւն թափե-
լու կ'արտորան ։
17 Ցիրաւի ամէն թռչունին աչքե-
րուն առջեւը պարապ տեղը վարմեր
կը լարուի ։
18 Բայց անոնք իրենց արեանը հա-
մար դարան կը գործեն , ու իրենց
կենացը համար ծածուկ տեղ կը
սպասեն ։
19 Ամէն ագահին ճամբաները ա-
սանկ են . ոչ-հա-ՐԼԼԼ՝ իրեն անձ-
նատուր եղողները կը մեռցընէ ։
20 Իմաստութիւնը դուրսը բարձ-
րաձայն կ'աղաղակէ , ու հրապա-
րակներու մէջ իր ձայնը կու տայ ։
21 Անիկայ բազմութիւն եղած տե-
ղերուն գլուխը՝ Ե դրանց մուտքե-
րուն մէջ կ'աղաղակէ , ու քաղա-
քին մէջ իր խօսքերը կը խօսի , ու
Ի՛ԷՒ ։
22 Ո՛վ անմիտներ՝ մինչև ե՞րբ ան-
միտութիւնը պիտի սիրէք . Ցնծալ
Է՞րբ ծաղր ընողները ծաղր ընելով
պիտի զուարճանան , ու յիմարները
գիտութիւնը ատեն ։
23 Իմ յանդիմանութեանս դար-
ձէք . ահա Ն իմ հոգիս ձեր վրայ
պիտի թափեմ . իմ խօսքերս ձեզի
պիտի հասկըցընեմ ։
24 Ընդորվհետև ես կանչեցի , ու
դուք չուզեցիք Լսել . ձեռքս եր-
կընցուցի , ու մարդ ընող չեղաւ ։
25 Հապա Ձիմ բոլոր խրատներս
մերժեցիք , և իմ յանդիմանու-
թիւնս չուզեցիք ։
26 Ես ալ ձեր թշուառութեանը
վրայ պիտի ծիծաղիմ , ու ձեր վա-
խը հասնելուն , ծաղր պիտի ընեմ ։
27 Երբոր ձեր վախը հեղեղի պէս
հասնի , ձեր թշուառութիւնը մըր-
րիկի պէս պատահի , և ձեր վրայ
նեղութիւն ու տառապանք գայ ,
28 Ան ատենը ինծի պիտի աղաղա-
կեն , ու պատասխան պիտի չտամ .
զիս պիտի փնտռեն , ու պիտի չը-
կրնան գտնել ։
29 Ընդորվհետև Ը գիտութիւնը ատե-
ցին , ու Ցերոջը վախը չընտրեցին ։
30 Ը Իմ խրատներս չուզեցին . ու
բոլոր յանդիմանութիւնս անար-
գեցին ։
31 Ո՞ւրեմն անոնք իրենց ճամբուն
պտուղէն պիտի ուտեն , ու իրենց
խորհուրդներէն պիտի կշտանան ։
32 Վասն զի անմիտներուն խոտորի-
լը զիրենք պիտի մեռցընէ , և յի-
մարներուն Ձանհոգութիւնը զիրենք
պիտի կորսընցընէ ։
33 Ե Բայց ինծի մտիկ ընողը ապահո-
վութեամբ պիտի բնակի , ու Ձա-
րիքներու վախէն հանդարտ պիտի
ըլլայ ։

ԳԼ · Բ

1 Իմաստութիւնը կը խոստանայ իր որդուոջը՝ բարեպաշտութիւն , 10 և գէշ ընկերներէ ա-
պահովութիւն , 20 ու չհետակ ճամբաներու մէջ առաջնորդութիւն ։

1 Ո՛րդեակ իմ՝ թէ որ իմ խօսքերս
ընդունիս , ու Ձիմ պատուի-
րանքներս քովդ պահես ,
2 Ականջդ իմաստու-
թեան տաս , ու սիրտդ հանճարին
բանաս ,
3 Թէ որ դուն իմաստութիւնը Ձէ-
ղի կանչես , և քու ձայնդ հանճարին
ուղղես ,
4 Ք Թէ որ զանիկայ արծաթի պէս
փնտռես , ու ծածուկ դանձերու
պէս խնդրես ,
5 Ան ատենը Ցերոջը վախը պիտի
հասկընաս , և Աստուծոյ գիտու-
թիւնը պիտի գտնես ։
6 Ձ Վասն զի իմաստութիւնը Ցերը
կու տայ . գիտութիւնը ու հանճա-
րը անոր բերնէն է ։
7 Անիկայ ուղիղներուն համար
Ֆրկութիւն կը պահէ . Ո անիկայ
ուղղութեամբ քալողներուն վա-
հանն է ,
8 Որ արդարութեան ճամբաները
պաշտպանէ , ու Ձիր սուրբերուն
ճամբան պահէ ։
9 Ան ատենը արդարութիւնը , դա-
տաստանը և ուղղութիւնը , ամէն
աղէկ ճամբան պիտի հասկընաս ։
10 Երբոր իմաստութիւնը քու սրբ-
տիդ մէջը մտնէ , և գիտութիւնը
քու հոգւոյդ ախորժելի ըլլայ ,
11 Խոհեմութիւնը քեզ պիտի պա-
հէ , ու Ը հանճարը քեզ պիտի
պաշտպանէ ,
12 Որ քեզ չար Ֆբերուն ճամբայէն ,
նենգութիւններ խօսող մարդէն ա-
զատէ .
13 Անոնք՝ որ ուղիղ ճամբան թո-
ղուցեր են , ու Ձխաւար ճամբանե-
րու մէջ կը քալեն .
14 Ը Զարութիւն ընելով կ'ուրախա-
նան , և Ֆչարին նենգութիւններո-
վը կը ցնծան .
15 Ձ Որոնց ճամբաները ծուռ են , ու
անոնց ընթացքը խոտորնակ է ։

Ն · ք · ղ · Ի՛ր 1000
Ը Սաղ · իբ · 1 ։ Ճառգ · 7 ։
Լ Սաղ · ա · 1 ։ Գլ · դ · 14 ։
Ի Սաղ.ճժթ. 101 ։
Ձ Ես · ծթ . 7 ։ Հռով · գ · 15 ։
Ն · ք · ղ · Ի՛ր 1000
Ղ Գլ · ժե · 27 ։ ա Տիմ. գ · 10 ։
Ճ Գլ · բ · 1 · ԷՒ · Թ · 3 ։ Ցող · է · 37 ։
Ն · ք · ղ · Ի՛ր 1000
Ղ Ցաքե · բ · 28 ։
Ղ Ես · կե · 12 ։ կղ · 4 ։ Երեմ · է · 13 ։ Զաք · է · 11 ։
Ճ Սաղ · ճէ · 11 ։ Հմր 30 ։ Ղտ · է · 30 ։
Մ Սաղ · բ · 4 ։
Յ Գլ · ժ · 24 ։
Ն Ցօր · իէ · 9 ։ լե · 12 ։ Ես · ա · 15 ։ Երեմ. ժա · 11 ։ ժգ · 12 ։ Եզեկ · ը · 18 ։ Միք · գ · 4 ։ Զաք · է · 13 ։ Ցակ · գ · 3 ։
Շ Ցօր · իա · 14 ։ Հմր 22 ։ ՚ Սաղ.ճժթ. 173 ։
Շ Հմր 25 ։ Սաղ · ձա · 11 ։
Ո · ք · ղ · Ի՛ր 1000
Ոչ Ցօր · դ · 8 ։ Գլ · ժգ · 14 ։ Իր · 8 ։ Ես · գ · 11 ։ Երեմ. ղ · 19 ։
Պ Կ՚յաջողութիւնը
Չ Սաղ · իե · 12 ։ 13 ։ ՚ Սաղ.ճժբ. 7 ։
Ո · ք · ղ · Ի՛ր 1000
՚ Գլ · դ · 21 ։ է · 1 ։
Բ Գլ · գ · 14 ։ Մաա · ժգ · 44 ։
Ֆ Գաղ · գ · 9 · 12 ։ Ցակ · ա · 5 ։
Ֆ Կ՚իմաստութիւն
Ր Սաղ · ձգ · 11 ։ Գլ · է · 5 ։
Ֆ Աղաղ · բ · 9 ։ Սաղ · կղ · 9 ։
Ո · ք · ղ · Ի՛ր 1000
Չ Գլ · ղ · 22 ։
Ֆ Ցօ · գ · 19 , 20 ։
Ը Գլ · ժ · 23 ։ Երեմ. ժա · 15 ։
Ր Հռով · ա · 32 ։
Ֆ Սաղ · ճիե · 5 ։

Ն · Ք · ՂԲ · Իբր 1000

16 Որ Տ֊Ե քեզ ազատէ օտար կնիկէն , Է֊ղողբորթուԹիւն խօսող օտար կնիկէն .

17 Ե֊Ն որ իր երիտասարդուԹեան բարեկամը կը Թողու , և իր Աստուծոյն ուխտը կը մոռնայ .

18 Ե֊քանզի անոր տունը մահուան կը տանի , ու անոր շաւիղները մեռելներուն ։

19 Անոր գացողները բնաւ չեն դառնար , և կենաց ճամբաներուն չեն հասնիր ։

20 Որպէս զի բարի մ֊դ֊ց ճամբան երԹաս , ու արդարներուն շաւիղները պահես ։

21 Ի֊քանզի ուղիղները երկրի վրայ պիտի բնակին , և կատարեալները անոր մէջը պիտի մնան ։

22 Հ֊բայց ամբարիշտները երկրէն պիտի կորսուին , ու անօրէնները անկէ պիտի փրցուին ։

ԳԼ · Գ

1 ՀնազանդուԹեան , 5 հաւատքի , 7 խոնարհուԹեան , 9 բարեպաշտուԹեան , 11 և համբերուԹեան յորդորանք մը ։ 13 ԽմաստուԹեան երջանիկ օգուտը ։ 19 ԽմաստուԹեան գործքերը ։ 21 ու շահը ։ 27 Ողորմած , 30 խաղաղարար , 31 և գոհ ըլլալու յորդորանք մը ։ 33 Ձարերուն ահեղ վճռակը ։

1 Որդեակ իմ՝ մի մոռնար իմ օրէնքս , ՚ հապա քու սիրտդ Թող իմ պատուիրանքներս պահէ .

2 Ինչու որ քեզի երկայն օրեր , ու կենդանուԹեան տարիներ , և խ֊յաջողուԹիւն պիտի աւելցնեն ։

3 ՈղորմուԹիւնը ու ճշմարտուԹիւնը քեզ չԹողուն . Ի֊զանոնք քու պարանոցիդ վրայ կապէ . Ը֊րու սրտիդ տախտակին վրայ գրէ զանոնք ։

4 Ե֊ւ այսպէս Աստուծոյ և մարդոց առջեւ՝ շնորհք ու բարի համարում պիտի գտնես ։

5 Ք֊ու Ը֊րոյը սրտովդ Տ֊էրոջը ապաւինէ , Ե֊և քու իմաստուԹեանդ մի՛ վստահիր ։

6 Ը֊Ք֊ու ամէն ճամբաներուդ մէջ գանիկայ ճանչցիր . ու անիկայ Ի֊քու շաւիղներդ պիտի ուղղէ ։

7 Ի֊Դուն քու աչքիդ առջեւ իմաստուն մի՛ ըլլար . Ի֊Տ֊էրոջմէ վախցիր , ու չարութենէ ետ քաշուէ ։

8 Անիկայ քու * ջիղերուդ առողջուԹիւն , և քու Լոսկորներուդ պարարտուԹիւն կ՛ըլլայ ։

9 Ի֊Տ֊էրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ , և քու բոլոր բերքերուդ երախայրիներէրէն .

10 Ի֊Եւ քու շտեմարաններդ առատուԹեամբ պիտի լեցուին , ու հրնձաններէդ նոր գինին դուրս պիտի Թափի ։

11 Ո՛րդեակ իմ՝ Ի֊Տ֊էրոջը խրատը մի՛ անարգեր , ու անոր յանդիմանուԹենէն մի՛ Թուլնար ։

12 Վասն զի Տ֊էրը իր սիրածը կը խրատէ , հ֊ինչպէս որ հայր մը իր սիրական զաւակին Կ֊ընէ ։

13 Ի֊երանի՛ ան մարդուն որ իմաստուԹիւն կը գտնէ , ու ան մարդուն՝ որ հանճար կը ստանայ .

14 Ն֊վասն զի անոր շահը արծաԹի շահէն աղէկ է , ու անոր արդիւնքը մաքուր ոսկիէն ։

15 Անիկայ † գոհարներէն պատուական է . և ո֊րու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար անոր հաւասարիլ ։

16 Մ֊Անոր աջ ձեռքին մէջ՝ օրերու երկայնուԹիւն , Ե֊ ձախ ձեռքին մէջ՝ հարստուԹիւն ու փառք կայ ։

17 Ն֊Անոր ճամբաները հաճոյական ճամբաներ են , և անոր բոլոր շաւիղները խաղաղուԹիւն են ։

18 Անիկայ իրեն յարղներուն Ե֊կեղնայ ծառ է . ու զինքը բռնողները երջանիկ կ՛ըլլան ։

19 Ե֊Տ֊էրը իմաստուԹեամբ հիմնեց երկիրը , Ե֊ հանճարով հաստատեց երկինքը ։

20 Անոր գիտուԹեամբը անդունդները կը պատռին , ու * ամպերը ցօղ կը կաթեցընեն ։

21 Ո՛րդեակ իմ՝ ***** քու աչքերուդ առջեւէն չերԹան . իմաստուԹիւնը ու խոհեմուԹիւնը Ո֊վ֊ր պահէ .

22 Եւ քու հոգւոյդ կեանք՝ ու Ե֊քու պարանոցիդ † զարդ ըլլան ։

23 Ո֊Ան ատենը ճամբադ ապահովուԹեամբ պիտի քալես , և քու ոտքդ պիտի չսայի ։

24 Ե֊Թէ որ պառկիս՝ պիտի չվախնաս , ու Թէ որ քնանաս՝ քունդ անուշ պիտի ըլլայ ։

25 * Պիտի չվախնաս յանկարծահաս վախէն , ոՀ ալ ամբարիշտներուն ‖ կորուստէն՝ երբոր գայ .

26 Վասն զի քու յոյսդ Տ֊էրը պիտի ըլլայ , և քու ոտքդ պիտի պահէ , որ չբռնուի ։

27 * Երբոր ձեռքէդ աղէկուԹիւն ընել կու գայ , § կարօտ եղողէն՝ մի՛ արգիլեր զանիկայ ։

28 Է֊քու դրացիդ բնաւ մի՛ ըսեր , Գնա՝ ու Ե֊տ֊ը եկուր , կամ՝ վաղը կու տամ , երբոր քու քովդ կայ ։

29 Քու դրացիդ դէմ չարուԹիւն մի՛ մտածեր , քանի որ անիկայ վստահուԹեամբ քեզի հետ կը բնակի ։

30 * Առանց պատճառի՝ մարդու հետ մի՛ վիճիր , երբոր անիկայ քեզի չարուԹիւն մը ըրած չէ ։

31 Բ֊ռնաւոր մարդուն մի՛ նախանձիր , ու անոր ճամբաները բնաւ մի՛ ընտրեր .

Ն · Ք · ՂԲ · Իբր 1000

Հ֊բօր · Բ · 5 ։

Ի֊ԳԼ · Բ · 34 ։ 35 ։

Է֊Ցօր · Իբ · 13 , ՃՀ , Սաղ · ԺԹ · 10 ։ ԳԼ · Բ · 4 ։ Ը · 11 , 19 ։ Ժգ · 16 ։

† Կ֊՛ բուսաւերէն

ե Մաա · Ժգ · 44 ։

ֆ ԳԼ · Բ · 18 ։ ա Տիմ · Գ · 8 ։

ց Մաա · Ժա · 29 , 30 ։

Ն Ծն · Բ · 9 ։ Գ · 22 ։

Է֊Սաղ · ՃԳ · 24 ։ ՃԼԳ · 5 ։ ԳԼ · Բ · 27 ։ Երեմ · Ժ · 12 ։ Ծա · 15 ։

* Բ Օր · ԼԳ · 28 ։ Ցօր · ԼԶ · 28 ։

Է֊ԳԼ · ա · 9 ։

‡ Եբր֊ · չընորհք

Ո Սաղ · Լէ · 24 ։ ղա · 11 , 12 ։ ԳԼ · Ժ · 9 ։

Է֊Ղէ · Իգ · 6 ։ Սաղ · գ · 5 ։ գ · 8 ։

* Սաղ · զա · 5 ։ ՃԺբ · 7 ։ Կ֊՛ արշաւանքէն՝

* Հաւ · Ժգ · 7 ։ Գ֊Պետ · Ջ · 10 ։

§ Եբր · անոր տէրէն

Է֊ՂԷ · ԺԹ · 13 ։ Բ Օր · Իգ · 15 ։

* Հաւ · Ժբ · 18 ։

Բ Սաղ · Լէ · 1 ։ Նգ · 3 ։ ԳԼ · Իգ · 1 ։

32 Ա՛ան զի ծուռ մարդը Տէրոջը առջևը պիղծ է . բայց Անոր ընտանութիւնը արդարոց հետ է ։

33 Անմարիչտ մարդուն տանը մէջ՝ Տէրոջը անէծքը կայ . բայց ի՛ար դալ՛երուն բնակարանը Անիկայ կ՛օրհնէ ։

34 Ճիրաւի անիկայ ծաղր ընողները ծաղր կ՛ընէ , բայց խոնարհներուն շնորհք կու տայ ։

35 Իմաստունները փառք պիտի ժառանգեն . բայց յիմարներուն բարձրանալը անարգանք պիտի ըլլայ ։

ԳԼ . Դ

1 Սողոմն մարդիկը հնազանդութեան համոզելու համար , 3 կը ցուցնէ թէ ինչ կրթութիւն առեր է ինքը իր ծնողքէն , 5 իմաստութիւն սորվելու համար , 14 ու չարերուն ճամբայէն փախչելու համար ։ 20 Հաւատքի , 23 և արդութեան յորդորանք մը ։

1 Որդիք՝ ՝ներ հօրը խրատը լսեցէք , ու մտիկ ըրէք՝ որ իմաստութիւնը ճանչնաք ։

2 Ա՛ան զի ձեզի աղէկ կրթութիւն կու տամ . իմ օրէնքս մի՛ թողուք ։

3 Քանի ես իմ հօրս տղան էի , փափուկ ու սիրելի՝ իմ մօրս առջևը ։

4 Անիկայ ինծի կը սորվեցընէր , ու կ՛ըսէր . քու սիրտդ իմ խօսքերս թող բռնէ . իմ պատուիրանքներս պահէ , ու ապրէ ։

5 Իմաստութիւն ստացիր , խոհեմութիւն ստացիր . մի՛ մոռնար , ու իմ բերնիս խօսքերէն մի՛ խոտորիր .

6 Զանիկայ մի՛ թողուր , ու անիկայ քեզ պիտի պահէ . զանիկայ սիրէ , ու անիկայ քեզ պիտի պաշտպանէ ։

7 Ամէն բաներէն գլուխ իմաստութիւնն է . իմաստութիւն ստացիր . ու ամէն ստացած բաներուդ հետ խոհեմութիւն ստացիր ։

8 Զանիկայ մեծարէ , ու անիկայ քեզ պիտի բարձրացընէ . թէ որ զանիկայ գրկես , քեզ պիտի պատուէ ։

9 Անիկայ քու գլխուդ շնորհայ զարդ պիտի տայ . քեզի փառաց պսակ պիտի պարգևէ ։

10 Մտիկ ըրէ՛ որդեակ իմ , ու իմ խօսքերս ընդունէ՛ . և քու կեանդ տարիները պիտի շատնան ։

11 Քեզի իմաստութեան ճամբուն մէջ ցոյց սորվեցուցի . քեզ ուղղութեան շաւիղներուն մէջ պատըցուցի .

12 Որ քալելուատենդ՝ քայլերը չեզնան , և ու վազելու ատենդ չսահիս ։

13 Ամուր բռնէ խրատը , ու՛ բնաւ մի՛ թողուր . զանիկայ պահէ՛ . վասն զի քու կեանդ անիկայ է ։

14 Ամբարիշտներուն ճամբան մի՛ երթար , ու չարերուն ճամբուն մէջ մի՛ քալեր ։

15 Անկէ զգուշացիր . անոր քովէն մի՛ անցնիր . անկէ խոտորէ՛ , ու անցիր ։

16 Վասն զի անոնք մինչև որ չարութիւն չընեն , չեն քնանար . ու թէ որ հէնը չկործանեն , քուներնին կը փախչի ։

17 Քանզի անոնք ամբարշտութեան հացը կ՛ուտեն , ու անիրաւութեան գինին կը խմեն ։

18 Բայց արդարներուն ճամբան՝ ծագող լոյսին պէս է , որ երթալով կը լուսաւորուի , մինչև որ կատարեալ օր ըլլայ ։

19 Ամբարիշտներուն ճամբան՝ խաւարի պէս է , ու չեն գիտեր թէ ինչ բանով իրենց ոտքը պիտի սայթի ։

20 Որդեակ իմ՛ մտիկ ըրէ իմ խօսքերս . քու ականջներդ իմ խօսքերուս տուր ։

21 Անոնք քու աչքերուդ առջևէն չերթան . զանոնք քու սրտիդ մէջը պահէ ։

22 Վասն զի զանոնք գտնողներուն՝ անոնք կեանք են , և անոնց բոլոր մարմնոյն՝ բժշկութիւն ։

23 Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ . քանզի կենաց աղբիւրները անկէ են ։

24 Ծուռ բերանը քեզմէ մէկդի ըրէ , ու անիրաւ շրթունքները քեզմէ հեռացուր ։

25 Քու աչքերդ ուղիղ նային , ու աստեւանունքներդ շիտակ դէպ ի՛ առջևդ ըլլան ։

26 Ոտքերուդ շաւիղները շիտակէ՛ , և քու բոլոր ճամբաներդ հաստատուին ։

27 Աջ կամ ձախ կողմ մի՛ խոտորիր . ոտքդ չարութենէ դարձուր ։

ԳԼ . Ե

1 Սողոմն կը յորդորէ մարդիկը իմաստութիւն սորվելու . 3 պատկերացնելով ու անառակութեան վնասը կը ցուցնէ . 15 կը պատուիրէ գոհ , առատաձեռն ու պարկեշտ ըլլալ . 22 կ՛իմացընէ թէ չարը իր մեղքերովը պիտի բռնուի ։

1 Որդեակ իմ՝ մտիկ ըրէ իմ իմաստութեանս , և քու ականջդ իմ հանճարիս տուր ,

2 Որ խոհեմութիւն պահես , ու քու շրթունքներդ գիտութիւն պահեն ։

3 Վասն զի օտար կնկան շրթունքներէն խորիսխի մեղր կը կա-

Ն . Ք . Դ . Իբր 1000

ՅՍազ . իե . 14 ։
Ղև . իդ . 14 , ԼԸ ։ Սազ . լ . 22 ։ Զաք . ե . 4 ։ Մազ . բ . 2 ։
Սազ . ա . 3 ։
Ճակ . գ . 6 ։ ա Պետ . ե . 5 ։

Սազ . լդ . 11 ։ Գլ . ա . 8 ։

Առն . իթ . 1 ։
Առն . իբ . 9 ։ Եփես . գ . 4 ։
Գլ . է . 2 ։
Գլ . բ . 2 , 3 ։

Ղբ Թես . բ . 10 ։
Առած . ժգ . 44 ։ Ղև . ժ . 42 ։
Ռաթագ . բ . 30 ։
Գլ . ա . 9 ։ գ . 22 ։
Գլ . գ . 2 ։
Սազ . ժը . 36 ։
Սազ . ղա . 11 , 12 ։

Ն . Ք . Դ . Իբր 1000

Սազ . ա . 1 ։ Գլ . ա . 10 , 15 ։
Սազ . լդ . 4 ։ Ես . ծէ . 20 ։
Մատ . ե . 14 , 45 ։ Փիլ . բ . 15 ։
Բ Թագ . իգ . 4 ։
Առած . բ . 9 ։ Ցոր . ժը . 5 . 6 ։ Ես . ծթ . 9 , 10 ։ Երեմ . իդ . 12 ։ Ցոհ . ժբ . 35 ։
Գլ . գ . 3 , 21 ։
Գլ . բ . 1 ։
Առած . գ . 8 ։ ժբ . 18 ։
Եբր . ԺԲ . 8
Ոբ . ե . 32 ։ իբ . 14 ։ Ցես . ա . 7 ։
Եչ . ա . 16 ։ Հռով . ժբ . 9 ։

Ն·Ք·ՂՁ· Իբր 1000

թի, և անոր քիմքը ‡ եղէն կակուղ է.

‡ Սաղ·ծե· 21։

4 Բայց անոր վախճանը † օշինդրի պէս դառն, — Ի երկսայրի սուրի պէս սրած է։

† Ժող·է· 26։

5 Անոր ոտքերը մահուան կ'իջնեն, ու անոր քայլերը դժոխքը կը հասնին։

Ի Եբր·դ· 12։

6 Անոր ճամբաները փոփոխական են, ու չես կրնար գնանդ գիտնալ, որ չըլլայ թէ կենաց ճամբան մոռանաս։

Ղ Պղ·է·27։

7 Եւ հիմա ով որդիք՝ ինծի մտիկ ըրէք, ու իմ բերնիս խօսքերէն մի՛ խոտորիք։

8 Ան կնիկէն ճամբադ հեռացուր, ու անոր տանը դրանը մի՛ մօտենար.

9 Չըլլայ որ քու փառդ ուրիշներու, և տարիներդ անողորմ մարդու տաս.

10 Չըլլայ որ օտարները քու զօրութիւնէդ կշտանան, ու քու վաստակդ օտարներուն տունը մնայ.

11 Եւ քու վերջին ատենդ չհառաչես, երբոր քու մարմինդ ու անդամներդ մաշին,

Ի Պղ·ա·29։ Ղ Պղ·ա·25։ Ժբ·1։

12 Ու չըսես. Ես ի՛նչպէս ի խրատըատեցի, ու իմ սիրտս Հյանդիմանութիւնը անարգեց.

13 Եւ իմ ուսուցիչներուս խօսքը մտիկ չըրի, ու իմ ականջս զիս վարժողներուն չտուի.

14 Ժողովքի ու ժողովուրդի մէջ գրեթէ ամէն փորձանքի մէջ ինկայ։

15 Դուն քու ջրակոյտէդ ջուր խմէ, և քու ջրհորիդ մէջը վազող ջուրէն։

16 Քու աղբիւրներդ դուրսը տարածուին, հրապարակներուն մէջը։

17 Անոնք մինակ քուկդ ըլլան, ու չէ թէ քուկդ և օտարներունը։

18 Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ. և քու երիտասարդութեանդ կնկանը հետ ուրախ եղիր։

Ի Պաղ·բ·14։

† Տես Երգ·բ·9։ դ·5։ է·3։

19 † Անոյշ եւ սիրելի եղնիկի պէս, և շնորհալի այծեմեան պէս ըլլայ. ամէն ատեն անոր ստինքները քեզ կշտացընեն, — միշտ անոր սիրովը զմայլիս։

Է Գլ·բ·16։ է·5։ Ա Պե·ժզ·9։ Ցոր·լա·4։ Լղ·21։ Գլ·ժե·3։ Երեմ.ժզ·17։ Լբ·19։ Ովս·է·2։ Երբ·դ·13։ Ի Սաղ·թ·15։ † Ցոր·դ·21։ Լղ·12։

21 Ա Վասն զի մարդուն ճամբաները Տէրոջը աչքերուն առջեւն են. ու անոր ամէն քայլերը Ինքը կը կշռէ։

22 Ի Չարագործը իր անօրէնութիւնները պիտի բռնեն. ու անիկայ իր մեղքին չուաններովը պիտի բռնուի։

23 † Անիկայ առանց խրատի պիտի մեռնի, ու իր մեծ յիմարութեամբը պիտի մոլորի։

Ն·Ք·ՂՁ· Իբր 1000

ԳԼ·Զ

1 Երաշխաւորութեան, 6 Ծուլութեան, 12 և անզգամութեան դէմ պատուէրներ։ 16 Աստուծոյ ատելի եղած եօթը բաներ։ 20 Հնազանդութեան օրհնութիւնները։ 25 Շնութեան վնասները։

1 Որդեակ իմ՝ — թէ որ քու բարեկամիդ համար երաշխաւոր եղար, Ինչ օտար մարդու համար քու ձեռքդ տուիր,

— Գլ·ժ· 15։ Ժէ·18։ Ի·16։ Իր·26։ Իէ·13։

2 Քու բերնիդ խօսքերովը որոգայթը ինկար, բերնիդ խօսքերովը բռնուեցար։

3 Ո՛րդեակ իմ՝ շուտով ասանկ բրէ որ ազատիս. որովհետև դուն քու բարեկամիդ ձեռքը մտար, գնա՛ քու բարեկամիդ խոնարհէ՛, ու զանիկայ թախանձէ՛։

4 Ի Աչքերուդ քուն՝ ու արտևանունքներուդ նիրհում մի՛ տար.

Ի Սաղ·ճԼր· 4։

5 Փրկէ ազատէ՛ ինչպէս որ այծեամը որսորդէն ձեռքէն, կամ թռչունը հաւորսին ձեռքէն։

6 Ո՛վ ծոյլ՝ † մրջիւնին դնա՛. անոր ճամբաները տե՛ս, ու իմաստուն եղիր.

† Ցոր·ժբ·7։

7 Վասն զի անիկայ՝ Իշխան, ոստիկան, կամ տիրող չունի,

8 Իր կերակուրը ամառուընէ կը պատրաստէ. իր ուտելիքը հունձքի ատեն կը ժողվէ։

9 Ո՛վ ծոյլ՝ † մինչև ե՞րբ կը պառկիս. քունէդ ե՞րբ պիտի արթննաս։

† Գլ·իդ· 33։ 34։

10 Քիչ մը քնանաս, քիչ մը նիրհես, ու քիչ մը ձեռք ձեռքի վրայ դնես ննջելու համար.

11 Ի Ան ատենը քու աղքատութիւնդ ճամբորդի պէս պիտի գայ, ու կարօտութիւնդ՝ սպառազինեալ մարդու պէս։

Ի Գլ·ժ·4։ ԺԳ·4։ Ի·24։

12 Անօրէն ու չար մարդը ծուռ բերնով կը շարժի.

13 Ձանիկայ իր աչքերովը ակնարկութիւն կ'ընէ, ոտքերովը կը խօսի, ու մատերովը բան կը սորվեցընէ.

Ղ Ցոր·ժե· 12։ Սաղ·լե·19։ Գլ·ժ·10։

14 Անոր սրտին մէջը ծուռութիւն կայ, ի միշտ չարութիւն կը հնարէ, — Ը կռիւներ կը հանէ։

Ի Առ·բ·1։ Ը Հռ 19։

15 Ասոր համար անոր կորուստը յանկարծ պիտի գայ. անիկայ յանկարծ Ի պիտի կոտրուի, ու — Ինոր ի դարման պիտի չգտնուի։

Ի Երեմ·ԺԹ· 11։

16 Տէրը աս վեց բանէն կը զզուի, ու անոր հոգւոյն առջեւը եօթը բան պիղծ է.

Ի Մաղ·ԺԸ· 16։

17 Ի Ամբարտաւան աչքեր, Լ ստախօս լեզու, և Ի անմեղ արիւն թափող ձեռքեր,

Ի Սաղ·ԺԵ· 27։ Ճա·5։ Լ Սաղ·ՃԻ· 2։ 3։ Ի Ես·ա·15։

Ն. Ք. ՁՖ. Իրը 1000

18 Զաւր խորհուրդները չարող սիրտ, չարութիւն ընելու համար շուտ վազող ոտքեր,
19 Սուտ խօսող անիրաւ վկայ, ու եղբարց մէջ կռիւներ ցանող մարդ։
20 Որդեակ իմ՝ քու հօրդ պատուիրանքը պահէ, և քու մօրդ օրէնքը մի մերժեր։
21 Զանոնք միշտ քու սրտիդ վրայ կապէ. զանոնք քու պարանոյդ կախէ։
22 Քալած ատենդ անոնք քեզի առաջնորդութիւն ընեն, քնացած ատենդ քեզ պահպանեն, ու արթընցած ատենդ քեզի հետ խօսակցին։
23 Քանզի պատուիրանքը ճրագ, ու օրէնքը լոյս է, և խրատին յանդիմանութիւնները կենաց ճամբայ է.
24 Որ քեզ դէշ կնիկէն՝ օտար կընկան շողոքորթող լեզուէն պահէ։
25 Սրտիդ մէջը անոր գեղեցկութեանը մի՛ ցանկար. և քեզ իր արտեւանունքներովը չգրնէ։
26 Վասն զի պոռնիկ կնկան պատճառաւ մարդ մինչև պատառ մը հացի կ՚իջնայ. Ընդոդող առնակինը նպատուական հոգին կ՚որսայ։
27 Հնարք է որ մէկը իր ծոցը կրակ դնէ, ու հանդերձները չայրին.
28 Հնարք է որ մէկը կրակի կայծեր վրայ քալէ, ու անոր ոտքերը չայրին։
29 Ասոր պէս է իր դրացիին կնկանը քով գացողն ալ. ով որ անոր դպչի, անմեղ չըլլար։
30 Գողը թէ որ անօթութեան համար ու իր փորը կշտացընելու համար գողութիւն ընէ, չեն քամահրեր զանիկայ։
31 Սակայն թէ որ գտնուի, եօթնապատիկ կը հատուցանէ. իր տանը բոլոր ինչքը կու տայ։
32 Կնկան հետ շնութիւն ընողին խելքը պակաս է. աս բանը ընողը իր հոգին կը կորսընցընէ։
33 Անիկայ վէրք ու անարգանք կը գտնէ, և անոր նախատինքը անջնջելի է։
34 Քանզի նախանձը՝ էրկանը կատաղութիւնն է. ու անիկայ վրէժխնդրութեան օրը՝ չխնայեր.
35 Անիկայ բնաւ մէկ փրկանքի մը չնայիր. կաշառք ալ շատցընելու ըլլաս, անիկայ չհաճիր։

Գ Լ. Է

1 Սողոմոն կը յորդորէ մարդիկը որ իմաստութեան հետ հաւատարիմ ու քաղցր ընտանութիւն ունենան. 6 օրինակով մը կը ցուցընէ 10 պոռնիկին խաբեմանկութիւնը, 22 և անպարկեշտ երիտասարդին անմտութիւնը։ 24 Ան տեսակ չարութիւններէն կը զգուշացընէ մարդիկը։

Ն. Ք. ՂԲ. Իրը 1000

1 Որդեակ իմ՝ պահէ իմ խօսքերս, ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ։
2 Իմ պատուիրանքներս պահէ որ ապրիս, ու իմ օրէնքիս քու աչքերուդ բիբին պէս նայէ։
3 Զանոնք մատներուդ վրայ կապէ. զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ։
4 Իմաստութեան ըսէ. Դուն իմ քոյրս ես. ու խոհեմութեանը՝ Ծանօթ կանչէ,
5 Որ քեզ օտար կնիկէն՝ շողոքորթութեամբ խօսող օտար կնիկէն պահէն։
6 Վասն զի իմ տանս պատուհանէն՝ իմ վանդակէս նայեցայ.
7 Եւ անմիտներուն մէջը տեսայ, երիտասարդներուն մէջը պակասամիտ պատանի մը գտայ,
8 Որ փողոցին մէջ անկիւնին քովէն կ՚անցնէր, ու անոր տանը ճամբան բռնեց,
9 Երբոր իրիկուն եղաւ, օրը տաքաժամեցաւ, ու գիշերուան մութը տիրեց.
10 Եւ ահա անոր առջևը կնիկ մը ելաւ. անիկայ պոռնիկի կերպարանք՝ ու նենգաւոր սիրտ մը ունէր.
11 Անիկայ աղաղակող ու անզգամ էր, որ տանը ոտքերը իր տանը մէջ չէր կենար.
12 Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները, և ամէն անկիւնի քով դարանամուտ կ՚ըլլար.
13 Զանիկայ բռնեց համբուրեց, ու լիրը երեսով անոր ըսաւ.
14 Իմ քովս խաղաղութեան զոհեր կան. ես այսօր իմ ուխտերս կատարեցի.
15 Անոր համար ելայ քեզ դիմաւորելու, քու երեսդ փնտռելու, ու քեզ գտայ։
16 Իմ անկողինս ծածկոցներով զարդարեր եմ՝ Եգիպտոսի ծաղկանկար բեհեզով.
17 Անկողինիս վրայ զմուռս, հալուէ ու կինամոն ցաներ եմ.
18 Եկուր մինչև առտու սիրով զուարճանանք, ու ցանկութիւններով զրօսնունք.
19 Վասն զի էրիկս տունը չէ, անիկայ հեռու ճամբայ գնաց.
20 Ստակին քսակը իր հետը առաւ, և «լուանի լման» օրը իր տունը պիտի դառնայ։
21 Այսպէս իր շատ խօսքերովը զանիկայ հրապուրեց, ու Լիր շրթունքներուն շողոքորթութիւնովը զանիկայ ստիպեց։
22 Ան իսկոյն շիտակ՝ կնկանը ետևէն՝

Ն. Ք. ԳՁ. Իրը 1000

1 Որդեակ իմ՝ պահէ իմ խօսքերս, ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ։
2 Իմ պատուիրանքներս պահէ որ ապրիս, ու իմ օրէնքիս քու աչքերուդ բիբին պէս նայէ։
3 Զանոնք մատներուդ վրայ կապէ. զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ։
4 Իմաստութեան ըսէ. Դուն իմ քոյրս ես. ու խոհեմութեանը՝ Ծանօթ կանչէ,
5 Որ քեզ օտար կնիկէն՝ շողոքորթութեամբ խօսող օտար կնիկէն պահէն։
6 Վասն զի իմ տանս պատուհանէն՝ իմ վանդակէս նայեցայ.
7 Եւ անմիտներուն մէջը տեսայ, երիտասարդներուն մէջը պակասամիտ պատանի մը գտայ,
8 Որ փողոցին մէջ անկիւնին քովէն կ՚անցնէր, ու անոր տանը ճամբան բռնեց,
9 Երբոր իրիկուն եղաւ, օրը տաքաժամեցաւ, ու գիշերուան մութը տիրեց.
10 Եւ ահա անոր առջևը կնիկ մը ելաւ. անիկայ պոռնիկի կերպարանք՝ ու նենգաւոր սիրտ մը ունէր.
11 Անիկայ աղաղակող ու անզգամ էր, որ տանը ոտքերը իր տանը մէջ չէր կենար.
12 Երբեմն դուրսը, երբեմն հրապարակները, և ամէն անկիւնի քով դարանամուտ կ՚ըլլար.
13 Զանիկայ բռնեց համբուրեց, ու լիրը երեսով անոր ըսաւ.
14 Իմ քովս խաղաղութեան զոհեր կան. ես այսօր իմ ուխտերս կատարեցի.
15 Անոր համար ելայ քեզ դիմաւորելու, քու երեսդ փնտռելու, ու քեզ գտայ։
16 Իմ անկողինս ծածկոցներով զարդարեր եմ՝ Եգիպտոսի ծաղկանկար բեհեզով.
17 Անկողինիս վրայ զմուռս, հալուէ ու կինամոն ցաներ եմ.
18 Եկուր մինչև առտու սիրով զուարճանանք, ու ցանկութիւններով զրօսնունք.
19 Վասն զի էրիկս տունը չէ, անիկայ հեռու ճամբայ գնաց.
20 Ստակին քսակը իր հետը առաւ, և «լուանի լման» օրը իր տունը պիտի դառնայ։
21 Այսպէս իր շատ խօսքերովը զանիկայ հրապուրեց, ու Լիր շրթունքներուն շողոքորթութիւնովը զանիկայ ստիպեց։
22 Ան իսկոյն շիտակ՝ կնկանը ետևէն՝

Ա Տիմ. ե. 13 ։ Տիտ. բ. 5։

* Կ՚ակնարկէ Նախամարգութեան օրենքը։

Ել. Ի. 3։ Ղեւ. ժբ. 8։

Ն·ք·գԲ· Իրր 1000

սպանդանոցը դացող արջառի պէս, պատժուելու ի՞ցոյզ կապուած յիմարի մը պէս կ'երթայ.

23 Մինչև որ նետը անոր լեարդը ծակէ. Ի՞նչպէս որ թռչուն մը արտորալով դէպ 'ի ծուղակը կ'երթայ, ու չդիտեր որ անիկայ իր հոգւոյն համար լրո՜ւմ է։

Ի Յով·Թ·12։

24 Եւ հիմա ով որդիք՝ ինծի մտիկ ըրէք, ու իմ բերնիս խօսքերուն ականջ դրէք։

25 Քու սիրտդ անոր ճամբաներուն չխոտորի, և անոր շաւիղներուն մէջը չմոլորիս.

26 Վասն զի անիկայ շատերը խոցոտեց ու կործանեց. ու ի՞նոր բոլոր մեծցուցած մարդիկները զօրաւոր էին։

Ի Նէեմ·ժգ·26։

27 Անոր տունը դժոխքին ճամբաներն է. անոնք մահուան շտեմարանները կ'իջնեն։

Ի ԳԼ·բ·18։ Ե·5։ Թ·18։

ԳԼ·Ը

1 Իմաստութեան համբաւը, 6 բացայայտութիւնը, 10 գերազանցութիւնը, 12 բնութիւնը, 15 զօրութիւնը, 18 ճախութիւնը, 22 ու յատուկնականութիւնը։ 32 Իմաստութիւնը փափաքելի բան մըն է, քանզի անոր հետեւանքը երջանկութիւն է։

1 Ա՜հա իմաստութիւնը կը կանչէ, ու խոհեմութիւնը իր ձայնը կու տայ։

Ա՜ԳԼ·ա·20։ Թ·3։

2 Անիկայ բարձր տեղերու գլուխ, ճամբու վրայ, և շաւիղներու մէջ կը կայնի։

3 Անիկայ դռներուն քովը՝ քաղաքներուն բերանը, ու դռներուն մուտքը աղաղակելով կ'ըսէ.

4 Ով մարդիկ՝ ձեզի կը կանչեմ. և իմ ձայնս մարդոց որդիներուն է։

5 Ով տգէտներ՝ իմաստութիւն սորվեցէք. ով անմիտներ՝ իմացող սիրտ ունեցէք։

6 Լսեցէք, վասն զի ի՞ազնիւ բաներ պիտի խօսիմ, ու իմ շրթունքներս պիտի բանամ ուղիղ բաներ խօսելու համար։

Բ Ցես գԼ·իբ·20։

7 Քանզի իմ բիմբս ճշմարտութիւն պիտի խօսի. բայց իմ շրթունքս ամբարշտութենէ կը զզուի։

8 Բերնիս բոլոր խօսքերը արդարութեամբ են, և անոնց մէջը խոտորնակ ու ծուռ բան չկայ։

9 Անոնք ալ հասկցողին ուղիղ են, ու դիտութիւն գտնողներուն շիտակ են։

10 Իմ խրատս առէք, և ոչ թէ արծաթ. ու ընտիր ոսկիէն աւելի գիտութիւնը ուէ՛նէ։

Է Ցոբ·իբ·15, ԸՍաղ·ժԹ·10, ճժԹ·127, ԳԼ·գ·14, 15, գ·5, 7, ժգ·16։

11 Վասն զի իմաստութիւնը դահարներէն աղէկ է. և բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր հաւասարիլ։

12 Ես՝ իմաստութիւնս սրամտութեան հետ կը բնակիմ, և ճարտարութեանց գիտութիւնը կը գտնեմ։

13 Ծերոջը վախը՝ չարութիւնը ատելն է. ես ի՞հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը, չար ճամբան, ու չնչնդաւոր բերանը կ'ատեմ.

Ծ ԳԼ·ժգ·6։ Ի ԳԼ·ղ·17։ Չ ԳԼ·գ·24։

14 Խորհուրդը և իսկականութիւնը իմն է. ես եմ հանճարը՝ ու ի՞զօրութիւնը իմն է։

Ի Յով·է·19։

15 Թագաւորները ինծմով կը թագաւորեն. ու նախարարները ինծմով արդարութեան կանոնները կը դնեն։

Ը Ցես Դան·բ·21, Հոսով·ժգ·1։

16 Ինծմով կ'իշխեն իշխանները, ազնուականները՝ երկրիս բոլոր դատաւորները։

17 Ե՞ս կը սիրեմ զիս սիրողները, և ի՞զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն։

Ի Աթաղ·բ·30, Սաղ·դ·14, Ցօհ·ժգ·21։

18 Իմ քովս է՞հարստութիւն ու փառք, ընտիր ստացուածք, և արդարութիւն կայ։

ի Ցակ·ա·5։

19 Իմ պտուղս ոսկիէն՝ ու մաքուր ոսկիէն, և իմ արդիւնքս ընտիր արծաթէն աղէկ է։

ի ԳԼ·գ·16։ Մատ·չ·33։

20 Ես արդարութեան ճամբուն մէջ, իրաւանց շաւիղներուն մէջ կը քալեմ,

Լ ԳԼ·գ·14։ Հմր 10։

21 *Որ զիս սիրողներուն ստացուածք ժառանգեցընեմ՝. ու անոնց գանձերը պիտի լեցընեմ։

* Կա՛ Զիս սիրողներուն ժառանգութիւն տալու խոչընդոտ ունիմ.

22 Ի՞տէրը իր ճամբուն սկիզբը՝ իր վաղեմի գործքերէն առաջ զիս ստացեր էր։

23 Ե՞ս յաւաջմանէ՝ երկրիս սկիզբէն առաջ †օծուեցայ։

Ի ԳԼ·գ·19։ Ցօհ·ա·1։

24 Անդունդները չեղած՝ առատ ջուրերուն աղբիւրները չեղած՝ ես ծնած էի։

Ե Սաղ·բ·6։ † Կա՛ Հաստատեցայ։

25 Լեռները չտեղաւորուած՝ բլուրներէն առաջ ես ծնած էի։

Է Ցոբ·ժե·7, 8։

26 Ցակաւին երկիրը, ու բաց տեղուանքը, և աշխարհիս հողերուն ‡առջինը չստեղծուած,

‡ Կա՛ բարձր տեղերը

27 Երբոր երկինքները կը պատրաստէր, ու անդնդոց երեսին վրայ կամար կը ձգէր, ես հոն էի։

28 Երբոր վերի ամպերը կ'ուժովցընէր, և անդնդոց աղբիւրները կը հաստատէր,

Հ Ծն·ա·9, 10։ Ցոբ·լը·10, 11։ Սաղ·լգ·7։ ճդ·9։ Երեմ·ե·22։

29 Երբոր ծովուն կանոն կը դնէր, որ ջուրերը իր հրամանէն դուրս չելլեն, ու երբոր երկրիս հիմերը կը ձգէր,

Ց Ցոբ·լը·4։

30 Ես առեն ես անոր քովը ճարտարապետ էի, և ամէն օր անոր զուարճութիւնն էի, ու միշտ առջեւը կ'ուրախանայի։

Չ Ցօհ·ա·1, 2, 18։ Ճ Մատ·գ·17։ Կող·ա·13։

Ն · Ք · ԶՔ · Իրբ 1000

31 Ես աշխարհիս մէջ , ո՛ր անոր երկրին վրայ կ՚ուրախանայի , ու ՛իմ զուարճութիւնս մարդոց որդիներուն հետ էր ։

32 Եւ հիմա ով որդիք՝ ինծի մտիկ ըրէք . վասն զի ՛իմ ճամբաներս պահողները երջանիկ կ՚ըլլան ։

33 Խրատ մտիկ ըրէք , ու իմաստուն եղէք , ու ընդհատ մի՛ մերժէք ։

34 Երանի ան մարդուն՝ որ ինծի մտիկ կ՚ընէ , ամէն օր իմ դռներուս քովը կը հսկէ , և իմ դրանդիքներս կը դիտէ ։

35 Ինչու որ զիս գտնողը կեանք կը գտնէ , ու Ցերոջմէ շնորհք կը ստանայ ։

36 Բայց ինծի դէմ մեղանչողը ՚իր հոգւոյն անիրաւութիւն կ՚ընէ , ո՛ր բոլոր զիս ատողները մահը կը սիրեն ։

Ն · Ք · ԶՔ · Իրբ 1000

Ղ Հմր 3 ։

Յ Սաղ · ՃԺԹ · 1 , 2 ։ ՃԻԲ · 1 , 2 ։ Ղա · ԺԱ · 28 ։

Ե Գլ · Գ · 13 · 18 ։

Ը Գլ · ԺԲ · 2 ։

Թ Գլ · Ի · 2 ։

ԳԼ · Թ

1 Իմաստութեան դաստիարակութիւնը , 4 ու վարդապետութիւնը ։ 13 Ցիմարութեան որպիսութիւնը , 16 ու մոլորութիւնը ։

1 Իմաստութիւնը ՚իր տունը շինեց , ո՛ր եօթը սիւները * կանգնեց ։

2 Ի՛ր անասունները մորթեց , ՚իր գինին †խառնեց , ու իր սեղանը պատրաստեց ։

3 Ընիկայ ՚իր աղախինները խրկեց , ո՛ր Էքազաքին բարձր տեղերուն վրայ Ղկը կանչէ ։

4 Ո՛վ որ պարզամիտ է , թող հոս գայ ։ ու պակասամիտ եղողին կ՚ըսէ ։

5 Եկէք իմ հացէս կերէք , ու ‡խառնած գինիէս խմեցէք ։

6 Ցիմարութիւնը թողուցէք՝ որ ապրիք , ու խոհեմութեան ճամբուն մէ՛ջը քալեցէք ։

7 Ծաղր ընողը յանդիմանողը իրեն անարգանք՝ ու ամբարիշտը խրատողը իրեն արատ կը վաստրկի ։

8 Ծաղր ընողը մի՛ յանդիմաներ , որ չըլլայ թէ քեզի թշնամի ըլլայ · Ժիմաստունը յանդիմանէ , ու քեզ պիտի սիրէ ։

9 Իմաստունին Խրատ տուր , և աւելի իմաստուն պիտի ըլլայ · արդար մարդուն սորվեցուր , ու իր իմաստութիւնը պիտի աւելցնէ ։

10 Իմաստութեան սկիզբը Ցերոջը վախն է , ու Ամենասրբին գիտութիւնը հանճար է ։

11 Ի՛ւան զի քու օրերդ ինծմով պիտի շատնան , և քեզի կենաց տարիներ պիտի աւելնան ։

12 Ժթէ որ իմաստուն ես , քեզի իմաստուն ես , ու թէ որ ծաղր ընող ես , ՚նոր պատիժը մինակ դուն պիտի կրես ։

13 Ընդգամ կնիկը աղաղակող կ՚ըլլայ · անիկայ անմիտ է , ու բան մը չգիտեր ։

14 Եւ հրաղաքին բարձր տեղուանքը՝ իր տանը դուռը աթոռի վրայ կը նստի ,

15 Որ իրենց ճամբան շիտակ գացող անցաւորները կանչէ ·

16 Ո՛վ որ պարզամիտ է , թող հոս գայ · ու պակասամիտ եղողին կ՚ըսէ ·

17 Գողցուած ջուրերը անուշ են , և գաղտուկ հացը համով կ՚ըլլայ ։

18 Բայց անիկայ չգիտեր որ ՚ան տեղը մեռելներ կան , ու անոր հրաւիրած մարդիկները դժոխքին անդունդներուն մէջն են ։

Ե Գլ · Ի · 17 ։

Թ Գլ · Ր · 18 ։ Է · 27 ։

ԳԼ · Ժ

Ան գլուխս մինչև քսանուհինգերորդ գլուխը կը պարունակուին զանազան առաքինութիւններու , ու անոնց հակառակ եղող մոլութիւններուն վրայով ծանօթութիւններ ։

Սողոմոնին առակները ։

1 Իմաստուն տղան իր հայրը կ՚ուրախացընէ · բայց անմիտ տղան իր մօրը տրտմութիւն է ։

2 Ի՛ւնօրէնութեան դանձերը օգուտ չեն ըներ · Էրայց արդարութիւնը մահուանէ կ՚ազատէ ։

3 Տէրը արդարին հոգին անօթի չթողուր · բայց ամբարիշտներուն ցանկութիւնը կը խափանէ ։

4 Ծոյլ ձեռքով բանողը աղքատ կ՚ըլլայ · բայց Ջժիր մարդոց ձեռքը հարստութիւն կը բերէ ։

5 Ըն որ ամառը կը ժողվէ՝ խոհեմ տղայ է · հունձքիատեն քնացողը՝ Էամօթոյ պատճառ եղող տղայ է ։

6 Արդարին գլխուն վրայ օրհնութիւններ կան · բայց Էրեսնութիւնը ամբարիշտներուն բերանը կը գոցէ ։

7 Ի՛րդարներուն յիշատակը օրհնեալ կ՚ըլլայ · բայց ամբարիշտներուն անունը կը փտի ։

8 Իմաստուն սիրտ ունեցողը պատուիրանքները կը բռնէ · Ժբայց յիմար շրթունք ունեցողը կը կործանի ։

9 Ի կատարելութեամբ քալողը ապահովութեամբ կը քալէ · բայց իր ճամբաները ծռողը պիտի ճանչցուի ։

10 Նշոյով ակնարկութիւն ընողը նեղութիւն կու տայ · Էու յիմար շրթունք ունեցողը կը կործանի ։

11 ԺԱրդարին բերանը կենաց աղբիւր է · բայց Էրեսնութիւնը ամբարիշտներուն բերանը կը գոցէ ։

12 Ատելութիւնը կռիւներ կը հանէ · բայց հսէրը ամէն յանցանքները կը ծածկէ ·

13 Իմաստունին շրթանցը վրայ իմաստութիւն կը գտնուի , բայց անմիտ մարդուն մէջքին համար գաւազան կայ ։

Ե Գլ · Ժե · 20 · Ժէ · 21 , 25 ։ ԺԹ · 13 · ԻԹ · 3 · 15 ։

Բ Սաղ · ԽԹ · 6 , ՃԸ ։ Գլ · ԺԱ · 4 ։ Ղբ · ԺԲ · 19 , 20 ։

Է Դան · Գ · 27 ։

Ը Սաղ · Ժ · 14 ։ ԼԶ · 9 , 10 ։ Լ · 25 ։

Ի Գլ · ԺԲ · 24 ։ ԺԹ · 15 ։

Ձ Գլ · ԺԳ · 4 ։ ԽԱ · 5 ։

Ղ Գլ · ԺԷ · 2 ։ ԺԹ · 26 ։

Ճ Հմր 11 ։ Եսթ · Է · 8 ։

Մ Սաղ · Թ · 5 , 6 ։ ՃԺԲ · 6 ։ ՃՀԶ · Ը · 10 ։

Յ Հմր 10 ։

Ն Սաղ · ԻԳ · 4 ։ Գլ · Իբ · 18 ։ Եա · ԼԲ · 15 , 16 ։

Շ Գլ · Զ · 18 ։ Ի Հմր 8 ։

Չ Սաղ · Լէ · 30 ։ Գլ · ԺԳ · 14 ։ ԺԲ · 4 ։

Ո Սաղ · ՃԼ · 42 ։ Հմր 6 ։

Ձ Գլ · ԺԷ · 9 ։ Առած · ԺԳ · 4 ։ Ա Պետ · Գ · 8 ։

մաստութիւն կը գտնուի . բայց յպակասամիտ եղողին կռնակին համար գաւազան պէտք է ։

14 Իմաստունները գիտութիւն կը գանձեն . բայց ղիմարին բերանը կործանման մօտ է ։

15 Հարուստին ճոխութիւնը իր ամուր քաղաքն է . բայց տնանկութիւնը աղքատութիւնը՝ իրենց կործանումն է ։

16 Արդարին գործը կենաց համար է . եկամտին արդիւնքը մեղաց համար է ։

17 Խրատ պահողը կենաց ճամբուն մէջն է . բայց յանդիմանութիւնը անարգողը կը մոլորի ։

18 Առելութիւնը ծածկողը՝ ստախօս շրթունք ունի , ու հրամայանք հանողը անմիտ է ։

19 Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ . բայց իր շրթունքները զգպողը խելացի է ։

20 Արդարին լեզուն ընտիր արծաթ է . ամբարիշտներուն սիրտը քիչ արժէք ունի ։

21 Արդարին շրթունքները՝ շատերուն առաջնորդութիւն կ'ընեն . բայց յիմարները խելքի պակասութենէն կը մեռնին ։

22 Տէրոջը օրհնութիւնն է որ հարստութիւն կու տայ , ու անոր հետ տրտմութիւն չխառներ ։

23 Զարութիւն ընելը յիմարին զբօսանքն է . բայց խոհեմ մարդուն՝ իմաստութիւնը ։

24 Չար մարդուն վախցած բանը իր վրայ կու գայ . բայց արդարներուն փափաքը կը լեցուի ։

25 Մրրիկը անցնելուն պէս՝ ամբարիշտը բնաջինջ կ'ըլլայ . բայց արդարը յաւիտենական հիմն է ։

26 Ինչպէս է քացախը ակռաներուն, և ծուխը աչքերուն , ծոյլն ալ զինքը խրկողներուն այնպէս է ։

27 Տէրոջը վախը օրեր կ'աւելցնէ . բայց ամբարիշտներուն տարիները պիտի կարձենան ։

28 Արդարներուն յոյսը ուրախութիւն է . բայց ամբարիշտներուն ակնկալութիւնը պիտի կորսուի ։

29 Տէրոջը ճամբան արդարին զօրութիւն է . բայց անօրէնութիւն գործողներուն կործանումն է ։

30 Արդարը պիտի չսասանի յաւիտեան . բայց ամբարիշտները երկրի վրայ պիտի չբնակին ։

31 Արդարին բերանը իմաստութիւն կը բղխէ . բայց նենգաւոր լեզուն պիտի կտրուի ։

32 Արդարին շրթունքները հաճոյ բանը գիտեն . բայց ամբարիշտներուն բերանը ծուռ նենգութիւն կը խօսի ։

ԳԼ . ԺԱ

1 Նենգութեան կշիռը Տէրոջը առջևը պիղծ է . բայց ուղիղ կշիռքարը անոր հաճոյ է ։

2 Երբ հպարտութիւնը գայ , անարգութիւնն ալ կու գայ . բայց իմաստութիւնը խոնարհներուն հետ է ։

3 Ուղիղներուն շիտակութիւնը անոնց առաջնորդութիւն կ'ընէ . բայց անօրէններուն ծռութիւնը զանոնք բնաջինջ կ'ընէ ։

4 Բարկութեան օրը հարստութիւնը օգուտ մը չըներ . բայց արդարութիւնը մահուանէ կ'ազատէ ։

5 Կատարեալներուն արդարութիւնը անոնց ճամբան կը շիտկէ . բայց անիրաւը իր անիրաւութեամբը կ'իյնայ ։

6 Ուղիղներուն արդարութիւնը զանոնք կ'ազատէ . բայց նանօրէնները իրենց չարութեանը մէջ կը բռնուին ։

7 Երբոր չար մարդը մեռնի , անոր ակնկալութիւնը կը կորսուի . և անօրէններուն յոյսը կը կորսուի ։

8 Արդարը նեղութենէ կ'ազատի , ու անոր տեղը ամբարիշտը կ'երթայ ։

9 Կեղծաւորը բերնովը իր դրացին կը կորսընցնէ . բայց արդարները գիտութեամբ կ'ազատին ։

10 Արդարներուն յաջողութեանը վրայ քաղաքը կ'ուրախանայ . ու երբոր չարերը կորսուին , ցնծութեան ձայն կ'ըլլայ ։

11 Ուղիղներուն օրհնութիւնովը քաղաքը կը բարձրանայ . բայց ամբարիշտներուն բերնովը կը կործանի ։

12 Պակասամիտ եղողը իր դրացին կ'արհամարհէ . բայց խոհեմ մարդը կը լռէ ։

13 Բանսարկութեան պտտողը դաղտնիքը կը յայտնէ . բայց հաւատարիմ հոգի ունեցողը բանը կը ծածկէ ։

14 Ժողովուրդը առանց խոհականութեան կը կործանի . բայց խորհրդականներու բազմութեամբ փրկութիւն կ'ըլլայ ։

15 Օտարականին երաշխաւոր եղողը անշուշտ չարիքի կը հանդիպի . բայց երաշխաւորութիւնը ատողը ապահով է ։

16 Շնորհալի կնիկը պատիւ կ'բռնայ . և զօրաւոր մարդիկները հարստութիւն կը ստանան ։

17 Ողորմած մարդը իր անձին աղէկութիւն կ'ընէ . բայց անողորմ մարդը իր մարմնոյն նեղութիւն կու տայ ։

Ն . ք . գբ . Իբր 1000
Յ Գլ . իզ . 3 ։
Ը Գլ . ժբ . 7 ։ իա . 23 ։
Ժ Ցոր . լա . 24 ։ Սաղ . ծբ . 7 ։ Գլ . ժբ . 11 ։ ա Տիմ . ը . 17 ։
Ի Սաղ . ժե . 3 ։
Լ Ժող . ե . 3 ։
Խ Ցակ . գ . 2 ։
Ծ Ներ . իդ . 35 ։ իշ . 12 ։ Սաղ . լէ . 22 ։
Կ Գլ . ժգ . 9 ։ ժե . 21 ։
Հ Ցոր . ժե . 21 ։
Ձ Սաղ . ճխե . 19 ։ Առա . ե . 6 ։ աՑօհ . ե . 14 ։ 15 ։
Ղ Սաղ . լբ . 9 ։ 10 ։
Ճ Հմր 30 ։ Սաղ . ժե . 5 ։ Առա . է . 24 ։ 25 ։ ժգ . 18 ։
Մ Գլ . թ . 11 ։
Յ Ցոր . ժե . 32 ։ 33 ։ Իր . 16 ։ Սաղ . ծե . 23 ։ Ժող . է . 17 ։
Ն Ցոր . բ . 13 ։ ժա . 20 ։ Սաղ . ճժբ . 10 ։ Գլ . ժա . 7 ։
Շ Սաղ . ա . 6 ։ լէ . 20 ։
Ո Սաղ . լէ . 22 ։ 29 ։ ճխե . 1 ։ Հմր 25 ։
Չ Սաղ . լէ . 30 ։
Ն . ք . գբ . Իբր 1000
– Ղե . ժթ . 35 ։ 36 ։ բ Օր . իե . 13–16 ։ Գլ . ժգ . 11 ։ ի . 10 ։ 23 ։
Բ Գլ . ժե . 33 ։ ժգ . 18 ։ ժբ . 12 ։ Դան . գ . 30 ։ 31 ։
Գ Գլ . ժգ . 6 ։
Դ Գլ . ժ . 2 ։ Եզեկ . է . 19 ։ Սոփ . ա . 18 ։
Ե Ած . է . 1 ։
Զ Գլ . է . 22 ։ Ժող . ժ . 8 ։
Է Գլ . ժ . 28 ։
Ը Գլ . իա . 18 ։
Թ Ցոր . բ . 13 ։
Ժ Եսթ . ը . 15 ։ Գլ . իբ . 12 ։ 28 ։
Ի Գլ . իթ . 8 ։
Լ Ղե . ժթ . 16 ։ Գլ . ի . 19 ։
Խ Դ Թագ . ժբ . 1 ։ եա ։ Գլ . ժե . 22 ։ իգ . 6 ։
Ծ Գլ . ղ . 1 ։
Կ Գլ . լա . 30 ։
Հ Գլ . բբ . նաւոր
Ձ Առա . է . 7 ։ իե . 34 ։ եա ։

ՆՀ. 1000

18 Շար մարդը անոտի գործ կը գործէ . բայց Նարդարութիւն ցանողը ապահով վարձք կ'ունենայ ։

19 Ինչպէս որ արդարութիւնը կեանց կ'առաջնորդէ, նոյնպէս ալ չարութեան հետեւողը իր մահուանը կ'երթայ ։

20 Ծուռ սիրտ ունեցողները Ցերոջը առջևը պիղծ են . բայց ուղիղ ճամբայ քալողները անոր հաճոյ են ։

21 Ն Անօրէնները *ԲԼԼ ձեռք ձեռքի տալով ՊԲՆԻՆ" , անպատիժ պիտի չմնան . բայց Նարդարներուն սերունդը պիտի ազատի ։

22 Գեղեցիկ կնիկը՝ որ խոհեմութիւն չունի, խոզին քիթը ոսկի օղակին կը նմանի ։

23 Արդարներուն ցանկութիւնը միայն բարութիւն է . բայց անօրէններուն ակնկալութիւնը Նբարկութիւն պիտի ըլլայ ։

24 Մարդ կայ որ Նիր ապացոյցը ցրուելով՝ կ'աւելցնէ , ու մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ , բայց կարօտութեան կը հասնի ։

25 Ն Բարերար անձը պիտի գիրնայ . և ան որ կ'ոռոգէ՝ ինքն ալ պիտի ոռոգուի ։

26 "Ցորենը պահողին՝ ժողովուրդը անէծք կու տայ . բայց Ն զանիկայ ծախողին գլխուն վրայ օրհնութիւն կ'ըլլայ ։

27 Աղէկութեան համար փոյթ ունեցողը շնորհք կը ստանայ . Ն բայց ով որ գէշութիւն կը փնտռէ , անիկայ իրեն պիտի հանդիպի ։

28 Ն Իր հարստութեանը վրայ յոյսը դնողը պիտի իյնայ . բայց "արդարները կանանչ տերեւի պէս պիտի ծաղկին ։

29 Իր տանը նեղութիւն տուողը "հով պիտի ժառանգէ . ու յիմարը՝ իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ ։

30 Արդարին պտուղը կեանց ծառ է . և Նհոգիները վաստկողը իմաստուն է ։

31 "Ահա արդարը երկրի վրայ պատիժ կը կրէ . ո՛ւր մնաց ամբարիշտը ու մեղաւորը ։

ԳԼ · ՃԲ

1 Սրատը սիրողը գիտութիւնը կը սիրէ . ու յանդիմանութիւնը ատողը անմիտ է ։

2 "Բարի մարդը Ցերոջմէ շնորհք կը ստանայ . բայց Ա՛ոո՛՛՛ նենգաւոր մարդը պիտի դատապարտէ ։

3 Մարդը անիրաւութեամբ հաստատութիւն չունենար . բայց Նարդարներուն արմատը չշարժիր ։

4 Ն Առաքինի կնիկը իր երկանը պսակ է . բայց նախատինք բերողը՝ Ոսկորներուն մէջի փտութեանը պէս է ։

ՆՀ. 1000

Ա ԳԼ · ԺԳ · 30 ։

5 Արդարներուն մտածութիւնները իրաւունք են . բայց ամբարիշտներուն խորհուրդները նենգութիւն են ։

Ե ԳԼ · Ա · 11 · 18 ։

6 Ե Ամբարիշտներուն խօսքերը արիւնի համար դարան են . Նբայց ուղիղներուն բերանը ղիրենք կ'ազատէ ։

Ը ԳԼ · ԺԳ · 3 ։

7 Ե Ամբարիշտները կը կործանին , ու բնաջինջ կ'ըլլան . բայց արդարներուն տունը կը հաստատուի ։

Ե Առ · Լ · 36 , 37 · ԳԼ · Ժա · 21 · Մատ · Է · 24—27 ։

8 Մարդը իր խոհեմութեանը չափ կը գովուի . Նբայց ծուռ սիրտ ունեցողը կ'անարգուի ։

Ը Ա Թագ · Ի · 17 ։

9 Ի Աննշան մարդը՝ որ ծառայ ունի, զինքը մեծցընող ու հացի կարօտ եղողէն աղէկ է ։

Ի ԳԼ · ԺԳ · 7 ։

10 Ն Արդարը իր անասուններուն կեանցը համար հոգ կը տանի . բայց ամբարիշտներուն աղիքները անողորմ են ։

Ժ ԲՕր · Ի · 4 ։

11 Ի Իր երկիրը գործողը հացով կը կշտանայ . բայց դատարկ մարդիկներուն հետևողը Նպակասամիտ է ։

Ի Ծն · Գ · 19 · ԳԼ · Իբ · 19 · Լ ԳԼ · Չ · 32 ։

12 Ամբարիշտը չարերուն աւարին կը փափաքի . բայց արդարներուն արմատը պտղաբեր կու տայ ։

13 Ե Շարը իր շրթունքներուն յանցանքովը որոգայթը կ'իյնայ . Նբայց արդարը նեղութենէն կ'ելլէ ։

Ե ԳԼ · Ժբ · 7 ։

Նբ Պետ · Բ · 9 ։

14 Ի Մարդը իր բերնին պտուղէն բարիքներով կը լեցուի . Նու մարդուն ձեռաց հատուցումը իրեն պիտի դառնայ ։

Ի ԳԼ · Ժգ · 2 · Ժբ · 20 · Ն Ես · Գ · 10 · 11 ։

15 Ն Ցիմարին ճամբան՝ իր աչքերուն շիտակ է . բայց խրատ մտիկ ընողը իմաստուն է ։

Ն ԳԼ · Գ · 7 · Ղ Ա · Ժբ · 11 ։

16 Նցիմարը նոյն օրը կը յայտնէ իր բարկութիւնը . բայց անարգանքը ծածկողը խելացի է ։

Ղ ԳԼ · Իթ · 11 ։

17 Ճշմարտութիւն խօսողը արդարութիւն կը յայտնէ . իսկ սուտ վկան՝ նենգութիւն ։

Ճ ԳԼ · ԺԳ · 5 ։

18 Մ Մարդկան կան՝ որ իրենց շատախօսութեամբը սուրի պէս կը խոցոտեն . բայց իմաստուններուն լեզուն բժշկութիւն է ։

Մ Սաղ · Ծէ · 4 · Ծթ · 7 · ԿԹ · 3 ։

19 Ճշմարտախօս շրթունքը միշտ հաստատ կը մնայ . Նբայց ստախօս լեզուն վայրկենական է ։

Ն Սաղ · Ծբ · 5 · ԳԼ · ԺԹ · 9 ։

20 Չարութիւն մտածողին սրտին մէջը նենգութիւն կ'ըլլայ . բայց խաղաղութեան համար խորհուրդ ընողները ուրախութիւն կ'ունենան ։

21 Արդարին բնաւ չարիք չհասնիր . բայց ամբարիշտները թշուառութիւններով կը լեցուին ։

22 Նսուտ շրթունքը Ցերոջը զզուելի է . բայց հաւատարմութիւն ընողները անոր հաճոյ են ։

Ն ԳԼ · Չ · 17 · Ժա · 20 · Ցսյա · Իբ · 15 ։

Ն · ք · ղԾ · Իբր 1000

23 Լ Խոհեմ մարդը էր դիտացածը կը ծածկէ . բայց յիմարներուն սիրտը՝ յիմարութիւն կը հրատարակէ ։

24 " Ահիր մարդոց ձեռքը կ'իշխէ , ու ծոյլը հարկատու կ'ըլլայ ։

25 Լ Մարդուն սրտին մէջը եղող վիշտը՝ զանիկայ կը ձնշէ . բայց Դաղէկ խօսքը կ'ուրախացընէ զանիկայ ։

26 Արդարը՝ * իր ընկերին ճամբայ կը ցուցընէ՝ . բայց ամբարիշտներուն ճամբան գիրենք կը մոլորցընէ ։

27 Ծոյլը իր որսը չեփեր . բայց ժիր մարդուն ստացուածքը պատուական է ։

28 Արդարութեան ճամբուն մէջը կեանք կայ . բայց ըՀբԷՈՒՆ կոխած ճամբան մահուան կը տանի ։

ԳԼ · ԺԳ

1 Իմաստուն տղան իր հօրը խրատը Դիւ՛ր ի՛ընէ . " բայց ծաղր ընողը յանդիմանութիւնը մտիկ չընէր ։

2 Բ Մարդը իր բերնին պտուղէն բարութիւն կ'ուտէ . բայց անօրէններուն հոգին՝ բռնութիւն ։

3 Գ Իր բերանը զսպողը իր անձը կը պահէ . Բայց շրթունքները լայն բացողը պիտի կորսուի ։

4 Ծ Ծոյլին հոգին կը ցանկայ , ու բան մը չունի . բայց ժրաջան մարդոց հոգին կը գիրնայ ։

5 Սուտ խօսքը արդարին ատելի է . բայց ամբարիշտը ամօթալից ու խայտառակ վարք ունի ։

6 Է Արդարութիւնը կատարելութեամբ քալողները կը պաշտպանէ . բայց չարութիւնը մեղաւորները կը կործանէ ։

7 Ը Կան որ զիրենք հարուստ կը ցուցընեն , ու բան մը չունին , Ե ՚ն՚ ը զիրենք աղքատ կը ցուցընեն , ու շատ հարստութիւն ունին ։՛

8 Մարդուն կենացը փրկանքը իր հարստութիւնն է . բայց աղքատը յանդիմանութիւն չլսեր ։

9 Արդարներուն լոյսը զուարթ պիտի ըլլայ . Թ բայց ամբարիշտներուն ճրագը պիտի մարի ։

10 Ճիրաւի հպարտութենէ կռիւ կը ծագի . բայց խրատ մտիկ ընողներուն քովը իմաստութիւն կայ ։

11 Ժ Անիրաւութեամբ ՚ոՂՂՈՒՆ հարստութիւնը պիտի պակսի . բայց Իր աշխատութեամբը ժողվողը պիտի շատցընէ ։

12 Ուշացած յոյսը՝ սիրտը կը հիւանդացընէ . բայց Ի փափաքին հասնիլը կեանց ծառ մըն է ։

13 Ի Խօսքը արհամարհողը պիտի կորսուի . բայց պատուիրանքէն վախցողը վարձք պիտի առնէ ։

14 Լ Իմաստունին օրէնքը կենաց աղբիւր է , Լ մահուան որոգայթներէն ազատ մնալու համար ։

15 Բարի խոհեմութիւնը շնորհք կուտայ . բայց անօրէններուն ճամբան դժուարին է ։

16 Խ Ամէն խելացի իմաստութեամբ կը գործէ . բայց անմիտը յիմարութիւն կը տարածէ ։

17 Ձար պատգամաւորը թշուառութեան մէջ կ'իյնայ . բայց Բ հաւատարիմ դեսպանը բժշկութիւն է ։

18 Խրատ անարգողը աղքատութիւն ու անարգութիւն կը գտնէ . բայց Կ յանդիմանութիւն մտիկ ընողը պատիւ կը գտնէ ։

19 Հ Փափաքին կատարուիլը հոգիին անուշ է . ու չարագործութենէ ետ կենալը յիմարներուն զզուելի է ։

20 Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ . բայց անմիտներուն հետ ընկերացողը Ւ չար կ'ըլլայ " ։

21 Ն Մեղաւորներուն ետևէն ձախորդութիւն կ'երթայ . բայց արդարներուն բարիք կը հատուցուի ։

22 Բարի մարդը իր որդւոցը որդիներուն ժառանգութիւն կը թողու . բայց Ա մեղաւորին ստացուածքը արդարին համար կը պահուի ։

23 Ֆ Աղքատներուն մշակած երկրին մէջը շատ ուտելիք կայ . բայց ՚ուրիշ կայ որ՝ Իր անխոհեմութենէն կը կորսուի ։

24 Ց Գաւազանին խնայողը իր որդին կ'ատէ . բայց զանիկայ սիրողը կանուխկէն կը խրատէ ։

25 Յ Արդարը մինչև իր անձին կշտանալը կ'ուտէ . բայց ամբարիշտներուն փորը կարօտութիւն պիտի քաշէ ։

ԳԼ · ԺԴ

1 – Իմաստուն կնիկները Բիրենց տունը կը շինեն . բայց յիմար կնիկը զանիկայ իր ձեռքովը կը փլցընէ ։

2 Իր ուղղութեանը մէջ քալողը ՏԷրոջմէ կը վախնայ . Ֆ բայց ծուռ ճամբայ ունեցողը զանիկայ կ'անարգէ ։

3 Ճիմարին բերանը հպարտութեան գաւազան կայ . Ծ բայց իմաստուններուն շրթունքները զիրենք կը պահեն ։

4 Ուր որ արջառ չկայ , մսուրը մաքուր կը մնայ . իսկ արդիւնքին առատութիւնը եզին զօրութենէն յառաջ կու գայ ։

5 Ե Ճշմարտութեան վկան սուտ չը խօսիր . բայց անիրաւ վկան ստութիւններ կը թափէ Բէրնէն ։

Ն · ք · ղԾ · Իբր 1000

Ի ԳԼ · ժ · 11 ։ ԺԳ · 27 ։ ԺՂ · 22 ։

Լ Բ Թագ · Իբ · 6 ։

Ի ԳԼ · ԺԲ · 23 ։ ԺԵ · 2 ։

Բ ԳԼ · ԻԵ · 13 ։

Կ ԳԼ · ԺԵ · 5 , 31 ։

Հ ՀԺԲ 12 ։

Ւ ԳԼ · ԺԵ · 4 ։

Ն · ք · ղԾ · Իբր 1000

– Ա Թագ · Բ · 25 ։

Բ ԳԼ · ԺԲ · 14 ։

Ֆ Սաղ · ԼԹ · 1 ։ ԳԼ · Իա · 23 ։ Ցակ · գ · 2 ։

Ծ ԳԼ · ժ · 4 ։

Ի ԳԼ · ժա · 3 , 5 , 6 ։

Լ ԳԼ · ԺԲ · 9 ։

Ի Ցոր · ԺԲ · 5 , 6 ։ Իա · 17 ։ ԳԼ · Իդ · 20 ։

Ը ԳԼ · ժ · 2 ։ Ի · 21 ։

Թ ԵՒԲ · Ո · Նայնութենէ

Ր ՀԺՐ 19 ։

Ժ Բ ՄՆ · ԼՂ · 16 ։

Ն · Բ · ԳԲ · Իբր 1000

* ԵՔԲ · չկայ · ՂԳԼ · Բ · 9 · Ժէ · 24 ·

6 Ծաղր ընողը իմաստութիւն կը փնտռէ , ու * չգտներ . բայց Ղիմաստուններուն համար՝ գիտութիւնը դիւրին է ։

7 Ցիմար մարդէն հեռացիր , երբոր կ'իմանաս որ իմաստուն շրթունքներ չունի ։

8 Խելացի մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկրնալն է . բայց յիմարներուն անմտութիւնը նենգութիւն է ։

Ի ԳԼ · Ժ · 23 ·

9 Ի Ցիմարները յանցանքը ծաղր կ'ընեն . բայց ուղիղներուն մէջը ներողամտութիւն կայ ։

10 Մ—ը—ն սիրտը իր հոգիին ցաւը կը ճանչնայ . ու անոր ուրախութեանը՝ ուրիշը մասնակից չըլլար ։

Ը Ցօր · Բ · 15 ·

11 Ը Ամբարիշտներուն տունը պիտի կործանի . բայց ուղիղներուն վրան պիտի ծաղկի ։

Ի ԳԼ · Ժգ · 25 · Ժ Հառվ · գ · 21 ·

12 Ի Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երևնայ , բայց Ժ անոր վախճանը մահուան ճամբաներն է ։

13 Ծիծաղելու ատենն ալ՝ մ—ը—ն սիրտը տրտմութիւն կը զգայ , և ուրախութեան վախճանը սուգ կ'ըլլայ ։

Խ ԳԼ · Խ · 4 · Ժող · Բ · 2 ·

14 Ապականած սիրտը Լիր ճամբաներէն՝ ու բարի մարդը ինքիրմէն պիտի կշտանայ ։

Լ ԳԼ · ա · 31 · Ժբ · 14 ·

15 Միամիտ մարդը ամէն խօսքի կը հաւատայ . բայց խելացին՝ իր քայլերը կը քննէ ։

Ի ԳԼ · Իբ · 8 ·

16 Ի Իմաստունը կը վախնայ , ու չարութենէ կը փախչի . բայց անմիտը կը հպարտանայ , ու յանձնապաստան կ'ըլլայ ։

17 Շուտ բարկացողը յիմարութիւն կ'ընէ . ու նենգամիտ մարդը ատելի է ։

18 Անխոհեմները անմտութիւն կը ժառանգեն . բայց խելացիները գիտութեամբ կը պսակուին ։

19 Չարերը բարիներուն առջևը կը խոնարհին , և ամբարիշտները արդարներուն դրանը քովը ։

Ժ ԳԼ · Ժթ · 7 ·

20 Ի Աղքատը մինչև անգամ իր ընկերին ատելի է . բայց հարուստին բարեկամները շատ են ։

Ա Պաղ · խա · 1 · Ճժբ · 9 ·

21 Իր ընկերը անարգողը մեղք կը գործէ . Ա բայց աղքատին ողորմութիւն ընողը երանելի կ'ըլլայ ։

22 Անհաւատութիւն մտածողները կը մոլորին . բայց բարութիւն մտածողներուն՝ ողորմութիւն ու ճշմարտութիւն կ'ըլլայ ։

† ԵՔԲ · չորթունքներուն խոսքը՝

23 Ամէն աշխատանքի մէջ օգուտ մը կայ . բայց † դատարկաբանութիւնը՝ միայն կարօտութեան Ա ը—նէ մ—ը—ը ։

24 Իմաստուններուն հարստութիւնը իրենց պսակն է . բայց անմիտներուն ‡ յիմարութիւնը յիմարութիւն է ։

Ն · Բ · գԲ · Իբր 1000

‡ Կ—մ՛ մեծութիւնը Հ Հմր 5 ·

25 Հաւատարիմ վկան հոգիներ կ'ազատէ . բայց խարդախը՝ ստութիւններ դուրս կու տայ ։

26 Ցերկնչելի վախին մէջը հաստատ վստահութիւն կայ . ու անոր որդիքը ապաւէն պիտի ունենան ։

Ն ԳԼ · Ժգ · 14 ·

27 Ն Ցերկնչելի վախը կենաց աղբիւր է , մահուան որոգայթներէն ազատ մնալու համար ։

28 Ժողովուրդին բազմութիւնը թագաւորին պատիւն է . բայց ժողովուրդին նուազութիւնը իշխանին կործանումն է ։

ՂԳԼ · Ժգ · 32 · Ցակ · ա · 19 ·

29 Ը Երկայնամիտ մարդը շատ խոհեմ է . իսկ կարճամիտը շատ յիմարութիւն կ'ընէ ։

‖ Կ—մ՛ Ոչ

30 ‖ Հանդարտ սիրտը մարմնոյն կեանք է . բայց Ճ նախանձը ՛ ոսկորներուն փտութիւն է ։

Ճ Պաղ · ճԺբ · 10 ·

՛ ԳԼ · Ժբ · 4 ·

31 ՛ Աղքատին զրկանք ընողը՝ Նոյն Ստեղծիչը կ'անարդէ . բայց տնանկին ողորմութիւն ընողը՝ զԱնիկայ կը պատուէ ։

Յ ԳԼ · Ժէ · 5 · Մատ · իե · 40 · 45 · 46 ·

32 Ամբարիշտը իր չարութեանը համար կը վռընտուի . բայց Ա արդարը իր մահուան ատենը ապաւէն կ'ունենայ ։

Ն Տես Ցօր · լա · 15 · 16 · ԳԼ · Իբ · 2 ·

Ա Ցօր · Ժգ · 15 · ԺԲ · 26 · Պաղ · իգ · 4 · լէ · 37 · Բ Կոր · ա · 9 · ե · 8 · Բ Տիմ · գ · 18 ·

33 Խելացի մարդուն սրտին մէջը իմաստութիւն կը հանգչի . իսկ Ո յիմարներուն ներսը եղածը կը ճանչցուի ։

Ո ԳԼ · Ժբ · 16 · ԻԲ · 11 ·

34 Արդարութիւնը ազգը կը բարձրացնէ . բայց մեղքը ժողովուրդներուն անարգանք է ։

35 Ն Խոհեմ ծառային՝ թագաւորը կը հաճի . բայց նախատինք բերող ծառային կը բարկանայ ։

Ն Մատ · իգ · 45 · 47 ·

ԳԼ · Ժե

1 — Ա Եղմ պատասխանը սրտմտութիւնը կ'իջեցնէ . բայց Բ խիստ խօսքը բարկութիւնը կը դրգռէ ։

— Դատ · Բ · 1 · 2 · 3 · ԳԼ · իե · 15 ·

Բ ա Թագ · իե · 10 · Եզ · գ Թագ · Ժբ · 13 · 14 · 16 ·

2 Իմաստուններուն լեզուն գիտութիւնը հաճոյ կ'ներկայնէ . Գ բայց անմիտներուն բերանը յիմարութիւն կը բղխէ ։

Գ Հմր 28 · ԳԼ · Ժբ · 23 · Ժգ · 16 ·

3 Գ Ցերոջը աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը դիտեն ։

Գ Ցօր · Լէ · 21 · ԳԼ · Ե · 21 · Երեմ · Ժզ · 17 · լբ · 19 · Եբր · գ · 13 ·

4 § Խաղաղասէր լեզուն կենաց ծառ է . բայց խոտվարար լեզուն սիրտ կը կոտրէ ։

§ Կ—մ՛ Բերժըշկութիւն տուող

5 Ե Ցիմարը իր հօրը խրատը կ'անարգէ . Ը բայց յանդիմանութեան ջաղանդողը խելացի կ'ըլլայ ։

Ե ԳԼ · Ժ · 1 ·

6 Արդարին տունը մեծ գանձ կայ . բայց ամբարշտին կեմաուտներուն մէջը խռովութիւն կայ ։

ՂԳԼ · Ժգ · 18 · Հմր 31 · 32 ·

7 Իմաստուններուն շրթունքները գիտութիւն կը տարածեն . բայց յիմարներուն սիրտը Ի այնպես չէ ։

Ի Կ—մ՛ հաստատ

8 ՚Ամբարիշտներուն զոհը Տէրոջը առջևը պիղծ է . բայց ուղիղներուն աղօթքը անոր ընդունելի է ։
9 Տէրը ամբարշտին ճամբային կը զզուի , բայց ետարդարութեան հետևողը կը սիրէ ։
10 ՚Ո՞վ ճամբան մերժողին *դէշ պատիժ կ՚ըլլայ» . ու ՚յանդիմանուելուն ատողը պիտի մեռնի ։
11 ՚Դժոխքը ու կորուստը Տէրոջը առջևն է . որչափ աւելի Ադարդոց որդիներուն սիրտերը ։
12 ՚Ծաղր ընողը իր յանդիմանիչը չսիրեր , և իմաստուններուն քովը չերթար ։
13 ՚Ուրախ սիրտը երեսը կը զուարթացընէ . բայց ՚սրտին տրտմութենէն հոգին կը ձկտի ։
14 Հանճարեղ սիրտը գիտութիւն կը փնտռէ . բայց անմիտներուն բերանը յիմարութեամբ կը սնանի ։
15 Վշտալից մարդուն ամէն օրերը գէշ են . ՚բայց ուրախ սիրտը մշտընջենաւոր կոչունքի մէջ է ։
16 ՚Աւելի աղէկ է քիչ բանը Տէրոջը վախովը , քան թէ մեծ գանձը խռովութիւնով ։
17 ՚Աւելի աղէկ է սէր եղած տեղը խոտեղէն կերակուրը , քան թէ դէր զուարակըատելութիւնով ։
18 ՚Բարկասիրտ մարդը վէճ կը հանէ . բայց երկայնամիտը կռիւը կը դադրեցընէ ։
19 ՚Ծոյլին ճամբան փշեղէն ցանկի պէս է . բայց ուղիղներուն ճամբան բանուկ է ։
20 ՚Իմաստուն տղան իր հայրը կ՚ուրախացընէ . բայց անմիտ մարդը իր մայրը կ՚անարգէ ։
21 ՚Պակասամիտ մարդուն՝ յիմարութիւնը զբօսանք է . ՚բայց իմաստուն մարդը կ՚ուղղէ իր ընթացքը ։
22 ՚Առանց խորհուրդի՝ դիտաւորութիւնները կը ցրուին . բայց խորհրդականներուն շատութիւնովը կը հաստատուին ։
23 Մարդ իր բերնին պատասխանովը կ՚ուրախանայ . ու ՚ատենովը բսուած խօսքը որչափ դեղեցիկ է ։
24 ՚Կենաց ճամբան խոհեմ մարդը դէպ ՚ի վեր կ՚երթայ , որ վարի դժոխքէն հեռանայ ։
25 ՚Տէրը հպարտներուն տունը կը կործանէ . բայց ՚որբևարիներուն սահմանը կը հաստատէ ։
26 ՚Չար մարդուն խորհուրդները Տէրոջը առջևը պիղծ են . ՚բայց պարկեշտներուն խօսքերը հաճելի են ։
27 ՚Ագահութեան անձնատուր եղողը իր տունը խռովութեան մէջ կը ձգէ . բայց կաշառքներէ զզուողը պիտի ապրի ։
28 Արդարին սիրտը՝ *տալու պատասխանը կը մտածէ . բայց ամբարիշտներուն բերանը չարիք կը բղխէ ։
29 ՚Տէրը ամբարիշտներէն հեռու է . բայց ՚արդարներուն աղօթքը կը լսէ ։
30 Աչաց լոյսը սիրտը կ՚ուրախացընէ . բարի լուրը ոսկորները կը գիրցընէ ։
31 ՚Կենաց յանդիմանութիւնը լսող ականջը իմաստուններուն մէջը կը բնակի ։
32 Խրատ մերժողը իր հոգին կ՚անարգէ . բայց յանդիմանութիւն մտիկ ընողը խելք կը վաստկի ։
33 *Տէրոջը վախը իմաստութեան խրատն է , ու *փառաց առջևէն՝ խոնարհութիւնը ՚երթայ ։

ԳԼ · Ժ.Ձ

1 ՚Սրտին տրամադրութիւնները մարդուն կը վերբերին . ՚բայց լեզուին պատասխանը Տէրոջմէն է ։
2 ՚Մարդուն ամէն ճամբաները իրեն մաքուր կ՚երևնան . բայց *Տէրը հոգիները կը կշռէ ։
3 ՚Քու գործերդ Տէրոջը յանձնէ , և քու խորհուրդներդ պիտի հաստատուին ։
4 ՚Տէրը ամէն բան †իր նպատակին՝ համար ստեղծեց , ու ամբարիշտն ալ՝ ձախորդ օրուան համար ։
5 ՚Ամէն սրտով հպարտները Տէրոջը առջևը պիղծ են , ու ՚իրենք ձեռք ձեռքի տալով պիտի չմնան ։
6 ՚Ողորմութեամբ և ճշմարտութեամբ անօրէնութիւնը կը քաւուի , ու ՚Տէրոջը վախովը մարդ չարութենէ կը հեռանայ ։
7 Երբոր Տէրը մարդուն ճամբաներուն կը հաճի , մինչև անգամ անոր թշնամիները կը հաշտեցընէ անոր հետ ։
8 ՚Աղէկ է քիչ բան արդարութեամբ , քան թէ մեծ եկամուտներ անիրաւութեամբ ։
9 ՚Մարդուն սիրտը իր ճամբան կը ծրարէ . ՚բայց անոր քայլերը Տէրը կ՚ուղղէ ։
10 Թագաւորին շրթունքներուն վրայ աստուածային ազդեցութիւն կայ . անոր բերանը դատաստանի մէջ չսխալիր ։
11 ՚Ուղիղ կշռորդը և կշիռքը Տէրոջն է . մանգաղին ամէն ՚քարերը անոր գործքն են ։
12 Չարագործութիւնը թագաւորներուն գզուելի է . վասն զի հաստատութիւնը արդարութեան մէջ է ։
13 Արդար շրթունքը թագաւորին հաճելի է , և ուղիղ խօսողը կը սիրէ ։
14 Թագաւորին բարկութիւնը մահուան պատգամաւորներ է , ու իմաստուն մարդը զայն կը մեղմացընէ ։
15 Թագաւորին երեսին լոյսը կեանքի պէս է , անոր ողորմութիւնը՝ գարնան անձրևի ամպի պէս ։
16 Ո՜րչափ աղէկ է ձեռք ձգել իմաստութիւն , քան թէ ոսկի . և հանճարեղ ըլլալ՝ աւելի ընտրելի է քան թէ արծաթ ։
17 Ուղղամտին ճամբան է չարէն հեռանալ . իր ճամբան կը պահէ անիկա որ իր հոգին կը պահէ ։
18 Կորուստէն առաջ կ՚երթայ հպարտութիւն , և կործանումէն առաջ՝ ամբարտաւան հոգի ։
19 Աղքատներուն հետ խոնարհ հոգի ունենալը աղէկ է քան թէ հպարտներուն հետ աւար բաժնել ։
20 Ով որ խելքով կը վարուի բանին , գտնելիք կ՚ըլլայ , և երանի անոր որ կը յուսայ Տէրոջը ։
21 Սրտով իմաստունը կը կոչուի հանճարեղ , և քաղցր խօսքը կը շատցընէ ուսումը ։
22 Հանճարեղին համար իմաստութիւնը կենաց աղբիւր է , իսկ անմտին խրատը՝ անմտութիւն ։
23 Իմաստուն մարդուն սիրտը իր բերանը կը խրատէ , և իր շրթունքներուն վրայ ուսում կը բերէ ։
24 Քաղցր խօսքերը մեղրախորիսխ են , անոնք հոգիին համար քաղցրութիւն և ոսկորներուն համար առողջութիւն են ։
25 Կայ ճամբայ որ մարդուն ուղիղ կը թուի , բայց անոր վախճանը մահուան ճամբաներ է ։
Ե Ցոր · ԻԹ · 17 · Սաղ · ԺԲ · 2 · ԺԷ · 4 · ԳԼ · ԺԸ · 18 ·

14 Ե Ցեղ կայ որ՝ անոր ակռաները սուրերու պէ՛ս են , և անոր ժանիք-ները դանակներու պէ՛ս են , Է աղ-քատները երկրիս վրայէն՝ ու տը-նանկները մարդոց մէջէն ուտելու համար ։

Ի Սաղ · ԺԳ · 4 · Ա՛մով · Բ · 4 ·

15 Ցզուկը երկու աղջիկ ունի . Տո՛ւր տո՛ւր , կ՚ըսէն ։ Ան իրեքը չեն կշտանար , — չորս բո՛ն կա՛յ՝ որ Հերիք է՝ չեն ըսեր .

Ի ԳԼ · ԻԷ · 20 · Ա՛մբ · Բ · 5 ·

16 Է Գերեզմանը , ամուլ արգանդը , երկիրը՝ որ ջրով չկշտանար , ու կրակը՝ որ Հերիք է՝ չըսեր ։

Կ Ծն · Թ · 22 · Ղէ · Ի · 9 · Գէ · Ի · 20 · Իգ · 22 ·

17 Կը՛ն այբը՝ որ իր հայրը ծաղր կ՚ընէ , և իր մօրը ծերազանդիլը կ՚ա-նարգէ , ձորերուն ագռաւները պի-տի փորեն , ու զանիկայ արծիւնե-րուն ձագերը պիտի ուտեն ։

18 Աս իրեք բո՛ն ինծի զարմանալի կ՚երևնայ , և չորս բո՛ն կա՛յ որ չեմ գիտեր .

19 Օդին մէջը արծիւին ճամբան , ապառաժի վրայ օձին ճամբան , ծովուն մէջը նաւուն ճամբան , ու աղջկան քով՝ երիկ մարդուն ճամ-բան ։

Ն · Ք · ԴԲ · Իրր 700

20 Շնացող կնկան ճամբան ալ այնպէս է . կ՚ուտէ ու բերանը կը սրբէ , և Ձարութիւն չըրի՝ կ՚ըսէ ։

21 Իրեք բո՛ն համար երկիրը կը դողայ , ու չորս բո՛ն կայ , որոնք չկրնար տանիլ .

22 Հ Ծառան՝ երբոր թագաւորէ , յիմարը՝ երբոր հացով կշտանայ ,

Հ ԳԼ · ԺԲ · 10 · Ժող · Ա · 7 ·

23 Ատելի կնիկը՝ երբոր կարգուի , և աղախինը՝ երբոր իր տիկնոջը ժառանգ ըլլայ ։

24 Երկրիս վրայ չորս բո՛ն կայ՝ որ պզտիկ են , բայց անոնք շատ խե-լացի են .

25 Ն Մրջիւնները զօրաւոր ժողո-վուրդ մը չեն , բայց իրենց կերա-կուրը ամառուընէ կը պատրաս-տեն .

Ն ԳԼ · Գ · 6 · Ե ։

26 Շ Ճագարները տկար ժողովուրդ մըն են , բայց իրենց տուները վէ-մերու մէջ կը շինեն .

Շ Սաղ · Ճգ · 18 ·

27 Մարախները թագաւոր չունին , սակայն ամէնը դունդ դունդ դուրս կ՚ելլեն .

28 Ո Մողէսը էր ձեռքերովը պո՛ւ-տուն կը փակչի , ու թագաւորաց պալատներուն մէջ կը գտնուի ։

Ո Կո՛ Սար-դր · Եբէր · ՍԻՄՈՒ-ՄԻԹ , ռ-ըվ Կի՛-նա՛ս ռա՛ք-ի ֆո՛ւթ Ե-ըՖա՛ԼԻՒ ա՛ռ-ա՛ կը ։

29 Աղէկ քալող իրեք բո՛ն կայ . և չորս բո՛ն կայ՝ որ գեղեցիկ քա-լուածք ունի .

30 Առիւծը՝ որ ամէն անասուննե-րէն զօրաւոր է , ու բնաւ մէկուն երեսէն ետ չդառնար .

31 † Մէջքը կապած յո՛ւն՚ ու նոխազը , և թագաւորը՝ որուն ժողովուրդը իր հետն է ։

† Կո՛ Որ-սական շու-նը

32 Թէ որ բարձրանալով յիմարու-թիւն ըրիր , կամ մէկ չարութիւն մը մտածեցիր , ֆձեռքդ բերնիդ վրայ դիր .

ֆ Ցոր · Լ · 5 · Ղ · 4 · Ժող · Բ · 3 · Միք · Է · 16 ·

33 Վասն զի թէ որ կաթը ծեծես , կոգի կ՚ելլէ , թէ որ քիթը ճմլես , արիւն կ՚ելլէ . նոյնպէս թէ որ բար-կութիւնը զրգռես , կռիւ կ՚ելլէ ։

ԳԼ · ԼԸ

1 Պարկեշտութեան ու բարեխառնութեան վրայով Լեմուելին խրատները ։ 6 Վշտացած մարդը մխիթարելու ու պաշտպանելու վրայով ։ 10 Առաքինի կնկան գովութիւնը ու որպիսութիւնները ։

1 Լեմուէլ թագաւորին խօսքերը՝ ո՛յ-ինն — պատգամը՝ որ անոր մայրը անոր սորվեցուց ։

Իրր 1015 — ԳԼ · Է · 1 ·

2 Ի՞նչ ըսե՛մ ով որդեակ իմ , ի՞նչ ըսե՛մ ով իմ որովայնիս որդին . ի՞նչ ըսե՛մ ով իմ ուխտերուս որդին ։

Բ Ես · Խթ · 15 ·

3 Է Քու զօրութիւնդ կնիկներուն մի՛ տար , ոչ ալ քու ճամբաներդ թագաւորները բնաջինջ ընողնե-րուն ։

Ֆ ԳԼ · Է · 9 · Բ Օր · ԺԷ · 17 · Ներմ. ԺԳ · 26 · ԳԼ · Է · 26 · Ովս · Դ · 11 ·

Ն · ք · գՔ · Իբր 1015

Ի Թագ · ժ · 17 ։
Ղովհ · գ · 11 ։
Ի Պտր · ճգ · 15 ։

Ը Տես Ցոր · իթ · 15, 16 ։
Ը ա Թագ · ժթ · 4 ։
Եսթ · գ · 16 ։
Ի Ղև · ժթ · 15 ։ Բ Օր · ա · 16 ։
Ի Ցոր · իթ · 12 ։ Ես · ա · 17 ։ Երեմ · իբ · 16 ։
Լ Գլ · ժբ · 4 ։ ժբ · 22 ։ ժթ · 14 ։

Պ՝ Յաժառութեամբ

Ի Հով · ժբ · 11 ։
Ի Ղև · ժբ · 42 ։

4 Ո՛վ Լեմուէլ՝ Թագաւորներուն չվայլեր , գինի խմելը Թագաւորներուն չվայլեր , և օղի խմելը իշխաններուն չվայլեր ·
5 Զբլլայ որ խմեն՝ ու օրէնքը մոռնան , և տառապեալներէն մէկուն դատաստանը ծռեն ։
6 Օղին կորսուելու վրայ եղողին , ու գինին՝ դառնահոգիներուն տուէք ,
7 Որ անոնք խմեն , ու իրենց աղքատութիւնը մոռնան , և իրենց նեղութիւնը մէյմըն ալ չյիշեն ։
8 Բաց քու բերանդ համր մարդուն համար , Ըստ բոլոր անհնամ մնացածներուն դատին համար ։
9 Բաց քու բերանդ , Ի արդարութեամբ դատէ , և Ի աղքատին ու տնանկին դատաստանը տե՛ս ։
10 ԶՈրաքինի կնիկը ո՞վ կրնայ գըտնել · անոր գինը գոհարներէն շատ աւելի է ։
11 Անոր էրկանը սիրտը անոր վրայ վստահ է , ու աւարի կարօտ չըլլար ·
12 Անիկայ իր կենացը բոլոր օրերուն մէջ անոր բարիք կը բերէ , և ոչ Թէ չարիք ·
13 Բուրդ ու քթան կը փնտռէ , և * ուզածը ձեռքովը կը գործէ ։
14 Անիկայ վաճառականի նաւերուն կը նմանի · իր հացը հեռու տեղէն կը բերէ ։
15 Եւ Ի անիկայ գիշերով կ՝ելլէ , ու Ի տանը Ըրջէ՛ն՝ կերակուր , և իր աղախիններուն բաժին կու տայ ։
16 Արտի մը վրայ կը խորհի՝ ու զանիկայ ծախու կ՝առնէ , Ե իր ձեռքերուն պտուղէն այգի կը տնկէ ։
17 Իր մէջքը զօրութեամբ կը պընդէ , ու իր բազուկները կը զօրացընէ ։
18 Իր վաստակին աղէկ ըլլալը կը հասկընայ · անոր ճրագը գիշերը չմարիր ։
19 Իր ձեռքերը լլիկին կ՝երկընցընէ , ու ափովը րոպը կը բռնէ ։
20 Ձեռքը աղքատին կը բանայ , ու ձեռքերը կարօտներուն կ՝երկընցընէ ։
21 Իր տանը Ըրջոջը համար՝ ձիւնէն չվախնար · քանզի բոլոր ընտանիքը կրկին հանդերձ հագած են ։
22 Իրեն ծածկոցներ կը շինէ · իր հանդերձը բեհեզ ու ծիրանի է ։
23 Անոր էրիկը կը ճանչցուի դռներուն մէջ՝ երբոր երկրին ծերերուն հետ կը նստի ։
24 Կտաւ կը գործէ , ու կը ծախէ , և վաճառականներուն գօտիներ կու տայ ։
25 Զօրութիւն ու փառք կը հագնի · ու ետքի օրերը պիտի ուրախանայ ։
26 Իր բերանը իմաստութեամբ կը բանայ , և իր լեզուին վրայ Ի քաղցրութեան օրէնք կայ ։
27 Իր տանը ճամբաները կը քննէ , և ծուլութեան հացը չուտեր ։
28 Անոր տղաքը կ՝ելլեն , ու զանիկայ երանելի կ՝անուանեն · անոր էրիկն ալ զանիկայ կը գովէ , ըսելով ·
29 Շատ աղջիկներ առաքինի եղան · բայց դուն ամենէն գերազանց եղար ։
30 Վայելչութիւնը սուտ է , ու գեղեցկութիւնը ունայն է · Ա՛յն Ցերոջմէ վախցող կնիկը պիտի գովուի ։
31 Տուէք անոր՝ իր ձեռքին պտուղէն · ու անոր գործքերը դռներու մէջ գովեն զանիկայ ։

Ն · ք · գՔ · Իբր 1015

Ես · իզ · 28 ։ Երե · ժ · 16 ։

Գլ · ժբ · 4 ։

Պ՝ ողորմութեան

ԳԻՐՔ ՀՈԳԱՒՈՐԻ

Ն · Ք · ՂԲ · Իբր 977

ԳԼՈՒԽ Ա

1 Հոգեվոգը կը ցուցընէ թէ բոլոր մարդկային բաները ունայնութիւն են, 4 որովհետեւ ամէն արարածները անդադար կ'աշխատին, 9 բայց նոր բան մը յաւաղ չեն բերեր, ու ամէն հին բաներն ալ կը մոռցուին. 12 և թէ ինքը այսպէս գաւած է իմաստութեան քննութիւններով։

1 Երուսաղեմի մէջ թագաւորող Դաւիթի որդւոյն՝ Հոգեվոգին խօսքերը։

2 Ունայնութիւն ունայնութեանց, ըսաւ Հոգեվոգը. ունայնութիւն ունայնութեանց, համն բան ունայնութիւն է։

3 Ի՞նչ օգուտ կ'ունենայ մարդ՝ արեւուն տակը քաշած բոլոր աշխատանքէն։

4 Մէկ ազգը կ'երթայ, ու դէպի ազգը կու գայ. բայց երկիրը միշտ կը կենայ։

5 Նաեւ արեր կը ծագի, ու արեւը կը մտնէ, և իր ծագած տեղը արտորալով կը դառնայ։

6 Հովը դէպ 'ի հարաւ կ'երթայ, ու դէպ 'ի հիւսիս կը պտրտի. Ա հովը աս դին ան դին պտրտելով՝ կ'երթայ իր շրջաններուն համեմատ կը դառնայ։

7 Ամէն գետերը ծովը կ'երթան, բայց ծովը չլեցուիր. ան տեղը՝ որ գետերը կ'երթային, նորէն հոն կ'երթան։

8 Ամէն *խօսքերը կը հատնին". մարդս խօսելու կարող չէ. Ի աչքը տեսնելով չկշտանար, ու ականջը լսելով չլեցուիր։

9 Ի՞նչ որ եղած է, նոյնը պիտի ըլլայ, ու ինչ որ գործուած է, նոյնը պիտի գործուի. և արեւուն տակը բնաւ նոր բան մը չկայ։

10 Կայ արդեօք անանկ բան մը՝ որուն համար կրնայ ըսուիլ թէ, Ասիկայ նոր է. Ահա մեզմէ առաջ եղած դարերուն մէջ անիկայ արդէն եղած էր։

11 Առջի բաներուն յիշատակը չկայ. ու ետքը ըլլալու բաներուն ալ՝ ետքը եկողներուն մէջ յիշատակը պիտի չըլլայ։

12 Ես Հոգեվոգը՝ Երուսաղեմի մէջ Իսրայէլի վրայ թագաւոր եղայ,

13 Եւ իմ սիրտս երկինքին տակը բոլոր եղածները իմաստութեամբ փնտռելու ու քննելու տուի. Ա Աստուած աս չար զբաղմունքը մարդոց որդիներուն տուաւ, որ անով զբաղին։

14 Արեւուն տակը բոլոր գործուած գործքերը տեսայ. և ահա ամէնն ալ ունայնութիւն, ու †հոգիի տանջանք" է։

15 Ինն որ ծուռ է՝ չկրնար շիտկուիլ, ու ան որ պակաս է՝ չկրնար համրուիլ։

16 Ես իմ սրտիս մէջը խօսեցայ ու ըսի. Ահա ես մեծցայ, ու իմաստութիւն ստացայ Երուսաղեմի մէջ ինծմէ առաջ եղողներուն ամէնէն աւելի. և իմ սիրտս շատ իմաստութիւն ու գիտութիւն տեսաւ։

17 Եւ իմ սիրտս՝ իմաստութիւնը ճանչնալու, ու խենթութիւնը և յիմարութիւնը գիտնալու տուի. հասկըցայ որ ասիկայ ալ հոգիի տանջանք է։

18 Վասն զի շատ իմաստութեան մէջ՝ շատ տրտմութիւն կայ. ու իր գիտութիւնը աւելցընողը իր վիշտը կ'աւելցընէ։

Ն · Ք · ՂԲ · Իբր 977

Ը Ծն · գ · 19 ։ ԳԼ · գ · 10 ։

† Կ—՛ հովի համար աշխատութիւն

Ի ԳԼ · է · 13 ։

Ժ գ Թագ · գ · 12 ։ 13 ։ դ · 30 ։ ժ · 7 ։ 23 ։ ԳԼ · բ · 9 ։

Լ ԳԼ · բ · 3 ։ 12 ։ է · 23 ։ 25 ։ ա Թես. ե · 21 ։

Հ ԳԼ · ժբ · 12 ։

ԳԼ · Բ

1 Մարդկային կենաց ունայնութիւնը զբօսանաց մէջ ։ 12 Թէև իմաստունը յիմարէն աղէկ է ։ սակայն երկուքին վերջը մէկ է ։ 18 Մարդկային աշխատութիւններուն ունայնութիւնը ։ որ երբոր կը թողուն ։ չեն գիտեր թէ որո՛ւն համար է ։ 24 Մեր աշխատանքին պտուղը վայելելն պէս ազէկ բան չկայ · բայց ան ալ Աստուծոյ մէկ պարգեւն է ։

1 Ես — իմ սրտիս մէջը ըսի. Եկուր հիմա ուրախութեան միջոցով քեզ փորձեմ. ուստի բարիքներ վայելէ. և ահա Ի սասիկայ ալ ունայնութիւն է ։

2 Ծիծաղին համար ըսի՝ թէ յիմար է, և ուրախութեան համար թէ՝ Ասոր ըրածը ի՞նչ է ։

3 Սրտիս մէջը խորհեցայ որ մարմինս գինիով զուարթացընեմ, և իմաստութեան առաջնորդութեամբ անմտութիւնը ճանչնամ, որ տեսնեմ թէ ինչ է մարդոց որդիներուն բարին՝ որ կրնան ընել երբ

— Ղւկ · ժբ · 19 ։

Ը Ծն Ե · ծ · 11 ։

† Ընտկ · ժգ · 13 ։ ԳԼ · է · 6 ։

Տ ԳԼ · ա · 17 ։

Ն · Ք · ԳՓ · Իրբ 977

կինքին տակը իրենց կենացը բոլոր օրերուն մէջ ։

4 Մեծ գործքեր ըրի . ինձի տուներ շինեցի , ու ինձի այգիներ տընկեցի .

5 Ինձի պարտէզներ և դրախտներ շինեցի , ու անոնց մէջը ամէն տեսակ պտուղ բերող ծառեր տնկեցի .

6 Ինձի ջուրի աւազաններ շինեցի , որ անոնցմէ՝ ծառ բուսցընող անտառը ոռոգուի .

7 Ծառաներ ու աղախիններ ստացայ , և իմ տանս մէջը ծնած ծառաներ ունեցայ . ու շատ արջառներ և հօտեր ունեցայ , ինձմէ առաջ Երուսաղեմի մէջ եղողներուն ամենէն աւելի ։

Ե գ Թագ · Թ · 28 ։ Ժ · 10 ։ 14 ։ 21 ։ ՃՃ ։

8 Ինձի՝ արծաթ ու ոսկի , և թագաւորներու ու գաւառներու գանձեր դիզեցի . ինձի այր և կին երգեցողներ ստացայ , ու մարդոց որդիներուն զուարճութիւնները * Ա. ամէն տեսակ շքեղութիւն՝ ։

* Կ՚ըսի մեծ առատութիւով ։ Ղ Գլ · ա · 16 ։

9 Եւ ինձմէ առաջ Երուսաղեմի մէջ եղողներուն ամենէն մեծ եղայ ու բարգաւաճեցայ . իմաստութիւնս ալ իմ քովս կը կենար ։

10 Եւ իմ աչքերուս ամէն ցանկութիւնը՝ անոնցմէ չարգիլեցի , ու իմ սիրտս՝ ամէն ուրախութենէ զուրկ չթողուցի . հապա իմ սիրտս իմ բոլոր աշխատութիւններէս ուրախացաւ . և ես իմ բոլոր աշխատութիւններէս՝ բաժինս ասիկայ եր ։

Ե Գլ · գ · 22 ։ Ե · 18 ։ Թ · 9 ։

11 Ու ես՝ իմ ձեռքերուս ըրած ամէն գործքերուն , ու ընելու համար իմ քաշած ամէն աշխատանքիս նայեցայ , և ահա ամէնը ունայնութիւն ու հոգիի տանջանք եր , ու արեւուն տակը օգուտ չկար ։

Ը Գլ · ա · 3 · 14 ։

12 Եւ ես դարձայ իմաստութիւնը տեսնելու , խնամութիւնը , ու անմտութիւնը . վասն զի թագաւորին ետեւէն եկող մարդը ի՞նչ կրնայ ընել . ինչ որ արդէն ըրած են ։

Բ Գլ · ա · 17 ։ է · 25 ։

13 Ուստի տեսայ որ իմաստութիւնը անմտութենէն օգտակար է , ինչպէս որ լոյսը խաւարէն օգտակար է ։

14 Իմաստունին աչքերը իր գլխուն վրայ է , իսկ անմիտը խաւարի մէջ կը քալէ . բայց ես հասկըցայ որ ամենուն պատահած դիպուածը մէկ է ։

Ի Առակ · Ժէ · 24 ։ Գլ · բ · 1 ։

Ի Սաղ · խթ · 10 ։ Գլ · թ · 2 · 3 · 11 ։

15 Ըն ատենը իմ սրտիս մէջը ըսի . Որովհետև անմիտին պատահածը ինձի ալ պիտի պատահի , ուրեմն ես ինչո՞ւ համար աւելի իմաստուն եղայ . ասս պատճառաւ իմ սրտիս մէջը ըսի որ ասս ալ ունայնութիւն է ։

16 Վասն զի ինչպէս անմիտին՝ նմանապէս իմաստունին ալ յաւիտեան յիշատակը չկայ . ինչու որ հիմա եղած բաներուն ամէնը ապագայ ժամանակին մէջ պիտի մոռցուի . ու իմաստունը ի՞նչպէս կը մեռնի . անմիտին պէս ։

17 Ընոր համար՝ կեանքէս զզուեցայ . վասն զի արեւուն տակը եղած գործքերը ինձի գէշ երևցան . քանզի ամէնը ունայնութիւն ու հոգիի տանջանք է ։

18 Եւ ես՝ արեւուն տակը քաշած բոլոր աշխատութենէս զզուեցայ . քանզի ինձմէ ետքը գալու մարդուն պիտի թողում զանիկայ .

Ը Սաղ · խթ · 10 ։

19 Ու ո՞վ գիտէ թէ անիկայ իմաստուն պիտի ըլլայ , թէ անմիտ . բայց պիտի տիրէ իմ բոլոր աշխատութիւններուս վրայ , որ արեւուն տակը աշխատեցայ , ու անոնց մէջը իմաստութիւն ցուցուցի . ասիկայ ալ ունայնութիւն է ։

20 Եւ ես դարձայ , որ արեւուն տակը քաշած բոլոր աշխատանքիս վրայով իմ սրտէս յոյսս կտրեմ ։

21 Վասն զի մարդ կայ՝ որուն աշխատութիւնը իմաստութեամբ , գիտութեամբ և յաջողութեամբ կ՚ըլլայ . բայց անոր մէջը չաշխատող մարդուն էբբ բաժին կու տայ . ասիկայ ալ ունայնութիւն ու մեծ չարիք մըն է .

Ի Գլ · ա · 3 ։ գ · 9 ։

22 Վասն զի մարդը՝ արեւուն տակը քաշած իր բոլոր աշխատանքէն , ու սրտին տանջանքէն ի՞նչ օգուտ կ՚ունենայ .

Բ Ցօր · և · 7 ։ Ժգ · 1 ։

23 Քանզի անոր բոլոր օրերը ՝վիշտերով՝ ու գործքը տրտմութեամբ լեցուն են . անոր սիրտը գիշերը անգամ հանգստութիւն չգտներ . ասիկայ ալ ունայնութիւն է ։

24 Մարդս ուտելէն ու խմելէն և իր աշխատանքովը իր հոգին զուարճացընելէն ի՛ չքնաղ ուրիշ աղեկութիւն մը չունի . ես ասիկայ ալ տեսայ որ Աստուծոյ ձեռքովը կ՚ըլլայ ։

Ե Գլ · գ · 12 ։ 13 , 22 ։ և · 18 ։ ը · 15 ։

25 Վասն զի ինձմէ զատ՝ ով կրնայ ուտել , և ո՞վ կրնայ զուարճանալ ։

Ի Կ՚ըսի ամանց Անոր

26 Քանզի Աստուած՝ իր առջևը հաճելի եղող մարդուն՝ իմաստութիւն , գիտութիւն և ուրախութիւն կու տայ . բայց մեղաւորին զբաղմունք կու տայ , որ անիկայ աստուածի ժողվէ ու դիզէ , որ Աստուծոյ առջևը հաճելի եղողին տայ . ասիկայ ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է ։

Ը Ցօր · իէ · 16 , 17 ։ Առակ · իը · 8 ։

Գ Լ · Գ

1 Ժամանակին փոփոխութիւններովը մարդոց աշխատութեանցը վրայ ունայնութիւն կ՚ուզնայ ։ 11 Աստուծոյ գործքերուն մէջ գե-

Ն·Ք·ԴԲ· Իրբ 977

բազմությունքին մը կայ։ 16 սակայն վերջին օրը Աստուած պիտի դատէ մարդոց գործքերը, թէև հիմա անոնք անաստուն պէս են։

1 Ա ԱՄԷՆ բանին ատենը կայ, ու ամէն գործին տակը եղող ամէն * գործին ժամանակը.

2 Ծնանելու ժամանակ, և մեռնելու ժամանակ. տնկելու ժամանակ, ու տնկուածը խլելու ժամանակ.

3 Մեռցնելու ժամանակ, և բժշկելու ժամանակ. փլցնելու ժամանակ, ու շինելու ժամանակ.

4 Լալու ժամանակ, և ծիծաղելու ժամանակ. սուգ ընելու ժամանակ, ու կաքաւելու ժամանակ.

5 Քարեր դուրս նետելու ժամանակ, և քարեր ժողվելու ժամանակ. գրկելու ժամանակ, ու † զրկելէն հեռանալու ժամանակ.

6 Փնտռելու ժամանակ, և կորսընցընելու ժամանակ. պահելու ժամանակ, ու դուրս ձգելու ժամանակ.

7 Պատռելու ժամանակ, և կարելու ժամանակ. Լռելու ժամանակ, ու խօսելու ժամանակ.

8 Սիրելու ժամանակ, և խաւելու ժամանակ. պատերազմի ժամանակ, ու խաղաղութեան ժամանակ։

9 Ը Աշխատողին՝ իր քաշած աշխատանքէն ի՞նչ օգուտ կ'ըլլայ։

10 Ի Տեսայ ան զբաղմունքը՝ որ Աստուած մարդոց որդիներուն տուաւ, որ անով զբաղին։

11 Անիկայ ամէն բան իր ժամանակին վայելուչ ըրաւ. Ե աշխարհս ալ անոնց սրտին մէջը դրաւ. բայց Ը Աստուածոյ ըրած գործքը մարդ չըկրնար սկիզբէն մինչև վերջը գտնել։

12 Ա Ե գիտեմ որ ուրախ ըլլալէն ու կենդանութեան ատենը աղէկութիւն ընելէն 'ի զատ՝ ուրիշ աղէկ բան մը չկայ անոնց մէջ։

13 Ու նաև Ժ ամէն մարդուն ուտելը ու խմելը, և իր բոլոր աշխատութենէն բարիք վայելելը Աստուծոյ պարգևն է։

14 Գիտեմ որ Աստուծոյ ամէն ըրածը յաւիտեան պիտի մնայ. Ե նոր վրայ բան մը աւելցընել, կամ անկէ պակսեցընել կարելի չէ. և Աստուած Ն՚ի՛նչ ըրաւ, որ իր երեսէն վախնան։

15 Ա Ի՛նչ որ եղած է, հիմա ալ կայ. ու ի՛նչ որ պիտի ըլլայ, արդէն եղած է. և Աստուած անցածը կը փնտռէ։

16 Ու նաև արևուն տակը տեսայ որ Ի դատաստանի տեղը՝ ամբարշտութիւն, և արդարութեան տեղը՝ անօրէնութիւն կար։

17 Ես իմ սրտիս մէջը ըսի թէ՝ Ե Աստուած պիտի դատէ արդարը ու ամբարիշտը. վասն զի Ն ամէն դիտաւորութիւն ու ամէն գործ ժամանակ ունի հոն։

18 Ես իմ սրտիս մէջը ըսի մարդոց որդիներուն վիճակին վրայով, թէ Աստուած զանոնք պիտի փորձէ. ու պիտի տեսնէն որ իրենք անասուններ են։

19 Վասն զի մարդոց որդիներուն պատահածը՝ և անասուններուն պատահածը՝ մէկ է. մէկը ինչպէս կը մեռնի, մէկալն ալ այնպէս կը մեռնի. ու ամենուն շունչը մէկ է. և մարդը անասունէն աւելի բան մը չունի. վասն զի ամէնը ունայնութիւն է։

20 Ամէնը մէկտեղ կ'երթայ. Յ ամէնը հողէն եղաւ, ու ամէնը հող կը դառնայ։

21 Ո՞վ գիտէ թէ մարդոց որդիներուն հոգիները վեր կ'ելլեն, և անասնոց ոգիները վար գետինը կ'իջնեն։

22 Ֆ Ու տեսայ որ՝ մարդս իր գործքերովը ուրախ ըլլալէն Ի զատ ուրիշ աղէկութիւն մը չունի. Ժ քանզի անոր բաժինը ան է. Ի վասն զի ո՞վ պիտի տանի զանիկայ որ տեսնէ թէ իրմէ եղբը ինչ պիտի ըլլայ։

ԳԼ·Դ

1 Մարդուն ունայնութիւնը կ'աւելնայ հարբուսահարութեամբ, 4 նախանձով, 5 ծուլութեամբ, 7 ագահութեամբ, 9 առանձնակեցութեամբ, 13 կամակորութեամբ։

1 Ա Ես դարձայ, ու տեսայ արևուն տակը եղած բոլոր զրկանքները. և ահա զրկուածներուն արցունք կար. բայց անոնք մխիթարող չունէին. ու անոնց զբրկանք ընողներուն ձեռքը ոյժ կար. բայց անոնց մխիթարութիւն տուող չկար։

2 Բ Ուստի ես մեռածները՝ արդէն մեռածներուն՝ մինչև հիմա ապրող կենդանիներէն աւելի գովեցի։

3 Բայց ան որ մինչև հիմա եղած չէ՝ երկուքէն ալ աղէկ է. վասն զի անիկայ արևուն տակը եղած չարութիւնը չտեսաւ։

4 Ու ես ամէն աշխատութիւնը, և ամէն յաջող գործքը տեսայ, որ անոնց համար մարդ իր ընկերին կը նախանձի. ասիկայ ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է։

5 Դ Անմիտը իր ձեռքերը կը ծալէ, ու իր միսը կ'ուտէ։

6 Ե Աւելի աղէկ է մէկ լեցուն ձեռքը հանգստութեամբ, քան թէ երկու լեցուն ձեռքը՝ որ աշխատանքով ու հոգիի տանջանքով է։

Ն·Ք·ԴԲ· Իրբ 977

ՀՈՎ. Բ· 6,7,8, ԸՀ· Ը· 10· ԲԹԱՒ· Ա· 6,7։

Ա ՀՈՐ 1։

ՀՍԱԳ·ԽԹ· 12,20, ՀԳ· 22, ԳԼ·Բ· 16։

Յ ԾՆ·Գ·19։

ԷԳԼ·ԺԲ·7։

Ֆ ՀՈՐ 12, ԳԼ· Բ·24, Ե· 18, ՅՈ·9։

Զ ԳԼ·Բ·10։

Ը ԳԼ·Գ·12, Բ·7, Ժ·14։

Ա ԵՐԿ·ԳԼ·16, Ե·8։

Բ ԾՈՐ·Գ· 17, ԸՀ։

Գ ԾՈՐ·Գ· 11,16,21, ԳԼ·Գ·3։

Դ ԱՌԱԿ·Գ· 10, ԻԳ·33։

Ե ԱՌԱԿ·ԺԵ· 16,17, ԺԶ· 8։

Ն·Ք·ԳՁ· Իբր 977

7 Եւ ես դարձայ՝ ու արեւուն տակը ունայնութիւն տեսայ ։
8 Մէկ մարդ մը կայ՝ որ երկրորդ չունի. ոչ տղայ ունի և ոչ եղբայր. բայց անոր ամէն աշխատութիւնը վախճան չունի. ու անոր աչքերը հարստութեամբ չեն կըշտանար. Ե՛և ըսէր ինքն՝ Ես որո՞ւն համար կ՚աշխատիմ, ու իմ հոգիս բարիքէ կը զրկեմ. ասիկայ ալ ունայնութիւն ու չար զբաղմունք է ։
9 Երկուքը՝ մէկէն աղէկ է. վասն զի անոնց աշխատանքը աղէկ վարձք ունի.
10 Քանզի թէ որ իյնան, մէկզմէկ կը վերցընեն. բայց վա՛յ իյնող մէկուն՝ որ զինքը վերցընող երկրորդ մը չունի ։
11 Ու երկու մարդ դէ՛ւրէ պառկելով՝ կը տաքնան. բայց մինակը ի՞նչպէս կրնայ տաքնալ ։
12 Եւ թէ որ մէկը անոնց բռնութիւն ընէ, երկուքը կրնան անոր դէմ դնել. ու երեքպատիկ դերձանը դիւրաւ չկտրուիր ։
13 Աղէկ է աղքատ ու իմաստուն տղան, քան թէ ծեր ու անմիտ թագաւորը՝ որ ալ չգիտեր խրատուիլ ։
14 Քանզի դէ՛ւը բանտէն կ՚ելլէ՝ որ թագաւորէ, բայց ո՛րէ մը որ *թագաւոր ծնած է, աղքատ կ՚ըլլայ ։
15 Տեսայ արեւուն տակը քալող ամէն կենդանիները ան տղուն հետ՝ որ Բ՛ո՛ւրէն երկրորդն էր, ու անոր տեղը պիտի անցնէր.
16 †Անոնց առջևը կեցող՞ բոլոր ժողովուրդը անթիւ էր. սակայն ետքը եկողները անկէ պիտի չուրախանան. ասիկայ ալ ունայնութիւն ու հոգիի տանջանք է ։

Գ Լ · Ե

1 Աստուածային պաշտօնը կատարելու մէջ, 8 Հարստահարութեան դէմ տրտնջելու մէջ, 9 և Հարստութեան մէջ ունայնութիւններ։ 18 Հարստութեան մէջ երջանկութիւնը Աստուծոյ պարգեւն է ։

1 Երբոր Աստուծոյ տունը կ՚երթաս, ուշադիր զգուշութիւն ըրէ. և աւելի մօտիկ ընելու մտածիր, քան թէ անմիտներու զոհ մատուցանելու. վասն զի անոնք չեն գիտեր թէ չարութիւն կ՚ընեն ։
2 Բերնովդ մի՛ աճապարեր. և քու սիրտդ Աստուծոյ առջևը խօսք հանելու չարտորայ. քանզի Աստուած երկինքն է, ու դուն երկրի վրայ ես. անոր համար քու խօսքերդ քիչ ըլլան ։
3 Վասն զի երազը՝ շատ զբաղմունքէն յառաջ կու գայ, ու յիմարին ձայնը՝ շատ խօսքերէն ։
4 Երբոր Աստուծոյ ուխտ կ՚ընես, զանիկայ կատարելը մի՛ ուշացըներ. քանզի Ա՛ո՛ւ՛ո՛ անմիտներուն չը՛հաճիր. Ըրածդ ուխտդ կատարէ՛ ։
5 Աղէկ է որ ուխտ չընես, քան թէ ուխտ ընես, ու չկատարես ։
6 Թող մի՛ տար որ քու բերանդ մարմնոյդ մեղք դործել տայ, և հրեշտակին առջևը մի՛ ըսեր թէ՝ Սխալանք եղաւ. ինչո՞ւ Աստուած քու խօսքիդ համար բարկանայ, ու ձեռքերուդ դործքը ապրէ ։
7 Վասն զի երազներուն շատութեանը մէջ, և խօսքերուն շատութեանը մէջ՝ ունայնութիւններ ալ կայ. բայց Դուն Աստուծմէ վախցիր ։
8 Թէ որ դաւառի մէջ ձաղքատին եղած զրկանքը ու իրաւանց և արդարութեան ծռուիլը տեսնես, զա բանիս վրայ մի՛ զարմանար. վասն զի էրարձրերուն վրայ բարձր եղողը կը դիտէ. և ասոնցմէ բարձրը կայ ։
9 Երկիրը ամենուն օգտակար է. Թագաւորին Ո՛ՆՁ՛ արտէն ծառայութիւն կ՚ըլլայ ։
10 Արծաթի սիրողը արծաթէն չկըշտանար, ոչ ալ հարստութիւն սիրողը էրէրբ բերքէն. ասիկայ ալ ունայնութիւն է ։
11 Երբոր բարիքը կը շատնայ, ուտողներն ալ կը շատնան. ուրեմն զանիկայ ունեցողներուն՝ աչքով տեսնելէն ՚ի զատ ի՞նչ օգուտ կ՚ըլլայ ։
12 Քաղցր է աշխատող մարդուն քունը՝ թէ՛ շատ և թէ քիչ ուտէ. բայց հարուստին ‡կուշտ ըլլալը՞ չթողուր որ անիկայ հանդիստ քնանայ ։
13 Արեւուն տակը տեսայ որ մէկ դէշ ցաւ մը կայ, ա՛յ՛ն՛ն՛ն

ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԻՆ ՈՒՂԻՂ 977

ՆԳԼ·Բ·24, Գ·12, 13, 22, Թ·7, ԺԱ·9, ա ՏԻՄ·Գ·17, ՂԳԼ·Ր·10, Գ·22, ՃԳԼ·Բ·24, Գ·13, Ղ·2,

18 Ահա աս աղէկութիւնը տեսայ, որ վայելուչ է ուտել ու խմել, և Աստուծոյ մէկու մը տուած կենացը բոլոր օրերուն մէջ՝ արեւուն տակը իր քաշած բոլոր աշխատանքին բարիքը վայելել. Ղ վասն զի անոր բաժինը ասիկայ է։

19 Եւ որ մարդուն որ Աստուած հարստութիւն ու ստացուածք կու տայ, ու անկէ ուտելու, և բաժինը առնելու, ու իր աշխատանքէն ուրախանալու իշխանութիւն կու տայ, ասիկայ Աստուծոյ պարգեւն է։

20 Քանզի անիկայ իր կենացը օրերը շատ չյիշեր. վասն զի Աստուած անոր սրտին ուրախութիւնովը՝ ՚ի՛նչ պատասխան կու տայ։

ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԻՆ ՈՒՂԻՂ 977

Ի ՅՈՎ·Ը·16, ՍԱՂ·ԺԵ·14, ՀԳ·7,

ԲԳԼ·Ե·13,

ԲԾՈՐ·ԽԱ·10, ՁՍԱՂ ԺԵ·14, ՀԳ·7,

ԲՂՐ·ԺՐ·20,

ԴԹԱԳ·Թ·35, ԵՍ·ԺԳ·19, 20, ԵՐԵՄ·ԻԲ·19,

ԻԾՈՐ·Գ·16, ՍԱՂ·ԾԲ·8, ԳԼ·Գ·3,

ՂԱՌԱԿ·ԺԳ·26,

*ԵՔՐ·քալելն

Գ Ա Զ

1 Զգործածուած հարստութեան, 3 առանց հարստութեան զուարճներ ունենալու, 6 և հարստութենէ զրկուած ներութեան ունայնութիւնը։ 9 Փոխոխական բաշխանքներուն ունայնութիւնը։

1 Երեւուն տակը տեսայ որ չարիք մը կայ. ու անիկայ մարդոց մէջը շատ կը ֆռնռի։

2 Մարդ մը՝ որուն Աստուած հարստութիւն ու ստացուածք և փառք կու տայ, ԲՊայնպէս որ իր հոգիին ցանկացած բաներէն պակսութիւն մը չունենար. Ետայց Աստուած անոր իշխանութիւն չտար անկէ ուտելու. Հապա զանիկայ օտար մարդ կ'ուտէ. աս ՚ի ունայնութիւն ու գէշ ցաւ մըն է։

3 Թէ որ մարդ հարիւր ՚ի՛ն ծնանի, ու շատ տարիներ ապրի, և անոր տարիներուն օրերը շատ ըլլայ, ու անոր հոգին բարութենէն չկշտանայ, և Տանիկայ թաղում ալ չունենայ, կ'ըսեմ որ Ի վիժածը անկէ աղէկ է.

4 վասն զի ՚ի՛ն ունայնութեամբ կու գայ, ու խաւարով կ'երթայ, և անունը խաւարի մէջ կը ծածկուի.

5 Արեւն ալ չտեսաւ, ու բան մը չգիտցաւ. ասիկայ մէկալէն աւելի հանգիստ է։

6 Իսկ անիկայ թէև երկու հազար տարի ապրի, ու աղէկութիւն չըտեսնէ, միթէ ամէնքը մէկ տեղ չե՞ն երթար։

7 ՂՄարդուն բոլոր աշխատութիւնը իր բերնին համար է. սակայն ՚ի՛որ հոգին չկշտանար։

8 Քանզի իմաստունը՝ անմիտէն աւելի ի՞նչ բան ունի. կենդանիներուն մէջը քալել գիտցող աղքատը ի՞նչ օգուտ կ'ունենայ։

9 Աչերով տեսնելը՝ հոգիով *փափաքելէն աղէկ է. ասիկայ ալ

ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԻՆ ՈՒՂԻՂ 977

ԲԾՈՐ·Թ·32, ԵՍ·ԽԱ·9, ԵՐԵՄ·ԽԹ·10,

ՁՍԱՂ·ՃԲ·11, ՃԹ·23, ՃԽԴ·4, ՅԱԿ·Գ·14, 15,

ԲՍԱՂ·Լ԰·6, ԳԼ·Ը·7,

ունայնութիւն ու հոգիի տանջանք է։

10 Ինչ որ եղաւ, արդէն անոր անունն դրուած է. և յայտնի է թէ մարդն է. Ի ու անիկայ իրմէ Զօրաւորին հետ վիճելու կարող չէ։

11 Որովհետև ունայնութիւն շատցրնող շատ բաներ կան, մարդուն ինչ կը մնայ։

12 Քանզի ո՞վ դիտէ թէ որ բանը աղէկ է կենդանի մարդուն՝ Ըրտուրբի պէս անցուցած իր ունայն կենացը բոլոր օրերուն մէջը. վասն զի Ի մարդուն ո՞վ պիտի յայտնէ, թէ իրմէ ետքը արեւուն տակը ինչ պիտի ըլլայ։

Գ Լ·Ի

1 Ասոնք են որ ունայնութեան դէմ կը դնէն. բարի Համբաւ, 2 սուգ, 7 Համբերութիւն, 11 իմաստութիւն։ 23 Իմաստութիւն առանձնական գժտութիւնը։

1 ՚Ի՛ւղի անունը՝ Հոտաւէտ եղէն, ու մահուան օրը՝ ծննդեան օրէն աղէկ է։

2 Սուգի տուն երթալը կոչունքի տուն երթալէն աղէկ է. վասն զի ամէն մարդուն վախճանը ան է. ու կենդանի եղողը՝ ՚ի՛ն իր սրտին մէջը կը դնէ։

3 Տրտմութիւնը ծիծաղելէն աղէկ է. Ի վասն զի երեսին տրտմութեամբը սիրտը կը ղուարճանայ։

4 Իմաստուններուն սիրտը՝ սուգի տունը, իսկ յիմարներուն սիրտը՝ ուրախութեան տունը կ'ըլլայ։

5 Իմաստունին յանդիմանութիւնը լսելը՝ յիմարներուն երգը լսելէն աղէկ է։

6 Վասն զի ինչպէս է փուշերուն ձայնը կաթսային տակը, յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է. ասիկայ ալ ունայնութիւն է։

7 Իրաւ որ բռնութիւնը՝ իմաստունը յիմար կ'ընէ, Ի ու պարգեւը սրտերուն սիրտը կ'ապականէ։

8 Մէկ բանին վախճանը՝ սկիզբէն աղէկ է. ՚ի՛ն Երկայնամիտ ոգին՝ հպարտ ոգիէն աղէկ է։

9 Ի՛մ՝ արտորար հոգիովդ բարկանալու. քանզի բարկութիւնը յիմարներուն ծոցին մէջը կը հանգչի։

10 Մի՛ ըսեր թէ՝ Ինչո՞ւ համար առջի օրերը ասոնք օրերէն աղէկ էին. վասն զի ասոնց համար բրած հարցմունքդ իմաստութեամբ չէ։

11 Իմաստութիւնը՝ ժառանգութեան պէս աղէկ է, ու ըսարեր տեսնողներուն օգտակար է։

12 Վասն զի իմաստութիւնը հովանաւորութիւն կ'ընէ, և արծաթը հովանաւորութիւն կ'ընէ. բայց գիտութեան օգուտը ՚ի՛ն է, որ ի-

ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԻՆ ՈՒՂԻՂ 977

ՂԱՌԱԿ·ԻԲ·1,

ՂԱՌԱԿ·ԺԳ·29,

ՂԱՌԱԿ·ԺԳ·17, ԺԳ·32, ՅԱԿ·Ա·19,

ՂԳԼ·ԺԱ·7,

†Կ՛Ը ՍՐՏՄՈՒԹԻՒՆը

ԲԸՕՐ·Է·10,

‡Կ՛ԲԱՐԻ Կ'ԸԼԼԱՅ,

ՏԵՍ ՍԱՂ·ՃԽԱ·5, ՂԱՌԱԿ·ԺԳ·18, ԺԷ·31, 32,

ԴՍԱՂ·ՃԺԲ·12, ԳԼ·Բ·2,

ԻԵԼ·ԻԳ·8, ՐՕՐ·ԺԳ·19,

Ն · Ք · ՂԴ · Իրր 977

մաստութիւնը՝ զինքը ստացողները կ'ապրեցընէ ։

13 Աստուծոյ գործքին նայէ . վասն զի ո՞վ կրնայ շիտակել ։

14 Աղէկ օրը աղէկութեամբ անցուր , ու գէշ օրը զգուշութիւն ըրէ . և Աստուած իրարու դիմացը դրաւ ասոնք , որ մարդ իրմէ ետքը բան մը չգտնէ ։

15 Իմ ունայնութեան օրերուս մէջը ամէնը տեսայ . Արդար կայ՝ որ իր արդարութեանը մէջ կը կորսուի , և ամբարիշտ կայ՝ որ իր ամբարշտութեանը մէջ իր կեանքը կ'երկարեցընէ ։

16 Չխիստ շատ արդար մի՛ ըլլար . Ու ինքզինքդ չափէ դուրս իմաստուն մի՛ կարծեր . ինչո՞ւ համար քեզ կորսընցընես ։

17 Խիստ ամբարիշտ մի՛ ըլլար , ու յիմար մի՛ ըլլար . Ինչո՞ւ համար առանդ չեկած մեռնիս ։

18 Աղէկ է որ մէկը բռնես , ու մէկալէն ալ ձեռքդ չքաշես . վասն զի Աստուծմէ վախցողը ամէնէն ո՛չով կ'ելլէ ։

19 Իմաստութիւնը աւելի ոյժ կուտայ իմաստունին , քան թէ քաղաքի մը մէջ եղող տասը իշխանը՝ ։

20 Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ չկայ՝ որ աղէկութիւն ընէ , ու մեղք չգործէ ։

21 Արդ՝ քու սիրտդ ամէն խօսուած խօսքերուն մի՛ տար , որ քու ծառայիդ քեզի անէծք տալը չլսես .

22 Վասն զի քու սիրտդ դիտէ որ դուն ալ շատ անգամ ուրիշներուն անէծք տուած ես ։

23 Ասոնց ամէնը իմաստութեամբ փորձեցի . Ըսի թէ՝ Ես իմաստուն ըլլամ . բայց անիկայ ինծմէ հեռու էր ։

24 Ինչ ըլլալը , ու խիստ խորունկ եղածը ո՛վ կը գտնէ ։

25 Ես իմ սրտովս պտրտեցայ՝ որ գիտնամ , և քննեմ , ու փնտռեմ իմաստութիւնը ու հանճարը . և յիմարութեան չարութիւնը , ու անմտութիւնը խենթութիւնը գիտնամ .

26 Ու ես մահուանէ դառն գտայ ան կնիկը՝ որուն սրտին մէջը ցանցեր և ուռկաններ , ու ձեռքերուն մէջը կապանքներ կան . Աստուծոյ առջևը հաճելի եղողը անկէ կ'ազատի . բայց մեղաւորը անկէ կը բռնուի ։

27 Ահա ասիկայ գտայ , կ'ըսէ Ժողովողը , մէկիկ մէկիկ հաշիւը գտնելու համար .

28 (Որ հոգիս տակաւին կը փնտռէ , բայց չեմ կրնար գտնել .) Հարիւր մարդ՝ հազարէն մէկ գտայ . բայց բոլոր ասոնց մէջը մէկ կնիկ մը չգտայ ։

29 Ահա միայն ասիկայ գտայ՝ * որ Աստուած մարդը ուղիղ ստեղծեց . բայց Անոնք շատ չարքներ փընտրեցին ։

Ն · Ք · ՂԴ · Իրր 977

Ղ Ցար · ԼԳ · 23 ։ Սաղ · Ժր · 1 ։

* Ծն . ա . 27 ։

Ղ Ծն . գ . 6 · 7 ։

ԳԼ · Ը

1 Թագաւորները մեծապէս պատուելու է ։ 6 Պէտք է դիտել Աստուծոյ նախախնամութիւնը ։ 12 Աւելի աղէկ է բարեպաշտ մարդոց հետ չբաւորութեան մէջ ըլլալ , քան թէ չարերուն հետ՝ յաջողութեան մէջ ։ 16 Աստուծոյ գործը անքննելի է ։

1 Իմաստունին պէս ո՛վ կայ . ու խօսքի մեկնութիւնը ո՛վ գիտէ . Մարդուն իմաստութիւնը՝ անոր երեսը կը փայլեցընէ . ու Երեսին պնդութիւնը կը փոխուի ։

2 Ես կ'ըսեմ՝ որ , Թագաւորին հրամանը պահէ՝ , Համաձայնդ Աստուծոյ երդումին պատճառովը ։

3 Անոր առջևէն ելլելու մի՛ արտորար . չար գործքի մէջ մի՛ կենար . վասն զի անիկայ ինչ որ ուզէ՝ կ'ընէ ։

4 Որ թագաւորին խօսքը կայ , հոն իշխանութիւն կայ , ու Ո՛վ կրնայ անոր ըսել թէ , Ի՞նչ կ'ընես ։

5 Պատուիրանը պահողը չարիքի չհանդիպիր . և իմաստունին սիրտը՝ ժամանակը ու յարմարութիւնը կը ճանչնայ ։

6 Վասն զի Համին դիտաւորութիւն իր ժամանակը ու յարմարութիւնը ունի . քանզի մարդուն վրայ շատ նեղութիւն կու գայ ։

7 Վասն զի անիկայ ըլլալը բանը չգիտեր . և ո՛վ պիտի յայտնէ անոր թէ՝ ինչպէս պիտի ըլլայ ։

8 Հոգիին վրայ իշխող մարդ չըկայ , որ հոգին արգիլէ , ու մահուան օրուանը վրայ տիրող չկայ . և ան պատերազմին մէջ * արձակում չկայ . ու ամբարշտութիւնը՝ իրեն հետևողները չազատեր ։

9 Ասոնց ամէնը տեսայ , ու արևուն տակը եղող ամէն գործքին՝ իմ սիրտս տուի ։ Ատեն կայ որ՝ մէկ մարդ մը ուրիշ մարդու վրայ կ'իշխէ իրեն թշուառութեանը համար ։

10 Եւ ասոր հետ տեսայ ամբարիշտները որ թաղուեցան գացին , ու սուրբ տեղէն եկան . և մոռցուեցան ան քաղաքին մէջը՝ ուր որ ասանկ ըրին . ասս ալ ունայնութիւն է ։

11 Որովհետև գէշ գործքին վրայ՝ վճիռը չուտով չկատարուիր , ասս պատճառաւ մարդոց որդիներուն

Ա Ծն . գ . 3 · 9 · Ժէ . 24 ։ Տես Գոր . ղ . 15 ։

Բ Ը Օր . Իր . 50 ։

Գ Եզեկ . Ժէ . 18 ։ Տես ա Մն . Իթ . 24 ։ Հռով . Ժգ . 5 ։

Դ Գլ . ժ . 4 ։

Ե Ծար . Լդ . 18 ։

Զ Գլ . գ . 1 ։

Է Ծն . Իդ . 12 ։ Թ . 12 ։ Ժ . 14 ։

Ը Ծար . Ժգ . 5 ։ Սաղ . Իթ . 6 · 7 ։

* Կ՛ը նադագրուի

սիրտը չարութիւն ընելու փափաքով լեցուած է ։

12 Թէեւ մեղաւորը հարիւր անգամ չարութիւն ընէ , ու անոր կեանքը երկարնայ ալ , այսու ամենայնիւ ստոյգ գիտեմ որ Էրարութիւնը՝ Աստուծմէ վախցողներուն , անոր երեսէն վախցողներուն պիտի ըլլայ ։

13 Բայց ամբարշտին բարութիւն պիտի չըլլայ . ու անիկայ իր օրերը պիտի չերկարնցընէ , հոգ՝ ստուերի պէս պիտի ըլլայ . վասն զի Աստուծոյ երեսէն չվախնար ։

14 Ունայնութիւն մը կայ , որ աշխարհիս վրայ կ՚ըլլայ . այսինքն արդարներ կան , որոնց Համբարիշտներուն գործքին պէս կը պատահի . ու ամբարիշտներ ալ կան , որոնց՝ արդարներուն գործքին պէս կը պատահի . Էրսի որ՝ Ես ալ ունայնութիւն է ։

15 Ու ես ուրախութիւնը գովեցի , վասն զի մարդը արեւուն տակը՝ ուտելէն , խմելէն , և ուրախութիւն ընելէն ՚ի զատ՝ աղէկ բան մը չունի . վասն զի արեւուն տակը Աստուծոյ անոր տուած կենացը օրերուն մէջ՝ իր աշխատանքէն ասիկայ կը մնայ անոր ։

16 Երբոր ես իմ սիրտս տուի իմաստութիւնը գիտնալու , ու երկրի վրայ եղած զբաղմունքը տեսնելու , (վասն զի թէ ցորեկ և թէ գիշեր իր աչքը քուն չտեսնող հոգ կայ ,)

17 Ան ատենը Աստուծոյ բոլոր գործքերէն հասկըցայ , որ Հմարդ չկրնար գտնել ան գործը՝ որ արեւուն տակը կ՚ըլլայ . վասն զի մարդը կ՚աշխատի փնտռելու , բայց չգտներ , ու թէև իմաստունն ալ Գիտնամ ըսէ , Հգտնելու կարող չըլլար ։

ԳԼ . Թ

1 Մին և նոյն բաները կը պատահին բարիներուն ու չարերուն ։ 4 Մարդս անպատճառ պիտի մեռնի . 7 անոր բաժինը աս կեանքիս մէջ հանգիստ ապրիլն է ։ 11 Աստուծոյ նախախնամութիւնը ամէն բան կը կառավարէ ։ 13 Իմաստութիւնը ուժէն աղէկ է ։

1 Վասն զի աս ամէնը իմ սրտիս մէջը դրի , որ աս ամէնը քննեմ . — որ արդարները և իմաստունները ու անոնց գործքերը՝ Աստուծոյ ձեռքին մէջն են . մարդ չգիտեր թէ սէրը և թէ ատելութիւնը . ամէն բան անոնց առջեւն է ։

2 Ամէն բան՝ ամենուն հաւասարապէս կը պատահի . արդարին ու ամբարշտին , բարի Հբրոն , մաքուրին ու անմաքուրին , զոհ ընողին , ու զոհ չընողին պոհոհ դիպուածը մէկ է . ինչպէս է բարի Հրոը , մեղաւորն ալ այնպէս է . երդումէ ընողը՝ երդումէն վախցողին պէս է ։

3 Արեւուն տակը եղած բոլոր գործքերուն մէջ գէշ բանը աս է , որ ամենուն դոհոհ դիպուածը մէկ է . ու նաև մարդոց որդիներուն սիրտը չարութեամբ լեցուած ըլլալով՝ իրենց կենդանութեան աստեղը՝ իրենց սրտին մէջը խենթութիւն կայ . ու ետքը մեռելներուն Ի՚ԻՆԻՆ ։

4 Քանզի բոլոր կենդանիներուն ընկերացած մարդէն յոյս կայ . վասն զի ողջ շունը՝ մեռած առիւծէն աղէկ է ։

5 Որովհետև կենդանիները գիտեն որ պիտի մեռնին . բայց Հմեռելները բան մը չեն գիտեր , ու *վարձք մը չեն առներ . վասն զի †անոնց յիշատակը մոռցուեցաւ ։

6 Թէ անոնց սէրը , թէ ատելութիւնը , և թէ նախանձը արդէն կորսուեցաւ . ու անոնք՝ արեւուն տակը եղող բաներուն մէջ յաւիտեան բաժին մը չունին ։

7 Գնա Էհացդ ուրախութեամբ կեր , ու գինիդ ուրախ սրտով խմէ . վասն զի արդէն Աստուած քու գործքերուդ հաւնեցաւ ։

8 Հանդերձներդ ամէն ատեն ճերմակ ըլլան , ու գլխուդ վրայէն եղը պակաս չըլլայ ։

9 Քու սիրած կնկանդ հետ կեանք վայելէ քու ունայնութեան կենացդ բոլոր օրերուն մէջ , որ Աստուած քեզի տուաւ արեւուն տակը քու ունայնութեանդ բոլոր օրերուն մէջ . Հվասն զի աս կեանքիս մէջ քու բաժինդ անիկայ է , արեւուն տակը քրաշած աշխատանքէդ ։

10 Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու , Բոլոր ուժովդ ըրէ . քանզի ան քու երթալու դերեզմանիդ մէջը՝ գործք , խորհուրդ , գիտութիւն ու իմաստութիւն չկայ ։

11 Դարձայ Էու արեւուն տակը տեսայ , որ ճամբան վազողներուն չէ , ու պատերազմը զօրաւորներուն չէ . ու նաև հացը իմաստուններուն չէ , և հարստութիւնն ալ հանճարեղներուն չէ . ու նաև ընորհքը գիտուններուն չէ . հապա ժամանակ ու դիպուած կը պատահի ամենուն ։

12 Վասն զի Հմարդ իր ատենը անդամ չգիտեր . ինչպէս որ ձուկերը չար ուռկանով կը բռնուին , և թռչունները ծուղակի մէջ կը բռնուին , նոյնպէս մարդոց որդիներն ալ Ի որոգայթի մէջ կ՚իյնան , երբոր չար ժամանակը յանկարծ անոնց վրայ կու գայ ։

Ն . Ք . ԳԲ . Իրր 977

ՅԵս . կԱ . 20 ։ Հռով . բ . 5 ։

Ի Սաղ . լԲ . 11 ։ 18 ։ 19 ։ Առակ . ա . 32 ։ 33 ։ Ես . գ . 10 ։ 11 ։ Մատ . իե . 34 ։ 41 ։

Լ Սաղ . հգ . 14 ։ ԳԼ . բ . 14 ։ է . 15 ։ Թ . 1 ։ 2 ։ 3 ։

Ի ԳԼ . բ . 24 ։ գ . 12 ։ 22 ։ ե . 18 ։ Թ . 7 ։

Ե Ծն . է . 9 ։ ԳԼ . գ . 11 ։ Հռով . ժ . 33 ։

Ի Սաղ . հգ . 16 ։

— ԳԼ . բ . 14 ։

Բ Ծն . իա . 7 ։ 8 ։ Սաղ . հգ . 3 ։ 12 ։ 13 ։ Մաղ . գ . 15 ։

Ն . Ք . ԳԲ . Իրր 977

Ե Ծն . ժգ . 21 ։

* Կ՚ար՝ չահ

† Ծն . է . 8 ։ 9 ։ 10 ։ Ես . իգ . 14 ։

Ի ԳԼ . բ . 15 ։

Ե ԳԼ . բ . 10 ։ 24 ։ գ . 13 ։ 22 ։ ե . 18 ։

Ի Ա Մով . բ . 14 ։ 15 ։ Եբեմ . թ . 23 ։

Ե ԳԼ . բ . 7 ։

Բ Ա Թագ . իթ . 6 ։ Դան . Ժբ . 20 ։ 39 ։ Ժէ . 26 ։ Ա Թես . ե . 3 ։

ն · ք · գԲ · Իրր 977

13 Արևուն տակը աս իմաստու-
թիւնն ալ տեսայ , ու անիկայ ին-
ձի մեծ երևցաւ .
14 † Մէկ պզտիկ քաղաք մը՝ ու
մէջն ալ քիչ մարդ կար . և անոր
վրայ մէկ մեծ թագաւոր մը եկաւ ,
ու զանիկայ պաշարեց , և անոր
դէմ մեծ պատնէշներ շինեց .
15 Ու անոր մէջը մէկ աղքատ իմաս-
տուն մը գտնուեցաւ . և անիկայ
իր իմաստութեամբը քաղաքը ա-
զատեց . բայց աս աղքատ մարդը
բնաւ յիշուղ մը չեղաւ ։
16 Ես ասենը ըսի թէ՝ իմաստու-
թիւնը ուժէն աղէկ է , թէև Լաղ-
քատին իմաստութիւնը կ՚անար-
գեն , ու անոր խօսքերը մտիկ չեն
ըներ ։
17 Իմաստուններուն մեղմ խօսքերը ,
յիմարներուն մէջ իշխան եղողին
աղաղակէն աղէկ կը լսուին ։
18 Ի Իմաստութիւնը պատերազմա-
կան զէնքերէն աղէկ է . բայց † մէկ
մեղաւորը շատ բարութիւններու
կորստեանը պատճառ կ՚ըլլայ ։

ԳԼ · Ժ

1 Իմաստութեան և յիմարութեան վրայով · 16 դեհոսութեան , 18 ծուլութեան , 19 ու առակի վրայով · 20 և թագաւորներուն վայելուչ պատուոյն վրայով խօսքեր ։

1 Ա՞եռած ճանճերը իւղագործին
եղը գարշահոտ կ՚ընեն . քիչ մը
անմտութիւնն ալ * իմաստու-
թեամբ և պատուով երևելի ե-
ղած մարդէ աւելի կ՚ընէ ։
2 Իմաստունին սիրտը իր աջ կողմն
է , ու անմիտին սիրտը իր ձախ
կողմն է ։
3 Եւ անմիտ մարդը ճամբան քա-
լելու առենն ալ , խելքը պակաս
ըլլալուն համար՝ իր յիմար ըլլալը
ամենուն կը յայտնէ ։
4 Թէ որ իշխանին բարկութիւնը
քեզի դէմ ելլէ , Բ.քու տեղդ մի՛
ձգեր . վասն զի † քաղցրութիւնը
մեծ յանցանքները կը դադրեցնէ ։
5 Արևուն տակը մէկ չարութիւն
մըն ալ տեսայ , որ իշխանին երեսէն
ելած անխոհեմութիւն մը ըլլալ
կ՚երևնայ ։
6 Ր Անմտութիւնը խիստ բարձր
տեղերու վրայ կը դրուի . ու հա-
րուստները ցած տեղ մը կը նստին ։
7 Ցեսայ ծառաներ՝ Ե.ր ձիերու վը-
րայ հէնէր եկէն , և իշխաններ՝ որ
երկրի վրայ ծառաներու պէս կը
քալէին ։
8 Ո Փոս փորողը ինքը մէջը կ՚ինյայ .
ու ցանկ քակողը՝ օձը կը խածնէ ։
9 Քարեր կտրողը՝ անոնցմէ կը
վնասուի , և փայտեր ճեղքողը վը-
տանգի մէջ կ՚ըլլայ ։
10 Թէ որ երկաթը բթացած է , ու
ան-որ բերանը չսրէ , ան ատենը
ա-րդը էր ոյժը կրկնապատկելու է .
բայց իմաստութիւնը յաջողելու
օգուտը ան-ն է ։
11 † Թէ որ օձը Ի թովչէն առաջ
խածնէ , ան ատենը թովիչին օ-
գուտ մը չմնար ։
12 Ը Իմաստունին բերնին խօսքերը
շնորհք է . բայց Ր անմիտին շըր-
թունքները զինքը կը կլլեն ։
13 Անոր բերնին խօսքերուն սկզբը-
նաւորութիւնը անմտութիւն է .
ու անոր խօսքին վերջը գէշ խեն-
թութիւն է ։
14 † Եւ յիմարը էր խօսքերը կը շատ-
ցընէ . մարդս ինչ ըլլալը չգիտեր .
ու Ի անոր ով պիտի յայտնէ թէ
անկէ ետքը ինչ պիտի ըլլայ ։
15 Ցիմարներուն աշխատանքը զե-
րենք կը ձանձրացընէ քաղաքը եր-
թալը չգիտցողին պէս ։
16 Ա.ա՛յ քեզի երկիր՝ երբոր քու
թագաւորդ տղայ է , ու իշխան-
ներդ առտուանց Ի.ր-ա-ն կ՚ուտեն ։
17 Երանի քեզի երկիր՝ երբոր քու
թագաւորդ ազնուազարմ է . և
Ի.քու իշխաններդ առենով կ՚ուտեն ,
ուժի համար , և ոչ թէ դինովու-
թեան համար ։
18 Շատ ծուլութիւնով չէնքը կը
փլչի , և ձեռաց թուլութիւնով
տունը կը կաթի ։
19 Կոչունքը՝ ծիծաղելու համար կ՚ը-
նեն , ու † գինին կեանքը կ՚ուրա-
խացընէ . իսկ արծաթը ամէն բա-
նի բաւական կ՚ըլլայ ։
20 Միտքիդ մէջը անդամ Ի թագա-
ւորին անէծք մի՛ տար , և քու պառ-
կելու սենեակներուդ մէջ՝ մեծերուն
անէծք մի՛ տար . վասն զի երկինքի
թռչունը ան ձայնը կը տանի , ու
թևաւորը խօսքը կը պատմէ ։

ԳԼ · ԺԱ

1 Ողորմած ըլլալու պատուիրներ · 7 կենաց մէջ մահը , 9 ու մանկութեան առենը դատաստանի օրը միտք բերելու է ։

1 Ո՛ւ հացդ ջուրերու երեսին
վրայ ձգէ . Բ վասն զի շատ օրե-
րէն ետքը զանիկայ պիտի գտնես ։
2 Է Եօթնին ու ութին ալ Ե բա-
ժին տուր . Ի վասն զի չես գիտեր
թէ երկրիս վրայ ինչ պատուհաս
պիտի ըլլայ ։
3 Թէ որ ամպերը լեցուն ըլլան ,
երկրիս վրայ անձրև կը թափեն .
ու երբոր ծառ մը դէպ ի հարաւ
կամ դէպ ի հիւսիս իյնայ , ան
ծառը ինկած տեղը կը մնայ ։
4 Հովը դիտողը չկրնար ցանել , և
ամպերուն նայողը չկրնար ընձել ։
5 Ինչպէս որ Ղ.ուն † հոգիին ճամ-

ն · ք · գԲ · Իրր 977

† կ՚Օձմը
որ առանց
ձայն հանելու
կը խածնէ ,
բանաբերկու
մարդը ան-ն
տարբերու-
թիւն մը չու-
նի ։
Ի Սաղ · ծը · 4 , 5 ։ Երեմ.
ը · 17 ։
Ը Առակ · ժ · 32 ։ Ժբ · 13 ։
Ր Առակ · ժ · 14 ։ Ժը · 7 ։
† Առակ · ժե · 2 ։
† Գլ · գ · 22 ։ գ · 12 ։ ը · 7 ։
Լ Ես · գ · 4 ։ 5 , 12 ։ ե · 11 ։
Ի Առակ · լա · 4 ։
† Սաղ · ճգ · 15 ։
† Ել · իր · 28 ։ Գոր · իգ · 5 ։

— Ցես Ե · լբ · 20 ։
Բ Բ Օր · ժե · 10 ։ Առակ · ժԹ · 17 ։ Մատ · ժ · 42 ։ բ Կոր · Թ · 8 ։ Գաղ · գ · 9 , 10 ։ Երբ · գ · 10 ։
† Միք · ե · 5 ։
† Սաղ · ճժբ · 9 ։ Ղ.ւ · գ · 30 ։ ա Տիմ. գ · 18 , 19 ։
Ի Եփես · ե · 16 ։
Ը Ցօհ · գ · 8 ։
† կ՚հովին

Ն · ՔՔ · ՂԲ · Իբր 977

Ի Սադ · ՃԼԹ · 14 · 15 ։

բան որը ըլլալը , — Է յղին որուվայնին մէջ ոսկորներուն ինչպես Ի—ՀՀ—Ի՚ չես գիտեր , այնպես ալ ամենաստեղծ Աստուծոյն գործը չես գիտեր ։

6 Առտուանդ քու սերմդ ցանէ , և իրիկունը քու ձեռքդ պարապ մի՚ թողուր · վասն զի չես գիտեր թէ որը օգտակար պիտի ըլլայ , աս՝ թէ ան . կամ թէ երկուքը հաւասարապէս աղէկ պիտի ըլլան ։

Ը ԳԼ · Է · 11 ։

7 Իրաւ որ լոյսը քաղցր է , ու ըարևը տեսնելը աչքերուս ախորժելի է ·

8 Բայց թէև մարդ մը շատ տարի ապրի , — անոնց ամենուն մէջը ուրախանայ , խաւարի օրերն ալ յիշելու է . վասն զի անոնք շատ պիտի ըլլան . բոլորը գալիքը ունայնութիւն է ։

Ր Թաս · ԺԸ · 39 ։

9 Ո՛վ երիտասարդ՝ քու մանկութեանդ մէջ ուրախ եղիր . ու երիտասարդութեանդ օրերուն մէջ՝ սիրտդ թող քեզ զուարճացընէ , Ր և քու սրտիդ ճամբաներովը , ու աչքերուդ նայուածքովը քալէ . բայց գիտցիր որ ասոնց ամենուն համար Ք Աստուած քեզ դատաստանի պիտի բերէ ։

Ք ԳԼ · ԺԲ · 14 ։ Հռով · Բ · 6 –11 ։

10 Եւ քու սրտէդ տրտմութիւնը վերցուր , ու Է մարմինէդ չարութիւնը հեռացուր . Է վասն զի մանկութիւնը ու երիտասարդութիւնը ունայնութիւն է ։

Է Սադ · ԼԹ · 5 ։

ԳԼ · ՃԲ

1 Աստեղծիչը կանուխկէ յիշելու վրայով պատուէր ։ 8 Ժողովողին նոգը՝ սորվեցընելու համար ։ 13 Աստուծոյ երկիւղը ունայնութեան դէմ ազդու դեղ մըն է ։

Ա Առակ · Իր · 6 ։ Տես Ողբ · Գ · 27 ։

1 Ու՚քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ դեռ թշուառութեան օրերը չեկած , ու ան տարիները չհասած , Բ որոնց մէջ պիտի ըսես թէ՝ Անոնց չեմ հաւնիր ·

Բ Տես Բ Թագ · ԺԹ · 35 ։

2 Արևը , լոյսը , լուսինը ու աստղերը չխաւարած , ու անձրևին ետևէն ամպերը չդարձած ·

3 Ան օրը՝ որ տանը պահապանները պիտի դողան , ու զօրաւոր մարդիկները պիտի ծռին , և աղացողները՝ քիչ մնալնուն համար , պիտի դադարին , ու պատուհաններէն նայողները պիտի մթննան ·

4 Ու երբոր աղօրիքին ձայնը տկրանայ , փողոցներուն մէջ դռները պիտի գոցուին · և թռչունի ձայնով պիտի ելլեն · ու բոլոր երգեցող աղջիկները նկուն պիտի ըլլան ·

5 Եւ բարձրէն պիտի վախնան , ու ճամբուն մէջ վախկոտ պիտի ըլլան · և նշենին պիտի ծաղկի , ու մարախը ծանրութիւն պիտի սեպուի · և *ախորժակը պիտի դադարի · վասն զի մարդ Ր իր յաւիտենական տունը կ՚երթայ , ու Է լացողները փողոցներուն մէջ պիտի շրջին ·

Ր Ես · ԺԴ · 13 ։ Է Ներ · Թ · 17 ։

6 Դեռ արծաթէ թելը չփրթած , ու ոսկիէ բաժակը չկոտրած , և սափորը աղբիւրին քովը չփշրած , ու ջրհորին վրայի անիւը չկոտրած ։

7 Ու՚ն ատեն հողը երկիրը պիտի դառնայ՝ — Ի եղածին պէս ։ Ի Ու հոգին Աստուծոյ պիտի դառնայ , Ը որ զանիկայ տուաւ ։

Ը Ես · ԽԲ · 22 ։ Ես · ԽԷ · 16 ։ Ծար · ԻԲ · 14։ Ես · ՅԷ · 16 ։ Ջաք · ԺԲ · 1 ։

8 Ը Ունայնութիւն ունայնութեանց , ըսաւ Ժողովողը՝ ամէն բան ունայնութիւն է ։

Ը Սադ · ԿԲ · 9 ։ ԳԼ · Ա · 2 ։

9 Եւ որչափ որ Ժողովողը իմաստուն էր , —Ի՚Ի՚ ալ Ժողովուրդին գիտութիւն սորվեցուց · և †խորհելով ու քննելով՝ Ք շատ առակներ շարադրեց ։

† Կ—՛ կըշռելով

10 Ժողովողը փնտռեց որ ախորժելի խօսքեր գտնէ · ու գրուածը՝ ուղիղ և ճշմարիտ խօսքեր են ։

Ք Գ Թագ · Գ · 32 ։

11 Իմաստուններուն խօսքերը խրթաններու պէս են , ու ժողովներու տէրերէն գամուած բևեռներու պէս՝ մէկ Հովիւէ տրուած ։

12 Վերջապէս որդեակ իմ՝ անոնցմէ խրատ առ · շատ գիրք շինելը ծայր չունի . ու Է շատ կարդալը մարմինը կը յոգնեցընէ ։

Է ԳԼ · Ա · 18 ։

13 Ա՚ն բոլոր խօսքին վախճանը լսենք · Լ Աստուծմէ վախցիր , ու անոր պատուիրանները պահէ · վասն զի մարդուս բոլոր պ—ր—ո—ր—Ր՚ն—ը ասիկայ է ։

Լ Ր Օր · Գ · 2 ։ Ժ · 12 ։

14 Քանզի Ի Աստուած ամէն գործքը՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ թէ բարին և թէ չարը՝ դատաստանի պիտի բերէ ։

Ի ԳԼ · Ժա · 9 ։ Մատ · Ժբ · 36 ։ Գոր · Ժէ · 30 · 31 ։ Հռով · Բ · 16 ։ Ժգ · 10 · 12 ։ ա Կոր · գ · 5 ։ բ Կոր · և · 10 ։

ԵՐԳ ԵՐԳՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Եկեղեցին Քրիստոսի վրայ իր ունեցած սէրը կը ցուցընէ · 5 կը խոստովանի իր տգեղութիւնը ; 7 ու կ'աղաչէ որ անոր հօտին առաջնորդուի ։ 8 Քրիստոս հովիւներուն վրանները կը խրկէ զանիկայ ; 9 ու իր սէրը անոր ցուցընելով՝ 11 հաճոյական խոստումներ կ'ընէ անոր ։ 12 Եկեղեցին ու Քրիստոս իրարու կը յայտնեն իրենց խնդակցութիւնը ։

1 Երգ երգոց Սողոմոնի ։

2 Իր բերանին համբոյրներովը թող համբուրէ զիս . Քանի զի քու սէրդ գինիէն աղէկ է ։

3 Քու եղերուդ հոտը անուշ է . քու անունդ թափուած եղի պէս է . անոր համար օրիորդները քեզ կը սիրեն ։

4 Զիս քաշէ . Քեզ ետևէդ պիտի վազենք . Թագաւորը ի իր սենեակները տարաւ զիս . քեզի հետ ցընծանք և ուրախանանք . քու սէրդ գինիէն աւելի յիշենք . քեզ * ուղղութեամբ կը սիրեն ։

5 Ով Երուսաղէմի աղջիկները՝ ես սև եմ՝ բայց գեղեցիկ , կեդարու վրաններուն պէս , Սողոմոնին վրաց ոյներուն պէս ։

6 Իմ սևցած ըլլալուս մի նայիք . վասն զի արևը զիս տեսաւ , իմ մօրս որդիքը ինծի սրդողեցան . զիս այգիներու պահապան ըրին . Բայց իմ այգիիս պահապանութիւն չըրի ։

7 Պատմէ՛ ինծի , ով հոգիիս սիրածը , ես հօտդ ո՞ւր կ'արածես . կէս օրին ո՞ւր կը պառկեցընես . քանզի քու ընկերներուդ հօտերուն քովը ինչո՞ի † թափառականի պէս ըլլամ ։

8 Թէ որ դուն չես գիտեր՝ Ով կնիկներուն գեղեցիկը , հօտերուն չաւիղներէն դնա , ու հովիւներուն վրաններուն քովը քու ուլերդ արածէ ։

9 Ի Փարաւոնի կառքերուն ընտիր ձիերուս նմանցուցի քեզ՝ Ով իմ սիրուհիս .

10 Քու այտերդ զարդերով գեղեցիկ է , և քու պարանոցդ՝ քառամանեակներով ։

11 Քեզի ոսկեղէն զարդեր պիտի շինենք արծաթէ կիտուածներով ։

12 Երբոր Թագաւորը սեղանն էր , իմ Նարդոս իր հոտը բուրեց ։

13 Իմ սիրականս՝ ինծի ստաշխի ծրարին պէս է . գիշերը իմ ստինքներուս մէջը պիտի հանգչի ։

14 Իմ սիրականս ֆ հինայի ողկոյզին պէս է ինծի՝ Ենդադդիի այգիներուն մէջ ։

15 Ի Ահա գեղեցիկ ես՝ ով իմ սիրուհիս . ահա գեղեցիկ ես . քու աչքերդ՝ աղաւնիներու պէս են ։

16 Ով իմ սիրականս՝ ահա գեղեցիկ ես ու վայելուչ . և մեր անկողինը կանանչ է ։

17 Մեր տուներուն գերանները եղևնափայտ են , ու մեր առիքները մայր փայտէ են ։

ԳԼ · Բ

1 Քրիստոսին ու իր եկեղեցիին փոխադարձ սէրը ։ 8 Եկեղեցիին ձայնը ; 10 ու կոչումը ։ 14 Քրիստոսին խնամքը իր եկեղեցիին վրայ ։ 16 Եկեղեցիին խոստովանութիւնը , անոր հաւատքը ու ձայնը ։

1 Ես Սարոնին ծաղիկն եմ , ու հովիտներուն շուշանը ։

2 Ինչպէս շուշանը փուշերուն մէջ՝ անանկ է իմ սիրուհիս աղջիկներուն մէջ ։

3 Ինչպէս խնձորենին անտառի ծառերուն մէջ՝ անանկ է իմ սիրականս երիտասարդաց մէջ . անոր հովանիին տակը ախորժելով նստայ , ու անոր պտուղը իմ քմայս քաղցը է ։

4 Զիս ‡ խնճոյքին տունը բերաւ , և անոր դրօշը իմ վրաս սէր էր ։

5 Զիս կարկանդակներով զօրացուցէք . զիս խնձորներով ուժովցուցէք . վասն զի ես սիրով կը նուաղիմ ։

6 Բ Անոր ձախ ձեռքը իմ գլխուս տակը ըլլայ , ու աջ ձեռքը զիս գրկէ ։

7 Ո՛վ Երուսաղէմի աղջիկները՝ ձեզ այծեամներով , կամ դաշտի եղնիկներով կ'երդմնցընեմ , որ սիրուհին չվերցընէք , ու չարթընցընէք , մինչև որ ինքը չուզէ ։

8 Իմ սիրականիս ձայնն է . ահա անիկայ լեռներուն վրայէն ցատկե-

Ն · Ք · ՂԲ · Իրը 1014

– ղԹագ · դ · 32 ։

Բ Գլ · դ · 10 ։

ֆ Ով · ժա · 4 ։ Ցօհ · գ · 44 ։ Ժր · 32 ։

ֆ Փիլ · գ · 12 ։ 13 ։ 14 ։

Ի Սաղ · խե · 14 ։ 15 ։ Ցօհ · Ժգ · 2 ։ Եփես · բ · 6 ։

* Կ՛ ՝ ուղիղներըը

†Կ՛ ՝Նուագածի

ՂԳլ · ե · 9 ։ է · 1 ։

Ի Բ Մն · ա · 16 ։ 17 ։

ը Գլ · բ · 2 ։ 10 ։ 13 ։ դ · 1 ։ 7 ։ ե · 2 ։ է · 4 ։ Ցօհ · Ժե · 14 ։ 15 ։

Բ Եզկ · Ժգ · 11 ։ 12 ։ 13 ։

Ն · Ք · ՂԲ · Իրը 1014

ֆ Գլ · դ · 13 ։

Է Գլ · դ · 1 ։ ե · 12 ։

– Ցօհ · իբ · 1 ։ 2 ։

‡ ԵՓբ · գ · ՆԻՆ

Բ Գլ · բ · 8 ։

է Գլ · դ · 5 ։ ը · 4 ։

Ն · Ք · ԳՓ · Խրբ 1014

լով՝ ու բլուրներուն վրայէն ցատկռտելով կու գայ ։

Թ ՀՈՐ 17 ։ 9 Թ Իմ սիրականս այծեմման կամ եղնիկի ձագի կը նմանի . ահա հիմա մեր պատին ետեւը կայներ է . պատուհաններէն կը նայի . վանդակներէն կ'երեւնայ ։

Ի ՀՈՐ 18 ։ 10 Իմ սիրականս պատասխան տալով՝ ինծի ըսաւ . Ի Ելի՛ր ով սիրուհիս , ով գեղեցիկս , ու եկուր .

11 Քանզի ահա ձմեռը անցաւ , անձրեւները անցան գացին .

12 Գետնի վրայ ծաղիկներ կ'երեւնան , յօտելու ժամանակը հասաւ , ու մեր երկրին վրայ տատրակին ձայնը կը լսուի ։

Ղ ՀՈՐ 10 ։ 13 Ահա թզենին իր թուզերը կը հասցընէ . ու որթերը ծաղկեցան , և իրենց հոտը կու տան . Ղելի՛ր ով սիրուհիս , ով գեղեցիկս , ու եկուր ։

14 Ո՛վ իմ աղաւնիս՝ վէմին խոռոչներուն մէջը , ապառաժին հովանիին տակը եղած . ինծի երեսդ ցուցուր . Ի ձայնդ ինծի լսել տուր . քանզի ձայնդ քաղցր , ու դէմքդ գեղեցիկ է ։

Ի ԳԼ · Ը · 13 ։ Ը ՍԱՂ · Ա · 13 ։ ԵՂԿ · ԺԳ · 4 ։ ՂՈՒ · ԺԳ · 32 ։ 15 Բռնեցէ՛ք մեզի շաղուէնները , այդիները աւրող պզտիկ աղուէսները . վասն զի մեր այդիները ծաղկեր են ։

Ր ԳԼ · Գ · 3 ։ Է · 10 ։ 16 Ր Իմ սիրականս իմս է , ու ես անոնն եմ . անիկայ իր հօտը շուշաններու մէջ կ'արածէ ։

Ֆ ԳԼ · Գ · 6 ։ 17 Ֆ Օրուան հովը չփչած , ու ըստուերները չհետացած , դարձիր ով իմ սիրականս . — Բեթերի լեռներուն վրայի Էայծեմման պէս կամ եղնիկներու ձագին պէս եղիր ։

ԳԼ · Գ

1 Եկեղեցիին պատերազմը ու յաղթութիւնը փորձութեան մէջ ։ 6 Եկեղեցին Քրիստոսով կը պարծի ։

— Ե՝ · Իշ · 9 ։ 1 — Իմ հոգւոյս սիրածը դիշերը անկողնիս մէջը փնտռեցի . զանիկայ փնտռեցի , բայց չգտայ ։

2 Ելլեմ հիմա պտըտիմ քաղաքին մէջը , փողոցներուն ու հրապարակներուն մէջը . իմ հոգիիս սիրածը փնտռեմ ։ Զանիկայ փընտռեցի , բայց չգտայ ։

Բ ԳԼ · Ը · 7 ։ 3 Բ Քաղաքին մէջ պտըտող պահապանները զիս գտան . Ըրդեօք իմ հոգիիս սիրածը տեսաք՝ ըս ։

4 Անոնցմէ քիչ մը առաջ անցնելով՝ իմ հոգիիս սիրածը գտայ . զանիկայ բռնեցի , ու չթողուցի , մինչև որ իմ մօրս տունը՝ ու զիս ծնանողին սենեակը տարի ։

Է ԳԼ · Բ · 7 ։ Ը · 4 ։ 5 Է Ո՛վ Երուսաղեմի աղջիկները՝ ձեզ այծեամներով , կամ դաշտին եղնիկներովը կ'երդմնցընեմ , որ սիրուհին չվերցընէք , ու չարթընցընէք , մինչև որ ինքը չուզէ ։

Ն · Ք · ԳՓ · Խրբ 1014

Թ ԳԼ · Ը · 5 ։ 6 Թ Ո՞վ է ասիկայ՝ որ զմուռասով և կնդրուկով , — փերեզակներուն ամէն տեսակ փոշիովը իննկուած՝ անապատէն կ'ելլէ ծուխի սիւներու պէս ։

* ԿՈՒՐ՝ ԱՆԿՈղինը ։ 7 Ահա Սողոմոնին * գահոյքը , որուն բոլորտիքը՝ Իսրայէլի զօրաւորներէն վաթսուն զօրաւոր կայ .

8 Ամէնքն ալ սուսերաւոր են , — պատերազմի վարժուած են . գիշերուան վախին համար՝ ամէն մէկուն սուրը իր ազդրին վրայ է ։

9 Սողոմոն Թագաւորը Լիբանանի ծառերէն մէկ գահաւորակ մը շինեց իրեն համար .

10 Սիւները արծաթէ , յենարաններըը ոսկիէ , բազմոցը ծիրանիէ շինեց . ու մէջը՝ Երուսաղեմի աղջիկներէն † խիստ գեղեցիկ" նկարագործուած էր ։

† ԵՔԲ · ՍԻՐՈՎ 11 Ո՛վ Սիօնի աղջիկները՝ ելէ՛ք , և Սողոմոն Թագաւորը տեսէ՛ք ան Թագովը , որով իր մայրը՝ իր փեսայութեան օրը , ու սրտին ուրախութեան օրը՝ պսակեց զանիկայ ։

ԳԼ · Դ

1 Քրիստոս կը հրաժարակէ եկեղեցիին շնորհները . 8 անոր վրայ իր ունեցած սէրը կը յայտնէ ։ 16 Եկեղեցին կը խնդրէ որ անոր ներկայութեանը համար պատրաստութիւն ունենայ ։

— Գ · ա ։ 15 ։ Ե · 12 · 1 Ա Ահա դուն գեղեցիկ ես՝ ով իմ սիրուհիս , ահա դուն գեղեցիկ ես . լայակիդ մէջէն՝ քու աչքերդ աղաւնիներու — ԼԷԲ — Ն ՆՄԱՆ . քու մազերդ Գաղաադ ‡ լեռը պառկող" Բայծերուն հօտին պէս է ։

‡ ԿՈՒՐ՝ ԼԵՌՆԷՆ ԵրեսցածԲ Գ · ղ · 5 ։ Գ · ղ · 6 ։ 2 Ֆ Ակռաներդ լուացարանէն ելլող խուզած հօտի պէս է , որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին , ու անոնց մէջը ամուլ չկայ ։

Թ Գ · ղ · 7 ։ 3 Քու շրթունքներդ՝ կարմիր դերձանի պէս է , ու խօսուածդ գեղեցիկ է . Թ այտերդ լայակիդ մէջէն՝ նուռի կտորներու կը նմանին .

Ի Գ · Է · 4 ։ Ղ ՆԵՀԵՄ · ղ · 19 ։ 4 Ի Քու պարանոցդ՝ Ղփնարանի համար շինուած Դաւիթի աշտարակին պէս է , որ հոն հազար ասպար կախուած են . ամէնն ալ զօրաւորներուն վահաններն են ։

Ի Գ · Է · 3 · ՏԵՍ ԱՌակ . Ե · 19 ։ 5 Ի Քու երկու ստինդդ նման է երկու ուլերու , որ այծեամի մը երկուորեակ իննդ են , և շուշաններու մէջ կ'արածուին ։

Ը ԳԼ · Բ · 17 ։ 6 Ը Օրուան հովը չփչած , ու ըստուերները չհետացած , ես զմուռսի լեռը՝ ու կնդրուկի բլուրը պիտի երթամ ։

Ն · ք · ղՓ · Խբ 1014

7 Ի՞նոյոյովին գեղեցիկ ես՝ ով իմ սիրուհիս , և քու վրադ արատ չը-
կայ ։
8 Ո՛վ Հարան՝ ինձի հետ Լիբանա-
նէն էկո՛ր , ինձի հետ Լիբանանէն
եկուր . Ամանային գագաթէն՝ Սա-
նիրին ու Հերմոնին գագաթէն ,
առիւծներուն մորինէրէն , ո՛ր ին-
ձերուն լեռներէն նայէ ։
9 Սիրտս առիր , ով իմ Հարս
քոյրս . սիրտս առիր քու մէկ աչ-
քովդ , և պարանոցիդ մէկ քառա-
մանեակովը ։
10 Քու սէրդ ի՛նչ գեղեցիկ է , ով
Հարս քոյրս . էքու սէրդ դինիէն
աղէկ է , ու քու եղերուդ անուշա-
հոտութիւնը՝ ամէն խունկերէն ։
11 Շրթունքներէդ խորիսխի մեղր
կը կաթի՝ ով Հարսն . Լեզուիդ
տակը մեղր ու կաթ կայ . և քու
զգեստներուդ անուշահոտութիւնը
Լիբանանի հոտին պէս է ։
12 Իմ Հարս քոյրս փակեալ պար-
տէզ մըն է , փակեալ աղբիւր ո՛ր
կնքուած աղբեակ մըն է ։
13 Քու տունկերդ բաղդրահամ պը-
տուղներով՝ Հինաներով ու նար-
դոսներով՝ նռնենեաց դրախտ է .
14 Նարդոս և քրքում , եղէգն և
կինամոն , ամէն կնդրուկի ծառով ,
զմուռսով ու Հալուէով , և բոլոր
գլխաւոր խունկերով .
15 Պարտէզներու աղբիւր , Կեն-
դանի ջուրի ջրհոր , ու Լիբանանէն
վազած հեղեղներ ։
16 Արթնցիր ով հիւսիս , եկուր
ով Հարաւ . իմ պարտէզիս մէջը
փչէ , որ անոր խունկերը բուրեն .
Իմ սիրականս թող իր պարտէզը
գայ , ու իրեն ախորժելի եղած պը-
տուղները ուտէ ։

Ե Գ Ի Ր Ք

1 Քրիստոս իր կանչելովը եկեղեցին կ'արթնց-
ընէ ։ 2 Եկեղեցին Քրիստոսի սիրոյն Համը
առնելով կը նուազի ։ 9 Քրիստոսի շնորհ-
ներուն սորագրութիւնը ։

1 — Իմ պարտէզս եկայ՝ ով Հարս
քոյրս . իմ զմուռսս խունկե-
րուս հետ ժողվեցի . Իմ խորիսխս
մեղրիս հետ կերայ . իմ գինիս կա-
թովս խմեցի . կերէ՛ք Ով բարե-
կամներ , խմեցէ՛ք ու գինովցէ՛ք ով
սիրելիներ ։
2 Ես կը քնանամ , բայց իմ սիրտս
արթուն է . ահա իմ սիրակա-
նիս ձայնն է . Դռա՛ըը կը զարնէ ,
ո՛ր Բա՛ց ինձ ով իմ քոյրս , իմ սի-
րուհիս , իմ աղաւնիս , իմ կա-
տարեալս , բայց ինձի . քանդի իմ
գլուխս ցօղով լեցուեցաւ , ո՛ր
վարսերս գիշերուան շաղերով ։

Ն · ք · ղՓ · Խբ 1014

3 Իմ պատմուճանս հաներ եմ ,
զանիկայ ի՞նչպէս հագնիմ . ոտ-
քերս լուացեր եմ , զանոնք ի՞նչպէս
աղտեղեմ ։
4 Իմ սիրականս իր ձեռքը ծակէն
երկրնցուց . ու անոր Համար իմ
աղիքս գալարեցաւ ։
5 Ես ելայ որ իմ սիրականիս բա-
նամ . ու ձեռքերս զմուռս՝ ու իմ
մատերս բնտիր զմուռս կաթեց
փակաղակին բռնելու տեղին վը-
րայ ։
6 Ես իմ սիրականիս բացի . բայց
իմ սիրականս քաշուեր գացեր էր .
երբոր անիկայ կը խօսէր , իմ Հո-
գիս նուաղեցաւ . Ի զանիկայ Ա ԳԼ · գ · 1 ։
փնտռեցի , բայց չգտայ . զանիկայ
կանչեցի , բայց ինձի պատասխան
չտուաւ ։
7 Ես քաղաքին մէջ պտըտող պահա- Ը ԳԼ · գ · 3 ։
պանները զիս գտան . զարկին վի-
րաւորեցին զիս . պարսպին պա-
հապանները քօղս վրայէս վերցու-
ցին ։
8 Ո՛վ Երուսաղէմի աղջիկները՝ ձեզ
կ'երդմնցընեմ . Թէ որ իմ սիրա-
կանս գտնէք , անոր պատմէք որ ես
սիրով կը նուաղիմ ։
9 Ո՛վ կիներուն գեղեցիկը՝ քու Ե ԳԼ · ա · 8 ։
սիրականդ ո՛րէ սիրականէ ի՞նչ
տարբերութիւն ունի . քու սիրա-
կանդ ո՛րէ սիրականէ ի՞նչ տար-
բերութիւն ունի , որ մեզ այդպէս
կ'երդմնցընես ։
10 Իմ սիրականս սպիտակ ու կար-
միր է . տասը Հազարի մէջ երևելի
է ։
11 Անոր գլուխը զուտ ոսկի է .
վարսերը ցրուած՝ ո՛ր ագռաւի
պէս սև են .
12 Աչքերը՝ վազող ջուրերուն քովը Ը ԳԼ · ա · 15 ։
կաթով լուացուած աղաւնիներու ե · 1 ։
ա՛ղբե՛ր կը նմանին . զամուած
գոհարներու պէս են ։
13 Անոր այտերը՝ խնկալից տունկե-
րու ածուին , Ե անուշահոտ ծա-
ղիկներու թաղարներուն պէս են .
շրթունքները՝ բնտիր զմուռս կա-
թող շուշաններ են .
14 Ձեռքերը ոսկի մատներ են ,
Թարսիսի քարերով լեցուած . ո-
րովայնը բանուած փղոսկր է , շա-
փիւղաներով ծածկուած ։
15 Սրունքները՝ մարմարիոն սիւներ
են , բնտիր ոսկի խարիսխներու վը-
րայ հաստատուած . կերպարանքը
Լիբանանին պէս՝ եղևիններուն պէս
բնտիր է .
16 Անոր բերանը քաղցր , ու ինքը
բոլորովին ցանկալի է . ահա այս-
պէս է իմ սիրականս , այսպէս է
իմ բարեկամս , ով Երուսաղէմի
աղջիկները ։

Ն·Ք·ԴԲ· Իրբ 1014

ԳԼ· Զ

1 Եկեղեցին իր հաւատարբ Քրիստոսի վրայ բլ-
լալ կը խոստովանի։ 4 Քրիստոս կը ցուցընէ
Եկեղեցիին շնորհքները։ 10 ու իր սէրը՝ որ
ունի անոր վրայ։

– ԳԼ·ա·8։ 1 Ո՞ւ սիրականդ մուր գնաց, ո՛վ կնիկներուն գեղեցիկը. քու սիրականդ ո՞ւր դարձաւ, որ զանիկայ քեզի հետ փնտռենք։

2 Իմ սիրականս իր պարտէզը՝ խնկալից տունկերուն ածուները իջաւ, որ պարտէզներուն մէջ արածէ, ու շուշաններ ժողվէ։

բ ԳԼ·բ·16։ է·10։ 3 Բ Ես իմ սիրականիսն եմ, և իմ սիրականս իմն է. անիկայ շուշաններու մէջ կ'արածէ։

4 Թերսայի պէս գեղեցիկ ես, ո՛վ իմ սիրուհիս. Երուսաղէմի պէս հաճելի ես. — ‡դրօշակիր զբաԲբ— պէս ահարկու ես։

‡ Հմր 10։ 5 Աչքերդ ինծմէ դարձուր. վասն զի անոնք ինծի յաղթեցին. մազերդ՝ *Գաղաադը պառկող՝ Ոչխարներուն հօտին պէս է։

*Կ՛ըսէ՝ Գաղաադէն եկած

6 Ակառաներդ լուացարարէն ելած մաքիներուն հօտին կը նմանին, որոնց ամէնը երկուորեակ կը ծնանին, ու անոնց մէջը ամուլ չըկայ։

Ը Գլ·դ·1։ Ի Գլ·դ·2։

Ը Գլ·դ·3։ 7 Ականջներդ լաչակիդ մէջէն՝ նուռի կտորներու կը նմանին։

8 Թագուհիները վաթսուն՝ ու հարճերը ութսուն, և օրիորդները անթիւ են։

9 Իմ աղաւնիս, իմ կատարեալս մէկ է. իր մօրը մէկ հատիկը՝ ընտրեալն է. զանիկայ աղջիկները տեսան, ու անոր՝ երանի ըսին. թագուհիները ու հարճերն ալ, և զանիկայ գովեցին։

10 Ո՞վ է ասիկայ՝ որ արշալոյսի պէս կը նայի, որ լուսինի պէս գեղեցիկ, արեւու պէս մաքուր, — Բդրօշակիր զբաԲբ— պէս ահարկու է։

Ի Հմր 4։

17 դնէ , Որ կառքը ու ձին , զօրքը և զօրութիւնը կը հանէ . անոնք միասին կը պառկին , ու չեն ելլեր . անոնք պատրոյտի պէս կը մարին և
18 կ'անցնին . Առջինները մի յիշէք , ու հին բաները միտերնիդ մի բե-
19 րէք : Ահա ես նոր բան պիտի ընեմ , որ հիմա պիտի յայտնուի . միթէ զանիկայ պիտի չգիտնաք . ես անապատի մէջ ալ ճամբայ՝ անջրդի երկրի մէջ գետեր պիտի
20 դնեմ : Գիս դաշտի գազանները , ճագարները ու ջայլամները պիտի փառաւորեն . վասն զի իմ ժողովուրդիս՝ իմ ընտրեալներուս խըմ-
21 ցընելու համար՝ անապատի մէջ ջուրեր , և անջրդի երկրի մէջ գե-
22 տեր պիտի տամ : Ձիս ժողովուրդը ես ինծի համար ստեղծեցի . ա-նոնք իմ գովութիւնս պիտի պատ-
23 մեն :
Բայց դուն ինծի չկանչեցիր՝ ով Յակոբ . հապա ինծմէ ձանձրա-
24 ցար՝ ով Իսրայէլ : Քու ողջակէզներուդ ոչխարները ինծի չբե-րիր , և քու զոհերովդ զիս չփառաւորեցիր . ընծայի համար քեզ չաշխատցուցի , ու կնդրուկի համար
25 քեզ չյոգնեցուցի : Ես եմ՝ ես եմ , որ քու յանցանքներդ ինծի համար կը ջնջեմ , ու քու մեղքերդ՝
26 զիս պիտի չյիշեմ : Միտքս ձգէ . մկտեղ դատի ելլենք , դուն զրու-
27 ցէ , որպէս զի արդարանաս : Քու նախահայրդ մեղք գործեց , և քու ուսուցիչներդ ինծմէ ապստամբե-
28 ցան : Ուստի ես զ արքաներին իշխանները պիղծ սեպեցի , և Յակոբը նզովքի , ու Իսրայէլը նախատինքի մատնեցի :

ԳԼ . Խ Դ

1 Աստուած իր խոստմունքներովը կը մխիթարէ Եկեղեցին . 7 կը ցուցընէ կուռքերուն ունայնութիւնը , 9 և կուռք չեղողներուն յիմարութիւնը : 21 Աստուած զովելու յորդորանք մը՝ իր փրկագործութեանը ու ամենակարողութեանը համար :

1 Բայց հիմա մտիկ ըրէ՝ ով իմ ծառաս Յակոբ , ու դուն ով իմ
2 ընտրած Իսրայէլս : Քեզ ստեղծող , և բարդանդի մէջ ձևակերպող , ես քեզի օգնութիւն ընող Տէրը այսպէս կ'ըսէ . Ով իմ ծառաս Յակոբ , և դուն ով իմ ընտրած Իսրայէլս՝ մի վախնար .
3 քանզի ես ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ , ու անջուր երկրին վրայ՝ հեղեղներ . քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի թափեմ , և քու որդւոցդ վրայ՝ իմ օրհնու-
4 թիւնս : Ու անոնք իբր խոտերու մէջ , ջուրի վտակներու քով եղող ուռիներու պէս պիտի բուս-
5 նին : Մէկը պիտի ըսէ թէ՝ ես Տէրոջն եմ . մէկն ալ Յակոբին անունովը պիտի կանչուի . և միւսն ալ իր ձեռքովը պիտի գրէ թէ , ե-

Ի Գլ . խա . 10 , 14 ; խգ . 2 ; Երեմ լ . 10 , 11 ; խզ . 27 , 28 :

Բ Գլ . կդ . 19 ; Յակ . բ . 7 ;
Գ Սաղ . ճ . 3 ; Գլ . իթ . 23 ; Բ Կոր . ե . 17 ; Եփես . բ . 10 ;
Դ Հմր 1 ;
Ե Գլ . ա . 1 ; Խր . 19 ; Եզեկ . ժբ . 2 ;
Զ Գլ . խա . 21 , 22 , 26 ;
Է Գլ . խգ . 8 ;
Ը Գլ . խր . 1 ; ծն . 4 ;
Թ Գլ . խա . 4 ; խգ . 6 ;
Ժ Եզր . չըսանեղծուածացաւ ;
ԺԱ Գլ . խե . 21 ; Ովս . ժգ . 4 ;
ԺԲ Օր . լբ . 16 ; Սաղ . ճա . 9 ;
ԺԳ Գլ . խգ . 8 ; Հմր 10 ;
ԺԴ Սաղ . գ . 2 ; Յով . բ . 58 ;
ԺԵ Եզր . Օրէն Յոբ . թ . 12 ; Գլ . ժգ . 27 ;
ԺԶ Կ՚ըսէ՝ Ես անոնց ամէնը փախուցուտական կ'ընեմ , ու չեմ ըսեր , ու հաղթեցուցող ազատ զիս նաւերուն մէջ ըսողը ըսաւ ;
ԺԷ Նեհ . ժգ . 16 ; 22 ; Սաղ . ՀԷ . 19 ; Գլ . ծա . 10 ;
ԺԸ Յով . գ . 13 ; 16 ;
ԺԹ Նեհ . ժգ . 4 ; 9 , 25 ;
Ի Երեմ . ժգ . 14 ; խգ . 7 ;
ԻԱ Ր Կոր . ե . 17 ; Յայտ . իա . 5 ;
ԻԲ Նեհ . ժե . 6 ; Թուխ . 11 ; Ր Օր . բ . 15 ; Սաղ . Ղբ . 16 ; Գլ . լե . 6 ; խա . 18 ;

Ի Գլ . խե . 6 ; Ովս . բ . 2 ; 6 , 7 ;
Ա Սաղ . ՀԹ . 4 ; Երեմ . խգ . 9 ; Դան . Թ . 11 ;
Ջ Ա Թես . բ . 13 ;

Ա Գլ . խբ . 21 ;
Ե Սաղ . ճբ . 18 ; Հմր 1 , 7 ; Ղուկ . ա . 74 , 75 ; Եփես . ա . 5 , 6 ;
Ա Մաղ . ա . 13 ;
Բ Ամով . ե . 25 ;
Գ Գլ . ա . 14 ; Մաղ . բ . 17 ;
Դ Գլ . խգ . 22 ; խբ . 9 ; Երեմ . ծ . 20 ; Գոր . գ . 19 ;
Ե Եզեկ . լգ . 22 , ՃԸ ;
Զ Գլ . ա . 18 ; Երեմ . լ . 34 ;
Է Գլ . խէ . 6 ; Ովս . բ . 2 , 6 , 7 ;
Ը Սաղ . ՀԹ . 4 ; Երեմ . խգ . 9 ; Դան . Թ . 11 ;
Թ Ա Թես . բ . 13 ;

Ա Հմր 21 ; Գլ . խա . 8 ; խգ . 1 ; Երեմ . լ . 10 ; խգ . 27 , 28 ;
Բ Գլ . խգ . 1 , 7 ;
Գ Ր Օր . լբ . 15 ;
Դ Եզր . Յեսուբնա՝
Ե Գլ . լե . 7 ; Յովել . բ . 28 ; Յով . ե . 38 ; Գոր . բ . 18 ;

Ն·Ք·ԳՖ· Իրբ 712

Տէրոջն Եհ , ու Իսրայէլին անուն-
վը պիտի մականուանի ։
6 Տէրը՝ Իսրայէլին Թագաւորը՝ և
Ի՛զօրաց Տէրը՝ անոր Փրկիչը այսպէս
կ՚ըսէ · Ես եմ առաջինը , ու ես
եմ վերջինը , ու ինծմէ ուրիշ
7 Աստուած չկայ ։ Ես հին ժողո-
վուրդը հաստատելէս ՝ի վեր՝ ո՛վ
կրցաւ ինծի պէս ձայն տալ ու
պատմել , և ասիկայ ինծի համար
կարգի դնել · Թող գըուշին գա-
լու ու բլլալու բաները ։ Մի վախ-
նաք , ու մի՛ զարհուրիք · Եմիթէ
ես ձեզի ան առենէն չհիսդուցի՞ ,
ու չզրուցեցի՞ ։ Դուք վկաներս
դուք էք ։ Ինծմէ ուրիշ Աս-
տուած կայ ։ Ժայրաւի՛ բրէ
վէմ չկայ · բրէ հը չեմ գիտեր ։
9 Կուռք շինողներուն ամէնն ալ ու-
նայնութիւն են . և անոնց ընտիր
գործերը օգուտ մը չեն բերեր · ու
իրենք իրենց գէմ վկաներ են .
Չեն տեսներ ու չեն իմանար , որ
10 ամէնան ։ Ո՞յց ո՛վ է անիկայ ,
որ աստուած կը շինէ , և կուռք կը
11 ձուլէ , Որ օգուտ մը չբերէ ։ Ահա
անոր բոլոր ընկերները ժպիտի ա-
մչնան . վասն զի արուեստաւորնե-
րը անգամ մարդ են . թող անոնք
ամէնը ժողովուին — կայնին . պիտի
վախնան , — միասեղ պիտի ամչ-
12 նան ։ Երկաթագործը ածուխով
կը շինէ տապարը , և կռաններով
անոր ձև կու տայ , ու զանիկայ իր
զօրաւոր բազուկովը կը շինէ . երբ-
որ անօթենայ , ուժէ կը կտրի .
13 երբոր ջուր չխմէ , կը մաբի ։ Հիւ-
սը լար կը քաշէ , և մատիտով
ձրագրէ կը գծագրէ . զանիկայ
քանդակագործի գրիչով կը բանի ,
ու անոր վրայ կարկինով կը գծէ .
զանիկայ մարդու կերպարանքով ,
և մարդկային գեղեցկութիւնով կը
14 շինէ , որ տան մէջ դրուի ։ Անի-
կայ իրեն եղևիններ կը կտրէ , և
գիհի ու կաղնի կ՚առնէ , որոնք
իրեն՝ անտառի ծառերէն կ՚ընտրէ .
Թեղօշ կը տնկէ , և ջրովը անձ-
15 րևը կը մեծցընէ ։ Ու անոնք մար-
դուն վառելիք կ՚ըլլան . և անոնցմէ
կ՚առնէ , որ իրեն վառէ , — տաբ-
նայ . անոնց հետ հաց կ՚այրէ , ու
հաց կ՚եփէ . նաև աստուած մը կը
շինէ , և անոր երկրպագութիւն
16 կ՚ընէ . զանիկայ կուռք կը ձևացընէ
ու կը պաշտէ ։ Անոր կէսովը կրակ
կը վառէ . կէսովը միս կ՚ուտէ .
խորոված կ՚եփէ , ու կը կշտանայ .
և կը տաքնայ , ու կ՚ըսէ . Ահա
17 տաբցայ , կրակը տեսայ ։ Եւ ա-
նոր մնացածը աստուած՝ քանդակ
կուռք կը շինէ իրեն , զանիկայ կը
պաշտէ , ու անոր երկրպագութիւն
կ՚ընէ , և անոր աղօթք կ՚ընէ , ու
կ՚ըսէ . Ձից ազատէ , քանզի իմ
18 աստուածս դուն ես ։ Չեն գիտեր
ու չեն հասկընար . քանզի նանոց
աչքերը՝ տեսնելէն , և անոնց սիր-
տերը՝ հասկընալէն ծեփուեցան ։
19 Ու մէկը ուշադրը չբերեր , և գիտու-
թիւն ու հանճար չունի՝ որ ըսէ .
Անոր կէսովը կրակ վառեցի , և ա-
նոր կայծերուն վրայ հաց ալ եփե-
ցի . միս խորովեցի ու կերայ , և
մնացածը պղծութիւն շինեմ .
20 Ծառի կո՞ճղ պաշտեմ ։ Անիկայ
մխիթարով կը սնանի . Ո՞նր խա-
բուած սիրտը զինքը կը մոլորցընէ .
և իր հոգին չկրնար փրկել , ու չը-
սեր թէ՝ Իմ աջ ձեռքիս մէջը
21 ստութիւն չկայ ։ Ասոնք մի՛ տդ-
րեր՝ ով Յակոբ , և դուն ով Իսրա-
յէլ , քանզի Ի՛մ ծառաս ես . ես
ստեղծեցի քեզ . դուն իմ ծառաս
ես . ով Իսրայէլ՝ զիս մի՛ մոռ-
22 նար՝ ։ Ջնջու յանցանքներդ մէղի
պէս , ու քու մեղքերդ ամպի պէս
ջնջեցի . ինծի դարձիր , քանզի
Ես քեզ փրկեցի ։
23 Ուրախ եղէք՝ ով երկինք , քան-
զի Տէրը բրաւ — այ . ով երկրիս
վարի կողմերը՝ ցնծութեամբ աղա-
ղակեցէք . լեռներ , անտառ՝ ու
անոր մէջը եղող բոլոր ծառեր՝ ու-
րախութեան ձայներ հանեցէք .
քանզի Տէրը փրկեց Յակոբը , և
Իսրայէլի մէջ փառաւորուեցաւ ։
24 Ես այսպէս կ՚ըսէ Տէրը՝ քու Փըր-
կիչդ , ու քեզ արգանդի մէջ
Ստեղծողը . Ես եմ Տէրը , որ ա-
մէն բանը կըրի . Երկինքը միայն-
ակ ես տարածեցի , — երկիրը իմ կա-
25 րողութեամբս հաստատեցի . Նըշ-
տախօսներուն նշանները պարապը
կը հանեմ , և գուշակողները կը
յիմարեցընեմ . իմաստուններուն ետ
կը դարձընեմ , ու անոնց գիտու-
թիւնը յիմարութեան կը հանեմ .
26 Իմ ծառայիս խօսքը կը հաստա-
տեմ , և իմ դեսպաններուս խոր-
հուրդը կը կատարեմ ։ Ես Ե՛մ՝ որ
Երուսաղէմին համար կ՚ըսեմ թէ՝
Պիտի բնակուի , ու Յուդայի քա-
ղաքներուն համար թէ՝ Պիտի շի-
նուին . ու անոր աւերակները պի-
27 տի կանգնեմ ։ Ես անդունդին
կ՚ըսեմ թէ՝ Ցորցրէ , ու քու գե-
28 տերդ պիտի ցամքեցընեմ ։ Ես
Կիւրոսին համար կ՚ըսեմ . Իմ հո-
վիւս է , ու իմ ամէն կամքս պիտի
կատարէ . ու Երուսաղէմին կ՚ըսեմ
թէ՝ Պիտի շինուիս , և տաճարին
թէ՝ Քու հիմերդ պիտի ձգուին ։

ԳԼՈՒԽ ԽԵ

1 Աստուած իր հնազանդին սրբոյն համար Կիւ-
րոսը կը կանչէ · 5 իր ամենակարողութեանը

Ն·Ք·ՀՓ· Իրբ 712

Հ Գլ· խե· 20 ։
Յ Բ Թես· բ· 10 ։
Ը Գլ· խգ· 8 ։
Ե Ովս· դ· 12 ։ Հաւ· ա· 21 ։ Բ Թես· բ· 11 ։
Զ Ելը 1 , 2 ։
Է Կ՚ը՛ ինձ մի՛ պիտի չմոռնաս ։
Ը Գլ· խգ· 25 ։
Թ Գլ· խգ· 1 ։ խը· 20 ։ ա Կոր· գ· 20 ։ ա Պետ· ա· 18 , 19 ։
Ժ Սաղ· ղԲ· 84 ։ գշ· 11 ։ 12 ։ Գլ· խը· 10 ։ խԲ· 13 ։ Երեմ· ծա· 48 ։ Ցայտ· ժբ· 20 ։
ԺԱ Գլ· խգ· 14 ։ Հմր 6 ։
ԺԲ Գլ· խգ· 1 ։
ԺԳ Ծար· թ· 8 ։ Սաղ· ճգ· 2 ։ Գլ· խ· 22 ։ խը· 5 ։ խե· 12 ։ ծա· 13 ։
ԺԴ Երեմ· ծ· 36 ։
ԺԵ Գլ· խե· 15 ։
ԺԶ ա Կոր· ա· 20 ։
ԺԷ Ովբ· ա· 6 ։
ԺԸ Տես Երեմ· ծ· 38 ։ ծա· 32 , 36 ։
ԺԹ Մ· ւԶ· 22 , 23 ։ Եզր· ա· 1 · Ը ։ Գլ· խե· 13 ։

Ն · Ք · Գ · Իբր 712

իրաւունքով հնազանդութիւն կը պահանջէ ժողովուրդն · 20 իր փրկարար զօրութիւնը յիչելով՝ կը յանդիմանէ կուռքերուն ունայնութիւնը ։

1 Այսպէս կ'ըսէ Տէրը իր օծեալ Կիւրոսին , որուն ձախ ձեռքը բռնեցի , ի որ ազգերը անոր առջեւը հնազանդեցընեմ , ու թագաւորներուն մէջքը թուլցընեմ , և անոր առջեւը դռներուն փեղկերը բացուին , ու դռները չգոցուին .
2 Ես քու առջեւդ պիտի երթամ , և խորտուբորտ տեղուանքը պիտի շիտակեմ . պղնձէ դռները պիտի փշրեմ , ու երկաթէ նիգերը պիտի
3 կոտրտեմ . Եւ քեզի խաւարի գանձերը , ու պահուած հարստութիւնները պիտի տամ , որպէս զի դիտնաս թէ ես եմ Տէրը՝ Իսրայէլին Աստուածը , որ քու անունովդ կը կանչեմ ։
4 Իմ ծառայիս համար , և իմ ընտրած Իսրայէլիս համար , քեզ քու անունովդ կանչեցի , ես՝ քեզի մականուն դրի , թէև չգիտես զիս ։
5 Ես եմ Տէրը , ու ուրիշ մը չկայ . բացի ինձմէ զատ Աստուած չկայ . Ես քեզի գօտի կապեցի , թէև զիս
6 չգիտես ։ Որպէս զի արևելքէն ու արևմուտքէն գիտնան՝ որ ինձմէ զատ մէկը չկայ . Ես եմ Տէրը , ու ուրիշ մը չկայ ։
7 Լոյսը հաստատողը , և խաւարը ստեղծողը , խաղաղութիւնը ընողը , ու չարիքը ստեղծողը , Ես Տէրս եմ ։
8 Ով երկինքներ՝ վերէն ցօղ կաթեցուցէք , և ամպերը արդարութիւն տեղան . երկիրը բացուի , ու փրկութեան պտուղ տայ , ու մէկտեղ արդարութիւն բուսնի . Ես Տէրս եմ ։
9 Վայ անոր՝ որ իր Արարչին հետ կը վիճի , հողէ երկրիս խեցիներուն պես խեցի մըն է՞ . միթէ կաւը զինքը ձևացընողին կրնա՞յ ըսել թէ , Ինչ կը շինես , կամ քու գործդ չունի՞ ձեռք ըսել թէ , Ձեռք
10 չունիս ։ Վայ անոր՝ որ իր հօրը կ'ըսէ . Ինչ կը ծնանիս , ու իր մօրը՝ Ինչ կը բերես ։
11 Այսպէս կ'ըսէ Տէրը՝ Իսրայէլին Սուրբը ու անոր Արարիչը . Գալու բաներուն վրայով ինծի հարցուցէք . Իմ որդուոցս համար ու իմ ձեռացս գործքերուն համար ինծի
12 պատուէր տուէք ։ Երկիրը ես շինեցի , ու անոր վրայ մարդը ստեղծեցի . երկինքը իմ ձեռքերս տարածեցին , և անոր բոլոր զօր-
13 քին ես պատուէր տուի ։ Ես զանիկայ արդարութեամբ արթըն-

Ն · Ք · Գ · Իբր 712

ՒՐ ՄՆ · ԼԴ · 22 , 23 ։ Եզր · ա · 1 , ճ ։ ԳԼ · Խգ · 28 ։

– ԳԼ · Խա · 13 ։
ի ԳԼ · Խա · 2 ։ Դան · Ե · 30 ։

գ ԳԼ · Խ · 4 ։
դ Սաղ · ճէ · 16 ։

ե ԳԼ · Խա · 23 ։

զ Եզ · ԼԴ · 12 , 17 ։ ԳԼ · Խգ · 1 ։ Խթ · 1 ։
է ԳԼ · Խգ · 1 ։

ը Աթես · գ · 5 ։
թ Ր Օր · գ · 35 ։ 39 ։ ԼՐ · 39 ։ ԳԼ · Խգ · 8 ։ Խզ · 9 ։
ժ Հմր 14 , 18 , 21 , 22 ։
ի Սաղ · ժը · 32 , 39 ։
լ Սաղ · ճր · 15 ։ Գ · Լ · 20 ։ Մաղ · ա · 11 ։
խ Ամով · գ · 6 ։
ծ Սաղ · Հր · 8 ։ Ես · 11 ։
կ Եբր · ասն ,

ձ ԳԼ · Կգ · 8 ։
ղ Կ՚՝ խեցին՝ երկրիս խեցիներուն հետ ։ Ղ՚՝ Ինչ կ'ելլի ։
ճ ԳԼ · Խթ · 16 ։ Երեմ · ԺԸ · 6 ։ Հռով · թ · 20 ։

յ Երեմ · լ · 9 ։
ն Ես · Խթ · 23 ։
շ ԳԼ · Խր · 5 ։ Երեմ · Խ · 5 ։
ո Ծն · ա · 26 , 27 ։
չ Ծն · բ · 1 ։
պ ԳԼ · Խա · 2 ։

գոյցի , ու անոր ամէն ճամբաները պիտի շիտակեմ . անիկայ Իմ քաղաքս պիտի շինէ , և իմ աքսորուածներս ետ պիտի դարձընէ ՝առանց դնոյ ու առանց կաշառքի՝ կ'ըսէ զօրաց Տէրը ։
14 Տէրը այսպէս կ'ըսէ . Եգիպտոսին վաստակը , ու Եթէովպացւոց , և երկայնահասակ Սաբայեցւոց վաճառականութիւնը քեզի պիտի անցնի , ու քուկդ պիտի ըլլայ . անոնք քու ետեւդ պիտի քալեն , և շղթաներով պիտի պտտին , ու քեզի երկրպագութիւն ընելով՝ քեզի պիտի աղաչեն , ես Ես . Իմիայն քու մէջդ Աստուած կայ , ու ես՝ չիկայ ի զատ ուրիշ Աստուած մը չկայ ։
15 Ճիրաւի դուն քեզ ծածկող Աստուած մըն ես , ով Իսրայէլին
16 փրկիչ Աստուածը ։ Անոնք ամէնը պիտի ամչնան ու պատկառին . Կուռք շինողները միասին մէկտեղ ամօ-
17 թով պիտի երթան ։ Իսրայէլը յաւիտենական փրկութիւնով Տէրոջմէ պիտի փրկուի . դուք յաւիտեան յաւիտենից պիտի չամչնաք , ու չպատկառիք ։
18 Քանզի այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը , ան Աստուածը որ երկիրը կազմեց , զանիկայ շինեց , և հաստատեց . զանիկայ պարապ տեղը չստեղծեց , հապա բնակութեան համար կազմեց . Տէրը ես
19 եմ , ու ինձմէ ուրիշը չկայ ։ Ես ծածկարար՝ երկրիս մութ տեղը չխօսեցայ . Յակոբին սերունդին չըսի թէ՝ Զուր տեղը զիս փնտռեցէք . Ես Տէրս արդարութիւն կը խօսիմ , և ճշմարիտ բաներ կը
20 յայտնեմ ։ Ժողովուեցէք ու եկէք . մէկտեղ մօտեցէք դուք՝ ով ազգերէն ազատուածները . անոնք գիտութիւն չունին , որ իրենց կուռքին փայտը կը կանգնեն , ու փրկելու կարողութիւն չունեցող
21 աստուծոյ աղօթք կ'ընեն ։ Քարոզեցէք , ու ըսուցէք մօտեցուցէք , և անոնք մէկտեղ խորհուրդ ընեն . ասիկայ ի սկզբանէ ով գիտցուց , ան ժամանակէն ի վեր ով պատմեց . չէ՞ որ ես Տէրս , ի որ ինձմէ զատ ուրիշ Աստուած չկայ , ու ինձմէ ուրիշ ճշմարիտ Աստուած
22 ու Փրկիչ չկայ ։ Ով երկրիս բոլոր ծայրերը՝ ինձի նայեցէք , որ փրկուիք . քանզի ես եմ Աստուած , և ինձմէ ուրիշը չկայ ։
23 Իմ անձիս վրայ երդում ըրի . իմ բերնէս արդարութեան խօսք ելաւ , ու ետ չդառնար , որ ինձմէ ծունկ ինծի պիտի կրկնուի , և ամէն լեզու երդում պիտի

Ն · Ք · Գ · Իբր 712

– ԳԼ · Ծր · 3 ։ Տես Հռով · գ · 24 ։
ե Սաղ · կը · 31 ։ Ղր · 10 · 11 ։ ԳԼ · Խթ · 23 ։ կ · 9 ։ 10 ։ 14 ։ 16 ։ Ջաք · ը · 22 , 23 ։
զ Սաղ · ՃԽԹ · 8 ։
է Առակ · Ժգ · 25 ։
– Հմր 5 ։
ը Սաղ · Խգ · 24 ։ ԳԼ · ը · 17 ։ Ծէ · 17 ։

թ ԳԼ · Խգ · 11 ։
ժ ԳԼ · Խգ · 4 ։ Հմր 25 ։ Հռով · Ժա · 26 ։

ի ԳԼ · Խր · 5 ։

լ Հմր 5 ։

խ Ր Օր · Լ · 11 ։ ԳԼ · Խը · 16 ։
ծ Սաղ · Ժթ · 8 ։ ՃԺԹ · 137 , 138 ։

կ ԳԼ · Խգ · 17 , 18 , 19 ։ Խզ · 7 ։ Խը · 7 ։ Հռով · ա · 22 , 23 ։
հ ԳԼ · Խա · 22 ։ Խգ · 9 ։ Խգ · 7 ։ Խզ · 10 ։ Խը · 14 ։
ձ Հմր 5 , 14 ։ 18 ։ ԳԼ · Խգ · 8 ։ Խզ · 9 ։ Խը · 3 , ճ ։
– Սաղ · Իր · 27 ։ կե · 5 ։
ղ Ծն · Իր · 16 ։ Երր · գ · 13 , 14 ։
ճ Հռով · Ժգ · 11 ։ Փիլ · բ · 10 ։
յ Ծն · լ · 53 ։ ր Օր · գ · 13 ։ Սաղ · կգ · 11 ։ ԳԼ · կե · 16 ։

Ն · Բ · ԶԲ · Իրր 712

Ե Երեմ. իգ · 5 ։ ա Կոր · ա · 30 ։
Ղ ԳԼ · խա · 11 ։
Ե Հմր 17 ։
Ը Կոր · ա · 31 ։

24 ընկ ։ Մեկը պիտի բսէ . Միայն Տէրոջմով Ե արդարութիւն ու զօրութիւն ունիմ . ամէն ՙեկը անոր պիտի գայ . և ՂՐոլոր անոր դէմ բարկացողները պիտի ամչնան ։
25 Ե Իսրայէլին բոլոր սերունդը Տէրոջմով պիտի արդարանայ , ու Ը պիտի պարծենայ ։

ԳԼ · ԽԶ

1 Բաբիլոնի կուռքերը չեն կրնար զիրենք ազատել ։ 3 Աստուած մինչև վերջը կը փրկէ իր ժողովուրդը ։ 5 Պէտք չէ ղԱստուած կուռքերու հետ բաղդատել իր կարողութեանը 12 ու փրկութեանը կողմանէ ։

1 ՙԱՀԵԼԸ – խոնարհեցաւ . Նաբաւը ծռեցաւ . անոնց կուռքերը կենդանիներու ու անասուններու վրայ էին . ձեր բեռցուած բեռները Բ յոգնած անասուններն ծանրու-
2 թիւն եղան ։ ՙԱնոնք ծռեցան , ու միասին խոնարհեցան . բեռը ազատելու կարող չեղան , Է և իրենք ալ գերութեան դացին ։
3 ՙԻնծի մտիկ ըրէք՝ ով ցեղիս տունը , ու Իսրայէլի տանը բոլոր մնացորդը , Ը որ ձեզ որովայնէ կը կրեմ , և արգանդէ կը վերցընեմ .
4 մինչև յԱյր ծերութիւնը անգամ Ես նոյն եմ . ու մինչև յԱյր ալեւորութիւնը ՙես յՁեզ պիտի կրեմ . ես ստեղծեցի , ու ես պիտի վերցընեմ . ես պիտի կրեմ , ու պիտի ազատեմ ։
5 Ե Ձիս որո՞ւ կը նմանցընէք , և որո՞ւ Հաւասար կը սեպէք , ինծի Է՞նչ նմանութիւն կը շինէք , որ
6 նման ըլլանք ։ Ը Քսակէն ոսկի կը թափեն , ու կշռոյով արծաթ կը կշռեն . վարձքով ոսկերիչ կը բրոնեն , որ անով աստուած կը շինէ . ՙԱՒՒՅ կը պաշտեն , և ՙՈՐ երկրը-
7 պագութիւն կ՚ընեն ։ Բ Զանիկայ ուսերու վրայ կը վերցընեն կը տանեն , իր տեղը կը հաստատեն , ու կը կայնի . անիկայ իր տեղէն չշարժիր . և Ե թէ որ մէկը անոր աղաղակէ , պատասխան չտար . զանիկայ իր նեղութենէն չազատեր ։
8 Ասիկայ յիշեցէք , ու մարդ եղէք , Է միաբերնիդ բերէք՝ ով յան-
9 յանցաւորներ , Ը՝ի յայիտենից Էջ առջի բաները յիշեցէք . քանզի ես եմ Աստուած , և Ե ինծմէ ուրիշը չկայ . Ե՛ս եմ Աստուած , և ինծի
10 պէս մէկը չկայ , որ Ե վերջինը՝ սկիզբէն , ու դէ՛ս չեղածը՝ առաջուընէ պատմեցի . ու կ՚ըսեմ թէ՝ Է իմ խորհուրդս պիտի հաստատուի , և իմ ամէն կամքս պիտի կատարեմ ։
11 Ես Ե՛ս որ Ո արևելքէն գիշատիչ թռչունը կը կանչեմ , ես հեռու երկրէ՝ Ն իմ խորհուրդս Է՛ Ը-ոէ Ե՛ս մարդը . Ես խօսեցայ , ու ես պիտի կատարեմ . ես խորհեցայ ,
12 ու ես ՙի գործ պիտի դնեմ ։ Ո՛վ Ո արդարութենէ հեռացած խստա-
13 սիրտներ՝ ՙԻնծի մտիկ ըրէք . Ո իմ արդարութիւնս մօտեցուցի . անիկայ պիտի չհեռանայ . և իմ փրկութիւնս Ո պիտի չուշանայ . ու իմ փառքս Իսրայէլին համար Ն Սիոնի մէջ փրկութիւն պիտի դընեմ ։

ԳԼ · ԽԷ

1 Աստուծոյ դատաստանը Բաբիլոնի ու Քաղդեացւոց վրայ՝ 6 իրենց անգթութեանը , 7 ամբարտաւանութեանը , 10 և յանդգնութեանը համար՝ 11 անհրաժեշտ պիտի բլլայ ։

1 ՈՎ Բաբիլոնի կոյս աղջիկը՝ Իջի՛ր , ու Բ հողի վրայ նստէ . ով Քաղդեացւոց աղջիկը՝ գետնի վրայ առանց աթոռի՛ նստէ . քանզի մէյմըն ալ քնքուշ ու փափուկ պի-
2 տի չկոչուիս ։ Ձաղօրիքին քարերը առ , ալիւր աղա . լաչակդ հանէ , քղանցքդ վերցուր , սրունքդ բաց , գետերէն անցիր ։ Թ Ող քու մերկութիւնդ բացուի՛ , և նախատինքդ ալ երևնայ . Է՛ս վրէժ պիտի առնեմ , ու մարդու մը միջնորդութիւնը պիտի չընդունիմ ։
4 (ՂՄեր Փրկչին անունը՝ "ԵՀովայ Սաբաւովթ" է . անիկայ Իսրայէլին
5 Սուրբն է ։) Լո՛ւռ նստէ , խաւարի մէջ մտիր՝ ով Քաղդեացւոց աղջիկը՝ Է քանզի մէյմըն ալ Թագաւորութեանց տիկին պիտի չկո-
6 չուիս ։ Ը ես իմ ժողովուրդիս բարկացայ , և Բ իմ ժառանգութիւնս պղծեցի , ու զանոնք քու ձեռքդ տուի . դուն անոնց գթութիւն չցուցուցիր . Է ծերին վրայ քու լուծդ խիստ ծանրացուցիր .
7 Եւ ըսիր . Ես Է յաւիտեան տիկին պիտի ըլլամ . այնպէս որ Ես ասիկայ մտքիդ մէջը չդրիր , Ի ասոր վախ-
8 ճանը չտիրեցիր ։ Ու հիմա մտիկ ըրէ՝ ով անհոգութեամբ նստող հեշտասէր , որ սրտիդ մէջը կ՚ըսես . Է՝ես եմ , ու ինծմէ ուրիշը չկայ . Ի որբևարի պիտի չնստիմ , ու անզաւակութիւն պիտի չգիտ-
9 նամ ։ Հիմա Ո ասոնց երկուքն ալ՝ թէ անզաւակութիւնը և թէ որբևարութիւնը՝ Ն յանկարծ մէկ օրուան մէջ քու վրադ պիտի գան . Ը քու դիւթութիւններուդ շատութեանը մէջ , և քու անթիւ կախարդութիւններուդ մէջ , ա-
10 նոնք ամրողջ քու վրադ պիտի գան ։ Ու դուն Ո քու չարութեանդ ապաւինեցար , Ո ու բսիր . Ձիս տեսնող չկայ ։ Քեզ գլխէ հանողը՝ քու իմաստութիւնդ ու գիտութիւնդ է . Ո և սրտիդ մէջը բսիր . Ես եմ ,

Ն · Բ · ԶԲ · Իրր 712

Ղ Թես · իգ · 19 ։
Ո Հով · ժ · 3 ։
Ո ԳԼ · ծա · 5 ։ Հով · ա · 17 ։ գ · 21 ։
Ո Ամր · բ · 3 ։
Ն ԳԼ · կբ · 11 ։

– ԳԼ · խա · 9 ։ Երեմ · ծ · 2 ։ ծա · 44 ։
Բ Երեմ · ժ · 5 ։
Ո Երեմ · խբ · 7 ։
Ո Եզ · ժթ · 4 ։ բՕր · ա · 31 ։ լբ · 11 ։ Սաղ · հա · 6 ։ ԳԼ · կդ · 9 ։
Ե Սաղ · ճբ · 27 ։ Մաղ · գ · 6 ։
Ղ Սաղ · խբ · 14 ։ հա · 18 ։
Ե ԳԼ · խ · 18 , 25 ։
Ը ԳԼ · խ · 19 ։ խա · 6 ։ խգ · 12 , 19 ։ Երեմ · ժ · 3 ։
Բ Երեմ · ժ · 5 ։
Ժ ԳԼ · խե · 20 ։
Ի ԳԼ · խգ · 19 ։ խե · 7 ։
Ա Օր · լբ · 7 ։
Ե ԳԼ · խե · 5 , 21 ։
Ժ ԳԼ · խե · 21 ։
Ի Սաղ · լդ · 11 ։ Առակ · ժթ · 21 ։ խա · 30 ։ Գոբ · ե · 39 ։ Երր · գ · 17 ։
Հ ԳԼ · խա · 2 , 25 ։
Յ ԳԼ · խգ · 28 ։ խե · 13 ։

Ն · ք · ՂԲ · իբր 712

11 ու ինծմէ ուրիշը չկայ ։ Ընոր համար քու վրադ մէկ ձախորդութիւն մը պիտի գայ , որ անոր ուսկից ծագիլը պիտի չգիտնաս . և քու վրադ թշուառութիւն մը պիտի իյնայ , որ զանիկայ ետ դարձընելու կարող պիտի չըլլաս . ու քու վրադ յանկարծ աւերում մը պիտի գայ , որ դուն չգիտ-
12 նաս ։ Հիմա քու կախարդութիւններուդ մէջը կեցիր , որոնցմով քու մանկութենէդ ի վեր աշխատեր ես . գուցէ օգուտ մը դտնելու կարող ըլլաս , գուցէ կարենաս յաղթել ։
13 Խորհուրդներուդ շատութենէն ձանձրացար . հիմա երկինքը զննողները , աստեղագէտները , նոր ամիսներով գուշակութիւն ընողները թող ելլեն , և քու վրադ
14 գալու ըրէն քեզ ազատեն ։ Ահա անոնք չմեղրի պէս պիտի ըլլան , — զանոնք կրակը պիտի այրէ . իրենց հոգին բոցին զօրութենէն պիտի չկրնան ազատել . տաքնալու համար կայծ մը՝ նստելու համար կրակ մը պիտի չմը-
15 նայ ։ Ասկէս պիտի ըլլան քեզի անոնք՝ որոնց հետ աշխատեցար , ու մանկութենէդ ի վեր առուտուր ըրիր . ամէն մէկը իր ճամբան էր-թ—լով՝ ցիրուցան պիտի ըլլան , — քեզ ազատող մը պիտի չըլլայ ։

Ն · ք · ՂԲ · իբր 712

դեռ չեղած՝ քեզի իմացուցի , որ չըլլայ թէ ըսես . Զանոնք իմ արձանս ըրաւ , և իմ քանդակած ու
6 ձուլածոյ կուռքս հրամայեց ։ Դուն —ՆՆՈ լսեցիր . նայէ անոնց ամէնը ի—ո—ր—ե—ց— . ու դուք ը—ՆՆ—յ պիտի չհրատարակէք . ես քեզի ասկէ ետքը նոր ու ծածուկ բաներ պիտի դիտցընեմ , որ դուն անոնք
7 չգիտցար ։ Անոնք հիմա ստեղծուեցան , և չէ թէ առաջուց . ու — օրէս առաջ զանոնք չլսեցիր , որ չըլլայ թէ ըսես . Ահա զանոնք
8 գիտցայ ։ Դուն ոչ լսեցիր , ոչ ալ գիտցար . և սկիզբէն քու ականջդ չբացուեցաւ . վասն զի գիտցայ որ դուն խիստ նենգաւոր ես , ու դուն բ—որովայնէ ապստամբ կոչուեցար ։
9 Ես իմ անուանս համար երկարկութիւնս պիտի ուշացընեմ . և իմ փառացս համար համբերող պիտի ըլլամ քեզի , որ քեզ չկոր-
10 սընցընեմ ։ Ահա քեզ մաքրեցի , բայց չէ թէ ֆ—արծաթի պէս" . ես քեզ նեղութեան հալոցին մէջը
11 փորձեցի ։ Ի—ՆՆ—յ ինծի համար՝ ինծի համար պիտի ընեմ . հպանցի չմ— —նա— ինչու պղծուի . ու ես իմ փառքս ուրիշին չեմ տար ։
12 Ով Յակոբ՝ ու իմ կանչած Իսրա-յէլս՝ ինծի մտիկ ըրէ . ես նոյն եմ , ես առաջինը ես եմ , վերջինն
13 ալ ես եմ ։ Նաև երկիրը իմ ձեռքս հիմնեց , ու երկինքը իմ աջ ձեռքս տարածեց . երբոր ես անոնք կանչեմ , անոնք միասին կ—
14 —ՆՆ— կը կայնին ։ Ընդհդ ժողվուեցէք ու մտիկ ըրէք . անոնցմէ ով պատմեց այս բաները . ես Յեհովան զիրա ծածկեցի . աս բ—ՆԲ—ը հազ ժամանակէն ի վեր ես հոն եմ . ու հիմա ղրկ
15 եցէր Եհովան ու անոր Հոգին իրը-
17 կեց ։ Ասկէս կ'ըսէ Տէրը՝ քու Փրկիչդ՝ Իսրայէլին Սուրբը . Ես եմ քու Տէր Աստուածդ , որ քեզի օգտակար եղածը կը սորվեցընեմ , ու ընթացնել ճամբուդ մէջ քեզ
18 կ'առաջնորդեմ ։ Երանի թէ իմ պատուիրանքս մտիկ ընէիր . ան ատեն քու խաղաղութիւնդ գետի պէս , ու արդարութիւնդ ծովուն
19 ալիքներուն պէս պիտի ըլլար . Ես քու սերունդդ աւազի չափ՝ ու ո-րովայնիդ ծնունդը անոր խիճին չափ պիտի ըլլար . անոր անունը

բ Սաղ · ԽԸ · 3 ։
բ Սաղ · ՀԹ · 9 ։ ՀԳ · 8 ։ Ել · խգ · 25 ։ ՀՇր 11 ։ Եզեկ · ի · 9 ։ 14 ։ 22 ։ 44 ։
է Սաղ · Ն· 38 ։
ի Սաղ · կզ · 10 ։
ի Ցես Եզեկ · իբ · 20 ։ 21 ։ 22 ։
ի Կ—ՆՆ— արձամով ։
ձ ՀՇր 9 ։
ճ Ցես ը Օր · լը · 26 ։ 27 ։ Եզեկ · ի · 9 ։
յ Ել · խը · 8 ։
ղ Ը Օր · լը · 39 ։
ճ Ել · խա · 4 ։ խգ · 6 ։ Ցայտ · ա · 17 ։ իբ · 13 ։
ո Սաղ · ՀՐ · 25 ։
չ Ել · կ · 26 ։
պ Ել · խա · 22 ։ խգ · 9 ։ խգ · 7 ։ խե · 20 ։ 21 ։
ջ Ել · խե · 1 ։
ռ Ել · խգ · 28 ։
ս Ել · խե ՝ 2 ։ ՀՇ ։
տ Ել · խե · 19 ։
վ Ել · կ · 1 ։ Ընթ · ր · 8 ։ 9 ։ 11 ։
ր Ել · խգ · 14 ։ խգ · 6 ։ ՀՇր 20 ։
ց Սաղ · լը · 8 ։
փ Ը Օր · ւր · 29 ։ Սաղ · ՃԼ · 13 ։
ք Սաղ · ՃՀԹ · 165 ։
օ Ծն · իր · 17 ։ Ովս · ա · 10 ։
ֆ Կ—ՆՆ— որոշեցինն ինքն—ն—ին

1 Լսեցէք ասիկայ՝ ով Յակոբի տունը , որ Իսրայէլին անունովը կանչուած էք , ու Յուդային ջաղիւրէն ելեր էք , և Տէրոջը անունովը երդում կ'ընէք , ու Իսրայէլին Աստուածը կը յիշէք . ի բ—ՆՆ ճշմարտութեամբ չէ , ու
2 արդարութեամբ չէ ։ (Քանզի ա-նոնք Սուրբ քաղաքին անունովը կը յիշուին , և Իսրայէլի Աստուծոյն կը կռթնին , որուն անունը Եհովայ Սաբաւովթ է ։)
3 Ես առջի բաները հին ժամանակէն ի վեր պատմեցի . ու անոնք իմ բերնէս ելան , և զանոնք իմացուցի . յանկարծ բրի , ու ե-
4 ղան ։ Որովհետև գիտէի որ դուն խիստ ես , և քու պարանոցդ երկաթէ ջիղեր ունի , ու պղնձէ ճա-
5 կատ մը ունիս ։ Ես առտի քեզի հին ժամանակէն ի վեր պատմեցի , ու

ՆԴԴ· ԻԲԲ 712

իմ առջևէս պիտի չիտրուէր , ու չկորսուէր ։

20 ²Բարիլոնէն ելէք , Քաղդէացիներէն փախէք . ասիկայ յաղթութեան երգով պատմեցէք , — հրատարակեցէք . ասիկայ մինչև երկրիս ծայրը տարածեցէք , ըսելով . Տէրը 21 — իր Ցակոբ ծառան փրկեց ։ Ու երբոր զանոնք անապատներու մէջ պտըտցուց , ³չկարաւեցան . ⁴անոնց համար վէմէն ջուրեր վազցուց . վէմը պատռեց , ու անկէ 22 ջուրեր բղխեց ։ ⁵Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան , կ'ըսէ Տէրը ։

ԳԼ · ԽԹ

1 Քրիստոս Հրէաներուն խրկուած ըլլալով , ա. նոցմէ կը դանդաղի . 5 Հեթանոսներուն կը խրկուի իր շնորհացը խոստմունքներով ։ 18 Աստուծոյ մշանջենաւոր սէրը իր եկեղեցիին վրայ ։ 18 Եկեղեցիին դերեզմանութիւնը և զարգանալը ։

1 — ⁶Վ կղզիներ՝ ինծի մտիկ ըրէք , ու ով ժողովուրդներ՝ հետուէն ականջ տուէք . ⁷Տէրը զիս արգանդէն կանչեց . իմ անունս մօր 2 որովայնէն յիշեց . Եւ ⁸իմ բերանս սրած թուրի պէս ըրաւ , ⁹զիս իր ձեռքին հովանիին տակը ծածկեց , և զիս ¹⁰փայլուն նետի պէս ըրաւ . իր կապարճին մէջը պահեց զիս . 3 Եւ ինծի ըսաւ . ¹¹Դուն իմ ծառաս ես , ով Իսրայէլ՝ ¹²որ քեզմով պի. 4 տի փառաւորուիմ ։ ¹³Ու ես ըսի . Պարապ տեղը աշխատեցայ . Ես իմ զօրութիւնս ոչինչ ու դատարկ տեղը գործածեցի . բայց իմ իրաւունքս Տէրոջը առջևն է , և իմ գործքս իմ Աստուծոյս քովն է ։

5 Ու հիմա ¹⁴այսպէս կ'ըսէ Տէրը՝ ¹⁵որ զիս որովայնէ իրեն ծառայ ըլլալու համար ստեղծեց , որ Ցակոբը անոր դարձընեմ , և ¹⁶Իսրայէլը անոր ժողվուի , որ Տէրոջը առջևը փառաւորուիմ , և իմ Աստուածս 6 ինծի զօրութիւն ըլլայ . Այսպէս կ'ըսէ . Ցակոբին ցեղերը նորէն հաստատելու համար , ու Իսրայէլին ազատուածները դարձընելու համար , իմ ծառաս ըլլալդ քեզի քիչ է . ահա քեզ ¹⁷ազգերուն լոյս պիտի դնեմ , որ մինչև երկրին ծայրը իմ փրկութիւնս ըլլաս ։

7 Ա յսպէս կ'ըսէ Տէրը՝ Իսրայէլին Փրկիչը՝ անոր Սուրբը Նախարդուած անձին՝ ազգայ աստէն եղողին՝ իշխանաց ծառային . ¹⁸Թագաւորները պիտի տեսնեն , ու ոտք պիտի ելլեն . իշխաններն ալ երկրպագութիւն պիտի ընեն , Տէրոջը համար՝ որ հաւատարիմ է , Իսրայէլի Սուրբին համար՝ որ քեզ ընտրեր է ։

8 Տէրը այսպէս կ'ըսէ . ¹⁹Ընդունելի ժամանակի մը մէջ քեզի լսեցի , և փրկութեան օրը քեզի օգնութիւն ըրի , ու քեզ պահեցի , և ժողովուրդին ուխտ ըլլալու տուի , որ երկիրը հաստատես , ու աւրուած ժառանգութիւնները ժառանգեցնես 9 նոցա . Եւ կ'ըսես . ²⁰Ելէք , — խաւարի մէջ եղողներուն ցայտնուելէք ։ Անոնք ճամբաներու վրայ պիտի արածին , և անոնց արօտը ամէն բլուրներու 10 վրայ պիտի ըլլայ ։ Անոնք ²¹պիտի չանօթենան , ու չծարաւին . և ²²ղանոնք խորշակը կամ արևը պիտի չզարնէ . քանզի անոնց ողորմութիւն ընողը՝ ²³պիտի առաջնորդէ անոնց , ու ջուրի աղբերակներուն 11 քովը պիտի տանի զանոնք ։ ²⁴Եւ ամէն լեռներս՝ ճամբաներ պիտի ընեմ . ու իմ պողոտաներս պիտի 12 բարձրանան ։ Ահա ²⁵ոմանք հեռուէն , և ահա ոմանք հիւսիսէն , ու արևմուտքէն , և ոմանք Սինիա. 13 ցւոց երկրէն պիտի գան ։ ²⁶Ով երկինք՝ ուրախ եղիր , ու ով երկիր՝ ցնծութիւն ըրէ , և ով լեռներ՝ ուրախութեան ձայնով աղաղակեցէք . քանզի Տէրը իր ժողովուրդին մխիթարութիւն տուաւ , ու իր տնանկներուն ողորմեցաւ ։

14 ²⁷Բայց Սիոնը ըսաւ . Եհովան զիս թողուց , ու Տէրը զիս մոռցաւ ։ 15 ²⁸Միթէ կնիկը իր կաթնկեր մանուկը կրնայ մոռնալ , անանկ որ իր որովայնին ծնունդանը վրայ չգթայ . թէև անոնք մոռնան , Բայց ես 16 քեզ պիտի չմոռնամ ։ Ահա ²⁹ես քեզ իմ ձեռացս մէջ նկարագրեցի . քու պարիսպներդ միշտ իմ առջևս 17 են ։ Քու տղաքներդ պիտի արտոբան . — Քեզ փլըզնողները և աւ. 18 րողները քեզմէ պիտի ելլեն ։ ³⁰Աչքերդ վերցուր , ու բոլորտիքդ նայէ . ամէնքը կը ժողովուին — քեզի կու գան . Տէրը կ'ըսէ որ Ես կենդանի եմ . անշուշտ անոնց ամէնը ³¹զարդերու պէս պիտի հագնիս , և անոնցմով հարսի պէս պի. 19 տի զարդարուիս ։ Քանզի քու աւերակներդ , ամայի տեղուանքդ , ու քու կործանմանդ երկիրը՝ հիմա էր բնակիչներուն նեղ պիտի գայ . և քեզ կլլողները պիտի հեռանան ։ 20 ³²Քու ազատակութենէդ ետև ³³ծնանելու որդիդ քու ականջներուդ պիտի ըսեն . Ես տեղը ինծի նեղ է . տեղ տուր ինծի որ բնա. 21 կիմ ։ Ու դուն քու սրտիդ մէջ պիտի ըսես . Ասոնք ինծի ով ծնաւ . ես անզաւակ ու ամուլ էի . ես գերի ու աքսորուած էի , ասոնք ով մեծցուց . ահա ես մինակ մնացեր էի , ասոնք ո՞ւր էին ։

ՆԴԴ· ԻԲԲ 712

¹ԳԼ· ԽԲ· 6 ։

²ԳԼ· ԽԲ· 7 ։ Ջաք · թ · 12 ։

³Ցայտ · է · 16 ։

⁴Ել· ԻԹ· 6 ։

⁵Սաղ· ՃԽԱ· 6 ։

⁶Սաղ· ԻԳ· 2 ։

⁷ԳԼ· Խ · 4 ։

⁸ԳԼ· ԽԳ · 5 · 6 ։

⁹ԳԼ· ԽԳ · 23 ։

¹⁰Տես Սաղ· ՃԳ · 13 · Ը Նոր · գ · 2 ։

¹¹Տես ԳԼ· ԽԲ· 6 ։

¹²Տես ԳԼ· ԽԲ· 7 ։

¹³Տես Սաղ· ՃԳ · 13 · Մաղ · գ · 17 · Մատ · է · 11 ։

¹⁴Հռով· ԺԱ· 29 ։

¹⁵Տես Եր· ԺԹ· 9 · Երգ· Ը · 6 ։

¹⁶Ընակ· ԺԷ· 6 ։

¹⁷Տես ԳԼ· Կ · 4 ։

¹⁸Մատ · գ · 9 · Հռով · ԺԱ· 11 · 12 · ԼՃ ։

¹⁹Գ· Կ · 4 ։

ՆԴԴ· ԻԲԲ 712

¹Ել· ԺԲ· 11 · Երեմ· Ա· 8 · ԾԱ · 6 · 45 · Ջաք · Բ · 6 · 7 · Ցայտ · ԺԸ · 4 ։

²Ել· ԺԲ· 4 · 5 · 6 · ԳԼ· Խգ · 22 · 23 ։

³Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

⁴Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

⁵ԳԼ· ԽԷ· 21 ։

⁶ԳԼ· Խա· 1 ։

⁷Բ ՀԲ 5 · Եբեմ· ա · 5 · Մատ · ա · 20 · 21 · Ղուա · 15 · 31 · Ցոհ· Ժ· 36 · Գաղ· ա· 15 ։

⁸ԳԼ· ԺԱ · 4 · ԾԱ · 16 · Ովս · գ · 5 · Երբ · գ · 12 · Ցայտ · ա · 16 ։

⁹ԳԼ· ԾԱ · 16 ։

¹⁰Սաղ· ԽԵ · 5 ։

¹¹ԳԼ· Խբ· 1 · Ջաք· գ· 8 ։

¹²ԳԼ· Խգ· 23 · Ցոհ · Ժգ · 31 · Ժէ · 8 · Եփես · ա · 6 ։

¹³Եզեկ· գ· 19 · Բ ՀԲ 1 ։

¹⁴Մատ · Իգ · 37 ։

¹⁵ԳԼ· Խբ· 6 · Կ · 3 · Ղուա · բ · 32 · Գոր· ԺԳ · 47 · Իգ · 13 ։

¹⁶ԼԳԼ· ԾԳ · 3 · Մատ · Իգ · 67 ։

¹⁷Սաղ · Հր · 10 · 11 · ՀԲ 23 ։

¹⁸Տես Սաղ· ԿԲ · 13 · Բ Նոր · գ · 2 ։

¹⁹Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

²⁰Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

²¹Գ· Կ · 4 ։

²²Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

²³Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

²⁴Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

²⁵Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

²⁶Գ· Կ · 4 ։

²⁷Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

²⁸Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

²⁹Գ· Կ · 4 ։

³⁰Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

³¹Ել· ԺԷ· 6 · Թուա· Ի· 11 · Սաղ · ՃՆ · 41 ։

³²Գ· Կ · 4 ։

³³Տես ԳԼ · Խա· 17 · 18 ։

22 Այսպէս կ'ըսէ Տէր Եհովան. Ահա իմ ձեռքս ազգերու վրայ պիտի վերցընեմ, ու իմ դրօշակս ժողովուրդներու մէջ պիտի կանգնեմ. և անոնք քու տղաքներդ էրինդ ծոցին մէջը պիտի բերեն, ու քու աղջիկներդ ուսերուն վրայ
23 պիտի վերցուին։ Եւ թագաւորները քու սնուցիչներդ պիտի ըլլան, ու անոնց թագուհիները քու դայեակներդ. երեսին գետինը երկրպագութիւն պիտի ընեն, ու հողերուդ փոշին պիտի լզեն. և պիտի գիտնաս որ ես եմ Տէրը. վասն զի ինծի սպասողները պիտի չամչնան։
24 Միթէ հզօրէն աւարը կ'առնուի՞, կամ ահարկու մարդուն գերի առածը
25 ազատի՞։ Բայց Տէրը այսպէս կ'ըսէ. Հզօրին գերի առածը անգամ պիտի առնուի, ու բռնաւոր մարդուն աւարը պիտի ազատուի. ու քեզի հետ վիճողներուն դէմ ես պիտի վիճիմ, և քու տղաքներդ ես պիտի ազատեմ։
26 Ու քեզ հարստահարողներուն՝ իրենց մարմինները պիտի կերցընեմ. և իրենց արիւնը նոր գինիի պէս խմելով՝ պիտի գինովնան. և ամէն մարմին պիտի գիտնայ թէ ես եմ Տէրը՝ որ քեզ ազատեցի, ու քու Փրկիչդ՝ Յակոբին հզօրը։

ԳԼ. Ծ

1 Քրիստոս կը ցուցընէ թէ Հրէից մերժուիլը իրեն պիտի չհամարուի, որովհետև ինքը փրկելու կարող է, 5 և ան գործը կատարելու յանձնառու եղեր է, 7 և Աստուծոյ օգնականութիւնը ապահովեր է։ 10 Աստուծոյ և չէ թէ մեր անձերուն ապահովելու յորդորանքը մըն է։

1 Տէրը այսպէս կ'ըսէ. Ո՞ր է ձեր մօրը ապահարզանի թուղթը, որով ես զանիկայ արձակեցի. կամ ո՞վ է ան պարտատէրը՝ որուն ես ձեզ ծախեցի. ահա դուք ձեր անօրէնութեանցը համար ծախուեցաք, ու ձեր մայրը ձեր յանցանաց
2 ը համար արձակուեցաւ։ Ինչո՞ւ համար իմ եկած ատենս մարդ մը չկար, ես կանչած ատենս պատասխան տուող մը չկար. Միթէ իմ ձեռքս բնաւ կարճցա՞ւ՝ որ փրկելու կարող չըլլամ, կամ թէ ազատելու զօրութիւն չունի՞մ. ահա ես իմ սաստկութիւնովս ծովը կը ցամքեցընեմ. գետերը անապատ կը դարձընեմ. անոնց ձուկերը՝ ջուր չըլլալուն համար կը հոտին, ու ծարաւէն կը մեռնին։
3 Երկինքները խաւար կը հագցընեմ, ու ծածկոցի համար ա
4 նոնց վրայ քուրձ կը դնեմ։ Տէր Եհովան ինծի իմաստունները

Ն · ք · գԲ · Իբր 712

Ի Մաա. ժա. 28։
Ժ Սաղ · խ · 6, 7, 8։
Ի Մաա. իգ · 39 · Ցօհ · ժգ · 31 · Փիլ · բ · 8 · Երբ · ժ · 5, ԷԱ։
Հ Մաա. իգ · 67 · իէ · 26 · Ցօհ · ժբ · 22։
Ն Ղեւ · գ · 30։
Ղ Եզեկ · գ · 8, 9։
Ճ Հռով · բ · 22, 33, 34։
Ա Ցոր · ժգ · 28 · Սաղ · ՃԲ · 26 · ԳԼ · ծա · 6։
Ա ԳԼ · ծա · 8։
Ն Սաղ · իգ · 4։
ԼԲ ՄԿ · ի · 20 · Սաղ · ի · 7։
Ա Ցօհ · թ · 39։
Ղ Սաղ · ժգ · 4։

Ն · ք · գԲ · Իբր 712

Ի Մաա. ժա. 28։
Ժ Սաղ · խ · 6, 7, 8։
Ի Մաա. իգ · 39 · Ցօհ · ժգ · 31 · Փիլ · բ · 8 · Երբ · ժ · 5, ԷԱ։
Հ Մաա. իգ · 67 · իէ · 26 · Ցօհ · ժբ · 22։
Ն Ղեւ · գ · 30։
Ղ Եզեկ · գ · 8, 9։
Ճ Հռով · բ · 22, 33, 34։
Ա Ցոր · ժգ · 28 · Սաղ · ՃԲ · 26 · ԳԼ · ծա · 6։
Ա ԳԼ · ծա · 8։
Ն Սաղ · իգ · 4։
ԼԲ ՄԿ · ի · 20 · Սաղ · ի · 7։
Ա Ցօհ · թ · 39։
Ղ Սաղ · ժգ · 4։

5 աշակերտներու պէս լսեմ։ Տէր Եհովան ինծի ականջս բացաւ, ու ես ան՝ անշնազանդ չեղայ, ետ չդար-
6 ձայ։ Իմ կռնակս՝ զարնողներուն, և մօրուքս՝ փետտողներուն տուի. իմ երեսս նախատինքէն ու
7 թուքէն չծածկեցի։ Բայց Տէր Եհովան ինծի կ'օգնէ. անոր համար ամօթապարտ պիտի չըլլամ. անոր համար իմ երեսս դայլայլազի պէս երի, ու գիտեմ որ պի-
8 տի չամչնամ։ Զիս արդարացնողը մօտ է. ով ինծի հետ պիտի վիճի. միասին դատաստանի կայնինք. իմ դատախազս ով է.
9 թող ինծի մօտենայ։ Ահա Տէր Եհովան ինծի պիտի օգնէ. ով է անիկայ որ զիս յանցաւոր պիտի հանէ. ահա ամէնքը հանդերձի պէս պիտի մաշին. ցեցը պիտի ուտէ զանոնք։
10 Ձեր մէջը Տէրոջմէ վախցող, անոր ծառային ձայնը մտիկ ընող ով կայ, որ մութի մէջ կը քալէ, ու բնաւ լոյս չունի. Թող անիկայ Տէրոջը անունը ապաւինի, ու իր Աստուծոյն կռթնի։
11 Ահա դուք ամէնքդ՝ որ կրակ կը վառէք, ու կայծերով կը շրջապատիք. ձեր կրակին լոյսովը, ու ձեր վառած կայծերուն մէջը քալեցէք. ասիկայ ձեզի իմ ձեռքէս պիտի բլլայ. դուք տրտմութեամբ պիտի պառկիք։

ԳԼ. Ծ Ա

1 Աստուծոյ ապաւինելու յորդորանք մը՝ 3 իր միխիթարական խոստումնաբերութեան, 4 և իր արդարութեանը ու փրկութեանը, 7 և մարդոց մահկանացուութեանը համար։ 9 Քրիստոս իր սրբազան բազուկովը իրենները կը պաշտպանէ մարդոց երկիւղէն։ 17 Երուսաղէմի թշնամութեանը վրայ կ'ողբայ, 21 ու փրկութիւն կը խոստանայ։

1 Ով դուք՝ արդարութեան հետեւողներ, որ Տէրը փնտռողներ՝ ինծի մտիկ ըրէք. դուք ան վէմին նայեցէք, ուսկից որ կտրուեցաք, և ան գուբին փոսին, ուսկից
2 որ փորուեցաք։ Ձեր հօրը Աբրահամին՝ ու ձեզ ծնանող Սարրային նայեցէք. քանզի անիկայ կանչեցի՝ որ մէկ մարդ էր, և զանիկայ օրհնեցի, ու բազմացու-
3 ցի։ Վասն զի Տէրը Սիոնը պիտի մխիթարէ. անոր բոլոր աւերակները պիտի մխիթարէ. և անոր անապատը Եդեմի պէս, ու անոր անմշակութիւնը Տէրոջը դրախտին պէս պիտի ընէ. անոր մէջը ցնծու-

Ա Հռով · թ · 30—32։
Բ Հմր 7։
Ֆ Հռով · գ · 1, 16 · Երբ · ժա · 11 · 12։
Ք Ծն · ժր · 1, 2։
Ի Ծն · իդ · 1, 35։
Ղ Սաղ · ՃԲ · 13 · ԳԼ · խ · 1 · ՃՐ · 9 · Հմր 12։
Ի Ծն · ԺԳ · 10 · Ցովել · բ · 3։

Ն · ք · գԲ · Իբր 712

Ա ԳԼ · ի · 4 · կղ · 20։
Ա Սաղ · ՀՐ · 11 · Հմր 7 · ԳԼ · ՃՐ · 15 · կ · 16։
Ֆ Սաղ · ՀՐ · 9 · Միք · է · 17։
Ֆ Սաղ · լԳ · 22 · Հռով · է · 5 · Թ · 33 · ժ · 11։
Ա Մաա · ժբ · 29 · Ղև · ժա · 21, 22։
Ա Կ՚իրաւունք ունեցող։
Ֆ ԳԼ · Թ · 20։
Ա Ցայտ · ժգ · 20 · ժգ · 6։
Բ Սաղ · Թ · 16 · ԳԼ · կ · 16։
Ա Օր · իդ · 1 · Երեմ · գ · 8 · Ովս · բ · 2։
Բ Տես գ Թագ · գ · 1 · Մաա · ժբ · 25։
Ֆ ԳԼ · ՃՐ · 3։
Ք Առակ · ա · 24 · ԳԼ · կե · 12 · կղ · 4 · Երեմ · է · 13 · լե · 15։
Ի Թաւ · ժա · 23 · ԳԼ · ՃԹ · 1։
Ղ Սաղ · ՃՂ · 9 · Նաա · ա · 4։
Ի Եզ · ժգ · 21։
Ճ Ցեփ · գ · 16։
Ա Եզ · է · 18, 31։
Ֆ Եզ · ժ · 21։
Ի Ցայտ · գ · 12։
Ա Եզ · գ · 11։

Ն·Բ·ՂՖ· Իրր 712

թիւն և ուրախութիւն , զովու-
թիւն , և օրհնութեան ձայն պիտի
4 գտնուի ։ Ով իմ ժողովուրդս՝
ինծի՛ մտիկ ըրէ , ով իմ ազգս՝
ինծի ականջ տուր . Ելքանչի՛ ինծմէ
օրէնք պիտի ելլէ . և իմ իրա-
ւունքս իժողովուրդներուն լոյս
ըլլալու համար պիտի հաստատեմ։
5 ✠ Իմ արդարութիւնս մօտ է . իմ
փրկութիւնս ելած է . Ես իմ բա-
զուկներս ժողովուրդները պիտի
դատեն . Կղզիները ինծի՛ պիտի
յուսան , Եւ իմ բազուկիս պիտի
6 ապաւինին ։ ✠ Ընչքերնիդ վե՛ր
վերցուցէք դէպ՚ի երկինքը , ու
վար նայեցէք դէպ՚ի երկիրը . քան-
զի Երկինքը ծուխի պէս պիտի
անցնի , Ու երկիրը հանդերձի պէս
պիտի մաշի . *Նմանապէս անոր
բնակիչներն ալ պիտի մեռնին .
բայց իմ փրկութիւնս յաւիտենա-
կան պիտի ըլլայ , ու իմ արդարու-
թիւնս պիտի չպակսի ։
7 Ինծի՛ մտիկ ըրէք՝ ով արդարու-
թիւն ճանչցողներ , և Իմ օրէնքս
ձեր սրտին մէջը պահող ժողովուրդ .
Մարդոց նախատինքէն մի՛ վախ-
նաք , ու անոնց բամբասանքէն մի՛
8 զարհուրիք ։ Վասն զի ✠ ցեցը պի-
տի ուտէ զանոնք հանդերձի պէս ,
և մկը պիտի ուտէ զանոնք բուրդի
պէս . բայց իմ արդարութիւնս
յաւիտեան , ու իմ փրկութիւնս
ամէն դարերու մէջ պիտի ըլլայ ։
9 Արթնցիր , արթնցիր , Ով
Ցէրովը բազուկը՝ զօրութիւն հա-
գիր . արթնցիր Ինչպէս օրերուն
պէս , շատոնցմէ անցած դարերուն
պէս . Դուն անիկայ չէ՞ս՝ որ Ռա-
հաբը կտրդեցիր , ու Վիշապը վի-
10 րաւորեցիր ։ Դուն անիկայ չէ՞ս
որ Ծովը՝ մեծ անդունդին ջուրերը
ցամքեցուցիր , և ծովուն խորունկ
տեղը ճամբայ ըրիր , որ փըր-
11 կուածները Անկ անցնին ։ Ու
Ցէրովը փրկածները պիտի դար-
նան , ու երգերով Սիոն պիտի գան .
և անոնց գլխուն վրայ յաւիտենա-
կան ուրախութիւն պիտի ըլլայ .
անոնք ցնծութիւն ու ուրախու-
թիւն պիտի ստանան . տրտմու-
թիւնը ու հեծութիւնը Անոնց
պիտի հեռանայ ։
12 Ես եմ , ես եմ՝ որ ձեզ կը մխի-
թարեմ . դուն ով ես՝ որ Եմահկա-
նացու մարդէն , ու խոտի նմանե-
լու մարդու զաւակէն կը վախնաս .
13 Եւ քեզ ստեղծող՝ երկինքները
տարածող՝ ու երկրին հիմերը դնող
Տէրը կը մոռնաս . ու բռնաւորին
սրտմտութենէն միշտ ամէն օր կը
վախնաս , իբր թէ հեղ կորսընչցնե-
լու պատրաստուած է . Բայց հիմ-
ուր է բռնաւորին սրտմտութիւնը ։
14 Կապուածը շուտով պիտի արձա-
կուի , ու գուբին մէջը պիտի չը-
մեռնի , և իր հացը պիտի չպակսի ։
15 Քանզի ես Ատուածդ եմ՝
որ ծովը կը յանդիմանեմ , երբոր
անոր ալիքները կը գոռան . իմ
16 անունս Եհովայ Սաբաւովթ է ։ Ու
իմ խօսքերս քու բերանդ դրի , և
քեզ ձեռքիս հովանիովը ծածկե-
ցի , որ երկինքը հաստատեմ , ու
երկրին հիմերը դնեմ , և Սիոնին ը-
սեմ . Դուն իմ ժողովուրդս ես ։
17 Արթնցիր , արթնցիր — և
լի՛ր՝ ով Երուսաղէմ , որ Ցէրովը
ձեռքէն անոր բարկութեանը բա-
ժակը խմեցիր . Թմրութեան բա-
ժակին մրուրը քամելով խմեցիր ։
18 Անոր բոլոր ծնած որդիներէն՝ իրեն
առաջնորդող չկայ , ու բոլոր մեծ-
ցուցած տղաքներէն՝ իրեն ձեռնտու
19 չկայ ։ Այս երկու բաները քեզի
պատահեցան . ով քեզի պիտի
ցաւի . կործանում ու կոտորած ,
սով ու սուր . Քեզ ինչո՞վ մխի-
20 թարեմ ։ Քու տղաքդ մարած՝
ամէն փողոցներուն գլուխը կը
պառկին , որդայթի մէջ բռնուած
յամոյրի պէս . անոնք Ցէրովը բար-
կութեամբը՝ քու Ատուածդ յան-
դիմանութեամբը լեցուած են ։
21 Ուրեմն ասիկայ մտիկ ըրէ՝ ով ո-
ղորմելի , որ արբած ես , Բայց դի-
22 նիէն չէ ։ Այսպէս կ՚ըսէ քու Ե-
հովայ Ցէրդ , և քու Ատուածդ՝
որ իր ժողովուրդին դատը կը
պաշտպանէ . Ահա քու ձեռքէդ
թմրութեան բաժակը , իմ բար-
կութեանս բաժակին մրուրը առի .
զանիկայ էլ պիտի չխմես .
23 Եւ զանիկայ քեզ հարստահարող-
ներուն ձեռքը պիտի դնեմ , որոնք
քու անձիդ կ՚ըսէին . Ծռէ՛ որ անց-
նինք . ու դուն կռնակդ՝ անցնող-
ներուն համար՝ գետնի պէս ու փո-
ղոցի պէս դրիր ։

ԳԼ · ԾԲ

1 Ցէրը կը յորդորէ նկնդեցին՝ որ իր ձրի փրկութեանը հաւատայ , 7 և անոր պատգամաւորները ընդունի , 9 անոր մեծութեամբը ուրախանայ , 11 և ինքզինքը ծառայութենէ ազատէ , 13 Քրիստոսի թագաւորութեանը փառք ։

1 Արթնցիր , արթնցիր , քու
զօրութիւնդ հագիր՝ ով Սիոն .
քու փառաւոր հանդերձներդ հա-
գիր՝ ով Երուսաղէմ Սուրբ քա-
ղաք . քանզի Քէ՛լկն ալ անթլե-
փատ ու պիղծ մկը քու մէջդ պիտի
2 չմտնէ ։ Փոշին քեզմէ թօթվէ՛
և նստէ՝ ով Երուսաղէմ . Քու
պարանոցիդ կապերը քակէ՛ , ով
3 Սիոնի գերի աղջիկը ։ Վասն զի

Ն·Բ·ՂՖ· Իրր 712

Ջաբ·Թ· 11։

Ծոր·իգ· 12։ Սաղ· հդ· 13։ Եբեմ·լ· 35։

Օր·ժբ· 18։ Գլ·ծի· 21։ Ճոհ·գ·34։ Գլ·խթ·2։

Գլ·կե· 17։ կղ·22։ Գլ·ծբ·1։ Ցոր·իա· 20։ Երեմ· իե·15·16։

Տես Օր· իբ·28·34։ Սաղ·կ·3։ Նե·8։ Եզկ·իդ· 32·33·34։ Ջաբ·ժբ· 2։ Ճայտ· ժգ·10։

Գլ·խէ· 9։

Ամով·է· 2։

Ղող·ր·11· 12։

Տես Հմր 17։ Ողո·գ· 15։

Երեմ·ծ· 34։

Երեմ·իե· 17·26·28։ Ջաբ·ժբ· 2։

Սաղ·կզ· 11·12։

Գլ·ծա·9· 17։

Կէ եմ·ժ· 1։ Գլ·խբ· 2։ Մատ·գ· 5։ Ճայտ· իա·2։

Գլ·լե·8· կ·21։ Նաե· ա·15։ Ճայտ·իա· 27։

Տես Գլ· գ·26։ ծա· 23։

Ջաբ·ր·7։

Ն · Բ · ՂԲ · Խրբ 712

Ցերը այսպէս կ'ըսէ . Ազրի ծա-
խուեցաք , և առանց ստակի պիտի
4 փրկուիք : Քանզի Ցեր Եհովան
այսպէս կ'ըսէ . Իմ ժողովուրդս
առաջ Եգիպտոս իջաւ , որ հոն
պանդխտութիւն ընէ . ու Ասորես-
տանցիք առանց պատճառի անոր
5 բռնութիւն ըրին : Եւ հիմա հոս
ի՞նչ ունիմ՝ կ'ըսէ Ցերը , որ իմ
ժողովուրդս պարապ տեղը քշուե-
ցաւ . անոր վրայ իշխողները ՚Ն-
Յ կը պոռացընեն , կ'ըսէ Ցերը , ու
ԸԵզեկ · ԼԴ · 20 , 23 ; Հր-
ռով · Բ · 24 ·
միշտ ամէն օր իմ անունս Էկը հայ-
6 հոյուի : Ասոր համար իմ ժողո-
վուրդս պիտի դիտնայ իմ անունս .
ասոր համար ան օրուան մէջ ՚ԳԻՏ
ՅՆԱՅ , թէ ես ան եմ՝ որ կը խօ-
սէի . ահա ես եմ ,
Ր Նաւ · ա · 15 ; Հռով · ժ · 15 ·
7 Ի՜նչ գեղեցիկ են լեռներուն վը-
րայ անոր ուրբերը , որ աւետիս կը
բերէ , խաղաղութիւն կը քարոզէ .
բարութեան աւետիս կը բերէ ,
փրկութիւն կը քարոզէ , ու Սիօ-
նին կ'ըսէ . Քու Աստուածդ կը
Բ Սաղ · ՂԴ · 1 ; ՂՂ · 10 ; ՂԷ · 1 ·
8 թագաւորէ : Քու պահապան-
ներդ ձայն պիտի վերցընեն . ցըն-
ծութեան ձայնով միաբերան պիտի
երգեն . քանզի երբոր Ցերը Սիօնը
ետ դարձնէ , անոնք *յայտնապէս
9 պիտի տեսնեն : Ով Երուսաղէմի
աւերակներ՝ ցնծութեան ձայնով
մկտեղ աղաղակեցէք . Էքանզի
Ցերը իր ժողովուրդը մխիթարեց ,
10 ու Երուսաղէմը փրկեց : Ցերը
իր սուրբ բազուկը մերկացուց բո-
լոր ազգաց աչքերուն առջեւ . ու
Երկրիս ամէն ծայրերը մեր Աս-
տուծոյն փրկութիւնը պիտի տես-
նեն :
11 Քաշուեցէք , քաշուեցէք , ան-
կէ ելէք . պիղծ բանի մի դպչիք .
անոր մէջէն ելէք . Ճմաքուր եղէք՝
ով Ցերոջը սպասները վերցնող-
12 ներ : Քանզի Ձէ թէ արտորա-
լով պիտի ելլէք , և չէ թէ փախ-
չելով պիտի երթաք . Հապա Ցե-
րը ձեր առջեւէն պիտի երթայ , ու
Իսրայէլին Աստուածը ձեզի թիկ-
նապահ պիտի ըլլայ :
13 Ահա իմ ծառաս յաջողութիւն
պիտի գտնէ , Ե պիտի մեծնայ ,
ու պիտի բարձրանայ , ու խիստ
14 պիտի փառաւորի : Ինչպէս որ
շատերը †անոր վրայ" ապշեցան ,
(անոր Երեսը՝ մարդու երեսէն , ու
կերպարանքը՝ մարդու որդւոցմէն
աւելի աւրած ըլլալուն համար ,)
15 Ա՛յնպէս ալ շատ ազգեր պիտի
‡զարմացընէ . Հթագաւորները ա-
նոր առջեւը իրենց բերանը պիտի
գոցեն . վասն զի *իրենց չպատ-
մուածը պիտի տեսնեն , և իրենց
չլսածը պիտի իմանան :

ԳԼ · ԾԳ

1 Մարգարէն անհաւատութեան համար դան-
գաղելով՝ խալխն գայթակղութիւնը կ'արգա-
րացընէ : 4 յիշելով Քրիստոսի չարչարանքին
օգուտը , 10 և բարի յաջողութիւնը :

1 ՚Ո՞վ հաւատաց մեր պատ-
գամին , ու Ցերոջը բազուկը
2 որո՞ւ յայտնուեցաւ : Քանզի Ե-
նիկայ՝ անոր առջեւը մատաղա-
տունկի պէս , և ծարաւուտ երկրէ
Հ-Ը արմատի պէս բուսաւ . Ե-
նիկայ կերպարանք կամ վայելչու-
թիւն չունէր՝ որ անոր նայէինք ,
ոչ ալ անանկ երեւոյթ մը՝ որ անկէ
3 ախորժէինք : Ե Անիկայ մարդոցմէ
անարգուեցաւ , ու երեսէ ձգուե-
ցաւ . վշտաց տէր ու ՚ցաւոց
տեղեակ եղաւ . և անկէ երես
դարձընելու մարդու պէս եղաւ .
անարգուեցաւ , ու Ե զանիկայ
4 չյարգեցինք : Իրաւցընէ Ե-
նիկայ մեր ցաւերը վերցուց ,
ու մեր վիշտերը իր վրան ա-
ռաւ . և մենք զանիկայ վիրաւո-
րուած , Աստուծմէ զարնուած , ու
չարիքի հանդիպած սեպեցինք :
5 Բայց անիկայ Ե մեր մեղքերուն հա-
մար վիրաւորուեցաւ , Ե մեր անօ-
րէնութիւններուն համար ծեծուե-
ցաւ . մեր խաղաղութեան պատի-
ժը անոր վրայ եղաւ . և անոր
Ե վէրքերովը մենք բժշկուեցանք :
6 Ե Ամենքս ոչխարներու պէս մոլորե-
ցանք . ամէն մէկերնիս իր ճամ-
բուն դարձաւ . և Ցերը մեր ամե-
նուն անօրէնութիւնը անոր վրայ
7 դրաւ : Անիկայ անիրաւութիւն
կրեց , ու չարչարուեցաւ , բայց
Իր բերանը չբացաւ . Ե մորթուե-
լու տարուող ոչխարի պէս , ու իր
խուզողներուն առջեւը մունջ կե-
ցող մաքիի պէս՝ անանկ իր բերա-
8 նը չբացաւ : Ե Ձնեղութեամբ և դա-
տապարտութեամբ" վերցաւ . ու
անոր ազգատոհմը ո՞վ կրնայ պատ-
մել . քանզի Ե անիկայ կենդանեաց
երկրէն կտրուեցաւ . անիկայ իմ
ժողովուրդիս յանցանքին համար
9 զարնուեցաւ . Ե Եւ անոր գերեզ-
մանը ամբարիշտներու հետ՝ դրուե-
ցաւ . բայց երբոր մեռաւ , հա-
րուստին հետ եղաւ . §քանզի ա-
նիկայ անօրէնութիւն մը չգործեց ,
ու անոր բերնին մէջ հնենդութիւն
10 մը չգտնուեցաւ : Բայց Ցերը հա-
ճեցաւ որ զանիկայ ծեծելով ցա-
ւերու մատնէ . անոր անձը Ե մե-
ղայ համար զոհ ‡ըլլալէն ետքը՝
անիկայ սերունդ պիտի տեսնէ ,
Էէ օրերը պիտի երկնցընէ , ու
‡Ցերոջը կամքը անոր ձեռքովը
11 պիտի յաջողի : Իր անձին աշ-
խատութեանը պտուղը տեսնելով՝

Ն · Բ · ՂԲ · Խրբ 712

ԸԵզեկ · ԼԴ · 20 , 23 ; Հռովմ · Բ · 24 ·
Ր Նաւ · ա · 15 ; Հռով · ժ · 15 ·
Բ Սաղ · ՂԴ · 1 ; ՂՂ · 10 ; ՂԷ · 1 ·
*Կ՚ԴԵՄ ՅԱՆԴԻՄԱՆ ԷՐ · ԵԲ · ԱՒՐ ԱՒՐԻ
Է ԳԼ · ԾԱ · 3 ·
Լ Ցես ԳԼ · ԽԸ · 20 ·
Ի Ցես Սաղ · ՂԸ · 2 , 3 ·
Ծ ՂՆ · Գ · 6 ·
Ձ ԳԼ · ԽԸ · 20 ; Երեմ · Ծ · 8 ; ԾԱ · 6 , 45 ; Զաք · Բ · 6 , 7 ; Բկոր · Չ · 17 ; Ցայտ · ԺԸ · 4 ·
Հ ՂԼ · ԻՐ · 2 , ԾԲ ·
Յ Ցես ԾԼ · ԺԸ · 33 , 39 ·
Ղ ՄԻՔ · Ը · 13 ·
Ճ ԳԼ · ԾԸ · 8 ; Ցես ԾԼ · ԺԳ · 19 ; ԹՈՒ · Ժ · 25 ·
Մ ԳԼ · ԽԸ · 1 ·
Յ ՓԻԼ · Բ · 9 ·
† ԵՀԲ · ՔՈՒ ՎՐԱԳ
Ն Սաղ · ԻՐ · 6 , 7 ; ԳԼ · ԾԳ · 2 , 3 ·
‡ Կ՚ՈՐՈՇԿԷ ·
Ւ ԳԼ · ԽԹ · 7 , 23 ·
- ԳԼ · ԽԸ · 5 ; Հռով · ԺԸ · 21 ; ԺԳ · 25 , 26 ; Եփես · Գ · 5 , 9 ·

ԳԼ · ԾԳ

1 Մարգարէն անհաւատութեան համար դան-
գաղելով՝ խալխն գայթակղութիւնը կ'արգա-
րացընէ : 4 յիշելով Քրիստոսի չարչարանքին
օգուտը , 10 և բարի յաջողութիւնը :

1 ՚Ո՞վ հաւատաց մեր պատ-
գամին , ու Ցերոջը բազուկը
2 որո՞ւ յայտնուեցաւ : Քանզի Ե-
նիկայ՝ անոր առջեւը մատաղա-
տունկի պէս , և ծարաւուտ երկրէ
Հ-Ը արմատի պէս բուսաւ . Ե-
նիկայ կերպարանք կամ վայելչու-
թիւն չունէր՝ որ անոր նայէինք ,
ոչ ալ անանկ երեւոյթ մը՝ որ անկէ
3 ախորժէինք : Ե Անիկայ մարդոցմէ
անարգուեցաւ , ու երեսէ ձգուե-
ցաւ . վշտաց տէր ու ՚ցաւոց
տեղեակ եղաւ . և անկէ երես
դարձընելու մարդու պէս եղաւ .
անարգուեցաւ , ու Ե զանիկայ
4 չյարգեցինք : Իրաւցընէ Ե-
նիկայ մեր ցաւերը վերցուց ,
ու մեր վիշտերը իր վրան ա-
ռաւ . և մենք զանիկայ վիրաւո-
րուած , Աստուծմէ զարնուած , ու
չարիքի հանդիպած սեպեցինք :
5 Բայց անիկայ Ե մեր մեղքերուն հա-
մար վիրաւորուեցաւ , Ե մեր անօ-
րէնութիւններուն համար ծեծուե-
ցաւ . մեր խաղաղութեան պատի-
ժը անոր վրայ եղաւ . և անոր
Ե վէրքերովը մենք բժշկուեցանք :
6 Ե Ամենքս ոչխարներու պէս մոլորե-
ցանք . ամէն մէկերնիս իր ճամ-
բուն դարձաւ . և Ցերը մեր ամե-
նուն անօրէնութիւնը անոր վրայ
7 դրաւ : Անիկայ անիրաւութիւն
կրեց , ու չարչարուեցաւ , բայց
Իր բերանը չբացաւ . Ե մորթուե-
լու տարուող ոչխարի պէս , ու իր
խուզողներուն առջեւը մունջ կե-
ցող մաքիի պէս՝ անանկ իր բերա-
8 նը չբացաւ : Ե Ձնեղութեամբ և դա-
տապարտութեամբ" վերցաւ . ու
անոր ազգատոհմը ո՞վ կրնայ պատ-
մել . քանզի Ե անիկայ կենդանեաց
երկրէն կտրուեցաւ . անիկայ իմ
ժողովուրդիս յանցանքին համար
9 զարնուեցաւ . Ե Եւ անոր գերեզ-
մանը ամբարիշտներու հետ՝ դրուե-
ցաւ . բայց երբոր մեռաւ , հա-
րուստին հետ եղաւ . §քանզի ա-
նիկայ անօրէնութիւն մը չգործեց ,
ու անոր բերնին մէջ հնենդութիւն
10 մը չգտնուեցաւ : Բայց Ցերը հա-
ճեցաւ որ զանիկայ ծեծելով ցա-
ւերու մատնէ . անոր անձը Ե մե-
ղայ համար զոհ ‡ըլլալէն ետքը՝
անիկայ սերունդ պիտի տեսնէ ,
Էէ օրերը պիտի երկնցընէ , ու
‡Ցերոջը կամքը անոր ձեռքովը
11 պիտի յաջողի : Իր անձին աշ-
խատութեանը պտուղը տեսնելով՝

Ն · Բ · ՂԲ · Խրբ 712

- ՃՕՀ · ԺՐ · 38 ; Հռով · Ժ · 16 ·
Բ ԳԼ · ԾԱ · 9 ; Հռով · Ա · 16 ; Ա Կոր · Ա · 18 ·
‡ ԳԼ · ԺԱ · 1 ·
Ծ ԳԼ · ԾԲ · 14 ; Մար · Թ · 11 ·
Ի Սաղ · ԻՐ · 6 ; ԳԼ · ԽԹ · 7 ·
Ղ ԵՐՐ · Դ · 15 ·
Ի ՃՕՀ · Ա · 10 , 11 ·
Ը Մաա · Ը · 17 ; ԵՐՐ · Թ · 28 ; Ա ՊԱԼ · Բ · 24 ·
Ր Հռով · Դ · 25 ; Ա Կոր · ԺԸ · 3 ; Ա ՊԱԼ · Գ · 18 ·
Ժ Ա ՊԱԼ · Բ · 24 ·
Ի Սաղ · ՃԺԹ · 176 ; ԱՊԱԼ · Բ · 25 ·
Լ Մաա · ԻԳ · 63 ; ԻԷ · 12 , 14 ; Մար · ԺԳ · 61 ; ԺԸ · 5 ; Ա ՊԱԼ · Բ · 23 ·
Ի Գոր · Ը · 32 ·
‖ Կ՚ՆԶԴՈՒԹԱՆԷ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԷ
Ծ Դան · Թ · 26 ·
Ի Մաա · ԻԷ · 57 , 58 , 60 ·
§ Կ՚ԹԷ ԵՒ Հ Ա ՊԱԼ · Բ · 22 ; Ա ՃՕՀ · Գ · 5 ·
Յ Ր Կոր · Ե · 21 ; ԱՊԱԼ · Բ · 24 ·
‡ Կ՚ԸՆԴԳ Ղ Հռով · Ջ · 9 ·
Ճ Եփե · Ա · 5 , 9 ; Բ Թես · Ա · 11 ·

պիտի կչտանայ . 2 իմ արդար ծառաս՝ ի իր դիտութեամբը կշատերը պիտի արդարացընէ . ե քանզի անոնց անօրէնութիւնները ինքը
12 պիտի կրէ : Ես Անոր համար մեծերուն հետ բաժին պիտի տամ անոր , ու հզօրներուն հետ աւարէն բաժին պիտի առնէ . քանզի իր անձը մահուան ա մատնեց , ու ի յանցաւորներու հետ սեպուեցաւ . և շատերուն մեղքը վերցուց , ու ի յանցաւորներուն համար միջնորդութիւն րրաւ :

ԳԼ . ՆԴ

1 Մարգարէն՝ հեթանոսներուն միխիթարութիւն ըլլալու համար , կը նախաձայնէ անոնց եկեղեցիին բնդարձակութիւնը , 4 անոնց ապահովութիւնը , 6 նեղութենէ ազատուիլը , 11 յաոաջադիմութիւնը , 15 և անոնց ապահովութեամբ պահպանուիլը :

1 Վ՚ չծնանող ամուլ՝ ցնծա . ով ծննդական ցաւ չքաշող՝ ցնծութեամբ գոչէ և աղաղակէ . ի քանզի երեսէ ձգուածին տղաքները էրիկ ունեցողին տղաքներէն շատ
2 պիտի ըլլան , կ՚ըսէ Տէրը : ր Վրանիդ տեղը լայնցուր , ու քու բնակարանիդ վարագուրները տարածուին . մի՛ խնայեր . չուաններդ երկրնցուր , ու ցիցերդ ամուրցուր :
3 Քանզի աջ ու ձախ կողմը պիտի տարածուիս . ու քու սերունդդ ազգեր պիտի ժառանգէ , ու աւերած քաղաքները բնակիչներով պիտի
4 լեցընէ : Մի վախնար , վասն զի պիտի չամչնաս . ու մի՛ պատկառիր , վասն զի պիտի չնախատուիս . քանզի քու մանկութեանդ ամօթը պիտի մոռնաս , և քու որբևարութեանդ նախատինքը ալ
5 պիտի չյիշես : Քանզի քու էրիկդ քու Ստեղծիչդ է . անոր անունը Եհովայ Սաբաւովթ է . ու քու Փրկիչդ Իսրայէլին Սուրբն է . Նիկայ բոլոր երկրին Աստուածը
6 պիտի կոչուի : Քանզի Տէրը քեզ՝ Ձերեսէ ձգուած և հոգւով վըշտացած կնկան պէս , ու մերժուած նորահասակ հարսի պէս կանչեց ,
7 կ՚ըսէ քու Աստուածդ : Ե Փոքր վայրկեան մը քեզ թողուցի , բայց մեծ ողորմութիւններով քեզ պիտի
8 ընդունիմ : ի Քիչ մը սրտմտութեամբ՝ մկ վայրկեան մը երեսս քեզմէ ծածկեցի , Բայց յաւիտենական ողորմութիւնով քեզի պիտի ողորմիմ՝ կ՚ըսէ քու Փրկիչդ
9 Եհովան : Քանզի ասիկայ ինծի Նոյի ջուրերուն պէս է . ինչպէս որ երդում ըրի թէ , Նոյի ջուրերը ալ երկրի վրայ չանցնին , այնպէս ալ երդում ըրի որ քեզի չբարկանամ , ու քեզ չյանդիմա-
10 նեմ : Քանզի լեռները պիտի վերնան , և բլուրները պիտի սասանին . Բայց իմ ողորմութիւնս քեզմէ պիտի չվերնայ , ու իմ խաղաղութեանս ուխտը պիտի չսասանի , կ՚ըսէ Տէրը՝ որ քեզի կ՚ո-
11 ղորմի : Ով փոթորիկէ զարնուած անմխիթար ողորմելի , ահա ես քու քարերդ Լ՚ազնագոյն պիտի դնեմ , ու քեզ շափիւղաներով պիտի
12 հիմնեմ . Եւ քու մարտկոցներդ յասպիս քարերով՝ , ու դռներդ կարկեհաններով , ու բոլոր պարիսպներդ թանկագին քարերով
13 պիտի շինեմ : Եւ քու բոլոր որդիքդ Տէրոջմէ սորված պիտի ըլլան , ու քու որդւոդդ խաղաղութիւն
14 պիտի ըլլայ : Դուն արդարութեամբ պիտի հաստատուիս . բռնութենէ հեռու պիտի ըլլաս , որ չվախնաս , ու արհաւիրքէն՝ որ քեզի չմօտենայ : Ահա անշուշտ ժողով պիտի ընեն , բայց ինծմէ չէ . ով որ քու վրադ ժողվուի՝ , քու կողմդ պիտի դառ-
16 նայ : Ահա կրակի մէջ ածուխները փչող՝ և իր գործքին համար գործիք շինող դարբինը ես ստեղծեցի , ու աւերելու համար՝ կործա-
17 նողը ես ստեղծեցի : Քեզի դէմ շինուած գործիքը ամենևին պիտի չյաջողի , և քու վրադ դատաստանի ելլող ամէն լեզուն պիտի դատապարտուիս . Տէրոջը ծառանեբուն ժառանգութիւնը ասիկայ է , ու անոնց արդարութիւնը ինծմէ է , կ՚ըսէ Տէրը :

ԳԼ . ՆԵ

1 Մարգարէն՝ Քրիստոսի խոստմունքներովը՝ հաւատքի 6 և ապաշխարութեան կը յորդորէ : 8 Հաւատացեալներուն բարի յոյսերութիւնը :

1 Վ՚ բոլոր ծարաւածներ՝ ջուրբուն եկէք . և ստակ չունեցողներ՝ եկէք , ծախու առէք ու կերէք . եկէք առանց ստակի և առանց գնոյ
2 գինի ու կաթ ծախու առէք : Ինչո՞ւ ձեր ստակը կը վատնէք՝ չէ թէ հացի համար , և ձեր վաստակը անանկ բանի համար՝ որ չկշտացընէ . ուշադրութեամբ ինծի մտիկ րրէք , որ բարիքներ ուտէք , ու ձեր հոգին պարարտութեամբ զու-
3 արճանայ : Ձեր ականջը խոնարհեցուցէք , ու ինծի եկէք . մտիկ րրէք , ու ձեր հոգին պիտի ապրի . և ձեզի հետ յաւիտենական ուխտ մը պիտի ընեմ , Դաւթին մնայուն ողորմութիւնները չեզ ը-
4 լլվ : Ահա զանիկայ ժողովուրդներուն վկայ՝ ազգերուն առաջնորդ
5 ու հրամանատար դրի : Ահա չը-

Ա Ցօհ . բ . 1 ։ Գլ . Խբ . 1 ։ Խթ . 3 ։ Ցօհ . ԺԷ . 3 ։ բ Պետ . ա . 3 ։ Հռով . ե . 18 , 19 ։ գ Հեր 4 , 5 ։ Ա Պաղ . բ . 8 ։ Փիլ . բ . 9 ։ դ Կող . բ . 15 ։ ե Եբր . թափց ։ Մատ . ԺԸ . 28 ։ Ղուկ . իդ . 37 ։ զ Ղուկ . իդ . 34 ։ Հռով . բ . 34 ։ Եբր . է . 25 ։ թ . 24 ։ ա Ցօհ . բ . 1 ։

ը Սափ . գ . 14 ։ Պաղ . գ . 27 ։

Բ աթոգ . բ . 5 ։

ի Գլ . Խթ . 19 , 20 ։

Ր Գլ . ՅԸ . 5 ։ կա . 9 ։

Ի Ջաք . ԺԳ . 9 ։ Հռով . գ . 29 ։

Ա Գլ . կթ . 4 ։

Ի Պաղ . Լ . 5 ։ Գլ . իգ . 20 ։ կ . 10 ։ բ Կոր . գ . 17 ։ ի Կ՚ըսէ Ցանկարծական

Ը Գլ . ՅԸ . 3 ։ Եբեմ . լա . 3 ։

Ք Ծն . բ . 21 ։ թ . 11 ։ Գլ . ՅԸ . 11 ։ Ցճս Եբեմ . լա . 35 , 36 ։

Ք Սաղ . խգ . 2 ։ Գլ . Ծատ . 6 ։ Մատ . ե . 18 ։

Ի Սաղ . ԼԹ . 33 , 34 ։

Ա Մն . իԹ . 2 ։ Ցայտ . իա . 18 , ԸԸ ։ ֆ կ՚ Ծարբուրով

Ա կ՚ կարմիր յականթներով

Ե Եբր . սահմաններդ

Ի Գլ . ժա . 9 ։ Եբեմ . լ . 34 ։ Ցօհ . գ . 45 ։ ա Կոր . բ . 10 ։ ա Թես . դ . 9 ։ ա Ցօհ . բ . 20 ։

Ք Սաղ . ՃԺԹ . 165 ։

ֆ կ՚ ինծմէ չեղող պաղտնեաներ պիտի գան , ո՛վ որ քու քովդ պաղտրիւտութիւն կ՚ընէ ,

Ա Գլ . խե . 24 , 25 ։

Ցօհ . գ . 14 ։ է . 37 ։ Ցայտ . իա . 6 ։ իբ . 17 ։

Բ Մատ . ժգ . 44 , 46 ։ Ցայտ . գ . 18 ։

ֆ Մատ . ժա . 28 ։

Գ Գլ . ՅԳ . 8 ։ կա . 8 ։ Եբեմ . լբ . 40 ։

Ր բթագ . է . 8 , ԸԸ ։ Սաղ . ՃԹ . 28 ։ Գոր . ժգ . 34 ։

Ը Ցօհ . ժբ . 37 ։ Ցայտ . ա . 5 ։

Ի Եբեմ . լ . 9 ։ Եզեկ . ԼԹ . 23 ։ Ովս . գ . 5 ։ Դան . Թ . 25 ։

Ը Գլ . ՅԲ . 15 ։ Եփես . բ . 11 , 12 ։

դիտցած ազգդ պիտի կանչես , ¶ և քեզ չճանչցող ազգերը քեզի պիտի դիմեն , քու Տէր Աստուածդդ համար , ու Իսրայէլի Սուրբին համար . †քանզի անիկայ քեզ փառաւորեց ։

6 ‡Տէրը փնտռեցէք , քանի որ անիկայ կը դտնուի . զանիկայ կանչեցէք , քանի որ անիկայ մօտ է ։
7 Թող Լամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը †իր խորհուրդներէն հրաժարի , և Տէրոջը դառնայ , †ու անիկայ պիտի ողորմի անոր . ու մեր Աստուծոյն , ինչու որ անիբ
8 կայ առատապէս կը ներէ ։ ‡Քանզի իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդները չեն , ու ձեր ճամբաներդ՝ իմ ճամբաներս չեն , կ'ըսէ Տէրը .
9 ‡Հապա որչափ որ երկինքը երկրէս բարձր է , այնչափ ալ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են , և իմ խորհուրդներս ձեր խորհուրդ-
10 ներէն ։ Վասն զի †ինչպէս որ անձրեւը ու ձիւնը երկինքէն կ'իջնէ , և հոն չդառնար , հապա երկիրը կ'ոռոգէ , ու զանիկայ պտղաբեր և արդասաւոր կ'ընէ , ու ցանողին հունտ՝ և ուտողին հաց կու տայ ,
11 †իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ . ինծի պարապ պիտի չդառնայ . հապա իմ կամքս պիտի կատարէ , ու յաջողութեամբ †ի գործ դնէ ան բանը որուն համար
12 զանիկայ խրկեցի ։ ‡Քանզի ուրախութեամբ պիտի ելլէք , ու խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք . լեռները ու բլուրները †ձեր առջեւէն ցնծութեամբ պիտի աղաղակեն , և դաշտերուն բոլոր ծառ-
13 ուերը ծափ պիտի զարնեն ։ Թուփին տեղը՝ մայր , ու դժնիկին տեղը՝ մրտենի պիտի բուսնի . և անիկա Տէրոջը անունը †համար անջինջ ու յաւիտենական նշան մը պիտի ըլլայ ։

ԳԼ · Ծ Զ

1 Մարգարէն կը յորդորէ ժողովուրդը արդարութիւն գործելու . 3 կը խոստանայ թէ Աստուծոյ շնորհքը հաւասարապէս ամենուն պիտի տրուի առանց այսուհետեւ . 9 կոյր պահապանները կը յանդիմանէ ։

1 Տէրը այսպէս կ'ըսէ . Իրաւունքը պահեցէք , ու արդարութիւն ըրէք . †քանզի իմ փրկութիւնս գալու , ու արդարութիւնս յայտ-
2 նուելու մօտ է ։ Երանի՛ անմարդուն՝ որ ասիկայ կ'ընէ , ու մարդուորդիին՝ որ ասիկայ ամուր կը բռնէ , †ով որ շաբաթը կը պահէ , ու զանիկայ չպղծեր , և ամեն անիրաւութիւն ընելէն իր ձեռքը ետ կը պահէ ։
3 Ու ‡Տէրոջը յարող օտարականի որդին թող չզրուցէ՝ ըսելով . Տէրը զիս իր ժողովուրդէն բոլորովին զատեց . ու ներքինին †թող չըսէ . ահա ես չոր ծառ մըն եմ ։
4 Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ ան ներքինիներուն , որոնք իմ շաբաթներս կը պահեն , և ինծի հաճոյ եղածը կ'ընտրեն , ու իմ ուխ-
5 տիս մէջ հաստատ կը կենան , Անոնց՝ †իմ տանս մէջ և պարիսպներուս մէջ՝ տղաքներէ ու աղջիկներէ աւելի աղէկ տեղ ու †անուն պիտի աամ . անոնց յաւիտենական անուն պիտի տամ , որ պիտի չը-
կերու օրինակով՝ կը նախազգայնէ անոնց վրայ
գալու Թշնամութիւնը . 15 կը յորդորէ զա-
նոնք որ գալու դատաստաններուն առջեւ ա-
նոնք . 22 կը ցուցընէ թէ իրենց պղծութիւն-
ներէն է ասոնց պատճառը ։

1 Տէրը ինծի այսպէս ըսաւ . Գնա ,
քեզի մէկ բթամած գօտի մը ծա-
խու առ , և զանիկայ մէջդ կապէ ,
ու զանիկայ ջուրը մի՛ խոթեր ։
2 Ուստի Տէրոջը խօսքին համեմատ՝
գօտին ծախու առի , ու մէջքս
3 կապեցի ։ Եւ երկրորդ անգամ
Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
4 լով . Ան ծախու առած գօտիդ՝
որ քու մէջքիդ վրայ է , առ ու
ելիր Եփրատ գնա , և հոն վէմին
5 ծակին մէջը պահէ զանիկայ ։ Ու
ես գացի , և զանիկայ Եփրատի
էջերէը պահեցի , ինչպէս որ Տէրը
6 ինծի պատուիրեց ։ Եւ շատ օրե-
րէն ետքը՝ Տէրը ինծի ըսաւ .
Ելիր Եփրատ գնա , ու անկէ առ
ան գօտին , որ քեզի հրամայեցի որ
7 հոն պահես ։ Ես ալ Եփրատ գա-
ցի , ու փորելով՝ գօտին ան պա-
հած տեղէս առի . և ահա գօտին
փտեր էր , ու բնաւ մէկ բանի մը
8 չէր գար ։ Եւ Տէրոջը խօսքը ին-
ծի եղաւ՝ ըսելով . Տէրը այսպէս
9 կ՚ըսէ . ֊Ցուդային հպարտու-
թիւնը , ու Երուսաղէմին մեծ
հպարտութիւնը այդպէս պիտի
10 աւերեմ ։ Ան չար ժողովուրդը՝ որ
իմ խօսքերս լսել չեն ուզեր , ու
֊իրենց սրտին կամակորութեամբը
կը քալեն , և օտար աստուածնե-
րու ետեւէ կ՚երթան՝ անոնց ծա-
ռայութիւն ընելու , և անոնց եր-
կրպագութիւն ընելու համար ,
ատ անպիտան գօտիին պէս պիտի
11 ըլլան . Վասն զի ինչպէս որ գօ-
տին մարդուն մէջքը կը փակչի ,
բոլոր Իսրայէլի տունը ու բոլոր
Ցուդայի տունը ինծի այնպէս
փակցուցեր էի՝ կ՚ըսէ Տէրը , ֊որ
ինծի ժողովուրդ ըլլան , ֊նաև ա-
նուն , և փառք ու պարծանք .
բայց անոնք մտիկ չըրին ։
12 Նաև ասա խօսքը՝ ըսես անոնց .
Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս
կ՚ըսէ . Ամէն տիկ գինիով պիտի
լեցուի . բայց անոնք քեզի պիտի
ըսեն . Միթէ մենք չե՞նք գիտեր
որ ամէն տիկ գինիով պիտի լե-
13 ցուի ։ Իսկ դուն անոնց ըսես .
Տէրը այսպէս կ՚ըսէ . Ահա ես աս
երկրին բոլոր բնակիչները , ու
Դաւիթի աթոռին վրայ նստող
թագաւորները , և քահանաները ,
ու մարգարէները , ու Երուսաղէմի
բոլոր բնակիչները ֊արբեցութեամբ
14 պիտի լեցընեմ . Եւ ՚զանոնք
իրարու ընդ֊էմ՝ իրարու հայրերը
հարուածով պիտի կոտրտեմ ,
հայրերը տղոցը հետ միասին՝ կ՚ըսէ
Տէրը . և անոնց պիտի չգթամ , ու
պիտի չխնայեմ , և առանց ողոր-
մելու՝ զանոնք բնաջինջ պիտի ը-
նեմ ։
15 Մտիկ ըրէք , ականջ տուէք ,
մի՛ հպարտանաք . վասն զի Տէրը
16 խօսեցաւ ։ ֊Ձեր Տէր Աստուծոյն
փառք տուէք , դեռ ֊խաւարը վրա-
֊նիդ չհասած , ու ձեր ոտքերը
մութ լեռներու վրայ չսահած ,
և ձեր ֊լոյսի սպասած ատենը ա-
֊րա֊ծ զանիկայ ֊մահուան ստուե-

Ի֊ես . ՃԱ . 17 , 21 ։ ԿԲ . 6 ։ Գլ . Իե . 27 ։ ՃԱ . 7 ։
՚ՈՍՂ . ր . 9 ։
Ի֊ես . ՃԹ . 9 ։
Ա֊ՍՂ . Իզ . 19 ։
Ես . ե . 30 ։ ր . 22 ։ Ամով . ր . 9 ։ Ի֊ես . ՃԹ . 9 ։
֊Ա֊ՍՂ . Իզ . 19 ։

Ն · Ք · ԴԲ · ԻՐԲ 602

ԻԳԼ · Բ · 1 ; ԺԳ · 17 ; ՈՂՐ ա · 2 , 16 ; Բ · 18 ;

Ե ՏԱՍ Գ ԹԱԳ · ԻԳ · 12 ; ԳԼ · ԻՐ · 26 ;

ԻԳԼ · Գ · 22 ;

ԺԳԼ · Գ · 24 ;

ԵԳԼ · Ե · 19 ; ԺԳ · 10 ;

ՀԵՍ · Գ · 17 ; ԽԷ · 2 , 3 ; ՀԺՐ 26 ; Ե · ԳԿ · ԺԳ · 37 , 38 , 39 ; ՆԱ · Գ · 5 ·

Յ ՍԱՂ · ա · 4 ; ՈՎՍ · ԺԳ · 3 ;

Ը ՑՈՐ · Ի · 29 ; ՍԱՂ · ԺԱ · 6 ;

Ժ ԳԼ · Ժ · 14 ; Ի ՀԺՐ 22 ; ՈՂՐ · ա · 8 ; ԵԳԿ · ԺԳ · 37 ; ԻԳ · 29 ; ՈՎՍ · Բ · 10 ;

Յ ԳԼ · Ե · 8 ; Ն ԵՍ · ԿԵ · 7 ; ԳԼ · Բ · 20 ; Գ · 2 , 6 ; Ե · ԳԿ · Գ · 13 ·

ԻՐԲ 601

1 Տ Երոջը խօսքը որ Երեմիային եղաւ՝
2 երբ Յոսիա Ամոնի որդւոյն՝ Յուդա սուգ կը բռնէ, և անոր դրուները կը նուագին. անոնք գնան

Ն · Ք · ԴԲ · ԻՐԲ 601

Բ ՏԱՍ ա ԹԱԳ · Ե · 12 ;

Է ՍԱՂ · Խ · 14 ;

Ը Բ ԹԱԳ · ԺԵ · 30 ;

ԻԳԼ · Բ · 24 ;

* ԵՔԲ · պատասխան առաջ

ՂՍԱՂ · ԽԵ · 11 ;

ԻՀԳԼ · ԺԵ · 13 ;

ԸԵՍ · ԾԹ · 1 ;

ՐԵԼ · ԻԹ · 45 , 46 ; ՂԱ · Իշ · 11 , 12 ; ՅԴԱՆ · Թ · 18 , 19 ;

Ի ՏԱՍ ԳԼ · Բ · 23 , 24 , 25 ;

ԼՈՎ · Ը · 13 , Թ · 9 ;

Ի ԵԼ · Լբ · 10 ; ԳԼ · Է · 16 ; ԺԱ · 14 ;

Ի ԱԿԱ · ա · 28 ; ԵՍ · ա · 15 ; ԾԸ · 3 ; ԳԼ · ԺԱ · 11 ; ԵԳԿ · Ը · 18 ; ՄԻՔ · Գ · 4 ; ՋԱՔ · Է · 13 ;

ՅԳԼ · Գ · 20 , Է · 21 , 22 ;

ՀԳԼ · Թ · 16 ;

ՅԳԼ · Գ · 10 ;

ԼԳԼ · ԻԷ · 10 ;

Ժ ԳԼ · ԻԳ · 21 , ԻԷ · 15 , ԻԹ · 8 , 9 ;

վրայ տրտում կը նստին. ու Երուսաղէմի աղաղակը վեր ելաւ։
3 Եւ անոնց ազնուականները՝ իրենց երիտասարդները ջուրի կը խրկեն. աւազանները գացին, ջուր չգտան, և դարձան՝ իրենց անօթները պարապ բերելով. ամչցան ու պատկառեցան, և գլուխնին ծածկեցին։
4 Երկրին վրայ անձրեւ չըլլալուն պատճառովը գետինը ճաթելուն համար, երկրագործները ամչցան, և գլուխնին ծածկեցին։
5 Քանզի նաև եղնիկը դաշտի մէջ ծնաւ, ու խոտ չըլլալուն համար իր ձագը թողուց, ու վայրենի էշերը բլուրներու վրայ կայնեցան, և ճագարներու պէս օդը ծծեցին, ու աչքերնին տկարացաւ, վասն զի խոտ չըկար։
6 Թէև մեր անօրէնութիւնները մեզի դէմ *ելեր են, Տէր՝ ընդու անուանդ համար ըրէ. քանզի մեր յանցանքները շատ են. քեզի դէմ մեղք գործեցինք։
7 Ով Իսրայէլին Յոյսը՝ նեղութեան ատեն անոր Փրկիչը, ինչո՞ւ համար երկրի վրայ հիւրի պէս, ու դիշերը իջևան ընելու դարձող ճամբորդի պէս ըլլաս։
8 Ինչո՞ւ համար ապշած մարդու պէս, կամ ազատելու կարողութիւն չունեցող հզօրի մը պէս ըլլաս. և դուն ով Տէր՝ մեր մէջն ես, ու քու անունդ մեր վրայ կոչուած է. մեզ մի թողուր։
9 Այսպէս կ՚ըսէ Տէրը ասոր ժողովուրդին համար. Ասանկ դական չըջելը այսպէս սիրեցին, և իրենց ոտքերը չզսպեցին. ուստի Տէրը անոնց չհաւնեցաւ. Հիմա անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ, ու անոնց մեղքերուն այցելութիւն պիտի ընէ։
10 Եւ Տէրը ինծի ըսաւ. Մի՛ ըներ այս ժողովուրդին բարիք ըլլալու համար։
11 Երբ որ ծոմ պահեն, անոնց աղաղակը մտիկ պիտի չընեմ. ու երբ որ ողջակէզ կամ զոհ մատուցանեն, զանոնք պիտի չընդունիմ. Հապա սրով, սովով և ժանտախտով պիտի սպառեմ զանոնք։
12 Ես ըսի. Ա՛հ Տէր Եհովայ, ահա մարգարէները անոնց կ՚ըսեն. Սուր պիտի չտեսնէք, ու ձեր մէջը սով պիտի չըլլայ. Հապա ձեզի ամէն տեղ ճշմարիտ խաղաղութիւն պիտի տամ։
13 Ան ատենը Տէրը ինծի ըսաւ. Մարգարէները իմ անունովս սուտ մարգարէութիւն կ՚ընեն. ես զանոնք չխրկեցի, և անոնց չհրամայեցի, ու անոնց չխօսեցայ. անոնք ձեզի սուտ տեսիլքներ, անուտի դուշակութիւններ, և իրենց սրտին խաբէութիւնները կը

ԳԼ · ԻԴ

1 Մեծ սովին համար՝ 7 Երեմիան կ՚աղօթէ։ 10 Տէրը չուզեր մտիկ ընել ասոր աղօթքը՝ ժողովուրդին չարութեանը համար։ 13 կը յայտնէ թէ՝ իրենց մէջը սուտ մարգարէներ ըլլալովը իրենք չեն կրնար արդարանալ։ 17 Երեմիա անոնց վրայ կ՚ողբայ։

Ն · ՔՐ · ՂԲ · Իրր 601

15 մարգարէական ։ Ուստի Տէրը այսպէս կ'ըսէ . Ան մարգարէներուն համար , որոնք իմ անունովս մարգարէութիւն կ'ընեն , (թէպէտև զանոնք ես չխրկեցի ,) ու կ'ըսեն թէ՝ Ան երկրիս մէջը սուր ու սով պիտի չըլլայ , ան մարգարէները սրով ու սովով պիտի կորսուին .
16 Եւ ան ժողովուրդը՝ որոնց անոնք մարգարէութիւն կ'ընեն , սուրին ու սովին պատճառովը Երուսաղէմի փողոցները պիտի ձգուին . և զանոնք , անոնց կիները , տղաքները ու աղջիկները թաղող պիտի չգտնուի . ու անոնց վրայ՝ իրենց չարութիւնը պիտի թափեմ ։
17 Ուստի անոնց ասa խօսքը զրուցես . Գիշեր ու ցորեկ աչքերս արցունք պիտի թափեն , ու բնաւ պիտի չդադարին . Վասն զի իմ ժողովուրդիս կոյս աղջիկը մեծ կոտորածով , խիստ սաստիկ հա-
18 րուածով կոտրեցաւ ։ Թէ որ դաշտը ելլեմ՝ ահա սրով մեռցուածներ , և թէ որ քաղաքը մտնեմ , ահա սովով տկարացածներ կան . վասն զի թէ՛ մարգարէն և թէ քահանան իրենց չգիտցած երկիրը կը պտըտին ։
19 Միթէ Ցուդան բոլորովին մերժեցիր . քու հոգիդ Սիօնէն զզուեցաւ . մեզի ինչո՞ւ այնպէս զարկիր՝ որ մեզի բժշկութիւն չկայ . Խնդք խաղաղութեան սպասեցինք , բայց բարութիւն չկար . բժշկութեան ժամանակին ահ-ահեղութիւն , բայց ահա
20 խռովութիւն էր ։ Մենք ով Տէր՝ մեր ամբարշտութիւնը և մեր հայրերուն անօրէնութիւնը դիտենք . վասն զի քեզի դէմ մեղք
21 գործեցինք ։ Քու անուանդ համար չարչարէ մի զզուիր . քու փառացդ աթոռը մի անարգեր . մեզի հետ ըրած ուխտդ յիշէ , և անիկայ
22 մի՛ աւրեր ։ Միթէ հեթանոսաց ունայնութիւններուն մէջ անձրև տուող մը կայ , կամ թէ անձրևը երկինքները կու տան . չէ՞ որ ան էյ ընող դուն ես , ով մեր Տէր Աստուածը . ուստի քեզի կը յուսանք . վասն զի ասոնց ամէնը դուն ըրիր ։

Իրր 601 Եզեկ. ԺԴ. 14 , ՃԺ ։ Բ Եւ. Լ. 11 , 12 ։ Սաղ. ՂԹ. 6 ։ Ե ա Թագ. է. 9 ։

ԳԼ. ԺԵ

1 Հրէաներուն բոլորովին մերժուիլը , ու անոնց վրայ գալու դատաստանները ։ 10 Երեմիա անոնց աւելութեանը համար գանգատ ընելով՝ իրեն համար խոստմունք մը կ'ընդունի , 12 ու անոնց համար սպառնալիք մը ։ 15 Ինքը ազօթք կ'ընէ , 19 ու բարի խոստմունք մը ձեռք կը բերէ ։

1 Ետ Տէրը ինծի ըսաւ . Թէև Մովսէս ու Սամուէլ իմ առջեւս կայնելու ըլլային , աս ժողովուրդին վրայ հաճութիւն պիտի չունենայի . զանոնք առջեւէս վռնտէ , ու թող ելլեն ։ Եւ թէ որ քեզի՝ Ո՞ւր ելլենք ըսեն , ան անոնց ըսես . Տէրը այսպէս կ'ըսէ . Ո՝ մահուան համար՝ ո՝ մահուան , ու սուրի համար՝ սուրի , և սովի համար՝ սովի , ու գերութեան համար՝ գերութեան ։
3 Եւ անոնց վրայ չորս տեսակ պատիժ պիտի խրկեմ՝ կ'ըսէ Տէրը . սպաննելու համար՝ սուրը , ու պատռելու համար շուները , և ուտելու ու ապականելու համար՝ երկինքի թռչունները ու երկրի գազանները ։
4 Եւ զանոնք նեղութիւն կրելու համար երկրիս բոլոր թագաւորութիւններուն ձեռքը պիտի մատնեմ , Ցուդայի թագաւորին Եզեկիայի որդւոյն Մանասէին պատճառաւ՝ անոր Երուսաղէմի մէջ
5 ըրած բաներուն համար ։ Վասն զի ո՞վ քեզի պիտի խնայէ՝ ով Երուսաղէմ , ու ո՞վ քեզի ցաւակից պիտի ըլլայ , և քու որպիսութիւնդ հարցընելու համար ո՞վ պիտի
6 դառնայ ։ Դուն իս թողուցիր՝ կ'ըսէ Տէրը , — Էհետ դացիր . ես ալ իմ ձեռքս քու վրադ պիտի երկընցընեմ , և քեզ պիտի կորսընդունիմ . Ես դթութիւն ընելէն յոգնած
7 եցայ ։ Ու զանոնք երկրին դռներուն մէջը պիտի հոսեմ հերի՝ որբ հեծանոցով . իմ ժողովուրդս անգաւակ պիտի թողում և պիտի կորսընդունիմ . վասն զի Անոնք իրենց ճամբաներէն չդարձան ։
8 Անոնց որբևարիները ծովուն աւազէն աւելի շատցան իմ առջեւս . անոնց վրայ — երիտասարդին մօրը վրայ կէս օրուան ատենը աւարառու բերի . անոր վրայ յանկարծ արհա-
9 ւիրք ու սոսկում ձգեցի ։ Եօթը ծնանողը նուաղեցաւ . իր հոգին աւանդեց . Իր ցորեկուան ատենը անոր արեւը մնաւ . անիկայ ամչցաւ ու պատկառեցաւ . և անոնց մնացորդը՝ իրենց թշնամիացը առջեւը՝ սուրի պիտի մատնեմ , կ'ըսէ Տէրը ։
10 Վայ ինծի՝ ով մայրս , որ զիս բոլոր երկրին համար կռիւի մարդ ու վէճի մարդ ծնար . ոչ ես շահով ատակ տուի , ոչ ալ ինծի շահով ատակ տուին . — Ամէնը ինծի
11 անէծք կու տան ։ Տէրը կ'ըսէ որ՝ Անշուշտ քեզ պիտի ազատեմ , ու երջանիկ պիտի ըլլաս . և անշուշտ նեղութեան ու տառապանաց ժամանակը՝ թշնամիդ քեզի աղաչել
12 պիտի տամ ։ Միթէ երկաթը՝

Ն · ՔՐ · ՂԲ · Իրր 601 Բ Օր · Իբ · 26 , Գլ. է · 33 ։ Ե Օր · Իբ · 25 ։ Գլ · Իդ · 9 ։ Եզեկ · Իդ · 46 ։ Ը դ Թագ · Իա · 11 , ՃԺ ։ Իդ · 26 ։ Իդ · 3 , 4 ։ Ը Ես · ԾԱ · 19 ։ Ա Գլ · Բ · 13 ։ Ե Գլ · է · 24 ։ Ա Ովս · Ժգ · 14 ։ Ե Ես · Թ · 13 ։ Գլ · է · 3 ։ Ա Մով · գ · 10 , 11 ։ * Կ՛ — անոնց երիտասարդներուն

Ա Թագ · Բ · 5 ։ Ա Մով · Բ · 9 ։ Հ Ցար · գ · 1 , ՃԺ , Գլ · Ի · 14 ։ Ե Գլ · ԼԹ · 11 , 12 ։ Խ · 4 , 5 ։

Ն·Բ·ԳԲ· Իրր 601

Հիւսիսի երկաթը ու պղինձը կը
13 կոտրէ՞։ Քու բոլոր մեղքերուդ
համար՝ բոլոր սահմաններուդ մէջ՝
քու ստացուածքդ ու գանձերդ
ձրիապէս յափշտակութեան պի-
14 տի մատնեմ. Եւ *ձեզ+ քու
թշնամիներուդ հետ՝ քու չգիտցած
երկիրդ պիտի փոխադրեմ՝՝. վասն
զի իմ բարկութենէս կրակ վա-
ռեցաւ, որ ձեր վրայ պիտի բոր-
բոքի։

15 Ով Տէր՝ դուն գիտես. զիս յիշէ, և ինծի այցելութիւն բրէ, ու իմ հալածիչներէս իմ վրէժս առ. քու երկայնմտութեանդ համար զիս մի՛ վերցներ. գիտցիր որ քեզի համար նախա-
16 տինք կրեցի։ Ես քու խօսքերդ գտածիս պէս՝ ուրախութիւն եղաւ. և ձեռքիդ պատճառովը առանձին նստայ. վասն զի ըարկութիւնովդ զիս լեցուցիր։
17 Ինչո՞ւ ինծի միանչենաւոր, և իմ վէրքս անդարմանելի է. անիկայ բժշկուիլ չուզեր. դուն ինծի բոլորովին ապատ՝՝ անհաւատալիմ ջուրերու պէս պիտի ըլլաս։

19 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ. Թէ որ դառնաս, ես քեզ ետ պիտի բերեմ. զի՛ս առջև պիտի կայնիս. և թէ որ պատուականը անարգէն որոշես, իմ բերնիս պէս պիտի ըլլաս. անոնք քեզի դառնան, բայց դուն անոնց մի՛
20 դառնար։ Ու քեզ ասոր ժողովուրդին՝ պղնձէ ամուր պարիսպի պէս պիտի ընեմ. և քեզի հետ պիտի պատերազմին, բայց պիտի չկրնան քեզ յաղթել. վասն զի ես քեզի հետ եմ՝ քեզ փրկելու ու ազա-
21 տելու համար, կ'ըսէ Տէրը։ Եւ քեզ չարերուն ձեռքէն պիտի ա-զատեմ, ու բռնաւորներուն ձեռքէն պիտի փրկեմ։

Ե Ղ · Ժ Զ

1 Մարգարէն իր ամբաստանութենէ հրաժարելուն, և սուտի ու կոչունքի տուներ չերթալուն օրինակովը՝ Հրէից կործանումը կը նախատեսնէ, 10 իրենց Հայրերէն աւելի չարութիւն բնելնուն համար։ 14 Անոնց գերեզմանութիւնը՝ իրենց Եկիպտոսէն ազատուելէն աւելի զարմանալի գործ մը պիտի ըլլար։ 16 Ասուած կրկին հաստատում պիտի ընէր իրենց կատարեալ դարձին համար։

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ, ը-
2 սելով. Քեզի կնիկ մի՛ առներ, ու աս տեղս տղաքներ ու աղջիկ-
3 ներ չունենաս. Քանզի աս տեղս ծնած տղաքներուն ու աղջիկներուն համար, և աս երկրիս մէջ զանոնք ծնանող մայրերուն համար, ու զանոնք ծնանող հայրերուն համար, Տէրը այսպէս կ'ըսէ.
4 Անոնք մահաւիթ հիւանդութիւններով պիտի մեռնին. անոնց համար սուգ պիտի չբռնուի, ու անոնք պիտի չթաղուին. երկրի երեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան, և սրով ու սովով պիտի հատնին. և անոնց դիերը երկնքի թռչուններուն, ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան։
5 Քանզի Տէրը այսպէս կ'ըսէ. Սուգի տուն մի՛ մտներ, ու լալու մի՛ երթար, և անոնց համար մի՛ ողբար. վասն զի իմ խաղաղութիւնս ասոր ժողովուրդէն վերցուցի՝ կ'ըսէ Տէրը, ողորմութիւնը ու գթու-
6 թիւնը վերցուցի։ Ու աս երկրիս մէջ մեծերը ու պզտիկները պիտի մեռնին, և պիտի չթաղուին. ու ո՛անոնց համար սուգ պիտի չբռնեն, և իրենց մարմիններուն վրայ կրծրածներ պիտի չբռնեն, ու անոնց համար հիրենց մազերը պիտի չը-
7 փետեն։ Եւ մեռելի մը վրայով մխիթարութիւն տալու համար՝ սուգի հաց պիտի չբաժնեն, ու անոնց հայրերուն ու մայրերուն համար՝ մխիթարութեան բաժակ
8 կը անոնց պիտի չխմցընեն։ Նաև կոչունքի տուն մի՛ մտներ, որ անոնց հետը նստիս ուտելու ու խմե-
9 լու համար. Վասն զի զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը այսպէս կ'ըսէ. Ահա ես աս տեղէն՝ ձեր աչքին առջևէն ու ձեր օրերուն մէջը՝ ցնծութեան ձայնը և ուրախութեան ձայնը, փեսային ձայնը, ու հարսին ձայնը պիտի դադրեցը-
10 նեմ։ Ու երբոր աս բոլոր խօսքերը ասոնց ժողովուրդին զրուցես, և անոնք քեզի ըսեն. Ինչո՞ւ համար Տէրը բոլոր աս մեծ չարիքը մեր վրայ խօսեցաւ, ու ի՞նչ է մեր անօրէնութիւնը ու մեր մեղքը որ մեր Տէր Աստուծոյն դէմ գործեր ենք,
11 Ան ատեներ անոնց ըսես. Վասն զի ձեր հայրերը զիս թողուցին՝ կ'ըսէ Տէրը, և ուրիշ աստուածներու ետևէ գացին, ու անոնց ծառայութիւն ըրին, և անոնց երկրպագութիւն ըրին. զիս թողուցին, ու իմ
12 օրէնքս չպահեցին։ Եւ դուք ձեր հայրերէն աւելի չարութիւն ըրիք. և ահա ինծի մտիկ չընելով, իւրաքանչիւրդ ձեզմէ ամէն մէկը իր չար սրտին կամ-
13 քերուն ետևէն գնաց. Ես ալ ասկէ երկրիս երեսէն ձեզ պիտի նետեմ՝ այնանկ երկիր մը՝ որ չէք

Ն·Բ·ԳԲ· Իրր 601

– Գ Լ · Ժ ե · 2։
Բ Գ Լ · Իր · 18, 19 · Ի ե · 33։
Գ Սաղ · Ճգ · 10։ Գ Լ · Բ · 2։ Թ · 22։
Դ Սաղ · Հթ · 2։ Գ Լ · է · 33։ Լգ · 20։
Ե Եզեկ · Իդ · 17, 22, 23։
Զ Գ Լ · Իր · 18։
Է Գ Ձ · Ժթ · 28։ Բ Օր · Ժգ · 1։ Գ Լ · Ի ա · 5։ Ի է · 5։
Ը Ես · Իր · 12։ Գ Լ · է · 29։
Թ Ով · Թ · 4։ Տ է ս Բ Օր · Իշ · 14։ Ց ա · Իր · 11։
Ժ Ա ա ա կ · Լ ա · 6, 7։
Ի Ես · Իդ · 7, 8։ Գ Լ · է · 34։ Իե · 10։ Եզեկ · Իշ · 13։ Ով · Բ · 11։ Ց ա յտ · Ժբ · 23։

Ն·Բ·ԳԲ· Իրր 601

Ի Սաղ · Խգ · 12։ Գ Լ · Ժէ · 3։
* Կ՚ասի՝ քու թշնամիներդ քու չգիտցած երկրիդ պիտի բերեմ.
Ա Գ Լ · Ժգ · 13։ Ժէ · 4։
Բ Բ Օր · Լբ · 22։
Գ Գ Լ · Ժբ · 3։
Դ Գ Լ · Ժա · 20։ Ի · 12։
Ե Սաղ · Կթ · 7։
Զ Եզեկ · գ · 1, 3։ Ց ա յտ · Ժ · 9, 10։
Է Ց ա բ · Իգ · 12։ Սաղ · ճԺթ · 72, 111։
Ը Սաղ · ա · 1։ Իզ · 4, 5։
Թ Գ Լ · Լ · 15։
Ժ Ց ա բ · զ · 15, ճ։
Ի Ջ ա բ · գ · 7։
Լ Հ ա ր 1։
Ի Եզեկ · Իբ · 26։ Խգ · 23։
Բ Գ Լ · ա · 18։ զ · 27։
Գ Գ Լ · Ի · 11։

Գ Լ · Ժ Զ

1 Ու Տէրոջը խօսքը ինծի եղաւ, ը-
2 սելով. Քեզի կնիկ մի՛ առներ, ու աս տեղս տղաքներ ու աղջիկ-

Ն · Բ · ԳԲ · Իբր 601

ճանչնար «Է դուք՝ ոչ ալ ձեր հայրերը . ու հոն ցորեկ ու գիշեր օտար աստուածներու ծառայութիւն պիտի ընէք . ինչու որ ձեզի ողորմութիւն պիտի չընեմ ։

Ա Ես · Խդ · 18 · Գ Իգ · 7 · 8 ·

14 Ահա՛ օրեր կու գան՝ կ'ըսէ Տէրը , որ ալ պիտի չըսուի թէ՝ Կենդանի է Տէրը՝ որ Իսրայէլի որդիքը Եգիպտոսի երկրէն

15 հանեց . Հապա՝ Կենդանի է Տէրը՝ որ Իսրայէլի որդիքը հանեց հիւսիսի երկրէն , և ան բոլոր երկիրներէն՝ ուր որ զանոնք քշեր էր . ու զանոնք պիտի դարձընեմ իրենց երկիրը՝ որն որ իրենց հայրերուն տուի ։

Գ Իե · իգ · 6 · Ը · 3 · Լ · 37 ·

16 Ահա ես շատ Ձկնորսներ բերել պիտի տամ՝ կ'ըսէ Տէրը , ու զանոնք պիտի որսան . և անկէ ետքը շատ որսորդներ բերել պիտի տամ , ու զանոնք ամէն լեռան վրայէն , և ամէն բլուրի վրայէն , ու վէմերուն

Յ Ես · Ա Մով · գ · 2 · Ա Մր · ա · 15 ·

17 ծակերէն պիտի որսան ։ Վասն զի իմ աչքերս անոնց ամէն ճամբաներուն վրայ է . իմ երեսէս ծածկուած չեն , ու անոնց անօրէնութիւնը իմ աչքերուս առջևէն պա-

Ա Յոր · Լդ · 21 · Ա Սամ · ե · 21 · Ժե · 3 · Գ Լ · Լր · 19 ·

18 հուած չէ ։ Եւ նախ անոնց անօրէնութիւնը ու մեղքին Ե կրկնապատիկ հատուցում պիտի ընեմ , ո՛ր ովհետև Ե իմ երկիրս պղծեցին , Ե իրենց գարշութիւններուն ու պղծութիւններուն դիւերովը իմ ժառանգութիւնս լեցուցին ։

Ա Ես · Խ · 2 · Գ Լ · Ժե · 18 ·

Ե Եղկ · Խգ · 7 · 9 ·

19 Ո՛վ Տէր՝ իմ զօրութիւնս և իմ բերդս , ու Ե նեղութեան օրը իմ ապաստանարանս , երկրին ծայրերէն ազգերը քեզի պիտի գան , ու պիտի ըսեն . Իրաւցընէ մեր հայրերը՝ սուտութիւն , ունայնութիւն ու Ե անօգուտ բաներ ժառանգեցին ։

Ա Սաղ · Ժբ · 2 ·

Ե Գլ · Ժե · 17 ·

Դ Ես · Խդ · 10 · Գ Լ · բ · 11 · ժ · 5 ·

20 Մի՞թէ մարդ իրեն աստուածներ պիտի ընէ . ու անոնք Ե աստուածներ

Ե Ես · Լե · 19 · Գ Լ · բ · 11 · Գ Սաղ · դ · 8 ·

21 չեն ։ Անոր համար ահա ես անոնց աս անգամ պիտի դիտցընեմ . իմ ձեռքս ու իմ զօրութիւնս պիտի դիտցընեմ անոնց . և պիտի դիտնան որ Ի՞մ անունս Եհովայ է ։

Ե Եզ · Ժե · 3 · Սաղ · Ճգ · 18 · Գ Լ · Լդ · 2 · Ամվ · ե · 8 ·

Գ Լ · ժ Է

1 Յուդային գերութիւնը իր մեղքին համար ։ 5 Մարդու ապաւինիլը կ'անիծուի , 7 իսկ Աստուծոյ ապաւինիլը կ'օրհնուի ։ 9 Խաբեբայ սիրտը չկրնար զԱստուած խաբել ։ 12 Աստուծոյ փրկութիւնը ։ 15 Մարգարէն գանգատ կ'ընէ իր մարգարէութիւնը ծաղր ընդունելուն համար . 19 ու կը խրկուի որ շաբաթը սուրբ պահելուն ուխտը նորոգէ ։

Ե Ցոր · ԺԹ · 24 ·

Բ Առակ · գ · 3 · Բ Կոր · գ · 3 ·

1 Յուդային մեղքը Ե երկաթի գրիչով , ու անդամանդի ծայրով գրուած է . Բ անոնց սրտին տախտակին վրայ , և անոնց սեղաններուն եղջիւրներուն վրայ փորուած

2 է . Որպէս զի անոնց տղաքը միտքերնին բերեն անոնց սեղանները ու անոնց Է Աստարովթի կուռքերը , ո՛ր-

Ն · Բ · ԳԲ · Իբր 601

Է Դատ · գ · 7 · Բ Մն · իդ · 18 · Լգ · 3 · 19 · Ես · ա · 29 · Ժե · 8 · Գ Լ · բ · 20 ·

* Կ՚ը՝ լեռնաբնակ

Բ Գլ · Ժե · 13 ·

Բ Գլ · Ժգ · 13 ·

նք կանանչ ծառերուն քովը բարձր բլուրներուն վրայ Ը զոհեր էին ։

Ը Ես · լ · 1 · 2 · լ · 1 ·

3 Ո՛վ *իմ լեռնա՛ Ը դաշտի մէջ Ես , Բ քու ստացուածքդ , քու բոլոր գանձերդ , Ը բոլոր սահմաններուդ մէջը մեղքի համար Ը զոհեր տեղերդ յափշտակութեան պիտի

Ը Տես Ես · լ · 3 ·

4 մատնեմ ։ Եւ դուն ալ պիտի զրկուիս քու ժառանգութենէդ՝ որ քեզի տուի . և Ե քու չգիտցած երկրիդ մէջը քու թշնամիներուդ ծառայ պիտի ընեմ քեզ . վասն զի Ը իմ բարկութեանս մէջ կրակ վառեցիք , Ը որ յաւիտեան պիտի բորբոքի ։

Ը Գլ · Ժե · 14 ·

5 Տէրը այսպէս կ'ըսէ . Ե Անիծեալ ըլլայ ան մարդը՝ որ մարդու կ'ապաւինի , ու Ը մարմինը իրեն բազուկ կ'ընէ , և իր սիրտը Տէրոջմէ

Ե Ես · լ · 1 · Ը · լ · 1 ·

6 կը խոտորի ։ Անիկայ Բ անապատի մէջ թափառողի պէս պիտի ըլլայ . ու Ե երբոր աղէկութիւն գայ , պիտի չտեսնէ . և անապատին այրուած տեղութիւնքը՝ Ը աղի ու անբնակ երկրի

Բ Գլ · Խբ · 6 ·

Ե Ցոր · ի · 17 ·

7 մէջ պիտի բնակի ։ Ը Օրհնեալ ըլլայ ան մարդը՝ որ Տէրոջը կ'ապաւինի , ու անոր յոյսը Տէրն է ։

Ը Ես · Խ · 5 · Առակ · Ժգ · 20 · Ես · լ · 18 ·

8 Ան Ե ջուրերու քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ , որ իր արմատները դետի քով երկրնդրելով՝ տաքութեան գալը չտեսներ . հապա անոր տերևը կանանչ կ'ըլլայ , ու երաշտութեան տարին նեղութիւն չքաշէր , ու պտուղ տալէն ետ չմնար ։

Ե Ա Թագ · Ժգ · 7 · Ա Մն · իբ · 9 · Սաղ · է · 9 · Ճղ · 23 · 24 · Առակ · Ժէ · 3 · Գլ · Ժա · 20 · ի · 12 · Հով · բ · 27 · Յայտ · բ · 23 ·

9 Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է . զանիկայ

Ի Սաղ · կբ · 12 · Գլ · Լբ · 19 · Հով · բ · 6 ·

10 ո՛վ կրնայ գիտնալ ։ Ես Տէրս Ե սիրտը կը քննեմ , երիկամունքները կը փորձեմ , Ի որ մարդուն իր ճամբաներուն համեմատ , ու իր գործքերուն պտուղին համեմատ հատուցում ընեմ ։

Հ Սաղ · ծե · 23 ·

11 Անիրաւութեամբ հարստութիւն դիզողը՝ իր չածած հաւկիթներով թուխսի նստող կաքաւի պէս է . զանիկայ Հ իր օրերուն կէսին պիտի թողու , ու վերջը Ն անմիտ պիտի ըլլայ ։

Յ Ղս · ժբ · 20 ·

Ը Գլ · Ժգ · 8 ·

12 Մեր սրբարանին տեղը՝ Ո՛վ սկզբանէ փառաւոր ու բարձր աթոռ է ։

Ք Սաղ · Հդ · 27 · Ես · ա · 28 ·

13 Ո՛վ Տէր՝ Իսրայէլին յոյսը , ամէն անոնք որ քեզ կը թողուն՝ պիտի ամչնան . Ք Հեդ Հեռացողները՝ Ո՛ երկրի հողին վրայ պիտի գրուին . վասն զի Տէրը՝ Ո՛ կենաց Ջուրին աղբիւրը թողուցին ։

Ք Ես · Ա Մ · 11 ·

Յ Գլ · բ · 13 ·

Ն Բ Օր · Ժ · 21 · Սաղ · ճԺ · 1 · ճԽբ · 14 ·

14 Ո՛վ Տէր՝ զիս բժշկէ , ու պիտի բժշկուիմ . զիս փրկէ , ու պիտի փրկուիմ . վասն զի Ն իմ պարծանքս

Ը Ես · ե · 19 · Եզեկ · Ժբ · 22 · Ամով · ե · 18 · Բ Պետ · գ · 4 ·

15 դուն ես ։ Ահա անոնք ինծի կ'ըսեն . Ը Տէրոջը խօսքը ո՞ւր է . հիմա

16 Թող դայ ։ Բայց ես *քու եւսեւէդ՝ հովիւը ըլլալէն չփախայ , ու չարիքի օրուան չցանկացայ , ինչո՞ւ որ դուն գիտես . իմ շրթունքներէս ելածը 17 քու առջեւդ էր ։ Ինծի արհաւիրք մի՛ ըլլար . Նեղութեան օրը իմ ա- 18 պաւէնս դուն ես ։ Ջիս հալածողները թող ամչնան , ու ես չամչնամ . թող անոնք զարհուրին , ու ես չզարհուրիմ . անոնց վրայ թշուառութեան օրը բեր , և *զանոնք կրկին կոտորածով կատրէ ։

19 Տէրը այսպէս ըսաւ ինծի . Գնա , ու Ժողովուրդին որդւոցը դուռը՝ ուսկից որ Յուդայի թագաւորները կը մտնեն ու կ'ելլեն , ու Երուսա- 20 ղէմին ամէն դռները կայնէ . Եւ անոնց ըսէ . *Ով Յուդայի թագաւորներ , ու բոլոր Յուդա , ու Երուսաղէմի բոլոր բնակիչներ՝ որ աս դռներէն կը մտնէք , Տէրոջը 21 խօսքը մտիկ ըրէք . Տէրը այսպէս կ'ըսէ . Հոգ տարէք անձերուն համար , թէ շաբաթ օրը բեռ մի՛ վերցընէք , ու Երուսաղէմի 22 դռներէն ներս մի՛ բերէք . Եւ շաբաթ օրը ձեր տուներէն դուրս բեռ մի՛ հանէք , ու բնաւ գործ մը չընէք , հապա շաբաթ օրը սուրբ պահեցէք , ինչպէս որ *ձեր հայրերուն պատուիրեցի . 23 Բայց անոնք մտիկ չըրին , ու ականջնին չդնեցին , հապա իրենց պարանոցը խոստացուցին որ մտիկ չընեն , ու խրատ 24 չընդունին ։ Իսկ թէ որ ուշադրութեամբ ինծի մտիկ ընէք , կ'ըսէ Տէրը , որ շաբաթ օրը աս քաղաքին դռներէն ներս բեռ չբերէք , ու շաբաթ օրը սուրբ պահէք , բնաւ 25 անոր մէջ գործ մը չընելով , *Ան ատեն Դաւիթի աթոռին վրայ նստող թագաւորներ ու իշխաններ՝ կառքերու ու ձիերու վրայ հեծած՝ աս քաղաքին դռներէն պիտի մտնեն , իրենք և իրենց իշխանները՝ Յուդայի մարդիկները , ու Երուսաղէմի բնակիչները . ու աս քաղաքը 26 յաւիտեան պիտի մնայ ։ Եւ Յուդայի քաղաքներէն ու *Երուսաղէմի շրջակայ տեղերէն , ու Բենիամինի երկրէն , և *դաշտերէն , ու լեռներէն , ու հարաւէն պիտի գան , և ողջակէզ , ու զոհ , և հացի ընծայ , ու կնդրուկ պիտի բերեն , և Տէրոջը տունը *շնորհակալութեան 27 ընծաներ պիտի բերեն ։ Բայց թէ որ ինծի մտիկ չընէք , որ շաբաթ օրը սուրբ պահէք , ու շաբաթ օրը բեռ չբերցընէք , ու Երուսաղէմի դռներէն ներս չմտնէք , *ես ալ անոր դռներուն մէջ կրակ պիտի բռնկցընեմ . *ու Երուսաղէմին պալատները պիտի ուտէ , ու պիտի չմարի ։

ԳԼ . ԺԸ

1 Բրուտի մը օրինակով՝ մարգարէն կը ցուցնէ Աստուծոյ բացարձակ իշխանութիւնը ազգերը կառավարելու մէջ ։ 11 Յուդային՝ դատաստաններու սպառնալիք կ'ըլլայ՝ իր տարօրինակ ապստամբութեանը համար ։ 18 Երեմիա իրեն դաւաճանութիւն ընողներուն դէմ կ'աղօթէ ։

1 Տէրոջը կողմանէ Երեմիային եղած 2 խօսքն է , որ բաւ . Ելիր , ու բրուտին տունը իջիր . և հոն քե- 3 զի իմ խօսքերս լսել տամ ։ Ու ես բրուտին տունը իջայ . և ահա անի- 4 կայ ճախարակով կը գործէր ։ Ու կաւէ շինած ամանը՝ բրուտին ձեռքին մէջը աւրուեցաւ . և զանիկայ նորէն ուրիշ աման մը շինեց՝ ինչպէս որ բրուտին համճոյ եղաւ , որ բ- 5 նէ ։ Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ 6 ըսելով . Միթէ ձեզի՝ *աս բրուտին ը-ն-ծին պէս ընելու կարող չե՞մ՝ ով Իսրայէլի տունը , կ'ըսէ Տէրը . ահա *ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ՝ դուք իմ ձեռքիս մէջը այնպէս էք , ով Իսրայէլի 7 տունը ։ Երբոր մէկ ազգի մը , կամ թագաւորութեան մը համար բսելու ըլլամ , թէ *պիտի քակեմ , պիտի փլցընեմ ու պիտի կորսընցնեմ 8 զընեմ , *թէ որ ան ազգը՝ որուն վրայով խօսեցայ , իր չարութենէն դառնայ , *ես ալ պիտի զղջամ ան չարիքին համար՝ որ անոր ընելու 9 մտածեր էի ։ Իսկ երբոր մէկ ազգի մը , կամ թագաւորութեան մը համար բսելու ըլլամ , թէ պիտի շինեմ , ու պիտի տնկեմ , թէ որ 10 անիկայ իմ խօսքս մտիկ չընելով՝ իմ առջեւս չարութիւն ընէ , ես ալ պիտի զղջամ ան բարիքին համար՝ որ բսեր էի՝ թէ անոր պիտի ընեմ ։ 11 Եւ հիմա Յուդայի մարդիկներուն՝ ու Երուսաղէմի բնակիչներուն խօսէ՝ ու ըսէ . Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա ես ձեզի համար չարիք կը պատրաստեմ , ու ձեզի համար խորհուրդ մը կը խորհիմ . Հիմա ամէն մէկերնիդ ձեր չար ճամբաներէն դարձէք , և ձեր ճամբաները 12 ու ձեր գործքերը ուղղեցէք ։ Բայց անոնք կ'ըսեն . *Ցոյս չկայ . վասն զի մենք մեր խորհուրդներուն ետեւէն պիտի երթանք , ու ամէն մէկերնիս՝ մեր չար սրտին կամակորութեանը պէս պիտի ընենք ։ 13 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ . Հիմա ազգերուն մէջ հարցուցէք . ասանկ բան *ո՞վ լսեր է , Իսրայէլին կոյսը *խիստ սոսկալի 14 բան գրաւ ։ Միթէ Լիբանանի ձիւնը՝ *արտին վէմէն՝ կը պակսի՞ ,

ԳԼ . ԺԸ

1 Տէրոջը կողմանէ Երեմիային եղած 2 խօսքն է , որ բաւ . Ելիր , ու բրուտին տունը իջիր . և հոն քե- 3 զի իմ խօսքերս լսել տամ ։ Ու ես բրուտին տունը իջայ . և ահա անի- 4 կայ ճախարակով կը գործէր ։ Ու կաւէ շինած ամանը՝ բրուտին ձեռքին մէջը աւրուեցաւ . և զանիկայ նորէն ուրիշ աման մը շինեց՝ ինչպէս որ բրուտին համճոյ եղաւ , որ բ- 5 նէ ։ Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ 6 ըսելով . Միթէ ձեզի՝ *աս բրուտին ը-ն-ծին պէս ընելու կարող չե՞մ՝ ով Իսրայէլի տունը , կ'ըսէ Տէրը . ահա *ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ՝ դուք իմ ձեռքիս մէջը այնպէս էք , ով Իսրայէլի 7 տունը ։ Երբոր մէկ ազգի մը , կամ թագաւորութեան մը համար բսելու ըլլամ , թէ *պիտի քակեմ , պիտի փլցընեմ ու պիտի կորսընցնեմ 8 զընեմ , *թէ որ ան ազգը՝ որուն վրայով խօսեցայ , իր չարութենէն դառնայ , *ես ալ պիտի զղջամ ան չարիքին համար՝ որ անոր ընելու 9 մտածեր էի ։ Իսկ երբոր մէկ ազգի մը , կամ թագաւորութեան մը համար բսելու ըլլամ , թէ պիտի շինեմ , ու պիտի տնկեմ , թէ որ 10 անիկայ իմ խօսքս մտիկ չընելով՝ իմ առջեւս չարութիւն ընէ , ես ալ պիտի զղջամ ան բարիքին համար՝ որ բսեր էի՝ թէ անոր պիտի ընեմ ։ 11 Եւ հիմա Յուդայի մարդիկներուն՝ ու Երուսաղէմի բնակիչներուն խօսէ՝ ու ըսէ . Տէրը այսպէս կ'ըսէ . Ահա ես ձեզի համար չարիք կը պատրաստեմ , ու ձեզի համար խորհուրդ մը կը խորհիմ . Հիմա ամէն մէկերնիդ ձեր չար ճամբաներէն դարձէք , և ձեր ճամբաները 12 ու ձեր գործքերը ուղղեցէք ։ Բայց անոնք կ'ըսեն . *Ցոյս չկայ . վասն զի մենք մեր խորհուրդներուն ետեւէն պիտի երթանք , ու ամէն մէկերնիս՝ մեր չար սրտին կամակորութեանը պէս պիտի ընենք ։ 13 Անոր համար Տէրը այսպէս կ'ըսէ . Հիմա ազգերուն մէջ հարցուցէք . ասանկ բան *ո՞վ լսեր է , Իսրայէլին կոյսը *խիստ սոսկալի 14 բան գրաւ ։ Միթէ Լիբանանի ձիւնը՝ *արտին վէմէն՝ կը պակսի՞ ,

կամ հեռուէն վազող ցուրտ ջու-
15 րերը կը ցամքին ։ Բայց իմ ժողո-
վուրդս ՚զիս մոռցաւ . ի՛ւնայնու-
թիւններու խունկ ծխեցին . ու
զանոնք իրենց քալած Ւհին ճամ-
բաներուն մէջը սահեցուցին , որ
՚՚րէլ չաւիղներու մէջ՝ չշիտկուած
16 ճամբայի մէջ քալեն , Որ իրենց
երկիրը Ի աւերակ , ու յաւիտեան
Ի սուլելու Ենթ՚՚ընեն . անկէ ա-
մէն անցնողը պիտի հիանայ , ու
17 գլուխը պիտի շարժէ ։ Զանոնք
թշնամիին առջեւը պիտի ցրուեմ
հիւր թէ արեւելեան հովով . անոնց
թշուառութեան օրը՝ ՚անոնց կրա-
նակ պիտի ցուցընեմ , և ոչ թէ
երես ։
18 Ու ըսին . Ւեկէք՝ երեմիային
դէմ՝ չարքներ խորհինք . ՚վասն զի
քահանայէն՝ օրէնք , ու իմաստու-
նէն՝ խորհուրդ , և մարգարէէն
խօսք պիտի չկորսուի . եկէք՝ զա-
նիկայ լեզուով զարնենք , ու անոր
ամէն խօսքերուն ականջ չտանք ։
19 Ո՛վ Ցէր՝ ինծի ականջ տուր , ու
ինծի հետ վէճ ընողներուն ձայնը
20 լսէ ։ ՚Մի՞թէ աղէկութեան փո-
խարէն՝ չարիք կը հատուցուի՞ ։
Վասն զի ՚անոնք իմ անձիս համար
փոս փորեցին . յիշէ՝ որ քու առ-
ջեւդ կայնեցայ , որ անոնց համար
բարեխօսութիւն ընեմ , ու քու
բարկութիւնդ անոնցմէ դարձընեմ ։
21 Անոր համար ՚անոնց տղաքները
սովի մատնէ , ու զանոնք սուրին
ձեռքը յանձնէ . անոնց կիները
անզաւակ , ու որբևաբի ըլլան , և
երիկները մահուամբ կոտրուին , ՚՚
երիտասարդները պատերազմի մէջ
22 սրով զարնուին ։ Երբոր անոնց
վրայ յանկարծակի ՚՚գ՚՚ուղ
գունդեր բերես , անոնց տուներէն
աղաղակ լսուի . ինչու որ Ւզիս
բռնելու համար փոս փորեցին , և
իմ ոտքերուս համար ծածուկ որո-
23 դայթներ լարեցին ։ Ու դուն ո՛վ
Ցէր՝ գիտես անոնց բոլոր խորհուր-
դը ինծի դէմ՝ Ի մեռցընելու հա-
մար . ՚անոնց անօրէնութիւնը մի՛
քաւեր , և անոնց մեղքը քու առ-
ջեւդ մի՛ ջնջեր . հապա անոնք քու
առջեւդ կործանին . քու բարկու-
թեանդ առեն անոնց ՚՚ըլ՚՚ընե՛ն
ըրէ ։

ԳԼ . ԺԹ

1—15 Բրուտի ամանի մը կոտրելուն օրինակովը կը ցուցուի Երեից կործանումը իրենց մեղքերուն համար ։

1 Ցէրը այսպէս ըսաւ . Գնա՛ , բրու-
տի ՚՚ե՛՚՚ն հողէ կուժ մը ծախու
առ , ու ժողովուրդին ծերերէն
և քահանաներուն ծերերէն հե՛՚՚դ

2 ՚՚՚ . Եւ խեցիներու դրանը դիմա-
ցը եղող ՚՚Ենոմի որդւոյն ձորը
ելլիր , ու հոն քարոզէ ան խօսքերը
3 որ քեզի պիտի զրուցեմ . Ի՚՚ ըսէ .
Ո՛վ ցուդայի թագաւորներ , ու
Երուսաղէմի բնակիչներ՝ ցէրոջը
խօսքը մտիկ ըրէք . Զօրաց ցէրը՝
Իսրայէլին Աստուածը այսպէս կ՚ը-
սէ . Ահա ես տեղւոյս վրայ ա-
նանկ չարիք պիտի բերեմ , որ զա-
նիկայ ամէն լսողին Ի ականջները
4 պիտի խօսին . վասն զի ՚անոնք
զիս թողուցին , ու այս տեղը ինծմէ
օտարացուցին , և հոս խունկ ծը-
խեցին ուրիշ աստուածներու՝ որ
ոչ իրենք , և ոչ իրենց հայրերը ,
ոչ ալ ցուդայի թագաւորները
ճանչցեր էին . ու այս տեղը Ի՚՚ան-
5 մեզ արիւնով լեցուցին . Եւ Ւհա-
հաղին բարձր տեղուանքը շինեցին ,
որ իրենց տղաքները կրակով այրեն՝
Բահաղին ողջակէզ ընեն , Ի որն որ
ես չհրամայեցի , չխօսեցայ , ու
6 միտքս ալ չանցաւ ։ Ուստի ահա
օրեր կու գան՝ կ՚ըսէ Ցէրը , որ
մէյմին ալ այս տեղը՝ Ցօփեթի ու
Ընոմի որդւոյն ձորը՝ պիտի չը-
սուի , հապա՝ Սպանութեան ձոր ։
7 Եւ այս տեղը ցուդային ու Երու-
սաղէմին խորհուրդը պիտի խափա-
նեմ . Ի ու զանոնք՝ իրենց թշնամի-
ներուն առջեւը սրով , և իրենց հո-
գին փնտռողներուն ձեռքովը պիտի
կործանեմ . ու անոնց Ի դիւերը՝
երկինքի թռչուններուն , ու երկրի
գազաններուն կերակուր պիտի
8 տամ . Եւ այս քաղաքը՝ Ի աւերակ
ու նախատինք պիտի ընեմ . անկէ
ամէն անցնողը՝ անոր բոլոր հա-
րուածներուն պատճառաւ՝ պիտի
9 հիանայ ու պիտի սուլէ ։ Եւ պա-
շարման ատենը՝ ան նեղութեանը
մէջ՝ որով անոնց թշնամիները և
անոնց հոգին փնտռողները՝ զանոնք
պիտի նեղեն , Ւիրենց տղոցը միսը
ու իրենց աղջիկներուն միսը պիտի
կերցընեմ անոնց . ու իրարու միսը
պիտի ուտեն ։
10 Ի Ետերը ան կուժը՝ քեզի հետ
եկող մարդիկներուն աչքին առջեւը
11 կոտրէ . Ու անոնց ըսէ . Զօրաց Ցէ-
րը այսպէս կ՚ըսէ . Ի Ա՛ս ժողովուր-
դը ու այս քաղաքը այնպէս պիտի
կոտրեմ , ինչպէս որ Ֆէլ բրուտի
ամանը կը կոտրէ , որ ալ չկրնար
նորոգուիլ . ու Ի՚՚ոֆ Ցօփեթի
մէջ պիտի թաղեն՝ *մինչև որ ալ
12 թաղելու տեղ չմնայ՚՚ ։ Ա՛ս տե-
ղւոյս ու անոր բնակիչները այսպէս
պիտի ընեմ՝ կ՚ըսէ Ցէրը . և այս
քաղաքը Ցօփեթի պէս պիտի ը-
13 նեմ . Ու Երուսաղէմի տուները , և
ցուդայի թագաւորներուն տուներ-

ն . ք . ՂԲ . Իրէ 605

ՃԳԼ . Բ . 13 , 32 , Գ . 21 , ԺԳ . 25 , ԺԷ . 13 ։
Ի Գլ . Ժ . 15 , ԺԳ . 19 ։
Լ Գլ . Զ . 16 ։
Ի Գլ . ԺՐ . 8 , ԽԹ . 13 , Ծ . 13 ։
Ի Գ Թագ . Թ . 8 ։ Ողբ . Բ . 15 ։ Մ՚՚ք . Զ . 16 ։
Ի Գլ . Ժգ . 24 ։
Հ Սաղ . Խբ . 7 ։
Ի Ցես գլ . Բ . 27 ։
Ղ Գլ . Ժ . 19 ։
Ճ Ղե . Ժ . 11 ։ Մաղ . Բ . 7 ։ Ցոհ . Է . 48 , 49 ։

Ճ Սաղ . ՃԹ . 4 , 5 ։
Ր Սաղ . Լե . 7 ։ Ծէ . 6 ։ Հմր 22 ։

Ն Սաղ . ՃԹ . 9 , 10 ։

Ղ Հմր 20 ։

Ո Սաղ . Լե . 4 , ՃԹ . 14 ։ Գլ . Ժ . 20 , ԺԵ . 15 ։

ն . ք . ՂԲ . Իրէ 605

Ո Ցես . Ժե . 8 , Գ Թագ . Իգ . 10 ։ Գլ . Է . 31 ։
Բ Գլ . Ժէ . 20 ։

Ֆ Թագ . Գ . 11 , Գ Թագ . Իս . 12 ։
Ար Օր . Իբ . 20 , Եռ . Կե . 11 , Գլ . Բ . 13 , 17 , 19 , ԺԵ . 6 , ԺԷ . 13 ։
Ի Գ Թագ . Իս . 16 , Գլ . Բ . 34 ։ Ղ Գլ . Է . 31 , 32 , Լբ . 35 ։
Ի Ղե . ԺԸ . 21 ։

Ը Ցես . Ժե . 8 ։

Ր Ղե . Իզ . 17 , Բ Օր . Իբ . 25 ։

Ք Սաղ . ՀԹ . 2 , Գլ . Է . 33 , Ժգ . 4 , ԼԴ . 20 ։
Ի Գլ . ԺԸ . 16 , ԽԹ . 13 , Ծ . 13 ։

Ղ Ղե . Իզ . 29 , Բ Օր . Իբ . 53 , Եռ . Թ . 20 , Ողբ . Դ . 10 ։
Ի Գլ . Ծ . 63 , 64 ։

Ճ Սաղ . Բ . 9 , Եռ . Լ . 14 , Ողբ . Գ . 2 ։

Ի Գլ . Է . 32 ։
* Կ՚՚ըսէ՝ թաղելու տեղ չըլլալուն համար ։

Ն · Բ · ՂԲ · Իրը 605

ը Գ Թագ · իգ · 10 ։

* Կ՛ըսէ՝ ոչ-Իսրայէլացի բոլոր տուներուն վրայ ։

յ Գ Թագ · իգ · 12։ Գէ · լը · 29։ Սոփ · ա · 5 ։

ղ Գէ · է · 18 ։

ճ Ելս Բ Մն · ի · 5 ։

ր Գէ · է · 26 ։ Ժէ · 23 ։

— ա Մն · իգ · 14 ։

† Կ՛ըսէ՝ կոչ. ղ։

‡ Յր՝ ամէն կողմանէ վախ · Սաղ · լա · 13 ։ Հմր 10։ Գէ · գ · 25 ։ Խզ · 5։ Խթ · 29 ։

Բ Գ Թագ · ի · 17 ։ իգ · 12—16։ իե · 13։ ճէ ։ Գէ · գ · 24 ։

ը Գ Թագ · իգ · 10 ։

1 Ես Տէրոջը տանը դիսաւոր վերակացուն – Եմմերի որդին Փասուր քահանան լսեց աս խօսքերը՝ որ Երեմիա կը մարգարէանար ։ 2 Ու Փասուր Երեմիա մարգարէին զարկաւ , և զանիկայ՝ Տէրոջը տանը մէջ եղող՝ Բենիամինի վերի դրանը 3 †բանտը դրաւ ։ Ու հետևեալ օրը Փասուր՝ Երեմիան բանտէն հանեց ։ ու Երեմիա անոր ըսաւ ։ Տէրը քու անունդ Փասուր չկոչեց , 4 հապա ‡Մակոր միսոսպիպ ։ Վասն զի Տէրը այսպէս կ՛ըսէ ։ Ահա ես քեզ արհաւիրքը պիտի ընեմ քու անձիդ , ու քու բոլոր բարեկամներուդ ։ և անոնք իրենց թշնամիներուն սրովը պիտի իյնան , ու քու աչքերդ պիտի՝ տեսնեն ։ և բոլոր Յուդան Բաբիլոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ ։ ու զանոնք Բաբիլոն գերի պիտի տանի , ու 5 զանոնք սրով պիտի զարնէ ։ Եւ Բաս քաղաքին բոլոր հարստութիները , ու անոր բոլոր վաստակը , ու անոր բոլոր պատուական բաները պիտի տամ ։ և Յուդայի թագաւորներուն բոլոր գանձերը իրենց թշնամիներուն ձեռքը պիտի տամ ։ և զանոնք պիտի յափշտակեն ու առնեն , և Բաբիլոն տանին ։ 6 Եւ դուն ով Փասուր՝ ու քու տանդ բոլոր բնակիչները՝ գերութեան պիտի երթաք ։ և Բաբիլոն պիտի երթաս , ու հոն պիտի մեռնիս , և հոն պիտի թաղուիս՝ թէ՛ դուն և թէ քու բոլոր բարեկամներդ , որոնց ես սուտ մարգարէութիւն ըրիր ։

7 Ջիս համոզեցիր ով Տէր , ու ես համոզուեցայ ։ Դուն ինծի զօրաւոր ես , ու յաղթեցիր ։ Ամէն օր խաղ եղայ ։ ամէնը ինծի 8 ծաղր կ՛ընեն ։ Քանի քանի որ կը խօսիմ՝ կ՛աղաղակեմ , և ջրնուութեան ու զրկանաց համար կը բողոքեմ ։ վասն զի Տէրոջը խօսքը ամէն օր նախատինք ու անարգանք 9 եղաւ ինծի ։ Ու ես ըսի ։ Զանիկայ չյիշեմ , և էլ մէյմըն ալ անոր անունովը չխօսիմ ։ բայց սրտիս մէջը էվառած կրակի պէս եղաւ ոսկորներուս մէջը գոցուած ։ և յոգնեցայ ընդունելէ , ու չկրցի 10 չեմ կրնար ։ Վասն զի շատերէն չարախօսութիւն լսեցի ։ ամէն կողմանէ վախ էր ։ Բամբասեցէք , ու բամբասանք՝ ըսին ։ Իմ բոլոր բարեկամներս՝ ‖իմ սխալիլս կը դիտէին , ըսելով՝ ։ Գուցէ անիկայ խաբուի , ու անոր յաղթենք , 11 և անկէ մեր վրէժը առնենք ։ Բայց Տէրը ինծի հետ է զօրաւոր ահեղանի պէս ։ անոր համար զիս հալածողները պիտի գլորին , ու Հպիտի չյաղթեն ։ անոնք խիստ պիտի ամչնան , քանզի անխելքութեամբ կը վարուին ։ Անոնց Իսրէլ– Հանարգանքը յաւիտեան պիտի 12 չմոռցուի ։ Բայց դուն՝ ով զօրաց Տէր՝ որ Հարդարը կը փորձես , երիկամունքը , ու սիրտը կը տեսնես ։ անոնց վրայ Քու վրէժխնդրութիւնդ տեսնեմ ։ քանզի 13 իմ դատս քեզի յայտնեցի ։ Տէրոջը երգեցէք , Տէրը դովեցէք ։ քանզի հոգին չարագործներուն ձեռքէն ազատեց ։

14 Անիծեալ ըլլայ ան օրը՝ որ ես ծնայ ։ իմ մօրս զիս ծնած օրը օրհնեալ չըլլայ ։ 15 Անիծեալ ըլլայ ան մարդը՝ որ իմ հօրս աւետիս բերաւ , ու զանիկայ խիստ շատ ուրախացուց՝ ըսելով ։ Քեզի արու 16 զաւակ մը ծնաւ ։ Եւ ան մարդը ան քաղաքներուն պէս ըլլայ՝ որոնք Տէրը Հկործանեց , ու չնահյեց ։ անիկայ առաւօտուն ողջ լսէ , ու կէսօրուան աւետը աղաղակ , 17 զի ։ Վասն զի ինծ արգանդէն զիս չմեռցուց , որ մայրս ինծի դերեզման ըլլար ։ և անոր արգանդը յաւիտեան յղի մնար ։ 18 Ինչո՞ւ այսպէս ինծ արգանդէն ելայ , որ աշխատանք ու ցաւ տեսնեմ , և իմ օրերս ամօթով սպառին ։

Ն · Բ · ՂԲ · Իրը 605

Ֆ Գէ · ժգ · 13 · 14 · իբ · 15 ։ իթ · 21 ։

Ծ Գէ · ա · 6 , 7 ։

Ր Ողբ · գ · 14 ։

Ղ Գէ · է · 7 ։

Ր Ցոր · լբ · 18 ։ 19 ։ Սաղ · լթ · 3 ։

Ը Ցոր · լբ · 18 ։ Գոր · ժբ · 5 ։

Ի Սաղ · լ · 13 ։

Ժ Ցոր · ժթ · 19 ։ Սաղ · խա · 9 ։ ծե · 13 · 14 ։ Ղա · ժա · 53 , 54 ։

‖ Կ՛ըսէ՝ ինծի չարողները ։

Ր Գէ · ա · 8 · 19 ։

Լ Գէ · ժե · 20 ։ ժէ · 18 ։

Ր Գէ · իդ · 40 ։

Ժ Գէ · ժա · 20 ։ ժե · 10 ։

Ռ Սաղ · ծգ · 7 ։ ծթ · 10 ։

Հ Սաղ · լե · 9 · 10 ։ ոԹ · 30 · 31 ։

Յ Ցոր · գ · 3 ։ Տես գէ · ժե · 10 ։

Ղ Ես · ժթ · 25 ։

Ճ Գէ · ժբ · 22 ։

Ր Ցոր · գ · 10 · 11 ։

Ս Ցոր · գ · 20 ։

Ն Ողբ · գ · 1 ։

1 Անդեկիա մարդ կը խրէ որ Երեմիային հարցընեն Թէ Նաբուգոդոնոսորին պատերազմը ինչ վախճան պիտի ունենայ ։ 3 Երեմիա կը

Ն · Ք · ՊԲ · Էրբ 589

Նախաձայնէ մէկ սաստիկ պաշարում մը, ու վտանգ կերուիթին մը. 8 կը խրատէ ժողովուրդը որ ՔաղԴէացւոց իյնան, 11 ու Թագաւորին տունը կը մեղադրէ։

1 Տէրոջը կողմանէ Երեմիային եղած խօսքն է, երբոր Սեդեկիա Թագաւորը՝ Մելքիայի որդին — Փաշհուրը, ու Մաասիայի որդին Սոփոնիա քահանան անոր խրկեց,
2 ըսելով. Հնորհք բրէ՝ մեզի համար Տէրոջը հարցուր. վասն զի Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորը մեզի հետ պատերազմ կ'ընէ. գուցէ Տէրը մեզի համար իր բոլոր սքանչելիքներուն համեմատ ընէ. և անիկայ մեզմէ դառնայ։
3 Ու Երեմիա անոնց ըսաւ. Սեդեկիային այսպէս ըսէք.
4 Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր ձեռքերուն մէջը եղող պատերազմական զէնքերը պիտի դարձընեմ, որոնցմով դուք պարսպին դուրսէն ձեզ պաշարող Բաբիլոնի Թագաւորին, ու քաղդէացիներուն հետ կը պատերազմիք. և Ղանոնք ասֆաքիս մէջ կը ժողվեմ։
5 Ես պիտի ժողվեմ, Ու ես ալ Երկրնցած ձեռքով, և զօրաւոր բազուկով, սրտմտութեամբ, բարկութեամբ ու մեծ ցասումով ձեզի
6 հետ պիտի պատերազմիմ։ Եւ ասֆաքիս բնակիչները՝ թէ մարդ և թէ անասուն պիտի զարնեմ. անոնք մեծ ժանտախտով պիտի մեռնին։
7 Ետքը, Ու անկէ ետքը՝ կ'ըսէ Տէրը՝ Ցուդայի Թագաւորը Սեդեկիան, և անոր ծառաները, ու ժողովուրդը, և ասֆաքիս մէջ՝ ժանտախտէն, սուրէն ու սովէն մնացածները՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին ձեռքը, և անոնց թշնամիներուն ձեռքը, ու անոնց հոգիները փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ. և զանոնք սուրի բերնէ պիտի անցընէ. Ղանոնց պիտի չխնայէ, պիտի չգթայ, ու ողորմութիւն պիտի չընէ։
8 Եւ ասֆաքիս ժողովուրդին ըսէս. Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես ձեր առջևը կը դնեմ կենաց ճամբան,
9 ու մահուան ճամբան. Ով որ քաղաքիս մէջ կեցողը՝ սրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի. իսկ ելլողը՝ ու ձեզ պաշարող քաղդէացիներուն իյնողը ողջ պիտի մնայ. ու Ղանոր կեանքը իրեն
10 աւարի մը պէս պիտի ըլլայ։ Քանզի Ես իմ երեսս ասֆաքիս վրայ հաստատեցի չարիք ընելու համար, և ոչ թէ բարիք՝ կ'ըսէ Տէրը. Ղանիկայ՝ Բաբիլոնի Թագաւորին ձեռքը պիտի տրուի, ու Ղանիկայ կրակով պիտի այրէ։
11 Եւ Ցուդայի Թագաւորին տանը
12 ըսէ. Տէրոջը խօսքը լսեցէք՝ Ով Դաւիթի տունը, Տէրը այսպէս կ'ըսէ. Ընտուանց իրաւունքով դատաստան տեսէք, ու զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք. չըլլայ որ ձեր չար գործերուն համար՝ իմ բարկութիւնս կրակի պէս ելլելով բռընկի, ու
13 մարող մը չըլլայ։ Ահա հես ձեզի դէմ եմ, ով հովիտին դաշտական վէմին բնակիչները, որ կ'ըսէք թէ՝ Ո՞վ մեզի դէմ ով պիտի իջնէ, կամ ո՞վ պիտի մտնէ մեր բնակարաններուն մէջը,
14 տի մտնէ. Բայց ես ձեզի ձեր գործերուն պտուղին համեմատ այցելութիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը, ու անոր անտառին մէջը կրակ պիտի բռընկցընեմ, որ ամէն բոլորտիքը եղածը պիտի ուտէ։

ԳԼ · ԻԲ

1 Երեմիա խօսմունքներով ու սպառնալիքներով կը յորդորէ ժողովուրդը որ ապաշխարէն։ 10 Սեղոմին, 13 Յովակիմին, 24 ու Ցեքոնիային վրայ հառնելու դառաստանը։

1 Տէրը այսպէս կ'ըսէ. Ցուդայի Թագաւորին տունը իջիր, ու
2 հոն ասֆաքը խօսքը խօսէ. Ու ըսէ. Ով Դաւիթի աթոռին վրայ նստող Ցուդայի Թագաւոր՝ Տէրոջը խօսքը մտիկ ըրէ, թէ դուն և թէ քու ծառաներդ ու ժողովուրդդ՝ որ
3 ասֆաքիս դռներէն կը մտնէք։ Տէրը այսպէս կ'ըսէ. Իրաւունք ու արդարութիւն ըրէք, ու զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք, և օտարականին, որբին ու որբևարիին անիրաւութիւն — բռնութիւն մի՛ ընէք, և ասֆաքիս
4 անմեղ արիւն մի թափէք։ Վասն զի թէ որ ամէն կերպով ասֆաքը՝ խօսքը գործ դնէք, Ղան ատենը Դաւիթի աթոռին վրայ նստող Թագաւորներ կառքերու ու ձիերու վրայ հեծած՝ ասֆաքիս դռներէն պիտի մտնեն, իրենք, և իրենց ծառաները ու ժողովուրդը։
5 Բայց թէ որ ասֆաքիս խօսքերը մտիկ չընէք, Իմ անձիս վրայ երդում կ'ընեմ, կ'ըսէ Տէրը, որ ասֆաքիս տունը աւերակ
6 պիտի ըլլայ։ Քանզի Ցուդայի Թագաւորին տանը վրայով Տէրը այսպէս կ'ըսէ. Դուն Ընկեր ինծի Գաղաադու պէս, ու Լիբանանու գագաթին պէս ես, — անշուշտ քեզ անապատի պէս, — անբնակ քաղաքներու պէս պիտի ընեմ։
7 Եւ քու վրադ կործանողներ պիտի Հանեմ. ամէն մէկը իր զէնքովը պէտք ջոյ. ու Ղքու ընտիր եղևիններդ պիտի կտրեն, և կրակը ձգեն։
8 Ու ասֆաքին շատ ազ-

Ն · Ք · ՊԲ · Էրբ 609

Ի Սաղ. ՃԱ. 8։
Լ ԳԼ · Իբ · 3։ Զաք · է · 9։
Հ Եզեկ. Ժգ. 8։
Յ ԳԼ · Խթ · 4։
Ղ Ամոկ. ա. 31։ Եփ. գ. 10։ 11։
Ճ Բ Մն · ԼԳ · 19։ ԳԼ · ՃԲ · 13։

Ն · Ք · ՊԲ · Էրբ 609

Ի Սաղ. ՃԱ. 8։
Լ ԳԼ · Իբ · 3։ Զաք · է · 9։
— ԳԼ · ԺԷ · 20։
Բ ԳԼ · Խ · 12։
Ե Տես ՀՃԲ 17։
Դ ԳԼ · ԺԷ · 25։
Ե Երր · գ · 13։ 14։ 17։
Զ Եզբ · ՈԲԲ-ԲՆՄ.
Է Եփ · ԼԷ · 24։
Ը ԳԼ · Խ · 14։

դեր պիտի անցնին . և իրարու պիտի բսեն . Ընչո՞ւ համար Տէրը աս
9 մեծ քաղաքին այսպէս ըրաւ : Եւ պիտի բսեն . Վասն զի իրենց Տէր Աստուծոյն ուխտը թողուցին , և ուրիշ աստուածներու երկրպագութիւն ըրին , ու անոնց ծառայեցին ,
10 Մէհեռնոզին համար մի լար , ու անոր համար մի ողբաք . հոգ էդայացողին համար դառնապէս լացէք , որովհետև մէյմըն ալ պիտի չդառնայ , ու իր հայրենիքը պիտի
11 տեսանէ : Վասն զի Տէրը այսպէս կ'ըսէ Ցուդայի թագաւորին Ցովսիայի որդւոյն Ամեղոնին համար , որ իր հօրը Ցովսիայինն տեղը թագաւոր նստաւ , Ելու աս տեղէս եկաւ . Անիկայ մէյմըն ալ հոս պիտի
12 չդառնայ . Հապա անիկայ իր գերի բշուած տեղը պիտի մեռնի . ու մէյմըն ալ աս երկիրը պիտի չտեսնէ :
13 Վա՛յ անոր՝ որ իր տունը զրկանքով , ու իր վերնատուները անիրաւութեամբ կը շինէ . Իր դրացին ձրի կը բանեցընէ , և անոր աշխատութեանը վարձքը չվճարեր .
14 Ինծի ընդարձակ տուն , ու հովասուն վերնատուններ շինեմ՝ բսելով՝ Իրեն պատուհաններ կը բանայ , ու ամէն եղևնափայտով կը պատէ ,
15 ու նօթով կը ներկէ : Միթէ դուն շատ եղևնափայտեր ժողվելով թագաւոր պիտի ըլլաս : Հայր որ քու հայրդ կերաւ ու խմեց , նաև իրաւունք ու արդարութիւն ըրաւ . ան ատենը անոր աղէկ եղաւ .
16 Աղքատին ու անանկին դատը տեսաւ . ան ատենը անոր աղէկ եղաւ . միթէ զիս գիտնալը ասիկայ չէ՞ ,
17 կ'ըսէ Տէրը : Բայց քու աչքերդ ու սիրտդ ուրիշ բանի վրայ չէ , բայց միայն քու ագահութեանդ , և անմեղ արիւն թափելու , և անիրաւութեան ու բռնաւորութեան վրայ է , որ անոնք
18 կ'ընես : Անոր համար Ցուդայի թագաւորին Ցովսիայի որդւոյն Ցովակիմին վրայով՝ Տէրը այսպէս կ'ըսէ . Անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով . Վա՛յ եղբայրս , կամ վա՛յ քոյրս . անոր վրայ պիտի չողբան՝ ըսելով . Վա՛յ տէր իմ , կամ վա՛յ անոր փա-
19 ռացը : Անիկայ իշու թաղումով պիտի թաղուի , և քաշելով պիտի տարուի , ու Երուսաղէմի դռնեքէն դուրս պիտի նետուի :
20 Լիբանանը ելլէ , ու աղաղակէ , Եւ Բասանի վրայ ձայնդ ձգէ , ու Աբարիմէն աղաղակէ . վասն զի քու բոլոր հոմանիներդ կոտրուե-
21 ցան : Երբոր դուն յաջողութեան մէջ էիր՝ քեզի զգուշացի . ըսիր . Մտիկ չեմ ըներ . Քու մանկութենէդ ի վեր ճամրադ աս է ,
22 որ իմ խօսքս մտիկ չընես : Քամբոլոր հովիւներդ հովը պիտի կործանէ , ու հոմանիներդ գերութեան պիտի երթան . յիրաւի ան ատենը բոլոր չարութենդ համար պիտի ամչնաս , ու պիտի պատկառիս :
23 Ով Լիբանանի մէջ բնակող , ու եղևիններու մէջ բոյն ունեցող , երբոր քեզի ծննդական կնոջ երկանցը պէս ցաւեր գան , որչափ
24 ողորմելի պիտի ըլլաս : Ես կեն դանի եմ՝ կ'ըսէ Տէրը , ով Ցուդայի թագաւոր Ցովակիմի որդին Ծեքոնիա , Եթէև իմ աջ ձեռքիս վրայ կնիք ալ ըլլաս , անկէ
25 ալ քեզ պիտի փրցընեմ . Ես քեզ՝ քու հոգիդ փնտռողներուն ձեռքը՝ ու ան մարդիկներուն ձեռքը՝ որոնց երեսէն դուն կը վախնաս , և Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը ու Քաղդեացւոց ձեռքը պիտի մատնեմ .
26 Ես քեզ՝ ու քու մայրդ որ քեզ ծնաւ , օտար երկիր պիտի նետեմ , ուր որ ծնած չէք , և հոն պիտի
27 մեռնիք : Ու պիտի չդառնան ան երկիրը , ուր որ դառնալու կը
28 յուսան : Միթէ աս Ծեքոնիա ըմարդը անարգուած կոտրած սափոր մըն է , կամ թէ Վանանկ աման մըն է՝ որուն մէկը չըհաճիր . ինչո՞ւ համար ինքը ու իր սերունդը նետուեցան , ու իրենց
29 չգիտցած երկիրը քշուեցան : Ով երկիր , երկիր , երկիր , Տէրոջը
30 խօսքը մտիկ ըրէ . Տէրը այսպէս կ'ըսէ . Ան մարդը Թանզաւակ գրեցէք . մարդը իր օրերուն մէջը յաջողութիւն պիտի չգտնէ . քանի անոր սերունդէն ըլլալ մէկը յաջողութիւն պիտի չգտնէ , Որ Դաւիթի աթոռին վրայ նստի , և այսուհետև Ցուդայի վրայ թագաւորութիւն ընէ :

ԳԼ . Ի Գ

1 Մարգարէն կը նախատեսէ թէ գրուած հօտը նորէն պիտի ժողվուի : 5 Քրիստոս գանձը պիտի կառավարէ ու փրկէ : 9 Աստ մարգարէներուն դէմ , 33 ու մշմարիտ մարգարէութիւններ ծագը ընդհանուրն դէմ խօսք :

1 Վա՛յ ան հովիւներուն՝ որ իմ արօտիս ոչխարները կը կորընչրնեն ու կը ցրուեն , կ'ըսէ Տէրը :
2 Անոր համար՝ այսպէս կ'ըսէ Իսրայէլին Տէր Աստուածը՝ ան հովիւներուն վրայով , որ իմ ժողովուրդս կը հովուեն . դուք իմ ոչխարներս ցրուեցիք , ու գանոնք վռնտեցիք , և անոնց այցելութիւն

ն · ք · գէ · իսր 609

ը Ր Օր · իթ · 24 , 25 , գ թագ · թ · 8 , 9 ,
ր գ թագ · իր · 17 , ր Մն · լդ · 25 ,
բ գ թագ · իր · 20 ,
ի Հմր 11 ,

լ Տես ա Մն · գ · 15 · և բաղդաս՝ գ թագ · իգ · 30 ին հետ ,
ի Տես գ թագ · իգ · 34 ,

ձ գ թագ · իգ · 35 , Հմր 18 ,
ղ Ղև . ժթ . 13 , ր Օր · իդ · 14 , 15 , Միք · գ · 10 , Ամր · բ · 9 , Ցակ · ե · 4 ,

* Եբ . եղև . նայ իայտին նախաձեռնվդ
հ գ թագ · իգ · 25 ,
յ Սաղ · ճիր · 2 , Ես · գ · 10 ,

չ Եզեկ . ժթ . 6 ,

Կատարուեցաւ՝ 599
ն Գլ . ժգ . 4 , 6 ,
շ Տես գ թագ . ժգ . 30 ,
ո Ր Մն · լզ · 6 , Գլ · լզ · 30 ,

599

ն · ք · գէ · իսր 599

ն Գլ . գ . 25 , է . 33 , ԷՀ ,
չ Գլ . իգ . 1 ,

ռ Հմր 20 ,

չ Գլ . գ . 24 ,

ց Տես գ թագ . իգ . 6 , 8 , ա Մն . գ . 16 , Գլ . լե . 1 ,
† Եբ . Քոնիա ,
ք Երգ . ը . 6 , Անգ . բ . 23 ,
ռ Գլ . լզ . 20 ,

ռ գ թագ . իգ . 15 , ր Մն . լզ . 10 ,

‡ Եբ . իրենց անձը կը վերցընեն ,

վ Սաղ . լ . 12 , Գլ . խը . 38 , Ովս . ը . 8 ,

ռ Ր Օր . լբ . 1 , Ես . ա . 2 , լզ . 1 , Միք . ա . 2 ,
բ Տես ա Մն . գ . 16 , 17 , Մատ . ա . 12 ,

ց Գլ . լզ . 30 ,

ռ Գլ . ժ . 21 , իր . 22 , Եզեկ . լզ . 2 ,

Ն·Ք·ՂՔ· Իրբ 599

չըրիք . 25 Ահա ես ձեր գործոցը չա-
րութեանը համար՝ ձեզի այցելու-
թիւն պիտի ընեմ, կ'ըսէ Տէրը .
3 Ու ես իմ ոչխարներուս մնացորդը
պիտի ժողվեմ ան բոլոր երկիրնե-
րէն՝ ուր որ զանոնք քշեր եմ, և
զանոնք իրենց *փարախները պիտի
դարձընեմ, և պիտի աճին ու շատ-
4 նան : Ու անոնց վրայ †հովիւներ
պիտի դնեմ, որ զանոնք հովուեն .
և անոնք ալ պիտի չվախ-
նան , ու պիտի չզարհուրին , ու
պիտի չպակսին , կ'ըսէ Տէրը :
5 Ահա *օրեր կու գան՝ կ'ըսէ Տէ-
րը , որ Դաւիթին արդարութեան
շառաւիղ մը պիտի հանեմ , որ
թագաւորի պէս թագաւորութիւն
պիտի ընէ , իմաստութեամբ պիտի
վարուի , ու երկրի վրայ իրաւունք
ու արդարութիւն պիտի ընէ :
6 Անոր օրերը Յուդան պիտի ազա-
տի , և Իսրայէլը ապահովութեամբ
պիտի բնակի . ու *ասիկա է անոր ա-
նունը՝ որով պիտի կոչուի *, Տէրը
7 մեր արդարութիւնը : Անոր համար
ահա *օրեր կու գան՝ կ'ըսէ Տէրը ,
որ ալ պիտի չըսուի թէ՝ կենդանի
է Տէրը՝ որ Իսրայէլի որդիքը ե-
8 գիպտոսի երկրէն հանեց . Հապա՝
կենդանի է Տէրը՝ որ Իսրայէլի
տանը սերունդը հանեց ու բերաւ
հիւսիսի երկրէն , և ան բոլոր եր-
կիրներէն՝ ուր որ զանոնք քշեր էի .
ու անոնք իրենց երկրին մէջը պիտի
բնակին :
9 Մարգարէներուն համար՝ սիրտս
ներսի դիս կը կոտրի . Բոլոր ոսկոր-
ներս կը դողան . Տէրոջը երեսէն ,
ու անոր սուրբ խօսքերուն երեսէն
դինով մարդու պէս , և գինին գե-
լուխը զարկած մարդու պէս եղայ :
10 Քանզի երկիրը շնացողներով լե-
ցուած է . քանզի *անէծքի պատ-
ճառով երկիրը սուգ կը բռնէ .
†անապատին արօտները չորցան ,
որովհետև անոնց ճամբան չար է-
ղաւ . և անոնց ոյժը ուղղութեան
11 համար չէ : Վասն զի †թէ մար-
գարէն և թէ քահանան պղծուե-
ցան . Անոնց չարութիւնը իմ
տանս մէջն ալ գտայ , կ'ըսէ Տէրը :
12 Անոր համար անոնց ճամբաները՝
խաւարի մէջ սահեցընող տեղերու
պէս պիտի ըլլան անոնց . անոնք
պիտի մղուին ու հոն պիտի իյնան .
վասն զի ես անոնց այցելութեան
տարին՝ †անոնց վրայ չարիք պիտի
բերեմ , կ'ըսէ Տէրը :
13 Եւ Սամարիայի մարգարէներուն
մէջը անպատմութիւն տեսայ . †Բա-
ղային *նոռնռաց մարգարէութիւն
կ'ընէին , և †իմ ժողովուրդս Իսրա-
14 յէլը կը մոլորցընէին : Ու երու-

Ն·Ք·ՂՔ· Իրբ 599

սաղեմի մարգարէներուն մէջը սոս-
կալի բան տեսայ . Անոնք շնու-
թիւն կ'ընեն , ու ստութեան մէջ
կը քալեն , և †չարագործներուն
ձեռքերը կ'ուժովցընեն , որ չդառ-
նան՝ ամէն մէկը իր չարութենէն .
անոնց ամէնը ինծի *Սոդոմի պէս ,
ու անոր բնակիչները Գոմորի պէս
15 եղան : Ուստի Համար զօրաց Տէրը՝
մարգարէներուն վրայով այսպէս
կ'ըսէ . Ահա ես անոնց *օշինդր
պիտի կերցընեմ , և անոնց դառ-
նութեան ջուր պիտի խմցընեմ .
վասն զի Երուսաղեմի մարգարէնե-
րէն ամբարշտութիւն ելաւ , *ի-
բոլոր երկրին մէջ *ապականութիւն :
16 Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ .
Ձեզի մարգարէութիւն ընող մար-
գարէից խօսքերուն մտիկ մի՛ ընէք .
անոնք ունայնութեան կը տանին
ձեզ , Իրենց սրտին տեսիլքը կը
խօսին , *ոչ թէ Տէրոջը բերնէն :
17 Անոնք իս անարգողներուն կը խօսին
ու կ'ըսեն . Տէրը ըսաւ . †Ձեզի
խաղաղութիւն պիտի ըլլայ . և ի-
րենց սրտին կամակորութեանը մէջ
բոլոր քալողներուն կ'ըսեն . †Ձեր
18 վրայ չարիք պիտի չգայ : Վասն զի
Տէրոջը խորհուրդին մէջ *ով
կայնեցաւ . *Ով տեսաւ , ու անոր
խօսքը լսեց . անոր խօսքին *ով ա-
կանջ տուաւ , ու մտիկ րրաւ :
19 Ահա †Տէրոջը մրրիկը սրտմտու-
թեամբ ելաւ . անիկայ սաստիկ
մրրիկ է . ամբարիշտներուն գլխուն
20 վրայ պիտի յարձակի : †Տէրոջը
բարկութիւնը ետ պիտի չդառ-
նայ , մինչև որ իր սրտին խոր-
հուրդները չկատարէ ու չհաստա-
տէ . *Ետքի օրերը ասիկայ պիտի
21 հասկընաք : †Ես մարգա-
րէները ես չխրկեցի , բայց անոնք
կը վազեն . ես անոնց չխօսեցայ ,
բայց անոնք կը մարգարէանան :
22 Իսկ †թէ որ անոնք իմ խորհուր-
դիս մէջը կեցած ըլլային , ան ա-
տենը իմ խօսքս՝ իմ ժողովուրդիս
լսել պիտի տային . և զանոնք՝ †ի-
րենց չար ճամբաներէն , ու իրենց
չար գործքերէն պիտի դարձնէին :
23 Մի՞թէ ես մօտաւոր Աստուած
եմ , ու հեռուանց Աստուած չե՞մ :
24 կ'ըսէ Տէրը : Կամ թէ մէկը *ծա-
ծուկ տեղուանք կրնա՞յ պահուիլ ,
որ ես զանիկայ չտեսնեմ , կ'ըսէ
Տէրը . †Միթէ երկինքը ու երկիրը
լեցընողը ես չե՞մ՝ կ'ըսէ Տէրը :
25 Իմ անունովս սուտ մարգարէու-
թիւն ընող մարգարէներուն բսած-
ները լսեցի , որ կ'ըսեն . Երազ
26 տեսայ , երազ տեսայ : Մինչև
ե՞րբ *այն սուտ մարգարէութիւն
ընող մարգարէներուն սրտին միջը

Ե·Գէ· 23 ։
Ղ Ա՛ Ա· բառերը
Ե·Գէ·ԺԵ· 34 ։
† Գէ·Լ·37 ։ Եզեկ·ԼԴ· 13 ։ ԸԼ ։
* կ՚ Ա· բառերը
Ե·Գէ·Գ·15 ։ Եզեկ·ԼԴ· 23 ։ ԸԼ ։
Ի Ես·Գ·2 ։ Ժա·1 ։ Խ· 10 ։ 11 ։ Գէ· ԼԴ·14 ։ 15 ։ 16 ։ Դան· Թ· 24 ։ Զաք·Գ· 8 ։ Գ· 12 ։ Ցաղ·Ա· 45 ։
Ղ Ա՛ Ա·Նր· 2 ։ Ես·Թ· 7 ։ Լե·1 ։ 18 ։
Ի Ը Օր·ԼԴ· 28 ։ Զաք· Ժգ·11 ։
Է Գէ·Լե·37 ։
Ը Գէ·ԼԴ· 16 ։ ա Կոր· ա·30 ։
† Գէ·Ժգ· 14 ։ 15 ։
Ի Ես·Խգ· 5 ։ 6 ։ Հմր 3 ։
Ղ Տ՚ես Ամր· Գ·16 ։
Ի Գէ·Ե·7 ։ 8 ։ Թ·2 ։
† Ովս·Գ· 2 ։ 3 ։
Ի Գէ·Թ·10 ։ Ժբ·4 ։
Հ Գէ·Զ·13 ։ Ը·10 ։ Սոփ· Գ·4 ։
Ն Գէ·Է·30 ։ Ժա·15 ։ Լե· 34 ։ Եզեկ· Ը·11 ։ Իգ· 39 ։
Ղ Ա՛ Ա·Լե· 6 ։ Առակ· Գ·19 ։ Գէ· Ժգ·16 ։
Ճ Գէ·Ժա· 23 ։
Ո Գէ·Ը·8 ։
Ց Ես·Թ·16 ։

Ն·Ք·ՂՔ· Իրբ 599

Ե Գէ·ԻԹ· 23 ։
Ղ Հմր 26 ։
* Եզեկ·Ժգ· 22 ։
Ղ Ը Օր·Լե· 32 ։ Ես·ա· 9 ։ 10 ։
† Գէ·Բ·14 ։ Թ·15 ։
Ի Գէ·Ժգ· 14 ։ Հմր 21 ։
* Գէ·Գ·14 ։ Ը·11 ։ Ե՛ Գեկ·Ժգ· 10 ։ Զաք· Ժ·2 ։
* Միք·Գ· 11 ։
Ի Ցոր·Ժե· 8 ։ ա Կոր· Բ·16 ։
† Գէ·Իե· 32 ։ Լ·23 ։
Բ Գէ·Լ·24 ։
Ց Ե՛ն·ԽԹ· 1 ։
* Գէ·Ժգ· 14 ։ Իե· 15 ։ ԻԹ· 9 ։
† Հմր 18 ։
† Գէ·Իե· 5 ։
* Սաղ·ՃԼԹ· 7 ։ ԸԼ ։ Ա· Մով·Թ· 2 ։ 3 ։
Ֆ գ Թագ·Ը· 27 ։ Սաղ· ՃԼԹ·7 ։

պիտի ըլլայ , որ իրենց սրտին նեն-
դութիւնները կը մարգարէանան ։
27 Անոնք իրենց երազներովը՝ որ իրա-
րու կը պատմեն , իմ անունս՝ իմ
ժողովուրդիս մոռցընել կը խոր-
հին , – ինչպէս որ անոնց հայրերը
Բահաղին պատճառովը իմ անունս
28 մոռցան ։ Երազ ունեցող մար-
գարէն՝ թող երազ պատմէ , իսկ
իմ խօսքս ունեցողը՝ ճշմարտու-
թեամբ թող իմ խօսքս խօսի .
յարդը՝ ցորենին քովը ի՞նչ է՝ կ'ը-
29 սէ Տէրը ։ Միթէ իմ խօսքս կրա-
կի պէս չէ՞ , կ'ըսէ Տէրը , ու ա-
պառաժը կոտրտող մուրճի պէս
30 է՞ ։ Անոր համար ահա ես ան
մարգարէներուն դէմ եմ , կ'ըսէ
Տէրը , որոնք ամէն մէկը իր ըն-
կերէն իմ խօսքերս կը գողնան ։
31 Ահա ես –ն մարգարէներուն դէմ
եմ , կ'ըսէ Տէրը , որ իրենց լե-
զուները կը գործածեն , ու կ'ըսեն .
32 Ներկայ ըսաւ ։ Ահա ես ան սուտ
երազներ մարգարէացողներուն դէմ
եմ , կ'ըսէ Տէրը , որ զանոնք պատ-
մելով իմ ժողովուրդս կը մոլորցը-
նեն՝ իրենց ստութիւններովը ու
անապարձութիւնովը . ու ես զա-
նոնք չխրկեցի , և անոնց չպատուի-
րեցի . ու անոնք աս ժողովուրդին
ամենևին օգուտ մը պիտի չընեն ,
կ'ըսէ Տէրը ։
33 Ուստի երբոր աս ժողովուրդը ,
կամ մարգարէ մը , կամ քահանայ
մը քեզի հարցընէ ու ըսէ թէ՝ Տէ-
րոջը *բեռը ի՞նչ է . ան ատենը
անոնց ըսես . Ի՞նչպէս բեռ . Ե՛ս
ձեզ անշուշտ պիտի թողում , կ'ը-
34 սէ Տէրը ։ Եւ ան մարգարէն ,
կամ քահանան , կամ ժողովուրդը
որ Տէրոջը բեռը կ'ըսէ , ան մար-
դուն՝ ու անոր տանը պատիժ պիտի
35 ընեմ ։ Ամէն մարդ իր ըն-
կերին , ու ամէն մարդ իր եղբօրը
այսպէս ըսէք . Տէրը ի՞նչ պա-
տասխան տուաւ , և Տէրը ի՞նչ
36 խօսեցաւ ։ Ու մէյմըն ալ Տէրոջը
բեռը չյիշէք . վասն զի անոր բե-
ռը՝ ամէն մարդուն խօսքը պիտի
ըլլայ . քայց դուք կենդանի Ա-
ստուծոյն՝ զօրաց Տէրոջը մեր Ա-
37 ստուծոյն խօսքը փոխեցիք ։ Մար-
գարէին այսպէս ըսես . Տէրը քեզի
ի՞նչ պատասխան տուաւ , և Տէրը
38 ի՞նչ խօսեցաւ ։ Քայց որովհետև
Տէրոջը բեռը կ'ըսէք , անոր համար
Տէրը այսպէս կ'ըսէ . Որովհետև աս
խօսքը՝ բեռ Տէրոջը բեռը կ'ը-
սէք , թէև ես ձեզի ըսի խրկեցի ,
ու Տէրոջը բեռը մի՛ ըսէք՝ ըսի ,
39 Անոր համար ահա ես ձեզ բոլորո-
վին պիտի մոռնամ , ու ձեր քովէն
պիտի ձգեմ ձեզ՝ և ան քաղաքը՝
որ ձեզի ու ձեր հայրերուն տուի .
40 Եւ ձեր վրայ *յաւիտենական նա-
խատինք , ու յաւիտենական ա-
նարգանք պիտի դնեմ , որ պիտի
չմոռցուի ։

ԳԼ · Ի Դ

1 Ազէկ ու գէշ թուզերուն օրինակովը՝ 4 մար-
գարէն կը ծանուցանէ գերութեան մէջ եղող-
ներուն դառնալը , 8 և Սեդեկիային և ուրիշ-
ներուն կործանումը ։

1 – Յեքոնիայի Նաբուգոդոնոսոր
թագաւորը՝ Յուդայի թա-
գաւորը Յովակիմի որդին Յեքո-
նիան , և Յուդայի իշխանները , ու
հիւսերը , ու դարբիններն Երուսա-
ղեմէն գերի առնելէն ու Բաբիլոն
տանելէն ետքը , Տէրը ինծի ցու-
ցուց , որ ահա Տէրոջը տաճա-
րին առջևը դրուած երկու կողով
2 թուզ կար ։ Մէկ կողովին մէջը
խիստ ադէկ թուզեր կային՝ կան-
խահաս թուզերու պէս , ու մէկալ
կողովին մէջը խիստ գէշ թուզեր
կային , այնպէս որ՝ գէշութենէն
3 անոնց ուտուիլը անկարելի էր ։ Եւ
Տէրը ինծի ըսաւ . Ո՛վ Երեմիա՛ ի՞նչ
կը տեսնես . ու ես ըսի . Թուզեր .
ադէկ թուզերը խիստ ադէկ են , ու
գէշերը՝ շատ գէշ են . այնպէս որ՝
գէշութենէն անոնց ուտուիլը ան-
կարելի է ։
4 Ան ատենը Տէրոջը խօսքը ինծի
5 եղաւ , ըսելով . Իսրայէլին Տէր
Աստուածը այսպէս կ'ըսէ . Ես ա-
ղէկ թուզերուն պէս պիտի բռնեմ
Յուդայէն գերի քշուածները՝ որոնք
աս տեղէն քաղդեացւոց երկիրը
խրկեցի՝ էրէց ադէկ ըլլալու հա-
6 մար . Եւ իմ աչքերս անոնց վրայ
պիտի հաստատեմ բարութեան
համար , ու դանոնք աս երկիրը
պիտի դարձընեմ , և զանոնք պի-
տի չքնեմ , ու պիտի չքցընեմ , և
զանոնք պիտի տնկեմ , ու պիտի
7 չխլեմ ։ Եւ անոնց Հ–ն սիրտ
մը պիտի տամ , որ ինձ ճանչնան
թէ ես եմ Տէրը . ու անոնք ինծի
ժողովուրդս պիտի ըլլան , ու ես
անոնց Աստուածը պիտի ըլլամ .
վասն զի Իրենց բոլոր սրտովը ինծի
8 պիտի դառնան ։ Եւ ինչպէս են
–ի գէշ թուզերը որ գէշութենէն
չեն ուտուիր , Տէրը այսպէս կ'ըսէ .
Յուդայի թագաւորը Սեդեկիան ,
† Գլ · իգ · 19 ։
՚՚՚ Գլ · լ · 18 · 19 · 21 · 25 · 27 ։
† Հմր 2 ։

Ն·Ք·ԴԲ· 588

18 րան ըլլալու համար ։ Քու խարդախ վաճառականութեամդդ շատ անօրէնութիւններովդ քու սրբութիւններդ պղծեցիր . ես ալ քու մէջէդ կրակ հանեցի . անիկայ քեզ կերաւ . ու ամէն քեզ տեսնողներուն աչքին առջևը՝ քեզ
19 գետնի վրայ մոխիր ըրի ։ Ազգերուն մէջ ամէն քեզ ճանչցողները քու վրայովդ ապշեցան . Դուն սոսկումի պատճառ եղար , ու յաւիտեան ոչնչացար ։

Ն·Գ·Դ·2· ԽՆ·2·ԻԹ·2·

20 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝
21 ըսելով . Որդի մարդոյ՝ Երեսդ Սիդոնին դարձուր , ու անոր վրայով մարգարէութիւն ըրէ ,
22 Ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝ ով Սիդոն , և քու մէջդ պիտի փառաւորուիմ . ու երբոր անոր մէջը դատաստաններ ընեմ , ու Դանոր մէջը սուրբ սեպուիմ ,
23 պիտան թէ ես եմ Տէրը ։ Վասն զի անոր մէջը՝ ժանտախտ , ու անոր փողոցներուն մէջը՝ արիւն պիտի խրկեմ . և շուրջանակի սնոր վրայ եղող սրովը՝ անոր մէջը վիրաւորներ պիտի իյնան . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։
24 Եւ Իսրայէլի տանը մէյմըն ալ խայթող տատասկ ու ցաւցընող փուշ պիտի չըլլայ՝ իրենց բոլորտիքը եղող զերեզնք ամէն նախատողներէն . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէր Եհովան ։
25 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Երբոր Իսրայէլի տունը ժողվեմ ան ժողովուրդներէն՝ որոնց մէջը որ ցրուած են . ան ատենը անոնց մէջը՝ ազգայ աչքերուն առջևը Սուրբ պիտի սեպուիմ . ու անոնք պիտի բնակին իրենց երկրին մէջ , որն որ ես իմ Ցակոբ ծառայիս տուի .
26 Հոս տուի ։ Եւ անոր մէջը Նապահովութեամբ պիտի բնակին , ու տուներ պիտի շինեն , և տայգիներ պիտի տնկեն . ու երբոր դատաստաններ Ի գործ դնեմ ամէն անոնց բոլորտիքը եղողներուն վրայ՝ որ զանոնք նախատեցին , անոնք ապահովութեամբ պիտի բնակին , ու պիտի գիտնան թէ ես եմ իրենց Տէր Աստուածը ։

Ն·Ք·ԴԲ· 588

Ն·Գ·Դ·2· ԽՆ·2·ԻԹ·2·

Ն·Գ·Խ·21· ԽՀ·36·

Ն·Գ·Դ·2· ԽՆ·2·ԻԹ·2·

Ն·Ե·ԻԳ·4·12· Ե·ԲԵՄ·ԽԵ·22· ԽՀ·3· Գ·Լ·30·

Ն·Ե·Ժ·Գ·4· 17· Գ·ԼԹ·13·

Ն·Գ·Ի·41· ԼԳ·23· ՀՇ·25·

Ն·Ա·Թ·16·

Ն·Գ·Լ·22·

Ն·Թ·Ա·ԼԳ·55· Ցե·ԻԳ·13·

Ն·Ե·Ժ·12· Գ·Ժ·17· Ի·41· ԼԳ·13· ԼՀ·21·

Ն·ՀՇ·22·

Ն·ԵՐԵՄ·ԻԳ·6· Գ·Ա·28·

Ն·Ե·ԿՀ·21· Ա՛Մ՛Ս·Թ·14·

Ն·ԵՐԵՄ·Լ·5·

ԳԼ · ԻԹ

1 Փարաւոնին վրայ հառնելու դատաստանը՝ Իսրայէլին դէմ ըրած անհաւատարմութեանը համար ։ 8 Եգիպտոսի ամայութիւնը ։ 13 քառասուն տարիէն նորը անոր վերականգնումը ։ 17 Եգիպտոս իրեն վարձք կը տրուի Նաբուգոդոնոսորին ։ 21 Իսրայէլին խոստացուած երջանիկ վիճակը ։

589

1 Տասներորդ տարին՝ տասներորդ ամսուն երկուտասաներորդ օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
2 լով . Որդի մարդոյ՝ Երեսդ Եգիպտոսի փարաւոն թագաւորին դարձուր , ու անոր դէմ , ու Բոլոր Եգիպտոսին դէմ մարգարէու-
3 թիւն ըրէ , խօսէ , ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝ ով Եգիպտոսի Փարաւոն թագաւոր՝ քու գետերուդ մէջը պառկող մեծ Վիշապ , Որ կ'ըսես Իմ գետս իմն է , ու Ես ինծի համար շինեցի ։
4 Բայց Ես քու կզակներուդ կարթեր պիտի անցընեմ , և քու գետերուդ ձուկերը՝ քու գետերուդ պիտի փակցընեմ , ու քեզ գետերուդ մէջէն պիտի հանեմ . ու գետերուդ բոլոր ձուկերը քու
5 թեփերուդ պիտի փակչին ։ Եւ քեզ՝ ու գետերուդ բոլոր ձուկերը անապատը պիտի նետեմ . դուն դաշտի երեսին վրայ պիտի իյնաս , Պիտի չժողովուիս , և չամփոփուիս . Քեզ երկրի գազաններուն , ու երկինքի թռչուններուն կերա-
6 կուր տուի ։ Ու Եգիպտոսի բոլոր բնակիչները պիտի գիտնան թէ ես եմ Տէրը . վասն զի Իսրայէլի տա-
7 նը եղէգէ ցուպ եղան ։ Երբոր անոնք քեզ ձեռքով բռնեցին , դուն կոտրեցար , ու անոնց բոլոր բազուկը ճեղքեցիր . ու երբոր քեզի կռթնեցան , փշրուեցար , ու անոնց բոլոր մէջքը դողացուցիր ։
8 Ասոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . ահա ես քու վրադ Սուր պիտի բերեմ , և մարդը ու անասունը քեզմէ պիտի կոտրեմ ։
9 Ու Եգիպտոսի երկիրը՝ աւերակ ու անապատ պիտի ըլլայ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը . որովհետև անիկայ ըսաւ . Գետը իմն
10 է , ու Ես շինեցի ։ Անոր համար ահա ես քեզի և քու գետերուդ դէմ եմ . ու Եգիպտոսի երկիրը՝ Մադդոդէն մինչև Սուհէնը , ու մինչև Եթէովպացւոց սահմանը՝ Աւերակ ու անչէն անապատ պիտի
11 ընեմ . Անկէ մարդու ոտը պիտի չանցնի , ոչ ալ անասունի ոտը անկէ պիտի անցնի . և քառասուն
12 տարի անբնակ պիտի մնայ ։ Ու Եգիպտոսի երկիրը՝ ամայացած երկիրներու մէջ ամայի պիտի բնեմ , և անոր քաղաքները աւերուած քաղաքներու մէջ՝ քառասուն տարի ամայի պիտի մնան , ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ , ու զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի բնեմ ։
13 Սակայն Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Քառասուն տարիէն ետքը Եգիպտացիները պիտի ժողվեմ ան

Ն·Ք·ԴԲ· 589

Ն·Գ·Լ·21·

Բ Ե·Ժ·Թ·1· Երեմ·ԽԵ·19· Խ·2·25·

Երեմ·Խ·30· Գ·Իր·22· ՀՇ·10·

Սաղ·Հ·13·14· Ե·ԽՀ·1· Ծա·9· Գ·ԼՐ·2·

Ես Գլ·Խ·1· Երեմ·Ը·2· 33· Լ·20·

Թագ·Ժր·21· Ե·Լ·6·

Երեմ·Լե·5· 7· 11· Գ·Ժե·17·

Եբր·ուսը

Գ·Ժ·17· ԼՐ·11·12· 13·

Գ·Ժ·2· Երեմ·Խ·1· Գ·Լ·6·

Գ·Լ·12·

Գ·Լ·13·

Գ·Լ·7· 26·

Ե·Ժթ·23· Երեմ·Խ·26·

Ն · ք · գԲ · 589

ազգերէն՝ որոնց միջը որ ցրուեցան .
14 Ու եգիպտացւոց գերութիւնը եւ պիտի գարձընեմ , և զանոնք Պաթուրեսի երկիրը՝ իրենց հայրենի երկիրը պիտի դարձընեմ . ու հոն
Յ ԳԼ · ԺԷ · 6 · 14 · յաճ թագաւորութիւն մը պիտի
15 ըլլան . թագաւորութիւններուն խիստ ցածը պիտի ըլլայ , ու ինքզինքն ալ ազգերուն վրայ պիտի չբարձրանայ . վասն զի զանոնք պիտի պզտիկցընեմ , որ ազգերուն վրայ
Ե Ես · Լ · 2 · 3 · ԼԶ · 4 · 6 · 16 չտիրեն . Ու անոնք ինքզինքն ալ Իսրայէլի տանը ապաւինութիւն պիտի չըլլան , որ իրենց եւեէն երթալնուն անօրէնութիւնը յիշուի . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէր Եհովան .

572 17 Ու եղաւ որ քսանուեօթներորդ տարին՝ առաջին ամսուն առաջին օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
Ե Երեմ · ԽԷ · 6 · ԳԼ · ԻԶ · 7 · 8 · 18 լով . Որդի մարդոյ՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը՝ իր զօրքը մեծ ծառայութեան դործածեց Տիւրոսի դէմ . ամէն գլուխ կնտացաւ , ու ամէն ուսին մաղթը ելաւ . սակայն իրեն ու իր զօրքին ինչ հատուցում մը չեղաւ Տիւրոսէն՝ ան ծառայութեանը համար
19 որ անոր դէմ բրաւ : Ընոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . ահա ես Եգիպտոսի երկիրը Բարիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին պիտի տամ . ու անոր բազմութիւնը պիտի առնէ , և անոր կողոպուտը պիտի կողոպտէ , ու անոր աւարը պիտի յափշտակէ . և ՚ՈՒՆ անոր զօրքին վարձք մը պիտի ըլլայ :
Ե Տես Երեմ. ԽԷ . 9 · 20 Հոն բրած գործին համար՝ Եգիպտոսի երկիրը անոր տուի . վասն զի ինծի համար աշխատեցան՝ կ'ը-
Յ Ա Սադ · ՃԼԲ · 17 · 21 սէ Տէր Եհովան : Ընդ օրը Իսրայէլի տանը եղջիւրը պիտի բուսցընեմ . ու անոնց միջը քեզի Եբրայեցի բացութիւն պիտի տամ . ու պիտի
Ե ԳԼ · ԻԳ · 27 · գիտնան թէ ես եմ Տէրը :

ԳԼ · Լ

1 Եգիպտոսին ու անոր օգնականներուն կործանումի : 20 Բաբիլոնին բաղուկը պիտի զօրացնայ՝ որ Եգիպտոսին բաղուկը կոտրէ :

572 1 Դարձեալ Տէրոջը խօսքը ինծի ե-
2 ղաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ մարգարէութիւն բրէ , ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . ՚Ողբացէք , ՚՚ ԸՆ՛ · Ա · Ա · Ա

ու Խուբաստին կտրիճները սրով պիտի իյնան . ու անոնց ք՝ե-լիքները
18 գերութեան պիտի երթան ։ Նաև Ցափնասի մէջ ցորեկը խաւար պիտի ըլլայ , երբոր հոն եգիպտոսի լուծերը կոտրեմ . ու հոն անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի ուչնանայ . զանիկայ ամպ պիտի ծածկէ . և անոր աղջիկները գերու-
19 թեան պիտի երթան ։ Այսպէս եգիպտոսի մէջ դատաստաններ ՚ի գործ պիտի դնեմ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

588
20 Ու եղաւ որ միտասաներորդ տարին՝ առաջին ամսուն եօթ-
նին՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ը-
21 սելով . Որդի մարդոյ՝ եգիպտոսի Փարաւոն թագաւորին բազուկը կոտրեցի . և ահա անիկայ պիտի չխամրթուի , ոչ ալ անոր վրայ դեղեր ու կապեր դնելով՝ զանիկայ պիտի պատեն , որ զօրանայ սուր
22 բռնելու ։ Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ահա ես Եգիպտոսի Փարաւոն թագաւորին դէմ եմ , ու անոր բազուկները պիտի կոտրեմ , թէ զօրաւորը , և թէ կոտրածը . և սուրը անոր ձեռ-
23 քէն վար ձգել պիտի տամ ։ Ու Եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ , և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ ։
24 Ու Բաբիլոնի թագաւորին բազուկները պիտի զօրացընեմ , և իմ սուրս անոր ձեռքը պիտի տամ . իսկ Փարաւոնի բազուկները պիտի կոտրեմ . ու անիկայ անոր առջևը ՚ի մահ վիրաւորուածին հե-
25 ծութեամբը պիտի հեծէ ։ Այսպէս Բաբիլոնի թագաւորին բազուկները պիտի զօրացընեմ . ու Փարաւոնին բազուկները պիտի իյնան . և ու երբոր իմ սուրս Բաբիլոնի թագաւորին ձեռքը տամ . և ան ալ զանիկայ եգիպտոսի երկրին վրայ երկրնցընէ , պիտի
26 գիտնան թէ ես եմ Տէրը ։ Ու եգիպտացիները ազգերուն մէջ պիտի ցրուեմ , և զանոնք երկիրներուն մէջ ցիրուցան պիտի ընեմ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

ԳԼՈՒԽ ԼԱ

1 Մարգարէն իր խօսքը Փարաւոնին ուղղելով՝ 3 կը սոսրագրէ անոր՝ Ասորեստանի փառքը , 10 և անոր կործանումը իր հպարտութեանը համար . 18 և նոյն կործանումը կը սպառնայ եգիպտոսին ալ ։

1 Ու եղաւ որ միտասաներորդ տարին երրորդ ամսուն առաջին օրը՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսե-
2 լով . Որդի մարդոյ՝ եգիպտոսի Փարաւոն թագաւորին , ու անոր-

ն · ք · գբ · 572

ե Երեմ . բ · 16 ։

ե Ես . ի · 7 ։

ե Երեմ . խբ · 25 ։
ե Երեմ . խգ · 11 ։

է Սադ . լե · 17 ։

դ Հմր 26 ։ Գլ . իհ . 12 ։

է Սադ . թ · 16 ։

ը Հմր 23 ։ Գլ . իհ . 12 ։

ն · ք · գբ · 588

ը Հմր 18 ։
բ Դան . գ · 10 ։

* կ՚ամ պերու

† Ցես Երեմ . ծա · 36 ։

գ Դան . գ · 11 ։

ե Գլ . ժէ · 23 ։ Դան . գ · 12 ։

է Ել . ը · 8 ։ ժգ · 10 ։ Գլ . իբ · 13 ։

թ Եբ · բարձրացաւ ։
է Դան . է · 20 ։

ը Գլ . իբ · 7 ։

ի Գլ . լբ · 5 ։ լե · 8 ։

ժ Ես . ժբ · 6 ։ Գլ . լբ · 4 ։

բազմութեանը ըսէ . Դուն քու մեծութեամբդ որու կը նմանիս ։
3 Ահա Ասորեստանցին Լիբանանի մէջ եղող եղևինի մը նէ՛ր էր . անոր ոստերը գեղեցիկ , ու տերևախիտ շառաւիղները հովանաւոր էին , ու հասակը բարձր էր . և անոր գլուխը *խիտ ճիւղերու՚՚ մէջ էր ։
4 †Ջուրերը զանիկայ մեծցուցին . անդունդները զանիկայ բարձրացուցին . իրենց գետերը անոր տունկուած տեղին բոլորտիքը կը պտրտէին , ու իրենց վտակները դաշտին
5 բոլոր ծառերուն կը խրկէին ։ Ան պատճառով անոր հասակը դաշտին բոլոր ծառերէն բարձր եղաւ . ու տարածուելով՝ ջուրերուն շատութենէն անոր ոստերը շատցան ,
6 և շառաւիղները երկընցան ։ Անոր ոստերուն վրայ՝ երկինքի բոլոր թռչունները բոյն կը շինէին , ու շառաւիղներուն տակ դաշտի բոլոր գազանները կը ծնանէին , և անոր հովանիին տակ բոլոր մեծ ազ-
7 գերը կը բնակէին ։ Ու իր մեծութեամբը , ու իր ոստերուն երկայնութեամբը գեղեցիկ էր . վասն զի անոր արմատը շատ ջուրերու քով
8 էր ։ Աստուծոյ դրախտին եղևիններն զանիկայ չէին ծածկեր . մայր ծառերը անոր ոստերուն չէին նմաներ , ու սօսիները անոր շառաւիղներուն պէս չէին . Աստուծոյ դրախտին մէջ բնաւ մէկ ծառ մը գեղեցկութեան կողմանէ անոր նը-
9 ման չէր ։ Զանիկայ՝ իր ոստերուն շատութիւնովը գեղեցիկ շիներ էի . ու Աստուծոյ դրախտին մէջ եղող Եդէմի բոլոր ծառերը անոր կը նախանձէին ։
10 Անոր համար Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Որովհետև հասակով †բարձրացար , ու գլուխը խիտ ճիւ-
ղերուն մէջը վերցուց , և իր սիրտը իր բարձրութեամբը հպարտացար ,
11 Ես ալ զանիկայ ազգերուն զօրաւորին ձեռքը տուի , որ անշուշտ անոր հպարտութեանը պիտի ընէ . զանիկայ իր չարութեանը համար քշեցի ։
12 Ու օտարները՝ ազգերուն բռնաւորները զանիկայ կտրեցին , և զանիկայ թողուցին . Անոր ոստերը լեռներու վրայ՝ ու ամէն հովիտներու մէջ բնկան , և անոր շառաւիղները՝ երկրին ամէն ձորերուն մէջ կոտրեցան . ու երկրիս ամէն ժողովուրդները՝ անոր հովանիէն ի-
13 ջան , ու զանիկայ թողուցին ։ Անոր բնկած ոտքերուն վրայ՝ երկինքի բոլոր թռչունները պիտի բնակին , և անոր շառաւիղներուն վրայ՝ դաշտի բոլոր գազանները պիտի բլլան ։
14 Որպէս զի ջրասուն ծառերը՝ բնաւ

իրենց հասակին վրայ չհպարտանան, և իրենց գլուխը խիտ ճիւղերուն մէջը չվերցընեն, ու բոլոր ջրով *ոռոգուածները անոնց հպարտութեանը համար անոնց չյարին" . վասն զի ամէնը Էգետնի տակերը Էմահուան ձեռքը տրուած են դուրը իջնող մարդոց որդիներուն մէջ ։

15 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Գերեզմանը իջած օրը՝ սուգ բռնել տուի . անոր համար անդունդը ծածկեցի , ու անոր գետերը արգիլեցի . և շատ ջուրեր արգիլուեցան . ու անոր համար Լիբանանին սուգ հագուցի . և անոր համար դաշտի

16 բոլոր ծառերը թառամեցան ։ Երբոր Էզանիկայ գուրը իջնողներուն հետ գերեզմանը իջեցուցի , Էանոր կործանմանը ձայնէն ազգերը դողացուցի . ու Էդէնին բոլոր ծառերը՝ Լիբանանին ընտիր ու գեղեցիկ Է--Էրը՝ ամէն ջրով ոռոգուածները՝ Էգետնին տակերը մխիթարուեցան ։

17 Ընոնք ալ անոր հետ՝ սրով սպաննուածներուն քովը՝ գերեզմանը իջան . ու նաև անոր բազուկը Էղէնէրը , որ Էանոր հովանիին տակը՝ ազգերուն մէջ կը նստէին ։

18 Ովն ասանկ փառքով ու մեծութեամբ որու կը նմանիս Եդէմի ծառերուն մէջը . դուն Եդէմի ծառերուն հետ գետնին տակը պիտի նետուիս , -- Էսրով սպաննուածներուն հետ անթլփատներուն մէջը պիտի պառկիս ։ Փարաւոնը , ու անոր բոլոր բազմութիւնը այսպէս պիտի ըլլայ , կ'ըսէ Տէր Եհովան ։

ԳԼ . ԼԲ

1 Մարգարէն կ'ողբայ Եգիպտոսի ասկային կործանմանը վրայ . 11 կը նախատնձի Իւրբլոնի սուրը պիտի կորսընցնէ զանիկայ , 17 ու բոլոր անթլփատ ազգերուն մէկտեղ պիտի իջնէ ։

587

1 Ու եղաւ որ երկոտասաներորդ տարին՝ երկոտասաներորդ ամիսը՝ ամսուն առաջին օրը՝ Տէրոջը խօսքը

2 ինծի եղաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ Եգիպտոսի Փարաւոն Թագաւորին վրայ Էոգը բրէ , ու անոր ըսէ . Էդուն ազգայ մէջ առյդ առիւծի կը նմանիս , և ծովերու մէջ վիշապի պէս ես . դուն գետերուդ վրայ կը յարձակիս , ու ոտքերովդ ջուրերը կը խառնես , և

3 Էանոնց գետերը կը պղտորես ։ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ես շատ ազգերու ժողովուրդով՝ Էիմ ցանցս քու վրադ պիտի տարածեմ . և քեզ իմ ուռկանովս պիտի հանեն ։

4 Ու քեզ գետինը պիտի նետեմ , և քեզ դաշտի երեսին վրայ պիտի ձգեմ , ու Էքու վրադ երկինքին բոլոր թռչունները պիտի իջեցընեմ . ու բոլոր երկրին գազանները քեզմէ պիտի կշտացընեմ . Եւ քու մարմինդ Էլեռներուն վրայ պիտի դնեմ , ու քու դէզերովդ ձորերը պիտի

6 լեցընեմ ։ Եւ քու լողացած երկիրդ՝ մինչև լեռները՝ քու արիւնովդ պիտի ոռոգեմ . ու հեղեղատները

7 քեզմէ պիտի լեցուին ։ Ու երբոր քեզ մարեմ , Էերկինքը պիտի ծածկեմ , ու անոր աստղերը պիտի խաւարեցընեմ . արեւը ամպով պիտի ծածկեմ , ու լուսինը իր լոյսը

8 պիտի չտայ ։ Քու վրադ երկինքին բոլոր լուսաւորները պիտի խաւարեցընեմ , և քու երկրիդ վրայ մթութիւն պիտի բերեմ , կ'ըսէ

9 Տէր Եհովան ։ Ու երբոր քու կործանմանդ լուրը՝ ազգերուն ու քու չգիտցած երկիրներուդ հասցընեմ , շատ ժողովուրդներուն սիրտը պի-

10 տի խռովեցընեմ ։ Եւ Էքու պատճառուդ շատ ժողովուրդներ պիտի ապշեցընեմ . ու քու պատճառուդ անոնց թագաւորները խիտ պիտի զարհուրին , երբոր իմ սուրս անոնց երեսին առջեւ երերցընեմ . ու քու կործանմանդ օրը՝ ամէն մարդ իր հոգիին համար Էամէն վայրկեան պիտի սարսափի ։

11 Էքանզի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Բաբելոնի թագաւորին

12 սուրը քու վրադ պիտի գայ ։ Քու բազմութիւնդ զօրաւորներուն սուրերովը վար պիտի ձգեմ . անոնց ամէնը Էազգաց բռնաւորներն են . ու Էանոնք Եգիպտոսի փառքը պիտի կողոպտեն . ու անոր բոլոր

13 բազմութիւնը պիտի կորսուի ։ Եւ անոր բոլոր անասունները՝ շատ ջուրերուն քովէն պիտի կորընչցընեմ . ու Էմէկմէն ալ մարդու ոտքը զանոնք պիտի չպղտորէ . անասունի կճղակներն ալ զանոնք պիտի չը-

14 պղտորեն ։ Ըն ատենը անոնց ջուրերը ականակիտ պիտի բնեմ , և անոնց գետերը եղի պէս պիտի քա-

15 լեցընեմ՝ կ'ըսէ Տէր Եհովան , երբոր Եգիպտոսի երկիրը աւերակ դարձընեմ , ու երկիրը Էբոլորովին ամայի մնայ , -- երբոր անոր բոլոր բնակիչները զարնեմ . հև պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

16 Ըս Էողբն է , որ պիտի գրուցեն . զանիկայ ազգայ աղջիկները պիտի գրուցեն . Եգիպտոսի վրայ , ու անոր բոլոր բազմութեանը վրայ զանիկայ պիտի գրուցեն , կ'ըսէ Տէր Եհովան ։

17 Ու եղաւ որ երկոտասաներորդ տարին՝ ամսուն տասնուհինգին՝ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով .

Ն . Ք . ՂԲ . 588

* Կ՚ոռոգուած ան-անոնց կազ-մները Իւրենց հպարտութեանը մէջ հասատատ չկենան .

Է Գէ . ԼԲ . 18 ։

Ը Սաղ . Ձբ . 7 ։

Ի Եզ . ԺԳ . 15 ։

Ժ Գէ . ԻԶ . 15 ։

Ւ Եզ . ԺԳ . 8 ։

Խ Գէ . ԼԲ . 31 ։

Ծ Ողբ . Գ . 20 ։

Ձ Հմր 2 ։ Գէ . ԼԲ . 19 ։

Ղ Գէ . ԻԲ . 10 ։ ԼԲ . 19 . 21 . 24 . ԸԱ ։

Ն . Ք . ՂԲ . Իբ 587

Ե Գէ . Լ . 13 ։

Զ Գէ . Լ . 12 ։

Է Ես . ԺԳ . 10 ։ Յովէլ . Բ . 31 ։ Գ . 15 ։ Ամո . Բ . 9 ։ Յայտ . Գ . 12 ։ 13 ։ Մատ . Իգ . 29 ։

Ը Գէ . ԻՀ . 35 ։

Թ Գէ . ԻՀ . 16 ։

Ժ Երեմ . Խգ . 26 ։ Գէ . Լ . 4 ։

ԺԱ Գէ . ԻԲ . 7 ։

ԺԲ Գէ . ԻԹ . 19 ։

ԺԳ Գէ . ԻԹ . 11 ։

ԺԴ ԵԶր . Իր լուսաբանէն

ԺԵ Ել . Է . 5 ։ Ժգ . 4 . 18 ։ Սաղ . Թ . 16 ։ Գէ . Գ . 7 ։

ԺԶ Հմր 2 ։ Տնօրինութ . Բ . 17 ։ Բ Մն . Ի . 25 ։ Գէ . Իգ . 17 ։

18 Որդի մարդոյ՝ Եգիպտոսի բազմու-
թեանը վրայ ողբա . և զանիկայ՝
ու երեւելի ազգերուն աղջիկները՝
Ադուբը իջնողներուն հետ՝ դեպի
19 տակերը իջեցուր ։ ᵍԴուն որմէ՞ գե-
ղեցիկ ես . ʰիջիր , ու անթլփատ-
20 ներուն հետ պառկէ՛ ։ Անոնք սրով
սպաննուածներուն մէջը պիտի իյ-
նան . անիկայ սուրի տրուեցաւ .
զանիկայ ու անոր բոլոր բազմու-
21 թիւնը քաշկրտեցէք ։ ʲԳերեզ-
մանին մէջէն զօրաւոր կտրիճները՝
անոր օգնութիւն ընդներուն հետ՝
անոր պիտի զրուցեն . ᵏանոնց սր-
բով սպաննուած անթլփատները
հոն իջած կը պառկին ։
22 ˡԱսուրը , ու իր բոլոր ժողովքը
հոն է . անոր գերեզմանները իր
բոլորտիքն է . ամէնը սպաննուած՝
23 սրով ինկած են . ᵐՈրուն գերեզ-
մանները դուբին խորունկ տե-
ղուանքը տեղաւորուած են , ու
անոր ժողովքը իր գերեզմանին բո-
լորտիքն է . ամէնը սպաննուած՝
սրով ինկած են , անոնք որ ⁿկեն-
դանեաց երկրին մէջ վախ կու տա-
յին ։
24 ᵒԵղամը , ու իր բոլոր բազմու-
թիւնը հոն անոր գերեզմանին բո-
լորտիքն է . ամէնը սպաննուած՝
սրով ինկած են , ու Ադեռնին տա-
կերը անթլփատ իջան , ᵖանոնք որ
կենդանեաց երկրին մէջ իրենց վա-
խը կու տային . սակայն դուբը
իջնողներուն հետ իրենց ամօթը կը
25 կրեն ։ Սպաննուածներուն մէջը
անկողին դրին անոր , ու իր բոլոր
բազմութեանը . անոր գերեզման-
ները իր բոլորտիքն է . ամէնը սրով
սպաննուած անթլփատներ են .
թէպէտև անոնք կենդանեաց երկ-
րին մէջ իրենց վախը կու տային ,
սակայն դուբը իջնողներուն հետ
իրենց ամօթը կը կրեն . անիկայ
սպաննուածներուն մէջը դրուած
է ։
26 ᵠՄոսոքը ʳԹոբէլը , և անոր
բոլոր բազմութիւնը հոն է . անոր
գերեզմանները իր բոլորտիքն է .
ամէնը Ադրով սպաննուած անթլ-
փատներ են , թէպէտև անոնք
կենդանեաց երկրին մէջ իրենց վա-
27 խը կու տային ։ ˢԵւ անոնք ան-
թլփատներէն իյնող զօրաւորնե-
րուն հետ պիտի չպառկին , որոնք
իրենց պատերազմական զէնքերովը
գերեզմանը իջան , ու իրենց սու-
րերը իրենց գլուխներուն տակը դը-
րին . սակայն անոնց անօրէնու-
թիւնները իրենց ոսկորներուն վրայ
պիտի ըլլայ , թէև անոնք կենդա-
նեաց երկրին մէջ զօրաւորներուն
28 սարսուռն էին ։ Եւ դուն ան-
թլփատներուն մէջը պիտի կոտ-
րուիս , ու սրով սպաննուածնե-
րուն հետ պիտի պառկիս ։
29 ᵗԵդովմը՝ անոր թագաւորները ,
ու բոլոր իշխանները հոն են , որոնք
իրենց զօրութեամբը սրով սպան-
նուածներուն հետ դրուած են .
անոնք անթլփատներուն հետ , ու
գուբը իջնողներուն հետ կը պառ-
կին ։
30 ᵘՀիւսիսի բոլոր իշխանները և
բոլոր Սիդոնացիք հոն են , որոնք
սպաննուածներուն հետ իջան . ա-
նոնք իրենց ահարկութեամբը իրենց
զօրութենէն կ՛ամչնան , և անոնք
սրով սպաննուածներուն հետ ան-
թլփատ կը պառկին , ու գուբը
իջնողներուն հետ իրենց ամօթը կը
կրեն ։
31 Փարաւոնը զանոնք պիտի տես-
նէ , և իր բոլոր բազմութեանը հա-
մար ˣպիտի մխիթարուի . Փարա-
ւոնը ու իր բոլոր զօրքը որ սրով
սպաննուեցան , կ՛բսէ Տէր Եհովան ։
32 ʸՔանզի կենդանեաց երկրին մէջ
իմ վախս դրի . և՝ անիկայ ան-
թլփատներուն մէջ սրով սպան-
նուածներուն հետ պիտի պառկի ,
ᶻՓարաւոնը ու անոր բոլոր
բազմութիւնը , կ՛բսէ Տէր Եհովան ։

ԳԼ . ԼԳ

1 Դէտի մը՝ ժողովուրդը զգուշացնելու պար-
տաւորութեանը համար՝ 7 Եզեկիէլ կը խր-
բատուի որ իր պարտքը կատարէ ։ 10 Ա-
տուած կ՛արդարացնէ իր ըրածները թէ ա-
պաշխարողներուն և թէ ապստամբներուն .
17 իր արդարութիւնը կը պաշտպանէ ։ 21
Եզեկիէլ՝ Երուսաղէմին առնուելուն լուրը ի-
մանալով , կը նախատեսէ երկրին ամայու-
թիւնը ։ 30 Մարգարէները ծաղր ընդներուն
վրայ գալու Ասուածոյ դատաստանը ։

1 ᵃԿարձեալ Տէրոջը խօսքը ինծի և-
2 ղաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝
Ազգիդ ժողովրդեանդ որդւոցը խօ-
սէ , ու անոնց բսէ . ᵇԹէ որ երկրի
մը վրայ սուր բերեմ , ու ան երկրին
ժողովուրդը իրենց մէջէն մէկ մարդ
մը ընտրեն , ու զանիկայ իրենց հա-
3 մար ᶜդէտ դնեն . Ու անիկայ ան
երկրին վրայ սուրին գալը տեսնէ ,
և փողը ՀՀչեցընէ ու ժողովուրդը
4 զգուշացընէ . Ըն առնը թէ որ
փողին ձայնը լսողը չզգուշանայ , և
սուրը գայ՝ զանիկայ վերցընէ , Ա-
նոր արիւնը իր գլուխը պիտի ըլլայ ։
5 Անիկայ փողին ձայնը լսեց , ու չը-
զգուշացաւ . անոր արիւնը իր վրայ
պիտի ըլլայ · բայց զգուշացողը իր
6 հոգին կ՛ազատէ ։ Իսկ թէ որ
դէտը սուրին գալը տեսնէ , և փողը
չՀՀչեցընէ , ու ժողովուրդը չզգու-
շանայ , և սուրը գայ՝ ու անոնցմէ
մէկ հոգի մը վերցընէ , Անիկայ իր
անօրէնութեանը համար վերցուե-

ՆԱՀ . Բ . ԳԲ . 587

Ը ԳԼ . ԻԳ . 20 , Լ . 14 ։
ᵍ ԳԼ . Լ . 2 , 18 ։
ʰ Հմր 21 , 24 , ՃԱ , ԳԼ . ԻԲ . 10 ։
ʲ Եհ . ա . 31 , Ժգ . 9 , 10 , Հմր 27 ։
ᵏ Հմր 19 , 25 , ՃԱ ։
ˡ Ծննդ Հմր 24 , 26 , 29 , 30 ։
ᵐ Եհ . Ժգ . 15 ։
ⁿ ԳԼ . ԻԳ . 17 , 20 , 24 , 25 , 26 , 27 , 32 ։
ᵒ Ծննդ . Ժ . 34 , ՃԱ ։
ᵖ Հմր 21 ։
Հմր 23 ։
ᵠ Ծննդ . Ժ . 2 , ԳԼ . ԻԿ . 13 , Լ . 2 ։
ʳ Հմր 19 , 20 , ՃԱ ։
ˢ Հմր 21 , Եհ . Ժգ . 18 , 19 ։
ᵗ Ծննդ . Ժ . 2 , ԳԼ . Լ . 6 , 15 , ԼԹ . 2 , Ա Մնաց . Ա . 5 ։
ᵘ ԳԼ . ԼԲ . 21 ։
ᵛ ԳԼ . Լ . 16 ։
ʷ Կ՛ըսէ Թէ և կենդանեաց երկրին մէջ անոր վախը դրի . Բայց
ՆԱՀ . Բ . ԳԲ . Իբր 587
ˣ ԳԼ . ԻԲ . 12 , ՃԱ ։
ʸ ԳԼ . Լ . 6 , 15 , ԼԹ . 2 , Ա Մնաց . Ա . 5 , ԳԼ . ԻԲ . 21 ։
ᶻ Ծննդ . Ժ . 2 , ԳԼ . ԻԿ . 13 , Լ . 2 ։
ᵃ ՆԱՀ . Գ . 11 ։
ᵇ ԳԼ . Ժգ . 17 ։
ᶜ Ա Թագ . Ժը . 24 , 25 , Գ Թագ . Թ . 17 , Հմր 7 ։
ᵈ ԳԼ . Ժը . 13 ։
ᵉ Հմր 8 ։

587

Ն·Ք·ԳԲ· Իսր 587

ՀԳԼ·Գ·17, ՃԻ,

ցաւ . բայց անոր արիւնը գէտին ձեռքէն պիտի պահանջեմ ։

7 Ուստի դուն՝ որդի մարդոյ՝ քեզ Իսրայէլի տանը դէտ դրի . ու իմ բերնէս խօսք լսես , և իմ կողմանէս

8 զանոնք զգուշացընես ։ Երբոր ամբարշտին ըսեմ ԹԷ՝ Ո՛վ ամբարիշտ՝ անշուշտ պիտի մեռնիս , ու դուն ամբարիշտը իր ճամբայէն զգուշացընելու համար չխօսիս , ան ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի . բայց անոր արիւնը քու ձեռքդ պիտի փընդ-

9 արուեմ ։ Իսկ թէ որ դուն ամբարիշտը իր ճամբայէն զգուշացընես՝ որ անկէ դառնայ , ու անիկայ իր ճամբայէն չդառնայ , անիկայ իր անօրէնութեանը մէջ պիտի մեռնի . բայց դուն քու հոգիդ ազատած կ՚ըլլաս ։

10 Եւ դուն՝ որդի մարդոյ՝ Իսրայէլի տանը ըսէ . Դուք այսպէս կը խօսիք ու կ՚ըսէք . Մեր յանցանքները ու մեղքերը մեր վրայ են . ու մենք անոնց մէջը կը մաշինք . ուրեմն ինչպէս պիտի ապ-

11 րինք ։ Անոնց ըսէ . Ես կենդանի եմ՝ կ՚ըսէ Տէր Եհովան , որ Համբարշտին մեռնիլը չեմ ուզեր . հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի . դարձէ՛ք դարձէ՛ք ձեր չար ճամբաներէն . վասն զի ինչո՞ւ մեռնիք՝ ով Իսրայէլի տունը ։

12 Եւ դուն՝ որդի մարդոյ՝ քու ժողովրդիդ որդւոցը ըսէ . Ուրդարին արդարութիւնը՝ անոր յանցանք ըրած օրը՝ զանիկայ պիտի չազատէ . ու ամբարշտին ամբարշտութիւնը՝ և իր ամբարշտութենէն դարձած օրը՝ իրեն գլորման պատճառ պիտի չըլլայ . ոչ ալ արդարը՝ մեղք գործած օրը՝ իր ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ պիտի կրնայ ապրիլ ։

13 Երբոր ես արդարին ըսեմ՝ թէ անշուշտ պիտի ապրի . ու ինքնիկայ իր արդարութեանը ապաւինելով՝ անօրէնութիւն ընէ , անոր բոլոր արդարութիւնը պիտի չյիշուի . հապա անիկայ իր ըրած անօրէնու-

14 թեանը մէջ պիտի մեռնի ։ Ու երբոր ամբարշտին ըսեմ՝ թէ՝ Դուն անշուշտ պիտի մեռնիս . ու անիկայ իր մեղքէն դառնայ , և իրաւունք

15 ու արդարութիւն ընէ . Ան ամբարիշտը գրաւը ետ տայ , ա՛յսինքն՝ յափըշտակածը հատուցանէ , և անօրէնութիւն չընելով՝ կենաց կանոններուն համեմատ քալէ , անիկայ անշուշտ պիտի ապրի , պիտի չը-

16 մեռնի . Անոր գործած բոլոր մեղքերը իրեն դէմ պիտի չյիշուին . անիկայ իրաւունք ու արդարու-

Ն·Ք·ԳԲ· Իսր 587

ՖՀՐ 20, ԳԼ· ԺԸ·25, 29,

ՈՒԼ·ԺԸ·26, 27,

ՅՀՐ 17 , ԳԼ·ԺԸ·25, 29,

ՆԳԼ·Ա·2,

ԷԳԼ·ԻԳ·26,

ՁԹԱԳ·ԻԲ, 4,

ԷԳԼ·Ա·3,

ՃԳԼ·ԻԳ·27,

ՖՀՐ 27, ԳԼ ԼԳ·4,

ՁԵՍ·ՅԱ·2, ԳԱՐ·Է·5,

ՁՏԱ ՄԻՔ· Գ·11, ՄԱՍ· Գ·9, ՅՕՆ· Բ·32,

ՀՆՖՆ·Թ·4, ՂԱ·Գ·17, Է·26, ԺԱ· 10, ԺԹ· 26, Բ ՕՐ· ԺԸ·16,

ՇԳԼ·ԺԸ· 6,

ԲԳԼ·ԻԲ· 6, 9,

ՃԳԼ·ԺԸ· 6, ԻԲ·11,

ՁՀՐ 24,

ՃԳԼ·ԼԹ· 4,

ՃԴԱՍ·Գ· 2, ԱԹԱԳ· ԺԳ·6,

ՃԵՐԵՄ·ԽԳ· 2, 6, 22, ԳԼ·ԼԶ· 34, 35,

ՁԳԼ·Է·24, ԻԳ·21, Լ· 6, 7,

ՇԳԼ·Գ·2, 3, 6,

թիւն ըրաւ , անշուշտ պիտի ապրի ։

17 Եւ քու ժողովուրդիդ որդիքը կ՚ըսեն ԹԷ՝ Տէրոջը ճամբան ուղիղ չէ . սակայն իրենց ճամբան է որ

18 ուղիղ չէ ։ Երբոր արդարը իր արդարութենէն դառնայ՝ ու անօրէնութիւն ընէ , անիկայ անոր մէ-

19 ջը պիտի մեռնի ։ Ու երբոր ամբարիշտը իր ամբարշտութենէն դառնայ , և իրաւունք ու արդարութիւն ընէ , անիկայ անոնցմով պի-

20 տի ապրի ։ Բայց դուք կ՚ըսէք ԹԷ՝ Տէրոջը ճամբան ուղիղ չէ . Ես ձեր ամէն մէկուն դատաստանը իր ճամբաներուն համեմատ պիտի տեսնեմ՝ ով Իսրայէլի տունը ։

21 Ու եղաւ որ մեր գերութեանը երկոտասաներորդ տարին՝ տասներորդ ամսուն հինգերորդ օրը՝ Երուսաղէմէն ազատուածին մէկը ինծի եկաւ , ու ըսաւ . Քաղաքը

22 առնուեցաւ ։ Եւ ան ազատուածը չեկած՝ իրիկունը Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ , ու իմ բերանս բացաւ մինչև որ առաւօտուն անիկայ ինծի եկաւ , ու երբոր բերանս բացուեցաւ , ալ համր չեղայ ։

23 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝

24 ըսելով . Որդի մարդոյ՝ ասոնք Իսրայէլի երկրին աւերակներուն բնակիչները կը խօսին ու կ՚ըսեն . Աբրահամ մէկ մարդ մըն էր , ու երկիրը ժառանգեց . մենք որ շատ ենք , երկիրը մեզի ժառանգութիւն

25 տրուեցաւ ։ Անոր համար ըսէ անոնց . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Դուք ձեր արիւնով կ՚ուտէք , ու ձեր աչքերնիդ ձեր կուռքերուն կը վերցընէք , և արիւն կը թափէք . ու երկիրը պիտի ժա-

26 ռանգէք ։ Դուք ձեր սուրերուն կ՚ապաւինիք , պղծութիւն կ՚ընէք . ու ձեզմէն մէկերնիդ իր ընկերին կնիկը կը պղծէ . ու երկիրը

27 պիտի ժառանգէք ։ Անոնց այսպէս ըսես . Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ես կենդանի եմ՝ որ աւերակներուն մէջ եղողները սրով պիտի իյնան , ու դաշտին երեսը եղողները՝ գազաններուն կերակուր ըլլալու պիտի տամ , և բերդերուն , ու քարայրներուն մէջ եղողները՝

28 ժանտախտով պիտի մեռնին . Ու երկիրը բոլորովին ամայի պիտի ընեմ . և անոր զօրութեանը հպարտութիւնը պիտի կորսուի . խորոյկլի լեռներն ալ ամայի պիտի ըլլան , և անոնց վրայէն անցնող պի-

29 տի չըլլայ ։ Ու երբոր երկիրը բոլորովին ամայի ընեմ իրենց ըրած բոլոր գարշութիւններուն հա-

մար , պիտի դիտեան թէ ես եմ Տէրը ։

30 Եւ դուն՝ որդի մարդոյ՝ քու ժողովուրդիդ որդիքը պատերուն քովը ու տուներուն դռները՝ քու վրայովդ խօսակցութիւն կ'ընեն . և իրարու՝ Եամէն մարդ իր եղբօրը կը զրուցէ՝ ու կ'ըսէ . Հիմա եկէք ու լսեցէք՝ թէ ինչ է Տէրոջմէ և 31 լած խօսքը ։ Անոնք ժողովուրդին գալուն պէս քեզի կու գան , ու քու առջեւդ իմ ժողովուրդիս պէս կը նստին , և քու խօսքերդ կը լսեն , բայց զանոնք չեն ըներ . վասն զի անոնք իրենց բերնովը հաճութիւն կը ձեւացընեն . բայց Հոգիները իրենց ագահութեանը 32 ետեւէն կ'երթայ ։ Եւ ահա դուն անոնց՝ քաղցրաձայն ու հմուտ նուագածուի մը պէս ես , որ քու խօսքերդ կը լսեն , բայց զանոնք 'ի գործ չեն դներ ։ 33 Սակայն երբոր ասիկայ բլլայ , (ահա պիտի բլլայ ,) ան ատենը Հպիտի դիտեան՝ թէ իրենց մէջը մարգարէ կար ։

ԳԼ · Լ Դ

1 Հովիւներուն յանդիմանութիւն մը ։ 7 Ընտրեալ գառասանները անոնց դէմ ։ 11 իր հօտին վրայ ունեցած խնամքը ։ 20 Քրիստոսի թագաւորութիւնը ։

1 Պարձեալ Տէրոջը խօսքը ինծի և 2 ըսաւ՝ ըսելով . Որդի մարդոյ՝ Իսրայէլի հովիւներուն դէմ մարգարէութիւն բրէ , մարգարէութիւն բրէ , ու անոնց ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ հովիւներուն . Վա՛յ Իսրայէլի հովիւներուն՝ որոնք ինքզինքնին կ'արածեն . հովիւները՝ հօտը արածելու 3 չէ՞ն ։ Դուք ճարպը կ'ուտէք , ու բուրդը կը հագնիք , Հգեղը կը մորթէք , բայց հօտը չէք արա- 4 ծեր ։ Տկարները չուժովցուցիք , ու հիւանդները չբժշկեցիք , և կոտրածը չփաթթեցիք , ու մոլորածը չդարձուցիք , և Հկորսուածը չփնտռեցիք . հապա էրանութեամբ ու խստութեամբ անոնց 5 վրայ տիրեցիք ։ Եւ անոնք՝ հովիւ չունենալնուն համար ցրուեցան , ու ցրուելով՝ Ըդաշտի բոլոր գա- 6 զաններուն կերակուր եղան ։ Իմ ոչխարներս ամէն լեռներու վրայ , ու ամէն բարձր բլուրներու վրայ մոլորեցան , և իմ ոչխարներս բոլոր երկրի երեսին վրայ ցրուեցան , ու ինդրող չկայ , ու փնտռող չկայ ։ 7 Անոր համար ով հովիւներ՝ Տէ- 8 րոջը խօսքը մտիկ բրէք . Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան . որովհետեւ հովիւ չըլլալուն համար իմ հօտս յափշտակուեցաւ , ու իմ ոչխարներս դաշտի Հբոլոր գազաններուն կերակուր եղան . և իմ հովիւներս՝ իմ ոչխարներս չփնտռեցին , Եու հովիւները ինքզինքնին արածեցին , ու իմ հօտս չարածե- 9 ցին . Անոր համար ով հովիւներ՝ 10 Տէրոջը խօսքը մտիկ բրէք . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես հովիւներուն դէմ եմ . ու Հիմ ոչխարներս անոնց ձեռքէն պիտի պահանջեմ , և զանոնք ոչխար արածելէն պիտի արգիլեմ . ու հովիւները Եէլյմըն ալ դիրենք պիտի չարածեն . ու իմ ոչխարներս անոնց բերնէն պիտի հանեմ , որպէս զի էլյմըն ալ անոնց կերակուր չըլլան ։ 11 Վասն զի Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես ինքնին իմ ոչխարներս պիտի խնդրեմ ու պիտի փնտռեմ ։ 12 Ինչպէս որ հովիւը՝ երբոր իր ցրուած ոչխարներուն մէջը կը գտնուի , իր հօտը կը փնտռէ , այնպէս ալ ես իմ ոչխարներս պիտի փնտռեմ , ու պիտի ազատեմ զանոնք ամէն տեղերէն , ուր որ Համպի 13 ու մառախուղի օրը ցրուեցան . Եւ Հզանոնք ժողովուրդներէն պիտի հանեմ , ու զանոնք երկիրներէն պիտի ժողվեմ , ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ , և զանոնք Իսրայէլի լեռներուն վրայ՝ ձորերու մէջ՝ ու երկրին ամէն բնակուելու 14 տեղւանքը պիտի արածեմ . Հջանոնք աղէկ արօտի մէջ պիտի արածեմ . ու անոնց փարախը Իսրայէլի բարձր լեռներուն վրայ պիտի բլլայ . հոն աղէկ փարախի մէջ պիտի պառկին , ու Իսրայէլի լեռներուն վրայ՝ պարարտ արօտի մէջ 15 պիտի արածին ։ Իմ ոչխարներս ես պիտի արածեմ , ու զանոնք ես պիտի պառկեցընեմ՝ կ'ըսէ Տէր Ե- 16 հովան ։ Ըկորսուածը պիտի փնտռեմ , ու մոլորածը պիտի դարձնեմ , և կոտրածը պիտի փաթթեմ , ու հիւանդը պիտի ուժովցընեմ . բայց Հպարարտը ու զօրաւորը պիտի կորսընցընեմ . զանոնք իրաւունքով պիտի արածեմ ։

17 Եւ դուք՝ ով իմ ոչխարներս՝ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես ոչխարին ու ոչխարին , խոյերուն ու նոխազներուն միջտեղը դատա- 18 տան պիտի բնեմ ։ Միթէ աղէկ արօտի մէջ արածուիլը քի՞չ բան է ձեզի , որ ձեր արօտներուն մնացորդը ձեր ոտքերովը կը կոխէք . ու մաքուր ջուրերն Ել խմելը , որ մնացածները ձեր ոտքերովը կը պղտո- 19 ցածները ձեր ոտքերովը կը պղտորեն ։ Եւ իմ ոչխարներս ձեր ոտքերուն կոխածը կը ճարակեն , ու ձեր ոտքերէն պղտորածը կը խմեն ։

20 Անոր համար Տէր Եհովան այս-

Ն · Ք · Գ · 587
Բ Հ · 5 · 6 ։
Բ Հ · 2 · 10 ։
Ե Գ · 9 · 18 ։ Բեր · Ժ · 17 ։
Բ Հ · 2 · 8 ։
Բ Գ · Է · 8 ։ Յովէ · Բ · 2 ։
Ես · Կ · 9 · 10 · Երեմ · Իգ · 3 ։ Գ · Իր · 25 ։ Հգ · 24 · Լ · 21 · 22 ։
Ո Սաղ · Իգ · 2 ։
Յ Երեմ · Լգ · 12 ։
Ղ Տես Հմր 4 ։ Ես · Խ · 11 ։ Միք · 9 · 6 ։ Մաա · Ժ · 11 ։ Մար · Բ · 17 ։ Ղս · Ա · 32 ։
Ե Ես · Ժ · 16 ։ Ամո · 9 · 1 ։
Ր Գ · Ի · 37 · 38 ։ Հմր 20 · 22 ։ Ջար · Ժ · 3 ։ Մաա · Իե · 32 · 33 ։
Ն · Ք · Գ · 587
Բ Հ · 5 · 6 ։
Բ Հ · 2 · 10 ։
Ե Գ · 9 · 18 ։ Բեր · Ժ · 17 ։
Բ Հ · 2 · 8 ։
Ե Սաղ · Ոբ · 36 · 37 ։ Ես · Խ · 13 ։ Ղ Մաա · Ժ · 22 ։
Ե ա Թագ · 9 · 20 ։ Ը Գ · Բ · 5 ։
587
Բ Ես · Ոգ · 11 ։ Ջար · Ժա · 16 ։
Ա Կ՚ · կատ
Բ Գ · Լգ · 25 · 26 ։ Միք · 9 · 1 · 2 · 3 ։ Ջար · Ժա · 5 ։
Բ Հմր 16 ։ Ջար · Ժա · 15 ։
Ե Ղս · Ժե · 4 ։ Ղ Պաես · Ե · 3 ։
Ե 9 Թագ · Իբ · 17 ։ Մաա · Թ · 36 ։
Ը Գ · Լգ · 21 · 28 ։
Բ Ես · Ծգ · 9 ։ Երեմ · Ժբ · 9 ։ Հմր 8 ։

պէս կ'բսէ անոնց . ¹⁷Ահա ես ինքնին դատաստան պիտի ընեմ պարարտ ոչխարին ու նիհար ոչխարին մէջ.
21 տեղը : Որովհետեւ դուք յետ կողովը և ուսովը հրելիք , ու ձեր եղջիւրներովը բոլոր տկարները զարկիք , մինչեւ որ դուրսը ցրուեցիք զանոնք ,
22 ես ալ իմ ոչխարներս պիտի ազատեմ , ու մէյմէն ալ պիտի չյափշտակուին , և ոչխարին ու ոչխարին մէջտեղը դատաստան պիտի ընեմ :
23 Ու անոնց վրայ ¹⁸մէկ հովիւ մը՝ ¹⁹ծառաս Դաւիթը պիտի կեցընեմ , որ զանոնք հովուէ . անիկայ պիտի հովուէ զանոնք , և անիկայ պիտի ըլլայ անոնց հովիւը :
24 Ու ես Տէրս անոնց Աստուած պիտի ըլլամ . և իմ ծառաս Դաւիթը ²⁰անոնց մէջը իշխան պիտի ըլլայ .
25 ես Տէրս խօսեցայ : Ու ²¹անոնց հետ խաղաղութեան ուխտ մը պիտի բնեմ , ու ²²երկրէն չար գազանները բնաջինջ պիտի ընեմ . և ապահովութեամբ պիտի բնակին , ու անտառներուն
26 մէջ պիտի քնանան : Եւ զանոնք ու Հիմ լեռանս շրջակայ տեղուանքը ²³օրհնութեամբ պիտի լեցընեմ , ու ²⁴անձրևները իրենց ժամանակին պիտի իջեցընեմ . անոնք օրհնու-
27 թեան անձրևներ պիտի ըլլան : Եւ ²⁵դաշտի ծառերը իրենց պտուղը պիտի տան . ու երկիրը իր բերքը պիտի տայ . և անոնք իրենց երկրին վրայ ապահովութեամբ պիտի բնակին . ու երբոր ²⁶անոնց լուծին կապերը կոտրեմ , ու ²⁷զանոնք ի-րենց ծառայեցընողներուն ձեռքէն ազատեմ , պիտի գիտնան թէ ես
28 եմ Տէրը : Եւ անոնք մէյմէն ալ ²⁸ազգերէն պիտի չյափշտակուին . ու երկրին գազանները զանոնք պիտի չուտեն . այլ ²⁹ապահովութեամբ պիտի բնակին . ու վախցընող մը
29 պիտի չըլլայ : Եւ անոնց՝ ³⁰մէկ անուանի տունկ մը պիտի բուսցընեմ . ու մէյմէն ալ երկրին վրայ սովով պիտի չսպառին , ³¹ու մէյմէն ալ ազգերէն նախատինք պիտի չկրեն :
30 Եւ պիտի գիտնան թէ ³²ես անոնց Տէր Աստուածը՝ անոնց հետ եմ . ու անոնք Իսրայէլի տունը՝ իմ ժողովուրդս են , կ'բսէ Տէր Եհովան :
31 Եւ դուք՝ իմ ³³ոչխարներս՝ իմ արօտիս ոչխարները՝ մարդիկ էք , — ես ձեր Աստուածն եմ՝ կ'բսէ Տէր Եհովան :

ԳԼ · ԼԵ

1—15 Սէիր լեռանը բնակիչներուն դատաստանը՝ Իսրայէլը ատելուն համար :

1 Պարձեալ Տէրոջը խօսքը ինծի և-
2 զաւ՝ բսելով . Որդի մարդոյ՝

— երեսդ ³Սէիր լեռանը վրայ դարձուր , ու ⁴անոր դէմ մարգարէու-
3 թիւն բրէ , եւ անոր բսէ . Տէր Եհովան այսպէս կ'բսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝ ով Սէիր լեռ . ու ⁵իմ ձեռքս քու վրադ պիտի երկընցընեմ , ու քեզ բոլորովին
4 ամայի պիտի ընեմ . Ի քու քաղաքներդ աւերակ պիտի ընեմ , և դուն ամայի պիտի ըլլաս , ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը :
5 Ընդհակառակ դուն ⁶հինաւուրց ատելութիւն ունեցար , ու Իսրայէլի որդիքը՝ անոնց պատուհասին ժամանակը , ⁷անօրէնութեան ժամանակը լրանալուն՝ սուրին ձեռ-
6 քը մատնեցիր . Ընդհակառակ՝ ես կենդանի եմ՝ կ'բսէ Տէր Եհովան , որ քեզ արեան մէջ պիտի դնեմ . և արիւնը քեզ պիտի հալածէ . ⁸դուն արիւնը չատելուդ համար ,
7 արիւնը քեզ պիտի հալածէ : Ու Սէիր լեռը բոլորովին ամայի պիտի ընեմ , և ⁹անկէ անցնողը ու
8 դարձողը պիտի կտրեմ . ¹⁰Ու անոր լեռները՝ իր սպաննուածներովը պիտի լեցընեմ . քու բլուրներուդ վրայ , քու հովիտներուդ մէջ , ու բոլոր ձորերուդ մէջ սրով սպան-
9 նուածներ պիտի իյնան : Քեզ մշտնջենաւոր ամայութիւն պիտի ընեմ . և քու քաղաքներդ ¹¹չբնակուին պիտի . Ու պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը :
10 Որովհետեւ դուն ըսիր թէ՝ Ե-րկու ազգը , ու երկու երկիրը իմն պիտի ըլլան , ու ¹²անոնց պիտի տիրենք . (ու ¹³Տէրը հոն էր .)
11 Ընդհակառակ՝ ես կենդանի եմ՝ կ'բսէ Տէր Եհովան , որ քու թշնամութեամբդ անոնց դէմ ¹⁴ի դործ դրած բարկութեանդ ու նախանձիդ չափովը հատուցում պիտի ընեմ . և քու դատաստանդ տեսած ատենս՝ անոնց մէջը պիտի ճանչ-
12 ցուիմ : Ու պիտի գիտնաս՝ որ ես Տէրս լսեցի քու բոլոր հայհոյութիւնները՝ որ Իսրայէլի լեռներուն դէմ խօսեցար , բսելով . Անոնք աւերակ եղան . անոնք
13 մեզի կերակուր տրուեցան . Եւ ¹⁵ձեր բերնովը ինծի դէմ հպարտացաք , ու խօսքերնիդ ինծի դէմ շատցուցիք , — ես լսեցի :
14 Տէր Եհովան այսպէս կ'բսէ . Ո՞րոյր երկրին ուրախութեան ատենը՝ քեզ ամայի պիտի ընեմ :
15 ¹⁶Ինչպէս որ դուն Իսրայէլի տանը ժառանգութեանը վրայ ուրախացար , որ ամայի եղաւ , քեզի ալ այնպէս պիտի ընեմ . դուն ով Սէիր լեռ՝ ու բոլոր Եդոմ՝ բո-

Ն.Ք.ԵԲ. 587

լսրովին ամայի պիտի ըլլաս . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

Գ Լ . Լ Զ

1 Իսրայէլի երկիրը կը վերադարձուի , լսելով հեթանոսաց կործանումը , որոնք պատկառելիութեամբ կը վարուէին իրեն հետ , 8 և Աստուծոյ օրհնութիւնները՝ որ իրեն խոստացեր էին ։ 16 Իսրայէլը մերժուած էր իր մեղքերուն համար . 21 և Յորէն իր առջի փոխակին պիտի գառնար առանց իր արժանապատուութեանը ։ 25 Քրիստոսի թագաւորութեանը բարիքները ։

– Գէ . ԺԲ . 2 , 3 ։

1 Ա՛ռ դուն՝ որդի մարդոյ՝ Իսրայէլի լեռներուն մարգարէութիւն ըրէ՝ ու ըսէ . Ո՛վ Իսրայէլի լեռներ՝ Տէրոջը խօսքը մտիկ ըրէք . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ .

Բ Գէ . ԽԱ . 3 ; ԽԷ . 2 ։

2 Որովհետև Թշնամին ձեզի համար բսաւ . Վա՛յ՝ յաւիտենական բլուրներն ալ Ժառանգութիւն

Դ Գէ . Լ . 10 ։

3 եղան , Ընոր համար մարգարէութիւն ըրէ , ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Որովհետև ձեզ աւերեցին , ու ամէն կողմէն կլլեցին , այնպէս որ՝ մնացած ազգերուն ժառանգութիւն ըլլաք . Ու դուք լեզուանի Շրթներուն խօսքը , ու ժողովուրդին նախատինքը

Բ Օր . ԽԸ . 37 ; գ Թագ . Թ . 7 ; Ներ . ը . 15 ; Դան . Թ . 16 ։

4 տիրոջը եղաք . Ընոր համար՝ ով Իսրայէլի լեռներ՝ Տէր Եհովային խօսքը մտիկ ըրէք . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ լեռներուն ու բլուրներուն , ձորերուն ու հովիտներուն , և ամայի եղած աւերակներուն , ու դրդ Թողուած քաղաքներուն՝ որոնք շրջակայ ազգերուն մնացորդին Ցայտշտակութիւն ու Նախատինք եղած են ։

Ե Գէ . ԼԶ . 28 ։

Ը Սադ . ՀԹ . 4 ։

5 Ընոր համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Մնացած ազգերուն համար , ու բոլոր Եդովմին համար՝ Հանչուշտ իմ նախանձիս կրակովը խօսեր եմ . վասն զի անոնք բոլոր սրտի ուրախութեամբ , ու հոգիի հպարտութեամբ Իմ երկիրս իրենց ժառանգութիւն ըլլալու որոշեցին , որ զանիկայ աւարի պէս յափշտակեն ։

Ե Գէ . Լ . 10 , 12 ։

6 Ընոր Համար Իսրայէլի երկրին վրայ մարգարէութիւն ըրէ , և լեռներուն , ու բլուրներուն , ձորերուն , ու հովիտներուն ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Դուք Ազգերէն նախատինք կրելնուդ համար , ահա ես իմ նախանձովս , ու

Ը Մաղ . Ա Ի Զ . 3 . 4 ; Գէ . Լ Զ . 29 ; Հէր . 15 ։

7 իմ բարկութեամբս խօսեցայ , Ընոր Համար Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ես Իմ ձեռքս վերցուցի՝ որ ձեր բոլորտիրը եղող ազգերը՝ իրենց անարգանքը իրենք պիտի կրեն ։

Բ Գէ . Ի . 5 ։

8 Բայց դուք՝ ով Իսրայէլի լեռներ՝ ձեր ոստերը պիտի երկրընջենք , ու իմ ժողովուրդիս Իսրայէլին համար ձեր պտուղները պիտի բերէք . վասն զի անոնք մօտենալու 9 ըլլս պիտի գան ։ Քանզի ահա ես ձեր կողմն եմ , ու ձեզի պիտի դառնամ . և դուք պիտի մշակուիք , ու պիտի սերմանուիք . 10 Ու ձեր վրայ մարդիկներ՝ բոլոր Իսրայէլի տունը՝ ամէնը պիտի չատ ըլլան մ . ու քաղաքները պիտի բնակուին , և Տաւերակները պիտի

Ե Հէր . 33 ; Ես . Ծը . 12 ; կս . 4 ; Ամվ . Ք . 14 ։

11 շինուին ։ Ու Ես ձեր վրայ մարդը ու անասունը պիտի չատցընեմ . և անոնք պիտի չատնան , ու պտղաբեր պիտի ըլլան . և ձեր առջի կացութեանը պես ձեզ պիտի բնակեցընեմ , ու ձեր առջի վիճակէն աւելի աղէկ պիտի ընեմ Ձեզի . Ու պիտի

Ե Ծն . Լ . 27 , ԼԲ . 12 ։

Ե Գէ . Լ . 9 , Լ . 6 , 13 ։

12 գիտնաք Թէ ես եմ Տէրը ։ Եւ ձեր վրայ մարդիկներ՝ իմ ժողովուրդս Իսրայէլը պիտի պտըտցընեմ . Ե ու անոնք քեզ պիտի ժառանգեն . և դուն անոնց ժառանգութիւնը պիտի ըլլաս . ու ա՛լ զանոնք Պիտի չսպառես ։

Ե Ընդ . 17 , ՃԸ ։

Ե Ընդ . ան . գաւակ պիտի չծնես ։

13 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Որովհետև ձեզի համար կ'ըսեն Թէ՝ Դուն մարդակեր Էլլէր մըն ես . քու

Ե Թագ . Ժգ . 33 ։

14 ազգերդ սպառեցիր . Ընոր համար ա՛լ մարդ պիտի չուտես , ու ա՛լ քու ազգերդ պիտի չսպառես՝ կ'ըսէ Տէր Եհովան ։

15 Եւ քու մէջդ ա՛լ ազգերուն նախատինքը լսել պիտի չտամ . ու ա՛լ ժողովուրդներուն անարգանքը պիտի չկրես , և քու ազգերդ ա՛լ պիտի չսպառես՝ կ'ըսէ Տէր Եհովան ։

Ե Գէ . ԼԳ . 29 ։

16 Եւ Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝

17 ըսելով . Որդի մարդոյ՝ Իսրայէլի տունը իրենց երկրին մէջ բնակեցան , և Զանիկայ իրենց ճամբայով ու գործերովը պղծեցին . անոնց ճամբան իմ առջեւս Ղադաւոտանաւոր կնոջ անմաքրութեանը

Ե Ղե . Ժբ . 25 , 27 , 28 ; Երեմ . բ . 7 ։

Ե Ղե . Ժե . 19 , ՃԸ ։

18 պէս եղաւ ։ Ուստի իմ բարկութիւնս անոնց վրայ թափեցի Ես արիւնին համար՝ որ իրենք թափեցին երկրին վրայ , ու զանիկայ ի-

Ե Գէ . Ժգ . 36 , 38 ; Իգ . 37 ։

19 րենց կուռքերովը պղծեցին . Եւ Զանոնք ազգերուն մէջ ցրուեցի , ու երկիրներուն մէջ ցիրուցան եղան . Ըստ զանոնք իրենց ճամբուն , ու գործերուն համեմատ դատեցի ։

Ե Գէ . Ե . 15 ։

Ե Գէ . Ե . 8 ; Ժբ . 30 ; ԼԹ . 24 ։

20 Եւ իրենց գացած ազգերուն մէջ երթալուն պէս՝ Իմ սուրբ անունս պղծեցին , երբոր իրենց համար բսուեցաւ Թէ՝ Ասոնք Եհովային ժողովուրդն են , ու անոր երկրէն ելան ։

Ե Տես Ես . Ծբ . 5 ; Երեմ . բ . 24 ։

21 Բայց ես խնայեցի Իմ սուրբ անունս համար , որն որ Իսրայէլի տունը իրենց մտած ազգերուն մէջ պղծեցին ։

Ե Գէ . Ի . 9 , 14 ։

22 Ընոր համար Իսրայէլի տանը բսէ

որ՝ Ձեր Եհովան այսպէս կ'ըսէ. Չէ թէ ձեզի համար կ'ընեմ --Է-ֆրայիմ՝ ով Իսրայէլի տունը, Հապա իմ սուրբ անունս համար, որն որ դուք ձեր մտած ազգերուն մէջ
23 պղծեցիք։ Եւ սուրբ պիտի ընեմ իմ մեծ անունս, որ ազգերուն մէջ պղծուեցաւ, որն որ դուք անոնց մէջը պղծեցիք. ու ազգերը պիտի գիտնան թէ ես եմ Տէրը, կ'ըսէ Տէր Եհովան, երբոր անոնց աչքերուն առջեւը՝ Ձեր մէջը սրբուիմ։
24 Եւ Ձեզ ազգերէն պիտի առնեմ, ու ամէն երկիրներէն Ձեզ պիտի ժողվեմ, ու Ձեզ Ձեր երկիրը պի-
25 տի բերեմ. Ես Ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, ու պիտի մաքրուիք. Ձեր բոլոր պղծութիւններէն, ու Ձեր բոլոր կուռքերէն Ձեզ
26 պիտի մաքրեմ. Եւ Ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու Ձեր ներսի դին նոր հոգի պիտի դնեմ, և Ձեր մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու Ձեզի մարմնեղէն սիրտ
27 պիտի տամ. Եւ իմ Հոգիս Ձեր ներսի դին պիտի դնեմ, ու Ձեզ՝ իմ օրէնքներուս մէջ քալել պիտի տամ, ու իմ իրաւունքներս պիտի
28 պահէք ու՝ ի գործ դնէք. Եւ Ձեր հայրերուն տուած երկրիս մէջ պիտի բնակիք, ու դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք, ես ալ Ձեզի
29 Աստուած պիտի ըլլամ։ Եւ Ձեր բոլոր պղծութիւններէն Ձեզ պիտի ազատեմ, ու ցորենը պիտի կանչեմ, և զանիկայ պիտի շատցնեմ, ու Ձեր վրայ սով պիտի չբերեմ։
30 Եւ ծառերուն պտուղը, ու արտերուն բերքը պիտի շատցնեմ. որպէս զի ձեզմէն ալ ազգերուն մէջ
31 սովի նախատինք չկրէք։ Ու Ձեր գէշ ճամբաները, և անբարի գործքերը պիտի յիշէք, ու Ձեր անօրէնութեանցը համար, և Ձեր պղծութեանցը համար դուք Ձեր ան-
32 ձերէն պիտի զզուիք։ Չէ՛ թէ Ձեզի համար կ'ընեմ --Է-ֆրայիմ՝ կ'ըսէ Տէր Եհովան, Ձեզի յայտնի ըլլայ. Ձեր ճամբաներէն ամչցէք ու պատկառեցէք՝ ով Իսրայէլի տունը։
33 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ան օրը՝ որ Ձեր բոլոր անօրէնութիւններէն Ձեզ մաքրեմ, քաղաքները մարդաբնակ պիտի ընեմ. ու աւե-
34 րակները պիտի շինուին։ Եւ ան ամայացած երկիրը՝ ամէն անցնողին այբերուն առջեւը ամայի ըլլալուն
35 տեղը՝ պիտի մշակուի։ Ու պիտի ըսեն. Ան ամայացած երկիրը՝ Եդեմի դրախտին պէս եղաւ. և աւերակ, ամայի ու փլած քաղաքները՝ պարսպաւոր ու մարդաբնակ ե-
36 ղան։ Ու Ձեր բոլորտիքը մնացած

աղգերը պիտի գիտնան՝ թէ ես Տէրս փլածները կը շինեմ, -- ամայացած երկիրը կը տնկեմ. Ես Տէրս խօսեցայ, ու պիտի կատարեմ։
37 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Իսրայէլի տան խնդրուածքը ալ պիտի ընդունիմ՝, որ անոնց ասիկայ ընեմ. անոնց մարդիկները Հօ-
38 տի պէս պիտի շատցընեմ։ Սուրբ Հօտին պէս՝ Երուսաղէմի հանդիսաւոր տօներուն Հօտին պէս՝ աւերած քաղաքները մարդոց հօտերով այնպէս լեցուն պիտի ըլլան. ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը։

ԳԼ. ԼԷ

1 Ազատած ոսկորներուն յարութիւն առնելովը։ 11 Իսրայէլի մեռած յոյսը կը կենդանանայ։ 15 Երկու փայտերուն միանալովը 18 կը ցուցուի Իսրայէլին միաբանութիւնը Քրիստոսին տեսս։ 20 Քրիստոսի Թագաւորութեանը վրայով խոստմունքներ։

1 -Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ, և Բ†Տէրը զիս Հոգիով՝ հանեց, ու զիս դաշտին մէջը դրաւ. և անիկայ
2 ոսկորներով լեցուն էր։ Ու զիս անոնց քովերէն պտրտցուց շուրջանակի. և ահա անոնք դաշտին երեսին վրայ խիստ շատ էին, և ահա անոնք խիստ չորցած էին։
3 Ու ինծի ըսաւ. Որդի մարդոյ՝ ան ոսկորները կրնա՞ն կենդանանալ. ու ըսի. Ով Տէր Եհովայ՝
4 †դուն գիտես։ Եւ ինծի ըսաւ. Ան ոսկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ, ու անոնց ըսէ. Ով չորցած ոսկորներ՝ Տէրոջը խօսքը մտիկ ըրէք. այսպէս կ'ըսէ Տէր
5 Եհովան ան ոսկորներուն. Ահա ես †Ձեր մէջը հոգի պիտի դնեմ, ու
6 պիտի կենդանանաք. Եւ Ձեր վրայ ջիղեր պիտի դնեմ, ու Ձեզ մսով պիտի պատեմ, ու Ձեզ մորթով պիտի ծածկեմ, և Ձեր մէջը շունչ պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. և †պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը։
7 Ու ես մարգարէութիւն ըրի՝ ինչպէս որ ինծի հրամայուեցաւ. ու մինչ մարգարէութիւն կ'ընէի՝ ձայն մը եղաւ. և ահա շարժում մը եղաւ. ու ոսկորները իրարու մօտ-
8 ցան՝ ոսկորը իր ոսկորին։ Եւ տեսայ որ՝ ահա անոնք ջիղերով ու մսով պատեցան, ու վրայէն մորթով ծածկուեցան. բայց անոնց
9 մէջը շունչ չկար։ Ան ատեն ինծի ըսաւ. Շունչին մարգարէութիւն ըրէ, մարգարէութիւն ըրէ՝ որդի մարդոյ՝ ու շունչին ըսէ. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ո՛վ շունչ՝ չորս հովերէն եկուր, ու ասոնց սպանդուածներուն վրայ փչէ՝ որ կենդա-
10 նանան։ Եւ ես մարգարէութիւն

Ն. ք. գԲ. իրր 587

- Գլ. ժԱ. 24, իր. 14։ լԷ. 14։

* ԵԲԲ. տուն՝ ալ պիտի փնտրուիմ. Ես գլ. ժդ. 3։

† Հմր 10։

իրր 587

- Գլ. ա. 3։

Բ Գլ. գ. 14։ ր. 3։ ժա. 24։ Ղևտ. գ. 1։

† Կ՚ըսէ Տէրոջը հոգիով պէս

‡ ր Օր. լբ. 39։ աթագ. ր. 6։ Յով. ե. 21։ Հրաւ. գ. 17։ ր Կոր. ա. 9։

Ղ Սաղ. ճդ. 30։ Հմր 9։

Ր Գլ. գ. 7։ լե. 12։ Յովել. բ. 27։ գ. 17։

Ջ Սաղ. ճդ. 30։ Հմր 5։

Ն. ք. գԲ. 587

- Սաղ. ճգ. 8։

ՂԳլ. ի. 41։ իբ. 22։

¬ Գլ. լդ. 13։ լե. 21։

Ե Երբ. ժ. 22։

- Երեմ. լդ. 8։

- Երեմ. լբ. 39։ Գլ. ժա. 19։

Է Գլ. ժա. 19։ լե. 14։

¬ Գլ. իբ. 25։ լե. 25։

ր Երեմ. լ. 22։ Գլ. ժա. 20։ լե. 27։

ֆ Ա Սամ. ա. 21։ Հով. ժա. 26։

- Ես Սաղ. ճե. 16։

‡ Գլ. լդ. 29։

† Գլ. լդ. 27։

։ Գլ. ժզ. 61։ 63։

Ֆ Ղև. իզ. 39։ Գլ. գ. 9։ ի. 43։

- ր Օր. թ. 5։ Հմր 22։

Բ Հմր 10։

‡ Ես. ծա. 3։ Գլ. իբ. 13։ Ըզեկ. բ. 3։

Ն·Ք·ՂՔ· Իրբ 587

Է Ցայս.ժա. 11։

ը Սաղ.ճխա. 7։ Ցես Ես· խթ·14։

Ր Ես·իզ· 19։ Ովս· ժգ·14։

Ֆ Գլ·ւզ· 24։ Հմր 25։

Ի Գլ·ւզ· 27։

* Կ՚ թէ ես եմ Ցերը·ես խօսեցայ, ու պիտի կատարեմ։

Լ Ցես թաւ· ժէ·2։

Խ Ր Մն·ժա· 12·13·16· ժե·9։ Լ· 11·18։

Ծ Ցես Հմր 22·24։

Կ Գլ·ժր· 9·իգ·19։

Հ Ջաք·ժ· 6։

Ձ Հմր 16·17։

Ղ Գլ·ժր·3։

Ճ Գլ·ւզ· 24։

Մ Ես·ժա· 13։ Երեմ· գ·18։ ե· 4։ Ովս·ա· 11։

րի, ինչպէս որ ինծի հրամայեց. է ու չունչը անոնց մէջը մտաւ, ու կենդանացան, և իրենց ոտքերուն վրայ կայնեցան. — խիստ մեծ զօրք մը էր —։

11 Եւ ինծի բսաւ. Որդի մարդոյ՝ աս ոսկորները բոլոր Իսրայէլի տունն է. ահա անոնք կ՚ըսեն. Մեր ոսկորները չորցան, ու մեր յոյսը կտրեցաւ. մենք կորսուած 12 ենք։ Անոր համար մարգարէու-թիւն ըրէ, ու անոնց ըսէ. Ցեր Եհովան այսպէս կ՚ըսէ. Ահա ես ձեր գերեզմանները պիտի բանամ, ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ՝ ով իմ ժողովուրդս, և ձեզ Իսրայէլի երկիրը 13 պիտի բերեմ։ Ու երբոր ձեր գերեզմանները բանամ, ու ձեզ ձեր գերեզմաններէն հանեմ՝ ով իմ ժողովուրդս, պիտի գիտնաք 14 թէ ես եմ Ցերը։ Ես իմ հոգիս ձեր ներսի դին պիտի դնեմ, ու պիտի կենդանանաք. ու ձեր երկրին մէջ ձեզ պիտի հանգստացնեմ. ու պիտի գիտնաք որ ես Ցերս խօսեցայ ու բրի՚, կ՚ըսէ Ցերը։

15 Եւ Ցերոջը խօսքը ինծի եղաւ՝ 16 ըսելով. Ու դուն՝ որդի մարդոյ՝ Եբեզի մէկ փայտ մը առ, ու անոր վրայ գրէ. Ցուդայի համար ու Ենանոր ընկերներուն Իսրայէլի որդւոցը համար.ետքը մէկ ուրիշ փայտ մը առ, ու անոր վրայ գրէ. Ցովսեփի համար, Եփրեմին ու անոր ընկերներուն բոլոր Իսրայէլի տանը համար. 17 և զանոնք իրարու մօտեցուր, որ մէկ փայտ բլլան, ու քու ձեռքիդ 18 մէջը միանան։ Ու երբոր քու ժողովուրդիդ որդիքը քեզի խօսին ու ըսեն. Ի՞նչ պիտի բլլայ քեզի ասոնք բրաները. մեզի չե՞ս պատմեր. 19 Անոնց ըսէ. Ցեր Եհովան այսպէս կ՚ըսէ. Ահա ես պիտի առնեմ Յովսեփին փայտը՝ որ Եփրեմին ձեռքն է, ու անոր ընկերները՝ Իսրայէլի ցեղերը, և զանոնք անոր հետ Միկտեզ Ցուդայի փայտին հետը պիտի դնեմ, ու զանոնք մէկ փայտ պիտի ընեմ. ու իմ ձեռքիս մէջը մէկ պիտի բլլան։ 20 Ես ան փայտերը՝ որոնց վրայ դուն պիտի գրես, Ենանոնց աչքերուն առջեւ՝ քու ձեռքիդ մէջը բլլան։ 21 Ու անոնց ըսէ. Ցեր Եհովան այսպէս կ՚ըսէ. Ահա ես Իսրայէլի որդիքը պիտի առնեմ ան ազգերուն մէջէն՝ ուր որ գացին, ու զանոնք ամէն կողմէն պիտի ժողվեմ, ու զանոնք իրենց երկիրը 22 պիտի բերեմ. Ես զանոնք երկրին մէջը՝ Իսրայէլի լեռներուն վրայ՝ մէկ ազգ պիտի ընեմ. ու Ենանոնց ամէնուն վրայ մէկ թագաւոր մը պիտի թագաւորէ. ու մէկմէն ալ երկու ազգ պիտի չբլլան, ու մէկմէն ալ երկու թագաւորութեան պիտի չբաժնուին։ 23 Ես մէկմէն ալ իրենց կուռքերովը, ու գարշելիներովը, ու իրենց բոլոր յանցանքներովը պիտի չպղծուին. ու Ես անոնք պիտի ազատեմ իրենց բոլոր բնակութիւններէն, որոնց մէջը որ իրենք մեղք գործեցին, և զանոնք պիտի սրբեմ. ու անոնք ինծի ժողովուրդ պիտի բլլան. Ես ալ անոնց Աստուած պիտի 24 բլլամ։ Եւ Դաւիթը թագաւոր պիտի բլլայ. ու Համինքը մէկ հովիւ պիտի ունենան, Հև իմ իրաւունքներուս մէջ պիտի քալեն, ու իմ օրէնքներս պիտի պահեն, ու զանոնք պիտի կատարեն։ 25 Ես պիտի բնակին ան երկրին վրայ՝ որն որ իմ Ցակոբ ծառայիս տուի, որուն մէջ ձեր հայրերը բնակեցան. ու անոր վրայ՝ իրենք, ու իրենց որդիքը, և իրենց որդւոցը որդիքը՝ յաւիտեան պիտի բնակին. ու Դաւիթը՝ իմ ծառաս Դաւիթը յաւիտեան անոնց 26 իշխան պիտի բլլայ։ Եւ անոնց հետ Հաշտութեան ուխտ պիտի ընեմ. անիկայ անոնց յաւիտենական ուխտ պիտի բլլայ. և զանոնք պիտի տեղաւորեմ, ու պիտի շատցնեմ, և իմ սրբարանս անոնց մէջը պիտի դնեմ յաւիտեան։ 27 Իմ խորանս անոնց քովը պիտի բլլայ. և Ես անոնց Աստուած պիտի բլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ պիտի բլլան։ 28 Ու իմ սրբարանս յաւիտեան անոնց մէջը բլլալով, ազգերը պիտի գիտնան թէ Ես եմ Ցերը՝ որ Իսրայէլը կը սրբեմ։

ԳԼ·ԼՀ

1 Գոգին բանակը, 8 ու անոր չար դիտաւորութիւնը։ 14 Աստուծոյ գատաստանը անոր գէմ։

1 Ցարձեալ Ցերոջը խօսքը ինծի ե-
2 ղաւ՝ ըսելով. Որդի մարդոյ՝ Երեսդ Մագոգի երկիրը Եղեգ Ռոշի, Մոսոքի ու Թոբելի իշխանին՝ Գոգին դարձուր, և անոր վրայով
3 մարգարէութիւն ըրէ, ու ըսէ. Ցեր Եհովան այսպէս կ՚ըսէ. ահա ես քեզի դէմ եմ՝ ով Գոգ, Ռոշի, Մոսոքի ու Թոբելի իշխանը.
4 Ու Եբեզ պիտի դարձընեմ, և քու կզակներուդ կարթեր պիտի անցը-

Ն·Ք·ՂՔ· Իրբ 587

Յ Գլ·ւզ· 23, 24։ Ցօհ·ժ· 16։

Ն Գլ·ւզ· 25։

Շ Գլ·ւզ· 28, 29։

* Ես·խ·11։ Երեմ·իգ· 5։ Լ·9։ Գլ·ւզ·23·24։ Ովս·գ·5։ Ղս·ա· 32։

Ն Հմր 22։ Ցօհ·ժ· 16։

Ո Գլ·ւզ· 27։

Ն Գլ·ւզ· 28։

- Ես·կ·21։ Ցովել·գ· 20։ Ամով· թ·15։

- Հմր 24։ Ցօհ·ժր· 34։

Հ Սաղ·ԽԹ· 3։ Ես·ծե· 3։ Երեմ· լբ·40։ Գլ· ւզ·25։

Ո Գլ·ւզ· 10, 37։

Բ Ր Կոր·չ· 16։

Ղ ԳՀ·իգ· 11, 12։ Գլ· իգ·7։ Ցօհ·ա· 14։

- Գլ·ժա· 20։ ժգ· 11։ ւզ·28։

Ֆ Գլ·ւզ· 23։

Ֆ Գլ·Ի·12։

- Գլ·լթ· 1։

Բ Գլ·լե·2, 3։

Ֆ Գլ·լբ·26։

Ո Ցայս·Ի· 8։

Ի Գ Թագ· ժթ·28։ Գլ·ԽԹ· 4։ լե·2։

Ն · ք · գՀ· Իրբ 587

ղ Գլ · իգ · 12 ։

Ն · ք · գՀ · Իրբ 587

նեմ , ու քեզ՝ ու քու բոլոր զօրքդ պիտի հանեմ , ձիերը , ու ձիաւորները՝ ամէնն ալ կատարեալպէս հագուած . և վահանաւորներուն ու ասպարաւորներուն մեծ ժողովքը՝
5 ամէնն ալ սուր բռնող . Ընոնց հետ Պարսիկները , Եթէովպացիները ու † Փուդացիները , ամէնն ալ ասպարաւոր ու սաղաւարտաւոր .
6 Նաև Գոմեր , ու անոր բոլոր գունդերը , Թորգոմային տունը հիւսիսի ծայրերէն , ու անոր բոլոր գունդերը , շատ ժողովուրդներ քեզի հետ ղէպ հանէ ։
7 Պատրաստ եղիր , և քեզ , ու քու քովդ ժողոված բոլոր ժողովներդ պատրաստէ՝ , ու դուն անոնց
8 պահապան եղիր ։ Շատ օրերէն ետքը քու զօրքերդ պիտի համբնա՝ . ետքի տարիները պիտի գաս ան երկրին վրայ՝ որ սուրէն ազատուած է , և անոնք ժողովուած են Իսրայէլի լեռներուն վրայ՝ որոնք մշտնջենաւոր աւերակ էին . բայց անիկայ ազգերէն ելած ըլլալով , ամէնքը ապահովութեամբ պիտի
9 բնակին ։ Իսկ դուն կ'երթիկի պէս պիտի ելլես գաս , — երկիրը ծածկելու համար համպի պէս պիտի ըլլաս , դուն և քու բոլոր գունդերդ ու շատ ժողովուրդներ քեզի հետ ։
10 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ան օրը պիտի ըլլայ որ՝ քու միտքդ բաներ պիտի գան , ու չար խորհուրդ մը պիտի մտածես .
11 Ու պիտի ըսես . Ընպարիսպ գեղերուն երկիրը ելլեմ . Հանդստութեան մէջ եղողներուն , ապահովութեամբ բնակողներուն վրայ երթամ . ամէնն անպարիսպ բնակիկ են , և նիգեր ու դռներ չունին ,
12 Նին . Որ աւար յափշտակես , և կողոպուտ կողոպտես . և քու ձեռքդ՝ բնակուած աւերակներուն վրայ , ու ազգերէն ժողոված , և խաշինք ու ապրանք ստացած , — երկրին բարձր տեղուանքը բնակած ժողովուրդին վրայ դարձընես ։
13 Սաբա , ու Դեդան , և Թարսիսի վաճառականները , ու անոր բոլոր առոյգ առիւծները քեզի պիտի ըսեն . Միթէ աւար յափշտակելու եկար . կողոպուտ կողոպտելու համար քու ժողովդ ժողվեցիր , որ արծաթ ու ոսկի վերցընես , խաշինք ու ապրանք առնես , մեծ աւար յափշտակես ։
14 Անոր համար մարգարէութիւն ըրէ՝ որդի մարդոյ , ու Գոգին ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ան օրը՝ որ իմ ժողովուրդս Իսրայէլը հանգիստ բնակի՝ ա-
15 նա դուն պիտի գիտնաս , — ու քու տեղէդ՝ հիւսիսի ծայրերէն պիտի գաս , դուն ու քեզի հետ շատ ժողովուրդներ՝ ամէնը ձիեր հեծած , մեծ բազմութեամբ , ու շատ զօրաց
16 քով . Եւ հիմ ժողովուրդիս Իսրայէլին վրայ՝ ամպի պէս երկիրը ծածկելու պիտի ելլես . — — Ետքի օրերը պիտի ըլլայ . ու քեզ իմ երկրիս վրայ պիտի բերեմ , որպէս զի ազգերը զիս ճանչնան՝ երբոր ես անոնց աչքերուն առջեւ՝ քու վրադ † փառաւորուիմ՝ ով Գոգ ։
17 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Դուն անիկա՞յ ես , որ քեզի համար առջի օրերը՝ ան օրերը — տարիները մարգարէութիւն բնող Իսրայէլի մարգարէներուն՝ իմ ծառաներուս միջոցով ըսի թէ՝ քեզ անոնց վրայ
18 պիտի բերեմ ։ Եւ ան օրը՝ Գոգը Իսրայէլի երկրին վրայ եկած օրը՝ կ'ըսէ Տէր Եհովան , իմ սրտմտու-
19 թիւնս ‡ երեսս պիտի ելլէ ։ Եւ իմ նախանձովս՝ իմ բարկութեանս կրակովը խօսեցայ , որ † ան ատեներ անշուշտ Իսրայէլի երկրին վրայ մեծ
20 խռովութիւն պիտի ըլլայ . Եւ ծովու ձուկերը , ու երկինքի թռչունները , և դաշտի գազանները , ու գետնի վրայ սողացող բոլոր սողունները , ու երկրի երեսին վրայ եղող բոլոր մարդիկները իմ երեսիս պիտի խռովին . ու լեռները պիտի փլչին , ու զահավէժ ժայռերը պիտի իյնան , ու բոլոր պարիսպ-
21 ները գետինը պիտի իյնան ։ Եւ անոր դէմ՝ իմ բոլոր լեռներուս վրայ † սուր — պիտի կանչեմ , կ'ըսէ Տէր Եհովան . † մարդուն սուրը իր
22 եղբօրը վրայ պիտի ըլլայ ։ Եւ անոր հետ † ժանտախտով ու արիւնով † պիտի վիճիմ , և անոր վրայ , ու անոր զօրքերուն վրայ , ու անոր հետ եղող շատ ժողովուրդներուն վրայ՝ յորդահոս անձրեւ , ու † կարկուտի քարեր , կրակ
23 ու ծծումբ Ղպիտի տեղամ ։ Եւ շատ ազգերու առջեւ պիտի փառաւորուիմ , ու † սրբուիմ , և ճանչցուիմ . ու պիտի գիտնան թէ ես եմ Տէրը ։

Ն · ք · գՀ · Իրբ 587

— Գլ · լթ · 2 ։
— Հր 6 ։
ձ Հր 9 ։
— Հր 8 ։
ր Եզ · ժգ · 4 ։ Գլ · լգ · 23 ։ լթ · 21 ։
† Եբր · որբուիմ՝
‡ կ— ՝ բարկութեամբս
ց Գլ · լգ · 5 ։ 6 ։ լթ · 25 ։
— Սաղ · ճթ · 46 ։
† Ընդ · բ · 6 ։ 7 ։ Ցայտ · ժգ · 18 ։
† Ովս · գ · 3 ։
ւ Երեմ · գ · 24 ։ Նաւ · ա · 5 ։ 6 ։
ֆ Գլ · ժգ · 17 ։
— Սաղ · ճն · 16 ։
ք Դատ · է · 22 ։ աԹագ · ժգ · 20 ։ բ Մն · ի · 23 ։
† Գլ · ե · 17 ։
† Ես · կդ · 16 ։ Երեմ · իե · 31 ։
ն Գլ · ժգ · 11 ։ Ցայտ · ժգ · 21 ։
ղ Սաղ · ժա · 6 ։ Տես Ես · իթ · 6 ։ լ · 30 ։
ն Գլ · լգ · 23 ։
ը Սաղ · թ · 16 ։ Գլ · լե · 28 ։ լթ · 7 ։ Հր 16 ։

Գ Լ · Լ Թ

1 Աստուծոյ դատաստանը Գոգին դէմ ։ 8 Իսրայէլի յաղթութիւնը ։ 11 Գոգին թաղումը Գոգի բազմութեան մորին մէջ ։ 17 Թռչուններուն խնճոյքը ։ 23 Իսրայէլ՝ իր մեղացը համար տանջուելէն ետքը , յաւիտենական շնորհքով մը նորէն մկտեղ պիտի ժողվուի ։

1 Եւ — դուն՝ որդի մարդոյ՝ Գոգին վրայով մարգարէութիւն ըրէ , ու ըսէ . Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Ահա ես քեզի դէմ եմ՝ ով

— Գլ · լբ · 2 ։ 3 ։

Ն·Ք·ՂԲ· Իրր 587

Գոգ , Ռուվէի , Մասքի ու Թորելի
2 իշխանը . Ու ես քեզ պիտի դար-
ձընեմ , քեզ պիտի տանիմ , Բ և
հիւսիսի ծայրերէն քեզ պիտի հա-
նեմ , ու քեզ Իսրայէլի լեռներուն
3 վրայ պիտի բերեմ ։ Եւ քու ձա-
ղեղդ քու ձախ ձեռքէդ վար պիտի
ձգեմ , ու քու նետերդ՝ աջ ձեռ-
4 քէդ վար պիտի նետեմ ։ Դ Դուն
քու բոլոր գունդերովդ , ու քու
հետդ եղող ժողովուրդներով Ի-
սրայէլի լեռներուն վրայ պիտի իյ-
նաս . Ե քեզ ամէն տեսակ թռչուններուն , ու դաշ-
տի գազաններուն կերակուր պիտի
5 տամ . Դաշտի երեսին վրայ պիտի
իյնաս . վասն զի ես խօսեցայ՝ կ'ըսէ
6 Տէր Եհովան ։ Զ Եւ Մագոգի վրայ ,
ու Հզդհներուն մէջ ապահովու-
թեամբ բնակողներուն վրայ կրակ
պիտի խրկեմ . ու պիտի դիտնան
7 Թէ ես եմ Տէրը ։ Է Եւ իմ սուրբ
անունս՝ իմ ժողովուրդիս Իսրայէ-
լին մէջը պիտի ճանչցընեմ . ու պի-
տի չթողում որ մէյմըն ալ Ը իմ
սուրբ անունս պղծուի . Ը ու ազգե-
րը պիտի դիտնան Թէ ես եմ Տէրը՝
8 Իսրայէլի մէջ եղող Սուրբը ։ Թ Ա-
հա կու գայ , ու պիտի կատարուի՝
կ'ըսէ Տէր Եհովան . Ի իմ բսած օրս
9 ասիկայ է ։ Եւ Իսրայէլի քաղաք-
ներուն բնակիչները պիտի ելլեն ,
ու կրակ պիտի վառեն , ու զէնքե-
րը պիտի այրեն . և ասպարներով ,
վահաններով , աղեղներով , նե-
տերով , բիրերով , ու նիզակներով
եօթը տարի կրակ պիտի վառեն ։
10 Եւ դաշտէն փայտ պիտի չբերեն ,
ոչ ալ անտառներէն պիտի կտրեն .
հապա զէնքերով կրակ պիտի վա-
ռեն . Լու զիրենք թալանողները պի-
տի թալանեն , ու զիրենք կողոպտող-
ները պիտի կողոպտեն՝ կ'ըսէ Տէր
Եհովան ։
11 Ու պիտի ըլլայ որ ան օրը՝ հոն
Իսրայէլի մէջ Գոգին գերեզմանի
տեղ պիտի տամ անցաւորաց ձորը՝
ծովուն արեւելեան կողմէն . և անի-
կայ անցաւորները պիտի արգիլէ .
ու հոն Գոգը , ու անոր բոլոր բազ-
մութիւնը պիտի թաղեն , և ը-ն-
12 ւ Գոգի բազմութեան ձորը՝ պի-
տի կոչեն ։ Ու Իսրայէլի որդիքը՝
Ե երկիրը մաքրելու համար՝ եօթը
13 ամիս զանոնք պիտի թաղեն ։ Ու
երկրին բոլոր ժողովուրդը ը-ն-ւ
պիտի թաղեն . և ասիկայ անոնց
անուն մը պիտի բլլայ այն օրը՝ որ
Ժ ես փառաւորուիմ , կ'ըսէ Տէր Ե-
14 հովան ։ Ու մարդիկներ պիտի
որոշեն՝ որ չարունակ երկրին մէջը
պտրտին , ու անդնողներուն հետ՝
երկրի երեսին վրայ մնացածները
թաղեն , Ի որպէս զի զանիկայ մաք-
րեն . անոնք եօթը ամիսէն ետքը
15 պիտի փնտռեն ։ Ու երկրին մէջէն
անցնողները անցած ատեններին երբ
որ մարդու ոսկոր տեսնեն , քովը
նշան մը պիտի կանգնեն մինչև որ
թաղողները զանիկայ Գոգի բազ-
16 մութեան ձորը թաղեն ։ Ու քա-
ղաքին անունն ալ՝ Ա Համոնա պի-
տի բլլայ . այսպէս Հ երկիրը պիտի
մաքրեն ։
17 Եւ դուն՝ որդի մարդոյ՝ Տէր Ե-
հովան այսպէս կ'ըսէ . Յ Ամէն տե-
սակ թևաւոր թռչունին , ու դաշ-
տի բոլոր գազաններուն ըսէ .
Ղ Ժողովուեցէք , ու եկէք . իմ ձեզի
համար զոհած զոհիս՝ Ճ Իսրայէլի
լեռներուն վրայ Մ-ե-ծ-Ը- մեծ
զոհին ամէն կողմէն մտեղեցէք , որ
միս ուտէք , ու արիւն խմէք .
18 Ո Զօրաւորներուն միսը ուտէք , ու
երկրի իշխաններուն արիւնը խմէք ,
խոյերու , դառներու , նոխազնե-
րու , ու զուարակներու՝ որոնց ա-
մէնը Բասանի գէր անասուններ
19 են ։ Եւ ձեզի համար զոհած զոհէս՝
մինչև կշտանալնիդ ճարպ ուտէք ,
ու մինչև գինովնալնիդ արիւն խը-
20 մէք ։ Ի Եւ իմ սեղանիս վրայ՝ ձիե-
րէն , ու Ի կառքի Ն-ե-ր-ք-ի-ն-է-ն ,
Ղ զօրաւորներէն ու ամէն պատե-
րազմող մարդէն կշտանաք՝ կ'ըսէ
21 Տէր Եհովան ։ Ճ Եւ ազգերուն մէջ
իմ փառքս պիտի դնեմ , ու ամէն
ազգերը իմ ըրած դատաստաններս ,
ու Ձանոնց վրայ դրած ձեռքս պիտի
22 տեսնեն . Ղ Ու Իսրայէլի տունը ան
օրէն ետև՝ ալ պիտի դիտնան Թէ
23 իրենց Տէր Աստուածը ես եմ ։ Ղ Եւ
ազգերը պիտի դիտնան Թէ Իսրա-
յէլի տունը՝ իրենց անօրէնութեա-
նը համար՝ ինծի ապստամբ ըլլալ-
նուն համար գերի եղան , ու Ե-ս
իմ երեսս անոնցմէ ծածկեցի , և
զանոնք իրենց թշնամեացը ձեռքը
տուի , ու ամէնքը սրով իյնան ։
24 Ի Իրենց պղծութեանը համեմատ՝
ու իրենց յանցանացը համեմատ՝
իրենց հ-ո-գ-ո- ըրի , ու իմ ե-
րեսս իրենցմէ ծածկեցի ։
25 Ընոր համար Տէր Եհովան այս-
պէս կ'ըսէ . Ո Հիմա Ցակոբին գե-
րութիւնը պիտի դարձընեմ , ու
Ը բոլոր Իսրայէլի տանը պիտի ողոր-
միմ , և իմ սուրբ անուանս համար
26 նախանձաւոր Ճ պիտի ըլլամ ։ Ու
երբոր անոնք Ֆ իրենց երկրին մէջ
ապահովութեամբ բնակին , ու
վախցնող մը չբլլայ , ան ատենը
Ո իրենց անարգանքը ու իրենց ինծի
դէմ ըրած բոլոր յանցանքները
27 պիտի կրեն Ո ։ Ֆ Երբոր զանոնք ժո-
ղովուրդներէն դարձընեմ , ու զա-

Ն·Ք·ՂԲ· Իրր 587

Ի Հմր 12 ։

* Յ՝ Բազմու-
թիւն ։
Հ Հմր 12 ։
Յ Ցայս. ԺԹ.
17 ։
Ղե. Ժր. 6 ։
Ա Ղ · 6 ։ Ե-
րեմ . Ժ ր .
9 ։ Սոփ .
ա . 7 ։
Ճ Հմր 4 ։
Ֆ Ցայս. ԺԹ.
18 ։
Ո Ր Օր · Լ · 14 ։ Սաղ ·
Իր · 12 ։
Ն Սաղ · Հղ ·
6 ։ Գ Ա · Լ ը ·
4 ։
Ո Կ—՛ կառք
Հէքնէշէ-
րէն ։
Ը Ցայս. ԺԹ.
18 ։
Գ Ա · Լ ը 16 ·
23 ։
Ղ Եզ · Է · 4 ։
Ո Հմր 7 · 28 ։
Ջ Գ Ա · Լ Ղ ·
18 · 19 · 20 ·
23 ։
Ր Օր · Լ · 17 ։ Ե· ·
ՅԹ . 2 ։
Ղ Ա · Իգ ·
25 ։
Վ Գ Ա · Լ Ղ ·
19 ։
Ո Երեմ . Լ ·
3 · 18 ։ Գ Ա ·
Ա Ղ · 13 · Լ Ղ ·
21 · Ճ ։
Ր Գ Ա · Ի · 40 ։
Ովս . ա . 11 ։
Ֆ Կ—՛ պի-
տի բլլամ , Երբոր կրէն իրենց ա-
ռարգանքը ու իրենց բո-
լոր յան-
ցանքները՝ որ ինծի դէմ ըրին ,
քանի որ ի-
րենց երկրին մէջ ապահո-
վութեամբ կը բնակէին , ու վախցը-
նող մը չը-
կար ։
Ց Ղա . Իգ ·
5 · 6 ։
Ո Դան . Թ ·
16 ։
Ֆ Գա · Իբ · 25 ·
26 ։

Ն·Ք·ՊԲ· Իրր 587

նոնք իրենց թշնամեացը երկիրնե-
րէն ժողվեմ՝ ան ատենը անոնց
մէջը՝ †շատ ազգաց աչքերուն առ-
28 ջևը պիտի սրբուիմ ։ *Եւ պիտի
դիտան թէ ես եմ անոնց Տէր
Աստուածը . որովհետև զանոնք
ազգերու մէջ գերի քշեցի , ու զա-
նոնք նորէն իրենց երկիրը ժողվեցի ,
և անոնցմէ հոն մէկը մը չթողուցի ։
29 ‡Ու մէյմէն ալ իմ երեսս անոնցմէ
պիտի չծածկեմ , քանզի =իմ Հո-
գիս Իսրայէլի տանը վրայ թափե-
ցի՝ կ'ըսէ Տէր Եհովան ։

ԳԼ · Խ

1 Մարգարէին տեսիլքին ժամանակը , եզանա-
կը ու նպատակը ։ 6 Արևելեան դրանը , 20
հիւսիսային դրանը , 24 Տարաւային դրանը ,
32 Ներսի դաւիթին արևելեան դրանը , 35 և
հիւսիսային դրանը ստորագրութիւնը ։ 39
Ուխտը սեղաններէն ։ 44 Սրճեակները ։ 48
Տանը սրահը ։

574 1 Ա՛ՆԵՐ գերութեանը քսանուհինգ-
*Եզր · տա- երորդ տարին՝ *առջի ամիսը՝
րւոյն գլու- ամսուն տասներորդ օրը՝ =քաղաքին
խը զարնուելուն չորեքտասաներորդ
= Գլ · լգ · 21 · տարին՝ նոյն օրը Ի Ցերոջը ձեռքը
Ի Գլ · ա · 3 · իմ վրաս եղաւ , ու զիս հոն տա-
‡ Գլ · բ · 3 · 2 րաւ . ‡Ջիս Աստուծոյ տեսիլքնե-
Ե Յայտ · իա · րով Իսրայէլի երկիրը տարաւ , Ե և
10 · զիս խիստ բարձր լեռան մը վրայ
դրաւ . ու անոր վրայ՝ հարաւային
կողմը՝ քաղաքի մը շինուածքի պէս
3 Ի՛րմէն մը կար ։ Ու երբոր զիս հոն
տարաւ , ահա մէկ մարդ մը՝ որուն
Ի Գլ · ա · 7 · երևոյթը Ի պղնձի երևոյթի պէս
Դան . ժ . 6 · էր , և շանոր ձեռքը՝ քթմանէ լար ,
ՂԳլ · խէ · 3 · Ի ու չափի եղէգ կար . ու անիկայ
Ի Յայտ . ժա · 4 դուռը կայներ էր ։ Եւ ան մարդը
1 · իա · 15 · ինծի ըսաւ . ՀՈրդի մարդոյ՝ աչքե-
Ը Գլ · խգ · րովդ տես , ու ականջներովդ լսէ ,
5 · ու քեզի ամէն ցուցուցածներուս
ուշադրութիւն ըրէ . վասն զի դուն
հոս բերուեցար , որ =ես Իսրէլը քե-
զի ցուցընեմ . Ի ամէն տեսածդ Իս-
Ի Գլ · խգ · րայէլի տանը պատմէ ։
10 ·
5 Եւ ահա տանը դուրսէն շուրջա-
Ժ Գլ · խբ · նակի Ժ պարիսպ կար . ու ան մար-
20 · դուն ձեռքը՝ վեց կանգունի Իւ՛յա-
նու=Ի՛նչ չափի եղէգ մը կար , Կո-
ղո՛ւնը՝ մէկ կանգուն ու չորս մատ
նայնափ ըլլով . ու †պարսպին լայ-
† Եզր · չԼն- նութիւնը եղէգ մը՝ ու բարձրու-
քին թիւնը եղէգ մը չափեց ։
6 Եւ անիկայ դէպ 'ի արևելք նա-
յող դուռը եկաւ , ու անոր աս-
տիճաններուն վրայ ելաւ , ու դրա-
նը մէկ սեամը՝ եղէգ մը լայն , ու
մէկալ սեամը եղէգ մը լայն չափեց ։
7 Եւ =Ո՛Ր մէկ խուցը՝ եղէգ մը եր-
կայն՝ ու եղէգ մը լայն էր . ու խու-
ցերուն միջոցը հինգ կանգուն էր .
և դրանը սրահին քովը եղող դրա-
նը սեամը ներսէն մէկ կանգուն էր ։
8 Ու անիկայ՝ դրանը սրահը ներսէն
9 մէկ եղէգ չափեց ։ Եւ դրանը
սրահը ութը կանգուն չափեց . ու
անոր դրանդիքը երկու կանգուն
էր . ու դրանը սրահը ներսի կող-
10 մէն էր ։ Ու դէպ 'ի արևելք եղող
դրանը խուցերը՝ մէկ կողմէն իրեք՝
ու մէկալ կողմէն իրեք էին , ու
իրեքին չափը մէկ էր . և դրան-
դեացը չափը՝ մէկ կողմէն ու մէկալ
11 կողմէն մէկ էր ։ Ու դրանը մուտ-
քին լայնութիւնը տասը կանգուն
չափեց , =ո դրանը երկայնութիւնը
12 տասուիրեք կանգուն ։ Եւ խու-
ցերուն առջևը՝ դէ՛մ յո՛ղն մէկ կան-
գունի սահման՝ ու մէկալ կողմէն
մէկ կանգունի սահման մը կար .
ու խուցերը մէկ կողմէն վեց կան-
13 գուն՝ ու մէկալ կողմէն վեց կան-
գուն էին ։ Եւ դուռը չափեց մէկ
խուցին տանիքէն մինչև մէկալին
տանիքը . =Նոր լայնութիւնը քը-
սանուհինգ կանգուն էր . =ո մուտ-
14 քերը դիմացէ դիմաց էին ։ Եւ
դրանդեացը =ՐՐՐԸ վաթսուն
կանգուն ըրաւ , մինչև դրանը բո-
լորտիքը եղող դաւիթին դրանդի-
15 քը ։ Եւ դուրսի դրանը երեսէն
մինչև ներսի դրանը սրահին երեսը՝
16 յիսուն կանգուն էր ։ Ու խուցե-
րուն , և անոնց դրանդեացը քովը՝
դրանը ներսի կողմէն՝ շուրջանակի
Է վանդակապատ . պատուհաններ
կային . սրաՀերն ալ այսպէս էին .
ու ներսի կողմէն շուրջանակի պա-
տուհաններ կային . և դրանդեացը
վրայ արմաւենիներ կային ։
17 Ու զիս Լդուրսի դաւիթը բերաւ .
և ահա հոն Ի սենեակներ՝ ու դաւի-
թին համար շինուած շուրջանակի
քարայատակ կար . ու քարայատա-
կին վրայ Ժ հերսուն սենեակ կար ։
18 Եւ դռներուն քովի քարայատակը ,
դռներուն երկայնութեանը դիմացը
19 եղող վարի քարայատակն էր ։ Ու
անիկայ՝ վարի դրանը առջևէն մինչև
ներքին սրահին առջևը դուրսէն՝
դէպ 'ի արևելք ու հիւսիս՝ լայնու-
թիւնը հարիւր կանգուն չափեց ։
20 Եւ դուրսի դաւիթին դէպ 'ի
հիւսիս նայող դրանը երկայնու-
թիւնը ու լայնութիւնը չափեց ։
21 Ու անոր խուցերը՝ իրեք մէկ կող-
մէն էր , ու իրեք մէկալ կողմէն .
և անոր դրանդիքը ու սրաՀերը՝
առջի դրանը չափուելու էին . անոր
երկայնութիւնը յիսուն կանգուն ,
ու լայնութիւնը քսանուհինգ կան-
22 գուն էր ։ Եւ պատուհանները ,
ու սրաՀերը , ու արմաւենիները
դէպ 'ի արևելք նայող դրանը չա-
փուելու էին . ու եօթը աստիճանով
ան դո=ը կ'ելլէին . և սրաՀերը

Ն·Ք·ՊԲ· 574

Ն Գթագ · գ · 4 ·
‡ Կ=՛ · ներ-
սէն լայն
դուրսէն
Նեղ
Լ Յայտ · ժա · 2 ·
Խ Գթագ · գ · 5 ·
Ծ Գլ · խէ · 5 ·

23 անոնց առջևն էին ։ Ու ներսի
գաւիթը դուռ մը ունէր՝ հիւսի-
սային դրանը՝ ու արևելեան դր-ռը
դիմացը , ու ձի դռնէն մինչև ձի-ը
դուռը՝ հարիւր կանգուն չափեց ։
24 Եւ զիս հարաւային կողմը տա-
րաւ . և ահա հարաւային կողմը
դուռ մը կար . ու անոր դրանդի-
քը , ու սրաձները չափեց , որ նոյն
25 չափերուն համեմատ էին ։ Եւ ա-
նիկայ ու անոր սրաձները նոյն պա-
տուհաններուն պէս պատուհաններ
ունէին շուրջանակի . ն-ր երկայ-
նութիւնը յիսուն կանգուն , ու
լայնութիւնը քսանուհինգ կան-
26 գուն էր ։ Եւ ան դ-ը-ը ելլելու
համար եօթը աստիճան կար . ու
անոր սրաձները անոնց առջևն էին .
ու անոր դրանդեացը վրայ՝ մէկ կող-
մէն ու մէկալ կողմէն արմաւենիներ
կային ։
27 Ու ներսի գաւիթը դուռ մը ու-
նէր դէպ ՚ի հարաւ . ու ձի դռնէն
մինչև ձի-ը դուռը դէպ ՚ի հարաւ՝
28 հարիւր կանգուն չափեց ։ Եւ զիս
հարաւային դռնէն ներսի գաւիթը
բերաւ , ու հարաւային դուռը չա-
փեց , որ նոյն չափերուն համեմատ
29 էր ։ Եւ անոր խուցերը , ու դրան-
դիքը , ու սրաձները՝ նոյն չափե-
րուն համեմատ էին . և անիկայ , ու
անոր սրաձները շուրջանակի պա-
տուհաններ ունէին . ն-ր երկայ-
նութիւնը յիսուն կանգուն , ու
լայնութիւնը քսանուհինգ կանգուն
30 էր ։ Եւ սրաձները շուրջանակի
քսանուհինգ կանգուն երկայն ,
31 ու հինգ կանգուն լայն էին ։ Եւ
սրաձները դէպ ՚ի դուրսի գաւիթն
էին . ու դրանդեացը վրայ արմա-
ւենիներ կային . և ան դ-ը-ը ել-
լելու համար ութը աստիճան կար ։
32 Եւ զիս ներսի գաւիթը տարաւ
դէպ ՚ի արևելք , ու դուռը չա-
փեց , որ նոյն չափերուն համեմատ
33 էր ։ Եւ անոր խուցերը , ու
դրանդիքը , ու սրաձները նոյն չա-
փերուն համեմատ էին . և անիկայ
ու անոր սրաձները շուրջանակի
պատուհաններ ունէին . ն-ր եր-
կայնութիւնը յիսուն կանգուն ,
34 ու լայնութիւնը քսանուհինգ կան-
գուն էր ։ Եւ անոր սրաձները դէպ
՚ի դուրսի գաւիթն էին . ու անոր
դրանդիքը մէկ կողմէն ու մէկալ
կողմէն արմաւենիներ ունէին . և
ան դ-ը-ը ելլելու համար ութը
աստիճան կար ։
35 Ու զիս հիւսիսային դուռը բե-
րաւ . ու նոյն չափերուն համեմատ
36 չափեց խուցերը , դրանդիքը ու
սրաձները . և շուրջանակի պատու-
հաններ ունէր . ն-ր երկայնու-
թիւնը յիսուն կանգուն , ու լայ-
նութիւնը քսանուհինգ կանգուն
37 էր ։ Եւ անոր դրանդիքը դէպ ՚ի
դուրսի գաւիթն էր . ու դրանդիքը
մէկ կողմէն ու մէկալ կողմէն արմա-
ւենիներ ունէին . և ան դ-ը-ը ել-
լելու համար ութը աստիճան կար ։
38 Ու մէկ սենեակ մը կար , որ ա-
նոր մուտքը դռներուն քովի դրան-
դեացը մօտ էր . ողջակէզը հոն կը
39 լուային ։ Եւ դրանը սրահին մէջ
մէկ կողմէն երկու սեղան՝ ու մէկալ
կողմէն երկու սեղան կար , որ ա-
նոնց վրայ ողջակէզը , ու հնձէքի
պատարագը , ու յանցանքի պա-
40 տարագը մորթեն ։ Եւ հիւսիսա-
յին դրանը մուտքը ելլելուն դուրսի
կողմը՝ երկու սեղան , ու մէկալ կող-
մը եղող դրանը սրահին մէջ՝ երկու
41 սեղան կար ։ Դրանը քովը մէկ
կողմէն չորս սեղան , ու մէկալ կող-
մէն չորս սեղան կար . ութը սեղան
էր . ան անոնց վրայ կը մորթէին ։
42 Եւ չորս սեղանները՝ որոնք ողջակէ-
զի համար էին , տաշուած քարէ՝
մէկ ու կէս կանգուն երկայն , ու
մէկ ու կէս կանգուն լայն , ու մէկ
կանգուն բարձր էին . և ողջակէզը
ու զոհը մորթելու գործիքները ա-
43 նոնց վրայ կը դնէին ։ Ու ներսէն
շուրջանակի չորս մատնաչափ և-
զերք մը շինուած էր . ու սեղաննե-
րուն վրայ զոհին միսը ն-ր-ը էր ։
44 Եւ ներսի դրանը դուրսի կողմը՝
հիւսիսային դրանը քովը եղող ներ-
սի գաւիթին մէջ՝ ս-ր-ց սեղնեակները կար . ու անոնց երեսը
դէպ ՚ի հարաւ էր . մէկը արևելեան
դրանը քովը էր , ան երեսը դէպ ՚ի
45 հիւսիս էր ։ Եւ ինձի ըսաւ . Ա-
սենեակը որ դէպ ՚ի հարաւ կը նա-
յի , տանը պահպանութիւնը ը-
46 նող քահանաներուն համար է . Ու
ան սենեակը որ դէպ ՚ի հիւսիս կը
նայի , սեղանին պահպանութի-
ւնը ընդ քահանաներուն համար է .
անոնք Սադովկի որդիքն են , ո-
րոնք Ղևիի որդւոցմէ Տ-ը մօտենան՝ անոր ծառայութիւն ը-
նելու համար ։
47 Եւ գաւիթը չափեց , ո-ն եր-
կայնութիւնը հարիւր կանգուն ,
ու լայնութիւնը հարիւր կանգուն
էր . անիկայ քառակուսի էր . ու
սեղանը տանը առջևն էր ։
48 Եւ զիս տանը սրահը տարաւ .
ու սրահին դրանդիքը չափեց՝ հինգ
կանգուն մէկ կողմէն , ու հինգ
կանգուն մէկալ կողմէն . և դրանը
լայնութիւնը՝ մէկ կողմէն երեք կան-
գուն , ու մէկալ կողմէն երեք կան-
49 գուն էր ։ Սրահին երկայնութի-
նը քսան կանգուն , ու լայնութի-

ն · ք · գ · 574

ն · ք · գ · 574

ՀՂԼ · գ · 2, 3 ։
ՅՂԼ · ե · 6 ։ ը · 6 ։ է · 1 ։

Ա Թես · ե · 21, 25, 33, 36 ։

Ե-ՐՄ · ը · 31 ։

ՀՂԼ · ը · 35 ։ Թու · գ · 27, 28, 32, 38 ։ ԺԸ · 5 ։ ա ՄՆ · թ · 23 ։ ը ՄՆ · ժգ · 11 ։ ՍԱՂ · ՃԼԴ · 1 ։

Ժ Թու · ԺԸ · 5 ։ Գէ · ԽԳ · 15 ։

ՅԳ Թագ · ը · 35 ։ Գէ · ԽԳ · 19 ։ ԽԴ · 15, 16 ։

Ն Գ Թագ · ը · 3 ։

Ն · ք · գԲ · 574

նը տանուն*ՄԿ կանգուն *էր . և հոն տասը աստիճաններով կ'ելլէին* . ու դրանդեացը քովը սիւներ կային , մէկը՝ մէկ կողմէն , մէկալն ալ՝ մէկալ կողմէն ։

* կ՚ըսուի՝ էր՝ ան աստիճաններովը մէկտեղ՝ ուրով հոն կ՚ելլէին .

ԳԼ · ԽԱ

Ը գ Թագ · է · 21 ։

1—26 Ցաճարին չափերը , բաժանումը , սենեակները ու զարդերը ։

1 Ու զէս տաճարը տարաւ , ու անոր դրանդիքը չափեց . մէկ կողմէն վեց կանգուն լայն , ու մէկալ կողմէն վեց կանգուն լայն էր , խորաձէն վեց կանգուն լայն էր , խորա-
2 նին լայնութեանը համեմատ ։ Եւ դրանը լայնութիւնը տասը կանգուն էր . ու դրանը քովերը մէկ կողմէն հինգ կանգուն , ու մէկալ կողմէն հինգ կանգուն էին . և անոր երկայնութիւնը քառասուն կանգուն , ու լայնութիւնը քսան կանգուն չափեց ։
3 Ու ներս մտաւ . և դրանը դրանդիքը երկու կանգուն , ու դուռը վեց կանգուն չափեց . ու դրանը լայնութիւնը եօթը կանգուն էր ։
4 Եւ անոր երկայնութիւնը չափեց քսան կանգուն , ու լայնութիւնը քսան կանգուն՝ տաճարին առջեւը համեմատ . ու ինծի ըսաւ . Ասիկայ է սրբութիւն սրբութեանցը ։
5 Եւ տանը պատը վեց կանգուն , ու տանը բոլորտիքը եղող սենեակներուն լայնութիւնը՝ չորս կանգուն չափեց ։
6 Ու սենեակները իրարու վրայ էին երեք անգամ , ու երեսուն երեսուն . և անոնց ելեւէջներ կը մտնէին տաճարին ան պատին մէջը՝ որ սենեակներուն համար էր , որ չորջանակի , որ անոր կռթնին . բայց տանը պատին մէջը չէին կրո-
7 թրնէր ։ Ու սենեակները ելլելու համար՝ ելլայնցող ու շրջանակաւոր անդամ մը կար , որ տանը բոլորտիքը՝ վեր ելլելու համար տունը կը պտրտէր . . անոր համար ելլելով՝ տունը կը լայնանար . և այսպէս վարի դատիկոնէն վերի դատիկոնը՝ միջին
8 դատիկոնէն կ'ելլէին ։ Ու չորջանակի տանը բարձրութիւնը տեսայ . սենեակներուն հիմերը՝ ամբողջ մէկ եղէգ՝ վեց մեծ կանգուն
9 էր ։ Սենեակներուն պատին լայնութիւնը՝ դուրսէն հինգ կանգուն էր . ու մնացածը՝ սենեակներուն ներսի
10 միջոցն էր ։ Եւ սենեակներուն միջեւը՝ տանը բոլորտիքը՝ քսան կանգուն լայն միջոց մը կար ։
11 Ու սենեակներուն մուտքերը մնացած տեղին կը նայէին . մուտքին մէկը դէպ 'ի հիւսիս , և մուտքին մէկը դէպ 'ի հարաւ կը նայէր . ու մնացած տեղին լայնութիւնը՝ չորջանակի հինգ կանգուն էր ։

Ն · ք · գԲ · 574

12 Եւ զատուած տեղին առջեւը՝ դէպ 'ի արեւմտեան ծայրը եղող շէնքին լայնութիւնը՝ եօթանասուն կանգուն էր . ու շէնքին պատը՝ չորջանակի հինգ կանգուն լայն , ու երկայնութիւնը իննսուն կանգուն
13 էր ։ Եւ տանը երկայնութիւնը հարիւր կանգուն չափեց . ու զատուած տեղը , ու շէնքը իր պատերովը՝
14 հարիւր կանգուն երկայն էր ։ Եւ տանը՝ ու զատուած տեղին երեսը դէպ 'ի արեւելք՝ հարիւր կանգուն լայն էր ։
15 Ու անոնք հետևի կողմէն՝ զատուած տեղին դիմացը եղող շէնքին երկայնութիւնը , և անոր սիւնազարդ սրաձները մէկ կողմէն ու մէկալ կողմէն ներքին տաճարին , ու գաւիթին սրաձներուն հետ հարիւր կանգուն չափեց ։
16 Դռները սեմերը , ու խանդակապատ պատուհանները , և շուրջանակի ան իրենք ընդդէմ սեմոցը դիմացը եղող սիւնազարդ սրաձները՝ ամէն կողմէն տախտակամած էին դետնէն մինչև պատուհանները . ու պատուհան-
17 ները ծածկուած էին . նաև դրանը վրան , ու մինչև ներքին տունը , և դուրսէն , ու բոլոր պատը շուրջանակի ներսէն ու դուրսէն չափերովը ։
18 Ու քերովբէներ ու արմաւենիներ քանդակուած էին , ու երկու քերովբէնին մէջը արմաւենի մը . ու ամեն քերովբէն երկու երես ունէր ,
19 Ե.յսինքն մէկ կողմէն դէպ 'ի արմաւենին մարդու երես՝ ու մէկալ կողմէն դէպ 'ի արմաւենին առոյգ առիւծի երես . բոլոր տանը քանդակը շուրջանակի այդպէս էր ։
20 Գետակէն մինչև դրանը վրան՝ քերովբէներ ու արմաւենիներ քանդակուած էին , նոյնպէս ալ տաճարին
21 պատին վրայ ։ Տաճարին սեմերը քառակուսի էին . ու սրբարանին երեսին երեւոյթը՝ երեւոյթին պէս էր ։
22 Փայտէ սեղանը երեք կանգուն բարձր էր . ու երկայնութիւնը երկու կանգուն էր , և անոր անկիւնները իրմէ էին , ու անոր երկայնութիւնը ու բովերը փայտէ էին . ու անիկայ ինծի ըսաւ . Ասիկայ է Տէրոջը առջեւը եղող սեղա-
23 նը ։ Եւ տաճարը , ու սրբարանը
24 երկու դուռ ունէին . Ու դռները երկերկու փեղկ ունէին . ու փեղկերը երկու-երկու կը ծալուէին . երկու փեղկ մէկը ունէր , ու երկու
25 փեղկ մէկալը ։ Եւ անոնց վրայ՝

ե Եզ · ե · 1 ։

Բ Եզ · ե · 8 ։
Բ Գե · խգ · 16 ։ Մաղ · ա · 7 · 12 ։
Ե գ Թագ · գ · 31—35 ։

Ն · Բ · ԳԲ · 574

տաճարին դռներուն վրայ՝ պատերուն վրայի քանդակին պես՝ քերովբէներ ու արմաւենիներ քանդակուած էին . ու դուրսէն սրահին երեսը՝ փայտէ * սանդուխ մը
26 կար : Եւ սրահին քովերը , ու տանը սենեակներուն մէջ , և սանդուխներուն վրայ՝ մէկ կողմէն ու մէկալ կողմէն՝ Ս վանդակապատ պատուհաններ , ու արմաւենիներ կային :

* Կ՚ը՝ վայրագաւիթ

ԼԳԼ · Խ · 16 · Հմր 16 ·

ԳԼ · ԽԲ

1 Քահանայից սենեակները · 13 անոնց գործածութիւնը · 19 Արտաքին դաւիթին չափը :

1 Ետքը զիս դէպ՚ի հիւսիս եղող ճամբովը արտաքին դաւիթը հանեց , և զիս ՚ի զատուած տեղին դիմացը եղող՝ ու դէպ՚ի հիւսիս նայող շէնքին դիմացի սե-
2 նեակները բերաւ : Ո՚ր երկայնութիւնը հիւսիսային մուտքին առջևի երկայնութիւնը հարիւր կանգուն , ու լայնութիւնը յիսուն
3 կանգուն էր : Ներսի դաւիթին քսան կանգուն դէմ , ու դուրսի դաւիթին քարայատակին դէմ՝ իրարու դիմացը Բ իրեք դասիկոնով սիւնազարդ սրաձներ կային :
4 Ու սենեակներուն առջևը՝ ներսէն տասը կանգուն լայն ճեմելիք մը՝ ՚ի մէկ կանգուն ճամբայ մը կար . և անոնց դռները դէպ՚ի հիւսիս
5 էր : Ու վերի սենեակները կարճ էին . վասն զի սիւնազարդ սրահները անոնցմէ՝ ՚ի ներքին շէնքին վարի ու միջին սենեակներէն կը նեղնա-
6 յին : Ու սենեակներուն դիմացը՝ դուրսի դաւիթին կողմը՝ սենեակներուն առջևի դուրսի պատին երկայնութիւնը՝ յիսուն կանգուն էր :
8 Վասն զի դուրսի դաւիթը նայող սենեակներուն երկայնութիւնը յիսուն կանգուն էր . և ահա տա-
9 ճարին դիմացը հարիւր կանգուն էր : Ու սա սենեակներուն տակէն՝ դուրսի դաւիթէն անոնց երթալու համար՝ արևելեան կողմէն
10 մուտք մը կար : Ո՚ր դաւիթին պարսպին լայնութեանը մէջ դէպ՚ի արևելք՝ ու շէնքին դիմացը՝ զատուած տեղին դիմացը՝ սե-
11 նեակներ կային : Եւ Ո՚նց առջևը ճամբայ մը կար դէպ՚ի հիւսիս եղող սենեակներուն երևոյթին պէս , թէ անոնց երկայնութեանը՝ թէ անոնց լայնութեանը՝ և թէ անոնց բոլոր ելքերուն՝ և անոնց

Ն · Բ · ԳԲ · 574

ձևերուն ու դռներուն կողմանէ :
12 Նոյնպէս ալ էին դէպ՚ի հարաւ եղող սենեակներուն մուտքերը . ճամբուն գլուխը մուտք մը կար , ՚ի ներքին արևելեան ճամբուն բերանը՝ պատին առջևի շիտակ ճամբան :
13 Եւ ինծի ըսաւ . Զատուած տեղին առջևը եղող հիւսիսային կողմի սենեակները , ՚ի հարաւային կողմի սենեակները՝ Տէրոջը մօտեցող քահանաներուն սուրբ սենեակներն են , ուր որ Տ ամենասուրբ բաները պիտի ուտեն . հոն պիտի դնեն ամենասուրբ բաները , ու Ի հացի ընծան , ու մեղքի պատարագը , և յանցանքի պատարագը . քանզի ան տեղը
14 սուրբ է : Ի երբոր քահանանները հոն մտնեն , սուրբ տեղէն դուրսի դաւիթը պիտի չելլեն . հապա իրենց պաշտօնի զգեստները հոն պիտի թողուն , վասն զի անոնք սուրբ են , և ուրիշ հանդերձներ հագնելով՝ ժողովուրդին վերաբերեալ բաներուն պիտի մօտենան :
15 Ու երբոր անիկայ ներքին տունը չափեց լմընցուց , զիս դէպ՚ի արևելք նայող դուռը հանեց , ու
16 զանիկայ ամէն կողմէն չափեց : Արևելեան կողմը չափի եղէգով՝ շուրջանակի հինգ հարիւր եղէգ չափեց՝
17 չափի եղէգով : Հիւսիսային կողմը՝ շուրջանակի չափի եղէգով՝ հինգ
18 հարիւր եղէգ չափեց : Հարաւային կողմը չափի եղէգով՝ հինգ
19 հարիւր եղէգ չափեց : Արևմտեան կողմը դարձաւ , ՚ի չափի եղէգով՝
20 հինգ հարիւր եղէգ չափեց : Զանիկայ չորս կողմէն չափեց . անիկայ Ի հինգ հարիւր Իէ երկայն , ու հինգ հարիւր Իէ լայն էր , ՚ի Ո սպարիսպ ունէր , սուրբ ու անսուրբ տեղը մէջը զատելու համար :

Ե Գլ · Խ · 5 ·

ԳԼ · ԽԳ

1 Ատուծոյ փառքը նորէն տաճարին մէջը կը դառնայ : 7 Ատուծոյ ներկայութեանը հեռանալուն պատճառը Իսրայէլի մեղքն էր : 10 Մարգարէն ժողովուրդը կը յորդորէ որ ապաշխարեն , ու տանը օրէնքը պահեն : 13 Սեղանին չափերը : 18 և կանոնները :

1 Ետքը զիս դուռը՝ դէպ՚ի արևելք
2 նայող դուռը տարաւ : Բ Եւ ահա արևելեան ճամբայէն Իսրայէլի Ատուծոյն փառքը կու գար . ու Ո ձանոր ձայնը շատ ջուրերու ձայնին պէս էր . Ե ու երկիրը անոր փառ-
3 քէն լուսաւորուեցաւ : Եւ տեսած տեսիլքս Ի նման էր ան տեսիլքին , որն որ տեսայ , երբոր Ը քաղաքը աւերելու եկայ . ու տեսիլքները՝ Ի քովար գետին քովը տեսած տե-

Գ Թագ · Ը · 16 · 26 · Իդ · 9 ·
Ի ԳՂ · Բ · 3 · 10 · գ · 14 · 17 · 25 · 29 · է · 1 · ժ · 13 · 14 · Թես · ժբ · 9 · 10 ·
Ը Գլ · Խգ · 19 ·
Ի Գլ · Ա · 4 · 28 · բ · 4 ·
Ը Երեմ · ա · 10 ·
Ի Գլ · ա · 3 · գ · 23 ·
— Գլ · ժ · 19 · Խգ · 1 · Խգ · 1 ·
Բ Գլ · ժա · 23 ·
Գ Գլ · ա · 24 · Ցայս · ա · 15 · ժգ · 2 · ժթ · 1 · 6 ·
Ե Գլ · ժ · 4 · Ցայս · ժբ · 1 ·
Ի Գլ · ա · 4 · 28 · բ · 4 ·
Ը Երեմ · ա · 10 ·
Ի Գլ · ա · 3 · գ · 23 ·

սիլբիս պէս էր . ու երեսիս վրայ ինկայ ։
4 Ես Տէրոջը փառքը դէպ 'ի արեւելք նայող դրանը ճամբայէն
5 տուներ մտաւ ։ Ու Հոգին ինծի վերցուց , և ինծի ներքին գաւիթը տարաւ . և ահա Տէրոջը փառքը
6 տունը լեցուցեր էր ։ Ես յանի ինծի լսեցի որ տաճարէն ինծի կը խօսէր . (ու իմ քովս մարդ մը կայներ
7 էր .) Ու ինծի ըսաւ . Որդի մարդոյ՝ Իսրայէլի որդւոցը մէջ յաւիտեան բնակելու Աթոռիս տեղը , և իմ ոտքերուս գարշապարներուն տեղը ահիւ է , ու Իսրայէլի տունը՝ իրենք ու իրենց թագաւորները՝ իրենց պոռնկութիւններովը , ու իրենց թագաւորներուն դիւերովը՝ իրենց բարձր տեղերուն մէջ՝ հալ իմ սուրբ անունս պիտի չպղծեն ։
8 Անոնք զիս իրենց սեմերը՝ իմ սեմացս , ու իրենց դրանդիքը՝ իմ դրանդեացս մօտ դրին , այնպէս որ՝ իմ ու անոնց մէջտեղը միայն մէկ պատ մը կար . և իրենց ըրած գարշելութիւններովը իմ սուրբ անունս պղծեցին . ես ալ իմ բարկութեամբս սպառեցի զանոնք ։
9 Հիմա թող իրենց պոռնկութիւնը , ու իրենց թագաւորներուն դիւերը զիս հեռացրնեն , ու յաւիտեան անոնց մէջը պիտի բնակիմ ։
10 Դուն՝ որդի մարդոյ՝ Իսրայէլի տանը ըսէ տունը դիտցուր , որ իրենց անօրէնութիւններէն ամչնան . ու թող նոր դաղափարը
11 չափեն ։ Ես թէ որ իրենց բոլոր ըրածներէն ամչնան , տանը ձեւը ու կարգաւորութիւնը , և անոր ելքը , ու մուտքը , ու բոլոր ձեւերը , և բոլոր կանոնները , ու բոլոր օրէնքները անոնց դիտցուր . ու անոնց աչքերուն առջեւը գրէ . և անոր բոլոր ձեւերը՝ ու բոլոր կանոնները պահեն , ու զանոնք կատարեն ։ Ան է տաճարին օրէնքը .
12 անոր բոլոր սահմանը շուրջանակի Լեռանը գլխուն վրայ՝ ամենասուրբ պիտի ըլլայ . ահա տաճարին օրէնքը ասիկայ է ։
13 Ես սանդք են սեղանին չափերը՝ կանգուներով . (Կանգունը՝ մէկ կանգուն ու չորս մատնաչափ է .) ու խոր տեղը մէկ կանգուն , ու նոր ելայնութիւնը մէկ կանգուն , և անոր սահմանը անոր եղերքին վրայ շուրջանակի՝ մէկ թիզ մը պիտի ըլլայ . ու ասիկա սեղանին հիմը ։
14 Ու գետնին խոր տեղէն մինչև վարի շրջանակը երկու կանգուն , և նոր ելայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ . ու պզտիկ շրջանակէն մինչև մեծ շրջանակը չորս կանգուն , ու
15 ելայնութիւնը մէկ կանգուն պիտի ըլլայ ։ Ես կրակարանը չորս կանգուն բարձր պիտի ըլլայ . ու կրակարանէն վեր չորս եղջիւր պիտի
16 ըլլայ ։ Ես կրակարանը տասներկու [illegible] երկայն , ու տասներկու [illegible] լայն . չորս կողմն ալ հաւասար ըլլալով՝ քառակուսի պիտի
17 ըլլայ ։ Ես անոր բոլորտիքը եղող շրջանակը տասնուչորս [illegible] երկայն , ու տասնուչորս [illegible] լայն պիտի ըլլայ . և բոլորտիքը եղող սահմանը կէս կանգուն , ու խոր տեղը շուրջանակի մէկ կանգուն պիտի ըլլայ . ու ելքերը անոր աստիճանները դէպ 'ի արեւելք պիտի ըլլան ։
18 Ես ինծի ըսաւ . Որդի մարդոյ՝ Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Սոսկ պիտի ըլլան սեղանին կանոնները՝ ան օրը որ զանիկայ շինեն , անոր վրայ ողջակէզներ մատուցանելու , ու անոր վրայ արիւն սրսկելու համար ։
19 Սադովկի սերունդէն եղող Ղեւտացի քահանաներուն՝ (որոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան , կ'ըսէ Տէր Եհովան ,) մեղքի պատարագի համար՝ դարջառներէն զուարակ մը
20 պիտի տաս . Ես անոր արիւնէն պիտի առնես , ու խղանին չորս եղջիւրներուն վրայ , ու շրջանակին չորս անկիւններուն վրայ , և շուրջանակի անոր սահմանին վրայ դնես , ու զանիկայ պիտի սրբես , և անոր
21 համար քաւութիւն ընես ։ Ու մեղքի պատարագին զուարակը պիտի առնես . և Ներքարանէն դուրս՝ տաճարին որոշուած տեղը պիտի
22 այրուի ։ Ու երկրորդ օրը՝ մեղքի պատարագի համար՝ այծերէն առանց նոխազ մը մատուցանես . ու սեղանը պիտի սրբեն , ինչպէս
23 որ զուարակով սրբեցին ։ Երբոր սրբելը լմնցրնես , արջառներէն առանց զուարակ մը , ու ոչխարներէն անարատ խոյ մը պիտի մատուցանեն ։
24 Ես զանոնք Տէրոջը առջեւը պիտի մատուցրնես . ու քահանաները անոնց վրայ աղ պիտի ցանեն , ու զանոնք Տէրոջը ողջակէզ
25 ընեն պիտի մատուցանեն ։ Եօթը օր մեղքի պատարագի համար՝ օրը մէյմէկ նոխազ պիտի մատուցանես . նաև արջառներէն զուարակ մը , ու ոչխարներէն խոյ մը պիտի մատուցանեն , որ անարատ
26 ըլլան ։ Եօթը օր սեղանին քաւութիւն պիտի ընեն , և զանիկայ պիտի սրբեն ու զանիկայ նուիրեն ։
27 Ու երբոր ան օրերը լմնցնան , ութերորդ օրը՝ ու անկէ ետ

Ը Տես գլ. ժ. 19 ։ խդ · 2 ։
Ի Գլ. գ · 12 ։ 14 ։ ը · 3 ։
Ի գ Թագ. ը · 10 ։ 11 ։ Գլ. խդ · 4 ։
Լ Գլ. խ · 3 ։
Լ Եզ. ԽԹ. 45 ։ Սաղ. կը · 16 ։ ճղ · 14 ։ Ցաւ. գ · 17 ։ Ցօհ. ա · 14 ։ Բկոր. գ · 16 ։
Խ Սաղ. ղԹ. 1 ։
Ծ ա Կին. իբ · 2 ։ Սաղ. ղԹ. 5 ։
Լ Ղեւ. խգ · 30 ։ Երեմ. ժգ · 18 ։
Հ Գլ. լԹ · 7 ։
Յ Տես գ Թագ. ժգ · 14 ։ իա · 4 ։ 5 ։ 7 ։ Գլ. ը · 3 ։ իգ · 39 ։ խդ · 7 ։
Ղ Հմր 7 ։
Ձ Հմր 7 ։
Ժ Գլ. խ · 4 ։
Ի Գլ. խ · 2 ։
Ն Գլ. խ · 5 ։ խա · 8 ։

Ն · Ք · ՂԲ · 574

Ե Եբր. Ա. իե. 1 ։
Տես Եզ. ի · 26 ։
Ղեւ. ա · 5 ։
Ղեւ · խդ · 15 ։
Գեն. իԹ · 10 ։ 12 ։ Ղեւ. ը · 14 ։ 15 ։ Գլ. խե · 18 ։ 19 ։
Ելբր. ժգ · 11 ։
Ել. իԹ · 14 ։
Ղեւ. ը · 13 ։
Ել. իԹ · 35 ։ 36 ։ Ղեւ. ը · 33 ։
Տես Ղեւ · Թ · 1 ։

Ն·Բ·ՂԲ· 574

քը՝ քահանաները սեղանին վրայ ձեր ողջակէզները ու ձեր խաղաղութեան զոհերը պիտի մատուցանեն, և ես Ցձեզ պիտի ընդունիմ՝ կ'ըսե Տէր Եհովան։

ԳԼ·ԽԴ

1 Արևելեան դուռը միայն իշխանին համար կ'ըլլայ։ 4 Քահանաները կը յանդիմանուին սրբարանը պղծելնուն համար։ 9 Կառապետներուն արգիլուած է քահանայից պաշտօնը կատարելը։ 15 Սադովկին որդիքը կ'ընդունուին սա գործիս համար։ 17 Քահանայից վրայով պատուէրներ։

Գ ԳԼ·Խգ·1։

1 Ետ զիս սրբարանին դէպ՝ի արևելք նայող դուրսի դրանը ճամբան դարձուց. ու անիկայ դոց

2 եր։ Եւ Տէրը ինծի ըսաւ. Ա՛ս դուռը դոց պիտի մնայ, պիտի չբացուի. ու անկէ մարդ պիտի չմտնէ. Էքանզի անկէ Իսրայէլին Տէր Աստուածը մտաւ. անոր հա-

Բ ԳԼ·Խգ·4։

3 մար դոց պիտի մնայ։ Ընչի՛ իշխանին համար դէպ ըսէ. հոն միայն իշխանը պիտի նստի Ցերոջը առջևը հաց ուտելու համար. Տանիկայ դրանը սրահին ճամբայէն պիտի մտնէ, ու նոյն ճամբայէն պիտի ելլէ։

Դ Ծն·լա·54։ ա Կոր·ժ·18։

4 Եւ զիս՝ հիւսիսային դրանը ճամբայէն տանը առջևը բերաւ. ու տեսայ որ Տ՛ահա Տէրոջը փառքը Տէրոջը տունը լեցուցեր էր. Ու

Ե ԳԼ·բ·23։ Խգ·5։

5 երեսիս վրայ ինկայ։ Եւ Տէրը ինծի ըսաւ. Ո՛որդի մարդոյ՝ Տէրոջը տանը բոլոր կանոններուն, ու անոր բոլոր օրէնքներուն վրայով՝ քեզի ամէն ըսածս սրտիդ մէջը դիր, ու աչքերովդ նայէ, ևականջներովդ լսէ, ու տանը մուտքերը ու սրբարանին բոլոր ելքերը ազէկ դիտէ։

Զ ԳԼ·բ·5։ Բ ԳԼ·Խե·9։ ա Գնա·գ·3։

6 Եւ ըսպստամբներուն՝ Իսրայէլի տանը ըսես. Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Բ՚աւ հերիք է ձեզի ձեր բոլոր պղծութիւնները՝ ով Իսրայէլի

Է Ղե·իզ·41։ բ Օր·ժ·16։ Գար·է·51։

7 տունը, Որ դուք՝ Ժսրտով անթլփատ, ու մարմնով անթլփատ Ըօտարազգիներ Ա՚մտցուցիք, որ իմ սրբարանիս մէջը ըլլան, ու իմ տունս պղծեն, երբոր դուք Ի՚մ հացս՝ Ճաղարը ու արիւնը կը մատուցանէիք. ու ձեր բոլոր պղծութիւններուն՝ ի զատ՝ անոնք իմ ուխ-

Ը Ղե·իբ։ Ժ Ղե·գ·16։ Ժէ·11։

8 տրս խափանեցին։ Եւ Ի՚մ սուրբ բաներուս պահպանութիւնը չպահեցիք. հապա իմ սրբարանիս մէջ ձեր Ռ՚ոնդին պէս իմ Հ՚պահպանութեանս վրայ պահապաններ դրիք։

Թ ԳԼ·Խ·45։ Ի Հմր 7։

9 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Իսրայէլի որդւոցը մէջ եղող բոլոր օտարազգիներէն Ի՚սրտով անթլփատ ու մարմնով անթլփատ բնաւ մէկ օտարազգի մը իմ սրբարանս պիտի

Ժ Ծն·լա·54։ ա Կոր·ժ·18։

10 չմտնէ։ Ա՚մանաւանդ Ղեւտացինե-

Ն·Բ·ՂԲ· 574

րը՝ որ ինծմէ հեռացան, երբոր Իսրայէլի Ա՚ղբէտը ինծմէ մոլորեցան, ու իրենց կռոցը ետևէն գացին, իրենց անօրէնութիւնը պիտի կը-

ԺԱ ՄԿ·իզ·1։

11 րեն. Եւ իմ սրբարանիս մէջ Ե՚տաՆ դռները որոշուած սպասաւորներ, ու տաճարին սպասաւորները պիտի ըլլան. ժողովուրդին համար ողջակէզները ու զոհերը Ա՚նոնք պիտի մորթեն, ու անոնց ծառայութիւն ընելու համար՝ Ա՚նոնց

Բ ՄԿ·իթ·34։ Թու·ժզ·9։

12 առջևը անոնք պիտի կայնին։ Ո՚րովհետև անոնց համար, անոնց կուռքերուն առջևը ծառայութիւն ըրին, ու Ի՚սրայէլի տանը՝ գայթակղութիւն Ռ՚անօրէնութեան Ղ՚ղ՚ձ՚ եղան, անոր համար անոնց վրայով Ի՚մ ձեռքս վերցուցի՝ կ'ըսէ Տէր Եհովան, որ իրենց անօրէ-

Ե Ծն·թ·16։ ԳԼ·ժգ·3։ 4։ Մագ·բ·8։ Ես Մագ·ճզ·26։

13 նութիւնը պիտի կրեն. Ե՚ւ ինծի պիտի չմօտենան՝ ինծի քահանայութիւն ընելու, ու իմ բոլոր սուրբ բաներուս և ամենասուրբ բաներուս մօտենալու. հապա Ի՚րենց անարգանքը, ու իրենց ըրած

Ի ԳԼ·լբ·30։ Ես·է·7։

14 պղծութիւնները պիտի կրեն։ Սակայն զանոնք՝ Ղ՚տանը պահպանութեանը վրայ պահապան պիտի դրնեմ, անոր ամէն ծառայութեանը համար, ու անոր մէջը ըլլալու ամէն գործին համար։

Ղ Թու·ժբ·4։ ա ՄԿ·իգ·28։ 32։

15 Ն՚բայց Ղ՚ևտացի քահանաները՝ Ս՚ադովկի որդիքը, որոնք իմ սրբարանիս պահպանութիւնը պահեցին, երբոր Իսրայէլի որդիքը ինծմէ մոլորեցան, անոնք ինծի ծառայութիւն ընելու համար ինծի պիտի մօտենան, և Ճ՚արպը ու արիւնը ինծի մատուցանելու համար՝ անոնք Ի՚մ առջևս պիտի կայնին՝

Ա ԳԼ·խ·46։ իգ·19։ Ա Թագ·բ·35։ Ես Հմր 10։ Է Հմր 7։ Ա Բօր·ժ·8։

16 կ'ըսէ Տէր Եհովան։ Անոնք իմ սրբարանս պիտի մտնեն, ու ինծի ծառայութիւն ընելու համար՝ ա՚նոնք պիտի մօտենան Ի՚մ սեղանիս, և իմ պահպանութիւնս պիտի պա-

Բ ԳԼ·խա·22։

17 հեն։ Ու երբոր ներսի դաւիթին դռներէն մտնեն, Ե՚կտաւէ զգեստներ պիտի հագնին, ու ներսի դաւիթին դռները, ու ներսը ծառայութիւն ըրած ատեննին՝ վրանին

Ե Եզ·խը·39։ 40։ 43։ լԹ·27։ 28։

18 բուրդ պիտի Ա՚չհագնին. Ի՚րենց գլուխներուն վրայ կտաւէ ապարօշներ ըլլայ, ու մէջքերնին՝ կտաւէ վարտիկներ ըլլայ. Ռ՚ քրտընցընող

Ա Եզ·խը·40։ 42։ լԹ·28։

19 բան պիտի չհագնին։ Ու երբոր դուրսի դաւիթը ժողովուրդին ելլեն, Ի՚րենց պաշտօնի զգեստները պիտի հանեն, ու զանոնք սուրբ սենեակներուն մէջը դնեն, և ուրիշ զգեստներ պիտի հագնին, որպէս զի իրենց զգեստներովը Ի՚ժողովուրդը

Ի ԳԼ·խը·14։

20 դը չսրբեն։ Եւ Ի՚լուխնին պիտի չածիլեն, ոչ ալ վարսերնին եր-

Ե ԳԼ·խ·14։ Ես Եզ·իթ·37։ լ·29։ Ղե·գ·27։ Մաա·իգ·17·19։ Ղե·իա·5։

Ն · Ք · ՂԲ · 574

կընցրնեն . Հապա միայն գլուխնուն
21 մազերը փորբեն ։ Ու ֆքնաւ մէկ
քահանայ մը դինի չխմէ՝ երբոր ներ-
22 քին գաւիթը կը մտնէ ։ Ու ո՞ր-
բևաբրին՝ և արձակուածը իրենց կնիկ
չառնեն . Հապա Իսրայէլի տանը
սերունդէն եղող կոյսը , կամ քա-
հանայէ մը որբևարի ինացած կնիկը
23 առնեն ։ Ու իմ ժողովուրդիս՝
ֆ սուրբ ու անսուրբ բաներուն տար-
բերութիւնը պիտի սորվեցրնեն .
և անմաքուրին ու մաքուրին տար-
24 բերութիւնը անոնց դիտցրնեն ։ Ու
ֆդատերու վրայ անոնք պիտի կե-
նան դատաստան ընելու համար ,
ու իմ իրաւունքներուս համեմատ
զանոնք դատեն , և իմ բոլոր տոնե-
րուս մէջը՝ իմ օրէնքներս ու կանոն-
ները պիտի պահեն , ու իմ շա-
25 բաթներս սրբեն ։ Եւ Իմպղու-
մեռելի քով չերթան՝ որ պղծուին .
Հապա միայն հօր համար , կամ մօր
համար , կամ տղու համար , կամ
աղջկան համար , եղբօր համար ,
կամ չամուսնացած քրոջ համար
26 պղծուին ։ Ու ՂԱկը սրբուելէն
եաքը եօթը օր պիտի համրէ իրեն ։
27 Եւ անիկայ սրբարանին մէջ ծառա-
յութիւն ընելու համար՝ Ներսի
գաւիթը սրբարանը մտած օրը՝
ԸԱնիկայ իր մեղքի պատարագը պի-
տի մատուցանէ , կ'ըսէ Տէր Եհո-
վան ։
28 Եւ ասիկայ անոնց ժառանգու-
թիւն ըլլայ . Ես անոնց ժառանգու-
թիւնը ես եմ . ու Իսրայէլի մէջ
անոնց կալուածք չտաք . անոնց կա-
29 լուածքը ես եմ ։ Ի Հացի ընծան ,
ու մեղքի պատարագը , և յանցան-
քի պատարագը անոնք պիտի ու-
տեն . ու Իսրայէլի մէջ Իամէն նուէր
30 անոնց պիտի ըլլայ ։ Եւ ամէն ԹՒ-
ՈՒՒ բանին Երթոլոր երախայրիներուն
առջինը , ու ձեր բոլոր ընծաներէն
ամէն բանի ընծային բոլորը՝ քահա-
նային պիտի ըլլայ . ու Ի ձեր խմոր-
ներուն երախայրին քահանային
պիտի տաք , Ի որ քու տանդ վրայ
31 օրհնութիւն * բերես ։ Քահանա-
ները բնաւ Իմեռած կամ՝ գազանա-
բեկ ՈՒՈՒՈՒՆ Ը ԹԸ պիտի չու-
տեն , թէ՝ թռչուն ըլլայ ան և թէ
չորքոտանի ։

ԳԼ · ԽԵ

1 Սրբարանին համար , 6 քաղաքին համար , 7 և իշխանին համար երկրէն որոշուելու բաժի-
նը ։ 9 Իշխանին համար պատուէրներ ։

1 ‖ Ու երբոր ո՞ երկիրը վիճակով ժա-
ռանգութիւն բաժնէք , երկրէն
քսանուհինգ հազար ԷՆԻ երկայ-
նութեամբ , ու տասը հազար լայ-
նութեամբ՝ Ի սուրբ ընծայ մատու-

Ն · Ք · ՂԲ · 574

ցանէք Տէրոջը . ասիկայ շուրջա-
նակի իր բոլոր սահմաններուն մէջը
2 տուրբ ըլլայ ։ Ասկէ քառակուսի
չափուած՝ Ի հինգ հարիւրով հինգ
հարիւրը սրբարանին համար ըլլայ .
ու անիկայ շուրջանակի յիսուն
կանգուն արուարձան ունենայ ։
3 Եւ աս Իչափով՝ երկայնութիւնը
քսանուհինգ հազար , ու լայնու-
թիւնը տասը հազար չափես . Ո ու
անոր մէջը պիտի ըլլայ սրբարանը՝
4 ամենասուրբ տեղը ։ Ասիկայ՝ Տէ-
րոջը ծառայութիւն ընելու մօտե-
ցող սրբարանի պաշտօնեաներուն
քահանաներուն համար Ի սուրբ ըլ-
լայ երկրէն , որ անոնց՝ տուներու
համար տեղ մը , ու սրբարանին
համար սուրբ տեղ մը ըլլայ ։
5 Եւ տանը ծառայութիւնը ընող
Ղևտացիները Ը քսանուհինգ հա-
զար երկայնութեամբ ու տասը հա-
զար լայնութեամբ կալուածք պի-
տի ունենան , Ռ՚ը Ի քսան սենեակ ։
6 ԸԵւ հինգ հազար լայնութեամբ
ու քսանուհինգ հազար երկայնու-
թեամբ՝ քաղաքին կալուածքը պի-
տի տաք՝ սրբարանին ընծային քո-
վը . ասիկայ բոլոր Իսրայէլի տանը
ըլլայ ։
7 ՊԵւ իշխանին Ի ՈՒ ՈՒ Ի՚Ը սուրբ
ընծային , ու քաղաքին կալուած-
քին մէկ կողմէն ու մէկալ կողմէն ,
սուրբ ընծային , և քաղաքին կա-
լուածքին դիմացը՝ արևմտեան ծայ-
րէն դէպ ՚ի արևմուտք՝ ու արևե-
լեան ծայրէն դէպ ՚ի արևելք ըլլայ .
ու երկայնութիւնը՝ արևմտեան
սահմանէն մինչև արևելեան սահ-
մանը՝ Ֆ ՈՒ բաժիններուն մէկուն
8 հետ հաւասար ըլլայ ։ Իսրայէլի մէջ՝
երկրէն ՈՒՒՈ անոր կալուածք ըլ-
լայ . ու Ի իմ իշխաններս մէյմըն ալ
իմ ժողովուրդս չհարստահարեն .
ու ՏՈՒՆ երկիրը՝ Իսրայէլի տանը
տրուի իրենց ցեղերուն համեմատ ։
9 Տէր Եհովան այսպէս կ'ըսէ . Էնչ
հերիք է ձեզի՝ ով Իսրայէլի իշ-
խաններդ , Ղրկանքը ու յափշտա-
կութիւնը վերցուցէք , և իրաւունք
ու արդարութիւն ըրէք . իմ ժողո-
վուրդիս ձեր բռնի պահանջմունք-
ները վերցուցէք՝ կ'ըսէ Տէր Եհո-
10 վան ։ Ձեր Ի կշիռքները արդար՝
ձեր արդուն արդար ու ձեր մարը
11 արդար ըլլայ ։ Արդուն՝ ու մարը
մէկ չափ ըլլան , որ մարը՝ քոռին
տասներորդը պարունակէ , ու ար-
դուն ՈՒ քոռին տասներորդը .
քոռին նայելով պիտի ըլլայ անոնց
12 չափը ։ Եւ Ի սիկղը քսան կերաս
պիտի ըլլայ . ձեր մնասը՝ քսան
սիկղ , քսանուհինգ սիկղ , տաս-
նուհինգ սիկղ պիտի ըլլայ ։

ֆ ՂԱ . Ժ . 9 ։
— ՂԱ . Ի . 7 ։ 13 ։ 14 ։

ֆ ՂԱ . Ժ . 10 ։ 11 ։ ԳԼ . Իբ . 26 ։ Մ ՂԶ . Բ . 7 ։

ֆ Բ Օր . Ժէ . 8 ։ ՃՒ ։ ԲՄՆ . ԺԹ . 8 ։ 10 ։

Ծ Տէս գԼ . Իբ . 26 ։
Ի ՂԱ . Ի . 1 ։ Ճ ։

ՂԹՒ . Գ . 10 ։ ԺԹ . 11 ։ Ճ ։

Ի ՀՅՐ 17 ։

ԸՂԱ . Գ . 3 ։

ՔԹՒ . ԺԲ . 20 ։ ԲՕր . Ժ . 9 ։ ԺԲ . 1 ։ 2 ։ ՁԷՍ . Ժգ . 14 ։ 33 ։
ՃՂԱ . Գ . 18 ։ 29 ։ Է . 6 ։
ԻՂԱ . ԻԷ . 21 ։ 28 ։ բաղդաւէ՝ ԹՒ . ԺԲ . 14 ՒՆ ՆԵՒ .
ԼԵԼ . Ժգ . 2 ։ Իբ . 29 ։ 30 ։ Իգ . 19 ։ ԹՒ . Գ . 13 ։ ԺԲ . 12 ։ 13 ։
Ի ԹՒ . Ժ Ե . 20 ։ ՆԵՀՄ . Ժ . 37 ։
Ճ ՌԱԿ . Գ . 9 ։ 10 ։ Մ ՂԶ . Գ . 10 ։
* ԿՈ՚ՐՔԵՐ ։
ՖԼԵ . Իբ . 31 ։
ՂԱ . Իբ . 8 ։

— ԳԼ . ԻԷ . 22 ։

Բ ԳԼ . ԽԸ . 8 ։

13 Զեր մատուցանելու ընծան ասի-
կայ ըլլայ . ցորենի քառէն՝ արդուին
վեցերորդ մասը , ու գարիի քառէն՝
14 արդուին վեցերորդ մասը . Ու եղին
կանոնը ՚ի՚ւայ ըստ . եղին մարէն՝
մարին տասներորդը ՚ին՚ քառէն ,
՚ին՚ւն ՚ին՚ խօմէրէն , ՚ր տասը
մար կ՚ընծա՚ւէ , վասն զի տասը
15 մարը մէկ խօմէր մըն է . Եւ Իս-
րայէլին ջրարբի արօտներուն հօտե-
րէն՝ երկու հարիւրէն մէկ ոչխար ,
Ա՚ռա՚ւ պէտ ՚հա՚ւ՚ցանէն իրրև հացի
ընծայ , ու ողջակէզ , և խաղաղու-
ՂԱ·ա·4· թեան զոհ , որ Ահրնց համար քա-
ւութիւն ըլլայ՝ կ՚ըսէ Տէր Եհովան ։
16 Երկրին բոլոր ժողովուրդը՝ աս ըն-
ծան Իսրայէլի մէջ իշխան եղո-
ղին ընծա՚ւ պարտաւոր պիտի ըլ-
լան ։
17 Եւ տօներու՝ ու ամսագլուխներու՝
ու շաբաթներու մէջ՝ Իսրայէլի տա-
նը ամէն հանդիսաւոր օրերուն մէջ՝
ողջակէզները , ու հացի ընծան ,
և թափելու նուէրը իշխանին վրայ
պիտի ըլլայ . մեղքի պատարագը ,
ու հացի ընծան , ու ողջակէզը , և
խաղաղութեան զոհը՝ անկայ պի-
տի մատուցանէ՝ Իսրայէլի տանը
քաւութիւն ընելու համար ։
18 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ .
Ա՚ռջի ամսուն առջի օրը՝ արջառնե-
րէն մէկ անարատ զուարակ մը առ-
ՀՂԷ·ԺՂ· 19 նես , ու հ՚սրբարանը մաքրես ։ Ի Եւ
16· քահանան մեղքի պատարագին ա-
Ի՚ԳԼ·ԽԳ· 20· րիւնէն պիտի առնէ , և տանը սե-
մոցը վրայ , ու սեղանին շրջանակին
չորս անկիւններուն վրայ , և ներքին
գաւիթին դրանը սեմոցը վրայ դնէ ։
ՂՂԷ·դ·27· 20 Ամսուն եօթներորդ օրն ալ՝ Ղսխա-
ւած կամ անմիտ մարդու համար
այնպէս բնես . և տանը համար
քաւութիւն պիտի բնէ՛ք ։
Ֆ ԵԼ·ԺԲ· 21 Ֆ Ա՚ռջի ամսուն չորեքտասաներ-
18· ՂԷ· դորդ օրը՝ ձեզի զատիկ ըլլայ . եօթը
ԻԳ·5·6· օր տօն պիտի պահէ՛ք , ո՚ր բաղարջ
Թու·Բ· 2·3· ԻԸ· 22 ուտուի . Եւ ան օրը իշխանը ի-
16·17· ր րեն համար , ու երկրին բոլոր ժո-
Օր·ԺԳ·1· ղովրդեանը համար՝ Ֆ մէկ զուարակ
Ճ· մը պիտի մատուցանէ Ֆ՚ր՚ մեղքի
Ֆ ՂԷ·դ·14· 23 պատարագ . Ու Ֆ տօնին եօթը օրը
Ֆ ՂԷ·ԻԳ· 8· Տէրոջը ողջակէզ պիտի մատուցա-
նէ , ան եօթը օրուան մէջ՝ օրը
եօթը զուարակ , ու եօթը անարատ
խոյ , և ամէն օր այծերէն Ն մէկ նո-
Ն Տ՚ո Թու· ԻԸ·15·22· խաղ մը Ի՚ր՚ մեղքի պատարագ .
30·ԻԹ·5· 24 Ն Ու ամէն մէկ զուարակին համար՝
11·16·19· ՃՃ· մէկ արդու մը , և ամէն մէկ խոյին
Ղ ԳԼ·ԽԶ· համար՝ մէկ արդու մը հացի ընծայ ,
5·7· ու ամէն մէկ արդուին համար՝
Ֆ ՂԷ·ԻԳ· 25 մէկ հիմէն եղ մատուցանէ ։ Նոյն-
33· ՃՂ· պէս Ղ եօթներորդ ամսուն Ղնդհ-
Թու·ԻԹ· տասաներորդ օրը՝ Ֆ տօնին ատենը
12·ր Օր· եօթը օր՝ աս մեղքի պատարագին ,
ԺԳ·13· ողջակէզին , հացի ընծային , ու և-
ղնի պէս պիտի մատուցանէ ։

ԳԼ·ԽԶ

1 Իշխանին , 9 և ժողովուրդին երկրպագութեան վերաբերեալ պատուէրներ ։ 16 Իշխանին ժառանգութեանը վրայով կանոն մը ։ 19 Զոհերը եռացընելու ու եփելու դաւիթները ։

1 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Ներ-
քին գաւիթին դէպ ՚ի արեւելք
նայող դուռը՝ գործի վեց օրերը գոց
ըլլայ , ու շաբաթ օրը բացուի , ու
2 ամսագլխուն օրը բացուի ։ Եւ — ԳԼ·ԽԳ·
իշխանը ան դրանը սրահին ճամ- 8·ՀՋ 8·
բայէն դուրսէն պիտի մտնէ , ու
դրանը սեմոցը քովը կայնի . և քա-
հանաները՝ անոր ողջակէզը , ու խա-
ղաղութեան զոհերը պիտի մա-
տուցանեն . ու անիկայ դրանը ա-
մէն վրայ երկրպագութիւն պիտի
ընէ՝ ու ելլէ . և ան դուռը մինչև
3 իրիկուն պիտի չգոցուի ։ Ու երկ-
րին ժողովուրդը՝ շաբաթ օրերը ու
ամսագլուխները Տէրոջը առջևը
աս դրանը մուտքին մէջ երկրպա-
գութիւն պիտի ընեն ։
4 Եւ Ի իշխանին շաբաթ օր Տէ- Բ ԳԼ·ԽԱ·
րոջը մատուցանելու ողջակէզը՝ վեց 17·
անարատ գառն , ու մէկ անարատ
5 խոյ ըլլայ ։ Ի Եւ խոյին համար հաղի Ի ԳԼ·ԽՀ·
ընծայ՝ մէկ արդու մը , ու գառանց 24· ՀՋ 7·
համար հացի ընծայ՝ Ր ձեռքէն ևկա- 11·
ծր , և ամէն մէկ արդուի համար Ր ր Օր·ԺՂ·
17·
6 մէկ հիմէն եղ Ֆ՚ր՚ւ՚ն՚ւ ։ Ու ամ-
սագլխուն օրը՝ արջառներէն մէկ
անարատ զուարակ մը , ու վեց
գառն , ու մէկ խոյ մը , որոնք ան-
7 արատ պիտի ըլլան ։ Եւ զուա-
րակին համար մէկ արդու մը , ու
խոյին համար մէկ արդու մը հացի
ընծայ մատուցանէ , ու գառանց
համար՝ ինչ որ ձեռքէն կու գայ ,
և ամէն մէկ արդուի համար՝ մէկ
հիմէն եղ ըլլայ ։
8 Ի Ու երբոր իշխանը գայ , դրանը Ի ՀՋ 2 ։
սրահին ճամբայէն մտնէ , և նոյն
9 ճամբայէն ելլէ ։ Ու երկրին ժողո-
վուրդը՝ Ղնդհանդիսաւոր օրերուն մէջ Ղ ԵԼ·ԻԳ·
երկրպագութիւն ընելու համար 14—17 ։ ր
Տէրոջը առջևը եկած ատենին , Օր·ԺՂ·
հիւսիսային դրանը ճամբայէն մտ- 16·
նողը՝ հարաւային դրանը ճամբա-
յէն ելլէ , ու հարաւային դրանը
ճամբայէն մտնողը՝ հիւսիսային
դրանը ճամբայէն ելլէ . մտած
դրանը ճամբայէն չդառնայ , հապա
10 անոր դիմացինէն ելլէ ։ Եւ իշխա-
նը՝ անոնց մտած ատենը՝ անոնց
հետը մտնէ , ու անոնց ելած ատե-
նը՝ անոնց հետը ելլէ ։
11 Եւ տօներու մէջ , ու հանդիսա- Ի ՀՋ 5 ։
ւոր օրերու մէջ Ի հացի ընծան՝ ամէն
զուարակի համար մէկ արդու մը ,

Ն · Ք · ՂԲ · 574

և ամէն խոյի համար մէկ արդուի մը ըլլայ , ու գառանց համար՝ ձեռքին
12 նկածը . ու ամէն մէկ արդուի համար մէկ հինէն եղ ըլլայ : Եւ թէ
որ իշխանը մէկ կամաւոր ողջակէզ
մը , կամ մէկ կամաւոր խաղաղու-
Ը Գլ · Խդ · 3 , Հմր 2 , թեան զոհ մը Տէրոջը մատուցանելու ըլլայ , ընդեպ՝ ի արեւելք
նայող դուռը անոր բանան . ու
անիկայ իր ողջակէզը , ու խաղա-
ղութեան զոհը մատուցանէ՝ ինչ-
պէս որ շաբաթ օրը կը մատու-
ցանէ , ու ելլէ . և անոր ելլելէն
ետքը դուռը գոցեն :
Ր Ել · Լթ · 38 , Թուա · Իը · 3 , 13 Ր Ու ամէն օր մէկ տարեկան ան-
արատ գառնուկ մը Տէրոջը ող-
ջակէզ մատուցանես . զանիկայ
14 ամէն առտու մատուցանես . Եւ
անոր հետ ամէն առտու՝ արդուիին
վեցերորդ մասը հացի ընծայ մա-
տուցանես , ու հիմնին երրորդ
մասը եղ՝ նաւիհին հետ խառնելու
համար . ՚՚Հ՚՚ յաւիտենական
կանոնով Տէրոջը մշտնջենաւոր
15 հացի ընծայ ըլլայ : Եւ գառնուկը , ու հացի ընծան , ու եղը՝
ամէն առտու մատուցանեն . ՚՚Հ՚՚ մշտնջենաւոր ողջակէզ ըլլայ :
16 Տէր Եհովան այսպէս կ՚ըսէ . Երբոր իշխանը իր որդւոցը մէկուն
պարգեւ տայ , անոր ժառանգու-
թիւնը անոր որդւոցը ըլլայ . ա-
նիկայ ժառանգութեան կալուածք
17 մը ըլլայ անոնց . Իսկ երբոր իր
ժառանգութենէն՝ իր ծառանե-
րուն մէկուն պարգեւ տայ , ան
Ժ Ղէ · Իե · 10 : ատենը անիկայ մինչեւ Ի թողու-
թեան տարին անոր պիտի ըլլայ ,
ետքը իշխանին պիտի դառնայ .
վասն զի անոր ժառանգութիւնը
միայն իր որդւոցը պիտի ըլլայ :
Ի Գլ · Խե · 8 : 18 Եւ Ի իշխանը ժողովուրդին ժա-
ռանգութենէն չառնէ , զանոնք
իրենց կալուածքէն զրկելով . իր
որդւոցը՝ իր կալուածքէն ժառան-
գութիւն տայ , որպէս զի իմ ժո-
ղովուրդս՝ ամէն մէկը իր կալուած-
քէն չցրուի :
19 Եւ զիս դրանը քովը եղող մուտ-
քէն քահանաներուն դէպ՝ ի հիւ-
սիս նայող սուրբ սենեակները տա-
րաւ . և ահա հոն՝ ետեւի կողմերը
դէպ՝ ի արեւմուտք մէկ տեղ մը
20 կար . Ու ինծի ըսաւ . Ասիկայ
ան տեղն է՝ ուր որ քահանաները
յանցանքի պատարագին , ու մեղ-
Ը Ր Մն · Լ · 13 : քի պատարագին Ֆ՚՚Ը Նպիտի խա-
Ի Ղէ · Ր · 4 , 5 , 7 : շեն , ՚՚ հոն հացի ընծան Ի պիտի
եփեն , որ չըլլայ թէ դուրսի գա-
Ձ Գլ · Խգ · 19 : ւիթը հանեն , ու Ձ ժողովուրդը
21 սրբեն : Եւ զիս դուրսի գաւիթը
հանեց , ու զիս գաւիթին չորս
անկիւններէն անցուց . և ահա
գաւիթին ամէն մէկ անկիւնը՝ մէյ-
22 մէկ գաւիթ կար : Գաւիթին
չորս անկիւններուն մէջ քառասուն
Ե՚՚Ն՚՚Հ՚՚ երկայնութեամբ , ու եր-
սուն լայնութեամբ՝ * չուրջանա-
կի գոցուած՚՚ գաւիթներ կային .
չորսին չափը մէկ էր անկիւննե-
23 րուն մէջ : Եւ անոնց բոլորտիքը՝
չորսին ալ բոլորտիքը՝ Ը՚՚Ե՚՚Ր՚՚
կարդ մը կար . ու ՚՚ն կարգերուն
տակը շուրջանակի եփարաններ
24 շինուած էին : Ու ինծի ըսաւ .
Ասոնք եփոյներուն տեղերն են ,
ուր որ տանը պաշտօնեաները ժո-
ղովրդեան զոհը Ն պիտի եփեն :

* Կ՚՚ պրդ-ուիկ

Ն · Ք · ՂԲ · 574

Ն Ցեզ · Նմր 20 :

ԳԼ · ԽԷ

1 Սուրբ ըստրերուն տեսիլքը . 6 անոնց գործու-
թիւնը : 13 Երկրին սահմանները . 22 անոր
վճռակով բաժնուիլը :

1 Ու զիս նորէն տանը դրանը առ-
ջևը բերաւ . և ահա արևելեան
կողմէն տանը սեմին տակէն ՚՚ ջու-
րեր կ՚ելլէին . քանզի տանը երեսը՝
դէպ՝ ի արևելք էր . ու ջուրերը
տանը աջ կողմին տակէն՝ սեղանին
2 հարաւային կողմէն կ՚իջնէին : Եւ
զիս հիւսիսային դրանը ճամբայէն
հանեց , ու զիս դուրսի ճամբան՝
դուրսի դրանը արևելք նայող ճամ-
բան պտտցուց . և ահա աջ կող-
մէն ջուրեր կը վազէին :
Ե Գլ · Խ · 3 : 3 Ե Ան մարդը որ իր ձեռքը լար ու-
նէր , դէպ՝ ի արևելք ելաւ , ու
հազար կանգուն չափեց , և զիս
ջուրերէն անցուց , ՚՚ ջուրերը մին-
4 չև գարշապարներս Ի՚ԼԼԷՒՆ . Հա-
զար ևս չափեց , ու զիս ջուրերէն
անցուց , ՚՚ ջուրերը մինչև ծուն-
կերս Ի՚ԼԼԷՒՆ . Հազար ևս չափեց ,
ու զիս ը՚՚ր՚՚Ե՚՚Ն անցուց , և ջու-
† ԵՔր · լո-զալու ջու-րեր , անան-ցանելի գետ Իէր Էին : 5 րերը մինչև մէջքս Ի՚ԼԼԷՒՆ . Նորէն
հազար ՚՚Լ չափեց . ՚՚ անանկ գետ
մը Իէ՚՚Ե՚՚ էր , որ չէի կրնար անց-
նիլ . վասն զի ջուրերը յորդեր
էին . † ՚՚ ՚՚Ն՚՚Հ՚՚ գետ մը Իէր Ե՚՚Ի՚՚ ,
ուակից որ մարդ չէր կրնար անցնիլ՝
բայց միայն լողալով՚՚ :
6 Ան ատենը ինծի ըսաւ . Տեսա՞ր՝
որդի մարդոյ . և զիս տարաւ՝ ու
7 գետին եղերքը պտտցուցոյ : Եւ
քանի որ հոն կը պտտէի , տեսայ
որ գետին եղերքը մէկ կողմէն ու
մէկալ կողմէն խիստ շատ Ֆ ծառեր
8 կային : Եւ ինծի ըսաւ . Ա՚՚ս ջու-
րերը արևելեան կողմը կ՚ելլեն , ու
անապատը կ՚իջնեն , ու ծովը կ՚եր-
թան . և ծովը ելլելով՝ ՚՚որ ջուրե-
9 րը բժշկութիւն կը գտնեն : Եւ
‡ զետին ամէն գացած տեղը՝ ամէն
շարժուն կենդանիները պիտի ապ-
րին , ու ձուկերը խիստ շատ պիտի
ըլլան . քանզի ասս ջուրերը հոն

† Եզր 12 : Ցայս · Իր · 2 :

‡ Կ՚՚ երկու գետե-րուն

պիտի երթան . ու դետին ամէն
գայած տեղը՝ բժշկութիւն պիտի
10 ըլլայ , ու պիտի ապրին : Եւ անոր
վրայ՝ Ենգադդիէն մինչև Ենեգլա-
յիմ՝ ձկնորսներ պիտի կայնին . հո-
ուռկաններ փռելու տեղ պիտի ըլ-
լայ . ձուկերը տեսակ տեսակ պիտի
ըլլան , Տ՚մեծ ծովուն ձուկերուն
11 պէս խիստ շատ պիտի ըլլան : Բա՚յց
անոր տղմալից տեղուտքերը ու ճա-
խիները բժշկութիւն պիտի չգըտ-
նեն . անոնք աղի համար պիտի ո-
12 րոշուին : Ու Տ՚գետին եղերքը՝ մէկ
կողմէն ու մէկալ կողմէն՝ ամէն
տեսակ պտղաբեր ծառեր պիտի
բուսանին , Տ՚որոնց տերևը պիտի չը-
թառամի , ու պտուղը չՏատնի . ամէն ամիս նորէն պտուղ պիտի
տան . վասն զի անոր ջուրերը սըր-
բարանէն կ՚ելլեն . և անոնց պտուղը՝
կերակուրի համար , ու տերևները՝
Տ՚բժշկութեան համար պիտի ըլլան :
13 Տ՚Եր Եհովան այսպես կ՚ըսէ . Ա-
է երկրին սահմանը՝ որ դուք պիտի
ժառանգէք Իսրայէլի տասներկու
յեղերուն համեմատ .՝ (Ը՚Յովսէփը
14 Էրէս- բաժին պէտ -ՆԷՆԷ՝ .) Ու
զանիկայ ամէն մարդ իր եղբօրը
պէս պիտի ժառանգէ . վասն զի
Ի՚մ ձեռքս վերցուցի որ զանիկայ
ձեր հայրերուն տամ . և աս երկիրը
Տ՚ձեզի ժառանգութիւն պիտի ի-
15 նայ : Ու երկրին սահմանը աս է .
Հիւսիսային կողմը՝ մեծ ծովէն
Տ՚Եթլոնի ճամբան՝ մինչև Ս՚Եդադ ,
16 Տ՚Եմաթ , Տ՚Բերոթա , Սիբրայիմ՝ որ
Դամասկոսի սահմանին ու Եմաթի
սահմանին մէջտեղն է , -- Տ՚Հ՚Ն-
Ը՚րանի սահմանը եղող Ա՚սեր աթ-
17 Թիբրոնը , Ու Էրէ՚Ն սահմանը՝
ծովէն մինչև Ի՚Նսար Էնան՝ որ Դա-
մասկոսի սահմանն է դէպ՚ի հիւ-
սիս՝ , նաև Եմաթի սահմանը պիտի
ըլլայ . և հիւսիսային կողմը -ՆԷՆ-
18 ԸՏ՚ : Ու արևելեան կողմը՝ Ը՚-
րանի մէջէն , ու Դամասկոսի մէ-
ջէն , և Գաղաադի մէջէն , ու Ցոր-
դանանու -վը Էղող Իսրայէլի երկ-
րին մէջէն՝ սահմանէն մինչև արևե-
լեան ծովը չափէք . ու արևելեան
19 կողմը -ՆԷՆ ԸՏ՚ : Եւ դէպ՚ի
Տ՚արաւ Տ՚արաւային կողմը՝ Թամա-
րէն մինչև Ս՚Ի՚ճարանութեան ջու-
րերը՝ Կադեսի մէջ , -- մինչև մեծ
ծովը Է՚Ը՚ղող հեղեղատը պիտի ըլլայ .
և դէպ՚ի Տ՚արաւ՝ Տ՚արաւային կող-
20 մը ասիկայ ըլլայ : Ու արևմտեան
կողմը՝ մեծ ծովը պիտի ըլլայ , սահ-
մանէն մինչև Եմաթի դիմացը . ա-
րևմտեան կողմ ասիկայ ըլլայ :
21 Եւ աս երկիրը ձեզի բաժնէք՝
22 Իսրայէլի յեղերուն համեմատ , Ու
զանիկայ ժառանգութեան համար
վիճակով բաժնէք՝ Թէ ձեզի , Ն և
Թէ ձեր մէջը բնակող ու ձեր մէջը
զաւակներ ծնանող օտարականնե-
րուն . Ը՚ու անոնք ձեզի բնակներու-
պէս պիտի ըլլան Իսրայէլի որդւո-
ցը մէջ , -- անոնք ձեզի հետ ժա-
ռանգութիւն պիտի առնեն Իսրա-
23 յէլի յեղերուն մէջ : Եւ որ յե-
ղին մէջ որ օտարականը պանդրխ-
տացած է , հոն անոր ժառանգու-
թիւնը պիտի տաք՝ կ՚ըսէ Տ՚Եր Ե-
հովան :

ԳԼ . ԽԸ

1 , 23 Տասուերկու յեղերուն , 8 սրբարանին , 15 քաղաքին ու արուարձաններուն , 21 ու իշխանին բաժինները : 30 Քաղաքին չափերը ու դռները :

1 Ե՚Ւ յեղերուն անուննները ասոնք
են : -Հիւսիսի ծայրէն՝ Եթ-
լոնի ճամբուն քովը դէպ՚ի Եմաթ
երթալով՝ մինչև Ասար Էնան՝ որ
Դամասկոսի սահմանն է դէպ՚ի
հիւսիս՝ մինչև Եմաթին քովը , ու
արևելեան կողմէն մինչև արևմուտք՝
2 Դանին մէկ բաժին ըլլայ . Եւ
Դանի սահմանին քովը՝ արևելեան
կողմէն մինչև արևմտեան կողմը՝
3 Ասերին մէկ բաժին ըլլայ . Ու Աս-
բի սահմանին քովը՝ արևելեան
կողմէն մինչև արևմտեան կողմը՝
Նեփթաղիմին մէկ բաժին ըլլայ .
4 Ու Նեփթաղիմի սահմանին քովը՝
արևելեան կողմէն մինչև արևմտեան
կողմը՝ Մանասէի մէկ բաժին ըլլայ .
5 Եւ Մանասէին սահմանին քովը՝ ա-
րևելեան կողմէն մինչև արևմտեան
կողմը՝ Եփրեմին մէկ բաժին ըլլայ .
6 Ու Եփրեմի սահմանին քովը՝ արև-
ելեան կողմէն մինչև արևմտեան կող-
մը՝ Ռուբինին մէկ բաժին ըլլայ .
7 Եւ Ռուբինի սահմանին քովը՝ ա-
րևելեան կողմէն մինչև արևմտեան
կողմը՝ Ցուդային մէկ բաժին ըլլայ :
8 Եւ Ցուդայի սահմանին քովը՝
արևելեան կողմէն մինչև արևմտեան
կողմը պիտի ըլլայ Էան ընծան՝ որ
պիտի նուիրէք , -- ՆԷՆ քսան-
ուհինգ հազար Խ՚ԼԷ՚ լայնութիւն ,
և միւս բաժիններուն մէկուն չափ
երկայնութիւն պէտ -ՆԷՆ , ա-
րևելեան կողմէն մինչև արևմտեան
կողմը . և սրբարանը անոր մէջտե-
9 ղը պիտի ըլլայ : Տ՚Էրօջը նուիրե-
լու ընծանիդ՝ քսանուհինգ հազար
երկայնութիւն , ու տասը հազար
10 լայնութիւն ունենայ : Եւ սուրբ
ընծան ասոնց ըլլայ՝ -յՆԷՆ քահա-
նաներուն . հիւսիսէն՝ Էրէ-ՆԷՆ-
Ը՚Ն քսանուհինգ հազար , ու արև-
մուտքէն՝ լայնութիւնը տասը հա-
զար , և արևելքէն՝ լայնութիւնը
տասը հազար , ու հարաւէն՝ եր-
կայնութիւնը քսանուհինգ հազար

Ն . Ք . ՊԲ . 574

Ե Թագ . ԺԹ . 6 , Ցես . իգ . 4 , Գլ . խը . 28 ,

Ե Հմր 7 ,

Ղ Սադ . ա . 3 , Երեմ . ԺԷ . 8 ,

Ե Ցայտ . իբ . 2 ,

Ը Ծն . խը . 5 , ա Մն . 6 . 1 , Գլ . խը . 4 , 5 ,

Ը Ծն . ԺԲ . 7 , ԺԳ . 15 , ԺԷ . 7 , ԺԸ . 8 , իգ . 3 , իբ . 13 , Գլ . Ի . 5 , 6 , 28 , 42 ,

Ժ Գլ . խը . 29 ,

Ի Գլ . խը . 1 ,

Լ Թագ . ԺԹ . 8 ,

Ի Թագ . ԺԹ . 8 ,

Ի Բ Թագ . ը . 8 ,

Ի Թագ . ԺԹ . 9 , Գլ . խը . 1 ,

Հ Թագ . ի . 13 , ը Օր . լը . 51 , Սադ . Ա . 7 , Գլ . խը . 28 ,

Ն . Ք . ՊԲ . 574

Յ Ցես . Եփ . դ . 6 , Ցայտ . է . 9 , 10 ,

Ղ Ցես . Հռով . ժ . 12 , Գաղ . դ . 28 , Կող . դ . 11 ,

— Գլ . խէ . 15 , ԼԸ ,

Բ Գլ . խէ . 1—6 ,

Ն·Ք·ԳՒ· 574

ՀԳԼ·ԽԴ· 15։

ԵԳԼ·ԽԴ· 10։

ԻԵԼ·ԻՐ· 29։ ՂԱ· ԽԷ։10։28։ 33։

ՂԳԼ·ԽԱ· 6։

ԻԳԼ·ԽԲ· 20։

ԸԳԼ·ԽԱ·6։

ԲԳԼ·ԽԱ·7։

Իւր։ ու Տէրոջը սրբարանը անոր
11 Ազգերը լսեցի՝ ու ըսին. Ահա դովկի որդւոցմէ սրբուած քահանաներուն լսեցի, որ անոնք իմ պահպանութիւնս պահեցին, ու երբոր Իսրայէլի որդիքը մոլորեցան, անոնք չմոլորեցան, Եհնչպէս որ
12 Ղևտացիները մոլորեցան։ Ու երկրին ընծայէն՝ ասոնց ընծան անոնց համար ամենասուրբ պիտի լլայ՝ Ղևտացւոց սահմանին քովը։
13 Եւ քահանայից սահմանին քովը Ղևտացւոց բնակչաց լլայ՝ քանութհինգ հազար երկայնութեամբ ու տասը հազար լայնութեամբ. բոլոր երկայնութիւնը քանութհինգ հազար, ու լայնութիւնը տասը հա-
14 զար լլայ։ Եւ անկէ պիտի չծախեն, ու չփոխեն, ու երկրին երախայրին սրբութիւնը չտարձրնեն. վասն զի անիկայ Տէրոջը նուիրուած է։
15 Եւ քանութհինգ հազարին քովը լայնութենէն մնացած Հինգ հազարը Հասուրը պիտի լլայ՝ քաղաքին համար, բնակութեան համար ու արուարձաններուն համար. և քաղաքը անոր մէջտեղը լլայ.
16 Ու անոր չափերը ասոնք լլան. Հիւսիսային կողմը՝ չորս հազար հինգ հարիւր, և հարաւային կողմը՝ չորս հազար հինգ հարիւր, և արևելեան կողմը՝ չորս հազար հինգ հարիւր, ու արևմտեան կողմը՝ չորս
17 հազար հինգ հարիւր։ Եւ քաղաքին արուարձանը՝ դէպ 'ի հիւսիս՝ երկու հարիւր յիսուն, ու դէպ 'ի հարաւ՝ երկու հարիւր յիսուն, և դէպ 'ի արևելք՝ երկու հարիւր յիսուն, ու դէպ 'ի արևմուտք՝ երկու հարիւր յիսուն լլայ։
18 Եւ սուրբ ընծային քովը՝ երկայնութենէն մնացած դէպ 'ի արևելք տասը հազարը, ու դէպ 'ի արևմուտք տասը հազարը՝ (որ սուրբ ընծային քովն է,) անոր բերքը՝ քաղաքին ծառայութիւնը
19 ընողներուն կերակուր լլայ։ Եւ քաղաքին ծառայութիւնը ընողները՝ Իսրայէլին ամէն ցեղերէն պիտի լլան։
20 Բոլոր ընծան քանութհինգ հազարով քանութհինգ հազար լլայ, սուրբ ընծան քաղաքին կալուածքին հետ մէկտեղ՝ քառակուսի մատուցանէք։
21 Եւ սուրբ ընծային, ու քաղաքին կալուածքին մէկ կողմն ու մէկալ կողմն՝ մնացածը՝ իշխանին համար լլայ. նուիրուած քանութհինգ հազարին դիմացը մինչև արևելեան սահմանը՝ ու դէպ 'ի արևմուտը քանութհինգ հազարին դիմացը մինչև արևմտեան սահմանը՝ շեղբոն բաժիններուն քովը՝ իշխանին համար լլայ։ Ան-ի՝ պիտի լլայ սուրբ ընծան. ու տաճարին սրբարանը անոր մէջտեղը պիտի լլայ։
22 Իշխանին բաժինին մէջտեղը եղող Ղևտացւոց կալուածքէն՝ քաղաքին կալուածքէն, Յուդայի սահմանին, ու Բենիամինի սահմանին մէջտեղը՝ իշխանին պիտի լլայ։
23 Եւ մնացած ցեղերուն՝ արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը՝
24 Բենիամինին մէկ բաժին ըլայ. Ու Բենիամինի սահմանին քովը՝ արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը՝ Շմաւոնին մէկ բաժին ըլայ.
25 Եւ Շմաւոնի սահմանին քովը՝ արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը՝ Իսաքարին մէկ բաժին ըլայ.
26 Ու Իսաքարի սահմանին քովը՝ արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը՝ Զաբուղոնին մէկ բաժին ըլ-
27 լայ. Եւ Զաբուղոնի սահմանին քովը՝ արևելեան կողմէն մինչև արևմտեան կողմը՝ Գադին մէկ բաժին
28 ըլայ. Ու Գադի սահմանին քովը՝ հարաւային կողմը՝ դէպ 'ի հարաւ՝ Թամարէն մինչև Մաձարաներուն ջուրերը Կադեսի մէջ, ու մինչև մեծ ծովը ելլող
29 Հեղեղատը պիտի լլայ։ Սա է այն երկիրը՝ որ Իսրայէլի ցեղերուն վիճակով պիտի բաժնէք ժառանգութեան համար. ու անոնց բաժինները ասոնք են, կ'ըսէ Տէր Եհովան։
30 Եւ քաղաքին ելքերը ասոնք են. Հիւսիսային կողմէն՝ չորս հազար
31 հինգ հարիւր չափ ըլլալով, (Ու քաղաքին դռները՝ Իսրայէլի ցեղերուն անուններուն համեմատ պիտի լլայ.) իրեք դուռ դէպ 'ի հիւսիս. մէկ դուռ մը Ռուբինին, մէկ դուռ մը Յուդային, մէկ
32 դուռ մը Ղևիին. Եւ արևելեան կողմէն չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով, իրեք դուռ դէպ ի ըլ-
33 լայ. մէկ դուռ մը Յովսեփին, մէկ դուռ մը Բենիամինին. մէկ դուռ մը Դանին. Եւ հարաւային կողմէն՝ չորս հազար հինգ հարիւր չափ ըլլալով, իրեք դուռ դէպ ի ըլայ. մէկ դուռ մը Շմաւոնին, մէկ դուռ մը Իսաքարին, մէկ դուռ մը Զաբուղոնին, մէկ դուռ մը Գադին, մէկ դուռ մը Ասերին, մէկ դուռ մը Նեփթաղիմին։
35 Չորս կողմն ի բոլոր շրջապատը տասնուհինգ հազար չափ պիտի լլայ. ու անկէ օրն ի քաղաքին անունը՝ Եհովաշամա պիտի ըլայ։

Ն·Ք·ԳՒ· 574

ՀԵԶ·8·10։

ԻԳԼ·ԽԱ·19։

ԼԳԼ·ԽԷ· 14·21·22։

ԻՑԱՂ·ԻԱ· 12·ԸԲ։

ԵՐԵՄ·ԼԴ· 16։

Տես եւ ԺԷ·15։ Դատ·գ·24։

Յի՝ Տէրը հոն է. ԵԶԵԿ·գ·17։ Ցոփ·գ·21։ Զաք·բ·10։ Ցայսհա·3։ Իր·3։

ՄԵՐԳԵՐՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Ցովակիմին գերութիւնը։ 3 Ասփանէզ ներքինին կ'առնէ Դանիէլը, Անանիան, Միսայէլը, ու Ազարիան։ 8 Անոնք թագաւորէն խրկուած կերակուրը մերժելով՝ ընդունելով ու ջրով քաջառողջ և զուարթագէմ կ'ըլլան։ 17 Անոնց գերազանց իմաստութիւնը։

Ն · ք · գբ · Իր 607

1 Յուդայի թագաւորին՝ Յովակիմին թագաւորութեանը երրորդ տարին՝ Բաբիլոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Երուսաղէմ եկաւ, ու

– գ Թագ · իդ · 1 · բ Մն · լէ · 6 ·

Իր 606

2 զանիկայ պաշարեց։ Եւ Տէրը անոր ձեռքը տուաւ Յուդայի Յովակիմ թագաւորը, ու Աստուծոյ տանը Բանօթներուն մէկ մասը. և անիկայ զանոնք Շէնաար երկիրը՝ իր աստուծոյն տունը տարաւ, ու անօթները իր աստուծոյն գանձատունը դրաւ։

Բ Երեմ. իէ · 19, 20 ·
Դ Ջն. ժ. 10 · ժա. 2 · Ես. ժա. 11 · Զաք. ե. 11 ·
Էրմն · լէ · 7 ·
Ե Տես գ Թագ. ի. 17 · 18 · Ես. լթ. 7 ·

3 Եւ թագաւորը իր ներքինապետին Ասփանէզին ըսաւ որ՝ Իսրայէլի որդիներէն, ու թագաւորական սերունդէն, և իշխաններէն՝

4 Բնաւ արատ չունեցող, գեղեցիկ դէմքով, ու ամէն իմաստութեան հմուտ, ու գիտութեան տեղեակ՝ հանճարեղ, և թագաւորին պալատին մէջ կայնելու կարողութիւն ունեցող տղաքներ բերէ, և Քաղդէացւոց

Ղ Տես Գործ · ե. 22 ·

5 գիրը ու լեզուն սորվեցընէ։ Ու թագաւորը անոնց օրական ռոճիկ սահմանեց՝ թագաւորին ազնիւ կերակուրէն, ու իր խմած գինիէն, որ զանոնք իրեք տարի սնուցանէ, ու ետքը Թագաւորին

Ի Հէր 19 · Ջն · խա · 46 · գ Թագ · ժ · 8 ·

6 առջևը կայնին։ Եւ անոնց մէջն էին Յուդայի որդիներէն՝ Դանիէլը, Անանիան, Միսայէլը ու Ազարիան։

Ը Տես Ջն · խա · 45 · գ Թագ · իդ · 17 ·
Ի Գլ · գ · 8 · ե · 12 ·

7 Ու ներքինապետը անոնց անունները դրաւ. Դանիէլին Բաղտասասար, Անանիային՝ Սեդրաք, Միսայէլին՝ Միսաք, ու Ազարիային՝ Աբեդնագով։

Ժ Տես բ Օր · լբ · 38 · ե · գկ · գ · 13 · Ովս · թ · 3 ·
Ի Տես Ջն · լթ · 21 · Մագ · ճգ · 46 · Առակ · ժգ · 7 ·

8 Եւ Դանիէլ միտքը դրաւ որ՝ թագաւորին ազնիւ կերակուրովը, ու անոր խմած գինիովը չպղծուի. և ներքինապետէն խնդրեց, որ [illegible] ինքզինքը

9 չպղծէ։ Ու Աստուած ներքինապետին առջևը շնորհք ու ողորմութիւն գտնել տուաւ Դանիէլին։

10 Եւ ներքինապետը Դանիէլին ըսաւ. Ես կը վախնամ իմ թագաւոր տիրոջմէս որ ձեր ուտելիքը ու խմելիքը սահմանեց. վասն զի ինչո՞ համար անիկայ ձեր երեսները՝ ձեզի հասակակից եղող տղոցը էբէնէէն աւրած տեսնէ, ու դուք թագաւորին առջևը գլխապարտ ընէք։

Ն · ք · գբ · Իր 606

11 Եւ Դանիէլ ըսաւ * անտեսին՝ որն որ ներքինապետը Դանիէլին, Անանիային, Միսայէլին ու Ազարիային

* Կ՚ Մելսարին՝

12 վրայ դրեր էր. Շնորհք ըրէ, քու ծառաներդ տասը օր փորձէ՝, ու մեզի՝ ուտելու համար՝ ընդեղէն, ու

13 խմելու համար՝ ջուր տրուի. Եւ քու առջևդ մեր դէմքը, ու թագաւորին ազնիւ կերակուրը ուտող տղոցը դէմքը երևնան, և ինչպէս որ տեսնես, անոր համեմատ ըրէ

14 քու ծառաներուդ։ Ու անիկայ՝ ասոնց բանիս համար անոնց մտիկ ըրաւ, ու զանոնք տասը օր փորձեց։

15 Եւ տասը օրէն ետքը անոնց դէմքը՝ թագաւորին ազնիւ կերակուրը ուտող ամէն տղոցը էբէնէէն աւելի

16 աղէկ ու գէր երևցաւ։ Ուստի անտեսը անոնց ազնիւ կերակուրը, ու խմելու գինին կը վերցընէր, ու անոնց ընդեղէն կուտար։

17 Եւ Աստուած ասոնց չորս տղոցը՝ ամէն դպրութեան ու իմաստութեան մէջ Գիտութիւն ու հանճար տուաւ. ու Դանիէլ՝ ամէն տեսիլքը ու երազը կը հասկընար։

Լգ Թագ · գ · 12 · Ցակ · ա · 5 · 17 ·
Ի Տես Գործ · ե. 22 ·
Բ Թես. ժբ · 6 · բ Մն · իգ · 5 · Գլ · ե · 11 · 12 · 14 · ժ · 1 ·

603

18 Եւ ան օրերը լմընալէն ետքը՝ որ թագաւորը հրաման ըրեր էր որ զանոնք բերեն, ներքինապետը զանոնք Նաբուգոդոնոսորին առջևը

19 տարաւ։ Ու թագաւորը անոնց հետ խօսեցաւ, և անոնց ամենուն մէջը՝ Դանիէլին, Անանիային, Միսայէլին ու Ազարիային պէս չգտնուեցաւ. ու անոնք թագաւորին

Ի Ջն · խա · 46 · Հէր 5 ·
Հգ Թագ · ժ. 1 ·

20 առջևը կը կայնէին։ Եւ թագաւորը անոնց հարցուցած ամէն իմաստութեան ու գիտութեան վրաբերեալ բաներուն մէջը՝ զանոնք իր բոլոր թագաւորութեանը մէջ եղող բոլոր մոգերէն ու հմայողներէն՝ տասնապատիկ գերազանց

Յ Գլ · գ · 28 · Տես գլ · ժ · 1 ·

21 գտաւ։ Եւ Դանիէլ մինչև Կիւրոսի առաջին տարին մնաց։

Ն · ք · ՀԲ · 603

ԳԼ · Բ

1 Նաբուգոդոնոսոր իր տեսած երազը մոռնալով՝ խոստմունքներով ու պատանեպիքներով կը պահանջէ Քազդեացիներէն՝ որ զանիկայ իրեն պատմեն · 10 որոնք իրենց անկարողութիւնը խոստովանելով՝ մեռնելու կը դատապարտուին · 14 Դանիէլ քիչ մը պատմանաժամ ձեռք բերելով՝ երազը կը գտնէ · 19 Աստուած կ'օրհնէ · 24 Թագաւորին առջևը կը տարուի · 31 Երազը · 36 ու անոր մեկնութիւնը · 46 Դանիէլին յառաջանալը ·

1 Ու Նաբուգոդոնոսորին թագաւորութեանը երկրորդ տարին՝ Նաբուգոդոնոսոր երազներ տեսաւ. – և անոր ոգին խռովեցաւ, ու
2 Քունը փախաւ · Եւ թագաւորը հրամայեց որ մոգերը, հմայողները, կախարդները ու քազդեացները կանչեն, որպէս զի թագաւորին իր երազները պատմեն · և անոնք եկան, ու թագաւորին առջևը կայնեցան ·
3 Եւ թագաւորը անոնց ըսաւ · Երազ տեսայ · ու իմ ոգիս կը խռովի
4 որ ան երազը գիտնամ · Ու քազդեացները թագաւորին Ասորերէն ըսին · Ո՛վ թագաւոր՝ յաւիտեան ողջ կեցիր · ըսէ՛ երազը քու ծառաներուդ, ու մենք մեկնութիւնը կ'ընենք մեկնուի
5 թիւնը իմացընենք · Թագաւորը պատասխան տուաւ, ու քազդեացներուն ըսաւ · Բանը ինծմէ ելաւ · թէ որ երազը, ու անոր մեկնութիւնը ինծի չյայտնէք, դուք ի կտոր կտոր պիտի ըլլաք, ու ձեր տուները աղբանոց պիտի ըլլան ·
6 Բայց թէ որ երազը, ու անոր մեկնութիւնը ինծի իմացընէք, ինծմէ պարգևներ, ետուրքեր ու շատ պատիւներ պիտի առնէք · ուրեմն երազը, ու անոր մեկնութիւնը ինծի
7 ծի իմացուցէք · Անոնք նորէն պատասխան տուին, ու ըսին · Թագաւորը թող ըսէ երազը իր ծառաներուն, ու անոր մեկնու
8 թիւնը իմացընենք · Թագաւորը պատասխան տուաւ, ու ըսաւ · Ազէկ գիտեմ որ դուք ժամանակը ծախու կ'առնէք · վասն զի կը տեսնէք որ բանը ինծմէ ելած է ·
9 Բայց թէ որ դուք երազը ինծի չյայտնէք, ձեզի համար մէկ վճիռ կայ · վասն զի դուք միջերնիդ որոշեցիք՝ որ իմ առջևս սուտ ու խաբէական խօսք մը զրուցէք՝ մինչև որ ժամանակը փոխուի · ուստի ըսէք ինծի երազը, որ գիտնամ թէ պիտի կարենաք անոր մեկնութիւնը իմացընել ·
10 Քազդեացները թագաւորին առջևը պատասխան տուին ու ըսին · Երկրի վրայ անանկ մարդ մը չկայ, որ կարող ըլլայ թագաւորին հանձնած բանը իմացընելու · անոր համար բնաւ մէկ թագաւոր մը, նախարար մը, կամ իշխան մը աւանկ բան պահանջած չէ մէկ մոգէ մը, կամ հմայողէ մը, կամ
11 քազդեայէ մը · Ու թագաւորին պահանջած բանը դժուար է · և ուրիշ մէկը չկայ որ զանիկայ թագաւորին առջևը իմացընէ, բայց եթէ աստուածները՝ որ մեղեայ մէջ չեն բնակիր ·
12 Անոր վրայ թագաւորը սրդողեցաւ ու խիստ բարկացաւ, և հրամայեց որ Բաբիլոնի բոլոր իմաս
13 տուները կոտրեն · Ու հրամանը ելաւ, և իմաստունները կը կոտրուէին · ու փնտուեցին Դանիէլը ու անոր ընկերները որ մեռ
14 ցընեն · Ան ատեն Դանիէլ իմաստութեամբ ու խոհեմութեամբ խօսեցաւ թագաւորին դահճապետին Արիովքին հետ՝ որ Բաբիլոնի իմաստունները կոտրե
15 լու ելեր էր · Ո՞ թագաւորին իշխանին Արիովքին խօսեցաւ, ու ըսաւ · Ինչո՞ւ համար այս հրամանը թագաւորին երեսէն արտորնօք ելաւ · ան ատենը Արիովք
16 բանը Դանիէլին յայտնեց · Եւ Դանիէլ մտաւ, ու թագաւորէն խնդրեց, որ իրեն ժամանակ տայ, որ մեկնութիւնը թագաւորին ի
17 մացընէ · Ու Դանիէլ իր տունը գնաց, և բանը իր ընկերներուն՝ Անանիային, Միսայէլին ու
18 Ազարիային յայտնեց, Որ աս դաղտնիքին համար՝ երկնից Աստուծմէն գթութիւն խնդրեն, որպէս զի Դանիէլը ու անոր ընկերները՝ Բաբիլոնի մնացեալ իմաստուններուն հետ չկորսընցընեն ·
19 Եւ դաղտնիքը տեսիլքի մէջ՝ Դանիէլին յայտնուեցաւ · ան ատենը Դանիէլ երկնից
20 Աստուածը օրհնեց · Դանիէլ խօսեցաւ, ու ըսաւ · Աստուծոյ անունը յաւիտենից յաւիտենից օրհնեալ ըլլայ · Վասն զի իմաստութիւնը ու զօրութիւնը անոր
21 ն · Եւ հատուները ու ժամանակները փոխողը, թագաւորներ վերցընողը, ու թագաւորներ դնողը անիկայ է · Անոնիկայ իմաստուններուն իմաստութիւն կու տայ, ու հանճարեղներուն՝ գիտու
22 թիւն · Խորունկ ու ծածկուած բաները ինքը կը յայտնէ, մութի մէջ եղածը գիտէ, ու լոյսը անոր
23 քովը կը բնակի · Ես քեզի դոհութիւն ու փառք կը մատուցանեմ՝ ով իմ հայրերուս Աստուածը, որ ինծի իմաստութիւն ու զօրութիւն տուիր · ու հիմա ինծի գիտցուցիր ինչ որ քեզմէ խնդրե-

Ն · ք · ՀԲ · 603

ե ՀՄր 28 · Գլ · ա · 11 ·

ը Ծն · լե · 36 ·

ժ Մաա · ԺԲ · 19 ·

ի Թու · ԺԲ · 6 · Ներ · լդ · 15 · 16 ·

լ Աղդ · ճԺդ · 2 · ճԺե · 18 ·

խ Երեմ · լբ · 19 ·

ծ Գլ · ե · 25 ·

կ Ներ · Ժբ · 18 · Սաղ · ՀԵ · 6 · 7 · Երեմ · ԻԵ · 5 · Գլ · դ · 17 ·

հ Ճակ · ա · 5 ·

ձ Ներ · Ժբ · 22 · Սաղ · ԻԵ · 14 · ՀՄր 28 · 29 ·

ղ Սաղ · ճԼԹ · 11 · 12 · Երր · դ · 13 ·

ճ Գլ · ե · 11 · 14 · Ճակ · ա · 17 ·

ն ՀՄր 18 ·

– Ծն · խա · 8 · Գլ · դ · 5 ·

բ Եսթ · գ · 1 · Գլ · գ · 18 ·

գ Ծն · խա · 8 · Ել · է · 11 · Գլ · ե · 7 ·

ա Կ՛ քազդեացին

դ Թագ · ա · 31 · Գլ · գ · 9 · ե · 10 · զ · 6 · 21 ·

զ Կ՛ Հրամանը

է Գ Թագ · Ժ · 27 · Եզր · գ · 11 · Գլ · գ · 29 ·

ղ Գլ · ե · 16 ·

թ Գլ · ե · 17 · ՀՄր 48 ·

ը Եփս · ե · 16 ·

ժ Կ՛ Հրամանը

ի Եսթ · գ · 11 ·

Ն·Բ·ԳԲ· 603

ցինը . քանզի թագաւորին բանը մեզի գիտցուցիր ։

24 Ուստի Դանիէլ՝ Արիովքին առ- ջևը եկաւ , որն որ թագաւորը զբ- րեր էր Բաբիլոնի իմաստունները կորսընդրնելու . գնաց ու անոր այս- պէս ըսաւ . Բաբիլոնի իմաստուն- ները մի կորսընդրներ . զիս թա- գաւորին առջևը տար , ու մեկնու- թիւնը թագաւորին իմացընեմ ։

25 Ան ատենը Արիովք արտորնօք Դա- նիէլը թագաւորին առջևը հանեց , ու անոր այսպէս ըսաւ . Հրեաս- տանի գերիներէն մարդ մը գտայ , որ մեկնութիւնը պիտի գիտցընէ

26 թագաւորին ։ Պատասխան տուաւ թագաւորը ու ըսաւ Դանիէլին , որուն անունը Բաղտասասար ՏԸ- ր—ն էր , Կարո՞ղ ես դուն իմ տեսած երազս , ու անոր մեկնու- թիւնը ինծի գիտցընելու ։

27 Դանիէլը թագաւորին առջևը պատասխան տուաւ ու ըսաւ . Թագաւորին հարցուցած գաղտնի- քը՝ իմաստունները , հմայողները , մոգերը — բաղդ նայողները՝ թա- գաւորին յայտնելու կարող չեն .

Ե Ծն·խ·8· խա·16· Հմր 18, 47· Ամվ·գ· 13·

28 Բայց երկինքի մէջ գաղտնիքները յայտնող Աստուած կայ , ու Նա- բուգոդոնոսոր թագաւորին կը յայտնէ - ինչ որ ետքի օրերը պիտի ըլլայ ։ Երազդ , ու անկողնիդ մէջ գլխուդ տեսիլքը՝ ասիկայ է .

- Ծն·խթ· 1·

29 Դուն ով թագաւոր՝ քու անկողնիդ մէջը կը մտածէիր թէ ասկէ ետքը ինչ պիտի ըլլայ . Ն ու գաղտ- նիքները յայտնողը՝ ըլլալու բանը

Ե Հմր 22, 28·

30 քեզի գիտցուց ։ Եւ աս գաղտ- նիքը՝ չէ թէ ամէն ապրողներէն աւելի իմաստութիւն ունենալուս համար ինծի յայտնուեցաւ , հապա մեկնութիւնը թագաւորին գիտցը- նելու համար , Եւ որ դուն քու սրտիդ խորհուրդները գիտնաս ։

Ե Հմր 47·

31 Դուն՝ ով թագաւոր՝ կը տեսնէիր որ ահա մէկ մեծ արձան մը կար . աս մեծ ու խիստ պայծառ արձանը քու դիմացդ կայներ էր , և անոր

- Ցես Նմր 38, ՃՃ·

32 երևոյթը ահաւոր էր ։ - Աս ար- ձանին գլուխը՝ զուտ ոսկի , անոր կուրծքը ու թևերը՝ արծաթէ ,

33 մէջքը ու ազդրերը՝ պղնձէ , Սրունք- ները՝ երկաթէ , — ոտքերուն մէկ մասը՝ երկաթէ , ու մէկ մասը՝ կաւէ

34 էր ։ Դուն կը տեսնէիր , մինչև որ մէկ քար մը կտրուեցաւ - առանց ձեռքի , ու ան արձանին երկաթէ ու կաւէ ոտքերուն զարկաւ , ու

35 զանոնք փշրեց ։ Ան ատենը եր- կաթը , կաւը , պղինձը , արծաթը ու ոսկին մէկտեղ փշրուեցան , և ամառուան կալերուն Համեղին պէս եղան . ու հովը զանոնք տարաւ ,

- Հմր 45 · Գլ·բ·25· Ջար·գ· 6 · բ Կոր· է·1· Եր·բ·24·

Ա Պտ·ա·4· Ովս·ժգ· 3·

ու - ամենևին անոնց տեղ մը չը- գտնուեցաւ . բայց արձանը զար- նող քարը՝ ։ մեծ լեռ մը եղաւ , ։ ու

36 բոլոր երկիրը լեցուց ։ Երազը աս է . ու թագաւորին առջևը անոր մեկնութիւնը ըսենք ։

37 - Ո՛վ թագաւոր՝ դուն թագա- ւորաց թագաւոր ես . ։ Ասան զի երկնից Աստուածը քեզի՝ թագա- ւորութիւն , կարողութիւն , զո-

38 րութիւն ու պատիւ տուեր է . ։ Եւ մարդոց որդիներուն բոլոր բնակած տեղերուն մէջ՝ դաշտի գազանները , ու երկինքի թռչունները քու ձեռ- քդ տուեր է , և անոնց ամենուն վրայ քեզ իշխան դրեր է . ։ ան ոսկի

Ե Եզր·ա·2· ։ Գլ·գ·21· 22 · Երեմ· իէ·6· ։ Հմր 32·

39 գլուխը դուն ես ։ Ու քեզմէ ետքը՝ ։ մէկ ուրիշ թագաւորութիւն մը պիտի ելլէ - քեզմէ ցած , ու պղնձէ մէկ ուրիշ երրորդ թագաւորու- թիւն մը՝ որ բոլոր երկրին պիտի

40 տիրէ ։ Եւ ։ չորրորդ թագաւորու- թիւնը երկաթի պէս ամուր պիտի ըլլայ . — ինչպէս որ երկաթը ա- մէն բանը կը փշրէ ու կը մանրէ , ասիկայ ալ՝ աս ամէն բաները կոտ- րող երկաթին պէս՝ փշրելով պի-

Ե Գլ·է·7· 23·

41 տի կոտրէ ։ Եւ որովհետև ։ ոտքերը ու մատերը՝ մէկ մասը բրուտի կա- ւէ , ու մէկ մասը երկաթէ տեսար , ան թագաւորութիւնը պիտի բաժ- նուի , բայց երկաթի պնդութենէ ։—։ն պիտի ունենայ . քանզի եր- կաթը տղմուտ կաւի հետ խառնած

42 տեսար ։ Ու ոտքերուն մատերը՝ մէկ մասը երկաթէ ու մէկ մասը կաւէ ըլլալը — է որ՝ ան թագա- ւորութենէն մէկ մասը ամուր , ու մէկ մասը դիւրաբեկ պիտի ըլլայ ։

43 Եւ տղմուտ կաւին հետ երկաթը խառնած տեսնելդ — է որ՝ անոնք մարդոց սերունդին հետ պիտի խառնուին . բայց անոնք իրարու պիտի չփակչին , ինչպէս որ երկա- թը կաւին հետ չխառնուիր ։

44 Ու ան թագաւորներուն օրերը՝ ։ երկնից Աստուածը մէկ թագաւո- րութիւն մը պիտի հանէ , ։ որ անի- կայ յաւիտեան պիտի չաւրի . և աս թագաւորութիւնը ուրիշ ժողո- վուրդի պիտի չթողուի . Ջանիկայ աս բոլոր թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցընէ , ու

45 ինքը յաւիտեան պիտի մնայ ։ Ի նո- րովհետև դուն՝ առանց ձեռքի՝ լեռ- նէն կտրած քար մը տեսար . և ա- նիկայ՝ երկաթը , պղինձը , կաւը , արծաթը ու ոսկին փշրեց , Մեծ Աստուածը՝ ասկէ ետքը ինչ ըլ- լալիքը թագաւորին գիտցուց . ու երազը ճշմարիտ է , և անոր մեկ- նութիւնը հաւատարիմ ։

Ե Ցես Գոր· ժ·25· ժգ· 12· իբ·6·

Ն·Բ·ԳԲ· 603

- Ա Պտ·լէ· 10·36·

Բ Ն· բ·2· 3·

Ց Ա Պտ·ա·9·

- Եզր·է· 12· Ցես· Եփ·5· Երեմ·իէ· 6·7· Եզեկ· իգ·7· Ովս· բ·10·

Ի Եզր·ա·2·

+ Գլ·գ·21· 22· Երեմ· իէ·6·

• Հմր 32·

Ֆ Գլ·ե·28· 31·

- Հմր 32·

Բ Գլ·է·7· 23·

Ֆ Հմր 33·

Ր Հմր 28·

Ի Գլ·գ·3· 34· գ·26· է·14·27· Մխ·գ· 7· Ղև· ա·32·33·

Ղ Ա Պտ·բ·9· Ն·կ·12· ա Կոր·ժե· 24·

Ի Հմր 34· Ե·իբ·16·

թագաւորը իր երեսին վրայ ինկաւ, ու Դանիէլին երկրպագութիւն ը-
ընաւ, և հրամայեց որ ընծայ՝ ու ա-
նուշ հոտեր մատուցանեն անոր։
47 Ե- թագաւորը Դանիէլին պա-
տասխան տուաւ, ու ըսաւ. Ի-
րաւցընէ ձեր Աստուածը՝ ինքն է
աստուածներուն Աստուածը, և
թագաւորաց Տէրը, ու գաղտ-
նիքները յայտնողը. քանզի դուն
կարող եղար աս գաղտնիքը յայտ-
48 նելու։ Ան ատենը թագաւորը
մեծցուց Դանիէլը, ու անոր շատ
-- մեծ պարգևներ տուաւ, և զա-
նիկայ Բաբիլոնի բոլոր գաւառին
վրայ կառավարիչ՝ ու Բաբիլոնի
բոլոր իմաստնոց գլխաւորներուն
49 վրայ իշխան դրաւ։ Եւ Դանիէլը
թագաւորէն խնդրեց, ու Բաբի-
լոնի գաւառին գործոցը վրայ՝ Սեդ-
րաքը, Միսաքը ու Աբեդնագովը
դրաւ. ու Դանիէլը թագաւորին
դուռն էր։

ԳԼ. Գ

1 Նաբուգոդոնոսոր Դուրայի մէջ ոսկիէ արձան
մը կանգնելով՝ անոր նաւակատիքը կ'ընէ։ 8
Սեդրաքին, Միսաքին ու Աբեդնագովին վը-
րայով ամբաստանութիւն կ'ըլլայ թագաւո-
րին, ըսելով թէ՝ արձանին երկրպագութիւն
չեն ըներ։ 13 Երրոր անոնց պատուիրքներ
կ'ըլլայ, անոնք համարձակութեամբ կը դատ-
նին ճշմարտութիւնը։ 19 Աստուած կը փրկէ
զանոնք հնոցին մէջէն։ 26 Նաբուգոդոնոսոր
եղած հրաշքը տեսնելով՝ զԱստուած կ'օրհնէ։

1 Նաբուգոդոնոսոր թագաւորը մէկ
ոսկիէ արձան մը շինեց, անոր
բարձրութիւնը վաթսուն կան-
գուն, -- լայնութիւնը վեց կան-
գուն. զանիկայ Բաբիլոնի դաւառը՝
2 Դուրա դաշտին մէջ կանգնեց։ Եւ
Նաբուգոդոնոսոր թագաւորը հր-
ա՛ւ խրկեց՝ կուսակալները, նախա-
րարները, կառավարիչները, դա-
տաւորները, գանձապետները,
խորհրդականները, օրէնսդէտները,
ու գաւառներուն բոլոր իշխանները
ժողվելու, որ Նաբուգոդոնոսոր
թագաւորին կանգնած արձանին
3 նաւակատիքին գան։ Ան ատենը
կուսակալները, նախարարները,
կառավարիչները, դատաւորները,
գանձապետները, խորհրդականնե-
րը, օրէնսդէտները, ու գաւառ-
ներուն բոլոր իշխանները Նաբու-
գոդոնոսոր թագաւորին կանգնած
արձանին նաւակատիքին ժողվուե-
ցան, ու Նաբուգոդոնոսորին
կանգնած արձանին առջևը կայնե-
ցան։
4 Եւ մունետիկը ուժով կը կան-
չէր. -Ո՛վ ժողովուրդներ, ազգեր
ու լեզուներ՝ ձեզի կը զրուցուի.
5 երբոր փողին, սրինգին, քնարին,
ջութակին, տաւիղին, տիկին, ու
ամէն տեսակ նուագարաններուն
ձայնը լսէք, Նաբուգոդոնոսոր
թագաւորին կանգնած ոսկի ար-
ձանին առջևը իյնաք, ու երկրպա-
6 գութիւն ընէք. Եւ ով որ չիյ-
նայ, ու երկրպագութիւն չընէ,
նոյն ժամուն՝ բորբոքած կրակի
7 հնոցին մէջը պիտի նետուի։ Ուս-
տի երբոր բոլոր ժողովուրդները՝
փողին, սրինգին, քնարին, ջու-
թակին, տաւիղին, ու ամէն տե-
սակ նուագարաններուն ձայնը լսե-
ցին, բոլոր ժողովուրդները, ազգե-
րը ու լեզուները կ'իյնային, և Նա-
բուգոդոնոսոր թագաւորին կանգ-
նած ոսկի արձանին երկրպագու-
թիւն կ'ընէին։
8 Ուստի ան ատենը քանի մը
քաղդէացի մարդիկ հմտեցան,
ու Հրէաներուն վրայով ամբաս-
9 տանութիւն բերին. Նաբուգոդոնո-
սոր թագաւորին խօսեցան, ու ը-
սին. Ո՛վ թագաւոր՝ յաւիտեան
10 ողջ կեցիր. Դուն՝ ով թագաւոր՝
հրաման բերիր որ ամէն մարդ որ փո-
ղին, սրինգին, քնարին, ջութա-
կին, տաւիղին, տիկին, և ամէն
տեսակ նուագարաններուն ձայնը
լսէ, իյնայ ու ոսկի արձանին
11 երկրպագութիւն ընէ. Եւ ով որ
չիյնայ ու երկրպագութիւն չընէ,
բորբոքած կրակի հնոցին մէջը նե-
12 տուի։ Ի քանի մը Հրէայ մար-
դիկ կան, որոնք դուն Բաբիլո-
նի գաւառին գործոցը վրայ դը-
րիր, -ՅՆԴՈՒ Սեդրաք, Միսաք
և Աբեդնագով. ասա մարդիկը
քեզ բանի տեղ չեն սեպեր՝ ով
թագաւոր. քու աստուածներդ
չեն պաշտեր, և քու կանգնած ոսկի
արձանիդ երկրպագութիւն չեն ը-
ներ։
13 Ան ատենը Նաբուգոդոնոսոր
սրտմտութեամբ և բարկութեամբ
հրամայեց, որ Սեդրաքը, Միսա-
քը ու Աբեդնագովը բերեն. ուստի
ան մարդիկը թագաւորին առջևը
14 բերին։ Պատասխան տուաւ Նա-
բուգոդոնոսոր, ու անոնց ըսաւ.
Ո՛վ Սեդրաք, Միսաք ու Աբեդ-
նագով՝ իրա՞ւ է որ իմ աստուած-
ներս չէք պաշտեր, և իմ կանգնած
ոսկի արձանիս երկրպագութիւն
15 չէք ըներ։ Հիմա թէ որ պատ-
րաստ էք, փողին, սրինգին, քնա-
րին, ջութակին, տաւիղին, տի-
կին, ու ամէն տեսակ նուագարան-
ներուն ձայնը լսած ատենիդ՝ իյ-
նալու ու իմ շինած արձանիս եր-
կրպագութիւն ընելու, -վա՛յ.
բայց թէ որ երկրպագութիւն չը-
նէք, նոյն ժամուն՝ բորբոքած կրա-
կի հնոցին մէջը պիտի նետուիք.

Ն·Ք·ՂԲ· 603
Բ Եզր·Ը 10։
Ե Հռ 28։
Է Հռ 6։
Ը Գլ·Դ·9։ Ե·11։
Ի Գլ·Դ·12։
Ի Եսթ·Բ· 19, 21։ Դ· 2։
Իրր 580
- Գլ·Դ·1։ Ը·25։

Ն·Ք·ՂԲ· Իրր 603
Բ Ցե՛ս Երեմ. ԻԹ·22։ Ցայս·Ժդ· 15։
Ե Գլ·Ը·12։
Է Գլ·Բ·4։ Ե·10։ Ը· 6, 21։
Ի Գլ·Բ·49։

ՆՇ. ԳՔ. ԳՔ. Իբր 580

ՂԵԼ. Ե. 2. ԴԹԱԳ. ԺԲ. 35.

Ի ՏԻՏ. ՄԱՍ. Ժ. 19.

ԵՒ ՍՒ Է ան Աստուածը, որ ձեզ իմ ձեռքէս պիտի ազատէ։

16 Պատասխան տուին Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով, ու թագաւորին ըսին. Ով Նաբուգոդոնոսոր՝ Ի՛ս բանիս վրայով քեզի պատասխան տալու հարկաւորու-

17 թիւն մը չունինք։ Ահա մեր պաշտած Աստուածը՝ մեզ բորբոքած կրակի ծոցէն ազատելու կարող է. քու ձեռքէդ ալ Դէ՛ պիտի ազա-

18 տէ, ով թագաւոր։ Ապա թէ ոչ՝ քեզի յայտնի ըլլայ՝ ով թագաւոր, որ մենք քու աստուածներդ չենք պաշտեր, և քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չենք ըներ։

19 Ան ատենը Նաբուգոդոնոսոր բարկութեամբ լեցուեցաւ, ու անոր երեսին երևոյթը փոխուեցաւ՝ Սեդրաքին, Միսաքին ու Աբեդնագովին վրայ, և պատասխան տալով՝ հրամայեց որ ծոցը՝ վառելու սովորութենէն ևՕԹնպատիկ աւելի

20 վառեն. Ու իր զօրքին մէջը եղող զօրաւոր մարդոցը հրամայեց՝ որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը կապեն, ու բորբոքած կրակի

21 ծոցին մէջը նետեն։ Ան ատենը ան մարդիկը՝ իրենց անդրավարտիքներովը, բաճկոններովը, վերարկուներովը, ու ՚ԴՒՆ հանդերձներովը կապեցին, ու բորբոքած կրակի հը-

22 նոցին մէջը նետեցին։ Եւ թագաւորին հրամանը տիպողական ըլլալուն, ու ծոցը շատ տաքցած ըլլալուն համար, Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը վերցնող մարդիկները՝ կրակին բոցը սպաննեց։

23 Եւ ան իրեք մարդիկը՝ Սեդրաք, Միսակ ու Աբեդնագով՝ կապուած իննական բորբոքած կրակի ծոցին մէջը։

24 Ան ատենը Նաբուգոդոնոսոր թագաւորը ապշած՝ արտորնօք ոտք ելաւ, իր խորհրդականներուն հաւսեցաւ, ու ըսաւ. Մենք կրակին մէջը իրեք կապուած մարդ չնետեցի՞նք. անոնք պատասխան տուին, ու թագաւորին ըսին. Ա՛յո՛, ով

25 թագաւոր։ Անիկայ պատասխան տուաւ, ու ըսաւ. Ահա ես չկրակին մէջը չորս արձկուած մարդ կը տեսնեմ՝ որ կը քալեն. անոնք ամենևին վնաս մը չեն քաշեր. ու չորրորդին դէմքը Աստուածներու

26 որդիի մը կը նմանի։ Ան ատենը Նաբուգոդոնոսոր՝ բորբոքած կրակի ծոցին դրանը մօտենալով, խօսեցաւ ու ըսաւ. Ով Բարձրեալ Աստուծոյն ծառաները՝ Սեդրաք, Միսաք և Աբեդնագով՝ դուրս ելէք ու հո՛ս եկէք։ Ան ատենը Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով կրա-

27 կին մէջէն ելան։ Եւ կուսակալները, նախարարները ու կառավարիչները, ու թագաւորին խորհրդականները ժողվուեցան, և տեսան աս մարդիկները, Ի որ անոնց մարմիններուն վրայ կրակը ամենևին չտիրեց, ու անոնց գլխուն մէկ մազը չխանձեցաւ, ու անոնց անդրավարտիքները դոյներնին չնետեցին. անոնց վրայ կրակին հոտը անգամ չկար։

28 Պատասխան տուաւ Նաբուգոդոնոսոր՝ ու ըսաւ. Օրհնեալ ըլլայ Սեդրաքին, Միսաքին ու Աբեդնագովին Աստուածը, որ իր հրեշտակը խրկեց, ու իր ծառաները ազատեց. վասն զի Ի անոր ապաւինելով՝ թագաւորին խօսքը անարգեցին, ու իրենց մարմինները Լ՚Ի՛Ի տուին, որպէս զի իրենց Աստուածմէն զատ՝ ուրիշ աստուածոյ մը ծառայութիւն

29 ու երկրպագութիւն չընեն։ Ա Արդ՝ ես հրաման կու տամ՝ որ ամէն ժողովուրդ, ազգ ու լեզու, որ Սեդրաքին, Միսաքին ու Աբեդնագովին Աստուածոյն դէմ սխալ բան մը ըսէ, Ի կտոր կտոր ըլլայ, ու ա-

ՆՇ. ԳՔ. ԳՔ. Իբր 580

Ի ՍԱՂ. ԼԲ. 7, 8։ ԵՐԵՄ. ԺԷ. 7։ ՏԻՏ. Գ. Ղ. 22, 23։

Ա ԳԼ. Ղ. 26։

Ի ԳԼ. Բ. 5։ Բ ԳԼ. Ղ. 27։

նոր տունը աղբանոց ըլլայ. Բ վասն զի ուրիշ աստուած չկայ, որ կա-

30 րող ըլլայ այսպէս ազատելու։ Ան ատենը թագաւորը աւելի մեծցուց Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը Բաբիլոնի գաւառին մէջ։

ԳԼ. Դ

1 Նաբուգոդոնոսոր կը խոստովանի Աստուծոյ թագաւորութիւնը. 4 կը խօսի իր երազին վրայով, որ մոգերը չէին կրցեր մեկնել։ 8 Դանիէլ երազը կը լսէ. 19 զանիկայ կը մեկնէ. 28 երազին կատարուելուն պատմութիւնը։

1 Նաբուգոդոնոսոր թագաւոր՝ բոլոր երկրի վրայ բնակող բոլոր ժողովուրդներուն, ազգերուն ու լեզուներուն. Ձեր խաղաղութիւնը

Իբր 570 — ԳԼ. Գ. 4, Ղ. 25

2 շատնայ։ Իմ առջև հաճոյ երևցաւ, որ Ի Բարձրեալ Աստուծոյն ինծի ըրած նշանները ու հրաշքնե-

Բ ԳԼ. Գ. 26։

3 րը յայտնեմ։ Ի Անոր նշանները ի՜նչ մեծ, ու հրաշքները ի՜նչ զօրաւոր են. անոր թագաւորութիւնը Ր յաւիտենական թագաւորութիւն է. ու անոր իշխանութիւնը դարէ՚ի դար կը մնայ։

Ի ԳԼ. Ղ. 27։ Ր ՀՈՎ. 34։ ԳԼ. Բ. 44։ Ղ. 26։

4 Ես Նաբուգոդոնոսորս երբոր իմ տանս մէջ հանգիստ էի, ու պալա-

5 տիս մէջ կը զուարճանայի, Երազ տեսայ, որ զիս վախցուց. Ի և անկողնիս վրայ իմ խորհուրդներս, ու իմ գլխուս տեսիլքները զիս

Ի ԳԼ. Բ. 28, 29։

6 Ը խռովեցուցին։ Ուստի Բաբիլոնին բոլոր իմաստունները իմ առջև բերելու հրաման բրի, որ ա-

Ը ԳԼ. Բ. 1։

Ն.Ք.ԶԲ. Ի՛ՐԸ 570

Ի ԳԼ.Բ.2։

Ը ԳԼ.Ա.7։

Ր Ի՛Ս.կգ. 11։ Հ՚Ր 18։ ԳԼ.Բ.11։ Ե.11, 14։

Ի ԳԼ.Բ.48։ Ե.11։

Ի Եզեկ.լ. 3, ՃԼ, Հ՚Ր 20։

Ի Եզեկ.ԺԷ. 23։ լ.6։ Տե՛ս Ոգր. Ի.20։

Ի Օր.լԴ. 2։ Սադ. ՃԴ.20, Հ՚Ր 17, 23։ ԳԼ.Բ.13։ Զաք.Ժդ. 5։ Ցուդ. 14։

* Գ՚ԼՔ. պահապան ու սուրբ մը։

Ի Մատ.Դ. 10։

Ի Եզեկ.լ. 12։

Ի ԳԼ.Ժբ.7։

Ի Սադ.Թ. 16։

Ի ԳԼ.Բ.21։ Ե.21։ Հ՚Ր 23, 32։

նոյնք ինծի երազին մեկնութիւնը 7 դիտցընեն։ Ի Ն ատենը մոգերը, հմայողները, քաղդեացիները ու բաղդ նայողները եկան, ու ես երազը ա նոնց առջեւը ըսի. բայց անոնք չկրցան մեկնութիւնը ինծի դիտ- 8 ցընել։ Ու վերջապէս Դանիէլը առջեւս եկաւ, (որուն անունը՝ իմ աստուածոյս անունքը համեմատ՝ Բաղտասասար է՝ Ի՛Ր, ու որ իր ներսի դին սուրբ աստուածներուն հոգին կայ) ու անոր առջեւը երա- 9 ղը պատմեցի՝ ըսի. Ո՛վ մոգերուն իշխանը Բաղտասասար. որովհետեւ դիտեմ որ քու ներսի դիդ սուրբ աստուածներուն հոգին կայ, ու քեզի բնաւ մկ գաղտնիք մը նեղութիւն չտար. ահա տեսած երա- զիս տեսիլքները, ու դուն անոնց մեկնութիւնը ըսէ։

10 Իմ անկողնիս մէջ գլխուս տե- սիլքները ասոնք էին. Ես կը տես- նէի որ՝ ահա երկրին մէջ Ի ծառ մը 11 կար, ու անոր բարձրութիւնը մեծ էր։ Ան ծառը մեծցաւ, և ու- ժովցաւ, ու անոր բարձրութիւնը մինչեւ երկինքը հասաւ, ու անի- կայ բոլոր երկրի ծայրերէն կը տես- 12 նուէր։ Անոր տերեւները գեղեցիկ, ու պտուղը առատ էր. և անոր վրայ ամենուն համար կերակուր կար. Ի դաշտի անասունները անոր շուքին տակը կը նստէին, ու եր- կինքի թռչունները անոր ոստերուն վրայ կը բնակէին, և ամէն մարմին 13 անկ կը կերակրուէր։ Անկողնիս վրայ գլխուս տեսիլքներուն մէջ կը տեսնէի որ՝ ահա երկինքէն Ի՞ սուրբ 14 հրեշտակ մը՝ իջաւ. Անիկայ ու- ժով կանչեց, ու ասանկ ըսաւ. Ի՞ Ծառը կտրեցէք, ու ոստերը մէկ- դի՝ հանեցէք, տերեւները թօթա- փեցէք, ու պտուղները ցրուեցէք. Ի անոր տակէն անասունները, ու ոստերէն թռչունները փախչին. 15 Բայց արմատներուն բունը երկրի մէջ թողուցէք. ու երկաթէ և պղնձէ կապանքով դաշտի խոտե- րուն մէջը ըլլայ, ու երկինքին ցօղովը թրջուի, և անոր բաժինը անասուններու հետ՝ երկրի խոտին 16 մէջ ըլլայ. Անոր սիրտը մարդու սիրտէն փոխուի, ու անոր՝ անասունի սիրտ տրուի, և անոր վրայէն 17 եօթը Հ ժամանակ անցնի։ Ես բանը հրեշտակներուն վճիռովն է, ու աս խնդիրը սուրբերուն խօս- քովն է. Որպէս զի ապրողները դիտնան Ը Թ բարձրեալը կը տիրէ մարդոյ թագաւորութեանը վրայ, ու զանիկայ իր ուզածին կու տայ, ու անոր վրայ՝ մարդոց անարդը կը 18 դնէ։ Ես Նաբուգոդոնոսոր Թա-

դաւորս՝ աս երազը տեսայ. ու դուն՝ ով Բաղտասասար՝ անոր մեկնութիւնը ըսէ. Ֆ վասն զի իմ թագաւորութեանս բոլոր իմաս- տունները կարող չեղան անոր մեկ- նութիւնը ինծի դիտցընելու. բայց դուն կարող ես. Ֆ քանզի քու ներ- սի դիդ սուրբ աստուածներուն հո- գին կայ։

19 Ան ատենը Դանիէլ՝ որուն ա- նունը Բաղտասասար էր, † մկ ժա- մուն չափ՝ հիացած մնաց. ու անոր խորհուրդները զանիկայ խռովեցու- ցին։ Պատասխան տուաւ թա- գաւորը, ու ըսաւ. Ո՛վ Բաղտա- սասար՝ երազը, կամ անոր մեկնու- թիւնը քեզ չխռովեցընէ. պատաս- խան տուաւ Բաղտասասար, ու ը- սաւ. Ո՛վ տէր իմ, Ն երազը՝ քեզ ատողներուն, ու անոր մեկնու- թիւնը՝ քու թշնամիներուդ ըլլայ։

20 Ն Ան տեսած ծառդ՝ որ մեծցաւ, և ուժովցաւ, ու անոր բարձրութիւ- նը մինչեւ երկինքը հասաւ, ու անի- կայ բոլոր երկրի մէջ կը տեսնուէր, 21 Եւ անոր տերեւները գեղեցիկ, ու պտուղը առատ էր, ու անոր վրայ ամենուն համար կերակուր կար, անոր տակը դաշտի անասունները կը բնակէին, ու անոր ոստերուն վրայ երկինքի թռչունները կը կե- 22 նային, Ֆ Անիկայ դուն ես՝ ով թագաւոր, որ մեծցար, և ուժով- ցար. և քու մեծութիւնդ բարձ- րացաւ, ու մինչեւ երկինքը հասաւ, Ն ու քու իշխանութիւնդ մինչեւ 23 երկրիս ծայրերը հ՚ՐՐՐ։ Ն Եւ որով- հետեւ թագաւորը մէկ սուրբ հրեշ- տակ մը տեսաւ, որ երկինքէն ի- ջաւ, ու ըսաւ. Ծառը կտրեցէք, ու զանիկայ աւերեցէք. բայց անոր արմատներուն բունը երկրի մէջը թողուցէք, ու երկաթէ և պղնձէ կապանքով դաշտի խոտերուն մէջ ըլլայ, ու երկինքին ցօղովը թրջուի, Ն և անոր բաժինը դաշտի ան- ասուններուն հետ ըլլայ, մինչեւ որ անոր վրայէն եօթը ժամանակ անց- 24 նի, Աս է մեկնութիւնը՝ ով թա- գաւոր, և աս է Բարձրելոյն վճիռը՝ որ իմ թագաւոր տիրոջս վրայ 25 հասած է. Ֆ քեզ մարդոց մէջէն պիտի վռնտեն, և քու բնակու- թիւնդ դաշտի անասուններուն հետ պիտի ըլլայ. ու քեզ պիտի թողուն՝ որ արջառներու պէս խոտ ուտես, ու երկինքին ցօղովը թրջ- ուիս. և քու վրայէդ եօթը ժա- մանակ պիտի անցնի, Ֆ մինչեւ որ գիտնաս թէ մարդոց թագաւորու- թեանը վրայ Բարձրեալը կը տիրէ, ու Հ զանիկայ իր ուզածին կու- 26 տայ։ Եւ որ ըսուեցաւ թէ՝ ան

Ն.Ք.ԶԲ. Ի՛ՐԸ 570

Ֆ Ծն. իս. 8, 15։ ԳԼ. Ե. 8, 15։

Ի Հ՚Ր 8։

Ի Հ՚Ր 8։

† կ՚ժամանակ մը

Ն Տե՛ս Բ Թագ.Ժբ. 32։

Ն Հ՚Ր 10, 11, 12։

Ֆ ԳԼ.Բ.38։

Ն Երեմ.Իէ. 6, 7, 8։

Ֆ Հ՚Ր 13։

Ն ԳԼ.Ե.21։

Ֆ Հ՚Ր 32։ ԳԼ.Ե.21։ ՃԼ,

Ֆ Հ՚Ր 17, 32։ Սադ.Ժգ. 18։

Ն Երեմ.Իէ. 5։

Ն · Ք · ՂԲ · Իրբ 570

ծառին արմատներուն բունը թո-
ղուի , ՚ի՚ դուն երկնաւոր իշ-
խանութիւնը ճանչնալէդ ետքը ,
քու թագաւորութիւնդ քեզի պի-
27 տի հաստատուի : Անոր համար՝
ով թագաւոր , թող իմ խրատս
քեզի հաճոյ երևնայ . քու մեղք-
երդ՝ արդարութեամբ , ու քու ան-
օրէնութիւններդ՝ ողորմելով քաւէ . գուցէ հան-
գըստութիւնդ երկրընայ :
28 Ա՛ս ամէնը՝ Նաբուգոդոնոսոր
29 թագաւորին վրայ եկաւ : Տաս-
ուերկու ամիսէն ետքը՝ երբոր բա-
բիլոնի թագաւորութեանը պալա-
30 տին վրայ կը ճեմէր , թագաւորը
խօսեցաւ , ու ըսաւ . Ա՛ս չէ՞ ան
մեծ Բաբիլոնը՝ որ ես իմ զօրու-
թեամբս ու կարողութեամբս՝ իմ
մեծութեանս փառքին համար
թագաւորութեան տուն շինեցի :
31 Երբոր խօսքը դեռ թագաւորին
բերանն էր , երկինքէն ձայն մը
իջաւ . Քեզի կ'ըսուի , ով Նաբու-
գոդոնոսոր թագաւոր , թագաւո-
32 րութիւնը քեզմէ դնաց . Ու քեզ
մարդոց մէջէն պիտի վռնտեն , և
քու բնակութիւնդ դաշտի անա-
սուններուն հետ պիտի ըլլայ . քեզ
պիտի թողուն որ արջառներու պէս
խոտ ուտես . ու քու վրայէդ եօթը
ժամանակ պիտի անցնի , մինչև որ
դիտնաս թէ մարդոց թագաւորու-
թեանը վրայ Բարձրեալը կը տիրէ ,
ու զանիկայ իր ուզածին կու տայ :
33 Նոյն ժամուն մէջ ասս խօսքը Նա-
բուգոդոնոսորին վրայ կատարուե-
ցաւ . ու մարդոց մէջէն վռնտուե-
ցաւ , ու արջառներու պէս խոտ
կ'ուտէր , և անոր մարմինը երկինքին
ցօղովը կը թրջուէր , մինչև որ
մազերը՝ արծիւներու էրուընե-
րուն պէս , ու րդուներդները՝ թռչ-
չուններու ճանկերուն պէս եր-
կընցան :
34 Եւ ան օրերուն վերջը՝ ես Նա-
բուգոդոնոսոր՝ աչքերս երկինքը
վերցուցի , ու խելքս ինձի դար-
ձաւ , և Բարձրեալը օրհնեցի , ու
զովեցի ու փառաւորեցի զանիկայ՝
որ յաւիտեան կենդանի է , ու
անոր իշխանութիւնը յաւիտե-
նական իշխանութիւն է , և անոր
թագաւորութիւնը դարէ ի դար
35 կը մնայ : Ու երկրիս բոլոր բնա-
կիչները ոչինչի պէս կը սեպուին .
և անիկայ երկնից զօրքերուն մէջ ,
ու երկրի բնակիչներուն մէջ իր
ուզածը կը գործէ . ու անոր
ձեռքին դէմ դնող , կամ անոր՝
36 Ի՞նչ կ'ընես ըսող չկայ : Ան
ատենը խելքս ինձի դարձաւ , Ու
իմ թագաւորութեանս պատուոյն

Ն · Ք · ՂԲ · Իրբ 563

հետ՝ իմ փառքս ու մեծվայել-
չութիւնս ինձի դարձաւ , և իմ
խորհրդականներս ու մեծամեծ-
ներս ինծի փնտռեցին , ու իմ թա-
գաւորութեանս մէջ հաստատուե-
ցայ . և ինձի աւելի մեծ վեհա-
փառութիւն տրուեցաւ :
37 Հիմա ես Նաբուգոդոնոսոր՝
երկնից թագաւորը կը գովեմ , կը
բարձրացընեմ ու կը փառաւորեմ .
ինչու որ Անոր բոլոր գործքերը
ճշմարտութիւն , ու ճամբաները
իրաւունք են . Ու անիկայ կա-
րող է ամբարտաւանութեամբ քա-
լողները ցածցընելու :

Ա՛ Թագ · ԺԸ · 18 ; Գլ · ե · 20 ;
Ա՛ Սպ · խա · 1 , ՟ ;
՟ Կ՚ · Մկ-գի · ԺԷ ·
Բ գ Թագ · իա · 29 ;
Գլ · ե · 5 ; Տես Ղու · ԺԲ · 20 ;
Հմր 24 ;
Իրբ 569
Հմր 25 ;
Հմր 26 ;
Իրբ 563
Գլ · ԺԲ · 7 ; Ցայտ · դ · 10 ;
Սպ · ԺԲ · 16 ; Գլ · Բ · 44 ; է · 14 ; Մխ · դ · 7 ; Ղու · ա · 33 ;
Եռ · խ · 15 , 17 ;
Սպ · ՃԺե · 3 ; ՟ · 6 ;
Ծոր · լԲ · 29 ;
Ծոր · թ · 12 ; Եռ · խե · 9 ; Հր-ռով · թ · 20 ;
Հմր 26 ;

Գլ · ե

1 Բաղտասարին ամբարիշտ խնճոյքը : 5 Ձեռ-
քի մը գրուածը՝ որ կախարդները չեն կրնար
կարդալ , թագաւորին սրտին խռովութիւն
կը պատճառէ : 10 թագուհիին խրատովը
Դանիէլը կը բերուի : 17 ր թագաւորին
ամբարտաւանութիւնը ու կռապաշտութիւնը
յանդիմանելով , 25 կը կարդայ ու կը մեկնի
ան գրուածը : 30 թագաւորութիւնը Մա-
րաց ձեռքը կ'անցնի :

Իրբ 538

1 Բաղտասար թագաւորը իր մեծա-
մեծներէն հազար հոգի մեծ
կոչունք ըրաւ , ու հազարին առ-
2 ջևը դինի խմեց : Ու երբոր Բաղ-
տասար դինիէն զուարթացաւ ,
հրամայեց որ իր հօրը Նաբու-
գոդոնոսորին՝ Երուսաղէմի տաճա-
րէն հանած ոսկիէ ու արծաթէ
անօթները բերեն . որպէս զի թա-
գաւորը , ու իր մեծամեծները , իր
կնիկները ու հարճերը անոնցմով
3 խմեն : Ուստի Երուսաղէմ եղող
Աստուծոյ տանը տաճարէն հա-
նուած ոսկի անօթները բերին .
և թագաւորը , ու իր մեծամեծնե-
րը , իր կնիկները ու հարճերը
4 անոնցմով խմեցին : Անոնք դինի
խմեցին , ու ոսկիէ , արծաթէ ,
պղնձէ , երկաթէ , փայտէ ու քարէ
աստուածները գովեցին :
5 Նոյն ժամուն մէջ՝ մարդու
ձեռքի մատներ ելան , ու աշտանա-
կին դիմացը՝ թագաւորական պա-
լատին պատին ծեփին վրայ գրե-
ցին . և թագաւորը ան գրող ձեռ-
6 քին թաթը տեսաւ : Ան ատե-
նը թագաւորին գոյնը փոխուե-
ցաւ , ու անոր խորհուրդները զա-
նիկայ խռովեցուցին . այնպէս որ
մէջքին յօդուածները կը քա-
կուէին , ու ծունկերը իրարու
7 կը զարնէին : Թագաւորը բարձ-
րաձայն աղաղակեց՝ որ հմայող-
ները , քաղդեացիները ու բաղ նա-
յողները բերեն . թագաւորը Բա-
բիլոնի իմաստուններուն խօսեցաւ՝
ու ըսաւ . Ո՛վ որ աս գիրը կար-
դայ , ու մեկնութիւնը ինձի ի-

Ա՛ Թագ · Գ · 2 ; Տես Երեմ · ԽԲ · 19 ;
՟ Նախա-հօրը · Հմր 11 , 13 ; Բ Թագ · Թ · 7 ; Բ Մն · ԺԱ · 16 ; Երեմ · ԽԱ · 7 ;
Ցայտ · Թ · 20 ;
Գլ · դ · 31 ;
Նաա · Բ · 10 ;
Գլ · Բ · 2 ; դ · 6 ;
Եռ · խէ · 13 ;

մացընէ , ծիրանի պիտի հագնի , ու անոր պարանոցը ոսկի մանեակ պիտի կրէ։ 8 Ես գիտեմ իր մեծամտութիւնը եւ անոր չարութիւնը , որ ընդունայն խօսքեր կ՚ըսէ։ Ան պիտի չյաջողի , վասն զի ժամանակը պիտի գայ , որ ամէն մարդ պիտի դողայ Բելտեսասարի առջեւ։ 9 Ան ատեն Բելտեսասար թագաւորը սպաննուեցաւ , եւ Քաղդէացին գրաւեց թագաւորութիւնը։ 10 Թագուհին՝ թագաւորին ու անոր մեծամեծներուն խօսքերուն համար , տունը եկաւ ։ Թագուհին խօսեցաւ՝ ու ըսաւ ։ Ով թագաւոր՝ յաւիտեան ողջ կեցիր ։ Քու խորհուրդներդ քեզ չխռովեցրնեն , ու երեսիդ գոյնը փոխուեցաւ ։ 11 Եւ թագաւորութեանդ մէջ մարդ մը կայ , որ անոր ներսի դին սուրբ աստուածներուն հոգին կայ , եւ քու հօրդ օրերը՝ անոր վրայ լոյս , հանճար , ու աստուածոց իմաստութեանը պէս իմաստութիւն գտնուեցաւ , եւ քու հայրդ Նաբուգոդոնոսոր թագաւորը՝ գանիկայ Խմգելերուն , հմայողներուն , քաղդեացիներուն ու բաղդ նայողներուն վրայ իշխան դրաւ ։ 12 Ներսն վրայ իշխան դրաւ ։ Քանզի աս յատկութիւնը գտնուեցաւ՝ որուն անունը թագաւորը Բաղտասասար դրաւ , գերազանց հոգի , գիտութիւն ու հանճար կայ՝ երազները մեկնելու , առեղծուածները յայտնելու , ու դժուարին խնդիրները լուծելու ։ Հիմա դանիէլը թող կանչուի , ու անիկայ մեկնութիւնը պիտի իմացընէ ։

13 Ան ատեն Դանիէլը թագաւորին առջեւը տարուեցաւ ։ Թագաւորը խօսեցաւ , ու Դանիէլին ըսաւ ։ Իմ թագաւոր հօրս՝ Հրէաստանէն բերած Հրէաստանի դերիներէն եղող Դանիէլը դուն ես ։ 14 Քանի մը քեզի համար լսեցի որ՝ հրաս ներսի դիդ աստուածներուն հոգին կայ , և քու քովդ լոյս , հանճար ու գերազանց իմաստութիւն 15 թիւն կը գտնուի ։ Ու հիմա իմ առջեւս իմաստուններ ։ Հմայողներ բերուեցան , որ ասդ գրուածը կարդան , ու անոր մեկնութիւնը ինձի գիտցընեն ։ բայց անոնք չկրցան ասդ խօսքին մեկնութիւնը իմացընել ։ 16 Ու ես քեզի համար լսեցի որ՝ մեկնութիւններ տալու , ու դժուարին խնդիրներ լուծելու կարող ես ։ Հիմա թէ որ դուն ան գրուածը կարդալու , և անոր մեկնութիւնը ինձի գիտցընելու կարող

ընդ. ԽԲ 538

ը Տես գլ. ը. 2։

բ Գլ. բ. 27։ գ. 7։

ե Գլ. բ. 1։

է Գլ. բ. 4։ գ. 9։

լ Գլ. բ. 48։ գ. 8, 9, 18։

ի Գլ. գ. 9։

խ Գլ. գ. 3։

ձ Գլ. ա. 7։

հՀմր 11, 12։

յ Հմր 7, 8։

ղ Հմր 7։

ղլաս , ծիրանի պիտի հագնիս , և քու պարանոցդ ոսկի մանեակ պիտի կրես , ու թագաւորութեանը մէջ երրորդ իշխան պիտի ըլլաս ։

17 Ան ատենը Դանիէլ պատասխան տուաւ , ու թագաւորին առջեւը բսաւ ։ Քու պարգեւներդ քեզի ըլլան , ու տուրքերդ ուրիշին տուր ։ բայց ես ան գրուածը թագաւորին պիտի կարդամ , ու մեկնութիւնը 18 անոր գիտցընեմ ։ Ով թագաւոր՝ Բարձրեալ Աստուածը՝ քու հօրդ Նաբուգոդոնոսորին՝ թագաւորութիւն ու մեծութիւն և պատիւ ու 19 փառք տուաւ ։ Եւ անոր տուած մեծութենէն՝ բոլոր ժողովուրդները , ազգերը ու լեզուները՝ անոր երեսէն կը դողային ու կը վախնային ։ անիկայ ուզածը կը մեռցընէր , և ուզածը ողջ կը թողուր ։ անիկայ ուզածը կը բարձրացընէր , 20 և ուզածը կը ցածցընէր ։ Բայց երբոր անոր սիրտը բարձրացաւ , ու անոր հոգին ամբարտաւանութեամբ կարծրացաւ , իր թագաւորութեանը աթոռէն ինկաւ , ու 21 պատիւը անկէ առնուեցաւ ։ Եւ անիկայ մարդոց որդիներուն մէջէն վռնտուեցաւ , ու անոր սիրտ անասնոց պէս եղաւ , և անոր բնակութիւնը վայրենի էշերուն հետ եղաւ ։ արջառներու պէս խոտ կը կերցընէին անոր ։ ու անոր մարմինը երկինքէն ցօղովը կը թրջուէր , մինչև որ գիտցաւ թէ մարդոց թագաւորութեանը վրայ Բարձրեալ Աստուածը կը տիրէ , ու իր ուզած մարդը անոր վրայ կը դնէ ։ 22 Ու դուն՝ ով Բաղտասար անոր որդին՝ Քու սիրտդ չխոնարհեցուցիր , 23 թէև ասոնց ամէնը գիտցար ։ Հապա երկնից Տէրոջը դէմ քեզ բարձրացուցիր ։ ու անոր տանը անօթները քու առջեւդ բերին ։ և դուն , ու քու մեծամեծներդ , քու կնիկներդ ու հարճերդ՝ անոնցմով գինի խմեցիք ։ և դուն՝ արծաթէ , ոսկիէ , պղնձէ , երկաթէ , փայտէ ու քարէ չտեսնող աստուածները գովեցիր , Որոնք ոչ կը տեսնեն , ոչ կը լսեն , ոչ ալ բան մը դիտեն ։ և ան Աստուածը՝ որուն ձեռքն է քու շունչդ , և որուն են քու ամէն 24 ճամբաներդ , չփառաւորեցիր ։ Անոր համար ան ձեռքի թաթը անոր երեսէն խրկուեցաւ , ու ասդ գրուա-
25 ծը գրուեցաւ ։ Եւ գրուած գիրը ասիկայ է ։ *ՄԱՆԷ , ՄԱՆԷ , ԹԵ-
26 ԿԷԼ ՈՒ ՓԱՐՍԻՆ* ։ Ա- խօսքին մեկնութիւնը ասն է ։ Մանէ ։ Աստուած քու թագաւորութիւնդ համրեց , ու զանիկայ վերջացուց ։
27 Թեկէլ ։ կշռուած կշռուեցար ,

ընդ. ԽԲ 538

բ Տես գլ. ը. 2։

ե Գլ. բ. 6։

ի Գլ. բ. 37, 38։ գ. 17, 22, 25։

լ Երեմ. խե. 7։ Գլ. գ. 4։

ն Գլ. դ. 30, 37։

նԳլ. դ. 32, 33։

ո Գլ. դ. 17, 25։

որ Մն. ւգ. 23։ ւգ. 12։ Հմր 3, 4։

ղ Ապ. ճժե. 5, 6։

ո Երեմ. ժ. 23։

* Ար՝ Համրուած, Համրուած, կըշռուած ու բաժնուած։

ո Ծար. լա. 6։ Ապ. կր. 9։

Ն·Ք·ԳՔ· Իբր 538

28 ու պակաս դտնուեցար ։ Փարէս . քու թագաւորութիւնդ բաժնուեցաւ , և Մարաց ու Պարսից տըրուեցաւ ։

Ես·իա·21· Երմ·51· Ես·13· Դն·5·31· Դն·6·1· Դն·9·28·

29 Ան ատենը Բաղտասար հրամայեց , ու Դանիէլին ծիրանի հագուցին , ու պարանոցը ոսկի մանեակ դրին , և անոր համար մունետիկ կանչել տուին՝ որ թագաւորութեանը մէջ երրորդ իշխան ըլլայ ։

Դն·2·48· Ե Ես·45·1· Ե Երեմ·50· 31·39·57·

30 Նոյն գիշերը Քաղդեացւոց Բաղտասար թագաւորը սպաննուեցաւ

31 ։ Ու Թագաւորութիւնը Մարաց Դարեհ Քսաներկուերկու տարեկանի չափ էր ։

ԳԼ· Զ

1 Դանիէլ՝ թագաւորութեանը երեւելի հրամանատարը կ'ըլլայ · 4 միւս հրամանատարները և կուսակալները Դանիէլին դէմ դաւաճանութեան խորհուրդ ընելով՝ մէկ կապալառական վճիռ մը ձեռք կը բերեն ։ 10 Դանիէլ կ'սմբ. բասատանի պատուիրանազանցութեան չանցանքով , ու առիւծներուն գուբը կը ձգուի ։ 18 Դանիէլ կ'ազատի · 24 իսկ անոր թշնամիները առիւծներէն կը պատառուին ։ 25 Թագաւորը հրովարտակով մը կը փառաւորէ զԱստուած ։

1 Դարեհին առջեւը հաճոյ երեցաւ , որ Թագաւորութեանը վրայ հարիւր քսան կուսակալներ դնէ , որոնք բոլոր թագաւորութեանը

Ե Ես Եսթ. ա·1·

2 մէջ ըլլան · Եւ անոնց վրայ իրեք հրամանատար՝ որոնց մէկը Դանիէլ էր · որպէս զի ան կուսակալները աւոնց հաշիւ տան , որ թագաւորին

3 վնաս չըլլայ ։ Ու աս Դանիէլը՝ Ե հրամանատարներէն և կուսակալներէն նախապատիւ էր · Ե վասն զի անոր վրայ գերազանց հոգի կար · ու թագաւորը միտք ունէր որ զանիկայ բոլոր թագաւորութեանը վրայ դնէ ։

Ե Գլ·ե·12·

Իբր 537

4 Ե Ես հրամանատարները ու կուսակալները՝ թագաւորութեանը Ե գործէրեսն կողմէ՝ Դանիէլին դէմ պատճառ մը գտնելու կը ջանային · բայց անոնք բնաւ մէկ պատճառ մը կամ չարութիւն մը գտնելու կարող չեղան · վասն զի անիկայ հաւատարիմ էր · ու անոր վրայ բնաւ մէկ յանցանք մը կամ չարութիւն

Ե Ժող·դ·4·

5 մը չգտնուեցաւ ։ Ուստի աս մարդիկը ըսին · Մենք աս Դանիէլին դէմ ամենևին մէկ պատճառ մը պիտի չգտնենք , բայց եթէ անոր դէմ՝ անոր Աստուծոյն օրէնքին կողմանէ գտնենք ։

6 Ան ատենը հրամանատարները ու կուսակալները թագաւորին քովը ժողվուեցան , ու անոր այսպէս ըսին · Ե Ով Դարեհ թագաւոր՝ յաւիտեան ապրիջիր ։

Ե Նէեմ·բ· 3 ։ Հգ 21 ։ Գն·բ·4·

7 Թագաւորութեանը բոլոր հրամանատարները , նախարարները , կուսակալները , խորհրդականները ու կառավարիչները խորհուրդ ըրին , որ թագաւորական հրաման մը որոշուի , և արգելիչ օրէնք մը հաստատուի , թէ ով որ մինչև երեսուն օր խնդրուած մը խնդրէ մէկ աստուծմէ մը , կամ մարդէ մը , բաց ի քեզմէ՝ ով թագաւոր , առիւծներուն գուբը

Ն·Ք·ԳՔ· Իբր 537

8 նետուի ։ Հիմա ով թագաւոր՝ արգելիչ օրէնքը հաստատէ՝ , ու հրովարտակը ստորագրէ՝ , որ Ե Մարաց ու Պարսից անփոփոխելի օրէնքին համեմատ չփոխուի ։ Ասոր համար Դարեհ թագաւորը հրովարտակը ու արգելիչ օրէնքը ստորագրեց ։

Ե Եսթ·ա· 19 ։ Ք·8 ։ Հգ 12·15 ։

9

10 Ու երբոր Դանիէլ իմացաւ թէ հրովարտակը ստորագրուեցաւ , իր տունը գնաց · ու իր սենեակին մէջը պատուհանները Ը դէպ ի Երուսաղէմ բաց էին , և Ե օրը իրեք անգամ ծունկի վրայ գալով աղօթք կ'ընէր , ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առջի սովորութեանը պէս ։ Ուստի աս մարդիկները ժողվուեցան , ու Դանիէլը գտան՝ որ իր Աստուծոյն առջեւը

Ը Գլ·դ·8 ։

11

12 աղօթք ու աղաչանք կ'ընէր ։ Ըստ ատենը մատեցան , ու թագաւորին առջեւը՝ թագաւորին արգելիչ օրէնքին վրայով ըսին · Դուն մէկ արգելիչ օրէնք մը չստորագրեցիր , թէ ով որ մինչև երեսուն օր Ե Ես մը խնդրէ մէկ աստուծմէ մը , կամ մարդէ մը , բաց ի քեզմէ՝ ով թագաւոր , առիւծներուն գուբը նետուի · Թագաւորը պատասխան տուաւ , ու ըսաւ · Այս խօսքը ճշմարիտ է՝ Ե Մարաց ու Պարսից անխափանելի

Ե Հգ 8 ։

13 օրէնքին համեմատ ։ Ըստ ատենը անոնք պատասխան տուին , ու թագաւորին առջեւը ըսին · Ե Հրէաստանի գերութեանը որդիներէն եղող Դանիէլը՝ Ե քեզ և քու ստորագրած արգելիչ օրէնքդ բանի տեղ չսեպեր՝ ով թագաւոր , հապա օրը իրեք անգամ իր խնդրուածքը կը մատուցանէ ։

Ե Գլ·ա·6· Ե·13· Ե Գլ·դ·12·

14 Ըստ ատենը թագաւորը՝ խօսքերը լսածին պէս , Ե ինքնիրեն շատ տրտմեցաւ , ու իր սիրտը Դանիէլին վրայ դրաւ որ զանիկայ ազատէ , ու մինչև արեւուն մտնելը կը ջանար որ զանիկայ ապրեցընէ ։

Ե Մար·ը· 26 ։

15 Բայց ան մարդիկները թագաւորին քովը ժողվուեցան , ու թագաւորին ըսին · Ո՛վ թագաւոր՝ գիտցիր որ Ե Մարաց ու Պարսից օրէնքը աս է , որ թագաւորին ամէն հաստատած արգելիչ օրէնքը ու հրամանը

Ե Հգ 8 ։

16 չփոխուիր ։ Ըստ ատենը թագաւորը հրամայեց , ու Դանիէլը բերին , և

զանիկայ առիւծներուն դուրը նետեցին։ Թագաւորը Դանիէլին խօսեցաւ, ու ըսաւ. Քու Աստուածդ՝ որ դուն անդադար կը պաշտես,
17 անիկայ քեզ պիտի ազատէ։ Ու մէկ քար մը բերին, ու դուրին բերանը դրին. և Թագաւորը զանիկայ իր կնիքովը, ու իր մեծամեծներուն կնիքովը կնքեց, որ Դանիէլին վրայով բան մը չփոխուի։
18 Ետքը թագաւորը իր տունը գնաց, ու գիշերը անօթի անցուց, և իր առջևը նուագարանները բերել չտուաւ. Հու քունը իրմէ փախաւ։
19 Եւ թագաւորը արշալոյսին կանուխ ելաւ, ու արտորնօք առիւծներուն դուրը գնաց։
20 Ու երբոր դուրին մօտեցաւ, տրտում ձայնով մը Դանիէլին պոռաց. Թագաւորը խօսեցաւ, ու Դանիէլին ըսաւ. Ով Դանիէլ՝ կենդանի Աստուծոյ ծառան, Քու Աստուածդ՝ որն որ դուն անդադար կը պաշտես, կարող եղա՞ր քեզ առիւծներէն ազատելու։
21 Ան ատեն Դանիէլը թագաւորին ըսաւ. Ով թագաւոր՝ յաւիտեան ողջ կեցիր.
22 Իմ Աստուածս իր հրեշտակը խրկեց, ու առիւծներուն բերանը գոցեց, ու ինծի վնաս չտուին. վասն զի անոր առջևը՝ իմ վրաս անմեղութիւն գտնուեցաւ. և քու առջևդ ալ՝ ով թագաւոր, մէկ
23 յանցանք մը բրած չեմ։ Ընատեղը թագաւորը շատ ուրախացաւ, ու հրամայեց որ Դանիէլը դուրէն հանեն. և Դանիէլը դուրէն հանեցին. ու անոր վրան ամենևին մէկ վնաս մը չգտնուեցաւ. վասն զի իր Աստուծոյն հաւատաց։
24 Եւ թագաւորը հրամայեց, ու Դանիէլին վրայով չարախօսութիւն ընող մարդիկները բերին, և զանոնք, ու անոնց տղաքները ու կնիկները առիւծներուն դուրը նետեցին. ու անոնք դեռ դուրին յատակը չհասած՝ առիւծները անոնց վրայ տիրեցին, ու անոնց բոլոր ոսկորները փշրեցին։
25 Ան ատենը Դարեհ թագաւորը՝ բոլոր երկրի վրայ բնակող ժողովուրդներուն, ազգերուն ու լեզուներուն այսպէս գրեց. Ձեր խաղաղութիւնը շատնայ.
26 հրամայեցի որ ինծմէ հրամանի ելաւ՝ որ իմ թագաւորութեանս բոլոր իշխանութեանը մէջ՝ Դանիէլին Աստուծոյն երեսէն դողան ու վախնան. Վասն զի անիկայ կենդանի Աստուած է, ու յաւիտեան կը կենայ, և անոր թագաւորութիւնը չյաւերժիր, ու անոր իշխանութիւնը մինչև վերջը
27 կ՚ըլլայ։ Անիկայ կ՚ազատէ ու կը փրկէ, և երկինքի մէջ ու երկրի վրայ Նշաններ ու հրաշքներ կ՚ընէ, որ Դանիէլը առիւծներուն բերնէն ազատեց։
28 Եւ այս Դանիէլը՝ Դարեհին թագաւորութեանը, ու Պարսիկ Կիւրոսին Հայաստանեայց թագաւորութեանը առնէր յաջողութիւն գտաւ։

ԳԼ. Է

1 Դանիէլին տեսած տեսիլքը չորս կենդանիներու վրայով, 9 Աստուծոյ թագաւորութեանը վրայով, 15 Անոնց մեկնութիւնը։

1 Բաբիլոնի Բաղտասար թագաւորին առջի տարին՝ Դանիէլ երազ տեսաւ, ու իր անկողնին մէջ իր գլխուն տեսիլքները. և անիկայ երազը գրեց, ան բաներուն
2 համառօտութիւնը ըսաւ։ Դանիէլ խօսեցաւ ու ըսաւ. Գիշերը տեսիլքիս մէջ տեսայ որ՝ ահա երկինքին չորս հովերը մեծ ծովուն
3 վրայ կը յարձակէին։ Ու ծովէն չորս մեծ գազաններ ելան, որոնք իրարմէ տարբեր էին։
4 Առաջինը առիւծի պէս էր, ու արծիւի թևեր ուներ. ու կը տեսնէի մինչև որ անոր թևերը փրցուեցան. ու երկրէն վերացաւ, և մարդու պէս ոտքերուն վրայ կայնեցաւ. ու անոր՝ մարդու սիրտ տրուեցաւ։
5 Եւ ահա մէկ ուրիշ երկրորդ գազան մը արջու նման՝ որ մէկ քովէն վրայ կայնեցաւ, ու բերանը՝ ակռաներուն մէջը՝ իրեք կողի ոսկոր կար. և անոր այսպէս ըսին. Ելի՛ր, շատ միս կեր։
6 Անկէ ետքը կը տեսնէի. և ահա ինձի նման մէկ ուրիշ մը՝ որուն կռնակին վրայ չորս թռչունի թևեր կային. և գազանը չորս գլուխ ուներ, ու անոր իշխանութիւն տրուեցաւ։
7 Անկէ ետքը՝ գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի, և ահա մէկ չորրորդ գազան մը. անիկայ ահեղ՝ սոսկալի ու խիստ զօրաւոր էր. և անիկայ մեծ երկաթէ ակռաներ ուներ. անիկայ կ՚ուտէր, ու կը փշրէր, ու մնացածը ոտքերովը կը կոխէր, ու իրմէ առաջ եղող ամէն գազաններէն տարբեր էր. և
8 տասը եղջիւր ուներ։ Երբոր և ան եղջիւրները կը դիտէի, ահա անոնց մէջը մէկ ուրիշ պզտիկ եղջիւր մը ելաւ, որ անոր առջևէն՝ առջի եղջիւրներուն իրեքը խլուեցաւ. և ահա աս եղջիւրին վրայ՝ մարդու աչքերու պէս աչքեր, ու մեծ բաներ խօսող բերան կար։
9 Ես կը տեսնէի մինչև որ աթոռներ դրուեցան, ու Հինաւուրցը

Ն. Ք. ՂԲ. Իրէ 537
Բ Ողբ. գ. 53։
Ե Մատ. իէ. 66։
Ա—Ա՝ Համագամ կնքակուրներ
Հ Գլ. բ. 1։
Յ Տես գլ. գ. 15։
Ղ Գլ. բ. 4։
Ճ Գլ. գ. 28։
Մ Երր. ժա. 33։
Ն Եսթ. թ. 10։ Տես բ Օր. իդ. 16։ գ Թագ. ժգ. 6։
Ղ Գլ. գ. 1։
Ո Գլ. գ. 29։
Շ Սաղ. ղթ. 1։
Ո Գլ. գ. 31։
Ջ Գլ. բ. 44։ գ. 3. 31։ է. 14. 27։ Ղս. ա. 33։

Ն. Ք. ՂԲ. Իրէ 537
Ա Գլ. գ. 3։
Բ Ա-ԼԲ. Ձեռքին
Գ Եզր. ա. 1. 2։
Է Գլ. ա. 21։
Իրէ 555
Ա Թես. ժբ. 6։ Տես Ա-մով. գ. 7։
Բ Գլ. բ. 28։
Գ Յայտ. ժգ. 1։
Դ Բ Օր. իբ. 49։ Բ Թագ. ա. 23։ Ե-բեմ. գ. 7. 13։ Խր. 40։ Եզեկ. ժէ. 3։ Ամր. ա. 8։
Ե Գլ. բ. 39։
Զ Գլ. բ. 8. 22։
Է Յայտ. ժգ. 1։ Տես գլ. բ. 41։
Ը Էմր 20. 21. 24։ Գլ. բ. 9։
Թ Յայտ. թ. 7։
Ժ Սաղ. ժբ. 3։ Էմր 25։ Յայտ. ժգ. 5։
Ա Յայտ. ի. 4։
Ի Սաղ. գ. 2։ Էմր 13. 22։

Ն · Ք · ՊԲ · Իրբ 555

նստաւ . † անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ՝ ու գլխուն մազը մաքուր բուրդի պէս էր . անոր աթոռը կրակի բոցի պէ՛ս , ‡ա՛ նիւները վառած կրակի պէ՛ս էր . § ընոր առջևէն կրակի գետ կ՚ելլէր ու կը վազէր . ¶ հազարը հազարաց ծառայութիւն կ՚ընէին անոր , և բիւրք բիւրուց անոր առջևը կը կայնէին . Դատաւանը բազմեցաւ , ու դիրքերը 11 բացուեցան : Ըն առնը կը նայէի ան եղջիւրին խօսած մեծ խօսքերուն ձայնին համար , ֍ ու նայեցայ մինչև որ ան գազանը սպանուեցաւ , և անոր մարմինը կորսուեցաւ , ու կրակի բոցերու տը- 12 րուեցաւ : Եւ միւս գազաններուն իշխանութիւնը վերցուեցաւ . բայց մինչև ժամանակ մը ու առեն մը՝ կենաց երկարութիւն տրուեցաւ ա- 13 նոնց : Գիշերուան տեսիլքներու մէջ կը տեսնէի , և ահա երկինքի ամպերով ♪ մարդոյ Որդւոյն նման մէկը կու գար , ու մինչև ♪ Հինաւուրցը եկաւ . և զանիկայ անոր 14 առջևը մօտեցուցին : ♫ Ու անոր իշխանութիւն՝ պատիւ ու թագաւորութիւն տրուեցաւ , որ ամէն ♪ ժողովուրդները , ազգերը ու լեզուները անոր ծառայութիւն ընեն . անոր իշխանութիւնը ♭ յաւիտենական իշխանութիւն է՝ որ չանցնիր , ու թագաւորութիւնը չաւրուիր :

15 Ես Դանիէլս ♪ հոգւով վշտացայ իմ ներսի դիս , և իմ գլխուս տե- 16 սիլքները զիս խռովեցուցին : ♪ Հանկայնողներէն մէկուն մօտեցայ , ու ասոր ամէն բանէրուն ճշմարտութիւնը անոր հարցուցի . և անիկայ ինծի խօսեցաւ , ու ասոր բաներուն մեկ- 17 նութիւնը ինծի գիտցուց : ♪ Ասոնք չորս մեծ գազանները՝ չորս թագաւորներ են , որոնք երկրէն պիտի 18 ելլեն : Եւ թագաւորութիւնը՝ ♪ Բարձրելոյն սուրբերը պիտի առնեն , ու անոնք պիտի յաւիտեան թագաւորութիւնը յաւիտեան , յաւիտենից :

19 Ետքը ♫ չորրորդ գազանին վրայով ճշմարիտը գիտնալ ուզեցի , որ անիկայ բոլոր միւսներէն տարբեր էր , ♫ խիստ ահելի էր . անոր ակռաները երկաթէ , և ղունդունները պղնձէ էին . անիկայ կ՚ուտէր , կը փշրէր , ու մնացածը ոտքերովը 20 կը կոխէր . Եւ անոր գլուխը եղող տասը եղջիւրներուն վրայով , ու մէկալ ելածին վրայով՝ որ անոր առջևէն իրեքը ինկան , այսինքն ան եղջիւրին վրայով՝ որ աչքեր ու մեծ բաներ խօսող բերան ուներ , և անոր դէմքը միւսներէն մեծ էր : 21 Ես կը տեսնէի որ ♫ ան եղջիւրը սուրբերուն հետ պատերազմ կ՚ընէր, 22 ու անոնց յաղթեց , Մինչև որ Հինաւուրցը եկաւ , ♫ և Բարձրելոյն սուրբերուն իրաւունք տրուեցաւ , ու ժամանակը հասաւ որ սուրբերը թագաւորութիւնը առին: 23 Ընիկայ այսպէս ըսաւ . Չորրորդ գազանը՝ երկրի վրայ չորրորդ թագաւորութիւն պիտի ըլլայ , որ ամէն թագաւորութիւններէն տարբեր պիտի ըլլայ , ու բոլոր երկիրը պիտի ուտէ , ու զանիկայ պիտի 24 կոխէ ու փշրէ : ♪ Եւ ան տասը եղջիւրները՝ ան թագաւորութենէն ելլելու տասը թագաւորներ են , ու անոնցմէ ետքը մէկ ուրիշը պիտի ելլէ , ու անիկայ առջիններէն տարբեր պիտի ըլլայ , և անիկայ իրեք թագաւոր պիտի կոր- 25 ծանէ . ♫ Ու Բարձրելոյն դէմ խօսքեր պիտի ըսէ , ու ♫ Բարձրելոյն սուրբերը պիտի մաշէ , և ♫ պիտի մտածէ ժամանակներ ու օրէնքներ փոխելու . ու անոնք ♫ մինչև ժամանակ մը , ժամանակներ , ու կէս ժամանակ ♫ անոր ձեռքը պի- 26 տի տրուին : ♫ Բայց ատեանը պիտի բազմի , ու անոր իշխանութիւնը պիտի վերցրնեմ . ♫ Նի՛ մինչև վերջը բնաջինջ պիտի ընէն 27 ու կորսընցրնեն : ♫ Եւ թագաւորութիւնը , ու իշխանութիւնը , ու բոլոր երկինքին տակը եղող թագաւորութեանց մեծութիւնը՝ Բարձրելոյն սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի . ♫ անոր թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է , ♫ ու բոլոր իշխանները անոր պիտի ծառայեն , ու պիտի հնազանդին :

28 Խօսքին վերջը մինչև հոս է : Ջիս Դանիէլս՝ ♫ իմ խորհուրդներս խիստ խռովեցուցին . ու երեսիս դոյնը փոխուեցաւ . և ♫ խօսքը սրտիս մէջը պահեցի :

Ն · Ք · ՊԲ · Իրբ 555

· ԳԼ · Բ · 12 , 24 ; Ժա · 31 ; Ցայտ . Ժա . 7 ; Ժգ . 7 ; Ժէ . 14 ; Ժթ . 19 ։

Է Հմր 9 ։

= Հմր 18 ։ ա Կոր · գ · 2 ; Ցայտ . ա . 6 ; է . 10 ։ Ի · 4 ։

: ԳԼ · Բ · 40 ։ ; Հմր 7 , 8 , 20 ; Ցայտ . Ժէ . 12 ։

– Ես . լէ · 28 ; ԳԼ · Բ · 24 , 25 ; Ժա . 28 , 30 , 31 , 36 ; Ցայտ . Ժգ · 5 · 6 ։

÷ Ցայտ . Ժէ . 6 ; Ժբ · 24 ։

+ ԳԼ · Բ · 21 ։

• ԳԼ · Ժբ . 7 ; Ցայտ . Ժբ . 14 ։

÷ Ցայտ . Ժգ . 7 ։

– Հմր 10 , 22 ։

Բ Հմր 14 , 18 , 22 ։

÷ ԳԼ · Բ · 44 ; Ղու . ա . 33 ; Ցօհ . Ժբ . 34 ; Ցայտ . Ժա . 15 ։

՜ Տիս Ես . կ · 12 ։

Ի Հմր 15 ; ԳԼ · Ը · 27 , Ժ · 8 , 16 ։

Ղ Ղու . բ . 19 , 51 ։

ԳԼ · Ը

1 Դանիէլին տեսիլքը խոյի ու քօշի վրայով : 15 Գաբրիէլ կը քաջալերէ Դանիէլը , ու տեսիլքը կը մեկնէ :

1 Հաղտասար թագաւորին թագաւորութեանը երրորդ տարին՝ ինծի Դանիէլիս տեսիլք երևցաւ , 2 ան ՝ առջի տեսածէս ետքը : Եւ տեսիլքի մէջ տեսայ . ու եղաւ որ տեսած ատենս , ես Եղամի գաւառին մէջը եղող Բ Շուշան մայրաքաղաքն էի , ու տեսիլքի մէջ տեսայ որ՝ Ուլայ գետին քովն էի :

3 Եւ իմ աչքերս վերցուցի ու տեսայ , և ահա գետին * քովը խոյ մը կայնած էր , ու անիկայ երկու եղ-

Իրբ 553

= ԳԼ · Է · 1 ։

Բ Եսթ . ա · 2 ։

* Եբր · առջևը

ջիւր ունէր , և ան եղջիւրները բարձր էին , ու մէկը մէկալէն բարձր էր , ու ան բարձրը ետքէն
4 ելաւ : Ե՝ տեսայ զ՚ն խոյը՝ որ էր եղջե՚րէրովը դէպ՚ի արեւմուտք , դէպ՚ի հիւսիս , ու դէպ՚ի հարաւ կը զարնէր , ու բնաւ մէկ գազան մը անոր առջեւը չէր կրնար կայնիլ , և անոր ձեռքէն ազատող չկար . ե՚հապա անիկայ իր ուզածին պէս ըրաւ , ու մեծցաւ :
5 Ու երբոր ես կը մտածէի , ահա արեւմուտքէն բոլոր երկրի երեսին վրայ այծերու քոջ մը եկաւ , ու գետնին չէր դպչէր . ու քոջը իր աչքերուն մէջտեղը ե՚մէկ նշանաւոր
6 եղջիւր մը ունէր : Եւ անիկայ հասաւ մինչև երկու եղջիւր ունեցող խոյը , որն որ տեսայ որ գետին քովը կայնած էր , ու իր կատաղի զօրութեամբը անոր վրայ
7 յարձակեցաւ : Եւ տեսայ որ խոյին մօտեցաւ , ու անոր վրայ կատղելով՝ խոյը զարկաւ , և անոր երկու եղջիւրը կոտրեց . ու խոյը ոյժ չունէր որ անոր առջեւը կայնի . ու զանիկայ գետինը զարկաւ , ու զանիկայ կոխկռտեց . և մէկը չկար որ խոյը անոր ձեռքէն ազատէ :
8 Ու այծերու քոջը խիստ մեծցաւ . ու անիկայ ուժովցածին պէս՝ ան մեծ եղջիւրը կոտրեցաւ , և անոր տեղը՝ դէպ՚ի երկինքին չորս հովե՚րը՝ ե՚չորս նշանաւոր եղջե՚րներ ելան :
9 Ու անոնց մէկէն պզտիկ եղջիւր մը ելաւ . և անիկայ ե՚դէպ՚ի հարաւ , դէպ՚ի արեւելք ու դէպ՚ի էփա-
10 ռաւոր երկիրը խիստ մեծցաւ . Ու ը՚մինչև երկնից զօրքը ը՚մեծցաւ , և ը՚զօրքէն , ու աստղերէն գետինը ձգեց , ու զանոնք կոխկռտեց .
11 Ու մինչև ՚զօրաց իշխանը ը՚զինքը բարձրացուց . ը՚ու անկէ ՚մշտնջենաւոր ղ՚ոհը վերցուեցաւ , և անոր սրբարանին բնակարանը կործանե-
12 ցաւ : Ու ՙ՚զօրք մը ամբարշտութեամբ մշտնջենաւոր ղ՚ոհին դէմ դրաւ՚՚ , ու ՚ճշմարտութիւնը գետինը զարկաւ , ու ՚գրան տեսաւ ,
13 և յաջողեցաւ : Ու լսեցի որ ՚մէկ սուրբ մը կը խօսէր . և ան խօսողին մէկ ուրիշ սուրբ մը ըսաւ . Մընշտնջենաւոր ղ՚ոհին , ու աւերող ամբարշտութեանը , ու սրբարանին , և զօրքին կոխտելու տրուելուն տե-
14 սիլքը մինչև ե՚րբ պիտի ըլլայ : Ու անիկայ ինծի ըսաւ . Մինչև երկու հազար իրիք հարիւր ՚օր . ետքը սրբարանը պիտի մաքրուի :
15 Ու երբոր ես Դանիէլս տեսիլքը տեսայ , ու ՚ջկնաՙրնէնը կը փընտրէի որ հասկընամ , ահա իմ դիմացս ՚մարդու կերպարանքով ՙՀնչ

16 կը կայներ : Եւ ՚Ուլայ ֆէոխն մէջէն մարդու ձայն լսեցի , որ կը կանչէր ու կ՚ըսէր . ՚Ո՚վ Գաբրիէլ՝
17 տեսիլքը ատոր հասկըցուր : Ու անիկայ իմ կեցած տեղիս մօտ եկաւ . ու երբոր եկաւ , վախցայ , ու ՚երեսիս վրայ ինկայ . և անիկայ ինծի ըսաւ . Հասկըցիր՝ որդի մարդոյ , որ աս տեսիլքը վերջին ժա-
18 մանակին համար է : Ու երբոր անիկայ ինծի հետ կը խօսէր , ես թմրած՝ երեսիս վրայ գետինը ինկած էի . ՚և անիկայ ինծի դպաւ , ու զիս իմ կեցած տեղս կայնե-
19 ցուց . Ու ըսաւ . Ա՚հա քեզի կ՚իմացնեմ բարկութեան վերջը ինչ ըլլալիքը . Վասն զի ՙ՚՚ ե՚ւ՚էնէը վերջի ժամանակին համար է :
20 ՙՈՒն քու տեսած խոյդ՝ որ երկու եղջիւր ունէր , Մարաց ու Պարսից
21 թագաւորներն է : ՙԵւ ‡այծերու քոջը՝ Յունաց թագաւորն է . ու անոր աչքերուն մէջտեղի մեծ եղջիւրը՝ Առաջին թագաւորն է :
22 ՙԵւ ան որ կոտրեցաւ , ու անոր տեղը չորսը ելաւ , ՙՙ ե՚ր՝ ՙՙ ազգէն չորս թագաւորութիւն պիտի ելլէ , բայց չէ թէ անոր զո-
23 րութեամբը : Ու անոնց թագաւորութեանը վերջը՝ երբոր ամբարիշտները ե՚ւ՚՚ր՚ը՚՚ե՚նէը լեցընեն , մէկ ՚պինտերես ու խորագէտ թագաւոր մը ՚պիտի
24 ելլէ . Եւ անոր իշխանութիւնը պիտի զօրանայ , ՙբայց չէ թէ իր զօրութեամբը . ու անիկայ սքանչելի կերպով պիտի աւրէ . ‡և պիտի յաջողի , ու բան պիտի տեսնէ , ՙու զօրաւորները , և սրբոց ժողո-
25 վուրդը պիտի աւրէ . Ու ՙիր խելքին միջոցովը՝ իր ձեռքին մէջ նենգութիւնը պիտի յաջողի , ‡և իր սրտին մէջ պիտի հպարտանայ , ու խաղաղութեան մէջ շատերը պիտի կորսընցընէ , և ՙիշխանաց Իշխանին դէմ պիտի դնէ . բայց ը՚ա-
26 ռանց ձեռքի պիտի կոտրի : ‡Եւ իրիկուան ու առաւուան տեսիլքը՝ որ ըսուեցաւ , ճշմարիտ է . ՙու դուն տեսիլքը գոցէ . քանզի շատ օրերու համար է :
27 ՙՒ ես Դանիէլս մարեցայ , և քանի մը օր հիւանդացայ . ետքը ելայ ՚զթագաւորին գործը տեսայ . ու տեսիլքին համար զարմացման մէջ էի . ՙու մէկը չկար որ ‖ՙՆէն հասկըրներ՚՚ :

Գլ· Ը

1 Դանիէլ դերութեան ժամանակին վրայ խորհելով , 3 Միգայ խոստովանութիւն մը կ՚ընէ , 16 ու աղօթքով կը խնդրէ որ Երուսաղէմը նորոգուի : 20 Գաբրիէլ կ՚իմացընէ անոր՝ եօթանասուն շաբաթներուն վրայով :

Ն·Ք·ԳԲ· Խրբ 553

ՙԳլ·ժ· 6 , 7 ։
ՙԼԻ·Թ·21 ։ Ղ՚ա·ա· 19 , 26 ։
ՙԵզեկ·ա· 28 ։ Ցայտ· ա·17 ։
ՙԳլ·ժ·9 , 10 ։ Ղ՚ա·Թ·32 ։
ՙԵզեկ·բ· 2 ։
ՙԼԻ·Թ·27 ։ ժ·27·35, 36 ։ ժբ·7 ։ Ամ·բ·3 ։
– Հմր 3 ։
– Հմր 5 ։
‡ Կ՚՚մա՚զա
ՙԼԻ·ժ·3 ։
ՙՙՀմր 8 ։ Գլ·ժ·4 ։
ՐԲ Օր·Խբ· 50 ։
ՙՀմր 6 ։
– Ցայտ·ժկ· 13 , 17 ։
‡ Հմր 12 ։ Գլ·ժ· 36 ։
+ Հմր 10 ։ Գլ·կ·25 ։
ՙԳլ·ժ· 21 , 23 , 24 ։
‡ Հմր 11 · Գլ·ժ· 36 ։
– Հմր 11 ։ Գլ·ժ· 36 ։
Բ Ցոր·լդ· 20 ։ Ողբ· դ·6 ։ Գլ· բ·34 , 45 ։
‡ Գլ·ժ·1 ։
ՙԵզեկ·ժբ· 27 ։ Գլ·ժ· 14 ։ ժբ·4 , 9 ։ Տես Ցայտ·Խբ· 10 ։
Ե Գլ·կ·28 ։ ժ·8·16 ։
ՂԳլ·գ·2 , 3 ։
Ե Տես Հմր 16 ։
‖ Կ՚՚ – Բ՚՚նէը խմաՙնայ ։

Ն · ք · գ · Ք · Իր 538

1 Յօսուերոսի որդւոյն Դարեհին առջի տարին՝ որ անիկայ Մա-
բաց սերունդէն էր , ու քաղդէա-
ցւոց թագաւորութեանը վրայ թա-
2 գաւոր դրուեցաւ , Անոր թագա-
ւորութեանը առջի տարին՝ ես Դա-
նիէլս գիրքերէն իմացայ ան տա-
րիներուն թիւը՝ որոնց համար Ցէ-
րոջը խօսքը եղեր էր Երեմիա
մարգարէին , թէ եօթանասուն
տարիով պիտի վերջացընէր Երու-
սաղէմի աւերումները :
3 Ու ես իմ երեսս Ցէր Աստուծոյ
դարձուցի , որ ծոմապահու-
թեամբ , քուրձով ու մոխիրով ա-
ղօթք ու աղաչանք մատուցանեմ .
4 Եւ իմ Ցէր Աստուծոյս աղօթք ը-
րի , խոստովանեցայ , ու ըսի . Ո՛հ
Ցէր՝ մեծ և ահաւոր Աստուած ,
որ քեզ սիրողներուն և քու պա-
տուիրանքներդ պահողներուն ուխտ
ու ողորմութիւն կը պահես .
5 Մենք մեղք գործեցինք , անօրէ-
նութիւն ըրինք , ու ամբարշտու-
թիւն ըրինք , և ապստամբ եղանք ,
ու քու պատուիրանքներէդ ու ի-
6 րաւունքներէդ խոտորեցանք . Եւ
քու ծառաներուդ՝ մարգարէներուն
մոխիկ չըրինք , որոնք մեր թագա-
ւորներուն , մեր իշխաններուն , ու
մեր հայրերուն , ու երկրին բոլոր
ժողովրդեանը՝ քու անունովդ խօ-
7 սեցան : Ո՛վ Ցէր՝ քեզի կը վայե
արդարութիւնը , ու մեզի՝ երեսի
ամօթը , (ինչպէս որ այսօր է-
ղաւ ,) Ցուդայի մարդիկներուն ,
Երուսաղէմի բնակիչներուն , ու
ամէն մերձաւոր ու հեռաւոր խա-
բայէլացիներուն՝ ան բոլոր երկիր-
ներուն մէջ՝ ուր որ դուն զանոնք
քշեցիր , անոնց քեզի դէմ ըրած
8 յանցանքին համար : Ո՛վ Ցէր՝
երեսի ամօթը կը վայե մեզի , մեր
թագաւորներուն , մեր իշխաննե-
րուն ու մեր հայրերուն , ինչու որ
9 քեզի դէմ մեղք գործեցինք . Ի-
ողորմութիւնը ու ներողութիւնը
մեր Ցէր Աստուծոյն կը վայլէ .
վասն զի մենք անկէ ապստամբե-
10 ցանք , Եւ մեր Ցէր Աստուծոյն
որ Որդին մարդոյ եկաւ կորսուածը
12 փրկելու : Ի՞նչպէս կ'երևնայ ձե-
զի . Թէ որ մարդ մը հարիւր ոչ-
խար ունենայ , և անոնց մէկը մո-
լորի , իննսունինըն չ՚ձգե՞ լեռ-
ները չ՚ձգեր , ու՞ երթար մոլորա-
13 ծը փնտռեր : Եւ Թէ որ գտնե-
լու ըլլայ զանիկայ , ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի , որ աւելի ուրախ կ'ըլ-
լայ անոր վրայ , քան Թէ իննսու-
14 նուիններուն՝ որ մոլորած չեն : Նոյնպէս
ալ ձեր երկնաւոր Հայրը չ'ուզեր՝
որ ասոնց պզտիկներէն մէկը կորսուի :
15 Եթէ որ քու եղբայրդ քեզի դէմ
մեղանչէ , գնա՝ յանդիմանէ անի-
կայ՝ երբոր դուն և ան միայնակ էք .
Թէ որ քեզի մտիկ ընէ , շահեցար
16 քու եղբայրդ : Հապա Թէ որ
մտիկ չընէ ինչ , քու հետդ մէկ
կամ երկու՚ը ալ առ , որ
երկու կամ իրեք վկաներու բերնէ
17 ամէն բան հաստատուի : Եւ Թէ
որ անոնց ալ մտիկ չընէ , եկեղե-
ցիին ըսէ . իսկ Թէ որ եկեղեցիին
ալ մտիկ չընէ , հեթանոսի ու
մաքսաւորի պէս Թող ըլլայ քեզի :
18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Ինչ-
րի վրայ ինչ որ կապէք , երկինքի
մէջ կապուած պիտի ըլլայ . ու
երկրի վրայ ինչ որ արձակէք , եր-
կինքի մէջ արձակուած պիտի ը-
լայ : Դարձեալ կ'ըսեմ ձեզի .
19 Թէ որ ձեզմէ երկու հոգի երկրի
վրայ միաբանին ամէն ինչ բանի
համար որ խնդրեն , պիտի ըլլայ
անոնց իմ Հօրմէս՝ որ երկինքն է :
20 Քանզի ուր որ երկու կամ իրեք
հոգի ժողովուած ըլլան իմ անու-
նովս , հոն եմ ես անոնց մէջը :
21 Ան ատենը Պետրոս մօտեցաւ ա-
նոր՝ ու ըսաւ . Տէր՝ քանի՞ անգամ
Թէ որ եղբայրս ինձի դէմ մեղան-
չէ՝ ներեմ անոր . մինչև եօԹը
22 անգամ : Յիսուս անոր ըսաւ .
Քեզի չեմ ըսեր Թէ մինչև եօԹը
անգամ , հապա մինչև եօԹանա-
23 սուն անգամ եօԹը : Ասոր համար
երկնից Թագաւորութիւնը կը նմա-
նի Թագաւորի մը , որ իր ծառա-
24 ներէն հաշիւ առնել ուզեց : Ու
երբոր սկսաւ առնել , տասը հազար
տաղանդի պարտական մը բերուե-
25 ցաւ իրեն : Բայց անիկայ վճարե-
լու ի՞րենէն չունենալով , իր
տէրը հրաման ըրաւ՝ որ անիկայ՝ և
անոր կինը՝ ու որդիքը և անոր բո-
լոր ունեցածը ծախուի , ու պարտքը
26 վճարուի : Իսկ ծառան անոր առ-
ջևը իյնալով՝ երկրպագութիւն
կ'ընէր ու կ'ըսէր . Տէր՝ համբերէ
ինձի , և ամէնը քեզի կը վճարեմ :
27 Եւ ան ծառային տէրը վրան խղճ-
ալով՝ արձակեց զանիկայ , ու
28 պարտքը շնորհեց անոր : Եւ նոյն
ծառան ելաւ , իր ծառայակիցնե-
րէն մէկը գտաւ՝ որ իրեն հարիւր
դահեկան պարտք ունէր , ու զա-
նիկայ բռնելով՝ կը խեղդէր , ու
կ'ըսէր . Վճարէ ինծի ունեցած
29 պարտքդ : Ուստի անոր ծառա-
յակիցը անոր ոտքը իյնալ , կ'ա-
ղաչէր անոր՝ ու կ'ըսէր . Համբե-
րէ ինձի , ու բերեմ կը վճարեմ :
30 Եւ ինքը չէր ուզեր . հապա գնաց՝
բանտը դրաւ զանիկայ , մինչև որ
31 պարտքը վճարէ : Երբոր իր ծա-
ռայակիցները տեսան եղած բանե-
րը , խիստ տրտմեցան , ու եկան
իրենց տիրոջը հասկրցուցին բոլոր
32 եղածը : Ան ատենը անոր տէրը
կանչեց զանիկայ՝ ու ըսաւ անոր .
Չար ծառայ՝ ան բոլոր պարտքը ես
քեզի շնորհեցի՝ ինձի աղաչելուդ
33 համար . Ուրեմն պէտք չէ՞ր քե-
զի ալ քու ծառայակիցիդ ողոր-
միլ , ինչպէս որ ես քեզի ողոր-
34 մայ : Եւ անոր տէրը բար-
կանալով՝ դահիճներուն մատ-
նեց զանիկայ , մինչև որ բոլոր
35 պարտքը վճարէ : Նոյնպէս ալ իմ
երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի ,
Թէ որ ձեր սրտերէն չէք ներեր ,
ամէն մէկը իր եղբօրը , իրենց յան-
ցանքները :

Ցամք Տեառն 32

+ Ողորմիչը քեզի

Նաահ . խա. 13 : Գլ . գ . 12 : Մար . ժա : 26 : Ցակ . բ . 13 :

ԳԼ . ԺԹ

2 Քրիստոս կը բժշկէ հիւանդները . 3 պատասխան կու տայ կին մը արձակելու վրայով փարիսեցւոց բրած հարցմունքին . 13 մանր տղաքները կ'ընդունի . 16 կը սորվեցընէ պատանիին Թէ ինչպէս կրնայ առանալ յաւիտենական կեանքը . 20 և Թէ ինչ բանելու է որ կատարեալ ըլլայ . 23 իր աշակերտներուն կ'ըսէ Թէ ինչպէս դժուար է հարուստին Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել , 27 և վարձք կը խոստանայ անոնց՝ որ իր համար երթալու համար որ և իցէ բան կը Թողուն :

1 Եւ եղաւ որ երբ Յիսուս այս խօս-
քերը լմընցուց , Գալիլեայէն ե-
լաւ , ու եկաւ Հրէաստանի սահման-
ները Յորդանանու անդին կողմը :
2 Ու անոր հետևէն շատ ժողովուրդ-
ներ դացին , ու հոն բժշկեց զանոնք :
3 Եւ փարիսեցիները անոր մօտե-
նալով , զանիկայ կը փորձէին՝ ու
կ'ըսէին Թէ՝ Արժա՞ն է որ մարդ մը
կնիկը արձակէ ամէն պատճառի
4 համար : Անիկայ ալ պատասխան
տուաւ՝ ու անոնց ըսաւ . Չէ՞ք
կարդացեր , Թէ ան որ սկիզբէն
ստեղծեց , արու և էգ ստեղծեց ա-
5 նոնք՝ ու ըսաւ . Ասոր համար
մարդ էր Հայրը ու մայրը պիտի ձգէ ,
և իր կնկանը պիտի յարի , ու Երկու-
քը մէկ մարմին պիտի ըլլան :
6 Ուստի ալ երկու՚ք չեն , հապա մէկ

Ցամ . Տ . 33 — Մար . ժ . 1 : Ցօհ . ժ . 40 :

Բ Գլ . Ժր . 15 :

Ծննդ . ա . 27 : ե . 2 : Մաղ . բ . 15 :

Ծննդ . բ . 24 : Մար . ժ . 8 . 5—9 : Եփես . ե . 31 : Ես Կոր . գ . 16 : ե . 2 :

Ցամ Տեառն 33

ՂՐ Օր · Խդ · 1 · ԳԼ · Ե · 31 ·

Ե ԳԼ · Ե · 32 · Մար · Ժ · 11 · Ղս · Ժգ · 18 · ա Կոր · է · 10 · 11 ·

Ը Ածակ · Իա · 19 ·

Ի Կոր · է · 2 · 7 · 9 · 17 ·

Ժ ա Կոր · է · 32 · 34 · Թ · 5 · 15 ·

Ի Մար · Ժ · 13 · Ղս · Ժը · 15 ·

Լ ԳԼ · Ժը · 3 ·

Խ Մար · Ժ · 17 · Ղս · Ժը · 18 ·

Ծ Ղս · Ժ · 25 ·

Կ Եւ · Ի · 13 · Բ Օր · Ե · 17 ·

Հ ԳԼ · Ժե · 4 ·

Ձ Ղա · Ժթ · 18 · ԳԼ · Իր · 39 · Հռով · Ժգ · 9 · Գաղ · Ե · 14 · Ճակ · Բ · 8 ·

Ղ ԳԼ · Գ · 20 · Ղս · Ժը · 33 · Ժգ · 9 · Գար · Բ · 45 · Գ · 34 · 35 · ա Տիմ · Գ · 18 · 19 ·

մարմին . ուրեմն ան որ Աստուած 7 միաւորեց՝ մարդ թող չդատէ : Ըսին իրեն . ՂՀապա Մովսէս ինչո՞ւ պատուիրեց արձակման թուղթ 8 տալ՝ և արձակել : Ըսաւ անոնց . Մովսէս ձեր սրտերուն կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ կնիկներնիդ արձակել . բայց սկիզբէն անանկ չեղաւ : 9 Սակայն ձեզի կ'ըսեմ . Ով որ առանց պոռնկութեան պատճառի իր կնիկը արձակէ՝ և ուրիշ մը առնէ , շնութիւն կ'ընէ . և ով որ արձակուածը 10 ծը առնէ՝ շնութիւն կ'ընէ : Իր աշակերտները ըսին իրեն . Եթէ որ ատանկ բան կայ էրկան ու կնկան մէջտեղը՝ չամուսնանալը աղէկ է : 11 Եւ ինքը անոնց ըսաւ . Ոչ ամէնը բաւական չեն ատ բանին . հապա 12 անոնք՝ որոնց տրուած է : Ինչու որ կան ներքինիներ , որ էրէխայ մօրը որովայնէն անանկ ծնան . և կան ներքինիներ , որ մարդոցմէ ներքինի եղան . և կան ներքինիներ՝ որ ինքզինքնին ներքինի ըրին երկնից թագաւորութեանը համար . ով որ կրնայ տանիլ , թող տանի :

13 Ան ատեներ մանր տղաք բերուեցան իրեն , որ անոնց վրայ ձեռք դնէ՝ և աղօթք ընէ , ու աշակերտները կը յանդիմանէին զանոնք : 14 Բայց Յիսուս ըսաւ . Թողէք տուէք ինծի մանր տղոցը , և մի արգիլէք ատոնք ինծի գալէն . ինչու որ Երկնից թագաւորութիւնը ատանկներուն է : 15 Եւ անոնց վրայ ձեռք դնելէն ետև՝ դնաց անկէ :

16 Ան եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր . Բարի վարդապետ՝ ինչ բարի գործեմ , որ յաւիտենական 17 կեանքը ընդունիմ : Եւ անիկա ըսաւ անոր . Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես . մէկէն չի բարի չկայ , որ Աստուած . հապա թէ որ կ'ուզես կեանքը մտնել , 18 պատուիրանքները պահէ : Ըսաւ անոր . Որո՞նք . և Յիսուս ըսաւ . Սպանութիւն մի ըներ , Շնութիւն մի ըներ , Գողութիւն մի ըներ , Սուտ վկայութիւն մի 19 ըներ , Փու հայրդ ու մայրդ պատուէ , և Փու ընկերդ քու անձիդ 20 պէս սիրէս : Պատանին ըսաւ անոր . Ասոնք ամէնը մանկութենէս ի վեր պահեր եմ . ալ ի՞նչ բա- 21 նով պակաս եմ : Ըսաւ անոր Յիսուս . Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ , Ղգնա ունեցածդ ծախէ , և տուր աղքատներուն , ու երկինքը գանձ պիտի ունենաս , և 22 եկուր իմ ետևէս : Երբոր պատանին ան խօսքը լսեց՝ տրտմած գնաց . ինչու որ շատ ստացուածք ունէր :

23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի՝ որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ 24 երկնից թագաւորութիւնը : Դարձեալ կ'ըսեմ ձեզի . Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի , քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ : 25 Աշակերտները երբոր լսեցին , շատ զարմացան՝ ու ըսին . Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ : 26 Յիսուս անոնց նայելով՝ ըսաւ . Մարդոց կողմանէ անկարելի է՝ բայց Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է :

27 Ան ատեներ Պետրոս պատասխանելով՝ ըսաւ անոր . Ահա մենք ամէն բան թողուցինք՝ և քեզ եկանք . ուստի մեզի ի՞նչ 28 պիտի ըլլայ : Ըսաւ անոնց Յիսուս . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , թէ դուք որ իմ ետևէս եկաք , †միւսանգամ ծնունդին՝ երբոր Որդին մարդոյ իր փառաց աթոռը նստի , Ղդուք ալ տասներկու աթոռներու վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տասներկու 29 ցեղերը դատելու : Եւ ով որ թողուց տուներ , կամ եղբայրներ , կամ քոյրեր , կամ հայր , կամ մայր , կամ կին , կամ որդիներ , կամ արտեր՝ իմ անուանս համար , հարիւրապատիկ պիտի առնէ , և յաւիտենական կեանք պիտի ժա- 30 ռանգէ : Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յետին , և յետիններ՝ առաջին :

ԳԼ · Ի

1 Քրիստոս այդ իր բանարկներու առակով կը ցուցնէ թէ՝ Աստուած բնաւ մէկ մարդու մը պարտական չէ · 17 իր չարչարանքը կը նախատեսէ · 20 Զերեդեսի որդւոցը մօրը պատասխան տալով կը սորվեցնէ իր աշակերտներուն խոնարհ ըլլալ · 30 ու երկու կոյրերու աչքերը կը բանայ :

1 Վասնզի երկնից թագաւորութիւնը տանուտէր մարդու մը նման է , որ առտուանց կանուխ ելաւ՝ իր այգիին համար բանուորներ բռնե- 2 լու : Եւ բանուորներուն հետ օրը մէկ դահեկանի մը խօսք կապեց , ու 3 զանոնք խրկեց իր այգին : Եւ ժամը իրեքին տասնինները ելաւ՝ ուրիշները տեսաւ , որ շուկային մէջ 4 պարապ կայներ էին . Ու ըսաւ անոնց . Դուք ալ դացէք իմ այգիս , և ինչ որ արժան է կու տամ ձեզի : 5 Անոնք ալ դացին . ու նորէն ժամը վեցին և ժամը իննին տասնը- 6 ները ելաւ՝ անանկ ըրաւ : Եւ ժամը տասնմէկին տասնինները ելաւ , ուրիշները գտաւ՝ որ պարապ կայներ էին . ու անոնց ըսաւ . Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայ- 7 ներ էք : Ըսին իրեն . Ոնոր հասար որ մէկը մեզ վարձքով չբրո-

Ցամ Տեառն 33

Ե ԳԼ · Ժգ · 22 · Մար · Ժ · 24 · ա Կոր · ա · 26 · ա Տիմ · Գ · 9 · 10 ·

* Ո՛ահ պարանը

Ղ Ժբ · 14 · Ցոր · Խր · 2 · Բ · 17 · Զաք · Ը · 6 · Ղս · ա · 37 · Ժը · 27 ·

Ղ Մար · Ժ · 28 · Ղս · Ժը · 28 ·

Ն ՐՕր · Լգ · 9 · ԳԼ · Դ · 20 · Ղս · Ե · 11 ·

† Ցահն · վերածնունդը Ջ

Ը ԳԼ · Ի · 21 · Ղս · Իբ · 28 , 29 , 30 · ա Կոր · Գ · 2 , 3 · Ցայս · Բ · 26 ·

- Մար · Ժ · 29 , 30 · Ղս · Ժը · 29 , 30 · Ը ԳԼ · Ի · 16 · Իս · 31 , 32 · Մար · Ժ · 31 · Ղս · Ժգ · 30 ·

Ցամի Տեառն 33

նեց . ըսաւ անոնց . Դուք ալ այդին գացէք , ու ինչ որ արժան է՝ պիտի առնէք : Եւ իրիկուն որ եղաւ , այգիին տէրը իր տնտեսին ըսաւ . Բանւորները կանչէ , և անոնց վարձքը տուր , եւ քիններէն 9 սկսելով մինչև առջիններըը : Ու երբոր եկան անոնք որ ժամը տասնումէկին էին , մէյմէկ դա- 10 հեկան առին . Եւ առջինները գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն , ու անոնք ալ առին մէյմէկ 11 դահեկան : Երբոր առին , տանը տիրոջը դէմ տրտունջ կ'ընէին՝ ու 12 կ'ըսէին թէ՝ Ասոնք ետքինները մէկ ժամ մը գործեցին , և անոնք հաւասար ըրիր մեզի , որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշե- 13 ցինք : Ընդհակառակն տուաւ անոնցմէ մէկուն՝ ու ըսաւ . Ընկեր՝ ես քեզ չեմ զրկեր . չէ՞ որ դուն իմ հետս մէկ դահեկանի մը խօսք 14 կապեցիր . Ա՛ռ քուկդ՝ ու գնա , կ'ուզեմ որ ասոր ետքինին՝ քեզի 15 —Հով. Թ. 21 ; պէս տամ : —Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ բանեբուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու . կամ թէ Բ. Օր. Ժե. 9 ; Առակ. Իգ. 6 ; Գլ. գ. 23 ; Գլ. Ժթ. 30 ; Գլ. Իբ. 14 ; Ա Մար. Ժ. 32 ; Ղուկ. Ժը. 31 ; Յով. Ժ. 12 ; Ղկ. Ժգ. 21 ; աչքդ չա՞ր է՝ որ ես 16 բարեբար եմ : Ա՛յսպէս յետիններըը առաջին պիտի ըլլան , և առաջիններըը՝ յետին . Ա Գլ. Ժ. 16 ; Ղուկ. Ժը. 28, 30 ; Գոր. գ. 13 ; Ա Մար. Ժ. 35 ; Բ Գլ. գ. 21 ; Ժ Գլ. Ժթ. 28 ; Է Գլ. Իզ. 39 , 42 ; Մար. Ժգ. 36 ; Ղուկ. Իբ. 42 ; Յով. Ը. 11 ; Ղ Գոր. Ժբ. 50 ; Ա Գոր. Ժբ. 2 ; Հով. Բ. 17 ; Բ Կոր. ա. 7 ; Յայտ. ա. 9 ; բազում անոնք որ առաջին են՝ ետքինները պիտի ըլլան , և ետքինները՝ առաջին : 17 Ու Երուսաղէմ երթալու վրայ , Յիսուս առանձին առաւ տասներկու աշակերտները ճամբան ու ըսաւ անոնց . 18 Ահա Երուսաղէմ կ'ելլենք , և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն , և զանիկայ մահուան պիտի դատապարտեն , 19 և զանիկայ հեթանոսներուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու , և խաչը հանելու . ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ : 20 Եկաւ ատենը Զեբեդեոսին որդւոցը մայրը իր որդւոցը հետ եկաւ անոր , երկրպագութիւն կ'ընէր՝ ու 21 բան մը կը խնդրէր անկէ : Ան ալ ըսաւ անոր . Ի՞նչ կ'ուզես : Ըսաւ անոր . Ըսէ՝ որ ասոնք իմ երկու որդիքս Ա մէկը աջ կողմդ , և մէկալը ձախ կողմդ նստին քու թագաւո- 22 րութեանդ մէջ : Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . Ձեր գիտեր՝ ինչ կը խնդրէք . կրնա՞ք խմել Ես դաւաթը՝ որ ես պիտի խմեմ , կամ Ես մկրտութիւնովը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ . 23 ըսին իրեն . Կրնանք . Եւ ըսաւ անոնց . Իմ դաւաթս պիտի խմէք , և ան մկրտութիւնովը՝ որ ես մկրտուելու եմ , պիտի մկրտուիք . բայց իմ աջ կողմն ու ձախ կողմն նստիլը՝ իմն չէ տալը , հապա որոնց որ պատրաստուած է իմ 24 Հօրմէս : Ու երբոր տասը լսեցին , անոնք Եղբայրներէն վրդովեցան 25 բայրներուն վրայ : Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք՝ ու ըսաւ . Գիտէք որ ազգաց իշխանները կը տիրեն անոնց , և մեծաները կ'իշխեն անոնց . Բայց ձեր մէջը հանանկ պիտի չըլլայ . հապա 26 ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ , թող անիկայ ձեր սպասաւորը ըլ- 27 լայ . Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ , թող անիկայ ձեր 28 ծառան ըլլայ : Ինչպէս Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու , հապա սպասաւորութիւն ընելու , և իր կեանքը Հ. Պետ. Ե. 8 ; Գլ. Իգ. 11 ; Մար. Թ. 34 ; Ժ. 43 ; Ղկ. Ժբ. 4 ; Ց Ցոհ. Ժգ. 4 ; Փիլ. բ. 7 ; Ղուկ. Իբ. 27 ; Ցոհ. Ժգ. 14 ; Նե. Ծգ. 10 , 11 ; Դան. Թ. 24 , 26 ; Ցոհ. Ժա. 51 , 52 ; Ա Տիմ. բ. 6 ; Տիտ. բ. 14 ; Ա Պետ. ա. 19 ; Ղկ. Իգ. 28 ; Հով. Ե. 15 , 19 ; Երր. Թ. 28 ; Մար. Ժ. 46 ; Ղուկ. Ժբ. 35 ; Ղկ. Թ. 27 ; Հ. Պետ. Ե. 3 ; Գլ. Իգ. 11 ; Մար. Ժգ. 1 ; Ղուկ. Ժբ. 29 ; Բ Ջաք. Ժգ. 4 ; Ա Թես. Կ. 11 ; Ջաք. Թ. 9 ; Ցոհ. Ժբ. 15 ; իրենց ծառայ եղաւ , 29 Ու երբոր անոնք Երիքովէն ելան , մեծ բազմութիւն անոր ե- 30 տևէն գնաց : Եւ ահա ճամբուն քովը նստած էին երկու կոյր որ լսեցին թէ Յիսուս կ'անցնի , աղաղակեցին ու ըսին . Ողորմէ՛ 31 մեզի Տէր՝ Որդի Դաւթի : Եւ բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք , որ լռեն . բայց անոնք՝ ալ աւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին . Ողորմէ՛ մեզի Տէր՝ որդի Դաւ- 32 թի : Եւ Յիսուս կանգ առնելով կանչեց զանոնք՝ ու ըսաւ . Ի՞նչ 33 կ'ուզէք որ ձեզի ընեմ : Ըսին անոր . Տէր՝ որ աչքերնիս բա- 34 նայ : Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ . և շուտ մը անոնց աչքերը բացուեցան , ու անոր ետևէն գացին :

ԳԼ . ԻԱ

1 Քրիստոս իշու վրայ հնձած՝ Երուսաղէմ կը մտնէ . 12 սուճարին դուրս կը վռնտէ տուտուզ ընողները . 17 Թզենին կ'անիծէ . 23 կը պատասխանէ քահանաներըը ու ծերերը , 28 և կը յանդիմանէ զանոնք՝ օրինակ բերելով նոր մը երկու որդիներըը , 35 ու ան մշակներըը՝ որ իրենց խրկուածներըը սպաննեցին :

1 Ու երբոր Երուսաղէմին մօտեցան , ու եկան Բեթփագէ դէպ Ի Ձիթենեաց լեռը , ան ատենը Յիսուս իր աշակերտներէն երկուքը 2 խրկեց . Եւ ըսաւ անոնց . Գացէք ատ ձեր դիմացի գեղը , և շուտ մը պիտի գտնէք կապած էշ մը՝ ու անոր հետ աւանակ մը . արձրկեցէք 3 —Նդհ՛ ու բնծի՛ բերէք . Եւ թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ , ըսէ՛ք թէ Տէրոջը պէտք են . և շուտ մը 4 անոնք պիտի խրկէ : Ասիկա եղաւ , որ կատարուի մար- 5 գարէին խօսքը՝ որ կ'ըսէ . Ըսէ՛ք Սիոնի աղջկանը . Ահա՛ քու թա-

Ցամի Տեառն 33

դաւորդ քեզի կու դայ , հեզ՝ ու իշու վրայ հեծած՝ և իշու ձագի
6 աւանակի վրայ ։ Երկակերտները գացին , և ինտոր որ Յիսուս իրենց
7 պատուիրեր էր , բերին . Ու բերին էշը և աւանակը , և Հանոնց վրայ իրենց հանդերձները դրին , ու
8 Նստաւ անոնց վրայ ։ Եւ ժողովուրդէն շատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին , և Ուրիչները ծառերէն ճիւղեր կը կտրէին , ու ճամբուն վրայ կը տա-
9 րածէին ։ Եւ ժողովուրդները որ առջևէն ու ետևէն կ'երթային , կ'աղաղակէին ու կ'ըսէին . Ովսաննա որդւոյ Դաւթի . Օրհնեալ է ան՝ որ Տէրոջը անունովը կու գայ . Ովսաննա ի բարձունս ։
10 Ու երբոր անիկայ Երուսաղէմ մտաւ , բոլոր քաղաքը շարժեցաւ ,
11 ու ըսաւ . Ո՞վ է աս ։ Եւ ժողովուրդները ըսին . Անիկայ Յիսուս Մարգարէն է՝ Գալիլեայի Նազարեթէն ։
12 Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ , ու դուրս հանեց ամէն անոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին , և Ստակ փոխողներուն սեղանները՝ ու աղաւնի ծախողներուն աթոռները կործաց
13 նեց . Եւ ըսաւ անոնց . Գրուած է Թէ՝ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի , բայց դուք աւիկայ աւազակներու այր ըրիք ։
14 Եւ տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան իրեն , և բժշկեց զանոնք ։
15 Երբոր քահանայապետները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշքները , և տղաքը որ տաճարին մէջ կ'աղաղակէին ու կ'ըսէին , Ովսաննա որդւոյ Դաւթի , բարկացան .
16 Ու ըսին անոր . Կը լսե՞ս ինչ կ'ըսեն աստոնք . և Յիսուս ըսաւ անոնց . Այո . բնաւ չէք կարդացեր , Թէ Մանկանց ու կաթնկերը տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր ։
17 Եւ Թողուց անոնք՝ քաղաքէն դուրս Բեթանիա ելաւ , ու գիշերը հոն կեցաւ ։
18 Եւ առտուանց երբոր քաղաքը
19 կը դառնար , անօթեցաւ . Ու ճամբուն վրայ թզենի մը տեսնելով՝ գովը գնաց , և անոր վրայ տերևներէն ի զատ բան մը չգտաւ . ու ըսաւ անոր . Ասկէ ետև քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան . և իսկոյն թզենին չորցաւ ։
20 Եւ աշակերտները երբոր տեսան , զարմացան ու ըսին , Թէ Ինտոր թզենին
21 շուտ մը չորցաւ ։ Յիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Թէ որ հաւատք ունենաք՝ ու չերկմտիք , չէ թէ միայն ատ թզենիին Եղեր պիտի ընէք , Հապա նաև՝ Թէ որ ատ լեռանը ըսէք՝ Ելիր ու ծովը
22 ինկիր , պիտի ըլլայ ։ Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք , պիտի առնէք ։
23 Ու երբոր անիկայ տաճարը եկաւ , քահանայապետները և ժողովուրդին ծերերը անոր մատեան՝ երբոր կը սորվեցընէր , ու Ըսին . Ինչ իշխանութիւնով կ'ընես ատ բաները , և ո՞վ տուաւ քեզի
24 ատ իշխանութիւնը ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց . Ես ալ ձեզի բան մը հարցընեմ , որ եթէ անիկայ ինծի ըսէք , ես ալ ձեզի պիտի ըսեմ Թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ ատ բաները ։
25 Յովհաննէսին մկրտութիւնը ո՞ւրկից էր . երկինքէ՞ն Թէ մարդոցմէ . և անոնք ինքզինքին կը խորհէին՝ ու
26 կ'ըսէին . Թէ որ ըսենք՝ Երկինքէն , մեզի պիտի ըսէ Թէ՝ Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր . իսկ Թէ որ ըսենք՝ Մարդոցմէ , ժողովուրդէն կը վախնանք , ինչու որ Հրոլորն ալ Յովհաննէսը իրրև
27 մարգարէ կ'ընդունին ։ Եւ պատասխան տալով Յիսուսին՝ ըսին . Չենք գիտեր . և ինքը ըսաւ անոնց . Ես ալ ձեզի չեմ ըսեր Թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ ատ բաները ։
28 Բայց ինչպէս կ'երևնայ ձեզի . Մէկ մարդ մը երկու որդի ունէր , ու գնաց առջինին ըսաւ . Որդեակ՝ գնա այսօր այգիս մէջ գործէ ։
29 Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Չեմ ուզեր երթալ , բայց
30 ետքը զղջացաւ՝ ու գնաց ։ Մէկալին ալ գնաց , և անանկ ըսաւ . անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Կ'երթամ՝ տէր . և չգնաց ։
31 Հիմա երկուքէն որը Հօրը կամքը կատարեց . ըսին անոր՝ Առջինը . Յիսուս ըսաւ անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը ։
32 Վասնզի Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի , և դուք անոր չհաւատացիք . բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր հաւատացին . և դուք տեսաք՝ ու ետքը չզղջացիք անոր հաւատալու ։
33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէք . Մէկ տանուտէր մարդ մը կար՝ Որ այգի մը տնկեց , ու ցանկով պատեց զանիկայ , և անոր մէջը Ջհան փորեց , ու աշտարակ շինեց . և զանիկայ մշակներու յանձնեց , ու

Ցամի Տեառն 33

Յակ . ա . 6 ։ Նախոր . Ժգ . 2 ։ Ել . է . 7 ։ Մար . ժա . 24 ։ Ղու . ժա . 9 ։ Ցակ . և . 16 ։ Ացհ . գ . 22 ։ և . 14 ։ Մար . ժա . 27 ։ Ղու . ի . 1 ։ Ել . ը . 14 ։ Գոր . գ . 7 ։ է . 27 ։

Գե . Ժգ . 5 ։ Մար . գ . 20 ։ Ղու . ի . 6 ։

Ցամի Տեառն
33

34 Բայց երբ տեսան Փարիսեցիքը թէ
զլռեցոյց զՍադուկեցիսն՝ ժողովեցան
35 ի միասին։ Եւ հարցոյց զնոսա մի ի
նոցանէ օրինաց վարդապետ՝ փորձե-
36 լով զնա եւ ասէ. Վարդապետ, ո՞րա-
37 տիկ է պատուիրան մեծ յօրինացն։
Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրեսցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ քումմէ,
եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յա-
38 մենայն մտաց քոց։ Սա է մեծ եւ
39 առաջին պատուիրանն։ Եւ երկրոր-
դորդ նման նմին՝ սիրեսցես զընկե-
րակից քո իբրեւ զանձն քո։
40 Յերկուսին պատուիրանսդ կայ ա-
մենայն օրէնք եւ մարգարէքն։
41 Եւ ի ժողովել Փարիսեցւոցն՝ հարց-
42 ոյց զնոսա Յիսուս եւ ասէ. Զի՞նչ
կարծիք ունիք վասն Քրիստոսի, թէ
որո՞ւ որդի է։ Ասեն ցնա. Դաւթի։
43 Ասէ ցնոսա. Զիա՞րդ ուրեմն Դաւիթ
Հոգւովն կոչէ զնա Տէր՝ ասելով.
44 Ասաց Տէր Տեառն իմում. Նըս-
տեաց ընդ աջմէ իմմէ, մինչեւ դիցեմ
զթշնամիս քո սաստկութիւն ոտից
քոց։
45 Եթէ ուրեմն Դաւիթ կոչէ զնա Տէր,
46 զիա՞րդ որդի նորա է։ Եւ ոչ ոք կա-
րաց պատասխանի տալ նմա բան։
Եւ ոչ ոք համարձակեցաւ յաւուրցն
յայնցմէ հարցանել նմա զբան։

Գլ. ԻԲ

1 Յայնժամ Յիսուս խօսեցաւ ընդ
2 բազումս եւ ընդ աշակերտս իւր՝
3 ասելով. Ընդ աթոռ Մովսիսի նըս-
տան դպիրքն եւ Փարիսեցիքն։ Ա-
մենայն զոր ինչ ասիցեն ձեզ պահել,
պահեցէք եւ արարէք. բայց ըստ գոր-
ծոց նոցա մի արարէք, զի ասեն եւ
4 ոչ առնեն։ Կապեն զբեռինս ծանրս
եւ դժուարակիրս, եւ արկանեն ի ու-
սըս մարդկան. եւ իւրեանք մատամբ
5 իւրեանց ոչ կամին շարժել զնոսա։
Եւ զամենայն գործս իւրեանց առնեն
յայն միտս, զի երեւեսցին մարդկան.
6 լայնացուցանեն զպատուիրանս իւ-
րեանց, եւ ընդարձակեն զծայրս հա-
7 գուստից իւրեանց։ Սիրեն զառաջին
տեղիս ընդ ճաշիսն, եւ զառաջին աթո-
ռսն ի ժողովարանսն, եւ զողջոյնսն
8 յերեսաց ի հրապարակսն, եւ կոչել
զնոսա մարդկան՝ Ռաբբի, Ռաբբի։
9 Դուք ոչ կոչեսջիք Ռաբբի, զի մի
միայն է վարդապետ ձեր, եւ դուք
10 ամենեքեան եղբարք էք։ Եւ զհայր մի
կոչեսջիք ձեզ յերկրի, զի մի միայն է
11 Հայր ձեր, որ յերկինս է։ Եւ մի կոչե-
սջիք զձեզ վարդապետս, զի վարդա-
12 պետ ձեր մի միայն է, Քրիստոս։ Եւ
որ մեծ իցէ ի ձեզ, եղիցի ձեզ ծա-
13 ռայ։ Եւ որ հանգուցանիցէ զանձն
իւր, խոնարհեսցի, եւ որ խոնարհե-
ցուցանիցէ զանձն իւր, հանգուցա-
նիցի։
14 Վա՛յ ձեզ դպիրք եւ Փարիսեցիք
ագահք, որ կլանէք զտունս այրեաց,
եւ երկայնակի աղօթս առնէք. վասն
այնորիկ առաւել դատաստան կրիցէք։
15 Վա՛յ ձեզ դպիրք եւ Փարիսեցիք
կեղծաւորք, որ պտըտիք զծով եւ զցա-
մաքս, զի արասցէք զմի հետեւորդ,
եւ յորժամ եղիցի՝ արասջիք զնա որ-
դի գեհենի, քան զձեզ կրկնապատիկ։
16 Վա՛յ ձեզ առաջնորդք կուրք, որ
ասէք. Որ երդնուցուն զտաճարաւն,
ոչինչ է. եւ որ երդնուցուն ոսկւով
տաճարին, պարտական է։
17 Յիմարք եւ կուրք, զո՞ր մեծ է, ոսկի՞
թէ տաճարն որ սրբէ զոսկին։
18 Եւ որ երդնուցուն զսեղանովն, ոչինչ
է. եւ որ երդնուցուն ընծայիւն որ
19 վերայ նորա, պարտական է։ Կուրք,
զո՞ր մեծ է, ընծայն թէ սեղանն որ
20 սրբէ զընծայն։ Որ երդնուցուն զսե-
ղանովն, երդնուցուն եւ ամենայն
21 ինչ որ վերայ նորա։ Եւ որ երդնուցուն
տաճարաւն, երդնուցուն եւ նմին որ
22 բնակեալ է ի նմա։ Եւ որ երդնուցուն
երկնիւք, երդնուցուն աթոռոյ Աստ-
ուծոյ եւ նմին որ նստի ի վերայ նո-
23 րա։ Վա՛յ ձեզ դպիրք եւ Փարիսեցիք
կեղծաւորք, որ տայք զտասանորդս
անիսոնի եւ սամիթայ եւ կումինի, եւ
թողուք զծանրագոյնսն օրինացն՝ զդա-
տաստանն եւ զողորմութիւնն եւ զհա-
24 ւատս. զայս պարտ էր առնել, եւ զայն
ոչ թողուլ։ Կուրք առաջնորդք, որ
զմիժն ջրոյ խափանէք, եւ զուղտն
կլանէք։
25 Վա՛յ ձեզ դպիրք եւ Փարիսեցիք
կեղծաւորք, որ սրբէք զկողմն բաժա-
կանն եւ զկերակրոցն, եւ ներքինն
լցեալ է յանիրաւութենէ եւ յանկա-
26 րողութենէ։ Փարիսեցի կո՛յր, սրբեա
նախ զներքինն բաժակին եւ կերակ-
րոցն, զի եղիցի եւ արտաքինն նոցա
սրբեալ։
27 Վա՛յ ձեզ դպիրք եւ Փարիսեցիք
կեղծաւորք, որ նմանիք գերեզմանս
սպիտակեալս, որ արտաքուստ երե-
ւին գեղեցիկք, եւ ներքուստ լցեալ
28 են ոսկերօքն մեռելոց եւ ամենայն
պղծութեամբ։ Նոյնպէս եւ դուք ար-
տաքուստ երեւիք մարդկան արդարք,
ներքուստ լցեալ էք կեղծեաւ եւ ան-
29 օրինութեամբ։ Վա՛յ ձեզ դպիրք եւ
Փարիսեցիք կեղծաւորք, որ շինէք
զգերեզմանս մարգարէիցն եւ զար-
դարէք զյուշարձանս արդարոցն,
30 եւ ասէք. Եթէ էաք մեք յաւուրս հա-
րանցն մերոց, ոչ էաք ընկերակիցք
նոցա ի սպանմունս մարգարէիցն։
31 Վասն որոյ վկայէք ինքեանց, թէ որ-
դիք էք սպանելոցն զմարգարէսն։
32 Եւ դուք լերուք զհամարս հարանցն
ձերոց։
33 Օձք, ազգ իժից, զիա՞րդ խոյս տաք
ի դատաստանէ գեհենի։
34 Վասն որոյ ահա ես առաքեմ առ ձեզ
զմարգարէս եւ զիմաստունս եւ զդպիր-
ս, եւ ի նոցանէ սպանանիցէք եւ խա-
չիցէք, եւ ի նոցանէ մտերիցէք ի ժո-
ղովարանս ձեր եւ հալածիցէք ի քա-
ղաքէ յքաղաք։
35 Զի եկեսցէ ի ձեզ ամենայն արիւն
արդար, որ հեղաւ ի վերայ երկրի,
ի սպանմանէ Աբելի արդարոյ մինչեւ
ի սպանմունս Զաքարիայ որդւոյ Բա-
րաքիայ, զոր սպանէք միջի տաճա-
րին եւ զսեղանոյն։
36 Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այս ամե-
նայն ազգիս։
37 Երուսաղէմ, Երուսաղէմ, որ սպա-
նանես զմարգարէսն եւ քարկոծես
զառաքեալսն առ քեզ, քանի՞ անգամ
կամեցայ ժողովել զորդիս քո որպէս
հաւաքէ հաւ զձագս իւր ընդ թեւս,
եւ ոչ կամեցարուք։
38 Ահա թողեալ լիցի ձեզ տունն ձեր
39 աւերակ։ Ասեմ ձեզ, թէ ոչ տեսանիք
զիս յայսմհետէ մինչեւ ասիցէք. Օրհ-
նեալ որ գայ յանուն Տեառն։

Գլ. ԻԳ

1 Եւ ելեալ Յիսուս ի տաճարէն՝ երթ-
2 եր։ Եւ մերձեցան աշակերտք նորա
ցուցանել նմա զշինուածս տաճարին։
3 Եւ նա ասէ ցնոսա. Ոչ տեսանէք զա-
մենայն զայս։ Ամէն ասեմ ձեզ, թէ
ոչ թողցի աստ քար ի քարի, որ ոչ
4 քակտեսցի։ Եւ նստեալ նորա ի լերինն
Ձիթենեաց, մերձեցան աշակերտքն
առ նա առանձինն եւ ասեն. Ասա մեզ,
յորո՞ժամ եղիցին այսոքիկ, եւ զի՞նչ
նշան գալստեան քո եւ կատարման
5 աշխարհի։ Եւ պատասխանի տուեալ
Յիսուս ասէ ցնոսա. Տեսէք զի մի ոք
6 մոլորեցուսցէ զձեզ։ Զի բազումք
եկեսցեն յանուն իմ՝ ասելով. Ես եմ
Քրիստոս, եւ զբազումս մոլորեցու-
7 սանիցեն։ Եւ լուիցէք պատերազմս
եւ զլուր պատերազմաց։ Տեսէք մի
խռովիցիք, զի պարտ է այսոքիկ լինել,
եւ ոչ է դեռ վախճան։ Զի յարիցէ ազ-
գաց ազգ եւ թագաւորութիւն ընդ
թագաւորութեան, եւ եղիցին սովք
եւ մահք եւ շարժմունք երկրաց ըստ
8 տեղեաց։ Եւ այսոքիկ ամենայն սկիզբ
ցաւոց են։
9 Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նե-
ղութիւն, եւ սպանանիցեն զձեզ, եւ
եղիջիք ատելիք ամենայն ազգաց վա-
10 սն անուան իմոյ։ Եւ յայնժամ բազում-
քն գայթակղեսցին, եւ միմեանս մատ-
նեսցեն, եւ միմեանս ատեսցեն։
11 Եւ բազումք սուտ մարգարէք յա-
րիցեն, եւ մոլորեցուսցեն զբազումս։
12 Եւ վասն բազմանալոյ անօրինու-
թեան՝ սառեսցի սէր բազմաց։
13 Եւ որ համբերեսցէ մինչեւ ի կա-
տարած, նա կեցցէ։
14 Եւ քարոզեսցի զաւետարանդ սա
ամենայն աշխարհի, ի վկայութիւն
ամենայն ազգաց, եւ յայնժամ եկեսցէ
կատարած։
15 Եւ յորժամ տեսանիցէք զպղծու-
թիւն կործանման զոր ասաց Դանիէլ
մարգարէ, որ կայցէ ի տեղւոջ սրբու-
թեան (որ ընթեռնոյ՝ իմասցի)
16 յայնժամ որ ի Հրէաստան են՝ փա-
խեսցին ի լերինս,
17 եւ որ ի տանիսն՝ մի իջցէ առնուլ
զինչ ինչ ի տանէ իւրմէ,
18 եւ որ ի դաշտին՝ մի դարձցի ի
19 հետ առնուլ զհանդերձս իւր։ Վա՛յ
ձեզ յղեացս եւ կաթնասուս յաւուրս
20 յայնոսիկ։ Աղաչեցէք զի մի եղիցի
փախուստ ձեր ձմերայն կամ շաբաթ-
21 ի։ Զի յայնժամ եղիցի նեղութիւն
մեծ, որպիսի ոչ եղեւ յաշխարհի ի
սկզբանէ մինչեւ ցայսմ ժամանակ,
եւ ոչ եղիցի։
22 Եւ եթէ ոչ կրճատեսցին աւուրքն
յայնոսիկ, ոչ կեցցէ ամենայն մարմին.
այլ վասն ընտրելոցն կրճատեսցին
23 աւուրքն յայնոսիկ։ Յայնժամ եթէ
ոք ասիցէ ձեզ. Ահա աստ է Քրիստոս,
կամ անդ, մի հաւատասջիք։
24 Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ
սուտ մարգարէք, եւ տացեն նշանս
մեծամեծս եւ հրաշս, զի մոլորեցու-
սանիցեն, եթէ հնարաւոր իցէ, եւ զընտ-
25 րեալսն։ Ահա նախասացի ձեզ։
26 Եթէ ասիցեն ձեզ. Ահա յանապատի
է, մի ելանէք. Ահա ի սենեակս, մի
27 հաւատասջիք։ Զի որպէս փայլատակ
ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի
28 մուտս, նոյնպէս եղիցի գալուստ որ-
դւոյ մարդոյ։ Ուր եւ իցէ դի, անդ
ժողովեսցին եւ արծուիք։
29 Եւ յանդիման եղելոցն աւուրցն յա-
յնոսիկ՝ արեգակն խաւարեսցի, եւ լու-
սին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք
անկցին յերկնից, եւ զօրութիւնք
30 երկնից շարժեսցին։ Եւ յայնժամ
երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յեր-
կինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն
ազգք երկրի, եւ տեսցեն զորդի մարդ-
ոյ գալ ի վերայ ամպոց երկնից զօրու-
թեամբ եւ փառօք բազմօք։
31 Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր
հանդերձ հնչակաւ մեծաւ, եւ ժողո-
վեսցեն զընտրեալսն նորա ի չորից
հողմոց, յերից կողմանց երկնից մին-
չեւ ի ծագս նոցա։
32 Եւ ի թզենւոյն առակ ուսարուք.
Յորժամ ոստ նորա մատղաշ լինիցի
եւ տերեւս ածիցէ, գիտէք թէ մերձ է
33 ամառն։ Նոյնպէս եւ դուք յորժամ
տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք
թէ մերձ է առ դրունսն։
34 Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազ-
գս այս մինչեւ զայս ամենայն եղիցի։
35 Երկինք եւ երկիր անցցեն, եւ բա-
նք իմ ոչ անցցեն։
36 Եւ զաւուրն յայնմիկ եւ զժամուն
ոչ ոք գիտէ, եւ ոչ հրեշտակք երկնից,
այլ միայն Հայր իմ։
37 Եւ որպէս աւուրքն Նոյի, նոյնպէս
եղիցի գալուստ որդւոյ մարդոյ։
38 Զի որպէս էին յաւուրսն յառաջ
ջրհեղեղին, ուտէին եւ ըմպէին, կա-
նայք առնուին եւ տային առ այր, մին-
չեւ յաւուրն յորում մտանէր Նոյ ի
39 տապանն, եւ ոչ գիտացին մինչեւ եկն
ջրհեղեղն եւ տարաւ զամենեսեան,
նոյնպէս եղիցի եւ գալուստ որդւոյ
40 մարդոյ։ Յայնժամ երկու եղիցին ի
դաշտի, մին առցի եւ մին թողցի։
41 Երկու աղախնայք աղային ի միում
ջրաղացի, մին առցի եւ մին թողցի։
42 Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք յո-
րո՞ժամ Տէր ձեր գայ։
43 Զայս գիտասջիք, եթէ գիտասցէ
տէր տանն յորո՞ժամ գողն գայ, արթո՛ւն
կացցէ եւ ոչ թողցէ պատուհասել զտու-
44 նն իւր։ Վասն որոյ եւ դուք պատրաստ
եղերուք, զի յորում ժամու ոչ կարծէք,
45 որդի մարդոյ գայ։ Ո՞վ իցէ ծառայ
հաւատարիմ եւ իմաստուն, զոր կա-
ցոյց տէր նորա ի վերայ ծառայից իւ-
րոց, տալ նոցա զկերակուր ի ժամու
46 իւրում։ Երանի՛ ծառայի այնմիկ, զոր
յորժամ գայցէ տէր նորա, գտցէ զայն
47 արարեալ։ Ամէն ասեմ ձեզ, թէ ի վե-
րայ ամենայն ստացուածոց իւրոց կա-
ցուսցէ զնա։
48 Եթէ ասիցէ ծառայն չար ի սրտի
իւրում. Յապաղեցուցանէ տէր իմ գա-
49 լուստ իւր, եւ սկսցի հարկանել զընկե-
րակիցս իւր, եւ ուտել եւ ըմպել ընդ
50 հարբեցուսն, գայցէ տէր ծառային այ-
նմիկ յաւուր մի յոր ոչ սպասէ, եւ ի
51 ժամու զոր ոչ գիտէ, եւ պատառեսցէ
զնա, եւ զբաժին նորա ընդ կեղծաւո-
րօքն դիցէ. անդ եղիցի լալ եւ կրճտել
ատամանց։

Գլ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն
երկնից տասնկուսի կուսանաց, որ
առեալ լապտերս իւրեանց՝ ելին ընդ
2 առաջ փեսային։ Եւ հինգ ի նոցանէ
էին իմաստունք, եւ հինգ յիմարք։
3 Յիմարքն առեալ լապտերս իւրեանց՝
ոչ առին հանդերձ իւրեանց ընդ իւ-
4 րեանս իւղ։ Իսկ իմաստունքն առին
իւղ ի սափորս իւրեանց հանդերձ լա-
5 պտերօքն իւրեանց։ Եւ ուշացուցա-
նելոյ փեսային՝ ընկեցան ամենեքեան
6 եւ քնացին։ Իսկ կէս գիշերի աղա-
ղակ եղեւ. Ահա փեսայն գայ, ելէք
7 առ դիմաւորութիւն նորա։ Յայնժամ
յարուցեալ ամենայն կուսանքն նո-
8 ցին զլապտերս իւրեանց։ Եւ յիմարքն
ասեն ցիմաստունսն. Տուք մեզ ի յու-
ղոյ ձերմէ, զի լապտերք մեր շիջա-
9 նին։ Պատասխանի տային իմաստուն-
քն եւ ասեն. Գուցէ ոչ բաւեսցէ մեզ
եւ ձեզ, այլ երթայք առ վաճառողսն
10 եւ գնեցէք ձեզ։ Եւ մինչդեռ երթա-
յին գնել, եկն փեսայն, եւ որ պատ-
րաստ էին՝ մտին ընդ նմա հարսնեաց,
եւ դրան եղեւ։
11 Յետոյ եկեսցեն եւ կուսանքն մնա-
ցեալքն եւ ասեն. Տէր, Տէր, բա՛ց մեզ։
12 Եւ նա պատասխանի տուեալ ասէ.
Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։
13 Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք զաւուրն
եւ զժամն։
14 Զի որպէս այր մեկնեալ կոչեաց զծա-
ռայս իւր, եւ ետ նոցա զստացուածս
15 իւր։ Եւ ընդ մի ետ հինգ տալանդս,
եւ ընդ միւսում երկու, եւ ընդ երրորդ
մի, ամենայնիւ ըստ զօրութեան իւ-
րոյ, եւ մեկնեցաւ։ Եւ անդէն գնաց
16 որ հինգ տալանդսն առեալ էր, եւ
գործեաց ընդ նոսա, եւ շահեցոյց այլ
17 հինգ տալանդս։ Նոյնպէս եւ որ երկու
առեալ էր, շահեցոյց եւ նա այլ երկու։
18 Իսկ որ մի առեալ էր, գնաց եւ փո-
սացոյց զարծաթ տեառն իւրոյ։
19 Յետ բազում ժամանակաց գայ տէր
ծառայիցն այնոցիկ, եւ դնէ զհաշիւ
20 ընդ նոսա։ Եւ մերձեցեալ որ հինգ
տալանդսն առեալ էր, մատոյց այլ հինգ
տալանդս, եւ ասէ. Տէր, հինգ տալանդս
ինձ ետուր, ահա այլ հինգ տալանդս
21 շահեցուցի ես։ Ասէ ցնա տէր նորա.
Եւ՛ դու, բարի եւ հաւատարիմ ծառա,
ի սակաւուս հաւատարիմ եղեր, ի բա-
զումս քեզ կացուցից. մուտ արա ի
22 խնդութիւն տեառն քո։ Մերձեցեալ
եւ որ երկու տալանդս առեալ էր, ասէ.
Տէր, երկու տալանդս ինձ ետուր, ահա
23 այլ երկու տալանդս շահեցուցի ես։
Ասէ ցնա տէր նորա. Եւ՛ դու, բարի եւ
հաւատարիմ ծառա, ի սակաւուս հա-
ւատարիմ եղեր, ի բազումս քեզ կա-
ցուցից. մուտ արա ի խնդութիւն տե-
24 առն քո։ Մերձեցեալ եւ որ մի տալանդ
առեալ էր, ասէ. Տէր, գիտացի զքեզ
եթէ մարդ դաժան ես, հնձես յորում
ոչ սերմանեցեր, եւ ժողովես յորմէ
25 ոչ սփռեցեր։ Եւ երկեալ գնացի եւ
փոսացուցի զտալանդդ քո ի հողի.
ահա ունիս զոր քոյդ է։
26 Պատասխանի տուեալ տէր նորա
ասէ ցնա. Չա՛ր եւ ծո՛յլ ծառայ, գի-
տացեր եթէ հնձեմ յորում ոչ սերմա-
նեցի, եւ ժողովեմ յորմէ ոչ սփռեցի.
27 արդ պարտ էր քեզ դնել զարծաթս իմ
առ փոխաւորս, եւ ես եկեալ ընդու-
նէի զիմն ընդ տոկոսի։
28 Առէ՛ք ուրեմն ի նմանէ զտալանդն,
եւ տո՛ւք նմին որ ունի զտասն տա-
29 լանդս։ Զի ամենայնի որ ունի՝ տա-
ցի եւ առատասցի, եւ որ ոչ ունի՝ եւ
զոր թուի ունել՝ առցի ի նմանէ։
30 Եւ զանպիտան ծառայն հանէ՛ք ի
խաւարն արտաքինս, անդ եղիցի լալ
եւ կրճտել ատամանց։
31 Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ
ի փառս իւր, եւ ամենայն հրեշտակք
նորա ընդ նմա, յայնժամ նստցի ի վե-
32 րայ աթոռոյ փառաց իւրոց։ Եւ ժո-
ղովեսցին առաջի նորա ամենայն ազ-
գք, եւ զատցէ զնոսա միմեանց, որ-
պէս հովիւ զհաւս ի գառանց,
33 եւ կացուսցէ զհաւսն ընդ աջմէ իւ-
րմէ, եւ զգառունսն ընդ ձախմէ։
34 Յայնժամ ասիցէ թագաւորն ցա-
նոսիկ որ ընդ աջմէ իւրմէ են. Եկա՛յք
օրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք
զպատրաստեալ ձեզ արքայութիւնն
յաշխարհէ։
35 Զի ես անօթացայ, եւ տուէք ինձ
ուտել. ծարաւի էի, եւ ըմպեցուցէք
ինձ. օտարական էի, եւ ընկալայք զիս.
36 մերկ էի, եւ զգեցուցէք զիս. հիւան-
դացայ, եւ այցելէք ինձ. ի բանտի էի,
եւ եկէք առ իս։
37 Յայնժամ պատասխանի տուցեն
նմա արդարքն եւ ասիցեն. Տէր, երբ
տեսաք զքեզ անօթի, եւ կերակրեցա-
38 նուք, կամ ծարաւի, եւ ըմպեցուցա-
նուք, կամ օտարական, եւ ընկալա-
39 քաք, կամ մերկ, եւ զգեցուցաք, կամ
հիւանդ եւ կամ ի բանտի, եւ եկաք առ
40 քեզ։ Եւ պատասխանի տուեալ թա-
գաւորն ասիցէ ցնոսա. Ամէն ասեմ
ձեզ, զի որ ինչ արարէք մի ոմանց
եղբարցս իմոց սոցա փոքունցս, ինձ
41 արարէք։ Յայնժամ ասիցէ եւ ցայնոսիկ
որ ընդ ձախմէ իւրմէ են. Երթա՛յք
յինէն անիծեալք յհուր յաւիտենա-
կան, որ պատրաստեալ է սատանայի
42 եւ հրեշտակաց նորա։ Զի ես անօթա-
ցայ, եւ ոչ տուէք ինձ ուտել. ծարա-
ւի էի, եւ ոչ ըմպեցուցէք ինձ.
43 օտարական էի, եւ ոչ ընկալայք զիս.
մերկ էի, եւ ոչ զգեցուցէք զիս. հի-
ւանդ եւ ի բանտի էի, եւ ոչ այցելէք
44 ինձ։ Յայնժամ պատասխանի տուցեն
եւ նոքա ասելով. Տէր, երբ տեսաք
զքեզ անօթի կամ ծարաւի կամ օտա-
րական կամ մերկ կամ հիւանդ կամ ի
45 բանտի, եւ ոչ ծառայեցաք քեզ։ Յայ-
նժամ պատասխանի տուեալ ասիցէ
ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի որ ոչ ա-
րարէք մի ոմանց սոցա փոքունցս, ոչ
46 ինձ արարէք։ Եւ երթիցեն սոքա ի
տանջանս յաւիտենական, եւ արդարքն
ի կեանս յաւիտենական։

Գլ. ԻԶ

1 Եւ եղեւ յորժամ կատարեաց Յիսուս
զամենայն բանս զայս, ասաց ցաշա-
2 կերտսն իւր. Գիտէք զի յերկուս աւուրս
Զատկին լինի, եւ որդի մարդոյ մատ-
3 նեսցի ի խաչել։ Յայնժամ ժողովեցան
քահանայապետքն եւ դպիրքն եւ ծե-
րակուտն ժողովրդեան ի դահլիճ քա-
հանայապետին որ կոչէր Կայիափա,
4 եւ խորհուրդ արարին զի զՅիսուս
5 նենգութեամբ կալցեն եւ սպանցեն։
Ասէին սակայն. Ոչ յտօնի, զի մի
խռովութիւն եղիցի ի ժողովրդեանն։
6 Եւ Յիսուս յորժամ էր ի Բեթանիա ի
տան Սիմոնի բորոտի,
7 մերձեցաւ առ նա կին ունելով սա-
պարտ մի վարդաջրոյ պատուական
յոյժ, եւ հեղոյ ի գլուխ նորա նստե-
8 լոյ ընդ սեղանոյ։ Եւ տեսեալ աշա-
կերտացն՝ բարկացան ասելով. Ընդէ՞ր
9 կորուստ այդ։ Կարէր բազում դրա-
մաւ ծախել եւ տալ աղքատաց։
10 Գիտացեալ Յիսուսի՝ ասէ ցնոսա.
Զի՞ նեղէք զկինն, գործ բարի գոր-
11 ծեաց ինձ։ Զի զաղքատսն միշտ ունիք
ընդ ձեզ, եւ զիս ոչ միշտ ունիք։
12 Զի արկեալ կինս զսա զվարդաջուրս
ի մարմին իմ՝ առ թաղելոյ զիս արար։
13 Ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզե-
սցի զաւետարանդ սա յամենայն աշ-
խարհի, ասասցի եւ զոր արար կինս
սա՝ ի յիշատակ նորա։
14 Յայնժամ գնաց մի ի տասնկուսից
որ կոչէր Յուդա Սկարիովտացի առ
15 քահանայապետսն, եւ ասէ. Զի՞ տա-
ջիք ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ։
Եւ նոքա կշռեցին նմա երեսուն արծա-
16 թս։ Եւ ի նմանէ էր ժամանակ որ զնա
մատնեսցէ։
17 Եւ առաջին աւուր Զատկին մերձե-
ցան աշակերտքն առ Յիսուս ասելով.
Ուր կամիս պատրաստեսցուք քեզ ու-
18 տել զՊասեքն։ Եւ նա ասէ. Երթա՛յք
ի քաղաքն առ այր մի, եւ ասասջիք
ցնա. Ասէ վարդապետն. Ժամանակ իմ
մերձ է, առ քեզ առնում զՊասեքն ընդ
19 աշակերտս իմ։ Եւ արարին աշակերտքն
որպէս հրամայեաց նոցա Յիսուս, եւ
պատրաստեցին զՊասեքն։
20 Եւ երեկոյին եղեալ՝ նստէր ընդ
21 տասնկուսիսն։ Եւ ուտելոյ նոցա ասէ.
Ամէն ասեմ ձեզ, զի մի ոք ի ձէնջ մատ-
22 նեսցէ զիս։ Եւ նոքա տրտմեցան յոյժ,
եւ սկսան ասել ցնա ամենեքեան. Մի՞
23 թէ ես եմ, Տէր։ Եւ նա պատասխանի
տուեալ ասէ. Որ ձեռն արկանէ ընդ
24 իս ի պնակ, նա մատնեսցէ զիս։ Որդի
մարդոյ երթայ որպէս գրեալ է վասն
նորա, բայց վա՛յ այնմ մարդոյ որ զոր-
դի մարդոյ մատնեսցէ. լաւ էր նմա եթէ
25 ոչ ծնեալ լինէր մարդն այն։ Եւ պա-
տասխանի տուեալ Յուդա որ մատնէր
զնա՝ ասէ. Մի՞թէ ես եմ, Ռաբբի։ Ասէ
ցնա. Դո՛ւ ասացեր։
26 Եւ ուտելոյ նոցա առեալ Յիսուս
զհաց՝ օրհնեաց եւ բեկ, եւ ետ աշա-
կերտացն եւ ասէ. Առէ՛ք կերէ՛ք, այս
27 է մարմին իմ։ Եւ առեալ զբաժակն՝
շնորհակալ եղեալ ետ նոցա եւ ասէ.
28 Արբո՛ւք ի սմանէ ամենեքեան, զի
այս է արիւն իմ նորոգ ուխտին, որ
վասն բազմաց հեղու ի թողութիւն
29 մեղաց։ Եւ ասեմ ձեզ, զի ոչ արբից
յայսմհետէ ի պտղոյ այգւոյ մինչեւ յաւ-
ուրն յորում զնա նոր արբից ընդ ձեզ
30 ի թագաւորութեան Հաւր իմոյ։ Եւ
երգեցեալ՝ ելին ի լերինն Ձիթենեաց։
31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամե-
նեքեան դուք գայթակղեսջիք ի վերայ
իմ յգիշերիս այսորիկ, զի գրեալ է.
Հարից զհովիւն, եւ ցրուեսցին ոչխար-
32 քն հօտին։ Բայց յետ յարութեանս
33 իմոյ նախագնասցեմ ձեզ ի Գալիլիա։
Պատասխանի տուեալ Պետրոս ասէ
ցնա. Եթէ ամենեքեան գայթակղեսցին
ի վերայ քո, ես ոչ երբեք գայթակղե-
34 սայց։ Ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ
քեզ, զի յգիշերիս այսորիկ մինչեւ ոչ
հաւկիթ կանչեսցէ, երիցս ուրասցես
35 զիս։ Ասէ ցնա Պետրոս. Եթէ մեռա-
նել ինձ հարկ իցէ ընդ քեզ, ոչ ուրա-
ցայց զքեզ։ Նոյնպէս եւ ամենայն աշ-
ակերտքն ասացին։
36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի
տեղի որ կոչի Գեթսեմանի, եւ ասէ
ցաշակերտսն. Նըստարո՛ւք աստ մին-
չեւ երթեալ անդ աղօթեցից։
37 Եւ առեալ զՊետրոս եւ զերկուս որ-
դիսն Զեբեդեայ՝ սկսաւ տրտմել եւ
38 վշտանալ յոյժ։ Եւ ասէ ցնոսա. Տրտում
է անձն իմ մինչեւ ի մահ. նըստարո՛ւք
աստ եւ արթո՛ւն կացէք ընդ իս։
39 Եւ անցեալ մի քան զնոսա՝ անկաւ
ի վերայ երեսաց իւրոց աղօթելով եւ
ասելով. Հա՛յր իմ, եթէ հնարաւոր է,
անցցէ ի բաց ի յինէն բաժակս այս.
բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս
40 դու։ Եւ գայ առ աշակերտսն եւ գտա-
նէ զնոսա քնացեալս, եւ ասէ ցՊետ-
րոս. Այդպէս ոչ կարացէք մի ժամ
41 արթո՛ւն կալ ընդ իս։ Արթո՛ւն կացէք
եւ աղօթեցէք, զի մի մտանիցէք ի փոր-
ձութիւն. հոգի պատրաստ է, այլ մար-
42 մին տկար։ Եւ երկրորդ անգամ գնաց
եւ աղօթեաց ասելով. Հա՛յր իմ, եթէ
ոչ հնարաւոր է զայս անցանել ի բաց
ի յինէն, եթէ ոչ ես ըմպեմ զայն, եղիցի
43 կամք քո։ Եւ եկեալ գտանէ զնոսա
քնացեալս, զի էին աչք նոցա ծանրա-
44 ցեալք։ Եւ թողեալ զնոսա՝ գնաց եւ
աղօթեաց երրորդ անգամ զնոյն բան
45 ասելով։ Յայնժամ գայ առ աշակերտսն
իւր եւ ասէ ցնոսա. Քնացէ՛ք ի հան-
գիստ եւ հանգուցէ՛ք. ահա մերձեցաւ
ժամ, եւ որդի մարդոյ մատնեսցի ի
46 ձեռս մեղաւորաց։ Յարո՛ւցէք, երթա-
նո՛ւք, ահա մերձեցաւ մատնիչ իմ։
47 Եւ դեռ նորա խօսելոյ՝ ահա Յուդա
մի ի տասնկուսից գայ, եւ ընդ նմա
բազում ամբոխ սրով եւ գաւազանաւ
ի քահանայապետացն եւ ի ծերոց ժո-
48 ղովրդեանն։ Եւ մատնիչն ետ նոցա
նշան ասելով. Զոր համբուրեսցեմ ես,
49 նա է, զնա կալարո՛ւք։ Եւ անդէն մեր-
ձեցեալ առ Յիսուս ասէ. Ողջո՛յն քեզ,
Ռաբբի, եւ համբուրեաց զնա։
50 Եւ Յիսուս ասէ ցնա. Ընկե՛ր, յո՞ր
եկիր. Յայնժամ մերձեցեալ ի Յիսուս
51 ձգեցին ձեռս ի նա եւ կալան զնա։
Եւ ահա մի ոք ի հանդերձելոցն ընդ
Յիսուս՝ ձգեալ զձեռն իւր՝ հանեալ
զսուր իւր եւ հարեալ զծառայ քահա-
նայապետին՝ կտրեաց զականջն նո-
52 րա։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Դարձո՛ւ
զսուր քո ի տեղի իւրում, զի ամենայն
որ զսուր առնուցուն՝ սրով կորիցեն։
53 Եւ մի՞թէ կարծես զի ոչ կարեմ աղա-
չել զՀայր իմ, եւ առաքեսցէ ինձ յա-
նդիման հազարս հազարաց հրեշտա-
54 կաց. բայց զիա՞րդ կատարեսցին գիր-
քն, զի այսպէս պարտ է լինել։
55 Յայնժամ ասէ Յիսուս ցամբոխսն.
Իբրեւ ընդ աւազակ ելէք հանդերձ սո-
վիւ եւ գաւազանաւ զիս կալանել. ա-
մենայն աւուր նըստէի ընդ ձեզ ուսու-
56 ցանելով ի տաճարի, եւ ոչ կալայք զիս։
Բայց այս ամենայն եղեւ, զի կատա-
րեսցին գիրքն մարգարէիցն։ Յայնժամ
աշակերտքն ամենեքեան թողեալ զնա
57 փախեան։ Եւ նոքա որ կալան զՅիսուս՝
տարան առ Կայիափա քահանայապետ,
ուր դպիրքն եւ ծերքն ժողովեցան։
58 Եւ Պետրոս հետեւեցաւ նմա հեռի
մինչեւ ի դահլիճ քահանայապետին,
եւ մտեալ ներս նըստաւ ընդ սպասա-
59 ւորսն տեսանել զվախճան։ Քահանա-
յապետքն եւ ամենայն ժողովն խնդ-
րէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի
60 զնա մեռուցեալ արասցեն։ Եւ ոչ գտին,
եթէպէտ եւ բազումք սուտ

Ցամի Տեառն 33

ԱՄար. ժբ. 18։ Ղեւ. ի. 27։ ԼԹոր. իդ. 8։ ԵրՕր. իե. 5։

Աստուածդն է՝ Աստուածդ ...եւ։
22 Երրոր լսեցին՝ զարմացան, և թո-
ղուցին զանիկայ՝ ու գացին։
23 Ի՞նդն օրը անոր քովը եկան սա-
դուկեցիները, Որոնք կ՚ըսեն թէ
յարութիւն չկայ, և անոր հար-
24 ցուցին՝ Ըսելով. Վարդապետ՝
Ի՞Մովսէս ըսաւ. Թէ որ մէկը ա-
ռանց զաւակի մեռնելու ըլլայ, ա-
նոր եղբայրը առնէ անոր կնիկը, և
25 իր եղբօրը զաւակ հանէ։ Արդ՝
եօթը եղբայրներ կային մեր մէջը.
և առջինը կնիկ առաւ՝ ու մեռաւ,
և զաւակ չունենալուն համար՝ իր
26 կնիկը ձգեց իր եղբօրը։ Նոյնպէս
ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մինչև
27 եօթնեներորդը։ Ամենէն ետքը կնիկն
28 ալ մեռաւ։ Ուրեմն յարութեան
աստեր ան եօթնէն որո՞ւն կնիկը
պիտի ըլլայ. ինչու որ ամենքն ալ
29 զանիկայ ունեցան։ Եւ Ցի-
սուս պատասխան տալով՝ անոնց
ԺՑՀ.Ի.9։ ըսաւ. Դուք մոլորած էք, որ ո՛չ
30 գիրքերը գիտէք՝ և ո՛չ Աստուծոյ
զօրութիւնը. Քանզի յարութեան
ԱՑՀ.գ. աստեր ո՛չ կնիկ կ՚առնեն և ո՛չ եր-
2։ կան կը տրուին. Հապա Երկինքի
31 մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս
են։ Բայց մեռելներուն յարու-
թիւն առնելուն համար՝ չէք կար-
դացեր Աստուծմէ ձեզի ըսուած
ՀԵլ.գ.6. 32 խօսքը. Ես եմ Աբրահամին Ա-
16։ ՄԱր. ստուածը, և Իսահակին Աստուա-
ժբ. 26։ ծը, ու Յակոբին Աստուածը.
Ղեւ. ի. Աստուած՝ մեռելներուն Աստուածը
37։ Դոր. է.32։ Երր. ժա. 16։
33 չէ, հապա կենդանիներուն։ Ու
ՅԳԼ.է.28։ ժողովուրդները լսելով՝ չկր զար-
մանային անոր վարդապետութեա-
նը վրայ։
ՂՄար. ժբ. 28։ 34 Էրայց փարիսեցիները երբոր լսե-
ցին՝ թէ անիկայ պապանձեցուց
35 սադուկեցիները, մէկտեղ ժող-
ՓՂեւ. ժ. 25։ վուեցան։ Եւ անոնցմէ մէկը՝ օրի-
ՀրՕր. գ. նական մը՝ հարցուց, զանիկայ փոր-
5։ Ժ. 12։ 36 ձելով, ու ըսաւ. Վարդապետ՝
Լ.6։ Ղեւ. ո՞ր պատուիրանը մեծ է օրէնքին
Ժ. 27։ 37 մէջ։ Եւ Ցիսուս ըսաւ անոր.
ՅՂԼ. ԺԹ. Քու Տէր Աստուածդ սիրես քու
18։ ԹԼ. բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ
ԺԹ. 19։ ՄԱր. ժբ. 38 ու քու բոլոր մտքովդ. Ա՛ս է առա-
31։ Ղեւ. 39 ջին ու մեծ պատուիրանը։ Ու
Ժ. 27։ Հր- երկրորդըասոր նման՝ Յիսու ընկերդ
ովհ.Ժգ.9։ Գաղ.ե.14։ սիրես քու անձիդ պէս։ Ա՛ս եր-
Ցակ.բ.8։ կու պատուիրանքէս կախուած են
ԱԹԼ.է.12։ ա Տիմ.ա.5։ բոլոր օրէնքը և մարգարէները։
ՂՄար. ժբ. 41 Ու երբոր փարիսեցիները ժող-
35։ Ղեւ. վուեցան, Ցիսուս հարցուց անոնց
ի.41։ 42 ու ըսաւ. Քրիստոսի վրայով ի՞նչ
ԱՑազ. ճմ. կարծիք ունիք. Անիկա որո՞ւ որ-
1։ Դոր.բ. 43 դին է։ Ըսին իրեն. Դաւիթին։
34։ ա Կոր. Ըսաւ անոնց Ցիսուս. Հապա
ժե. 25։ Երր. ա. ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զանի-
18։ Ժ. 12։ 44 կայ Տէր կը կոչէ՝ ու կ՚ըսէ. Տէրը
13։

իմ Տէրոջս ըսաւ. Նստէ իմ աջ
կողմս, մինչև որ քու թշնամիներդ
ոտքերուդ պատուանդան ընեմ։
45 Ուրեմն թէ որ Դաւիթ զանիկայ
Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկայ ա-
46 նոր որդին կ՚ըլլայ։ Եւ մէկը չէր
կրնար անոր խօսք մը պատասխա-
նել. Ու ան օրէն ետև մէկը չէր
համարձակեր անոր բան մը հարցը-
նելու։

ԳԼ. Ի Գ

1 Քրիստոս խրատ կու տայ ժողովուրդներուն որ դպրաց ու փարիսեցւոց բարի վարդապետութիւնը հետևին, և չէ թէ անոնց չար օրինակներուն. 5 նոյնպէս ալ իր աշակերտները կը խրատէ որ զդոյշ կենան անոնց փառասիրութենէն. 13 ուխտ անգամ վայ կու տայ անոնց կեղծաւորութեանը և կուրութեանը. 34 ու Երուսաղէմի կործանումը կը նախադայնէ։

1 Յն ատեն Ցիսուս խօսեցաւ ժո-
ղովուրդներուն և իր աշակերտ-
2 ներուն ու ըսաւ. Մովսէսին
ԱԵԶԵմ.բ. 4.8։ ՄՂ. բ.7։ ՄԱր. ժբ. 38։ Ղեւ.ի.45։ աթոռը դպիրները և փարիսեցիները
3 նստած են. Ուրեմն ինչ որ ձեզի
կ՚ըսեն որ պահէք, պահեցէք ու
ըրէք, բայց անոնց գործքերուն պէս
մի ընէք. ինչու որ Ի՛կ՚ըսեն ու չեն
ԲՀով.բ. 19.ԸԱ։ 4 ըներ։ Քանզի ԻԾանր և տանելու
ԻՂԼ.ժա. 46։ Գոր. ԺԱ. 10։ Գաղ. գ. 13։ դժուար բեռներ կը կապեն ու կը
ԻԳԼ.գ.1. 2.5.16։ դնեն մարդոց ուսերուն վրայ, և
ԻԹես.ԺԱ. 38։ ԲՕր. գ.8։ Իր. 12։ Ճակ. գ.3։ իրենց մատովը չեն ուզեր զանոնք
5 շարժել։ Եւ Ի իրենց ամեն գործ-
քերը՝ մարդոց երևնալու համար կ՚ը-
նեն. Կը լայնցընեն իրենց դրապան-
ները, ու կ՚երկրնցընեն իրենց հան-
6 դերձներուն քղանցքները. Ընդթ-
բիթներու մէջ առաջին բազ-
մցները կը սիրեն, և ժողովարան-
ներուն մէջ առաջին աթոռները,
ՂՄար. ԺԱ. 38.39։ Ղու. ժա. 43։ Ի. 46։ գ Ցոն. 9։ 7 ու շուկաներուն մէջ բարևները,
ԻՑակ. գ. 1։ Տի՛տ բ Կոր. ա. 24։ ա Պետ. ե. 3։ և մարդոցմէ Ռաբբի Ռաբբի
8 կոչուիլ։ Ի Բայց դուք Ռաբբի
մի կոչուիք. ինչու որ ձեր
Ուսուցիչը մէկ մըն է, այն-
քան Քրիստոս, և դուք ամէնքդ եղ-
9 բայր էք։ Ու երկրի վրայ ձեզի
Հայր մի կոչէք. Ի ինչու որ ձեր
Հայրը մէկ մըն է, որ երկինքն է։
10 Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք.
ԻԹես.Ի.26. 27։ ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մըն է,
11 այն-քան Քրիստոս։ Եւ Ի ձեր մէջէն
ԺԾոր.Իր. 29։ Ճառակ. ԺԱ.33։ Իթ. 23։ Ղու. ժգ.11։ Ժբ. 14։ Ցակ. գ. 6։ ա Պետ.ե.5։ մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ։
12 Ի Ով որ իր անձը կը բարձրացընէ,
պիտի խոնարհի. և ով որ իր ան-
ձը կը խոնարհեցընէ, պիտի բարձ-
ԻՂԼ.ժա. 52։ րանայ։
13 Բայց Ի վայ ձեզի կեղծաւոր դպիր-
ներ ու փարիսեցիներ՝ որ երկնից
ԼՄար. ժբ. 40։ Ղու. ի. 47։ ԲՏի՛տ.գ.6։ Տիմ.ա.11։ թագաւորութիւնը մարդոց առջևը
կը գոցէք. քանզի դուք չէք մըտ-
ներ, և մտնողներն ալ չէք թողուր
14 որ մտնեն։ Վայ ձեզի կեղծաւոր
դպիրներ ու փարիսեցիներ՝ Նոր

Ցամի Տնաւն 33

որբևարիներուն տուները կ'ուտէք, ու ՚երկար երեսնալու համար աղօթքը կ'երկընցընէք. անոր համար աւելի դատապարտութիւն պիտի
15 ընդունիք։ Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորահաւատ ընելու. ու երբոր ըլլայ, զանիկայ ձեզմէ երկու անգամ աւելի
16 գեհենի որդի կ'ընէք։ Վայ ձեզի իկոյր առաջնորդներ՝ որ կ'ըսէք թէ՝ Ով որ տաճարին վրայ երդում ընէ, բան մը չէ. բայց ով որ տաճարին ոսկիին վրայ երդում
17 ընէ, պարտաւոր կ'ըլլայ։ Ո՛վ յիմարներ ու կոյրեր՝ ո՞րը մեծ է, ոսկի՞ն՝ եւ եթէ տաճարը, որ կը սրբե-
18 բացընէ ոսկին։ Եւ թէ՝ Ով որ սեղանին վրայ երդում ընէ, բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պատարագին վրայ երդում ընէ,
19 պարտաւոր կ'ըլլայ։ Ցիմարներ ու կոյրեր՝ ո՞րը մեծ է, պատարա՞գը՝ եթէ սեղանը, որ կը սրբացընէ պա-
20 տարագը։ Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ՝ և անոր վրայի ամէն բա-
21 ներուն վրայ. Եւ ով որ տաճարին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ՝ և անոր մէջ բնակողին
22 վրայ. Եւ ով որ երկինքին վրայ երդում ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ՝ և անոր վրան
23 նստողին վրայ։ Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ անանուխին ու սամիթին և չամանին տասանորդը կը վճարէք, ու կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները՝ դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը. ասոնք պէտք էր ընել, և անոնք չձգել։
24 Կոյր առաջնորդներ՝ որ մժղուկը կը քամէք, և ուղտը կը կլլէք։
25 Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ գաւաթին ու պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ և անիրաւութեամբ
26 լեցուն են։ Կոյր փարիսեցի՛ առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որ անոնց դուրսի կողմն ալ
27 մաքուր ըլլայ։ Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երևնան, և ներսէն մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն
28 են։ Նոյնպէս ալ դուք դուրսէն մարդոց արդար կ'երևնաք, ու ներսէն կեղծաւորութեամբ և անօրէ-
29 նութեամբ լեցուն էք։ Վայ ձեզի կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ՝ որ մարգարէներուն տապանները կը շինէք, և արդարներուն
30 գերեզմանները կը զարդարէք. Ու կ'ըսէք. Թէ որ մեր հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէ-
31 ինք ըլլար։ Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք՝ թէ՝ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպան-
32 նէին։ Ո՛հ դուք ալ ձեր հայ-
33 րերուն չափը լեցուցէք։ Օ՛ձեր՝ ՚իժերու ծնունդներ, ի՞նչպէս պիտի փախչիք գեհենին դատապար-
34 տութենէն։ Ընտոր համար՝ ահա ես կը խրկեմ ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դպիրներ, և՝ ասնոնցմէ ՚ի՛նչ ՚ը պիտի սպաննէք, ու խաչը հանէք, և՝ ձեզ քաՀինները ձեր ժողովարաններուն մէջը պիտի ծեծէք, ու քաղաքէ
35 քաղաք հալածէք. Հնրպէս զի երկրի վրայ թափուած բոլոր արդար արիւնը ձեր վրայ գայ, ՚արդար Աբելին արիւնէն՝ մինչև ՚Բարաքիայի որդւոյն Զաքարիայի արիւնը, որ տաճարին ու սեղանին մէջտեղը
36 սպաննեցիք։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Ասոնց ամէն բաները պիտի գայ ազգիս վրայ։
37 ՚Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի խրկուածները՝ կը քարկոծէիր. քանի անգամ ՚ը ուզեցի ինչպէս որ հաւը իր ձագերը ՚թևերուն տակը կը ժողվէ, և դուք չուզեցիք։
38 Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ. Ինչու որ ձեզի կ'ըսեմ, որ ալ ասկէետև պիտի չտեսնէք զիս, մինչև որ ըսէք. ՚Օրհնեալ է ան՝ որ Տէրոջը անունովը կու գայ։

ԳԼ. ԻԴ

1 Քրիստոս կը նախապատրաստէ տաճարին կործանումը, 3 անկէ առաջ հասնելու մեծ թշուառութիւնները, 29 և իր դատաստանի գալուստի նշանները, 36 նաև օրը ու ժամը մեզի անծանօթ ըլլալուն համար, 42 կը պատուիրէ որ արթուն մնանք ան բարի ծառային պէս՝ որ ամէն վայրկեան իր տիրոջը գալուն կը սպասէ։

1 Ու Ցիսուս տաճարէն դուրս ելլելով կ'երթար. ու աշակերտները անոր բովը գացին՝ տաճարին շէնքերը իրեն ցուցընելու։
2 Եւ Ցիսուս անոնց ըսաւ. Չէ՞ք տեսներատ ամէն բաները. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ՚ը պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝ որ չքակուի։
3 Ու երբոր անիկայ Ձիթենեաց լեռը նստեր էր, ՚աշակերտները իրեն եկան առանձին՝ ու ըսին. ՚Ըսէ՛ մեզի՝ ե՞րբ պիտի ըլլան ատ բաները. և քու գալստեանդ՝ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի
4 ըլլայ։ Եւ Ցիսուս պատասխան

Ցամի Տնաւն 33

- Դտ. է. 51, 52, ա Թես. բ. 15։
ՀՅհ. ժե. 16, ա Թես. բ. 16։
Դ Գե. գ. 7, ժբ. 34։
Լ Գ. խա. 34, 35, Ղս. ժա. 49։
- Գոր. ե. 40, է. 57, 58, իբ. 19։
- Գ. ժ. 17, բ Կոր. ժա. 24, 25։
ՀՑայտ. ժբ. 24։
- Յն. գ. 8, ա Յով. գ. 12։
ՐՐ Մն. իգ. 20, 21։
ՅՂս. ժգ. 34։
- Ր Մն. իգ. 21։
ՀՐ Օր. լբ. 11, 12։
ՀՍաղ. ժէ. 8, ղ. 4։
ՀՍաղ. ՀԺբ. 26, Գ. խա. 9։

- Մար. ժգ. 1, Ղս. խա. 5։
ԷԳ Թագ. Թ. 7, Եզեմ. իգ. 18, Միք. գ. 12, Ղս. ԺԹ. 44։
ՀՄար. ժգ. 8։
Ր Թես. ե. 1։

Ամի Տեառն 33

Ի Եփե . ե՝ . 6 ։ Կող . բ . 8 ։ 18 ։ բ Թես . բ . 3 ։ ա Ցո՛ . գ . 1 ։ Ղ Երեմ . ժգ . 14 ։ իգ . 21 ։ 25 ։ Հմր 24 ։ Ցո՛ . ե . 43 ։ Ի Հմր 11 ։ Ը բ Մն . ժե . 6 ։ Ե՝ . ժթ . 2 ։ Ընդ . բ . 22 ։ Ջաք . ժգ . 13 ։ Ր Գլ . ժ . 17 ։ Մար . ժգ . 9 ։ Ղու . իա . 12 ։ Ցո՛ . ժե . 20 ։ ժգ . 2 ։ Գոր . գ . 2 ։ 3 ։ է . 58 ։ ժբ . 1 ։ ա Պետ . գ . 16 ։ Ցայտ . բ . 10 ։ 13 ։ ՛ Գլ . ժա . 6 ։ ժգ . 57 ։ բ Տիմ . ա . 15 ։ գ . 10 ։ 16 ։ Ի Գլ . է . 15 ։ Գոր . ի . 29 ։ բ Պետ . բ . 1 ։ Ը ա Տիմ . գ . 1 ։ Հմր 5 ։ 24 ։ Ի Գլ . ժ . 22 ։ Մար . ժգ . 13 ։ Երր . գ . 6 . 14 ։ Ցայտ . բ . 10 ։ Ֆ Գլ . գ . 23 ։ Թ . 35 ։ Ա Հով . ժ . 18 ։ Կող . ա . 6 . 23 ։ Հ Մար . ժգ . 14 ։ Ղու . իա . 20 ։ Ի Դան . Թ . 27 . ժբ . 11 ։ Ղ Դան . Թ . 23 . 25 ։ Ճ Ղու . իգ . 29 ։ Ո Դան . Թ . 26 ։ ժբ . 1 ։ Ցովկ . բ . 2 ։ Ն Ես . կե . 8 . 9 ։ Ջաք . ժգ . 2 . 3 ։ Ն Մար . ժգ . 21 ։ Ղու . ժէ . 23 ։ իա . 8 ։ Ը Ր Օր . ժգ . 1 ։ Հմր 5 . 11 ։ բ Թես . բ . 9 . 10 . 11 ։ Ցայտ . ժգ . 13 ։

տուաւ՝ ու բաւ անոնց . Ի Զգո՛յշ կեցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ . 5 Ինչու որ Ղշատերը պիտի գան իմ անունովս՝ ու բսեն Թէ , Ես եմ Քրիստոսը . ու Ի շատերը պիտի մո- 6 լորցընեն ։ Եւ պիտի լսէք պատե- րազմներ՝ ու պատերազմներու լու- րեր . զգո՛յշ կեցէք որ չխռովիք . ինչու որ Ն ամէն բաները պէտք է որ ըլլան , բայց դեռ վերջը չէ ։ 7 Վասն զի Ղազգ ազգի վրայ պիտի ելլէ , ու թագաւորութիւն թագա- ւորութեան վրայ , և տեղ տեղ սովեր ու մահտարաժամներ , և երկ- րաշարժութիւններ պիտի ըլլան ։ 8 Բայց ասոնք ամէնը՝ ցաւերուն բա- 9 կիզքն են ։ Բ Ըն ատենը ձեզ նեղու- թեան պիտի մատնեն , և ձեզ պի- տի սպաննեն , ու իմ անուանս հա- մար ամէն ազգերուն ատելի պիտի 10 ըլլաք ։ Եւ ան ատենը շատերը Ի պիտի գայթակղին , ու մկզմկզ պիտի մատնեն , և մկզմկզ պիտի 11 ատեն ։ Եւ Ղշատ սուտ մարգարէ- ներ պիտի ելլեն , ու Ղշատերը պիտի 12 մոլորցընեն ։ Եւ անօրէնութիւնը շատնալուն համար՝ շատերուն սէրը 13 պիտի պաղի ։ Ի Բայց ով որ մինչև վերջը համբերէ , անիկայ պիտի 14 ապրի ։ Եւ Ի արքայութեան աս ա- ւետարանը Ելովանգակ աշխարհի մէջ պիտի քարոզուի՝ բոլոր ազգե- րուն վկայութիւն ըլլալու , և անկէ ետև վերջը պիտի գայ ։

15 Ը Ուստի երբոր տեսնէք աւերմուն- քին պղծութիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը բսուած է , թէ սուրբ տեղը կը կենայ . (ո՛վ որ 16 կարդայ՝ թող հասկընայ .) Ան- տոնը Ղհրէաստանի մէջ եղողները՝ 17 լեռները թող փախչին . Եւ ան որ տանիքին վրայ է՝ թող չիջնէ 18 իր տունէն բան մը առնելու . Եւ ան որ արտին մէջն է՝ թող ետ չը- դառնայ իր հանգերձները առնե- 19 լու ։ Բայց Ֆվայ՛ ան օրերը յղի և ղողներուն ու ծիծ տուողներուն ։ 20 Եւ աղօթք ըրէք՝ որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ , ո՛չ ալ շաբաթ օրը . 21 Քանզի Ո՛ան ատենը անանկ մեծ նեղութիւն պիտի ըլլայ , որուն նմանը աշխարհի սկիզբէն մինչև հիմա եղած չէ , ո՛չ ալ պիտի 22 ըլլայ ։ Եւ թէ որ ան օրերը չկրճ- նային , բնաւ մկ մարմին մը պի- տի չապրէր . Ղբայց ընտրեալներուն համար՝ ան օրերը պիտի կրճնան ։ 23 Ն Ըն ատենը թէ որ մկը ձեզի բսէ թէ , Ընդ հոս է Քրիստոսը՝ 24 կամ հոն , մի՛ հաւատաք . Ինչու որ Ըսուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելլեն , ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի ցուցը- նեն , որ Ելթէ կարելի էր՝ ընտ- 25 րեալներն ալ մոլորցընեն ։ Ընդ- 26 ձեզի առաջուց բսի ։ Ուստի թէ որ ձեզի բսեն թէ՝ Ընդ՝ անապատին մէջն է , մի՛ ելլէք . Ե Բե՝ Ընդ՝ ներքին սենեակներուն մէջն է , մի՛ 27 հաւատաք ։ Ը Վասն զի ինչպէս որ փայլակը արևելքէն կ՛ելլէ՝ ու մինչև արևմուտք կ՛երևնայ , անանկ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ գա- 28 լուստը ։ Ղ Քանզի ուր որ մեռած մարմին կայ , հոն պիտի ժողովուին արծիւները ։

29 Եւ Ղշուտ մը ան նեղութեան օ- րերէն ետև՝ Ե արեգակը պիտի խա- ւարի , ու լուսինը իր լոյսը պիտի չտայ , և աստղերը երկինքէն պիտի իյնան , ու երկնից զօրութիւնները 30 պիտի շարժին ։ Ե Եւ ան ատենը Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևնայ երկինքի մէջ , Հու ան ատենը երկ- րիս բոլոր ազգերը կոծ պիտի ընեն , Ե ու պիտի տեսնեն Որդին մարդոյ երկինքի ամպերուն վրայ եկած՝ զօրութիւնով ու մեծ փառքով ։ 31 Ե Եւ անիկայ իր հրեշտակները պի- տի խրկէ մեծաձայն փողով , ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն՝ երկինքին մկ ծայրէն մինչև մկալ ծայրը ։

32 Ց Թզենիէն առակ մը սորվեցէք . որ երբ անոր ոստերը կը կակուղ- նան , ու տերևները կը ցցուին , 33 գիտէք թէ ամառը մօտ է ։ Նոյն- պէս ալ դուք երբոր աս ամէն բա- ները տեսնէք , գիտցէք Ե որ մօտ է 34 դռներուն քովը ։ Ճշմարիտ կ՛ը- սեմ ձեզի , որ Ետս ազգը պիտի չանցնի , մինչև որ աս ամէն բա- 35 ները ըլլան ։ Ֆ Երկինքը ու երկիրը պիտի անցնին , բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին ։

36 Ֆ Իսկ ան օրուան և ան ժամուն համար՝ մկը չգիտեր , ո՛չ ալ երկ- նից Ֆ հրեշտակները , Ֆ հապա միայն 37 իմ Հայրս ։ Բայց ինչպէս որ Նոյի օրերը Ի Ե՝ , Որդւոյ մարդոյ գա- լուստն ալ այնպէս պիտի ըլլայ ։ 38 Ե Քանզի ինչպէս էին ան օրերը ջրհեղեղէն առաջ , կ՛ուտէին՝ կը խմէին՝ կնիկ կ՛առնէին ու երկան կու տային , մինչև ան օրը՝ որ Նոյ 39 տապանը մտաւ . Եւ չգիտցան՝ մինչև որ ջրհեղեղը եկաւ , ու ամ- ենը վերցուց . Որդւոյ մարդոյ գա- լուստն ալ այնպէս պիտի ըլլայ ։ 40 Բ Ըն ատենը Ի Ե՝ երկու , հո՛ղի արտի մը մէջ ըլլան , մկը պի- տի առնուի՝ ու մկալը ձգուի . 41 Ե Ի Ե՝ երկու կնիկ մկ աղօ- րիքի մէջ աղալու վրայ դառնուին , մկը պիտի առնուի՝ ու մկալը ձգուի ։

Ամի Տեառն 33

7 թիւն բրաւ անոր , Ու մեծ ձայնով մը աղաղակեց՝ ու բսաւ . Դուն իմ հետս ի՞նչ բան ունիս Գիսուս՝ Որդի Աստուծոյ բարձրելոյ . քեզ Աստուծով կ՝երդմնցընեմ՝ զիս մի
8 տանջեր ։ (Քանզի կ՝բսէր անոր . Պիղծ ոգի ելիր ատ մարդէն ։)
9 Եւ անոր հարցուց թէ՝ Ընուանդ ի՞նչ է . ու բսաւ անոր . Իմ ա-
‡ Կամ՝ կազմէր
նուանս Լեգէան է , ինչու որ մենք
10 շատ ուր ենք ։ Եւ շատ ‡ կ՝աղաչէին անոր՝ որ զերեներ ան երկրէն դուրս
11 չիրկէ ։ Եւ հոն լեռանը մօտ խո-
12 զերու մեծ երամակ մը կար՝ որ կ՝ա-
րածուէին ։ Ու բոլոր դևերը աղաչեցին անոր՝ ու բսին . Մեզ խոզերուն խրկէ , որ անոնց մէջը
13 մտնենք ։ Եւ Գիսուս շուտ մը հրաման տուաւ անոնց . ու երբոր պիղծ ոգիները ելան խոզերուն մէջը մտան . և երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց , (երկու հազարի չափ կային ,) ու ծովուն մէջը խեղ-
14 դուեցան ։ Եւ խոզարածները փախան , ու պատմեցին քաղաքը ու գաւառակները . և մարդիկ ելան տեսնելու՝ թէ ինչ բան է որ եղաւ ։
15 Ու եկան Գիսուսին , և տեսան դիւահարը՝ որ լեգէոն ունէր , որ հագուած ու խելքը վրան եկած նըս-
16 տեր էր , ու վախցան ։ Եւ անոնք որ տեսեր էին , պատմեցին անոնց՝ թէ ինչ եղաւ դիւահարին . նաև խո-
17 զերուն վրայով ։ Եւ սկսան աղաչել անոր , որ իրենց սահմաններէն
Եմատ . ը . 34 ։ Գոր . ժգ . 39 ։
18 րէն երթայ ։ Ու երբոր անիկայ նաւը մտաւ , † դիւահարը կ՝աղաչէր
Ցամի Տեառն 31
† Ղու . ը . 38 ։
19 անոր՝ որ հետը ըլլայ ։ Եւ Գիսուս թող չտուաւ անոր . հապա բսաւ անոր . Գնա քու տունդ քու ընտանիներուդ , ու պատմէ՛ անոնց ինչ որ Տէրը քեզի բրաւ , և ողոր-
20 մեցաւ քեզի ։ Ան ալ գնաց , և սկսաւ Դեկապօլիսի մէջ քարոզել ինչ որ Գիսուս իրեն բրաւ . և ամենը կը զարմանային ։
21 Ու երբոր Գիսուս նաւով նորէն
† Մատ . թ . 1 ։ Ղու . ը . 40 ։
22 գաւառն մէկալ կողմը անցաւ , շատ բազմութիւն ժողովուեցաւ անոր քովը , և ինք ծովեզերքն էր ։ Եւ
Եմատ . թ . 18 ։ Ղու . ը . 41 ։
23 ահա ժողովրդապետներուն մէկը կու գար , որուն անունը Յայրոս էր . ու երբոր տեսաւ զանիկայ , անոր ոտքը ինկաւ . Եւ շատ կ՝աղաչէր անոր՝ ու կ՝բսէր թէ , Իմ աղջիկս մեռնելու մօտ է , որ գաս անոր վրայ ձեռք դնես , որպէս զի ազատի ,
24 ու պիտի ապրի ։ Եւ գնաց անոր հետ . ու շատ բազմութիւն իր ետևէն կ՝երթային՝ ու կը նեղէին զինքը ։
25 Եւ կնիկ մը՝ որ տասներկու տարի արիւնի տեառտեսութեան
ՂՎ . ժե . 25 ։ Մատ . թ . 20 ։
26 մէջ էր , Ու խիստ վշտացած էր շատ բժիշկներէն , և իր բոլոր ունեցածը վատներ էր , ու օգուտ մը չէր գտեր , հապա ևս առաւել զայրա-
27 ցեր էր , երբոր Գիսուսին վրայով լսեց , ետևէն ևկաւ բազմութեանը մէջ , ու անոր հանդերձին դպաւ .
28 Քանզի կ՝բսէր , Թէ որ միայն անոր հանդերձներուն դպչիմ , պիտի
29 բժշկուիմ ։ Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ . ու իր մարմինին մէջ իմացաւ՝ թէ տան-
30 ջանքէն բժշկուեցաւ ։ Եւ Գիսուս շուտ մը գիտնալով իր անձին մէջ ան էզօրութիւնը՝ որ իրմէն ելաւ ,
Ղու . է . 19 ։ ը . 46 ։
դարձաւ բազմութեանը մէջ՝ ու բսաւ . Ո՞վ դպաւ իմ հանդերձ-
31 ներուս ։ Եւ իր աշակերտները բսին իրեն . Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ , ու կ՝բ-
32 սե՞ս թէ՝ Ո՛վ ինծի դպաւ ։ Եւ իր բոլորտիքը կը նայէր որ աս բա-
33 նը ընողը տեսնէ ։ Ու կնիկը վախցաւ՝ ու դողաց , ինչու որ գիտէր թէ իրեն ինչ եղաւ . և եկաւ՝ անոր առջևը ինկաւ , ու բոլոր ճշմարտութիւնը
34 չիտկէ չիտակ զրուցեց անոր ։ Եւ Գիսուս բսաւ անոր . Ո՛դիկ՝ դուստր , քու հաւատքդ քեզ բժշկեց . գնա խաղաղութեամբ , ու բժշկուած եղիր քու տանջանքէդ ։
Մատ . թ . 22 ։ Գաղ . ժ . 52 ։ Գոր . ժգ . 8 ։
35 Երբոր ինքը դեռ կը խօսէր , ժողովրդապետին տունէն մարդ եկան՝ ու բսին թէ , Աղջիկդ մեռաւ , ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնե-
Ղու . ը . 49 ։
36 ցընես ։ Իսկ Գիսուս բսուած խօս-

Յամի Տեառն 31

քը լսածին պէս՝ ժողովրդապետին ըսաւ . Մի վախնար , միայն Թէ
37 Հաւատա : Եւ մէկը Թող չտուաւ իր հետը երթալու , բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակո-
38 բոսին եղբայրը Յովհաննէսը : Ու ժողովրդապետին տունը գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ
39 ու աղաղակողներ : Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ խռովեր էք՝ ու կուլաք . մանուկը մեռած
40 չէ , հապա †կը քնանայ : Եւ ծաղր կ'ընէին անիկայ . բայց ինքը ամէնը դուրս հանելով՝ իր հետը առաւ մանուկին հայրը ու մայրը՝ և անոնք որ իր հետն էին , ու մտաւ հոն՝ ուր
41 որ մանուկը պառկած էր : Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր . Յալիթա՝ կումի , որ կը
42 թարգմանուի , Ա՛ղջիկ՝ (քեզի կ'ը-
43 սեմ ,) ելիր : Եւ իսկոյն աղջիկը ոտք ելաւ , ու կը քալէր , ինչու որ տասներկու տարեկան էր . ու մեծ ապշութեամբ ապշեցան : Եւ
Ա սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մէկը չգիտնայ աս բանը . ու ըսաւ որ անոր ուտելիք տան :

Ա Մատ . ժ . 1 : Գլ . գ . 13 . 14 : Ղու . Թ . 1 :

† Յով . ժբ . 8 :

Ա Մատ . ժ . 11 : Ղու . Թ . 4 : ժ . 7 . 8 :

Ա Մատ . ժ . 14 : Ղու . ժ . 10 :

Ե Գոր . ժգ . 51 : ժբ . 6 : * Ո՛ահ չոռ նէ :

Ա Մատ . ը . 4 : Թ . 30 : ժբ . 16 : ժէ . 9 : Գլ . գ . 12 : Ղու . ե . 14 :

Յամի Տեառն 31

ԳԼ . Զ

1 Քրիստոս անարգութիւն կը կրէ իր քաղաքակիցներէն . 7 տասներկու աշակերտներուն իշխանութիւն կու տայ պիղծ ոգիները հանելու : 14 Զանազան կարծիքներ Քրիստոսի վրայով : 27 Յովհաննէս մկրտիչ կը գլխատուի , 29 և կը թաղուի : 30 Առաքեալներ իրենց քարոզութենէն Յիսուսի կը դառնան : 34 Հինգ հացին ու երկու ձուկին հրաշքը : 48 Քրիստոս ծովուն վրայ կը քալէ . 53 և ամէն իրեն դալող ցաւագարները կը բժշկէ :

1 Ու †անկէ ելլելով՝ եկաւ իր երկիրը , ու անոր աշակերտները իր
2 ետևէն գացին : Եւ շաբաթ օրը հասնելուն՝ սկսաւ ժողովարանին մէջ սորվեցընել . ու շատերը լսելով՝ կը զարմանային ու կ'ըսէին . †Ասիկայ ո՞ւրկից ունի աս բաները , կամ աս ի՞նչ իմաստութիւն է որ
3 ասոր տրուած է , որ ասանկ հրաշքը ներ կ'ըլլան ասոր ձեռքովը : Ասիկայ հիւսը չէ՞ , Մարիամին որդին , և †Յակոբոսին ու Յովսեսին և Յուդային ու Սիմոնին եղբայրը . ու ասոր քոյրերը հոս մեր քովը չե՞ն . և †անոր վրայով կը դայթակղէ-
4 ին : Բայց Յիսուս ըսաւ անոնց . †Մարգարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին մէջ , ու իր ազգականներուն , և իր տանը մէջ :
5 Ու չէր կրնար հոն մէկ հրաշք մըն ալ ընել , միայն Թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ , ու
6 բժշկեց ։ Եւ †անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար . Ու շրջակայ գեղերը պտըտելով՝ կը սորվեցընէր :

Ա Մատ . ժգ . 54 : Ղու . գ . 16 :

† Յով . գ . 42 :

† Մատ . ժբ . 46 : Գաղ . ա . 19 :

† Մատ . ժա . 6 :

† Ս ..... ժգ . 57 : Յով . գ . 44 :

Ը Ես . Ծն . ժթ . 22 : ըւ . 25 : Մատ . ժգ . 58 : Գլ . Թ . 22 :

† Ես . ժթ . 16 :

Ը Մատ . Թ . 35 : Ղու . ժգ . 22 :

7 Եւ իրեն կանչեց տասներկուքը . ու սկսաւ երկու երկու իրկել զանոնք , ու անոնց իշխանութիւն
8 տուաւ պիղծ ոգիներուն վրայ : Եւ պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը չառնեն , բայց միայն գաւազան մը . ոչ տոպրակ , ոչ հաց , ոչ ստակ գօտիներնուն մէջ .
9 Հապա †հողաթափ հագնին . և Կրկին հանդերձ մի՛ հագնիք՝ ը-
10 ըսաւ : Ու ըսաւ անոնց . Որ տուն որ մտնէք , հոն կեցէք մինչև որ անկէ
11 ելլէք : Եւ անոնք որ ձեզ չեն ընդունիր , ու ձեզի մտիկ չեն ըներ , երբոր անկէ կ'ելլէք , †ոտքերնուդ տակի փոշին թօթվեցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար : * Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Սոդոմացւոց ու Գոմորացւոց աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան Թէ ան քաղաքին" :
12 Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին ,
13 որ †ապաշխարեն : Եւ շատ դևեր կը հանէին , †ու շատ հիւանդներ եղով կ'օծէին ու կը բժշկէին զանոնք :

† Ցակ . ե . 14 :

14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց , (ինչու որ անոր անունը յայտնի եղաւ ,) ու կ'ըսէր , Թէ Յովհաննէս մկրտիչը մեռելներէն յարուցեալ է , ու անոր համար
15 հրաշքներ կ'ըլլան անով : Ուրիշները կ'ըսէին Թէ Եղիան է . ու ուրիշներն ալ կ'ըսէին Թէ Մարգարէ մըն է , կամ մարգարէից մէկուն
16 պէս : Բայց Հերովդէս լսեց , ըսաւ . Ասիկայ Յովհաննէսն է որուն գլուխը ես կտրեցի . մեռելներէն յարուցեալ է :
17 Քանզի Հերովդէս ինքը †մարդ խրկեց՝ Յովհաննէսը բռնեց , ու կապեց բանտը՝ իր եղբօրը Փիլիպպոսին կնկանը Հերովդիայի համար , ինչու որ իրեն կնիկ առեր
18 էր զանիկայ : Վասն զի Յովհաննէս Հերովդեսին կ'ըսէր . Քեզի օրինաւոր չէ քու եղբօրդ կնիկը
19 ունենալ : Եւ Հերովդիա ոխ ուներ անոր դէմ , ու կ'ուզէր անիկայ
20 մեռցընել , ու չէր կրնար . Ինչու որ Հերովդէս †էր վախնար Յովհաննէսէն , գիտնալով Թէ անիկայ արդար և սուրբ մարդ մըն է . և անոր բերանը կը նայէր , ու անկէ լսելով՝ շատ բան կ'ընէր , և քաղց-
21 րութեամբ անոր մտիկ կ'ընէր : Ու †երբոր դիպուկ օր մը եղաւ , որ Հերովդէս †իր ծննդեան օրը ընթրիք կ'ընէր իր մեծամեծներուն և հազարապետներուն ու Գալիլեացի և-
22 րեւելեներուն . Եւ Հերովդիային աղջիկը հոն գալով խաղաց , ու հաճեցուց եղաւ Հերով-

Յամի Տեառն 31

† Մատ . ժ . 1 : Գլ . գ . 13 . 14 : Ղու . Թ . 1 :

† Գոր . ժբ . 8 :

Ա Մատ . ժ . 11 : Ղու . Թ . 4 : ժ . 7 . 8 :

Ա Մատ . ժ . 14 : Ղու . ժ . 10 :

Ե Գոր . ժգ . 51 : ժբ . 6 : * Ո՛ահ չոռ նէ :

Ա Մատ . ը . 4 : Թ . 30 : ժբ . 16 : ժէ . 9 : Գլ . գ . 12 : Ղու . ե . 14 :

Ա Մատ . ժգ . 1 : Գլ . Թ . 7 :

Ա Մատ . ժգ . 14 : Գլ . ը . 28 :

Յ Մատ . ժգ . 2 : Ղու . գ . 19 :

Ցա . Տ . 30

Ղ Ե . ժբ . 16 : Ի . 21 :

† Մատ . ժգ . 5 : իա . 26 :

Ցա . Տ . 32

† Մատ . ժգ . 6 :

† Ծն . ի . 20 :

Ցամի Տեառն 32

դեսին՝ և իր հետը նստողներուն . Թագաւորը բսաւ աղջկանը . Խընդրէ ինձմէ ինչ որ կ'ուզես , ու
23 պիտի տամ քեզի : Եւ անոր երդում ըրաւ ըսելով . Ինչ որ դուն ինձմէ խնդրես , պիտի տամ քեզի , մինչև Թագաւորութեանս կէսը :
24 Եւ անիկայ դուրս ելլելով՝ իր մօրը բսաւ . Ի՞նչ ուզեմ . ան ալ բսաւ . Ցովհաննէս Մկրտչին գլուխը :
25 Եւ շուտ մը արտորայով Թագաւորին քովը մտաւ՝ ու խնդրեց՝ ըսելով . Կ'ուզեմ որ շուտով սկուտեղի մը վրայ Ցովհաննէս Մկրտչին
26 կրծոյին գլուխը տաս ինծի : Եւ Թագաւորը խիստ տրտմեցաւ . բայց երդումներուն համար՝ ու իր հետը նստողներուն համար՝ չուզեց
27 որ անոր Խնդիրքը մերժէ : Եւ Թագաւորը իսկոյն դահիճ խրկեց , ու հրաման ըրաւ անոր գլուխը բերելու . ան ալ գնաց բանտին մէջ
28 գլխատեց զանիկայ . Եւ սկուտեղով մը բերաւ անոր գլուխը՝ ու տուաւ աղջկանը , և աղջիկը զանիկայ իր մօրը տուաւ : Եւ անոր աշակերտները լսելով , եկան անոր մարմինը վերցուցին , ու գերեզմանի մէջ դրին :
30 Եւ առաքեալները Ցիսուսին բովը ժողովեցան , ու պատմեցին անոր՝ ամէն ինչ որ ըրին և ինչ
31 որ սորվեցուցին : Եւ անիկայ ըսաւ անոնց . Եկէք դուք առանձին անապատ տեղ մը , և քիչ մը հանգչեցէք . քանզի շատերը կային՝ որ կու գային ու կ'երթային . և հաց ուտելու ալ ժամանակ
32 չէին ունենար : Ուստի նաւով անա-
33 պատ տեղ մը գացին առանձին : Ու ժողովուրդները տեսան զանոնք որ կ'երթային , և շատերը զանիկայ ճանչցան , ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն կը վազէին , և անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քո-
34 վը ժողվեցան : Ու Ցիսուս երբոր դուրս ելաւ , շատ ժողովուրդ տեսնելով՝ խղճաց անոնց վրայ . ինչու որ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին . և սկսաւ շատ բաներ սորվեցընել անոնց :
35 Ու երբոր ժամանակը շատ ուշացաւ , իր աշակերտները իրեն եկան՝ ու բսին . Ասիկա անապատ տեղ մըն է , ու ժամանակը ու-
36 շացած է , Արձակէ զանոնք որ երթան բոլորտիքի ագարակներն ու գեղերը՝ ու իրենց համար հաց գնեն , ինչու որ ուտելու բան
37 մը չունին : Բայց անիկայ պատասխան տուաւ՝ ու բսաւ անոնց . Դուք տուէք անոնց որ ուտեն : Եւ բսին իրեն . Երթանք երկու

Ցամի Տեառն 32

հարիւր դահեկանի հաց գնե՞նք՝
38 և տանք անոնց որ ուտեն : Բսաւ անոնց . Քանի՞ նկանակ ունիք , դացէք նայեցէք . ու երբոր գիտցան՝ բսին . Հինգ , ու երկու
39 ձուկ : Եւ հրաման ըրաւ անոնց որ կանանչ խոտին վրայ դունդ
40 դունդ նստին : Եւ դաս դաս նստան՝ հարիւրական ու յիսունական :
41 Ան ալ հինգ նկանակը ու երկու ձուկը առաւ՝ ու դէպ ի երկինքը նայելով , օրհնեց . և մանրեց նկանակները՝ ու տուաւ իր աշակերտներուն , որ անոնց առջևը դնեն . ու երկու ձուկը ամենուն
42 ալ բաժնեց : Եւ ամէնքը կերան ու
43 կշտացան . Եւ տասներկու կողով լեցուն կտորանքները վերցուցին , ինչպէս նաև ձուկերէն ալ : Եւ ան
44 հացերէն ուտողները հինգ հազարի չափ երիկ մարդիկ էին :
45 Եւ շուտ մը իր աշակերտները արտորդուց որ նաւը մտնեն , և իրմէ առաջ միկալ կողմը Բեթսայիդա անցնին , մինչև որ ինքը ժողովուրդը
46 դը արձակէ : Եւ անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ աղօթք ընե-
47 լու : Ու երբոր իրիկուն եղաւ , նաւը ծովուն մէջտեղն էր , ու ինքը
48 մինակ ցամաքն էր : Եւ տեսաւ անոնք որ կը տագնապէին հաւքին՝ թի քաշելու առաջին , ինչու որ հովը իրենց դէմ էր . և գիշերուան չորրորդ պահուն առաջները ծովուն վրայ քալելով կու գայ անոնց , ու
49 կ'ուզէր անոնցմէ անցնիլ : Ան-
50 ոնք երբոր տեսան որ ծովուն վրայ կը քալէր , կարծեցին թէ աչքի երևոյթ բան մըն է , ու կանչուրտ-
50 տեցին . Քանզի ամէնքն ալ զանիկայ տեսան , ու խռովեցան . և ինքը շուտ մը խօսեցաւ անոնց հետ՝ ու բսաւ անոնց . Քաջ եղէք՝ ես
51 եմ , մի՛ վախնաք : Եւ նաւը ելաւ անոնց քովը , ու հովը դադրեցաւ . և անոնք մտքերնուն մէջ չափ դուրս ապշած էին՝ ու կը
52 զարմանային : Վասն զի հացին վրայ խելք հասկը չմտցան . ինչու որ սիրտերնին թմրած էր :
53 Ու միկալ կողմը անցնելով , Գեննեսարեթի երկիրը հասան , և
54 նաւը տեղաւորեցին : Ու երբոր նաւէն ելան , անդր ճանչցան զանիկայ .
55 կոյն ծանչցան զանիկայ . Եւ ասդին անդին վազելով բոլոր շրջակայ տեղուանքը , սկսան մահիճներով հիւանդները բերել՝ ուր որ կը լը-
56 սէին թէ հոն է : Եւ ուր որ կը մտնէր՝ գեղերը կամ քաղաքները կամ ագարակները , հրապարակներուն մէջ կը դնէին հիւանդները , ու կ'աղաչէին իրեն՝ որ գոնէ իր

Նեեմ . ե . 3 ; 6 ; է . 2 ։
Մատ . ժդ . 17 ; Ղու . թ . 13 ; Յով . գ . 9 ; Տե՛ս Մատ . ժե . 34 ; Գլ . ը . 5 ։
Յաթագ . թ . 13 ; Մատ . իգ . 26 ։
Մատ . ժդ . 9 ։
Մատ . ժդ . 22 ; Յով . գ . 17 ։
Ղու . թ . 10 ։
Մատ . ժդ . 13 ։
Գլ . գ . 20 ։
Մատ . ժդ . 14 ։
Մատ . թ . 36 ; ժդ . 14 ։
Ղու . թ . 11 ։
Մատ . ժդ . 15 ; Ղու . թ . 12 ։
Թուա . ժա . 13 ; 22 ; գ Թագ . գ . 43 ։
Մատ . ժդ . 23 ; Յով . գ . 16 , 17 ։
Տե՛ս Ղու . իդ . 28 ։
Գլ . ը . 17 , 18 ։
Գլ . գ . 5 ; ժգ . 14 ։
Մատ . ժգ . 34 ։
Մատ . թ . 20 ; Գլ . ե . 27 , 28 ; Գոր . ժթ . 12 ։

Ցամ. Տեառն 32

Հանդերձին քղանցքին դպչին . և որոնք որ դպան , բժշկուեցան ։

Գլ . Ի

1 Փարիսեցիք կը մեղադրեն Քրիստոսի աշակերտները՝ անլուայ ձեռքով հաց ուտելուն համար ։ 8 Իսկ ինքը կ'ապացուցանէ թէ անոնք մարդոց աւանդութիւնները բռնելով՝ Աստուծոյ պատուիրանքը կ'անարգեն ։ 14 և թէ կերակուրը մարդը չպղծեր ։ 24 Փիւնիկ Սորի կնկանը աղջիկը պիղծ ոգիէ մը կ'ազատէ ։ 31 և խուլ ու դժուարախօս մարդ մը կը բժշկէ ։

— Մատ . ԺԱ . 1 ։

1 Ու Յիսուսի քովը ժողովուեցան փարիսեցիները , ու դպիրներէն ոմանք՝ որ Երուսաղէմէն եկած էին ։

2 Ու երբոր տեսան որ անոր աշակերտներէն ոմանք պիղծ՝ այսինքն անլուայ ձեռքերով հաց կ'ուտէին ,

3 մեղադրեցին ։ Ինչու որ փարիսեցիները ու բոլոր Հրէաները մինչև որ աղէկ մը ձեռքերնին չլուան , հաց չեն ուտեր . քանզի ծերերուն

4 աւանդութիւնը կը բռնեն . Եւ շուկայէն գալնուն՝ թէ որ չլուացուին , չեն ուտեր . և ուրիշ շատ բաներ կայ՝ որ ընդունած են ու կը բռնեն , ըմպելիներու և փարչերու ու պղնձէ ամաններու և անկողիններու լուացմունք .

Բ Մատ . ԺԱ . 2 ։

5 Ներ ։ Բայց աւետը փարիսեցիները ու դպիրները հարցուցին անոր թէ , Ինչու քու աշակերտներդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար , հապա անլուայ ձեռքերով

6 հաց կ'ուտեն ։ Ան ալ պատասխան տուաւ՝ ու բսաւ անոնց . Ազէկ մարգարէութիւն ըրաւ Եսայի՝ ձեզի կեղծաւորներուդ համար , ինչպէս որ գրուած է . Այս ժողովուրդը բերնովը ինծի կը պատուէ , բայց իրենց սիրտը հեռաւ

Եսա . ԽԹ . 13 ։ Մատ . ԺԵ . 8 ։

7 ցած պատուած է ինծմէ . Ու պարապ տեղը զիս կը պաշտեն , մարդոց պատուիրած բանները իբրև վարդապետութիւն սորվեցընելով ։

8 Աստուծոյ պատուիրանքը թող տալով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք , ինչպես՝ փարչերու և գաւաթներու լուացմունքներ . և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք ։

9 Ու բսաւ անոնց . Ազէկ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանքը , որ ձեր աւանդութիւնը պահէք ։ Քանզի Մովսէս բսաւ .

Ել . Ի . 12 ։ Բ Օր . Ե . 16 ։ Մատ . ԺԵ . 4 ։

10 Քու հայրդ ու մայրդ պատուէ . և Ով որ չէ հայրը կամ մայրը ա-

11 նիծէ , մահով թող մեռնի ։ Բայց դուք կ'ըսէք . Թէ որ մէկը չէ հօրը կամ մօրը բսէ , Ան բանը որ ինծմէ պիտի շահիս , Կորբան , (որ բսել է՝ ընծայ ,)

12 Ու այլևս չէք տար անոր բան մը ընել իր

13 հօրը կամ իր մօրը ։ Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր աւանդութիւնովը , որ կ'աւանդէք . և ասոր նման շատ ուրիշ բաներ կ'ընէք ։

14 Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ բսաւ անոնց . Լսեցէք

Մատ . ԺԵ . 10 ։

15 ինծի ամէնքդ՝ ու հասկրցէք ։ Ոչ մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ , ու կարող ըլլայ զանիկայ պղծելու . Հապա ան բաները որ անկէ կ'ելլեն , անոնք են որ մարդը

16 կը պղծեն ։ Ով որ լսելու ականջ ունի , թող լսէ ։

Ը Մատ . ԺԱ . 15 ։

17 Ու երբոր ան բազմութենէն ներս մտաւ , իր աշակերտները հարցուցին իրեն ան առակին համար ։ Ու բսաւ անոնց .

Ը Մատ . ԺԵ . 15 ։

Դուք ալ ատանկ անմիտ էք . չէք հասկրնար թէ ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսի դին կը մտնէ ,

19 չկրնար անիկայ պղծել . Վասն զի չէ թէ անոր սրտին մէջը կը մտնէ , հապա փորը , և արտաքնոցը կ'ելլէ , ու բոլոր կերածները կը մաքրէ ։ Ու բսաւ թէ՝ Ինչ որ կ'ելլէ

Ե Գծ . գ . 5 ։ Բ . 21 ։ Մատ . ԺԵ . 19 ։

21 մարդը ։ Ինչու որ ներսէն մարդոց սրտէն կ'ելլեն չար խորհուրդները . շնութիւններ , պոռնկութիւններ ,

22 Սպանութիւններ , գողութիւններ , ագահութիւններ , չարութիւններ , նենգութիւն , դիճութիւն , չար աչք , հայհոյութիւն , ամբարտաւանութիւն , անզգամութիւն ։ Ա բոլոր չար բաները ներսէն կ'ելլեն , ու կը պղծեն մարդը ։

24 Եւ անկէ ելլելով՝ Յիւրոսի ու Սիդոնի սահմանները գնաց . և տուն մը մտնելով՝ չէր ուզեր որ մէկուն յայտնուի , բայց չկրցաւ

Ի Մատ . ԺԵ . 21 ։

25 Ծածկուիլ . Քանզի կնիկ մը՝ որուն աղջիկը պիղծ ոգի ունէր իր Նէրսէ գալ , լսեց անոր վրայով , ու եկաւ՝

26 անոր ոտքը ինկաւ ։ Եւ ան կնիկը Հեթանոս էր՝ ազգով Փիւնիկ Սորի , ու կ'աղաչէր անոր՝ որ դեր

Գ Գծ . Գլ .

27 իր աղջիկէն հանէ ։ Եւ Յիսուս բսաւ անոր . Թող տուր որ առաջ տղաքը կշտանան . քանզի աղէկ չէ տղոցը հացը առնել , ու շուներուն

28 ձգել ։ Անիկայ պատասխան տուաւ՝ ու բսաւ անոր . Այո՛ Տէր . ինչու որ շուներն ալ սեղանին տակը տղոցը փշրանքներէն կը կերակրուին ։

29 Ան ըսաւ անոր . Ատ խօսքիդ համար գնա , քու աղջիկդ

30 դեր ելաւ ։ Եւ երթալով՝ գտաւ որ դեր ելած , ու աղջիկը անկողինին վրայ պառկած էր ։

31 Ուրեմն նորէն Յիւրոսի ու Սիդոնի սահմաններէն ելլելով՝ եկաւ Գալիլեայի ծովեզերքը Դեկապօլիսի

Ը Մատ . ԺԵ . 29 ։

Ցամի Տեառն 32

ԽՄատ. Թ. 32։ Ղս. ժա. 14։

ԲԳԼ. ը. 23։ Ցօհ. Թ. 6։ ԼԳԼ. գ. 41։ Ցօհ. ժա. 41։ ԺԼ. 1։ ՀՑօհ. ժա. 33. 38։ ՅԼս. Լ. 5. 6։ ՄԱտ. ժա. 5։ ԷԳԼ. ԼԴ. 43։

32 սահմաններուն մէջէն։ Եւ Խմկը բերին անոր առջին՝ խուլ ու դժուարախօս, ու կ՚աղաչէին որ ա-
33 նոր վրայ ձեռք դնէ։ Եւ ժողովուրդէն մէկդի առնելով զանիկայ, իր մատները անոր ականջնե-
րուն մէջը խօթեց՝ ու Թքուբաւ,
34 և անոր լեզուին դպաւ, Ու երկինքը նայելով՝ հառաչեց, ու ը-
սաւ անոր. Եփփաթա, (որ ըսել
35 է՝ բացուէ,) Ու իսկոյն անոր ա-
կանջները բացուեցան, ու անոր լեզուին կապը քակուեցաւ, և շի-
36 տակ կը խօսէր։ Ու չպատուիրեց անոնց՝ որ մէկու մը չըսեն. և որ-
չափ ինքը կը պատուիրէր անոնց, անոնք՝ ալ աւելի կը քարոզէին.
37 Ու չափէ դուրս կը զարմանային և կ՚ըսէին. Ամէն բաները աղէկ ըրաւ
ասիկայ, որ խուլերուն լսել կու-
տայ՝ և համրերուն խօսիլ։

ԳԼ. Ը

1 Քրիստոս հրաշքով կը կերակրէ ժողովուրդը. 11 փարիսեցւոց խնդրած նշանը չուզեր տալ. 15 կը պատուիրէ իր աշակերտներուն որ զգոյշ
բլլան փարիսեցիներուն խմորէն և Հերովդեսեաններուն խմորէն. 22 կոյրի մը աչքերը
կը բանայ. 27 կը ծանուցանէ թէ ինքը Քրիս-
տոս է, որ պիտի չարչարուի ու յարութիւն առնէ. 34 և իր աշակերտները կը յորդորէ որ Համբերին, երբոր նալածուին աւետարա-
նի դատաստանեանը Համար։

1 Ի՚Ն օրերը՝ ժողովուրդը խիստ
շատ բլլալով, և ուտելու բան
մը չունենալով, Յիսուս իրեն կան-
չեց իր աշակերտները՝ ու ըսաւ
2 անոնց. Կը խղճամ ատ ժողովուր-
դին վրայ. ինչու որ հիմա իրեք օր
է որ իմ քովս են, և բան մը չու-
3 նին ուտելու. Եւ թէ որ ատոնք
անօթի խրկեմ իրենց տուները,
ճամբուն մէջ պիտի մարին, ինչու
որ ատոնցմէ ոմանք հեռու տեղէ
4 եկած են։ Եւ իր աշակերտները
պատասխան տուին իրեն. Ասա-
նապատիս մէջ ո՞րկից կրնայ մէկը
5 հացով կշտացընել ատոնք։ Ան Եւ
Հարցուց անոնց. Քանի՞ նկանակ
ունիք. ու անոնք ըսին. Եօթը։
6 Եւ Հրաման ըրաւ ժողովուրդին՝ որ
գետնին վրայ նստին. ու առաւ
եօթը նկանակը, գոհացաւ, և
կտրեց, ու տուաւ աշակերտնե-
րուն, որ ժողովուրդին առջևը դը-
7 նեն. և դրին։ Ու քանի մը մանր
ձուկեր ունէին, և Թօրնեց, ու
Հրաման ըրաւ որ անոնք ալ դնեն
8 անոնց առջևը։ Եւ կերան ու կըշ-
տացան, ու աւելցած կտորուանք-
ները վերցուցին եօթը զամբիւղ։
9 Եւ ուտողները չորս Հազարի չափ
10 էին. ու արձակեց զանոնք։ Եւ
Չուտ մը նաւը մտնելով աշա-
կերտներուն Հետ, եկաւ Դալմա-
նութայի կողմերը։

Ցամի Տեառն 32

ԽՄատ. ժը. 38։ ԺԳ. 1։ Ցօհ. գ. 30։

11 Եւ փարիսեցիները ելլելով՝ սկը-
սան անոր Հետ վիճաբանութիւն
բռնել, և զանիկայ փորձելով՝ իրմէն
12 նշան մը կ՚ուզէին երկինքէն։ Եւ
անիկայ իր Հոգիին մէջ Հառաչե-
լով ըսաւ. Ի՞նչ է որ ասս ազգը
նշան կ՚ուզէ. Ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի որ ասս ազգին նշան պիտի
13 տրուի։ Ու զանոնք թողլով տա-
լով՝ նորէն նաւը մտաւ, ու դնաց
Յ-վ-ն մկալ կողմը։

14 Ու Հայ առնելու մոռցեր էին,
ու նաւուն մէջ իրենց Հետ միայն
15 մէկ նկանակ մը ունէին։ Եւ կը
պատուիրէր անոնց՝ ու կ՚ըսէր.
Նայեցէք և զգուշացէք փարիսե-
ցւոց խմորէն, ու Հերովդեսին խը-
16 մորէն։ Եւ իրարու Հետ կը խոր-
Հէին ու կ՚ըսէին թէ, Հաց չու-
17 նենալնուս Համար է։ Իսկ Յիսուս
անոնց խորհուրդը գիտնալով՝ ըսաւ
անոնց. Ինչո՞ւ կը խորհիք թէ
Հաց չունիք. Դեռ տակաւին չէք
Հասկընար, ու չէք իմանար. դեռ
18 սիրտերնիդ թմրա՞ծ է. Աչքեր ու-
նիք, ու չէք տեսներ, և ականջներ
ունիք, ու չէք լսեր, և չէք յիշեր։
19 Երբոր հինգ նկանակը հինգ Հա-
զարին կտրեցի, քանի՞ կողով լե-
ցուն կտորուանք վերցուցիք. Ըսին
20 անոր. Տասներկու։ Ու երբոր
եօթը նկանակը չորս Հազարին կտ-
րեցի, քանի՞ զամբիւղ լեցուն կը-
տորուանք վերցուցիք. անոնք ալ
21 ըսին. Եօթը։ Ու ըսաւ անոնց.
Հա՞ դեռ չէք Հասկընար։
22 Եւ Բեթսայիդա եկաւ, ու անոր
առջևը կոյր մը բերին, ու կ՚աղա-
23 չէին իրեն որ դպչի անոր. Եւ ա-
նիկայ կոյրին ձեռքէն բռնելով՝ գե-
ղէն դուրս Հանեց, Թու անոր աչ-
քերուն Թքնելով՝ ձեռք անոր
վրայ դրաւ, ու կը Հարցընէր անոր՝
24 թէ բան մը կը տեսնէ՞. Ան ալ
նայեցաւ՝ ու կ՚ըսէր. Մարդիկներ
կը տեսնեմ ծառերու պէս որ կը
25 պտրտին։ Նորէն ձեռք անոր
աչքերուն վրայ դրաւ, ու անոր
նայիլ տուաւ. և ողջացաւ ու ամէն
26 բան Համարձակ կը տեսնէր։ Եւ զրկեց զանիկայ իր տունը՝ ըսելով. Գեղը մի՛ մտներ, ու Թգեղին մէջ մէկուն մի՛ ըսեր։
27 Եւ Յիսուս իր աշակերտներուն Հետ Մկտեղ Փիլիպպոսի Կեսարիային գեղերը ելաւ. ու ճամբուն մէջ կը Հարցընէր իր աշակերտներուն՝ ու կ՚ըսէր անոնց. Ինծի Համար ո՞վ կ՚ըսեն մարդիկ՝ թէ եմ։
28 Եւ անոնք պատասխան տուին՝ ը-
սին. Յովհաննէս Մկրտիչը.

ԽՄատ. թ. 32։ Ղս. ժա. 14։

ԲԳԼ. ը. 23։ Ցօհ. Թ. 6։ ԼԳԼ. գ. 41։ Ցօհ. ժա. 41։ ԺԼ. 1։ ՀՑօհ. ժա. 33. 38։ ՅԼս. Լ. 5. 6։ ՄԱտ. ժա. 5։ ԷԳԼ. ԼԴ. 43։

ԽՄատ. ժե. 32։

ԽՄատ. ժե. 34։ Ցօհ. գԼ. 38։

ԽՄատ. ժե. 39։

ԽՄատ. ժե. 19։ ԳԼ. գ. 41։

ԽՄատ. ժե. 39։

ԽՄատ. ժը. 5։

ԽՄատ. ժը. 6։ Ղս. ժը. 1։

ՀՄատ. ժգ. 7։

ԲԳԼ. գ. 52։

ԽՄատ. ժգ. 20։ ԳԼ. գ. 43։ Ղս. թ. 17։ Ցօհ. գ. 13։

ՅՄատ. ժե. 37։ ՀՄր 8։

ԼԳԼ. գ. 52։ ՀՄր 17։

ԽԳԼ. Ե. 33։

ԽՄատ. ը. 4։ ԳԼ. Ե. 43։

ՅՄատ. ժգ. 18։ Ղս. թ. 18։

ՀՄատ. ժգ. 2։

Ցափ Ցեառն 32

և ուրիշները՝ Եղիան , ուրիշներն
29 ալ՝ մարգարէներէն մէկը : Եւ
ինքը բսաւ անոնց . Հապա դուք
ինծի համար ո՞վ կ՚ըսէք թէ եմ.
պատասխան տուաւ Պետրոս՝ ու
բսաւ անոր . Դուն ես Քրիստո-
30 սը : Ետ սաստիկ պատուիրեց ա-
նոնց՝ որ իրեն համար մէկու մը
չպրուցեն :
31 Ու Սկսաւ սորվեցընել անոնց
թէ , Պէտք է որ Որդին մարդոյ շատ
չարչարանքներ կրէ , ու երէցներէն
և քահանայապետներէն ու դպիր-
ներէն մերժուի , ու սպաննուի , և
իրեք օրէն ետև յարութիւն առնէ :
32 Ու -- խօսքը յայտնի խօսեցաւ .
և Պետրոս մէկդի առաւ զանիկայ ,
ու սկսաւ յանդիմանել զանիկայ :
33 Եւ ինքը դարձաւ՝ ու իր աշակերտ-
ներուն նայելով , յանդիմանեց
Պետրոսը՝ ու բսաւ . Ետին դնա՝
Սատանայ , ինչու որ դուն Աստու-
ծոյ բաները չես մտածեր , հապա
մարդոց բաները :
34 Եւ ժողովուրդը իր աշակերտնե-
րուն հետ մէկտեղ իրեն կանչելով՝
բսաւ անոնց . Ո՞վ որ կ՚ուզէ իմ
ետևէս գալ , թող իր անձը ու-
րանայ , և իր խաչը վերցընէ , ու
35 իմ ետևէս գայ : Վասն զի ով
որ կ՚ուզէ իր անձը ապրեցընել ,
պիտի կորսընցընէ անիկայ . և ով
որ ինծի ու աւետարանին համար
իր անձը կորսընցընէ , պիտի ապ-
36 րեցընէ անիկայ : Քանզի ի՞նչ
օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշ-
խարհը վաստկի , և իր անձը կոր-
37 սընէ . կամ իր անձին համար
ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ :
38 Վասն զի ով որ ըզխս ու իմ խօս-
քերս ՝---նէը ամբի սեպէ աս
շնացող ու մեղաւոր ազգիս մէջ ,
Որդին մարդոյ ալ զանիկայ ՝---
նէը ամբի պիտի սեպէ՝ երբոր գայ
իր Հօրը փառքովը սուրբ հրեշ-
39 տակներուն հետ : Եւ բսաւ ա-
նոնց . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ
հոս ներկայ եղողներէն մէկ քանի-
ները կան՝ որոնք մահուան համը
պիտի չառնեն , մինչև որ տեսնեն
Աստուծոյ թագաւորութիւնը զօ-
րութիւնով եկած :

Գլ . Թ

1 Քրիստոսի այլակերպութիւնը : 11 Քրիստոս իր աշակերտներուն կը սորվեցընէ Եղիայի գալուն վրայով . 24 խուլ և համր դև մը կը հանէ . 30 կը նախաձայնէ իր մահը և յարութիւնը . 34 կը յորդորէ իր աշակերտները որ հեզ ըլլան . 38 և կը պատուիրէ անոնց որ իրեն հակառակ չխոչընդոտեն , ու հաւատացեալներուն գործակցութիւն չտան :

1 Ու -- ըսաւ անոնց . Վստահ կ՚ըսեմ ձեզի , որ
կան ասոնց մէջ կայնողներէն մէկ քանի-
ներ որ մահ չեն տեսնիր մինչև որ տեսնեն
Աստուծոյ թագաւորութիւնը զօրութեամբ
գալու :
2 Վեց օրէն ետև Յիսուս իր հետ առաւ Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը , ու անոնք
մէկ բարձր լեռ մը հանեց առանձին , և անոնց առջևը այլակերպե-
3 ցաւ : Ու իր հանդերձները եղան փայլուն և խիստ ճերմակ , անանկ որ երկրի վրայ թափիչ մը չկրնար այնպէս ճերմկցընել , Ու եղիան Մովսէսին հետ երևցաւ անոնց , և
4 Յիսուսին հետ կը խօսէին : Եւ Պետրոս պատասխան տուաւ՝ ու բսաւ Յիսուսին . Ռաբբի՝ աղէկ է որ հոս կենանք . ու իրեք խրճիթ շինենք . մէկը քեզի , և մէկը Մովսէսին , ու մէկը Եղիային . Վասն
6 զի չէր գիտեր թէ ինչ խօսի , ինչու որ զարհուրեր էին : Եւ մէկ
7 ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ , ու ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով . Ատիկայ է իմ սիրելի որդիս , ատոր մտիկ ըրէք : Եւ յանկարծ ապին
8 անդին որ նայեցան , ալ ուրիշ մէկը չտեսան , հապա մինակ Յիսուսը իրենց հետ : Ու երբոր լեռնէն վար կ՚իջնէին , պատուիրեց անոնց որ տեսածնին մէկու մը չպատմեն , բայց միայն Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնէլէն
9 ետև : Եւ անոնք ան խօսքը պահեցին , ու մէջերնին հարցուփորձ կ՚ընէին՝ թէ մեռելներէն յարու-
10 թիւն առնելը ի՞նչ է : Եւ իրեն հարցուցին՝ ու բսին . Ուրեմն ի՞նչ է որ դպիրները կ՚ըսեն թէ , Պէտք
11 է որ առաջ Եղիան գայ : Ընդհակառակն պատասխան տուաւ՝ ու բսաւ անոնց . Ճիրաւի առաջ Եղիան կու գայ , և ամէն բան կարգի կը դնէ . և թէ ինչուր գրուած է Որդոյ մարդոյ համար , որ շատ չարչարանքներ պիտի կրէ՝ ու չանարհ-
12 գուի . Բայց ձեզի կ՚ըսեմ , որ Եղիան եկաւ ալ , և ինչ որ ուզեցին՝ բրին անոր . ինչպէս որ գրուած է անոր համար :
13 Ու աշակերտներուն քովը գալով՝ տեսան շատ ժողովուրդ անոնց բոլորտիքը և դպիրները , որ վիճաբանութիւն կ՚ընէին անոնց հետ :
14 Եւ շուտ մը բոլոր ժողովուրդը երբոր տեսան անիկայ՝ խիստ զարմացան , ու առաջ վազելով՝ բարև
15 կու տային անոր : Եւ հարցուց դպիրներուն թէ , ի՞նչ վիճաբա-
16 նութիւն կ՚ընէք անոնց հետ : Ու ժողովուրդէն մէկը պատասխան տալով՝ բսաւ . Վարդապետ՝ իմ որդիս քեզի բերի , որ համր ոգի
17 ունի . Եւ ուր որ անոր հասնի , զանիկայ գետինը կը զարնէ . ան ալ կը փրփրի , և իր ակռաները կը կճտցընէ , ու կը ցամքի . և քու աշակերտներուդ բսի որ զանիկայ
18 հանեն , ու չկրցան : Պատասխան տուաւ անոնց՝ ու բսաւ . Ո՛վ ան-

Ցափ Ցեառն 32

Բ Դատ . է . 9 : Մատ . իբ . 3 :

Ֆ Մատ . ժէ . 9 :

Ր Մարկ . գ . 5 : Մատ . ժէ . 10 :

Ի Սադ . իր . 6 : Եր . ծգ . 2 , ՃԼ : Դան . թ . 26 :

Ի Մատ . ժա . 14 : ԺԷ . 12 : Ղուկ . ա . 17 :

Ը Մատ . ժէ . 14 : Ղուկ . թ . 37 :

Ի Մատ . ժէ . 14 : Ղուկ . թ . 38 :

Ն Մատ . ժ . 33 : Ղուկ . թ . 26 : Ժբ . 9 :

Ես Հռով . ա . 16 : Բ Տիմ . ա . 8 : բ . 12 :

Ա Մատ . ժգ . 28 : Ղուկ . թ . 27 :

Ե Մատ . իգ . 30 : իէ . 31 : Ղուկ . իր . 18 :

Ա Մատ . ժէ . 1 : Ղուկ . թ . 28 :

Ֆ Մատ . ժ . 38 : ԺԶ . 24 : Ղուկ . թ . 23 : Ժգ . 27 :

Յ Ցօհ . ժբ . 25 :

Ա Մատ . ժգ . 16 : Ցօհ . ղ . 70 : ժա . 27 :

Ը Մատ . ժգ . 20 :

Ե Մատ . ժգ . 21 : ԺԷ . 21 : Ղուկ . թ . 22 :

Ցամի Տեառն 32

հաւատա ազգ՝ մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի բլլամ , մինչև ե՞րբ ձեզի պիտի համբերեմ . բնծի բերէք
19 անիկայ : Եւ զանիկայ բերին ի-
ր Գլ. ա. 26 ։ Ղկ. Թ. 42 ։ բեն . ի երբոր զԼ տեսաւ զանի-
կայ , շուտ մը ընդ ոգին ցնցեց ա-
նիկայ . ու գետինը բնկած կը թա-
20 պըլլըկէր՝ ու կը փրփրէր : Եւ Ցէսուս հարցուց անոր հօրը՝ ու
բսաւ . Ո՞րչափ ատեն է՝ որ ատ
բանը ատոր եղաւ . ու անիկայ բ-
21 սաւ , Տղայութենէն ի վեր . Եւ շատ անգամ կրակի ու ջուրի մէջ
կը նետէ ատիկայ՝ որ կորսընցընէ .
բայց թէ որ կարող ես հաւատալու ,
բոլոր բաները կարելի է անոր՝ որ կը
ի Մատ. Ժէ. 19 ։ Գլ. ժա. 23 ։ Ղկ. Ժէ. 6։ Ցհ. ժա. 40 ։ 22 հաւատայ : Եւ տղուն հայրը շուտ
մը աղաղակեց՝ ու արցունքով բ-
սաւ . Կը հաւատամ Տէր , օգնէ
24 իմ անհաւատութեանս : Ցիսուս երբոր տեսաւ որ ժողովուրդը վրան
կը դիզուի , սաստեց պիղծ ոգիին՝
ու բսաւ անոր . Համր ու խուլ
ոգի՝ ես կը հրամայեմ քեզի , ելիր
ատկէ , ու ալ չմտնես ա-
25 տոր ներսը : Եւ կանչուրտելով՝ սաստիկ ցնցեց զանիկայ , ու ելաւ .
և Ղ մեռելի պէս եղաւ . անանկ
որ շատերը բսին թէ , Մեռաւ ։
26 Եւ Ցիսուս անոր ձեռքէն բռնելով՝ վերցուց զանիկայ . ան ալ կայ-
լ Մատ. Ժէ. 18 ։ 27 նեցաւ : Ու երբոր ինքը տուն
մտաւ , իր աշակերտները առանձին
հարցուցին իրեն՝ ըսելով . Մենք
ինչու չկրցանք հանել զանիկայ ։
28 Եւ բսաւ անոնց . Ատ տեսակը կա-
րելի չէ ոեւէ բանով մը ելլել ,
բայց միայն աղօթքով ու ծոմա-
պահութեամբ ։
29 Եւ անկէ ելլելով՝ Գալիլեայի
մէջէն կ՚անցնէին . ու չէր ուզեր որ
ի Մատ. Ժէ. 21 ։ Ղկ. Թ. 44 ։ 30 մէկը գիտնայ : Ի ինչու որ կը սոր-
վեցընէր իր աշակերտներուն՝ ու
կ՚բսէր անոնց թէ , Որդին մարդոյ
պիտի մատնուի մարդոց ձեռքը , և
զանիկայ պիտի սպաննեն . ու երբ-
որ սպաննուի , երրորդ օրը յարու-
31 թիւն պիտի առնէ ։ Եւ անոնք չէին հասկընար ան խօսքը , ու կը
վախնային իրեն հարցընելու ։
ի Մատ. Ժը. 1 ։ Ղկ. Թ. 46 ։ Իր. 24 ։ 32 ի Եւ եկան Կափառնայում , ու
երբոր տուն մտաւ , հարցուց ա-
նոնց . Ի՞նչ վիճաբանութիւն կ՚ը-
33 նէիք ճամբան իրարու հետ ։ Եւ անոնք լուռ կեցան . ինչու որ ճամ-
բան մէջ իրարու հետ վիճաբանու-
34 թիւն կ՚ընէին՝ թէ ով մեծ է ։ Ու
ե Մատ. Ժ. 26 , 27 , Գլ. Ժ. 43 ։ երբոր նստաւ , կանչեց տասներ-
կու քը , ու բսաւ անոնց . Եթէ որ
նուն յետինը պիտի բլլայ , և ա-
35 մենուն սպասաւորը ։ Ու հոգայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը .
և իր գիրկը առնելով զանիկայ՝ ը-
36 սաւ անոնց . Ով որ ասանկ տղոց-
մէն մէկը ընդունի իմ անունովս ,
զիս կ՚ընդունի . և ով որ զիս ըն-
դունի , չէ թէ զիս կ՚ընդունի ,
37 հապա զիս խրկողը ։ Պատասխան տուաւ անոր Յովհաննէս՝ ու բսաւ .
Վարդապետ մէկը տեսանք որ քու
անունովդ դևեր կը հանէր , ու մեր
եւէն չպտըտիր , և զանիկայ ար-
գիլեցինք՝ մեր եւէն չպտրտելուն
38 համար ։ Եւ Ցիսուս բսաւ . Մի՛ արգիլէք զանիկայ . ինչու որ մէկը
չկայ որ իմ անունովս հրաշք գոր-
ծէ , ու կարենայ շուտ մը զիս հայ-
39 հոյել . քանզի ան որ մեզի հա-
40 կառակ չէ , մեր կողմէն է ։ Այսան
դի ով որ ձեզի գաւաթ մը ջուր
խմցընէ + աս անունովս՝ թէ դուք
Քրիստոսինն էք , ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի , Անիկայ իր վարձքը պիտի
41 չկորսընցընէ ։ Եւ ով որ գայ-
թակղեցընէ աս պզտիկներէն մէկը
որ ինծի կը հաւատան , աւելի ա-
ղեկ էր անոր՝ որ իշու աղացքի քար
մը իր վիզէն կախուէր , ու ծովը
42 ձգուէր ։ Եւ թէ որ քու ձեռքդ
քեզ կը գայթակղեցընէ , կտրէ ա-
նիկայ . աղեկ է քեզի պակասաւոր
մտնել կեանքը , քան թէ երկու
ձեռք ունենալ՝ ու դժոխքը երթալ
43 չմարելու կրակին մէջը . Ուր որ
անոնց որդը չմեռնիր , ու կրակը
44 չմարիր ։ Եւ թէ որ քու ոտքդ
քեզ կը գայթակղեցընէ , կտրէ
անիկայ . աղեկ է քեզի կաղ մտնել
կեանքը , քան թէ երկու ոտք ու-
նենալ՝ ու դժոխքը ձգուիլ չմա-
45 րելու կրակին մէջը . Ուր որ անոնց
որդը չմեռնիր , ու կրակը չմարիր ։
46 Եւ թէ որ քու աչքդ քեզ կը գայ-
թակղեցընէ , հանէ անիկայ . ա-
ղեկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ
թագաւորութիւնը մտնել , քան
թէ երկու աչք ունենալ՝ ու կրակին
47 դժոխքը ձգուիլ . Ուր որ անոնց
որդը չմեռնիր , ու կրակը չմարիր ։
48 Ինչու որ ամէն մարդ կրակով պի-
տի աղուի , և ամէն զոհ աղով
49 պիտի աղուի ։ Աղը աղեկ է , բայց
թէ որ աղը անհամնայ , ինչո՞վ պի-
տի համեմցընէք . Ձեր անձին մէջ
աղ պահեցէք , և իրարու հետ խա-
ղաղութիւն բռնէք ։

Գլ. Ժ

2 Քրիստոս կը վիճաբանի փարիսեցիներուն հետ՝ կնիկ արձակելու վրայով . 13 իրեն բերուած տղաքը կ՚օրհնէ . 17 կ՚իմացընէ Տարաւտ մարդու մը՝ թէ ինչ բնելու է որ յաւիտենական կեանքը ժառանգէ . 23 Տարաւտիական

Ցամի Տեառն 32

ե Մատ. Ժը. 2 ։ Գլ. ժ. 16 ։ զ Մատ. ժ. 40 ։ Ղկ. Թ. 48 ։ է Թես. ժա. 28 ։ Ղկ. Թ. 49 ։ ը Կոր. ժբ. 3 ։ թ Տես Մատ. ժբ. 30 ։ * Ո՛չ ձեզի հակառակ չէ , ձեր կ Մատ. ժ. 42 ։ + Ո՛չ իմ ն Մատ. ժբ. 6 ։ Ղկ. ժէ. 1 ։ ծ Ը Օր. ժգ. 6 ։ Մատ. ե. 29 ։ ժբ. 8 ։ ա Եր. կգ. 24 ։ ղ Ղև. բ. 13 ։ Եզեկ. խգ. 24 ։ ի Մատ. ե. 13 ։ Ղկ. ժգ. 34 ։ ձ Եփս. գ. 29 ։ Կող. գ. 6 ։ ղ Հով. ժբ. 18։ ժգ. 19։ բ Կոր. ժգ. 11 ։ Եբր. ժբ. 14 ։

Ցամի Տեառն 33

վանգը կը ցուցընէ իր աշակերտներուն · 28 վարձք կը խոստանայ անոնց՝ որ աւետարանին համար իրենց տ՚ր և իջէ բաները կը թողուն · 32 կը նախազգէ իր մահը և յարութիւնը · 35 երկու փառասէր աշակերտները կը խրատէ որ ունելի իրեն հետ չարչարութիւը մասնին · 46 և կոյր Բարտիմէոսին աչքերը կը բանայ ։

1 Եւ մտանկէ եկելով՝ Հրէաստանի սահմանները եկաւ Յորդանանու անդիի կողմէն, ու նորէն ժողովուրդները անոր քովը կը ժողվուէին. և ինչպէս որ սովորութիւն ունէր, դարձեալ կը սորվեցընէր անոնց ։

Մատ.ժթ. 1 ։ Ցոհ.ժ. 40 ։ Ժա. 7 ։

2 Ու փարիսեցիները քովը եկան, և զանիկայ փորձելով կը հարցընէին անոր թէ Արժա՞ն է որ երիկր իր

Մատ.ժթ. 3 ։

3 կնիկը արձակէ ։ Եւ անիկայ պատասխան տուաւ՝ ու անոնց ըսաւ. Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց ։

4 Եւ անոնք ըսին. Մովսէս հրաման տուաւ արձակման գիր գրել, ու արձակել ։

Բ Օր. իդ. 1 ։ Մատ. ե. 31 ։ Ժթ. 7 ։

5 Եւ Ցիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ. Ձեր սրտին կարծրութեանը համար գրեց ձեզի

Ծն. ա. 27 ։ ե. 2 ։

6 զատ պատուէրը. Բայց ստեղծագործութեան սկիզբէն Ա՚ստուած անոնք արու և էգ րաւ, —— ը——.

Ծն. բ. 24 ։ ա Կոր. գ. 16 ։ Եփես. ե. 31 ։

7 Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ, և իր կնկանը

8 պիտի յարի. Ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան. ուստի այլ երկուք չեն, հապա մէկ մարմին.

9 Ուրեմն ան որ Աստուած միաւորեց, մարդ թող չջատէ ։

10 Եւ տունը իր աշակերտները նորէն նոյն

11 բանը հարցուցին իրեն ։ Ու ըսաւ անոնց. Ով որ իր կնիկը արձակէ՝ և ուրիշ մը առնէ, անոր դէմ

Ղեւ. ժգ. 18 ։ Հռով. է. 3 ։ ա Կոր. է. 10, 11 ։

12 շնութիւն կ՚ընէ ։ Ու կնիկ մը թէ որ իր էրիկէն զատուի և ուրիշ էրկան մը ըլլայ, շնութիւն կ՚ընէ ։

Մատ.ժթ. 13 ։ Ղեւ. ժբ. 15 ։

13 Եւ մասր տղաք բերին իրեն, որ անոնց դպչի. բայց աշակերտները

14 կը յանդիմանէին բերողները ։ Ցիսուս երբոր տեսաւ, սրդոզելով՝ անոնց ըսաւ. Թող տուէք որ մանր տղոցը ինծի գան, և մի արգիլէք զանոնք. ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը զանոնկից

Ա Կոր. ժգ. 20 ։ Գործ. բ. 2 ։

15 նն է ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի. Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ անոր

Մատ.ժբ. 3 ։

16 մէջը ։ Եւ անոնք գիրկը առաւ, վրանին ձեռք դրաւ, ու օրհնեց զանոնք ։

17 Ու երբոր անիկայ դուրս ելաւ ճամբուն մէջ, ահա մէկ մարդ մը վազեց՝ ու անոր առջեւը ծունկ չոքելով կը հարցընէր անոր՝ —— Վարդապետ. Բարի վարդապետ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը

Մատ.ժթ. 16 ։ Ղեւ. ժբ. 18 ։

18 ժառանգեմ ։ Եւ Ցիսուս ըսաւ անոր. Ինչո՞ւ զիս բարի կ՚անուանես. Մէկն ի զատ բարի չկայ,

19 դ Աստուած ։ Պատուիրանքները դիտես. Չընութիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Զրկանք մի ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ ։

Ել. ի ։ Հռով. ժգ. 9 ։

20 Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր. Վարդապետ՝ ասոնք ամէնը մանկութենէս ի

21 վեր պահեր եմ ։ Եւ Ցիսուս անոր նայելով՝ սիրեց զանիկայ, ու ըսաւ անոր. Մէկ բան մը պակաս է քեզի. դնա ունեցածդ ծախէ, և տուր աղքատներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և խաչը վերցուր՝ ու եկուր իմ ետեւէս ։

Մատ. գ. 19, 20 ։ ժթ. 21 ։ Ղուկ. ժբ. 33 ։ ժգ. 9 ։

22 Եւ անիկայ —— խօսքին համար խոժոռելով՝ տրտմած գնաց. ինչու

23 որ շատ ստացուածք ունէր ։ Եւ Ցիսուս իր բոլորտիքը նայելով՝ ըսաւ իր աշակերտներուն. Որչափ դժուար է անոնց՝ որ հարստութիւն ունին, Աստուծոյ թագաւո-

Մատ.ժթ. 23 ։ Ղուկ. ժբ. 24 ։

24 րութիւնը մտնել ։ Եւ աշակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վրայ. բայց Ցիսուս նորէն պատասխան տալով՝ անոնց ըսաւ. Որդեակներ՝ որչափ դժուար է Ա՚ստուծոյ հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թագաւորու-

Ծն. լ. 24 ։ Սաղ. ծբ. 7 ։ կբ. 10 ։ ա Տիմ. գ. 17 ։

25 թիւնը մտնել ։ Դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագա-

26 ւորութիւնը մտնէ ։ Եւ անոնք խիստ շատ կը զարմանային՝ ու կ՚ըսէին իրարու. Ալ ով կրնայ

27 փրկուիլ ։ Եւ Ցիսուս անոնց նայելով՝ ըսաւ. Ա՚ն մարդոց կողմանէ անկարելի է, բայց ոչ Աստուծոյ կողմանէ. քանզի Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի

Երեմ. լբ. 17 ։ Մատ. ժթ. 26 ։ Ղուկ. ա. 37 ։

28 է ։ Պետրոս սկսաւ ըսել անոր. Ահա մենք ամէն բան թողուցինք

Մատ.ժթ. 27 ։ Ղուկ. ժբ. 28 ։

29 և քու ետեւդ եկանք ։ Եւ Ցիսուս պատասխան տալով՝ ըսաւ. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Մէկը չկայ որ թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝ ինծի համար ու ա-

30 ւետարանին համար, Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա աս աստենս՝ տուներ, ու եղբայրներ, և քոյրեր, ու մայրեր, և որդիներ, ու արտեր՝ հալածանաց հետ. և գալու աշխարհին մէջ յաւիտենա-

Ա Տիմ. ե. 9 ։ Ղուկ. ժբ. 30 ։

Մատ.ժթ. 30 ։ ի. 16 ։ Ղուկ. ժգ. 30 ։

31 կան կեանքը ։ Բայց շատ առաջինները պիտի ըլլան յետին, ու յետինները՝ առաջին ։

Մատ. ի. 17 ։ Ղուկ. ժբ. 31 ։

32 Եւ անոնք դեպ ի Երուսաղէմ

Ցամք Տեառն 33

կ'ելլէին , -- ճամբուն մէջն էին . և Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար , ու անոնք կը զարմանային , ու ետևէն երթալով՝ կը վախնային ։ 32 Եւ նորէն քովը առնելով տասուերկուքը , սկսաւ ըսել անոնց ինչ բաներ որ իրեն պիտի պատահէին . 33 Ո- ը--- . Ահա Երուսաղէմ կ'ելլենք , և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն , և զանիկայ մահուան պիտի դատապարտեն , ու զանիկայ հեթանոսներուն պիտի մատնեն . 34 եւ զանիկայ ծաղր պիտի ընեն ու ծեծեն , և անոր վրայ պիտի թքնեն , ու զանիկայ մեռցընեն . ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ ։

Ցամք Տեառն 33

Մատ. ի. 20։

35 Եւ անոր քովը գացին Զակոբոս ու Յովհաննէս՝ Զեբեդէոսի որդիքը , ու ըսին . Վարդապետ՝ կ'ուզենք որ ինչ որ խնդրենք կ'ուզենք որ մեզի ընես ։ 36 Ան ալ ըսաւ անոնց . Ի՞նչ կ'ուզէք , որ ձեզի ընեմ ։ 37 Ու անոնք ըսին իրեն . Շնորհէ մեզի որ նստինք՝ մէկը աջ կողմդ , և մէկալը՝ ձախ կողմդ քու փառացդ մէջ ։ 38 Եւ Յիսուս ըսաւ անոնց . Չէք գիտեր՝ ինչ կը խնդրէք . կրնա՞ք խմել ան գաւաթը՝ որ ես կը խմեմ , և ան մկրտութիւնովը մկրտիլ՝ որով կը մկրտուիմ ։ 39 Եւ անոնք ըսին իրեն , Կրնանք . ու Յիսուս ըսաւ անոնց . Ան գաւաթը որ ես կը խմեմ՝ պիտի խմէք , և ան մկրտութիւնովը որ ես կը մկրտուիմ՝ պիտի մկրտուիք . 40 բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս նստիլը՝ իմս չէ տալը . հապա որոնց որ պատրաստուած է ։

Մատ. ի. 24։

41 Եւ երբոր տասը -ը-ի-ր-ն-ե-ր-ը լսեցին , սկսան Զակոբոսին ու Յովհաննէսին վրայ բարկանալ ։ 42 Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք՝ ու ըսաւ անոնց . Գիտէք որ ազգաց իշխանները կը տիրեն անոնց , և անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց վրայ ։ 43 Բայց ձեր մէջը անանկ պիտի չըլլայ . հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ , անիկայ ձեր սպասաւորը պիտի ըլլայ . 44 և ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ , անիկայ ամենուն ծառայ ըլլայ ։ 45 Վասն զի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու , հապա սպասաւորութիւն ընելու , և իր կեանքը շատերուն համար փրկանք մը տալու ։

Մատ. ի. 28։ ա Տիմ. բ. 6։ Տիտ. բ. 14։

46 Եւ եկան Երիքով . ու երբոր Երիքովէն կ'ելլէր աշակերտներովը՝ և շատ բազմութիւնով , Տիմէոսի որդին կոյր Բարտիմէոսը ճամբուն

Մատ. թ. 22։ Գլ. ե. 34։

47 քովը նստեր էր մուրալու ։ Ու երբոր լսեց թէ Յիսուս Նազովրեցին է , սկսաւ աղաղակել՝ ու ըսել . Յիսուս՝ որդի Դաւիթ՝ 48 ողորմի՛ ինծի ։ Եւ շատերը կը յանդիմանէին զանիկայ , որ լռէ . բայց անիկայ՝ ալ աւելի կ'աղաղակէր , Որդի Դաւիթի՝ ողորմի՛ ինծի ։ 49 Եւ Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ անիկայ կանչեն . կանչեցին կոյրը՝ ու ըսին անոր . Քաջ եղիր , ելի՛ր՝ քեզ կը կանչէ ։ 50 Եւ անիկայ իր հանդերձը ձգելով , ելաւ ու եկաւ Յիսուսին ։ 51 Եւ Յիսուս պատասխան տուաւ՝ ու անոր ըսաւ . Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ . կոյրը ըսաւ անոր . Ռաբբունի՝ որ աչքերս բացուին ։ 52 Եւ Յիսուս ըսաւ անոր . -Գնա՝ քու հաւատդ քեզ բժշկեց . և շուտ մը անոր աչքերը բացուեցան , ու ճամբան Յիսուսին ետևէն կ'երթար ։

Մատ. թ. 22։ Գլ. ե. 34։

ԳԼ . ԺԱ

1 Երբոտոս իյու վրայ հնեծ՝ Երուսաղէմ կը մտնէ հանդէսով . 13 անպտուղ թզենին կ'անիծէ . 15 տաճարը կը մաքրէ . 20 կը յորդորէ իր աշակերտները որ հաստատ հաւատք ունենան , և իրենց թշնամիներուն ներէն . 27 և իր բուռ բաներուն օրինաւոր բլալը կը հաստատ Յովհաննէսին վկայութեամբը ։ որ Նազովրեցի խրկուած մարդ մըն էր ։

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան՝ Բեթփագէ ու Բեթանիա՝ դէպ ի Ձիթենեաց լեռը , Յ---- իր աշակերտներէն երկուքը խրկեց . 2 եւ ըսաւ անոնց . Գացէք ատ ձեր դիմացի գեղը . և անոր մէջ մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապած աւանակ մը , որուն վրայ մարդ մը նստած չէ . արձրկեցէք անիկայ՝ ու 3 բերէք . եւ թէ որ մէկը ըսէ ձեզի թէ , Ատ ի՞նչ կ'ընէք , ըսէք թէ՝ Տէրոջը պէտք է . և շուտ մը հոս 4 պիտի խրկէ զանիկայ ։ Գացին՝ և գտան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով կապած , ու արձրկեցին զանիկայ ։ 5 Եւ հոն կայնողներէն ոմանք ըսին անոնց . Ի՞նչ կ'ընէք որ կ'արձրկէք ատ աւանակը ։ 6 Եւ անոնք ըսին անոնց ինչպէս որ Յիսուս պատուիրեր էր . 7 ու իրենց թող տուին ։ Եւ աւանակը Յիսուսին բերին , ու անոր վրայ իրենց հանդերձները դրին , ու 8 նստաւ անոր վրայ ։ Եւ շատերը իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին , և ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին , ու ճամբուն վրայ կը տարածէին ։ 9 Եւ առջևէն ու ետևէն գացողները կ'աղաղակէին ու կ'ըսէին . Ովսաննա . Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը 10 կու գայ . Օրհնեալ է մեր Դա-

Մատ. իա. 1 ։ Ղու. ժթ. 29 ։ Յով. ժբ. 14 ։

Մատ. իբ. 8 ։

Սաղ. ճժբ. 26 ։

Ցամի Տեառն 33

*Ո՛չ՝ Տէր, բոլոր անուշ նովը կու գայ.

†Մատ. իա. 12։

‡Մատ. իա. 18։

§Մատ. իա. 19։

+Ո՛չ՝ Եւ Յիսուս

‖Մատ. իա. 12։ Ղու. ժթ. 45։ Յօհ. բ. 14։

ըԵս. ծզ. 7։

¶Երեմ. է. 11։

#Մատ. իա. 45. 46։ Ղու. ժթ. 47։

**Մատ. է. 28։ Գլ. ա. 22։ Ղու. դ. 32։

††Մատ. իա. 19։

‡‡Մատ. ժէ. 19։ իա. 21։ Ղու. ժէ. 6։

§§Մատ. է. 7։ Ղու. ժա. 9։ Յօհ. ժգ. 13։ ժէ. 7։ ժզ. 24։ Յակ. ա. 5. 6։

‖‖Մատ. ղ. 14։ Կող. գ. 13։

¶¶Մատ. ժբ. 35։

ւիթ հօրը թագաւորութիւնը որ *կու գայ. Ովսաննա՝ ի բարձունս։

11 †Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ ու տաճարը, և չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց. և արդէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ելաւ տասներկուքին հետ մկտեղ։

12 Ու՝ հետևեալ օրը՝ երբոր Բեթանիայէն կ'ելլէին, անօթեցաւ.

13 §Եւ հեռուանց տերեւալից թզենի մը տեսնելով՝ եկաւ որ գուցէ անոր վրայ բան մը գտնէ. ու երբոր անոր քովը գնաց, տերևներէն՝ ի զատ բան մը չգտաւ. ինչու որ դեռ

14 թուզի ատեն չէր. †Եւ պատասխան տուաւ ու բսաւ անոր. Ընկէ ետև մէկը քեզմէ պտուղ չուտէ յաւիտեան. Ու իր աշակերտները լսեցին։

15 Ու եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոնք որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին. և ստակ փոխողներուն սեղանները, ու աղաւնի ծախողներուն աթոռ-

16 ները կործանեց. Եւ թող չէր տար՝ որ մէկը տաճարին մէջէն ա-

17 ման մը անցընէ։ Եւ կը սորվեցընէր ու կ'բսէր անոնց. Գրուած չէ՞ որ՝ ԷՒմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն, բայց Դուք աւիկայ աւազակնե-

18 րու այր ըրիք։ ‡Եւ դպիրները ու քահանայապետները՝ լսելով՝ կը փնտռէին թէ ինչպես կորսընցընեն զանիկայ, քանզի անկէ կը վախնային. ինչու որ Ժողովուրդը զարմացեր էր անոր վարդապե-

19 տութեանը վրայ։ Ու երբոր իրիկուն եղաւ, քաղաքէն դուրս ելաւ։

20 §Եւ առտուանց երբոր –նէ կ'անցնէին, թզենին տեսան արմատէն չորցած։

21 Ու Պետրոսին միտքը եկաւ՝ ու բսաւ անոր. Րաբբի՝ ահա թզենին՝ որ անիծեցիր, չորցեր է։

22 Եւ Յիսուս պատասխան տալով՝ բսաւ անոնց. Ունեցէք

23 Ծոյ հաւատքը ուղեցէք։ Քանզի Ճշմարիտ կ'բսեմ ձեզի. Որ որ ասի լեռանը բսէ՝ Ելիր ու Ծովը ինկիր, և իր սրտին մէջը չերկմտի, հապա հաւատայ թէ ինչ որ բսէ՝ կ'ըլլայ, պիտի ըլլայ անոր՝ ինչ որ

24 բսէ։ Ասոր համար կ'բսեմ ձեզի. Ինչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք թէ պիտի առ-

25 նէք, և պիտի ըլլայ ձեզի։ Ու երբոր աղօթքի կը կայնիք, ներեցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք. որպէս զի ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է, ներէ ձեզի ձեր յան-

26 ցանքները։ Իսկ թէ որ դուք չէք ներեր, ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները։

27 Եւ նորէն Երուսաղէմ եկան, և ու երբոր տաճարին մէջ կը պտըտէր, քահանայապետները և դպիրները ու ծերերը անոր եկան,

28 Ու բսին անոր. Ի՞նչ իշխանութիւնով կ'ընեսատ բաները, և ո՞վ տուաւ քեզիատ իշխանութիւնը, որ ատ բաները ընես։

29 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու բսաւ անոնց. Ես ալ ձեզի բան մը հարցընեմ, ու Ըն-ր ինծի պատասխան տաք, ես ալ ձեզի պիտի բսեմ թէ ինչ իշխանութիւնով

30 կ'ընեմ ատ բաները։ Յովհաննէսին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ, պատասխան տուէք

31 ինծի։ Եւ անոնք մէջերնին կը խորհէին՝ ու կ'բսէին. Թէ որ բսենք՝ Երկինքէն, պիտի բսէ. Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր.

32 Իսկ թէ որ բսենք՝ Մարդոցմէ. Ժողովուրդէն կը վախնային. ինչու որ Ամէնքը ‡դիտէին Յովհաննէսը թէ ճշմարտապէս մարգարէ էր։

33 Եւ պատասխան տալով՝ բսին Յիսուսին. Չենք դիտեր. և Յիսուս պատասխան տուաւ՝ ու բսաւ անոնց. Ես ալ ձեզի չեմ բսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ ատ բաները։

Գլ. ԺԲ

1 Քրիստոս կը նախատագրէ Հրէից մեծ ուրիշը և հեթանոսաց կոչումը՝ ապերախտ մշակներուն ձեռքը յանձնուած այգիին առակովը. 13 պատասխան կու տայ՝ կայսրին հարկ տալու վրայով. 18 կը ցուցնէ յաղուկեցւոց՝ իրենց մոլորութիւնը՝ յարութիւն չկայ բսելնուն համար. 28 առաջին պատուիրանքին վրայով հարցընող դպիրին խնդիրը կը լուծէ. 35 կը ջրէ ան կարծիքը որ դպիրները ունէին Քրիստոսի վրայով. 38 և կը պատուիրէ ժողովրդոց որ դպրաց ըլլան անոնց պատասխրութիւնէն և կեղծաւորութենէն. 41 Քրիստոս կը գովէ երկու լումայ տուող աղքատ որբևարին։

1 Եւ –սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ՝ –ըսել. Մէկ մարդ մը այգի տնկեց, ու անոր բոլորտիքը ցանգ քաշեց, և ստորակնձան փորեց, ու աշտարակ շինեց. և զանիկայ մշակներու յանձնեց. ու

2 ինքը օտար երկիր մը գնաց։ Եւ ատենին ծառայ մը իրկեց մշակներուն, որ մշակներէն այգիին պտու-

3 ղէն առնէ։ Իսկ անոնք բռնեցին ծեծեցին զանիկայ, ու պարապ

4 ճամբեցին։ Նորէն ուրիշ ծառայ մըն ալ իրկեց անոնց. և զանիկայ քարկոծելով՝ դլուխը վիրաւորեցին,

5 ու անարգուած ճամբեցին։ Եւ դարձեալ ուրիշ մը իրկեց. ու զանիկայ սպաննեցին. և շատ ուրիշներ –լ Իրմէ, որոնց մէկ քանիները ծեծեցին, ու մէկ քանիները

Ցամի Տեառն 33

‖Մատ. իա. 23։ Ղու. ի. 1։

¶Մատ. գ. 5։ ժգ. 5։ Գլ. ղ. 20։

‡Ց–ն. ուն. Նէին

–Մատ. իա. 33։ Ղու. ի. 9։

Ցամի Տեառն 33

6 սպաննելին ։ Ուստի մէկ սիրելի որդի մըն ալ ունենալով , վերջապէս զանիկայ ալ իւրկեց անոնց ըսելով . Գ՚ամէնայն իմ որդիէս ։
7 Բայց ան մշակները ըսին իրարու . Ասիկայ է ժառանգը , եկէք զանիկայ սպաննենք , ու ժառանգու-
8 թիւնը մերը ըլլայ ։ Եւ բռնեցին զանիկայ՝ ու սպաննելին , և այդիէն
9 դուրս հանելին ։ Ուստի այդիին տէրը ի՞նչ պիտի ընէ . պիտի դայ՝ ու կորսընդրնէ մշակները , և այդին
10 ուրիշներու պիտի տայ ։ Եւ աս գիրը չէ՞ք կարդացեր թէ , Բ Ն քարը որ շինողները անարգեցին , անիկայ անկիւնին գլուխը եղաւ .
11 Ասիկայ Տէրոջմէ եղաւ , և զարմանալի է մեր աչքերուն ։
12 Ե՚ն կը փնտռէին՝ թէ ինչպէս բռնեն զանիկայ , բայց ժողովուրդէն վախցան . քանզի իմացան որ ՚ն առակը իրենց համար ըսաւ . և ձգեցին անիկայ ու գացին ։
13 Ե՚ւ փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն քանի մը հոգի իրկեցին անոր , որ խօսքով բռնեն զա-
14 նիկայ ։ Եւ անոնք եկան՝ ու ըսին անոր . Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես , և մէկու մը համար հոգդ չէ . քանզի մարդոց երեսպաշտութիւն չես ըներ , հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցընես . Կայսրին տուրք տալ արժա՞ն է՝ թէ չէ .
15 տա՞նք՝ թէ չտանք ։ Եւ Ցիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝ բսաւ անոնց . Ինչո՞ւ զիս կը փորձէք , բերէք ինծի մէկ դա-
16 հեկան մը որ տեսնեմ ։ Եւ անոնք բերին . ու բսաւ անոնց . Որո՞ւնն է աս պատկերը՝ ու գիրը . և անոնք
17 ըսին անոր . Կայսրին ։ Եւ Ցիսուս պատասխան տալով՝ բսաւ անոնց . Ան որ կայսրինն է՝ կայսրին տուէք , և ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք . ու զարմացան անոր վրայ ։
18 Եւ անոր քովը եկան Սադուկեցիները , որոնք կ՚ըսեն թէ Յարութիւն չկայ , և անոր հարցուցին ը-
19 սելով . Վարդապետ՝ Մովսէս մեզի գրեց որ եթէ մէկուն եղբայրը մեռնի՝ ու կնիկը ձգէ , և զաւակ չձգէ , անոր եղբայրը առնէ անոր կնիկը , և իր եղբօրը զաւակ հանէ ։
20 Արդ՝ եօթը եղբայրներ կային . և առջինը կնիկ առաւ՝ ու մեռաւ , և
21 զաւակ չձգեց ։ Ու երկրորդը առաւ զանիկայ՝ ու մեռաւ , և ան ալ զաւակ չձգեց . նոյնպէս ալ երրորդը ։
22 Ու եօթն ալ զանիկայ առին , և զաւակ չձգեցին . ամենէն ետքը
23 կնիկն ալ մեռաւ ։ Ուրեմն յարութեան առնեն՝ երբոր յարութիւն առնեն , անոնցմէ որո՞ւն կնիկը պիտի ըլլայ . ինչու որ եօթն ալ զա-
24 նիկայ կնիկ ունեցան ։ Եւ Ցիսուս պատասխան տալով՝ անոնց բսաւ . Ատոր համար չէ՞ որ մոլորած էք , որ ոչ Գիրքը գիտէք , և ոչ Աստու-
25 ծոյ զօրութիւնը ։ Քանզի երբոր մեռելներէն յարութիւն առնեն , ոչ կնիկ կ՚առնեն , և ոչ էրկան կը տրուին . հապա Հերկինքի հրեշտակ-
26 ներուն պէս են ։ Բայց մեռելներուն համար՝ թէ յարութիւն կ՚առնեն , Մովսէսին գրքին մէջը չէ՞ք կարդացեր մորենիին վրայ , ինչպէս Աստուած անոր խօսեցաւ՝ ըսելով . Ե՚ս եմ Աբրահամին Աստուածը , և Իսահակին Աստուածը , ու Յակո-
27 բին Աստուածը ։ Անիկայ մեռելներուն Աստուածը չէ , հապա կեն-դանիներուն . ուրեմն դուք խիստ մոլորած էք ։
28 Ե՚ւ դպիրներէն մէկը եկաւ , ու մտիկ կ՚ընէր անոնց երբոր վիճաբանութիւն կ՚ընէին , որ երբոր տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց , հարցուց անոր՝ Ո՞րն է բոլոր պատուիրանքներուն
29 առաջինը ։ Եւ Ցիսուս պատասխանեց անոր . Բոլոր պատուիրանքներուն առաջինը՝ Լսէ՛ ով Իսրայէլ , մեր Տէր Աստուածը՝
30 մէկ Տէր մըն է . Եւ դուն Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտիդ , և քու բոլոր անձիդ , ու քու բոլոր մտքիդ , և քու բոլոր զօրութենիդ . ասիկայ է առաջին պատուիրանքը ։
31 Ու երկրորդը ասոր նման՝ Դուն կերդ սիրես քու անձիդ պէս . ասոնցմէ մեծ՝ ուրիշ պատուիրանք
32 չկայ ։ Եւ դպիրը բսաւ անոր . Ազէկ՝ վարդապետ , շիտակ խօսեցար թէ Աստուած մէկ է , Եւ ան-
33 կէ՛ի զատ ուրիշ մը չկայ . Եւ բոլոր սրտէ , ու բոլոր մտքէ , և բոլոր անձէ , ու բոլոր զօրութենէ անիկայ սիրելը , ու ընկերը իր անձին պէս սիրելը՝ Համէն ողջակէզներէ
34 ու զոհերէ աւելի է ։ Եւ Ցիսուս տեսնելով որ անիկայ խելացութիւնով պատասխան տուաւ , բսաւ անոր . Աստուծոյ թագաւորութենէն հեռու չես . Եւ ալ ուրիշ մէկը չէր համարձակեր անոր Յ՚ն հարցընելու ։
35 Ե՚ւ Ցիսուս երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր , պատասխան տուաւ ու բսաւ . Դպիրները ինծո՞ր կ՚ըսեն , թէ Քրիստոս Դաւիթի որ-
36 դին է . Եւ ինքը Դաւիթ Սուրբ Հոգիով կ՚ըսէ . ՑՏէրը իմ Տէրոջս բսաւ . Նստէ իմ աջ կողմս , մինչև որ քու թշնամիներդ ոտքե-
37 րուդ պատուանդան ընեմ ։ Ու-

Ցամի Տեառն 33

Բ Սադ . ճԺբ . 22 ։

Ե Մատ . իա . 45 , 46 ։ Ես . ժա . 18 ։ Ցոհ . է . 25 , 30 , 44 ։

Զ Մատ . իբ . 15 ։ Ղկ . ի . 20 ։

Ի Մատ . իբ . 23 ։ Ղկ . ի . 27 ։

Ղ Օր . իգ . 8 ։

Իբ Օր . իե . 5 ։

Գործ . ժբ . 42 , 49 , 52 ։

Բ Եզ . գ . 6 ։

Ի Մատ . իբ . 35 ։

Իբ Օր . գ . 4 ։ Ղկ . ժ . 27 ։

Ղկ . ժթ . 18 ։ Մատ . իբ . 39 ։ Հռով . ժգ . 9 ։ Գաղ . ե . 14 ։ Ցակ . բ . 8 ։

Իբ Օր . գ . 39 ։ Ես . խե . 6 , 14 ։ Խգ . 9 ։

Ա Թագ . ժե . 22 ։ Ոմ . գ . 6 ։ ՄԿբ . գ . 6 , 7 , 8 ։

Ի Մատ . իբ . 46 ։

Հ Մատ . իբ . 41 ։ Ղկ . ի . 41 ։

Յ Թագ . իգ . 2 ։ Ղ Սադ . ճԺ . 1 ։

Ցամի Ցեառն 33

բեմն Դաւիթ ինքը որ զանիկայ Տէր կը կոչէ , ի՞նչպէս անիկայ անոր որդին կ՚ըլլայ . և ժողովուրդէն շատերը յօժարութեամբ մտիկ կ՚ընէին անոր ։

38 ֊Եւ իր վարդապետութեանը մէջ կ՚ըսէր անոնց . ֊Զգուշացէք դպիրներէն , որոնք կ՚ուզեն փառաւոր հանդերձներով պտըտիլ , և հրապարակներուն մէջ բարևներ ընդունիլ ,

39 —ի՛ , ու ժողովարաններուն մէջ առաջին աթոռները , և ընթրիքներու մէջ առաջին բազմոցները ։

40 ֊Որոնք որբևարիներուն տուները կ՚ուտեն , ու ֊երևնալու համար աղօթքը կ՚երկընցընեն .ասոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդունին ։

41 ֊Եւ Յիսուս գանձանակին դիմացը նստած՝ կը նայէր թէ ինտոր ժողովուրդը ֊գանձանակին մէջը ստակ կը ձգէ . և շատ հարուստներ՝

42 շատ բան ձգեցին ։ Մէկ աղքատ որբևարի մըն ալ եկաւ՝ ու երկու լումայ ձգեց , որ մէկ նաքարակիտ

43 մը կ՚ընէ ։ Եւ իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց . Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ Հաս աղքատ որբևարին գանձանակը —ի՝ ձգողներուն ամենէն աւելի ձգեց .

44 ինչու որ ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին , բայց ասիկայ իր չքաւորութենէն ունեցածին բոլորը ձգեց՝ ֊իր բոլոր ապրուստը ։

ԳԼ . ԻԳ

1 Քրիստոս կը նախազգէ թէ տաճարը պիտի կործանի . 9 թէ աւետարանին համար հալածանքներ պիտի ըլլան . 14 թէ մեծամեծ թշուառութիւններ պիտի գան Հրէից վրայ . 24 և թէ ինքը ինչ կերպով դատաստանի պիտի գայ ։ 32 Վերջին ժամը բնաւ մէկուն յայտնուած չըլլալուն համար՝ Քրիստոս կը պատուիրէ արթուն կենալ ու աղօթք ընել ։

1 ||Ու —երբոր տաճարէն դուրս կ՚ելլէր , իր աշակերտներէն մէկը բսաւ իրեն . Վարդապետ՝ նայէ ինտոր քարեր են , և ինչ կերպ շէնքեր ։ 2 քեր ։ Եւ Յիսուս պատասխանելով բսաւ անոր . Կը տեսնե՞ս այս մեծ շէնքերը . Էքար մը քարի վրայ պիտի չմնայ՝ որ չքակուի ։

Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ
անոր. Վարդապետ՝ բոլոր գիշերս
աշխատեցանք, ու բան մը չբռնե-
ցինք. բայց քու խօսքիդ համար
6 ուռկանը ձգեմ։ Ու երբոր ա՛ս բ-
րին, խիստ շատ ձուկեր ժողվեցին
մէջը, ու իրենց ուռկանը կը պա-
7 տռուէր։ Եւ ա՛յլ կ'ընէին մէկալ
նաւուն մէջ եղող իրենց ընկերնե-
րուն՝ որ գան օգնեն իրենց. և և-
կան, ու երկու նաւերն ալ լեցու-
ցին, մինչև որ ընկղմելու մօտ էին։
8 Սիմոն Պետրոս երբոր տեսաւ, Յի-
սուսի ծունկերուն ինկաւ՝ ու ըսաւ.
Ելի՛ ինէ՛ քովէս մեկնի դնա, ին-
չու որ ես մեղաւոր մարդ մըն եմ։
9 Վասն զի ապշութիւնը պատեց ա-
նիկայ և անոր հետը եղող ամէնը,
ան իրենց բռնած ձուկերուն որսին
10 համար. Նոյնպէս ալ Զեբեդէոսին
որդիքը Յակոբոսը և Յովհաննէ-
սը, որոնք Սիմոնին ընկերներն էին.
ու Յիսուս ըսաւ Սիմոնին. Մի
վախնար, Տասկ եւս մարդոց որ-
11 սորդ պիտի ըլլաս։ Եւ նաւերը
ցամաքը հանելով՝ Համէն բան թո-
ղուցին, ու անոր եւեւէն գացին։
12 Ու եղաւ որ երբ ինքը քաղաքի
մը մէջ էր, ահա մէկ մարդ մը բո-
րոտութիւնով լեցուն՝ երբոր Յի-
սուսը տեսաւ, երեսի վրայ իյնա-
լով աղաչեց անոր՝ ու ըսաւ. Տէ՛ր
թէ որ ուզես, կրնաս զիս մաքրել։
13 Եւ Յիսուս իր ձեռքը երկընցընե-
լով՝ դպաւ անոր, ու ըսաւ. Կ'ու-
զեմ՝ մաքրուէ՛. և շուտ մը բորո-
14 տութիւնը անկէ գնաց։ Ու ինքը
պատուիրեց անոր որ մէկու մը չը-
սէ, հապա ըսաւ. Գնա՛ քեզ քա-

Մատ. գ. 18, Մար. ա. 16,

Ղկ. բ. 6,

Մատ. բ. 14, Մար. ա. 29,

Մար. ա. 34, գ. 11,

Մար. ա. 25, 34, Հմր 34, 35,

Մար. ա. 35,

Մատ. գ. 19, Մար. ա. 17,

Մատ. գ. 20, Ղթ. 27, Մար. ա. 18, Գաղ. ժբ. 28,

Ղևտ. բ. 2, Մար. ա. 40,

Մատ. բ. 4,

Յամի Տեառն 31

Ես. Ղ. 4 · 10 · 21 · 22 ·
Ի Մատ. գ. 25 · Մար. գ · 7 · Ցան. ը · 2 ·
Ի Մատ. ժգ. 23 · Մար. ը · 46 ·

Հանապազ ցուցուր, և ըՄովսէսին պատուիրածին պէս քու մաքրութիւդ ընծան տուր՝ անոնց վկայութիւն ըլլալու համար ։ 15 Եւ անոր վրայով խօսքը աւելի կը տարածուէր. Ի՛սկ շատ ժողովուրդներ կը ժողվուէին մտիկ ընելու, և անով իրենց հիւանդութիւններէն 16 բժշկուելու ։ Բ՛Ուր ինքը անապատ տեղուանք կը քաշուէր, և աղօթք կ'ընէր ։

17 Ու եղաւ որ մէկ օր մը ինքը կը սորվեցընէր, ու փարիսեցիներ և օրինաց վարդապետներ նստած էին, որոնք Գալիլեայի ու Հրէաստանի ու Երուսաղէմի բոլոր գիւղաքաղաքներէն ժողուած էին. ու Տէրոջը զօրութիւնը Նէ՛յ էր անոնք 18 բժշկելու ։ Եւ ահա՛ Ճ՛ մարդի՛կ մէկ անդամալոյծ մարդ մը մահիճովը բերին, և Հ՛Ն՛ը կը փընտռէին թէ ինչպէս զանիկայ ներս խօթեն, ու դնեն անոր առջեը. 19 Ու երբոր բազմութենէն Տ՛Ր՛Ը՛ չէին գտներ որ անկէ ներս խօթեն անիկայ, տանիքին վրայ ելան, և զանիկայ կղմինտրներուն մէջէն մահիճովը մէջտեղը Ցիսուսին առջեը 20 իջեցուցին ։ Եւ անիկայ տեսնելով անոնց հաւատքը՝ բսաւ անոր. Ո՛վ մարդ՝ քու մեղքերդ քեզի ներուած են ։ 21 Եւ դպիրները ու փարիսեցիները սկսան խորհիլ, ու բսել. Ո՞վ է ասիկայ, որ հայհոյութիւններ կը խօսի. Ի՞նչ կրնայ մեղաց թողութիւն տալ, բայց միայն Աստուած ։ 22 Եւ Ցիսուս իմանալով անոնց խորհուրդները՝ պատասխան տուաւ՝ ու բսաւ անոնց. Սրտերնուդ մէջ ի՞նչ կը խորհիք ։ 23 Ո՞րը աւելի դիւրին է. Քու մեղքերդ քեզի ներուած են բսելը, թէ Ելի՛ր ու քալէ՛ բսելը ։ 24 Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (բսաւ անդամալոյծին,) քեզի կ'բսեմ, Ելի՛ր մահիճդ առ՝ ու 25 տունդ գնա ։ Ան ալ իսկոյն անոնց առջեը ելաւ, ու վրան առաւ՝ ինչ բանի վրայ որ պառկած էր, և դընաց իր տունը, ու Աստուծոյ 26 փառք կու տար ։ Եւ ամէնքը ապշած մնացին, ու Աստուծոյ փառք կու տային. և վախով լեցուած՝ կ'բսէին թէ, Այսօր նոր բաներ տեսանք ։

27 Եւ ասոնք բաներէն ետև ելաւ ան՛ի՛ր, ու տեսաւ մէկ մաքսաւոր մը որուն անունը Ղևի էր, որ մաքսընդունելու տեղը նստեր էր, ու 28 բսաւ անոր. Ետևէս եկուր ։ Ան ալ թողուց ամէնը՝ և ելաւ գնաց

29 անոր ետևէն ։ Ու Ղևի անոր մեծ կոչունք մը ըրաւ իր տանը մէջ. Հ՛և շատ բազմութիւն կար մաքսաւորներու և ուրիշներու՝ որ անոնց 30 հետ սեղան նստեր էին ։ Եւ անոնց դպիրները ու փարիսեցիները տրտունջ կ'ընէին անոր աշակերտներուն ու կ'բսէին. Ինչո՞ւ համար մաքսաւորներուն և մեղաւորներուն 31 հետ կ'ուտէք ու կը խմէք ։ Եւ Ցիսուս պատասխան տալով՝ բսաւ անոնց. Առողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն. 32 Ես չարդարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները ապաշխարութեան ։

33 Անոնք ալ բսին անոր. Ինչո՞ւ Յովհաննէսին աշակերտները շատ անգամ ծոմ կը պահեն, և աղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցւոց ա՛լ՛ի՛ր՛ն՛ե՛ր՛ը՛ն՛ը. և քու կիներդ կ'ուտեն ու կը խմեն ։ 34 Անիկայ ալ բսաւ անոնց. Կրնա՞ք հարսնիքին տղոցը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց հետն է ։ 35 Բայց օրեր պիտի գան որ երբ փեսան իրենցմէ վերցուի, հապա 36 ան օրերը ծոմ պիտի պահեն ։ Ե՛Ր՛ա՛կ մըն ալ բսաւ անոնց թէ, Մէկը չգգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ. եթէ ոչ՝ ան նորը պատռուածքը ալ կ'ընէ, ու հինցածին հետ ալ չի՛համաձայներ ան նոր 37 ը՛ղ՛ի՛ն եղած կտորը ։ Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ չդներ. եթէ ոչ՝ նոր գինին հին տիկերը կը պատռէ, ինքը կը թափի, ու 38 տիկերը կը կորնչին. Հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է, 39 ու երկուքն ալ կը պահուին ։ Եւ մէկը հին ը՛ն՛ը՛ն խմելէն ետև՝ անմիջապէս նորը չուզեր. քանզի կ'բսէ թէ Հինը աւելի ախորժելի է ։

ԳԼ. Զ.

1 Քրիստոս շաբաթի օրուան պահպանութեանը վրայով փարիսեցւոց կուրութիւնը կը յանդիմանէ Սուրբ Գրոց վկայութեամբ՝ փաստով և հրաշքով ։ 13 տասներկու առաքեալները կ'ընտրէ ։ 17 Հիւանդները կը բժշկէ ։ 20 Ժողովրդոց առջեը իր աշակերտներուն խօսելով՝ կը ցուցընէ թէ որոնց կը վայլէ երանութիւնը և որոնց վայր ։ 27 կը պատուիրէ թշնամին սիրել, 46 և Աստուծոյ խօսքին հնազանդելով՝ բարիք գործել, որ չըլլայ թէ առանց հիմնի հողի վրայ շինուած տան մը պէս կործանինք փոթորկութեան օրը ։

1 Ու եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը՝ ինքը արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները ցորեն հասկեր փրցընելով, ձեռքերնուն մէջ կը շփէին՝ ու կ'ուտէին ։ 2 Ու փարիսեցիներէն ոմանք բսին անոնց. Ա՛ի՛ն ի՞նչ բան կ'ընէք, Բ՛որ 3 արժան չէ ընել շաբաթի օրը ։ Եւ Ցիսուս պատասխան տալով անոնց

Յամի Տեառն 31

Ի Մատ. թ. 10 · Մար. բ · 15 ·
Հ Գլ. ժե. 1 ·

Յ Մատ. թ. 13 · ա Տիմ. ա · 15 ·

Ա Մատ. թ. 14 · Մար. բ · 18 ·

Ե Մատ. թ. 16 · 17 · Մար. բ · 21 · 22 ·

— Մատ. ժբ. 1 · Մար. բ. 23 ·

Բ Եւ. ի · 10 ·

Ցամի Տեառն 31

բսաւ . Ձէ՛ք կարդացեր դուք ի Դաւիթին ըրածը , երբոր անօթեցաւ ինքը՝ և անոնք որ իր հետն էին .
4 ինչպէս անիկայ Աստուծոյ տունը մտաւ , և առաջաւորութեան հացերը առաւ ու կերաւ , և տուաւ անոնց ալ՝ որ իր հետն էին . որ միայն քահանաներուն ։ Եւ բսաւ անոնց . Որդին մարդոյ շաբաթին ալ Տէրն է ։
6 Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինքը ժողովարանը մտաւ՝ ու կը սորվեցընէր . և հոն մարդ մը կար , որուն աջ ձեռքը չորցած
7 էր ։ Եւ դպիրները ու փարիսեցիները անոր կը սպասէին՝ որ շաբաթ օրը զանիկայ բժշկէ , որպէս զի ամբաստանութեան մը գտնեն անոր դէմ ։ Իսկ ինքը գիտնալով անոնց խորհուրդները , բսաւ ան մարդուն՝ որուն ձեռքը չորցած էր . Ելի՛ր՝ մէջտեղը կայնէ .
9 ան ալ ելաւ կայնեցաւ ։ Ըն ատենը Յիսուս բսաւ անոնց . Ձեզի հարցընեմ . Շաբաթ օրը ի՞նչ արժան է , բարիք ընել , թէ չարիք ընել . հոգի մը ապրեցընե՞լ , թէ մեռցընել ։ Եւ շուրջանակի ամենուն վրայ նայելով՝
10 բսաւ անոր . Ձեռքդ երկընցուր . ան ալ այնպէս ըրաւ . ու անոր ձեռքը ողջացաւ մկկային պէս ։
11 Եւ անոնք կատաղութեամբ լեցուեցան , ու իրարու հետ կը խօսէին՝ թէ ինչ ընեն Յիսուսին ։
12 Ու եղաւ որ ան օրերը լեռը ելաւ աղօթք ընելու , ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով
13 անցուց ։ Ու երբոր առտու եղաւ , կանչեց իր աշակերտները , ու անոնցմէ տասներկու հոգի ընտրեց , որոնք առաքեալ ալ անուանեց .
14 Սիմոնը՝ որուն որ Պետրոս ալ անուանեց , և անոր եղբայրը Անդրէասը , Յակոբոսը ու Յովհաննէսը , Փիլիպոսը և Բարթողիմէոսը ,
15 Մատթէոսը և Թովմասը , Ալփէոսեան Յակոբոսը և Նախանձայոյզ բսուած Սիմոնը ,
16 Յակոբոսին Հուդան և Իսկարիովտացի Յուդան՝ որ և մատնիչ եղաւ ։
17 Եւ անոնց հետ իջնելով՝ մէկ տափարակ տեղ մը կայնեցաւ . նաև իր աշակերտներուն ժողովը՝ ու մեծ բազմութիւն մը ժողովուրդներու բոլոր Հրէաստանէն , ու Երուսաղեմէն , և Յիւրոսի ու Սիդոնի
18 ծովեզերքէն . որոնք եկան անոր խօսիլը մտիկ ընելու , ու իրենց հիւանդութիւններէն բժշկուելու . և պիղծ ոգիներէն նեղութիւն կրողներն ալ հաւ , ու կը բժշկուէին ։
19 Եւ բոլոր ժողովուրդը կ՚ուզէր իրեն դպչիլ . Հինչու որ զօրութիւն կ՚ելլէր իրմէն , ու ամենը կը բժշկէր ։
20 Եւ ինքը իր աչքերը դէպ՚ի իր աշակերտներուն վերցուց՝ ու բսաւ . Երանի՛ ձեզի աղքատներուդ , ինչու որ ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը ։
21 Երանի՛ ձեզի որ հիմա անօթի էք , ինչու որ պիտի կշտանաք . Երանի՛ ձեզի որ հիմա կուլաք , ինչու որ պիտի խնդաք ։
22 Երանի՛ ձեզի երբոր մարդիկ ձեզ ատեն , ու երբոր ձեզ իրենց ընկերութենէն մերժեն՝ ու նախատեն , և ձեր վրայով դէշ անուն հանեն
23 որպէս չար գործ ըրած ըլլայ՝ մարդու Որդւոյ պատճառովը ։ Ուրախ եղէք դուք ան օրը՝ ու ցնծացէք , որ ահա ձեր վարձքը շատ է երկինքը . վասն զի իրենց հայրերը այդպէս կ՚ընէին մարգարէներուն ։
24 Բայց վայ ձեզի հարուստներուդ , հինչու որ ձեր մխիթարութիւնը
25 առած էք ։ Վայ ձեզի որ կուշտ էք , ինչու որ պիտի անօթենաք . վայ ձեզի որ հիմա կը ծիծաղիք , ինչու որ սուգ պիտի ընէք ու լաք ։
26 Վայ ձեզի երբոր մարդիկ ձեր վրայով աղէկ խօսին , ինչու որ իրենց հայրերը այդպէս կ՚ընէին սուտ մարգարէներուն ։
27 Բայց կ՚բսեմ ձեզի՝ որ մտիկ կ՚ընէք . Սիրեցէ՛ք ձեր թշնամիները . ձեզ ատողներուն բարի րնէ՛ք .
28 Ձեզ անիծողները օրհնեցէ՛ք , Ձեզի նեղութիւն տուողներուն համար
29 աղօթք րնէ՛ք ։ Ըն որ քու մէկ ծնօտիդ կը զարնէ , մէկալն ալ մատեցուր անոր . և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ , մի՛ արգիլեր անկէ շապիկդ ալ ։
30 Ամէն ամենուն որ քեզմէ կ՚ուզէ՝ տուր , ու քու բաներդ առնողէն ետ
31 մի՛ պահանջեր ։ Եւ ինչպէս կ՚ուզէք որ մարդիկ ձեզի ընեն , դուք
32 ալ անոնց անանկ րնէ՛ք ։ Եւ թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք՝ ի՞նչ շնորհ կ՚ունենաք . ինչու որ մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք
33 սիրողները ։ Եւ թէ որ դուք ձեզի բարի ընողներուն բարի ընէք , ի՞նչ շնորհ կ՚ունենաք . ինչու որ մեղաւորներն ալ նոյն բանը կ՚ը-
34 նեն ։ Եւ թէ որ անանկ մարդիկներու փոխ տաք՝ որոնցմէ յոյս ունիք առնելու , ի՞նչ շնորհ կ՚ունենաք . ինչու որ մեղաւորներուն փոխ կու տան , որ
35 նոյն չափովը ետ առնեն ։ Հապա սիրեցէ՛ք դուք ձեր թշնամիները , ու բարի րնէ՛ք . և փոխ տուէք առանց փոխարէնի մը սպասելու . և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ , ու Բարձրելոյն որդիքը պիտի ըլ-

Ցամի Տեառն 31

Ա Մատ . ժգ . 36 ։
Ա Մար . ե . 30 ։ Գա . բ . 46 ։
Ի Մատ . ե . 3 ։ ժա . 5 ։ Ցակ . բ . 5 ։
Ի Ես . ծե . 1 ։ կե . 13 ։ Մատ . ե . 6 ։
Ա Ես . կա . 3 ։ Մատ . ե . 4 ։
Հ Մատ . ե . 11 ։ ա Պետ . բ . 19 ։ գ . 14 ։ դ . 14 ։
Յ Ցօհ . ժգ . 2 ։
Ը Մատ . է . 12 ։ Գոր . ե . 41 ։ Կող . ա . 24 ։ Ցակ . ա . 2 ։
Ա Գոր . է . 51 ։
Ա Ըմպ . գ . 1 ։ Ցակ . ե . 1 ։
Ա Գա . ժբ . 21 ։
Ե Մատ . գ . 2 ։ 5 ։ 16 ։ Գա . ժգ . 25 ։
Ես . կե . 13 ։ Ամակ . ժգ . 13 ։
Ե Ցօհ . ժե . 19 ։ ա Ցօհ . գ . 5 ։
Ա Հնաւ . բոլոր մարդիկ
Ել . իգ . 4 ։ Ամակ . իե . 2 ։ Մատ . ե . 44 ։ Հմր 35 ։ Հռով . ժբ . 20 ։
Ա Գա . իգ . 34 ։ Գո . է . 59 ։
Ա Մատ . ե . 39 ։
Ա Կոր . գ . 7 ։
Է Բօր . ժե . 7 ։ 8 ։ 10 ։ Ամակ . իա . 26 ։ Մատ . ե . 42 ։
Ա Մատ . է . 12 ։
Բ Մատ . ե . 46 ։
Գ Մատ . ե . 42 ։
Ա Հմր 27 ։
Ի Սաղ . լէ . 26 ։ Հմր 30 ։
Ա Մատ . ե . 45 ։

Յամի Տեառն 31

ԳԼ· Ի

1 Քրիստոս աւելի մեծ հաւատք կը գտնէ հեթանոս հարիւրապետի մը վրայ՝ քան թէ Հրեից վրայ · 10 անոր ծառան չտեսած կը բժշկէ · 11 Նային քաղաքին եղող այրի կընկան մը զաւակը կը յարուցանէ · 19 իր հրաշքները յիշելով պատասխան կու տայ Յովհաննէսին խրկած մարդոցը · 24 Յովհաննէսին վրայով իր ունեցած գաղափարը կը յայտնէ ժողովուրդին · 30 կը յանդիմանէ Հրէաները՝ որ ոչ Յովհաննէսին և ոչ իր վարմունքովը համոզուեցան · 36 կը ցուցընէ թէ ինքը բարեկամ է մեղաւորներուն , չէ՛ թէ գանոնք մեղաց մէջ պահելու , այլ անոնց մեղքերը ներելու , երբոր անոնք զղջալի գան ու հաւատան ։

1 Ա՛ւ երբոր իր բոլոր խօսքերը ժողովուրդին ականջներուն Խօսէը լմընցուց , – մտաւ Կափառնայում ։ – Մատ · ը · 5 ։

2 Եւ հարիւրապետի մը ծառայ ծանր հիւանդացած՝ մօտ էր մեռնելու ,

3 որ սիրելի էր անոր ։ Երբոր Յիսուսի վրայով լսեց , Հրէաներէն ղՀ ծերեր խրկելով , աղաչեց անոր՝ որ գայ իր ծառան ապրեցը-

4 նէ ։ Անոնք ալ եկան Յիսուսին՝ և թախանձանօք կ՚աղաչէին անոր , ու կ՚ըսէին թէ , Անիկայ արժանի է՝

5 որուն առ ընծղՀ պիտի ընես · Ինչու որ մեր ազգը կը սիրէ , ու ժո-

6 ղովարանը անիկայ շինեց մեզի ։ Եւ Յիսուս անոնց հետ գնաց · Երբոր տունէն շատ հեռու չէր , հարիւրապետը խրկեց անոր ղՀ բարեկամներ , ու ըսաւ անոր · Տէր՝ մի՛ յոգնիր , ինչու որ ես արժանի չեմ որ դուն իմ յարկիս տակը մտնես ·

7 Անոր համար ես ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու · Հապա խօսքով զրուցէ , և իմ ծառաս

8 պիտի բժշկուի · Ինչու որ ես ալ իշխանութեան տակ դրուած մարդ մըն եմ , ու իմ հրամանի տակը զինուորներ ունիմ · և ասոր կ՚ըսեմ՝ Գնա , ու կ՚երթայ · և մէկալին թէ՝ Եկուր , ու կու գայ , և ծառայիս թէ՝ Ա՛ս բանը ըրէ , ու

9 կ՚ընէ ։ Յիսուս ասոնք լսելով՝ զարմացաւ անոր վրայ · և իր ետևէն դացող ժողովուրդին դարձաւ ու ըսաւ · Ձեզի կ՚ըսեմ՝ որ Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ

10 հաւատք չգտայ ։ Ու պատգամաւորները նորէն տուն դարձան , և հիւանդ ծառան առողջացած գտան ։

11 Ու եղաւ որ հետևեալ օրը քաղաք մը կ՚երթար , որուն անունը Նային էր · և անոր հետը կ՚երթային իր աշակերտներէն շատերը ,

12 ու մեծ բազմութիւն ։ Ու երբոր քաղաքին դրանը մօտեցաւ , ահա մեռել մը դուրս կը հանէին , իր մօրը մէկ հատիկ տղան · և անիկայ որբևարի էր , ու քաղաքին շատ

13 ժողովուրդը անոր հետն էր ։ Եւ

Յամի Տեառն 31

Ա Մատ · ե · 48 ։
Ֆ Մատ · է · 1 ։
– Ածակ · ժԹ · 17 ։
Բ Սադ · ԺԹ · 12 ։
Ֆ Մատ · է · 2 ։ Մար · դ · 24 ։ Յակ · բ · 18 ։
Գ Մատ · ժե · 14 ։
Ի Մատ · ժ · 24 ։ Յով · ժդ · 16 ։ ժե · 20 ։
Ղ Մատ · է · 3 ։
Ի Տես Ածակ · ժը · 17 ։
Ը Մատ · է · 16 · 17 ։
Ի Մատ · ժբ · 33 ։
Ի Մատ · ժբ · 34 ։
Ի Մատ · ժբ · 34 ։
Լ Մաղ · ա · 6 ։ Մատ · է · 21 · իե · 11 ։ Գլ · ժդ · 25 ։
Ի Մատ · է · 24 ։

լաք · ինչու որ անիկայ բարերար է ապերախտներուն ու չարերուն ։

36 Ու բուն դԹած եղիք՝ ինչպէս որ

37 ձեր Հայրն ալ դԹած է ։ Մի դատէք , ու պիտի չդատուիք · Մի դատապարտէք , ու պիտի չդատապարտուիք · Ներեցէք , ու ձեզի

38 պիտի ներուի · – Տուէք՝ ու ձեզի պիտի տրուի · աղէկ չափով՝ կոխուած՝ ցնցուած՝ լեփլեցուն պիտի տրուի Բ ձեր գոգը · Էքանդի ան չափովը որով դուք կը չափէք , ձեզի պիտի չափուի ։

39 Առակ մըն ալ բաւ անոնց · Միթէ կոյրը կոյրին կրնա՞յ առաջնորդութիւն ընել · չէ՞ որ երկուքն ալ փոսը պիտի իյնան ։

40 Աշակերտը իր վարդապետէն մեծ չէ · բայց ամէն կատարելապես վարժուածը իր վարդապետին պէս կ՚ըլլայ ։

41 Ընչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տեսնես , ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր ։

42 Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ · Եղբայր՝ թող տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ · և դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ · կեղծաւոր՝ նաւաջ քու աչքէդ գերանը հանէ , ու ետքը պիտի նայիս քու եղբօրդ աչքին մէջի շիւղը հանելու ։

43 Ընչու որ չկայ բարի ծառ մը՝ որ չար պտուղ բերէ · ոչ ալ չար ծառ մը՝ որ բարի պտուղ

44 բերէ · Վասն զի ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի · ինչու որ փուշերէն թուզ չեն քաղեր , ու մորենիէն խաղող չեն ժողվեր ։

45 Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարութիւն կը բղխէ , և չար մարդը իր սրտին չար գանձէն չարութիւն կը բղխէ · Ինչու որ իր բերանը սրտին աւելցուքէն կը խօսի ։

46 Ուստի ինչո՞ւ զիս Տէր Տէր՝ կը կոչէք , ու բաւ բաներս չէք կատա-

47 րեր ։ Ամէն որ ինծի կու գայ՝ և իմ խօսքերս կը լսէ՝ ու անոնք կը կատարէ , ձեզի ցուցընեմ թէ

48 որու կը նմանի ։ Անիկայ տուն շինող մարդու մը կը նմանի , որ փորեց ու խորունկցուց , ու հիմը վէմի վրայ դրաւ · և ջուրերուն յորդած ատեն՝ գետը զարկաւ ան տանը , ու չկրցաւ զանիկայ շարժել · ինչու որ վէմի վրայ հաստատուած էր ։

49 Բայց ան որ խօսքերս կը լսէ՝ ու չկատարեր , կը նմանի ան մարդուն՝ որ հողի վրայ առանց հիմի տուն կը շինէ · որուն գետը զարկաւ , և շուտ մը փլաւ , ու ան տանը կործանումը մեծ էր ։

Յամի Տեառն 31

Տէրը անիկայ տեսնելով՝ խղճաց անոր վրայ, ու ըսաւ անոր. Մի
14 լար։ Եւ մօտենալով՝ դագաղին դպաւ, ու տանողները կանգ ա-
ռին. և ըսաւ. Ո՛վ պատանի՝ քե-
15 զի կ՚ըսեմ՝ Ելլէր։ Ու մեռելը ե-
լաւ նստաւ, և սկսաւ խօսիլ. ու
16 տուաւ զանիկայ իր մօրը։ Եւ ա-
մէնքն ալ վախով բռնուեցան. ու
զԱստուած կը փառաւորէին ըսե-
լով Թէ, Մեծ մարգարէ մը ելեր
է մեր մէջը. և Թէ՝ Աստուած իր
ժողովուրդին այցելութիւն ըրաւ։
17 Եւ ասիկայ իր վրայով՝ բոլոր
Հրէաստան եղաւ, ու բոլոր շրջա-
կայ տեղուանքը։
18 Ընդ Յովհաննէսին պատմեցին իր
աշակերտները ասոնք ամէն բաներուն
19 վրայով։ Յովհաննէս ալ իր ա-
շակերտներէն երկուքը իրեն կան-
չեց, և ղրկեց Յիսուսին խրկելով
ըսելով. Դուն ա՞ն ես՝ որ գալու
էիր, Թէ ուրիշի մը սպասենք։
20 Եւ ան մարդիկը եկան անոր՝ ու ը-
սին. Յովհաննէս Մկրտիչը մեզ
խրկեց քեզի, ու կ՚ըսէ. Դուն
ա՞ն ես՝ որ գալու էիր, Թէ ուրիշի
21 մը սպասենք։ Եւ նոյն ժամուն
շատերը բժշկեց չարեաց հիւանդու-
թիւններէն՝ ու հարուածներէն և
չար ոգիներէն, ու շատ կոյրերու
22 տեսութիւն շնորհեց։ Եւ Յիսուս
պատասխան տալով՝ անոնց ըսաւ.
Գացէք Յովհաննէսին պատմեցէք
ինչ որ տեսաք ու լսեցիք. Որ
կոյրերը կը տեսնեն, կաղերը կը
քալեն, բորոտները կը մաքրուին,
խուլերը կը լսեն, մեռելները յա-
րութիւն կ՚առնեն, Աղքատնե-
րուն աւետարան կը քարոզուի.
23 Եւ երանի անոր, որ իմ վրայովս
չգայթակղիր։
24 Ու երբոր Յովհաննէսին խրկած
մարդիկը գացին, Յիսուս սկսաւ
ժողովուրդներուն ըսել Յովհաննէ-
սին համար. Ի՞նչ տեսնելու ելաք
անապատին մէջ. եղէգ մը հովէն
25 շարժուած։ Հապա ի՞նչ տեսնե-
լու ելաք. փափուկ հանդերձներ
հագած մա՞րդ մը. ահա անոնք որ
փառաւոր հագուստներու ու փափ-
կութեան մէջ են, թագաւորական
26 պալատներն են։ Հապա ի՞նչ
տեսնելու ելաք. մարգարէ՞. այո՝
կ՚ըսեմ ձեզի, մարգարէէ մըն ալ
27 աւելի։ Ինչու որ ասիկայ է՝ որուն
համար գրուած է. Ահա ես իմ
դեսպանս կը խրկեմ քու երեսիդ
առջևէն, որ քու ճամբադ պիտի
28 պատրաստէ քու առջևդ։ Քան-
զի կ՚ըսեմ ձեզի. Կնիկներէն ծնած-
ներուն մէջը Յովհաննէս Մկրտիչէն
մեծ մարգարէ չկայ. սակայն Ա-
տուծոյ թագաւորութեանը մէջ
պինտ պզտիկը անկէ մեծ է։
29 Եւ բոլոր ժողովուրդը ու մաք-
սաւորները երբոր լսեցին, արդա-
րացուցին զԱստուած, որ Յով-
հաննէսին Մկրտութիւնովը մկրը-
30 տուեցան։ Բայց փարիսեցիները
և օրինականները Իրենց անձին
դէմ Աստուծոյ խորհուրդը անար-
գեցին, որ անկէ չմկրտուեցան։
31 Ուստի որո՞ւ նմանցընեմ ասս
ազգին մարդիկը, և որո՞ւ կը նմա-
32 նին։ Կը նմանին տղոց, որ շու-
կաները նստելով՝ իրարու կը կան-
չեն, ու կ՚ըսեն. Փող ձնեցուցինք
ձեզի՝ ու չպարեցիք, ողբ կարդա-
33 ցինք ձեզի՝ ու չլացիք։ Վասն զի
Յովհաննէս Մկրտիչը եկաւ, ոչ
հաց կ՚ուտէր և ոչ գինի կը խմէր,
ու կ՚ըսէք. Դեւ կայ անոր ներսի
34 դին։ Որդին մարդոյ եկաւ՝ կ՚ուտէ
ու կը խմէ, և կ՚ըսէք. Ահա ու-
տող և արբեցող մարդ մը՝ մաքսա-
ւորներու ու մեղաւորներու բարե-
35 կամ. Եւ իմաստութիւնը արդա-
րացաւ իր բոլոր տղոցմէն։
36 Փարիսեցիներէն մէկը կ՚աղաչէր
անոր՝ որ իր հետը հաց ուտէ. ան
ալ փարիսեցիին տունը մտաւ՝ ու
37 սեղան նստաւ։ Եւ ահա քաղաքին
մէջ մեղաւոր կնիկ մը կար. երբոր
իմացաւ Թէ անիկայ փարիսեցիին
տունը սեղան նստեր է, մկ շիշ
38 մը անուշահոտ եղ բերաւ. Ու ե-
տևի կողմէն անոր ոտքերուն քովը
կեցեր՝ կու լար, և արցունքովը
սկսաւ անոր ոտքերը թրջել, ու
իր գլխուն մազերովը կը սրբէր, և
կը համբուրէր անոր ոտքերը, ու
39 եղով կ՚օծէր։ Ու երբոր տեսաւ
փարիսեցին՝ որ զանիկայ հրաւիրեր
էր, կ՚ըսէր իր մտքին մէջ. Ընե-
կայ Թէ որ մարգարէ բլլար, պիտի
դիտեր Թէ ով՝ և ինչպէս կնիկ է
իրեն դպչողը. ինչու որ մեղաւոր
40 է։ Եւ Յիսուս պատասխան տուաւ
ու ըսաւ անոր. Սիմոն՝ քեզի բան
մը ունիմ ըսելու. ան ալ ըսաւ.
41 Ըսէ՝ վարդապետ. Երկու. Մէկ
փոխատուող մը երկու պարտական
ունէր. մէկը հինգ հարիւր դա-
հեկան պարտք ունէր, ու մէկալը՝
42 յիսուն։ Եւ որովհետև հատու-
ցանելու [illegible] չունէին, եր-
կուքին ալ շնորհեց. Հիմա դուն
ըն, Ընտնցմէ՞րը աւելի պիտի սի-
43 րէ զանիկայ։ Պատասխան տուաւ
Սիմոն ու ըսաւ. Ինծի ասանկ
կ՚երևնայ, Թէ որուն որ շատ շնոր-
հեց. ան ալ ըսաւ անոր. Ուղիղ
44 դատեցիր։ Ու դառնալով դէպ՚ի
ան կնիկը՝ ըսաւ Սիմոնին. Կը
տեսնե՞ս ասս կնիկը. ես քու տու-

Յամի Տեառն 31

Ե ԳԼ. Ը. 54։ Ցօհ. ժա. 43։ Գոր. Թ. 40։ Հբ. ում. գ. 17։ Ե ԳԼ. ա. 65։ Ը ԳԼ. իգ. 19։ Ցօհ. գ. 19։ գ. 14։ Թ. 17։ Ի ԳԼ. ա. 68։

Ղ Մատ. ժա. 2։

Ի Մատ. ժա. 5։

ՂԲ. լԸ. 5։

Ը ԳԼ. գ. 18։

Ե Մատ. ժա. 7։

Ի Մաղ. գ. 1։

Ցամի Տեառն 31

ղերդ մնայ, դուն ոտքերուս ջուր չտուիր. բայց ասիկայ էր արցունքովը ոտքերս թրջեց, և իր մազերովը սրբեց։ Դուն ինծի համբոյր մը չտուիր. բայց ասիկայ հոն մտնելէս ի վեր ոտքերս համբուրելէն չդադարեցաւ։ Դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր. բայց ասիկայ իմ ոտքերս անուշ շաղոտ եղով օծեց։ Ուստի կ'ըսեմ քեզի. Ներուած են անոր շատ մեղքերը, ինչու որ շատ սիրեց. բայց որու որ քիչ կը ներուի, քիչ կը սիրէ։ Ու ըսաւ անոր. Քու մեղքերդ ներուած են։ Եւ անոր հետ սեղան նստողները սկսան իրենց մէջը ըսել. Ո՞վ է ասիկայ որ մեղքերդ թողութիւն ալ կու տայ։ Եւ ինքը բսաւ կնկանը. Քու հաւատքդ քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ։

ԳԼ. Ը

1 Կանայք իրենց ստացուածքովը ծառայութիւն կ'ընեն Քրիստոսի։ 4 Քրիստոս կը զգուշէ ներհանացանին, 16 և ճրագին առակը. 21 կ'իմացընէ թէ ով են իր մայրը ու եղբայրները. 22 կը ապահովէ հովերուն. 26 և մէկ մարդէ մը դիւաց լեգէոնը դուրս հանելով՝ թող կու տայ անոնց որ խոզերուն երամակը մտնեն։ 37 Գերգեսացիք չեն ընդունիր զինքը։ 43 Ցաւագին տեառնահաս կինը կը բժշկէ. 49 և Յայրոսի աղիկը կը յարուցանէ։

1 Ու եղաւ որ անկէ ետև՝ ալ ինքը քաղաքէ քաղաք ու գեղէ գեղ պտըտելով՝ կը քարոզէր, և Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր. ու տասուերկուքը իր հետն էր. 2 նաև քանի մը կիներ՝ որ չար ոգիներէ ու հիւանդութիւններէ բժշկուած էին. Մարիամ՝ որ Մագդաղենացի կ'ըսուէր, որմէ որ եօթը դեւ ելած էր, 3 և Յովհաննա՝ Հերովդեսին տանը վերակացուին Քուզային կինը, ու Շուշան, և շատ ուրիշներ, որոնք իրենց ստացուածքովը անոր ծառայութիւն կ'ընէին։

4 Ու երբոր մեծ բազմութիւն ժողովուեցաւ, և շատ քաղաքներէ իրեն եկան, առակով մը ըսաւ. 5 Հնձող մը սերմ ցանելու գնաց. ու ցանած ատենը՝ մէկ քանին ճամբուն քովը ինկաւ, և ոտքէ փոխ կոխուեցաւ, ու երկինքի թռչունները կերան զանիկայ։ 6 Ու ուրիշը ապառաժի վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ՝ հոգ 7 հիւթ չունենալուն համար։ Եւ ուրիշը փուշերու մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետը բուսնելով՝ խեղդեցին անիկայ։ 8 Եւ ուրիշը աղէկ հողի մէջ ինկաւ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ. երբոր ասը բաները կը զրուցէր, կ'աղաղակէր. Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ։

9 Եւ իր աշակերտները կը հարցընէին իրեն՝ ըսելով թէ, Ի՞նչ պիտի ըլլայ ան առակը։ 10 Ան ալ ըսաւ. Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագաւորութեանը խորհուրդները, բայց ուրիշներուն առակներով՝ որ տեսնելով՝ չտեսնեն, և լսելով՝ չհասկնան։ 11 Ասիկա առակը ասէ. Սերմը Աստուծոյ խօսքն է։ 12 Ու ճամբուն քովինները անոնք են՝ որ կը լսեն, ու ետքը Սատանան կու գայ՝ անոնց սրտէն կը հանէ խօսքը, որ չըլլայ թէ հաւատան՝ ու փրկուին։ 13 Եւ ապառաժին վրայինները անոնք են՝ որ երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը, բայց արմատ չունին. ատոնք մէկ կը հաւատան՝ ու փորձութեան ժամանակը կը հեռանան։ 14 Եւ փուշերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց հոգերով ու հարստութիւնով և կեանքիս ցանկութիւններովը զրաղած ըլլալով՝ կը խեղդուին, և անպտուղ կ'ըլլան։ 15 Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը անոնք են՝ որ բարի և յօժար սրտիւ լսելով խօսքը՝ կ'ընդունին, ու համբերութիւնով պտուղ կու տան։

16 Ձկայ մէկը որ ճրագը վառէ՝ ու ամանի մը տակ՝ կամ մահիճին ներքևը դնէ. հապա աշտանակի վրայ կը դնէ, որ ներս մտնողները լոյս տեսնեն։ 17 Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտնուի, ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չհիտցուի՝ ու երևան չելլէ։ 18 Ուստի նայեցէք՝ թէ ինչպէս կը լսէք. Քանզի ով որ ունի՝ անոր պիտի տրուի, և ով որ չունի՝ անոր ալ որ ինքը կը կարծէ թէ ունի, անկէ պիտի առնուի։

19 Եւ անոր մայրը ու եղբայրները իրեն եկան, ու բազմութենէն չէին կրնար անոր քովը երթալ։ 20 Եւ անոր իմացուցին՝ ըսելով. Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ են, ու քեզ տեսնել կ'ուզեն։ 21 Եւ անիկայ պատասխան տալով՝ ըսաւ անոնց. Իմ մայրս ու իմ եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկայ կը կատարեն։

22 Ու եղաւ որ մէկ օր մը նաւը մտաւ ինքը և իր աշակերտները՝ ու ըսաւ անոնց. Յովակին միկալ կողմը անցնինք. և ճամբայ 23 ելան։ Ու երբոր նաւով կ'երթային, ինքը քնացաւ, ու հովի փոթորիկ մը իջաւ ծովակին վրայ,

Ցամի Տեառն 31

* Ո՛նէ՝ գրեխան մազնիքովը
† Մաղ. իգ. 5։
‡ ա Տիմ. ա. 14։
§ Մատ. թ. 2։ Մար. բ. 5։
¶ Մատ. թ. 3։ Մար. բ. 7։
‖ Մատ. թ. 22։ Մար. ե. 34։ ժ. 52։ Գլ. բ. 48։ ժբ. 42։
** Կ՚ըժըշկեց

† Մատ. ժ. 10։ Մար. գ. 10։
‡ Եսա. գ. 9։ Մար. դ. 12։
§ Մատ. ժգ. 18։ Մար. գ. 14։
¶ Մատ. ժ. 26։ Գլ. ժբ. 2։
‖ Մատ. ժգ. 12։ ԻԱ. 29։ Գլ. ժթ. 26։
** Մատ. ժբ. 46։ Մար. գ. 31։
†† Մատ. ը. 23։ Մար. դ. 35։

– Մատ. իե. 55. 56։
‡‡ Մար. ժգ. 9։
§§ Ո՛նէ՝ անանց
¶¶ Մատ. ժգ. 2։ Մար. գ. 1։

Յամի Տեառն 31

և Նա–ը կը լեցուէր , ու իրենք վր–
24 տանդի մէջ էին : Մօտեցան ար–
թընցուցին անիկայ՝ ու ըսին .
Վարդապետ վարդապետ՝ –ս կը
կորսուինք . ան ալ ելաւ սաստեց
Հովին , ու ջուրերուն խռովու–
թեանը , և հանդարտեցան , ու
25 խաղաղութիւն եղաւ : Եւ ըսաւ
անոնց . Ո՞ւր է ձեր հաւատքը .
և անոնք վախի մէջ ինկած զարմա–
ցան , ու իրարու կ'ըսէին . Արդեօք
ո՞վ էասիկայ , որ Հովերուն ու
ջուրին ալ հրաման կու տայ . և կը
Ղազանդին ասոր :

Ղ Մատ . ը . 28 : Մար . և . 1 :
*Ո՛–ե՛ Գեր–գեսացւոց

26 Ու նաւելով իջան *Գադարա–
ցւոց երկիրը , որ Գալիլեային
27 դիմացի կողմն է : Եւ ինքը ցա–
մաքը ելլելուն պէս՝ ան քաղաքէն
մարդ մը ելաւ դիմացը՝ որուն ներսը
շատատեն դեւեր կային .
ու անիկայ հանդերձ չէր հագներ ,
ոչ ալ տան մէջ կը բնակէր ,
28 հապա դերեզմաններու մէջ : Եւ
Ցիսուսը տեսնելով՝ աղաղակեց ,
ու ինկաւ անոր առջևը , ու բարձր
ձայնով ըսաւ . Դուն իմ հետս
ի՞նչ բան ունիս Ցիսուս՝ Որդի
Աստուծոյ բարձրելոյ , կ'աղաչեմ
29 քեզի՝ զիս մի տանջեր . (Ինչու որ
հրամայեց պիղծ ոգիին՝ որ ան մար–
դէն ելլէ . որովհետև շատ ատեն
էր՝ որ զանիկայ յափշտակեր էր . և
անիկայ շղթաներով , ու ոտնա–
կապերով կապուած կը պահուէր ,
բայց կապերը կը կոտրտէր , ու
դևէն անապատը կը քշուէր .)
30 Հարցուց անոր Ցիսուս՝ ու ըսաւ .
Անունդ ի՞նչ է . ան ալ ըսաւ . Լե–
գէոն . ինչու որ շատ դևեր մտեր
31 էին անոր ներսի դին : Եւ կ'աղա–
չէին անոր՝ Որ անդունդը երթա–
Ի Ցայտ . ի . 3 : 32 լու հրաման չընէ իրենց : Եւ ան
տեղը շատ խոզերու երամակ մը
կար՝ որ լեռը կ'արածուէին . ու ա–
ղաչեցին անոր՝ որ իրենց հրաման
տայ անոնց մէջը մտնելու . և հրա–
33 ման տուաւ անոնց : Ու դևերը
մարդէն ելլելով՝ խոզերուն մէջը
մտան . և երամակը դահավէժ տե–
ղէն ծովակը վազեց , ու խեղդուե–
34 ցաւ : Եւ խոզարածները –ս և–
ղած բանը տեսնելով՝ փախան , ու
պատմեցին քաղաքը ու ագարակ–
35 ները : Եւ *եկան Ցիսուսին ,
և գտան ան մարդը՝ ուսկից որ դևե–
րը ելեր էին , հագուած ու խելքը
վրան Ցիսուսի ոտքերուն քովը
36 նստած , ու վախցան : Եւ անոնք
որ տեսեր էին , պատմեցին անոնց՝
թէ ինչպէս դիւահարը ազատե–
Ե Մատ . ը . 34 : 37 ցաւ : Եւ Գադարացւոց շրջակայ
տեղուանքը դանուող բոլոր բազ–
մութիւնը կ'աղաչէր անոր , Ի որ
իրենցմէ երթայ . ինչու որ մեծ
վախով բռնուած էին . ան ալ
38 նաւը մտնելով՝ ետ դարձաւ : Եւ
ան մարդը՝ ուսկից որ դևերը ելեր
էին , կ'աղաչէր անոր՝ որ հետը
ըլլայ . բայց Ցիսուս արձակեց ա–
39 նիկայ՝ ու ըսաւ . Դարձիր քու
տունդ , ու պատմէ՝ ինչ որ Աս–
տուած քեզի բրաւ . ան ալ գնաց ,
ու բոլոր քաղաքին մէջը քարոզեց ,
ինչ որ Ցիսուս իրեն բրաւ :
40 Ու երբոր Ցիսուս ետ դարձաւ ,
ժողովուրդը զանիկայ ընդունեց .
ինչու որ ամէնքը անոր կը սպասէ–
41 ին : Եւ ահա Յայրոս անունով
մարդ մը եկաւ , ու ինքը ժողովա–
րանին իշխանն էր . և Ցիսուսին
ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր ,
42 որ իր տունը մտնէ . Ինչու որ մէկ
հատիկ աղջիկ մը ունէր՝ գրեթէ
տասուերկու տարեկան , որ մեռ–
նելու մօտ էր . ու երբոր անիկայ
կ'երթար , բազմութիւնը կը նեղէր
զանիկայ :
Ղ Մատ . թ . 18 : Մար . և . 22 :
Ղ Մատ . թ . 20 :
43 Ու կնիկ մը՝ որ տասուերկու
տարիէ 'ի վեր արիւնի տեռատե–
սութեան մէջ էր , ու իր բոլոր
ունեցածը բժիշկներուն ծախք բրած
էր , և իրեն մէկէ մը բժշկուելու ձար
44 մը եղած չէր , Ետևէն մօտենալով՝
անոր հանդերձին քղանցքին դր–
պաւ , և իսկոյն իր արիւնին հոսու–
45 մը դադրեցաւ : Եւ Ցիսուս ը–
սաւ . Ո՞վ էր ան որ ինծի դպաւ .
երբոր ամէնքը կ'ուրանային , ըսաւ
Պետրոս ու անոր հետ եղողները .
Վարդապետ՝ բազմութիւնը քեզ
կը հրէ ու կը նեղէ , ու կ'ըսե՞ս Թէ՝
46 Ո՞վ ինծի դպաւ : Եւ Ցիսուս ը–
սաւ . Մէկը ինծի դպաւ , քանզի
Ե Իմացայ որ ինծմէ զօրութիւն մը
Ե Մար . և . 30 ; Ղս . ը . 19 :
47 ելաւ : Երբոր տեսաւ կնիկը՝ որ
Բ–ը –նէ չպահուեցաւ , դողալով
եկաւ՝ ու անոր առջևը ինկաւ , և
բոլոր ժողովուրդին առջևը անոր
պատմեց՝ Թէ ինչ բանի համար ա–
նոր դպչեր էր , և Թէ ինչպէս ին–
48 քը իսկոյն բժշկուեցաւ : Եւ Ցի–
---- ըսաւ անոր . Քաջալերուէ՝
աղջիկ , քու հաւատքդ քեզ բժշկ–
կեց , դնա խաղաղութեամբ :
Ե Մար . և . 35 ;
49 Երբոր ինքը դեռ կը խօսէր ,
ժողովրդապետին տունէն մէկը ե–
կաւ՝ ու ըսաւ անոր . Աղջիկդ մե–
ռաւ , –ը վարդապետը մի յոգ–
50 նեցներ : Բայց Ցիսուս երբոր լը–
սեց , պատասխան տուաւ անոր՝ ու
ըսաւ . Մի վախնար , միայն հա–
51 ւատա , ու պիտի ապրի : Եւ երբ
տունը մտաւ՝ ուրիշ մէկը Թող
չտուաւ որ մտնէ , բայց միայն
Պետրոսը ու Յակոբոսը և Յովհան–

Յամի Տեառն 31

Ղ Մար . ժգ . 39 :
Հ Մար . և . 18 :

Ցամի Ցետառ 31

Նէսը , ու աղջկան հայրը ու մայրը ։
52 Ամէնքն ալ կու լային ու կ'ողբա-
յին անոր վրայ . և ինքը բսաւ .
Մի լար . անիկայ մեռած չէ , այ-
53 պա կը քնանայ ։ Եւ անոնք ծաղր
կ'ընէին զանիկայ , քանզի դիտէին
54 թէ մեռաւ ։ Ու ինքը ամէնն ալ
դուրս հանելով , բռնեց անոր ձեռ-
քէն , ու կանչեց բսելով . Աղջիկ
55 Ելէր ։ Եւ անոր հոգին դարձաւ ,
ու իսկոյն ոտք ելաւ . և Ցիսուս
հրաման ըրաւ որ ուտելիք տան ա-
56 նոր ։ Ու անոր ծնողքը ապշած
մնացին . և ինքը անոնց պատուի-
րեց որ եղած բանը մէկու մը չը-
բուցին ։

ԳԼ . Թ

1 Քրիստոս իր աշակերտները կը խրկէ հրաշքներ բնելու և քարոզելու ։ 7 Հերովդէս կը ցանկայ Քրիստոսը տեսնելու ։ 17 Քրիստոս հինգ հազար հոգի կը կերակրէ ։ 18 Կը հարցընէ թէ մարդիկ իրեն համար ո՞վ է կ'բսեն ։ 22 Իր չարչարանքները կը նախադայնէ ։ 23 Ամենուն պատուէր կու տայ որ իր օրինակին հետեւին ։ 28 Քրիստոսի պայծառակերպութիւնը ։ 37 Քրիստոս կը բժշկէ լուսնոտը ։ 43 Դարձեալ իր չարչարանքը կը նախադայնէ իր աշակերտներուն ։ 46 Կը պատուիրէ անոնց որ խոնարհ ըլլան ։ 51 Ամենուն հետ քաղցրութեամբ վարուին՝ առանց վրէժխնդրութեան ։ 57 Քանի մը անձինք կ'ուզեն Քրիստոսի հետեւիլ ։ տակաւ պայմաններ կ'առաջարկեն ։

Ա Եւ իր տասներկու առաքեալ-
ները մէկտեղ իրեն կանչելով ,
անոնց զօրութիւն ու իշխանու-
թիւն տուաւ բոլոր դեւերուն վրայ ,
2 և ախտերը բժշկելու ։ Եւ զանոնք
խրկեց որ Աստուծոյ թագաւորու-
թիւնը քարոզեն , ու հիւանդները
3 բժշկեն ։ Եւ բսաւ անոնց . Ճամ-
բու համար բան չառնէք , ոչ գա-
ւազան՝ և ոչ տոպրակ , ոչ հաց՝
և ոչ ստակ , ոչ ալ կրկին հան-
4 դերձ ունենաք ։ Եւ որ տուն որ
մտնէք՝ հոն մնացէք , ու անկէ
5 ելէք ։ Ու անոնք որ ձեզ չեն ըն-
դունիր , երբոր ան քաղաքէն կ'ել-
լէք , Ձեր ոտքերուն փոշին ան-
դամ թօթվեցէք՝ իրենց դէմ վը-
6 կայութիւն ըլլալու համար ։ Եւ
անոնք ելան՝ ու գիւղ գիւղ կը պը-
տրտէին , և ամէն տեղ աւետարա-
նը կը քարոզէին , ու բժշկութիւն
կ'ընէին ։

7 Եւ Հերովդէս չորրորդապետը
անոր բոլոր գործքերը լսելով՝ տա-
րակուսանաց մէջ էր . որովհետև
ոմանք բսած էին թէ , Յովհաննէ-
սը յարութիւն առաւ մեռելներէն .
8 Եւ ոմանք թէ՝ Եղիան յայտնուե-
ցաւ . և ուրիշներն ալ թէ՝ Առջի
մարգարէներէն մէկը յարութիւն
9 առաւ ։ Եւ Հերովդէս բսաւ .
Յովհաննէսը ես գլխատեցի . հա-
պա ասիկայ ո՞վ պիտի ըլլայ , որուն
վրայով ասանկ բաներ կը լսեմ .
Ու կ'ուզէր որ տեսնէ զանիկայ ։

Ցամի Ցետառ 32

10 Եւ Առաքեալները դարձան , ու
պատմեցին անոր՝ ինչ որ ըրին ։ Է-
առաւ զանոնք՝ առանձին անապատ
տեղ մը քաշուեցաւ քաղաքի մը
կով , որուն անունը Բեթսայիդա
11 էր ։ Եւ ժողովուրդները երբոր
իմացան , անոր ետևէն գացին , ու
զանոնք ընդունելով՝ կը խօսէր ա-
նոնց Աստուծոյ թագաւորութեա-
նը վրայով . և որոնք որ բժշկու-
թեան կարօտ էին , կը բժշկէր ։
12 Ու երբոր օրը սկսաւ իրիկուան
մօտենալ , տասներկուքը եկան ու
բսին անոր . Արձակէ ժողովուրդ-
ները , որ շրջակայ գիւղերը ու ա-
գարակները երթան իջևանին , ու
կերակուր գտնեն . ինչու որ հոս
13 անապատ տեղ մըն ենք ։ Բսաւ
անոնց . Դուք տուէք ատոնց ու-
տելիք . անոնք ալ բսին . Մենք
հինգ նկանակէն ու երկու ձուկէն
աւելի բան չունինք , թէ որ չեր-
թանք ատ բոլոր ժողովուրդին հա-
14 մար կերակուր չգնենք ։ (Քանզի
հինգ հազարի չափ էրիկ մարդիկ
կային ։) Ու բսաւ իր աշակերտ-
ներուն . Ատոնք դաս դաս յիսուն
15 յիսուն նստեցուցէք ։ Եւ անանկ
ըրին , ու ամէնն ալ նստեցուցին ։
16 Եւ ան հինգ նկանակը ու երկու
ձուկը առնելով՝ ու դէպ ի երկին-
քը նայելով , օրհնեց զանոնք ու
կոտրեց , և կու տար աշակերտնե-
րուն , որ ժողովուրդին առջևը
17 դնեն ։ Եւ կերան ու կշտացան
ամէնքն ալ , ու աւելցած կտո-
րուանքները տասներկու կողով
վերցուցին ։

18 Ու եղաւ որ երբ ինքը առան-
ձին աղօթք կ'ընէր , աշակերտներն
ալ իր հետն էին , և Հարցուց ա-
նոնց՝ բսելով . Ժողովուրդները ին-
19 ձի համար ո՞վ կ'բսեն թէ եմ ։ Ա-
նոնք ալ պատասխան տալով՝ բսին .
Յովհաննէս Մկրտիչը , և
ուրիշները՝ Եղիան , ուրիշներն ալ
թէ՝ Առջի մարգարէներէն մէկը յա-
20 րութիւն առեր է ։ Եւ ինքը բսաւ
անոնց . Հապա դուք ինձի համար
ո՞վ կ'բսէք թէ եմ , Պատասխան
տուաւ Պետրոս՝ ու բսաւ . Աս-
21 տուծոյ Քրիստոսը ։ Եւ Հինքը
սաստիկ պատուիրեց անոնց՝ որ աս
22 բանը մէկու մը չըբուցեն ։ Ու ը-
սաւ թէ , Պետք է որ Որդին մար-
դոյ շատ չարչարանքներ կրէ , և
ծերերէն ու քահանայապետներէն
և դպիրներէն մերժուի , ու սպան-
նուի , ու երրորդ օրը յարութիւն
23 առնէ ։ Ետև ամենուն կ'բսէր . Թէ
որ մէկը կ'ուզէ իմ ետևէս գալ ,

Ցամի Ցետառ 31

յՑոհ . ժա . 11 , 13 ։

ՆդԼ . է . 14 ։ Ցոհ . ժա . 43 ։

ՀՄատ . ը . 4 ։ Թ . 30 ։ Մար . ն . 43 ։

— Մատ . ժ . 1 ։ Մար . գ . 13 ։ գ . 7 ։

Բ Մատ . ժ . 7 , 8 ։ Մար . գ . 12 ։ ԳԼ . ժ . 1 , 9 ։

Գ Մատ . ժ . 9 ։ Մար . գ . 8 ։ ԳԼ . ժ . 4 ։ իր . 35 ։

Դ Մատ . ժ . 11 ։ Մար . գ . 10 ։

Ե Մատ . ժ . 14 ։

ՂԳոր . ժգ . 51 ։

Զ Մար . գ . 12 ։

Ցա . Տ . 32

ՀՄատ . ժգ . 1 ։ Մար . գ . 14 ։

Ցամի Ցետառ 32

ՆԳԼ . իգ . 8 ։ Բ Մար . գ . 30 ։ Ե Մատ . ժգ . 13 ։

ՂՄատ . ժգ . 15 ։ Մար . գ . 35 ։ Ցոհ . գ . 1 , 5 ։

Է Մատ . ժգ . 13 ։ Մար . ը . 27 ։

Ը Մատ . ժգ . 2 ։ Հմր 7 , 8 ։

Ցամի Ցետառ 32

Թ Մատ . ժգ . 16 ։ Ցոհ . գ . 70 ։ Ի Մատ . ժգ . 20 ։

Ժ Մատ . ժգ . 21 ։ ժէ . 21 ։

ՀՄատ . ժ . 38 ։ ժգ . 24 ։ Մար . ը . 34 ։ ԳԼ . ժգ . 27 ։

Թող իր անձը ուրանայ , և ամէն օր իր խաչը վերցընէ , ու իմ ետե-
24 ւէս գայ : Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապրեցընել , պիտի կոր-
սընցընէ անիկայ . և ով որ ինձի համար իր անձը կորսընցընէ , պի-
25 տի ապրեցընէ անիկայ : Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը թէ որ բոլոր աշխարհը վաստրկի , և իր անձը կորսընցընէ կամ վնասէ :
26 Վասն զի ով որ զիս ու իմ խօս-
քերս ԽՆԴԻԼԸ ամմեթ սեպէ , Որ-
դին մարդոյ ալ զանիկայ ԽՆԴԻԼԸ ամմեթ պիտի սեպէ՝ երբոր գայ իր
ու Հօրը և սուրբ հրեշտակներուն
27 փառքովը : Բայց Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի , որ հոս կայնողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն , մինչև որ տեսնեն Աստուծոյ թագաւորու-
թիւնը :
28 Ու եղաւ որ աս խօսքերէն գրեթէ ութ օր ետքը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առնելով՝
29 լեռը ելաւ աղօթք ընելու : Ու երբոր ինքը աղօթք կ'ընէր , իր երեսին տեսքը ուրիշ կերպ մը ե-
ղաւ , ու իր հագուստը ճերմակ
30 փայլուն եղաւ : Եւ ահա երկու մարդիկ իր հետը կը խօսէին , ո-
31 րոնք Մովսէս ու Եղիա էին , Փառքով երեցած , և անոր ելևէջելլուն վրայով կը խօսէին , որ Երուսաղէմի մէջ պիտի կատա-
32 րուէր : Բայց Պետրոս և անոր հետ եղողները քունով ծանրացած էին , ու երբոր արթընցան , տե-
սան անոր փառքը , և ան երկու մարդիկը որ անոր քովը կեցեր էին :
33 Ու եղաւ որ երբ անոնք զատուե-
ցան անոր քովէն , Պետրոս բսաւ Յիսուսին . Վարդապետ՝ ազէկ է որ հոս կենանք . ու իրեք խրճիթ շի-
նենք , մէկը քեզի , և մէկը Մովսէսին , ու մէկը Եղիային . վասն զի չէր գիտեր ինչ կը խօսէր :
34 Եւ քանի որ անիկայ ասբանները կը խօսէր , ամպ մը եկաւ՝ ու անոնց վրայ հովանի եղաւ , և ամպին տա-
35 կը մտած առնոնին վախցան : Ու ձայն մը եղաւ ամպէն՝ ըսելով . Ասիկայ է իմ սիրելի Որդիս , Ա-
36 տոր մտիկ րրէք : Եւ ան ձայնը որ եղաւ , Յիսուս մինակ գտնուե-
ցաւ : Ու իրենք լուռ կեցան , և իրենց տեսածներէն՝ ան օրերը մէ-
կուն բան մը չպատմեցին :
37 Ու եղաւ որ հետեւեալ օրը՝ երբ-
որ անոնք լեռնէն վար իջան , շատ
38 ժողովուրդ անոր դէմ ելաւ : Եւ ահա ժողովուրդին մէջէն մէկ մարդ մը աղաղակեց ու բսաւ . Վարդա-
պետ՝ կ'աղաչեմ քեզի՝ նայէ իմ
39 որդիիս , քանզի իմ մէկ հատիկս է : Եւ ահա ոգի մը կը բռնէ զա-
նիկայ , ու ալ յանկարծ կը կան-
չուրտէ , և զանիկայ ցնցելով կը փրփրցընէ , ու հազիւ կը զատուի անկէ՝ ջարդուբուրդ ընելով զանի-
40 կայ : Եւ քու աշակերտներուդ ա-
ղաչեցի որ հանեն զանիկայ , ու
41 չկրցան : Պատասխան տուաւ Յի-
սուս ու բսաւ . Ով անհաւատ և խոտորեալ ազգ՝ մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ՝ ու ձեզի համբե-
42 րեմ : Հոս բերբքու որդիդ : Ու երբոր դեռ կը մօտենար , դեւը զա-
նիկայ գետինը զարկաւ՝ ու սաստիկ
43 ցնցեց : Իսկ Յիսուս սաստեց պիղծ ոգիին , և բժշկեց տղան՝ ու
44 զանիկայ իր հօրը տուաւ : Եւ ամէնքը կը զարմանային Աստուծոյ մեծամեծ գործքերուն վրայ :
Ու քանի որ ամէնքը կը զարմա-
նային Յիսուսին բրած բոլոր գործ-
քերուն վրայ , անիկայ բսաւ իր ա-
շակերտներուն . Դուք աս խօս-
քերը ականջներնիդ դրէք , վասն զի Որդին մարդոյ պիտի մատնուի
45 մարդոց ձեռքը : Բայց անոնք չէին իմանար ան խօսքը , և ա-
նոնցմէ ծածկուած էր՝ որ չհասկը-
նան . ու կը վախնային ան խօսքին համար իրեն հարցընելու :
46 Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ՝ թէ արդեօք իրենց մէջը ով է
47 մեծ : Իսկ Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով , տղայ մը առաւ՝ ու զանիկայ իր քովը կայ-
48 նեցուց , Եւ բսաւ անոնց . Ով որ աս տղան իմ անունովս կ'ըն-
դունի՝ զիս կ'ընդունի . և ան որ զիս կ'ընդունի՝ անիկայ զիս խրկողը կ'ընդունի . վասն զի ան որ ձեր ամենուն մէջը պզտիկ է , անիկայ մեծ պիտի ըլլայ :
49 Պատասխան տուաւ Յովհան-
նէս ու բսաւ . Վարդապետ՝ մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր , և զանիկայ արգիլեցինք ,
50 ինչու որ մեր հետը չպտրտիր : Եւ Յիսուս բսաւ անոր . Մի՛ արգիլէք . Քանզի ան որ ձեզի հակառակ չէ , ձեր կողմն է :
51 Ու եղաւ որ երբ իր վերնալու օրերը կը կատարուէր , ինքն ալ հաստատ որոշեց՝՝ եւ-
52 րուսաղէմ երթալ : Եւ իր երեսին առջեւէն պատգամաւորներ խրկեց , որ երբոր գացին՝ Սամարացւոց մէկ գեղը մտան որ իրեն համար պատ-
53 րաստութիւն մը ընեն : Եւ չընդունեցին զանիկայ , ինչու որ անոր երեսը դէպ ի Երուսաղէմ երթա-
54 լու կերեւցաւ էր : Երբոր իր աշակերտները Յակոբոս ու Յովհան-

Գամի Տեառն 32

Գամի Տեառն 32

Մատ. ժգ. 26 ։ Մար. ը. 36 ։

Մատ. ժ. 33 ։ Մար. ը. 38 ։ ը Տիմ. բ. 12 ։

Մատ. ժգ. 28 ։ Մար. ը. 39 ։

Ա Մատ. ժէ. 1 ։ Մար. թ. 1 ։

Դան. ը. 18 ։ ժ. 9 ։

Մատ. գ. 17 ։

Գոր. գ. 22 ։

Մատ. ժէ. 9 ։

Մատ. ժէ. 14 ։ Մար. թ. 13, 16 ։

Մատ. ժէ. 21 ։

Մար. թ. 31 ։ Գա. բ. 30 ։ ժբ. 34։

Ա Մատ. ժբ. 1 ։ Մար. ը. 33 ։

Մատ. ժ. 40 ։ ժբ. 5 ։ Մար. թ. 36 ։ Յն. ժբ. 44 ։ ժգ. 20 ։

Բ Մատ. իգ. 11, 12 ։

Մար. թ. 37 ։ Տե՛ս Թագ. ա. 28 ։

Մատ. ժբ. 30 ։ Գա. ժա. 23 ։

Այլազ. Մի գի հակառակ չէ, մեր

Մար. ժգ. 19 ։ Գոր. ա. 2 ։

Յն. երեսը հաստատեց

Յն. գ. 4 ։ 9 ։

Ցամք Տեառն 32

նէս տեսան, բսին. Տէր՝ կուզե՞ս որ բանիք, ու երկինքէն կրակ իջնէ՝ և սատկեցընէ անոնք, † ինչպէս որ
55 Եղիան ալ բրաւ, Եւ դարձաւ յանդիմանեց զանոնք՝ բսելով. Ձէք դիտեր թէ ինչ հոգիի տէր
56 էք դուք. * Վասն զի † Որդին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսընցընելու, հապա փրկելու՝՝. և ուրիշ դեղ մը գացին։
57 ¶ Ու երբոր անոնք ճամբան կ'երթային, մէկը բսաւ անոր. Տէր՝ քու ետևէդ գամ՝ ուր որ երթաս։
58 Եւ Յիսուս բսաւ անոր. Աղուէսները որջեր ունին, ու երկնից թռչունները բոյներ, բայց Որդին մարդոյ տէղ չունի, որ հոն իր գլուխը դնէ։
59 ¶ Մէկ ուրիշի մըն ալ բսաւ. Եկուր իմ ետևէս. ան ալ բսաւ. Տէր՝ ինծի հրաման տուր, որ առաջ երթամ իմ հայրս թաղեմ։
60 Յիսուս բսաւ անոր. Թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մեռելները. բայց դուն դնա Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ։
61 Մէկ ուրիշ մըն ալ բսաւ. Տէր՝ † ես քու ետևէդ պիտի գամ. բայց ինծի հրաման տուր, որ առաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարա-
62 կան ողջոյն տամ։ Յիսուս բսաւ անոր. Ո՛չ մէկը որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար է։

ԳԼ. Ժ.

1 Քրիստոս եօթանասուն այլևայլներ կը խրրկէ հրաշագործութիւն բնելու և քարոզելու. 17 կը պատուիրէ անոնց որ խանարհ ըլլան, և կ'իմացընէ թէ ինչ բանի համար պարհին ուրախանալ. 21 չնորհակալ կ'ըլլայ Հօրը՝ անոր չնորհացը համար. 23 երանութիւն կուտայ իր այակերտներուն երջանիկ վիճակին. 25 կը սորվեցընէ օրինականին թէ ինչ բնելու է որ յաւիտենական կեանքը ժառանգէ. և թէ ով որ իր ոգորմութեանը կարօտ է, առնիկայ իրեն բնկեր սեպելու է. 41 կը յանդիմանէ Մարթան, ու անոր քոյրը Մարիամը կը գովէ։

1 Յետ բաներէն ետև Տէրը ուրիշ եօթանասուն ալ որոշեց. ¶ և զանոնք իր առջևէն երկու երկու իրկնց բոլոր քաղաքներն ու տեղ-
2 րը ուր որ ինքը պիտի երթար։ Եւ կ'ըսէր անոնց. Հունձքը չատ է, ու մշակները քիչ. հոստի հունձքին Տէրոջը ազատկեցէք, որ մշակ-
3 ներ հանէ իր հունձքին։ Գացէք. Տեսէ՛ք ես ձեզ կը իրկեմ իրրև
4 գառներ՝ գայլերու մէջ։ Հ Հետևերնիդ քսակ մի՛ առնէք, ոչ ալ տոպրակ, և ոչ կօշիկներ. Ուս ճամ-
5 բան մէկու մը բարև մի՛ տար։ Հ Եւ որ տունը որ մտնէք, առաջ բսէք.
6 † Բարև աս տանս։ Ու թէ որ հոն

Ցամք Տեառն 32

‡ բարեվի արժանաւոր մարդ՝՝ կայ, ձեր բարևը պիտի հանդչի անոր վրայ, հապա թէ չէ՝ ձեզի պիտի
7 դառնայ։ Հ Եւ ան տանը մէջ մնայէք, ու * անոնցմէ կերէք ու խմեցէք. † ինչու որ մշակը իր վարձքին արժանի է. տուներ տուն մի փո-
8 խուիք։ Եւ որ քաղաք որ մտնէք, ու ձեզ ընդունին, ինչ որ առջևնիդ դնեն, անոր ուտեցէք։
9 Նիդ դրուի, կերէք. † Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդները, և բսէք անոնց. Հ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։
10 Բայց որ քաղաք որ մտնէք՝ ու ձեզ չընդունին, անոր հրապարակները ել-
11 լելով՝ բսէք. Ի Նաև փոշին ալ որ ձեր քաղաքէն մեր †-----ս փակած է, ձեզի կը թօթվենք. միայն թէ աս գիտնաք՝ որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզի մօտեցեր է։
12 Ձեզի կ'ըսեմ՝ † որ ան օրը Սոդոմի †-----ը աւելի դիւրին պիտի ըլլայ, քան թէ ան քաղաքին։
13 ¶ Վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. Հինչու որ եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ ձեր մէջը եղան, շատոնցմէ քուրձով՝ ու մոխիրի մէջ նստելով ապաշխարած պիտի
14 ըլլային։ Բայց դատաստանին օրը Տիւրոսին ու Սիդոնին աւելի դիւրին պիտի ըլլայ, քան թէ ձեզի։
15 Եւ դուն Կափառնայում՝ Հոր մինչև երկինքը բարձրացած ես, մինչև դժոխքը պիտի իջնես։
16 ¶ Ան որ ձեզի մտիկ կ'ընէ, ինծի մտիկ կ'ընէ. և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ. Հ Ան որ զիս կը մերժէ, զիս խրկողը կը մերժէ։
17 Եւ եօթանասունը †-----ը դարձան ուրախութեամբ՝ ու բսին. Տէր՝ քու անունովդ դևերն ալ մեզ
18 զի կը հնազանդին։ Եւ բսաւ անոնց. * Սատանան փայլակի պէս երկինքէն վար ինկած կը տեսնէի։
19 Հ Ահա ձեզի իշխանութիւն կուտամ օձերու ու կարիճներու՝ և թշնամիին բոլոր զօրութեանը վրայ կոխկրտելու. ու բնաւ մէկ բան
20 մը ձեզի պիտի չվնասէ։ Բայց դուք անոր վրայ մի՛ ուրախանաք որ ոգիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէ՛ք որ ձեր անունները երկինքը գրուած են։
21 Հ Նոյն ժամուն Յիսուս Հոգիով ուրախացաւ՝ ու բսաւ. Շնորհակալ եմ քեզմէ ով Հայր՝ Տէր երկնի և երկրի, որ աս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն և գիտուններէն, ու տղոց յայտնեցիր. այո՛ ով Հայր, ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի է։
22 դաւ։ ¶ Ամեն բան ինծի տրուե-

Ցամք Տեառն 32

‡ Ցոե. խոզուրթեան որդի
* Մատ. ժ. 11։
† Ա Կոր. ժ. 27։
* Մատ. ժ. 10։ ա Կոր. թ. 4, ե։ ա Տիմ. ե. 18։
† Գղ. թ. 2։
† Մատ. գ. 2։ գ. 17։ ժ. 7։ Հմր 11։
† Մատ. ժ. 14։ Գղ. թ. 5։ Գոր. ժգ. 51։ ԺԸ. 6։
† Մատ. ժ. 15։ Մար. գ. 11։
† Մատ. ժա. 21։ Հեզեկ. գ. 6։
† Մատ. ժա. 23։
† Ընթ. ժա. 4։ բ Օր. ա. 28։ Եսա. ժգ. 13։ Եբեմ. ծա. 53։
* Տես Եզեկ. իգ. 20։ լբ. 18։
* Մատ. ժ. 40։ Մար. թ. 36։ Ցոհ. ժգ. 20։
† Թես. գ. 8։
† Ցոհ. ե. 23։ Հ Հմր 1։
* Ցոհ. ժբ. 31։ ժգ. 11։ Ցայտ. թ. 1։ ժբ. 8։ 9։
† Մար. ժգ. 18։ Գոր. իբ. 5։
† Եւ. լբ. 32։ Սաղ. կթ. 28։ Եսա. գ. 3։ Դան. ժբ. 1։ Փիլ. գ. 3։ Երբ. ժբ. 23։ Ցայտ. ժգ. 8։ ի. 12։ իա. 27։
† Մատ. ժա. 25։
* Մատ. իբ. 18։ Ցոհ. գ. 35։ ժե. 2։

Ցամք Տեառն 32

- Ցօն. ա. 18։ գ. 44։ 46։

Ա Մատ. Ժգ. 16։

- ա Պետ. ա. 10։

բ Մատ. ԺԹ. 16։ իբ. 35։

բ Օր. գ. 5։

- Ղե. ԺԹ. 18։

† Ղե. Ժբ. 5։ Նեեմ. թ. 29։ Եզեկ. ի. 11. 13. 21։ Հով. Ժ. 5։ † Գէ. Ժգ. 15։

‡ Սաղ. լբ. 11։

‡ Ցօն. գ. 9։

ցաւ իմ Հօրմէս , ու մէկը չգիտեր թէ ով է Որդին , բայց միայն Հայրը . և թէ ով է Հայրը , բայց միայն Որդին . և ան որուն որ Որդին կ'ուզէ յայտնել ։

23 Եւ աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ . Երանի ան աչքերուն՝ որ ձեր տեսածները կը

24 տեսնեն . Քանզի կ'ըսեմ ձեզի , որ շատ մարգարէներ և թագաւորներ ուզեցին ձեր տեսածները տեսնել , ու չտեսան , և ձեր լսածնները լսել , ու չլսեցին ։

25 Եւ ահա մէկ օրինական մը ելաւ , ու զանիկայ փորձելով՝ ըսաւ . Վարդապետ՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ ։

26 Անիկայ ալ ըսաւ անոր . Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է . ինտո՞ր կը

27 կարդաս ։ Պատասխան տուաւ անիկայ՝ ու ըսաւ . Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտէդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօրութենէդ ու քու բոլոր միտքէդ , և քու ընկերդ ալ քու անձիդ պէս ։

28 Եւ ինքը ըսաւ անոր . Շիտակ պատասխան տուիր . ատիկայ ըրէ ,

29 ու պիտի ապրիս ։ Իսկ անիկայ ուզելով † ինքզինքը արդարացընել , ըսաւ Յիսուսին . Բայց իմ ընկերս

30 ո՞վ է ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ . Մէկ մարդ մը Երիքովէն կ'իջնէր . ու աւազակներու յարձակեցան , որոնք մերկացուցին զանիկայ՝ ու վէրաւորելով կիսամեռ թողուցին ու գացին ։

31 Եւ պատահեցաւ որ քահանայ մը ան ճամբայէն կ'իջնէր , ու զանիկայ տեսնելով՝ ան դիմի կողմէն

32 մէն անցաւ ։ Նոյնպէս ալ Ղեւտացի մը ան տեղը հասնելով՝ գնաց ու տեսաւ , և անդիմի կողմէն անցաւ ։

33 Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն կ'ընէր , եկաւ անոր քովը ,

34 ու զանիկայ տեսնելով՝ խղճաց . Եւ մօտեցաւ անոր վէրքերը փաթթելով՝ վրան ձէթ և գինի թափելով . ու իր գրաստին վրայ դնելով՝ տարաւ անիկայ մէկ պանդոկ մը , և անոր

35 հոգ տարաւ ։ Ու հետևեալ օրը երբոր կ'ելլէր անկէ , երկու դահեկան հանեց պանդոկապետին տուաւ , և անոր ըսաւ . Հոգ տար ատոր , ու ինչ որ աւելի ծախք ընես , ետ դառնալուս՝ ես քեզի

36 կը վճարեմ ։ Հիմա ան իրեքէն ո՞րը քեզի կ'երևնայ ընկեր ըլլալ

37 աւազակներուն յարձակեցին ։ Եւ անիկայ ըսաւ . Ան որ անոր ողորմութիւն ըրաւ ։ Ան ատենը Յիսուս ըսաւ անոր . Գնա՝ դուն ալ այնպէս ըրէ ։

38 Ու եղաւ որ երբ անոնք կ'երթային , ինքը գեղ մը մտաւ . և Մկ կնիկ մը - Մարթա անունով՝ զանի-

39 կայ իր տունը ընդունեց ։ Եւ անիկայ քոյր մը ունէր , որուն անունը Մարիամ էր . Որ և - Յիսուսի ոտքերուն քովը նստաւ , ու

40 անոր խօսքերը մտիկ կ'ընէր ։ Բայց Մարթա շատ սպասաւորութիւնով զբաղած էր . եկաւ - անոր քովը՝ ու ըսաւ . Տէր՝ հոգդ չէ՞ , որ իմ քոյրս զիս մինակ թողուց սպասաւորութեան մէջ . ուստի ատոր

41 զրուցէ՝ որ ինծի օգնէ ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոր . Մարթա Մարթա , դուն շատ բաներու համար հոգ ընելովդ

42 կը տագնապիս . Բայց մէկ բան մը պէտք է . և Մարիամ ան աղէկ բաժինը ընտրեց , որ իրմէ պիտի չառնուի ։

ԳԼ. ԺԱ

1 Քրիստոս իր աշակերտներուն կը սորվեցընէ աղօթք բնել , և կը պատուիրէ որ սէտ աղօթք բնեն . 11 Ցատատելով որ այսպէս՝ Ընտուած իրենց բարիքներ պիտի բնէ . 14 Համր դև մը հանելով՝ կը յանդիմանէ Հայհոյիչ փարիսեցիները , 28 և կը ցուցնէ թէ որո՞նք են երանելիները . 29 Ժողովրդոց կը քարոզէ . 37 և կը յանդիմանէ փարիսեցւոց՝ դպրաց և օրինականաց կեղծաւորութիւնը ։

Ցամք Տեառն 32

- Ցօն. Ժա. 1։ Ժբ. 2. 3։ Բ Թես. կր. 4. 32, ԿԱ։

† Գէ. բ. 35։ Գոր. իբ. 3։

1 Ու եղաւ որ մէկ տեղ մը աղօթք կ'ընէր . ու երբոր դադարեցաւ , իր աշակերտներէն մէկը բսաւ իրեն . Տէր՝ մեզի աղօթք բնել սորվեցուր , ինտոր որ Յովհաննէս ալ

2 իր աշակերտներուն սորվեցուց ։ Եւ բսաւ անոնց . Երբոր աղօթք կ'ընէք , բսէք . - Ով Հայր * մեր՝ որ երկինքն ես՝ , քու անունդ սուրբ ըլլայ . քու թագաւորութիւնդ դայ , * քու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ՝ .

3 Մեր ամէն աւուր հացը օրէ օր

4 մեզի տուր . Եւ մեզի ներէ՝ մեր մեղքերը . ինչու որ մենք ալ կը ներենք ան ամէնուն՝ որ մեզի պարտական են . ու մեզ փորձութեան մի՛ տանիր . * հապա չարէն մեզ ազատէ՝ ։

5 Եւ բսաւ անոնց . Ձեզմէ ո՞վ է - Նի-ոյ , որ բարեկամ մը ունենայ , ու կէս գիշերուան մէջ երթայ անոր՝ և բսէ անոր . Բարեկա՛մ՝ ինծի իրեք նկանակ փոխ տուր .

6 Ինչու որ իմ մէկ բարեկամս ճամբայէ ինծի եկաւ , ու բան մը չունիմ

7 նիմ անոր առջևը դնելու ։ Անիկայ ալ ներսէն պատասխան տայ՝ և բսէ . Ձիս մի՛ յոգնեցըներ , արդէն դուռը գոցուած է , ու տղաքս իմ քովս անկողնի մէջ են , չեմ կրնար ելլել՝ ու քեզի հաց

8 տալ ։ Ձեզի կ'ըսեմ . Թէև բա-

- Ցօ. Տ. 33

- Մատ. գ. 9։

* Ո՛-ն-ե չունի։

† Գէ. Ժբ. 1, ԿԱ։

Ցամի Տեառն 33

ընկամուխեան համար չելլէ տայ անոր , սակայն անոր թախանձանքին համար պիտի ելլէ ու պէտք
9 եղածը տայ անոր ։ Եւս ալ կ'ըսեմ ձեզի . Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի . փնտռեցէք՝ ու պիտի գըտնէք . դո---ը զարկէք՝ և պիտի
10 բացուի ձեզի . վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ , և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ , և ով որ դո---ը կը զարնէ՝ պիտի բացուի
11 անոր ։ Ո՞վ է ան հայրը՝ որմէն իր որդին հաց որ ուզէ , միթէ քա՞ր պիտի տայ անոր . կամ թէ որ ձուկ --էն , միթէ ձուկին
12 տեղը օ՞ձ պիտի տայ անոր . Եւ կամ թէ որ հաւկիթ ուզէ , միթէ
13 կարի՞ճ պիտի տայ անոր ։ Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք , որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց , որ իրմէ կը խնդրեն ։

Ա Մտթ . թ . 32 ։ Ժր . 22 ։

14 Ա Ու դեւ մը կը հանէր . և անիկայ համր էր . ու եղաւ որ երբ դեւը ելաւ , համրը խօսեցաւ . և ժողո-
15 վուրդները զարմացան ։ Բայց ա-նոնցմէ մէկ քանիները ըսին . Ընտիկայ դեւերուն Բէեղզեբուղ իշխանին միջոցովը դեւերը կը հանէ ։

Ղ Մտթ . թ . 34 ։ Ժր . 24 ։

16 Ուրիշներն ալ փորձելով Երկինքէն
17 Նշան մը կ'ուզէին անկէ ։ Բայց ինքը Գիտնալով անոնց խորհուրդները՝ ըսաւ անոնց . Ամէն թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւերի . և տուն մը իրեն դէմ
18 բա---ը՝ կը կործանի . Հապա թէ որ Սատանան իրեն դէմ բաժնուած է , անոր թագաւորութիւնը ինտո՞ր պիտի կենայ . որովհետև կ'ըսէք թէ՝ Բէեղզեբուղով դեւերը
19 կը հանեմ ։ Իսկ թէ որ ես Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ , ձեր որդիքը ինչով կը հանեն . ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դա-
20 տաւորները ։ Բայց թէ որ ես Աստուծոյ մատովը կը հանեմ դեւերը , ուրեմն Աստուծոյ թագաւորու-
21 թիւնը ձեր վրայ հասած է ։ Երբ-որ զօրաւոր մարդ մը զէնքերը վրան առած՝ իր դո---ը բակը կը պահպանէ , անոր բանները խաղաղու-
22 թեան մէջ կը մնան . Բայց երբոր անկէ աւելի զօրաւորը վրան գալով յաղթէ անիկայ , անոր զէնքերը կ'առնէ՝ որոնց ինքը յուսացեր էր , և անկէ ---ը կողոպուտը կը
23 բաժնէ ։ Ան որ իմ հետս չէ , ինծի հակառակ է . և ան որ ինծի հետ չժողվեր , ցիրուցան կ'ընէ ։
24 Երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ , անջուր տեղեր կը պտտի , հանգստութիւն կը փնտռէ .

Ցամի Տեառն 33

ու երբոր չգտնէր , կ'ըսէ . Դառնամ նորէն իմ տունս՝ ուրկից որ
25 ելայ . Եւ կու գայ՝ ը---ի--ը մաքրուած ու պատրաստուած կը գըտ-
26 նէ ։ Ան ատեն կ'երթայ և իր հետը կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար , ու մտնելով՝ հոն կը բնակին . և ան մարդուն վերջը՝ առջինէն դէշ կ'ըլլայ ։
27 Ու եղաւ որ երբ անիկայ ասբաներըը կը խօսէր , ժողովուրդին մէջէն մէկ կնիկ մը ձայնը վերցուց՝ ու բսաւ անոր . Երանի՛ ան որովայնին՝ որ քեզ կրեց , և ան ծիծերուն՝ որ քեզի կաթ տուին ։
28 Եւ ինքը բսաւ . Այնաւանդ թէ երանի՛ անոնց՝ որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն ։
29 Ուրբոր ժողովուրդները ---ը կ'ըլլայ կը դիմուէին , սկսաւ ըսել . Ասոնք ազգը չար է . նշան կ'ուզէ , և --էն նշան պիտի չտրուի անոր , բայց միայն Յովնան մարգարէին
30 նշանը ։ Քանի՛ նինուէացիներուն նշան եղաւ , անանկ ալ Որդին մարդոյ ասոնց ազ-
31 գին պիտի ըլլայ ։ Հարաւի թագուհին դատաստանին երէց ասոնց ազգին մարդոցը դէմ պիտի ելլէ , ու պիտի դատապարտէ զանոնք . ինչուորկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու . և ահա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս ։
32 Նինուէի մարդիկը դատաստանին երէց ասոնց ազգին դէմ պիտի ելլեն , ու պիտի դատապարտեն զանոնք . ինչուր Յովնանին քարոզութեամբը զղջի եկան . և ահա Յովնանէն մեծ մէկը կայ հոս ։
33 Ոչ մէկը ճրագը չվառեր՝ ծածուկ տեղ մը դներ , ոչ ալ գրուանի տակ . հապա աշտանակի վրայ , որ ներս մտնողները լոյսը տեսնեն ։
34 Լ Մարմինին ճրագը աչքն է . ուստի երբոր աչքդ պայծառ է , բոլոր մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ . բայց երբոր --էդ վատ է , մարմինդ
35 ալ մութ կ'ըլլայ ։ Ուրեմն զգոյշ կեցիր , որ քու մէջդ եղած լոյսը
36 խաւար չըլլայ ։ Արդ՝ թէ որ քու բոլոր մարմինդ լուսաւոր է , և մութ մաս մը չունի , բոլորն ալ լուսաւոր կ'ըլլայ , ինչպէս երբոր ճրագ մը՝ իր փայլունութեամբը քեզ կը լուսաւորէ ։
37 Ու երբոր -- բո---ը կը խօսէր , փարիսեցի մը կ'աղաչէր անոր՝ որ իր քովը ճաշ ուտէ . անիկայ ալ
38 մտաւ՝ սեղան նստաւ ։ Իսկ փարիսեցին երբոր տեսաւ՝ զարմացաւ , որ նախ չլուացուելցաւ ճաշէն ա-
39 ոաջ ։ Եւ Տէրը բսաւ անոր . Հիմա դուք փարիսեցիներ՝ դաւա-

Ա Մտթ . է . 7 ։ իա . 22 ։ Մար . ժա . 24 ։ Ցօհ . ժե . 7 ։ Յակ . ա . 6 ։ ա Ցօհ . գ . 22 ։

Բ Մտթ . է . 9 ։

Ա Մտթ . թ . 32 ։ Ժր . 22 ։

Ղ Մտթ . թ . 34 ։ Ժր . 24 ։

Ա Մտթ . Ժր . 38 ։ Ժգ . 1 ։

Ը Մտթ . Ժր . 25 ։ Մար . գ . 24 ։

Ի Ցօհ . ր . 25 ։ * Ցաղ . ան

Ա Նե . ր . 19 ։

Ի Մտթ . Ժր . 29 ։ Մար . գ . 27 ։

Ընտ . Ժգ . 12 ։ Կող . ր . 15 ։

Ի Մտթ . Ժր . 30 ։

Բ Մտթ . Ժր . 43 ։

Ցամի Տեառն 33

թին ու պնակին դուրսի դին կը մաքրէք , Դու ձեր ներսիդին յափրշտակութեամբ և չարութեամբ
40 լեցուն է : Ընչեցէք՝ ան որ դուրսինը ըրաւ , ներսինն ալ ինքը
41 չըրաւ : Ողակայն ողորմութիւն ըրէք ներսինին , ու ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ
42 ձեզի : Բայց վայ ձեզ փարիսեցիներուդ՝ որ անանուխին ու փեդենային և բոլոր խոտեղէններուն տասանորդը կը վճարէք , ու զանց կ'ընէք իրաւունքը և Աստուծոյ սէրը . ասոնք պէտք էր որ ընէիք , և ա-
43 նոնք չձգել : Վայ ձեզի փարիսեցիներուդ՝ որ ժողովարաններուն մէջ առաջին աթոռները կը սիրէք , ու շուկաներուն մէջ բարե-
44 ները : Վայ ձեզի կեղծաւոր գրագիրներ ու փարիսեցիներ՝ որ անյայտ գերեզմաններու նման էք , որոնց վրայէն մարդիկ կը քալեն՝ ու չեն գիտեր :
45 Եւ օրինականներէն մէկը պատասխան տալով՝ ըսաւ անոր . Վարդապետ՝ այս խօսքերը զրուցելով մեզ ալ վար կը զարնես :
46 Եւ անիկայ ըսաւ . Ձեզ ալ վայ օրինականներուդ , որ տանելու դժուար բեռներ կը բեռցընէք մարդոց , ու դուք մէկ մատովիդ
47 ան բեռներուն չէք դպչիր : Վայ ձեզի որ մարգարէներուն գերեզմանները կը շինէք , ու ձեր հայրե-
48 րը սպաննեցին զանոնք : Ուրեմն կը վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հարցը ըրածներուն . ին-չու որ իրենք սպաննեցին զանոնք , ու դուք անոնց գերեզմանները կը
49 շինէք : Անոր համար ալ Աստուծոյ իմաստութիւնը ըսաւ . Պիտի խրկեմ անոնց մարգարէներ ու առաքեալներ . և անոնցմէ ոմանք պիտի սպաննեն , ու ոմանք հալածեն .
50 Որպէս զի աշխարհի սկիզբէն հետէ թափուած բոլոր մարգարէներուն արիւնը աս ազգէն պահանջուի ,
51 Աբելին արիւնէն մինչև Զաքարիայի արիւնը , որ սեղանին ու տաճարին մէջտեղը կորսուեցաւ . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , աս ազգէն
52 պիտի պահանջուի : Վայ ձեզ՝ օրինականներուդ՝ որ գիտութեան բանալին վերցուցիք . դուք չմտաք , և մտնողներն ալ արգիլեցիք :
53 Ու երբոր աս բաները անոնց կը զրուցէր , դպիրները ու փարիսեցիները սկսան խիստ դժուարիլ , և շատ բաներու վրայով անոր բեր-
54 նէն խօսք փնտռել . Եւ անոր դարան պատրաստելով՝ կը փնտռէին թէ ինչպէս անոր բերնէն բան մը

որսան , որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն :

ԳԼ . ԺԲ

1 Քրիստոս իր աշակերտներուն կը պատուիրէ կեղծաւորութենէ զգոյշ կենալ , ու չվախնալ իր վարդապետութիւնը քարոզելէն . 13 մեծամեծ ամբարներ չընել մատաղ հարուստին առակովը կը պատուիրէ ժողովրդոց որ զգոյշ ըլլան ագահութենէ : 22 Պէտք չէ որ չափազանց հոգ ունենանք աշխարհային բաներու վրայ , 31 այլ Աստուծոյ թագաւորութիւնը խնդրենք : 33 ողորմութիւն տանք , 36 և պատրաստ ըլլանք՝ որ երբ մեր Տէրը գայ դուռը զարնէ , իսկոյն իրեն բանանք : 41 Քրիստոսի պաշտօնեաները պարտին իրենց յանձնուած պաշտօնը կատարել , 49 և հալածանքներու սպասել , 54 պէտք է որ մարդիկ աս ընդհանուր ժամանակին պատուհասութիւնը չկորընչցընեն , 58 վասն զի սոսկալի բան է մեռնիլ առանց հաշտուելու Աստուծոյ հետ :

Ցամի Տեառն 33

1 Այս միջոցիս երբոր բիւրաւոր ժողովուրդներ վրան ժողվուեցան , մինչև որ մէկզմէկ կը կոխէին , ըսկսաւ ըսել իր աշակերտներուն . Պիտի առաջ ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց խմորէն , որ
2 է կեղծաւորութիւն : Ինչ- որ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չբայայտուի , և գաղտուկ՝ որ պիտի
3 չգիտցուի : Ուստի ինչ որ մութ տեղը զրուցեցիք , անիկայ լոյս տեղը պիտի լսուի . և ան որ ներքին սենեակներուն մէջ ականջի խօսեցաք , տանիքներուն վրայ պիտի
4 քարոզուի : Բայց ձեզի իմ բարեկամներուս կը զրուցեմ . Մի վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն , ու անկէ ետև աւելի բան մը ընելու չունին չա-
5 նին : Հապա ձեզի ցուցընեմ թէ որմէ պիտի վախնաք . Ընկէ վախցէք՝ որ սպաննելէն ետև իշխանութիւն ունի գահեանը ձգելու . այո՛
6 կ'ըսեմ ձեզի , Ընկէ վախցէք : Չէ՞ որ հինգ ճնճղուկը երկու դանկի կը ծախուի . և անոնցմէ մէկը մո-
7 ցուած չէ Աստուծոյ առջին : Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած է . ուրեմն մի՛ վախնաք , դուք շատ ճնճղուկներէն
8 աւելի աղէկ էք : Եւ ձեզի կ'ըսեմ . Ամէն ով որ դիս կը դաւանի մարդոց առջեւը , Որդին մարդոյ ալ անիկայ պիտի դաւանի Աստուծոյ
9 հրեշտակներուն առջեւը : Բայց ան որ զիս մարդոց առջեւը կ'ուրանայ , ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ
10 հրեշտակներուն առջեւը : Եւ ամէն ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ , պիտի ներուի անոր . բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ , պիտի չնե-
11 րուի անոր : Ու երբոր ձեզ ժողովարանները՝ և իշխանութիւններու ու պետութիւններու առջև տանելու ըլլան , հոգ մի՛ ընէք թէ

Ա Տիմ . ա . 15 ։
Լեւ . ԺԸ . 7 ։ Դան . գ . 27 ։ Գլ . ԺԸ . 33 ։
Մատ . իգ . 23 ։
Մատ . իգ . 6 ։ Մար . ԺԸ . 38 ։ 39 ։
Ա Մատ . իգ . 27 ։
Սաղ . ե . 9 ։
Մատ . իգ . 4 ։
Մատ . իգ . 29 ։
Մատ . իգ . 34 ։
Ծն . դ . 8 ։
Մն . իգ . 20 ։ 21 ։
Մատ . իգ . 13 ։
Մար . ԺԸ . 18 ։
Մատ . ժ . 28 ։ Ե
ծա . 7 ։ 8 ։ 12 ։ 13 ։ Ե բեմ . ա . 8 ։
Ծն . ժե . 14 ։ 15 ։
Մատ . ժ . 32 ։ Մար . ը . 38 ։ ը Տիմ . բ . 12 ։ ա Ցն . բ . 23 ։
Մատ . ժբ . 31 ։ 32 ։ Մար . գ . 28 ։ ա Ցն . ե . 16 ։
Մատ . ժ . 19 ։ Մար . ԺԳ . 11 ։ Գլ . իա . 14 ։

Ցամի Տեառն 33

ինչպէս՝ կամ ինչ պատասխան պիտի տաք , կամ ինչ պիտի ըսէք .
12 Վասն զի Սուրբ Հոգին պիտի սորվեցընէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ ։
13 Ժողովուրդին մէջէն մէկը բսաւ անոր . Վարդապետ՝ զրուցէ եղբօրս , որ ինձի հետ բաժնէ ։ Ըն ալ բսաւ անոր . Ո՞վարդ՝ ո՞վ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին բնող
14 դրաւ ։ Եւ բսաւ անոնց . Զգուշացէք և զգուշացէք ագահութենէն . ինչու որ մարդուս ստացուածքներուն առատութենէն
15 չէ իր կեանքը ։ Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ բսելով . Մէկ հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր տուին .
16 Եւ ինքը կը մտածէր ինքնիրեն՝ ու կ՚բսէր . Ի՞նչ բնեմ , վասն զի տեղ չունիմ, որ հոն իմ բերքերս ժողվեմ ։
17 Եւ բսաւ . Ես բնեմ . իմ ամբարներս քակեմ՝ ու ալ աւելի մեծ չինեմ , և հոն ժողվեմ իմ բոլոր բերքերս
18 ու բարիքներս . Եւ իմ անձիս բսեմ . Ո՛վ անձա՝ շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողված . հանգչէ՝ կեր , խմէ՝ և
19 ուրախ եղիր ։ Բայց Աստուած բսաւ անոր . Անմիտ՝ Նոյն գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի . Ուստի ան քու պատրաստած բաներդ որո՞ւն պիտի ըլլայ ։
21 Այսպէս է անիկայ՝ որ իր անձին համար գանձ կը դիզէ , ու Աստուծոյ չըհարստանար ։
22 Եւ բսաւ իր աշակերտներուն . Ասոր համար կ՚բսեմ ձեզի . Հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ պիտի ուտէք , ոչ ալ մարմինին համար՝ թէ ինչ պիտի հագնիք .
23 Կեանքը կերակուրէն աւելի է , ու մարմինը հագուստէն .
24 Նայեցէք ագռաւներուն , որ ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն , որոնք ոչ շտեմարաններ ունին՝ ոչ ալ ամբարներ , ու Աստուած անոնք կը կերակրէ . դուք որչափ աւելի լաւ էք քան զանոնք .
25 Ձեզմէ ո՛վ կրնայ իր հոգ բնելովը իր հասակին վրայ
26 կանգուն մը աւելցընել ։ Ասկա թէ որ ամենափոքր բանին կարող չէք , ուրիշ բաներուն համար ինչ
27 հոգ կ՚ընէք ։ Նայեցէք շուշաններուն՝ ինչպէս կ՚աճին . ոչ կ՚աշխատին և ոչ կը մանեն . բայց ձեզի կ՚բսեմ՝ որ Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ առնոյմէ մէկուն պէս չզգեցաւ ։
28 Ուստի թէ որ խոտը որ այսօր դաշտի մէջ է՝ ու վաղը փուռը կը ձգուի , Աստուած անանկ կը հագուեցընէ , որչափ աւելի ձեզ՝
29 Թերահաւատներ ։ Ալ դուք մի՛ փնտռէք թէ ինչ պիտի ուտէք , և ինչ պիտի խմէք . ու մի՛ շըփոթիք ։
30 Վասն զի աս բոլոր բաները աշխարհիս ազգերը կը փընտռեն . ու ձեր Հայրը գիտէ որ աս
31 բաները ձեզի պէտք են ։ Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք , և աս բոլոր բաներն
32 ալ ձեզի պիտի տրուի ։ Մի վախնար պզտիկ հօտ . Քանզի որ ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորու-
33 թիւնը ձեզի տայ ։ Ծախեցէք ձեր ստացուածքը , և ողորմութիւն տուէք . Ձեզի քսակներ պատրաստեցէք , որ երկինքը չպակսելու գանձ մը , ուր ոչ գողը կը մօտենայ՝ և ոչ ցեղը
34 կ՚ապականէ ։ Քանզի ձեր գանձը ուր որ է , սիրտերնիդ ալ հոն պիտի
35 ըլլայ ։ Ձեր մէջքերը գօտեռնուած ըլլան , ու ճրագները վառ
36 ուած . Եւ դուք ան մարդոցը նման՝ որ իրենց տիրոջը կը սպասեն՝ թէ ե՞րբ պիտի դառնայ հարսնիքէն . որ երբ գայ և դռնէն զարնէ , իսկոյն
37 բանան անոր ։ Երանի ան ծառաներուն , որ տէրը երբոր գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ . ճշմարիտ կ՚բսեմ ձեզի , որ ինքը գօտին մէջը պիտի կապէ՝ ու սեղան նստեցընէ անոնք , և առաջ անցնելով սպասաւորութիւն պիտի ը-
38 նէ անոնց ։ Եւ թէ որ երկրորդ պահուն գայ , կամ երրորդ պահուն գայ՝ ու անանկ գտնէ , և-
39 րանելի են ան ծառաները ։ Բայց աս գիտցէք , որ եթէ տանուտէրը գիտնար թէ որ ատեն գողը կու գայ , արթուն կը կենար , ու թոդ չէր տար որ իր տունը ծակեն ։
40 Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք , քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր ։
41 Եւ Պետրոս բսաւ անոր . Տէր՝ աս առակը մեզի՞ կ՚բսես , թէ ամ-
42 Նուն ալ ։ Եւ Տէրը բսաւ . Ո՞ւրեմն ո՞վ է ան հաւատարիմ ու խմաստուն տնտեսը , որն որ տէրը իր դերդաստանին վրայ պիտի դնէ , որ
43 տեղին հոգը տայ ։ Երանի է ան ծառային , որն որ իր տէրը եկած ատենը՝ անանկ բրած
44 պիտի գտնէ ։ Ճշմարիտ կ՚բսեմ ձեզի , որ իր բոլոր ունեցածին վրայ
45 պիտի կեցընէ զանիկայ ։ Հապա թէ որ ան ծառան իր սրտին մէջը բսէ . Իմ տէրս իր գալը կ՚ուշացընէ . և սկսի ծառաները ու աղախիններն ծեծել , և ուտել ու իր-

Ցամի Տեառն 33

Ցամ Տեառն 33 ։

Ղ Ցօհ . ԺԸ . 35 ։

Ղ Տիմ . գ . 7 , ՃԸ ։

Ղ Մատ . ԺԳ . 25 . 26 ։

Ղ Մատ . ԺԹ . 21 ։ Գոր . ը . 45 ։ գ . 34 ։

Ղ Մատ . գ . 20 ։ Գաղ . ԺԶ . 9 ։ ա Տիմ . գ . 19 ։

Ղ Եփես . գ . 14 ։ Պետ . ա . 13 ։

Ղ Մատ . ԽԵ . 1 , ՃԸ ։

Ղ Մատ . Խդ . 46 ։

Ղ Մատ . Խդ . 43 ։ ա Թես . ե . 2 ։ բ Պետ . գ . 10 ։ Յայտ . գ . 3 ։ ԺԶ . 15 ։

Ղ Մատ . Խդ . 44 ։ ԽԸ . 13 ։ Մար . ԺԳ . 33 ։ Գղ . Խաս . 34 ։ 36 ։ ա Թես . ե . 6 ։ բ Պետ . գ . 12 ։

Ղ Մատ . Խդ . 45 ։ ԽԸ . 21 ։ ա Կոր . գ . 2 ։

Ղ Մատ . Խդ . 47 ։

Ղ Մատ . Խդ . 48 ։

Ղ Ցոհ . ԺԲ . 41 ։ Սաղ . ՃԽԷ . 9 ։

Ղ Մատ . գ . 25 ։

Ցամի Տեառն 33

1 Եւ ոմանք ան առներ ներկայ գըտնուելով՝ պատմեցին անոր՝ Գալիլեացւոց վրայով, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետը
2 խառնեց։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց. Կը կարծէ՞ք որ ան Գալիլեացիները բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր էին, որ ասանկ բաներ
3 քաշեցին։ Ձեզի կ'ըսեմ՝ Չէ. հապա թէ որ չապաշխարէք, ամէնդ
4 ալ անանկ պիտի կորսուիք։ Կամ թէ ան տասնուութը հոգիները՝ որոնց վրայ Սելոամին մէջի աշտարակը ինկաւ, և անոնք մեռցուց. կը կարծէ՞ք որ անոնք Երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդիկներէն
5 աւելի պարտաւոր էին։ Ձեզի կ'ըսեմ՝ Չէ. հապա թէ որ չապաշխարէք, ամէնդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։
6 Ըս առակն ալ ըսաւ. Մարդ մը իր այգիին մէջ տնկուած թզենի մը ունէր. ու եկաւ անկէ պը-
7 տուղ փնտռելու, և չգտաւ։ Ուստի բսաւ այգեպանին. Ահա իրէք տարի է որ կու գամ ատ թզենիին վրայ պտուղ փնտռելու, ու չեմ գտներ. զայն ատիկայ կտրէ, ինչո՞
8 համար գետինը խափանէ։ Անիկայ պատասխան տուաւ՝ ու անոր ըսաւ. Տէր՝ աս տարի ալ ատիկայ թող տուր, մինչև որ ատոր բոլոր-
9 տիքը բրեմ ու թրիք դնեմ, Եւ թէ որ պտուղ տայ, հապա թէ չէ՝ դայ կտրես ատիկայ։
10 Եւ ինքը ժողովարաններուն մէկուն մէջ շաբաթ օրը կը սորվեցը-
11 Ներ։ Եւ ահա մէկ կնիկ մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնուութը տարիէ ի վեր, ու կծկուած էր, և ամենևին չէր կրնար
12 շիտակ կայնիլ։ Ու Յիսուս զանիկայ տեսնելով՝ իրեն կանչեց և ըսաւ անոր. Կնիկ՝ դուն քու հիւանդութենէդ արձակուած ես։
13 Ու ձեռքը անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտկուեցաւ, ու փառք կու-
14 տար Աստուծոյ։ Իսկ ժողովարանին իշխանը պատասխան տուաւ բարկանալով՝ որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց, և բսաւ ժողովուրդին. Վեց օր կայ որոնց մէջ արժան է գործ գործել, ուստի անոնց եկէք բժշկուեցէք, ու չէ-
15 թէ շաբաթ օրը։ Ան առներ Տէրը պատասխան տուաւ անոր ու բսաւ. Կեղծաւորնե՛ր, ձեզմէ ամէն մէկը շաբաթ օրը իր եզը կամ էշը մսուրէն չարձրկե՞ր որ տանի ջուր
16 տայ. Չէ՞ապա ասիկայ որ Աբրահամի աղջիկ էր, որ ահա տասնուութը տարի Սատանան գանիկայ

Ցամի Տեառն 33

Ա Թես. ժե. 30։ ր Օր. իե. 2։ Յես. Թ. 41։ Ժե. 22։ Գոր. ժէ. 30։ Յակ. դ. 17։ Ղև. ե. 17։ ա Տիմ. ա. 13։

Ա Հոր 51։

բ Մատ. ի. 22։ Մար. ժ. 38։

գ Մատ. ժ. 34։ Հոր 49։

Ա Մհ. է. 6։ Յօն. է. 43։ Թ. 16։ ժ. 19։

ե Մատ. ժ. 35։

զ Մատ. ժգ. 2։

Ա Ղուկ. իհ. 8։ Մատ. և. 25։

է Սաղ. լբ. 6։ Ես. ծե. 6։

ԳԼ. ՃԳ

1 Քրիստոս ապաշխարութիւն կը քարոզէ, Գալիլեացւոց և ուրիշներուն կրած պատիժը յիշելով։ 6 Ննջուղ թզենիին առակը։ 11 Քրիստոս կծկած կնիկը կը բժշկէ. 18 Մանանեխի հատին և խմորին առակովը կը ցուցընէ Ճշմարտութեան խօսքին զօրաւոր ներգործութիւնը իր ընտրեալներուն սրտին մէջ. 24 կը խրատէ նեղ դռնէն ներս մտնելու ջանք ընել, 31 և կը յանդիմանէ Հերովդէսը ու Երուսաղէմը։

Ճամի Տեառն 33

կապեց , չէ՞ր վայելը որ շարաթ
17 օրը ան կապէն արձրկուի : Եւ աս
բանը որ ըսաւ , իրէն հակառակ
կեցողները ամէնքն ալ ամբոխով
ձնացին . ու բոլոր ժողովուրդը
կ'ուրախանար ան ամէն փառաւոր
գործքերուն համար՝ որ իրմէն կ'ըլ-
լար :
18 Եւ ըսաւ . Աստուծոյ թագա-
ւորութիւնը ի՞նչ բանի կը նմա-
նի , ու ի՞նչ բանի նմանցընեմ
19 անիկայ : Մանանեխի հատի նման
է , որն որ մարդ մը առաւ՝ իր պար-
տէզը ձգեց . և աճեցաւ ու մեծ
ծառ եղաւ . ու երկնից թռչունն-
րը անոր ճիւղերուն վրայ բնակե-
ցան :
20 Դարձեալ ըսաւ . Աստուծոյ
թագաւորութիւնը ի՞նչ բանի նր-
21 մանցընեմ : Խմորի նման է , որն
որ կնիկ մը առաւ՝ իրեք գրիւ ա-
լիւրի մէջ պահեց , մինչև որ ամէնն
ալ խմորեցաւ :
22 Եւ քաղաքները ու գեղերը
պտրտելով՝ կը սորվեցընէր , ու
դէպ ի Երուսաղէմ ճամբայ կ'ը-
23 նէր : Եւ մէկը ըսաւ անոր . Տէր՝
քիչո՞ւ են անոնք որ պիտի փրր-
կուին : Անիկայ ալ ըսաւ ա-
24 նոնց . Ջանք ըրէք որ նեղ դրա-
նէն մտնէք . քանզի կ'ըսեմ ձե-
զի , որ շատերը մտնել պիտի ու-
25 զեն , և պիտի չկրնան : Անկէ ե-
տև որ տանուտէրը ելլէ ու դուռը
գոցէ , և դուք սկսիք դուրսը կե-
նալ , ու դուռը զարնել և ըսել ,
Տէր՝ Տէր , բաց մեզի . ան ալ
պատասխան տալով պիտի ըսէ ձե-
զի . Ձեզ չեմ ճանչնար ուսկից
26 էք : Ան ատենը պիտի սկսիք ըսել .
Մենք քու առջեգ կերանք ու խմե-
ցինք , և դուն մեր փողոցներուն
27 մէջը սորվեցուցիր : Եւ անիկայ
պիտի ըսէ . Ձեզի կ'ըսեմ , ձեզ
չեմ ճանչնար ուսկից էք , ինձմէ
դի կեցէք բոլոր անիրա-
28 ւութիւն գործողներդ : Հոն պի-
տի ըլլայ լալ՝ ու ակռաներ կր-
ճրտցընել , երբոր տեսնէք Ար-
րահամը ու Իսահակը և Յակոբը
ու բոլոր մարգարէները Աստուծոյ
թագաւորութեանը մէջ , ու ձեզ
29 դուրս հանած : Եւ պիտի գան
արևելքէն ու արևմուտքէն և հիւսի-
սէն ու հարաւէն , ու պիտի բազ-
մին Աստուծոյ թագաւորութեանը
30 մէջ : Եւ ահա կան յետիններ՝ որ
առաջիններ պիտի ըլլան , ու կան
առաջիններ՝ որ յետիններ պիտի
ըլլան :
31 Նոյն օրը մէկ քանի փարիսեցի-
ներ եկան՝ ու ըսին անոր . Ելիր՝
ու դնա ասկէ , ինչու որ Հերովդէս
32 քեզ սպաննել կ'ուզէ : Եւ ինքը
ըսաւ անոնց . Գացէք՝ ան աղուէ-
սին ըսէք . Ահա ես դևեր կը հա-
նեմ ու բժշկութիւններ կը կատա-
րեմ այսօր և վաղը , ու երրորդ օրը
33 պիտի կատարուիմ : Միայն թէ
պէտք է որ այսօր ու վաղը և մեկալ
օրը պտրտիմ . վասն զի կարելի
չէ որ մարգարէ մը Երուսաղէմէն
34 դուրս կորսուի : Ով Երուսաղէմ՝
Երուսաղէմ , որ մարգարէները կը
սպաննէիր , ու քեզի խրկուածները
կը քարկոծէիր . քանի անգամ քու
տղաքներդ ժողվել ուզեցի՝ ինչպէս
որ հաւը իր ճագերը թևերուն տա-
կը կը ժողվէ , և դուք չուզեցիք :
35 Ահա ձեր տունը ձեզի ամայի պի-
տի մնայ . սակայն ձեզի կ'ըսեմ ,
որ ալ զիս պիտի չտեսնէք , մինչև
գայ ան ժամանակը որ պիտի ըսէք ,
Օրհնեալ է ան՝ որ Տէրոջը անու-
նովը կու գայ :

Ճամի Տեառն 33

Ես . ը . 10 :

Մատ . իգ . 37 ։
Ղև . իզ . 31 ։ 32 ։ Սաղ . կթ . 25 ։ Եսա . ա . 7 ։ Դան . թ . 27 ։ Միք . գ . 12 ։
Սաղ . ճժը . 26 ։ Մատ . իա . 9 ։ Մար . ժա . 10 ։ ԳԼ ժթ . 38 ։ Ցաք . ժը . 13 ։

ԳԼ . ՃԴ

2 Քրիստոս չարաթ օրը կը բժշկէ լրդողեալ մարդը . 7 կը սորվեցնէ խոնարհ ըլլալ . 12 և աղքատները ճաշի հրաւիրել . 16 ընթրիքին առակովը կը ցուցնէ թէ աշխարհասէր անձինք՝ որ Աստուծոյ խօսքը կ'անարգեն , դուրս պիտի մնան երկինքէն : 25 Քրիստոսի աշակերտել ուզողները պէտք է որ յամառչագին խորհին թէ իրենց խաչը պիտի կրեն , որ չըլլայ թէ եարը ամբոխից եղանակաւ ետ քաշուին իրմէն . 34 ու բոլորովին անպիտան ըլլան՝ իր համը կորսընցուցած ազի պէս :

1 Ու եղաւ որ երբ ինքը շարաթ օր
մը փարիսեցւոց գլխաւորներուն
մկուն տունը մտաւ հաց ուտելու ,
2 ու անոնք անոր կը սպասէին : Եւ
ահա հոն լրդողեալ մարդ մը կար
3 իր առջեւը : Եւ Յիսուս պատաս-
խան տուաւ՝ ու խօսեցաւ օրինա-
կաններուն ու փարիսեցիներուն ը-
սելով . Արժա՞ն է շարաթ օրը
4 բժշկել : Անոնք ալ լուռ կեցան .
և ինքը բռնեց անիկայ՝ բժշկեց ու
5 ճամբեց . Եւ պատասխան տալով
բսաւ անոնց . Ձեզմէ որուն էշը
կամ եզը հորը իյնալու ըլլայ , ու
շուտ մը չհաներ անիկայ շաբաթ
6 օրը : Եւ ասոնց բաներուս չկրցան
անոր պատասխան տալ :
7 Առակ մը զրուցեց ան հրաւի-
րուած մարդոց ալ , երբոր տեսաւ
թէ ինչպէս առաջին բազմոցները
կ'ընտրէին , ու ըսաւ անոնց .
8 Երբոր մէկ մը հարսնիքի հրաւի-
րուիս , առաջին բազմոցին վրայ մի'
նստիր . չըլլայ որ քեզմէ աւելի
պատուաւոր մէկն Հրաւիրուած
9 ըլլայ անկէ . Եւ ան որ քեզ ու
անիկայ հրաւիրեց , գայ զրուցէ
քեզի . Ասոր տեղ տուր , և անկէ
ետև սկսիս ամօթով յետին տեղը
10 բռնել : Հապա երբոր հրաւի-

Մատ . ժբ . 10 ։

Եւ . իդ . 5 ։ Ը Օր . իր . 4 ։ ԳԼ . ժգ . 15 ։

Ելս . իդ . 5 ։ Ղև . ժթ . 18 ։ Մատ . իթ . 31 ։ Մար . գ . 30 ։

Մատ . ժգ . 37 ։

Ես . ա . 7 ։ Ամբ . բ . 3 ։ Ես . ը . 10 ։

Ես . ծ . 13 ։

Մատ . թ . 35 ։ Մար . գ . 6 ։

Մատ . է . 13 ։

Ցաք . է . 34 ։ ը . 21 ։ ժգ . 33 ։ Հով . թ . 31 ։

Ամպ . լբ . 6 ։ Ես . ծէ . 6 ։

Մատ . իե . 10 ։

ԳԼ . գ . 46 ։ Մատ . է . 23 ։ իե . 12 ։

Մատ . է . 23 ։ իե . 41 ։ Հմր 25 ։

Ամպ . գ . 8 ։ Մատ . իե . 41 ։

Մատ . բ . 12 ։ ժգ . 42 ։ իդ . 51 ։

Մատ . բ . 11 ։

Մատ . ժթ . 30 ։ ի . 16 ։ Մար . ժ . 31 ։

Ելս . իդ . 6 , 7 ։

Ցամք Տեառն 33

բուխս , գնա յետին տեղը նստէ . որ երբ քեզ հրաւիրողը դայ , քեզի ըսէ . Բարեկամ՝ վեր հրամնի . ան ատենը քու հետդ նստողներուն առջևը քեզի փառք կ'ըլլայ ։

Ա Ցար . իր . 29 ։ Սաղ . ժբ . 27 ։ Ընակ . իե . 23 ։ Մատ . իգ . 12 ։ Գլ . ժբ . 14 ։ Ցակ . գ . 6 ։ ա Պետ . ե . 5 ։

11 Ա Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ , պիտի խոնարհի . և ով որ իր անձը կը խոնարհեցընէ , պիտի բարձրանայ ։

12 Ու զինքը հրաւիրողին ալ ըսաւ . Երբոր ճաշ կամ ընթրիք կ'ընես , մի կանչեր քու բարեկամներդ , ոչ ալ քու եղբայրներդ , և ոչ քու ազգականներդ , ու ոչ մեծ հարուստ դրացիներդ , որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւիրեն , ու քեզի հատուցում ըլլայ ։

13 Հապա երբոր հացկերոյթ կ'ընես , աղքատներ , պակասաւորներ , կա-

Ե Նեեմ . ը . 10 ։ 12 ։

14 ղեր ու կոյրեր հրաւիրէ . Ու երանելի պիտի ըլլաս . ինչու որ անոնք չեն կրնար փոխարէնը քեզի հատուցանել . հապա արդարներուն յարութիւն առած ատենը՝ փոխարէնը քեզի պիտի հատուցուի ։

15 Եւ սեղան նստողներէն մէկը երբոր լսեց աս խօսքը՝ ըսաւ անոր . Երանի անոր՝ որ Աստուծոյ թագաւորութեանը մէջ հաց պիտի

Ը Ցայտ . ժթ . 9 ։

16 ուտէ ։ Ե Եւ ինքը ըսաւ անոր . Մէկ մարդ մը մեծ ընթրիք ըրաւ ,

Ը Ընակ . թ . 2 , 5 ։

17 ու շատ մարդիկ հրաւիրեց ։ Ը Եւ ընթրիքին ատենը խրկեց իր ծառան , որ հրաւիրուածները կանչէ , Ը Ելէվ . Եկէք , ինչու որ արդէն

18 ամէն բան պատրաստ է ։ Եւ ամէնքը մէկէն սկսան ետ քաշուիլ . առջինը անոր ըսաւ . Ես արտ մը ծախու առի , ու պէտք է որ ելլեմ տեսնեմ անիկայ . կ'աղաչեմ քեզի ,

19 զիս հրաժարուած սեպէ ։ Եւ միւսը ըսաւ . Հինգ զոյգ եզ ծախու առի , ու կ'երթամ որ անոնք փորձեմ . կ'աղաչեմ քեզի , զիս

20 հրաժարուած սեպէ ։ Եւ միւսը ըսաւ . Կնիկ առի , ու անոր հա-

21 մար չեմ կրնար գալ ։ Եւ ան ծառան եկաւ՝ ու իր տիրոջը պատմեց աս բաները . ան ատենը բարկացաւ տանուտէրը , ու ըսաւ իր ծառային . Շուտով քաղաքին հրապարակները ու փողոցները ելիր , և աղքատները ու պակասաւորները , և կաղերը ու կոյրերը հոս

22 մտցուր ։ Ծառան ալ ըսաւ . Տէր՝ եղաւ ինչ որ հրամայեցիր ,

23 ու տակաւին տեղ կայ ։ Եւ Տէրը ըսաւ ծառային . Ելիր ճամբաները ու ցանգերը , և ստիպէ հոս մտնելու , որ տունս լեցուի ։

Ի Մատ . իա . 43 ։ իբ . 8 ։ Գոր . ժգ . 46 ։

24 Քանզի կ'ըսեմ ձեզի , Ի որ ան հրաւիրուածներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի չառնէ ։

25 Ու իր հետը շատ ժողովուրդներ կ'երթային . և դառնալով անոնց

26 ըսաւ . Ե Թէ որ մէկը ինծի կու գայ , Ի ու չատեր իր հայրը և մայրը , ու կինը և զաւակները , ու եղբայրները և քոյրերը , Լնաև իր կեանքն ալ , չկրնար իմ աշակերտս ըլլալ ։

27 Ի Եւ ով որ իր խաչը չվերցրներ՝ ու իմ ետևէս գար , չկրնար իմ աշա-

28 կերտս ըլլալ ։ Ե Վասն զի ձեզմէ ո՞վ աշտարակ մը շինել ուզելով , առաջ չնստիր ու հաշիւ չընար ծախքը , թէ անիկայ լմընցընելու Ի-

29 ՐՒՆ ունի՞ . Որ չըլլայ թէ երբ հիմը ձգէ , ու չկրնայ լմընցընել , բոլոր տեսնողները սկսին ա-

30 նիկայ ծաղր ընել , Եւ ըսել թէ , Ա՛ս մարդը սկսաւ շինել , ու չկրցաւ

31 լմընցընել ։ Կամ թէ՝ ո՞ր թագաւոր ուրիշ թագաւորի մը հետ պատերազմելու երթալով , առաջ չնստիր ու խորհիր , թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ անոր՝ որ քսան հազարով իր

32 վրայ կու գայ ։ Հապա թէ չէ՝ քանի որ անիկայ հեռու է , դեսպան խրկելով՝ խաղաղութիւն կը

33 խնդրէ ։ Ընչա ասանկ ալ ձեր մէջէն ամէն մէկը՝ թէ որ իր բոլոր ստացուածքէն ետ չկենայ , չկրնար

34 իմ աշակերտս ըլլալ ։ Ի Աղը աղէկ բան է . բայց թէ որ աղը իր համը կորսընցընէ , ինչո՞վ պիտի հա-

35 մնցնեն ։ Ո՛չ հողի ու ոչ թրիքի տեղ օգտակար կ'ըլլայ , հապա անիկայ դուրս կը նետեն ։ Ան որ լսելու ականջ ունի , թող լսէ ։

Ի Մատ . ե . 13 ։ Մար . թ . 49 ։

ԳԼ . ԺԵ

1 Մոլորեալ ոչխարին , 8 կորուած դրամին , 11 և անառակ որդիին առակները ։

1 Եւ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր կը մտնէին

Մատ . թ . 10 ։

2 լսելու համար ։ Եւ փարիսեցիները ու դպիրները տրտունջ կ'ընէին՝ ու կ'ըսէին . Ա՛նիկայ մեղաւորները կ'ընդունի , Բ ու անոնց հետ կ'ուտէ ։

Բ Գոր . ժա . 3 ։ Գաղ . բ . 12 ։

3 Եւ անիկայ աս առակը խօսեցաւ

4 անոնց՝ ըսելով . Դ Ձեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ , և անոնցմէ մէկը որ կորսընցընէ , իննսունինը չ'ձգեր անապատին մէջ՝ ու ան կորսուածին ետևէն երթար , մինչև որ զանիկայ գտնէ ։

Դ Մատ . ժբ . 12 ։

5 Ու երբոր կը գտնէ , ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ զանիկայ ,

6 Եւ տունը գալով , կը կանչէ բարեկամները ու դրացիները , ու անոնց կ'ըսէ . Ուրախ եղէք ինծի հետ , ինչու որ իմ Ե կորսուած ոչ-

Ե Պետ . բ . 10 , 25 ։

7 խարս գտայ ։ Ձեզի կ'ըսեմ՝ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ

երկինքը մէկ մեղաւորի մը համար
որ կ'ապաշխարէ , Էքան թէ ինն-
սունուհինը արդարներուն համար՝
որ անոնց ապաշխարութիւն պէտք
8 չէ : Կամ թէ ո՞վ է ան կնիկը՝
որ տասը դրամ ունենայ . ու թէ
որ դրամ մը կորսընցընէ , ճրագ
չը՞վառեր , ու տանը մէջ աւել
զարներ , և զգուշութեամբ փընտ-
9 ռեր , մինչև որ գտնէ : Ու երբոր
կը գտնէ , կը կանչէ բարեկամները
ու դրացիները , և կ'ըսէ . Ուրախ
եղէք ինծի հետ , ինչու որ իմ կոր-
10 սընցուցած դրամն գտայ : Ընանկ
–ը՝ ձեզի կ'ըսեմ , ուրախութիւն
կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն
առջևը մէկ մեղաւորի մը համար որ
կ'ապաշխարէ :
11 Եւ ըսաւ . Մէկ մարդ մը երկու
12 որդի ունէր . Ու անոնցմէ պզտիկը
հօրը ըսաւ . Հայր՝ տո՛ւ ստացուած-
քէդ ինծի իյնալու բաժինը տուր
ինծի . ան ալ բաժնեց անոնց իր
13 Ա ունեցածը : Եւ շատ օրեր չան-
ցած՝ պզտիկ որդին բոլոր բաները
ժողվեց՝ ու հեռու երկիր մը գնաց ,
և հոն անառակութեամբ ապրելով՝
14 իր ունեցածը փճացուց : Ու երբ-
որ ամէնը հատցուց , ան երկրին
մէջ սաստիկ սով մը եղաւ , ու
15 ինքը սկսաւ չքաւոր ըլլալ : Եւ
գնաց ան երկրին քաղաքացիներէն
մէկուն քովը մտաւ . ան ալ իր
ագարակը խրկեց զանիկայ՝ խոզեր
16 արածելու համար : Եւ կը փա-
փաքէր խոզերուն կերած եղէւրէն
իր փորը լեցընելու . ու մէկը չէր
17 տար անոր : Եւ ինքզինքին գալով՝
ըսաւ . Քանի բանւորներ կան իմ
հօրս մօտը հացով լեցուած , ու
ես հոս սովամահ կը կորնչիմ .
18 Ելլեմ՝ երթամ իմ հօրս , և ըսեմ
անոր . Հայր՝ մեղանչեցի երկինքին
19 դէմ ու քու առջևդ , Եւ ալ ար-
ժանի չեմ քու որդիդ ըսուելու .
զիս քու վարձկաններուդ մէկուն
20 պէս ըրէ : Ու ելաւ իր հօրը եկաւ .
Եւ դեռ որ ինքը շատ հեռու էր ,
հայրը տեսաւ զանիկայ՝ ու դութը
շարժեցաւ , և վազելով՝ անոր պա-
րանոցին վրայ ինկաւ , ու համբու-
21 րեց զանիկայ : Որդին ալ ըսաւ
անոր . Հայր՝ մեղանչեցի երկինքին
դէմ ու քու առջևդ , և ալ ար-
ժանի չեմ քու որդիդ ըսուելու :
22 Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն .
Հանեցէ՛ք առաջին պատմուճանը՝
ու հագցուցէ՛ք անոր , և մատնի
դրէ՛ք անոր ձեռքը , ու կօշիկներ
23 անոր ոտքերը . Եւ պարարտ զուա-
րակը բերէ՛ք մորթեցէ՛ք , և ուտենք
24 ու ուրախ ըլլանք . Վինչու որ ասս
իմ որդիս մեռած էր՝ ու ողջըն-

ցաւ . կորսուած էր՝ ու գտնուե-
25 ցաւ . և սկսան ուրախ ըլլալ : Ու
անոր մեծ որդին ագարակն էր . ու
երբոր կու գար՝ ու տանը մօտե-
ցաւ . նուագարաններուն և պարե-
26 րուն ձայնը լսեց : Ու ծառաներէն
մէկը իրեն կանչելով՝ կը հարցընէր ,
27 թէ աս ի՞նչ է : Ընիկայ ալ ը-
սաւ անոր , Եղբայրդ եկաւ , ու
հայրդ պարարտ զուարակը մոր-
թեց . ինչու որ ողջ առողջ ձեռք
28 ձգեց զանիկայ : Իսկ ինքը բար-
կացաւ՝ ու չէր ուզեր ներս մտնել .
ուստի իր հայրը դուրս ելլելով
29 կ'աղաչէր անոր : Եւ անիկայ պա-
տասխան տալով՝ ըսաւ հօրը . Ահա
այսչափ տարի է որ քեզի կը ծա-
ռայեմ , ու բնաւ քու խօսքէդ
դուրս չելայ , ու ինծի երբէք մէկ
ուլ մը չտուիր , որ իմ բարեկամ-
ներուս հետ ուրախութիւն ընէի :
30 Բայց երբոր եկաւ ատ քու որդիդ՝
որ քու ստացուածքդ բոզերու հետ
կերաւ , անոր մորթեցիր պարարտ
31 զուարակը : Եւ անիկայ ըսաւ ա-
նոր . Որդեակ՝ դուն միշտ իմ հետս
ես , ու իմ բոլոր ունեցածս քուկդ
32 է . Սակայն պէտք էր ուրախ ըլ-
լալ և խնդալ . Վինչու որ ասս քու
եղբայրդ մեռած էր ու ողջընցաւ ,
կորսուած էր ու գտնուեցաւ :

ԳԼ . ԺԶ

1 Ընիրաւ տնտեսին առակը : 14 Փրիսեոս կը յանդիմանէ արծաթասէր փարիսեցւոց կեղծաւորութիւնը : 19 Հեքսասէր մեծատունը և ազքատ Ղազարոսը :

1 Ու իր աշակերտներուն ալ ըսաւ .
Մէկ հարուստ մարդ մը կար ,
որ տնտես մը ունէր . և անոր վրա-
յով գանգատ եղաւ իրեն՝ որպէս
թէ իր ունեցածը կը փճացընէ :
2 Ուստի կանչեց զանիկայ՝ ու ըսաւ
անոր . Ի՞նչ է ասս՝ որ քեզի հա-
մար կը լսեմ . քու տնտեսութեա-
նդ հաշիւը տուր , ինչու որ այ
3 լես կրնար տնտես ըլլալ : Եւ տըն-
տեսը իր մտքին մէջ ըսաւ . Ի՞նչ
ընեմ , որովհետև իմ տէրս տնտե-
սութիւնը ինծմէ կ'առնէ . * Հո-
ղագործութիւն չեմ կրնար ընել ,
4 մուրալու կ'ամչնամ : Գիտեմ
ինչ պիտի ընեմ , որպէս զի երբոր
իմ տնտեսութենէս մերժուիմ , զիս
5 իրենց տուները ընդունին : Եւ իր
տիրոջը պարտականները մէկիկ մէ-
կիկ իրեն կանչելով՝ ըսաւ առաջի-
նին . Դուն իմ տիրոջս ո՞րչափ
6 պարտք ունիս : Ան ալ ըսաւ .
Հարիւր մար ձէթ . և ըսաւ ա-
նոր . Գիրդ առ՝ ու շուտով նստէ
7 յիսուն գրէ : Ետքը միւսին ը-
սաւ . Դուն ալ ո՞րչափ պարտք

* Ծառ . չեմ կրնար բըրնել ,

Ցամի Տեառն 33

ունիս . և անիկայ բաւ . Հարիւր քոռ ցորեն . ու բաւ անոր . Դիրդ
8 առ՝ և ուխտուն դրէ : Ու տէրը անիրաւ տնտեսը գովեց , որ խելա-
ցութիւնով բրաւ . վասն զի աս աշխարհիս որդիքը իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խե-
9 լացի են : Եւ ես ձեզի կ'ըսեմ . Ընիրաւ մամոնայէն ձեզի բարե-
կամներ ըրէք , որ երբ անիկայ պակսի՝ ձեզ յաւիտենական բնա-
10 կարաններու մէջ ընդունին : Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ է , շատի մէջ ալ հաւատարիմ է . և ան որ քիչի մէջ անիրաւ է , շա-
11 տի մէջ ալ անիրաւ է : Ուստի թէ որ անիրաւ մամոնային մէջ հաւա-
տարիմ չեղաք , ճշմարիտ հոգևոր ինչը ով պիտի հաւատայ ձեզի :
12 Ու թէ որ օտարին բանին մէջ հա-
ւատարիմ չեղաք , ձերը ով պիտի տայ ձեզի :
13 Մէկ ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառայութիւն ընել . ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ , կամ մէկը պիտի մեծարէ և միւսը արհամարհէ . չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի :
14 Եւ փարիսեցիներն ալ որ ար-
ծաթասէր էին , աս ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկայ :
15 Եւ բաւ անոնց . Դուք էք որ մարդոց առջևը ինքզինքնիդ կ'ար-
դարացնէք . բայց Աստուած դի-
տէ ձեր սիրտերը . ինչու որ ըմար-
դոց մէջ բարձր եղածը՝ Աստուծոյ
16 առջևը պիղծ է : Օրէնքը ու մարգարէները մինչև Յովհաննէս էին . անկէ ետև Աստուծոյ թագա-
ւորութիւնը կը քարոզուի , և ա-
մէն մէկը անոր մէջը մտնելու կ'ար-
17 տորայ : Դիւրին է որ երկինքը ու երկիրը անցնի , քան թէ օրէն-
քէն մէկ նշանագիր մը իյնայ :
18 Ով որ իր կնիկը արձակէ՝ և ուրիշ մը առնէ , շնութիւն կ'ընէ . և ով որ երիկէ արձակուած կնիկ մը առ-
նէ՝ շնութիւն կ'ընէ :
19 Մէկ հարուստ մարդ մը կար , որ ծիրանի ու բևեղ կը հագնէր , և ամէն օր փառաւորապէս ուրա-
20 խութիւն կ'ընէր : Ու Ղազարոս անունով աղքատ մը կար վէրքե-
րով լեցուն , որ անոր դրանը առ-
21 Ջին գրուած էր . Եւ կը փափաքէր որ ան հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն իր փորը լեցընէ . Նաև շուներն ալ կու գային և անոր
22 վէրքերը կը լզէին : Ու եղաւ որ ան աղքատը մեռաւ , ու հրեշտակ-
ները Աբրահամին գոգը տարին զա-
նիկայ . Հարուստն ալ մեռաւ ու
23 թաղուեցաւ : Եւ դժոխքին մէջը երբոր տանջանքի մէջ էր , իր աչ-
քերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը , ու Ղազարոսը անոր
24 գոգը հանգչած : Եւ ինքը աղաղակեց ու բաւ . Հայր Աբրա-
համ՝ ողորմէ ինծի , ու խրկէ Ղա-
զարոսը , որ իր մատին ծայրը ջուր թաթխէ , ու զովացնէ իմ լե-
զուս . ինչու որ տաս բոցիս մէջ կը
25 տանջուիմ : Եւ Աբրահամ ը-
սաւ . Որդեակ՝ մի տրդ բեր , որ դուն քու կեանքիդ ատենը քու բարիքներդ առիր . նոյնպէս ալ Ղազարոս՝ չարիքներ . հիմա անի-
կայ հոս կը մխիթարուի , ու դուն
26 կը տանջուիս : Եւ աս ամէն բա-
ներէն զատ մեր ու ձեր մէջտեղը մեծ անդունդ մը կայ հաստա-
տուած . անանկ որ ասկէ ձեզի անց-
նել ուզողները չկրնան , ոչ ալ ատկէ մեզի հասնիլը անցնին :
27 Ան ալ բաւ . Ուրեմն կ'աղաչեմ քեզի՝ հայր , որ անիկայ իմ հօրս
28 տուներ խրկես . Քանզի հինգ եղբայր ունիմ . որ երթայ անոնց վկայու-
թիւն տայ , որ չըլլայ թէ անոնք ալ աս չարչարանքին տեղը գան :
29 Եւ Աբրահամ բաւ անոր . Անոնք Մովսէսը ու մարգարէները ունին ,
30 թող անոնց մտիկ ընեն : Ան ալ բաւ . Չէ՝ հայր Աբրահամ , հա-
պա թէ որ մեռելներէն մէկը անոնց
31 երթայ , պիտի ապաշխարեն : Եւ անիկայ բաւ անոր . Թէ որ Մով-
սէսին ու մարգարէներուն մտիկ չեն ըներ , ոչ ալ թէ որ մեռել-
ներէն մէկը յարութիւն առնելու ըլլայ , պիտի համոզուին :

Ցամի Տեառն 33

— Ցոհ . ժբ . 36 : Եփես . ե . 8 : ա Թես . ե . 5 :
Դան . գ . 27 : Մաս . գ . 19 : ԺԹ . 21 : Գլ . ժա . 41 : ա Տիմ . գ . 17 , 18 , 19 :
Կամ՝ կարծուեան ժամանակ-
նիդ՝
Մաս . իե . 21 : Գլ . ԺԹ . 27 :
Մաս . կ . 24 :
Մէկուն պիտի յարի՝
Մաս . իգ . 14 :
Գլ . ժ . 29 : Սադ . է . 9 : ա Թագ . ժգ . 7 :
Մաս . գ . 17 : ժա . 12 , 13 : Գլ . է . 29 :
Սադ . ճբ . 26 , 27 : Եսա . խ . 8 : ծա . 6 : Մաս . ե . 18 : ա Պետ . ա . 25 :
Մաս . ե . 32 : ԺԹ . 9 : Մար . ժ . 11 : ա Կոր . է . 10 , 11 :

Ցամի Տեառն 33

— Մաս . ժբ . 6 , 7 : Մար . թ . 41 : ա Կոր . ժա . 19 :
Ղազ . ժգ . 12 :
Եսա կդ . 24 : Մար . թ . 43 : Ճ :
Ցոր . իա . 13 : Գլ . գ . 24 :
Մաս . ժբ . 15 , 21 :
Դան . ԺԹ . 17 : Առակ . ժէ . 10 : Ցակ . ե . 19 :
Ցոհ . ժբ . 10 , 11 :

Գ Լ . Ժ Է

1 Քրիստոս կը սորվեցնէ դայթակղութիւն չը-
տալ , 3 և իրարու յանդիմանները ներել , 6 Հաւատքին զօրութիւնը : 7 Մենք պար-
տաւոր ենք Աստուծոյ , բայց Աստուած պար-
տաւոր չէ մեզի : 11 Քրիստոս կը բժշկէ տա-
սը բորոտներ : 22 Աստուծոյ թագաւորու-
թիւնը և Որդւոյ մարդոյ գալուստը :

1 Ետ բաւ իր աշակերտներուն . Անկարելի է որ դայթակղու-
թիւններ չգան . բայց վայ անոր ,
2 որուն ձեռքովը կու գան : Անոր աւելի աղէկ է , որ անոր պարանո-
ցին իշու աղացքի քար մը կախուի , ու անիկայ ծովը ձգուի , քան թէ աս պզտիկներէն մէկը դայթակղե-
3 ցընէ : Զգուշացէք ձեր անձերուն : Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ , հանդիմանէ զանիկայ . ու թէ որ ապաշխարէ , ներէ ա-
4 նոր : Եւ թէ որ օրը եօթը ան-
գամ քեզի դէմ մեղանչէ ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու բսէ , Կ'ապաշխարեմ , ներես անոր :

Ցամի Տեառն 33

Ե Մատ. ԺԱ. 19 ։ Իս. 21 ։ Մար. Թ. 22 ։ Ժա. 23։

5 Եւ առաքեալները ըսին Տէրոջը.
6 Մեր հաւատքը աւելցուր։ Տէրը ըսաւ. Թէ որ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, ասթմբենիին կրնայիք ըսել, Արմատաքի խլուէ ու ծովուն մէջը տնկուէ, ան ալ պիտի ձգադնդէր ձեզի։
7 Բայց ձեզմէ ով է՝ որ ծառայ մը ունենայ մկ երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկայ երբոր ագարակէն դառնայ մտնէ, շուտով ըսուցէ թէ, Անցիր սեղանի
8 նստէ. Հապա չ՚ըսեր անոր թէ՝ Պատրաստէ իմ ընթրիքս, ու գօտիդ կապած ինծի սպասաւորութիւն ըրէ, մինչև որ ես ուտեմ ու խմեմ. ու եղբը դուն ալ կեր ու
9 խմէ։ Միթէ շնորհակալ կ՚ըլլայ ան ծառային, իրեն հրամայուած բաները կատարելուն համար.
10 չեմ կարծեր։ Նոյնպէս ալ դուք երբոր բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ՝ Ումենք անպիտան ծառաներ ենք. քանզի ան որ պարտական էինք ընելու, ըրինք։
11 Ու եղաւ որ երբ ինքը Երուսաղէմ կ՚երթար, Սամարիայի և Գա-
12 լիլեայի մէջտեղէն կ՚անցնէր։ Ու երբոր մկ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուն կայնեցան,
13 Եւ ձայներնին վերցուցին ու ըսին. Ցիսուս վարդապետ, ողորմէ մեզի։
14 Եւ տեսնելով՝ անոնց ըսաւ. Գացէք դուք ձեզ քահանաներուն ցուցուցէք. ու եղաւ որ երբ կ՚երթային, մաքրուեցան։ Եւ անոնցմէ մկը երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք կու տար Աստուծոյ.
16 Ու երեսի վրայ անոր ոտքը իյնալով՝ շնորհակալ կ՚ըլլար անոր. և
17 ինքը Սամարացի էր։ Պատասխան տուաւ Ցիսուս ու ըսաւ. Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան. իսկ ան
18 ինը ո՞ւր են. Ա՛ս օտարազգիէն՝ի զատ դարձնալով Աստուծոյ փառք տան։
19 Եւ ըսաւ անոր. Ելիր գնա. քու հաւատդ քեզ բժշկեց։
20 Ու երբոր փարիսեցիները իրեն հարցուցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ, պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Աստուծոյ թագաւորութիւնը տեսանելեաց երեւցած բաներով չգար.
21 Ու պիտի չըսեն թէ՝ Ա՛նա հոս է կամ ա՛նա հոն. ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսի դին է։
22 Աշակերտներուն ալ ըսաւ. Օրեր պիտի գան՝ որ դուք Որդւոյ մարդոյ օրերուն մկը տեսնելու պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք։
23 Ահ Եւ ի՛ր ըսեն ձեզի, թէ ա՛նա հոս է կամ ա՛նա հոն, մի՛ երթաք, ու
24 անոնց մի՛ հետեւիք։ Վասն զի ինչպէս որ փայլակը երկինքին տակը մկ դիին փայլատակելով՝ մինչև երկինքին տակը մկալ դին լոյս կու տայ, նոյնպէս ալ պիտի ըլլայ Որդին մարդոյ իր օրը։
25 Մբայց թէ պէտք է որ ինքը առաջ շատ չարչարանքներ կրէ, ու մեր-
26 ժուի աս ազգին։ Եւ ինչպէս որ Նոյի օրերը եղաւ, անանկ պիտի ըլ-
27 լայ Որդւոյ մարդոյ օրերն ալ։ Կ՚ուտէին կը խմէին կնիկ կ՚առնէին, երկան կը տրուէին, մինչև ան օրը՝ որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ՝ ու ամէնը կորսընցուց։
28 Ընմանապէս՝ ինտոր որ Ղովտին օրերը եղաւ, կ՚ուտէին կը խմէին ծախու կ՚առնէին կը ծախէին կը
29 տնկէին կը շինէին. Բայց ան օր որ Ղովտ Սոդոմէն ելաւ, երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց, և բոլորն
30 ալ կորսընցուց. Նոյնպէս պիտի ըլլայ ան օրը՝ որուն մէջ Որդին
31 մարդոյ պիտի յայտնուի։ Ան օրը՝ ան որ տանիքին վրայ է՝ և իր կաթսիները տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու. և ան որ արտին մէջն է՝ նոյնպէս թող ետ
32 չդառնայ։ Մ՚իտքերնիդ բերէք
33 Ղովտին կնիկը։ Ով որ իր կեանքը կ՚ուզէ ապրեցընել, պիտի կորսընդնէ զանիկայ. և ով որ կը կորսընցնէ, պիտի ապրեցընէ զանի-
34 կայ։ Ըսեմ՝ Ձեզի կ՚ըսեմ. Ան գիշերը ի՛ր երկու հոգի մկ անկողնի մէջ ըլլան, մկը պիտի առնուի՝ ու մկալը ձգուի.
35 ու մկալը ձգուի. Ե՛ ի՛ր երկու կնիկ մկտեղ աղալու ըլլան, մկը պիտի առնուի՝ ու մկալը ձգուի. Ե՛ ի՛ր երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մկը պիտի առնուի՝ ու
36 մկալը ձգուի։ Եւ պատասխան տալով ըսին անոր. Տէր՝ ո՞ւր տեղ
37 դէպի ըլլայ։ Ան ալ ըսաւ անոնց. Ո՛ւր որ մարմին կայ, հոն պիտի ժողվուին արծիւները։

Ցամի Տեառն 33

Ի Մատ. Իդ. 23 ։ Մար. Ժգ. 21 ։ Գլ. Իս. 8 ։
Ի Մատ. Իդ. 27 ։

Հ Մար. Ը. 31 ։ Թ. 30 ։ Ժ. 33 ։ Գլ. Բ. 22 ։

Ն Ծն. Է ։ Մատ. Իդ. 37 ։

Ը Ծն. Ժթ ։

Ի Ծն. Ժ. 16 ։ 24 ։

Ր Թես. Ա. 7 ։

Յ Մատ. Իդ. 17 ։ Մար. Ժգ. 15 ։

Ն Ծն. Ժթ. 26 ։

Ը Մատ. Ժ. 39 ։ Ժգ. 25 ։ Մար. Ը. 35 ։ Գլ. Բ. 24 ։ Ցոհ. Ժը. 25 ։
Մատ. Իդ. 40 ։ 41 ։ Ա Թես. Դ. 16 ։

Ց Ծծ. ԼԲ. 30 ։ Մատ. Իդ. 28 ։

ԳԼ. ԺԸ

1 Թախանձով որբեւարին, 9 փարիսեցիին և մաքսաւորին առակը։ 15 Մանր տղայք Քրիստոսի կը բերուին։ 18 Մէկ իշխան մը կ՚ուզէ Քրիստոսի հետեւիլ, բայց իր նաթասութիւնները արգելք կ՚ըլլան։ 28 Քրիստոսի համար ամէն բան թող տուողներուն վարձքը։ 31 Քրիստոս կը նախատգայնէ իր մահը, 35 և կոյրին աչքերը կը բանայ։

1 Նոյնոց առակ մըն ալ ըսաւ աս բանիս վրայով՝ թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձ-
2 բանալ. Ըսաւ. Մէկ դատաւոր

Գլ. Ժ. 5 ։ Իս. 36 ։ Հով. Ժբ. 12 ։ Եփես. Գ. 18 ։ Կող. Դ. 2 ։ Ա Թես. Ե. 17 ։

Ցամի Տեառն 33

մը կար քաղաքի մը մէջ , որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր
3 ամչնար : Եւ նոյն քաղաքին մէջ որբևարի մը կար , որ անոր կուգար ու կ'ըսէր . Իրաւունք ըրէ ինծի՝ ի՛ւր դատի իմ ոսոխէս :
4 Եւ անիկայ ժամանակ մը չէր ուզեր անոր ։ Բայց ետքը ըսաւ իր մտքին մէջ . Թէև Աստուծմէ չեմ վախնար , ու մարդէ չեմ ամչնար ,
5 նար , Թ Գոնէ աս որբևարիին զիս ձանձրացընելուն համար իրեն իրաւունք ընեմ , որ չգայ ամէն առեն
6 զիս թախանձէ : Եւ Տէրը ըսաւ . Լսեցէք՝ անիրաւ դատաւորը ինչ
7 կ'ըսէ : Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞ , որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն , թէև երկայնամիտ ալ ըլ-
8 լայ անոնց վրայ : Ձեզի կ'ըսեմ , որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ . բայց Որդին մարդոյ երբոր գայ , արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ :
9 Եւ ոմկ քանիներուն՝ որոնք իրենց անձերուն վրայ կը վստահանային թէ արդար են , և ուրիշները կ'անարգէին , աս առակը ըսաւ .
10 Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու . մէկը փարիսեցի ու մէկալը
11 մաքսաւոր : Փարիսեցին կայներ էր , ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր . Աստուած՝ շնորհակալ եմ քեզմէ , որ ուրիշ մարդոց պէս չեմ , յափշտակող՝ անիրաւ՝ շնացող , և կամ աս մաքսաւորին
12 պէս . Երկու շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ , ու բոլոր ստացուածքիս տասանորդը կու-
13 տամ : Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր , ու չէր ուզեր աչքն ալ երկինքը վերցընել . հապա իր կուրծքը ծեծելով՝ կ'ըսէր . Աստուած՝ ողորմի՛ ինծի մեղաւորիս :
14 Ձեզի կ'ըսեմ՝ թէ ասիկայ ան մէկալէն աւելի արդարացած իր տունը իջաւ . Որովհետև զի ով որ իր անձը կը բարձրացընէ , պիտի խոնարհեցընէ , և ով որ իր անձը կը խոնարհեցընէ , պիտի բարձրանայ :
15 Մանր տղաքներ ալ բերին իրեն , որ անոնց դպչի . ու աշակերտները տեսնելով՝ կը յանդիմանէին
16 զանոնք : Բայց Յիսուս անոնք իրեն կանչելով՝ ըսաւ . Թողուտուք որ մանր տղոցը ինծի գան , և մի՛ արգիլէք անոնք . Քանզի Աստուծոյ թագաւորութիւնը
17 Թիւնը անոնց կերպիսի է : Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղու մը պէս չընդունի , բնաւ պիտի չմտնէ անոր մէջը :
18 Եւ մէկ իշխան մը հարցուց ա-
նոր ու ըսաւ . Բարի՛ վարդապետ՝ ի՞նչ գործեմ որ յաւիտենա-
19 կան կեանքը ժառանգեմ : Եւ Յիսուս ըսաւ անոր . Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես , մէկէն՝ ի՛ զատ բարի
20 չկայ , ի՛ր Աստուած : Պատուիրանքները գիտես . Ընութիւն մի՛ ըներ , Սպանութիւն մի՛ ըներ , Գողութիւն մի՛ ըներ , Սուտ վկայութիւն մի՛ ըներ , Քու հայրդ ու
21 մայրդ պատուէ : Ան ալ ըսաւ . Ատոնք ամէնը մանկութենէս՝ի վեր
22 պահեր եմ : Ես լսելով Յիսուս՝ ըսաւ անոր . Մէկ բան մըն ալ պակաս է քեզի . Քու բոլոր ունեցածդ ծախէ , և աղքատներուն բաշխէ , ու երկինքը գանձ պիտի ունենաս , և եկուր իմ ետևէս :
23 Անիկայ երբոր աս բանը լսեց՝ տրտմեցաւ , ինչու որ շատ հարուստ
24 էր : Եւ Յիսուս երբոր անիկայ տրտմած տեսաւ , ըսաւ . Որչափ դժուար է անոնց՝ որ հարստութիւն ունին , Աստուծոյ թագաւորու-
25 Թիւնը մտնել : Քանզի դիւրին է որ ուղտը ասեղին ծակէն անցնի , քան թէ հարուստը Աստուծոյ թա-
26 գաւորութիւնը մտնէ : Եւ անոնք որ լսեցին , կ'ըսէին . Ա՛վ կրը-
27 նայ փրկուիլ : Եւ ինքը ըսաւ . Մարդոց կողմանէ անկարելի եղած բանները՝ Աստուծոյ կողմանէ կարելի
28 են : Ետրոս ըսաւ . Ահա մենք ամէն բան թողուցինք՝ և քու ե-
29 տևէդ եկանք : Ան անիկայ ըսաւ անոնց . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Թէ մարդ մը չկայ՝ որ թողուց տուն , կամ ծնողք , կամ եղբայրներ , կամ կին , կամ որդիներ՝ Աստուծոյ թագաւորութեանը հա-
30 մար , Որ պիտի չառնէ բազմապատիկ աս առենիս մէջ , և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանքը :
31 Եւ տասներկուքը իր քովը առնելով՝ ըսաւ անոնց . Ահա մենք երուսաղէմ կ'ելլենք , և մարգարէներուն ձեռքովը Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի
32 կատարուին : Քանի որ հեթանոսներուն պիտի մատնուի , ու ծաղր պիտի ըլլայ , և պիտի նախատուի , ու պիտի թքնեն անոր ,
33 Եւ պիտի ծեծեն ու սպաննեն անիկայ , ու երրորդ օրը յարութիւն
34 պիտի առնէ : Բայց անոնք աս բաներէն մէկն ալ չհասկրցան . ու աս խօսքը անոնցմէ ծածկուած էր , և ըսած բաները չէին իմանար :
35 Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կը մօտենար , կոյր մը ճամբուն
36 քովը նստեր էր մուրալու : Երբոր

Ցամի Տեառն 33

Մատ. ԺԹ. 16 ։ Մար . Ժ . 17 ։

Ել . ի . 12 ։ 16 ։ Բ Օր . ե . 16—20 ։ Հով . Ժգ . 9 ։

Եփես . գ . 2 ։ Կող . գ . 20 ։

Մատ . գ . 19 ։ 20 ։ ԺԹ . 21 ։ ա Տիմ . գ . 19 ։

Ղուկ . Ժ . 28 ։ Մատ . ԺԹ . 23 ։ Մար . Ժ . 23 ։

Երեմ . լբ . 17 ։ Զաք . ը . 6 ։ Մատ . ԺԹ . 26 ։ Գլ . ա . 37 ։ Մատ . ԺԹ . 27 ։

Բ Օր . լդ . 9 ։

Ցոր . իբ . 10 ։

Մատ . Ժգ . 21 ։ Ժէ . 21 ։ ի . 17 ։ Մար . Ժ . 32 ։

Ղաղ . իբ ։ Ես . Ծգ ։ Մատ . իէ . 2 ։ Գլ . իգ . 1 ։ Ցոն . Ժբ . 28 ։ Գոր . գ . 13 ։

Մար . թ . 31 ։ Գլ . բ . 50 ։ թ . 45 ։ Ցոն . Ժ . 6 ։ Ժբ . 16 ։

Մատ . ի . 29 ։ Մար . Ժ . 46 ։

Ցամի Ցեառն 33

լսեց բազմութեանը անցնիլը, հար-
37 ցուց թէ՝ Ի՞նչ է ան։ Եւ իրեն
ըսին թէ՝ Ցիսուս Նազովրեցին
38 կ'անցնի։ Ուստի աղաղակեց՝ ու
ըսաւ. Ցիսուս՝ որդի Դաւթի՛
39 ողորմէ՛ ինծի։ Եւ անոնք որ
առջևէն կ'երթային, կը յանդի-
մանէին զանիկայ, որ լռէ. բայց
անիկայ՝ ալ աւելի կ'աղաղակէր,
40 Որդի Դաւթի՛ ողորմէ՛ ինծի։ Եւ
Ցիսուս կանգ առնելով՝ հրաման
ըրաւ որ զանիկայ իրեն բերեն, ու
երբոր անիկայ մօտեցաւ, հարցուց
41 անոր ու ըսաւ. Ի՞նչ կ'ուզես որ
քեզի ընեմ. անիկայ ալ ըսաւ.
42 Տէր՛ որ աչքերս բացուին։ Եւ
Ցիսուս ըսաւ անոր. Թող բա-
ցուին. Հաւատքդ քեզ բե-
43 ժըշկեց։ Եւ իսկոյն անոր աչքերը
բացուեցան, ու անոր ետևէն կ'եր-
թար՝ Նա փառք կու տար Աստու-
ծոյ. բոլոր ժողովուրդն ալ տես-
նելով՝ զԱստուած կը գովաբանէին։

ԳԼ. ԺԹ

1 Զաքէոս մաքսապետը։ 11 Ցասը Յիսուին ա-
ռակը։ 28 Քրիստոս իյու վրայ Տէրած՝ փա-
ռաւոր հանդէսով Երուսաղէմ կը մտնէ. 41
քաղաքին վրայ կ'ողբայ. 45 տաճարէն դուրս
կը հանէ գնողները և վաճառողները. 47 ամէն
օր տաճարին մէջ կը սորվեցնէ. իսկ Հրէից
գլխաւորները կ'ուզեն կորսնցնել զանիկայ,
բայց ժողովուրդն կը վախնան։

1 Եւ մտնելով Երիքովի մէջէն կ'անց-
2 նէր։ Եւ ահա մարդ մը կար,
անունը Զաքէոս ըսուած, որ մաք-
սապետ էր՝ ու հարուստ մէկ մըն
3 էր։ Եւ կ'ուզէր տեսնել՝ թէ ով
է Ցիսուսը, ու բազմութենէն չէր
կրնար, ինչու որ հասակով կարճ
4 էր։ Եւ առաջ վազեց ու ժան-
տաթզենիի մը վրայ ելաւ, որ զա-
նիկայ տեսնէ. ինչու որ անկէ պի-
5 տի անցնէր։ Ու երբոր Ցիսուս ան
տեղը եկաւ, վեր նայելով զանիկայ
տեսաւ, ու ըսաւ անոր. Զաքէոս՝
շուտ բրէ, ատկէ վար իջիր, ինչու
որ պէտք է ինծի այսօր քու տունդ
6 կենալ։ Եւ արտորալով վար ի-
ջաւ, և ուրախութեամբ ընդունեց
7 զանիկայ։ Երբոր ամէնն ալ տես-
նան՝ կը տրտնջէին ու կ'ըսէին
թէ՝ Մեղաւոր մարդու քով մտաւ
8 իջևան ընելու։ Եւ Զաքէոս կայ-
նեցաւ՝ ու ըսաւ Տէրոջը. Տէր՛ ա-
հա իմ ունեցածիս կէսը աղքատ-
ներուն կու տամ. Ու թէ որ զըր-
պարտութեամբ մէկու մը զրկանք
բրած եմ, չորեքպատիկ կը հա-
9 տուցանեմ անոր։ Եւ Ցիսուս ը-
սաւ անոր. Այսօր աս տանը փրկու-
թիւն եղաւ. Ք ինչու որ ասիկայ
10 ալ Աբրահամի որդի է։ Վասն
զի Որդին մարդոյ եկաւ որ կոր-
սուածը փնտռէ ու փրկէ։

11 Ու երբոր անոնք աս բաները կը
լսէին, առակ մըն ալ ըսաւ իր ե-
րուսաղէմ մօտենալուն համար,
և անոնց անանկ կարծելուն հա-
մար՝ թէ շուտ մը Աստուծոյ թա-
գաւորութիւնը պիտի յայտնուի։
12 Ուստի ըսաւ. Մէկ ազնուական
մարդ մը հեռու երկիր գնաց՝ իրեն
թագաւորութիւն առնելու և
13 դառնալու։ Եւ իր տասը ծառա-
ները կանչելով՝ տասը մնաս տուաւ
անոնց, ու ըսաւ անոնց. Բանե-
ցուցէք մինչև որ ես գամ։
14 Եւ անոր քաղաքացիները զանիկայ
կ'ատէին, ու դեսպաններ խրկեցին
անոր ետևէն, ըսելով՝ Չենք
ուզեր որ ատիկայ մեր վրայ թա-
15 գաւորութիւն ընէ։ Ու եղաւ որ
երբ անիկայ թագաւորութիւնը
առնելով ետ դարձաւ, իրեն կան-
չել տուաւ ան ծառաները որոնց որ
ստակը տուեր էր, որ գիտնայ թէ
16 ով ինչ շահ բրած է։ Եւ առ-
ջինը եկաւ՝ ու ըսաւ. Տէր՛ քու
17 մնասդ տասը մնաս շահ բրաւ։ Եւ
ըսաւ անոր. Ապրիս՝ բարի ծա-
ռայ. որովհետև քիչ բանին մէջ
հաւատարիմ եղար, տասը քա-
ղաքի վրայ իշխանութիւն ունե-
18 ցիր։ Ու երկրորդը եկաւ՝ ու ըսաւ.
Տէր՛ քու մնասդ հինգ մնաս շահ
19 բրաւ։ Եւ ըսաւ անոր. Դուն ալ
20 հինգ քաղաքի վրայ եղիր։ Եւ ու-
րիշ մը եկաւ՝ ու ըսաւ. Տէր՛ ահա
քու մնասդ՝ որ թաշկինակի մէջ
21 ծրարած կը պահէի. Քանզի կը
վախնայի քեզմէ, ինչու որ դուն
խիստ մարդ մըն ես. չգրած բանդ
կը վերցնես, ու չսերմանածդ կը
22 հնձես։ Եւ անիկայ ըսաւ անոր.
Ւքու բերնէդ քեզ պիտի դատեմ՝
ով չար ծառայ. Գիտէիր որ ես
խիստ մարդ մըն եմ. չգրած բանս
կը վերցնեմ, ու չսերմանածս կը
23 հնձեմ. Եւ ինչո՞ւ համար իմ ըս-
տակս սեղանաւորներուն չտուիր,
որ ես եկած ատենս շահովը առնէի
24 անիկայ։ Եւ հոն կայնողներուն
ըսաւ. Առէք ատկէ մնասը, ու
տուէք անոր՝ որ տասը մնաս ունի.
25 (Եւ ըսին իրեն. Տէր՛ անիկայ
26 տասը մնաս ունի.) Քանզի կ'ը-
սեմ ձեզի, թէ ամէն ունեցողին
պիտի տրուի, և չունեցողէն՝ ունե-
ցածն ալ անկէ պիտի առնուի։
27 Բայց ան իմ թշնամիներս՝ որոնք
չէին ուզեր որ իրենց վրայ թագա-
ւոր ըլլամ, հոս բերէք, ու իմ
28 առջև սպաննեցէ՛ք։ Եւ աս բա-
ները խօսելէն ետև, առաջ գնաց
Երուսաղէմ ելլելու։
29 Ու եղաւ որ երբ Բեթփագէին
ու Բեթանիային մօտեցաւ, դէպ

Ցամի Ցեառն 33

Ա Գոր. ա. 6։

Ը Մատ. իե. 14։ Մար. ԺԳ. 34։

Ծ Ցօհ. ա. 11։

Ա Մատ. իե. 21։ ԳԼ. ԺԷ. 10։

Ա Մատ. իե. 24։

Լը Թագ. ա. 16։ Ցոր. ԺԸ. 6։ Մատ. Ժբ. 37։

Ա Մատ. իե. 26։

Ա Մատ. ԺԳ. 12։ իե. 29։ Մար. գ. 25։ ԳԼ. Ը. 18։

Լ Մար. Ժ. 32։

Հ Մատ. իա. 1։ Մար. Ժա. 1։

— Մատ. Թ. 11։ ԳԼ. ե. 30։

Բ ԳԼ. գ. 14։

Գ Եզ. իր. 1։ ա Թագ. Ժբ. 3։ բ Թագ. Ժբ. 6։

Դ Հռով. գ. 11, 12, 16։ Գաղ. գ. 7։

Ե ԳԼ. Ժգ. 16։

Զ Մատ. Ժբ. 11։ Ցեն Մատ. Ժ. 6։ Ժե. 24։

Ցամբ Տեառն 33

'ի ան լեռը՝ որ Զիթենեաց է՝ կ'ըսուի , իր աշակերտներէն երկուքը
30 խրկեց , եւ ըսաւ . Գացէք դէ դիմացը եղած գեղը . և անոր մէջ մտնելնուդ պէս՝ պիտի գտնէք կապուած աւանակ մը , որուն վրայ բնաւ մարդ մը նստած չէ . արձը-
31 կեցէք անիկայ՝ ու բերէք . եւ թէ որ մէկը ձեզի հարցընէ թէ՝ Ինչո՞ւ կ'արձկէք . ասանկ ըսէք անոր թէ ,
32 Տէրոջը պէտք է ։ Երբոր գացին ա-նոնք որ խրկուեցան , ինչպէս որ
33 իրենց ըսուցեր էր՝ գտան ։ Ու երբոր աւանակը կ'արձկէին , անոր տէրերը ըսին անոնց . Ինչո՞ւ կ'ար-
34 ձկէք աս աւանակը ։ Անոնք ալ
35 ըսին . Տէրոջը պէտք է . եւ զանիկայ Յիսուսին բերին . յու իրենց հանդերձները աւանակին վրայ
36 ձգելով՝ Յիսուսը հեծցուցին ։ Ու երբոր կ'երթար , իրենց հանդերձ-
37 ները ճամբուն վրայ կը փռէին ։ Ու երբոր ալ մօտեցաւ , և Զիթենեաց լեռանը զառ 'ի վայրէն կ'իջնէր , աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր ձայնով ան բոլոր հրաշքներուն համար՝ որ
38 տեսեր էին . Ու կ'ըսէին . Օրհնեալ է թագաւորը որ Տէրոջը անունովը կու գայ . երկինքի մէջ խաղաղութիւն , ու փառք բարձ-
39 րութեան մէջ ։ Եւ բազմութեանը մէջէն փարիսեցիներուն մէկ քանիները ըսին անոր . Վարդապետ՝ կռ քու աշակերտներդ յանդիմա-
40 նէ ։ Եւ անիկայ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց . Ձեզի կ'ըսեմ , թէ որատոնք լուռ կենան , քարերը պիտի աղաղակեն ։
41 Ու երբոր մօտեցաւ , քաղաքը տեսնելով՝ լացաւ անոր վրայ և ը-
42 սաւ . Գոնէ աս քու օրուանդ մէջ դիտնայիր քու խաղաղութիւնդ . բայց հիմա ծածկուեցաւ քու աչ-
43 քերէդ ։ Ինչու որ օրեր պիտի գան քու վրադ , Նոր թշնամիներդ քու բոլորտիքդ պատնէշ պիտի շինեն , ու քեզ պիտի պաշարեն , և ամէն կողմէ քեզ նեղը պիտի
44 ձգեն . Եւ հիմնայատակ պիտի ընեն քեզ՝ ու քու մէջդ եղած զաւակներդ . և քար մը քարի վրայ ամենեին պիտի չթողուն քու մէջդ . Ոանոր համար որ չճանչցար քու այցելութեան ժամանակդ ։
45 Եւ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել անոր մէջ ծախողը-
46 ները և գնողները . Եւ ըսաւ անոնց . Գրուած է թէ՝ Իմ տունս աղօթքի տուն է , բայց դուք ա-տիկայ աւազակներու այր ըրիք ։
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցընէր . Բայց քահանայապետները ու դպիրները և ժողովուրդին դլխաւորները կը փնտռէին թէ ինչը կորսընցընեն զանիկայ ,
48 ու ըսր չէին կրնար գտնել՝ թէ ինչ ընեն . ինչու որ բոլոր ժողովուրդը անոր կապուեր էին մտիկ ընելու ։

Ցամբ Տեառն 33

Ա Մաթ . ժա . 18 ։ Ցոհ . ե . 19 ։ ը . 37 ։

ԳԼ . Ի

1 Քրիստոս իր իշխանութեան իրաւունքը կը պաշտպանէ Ցովհաննէսի մկրտութեան հարցումովը ։ 9 Ընդհին առակը ։ 25 Քրիստոսի պատասխանը կայսրին տուրք տալու վրայով ։ 27 Ցարու թիւն չկայ բոզ սադուկեցիները կը պապանձեցընէ ։ 41 Քրիստոս ինչպէս Դաւիթի որդին կ'ըլլայ ։ 45 Իր աշակերտներուն կը պատուիրէ դպիրներէն զգոյշ կենալ ։

1 Եւ եղաւ որ ան օրերուն մէկը՝ երբոր տաճարին մէջ ժողովուրդին կը սորվեցընէր , և աւետարանը կը քարոզէր , քահանայապետները ու դպիրները ծերերուն
2 հետ մէկտեղ վրայ հասան , եւ անոր խօսեցան՝ ըսելով . Զրուցէ մեզի ի՛նչ իշխանութիւնով կ'ընես աս բաները , կամ ո՞վ է աս իշխանութիւնը քեզի տուողը ։
3 Պատասխան տուաւ ու ըսաւ անոնց . Ես ալ ձեզի բան մը հարցնեմ , և ըսէք ինծի .
4 Յովհաննէսին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝ թէ մարդոցմէ ։
5 Եւ անոնք մէ-
6 ջերնին խորհեցան՝ ու ըսին . Թէ որ ըսենք՝ Երկինքէն , պիտի ըսէ . Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր . իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ . բոլոր ժողովուրդը մեզ պիտի քարկոծեն . Քինչու որ համոզուած են թէ Յովհաննէս մարգա-
7 րէ էր ։ Եւ պատասխան տուին
8 թէ չենք դիտեր ուակից էր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց . Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով կ'ընեմ աս բաները ։
9 Սկսաւ աս առակը ըսել ժողովուրդին . Մէկ մարդ մը այգի տնկեց , և զանիկայ մշակներու յանձնեց . ու ինքը օտար երկիր երթալով՝ շատ ժամանակ մնաց ։
10 Եւ առներին ծառայ մը խրկեց մշակներուն , որ այգիին պտուղէն անոր տան . իսկ մշակները ծնծղեցին զանիկայ , ու պարապ ճամբեցին ։
11 Եւ ուրիշ ծառայ մըն ալ խրկեց . իսկ անոնք զանիկայ ալ ծնծղեցին , անարգեցին ու պարապ ճամբեցին ։
12 Ու երրորդ մըն ալ խրկեց . իսկ անոնք զանիկայ ալ վիրաւորեցին՝ ու դուրս հանեցին ։
13 Ան առներ այդիին տէրը ըսաւ . Ի՞նչ ընեմ . իմ սիրելի որդիս խրկեմ , գուցէ զանիկայ տեսնելով
14 ամչնան ։ Բայց մշակները երբոր տեսան զանիկայ , իրարու հետ

Ա Մաթ . իա . 23 ։

Բ Գոր . գ . 7 ։ ե . 27 ։

Ա Մաթ . իգ . 5 ։ իա . 26 ։ ԳԼ . ե . 29 ։

Գ Մաթ . իա . 33 ։ Մար . ժբ . 1 ։

Յր Թագ . թ . 13 ։ Մատ . իա . 7 ։ Մար . ժա . 7 ։ Ցոհ . ժբ . 14 ։ ՂՄատ . իա . 8 ։

Ա Պաղ . ճժբ . 26 ։ ԳԼ . ժգ . 35 ։ ՃԳԼ . բ . 14 ։ Եփես . բ . 14 ։

Յ Ամբ . բ . 11 ։

Ն Ցոհ . ժա . 35 ։

Ղ Եսա . իթ . 3 , 4 ։ Երեմ . գ . 3 . 6 ։ ԳԼ . իա . 20 ։

Ա Թագ . թ . 7 , 8 ։ Միք . դ . 12 ։

Ղ Մատ . իգ . 2 ։ Մար . ժգ . 2 ։ ԳԼ . իա . 6 ։

Ղ Դան . թ . 24 ։ ԳԼ . ա . 68 , 69 ։ ա Պետ . բ . 12 ։

Ղ Մատ . իա . 12 ։ Մար . ժա . 11 , 15 ։ Ցոհ . բ . 14 , 15 ։

Եսա . ծգ . 7 ։

Երեմ . է . 11 ։

խորհուրդ բրին՝ բանալով . Աբիկայ է ժառանգը , եկէք զանիկայ բռ-
պաննենք՝ որ ժառանգութիւնը
15 մերը բլլայ : Եւ զանիկայ այգիէն դուրս հանեցին ու սպաննեցին . ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի
16 ընէ անոնց . Պիտի գայ՝ ու կոր-
սընցընէ ան մշակները , և այգին ուրիշներու պիտի տայ : Երբոր
— լսեցին , բսին . Քաւ լ՚ըլի :
17 Եւ ինքը անոնց նայելով՝ բսաւ . Հապա ի՞նչ է աս գրուածը թէ ,
Ի Ա ա գ . ճ ժ բ . 22 : Մ ա տ . խ . 42 :
Ա Դ ա ն . բ . 34 : 35 : Մ ա տ . խ . 44 :
Ան Որ . ժ է . 42 : 49 : 52 : ա Յ ո ՚ ն . գ . 2 :
Ի Հ ո վ . ը . 23 :
Ի Ե ւ . գ . 6 :
Ի Մ ա տ . իբ . 15 :
Ի Հ ո վ . գ . 10 : 11 :
Ի Մ ա տ . իբ . 16 : Մ ր . ժ բ . 14 :
Ի Մ ա տ . իբ . 42 : Մ ր . ժ բ . 35 :
Ի Ա ա գ . ճ ժ . 1 : Գ ո ր . բ . 34 :
Ի Մ ա տ . իգ . 1 : Մ ր . ժ բ . 38 :
Ի Մ ա տ . իգ . 5 :
Ի Գ և . ժ ա . 48 :
Ի Մ ա տ . իգ . 14 :
Ի Մ ա տ . իբ . 23 : Մ ր . ժ բ . 18 :
Ի Գ ո ր . իգ . 6 . 8 :
Ի բ Օ ր . իե . 5 :
Ի Ա ա գ . ճ ժ բ . 22 : Մ ա տ . խ . 42 :
Ի Դ ա ն . բ . 34 : 35 : Մ ա տ . խ . 44 :
Ի Մ ա տ . իբ . 15 :
Ի Մ ա տ . իբ . 16 : Մ ր . ժ բ . 14 :
Ի Ա ա գ . ճ ժ . 1 : Գ ո ր . բ . 34 :
Ի Մ ա տ . իբ . 23 : Մ ր . ժ բ . 18 :
Ի Գ ո ր . իգ . 6 . 8 :
Ի բ Օ ր . իե . 5 :
— Ա՝ որոնք հակառակութիւն կ՚բնեն՝ թէ յարութիւն չկայ ,) և
28 անոր հարցուցին՝ ըսելով . Վար-
դապետ՝ Մովսէս մեզի գրեց . Թէ որ մէկուն եղբայրը կնիկ ունենա-
լով՝ մեռնելու բլլայ , ու մեռած
տեղը զաւակ չունենայ , անոր եղ-
բայրը առնէ ան կնիկը , և իր եղբօ-
29 րը զաւակ հանէ : Արդ՝ եօթը եղ-
բայրներ կային . ու առջինը կնիկ
մը առնելով՝ զաւակ չունեցած մե-
30 ռաւ : Երկրորդն ալ առաւ ան
կնիկը , և ինքն ալ մեռաւ առանց
31 զաւակի : Երրորդն ալ առաւ զանիկայ . նմանապէս եօթն ալ ,
ու զաւակ չձգեցին ու մեռան :
32 Ամենէն ետքը կնիկն ալ մեռաւ :
33 Ուրեմն յարութեան առեներ ա-
նոնցմէ որո՞ն կնիկը պիտի բլլայ . ինչու որ եօթն ալ զանիկայ կնիկ
34 ունեցան : Եւ Յիսուս պատաս-
խան տալով՝ անոնց բսաւ . Աս աշ-
խարհիս որդիքը կնիկ կ՚առնեն ու
35 կերկան կը տրուին : Բայց անոնք
որ արժանի պիտի բլլան ան աշ-
խարհին հասնելու , ու մեռելներէն
յարութիւն առնելուն , ոչ կնիկ
կառնեն և ոչ կերկան կը տրուին .
36 Որովհետև ալ չեն կրնար մեռնիլ .
Հրեշտակներուն հաւասար
են , ու Աստուծոյ որդիք են , Ինչու
37 որ յարութեան որդիք են : Բայց
մեռելներուն յարութիւն առնելը
Մովսէս ալ իմացուց մորենիին
դ ա ր ձ ո ւ ա ծ ը մէջ , կերբոր կը կոչէ
Տէրը՝ Աբրահամին Աստուածը , ու
Իսահակին Աստուածը , և Յակո-
38 բին Աստուածը : Ու Աստուած
մեռելներուն Ա ս տ ո ւ ա ծ չէ , հապա
կենդանիներուն . Ինչու որ ամէնը
39 անոր կենդանի են : Եւ դպիրնե-
րէն մէկ քանին պատասխան տուին
ու բսին . Վարդապետ՝ աղէկ ը-
40 սիր : Ու այլ մէկը համարձակու-
թիւն չէր ըներ անոր բան մը հար-
ցընելու :
41 Եւ բսաւ անոնց . Ի՞նչպէս կ՚ը-
սեն թէ՝ Քրիստոս Դաւիթի որ-
42 դին է . Եւ ինքը Դաւիթ Սաղ-
մոսներուն գրքին մէջը կ՚բսէ .
Տէրը իմ Տէրոջս բսաւ . Նստէ
43 իմ աջ կողմս , Մինչև որ քու
թշնամիներդ ոտքերուդ պատուան-
44 դան ընեմ : Ուրեմն Դաւիթ որ
զանիկայ Տէր կը կոչէ , ի՞նչպէս
անիկայ անոր որդին կ՚ըլլայ :
45 Ես բոլոր ժողովուրդին առջևը
46 բսաւ իր աշակերտներուն ։ Կը-
գուշացէք դպիրներէն , որոնք կ՚ու-
զեն փառաւոր հանդերձներով պր-
տրտիլ , ու շուկաներուն մէջ բա-
րևներ կը սիրեն , ու ժողովարան-
ներուն մէջ առաջին աթոռները ,
և ընթրիքներու մէջ առաջին բազ-
47 մոցները . Որոնք որբևարիներուն
տուները կ՚ուտեն , ու ձրիաց երև-
նալու համար աղօթքը կ՚երկընցը-
նեն . աւելի դատապարտու-
թիւն պիտի ընդունին :

ԳԼ . ԻԱ

1 Քրիստոս կը գովէ ազքատ որբևարին . 5 կը նախատայէ տաճարին ու Երուսաղէմին կոր-
ծանումը . 25 նաև վերջին օրուան նշանները . 34 կը յորդորէ որ արթուն բլլանք :

Ցամի Տեառն 33

1 Ասացեալ՝ տեսաւ Հարուստն՝ որ իրենց ընծաները գանձարը 2 նակը կը ձգէին ։ Մէկ տնանկ որ բևաւրի մըն ալ տեսաւ , որ հոն երկու լումայ ձգեց ։ 3 Ու ըսաւ . Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Թէ որ աս ազքատ որբևաւրին ամենէն աւելի ձրբ- 4 գեց ։ Ինչու որ ամէն անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ ընծաներուն մէջը ձգեցին . բայց ասիկայ իր չքաւորութենէն բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց ։

5 Ու երբոր մէկ քանիները տաճարին համար կ'ըսէին Թէ , Գեղեցիկ քարերով ու նուէրներով զարդարուած է , ըսաւ . 6 Այ բաները որ կը տեսնէք , օրեր պիտի գան՝ որ ան տունը քար մը քարի վրայ 7 պիտի չմնայ՝ որ չքակուի ։ Հարցուցին իրեն ու ըսին . Վարդապետ՝ երբ պիտի բլլան ատ բաները , և ի՞նչ է նշանը՝ երբոր ատ բաները 8 պիտի բլլան ։ Ան ալ ըսաւ . Խըզգոյշ կեցէք՝ չխաբուիք . ինչու որ շատերը պիտի գան իմ անունովս՝ ու ըսեն Թէ , Ես եմ Քրիստոսը . ու ժամանակը մօտեցած է . ուրեմն 9 անոնց ետևէն չերթաք ։ Բայց երբոր լսէք պատերազմներ և խռովութիւններ՝ մի վախնաք . ինչու որ պէտք է առաջ աս բաները բլլան , բայց վախճանը իսկոյն չէ ։ 10 Ետքն ատոնք ըսաւ անոնց . Ազգ ազգի վրայ պիտի ելլէ , ու թագաւորութիւն թագաւորութեան վր- 11 բայ . Եւ տեղ տեղ մեծ երկրաշարժութիւններ պիտի բլլան . ու սովեր և մահտարաժամներ , նաև երկինքէն սոսկալի բաներ և մեծ 12 նշաններ պիտի բլլան ։ Բայց աս ամէն բաներէն առաջ՝ իրենց ձեռքերը ձեզի պիտի զարնեն՝ ու հալածեն , և ժողովարաններու ու բանտերու պիտի մատնեն . և Իմ անուանս համար թագաւորներու ու կուսակալներու առջև պիտի 13 տարուիք ։ Եւ ասոր վերջը ձեզի վկայութիւն մը պիտի բլլայ ։ 14 Ուստի ձեր սրտին մէջը դրէք՝ որ առաջուց չմտածէք պատասխան 15 տալու վրայով ։ Վասն զի ես ձեզի բերան ու իմաստութիւն պիտի տամ , Որուն պիտի չկրնան դէմ խօսիլ , կամ դէմ կենալ ձեր 16 ամէն հակառակորդները ։ Եւ պիտի մատնուիք ծնողքներէ , ու եղբայրներէ , և ազգականներէ , ու բարեկամներէ , ու ձեզմէ պիտի 17 սպաննեն . Եւ իմ անուանս համար ամենուն ատելի պիտի բլլաք . 18 Բայց մէկ մազ մը ձեր գլխէն պի- 19 տի չկորսուի ։ Ձեր համբերութիւնովը հոգիներդ պիտի ստանաք ։

20 Ու երբոր տեսնէք Երուսաղէմը չորս կողմէն զօրքերով պատած , ան ատենը գիտցէք որ անոր աւե- 21 րումը մօտ է ։ Ան ատենը Հրէաստանի մէջ եղողները՝ լեռները թող փախչին . ու անոր մէջ եղողները թող հեռանան . և անոնք որ ագարակներն են , թող չմտնեն 22 անոր մէջը ։ Վասն զի ան օրերը վրէժխնդրութեան օրեր են , Որ բոլոր գրուածները կատարուին ։ 23 Բայց վայ ան օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն . ինչու որ մեծ նեղութիւն պիտի բլլայ երկրին վրայ , ու բարկութիւն ժողովուրդին վրայ . 24 Եւ սուրի բերնով պիտի իյնան , ու բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տարուին . ու Երուսաղէմ ազգերուն ոտից կոխան պիտի բլլայ , մինչև որ ազգերուն ժամանակները 25 լմննայ ։ Ու արեգակին և լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի բլլան . ու երկրի վրայ ազգերը ապշութեամբ պիտի տագնապին , և ծովը ու ալիքները պիտի գոռան . 26 Մարդոց սիրտերը պիտի նուաղին երկիւղ վախէն՝ և աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն . Վասն- չու որ երկնից զօրութիւնները 27 պիտի շարժին ։ Եւ ան ատենը պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամպի մէջ եկած , զօրութիւնով ու 28 մեծ փառքով ։ Ու երբոր աս բաները սկսին բլլալ , ելէք՝ ու գլուխնիդ բարձրացուցէք , Վասնզի որ ձեր փրկութիւնը մօտ է ։

53 տենդը թողուց զանիկայ · Ան ատենը գիտցաւ անոր Հայրը՝ թէ ան ժամն էր , որ Յիսուս իրեն ըսաւ թէ , Քու որդիդ ողջ է · ու հաւատաց
54 տայ ինքը և իր բոլոր տունը · Ասիկա նորէն երկրորդ հրաշքն է որ Յիսուս բրաւ , երբոր Հրէաստանէն Գալիլեա եկաւ ·

ԳԼ · Ե

1 Յիսուս երուսաղեմ կ'երթայ · 3 Անոնց մէջ խիստ շատ հիւանդներ պառկած էին , որոնք կը սպասէին ջուրին խառնուելուն · 4 Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր , ու ջուրերը կը խառնէր · և ով որ ջուրին խառնուելէն ետև պինտ առաջ անոր դէզը կը մտնէր , կը բժշկուէր՝ ինչ հիւանդութիւն
5 որ ունենար · Եւ հոն մէկ մարդ մը կար , որ երսունութը տարիէ վեր հիւանդութիւն մը ուներ ·
6 Յիսուս երբոր տեսաւ զանիկայ՝ որ ինկած պառկած էր , ու գիտցաւ որ շատ ժամանակէ ի վեր է , ըսաւ անոր · Կ'ուզե՞ս առողջանալ ·
7 Հիւանդը պատասխան տուաւ անոր · Տէր՝ մարդ մը չունիմ , որ երբ ջուրերը խառնուին՝ զիս աւազանը ձգէ · Հապա քանի որ ես անոր կը շարժիմ , ինծմէ առաջ
8 ուրիշ մը կ'իջնէ · Յիսուս ըսաւ անոր · Ելիր մահիճդ առ՝ ու քալէ ·
9 Եւ իսկոյն մարդը առողջացաւ , ու իր մահիճը վերցնելով կը քալէր · Բայց այն օրը շաբաթ էր ·
10 Ան ատենը Հրէաները բսին բժշկուած մարդուն · Շաբաթ է , Ես արժան չէ որ մահիճդ վերցնես ·
11 Պատասխան տուաւ անոնց՝ [illegible] · Ան որ զիս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ · Մահիճդ առ՝ ու քալէ ·
12 Ուստի հարցուցին անոր · Ո՞վ է ան մարդը որ քեզի ըսաւ , Մահիճդ առ՝ ու քալէ ·
13 Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ով է ան · Ինչու որ Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ ան տեղը
14 բազմութիւն բլլալուն համար · Անկէ ետքը Յիսուս զանիկայ տաճարին մէջ գտնելով՝ ըսաւ անոր · Ահա բժշկուեցար , Ալ մեղք մի գործեր , որ ալ աւելի չար բան մը
15 չպատահի քեզի · Գնաց մարդը , ու Հրէաներուն պատմեց , թէ Յիսուսն էր որ զինքը բժշկեց ·
16 Եւ ասոր համար Հրէաները կը հալածէին Յիսուսը , և կը փընտռէին զանիկայ սպաննել , որ ասոնք
17 բաները շաբաթ օրը կ'ընէր · Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց · Իմ Հայրս մինչև հիմա կը գործէ ,
18 ես ալ կը գործեմ · Ասոր համար՝ ալ աւելի կը փնտռէին Հրէաները զանիկայ սպաննել · վասն զի չէ թէ միայն շաբաթ օրը կը լուծէր , հապա նաև Աստուած իր Հայրը կ'անուանէր , ու այսպէս ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր ·
19 Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու

Եբուսաղեմի մէջ Ոչխարաց դրանը քով աւազան մը կայ , որ Եբրայեցերէն Բեթհեզդա կ'ըսուի , որ
3 հինգ սրահ ունի · Անոնց մէջ խիստ շատ հիւանդներ պառկած էին , կոյրեր կաղեր չորցածներ ,
4 Նուէլուն · Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ աւազանը կ'իջնէր , ու ջուրերը կը խառնէր · և ով որ ջուրին խառնուելէն ետև պինտ առաջ անոր դէզը կը մտնէր , կը բժշկուէր՝ ինչ հիւանդութիւն
5 որ ունենար · Եւ հոն մէկ մարդ մը կար , որ երսունութը տարիէ վեր հիւանդութիւն մը ուներ ·
6 Յիսուս երբոր տեսաւ զանիկայ՝ որ ինկած պառկած էր , ու գիտցաւ որ շատ ժամանակէ ի վեր է , ըսաւ անոր · Կ'ուզե՞ս առողջանալ ·
7 Հիւանդը պատասխան տուաւ անոր · Տէր՝ մարդ մը չունիմ , որ երբ ջուրերը խառնուին՝ զիս աւազանը ձգէ · Հապա քանի որ ես անոր կը շարժիմ , ինծմէ առաջ
8 ուրիշ մը կ'իջնէ · Յիսուս ըսաւ անոր · Ելիր մահիճդ առ՝ ու քալէ ·
9 Եւ իսկոյն մարդը առողջացաւ , ու իր մահիճը վերցնելով կը քալէր · Բայց այն օրը շաբաթ էր ·
10 Ան ատենը Հրէաները բսին բժշկուած մարդուն · Շաբաթ է , Ես արժան չէ որ մահիճդ վերցնես ·
11 Պատասխան տուաւ անոնց՝ [illegible] · Ան որ զիս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ · Մահիճդ առ՝ ու քալէ ·
12 Ուստի հարցուցին անոր · Ո՞վ է ան մարդը որ քեզի ըսաւ , Մահիճդ առ՝ ու քալէ ·
13 Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ով է ան · Ինչու որ Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ ան տեղը
14 բազմութիւն բլլալուն համար · Անկէ ետքը Յիսուս զանիկայ տաճարին մէջ գտնելով՝ ըսաւ անոր · Ահա բժշկուեցար , Ալ մեղք մի գործեր , որ ալ աւելի չար բան մը
15 չպատահի քեզի · Գնաց մարդը , ու Հրէաներուն պատմեց , թէ Յիսուսն էր որ զինքը բժշկեց ·
16 Եւ ասոր համար Հրէաները կը հալածէին Յիսուսը , և կը փընտռէին զանիկայ սպաննել , որ ասոնք
17 բաները շաբաթ օրը կ'ընէր · Եւ Յիսուս պատասխան տուաւ անոնց · Իմ Հայրս մինչև հիմա կը գործէ ,
18 ես ալ կը գործեմ · Ասոր համար՝ ալ աւելի կը փնտռէին Հրէաները զանիկայ սպաննել · վասն զի չէ թէ միայն շաբաթ օրը կը լուծէր , հապա նաև Աստուած իր Հայրը կ'անուանէր , ու այսպէս ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր ·
19 Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու

Ե Նեեմ · գ · 1 ; Ժբ · 39 ;

Ե Մաա · թ · 6 ; Մար · բ · 11 ; Ղու · ե · 24 ;

Ե Գլ · թ · 14 ;

Ե Եզ · ի · 10 ; Նեեմ · ժգ · 19 ; Երեմ · ԺԷ · 21 , ՃԷ ; Մաա · Ժբ · 2 ; Մար · բ · 24 ; գ · 4 ; Ղու · գ · 2 ; Ժգ · 14 ;

Ը Մաա · Ժբ · 45 ; Գլ · բ · 11 ;

Ը Գլ · թ · 4 ; Ժգ · 10 ;

Ը Գլ · է · 20 ·

Ի Գլ · Ժ · 30 , 33 ; Փիլ · բ · 6 ;

Գ Ղէ · իգ · 2 ; բ Օբ · Ժզ · 1 ; Գլ · բ · 13 ;

Ցա · Տ · 31

Յամի Տեառն 31

բռաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , Ի Որդին ինքիրմէն
բան մըն ալ չկրնար ընել , միայն
թէ ինչ որ տեսնէ որ Հայրը կ'ը-
նէ . վասն զի ինչ որ անիկայ կ'ընէ ,
նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ ։
20 Ինչու որ Հայրը կը սիրէ Որդին ,
և ամէն բանը կը ցուցընէ անոր՝
ինչ որ ինքը կ'ընէ . ևասոնցմէ
ալ աւելի մեծ գործքեր պիտի ցու-
ցընէ անոր , որպէս զի դուք զար-
21 մանաք ։ Վասն զի ինչպէս որ Հայ-
րը մեռելները կը յարուցանէ՝ ու
կենդանի կ'ընէ , Նմանակ ալ Որ-
դին՝ որոնք որ կ'ուզէ կը կենդանա-
22 ցընէ ։ Քանզի Հայրը մէկը չդա-
տեր , Հապա ամէն դատաստանը
23 Որդիին տուաւ . Որ ամէնը պա-
տուէն Որդին , ինչպէս որ Հայրը
կը պատուէն . Ան որ Որդին չպա-
տուեր , զանիկայ խրկող Հայրը
24 չպատուեր ։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի , Թէ Ան որ իմ խօս-
քերս մտիկ կ'ընէ , և կը հաւատայ
անոր՝ որ զիս խրկեց , յաւիտենա-
կան կեանք ունի , ու դատապար-
տութեան տակ չէյնար , Հապա
մահուանէ դէպ ի կեանք անցած
25 է ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի , որ ժամանակ պիտի գայ՝ և
ալ հիմա է , Ի որ ան առենը մեռել-
ները պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն
ձայնը . և անոնք որ կը լսեն , պի-
26 տի ապրին ։ Վասն զի ինչպէս որ
Հայրը իր անձին մէջը կեանք ունի ,
անանկ ալ Որդիին տուաւ որ իր
27 անձին մէջը կեանք ունենայ . Ու-
դատաստան ընելու ալ իշխանու-
թիւն տուաւ անոր , Քանզի անի-
28 կայ Որդի մարդոյ է ։ Ասոր վրայ
մի՛ զարմանաք . ինչու որ ժամա-
նակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզ-
մաններու մէջ եղողները անոր ձայ-
29 նը պիտի լսեն , Ու դուրս պիտի
գան . Ա անոնք որ բարի գործեր են ,
կենաց յարութեան համար , և ա-
նոնք որ չար գործեր են , դատա-
պարտութեան յարութեան հա-
30 մար ։ Ես ինքիրմէս բան մը չեմ
կրնար ընել . ինչպէս կը լսեմ՝ ա-
նով կը դատեմ , և իմ դատաս-
տանս արդար է . ինչու որ Ես իմ
կամքս չեմ փնտռեր , Հապա Ի անոր
31 կամքը որ զիս խրկեց ։ Եթէ որ ես
ինծի համար վկայեմ , իմ վկա-
32 յութիւնս ճշմարիտ չէ ։ Ուրիշ
մըն է որ ինծի համար կը վկայէ .
և ես գիտեմ որ ճշմարիտ է ան
վկայութիւնը՝ որ ինքը ինծի համար
33 վկայեց ։ Դուք Յովհաննէսին խրր-
կեցիք , Ու ինքը ճշմարտութեա-
34 նը վկայեց ։ Բայց ես չէ թէ մար-
դոյմէ վկայութիւն կ'առնեմ . Հա-
պա ասոնք բանները կ'ըսեմ՝ որ դուք
35 փրկուիք ։ Անիկայ ճրագ մըն էր
որ կը վառէր , Ու լոյս կու տար .
Ե դուք քիչ մը ատեն ուզեցիք ա-
36 նոր լուսովը ուրախանալ ։ Բայց ես
Յովհաննէսին Վ-յ-ՒՒ-Ն ալ մեծ
վկայութիւն ունիմ , քանզի Ան
գործքերը որ Հայրը ինծի տուաւ
որ անոնք կատարեմ , ան նոյն
գործքերը որ ես կը գործեմ՝ ինծի
համար կը վկայեն թէ Հայրը զիս
37 խրկեց ։ Ու Հայրը որ զիս խրկեց ,
Ինքը վկայեց ինծի համար . դուք
բնաւ անոր ձայնը չլսեցիք , Ը ոչ
38 ալ անոր կերպարանքը տեսաք . Ու
ոչ անոր խօսքը ձեր մէջը բնակած
ունիք . քանզի ան որ ինքը խրկեց ,
39 դուք անոր չէք հաւատար ։ Գիր-
քերը քննեցէք . Քանզի դուք
անոնցմով կը սեպէք յաւիտենա-
կան կեանքը ունենալ . Ե բուն
անոնք են որ ինծի համար կը վկա-
40 յեն . Եւ դուք չէք ուզեր ինծի
41 գալ , որ կեանք ունենաք ։ Ես
մարդոցմէ փառք չեմ առներ ։
42 Բայց գիտեմ ձեզ որ Աստուծոյ
43 սէրը ձեզի մէջերնիդ չունիք ։ Ես իմ
Հօրս անունովը եկայ , ու զիս չէք
ընդունիր . Թէ որ ուրիշ մէկը իր
անունովը գայ , անիկայ պիտի
44 ընդունիք ։ Դուք ինտո՞ր կրնաք
հաւատալ , որ իրարմէ փառք կ'առ-
նէք . Ե ան փառքը որ մէկ Աս-
45 տուծմէն է , չէք փնտռեր ։ Մի
կարծէք թէ ես ձեզի համար ամ-
բաստանութիւն պիտի ընեմ Հօրը .
Կայ Ան որ ձեզի համար ամբաս-
տանութիւն կ'ընէ , Մովսէսը՝ ո-
46 րուն դուք յուսացած էք ։ Վասն
զի թէ որ դուք Մովսէսին հաւա-
տայիք , ինծի ալ պիտի հաւատա-
յիք . Ի ինչու որ անիկայ ինծի հա-
47 մար գրեց ։ Բայց թէ որ անոր
դրածներուն չէք հաւատար , իմ
խօսքերուս ինտո՞ր պիտի հաւա-
տաք ։

Գլ . Զ

1 Քրիստոս հինգ հազար հոգի կը կերակրէ հինգ հացով ու երկու ձուկով . 15 ու բանին վրայ մարդիկ կ'ուզեն թագաւոր ընել զանի-
կայ . 16 բայց Քիսուս անոնց քովէն ետ կը քաշուի , ու ծովուն վրայ քալելով՝ իր աշա-
կերտներուն կ'երեյնայ . 26 կը յանդիմանէ իր բոլորիքը դիտաւորները , ու ամէն մարմնաւոր
շահու համար իր խօսքը մտիկ բնողները . 32 կը ցուցընէ թէ ինքը հոգևոր կերակուր է հա-
ւատացեալներուն ։ 66 Շատ աշակերտներ իրմէն կը դատուին ։ 68 Պետրոս կը դաւանի
զՔիստոս ։ 70 Յուդան սատանայ կ'անուանի ։

1 Ետքը Յիսուս Գա-
լիլեայի Վ-յ-ՒՒ-Ն Տիբերիայի
2 ծովուն անդիի կողմը գնաց . Եւ
անոր ետևէն շատ ժողովուրդ կ'եր-
թար . ինչու որ կը տեսնէին ան
հրաշքները՝ որ հիւանդներուն վրայ

Յամի Տեառն 31

Ը Ր պետ . ա . 19 ։
— Մատ . ժգ . 20 ։ իա . 26 ։ Մար . ղ . 20 ։
— ա Յով . ե . 9 ։
Է Գլ . գ . 2 ։ ժ . 25 ։ ժե . 24 ։
— Մատ . գ . 17 ։ ժէ . 5 ։ Գլ . գ . 27 ։ ը . 18 ։
Ը Ր Օր . գ . 12 ։ Գլ . ա . 18 ։ — Տիմ . ա . 17 ։ — Յով . գ . 12 ։
Ը Ես . ը . 20 ։ ւդ . 16 ։ Դան . ժգ . 29 ։ Հեր 46 ։ Գոր . ժէ . 11 ։
— Ր Օր . ժը . 15 ։ 18 ։ Դան . իգ . 27 ։ Գլ . ա . 45 ։
Ֆ Գլ . ա . 11 ։ գ . 19 ։
Ի Հեր 34 ։ ա Թես . ը . 6 ։
Ա Գլ . ժը . 48 ։
Ֆ Հով . ը . 29 ։
— Հով . ը . 12 ։
Բ Ես . գ . 15 ։ ժը . 3 ։ ժը . 18 ։ իբ . 18 ։ խթ . 10 ։ Ր Օր . ժը . 15 ։ 18 ։ Գլ . ա . 45 ։ Գոր . իգ . 22 ։

Ց · Տ · 32
— Մատ . ժգ . 13 ։ Մար . գ . 32 ։ Դան . թ . 10 ։ 12 ։

Ճամբ Տեառն 32

3 կ'ընէր ։ Եւ Յիսուս լեռը ելաւ , ու հոն նստաւ իր աշակերտներուն
4 հետ մէկտեղ ։ Եւ Հրէից զատկի տօնը մօտ էր ։
5 Յիսուս երբոր էր աչքերը վեր վերցուց , ու տեսաւ որ շատ ժողովուրդ կու գար իրեն , բսաւ Փիլիպոսին . Որո՞ւկից հաց ծախու
6 առնենք որ ասոնք ուտեն ։ (Եւ ասիկայ կ'ըսէր զանիկայ փորձելու համար . քանզի ինքը գիտէր ինչ
7 պիտի ընէր ։) Փիլիպոս պատասխան տուաւ անոր . Երկու հարիւր դահեկանի հաց ասոնց հերիք չէ , որ ամէն մէկը քիչ մը
8 առնէ ։ Իր աշակերտներէն մէկը՝ Սիմոն Պետրոսին եղբայրը Անդ-
9 րեասը՝ բսաւ իրեն . Հոս մէկ պատանի մը կայ , որ հինգ գարեղէն հաց ու երկու ձուկ ունի . Բայց անոնք ի՞նչ պիտի ըլլան այդչափ
10 մարդոց ։ Իսկ Յիսուս բսաւ . Նստեցուցէք ատ մարդիկը . և ան տեղը շատ խոտ կար , ու մարդիկը նստան թուով հինգ հազարի չափ ։
11 Եւ Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ , և աշակերտներուն բաժնեց . աշակերտներն ալ նստողներուն . նոյնպէս ալ ձուկերէն որչափ
12 որ ուզեցին ։ Ու երբոր կշտացան , բսաւ իր աշակերտներուն . Ժողվեցէք աւելցած կտորուանքները՝ որ բան մը չկորսուի ։
13 Ուստի ժողվեցին , և տասուերկու կողով լեցուցին ան հինգ գարեղէն հացերէն ճաշէ կտորուանքները , որ ու-
14 տողներէն աւելցաւ ։ Իսկ մարդիկը երբոր Յիսուսին ըրած հրաշքը տեսան , կ'ըսէին Թէ , Ա-
15 սիկայ է ճշմարտապէս ան Մարգարէն՝ որ աշխարհ պիտի գար ։ Եւ Յիսուս գիտնալով որ պիտի գան զինքը յափշտակեն՝ որ զինքը թագաւոր ընեն , նորէն մինակ լեռը
16 գնաց ։ Ու երբոր իրիկուն եղաւ , իր աշակերտները ծովեզերքը իջան .
17 Եւ նաւը մտնելով՝ ծովուն մէկալ կողմը Կափառնայում կ'երթային . Ա արդէն մութը կոխեր էր , ու Յիսուս դեռ իրենց եկած չէր .
18 Ծովն ալ հովին սաստիկ փչելէն
19 տակնուվրայ կ'ըլլար ։ Ու երբոր Թի քաշելով քսանուհինգ կամ երսուն ասպարէզի չափ գացին , տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով՝ նաւուն կը մօտենար , ու
20 վախցան ։ Բայց ինքը բսաւ ա-
21 նոնց . Ես եմ՝ մի՛ վախնաք ։ Ան ատենը ուզեցին զանիկայ նաւը առնել . և շուտ մը նաւը ան երկիրը հասաւ՝ ուր որ կ'երթային ։
22 Հետևեալ օրը՝ ժողովուրդը որ ծովուն մէկալ կողմն էր , և տեսեր

Ճամբ Տեառն 32

էր որ ուրիշ նաւակ չկար հոն ան մէկէն ի զատ՝ որուն մէջ անոր աշակերտները մտեր էին . և որ Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակը մտած չէր , հապա մինակ անոր աշակերտները գացեր էին .
23 (Բայց Տիբերիայէն ուրիշ նաւակներ եկան ան տեղին մօտ՝ ուր որ Տէրոջը գոհանալովը հացը կերեր
24 էին .) Ան ատենը ժողովուրդը տեսնելով Թէ ոչ Յիսուսը հոն է , ոչ ալ անոր աշակերտները , իրենք ալ նաւերը մտան՝ ու եկան կափառնայում Յիսուսը փնտռելու ։
25 Ու երբոր անիկայ ծովուն մէկալ դին գտան , բսին անոր . Ռաբբի՝
26 երբ եկար դուն հոս ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ և բսաւ . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի . Դուք զիս կը փնտռէք՝ չէ Թէ անոր համար որ հրաշքներ տեսաք , հապա անոր համար որ հացերէն կերաք
27 ու կշտացաք ։ Գործեցէք՝ չէ Թէ կորստական կերակուրին համար , հապա ան կերակուրին համար՝ որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ , որ անիկայ Որդին մարդոյ ձեզի պիտի տայ . Ինչու որ Հայր Աստուած զանիկայ կնքեց ։
28 Ան ատենը բսին անոր . Ի՞նչ ընենք՝ որ Աստուծոյ գործքերը գործենք ։
29 Պատասխան տուաւ Յիսուս ու բսաւ անոնց . Աս է Աստուծոյ գործը , որ անոր խրկածին հաւատաք ։
30 Բսին անոր . Բայց դուն ի՞նչ նշան կ'ընես՝ որ տեսնենք ու քեզի հաւատանք . ի՞նչ կը գործես ։
31 Մեր հայրերը անապատին մէջ մանանան կերան , ինտոր որ գրուած է . Երկինքէն հաց տուաւ անոնց՝
32 որ ուտեն ։ Եւ Յիսուս բսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Թէ Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը , բայց իմ Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր
33 հացը ։ Ինչու որ Աստուծմէ իջած հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ , ու աշխարհիս կեանք կու տայ ։
34 Ուստի բսին անոր . Տէր՝ ամէն ա-
35 տենատ հացը մեզի տուր ։ Եւ Յիսուս բսաւ անոնց . Ես եմ կեանց հացը . Ան որ ինծի կու գայ , երբէք պիտի չանօթենայ . և ան որ ինծի կը հաւատայ , պիտի չծարաւ-
36 ւի ։ Բայց ես ձեզի ըսի , որ դուք զիս տեսաք ալ՝ ու չէք հաւատար ։
37 Ամէն ամէնը որ Հայրը ինծի կու տայ , ինծի պիտի գայ . և ան որ ինծի կու գայ , բնաւ դուրս պիտի
38 չհանեմ ։ Ինչու որ ես երկինքէն իջայ , չէ Թէ իմ կամքս ընելու , հապա անոր կամքը՝ որ զիս խրկեց ։
39 Եւ զիս խրկող Հօրը կամքը աս է

ը Հմր 55 ։ ԳԼ · դ · 14 ։

ի Մատ . դ · 17 ։ Ժէ · 5 ։ Մար . ա . 11 ։ Թ . 6 ։ Ղու . գ . 22 ։ Թ . 35 ։ Գլ . ա . 33 ։ է . 37 ։ ը . 18 ։ Գոր . բ . 22 ։ բ Գծտ . ա . 17 ։

ձ ա Ցօհ . գ . 23 ։

ղ Մատ . ժբ . 38 ։ ժգ . 1 ։ Մար . ը . 11 ։ ա Կոր . ա . 22 ։

ճ Եղ . ժգ . 15 ։ Թես . ա . 7 ։ Ղեմ . Թ . 15 ։ ա Կոր . ժ . 3 ։

ի Սպ . Հը . 24 , 25 ։

յ Տես գԼ . գ . 15 ։

ն Հմր 48 , 59 ։

շ ԳԼ . գ . 14 ։ է . 37 ։

ո Հմր 26 , 65 ։

չ Հմր 45 ։

պ Մատ . իդ . 24 ։ Գլ . ժ . 28 , 29 ։ բ Տիմ . բ . 19 ։ ա Ցօհ . բ . 19 ։

ջ Մատ . իգ . 39 ։ Գլ . ե . 30 ։

ռ Գլ . գ . 34 ։

Ցամի Տեառն 32

Ա ԳԼ · ժ · 28 ։ ԺԷ · 12 ։ ԺԸ · 9 ։
Ա Հմր 27 · 47 ։ 55 ։ ԳԼ · գ · 15 ։ 16 ։ գ · 14 ։

Ա Մաա · ԺԳ · 55 ։ Մար · գ · 3 ։ Ղ Ա · գ · 22 ։

Ա Երդ · ա · 4 ։ Հմր 66 ։

Գէ · ՃԳ · 13 ։ Երեմ · լա · 34 ։ Մխ · գ · 2 ։ Երբ · բ · 10 ։ ժ · 16 ։
Ա Հմր 37 ։
Ա ԳԼ · ա · 18 ։ ե · 37 ։
Ա Մաա · ժա · 27 ։ Ղ Ա · ժ · 22 ։ ԳԼ · ա · 18 ։ է · 29 ։ բ · 19 ։
Ա ԳԼ · գ · 16 · 18 · 36 ։ Հմր 40 ։
Ա Հմր 33 · 35 ։
Բ Հմր 31 ։
Ց Հմր 51 · 59 ։
Ա ԳԼ · գ · 13 ։
Ֆ Երբ · ժ · 5 · 10 ։

Ա ԳԼ · է · 43 ։ Թ · 16 ։ ժ · 19 ։
Ա ԳԼ · գ · 9 ։

Ֆ Մաա · խգ · 26 · 28 ։

Ա Հմր 27 · 40 · 64 ։ ԳԼ · գ · 13 · 14 ։

Բ Ա Ցօհ · գ · 24 ։ գ · 15 · 16 ։

որ , Ն ան ամէնը որ ինքը ինծի տուաւ՝ չկորսընցընեմ անկէ , հապա անոր յարուԹիւն առնել տամ
40 վերջին օրը ։ Քանզի գիս խրբկողին կամքը աս է , որ Ն ան ամէնը որ կը տեսնէ Որդին և կը հաւատայ անոր , յաւիտենական կեանք ունենայ . ես ալ անոր յարուԹիւն առնել տամ վերջին օրը ։
41 Ուստի Հրէաները տրտունջ կ'ընէին իրեն համար , ինչու որ ըսաւ ԹԷ , Ես եմ երկինքէն իջած հացը .
42 և կ'ըսէին . Ա Նիկայ Յովսէփին որդին Ցիսուսը չէ՞ , որուն հայրը ու մայրը մենք կը ճանչնանք . ուրեմն ի՞նչպէս կ'ըսէ ասիկայ ԹԷ ,
43 Ես երկինքէն իջայ ։ Պատասխան տուաւ Ցիսուս՝ ու ըսաւ անոնց .
44 Տրտունջ մի ընէք միջերնիդ ։ Ոմէկը չկրնար ինծի գալ , ԹէՈր զիս խրկող Հայրը անիկայ չքաշէ . ու ես անոր յարուԹիւն առնել պիտի
45 տամ վերջին օրը ։ Ա Մարգարէից մէջ գրուած է . Եւ ամէնքն ալ Աստուծմէ սորված պիտի ըլլան . Ան ամէնը որ Հօրմէն կը լսէ ու
46 կը սորվի , ինծի կու գայ ։ Ա Չէ ԹէՈր մէկը Հայրը տեսած է , Ա Եթէ ոչ ան որ Աստուծմէն է , անիկայ
47 Հայրը տեսած է ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , ԹէՈր Ան ինծի կը հաւատայ , յաւիտենական
48 կեանք ունի ։ Ա Ես եմ կենաց հա-
49 ցը ։ Ձեր Հայրերը անապատին մէջ մանանան կերան , ու մեռան ։
50 Ես է ան հացը՝ որ երկինքէն կ'իջնէ , որ Եթէ մէկը ասկէ ուտէ ,
51 պիտի չմեռնի ։ Ես եմ կենդանի հացը՝ որ երկինքէն իջայ ։ Թէ որ մէկը ասկէ ուտէ , յաւիտեան պիտի ապրի ։ Եւ ան հացը որ ես պիտի տամ՝ իմ մարմինս է , որ ես պիտի տամ աշխարհիս կենացը համար ։
52 Ա Ասոր վրայ Հրէաները իրարու հետ կը վիճէին՝ ու կ'ըսէին . Ա Ինտո՞ր կրնայ ասիկայ իր մարմինը մեզի տալ ուտելու ։
54 Իսկ Ցիսուս ըսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Ֆ Թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք , և անոր արիւնը չխմէք , ձեր անձերուն մէջ
55 կեանք չէք ունենար ։ Ա Ով որ իմ մարմինս ուտէ , և իմ արիւնս խմէ , յաւիտենական կեանք կ'ունենայ , ու ես անոր յարուԹիւն առնել
56 պիտի տամ վերջին օրը ։ Ինչու որ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է , և իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք
57 է ։ Ն ան որ իմ մարմինս կ'ուտէ , և իմ արիւնս կը խմէ , Բ անիկայ իմ ներսի դիս կը բնակի ու ես ա-
58 նոր ներսի դին ։ Ինչպէս որ կեն-

դանի Հայրը զիս խրկեց , ու ես կենդանի եմ Հօրը ձեռքովը , Ա Ո-Ա- ալ ան որ զիս կ'ուտէ , ինքն ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ ։
59 Ա Ես է ան հացը՝ որ երկինքէն իջած է . չէ Թէ ինտոր որ Հայրերնիդ մանանան կերան՝ ու մեռան . ով որ աս հացը ուտէ , յաւիտեան պիտի ապրի ։
60 Ես բաները ղրուցեց ժողովարանին մէջը՝ երբոր Կափառնայումի մէջ կը սորվեցընէր ։
61 Ա Ու աշակերտներէն շատերը երբոր լսեցին , ըսին . Խիստ էատ խօսքը , ո՞վ կրնայ ատոր մտիկ ընել ։
62 Ցիսուս երբոր ինքնիրենը հասկըցաւ , որ իր աշակերտները ան բանին համար տրտունջ կ'ընեն , ըսաւ անոնց . Ատիկայ ձեզ կը գայ-
63 Թակղեցընէ՞ ։ Ա Հապա Ա Ե՞նչ Ա-Ա-ՀԷ- , Թէ որ տեսնէք Որդին մարդոյ որ ելլէ ուր տէղ որ առաջ
64 էր ։ Ա Հոգին է կենդանի ընողը , մարմինը շահ մը չընէր . ան խօսքերը որ ես ձեզի Ա խօսեցայ , հոգի
65 ու կեանք են ։ Ա Բայց ձեր միջէն կան ոմանք որ չեն հաւատար . ինչու որ Ցիսուս սկիզբէն գիտէր՝ Թէ ով են անոնք որ չեն հաւատար , և ով է ան որ զինքը պիտի մատնէ .
66 Ու կ'ըսէր . Ա Ասոր համար ձեզի ըսի , որ մէկը չկրնար ինծի գալ , Թէ որ իմ Հօրմէս տրուած չըլլայ անոր ։
67 Ա Ես պատճառով իր աշակերտները շատերը ետ դարձին , և ալ իր
68 հետ չէին պտրտեր ։ Ըն ատենը Ցիսուս տասներկուբին ըսաւ . ՄիԹէ դուք ալ կ'ուզէք երԹալ ։
69 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ անոր . Տէր՝ որո՞ւ պիտի երԹանք , Ձեզի յաւիտենական կենաց խօս-
70 քեր ունիս . Ես մենք հաւատացինք ու գիտցանք՝ Թէ դուն Ես Քրիստոսը Ա Աստուծոյ Որդին ։
71 Ցիսուս պատասխան տուաւ անոնց . Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞ , Ա ու ձեզմէ Ա Ե մէկը սատանայ է ։
72 Ես կ'ըսէր Իսկարիովտացի Սիմոնեան Ցուդային համար . ինչու որ անիկայ էր , որ զինքը պիտի մատնէր , ու տասներկուքէն մէկն էր ։

ԳԼ · Է

1 Ցիսուս կը յանդիմանէ իր ազգականներուն փաստաբանութիւնը և յանդգնութիւնը ։ 10 Գալիլեայէն երուսաղէմ կ'երթէ տաղաւարատարաց տօնին ։ 14 տաճարին մէջ կը սորվեցընէ ։ 40 Ժողովրդոց զանազան կարծիքները Քրիստոսի վրայով ։ 45 Փարիսեցիք կը բարկանան իրենց սպասաւորներուն՝ զանիկայ չբռնելնուն համար , և կը յանդիմանեն Նիկոդեմոսը՝ որ Ցիսուսի կողմը կը բռնէր ։

1 Ցիսուս աս բաներէն ետև Ցաղիլեայի մէջ կը պտրտէր . ին-

Ցամի Տեառն 32

Ֆ Հմր 49 · 50 · 51 ։

Ֆ Հմր 67 ։ Մաա · ժա · 6 ։

Ա ԳԼ · գ · 13 ։ Մար · ԺԳ · 19 ։ Գոր · ա · 9 ։ Եփս · գ · 8 ։
Ը Ր Կոր · գ · 6 ։
* Ո՛Ահ՛ կը խօսի ։
Ա Հմր 36 ։
Ը ԳԼ · բ · 24 · 25 ։ ժգ · 11 ։
Բ Հմր 44 · 45 ։

Ֆ Հմր 61 ։

Ա Գոր · ե · 20 ։
Ա Մաա · ԺԳ · 16 ։ Մար · բ · 29 ։ Ղ Ա · Թ · 20 ։ ԳԼ · ա · 49 ։ ժա · 27 ։
+ Ո՛Ահ՛ կենդանի Աստուծոյ
Ա Ղ Ա · գ · 13 ։
Ֆ ԳԼ · ԺԳ · 27 ։

Ցամի Տեառն 32

– Գլ. ե. 16, 18։
Բ Ղե. իգ. 34։
† Մաա. ժբ. 46։ Մար. գ. 31։ Գոր. ա. 14։

չու որ չէր ուզեր Հրէաստանի մէջ պտըտիլ, – վասն զի Հրէաները զինքը սպաննել կ'ուզէին։
2 Եւ Հրէաներուն տաղաւարա-
3 հարաց մօտը մօտ էր։ †Ուստի իր եղբայրները ըսին իրեն. Ելլէ աս-
4 կէ ու Հրէաստան դնա, որ քու աշակերտներդ ալ տեսանեն քու գործերդ որ կ'ընես. Ինչու որ մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինքը յայտնի ըլլալ ուզէ. թէ որ դուն ատ բաները կ'ընես, ինքզինքդ աշխարհին յայտնէ։
5 †Քանզի իր եղբայրներն ալ չէին
6 հաւատար իրեն։ Իսկ Յիսուս ը-սաւ անոնց. Իմ ժամանակս դեռ հասած չէ. բայց ձեր ժամանակը
7 միշտ պատրաստ է։ Աշխարհը ձեզ չկրնար ատել, բայց զիս կ'ա-տէ. Ինչու որ ես անոր վրայով կը վկայեմ՝ թէ իր գործերը չար
8 են։ Դուք ելէք աս տօնիս. ես †Եմ– չեմ ելլեր աս տօնիս, Ընչու որ իմ ժամանակս դեռ լրացած չէ։
9 Ա՛ս բսելով անոնց, ինքը Գալիլեա
10 մնաց։ Բայց երբոր իր եղբայր-նները ելան, ետքը ինքն ալ ելաւ տօնին, չէ թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերպով մը։
11 Եւ Հրէաները տօնին առջեւը կը փնտռէին զինքը՝ ու կ'ըսէին. Ո՞ր
12 է անիկայ։ Եւ ժողովուրդին մէջ շատ շշնջիւն կար անոր վրայով. Ոմանք կ'ըսէին թէ, Ազնիւ է. ուրիշները կ'ըսէին, Չէ, հապա
13 ժողովուրդը կը մոլորցնէ։ Սա-կայն մէկը անոր վրայով համար-ձակ չէր խօսեր Հրէաներուն վա-խէն։
14 Իսկ երբոր տօնը կէս եղաւ, Յի-սուս տաճարը ելաւ՝ ու կը սորվե-
15 ցընէր։ Եւ Հրէաները կը զար-մանային ու կ'ըսէին. Ինտո՞ր ասի-կայ գիրքերը գիտէ, որ սորված
16 չէ։ Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ ու բսաւ. Իմ վարդապե-տութիւնս իմս չէ, հապա զիս
17 խրկողինն է։ Թէ որ մէկը կ'ուզէ անոր կամքը ընել, պիտի գիտնայ ա՛ վարդապետութեանս համար՝ թէ արդեօք Աստուծմէ՞ է, թէ ես
18 ինքիրմէս կը խօսիմ։ Ան որ ինք-իրմէն կը խօսի, իր անձին փառքը կը փնտռէ. բայց ան որ զինքը խրկողին փառքը կը փնտռէ, անի-կայ ճշմարիտ է, և անոր մէջը ա-
19 նիրաւութիւն չկայ։ Մովսէս չտուաւ ձեզի օրէնքը, ու ձեզմէ
20 մէկն ալ չպահեր օրէնքը։ Ընչի՞ կը փնտռէք զիս սպաննել. պատասխան տուաւ ժողովուրդը ու բսաւ. Դեւ կայ քու ներսդ. ո՞վ քեզ կը փնտռէ սպաննել։

21 Պատասխան տուաւ Յիսուս՝ և ը-սաւ անոնց. Մէկ գործ մը գոր-ծեցի, ու ամէնդդ ալ զարմացեր
22 էք։ Ասդ՝ Մովսէս ձեզի թլփա-տութիւնը տուաւ. (որ չէ թէ Մովսէսէն էր, հապա նախնիքնե-րէն.) ու շաբաթ օրը մարդ կը
23 թլփատէք. Թէ որ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ'առնէ՝ որ Մովսէսին օրէնքը չբակուի. ինծի կը բարկանաք որ Ես շաբաթ օրը
24 ամբողջ մարդ մը բժշկեցի։ Ընչբի երեւցածին պէս դատաստան մի ը-նէք, հապա արդար դատաստան ըրէք։
25 Ան ատեն Երուսաղէմացիներէն ոմանք կ'ըսէին. Ասիկա՞ ան չէ
26 որն որ կը փնտռեն սպաննել. Եւ ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր անոր. Միթէ իշխանները դիտցած են թէ ասիկայ Ճշմարտա-
27 պէս Քրիստոս է։ Սակայն մենք ասիկայ գիտենք ուրկից է. բայց Քրիստոսը երբոր գայ, մէկը չգի-
28 տեր ուրկից է։ Եւ Յիսուս քանի որ կը սորվեցընէր, տաճարին մէջ աղաղակեց՝ ըսելով. Դուք ալ գի-տէք, և ուրկից ըլլալս ալ գիտէք. Ու ես ինքիրմէս եկած չեմ. Հապա ան որ զիս խրկեց, Ճշմարիտ է, որ անիկայ դուք չէք գիտեր։
29 Ես գիտեմ անիկայ, ընչու որ ես անկէ եմ, և անիկայ զիս խրկեց։
30 Ուստի կը փնտռէին զինքը բռնել. բայց †մէկն ալ իրեն ձեռք չզարկաւ, ընչու որ իր ժամանակը
31 դեռ հասած չէր։ Ու ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն, և կ'ըսէին. Քրիստոսը երբոր գայ, աստղմէ աւելի նշաննե՞ր պիտի ը-նէ, որչափ որ ասիկայ կ'ընէ։
32 Փարիսեցիները լսեցին ժողո-վուրդին ան շշնջիւնը անոր վրա-յով. ու փարիսեցիները և քահա-նայապետները սպասաւորներ խրը-
33 կեցին, որ զանիկայ բռնեն։ Իսկ Յիսուս բսաւ. Քիչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ, ու կ'երթամ
34 անոր՝ որ զիս խրկեց։ †Ինծի պիտի փնտռէք՝ ու պիտի չգտնէք. և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։
35 Ան ատեն Հրէաները ըսին իրա-րու. Ո՞ր պիտի երթայ ասիկայ, որ մենք զինքը պիտի չգտնենք. Միթէ *Հեթանոսաց մէջ †ցիրուցան եղածներուն պիտի երթայ, և հե-թանոսներուն պիտի սորվեցընէ։
36 Ի՞նչ է ան խօսքը՝ որ ըսաւ. Ինծի պիտի փնտռէք՝ ու պիտի չգտնէք. և իմ եղած տեղս դուք չէք կրնար գալ։
37 †Տօնին վերջի մեծ օրը Յիսուս կայներ էր, կ'աղաղակեր ու կ'ը-

Ցամի Տեառն 32

Ղե. ժբ. 3։
Ծն. ժէ. 10։
Գլ. ե. 8։ 9. 16։
Ը Օր. ա. 16, 17։ Ռոմ. իդ. 23, 24։ Գլ. բ. 15։ Ցակ. բ. 1։
Հեր 48։
Մաա. ժգ. 55։ Մար. գ. 3։ Ղու. գ. 22։
Տե– գլ. բ. 14։
Գլ. ե. 43։ բ. 42։
– Գլ. ե. 32։ բ. 26։ Հռով. գ. 4։
– Գլ. ա. 18։ բ. 55։
Մաա. ժա. 27։ Գլ. ժ. 15։
– Մար. ժա. 18։ Ղու. ժբ. 47։ ի. 19։ Հեր 19։ Գլ. բ. 37։
Հեր 44։ Գլ. բ. 20։
Մաա. ժբ. 23։ Գլ. գ. 2։ բ. 30։
– Գլ. ժգ. 33։ ժգ. 16։
Ով. ե. 6։ Գլ. բ. 21։ ժգ. 33։
Ես. իգ. 12։ Ցակ. ա. 1։ Պետ. ա. 1։
Ղե. իգ. 36։

Ցամի Տեառն 32

սէր . 4 Թէ որ մէկը ծարաւ է , թող
38 ինծի գայ՝ ու խմէ : Ո՞վ որ ինծի
կը հաւատայ՝ ինչպէս որ գիրքը
կ'ըսէ , անոր փորէն կենդանի
39 ջուրի գետեր պիտի բղխեն . Ասիկա
ըսաւ Հոգիին համար՝ որ իրեն հա-
ւատացողները պիտի առնէին . վասն զի Սուրբ Հոգին դեռ չէր
տակաւին , ինչու որ Յիսուս դեռ
40 փառաւորուած չէր : Ժողովուր-
դէն շատ մարդիկ ասոնց խօսքը որ
լսեցին , կ'ըսէին . Իրաւցընէ ասի-
41 կայ է մարգարէն : Ուրիշները
կ'ըսէին . Ասիկայ է Քրիստոսը .
ուրիշներն ալ կ'ըսէին . Միթէ Քր-
իստոսը Գալիլեայէ՞ն կու գայ :
42 Չէ՞ որ գիրքը կ'ըսէ թէ , Քրիս-
տոսը Դաւիթի սերունդէն ու
Դաւիթին եղած գեղէն Բեթլե-
43 հեմէն կու գայ : Ուստի ժողո-
վուրդին մէջ երկպառակութիւն
44 եղաւ անոր համար : Ասոնց-
մէ ոմանք ուզեցին բռնել անի-
կայ . բայց մէկը անոր ձեռք չզար-
կաւ :

45 Ու սպասաւորները նորէն եկան
քահանայապետներուն և փարիսե-
ցիներուն . ու ասոնք ըսին անոնց .
46 Ինչո՞ւ անիկայ հոս չբերիք : Պա-
տասխան տուին սպասաւորները .
Երբէք մէկը ասանկ մարդուն պէս
47 խօսած չէ : Ան ատեն փարիսեցի-
ները պատասխան տուին անոնց և
ըսին . Միթէ դուք ալ մոլորե-
48 ցաք : Իշխաններէն կամ փարի-
սեցիներէն մէկը հաւատաց անոր .
49 Բայց ասանկ ժողովուրդը՝ որ
օրէնքը չեն գիտեր , նզոված են :
50 Նիկոդեմոս ըսաւ անոնց . (Ո՛ր ա-
նոնց գիշեր ատեն իրեն եկեր էր ,
51 և անոնցմէ մէկն էր .) Միթէ մեր
օրէնքը մարդ կը դատէ՞ , թէ որ
առաջ անկէ բան մը չլսէ , և չգիտ-
52 նայ թէ ինչ կ'ընէ : Պատասխան
տուին ու ըսին անոր . Միթէ
դուն ալ Գալիլեայէն ես . քննէ
ու նայէ , Ո՛ր Գալիլեայէն մարգա-
53 րէ չելլեր : Եւ ամէն մէկը իր տու-
նը գնաց :

Գ Լ · Ը

1 Քրիստոս կ'արձակէ չնութեան յանցանքով բռնուած կինը . 12 կը յայտնէ թէ ինքն է աշխարհիս լոյսը , ու իր վարդապետութիւնը կ'արդարացնէ . 33 Ընդհանուին վրայ պարծենցող Հրեից պատասխան կու տայ , 59 և մէկդի կը քաշուի անոնց կատաղութենէն :

1 Յիսուս Ձիթենեաց լեռը գը-
2 նաց : Ու առտուանց նորէն
տաճարը եկաւ , և բոլոր ժողովուր-
դը իրեն կու գար , ու ինքը նստեր
3 կը սորվեցընէր անոնց : Եւ դպիր-
ները ու փարիսեցիները շնութեան
մէջ բռնուած կնիկ մը բերին ա-

Ցամի Տեառն 32

նոր , ու զանիկայ մէջտեղը կայնե-
4 ցընելով՝ Ըսին իրեն . Վարդապետ ,
աս կնիկը շնութեան մէջ՝ աս մեղ-
քը գործած ատենը բռնուեցաւ .
5 Եւ օրինաց մէջ Մովսէս մեզի
պատուիրեց ասանկները քարկո-
ծել . Հիմա դուն ի՞նչ կ'ըսես ա-
6 նոր համար : Ասիկա կ'ըսէին ան-
կայ փորձելով , որ անոր վրայ ամ-
բաստանութիւն ընե-
նալ մը ունենան . բայց Յիսուս դէպ՝ի
վար ծռելով՝ մատովը գետնին վը-
7 րայ կը գրէր : Սակայն երբոր վը-
րան ինկան՝ հարցընելով իրեն , վեր
նայեցաւ ու ըսաւ անոնց . Ձեզմէ
անմեղ եղողը՝ առաջ անիկայ թող
8 բար ձգէ ատոր վրայ : Եւ նորէն
դէպ՝ի վար ծռելով՝ գետնին վրայ
9 կը գրէր : Եւ անոնք՝ լսելով՝
ու խիղճմտանքէն չանդիմա-
նուելով՝ մէկիկ մէկիկ դուրս կ'ել-
լէին , ծերերէն սկսած մինչև յե-
տինները . և Յիսուս մինակ մնաց ,
10 ու կնիկը մէջտեղը կայնած : Եւ
Յիսուս վեր նայելով՝ ու կնիկէն
զատ մէկը չտեսնելով՝ ըսաւ անոր .
Կնիկ՝ որ՞ւ են անոնք որ քու վրա-
յովդ ամբաստանութիւն կ'ընէին .
11 մէկը քեզ չդատապարտե՞ց : Եւ
անիկայ ըսաւ . Ո՛չ մէկը՝ Տէր . ու
Յիսուս ըսաւ անոր . Ես ալ չեմ
դատապարտեր քեզ . դնա՝ ու
ետեւէդ եղած մեղք մի գործեր :
12 Ընդ՛ Յիսուս նորէն խօսեցաւ ա-
նոնց՝ ու ըսաւ . Ես եմ աշխարհի
լոյսը . ան որ իմ ետեւէս կու գայ ,
խաւարի մէջ պիտի չգնայ , հապա
13 կենաց լոյսը պիտի ունենայ : Իսկ
փարիսեցիները ըսին անոր . Դուն
քու անձիդ համար կը վկայես ,
քու վկայութիւնդ ճշմարիտ չէ :
14 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ը-
սաւ անոնց . Թէև ես իմ անձիս
համար վկայեմ , ըլլայ իմ վկայու-
թիւնս ճշմարիտ է , ինչու որ գի-
տեմ ուրկից եկայ , և ուր կ'եր-
թամ . Բայց դուք չէք գիտեր
ուրկից կու գամ , կամ ուր կ'եր-
15 թամ : Դուք մարմինին նայելով
դատաստան կ'ընէք . Ես բնաւ մէկը
16 չեմ դատեր . Ու թէև դատելու
ալ բլլամ , իմ դատաստանս ճըշ-
մարիտ է . Ինչու որ ես մինակ չեմ ,
հապա ես , և Հայրը որ զիս խրբ-
17 կեց : Ու ձեր օրէնքին մէջն ալ
գրուած է թէ , Երկու մարդու վը-
18 կայութիւնը ճշմարիտ է : Ես եմ
որ իմ անձիս համար կը վկայեմ ,
Ու կը վկայէ ինծի համար Հայրն
19 որ զիս խրկեց : Ան ատենը
ըսին անոր . Ո՞ւր է քու Հայրդ .
Յիսուս պատասխան տուաւ . Ո՛չ
զիս գիտէք և ոչ իմ Հայրս . Թէ

Ծաւք Ը. Հատ. 32

որ զիս գիտնայիք , իմ Հայրս ալ պիտի գիտնայիք ։
20 Ցիսուս ասս խօսքերը խօսեցաւ՝ գանձատունը , երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր . ոու մէկը չբռնեց զանիկայ , ինչու որ դեռ անոր ժամանակը հասած չէր ։
21 Ետքը Ցիսուս նորէն ըսաւ անոնց . Ես կ՚երթամ՝ ու զիս պիտի փնտռէք . և ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք . ուր որ ես կ՚երթամ , դուք չէք կրնար գալ ։
22 Ուստի վրայ Հրէաները կ՚ըսէին . Միթէ ինքզինքը պիտի մեռցընէ՞ , որ կ՚ըսէ Թէ՝ Ուր որ ես կ՚երթամ , դուք չէք կրնար գալ ։
23 Եւ ըսաւ անոնց . Դուք վարէն էք , ես վերէն եմ . դուք աս աշխարհէս էք , ես աս աշխարհէս չեմ . ։
24 Ընոր համար ձեզի ըսի Թէ՝ Ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք . ինչու որ եթէ չհաւատաք Թէ ես եմ , ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք ։
25 Ուստի ըսին անոր . Դուն ո՞վ ես . և Ցիսուս ըսաւ անոնց . Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ ։
26 Շատ բաներ ունիմ ձեզի համար խօսելու և դատելու . բայց Ան որ զիս խրկեց , ճշմարիտ է . և ես ինչ որ իրմէ լսեցի , անիկայ կը խօսիմ աշխարհիս մէջ ։
27 Անոնք չհմացան Թէ Հօրը համար կը զրուցեր իրենց ։
28 Ուստի Ցիսուս ըսաւ անոնց . Երբոր Որդին մարդոյ բարձրացընէք , ան ատենը պիտի գիտնաք Թէ ես եմ , ու ինքիրմէս բան մը չեմ ըներ , Հապա Հայրս ինչպէս որ ինծի սորվեցուց , անանկ կը խօսիմ ։
29 Եւ զիս խրկողը իմ հետս է . Հայրը զիս մինակ չթողուց . ինչու որ ես միշտ անոր հաճելի եղած բանները կ՚ընեմ ։
30 Երբոր ասոնք խօսեցաւ , շատ
31 մարդիկ իրեն հաւատացին ։ Ուստի Ցիսուս իրեն հաւատացող Հրէաներուն ըսաւ . Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք , ճշմարտապէս իմ աշակերտներս կ՚ըլլաք .
32 Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք , ու ան ճշմարտութիւնը ձեզ
33 պիտի ազատէ ։ Պատասխան տուին իրեն . Մենք Աբրահամի սերունդ ենք , ու երբէք մէկու մը չծառայեցինք . դուն ինտո՞ր կ՚ըսես Թէ
34 ազատ պիտի ըլլաք ։ Ցիսուս պատասխան տուաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի Թէ , Ամէն ով որ մեղք կը գործէ , անիծի ծառայ է ։
35 Ծառան տանը մէջ յաւիտեան չմնար , բայց տանը մէջ յաւիտեան կը մնայ ։
36 Որդին եթէ ձեզ ազատ ընէ , ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք ։
37 Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք , բայց կը փնտռէք զիս սպաննել , ինչու որ իմ խօսքս ձեր
38 սիրտերնիդ տեղ չունի ։ Ես ինչ որ տեսայ իմ Հօրս քովը՝ կը խօսիմ . և դուք ալ ինչ որ տեսաք ձեր Հօրը քովը՝ կ՚ընէք ։
39 Պատասխան տուին ու ըսին անոր . Մեր Հայրը Աբրահամն է . ըսաւ անոնց Ցիսուս . Թէ որ Աբրահամին որդիքը ըլլայիք , Աբրահամին
40 գործքերը պիտի գործէիք ։ Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս , մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ , որն որ Աստուծմէ լսեցի . Աբրահամ ատ բանը չըրաւ ։
41 Դուք ձեր Հօրը գործքերը կ՚ընէք . ան ատենը ըսին անոր . Մենք պոռնկութենէ չենք ծնած . մենք մէկ Հայր մը ունինք՝ որ Աստուած է ։
42 Ցիսուս ըսաւ անոնց . Թէ որ Աստուած ձեր Հայրը ըլլար , պիտի սիրէիք զիս . ինչու որ ես Աստուծմէ ելայ՝ ու եկայ . Ես չէ Թէ ես ինքիրմէս եկայ , Հապա
43 անիկայ զիս խրկեց ։ Ինչո՞ւ դուք իմ զրուցածքս չէք հասկընար . անոր համար որ չէք կրնար իմ
44 խօսքս մտիկ ընել ։ Դուք ձեր Հօրմէն Սատանայէն էք , ու ձեր Հօրը բաղձանքը կ՚ուզէք ընել . անիկայ սկիզբէն հետ մարդասպան էր , և ճշմարտութեան մէջ չկեցաւ , ինչու որ անոր ներսի դին ճշմարտութիւն չկայ . երբոր անիկայ սուտ կը խօսի , բուն իրենէրէն կը խօսի . քանզի անիկայ
45 սուտախօս է և անոր Հայրը ։ Բայց որովհետև ես ճշմարտութիւն կը խօսիմ , ինծի չէք հաւատար ։
46 Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար . իսկ Թէ որ ես ճշմարտութիւն կը խօսիմ , ինչո՞ւ
47 ինծի չէք հաւատար ։ Ան որ Աստուծմէ է , Աստուծոյ խօսքերը կ՚ընդունի . դուք անոր համար կ՚ընդունիք չէք ըներ , որ Աստուծմէ չէք ։
48 Պատասխան տուին Հրէաները՝ ու ըսին անոր . Աղէկ չենք ըսեր մենք , Թէ դուն Սամարացի ես՝ ու դեւ
49 կայ քու ներսդ ։ Ցիսուս պատասխան տուաւ՝ Ես ոչ . Իմ ներսս դեւ չկայ , Հապա ես իմ Հայրս կը պատուեմ , և դուք զիս կ՚անարգեցընէք .
50 դէք ։ Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր . կայ Մէկը՝ որ կը փնտռէ ,
51 ու կը դատէ ։ Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մահ պիտի չտեսնէ ։
52 Ուստի Հրէաները ըսին անոր . Հիմա գիտցանք որ քու ներսդ դեւ կայ . Աբրահամ մեռաւ՝ ու մարգարէները . և դուն

Ծաւք Ը. Հատ. 32

Ա Գլ. է. 20 ։ Հմր 40 ։
Բ Գլ. գ. 32 ։ է. 19, 30 ։ Ժգ. 10, 24 ։
Գ Մաա. գ. 9 ։ Հմր 33 ։
Ե Հռով. ը. 28 ։ Թ. 7 ։ Գաղ. գ. 7, 29 ։
Զ Հմր 37 ։
Է Հմր 26 ։
Ը Եփ. կգ. 16 ։ կդ. 8 ։ Մաղ. ա. 6 ։
Թ Ա Ցօհ. ե. 1 ։
Ժ Գլ. Ժգ. 27 ։ Ժէ. 8, 25 ։
ԺԱ Գլ. ե. 43 ։ է. 28, 29 ։
ԺԲ Գլ. է. 17 ։
ԺԳ Մաա. Ժգ. 38 ։ Ա Ցօհ. գ. 8 ։
ԺԴ Ցուդ. 6 ։
ԺԵ Գլ. Ժ. 24 ։ Ժա. 26 ։
ԺԶ Ջաք. ա. 5 ։ Երե. Ժա. 18 ։

Ցամի Տեառն 32

կ'ըսես , թէ որ մէկը իմ խօսքս պահէ , յաւիտեան մահուան չտեսնէ .
53 պիտի չառնէ : Միթէ դուն աւելի՞ մեծ ես մեր հայր Աբրահամէն՝ որ մեռաւ . ու մարգարէներն ալ մեռան . դուն քեզ ո՞վ կ'ընես :
54 Յիսուս պատասխան տուաւ . Թէ որ ես ինքզինքս փառաւորեմ , իմ փառքս բան մը չէ . Իմ Հայրս է՝ որ զիս կը փառաւորէ , որուն համար դուք կ'ըսէք թէ Մեր Աստուածն
55 է . Եւ անիկայ չէք ճանչնար . բայց ես գիտեմ անիկայ . ու թէ որ ըսեմ՝ թէ անիկայ չեմ գիտեր , ձեզի պէս սուտախօս պիտի ըլլամ . հապա ես գիտեմ անիկայ , և անոր
56 խօսքը կը պահեմ : Ձեր Հայրը Աբրահամ ցանկացաւ իմ օրս տեսնելու . ու տեսաւ և ուրախացաւ :
57 Իսկ Հրէաները ըսին անոր . Դուն տակաւին հինսուն տարեկան չես ,
58 Աբրահա՞մն ալ տեսար : Յիսուս ըսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , Աբրահամին ըլլա-
59 լէն առաջ եմ ես : Ան առնոր քարեր վերցուցին՝ որ անոր վրայ նետեն . բայց Յիսուս ծածկուեցաւ անոնց աչքերէն , և Տաճարէն դուրս ելլաւ , ու այսպէս գնաց :

Ցամի Տեառն 32

Ա Գլ. թ. 39 ; Ես. խգ. 18 ; Գլ. ժէ. 5, 24 ; Կղ. ա. 17 ; Ցայտ. ա. 8 ; Ա Գլ. ժ. 31, 39 ; ժա. 8 ; Ղկ. գ. 30 ;

Գլ. ը. 31 ;

Գլ. ը. 41 ; ժզ. 14 ; ժէ. 1 ; Գոր. գ. 13 ;

Ոմն՝ Ձեր

Գլ. է. 28, 29 ;

Ղկ. ժ. 24 ;

Երր. ժա. 13 ;

Ել. գ. 14 ; Ես. խգ. 13 ; Գլ. ժէ. 5, 24 ; Կղ. ա. 17 ; Ցայտ. ա. 8 ;

Գլ. ժ. 31, 39 ; ժա. 8 ; Ղկ. գ. 30 ;

Գլ. թ

1 Քրիստոս ի ծնէ կոյրին աչքերը կը բանայ : 8 Ան բժշկուած մարդը փարիսեցւոց կը տարուի , 13 որոնք բարկանալով դուրս կ'ընեն զանիկայ իրենց ժողովարանէն . 35 բայց Յիսուս կ'ըն-դունի զանիկայ . ու ան ալ կը հաւատայ ա-նոր : 39 Քրիստոս զրոյծք կը լուսաւորէ :

1 Երբոր կ'անցնէր , մէկ մարդ մը
2 տեսաւ կոյր ծնած . Եւ իր ա-շակերտները հարցուցին իրեն , ու ըսին . Ռաբբի՝ որո՞վհետև է մեղքը , աստ՞ը թէ իր ծնողացը , որ անիկայ
3 կոյր ծնաւ : Պատասխան տուաւ Յիսուս . Ո՛չ աստն է մեղքը , ո՛չ ալ իր ծնողացը . Հապա՝ որ Աս-տուծոյ գործքերը աստ վրայ յայտ-
4 նի ըլլան : Քանի որ ցորեկ է , պէտք է որ զիս խրկողին գործքերը գործեմ . դիշերը կու գայ , որ ան աւուրը մէկը չկրնար գործել :
5 Քանի որ ես աշխարհի մէջ եմ ,
6 աշխարհի լոյսն եմ : Երբոր ասը բսաւ , թքուբաւ գետինը , և թու-քովը կաւ շինեց , ու ան կաւը կոյ-
7 րին աչքերուն վրայ ծեփեց . Եւ բսաւ անոր . Գնա Շլուացուէ Սի-լոամի աւազանին մէջ , (որ Խըր-կուած կը թարգմանուի .) Ուստի գնաց ու լուացուեցաւ , եկաւ ու կը
8 տեսնէր : Իսկ դրացիները՝ և ա-նոնք որ առաջուց տեսած էին զա-նիկայ որ մուրացկան էր , կ'ըսէին . Ասիկայ չէ՞ր որ կը նստէր և կը

Ա Գլ. ը. 31 ;

Ես. խգ. 13 ;

Ոմն՝ Ձեր

Ես. խգ. 18 ;

Ես. խգ. 13 ;

Ես. խգ. 18 ;

Ես. խգ. 13 ;

Ես. խգ. 18 ;

Ես. խգ. 13 ;

Ճամի Տեառն 32

ըսին անոր . Ի՞նչ ըրաւ քեզի .
27 քու աչքերդ ինտո՛ր բացաւ ։ Պատասխան տուաւ անոնց . Հիմա ըսի ձեզի՛ ու չլսեցիք . ինչո՞ւ համար նորէն լսել կ՚ուզէք . միթէ դո՞ւք ալ կ՚ուզէք անոր աշակերտ
28 ըլլալ ։ Անոնք նախատելով զանիկայ՝ ըսին . Դուն ես անոր աշակերտը . իսկ մենք Մովսէսին աշակերտներն ենք ։
29 Մենք գիտենք՝ որ Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ . բայց սա՛ չենք գիտեր թէ ուս-
30 կից է ։ Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց . Ա՛տիկայ է զարմանալու բանը՝ որ դուք չէք գիտեր թէ ուսկից է , և անիկայ
31 իմ աչքերս բացաւ ։ Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ չընէր . բայց թէ որ մէկը աստուածապաշտ ըլլայ , ու անոր կամքը
32 կատարէ , անոր մտիկ կ՚ընէ ։ Աշխարհիս սկիզբէն՝ ի վեր լսուած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը
33 բացած է ։ Եթէ որ Աստուծմէ չըլլար ան մարդը՝ բան մըն ալ չէր
34 կրնար ընել ։ Պատասխան տուին և ըսին անոր . Դուն բոլորովին մեղսոց մէջ ծնած ես , ու մեզի վարդապետութիւն կ՚ընես . և դուրս
35 բրին անիկայ ։ Ցիսուս լսեց որ զանիկայ դուրս բրին , ու երբոր գտաւ զանիկայ՝ ըսաւ անոր . Դուն կը հաւատա՞ս
36 Աստուծոյ Որդիին ։ Անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Տէր
37 ո՞վ է՝ որ հաւատամ անոր ։ Ցիսուս ալ անիկայ , Ե՛ւ քեզի հետ խօսողը ան
38 է ։ Անիկայ ալ ըսաւ . Կը հաւատամ՝ Տէր . ու անոր երկրպա-
39 գութիւն ըրաւ ։ Ցիսուս ըսաւ . Ես դատաստանի համար եկայ աս աշխարհս , որ չտեսնողները տեսնեն , և տեսնողները կուրանան ։
40 Ես փարիսեցիներէն ոմանք որ իր հետ էին , աս բաները լսելով՝ ըսին իրեն . Միթէ մենք ալ կոյր
41 ենք ։ Ցիսուս ըսաւ անոնց . Թէ որ կոյր ըլլայիք , դուք մեղք չէիք ունենար . բայց հիմա կ՚ըսէք թէ կը տեսնենք . ասոր համար ձեր մեղքը չէր վերայ կը մնայ ։

ԳԼ . Ա

1 Փրիսաոս է կենաց դուռը՝ և բարի Հովիւը ։ 19 Հրէից տարբեր կարծիքները անոր վերայով ։ 24 Ցիսուս իր գործերովը կը յայտնէ թէ ինքն է Փրիսաոսը՝ Աստուծոյ Որդին ։ 39 Հրէից ձեռքէն կը փախչի ։ 40 և դարձեալ կ՚երթայ Յորդանանու միւս կողմը , ուր ան շատերը կը հաւատան իրեն ։

1 Ա՛մէն ամէն կ՚ըսեմ ձեզի . Ան որ դռնէն չմտներ ոչխար-

Ճամի Տեառն 32

ներուն բակը , հապա ուրիշ տեղէն կ՚ելլէ , անիկայ գող ու աւազակ
2 է ։ Բայց ան որ դռնէն կը մտնէ , անիկայ ոչխարներուն հովիւն է ։
3 Դռնապանը կը բանայ անոր , և ոչխարները անոր ձայնին կը լսեն , ու իր ոչխարները անուններնին կը կանչէ , և դուրս կը հանէ զանոնք ։
4 Ու երբոր իր ոչխարները կը հանէ , անոնց առջևէն կ՚երթայ , ու ոչխարները իր ետևէն կ՚երթան . ինչու որ անոր ձայնը կը ճանչնան ։
5 Ա՛կայն օտարի ետևէ չեն երթար . հապա անկէ կը փախչին , ինչու որ օտարներուն ձայնը չեն ճանչնար ։
6 Ցիսուս սա առակը բսաւ անոնց . բայց անոնք չէին իմանար թէ ինչ
7 եր որ իրենց կը խօսէր ։ Ես Ցիսուս նորէն բսաւ անոնց . Ճշմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Ես
8 եմ ոչխարներուն դուռը ։ Ամէն անոնք որ ինծմէ առաջ եկան , գող ու աւազակ էին . բայց անոնց չլսե-
9 ցին ոչխարները ։ Ես եմ դուռը . թէ որ մէկը ինծմէ ներս մտնէ՝ պիտի փրկուի , ու պիտի մտնէ ու
10 ելլէ , և արօտ գտնէ ։ Գողը չգար , միայն թէ գողնալու և սպաննելու ու կորսընցընելու համար . Ես եկայ որ կեանք ունենան , և ալ աւելի
11 ունենան ։ Ես եմ բարի Հովիւը . բարի Հովիւը իր կեանքը ոչխար-
12 ներուն համար կը դնէ ։ Բայց վարձկանը որ Հովիւ չէ , ու ոչխարները իրը չեն , երբոր կը տեսնէ գայլը որ կու գայ , ձկը թողու ոչխարները ու կը փախչի . և գայլը կը յափշտակէ ոչխարները , ու զա-
13 նոնք կը ցրուէ ։ Ես վարձկանը կը փախչի , ինչու որ վարձկան է , ու իր հոգը չէ ոչխարներուն հա-
14 մար ։ Ես եմ բարի Հովիւը , և կը ճանչնամ իմիններս , ու կը ճանչ-
15 յուիմ իմիններէս ։ Ինչպէս որ Հայրը զիս կը ճանչնայ , ես ալ Հայրը կը ճանչնամ , ու իմ կեանքս ոչխարներուն համար կը դնեմ ։
16 Ուրիշ ոչխարներ ալ ունիմ , որոնք աս բակէն չեն . անոնք ալ պէտք է որ բերեմ . ու իմ ձայնիս պիտի լսեն , ու պիտի ըլլան մէկ հօտ ու
17 մէկ հովիւ ։ Անոր համար իմ Հայրս զիս կը սիրէ , որ ես իմ կեանքս կը դնեմ , որ նորէն առնեմ
18 անիկայ ։ Մէկը չէ առներ անիկայ ինծմէ , հապա ես կը դնեմ անիկայ ինքիրմէս . իշխանութիւն ունիմ անիկայ դնելու , և իշխանութիւն ունիմ անիկայ նորէն առնելու . Հաս պատուէրը իմ Հօրմէս առի ։
19 Նորէն երկպառակութիւն կ՚ըլլար Հրէից մէջ աս խօսքերուն հա-
20 մար ։ Եւ անոնցմէ շատերը կ՚ը-

Ճամի Տեառն 32

Հ Գլ . ը . 14 ։
Յ Գլ . գ . 10 ։
Ղ Ցոր . իէ . 9 ։ լէ . 12 ։ Սաղ . ժը . 41 ։ լդ . 15 ։ կղ . 18 ։ Առակ . ա . 28 ։ ժէ . 29 ։ իը . 9 ։ Եսա . ա . 15 ։ Երեմ . ժա . 11 ։ ժգ . 12 ։ Եզեկ . ը . 18 ։ Մխ . գ . 4 ։ Զաք . է . 13 ։
Ե Հմր . 16 ։
Ձ Հմր . 2 ։
Յ Մատ . ժգ . 33 ։ ժզ . 16 ։ Մար . ա . 1 ։ Գլ . ժ . 36 ։ ա Ցովհ . ե . 13 ։
Ն Գլ . գ . 26 ։
Շ Գլ . ե . 22 ։ 27 ։ Տես գլ . գ . 17 ։ ժբ . 47 ։
Ո Մատ . ժգ . 13 ։
Չ Հռով . բ . 19 ։
Պ Գլ . ժե . 22 ։ 24 ։

Ա Գլ . ը . 14 ։ Եփես . բ . 18 ։
Բ Ես . խ . 11 ։ Եզեկ . լդ . 12 ։ 23 ։ լէ . 24 ։ Երր . ժգ . 20 ։ ա Պետ . բ . 25 ։ ե . 4 ։
Գ Զաք . ժա . 16 ։ 17 ։
Դ Տիմ . բ . 19 ։
Ե Մատ . ժա . 27 ։
Զ Գլ . ժե . 13 ։
Է Ես . ծգ . 8 ։
Ը Եզեկ . լէ . 22 ։ Եփես . բ . 14 ։ ա Պետ . բ . 25 ։
Թ Ես . ծգ . 7 ։ 8 ։ 12 ։ Երր . բ . 9 ։
Ժ Գլ . բ . 19 ։
Ի Գլ . գ . 38 ։ ժե . 10 ։ Գոր . բ . 24 ։ 32 ։
Լ Գլ . է . 43 ։ Թ . 16 ։

Ցամի Տեառն 32

Ի ԳԼ · է · 20 ։ ը · 48 ։ 52 ։ ‡ Եզ · գ · 11 ։ Սաղ · դդ · 9 ։ Ճխզ · 8 ։ Ցա · Տ · 33 ։ ¦ ԳԼ · թ · 6 · 7 ։ 32 ։ 38 ։ ՀԳոր · գ · 11 ։ է · 12 ։

Յ Հմր 38 ։ ԳԼ · գ · 2 ։ է · 36 ։

Ւ ԳԼ · ը · 47 ։ ա Յօ՚ · դ · 6 ։

* Ո՛՜՜՛՝ ՝՜՜՝՝՝

Ցամի Տեառն 33

կուորեակ կ'բսուէր , բսաւ էր աշա-
կերտակիցներուն . Մենք ալ եր-
թանք՝ որ անոր հետը մեռնինք ։
17 Ցիսուս երբոր եկաւ , գտաւ որ
անիկայ արդէն չորս օրուան գե-
18 րեզմանը դրուած էր ։ Ու Բե-
թանիա՝ երուսաղէմին մօտ էր՝
տասնուհինգ ասպարէզի չափ ։
19 Եւ Հրէաներէն շատերը Մար-
թային ու Մարիամին եկած էին
որ մխիթարեն զանոնք՝ իրենց եղ-
20 բօրը համար ։ Երբ՝ երբոր լսեց
Մարթա թէ Ցիսուս կու գայ ,
զանիկայ դիմաւորելու գնաց . բայց
Մարիամ տանը մէջ նստեր էր ։
21 Եւ Մարթա բսաւ Ցիսուսին . Տէր՝
թէ որ հոս ըլլայիր , իմ եղբայրս
22 չէր մեռներ . Բայց գիտեմ որ հի-
մա ալ ինչ որ խնդրես Աս-
տուծմէ , Աստուած պիտի տայ
23 քեզի ։ Ցիսուս բսաւ անոր . Քու
եղբայրդ յարութիւն պիտի առնէ ։
24 Մարթա բսաւ անոր . Գիտեմ որ
յարութեան ժամանակը՝ վերջին
օրը յարութիւն պիտի առնէ ։
25 Ցիսուս բսաւ անոր . Ես եմ յա-
րութիւնը և կեանքը . Ան որ
ինծի կը հաւատայ , թէև մեռնի՝
26 պիտի ապրի . Եւ ան ամէնը որ
կենդանի է՝ ու ինծի կը հաւատայ ,
յաւիտեան պիտի չմեռնի . Դուն
27 կը հաւատաս ասոր ։ Ըսաւ անոր .
Այո՛ Տէր՝ Ես հաւատացեր եմ՝
որ դուն ես Քրիստոսը Աստուծոյ
Որդին , որ աշխարհ գալու էիր ։
28 Ու երբոր ասը բսաւ , գնաց իր քոյ-
րը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝
ըսելով . Վարդապետը եկեր է՝ ու
29 քեզ կը կանչէ ։ Անիկայ լսածին
պէս՝ շուտ մը ելաւ ու եկաւ անոր ։
30 Իսկ Ցիսուս դեռ գեղը եկած չէր .
Հապա ան տեղն էր , ուր որ Մար-
31 թա զանիկայ դիմաւորեց ։ Բայց
Հրէաները որ անոր հետը տանը
մէջն էին՝ ու կը մխիթարէին զա-
նիկայ , երբոր տեսան որ Մարիամ
շուտ մը ելաւ ու գնաց , Հետ-
անոր եռեւէն գացին , ըսելով թէ
Գերեզմանը կ'երթայ՝ որ հոն տեղը
32 լայ ։ Իսկ Մարիամ երբոր Ցի-
սուսին եղած տեղը եկաւ , ու զա-
նիկայ տեսաւ , անոր ոտքը իյնա-
լով բսաւ անոր . Տէր՝ թէ որ հոս
ըլլայիր , իմ եղբայրս չէր մեռներ ։
33 Ցիսուս երբոր տեսաւ անիկայ որ
կու լար , և անոր հետ եկող Հրէ-
աները որ կու լային , իր հոգւոյն
34 մէջ հառաչեց ու խռովեցաւ , Եւ
բսաւ . Ո՞ւր դրած էք անիկայ .
բսին իրեն . Տէր՝ եկուր ու տես ։
35 Ցիսուս լացաւ ։ (36) Ուստի
Հրէաները կ'բսէին . Նայեցէք
37 որչափ կը սիրէր զանիկայ ։ Ա-
նոնցմէ ոմանք ալ կ'բսէին . Ատի-
կայ Աղոր կոյրին աչքերը բացաւ ,
չէր կրնար ընել՝ որ ասս ալ չմեռ-
38 նէր ։ Ցիսուս նորէն իր հոգւոյն մէջ
հառաչելով՝ գերեզմանը կու գայ .
և անիկայ քարայր մըն էր , ու անոր
39 վրայ քար մը դրուած էր ։ Ցիսուս
բսաւ . Վերցուցէք մեռելին քոյրը Մարթան բսաւ ա-
նոր . Տէր՝ արդէն հոտած պիտի
ըլլայ , ինչու որ չորս օրուան է ։
40 Ըսաւ անոր Ցիսուս . Քեզի չըսի՞
որ՝ եթէ հաւատաս , Աստուծոյ
41 փառքը պիտի տեսնես ։ Ուս-
տի՝ մեռելը վերցուցին . Եւ Ցի-
սուս իր աչքերը վեր վերցուց ու
բսաւ . Հայր՝ շնորհակալ եմ քեզ-
42 մէ , որ ինծի լսեցիր ։ Ու ես գի-
տէի որ ամէն ատեն ինծի կը լսես .
Բայց աս բոլորտիքս կայնող ժո-
ղովուրդին համար բսի , որ հաւա-
43 տան թէ դուն խրկեցիր զիս ։ Եւ
աս բսելէնետքը , մեծ ձայնով մը
կանչեց . Ղազարոս դուրս եկուր ։
44 Մեռելն ալ ելաւ ոտքերը ու ձեռ-
քերը պատանքով կապած , և ե-
րեսը վարշամակով պատած . Ցի-
սուս բսաւ անոնց . Արձրկեցէք
ատիկայ , ու թողէք որ երթայ ։
45 Եւ Հրէաներէն շատերը որ Մա-
րիամին եկեր էին , երբոր Ցի-
սուս բրածը տեսան , հաւատացին
46 իրեն ։ Բայց անոնցմէ ոմանք գա-
ցին փարիսեցիներուն , ու Ցիսուսի
բրածը անոնց պատմեցին ։
47 Ուստի Քահանայապետները և
փարիսեցիները ժողով գումարեցին
ու բսին . Ի՞նչ ընենք , քանզի աս
48 մարդը շատ հրաշքներ կ'ընէ ։ Եթէ
որ անիկայ ասանկ թող տանք , ա-
մէնքն ալ անոր պիտի հաւատան ,
և Հռովմայեցիք պիտի գան՝ ու մեր
տեղը ու ազգը պիտի վերցնեն ։
49 Եւ անոնցմէ մէկը Կայիափա ա-
նուն՝ որ ան տարւոյն քահանա-
յապետն էր , բսաւ անոնց . Դուք
50 բան մը չէք գիտեր ։ Ու չէք ալ
խորհիր , թէ աղէկ է մեզի՝ որ մէկ
մարդ մը ժողովուրդին համար մեռ-
51 նի , ու բոլոր ազգը չկորսուի ։ Բայց
աս բանը չէ թէ ինքիրմէն գրու-
ցեց , հապա ան տարւոյն քահա-
նայապետը ըլլալով , մարգարէա-
ցաւ՝ թէ Ցիսուս ազգին համար
52 պիտի մեռնէր . Ընդ չէ թէ միայն ազգին համար , հապա որ Աստու-
ծոյ ցիրուցան եղած որդիները ալ
մէկտեղ ժողվէ ։
53 Ուստի ան օրէն եռեւ խորհուրդ բրին
54 որ սպաննեն զանիկայ ։ Ուստի
Ցիսուս անկէետքը համարձակ չէր
պտրտիր Հրէից մէջ , հապա ան-
կէ անապատին մօտ տեղ մը գնաց ,

Ցամի Տեառն 33

ՂԳԼ · Թ · 6 ։

ՀՀԳՐ 4 · 23 ։

ՂԳԼ · ԺԲ · 30 ։

ՂԳԼ · Բ · 23 ։ Ժ · 42 ։ ԺԲ · 11 · 18 ։

ՂԱԳ · Բ · 2 ։ ՄԱՒ · ԻԶ · 3 ։ ՄԱՐ · Ժ · 1 ։ ՂՈՒ · ԻԲ · 2 ։

ՂԳԼ · ԺԲ · 19 ։ ԴԱՆ · Գ · 16 ։

ՂՂՈՒ · Գ · 2 ։ ԳԼ · Ժ · 14 ։ ԴԱՆ · Գ · 6 ։

ՂԳԼ · ԺԲ · 14 ։

Ը ԵՒ · ԽԹ · 6 ։ Ա ՑՕՀ · Բ · 2 ։

ՂԳԼ · Ժ · 16 ։ ԵՓՍ · Բ · 14 · 15 · 16 · 17 ։

ՂԳԼ · Գ · 1 · 3 · Է · 1 ։

ՀՏես ր Մն. ժգ · 19 ։
ԳԼ · բ · 13 ։ ե · 1 ։ է · 4 ։
բՀԺր 8 ։

մէկ քաղաք մը՝ որուն անունը Եփրայիմ էր . ու իր աշակերտնե-
բուն հետ հոն կը կենար ։
55 Եւ Հրէից զատիկը մօտ էր , ու
ան տեղէն շատ մարդիկ զատկէն
առաջ Երուսաղէմ ելան , որ ինք-
56 զիրենին մաքրեն . Եւ կը փնտռէին
Յիսուսը , ու տաճարին մէջ կեցած
ատեններին իրարու կ՚ըսէին . Ձեզի
ի՞նչպէս կ՚երեւնայ , Թէ — տօնին
բնաւ պիտի չգայ ։ Իսկ քահանա-
յապետները ու փարիսեցիները պա-
տուէր տուեր էին , որ եթէ մէկը
գիտնայ անոր ուր տեղ ըլլալը՝ ի-
մացընէ , որ անիկայ բռնեն ։

ԳԼ · ԺԲ

1 Յիսուս կը գովէ Մարիամը՝ որ իր ոտքը օծեց ։ 9 Ժողովուրդը կու գայ Ղազարոսը տեսնելու ։ 10 Քահանայապետները խորհուրդ կ՚ընեն զա-
նիկայ սպաննելու ։ 12 Հրիամոս իշւոյ վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ ։ 20 Քանի մը Ցոյներ կը ցանկան զինքը տեսնելու ։ 23 Քրիստոս իր մահը կը նախատայէ ։ 37 Հրէից կուրութիւնը ։ 42 Իշխաններէն շատերը կը հաւատան Յիսուսին , բայց փարիսեցիներէն վախնալով՝ զանիկայ չեն դաւանիր ։

1 Իսկ Յիսուս զատկէն վեց օր առաջ Բեթանիա եկաւ , ուր էր Ղա-
զարոս՝ մեռեալը , որն որ Յ[illegible]
2 մեռելներէն յարուց ։ Եւ հոն ա-
նոր ընթրիք մը ըրին . ու Մարթա
սպասաւորութիւն կ՚ընէր , և Ղա-
զարոս անոր հետ սեղան նստողնե-
3 րուն մէկն էր ։ Իսկ Մարիամ մէկ
լիտր նարդոսի պատուական մեծա-
գին եղ առնելով , Յիսուսի ոտ-
քերը օծեց , ու իր մազերովը անոր
ոտքերը սրբեց . և տունը եղին
անուշահոտութեամբը լեցուեցաւ .
4 Ըն աշակերտներուն մէկը
Իսկարիովտացի Սիմոնեան Յու-
դան՝ որ զանիկայ պիտի մատներ ,
5 ըսաւ . Ինչո՞ւ համար այս եղը չը-
ծախուեցաւ իրեք հարիւր դահեկա-
նի , որ աղքատներուն տրուէր ։
6 Ան ըսաւ , չէ Թէ աղքատներուն
համար իր հոգն էր , հապա որ գող
էր , ու գանձանակը ինքը կը պա-
հէր , և ինչ որ ձգուէր՝ ինքը կը
7 կրէր ։ Իսկ Յիսուս ըսաւ . Թող
տուր ատոր . այս բանը իմ պա-
տանկրուելուս օրուանը համար պա-
8 հեց ։ Վասն զի աղքատները ամէն
ատեն ձեր հետ ունիք , բայց ինս
ամէն ատեն չունիք ։
9 Ուստի Հրէաներէն շատ ժողո-
վուրդ անոր հոն ըլլալը իմացան .
ու եկան , չէ Թէ մինակ Յիսուսի
համար , հապա որ Ղազարոսն ալ
տեսնեն , Ղորն որ մեռելներէն յա-
10 րուց ։ Իսկ քահանայապետները
խորհուրդ ըրին՝ որ Ղազարոսն ալ
11 մեռցընեն . Ընչու որ Հրէաներէն
շատերը անոր պատճառովը կ՚եր-
թային ու կը հաւատային Յիսու-
սին ։
12 Յետեւեալ օրը շատ ժողովուրդ՝
որ տօնին եկած էին , երբոր լսեցին
Թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ ,
13 Արմաւենիի ոստեր առին , ու ե-
լան զանիկայ դիմաւորելու , և կ՚ա-
ղաղակէին . Ովսաննա՝ օրհնեալ է
Իսրայէլի Թագաւորը՝ որ Տէրոջը
14 անունովը կու գայ ։ Եւ Յիսուս
աւանակ մը գտնելով՝ անոր վրայ
նստաւ , ինչպէս որ գրուած է .
15 Մի վախնար օվ Սիօնի աղջիկ .
ահա քու Թագաւորդ կու գայ իշու-
16 աւանակի վրայ նստած ։ Եւ անոր
աշակերտները առաջ չհմացան աս
բաները . Բայց երբոր Յիսուս փա-
ռաւորուեցաւ , ետքն անոնք միտքեր-
նին բերին , Թէ աս բաները անոր
համար գրուած էր , և Թէ [illegible] աս
17 բաները ըրին անոր ։ Եւ իր հետը
եղող ժողովուրդը վկայութիւն կու
տար , Թէ Ղազարոսը գերեզմանէն
դուրս կանչեց , ու մեռելներէն յա-
18 րուց զանիկայ ։ Ասոր համար ալ
ժողովուրդը զանիկայ դիմաւորեց .
վասն զի լսեցին Թէ անիկայ աս
19 հրաշքը ըրած էր ։ Իսկ փարիսե-
ցիները իրարու կ՚ըսէին . Կը տես-
նէք որ օգուտ մը չէք [illegible]ներ ընել .
ահա [illegible]ը աշխարհ անոր ետեւէն
գնաց ։
20 Եւ հոն Հրեաներէն մի քանի Ցոյներ կային
տօնին երկրպագութիւն ընելու
21 եկողներուն մէջ ։ Ասոնք Փիլիպպո-
սին եկան [illegible]որ ինքը Գալիլեայի
Բեթսայիդայէն էր , և կ՚աղաչէին
անոր ու կ՚ըսէին . Տէր՝ կ՚ուզենք
22 Յիսուսը տեսնել ։ Փիլիպպոս ե-
կաւ՝ ու Անդրէասին ըսաւ . և Նո-
րէն Անդրէաս ու Փիլիպպոս [illegible]
23 Յիսուսին ըսին ։ Յիսուս ալ պա-
տասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ .
Ժամանակը հասաւ , որ փառաւո-
24 րուի Որդին մարդոյ ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Եթէ որ
ցորենին հատը հողին մէջ իյնալով
25 չմեռնի , ինքը մինակ կը մնայ .
հապա Թէ մեռնի , շատ ար-
դիւնք կը բերէ ։ Ան որ իր անձը
կը սիրէ , պիտի կորսընցընէ զանի-
կայ . և ան որ իր անձը աս աշ-
խարհիս մէջ կ՚ատէ , յաւիտենա-
կան կենաց համար պիտի պահէ զա-
26 նիկայ ։ Թէ որ մէկը ինծի կը
ծառայէ , Թող իմ ետեւէս գայ .
ու ես ուր որ եմ , իմ ծառան ալ
հոն պիտի ըլլայ . Թէ որ մէկը ին-
ծի կը ծառայէ , Հայրը պիտի պա-
27 տուէ զանիկայ ։ Հիմա իմ հոգիս
խռոված է . և ի՞նչ ըսեմ , Թէ
Հայր՝ զիս ազատէ աս ժամէն .
Բայց ես ասոր համար եկայ աս

Մատ . խ . 8 ։ Մար . ժա . 8 ։ Ղու . ժթ . 35 , 36 , ԸԱ ։
Ա Սաղ . ՃԺը . 25 , 26 ։
Ա Մատ . խ . 7 ։
Զաք . թ . 9 ։
Ե Ղու . ժը . 34 ։
Ե ԳԼ . է . 39 ։
Կ ԳԼ . ժգ . 26 ։
Հ ՀԺր 11 ։
Յ ԳԼ . ժա . 47 , 48 ։
Ղ Գոր . ժէ . 4 ։
Ճգ Թագ . բ . 41 . 42 ։ Գոր ը . 27 ։
Ր ԳԼ . ա . 44 ։
Ն ա Կոր . ժե . 36 ։
Ա Մատ . ժ . 39 ։ ժգ . 25 ։ Մար . բ . 35 ։ Ղու . թ . 24 ։ ժէ . 33 ։
Ա ԳԼ . ժգ . 3 ։ ժէ . 24 ։ ա Թես . գ . 16 ։
Ա Մատ . իզ . 38 , 39 ։ Ղու . ժբ . 50 ։ ԳԼ . ժգ . 21 ։
Ղ Ղու . իր . 53 ։ ԳԼ . ժբ . 37 ։

Ցամի Տեառն 33

28 ժամին ։ Հայր՝ փառաւորէ քու ա-
նունդ . Եան առնեն ձայն մը եկաւ
երկինքէն . Փառաւորեցի ալ , ու
29 նորէն պիտի փառաւորեմ ։ Եւ
ժողովուրդը որ կայներ էր ու կը
լսէր , կ'ըսէին՝ Որոտաց կ'ըլլայ .
ոմանք ալ կ'ըսէին՝ Հրեշտակ խօ-
30 սեցաւ իրեն հետ ։ Ցիսուս պա-
տասխան տուաւ ու ըսաւ . Ոչ
ձայնը ինծի համար չեկաւ , հապա
31 ձեզի համար ։ Հիմա է աս աշ-
խարհիս դատաստանը , հիմա աս
աշխարհիս իշխանը դուրս պիտի
32 ձգուի ։ Ես ալ երբոր երկրէն
բարձրանամ , ամէնն ալ ինծի
33 պիտի քաշեմ ։ Աս բանս կը զրու-
ցէր՝ իմացընելով թէ ինչ կերպ մա-
34 հով պիտի մեռնէր ։ Ժողովուրդը
անոր պատասխանեց . Մենք օրէն-
քէն լսեցինք՝ որ Քրիստոսը յաւի-
տեան կը մնայ , և դուն ինչո՞ր
կ'ըսես թէ պէտք է Որդին մարդոյ
բարձրանայ . ո՞վ էատ Որդին մար-
35 դոյ ։ Եւ Ցիսուս անոնց ըսաւ . Քիչ
մը ատեն ալ լոյսը ձեր հետն է .
Քանի որ լոյսը ունիք՝ քալեցէք ,
որ չըլլայ թէ մութը ձեր վրայ հաս-
նի . Ինչու որ խաւարի մէջ քալողը
36 չգիտեր թէ ուր կ'երթայ ։ Քանի
որ լոյսը ունիք , հաւատացէք ան
լոյսին՝ որ լուսոյ որդիք ըլլաք .
Ցիսուս աս բաները զրուցեց , ու
դնաց և պահուեցաւ անոնցմէ ։
37 Եւ թէպէտ այնքան հրաշքներ
բրած էր անոնց առջեւը , ըս-չյ ա-
38 նոնք չէին հաւատար իրեն . Որ
կատարուի Եսայի մարգարէին խօս-
քը , որ ըսաւ . Տէր՝ ո՞վ հաւա-
տաց մեր տուածին , ու Տէրոջը
39 բազուկը որո՞ւ յայտնուեցաւ ։ Ա-
նոր համար չէին կրնար հաւատալ ,
40 որ դարձեալ կ'ըսէ Եսայի . Ընոնց
աչքերը կուրցուց , և անոնց սիր-
տերը թմրեցուց , որ չըլլայ թէ
աչքովնին տեսնեն , ու սրտովնին
իմանան , և դարձի գան , ու ես
41 անոնք բժշկեմ ։ Ասիկա Ըսաւ
Եսայի՝ երբոր տեսաւ անոր փառ-
քը , ու խօսեցաւ անոր վրայով ։
42 Այսու ամենայնիւ իշխաններէն ալ
շատերը իրեն հաւատացին . Բայց
փարիսեցիներուն համար զանիկայ
չէին դաւաներ , որ ժողովարանէն
43 դուրս չհանուին . Ինչու որ մարդոց
փառքը Աստուծոյ փառքէն աւելի
սիրեցին ։
44 Իսկ Ցիսուս կ'աղաղակէր ու կ'ը-
սէր . Ով որ ինծի կը հաւատայ՝
ինծի չհաւատար , հապա զիս խրր-
45 կողին . Ու եւ ան որ զիս կը տեսնէ ,
46 զիս խրկողը կը տեսնէ ։ Ես լոյս
եկայ աշխարհ , որ ամէն ով որ
ինծի հաւատայ , խաւարի մէջ չը-
47 մնայ ։ Եւ թէ որ մէկը իմ խօսքերս
լսէ՝ ու չհաւատայ , Ես անիկայ
չեմ դատեր . Քանզի ես չեկայ որ
աշխարհը դատեմ , հապա որ աշ-
48 խարհը փրկեմ ։ Ով որ զիս կ'ա-
նարգէ , և իմ խօսքերս չընդունիր ,
կայ մէկը որ զանիկայ կը դատէ .
Եան խօսքը որ ես խօսեցայ , ան
պիտի դատէ զանիկայ վերջին օրը ։
49 Ինչու որ Ես ինքիրմէս չխօսեցայ .
Հապա Հայրը՝ որ զիս խրկեց , ին-
քը ինծի պատուիրեց Ի՞նչ որ պի-
տի ըսեմ՝ և ինչ որ պիտի խօսիմ ։
50 Եւ գիտեմ՝ որ անոր պատուիրածը
յաւիտենական կեանք է . ուստի
ինչ որ ես կը խօսիմ , ինտոր որ
Հայրը ինծի ըսաւ , անանկ կը խօ-
սիմ ։

ԳԼ . ԺԳ

1 Ցիսուս իր աշակերտներուն ոտքերը կը լուայ , յորդորելով զանոնք որ խոնարհութեամբ և սիրով վարուին իրարու հետ . 18 կը նախաձայնէ Յուդային դիւրը մատնելը , և մէկ նշանով մը մատնիչին ով ըլլալը կը յայտնէ Յովհաննէսին . 31 կը պատուիրէ իր աշակերտներուն մէկզմէկ սիրել , 36 և կ'իմացընէ Պետրոսին՝ թէ պիտի ուրանայ զինքը ։

1 Օ՞ատկի տօնէն առաջ՝ Ցիսուս
դիտնալով թէ Իր ժամանակը կը հասեր է՝ որ աս աշխարհէս ելլէ
Հօրը քովը , սիրելով իրենները որ
աշխարհի մէջ էին , մինչև վերջն
ալ սիրեց զանոնք ։
2 Եւ ընթրիքը որ կ'ըլլար , (Սա-
տանան արդէն խակարիովտացի Սի-
մոնեան Յուդային սրտին մէջը դր-
3 րեր էր , որ զանիկայ մատնէ .) Ցի-
սուս դիտնալով թէ Հայրը ամէն
բան իր ձեռքը տուաւ , և թէ ին-
քը Աստուծմէ ելաւ՝ ու Աստուծոյ
4 քովը կ'երթայ , Ընթրիքէն ելաւ ,
և հանդերձները մէկդի դրաւ , ու
ղէնջակ մը առնելով մէջքը փաթ-
5 թեց ։ Ետքը կոնքին մէջ ջուր լե-
ցուց , ու սկսաւ աշակերտներուն
ոտքերը լուալ , և ան իր փաթ-
6 թուած ղէնջակովը սրբել ։ Ուս-
տի եկաւ Սիմոն Պետրոսին . ան
ալ ըսաւ անոր . Տէր՝ Դուն իմ
7 ոտքերս պիտի լուաս ։ Ցիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոր . Ես ինչ որ կ'ընեմ՝ դուն հի-
մա չես իմանար , Հապա ետքը պի-
8 տի իմանաս ։ Պետրոս ըսաւ անոր .
Բնաւ դուն իմ ոտքերս պիտի չը-
լուաս . պատասխան տուաւ անոր
Ցիսուս . Թէ որ քեզ չլուամ ,
դուն ինծի հետ բաժին չունիս ։
9 Սիմոն Պետրոս ըսաւ անոր . Տէր՝
չէ՛ թէ մինակ ոտքերս , հապա նաև
10 ձեռքերս ու գլուխս ։ Ցիսուս ը-
սաւ անոր . Լուացուածին՝ ոտքերը
լուալէն՝ի զատ ուրիշ բան պէտք
չէ , այլ բոլորովին մաքուր է . և

Ցամի Տեառն 33

Ը Գլ . ե . 45 ։
ը . 15 . 26 ։
Ա Գլ . գ . 17 ։
Ի Գղ . ժ . 16 ։

Ղ Օր . ժը . 19 ։ Մաթ . ժգ . 16 ։
Ի Գլ . ը . 38 ։ ժգ . 10 ։
Ծ Օր . ժը . 18 ։

Մատ . իգ . 2 ։
Բ Գլ . ժը . 23 ։ ժէ . 1 . 11 ։

12 Այդ ատենները Հերովդէս թագաւորը ձեռք արկաւ եկեղեցիին ոմանց չարչարելու ։ 2 Ու Յովհաննէսի եղբայր Յակոբոսը սուրով սպաննեց ։ 3 Ու տեսնելով որ Հրեաները կը հաճին՝ աւելցուց որ Պետրոսն ալ բռնէ ։ Ան ատեն խմորեղէնի տօներն էին ։ 4 Ուստի զանիկայ բռնեց և բանտը դրաւ՝ չորս չորեքհոգի զինուորներու պահպանութեան յանձնելով , մտադրելով որ զատկէն ետքը ժողովուրդին առջեւ հանէ զայն ։ 5 Ուստի Պետրոս բանտին մէջ պահուեցաւ ։ Բայց եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ համար անոր վրայ ։ 6 Ու երբոր Հերովդէս զանիկայ հանելու էր , այդ գիշեր Պետրոս երկու զինուորներուն մէջ երկու շղթայով կապուած կը քնանար , և դռնապանները դրան առջեւ բանտը կը պահպանէին ։ 7 Ահա Տէրոջ հրեշտակը յանկարծ հոն կայնեցաւ , և լոյս մը սենեակին մէջ փայլեցաւ ։ Ան ալ Պետրոսի կողը զարնելով՝ զանիկայ արթնցուց՝ ըսելով . Արագ ելի՛ր ։ Ու շղթաները ձեռքերէն ինկան ։ 8 Հրեշտակը ըսաւ անոր . Գօտիդ կապէ՛ և կօշիկներդ հագի՛ր ։ Ան ալ այնպէս ըրաւ ։ Ու ըսաւ անոր . Վերարկուդ հագի՛ր և իմ ետեւէս եկո՛ւր ։ 9 Ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց , և չգիտցաւ թէ հրեշտակին ընելիքը իրական է , հապա կարծեց թէ տեսիլք մը կը տեսնէ ։ 10 Ու առաջին և երկրորդ պահակատունը անցնելէ ետքը՝ երկաթէ դուռը եկան որ դէպի քաղաքը կը տանի , որ ինքզինքմէ բացուեցաւ անոնց ։ Ու դուրս ելլելով՝ մէկ փողոց մը անցուցին , և անմիջապէս հրեշտակը անկէ հեռացաւ ։ 11 Ու Պետրոս ինքզինքը գտնելով՝ ըսաւ . Հիմա գիտցայ ճշմարտապէս թէ Տէրը իր հրեշտակը ղրկեց և զիս Հերովդէսի ձեռքէն ազատեց , և Հրեայ ժողովուրդին ամբողջ սպասածէն ալ ։ 12 Ու մտածելով՝ եկաւ Յովհաննէս Մարկոս մականունով Մարիամ մայրիկին տունը , ուր շատեր ժողովեալ աղօթք կ'ընէին ։ 13 Ու երբոր դրան դուռը զարկաւ՝ աղախին մը՝ Հռոդէ անունով , եկաւ որ լսէ ։ 14 Ու Պետրոսի ձայնը ճանչնալով՝ ուրախութենէն դուռը չբացաւ , հապա ներս վազելով՝ պատմեց թէ Պետրոս դրան առջեւ կայնած է ։ 15 Անոնք ալ ըսին անոր . Խելագա՛ր ես դուն ։ Բայց ան կը հաստատէր թէ այդպէս է ։ Անոնք ալ կ'ըսէին . Անոր հրեշտակն է ։ 16 Բայց Պետրոս կը շարունակէր զարնել ։ Ուստի բանալով՝ զանիկայ տեսան , և զարմացան ։ 17 Ան ալ ձեռքով նշան ընելով անոնց որ լռեն , պատմեց անոնց թէ ինչպէս Տէրը զինքը բանտէն հանեց ։ Ու ըսաւ . Յակոբոսին և եղբայրներուն պատմեցէ՛ք այս ։ Ու ելաւ ուրիշ տեղ մը գնաց ։ 18 Առտուն զինուորներուն մէջ մեծ խռովութիւն եղաւ , թէ Պետրոսին ինչ եղաւ ։ 19 Հերովդէս զանիկայ փնտռելով՝ չգտաւ , հարցուփորձ ըրաւ պահակներուն , և հրամայեց որ տանին զանոնք ։ Ու Հրէաստանէն Կեսարիա իջաւ , և հոն կեցաւ ։

20 Հերովդէս Տիւրոսի և Սիդոնի մարդոց բարկացեր էր ։ Ուստի անոնք միաբանութեամբ անոր եկան , և Բղաստոս որ թագաւորին սենեկապետն էր՝ համոզելով՝ խաղաղութիւն խնդրեցին , վասն զի անոնց երկիրը թագաւորին երկրէն կը պարէնաւորուէր ։ 21 Ուստի Հերովդէս որոշեցուած օրը թագաւորական զգեստներ հագաւ , աթոռին վրայ նստաւ և ժողովուրդին առջեւ ճառ մը ըրաւ ։ 22 Ու ժողովուրդը պոռաց . Աստուծոյ ձայն է , և ոչ մարդոյ ։ 23 Ան ատեն Տէրոջ հրեշտակը զարկաւ զանիկայ , վասն զի Աստուածը չփառաւորեց ։ Ու որդալեալ մեռաւ ։ 24 Բայց Աստուծոյ խօսքը կը մեծնար և կը տարածուէր ։ 25 Ու Բառնաբաս և Սաւուղ Երուսաղէմէն դարձան , երբոր իրենց ծառայութիւնը կատարեցին , և Յովհաննէս Մարկոս մականունով առին հետերնին ։

13 Անտիոքիոյ եկեղեցիին մէջ կային մարգարէներ և վարդապետներ , Բառնաբաս , Սիմոն որ Նիգեր կը կոչուէր , Լուկիոս կիւրենացի , Մանայէն որ Հերովդէս չորրորդապետին հետ սնած էր , և Սաւուղ ։ 2 Ու երբոր Տէրոջը կը պաշտէին և կ'ծոմապահէին , Հոգին ըսաւ . Ինծի համար զատեցէ՛ք Բառնաբասն ու Սաւուղը՝ զանոնք կանչած գործին համար ։ 3 Ուստի ծոմապահելէ և աղօթելէ ետքը՝ ձեռքերը անոնց վրայ դնելով՝ զանոնք արձակեցին ։

4 Ուրեմն անոնք Հոգւոյն Սրբոյ ղրկուելով՝ Սելեւկիա իջան , և անկէ նաւով Կիպրոս գացին ։ 5 Ու Սաղամինա հասնելով՝ Հրեաներուն ժողովարանները Աստուծոյ խօսքը կը քարոզէին ։ Ունէին նաև Յովհաննէս իբրեւ սպասաւոր ։ 6 Ու ամբողջ կղզին անցնելով՝ Պափոս հասան ։ Հոն կախարդ մը գտան , սուտ մարգարէ Հրեայ մը՝ որուն անունը Բարեհիսուս էր ։ 7 Ան Սերգիոս Պօղոս տեղապահին հետ էր , որ խելացի մարդ էր ։ Ան Բառնաբասն ու Սաւուղը կանչել տուաւ , և Աստուծոյ խօսքը լսել ուզեց ։ 8 Բայց Եղիմաս կախարդը (որովհետև անոնց անունը այսպէս կը թարգմանուի) անոնց կը դիմադրէր՝ տեղապահը հաւատքէն դարձնել ուզելով ։ 9 Ան ատեն Սաւուղ որ նաև Պօղոս է՝ Սուրբ Հոգիով լեցուելով՝ անոր նայեցաւ 10 և ըսաւ . Ո՛վ դուն՝ որ ամէն նենգութեան և ամէն չարութեան լեցուն ես , սատանայի որդի , ամէն արդարութեան թշնամի , չե՞ս դադրիր Տէրոջ ուղիղ ճամբաները խեղդելէ ։ 11 Հիմա ահա Տէրոջ ձեռքը քեզի վրայ է , և կուրանաս՝ արեւը մինչեւ ատենը չտեսնելով ։ Ան ատեն մէգ մը և խաւարում մը անոր վրայ ինկաւ , և շրջապատ փնտռելով՝ մարդիկ կը գտնէր որ ձեռքը առնեն ։ 12 Ան ատեն տեղապահը եղածը տեսնելով՝ հաւատաց , զարմանալով Տէրոջ վարդապետութեան վրայ ։

13 Ու Պափոսէն նաւով ելլելով՝ Պօղոս և անոր հետերը եղողները Պերգէ Պամփիլիոյ եկան ։ Բայց Յովհաննէս անոնցմէ բաժնուելով՝ Երուսաղէմ դարձաւ ։ 14 Ու անոնք Պերգէէն անցնելով՝ Անտիոքիա Պիսիդիոյ եկան ։ Ու շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝ նստան ։ 15 Ու Օրէնքէն և մարգարէներէն կարդալէ ետքը՝ ժողովարանին պետերը անոնց ղրկեցին՝ ըսելով . Եղբայրնե՛ր , եթէ ժողովուրդին համար խրատական խօսք մը ունիք՝ ըսեցէ՛ք ։ 16 Ան ատեն Պօղոս ելաւ , ձեռքով նշան ընելով ըսաւ . Իսրայէլացի՛ մարդիկ և Աստուածավախնե՛ր , լսեցէ՛ք ։ 17 Իսրայէլի այս ժողովուրդին Աստուածը մեր հայրերը ընտրեց , և ժողովուրդը Եգիպտոսի երկրին մէջ բարձրացուց , և բազուկը բարձրացուցած՝ անկէ հանեց զանոնք ։ 18 Ու քառասուն տարի չափ անապատին մէջ անոնց վարուեցաւ ։ 19 Ու Քանանայ երկրին մէջ եօթը ազգեր կորսնցնելով՝ անոնց երկիրը իրենց ժառանգութիւն տուաւ ։ 20 Ասոնք ամէնը մօտաւորապէս չորս հարիւր հնգասուն տարուան մէջ եղաւ ։ Ու անոնցմէ ետքը մարգարէ Սամուէլի ատենները մինչեւ հիմա դատաւորներ տուաւ ։ 21 Ու անկէ ետքը թագաւոր խնդրեցին , և Աստուած Կիսի որդի Սաւուղ մը տուաւ՝ Բենիամինի ցեղէն , քառասուն տարի չափ ։ 22 Ու զանիկայ վերցնելով՝ Դաւիթ անոնց թագաւոր կանգնեց , որուն վկայեց ըսելով . Գտայ զԴաւիթ Յեսսեի որդին՝ իմ սրտիս համեմատ մարդ մը , որ իմ ամէն կամքերս պիտի կատարէ ։ 23 Ասոր սերունդէն Աստուած՝ խոստացածին պէս , Յիսուս Իսրայէլի համար Փրկիչ մը հանեց ։ 24 Անոր գալուստէն առաջ Յովհաննէս Իսրայէլի ամբողջ ժողովուրդին ապաշխարութեան մկրտութիւն քարոզեց ։ 25 Ու Յովհաննէս իր վազքը լրացնելու վրայ էր , երբոր կ'ըսէր . Ո՞վ կը կարծէք որ եմ ես ։ Ես չեմ ան ։ Բայց ահա ան կու գայ ետեւէս , որուն կօշիկներուն կապերը արձակելու արժանի չեմ ։ 26 Եղբայրնե՛ր , Աբրահամի ազգի որդիներ , և ձեզմէ Աստուածավախները , մեզի այս փրկութեան խօսքը ղրկուեցաւ ։ 27 Վասն զի Երուսաղէմի բնակիչները և անոնց իշխանները , զանիկայ և մարգարէներուն ձայները չճանչնալով՝ որ ամէն շաբաթ օր կը կարդացուին , դատապարտելով կատարեցին ։ 28 Ու մահուան արժանի ոեւէ պատճառ չգտնելով՝ Պիղատոսէն խնդրեցին որ սպաննուի ։ 29 Ու անոր վրայ գրուածները կատարելէ ետքը՝ զանիկայ խաչէն վար առին , և գերեզման դրին ։ 30 Բայց Աստուած զանիկայ մեռելներէն յարուցանելով՝ 31 շատ օրեր երեւցաւ անոնց որ Գալիլեայէն Երուսաղէմ հետը ելեր էին , որոնք այժմ անոր վկաներն են ժողովուրդին առջեւ ։ 32 Ու մենք ձեզի կը քարոզենք այն խոստումը որ հայրերուն եղաւ , 33 թէ Աստուած զայն մեր զաւակներուն կատարեց՝ Յիսուսը յարուցանելով , ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է . Դո՛ւ ես իմ Որդիս , ես այսօր ծնայ զքեզ ։ 34 Ու զանիկայ մեռելներէն յարուցանելով՝ որ ալ չդառնայ փտութեան , այսպէս ըսաւ . Ես Դաւիթին սրբութիւնները հաւատարմութեամբ պիտի տամ քեզի ։ 35 Ուստի ուրիշ տեղ ալ կ'ըսէ . Քու Սուրբդ չես տար որ փտութիւն տեսնէ ։ 36 Վասն զի Դաւիթ իր սերունդին ժամանակ ծառայելէ ետքը՝ Աստուծոյ կամքովը քնացաւ , հարեւանցիներուն մօտ դրուեցաւ , և փտութիւն տեսաւ ։ 37 Բայց զոր Աստուած յարուցանեց՝ փտութիւն չտեսաւ ։ 38 Ուրեմն գիտցէ՛ք , եղբայրնե՛ր , որ ասոր միջոցով ձեզի կը քարոզուի մեղքերու թողութիւն , 39 և ամէն բանէ որ Մովսէսի Օրէնքովը չկրցաք արդարանալ՝ ասոր միջոցով ամէն հաւատացեալ կ'արդարանայ ։ 40 Ուրեմն զգուշացէ՛ք որ մարգարէներուն ըսածը չգայ ձեզի վրայ ։ 41 Ահա՛ , դուք արհամարհողնե՛ր , զարմացէ՛ք և կորսուեցէ՛ք , վասն զի ձեր օրերուն մէջ գործ մը կ'ընեմ , գործ մը որ չպիտի հաւատաք եթէ մէկը ձեզի պատմէ ։ 42 Ու անոնք դուրս ելլելուն՝ ժողովուրդը խնդրեց որ հաջորդ շաբաթ օրն ալ այս խօսքերը իրենց ըսուին ։ 43 Ժողովարանը ցրուելէ ետքը՝ շատ Հրեաներ և Հրեայութենէ դարձի եկած աստուածավախ ներքինիներ Պօղոսի և Բառնաբասի հետեւեցան , որոնք անոնց հետ խօսելով՝ համոզեցին որ Աստուծոյ շնորհքին մէջ մնան ։ 44 Հաջորդ շաբաթ օրը գրեթէ ամբողջ քաղաքը ժողովեցաւ Տէրոջ խօսքը լսելու ։ 45 Բայց Հրեաները ամբոխը տեսնելով՝ նախանձով լեցուեցան , և հակառակելով՝ Պօղոս

Ցամի Տեառն 38

38 մը դրին ։ Ու Լիւդդեա Ցոպպէին մօտ էր . ուստի աշակերտները լսելով թէ Պետրոսը հոն է , անոր երկու մարդ խրկեցին , աղաչելով
39 որ չուշանայ իրենց գալու ։ Պետրոս ալ ելաւ անոնց հետը եկաւ . ու երբոր եկաւ , վերի սենեակը հանեցին զանիկայ . և բոլոր որբևարիները անոր բոլորտիքը կայնեցան , կու լային ու կը ցուցընէին ան բաճկոնները և հանդերձները որ կ'ընէր Ազնիւիկը , քանի որ իրենց
40 հետն էր ։ Պետրոս ալ ամէնը դուրս հանելով՝ ծունկի վրայ եկաւ ու աղօթք ըրաւ , և դէպ ի մարմինը դառնալով՝ ըսաւ . Տաբիթա՛ ելիր կայնէ . ան ալ իր աչքերը բացաւ , ու Պետրոսը տեսնելով՝
41 ելաւ շիտակ նստաւ ։ Ինքն ալ ձեռքը անոր տուաւ , ու վերցուց զանիկայ . և սուրբերը ու որբևարիները կանչելով՝ անոնց առջևը ողջ
42 կայնեցուց զանիկայ ։ Եւ եղաւ բոլոր Ցոպպէին մէջ իմացուելուն , ու շատերը Տէրոջը հաւատացին ։
43 Եւ եղաւ որ ինքը շատ օրեր Ցոպպէ կեցաւ՝ Սիմոն անունով կաշի բանողի մը քով ։

Ցամի Տեառն 41

ԳԼՈՒԽ Ժ.

1 Կոռնելիոս անունով բարեպաշտ մարդ մը 5 Ասուծոյ հրեշտակէն հրաման առած՝ կանչել կու տայ Պետրոսը ։ 11 որ մէկ տեսիլքի մը մէջ կը սորվի չդարչիլ հեթանոսներէն ։ 34 Պետրոս գիրխատոս կը քարոզէ Կոռնելիոսին ու անոր տանը մէջ եղողներուն . 44 և դեռ իր խօսքը չլմնցուցած՝ Սուրբ Հոգին կը հանգչի անոնց վրայ . 48 և կը մկրտուին ։

Ցա . 8 . 41

1 Կեսարիայի մէջ մարդ մը կար՝ Կոռնելիոս անունով , հարիւրապետ՝ Իտալացի բսուած գունդէն .
2 Հէր . 22 ։ Ղև . ը . 2 ։ Իր . 12 ։ Բ Հէր 35 ։
2 դէն . Բարեպաշտ ու Աստուածավախ իր բոլոր տունովը . որ ժողովուրդին շատ ողորմութիւններ կու տար , և ամէն աւուն Աստուծոյ
Հէր 30 ։ Գլ . ժա . 13 ։
3 ծոյ աղօթք կ'ընէր ։ Ընդհակառակ օրուան ժամը իննին աւուններուն տեսիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ . որ իր քովը մտաւ՝ և իրեն րսաւ . Կոռնելիոս .
4 Ան ալ անոր նայելով՝ ու խիստ վախնալով , րսաւ . Ի՞նչ է Տէր . ան ալ րսաւ անոր . Քու աղօթքներդ ու ողորմութիւններդ Աստուծոյ առջևը ելան յիշատակի
5 համար ։ Եւ հիմա Ցոպպէ մարդիկ խրկէ , ու կանչէ Սիմոն անունով մէկը՝ որ Պետրոս մականայ .
Գլ . թ . 43 ։ Ա Ո՛նոր կ'անէ՝ ուրիշներն՝ անիկայ բնդհակառակ ինչ որ պարտիս ընել ։
6 նուաստնայ է . Ընդհակայ իրեն հիւր կը կենայ Սիմոն անունով կաշի բանողի մը քով , որուն տունը ծո-
7 վուն մօտ է * ։ Ու երբոր գնացող ան հրեշտակը՝ որ իր հետը կը խօսէր , իր ծառաներէն երկուքը կանչեց , ու իր քովը սպասաղներէն
8 ալ բարեպաշտ զինուոր մը , Եւ բոլորը անոնց պատմելով՝ Ցոպպէ խրկեց զանոնք ։
9 Ու հետևեալ օրը երբոր անոնք ճամբայ երթալով՝ քաղաքին մօտեցան , Պետրոս ժամը վեցին աւուններուը տանիքը ելաւ աղօթք
Գլ . ժա . 5 ։ Ղև .
10 ընելու . Եւ խիստ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշ ընել . ու քանի որ Ի-Ա-Ր պատրաստութիւն կը տեսնէին , իր վրայ մոռի
11 յափշտակութիւն մը եկաւ . Ընդ տեսաւ երկինքը բացուած , ու չորս ծայրէն կապուած սաման մը մեծ կտաւի մը պէս , որ իջաւ
12 երկրի վրայ . Որուն մէջը կար երկրի բոլոր չորքոտանիները ու գազանները և սողունները , ու երկնից
13 թռչունները ։ Եւ ձայն մը եկաւ իրեն . Ելիր Պետրոս՝ մորթէ ու
14 կեր ։ Բայց Պետրոս րսաւ . Քաւ լիցի Տէր . Ի ինչու որ ես ամենևին պիղծ կամ անմաքուր բան կերած
15 չեմ ։ Նորէն մէյմըն ալ ձայն եկաւ իրեն . Ընչ որ Աստուած մաքրած է , դուն պիղծ մի սեպեր ։ Ա-
16 սիկայ իրեք անգամ եղաւ , և առիկայ իրեք անգամ եղաւ , և առ
17 մանը երկինքը վերցաւ ։ Ու Պետրոս իր մտքին մէջ կը զարմանար՝ թէ ինչ պիտի ըլլայ ան իր տեսած տեսիլքը , ահա Կոռնելիոսէն խրկուած մարդիկը Սիմոնին տունը հարցուցին , ու դրանը առջևը
18 կայնեցան . Եւ կանչելով կը հարցընէին թէ , Սիմոն՝ որ Պետրոս
19 կ'ըսուի , հո՞ս կը կենայ ։ Ու երբոր Պետրոս ան տեսիլքին վրայով կը մտածէր , Հոգին Սուրբ րսաւ
Գլ . ժա . 12 ։
20 անոր . Ահա իրեք մարդիկ քեզ կը փնտռեն . Ուստի ելիր իջիր , և անոնց հետը գնա առանց խղճահարութեան , ինչու որ ես խրկեցի
Գլ . ժե . 7 ։
21 անոնք ։ Պետրոս ալ ան մարդիկներուն քովը իջնելով՝ րսաւ . Ահա ես եմ անիկայ որ դուք կը փնտռէք , ի՞նչ բանի համար եկած
22 էք ։ Անոնք ալ րսին . Կոռնելիոս հարիւրապետը՝ արդար և Աստուածավախ մարդ՝ Հրէից ազգին վկայուած՝ սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ , որ քեզ իր տունը կանչէ , և քեզմէ խօսքեր
23 լսէ ։ Ան աւուները ներս կանչեց առնոնք , և իր քովը վար դրաւ ։
Ու հետևեալ օրը Պետրոս ելաւ՝ անոնց հետը գնաց , Եւ քանի մըն ալ Ցոպպէէն եղող եղբայրներէն
24 իր հետը գացին ։ Ու հետևեալ օրը Կեսարիա մտան . Կոռնելիոսն ալ իր ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝ անոնց կը
25 սպասէր ։ Ու երբոր Պետրոս ներս

Ղև . ժա . 4 ։ Բ . 25 ։ Բ Օր . ժգ . 3 , 7 ։ Եզեկ . գ . 14 ։ Ա Տիմ . ժե . 11 ։ Հէր 28 ։ Հռով . ժգ . 14 , 17 , 20 ։ ա Կոր . ժ ։ 25 ։ ա Տիմ . գ . 4 ։ Տիտ . ա . 15 ։

Գլ . ե . 55 ։ Ցայտ . ժԹ . 11 ։

Գլ . ժա . 5 ։ Ե ։

Իր . 1 , 2 ։ Ե ։

Գլ . Իր . 12 ։

Ցամք Տեառն 41

կը մտնէր , կոռնելիոս անոր դիմա-
ցը ելաւ , ու անոր ոտքը իյնալով՝
26 երկրպագութիւն կ՚ընէր ։ Բայց
պետրոս անիկայ կանգնեցուց՝ ու
ըսաւ . «Ելիր կայնէ . ես ինքնս ալ
27 մարդ եմ ։ Ու անոր հետ խօսակ-
ցելով ներս մտաւ , ու հոն շատ
28 մարդիկ ժողվուած գտաւ . Ու ը-
սաւ անոնց . «Դուք գիտէք թէ
[1] ինչպէս ապօրինաւոր բան է Հրէ-
այ մարդու մը օտարազգիի հետ
հաղորդակցութիւն ընելը կամ ա-
նոր մօտենալը . բայց [2] Աստուած
ինծի ցուցուց որ մարդիկներէն մէ-
կուն պիղծ կամ անմաքուր չըսեմ ։
29 Անոր համար ես ալ որ կանչուեցայ՝
առանց դէմ խօսելու եկայ . բայց
հիմա կը հարցնեմ , [3] ի՞նչ բանի
30 համար զիս կանչեցիք ։ Կոռնելիոս
ալ ըսաւ . «Չորս օր առաջ մինչև
ասժամս ծոմ կը պահէի , ու ժամը
իննին տանս մէջ աղօթք կ՚ընէի .
և ահա [4] փայլուն հանդերձներով
Էմարդ մը կայնեցաւ առջևս , ու
31 ըսաւ . Կոռնելիոս՝ [5] քու աղօթքդ
լսուեցաւ , [6] և քու ողորմութիւն-
ներդ Աստուծոյ առջևը յիշուե-
32 ցան . Ուստի [7] Յոպպէ խրկէ Ցոպպէ ,
ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս ալ
կ՚ըսուի . անիկայ ծովուն մօտ
Սիմոն [8] Դեղնաւ կաշի բանողի մը
տանը մէջ իբրև հիւր կը կենայ . որ
երբոր գայ , քեզի պիտի խօսի ։
33 Ուստի անմիջապէս [9] Յոպպէ խրկեցի
քեզի . դուն ալ աղէկ բրիր որ
եկար . և հիմա մենք ամէնքս Աս-
տուծոյ առջևը կեցեր ենք լսելու
ան ամէն բաները , որ Աստուծմէ
հրամայուած է քեզի ։
34 Պետրոս իր բերանը բացաւ՝ ու
ըսաւ . «Ճշմարտութեամբ կը հաս-
կընամ որ Աստուծոյ քովը աչառու-
35 թիւն չկայ . [10] Հապա ամէն ազգի
մէջ՝ ան որ անկէ կը վախնայ , ու
արդարութիւն կը գործէ , անոր
36 ընդունելի է ։ Ան խօսքը [11] որ Ի-
սրայելի որդւոցը խրկեց Աստ-
[12] Ի խաղաղութիւն քարոզելու Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը , (ան
37 կայ է ամենուն Տէրը .) Դուք
աղէկ գիտէք ան բանը , որ բոլոր
Հրէաստանի մէջ եղաւ [13] Գալիլեա-
յէն սկսած՝ ան մկրտութենէն
38 ետև որ Յովհաննէս քարոզեց . Յի-
սուսը որ Նազարեթէն էր , [14] որ
Աստուած անիկայ օծեց Սուրբ Հո-
գիով և զօրութիւնով , որ պտ-
տեցաւ բարիք ընելով , Ու Սա-
տանայէն բոլոր տանջուածները
բժշկելով , քանզի Աստուած իր
39 հետն էր ։ «Ու մենք վկայ ենք ան
ամէն բաներուն՝ որ ըրաւ Հրէաս-
տանի երկրին մէջ ու Երուսաղէմի
մէջ , [15] որն որ փայտէն կախած
40 սպաննեցին ալ ։ Աստուած ա-
նիկայ երրորդ օրը յարուց , և
41 յայտնի ըրաւ զանիկայ , [16] Ո՛չ թէ
բոլոր ժողովուրդին , հապա մեզի՝
առաջուց Աստուծմէ վկայ ըլլալու
ընտրուածներուս . [17] որ մենք իրեն
հետ կերանք ու խմեցինք [18] Ի անոր
մեռելներէն յարութիւն առնելէն
42 ետքը ։ [19] Ու ինքը պատուիրեց մե-
զի՝ որ ժողովուրդին քարոզենք ու
վկայութիւն տանք , [20] թէ անիկայ
է Աստուծմէ սահմանուած՝ [21] կեն-
դանիներուն ու մեռելներուն դա-
43 տաւորը ։ [22] Անոր կը վկայեն բոլոր
մարգարէները [23] թէ ամէն իրեն հա-
ւատացողները իր անունովը մեղաց
թողութիւն կ՚առնեն ։
44 Ու երբոր Պետրոս ասս խօսքերը
կը խօսէր . [24] Հոգին Սուրբ իջաւ
ամենուն վրայ , որոնք խօսքը կը
45 լսէին ։ Ու [25] թլփատուածներէն
եղող հաւատացեալները՝ որոնք
Պետրոսին հետը եկած էին , զար-
մացան՝ [26] որ հեթանոսներուն վրայ
ալ Հոգւոյն Սրբոյ պարգեւը կը
46 լեցուէր ։ Քանզի կը լսէին ա-
նոնցմէ որ [27] Լեզուներով կը
խօսէին , և զԱստուած կը փառա-
47 ւորէին ։ Ան ատենը Պետրոս պա-
տասխան տուաւ . «Կրնա՞յ մէկը
ջուրը արգիլել որ ասոնք չմկըր-
տուին , որոնք Հոգին Սուրբն ալ
48 ընդունեցին [28] մեզի պէս ։ Ու
հրաման ըրաւ [29] որ Տէրոջը անու-
նովը մկրտուին . ան ատենը իրեն
աղաչեցին որ քանի մը օր հոն մնայ ։

ԳԼ . ԺԱ

1 Պետրոս հեթանոսներուն մէջ մտնելուն հա-
մար ամբաստանուած ըլլալով՝ 5 իր իրաւուն-
քը կը ցուցընէ , 18 որ ընդունելի կ՚ըլլայ ։
19 Աւետարանը կը տարածուի Փիւնիկէ՝ Կիպ-
րոս և Անտիոք . ու բառնաբաս կը խրկուի
հաւատացեալները հաստատելու ։ 26 Աշա-
կերտները նախ և առաջ Անտիոքի մէջ Քրիս-
տոնեայ կ՚անուանին ։ 27 անոնք օգնութիւն
կը խրկեն Հրէաստան՝ սովի ժամանակ ։

1 Ու առաքեալները ու եղբայրները
որ Հրէաստանի կողմերն էին ,
լսեցին որ հեթանոսներն ալ Աս-
2 տուծոյ խօսքը ընդուներ են ։ Բայց
երբոր Պետրոս Երուսաղէմ եկաւ ,
[1] թլփատուածներէն եղողները անոր
3 հետ կը վիճէին . Ու կ՚ըսէին թէ ,
[2] Դուն անթլփատ մարդոց քովը մը-
տար , [3] և անոնց հետ հաց կերար ։
4 Պետրոս ալ սկսաւ [4] Ի նէ
[5] կարգով
5 պատմել անոնց , ու ըսաւ . «Ես
Ցոպպէ քաղաքը աղօթք կ՚ընէի ,
ու մտքի յափշտակութեան մէջ
տեսիլք մը տեսայ . Մէկ աման մը
մեծ կտաւի պէս՝ չորս ծայրերէն եր-
կինքէն կախուած իջաւ , ու մինչև
6 ինծի հասաւ . Որուն վրայ աչքս

Ցամք Տեառն 41

- ԳԼ . Ե . 30 ։
Ա ԳԼ . Բ . 24 ։
[1] Ցոհ . Ժ . 17 . 22 ։ ԳԼ . Ժ . 31 ։
[2] Ղե . Իդ . 30 . 43 ։ Ցոհ . Ի . 13 ։
[3] Մաա . Իբ . 19 . 20 ։ ԳԼ . Ա . 8 ։
- Ցոհ . Ե . 22 . 27 ։ ԳԼ . Ժէ . 31 ։
[4] Հով . Ժ . 9 . 10 ։ Բ Կոր . Ե . 10 ։ Բ Տիմ . Գ . 1 ։ Ա Պետ . Գ . 5 ։
+ Ես . Ծդ . 11 ։ Երեմ . Լ . 34 ։ Դան . Թ . 24 ։ Միք . Է . 18 ։ Զաք . Ժ . 1 ։ Մալ . Գ . 2 ։ ԳԼ . Իշ . 22 ։
[5] ԳԼ . Ժ . 9 . Իշ . 18 ։ Հով . Ժ . 11 ։ Գաղ . Գ . 22 ։
[6] ԳԼ . Գ . 31 ։ Բ . 15 . 16 . 17 ։ Ժա . 15 ։
- Հմր 23 ։
[7] ԳԼ . Ժա . 18 ։ Գաղ . Գ . 14 ։
[8] ԳԼ . Ժա . 17 . Ժե . 8 . 9 ։ Հով . Ժ . 12 ։
[9] Ժա Կոր . Ա . 17 ։
[10] ԳԼ . Բ . 38 ։ Բ . 16 ։

- ԳԼ . Ժ . 45 ։ Գաղ . Բ . 12 ։
[11] ԳԼ . Ժ . 28 ։
[12] Գաղ . Բ . 12 ։
[13] Ղե . Ա . 3 ։
[14] ԳԼ . Ա . 9 ։ Ես . Ծ . 11 ։ Ա Պետ . Գ . 22 ։
[15] ԳԼ . Բ . 23 ։ Ե . 30 ։ Ժ . 39 ։
[16] ԳԼ . Ժ . 41 ։
[17] ԳԼ . Ժ . 43 ։
[18] ԳԼ . Բ . 32 ։ Ե . 31 ։
[19] ԳԼ . Ժ . 42 ։
[20] ԳԼ . Ժ . 42 ։
[21] ԳԼ . Ժ . 43 ։
[22] ԳԼ . Ժ . 43 ։
[23] ԳԼ . Ժ . 43 ։
[24] ԳԼ . Բ . 4 ։
[25] ԳԼ . Ժ . 45 ։
[26] ԳԼ . Ժ . 47 ։
[27] ԳԼ . Ժ . 46 ։
[28] ԳԼ . Ժ . 47 ։
[29] ԳԼ . Բ . 38 ։

Ցամի Տեառն 41

տնկեր կը նայէի , և տեսայ երկրի չորքոտանիները , ու գազանները , և սողուններըը , ու երկնից թռչուն-
7 ները : Եւ ձայն մը լսեցի որ կ'ը-
սէր ինծի . Ելիր Պետրոս՝ մորթէ՛
8 ու կեր : Բայց ես ըսի . Քա-
նի՛ցի Տէր . ինչու որ պիղծ կամ անմաքուր բան մը ամենևին մտած
9 չէ իմ բերանս : Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ՝ Ձայնը երկինքէն . Ան որ Աստուած մաք-
10 րեց , դուն պիղծ մի՛ սեպեր : Ա-
յս իրենք անգամ եղաւ , ու նորէն բո-
11 լորը երկինքը քաշուեցաւ : Եւ ահա իսկոյն իրենք մարդ կեսարիա-
յէն ինծի խրկուած՝ Իւրեանք իմ եղած
12 տանս առջևը կեցան : Ըհոգին ալ ինծի ըսաւ՝ որ անոնց հետը երթամ առանց խղճահարութեան. Եւ այս վեց եղբայրներն ալ ինծի հետ գացին , ու մտանք ան մարդուն
13 տունը : Ընդ անիկայ մեզի պատ-
մեց թէ ինտոր իր տանը մէջ հրեշ-
տակը տեսաւ՝ որ կայներ էր , և իրեն կ'ըսէր . Մարդ խրկէ Յոպպէ՝ ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս ալ
14 կը կոչուի . Որ ան քեզի խօսքեր պիտի խօսի , որոնցմով փրկուես
15 դուն՝ և քու բոլոր տունդ : Ու երբոր սկսայ խօսիլ , Հոգին Սուրբ անոնց վրայ իջաւ , Ինչպէս որ ա-
16 ռաջուց մեր վրայ ալ : Ան առնը յիշեցի Տէրոջը խօսքը՝ որ կ'ըսէր . Յովհաննէս ջրով մկրտեց , Բայց դուք Սուրբ Հոգիով պիտի մկրը-
17 տուիք : Ուստի թէ որ Աստուած մի և նոյն շնորհքը տուաւ անոնց՝ ինչպէս որ մեզի ալ , երբոր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացին , Ես ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ
18 դէմ դնել : Ան բաները լսելով՝ ձայներնին կտրեցին , և Աստուած կը փառաւորէին՝ ու կ'ըսէին . Ընդ-
րեմն Աստուած հեթանոսներուն ալ կենաց համար ապաշխարութիւն տուաւ :
19 Եւ Ստեփաննոսին մահուանէն վրայ եկած նեղութենէն ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպ-
րոս և Անտիոք հասան . ու մէկու մը Աստուծոյ խօսքը չէին խօսեր ,
20 միայն թէ Հրէաներուն : Բայց անոնցմէ ոմանք Կիպրացի և Կիւրե-
նացի մարդիկ էին , որոնք երբոր Անտիոք մտան , Յոյներուն հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարոզելով ,
21 Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր , և բազմաթիւ մարդիկ հաւատալով՝
22 Տէրոջը դարձան : Եւ անոնց վրա-
յով լուրը երուսաղէմի եկեղե-
ցիին ականջը հասաւ . ու Բառ-
նաբասը խրկեցին՝ որ մինչև Անտիոք
23 երթայ . Որ երբոր եկաւ՝ և Աս-

տուծոյ շնորհքը տեսաւ , ուրախա-
ցաւ . Ու կը յորդորէր ամէնն ալ՝ որ յօժար սրտով Տէրոջը հետ
24 մնան . Քանզի ինքը բարի մարդ էր , Ու Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն . Ու Տէրոջը
25 շատ ժողովուրդ աւելցաւ : Ետքը Բառնաբաս Ծարսոն երթալու՝ Սօղոսը փնտռելու , և գտնելով՝
26 Անտիոք բերաւ : Ու եղաւ որ ա-
նոնք լման տարի մը եկեղեցիին հետ մկտող ժողովուրդի հետ շատ ժողո-
վուրդի սորվեցուցին . ու պիտի առաջ Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ անուանեցան :
27 Ան օրերը Երուսաղէմէն Մարգա-
28 րէներ իջան Անտիոք : Եւ անոնց-
մէ մէկը Ագաբոս անունով՝ ելաւ իմացուց Հոգիին զօրութեամբը՝ Թէ մեծ սով մը պիտի բլլայ բոլոր աշխարհ , որ և եղաւ Կղովդիոսին
29 օրերը : Եւ աշակերտները որոշե-
ցին որ իրենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ Հրէաստանի մէջ բը-
նակող եղբայրներուն Օգնութիւն
30 խրկեն . Որ կատարեցին ալ , երեց-
ներուն խրկելով Բառնաբասին ու Սօղոսին ձեռքով :

ԳԼ . ԺԲ

1 Հերովդէս Թագաւորը կը Նուաճէ քրիստոնեաները . Յակոբոսը կը սպաննէ , և Պետրոսը բանտը դնել կու տայ . որուն համար եկեղեցին աղօթք ընելով , Տէրոջը Հրեշտակը կ'ազատէ զանիկայ : 20 Հերովդէս իր նախարարութեամբը Աստուծոյ վայելուչ եղած պատիւը իրեն առնելով՝ Տէրոջը հրեշտակէն կը զարնուի , և չարաչար կը մեռնի : 24 Ընդ որ մինչդէն եաև՝ Աստուծոյ խօսքը յաջողութեամբ կը տարածուի :

1 Ան առեններըը Հերովդէս Թագաւորը ձեռք զարկաւ եկեղեցիէն
2 մէկ քանիները չարչարելու : Եւ Յովհաննէսին եղբայրը Յակոբոսը
3 սրով սպաննեց : Ու տեսնելով որ Հրէաներուն համներ է , անոր վրայ Պետրոսն ալ բռնեց . Ու բաղար-
4 ջակերաց օրերն էին : Զանիկայ երբոր բռնեց՝ բանտը դրաւ , և չորս կարգ չորսական զինուորներու յանձնեց որ պահեն , և կ'ուզէր զատկէն եաև ժողովուրդին հանել
5 զանիկայ : Ուստի Պետրոս բանտին մէջը պահուած էր , բայց եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստու-
6 ծոյ՝ անոր համար : Ու երբոր Հե-
րովդէս ուզեց անիկայ դուրս բերել , ան գիշերը Պետրոս երկու զինուո-
րներու մէջտեղը կը քնանար՝ կրկին շղթաներով կապուած . ու պահա-
պանները դրանը առջևը բանտը կը
7 պահպանէին : Եւ ահա Տէրոջը հրեշտակը Իւր վրան կայնեցաւ , ու տանը մէջ լոյս մը ծագեց , և Պետրոսին կողը խթելով՝ արթըն-

Ցամի Տեառն 42

ԳԼ . Ժգ . 43 , Ժգ . 21 ,
ԳԼ . գ . 5 ,
Հմր 21 , ԳԼ . ե . 14 .
Ցա . Տ . 43
ԳԼ . Թ . 30 ,
Ղ . Ե . 17 ,
Ժգ . 1 , Ժե . 32 , Ի . 9 , ա Կոր . Ժր . 28 , Եփ . գ . 11 ,
ԳԼ . Ի . 10 ,
Հռով . Ժե . 26 , ա Կոր . Ժգ . 1 , Ր Կոր . Թ . 1 ,
Ցա . Տ . 44
ԳԼ . Ժր . 25 ,

Մտա . գ . 21 , Ի . 23 ,
Եբ . Ժր . 14 . 15 , Իգ . 15 ,
Ցօհ . Ի . 18 ,
ԳԼ . ա . 4 ,
ԳԼ . Ժ . 23 ,
ԳԼ . Ժ . 47 ,
Հռով . Ժ . 12 , 13 , Ժե . 9 , 16 ,
ԳԼ . Բ . 1 ,
ԳԼ . Ժ . 8 , 9 ,
Ղ . ա . 66 , ԳԼ . Բ . 47 ,
ԳԼ . Թ . 35 ,
Ցա . Տ . 42
Ղ . Թ . 27 ,
ԳԼ . Ե . 19 ,

Գամ Տեառն 44

ցուց զանիկայ , ու ըսաւ . Շուտով ելիր . ու չղթաները անոր ձեռքե-
8 րէն վար ինկան : Եւ Հրեշտակը ը-
սաւ անոր . Գօտիդ կապէ , ու հո-
զաթափներդ ոտքդ հագիր . անի-
կայ ալ այնպէս ըրաւ . և ըսաւ ա-
նոր . Հանդերձդ վրադ առ՝ ու եկուր
9 իմ ետևէս : Ան ալ ելլելով անոր
ետևէն կ'երթար , Եւ չէր գիտեր
թէ ան Հրեշտակին եղած բանը ի-
րաւ է , հապա կը կարծէր թէ տես-
10 սիլք կը տեսնէ : Ու երբոր անոնք
առաջին ու երկրորդ պահապաններ-
բէն անցան , եկան մինչև երկաթի
դուռը , որ քաղաքին մէջը կը հա-
նէր , Ո որ ան ինքիրմէ բացուեցաւ
անոնց . և ելլելով՝ մէկ փողոց
մը անցան . Հրեշտակն ալ իսկոյն
11 անկէ զատուեցաւ : Ու Պետրոս
ինքզինքին գալով՝ ըսաւ . Հիմա
ճշմարտապէս գիտեմ Ը որ Տէրը իր
Հրեշտակը խրկեց , Ու ազատեց զիս
Հերովդեսին ձեռքէն , ու Հրէից
ժողովուրդին բոլոր ակնկալութե-
12 նէն : Եւ մտածելով՝ Ի նկաւ Մար-
կոս ըսուած Ցովհաննէսին մօրը
Ի Մարիամին տունը , ուր որ շատերը
13 ժողված Լաղօթք կ'ընէին : Եւ
դռնէն դուրսի դուռը որ զարկաւ ,
Հռովդէ անունով աղախին մը գնաց
14 ականջ դնելու . Ու երբոր Պետրո-
սին ձայնը ճանչցաւ , ուրախութե-
նէն դուռը չբացաւ , հապա ներս
վազելով պատմեց , թէ Պետրոս
15 դրանը առջևը կայներ է : Իսկ ա-
նոնք ըսին անոր , Խենթեցեր ես .
բայց ինքը կը պնդէր թէ անանկ է .
անոնք ալ կ'ըսէին . Ի Անոր հրեշ-
16 տակը պիտի ըլլայ : Սակայն Պետ-
րոս անդադար կը զարնէր . ու երբ-
որ բացին , զինքը տեսնելով ապշե-
17 ցան : Բայց անիկայ Ի ձեռքով նը-
շան կ'ընէր անոնց՝ որ լուռ կենան ,
ու պատմեց անոնց թէ ինչպէս Տէ-
րը զինքը բանտէն հանեց , և ըսաւ .
Ասիկայ Ցակոբոսին ու եղբայրնե-
րուն պատմեցէք . և ելաւ ուրիշ
18 տեղ գնաց : Ու երբոր առտու ե-
ղաւ , մեծ խռովութիւն կար զի-
նուորներուն մէջը՝ թէ արդեօք ի՞նչ
19 եղաւ Պետրոսը : Հերովդէս ալ
երբոր ուզեց անիկայ՝ ու չգտաւ ,
պահապաններուն հարցուփորձ ը-
նելով՝ հրաման ըրաւ որ սպան-
նուին . և Ի նէ Հրէաստանէն կե-
սարիա իջաւ , ու հոն կը կենար :
20 Եւ Հերովդէս խիստ թշնամացած
էր Ցիւրացիներուն ու Սիդոնացի-
ներուն հետ . անոնք ալ միաբան
հաւանութեամբ իրեն եկան , ու
թագաւորին բղատոս անունկապե-
տը համոզելով՝ հաշտութիւն կը
խնդրէին . Վասնզու որ իրենց երկի-
րը թագաւորին էրկրէն ապրուստ
21 կ'առնէր : Եւ մէկ որոշուած օր
մը Հերովդէս թագաւորական հան-
դերձը հագած ու առեւանը նստած՝
անոնց առեներաններութիւն կ'ընէր ,
22 ժողովուրդն ալ կ'աղաղակէր թէ ,
Աստուծոյ ձայն է , ու չէ
23 թէ մարդու : Եւ իսկոյն Տէրոջը
Հրեշտակը հարկեց զանիկայ զարկաւ , Վա-
տուծոյ փառք չտալուն համար . և
որդնալից ըլլալով՝ մեռաւ :
24 Ետև Աստուծոյ խօսքը կ'աճէր ու
25 կը շատնար : Եւ Բառնաբաս ու
Սօղոս երբոր Ի Երուսաղէմէն պաշ-
տօնը լմընցուցին՝ երուսաղէմէն
դարձան , Ի Մարկոս ըսուած Ցով-
հաննէսն ալ Ի հետերնին առնելով ,

Գամ Տեառն 44

Ա Սաղ . ճիզ . 1 ։

Ղկ . ժ . 3 ։ 17 ։ ժա . 5 ։

Ա Գէ . ժգ . 26 ։

Ը Սաղ . լդ . 7 ։ Դան . գ . 28 ։ գ . 22 ։ Երր . ա . 14 ։ Ի Ցոր . ե . 19 ։ Սաղ . լդ . 18 ։ 19 ։ լդ . 22 ։ խա . 2 ։ գէ . 10 ։ բ Կոր . ա . 10 ։ բ Պետ . բ . 9 ։

Ի Գկ . ժե . 37 ։

Ի Գկ . դ . 23 ։ Ղհմր 5 ։

Ի Ես . խը . 16 ։ Մատ . ժը . 10 ։

Ի Գկ . ժգ . 16 ։ ժԹ . 33 ։ խա . 40 ։

Ա Թագ . ե . 9 . 11 ։ Ե զեկ . իէ . 17 ։

1 Պօղոս ու Բառնաբաս կ'ընտրուին հեթանոս-
ներուն երթալու : 7 Սերգիոս Պօղոսը , և
եղիմաս մոգը : 14 Պօղոս կը քարոզէ Ան-
տիոքի մէջ՝ թէ Յիսուսն է աւետարի Փրկիչը :
42 Հեթանոսները կը հաւատան : 45 բայց
Հրէայք կը հակառակին և հայհոյութիւն կ'ը-
նեն : 46 Անոր վրայ Պօղոս և Բառնաբաս
հեթանոսներուն կը դառնան : 48 Քրիստո-
նեական հաւատքը կ'ընդունին անոնք՝ որ յա-
ւիտենական կենաց սահմանուած էին :

1 Եւ Անտիոքի մէջ եղած եկեղ-
ցիէն քանի մը մարգարէներ ու
վարդապետներ կային , Բառնա-
բաս , ու Շմաւոն՝ որ Նիւգէր կ'ը-
սուէր , և Ղուկիոս Կիւրենացի ,
ու Մանայէն՝ Հերովդէս չորրոր-
դապետին աննդակիցը , և Սօղոս ,
2 Երբոր ասոնք Տէրոջը պաշտօնին
մէջն էին՝ և ծոմ կը պահէին , Հո-
գին Սուրբ ըսաւ . Ջատեցէք
ինծի Բառնաբասը և Սօղոսը ան
գործին համար , Որուն ես կան-
3 չեր եմ ասոնք : Ուրեն ասոնք ծոմ
պահելով և աղօթք ընելով , ձեռք
դրին անոնց վրայ՝ ու խրկեցին :
4 Անոնք ալ Սուրբ Հոգիէն խրբ-
կուած՝ Սելևկիա իջան , ու անկէ
5 նաւով Ի Կիպրոս գացին : Եւ Սա-
ղամինա հասնելով՝ Ը Հրէից ժողո-
վարաններուն մէջ Աստուծոյ խօս-
քը կը քարոզէին , ու Ի Ցովհան-
նէսն ալ Իրենց սպասաւոր ունէին :
6 Եւ պտըտելով ան բոլոր կղզին
մինչև Պափոս , հոն գտան Ի սուտ
մարգարէ՝ Հրէայ մոգ մը , որուն
7 անունը Բարեյեսու էր . Որ ինքը
փոխանորդ բդեշխին հետն էր , որ
Ի Շերգիոս Պօղոս , խելացի
մարդ մը . ասիկայ Բառնաբասը և
Սօղոսը հրաւիրելով՝ ուզեց Ա-
8 ստուծոյ խօսքը լսել : Սակայն ա-
նոնց դէմ կեցաւ Ի Եղիմաս մոգը ,
(քանզի այսպէս կը թարգմանուի
անոր անունը ,) որ կ'ուզէր փո-
խանորդ բդեշխը հաւատքէն դար-
9 ձնել : Բայց Սօղոս՝ (որ Պօղոս

Գամ Տեառն 44

Հա Թագ . իե . 38 ։ բ Թագ . իգ . 17 ։

Ի Սաղ . ճիե . 1 ։

Ընտ . ձե . 11 ։ Գէ . գ . 7 ։ ժԹ . 20 ։ Կող . ա . 6 ։

Ե Գկ . ժա . 29 ։ 30 ։

Ղհմր 12 ։

Գկ . ժգ . 5 ։ 13 ։ ժե . 37 ։

Յա . Ը . 45 — Գկ . ժա . 27 ։ ժգ . 25 ։ ժե . 35 ։

Բ Գկ . ժա . 22—26 ։

Հռով . ժգ . 21 ։

Բ Թես . բ . 14 ։ Գկ . Թ . 15 ։ Իր . 21 ։ Հռով . ա . 1 ։ Գաղ . ա . 15 ։ բ . 9 ։

Ի Մատ . Թ . 38 ։ Գկ . ժգ . 25 ։ Հռով . ժ . 15 ։ Եփես . գ . 7 ։ 8 ։ Ա Տիմ . բ . 7 ։ բ Տիմ . ա . 11 ։ Երր . ե . 4 ։

Ղ Գկ . գ . 6 ։

Ի Գկ . գ . 36 ։

Ը Հմր 46 ։

Ի Գկ . ժբ . 25 ։ ժե . 37 ։

Ժ Գկ . բ . 9 ։

Ել . է . 11 ։ բ Տիմ . գ . 8 ։

Ցամք Տեառն 45

ալ [illegible],) Հազուով Սրբով լեցուած՝ աչքերը անոր վրայ տը-
10 կեց, Ու բաւ. Ով ամէն խարեբայութիւնով և ամէն խորամանկութիւնով լեցուած Սատանայի որդի՝ թշնամի բոլոր արդարութեան, պիտի չդադարի՞ս Տէրոջը
11 շիտակ ճամբաները ծռելէն։ Եւ հիմա Տէրոջը ձեռքը ահա քու վրադ է. ու կոյր պիտի ըլլաս՝ առանց մը արեւը չտեսնելով։ Եւ իսկոյն անոր վրայ մէգ ու խաւար մը իջաւ. ու պտրտելով առաջ-
12 նորդ կը փնտռէր, Ան տեսնը փոխանորդ բդեշխը աս եղած բաները որ տեսաւ՝ հաւատաց, մեծապէս զարմանալով Տէրոջը վարդապետութեանը վրայ։

13 Եւ Պօղոս ու իր ընկերները Պափոսէն եկան, ու եկան Պամփիւլիայի Պերգէն. բայց [illegible]ովհաննէս անոնցմէ զատուելով՝ Երուսաղէմ
14 դարձաւ։ Անոնք ալ Պերգէն գացին՝ ու եկան Պիսիդիայի Անտիոքը, ու շաբաթ օրը ժողովա-
15 րանը մտնելով՝ նստան։ Ու օրէնքը և մարգարէները կարդացուելէնետև՝ ժողովրդապետները մարդ խրկեցին իրենց ու ըսին. Մարդիկ եղբայրներ՝ եթէ որ դուք ժողովուրդին խօսիլ յորդորական
16 խօսք մը ունիք, խօսեցէք։ Ան տեղը Պօղոս ոտքի վրայ կայնելով, ձեռքը շարժեց ու բաւ. Ով Իսրայէլացի մարդիկ՝ և դուք որ Աստուծմէ կը վախնաք, մտիկ
17 ըրէք։ Աս ժողովուրդիս Աստուածը մեր հայրերը ընտրեց, ու ժողովուրդը բարձրացուց Եգիպտոսի երկրին մէջ պանդխտութեան տեղը, և բարձր բազու-
18 կով զանոնք անկէ հանեց։ Ու քառասուն տարուան ժամանակի չափ անապատին մէջ կերակրեց
19 զանոնք։ Եւ Քանանու երկրին մէջ եօթը ազգ կործանելով, Քանանց երկիրը իրենց տուաւ որ մա-
20 ւանգեն։ Եւ անկէ ետև երեսուն հարիւր չորս տարիի չափ դատաւորներ տուաւ անոնց մինչև Սա-
21 մուէլ մարգարէն։ Ու ետքը թագաւոր ուզեցին. և Աստուած Կիսի որդին Սաւուղը տուաւ անոնց՝ Բենիամինի ցեղէն մարդ մը,
22 քառասուն տարի։ Ու երբոր զանիկայ փոխեց, Դաւիթը հանեց իրենց թագաւոր, որուն համար վկայութիւն տալով՝ բաւ. Գեսսէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բո-
23 լոր կամքս պիտի կատարէ։ Ասոր սերունդէն Աստուած ելր խոստումնքին պէս Իսրայէլին՝

24 Փրկիչ Յիսուսը հանեց. Եւ դեռ անիկայ էր դուրսը չկոտած՝ Յովհաննէս առաջուց Իսրայէլ բոլոր ժողովուրդին ապաշխարութեան մկրտութիւնը քարոզեց.
25 Ու երբոր Յովհաննէս իր ընթացքը կը կատարէր, բաւ. Ո՞վ կը կարծէք թէ եմ. ես Քրիստոսը չեմ. հապա անիկայ ահա իմ ետևէս կու գայ, որ ես արժանի չեմ անոր ոտքերուն կօշիկները քակե-
26 լու։ Մարդիկ եղբայրներ՝ Աբրահամի տոհմին որդիքը, ու անոնք որ ձեր մէջը աստուածավախ են, աս փրկութեան խօսքը ձեզի խրր-
27 կուեցաւ։ Քանզի Երուսաղէմ բնակողները՝ և անոնց իշխանները Յիսուսը անիկայ ճանչցան, ոչ ալ մարգարէներուն ձայները, որ ամէն շաբաթ օրերը կը կարդացուին. հապա զանոնք կատարեցին զրկրը
28 դատապարտելով. Եւ մահուան պատճառ մըն ալ չգտած՝ Պիղատոսէն խնդրեցին որ անիկայ սպան-
29 նուի։ Ու երբոր անոր համար բոլոր գրուած բաները կատարեցին, ափայտէն վար իջեցընելով՝
30 դերեզմանի մէջ դրին. Բայց Աստուած անիկայ յարուց մեռելներէն. Որ ինքը շատ օրեր երեւցաւ
31 անոնց, Որ իր հետը Գալիլեայէն Երուսաղէմ ելլոր էին. Որոնք հիմա անոր վկաներն են ժողովուրդին։
32 Եւ մենք ալ ձեզի կը քարոզենք Աստուծմէ եղած խոստումնքը՝ որ
33 հայրերուն եղած էր. Որ անիկայ Աստուած կատարեց մեզի՝ որ անոնց զաւակներն ենք՝ Յիսուսը յարուցանելով, ինչպէս որ երկրորդ սաղմոսին մէջն ալ գրուած է. Դուն իմ Որդիս ես. ես այսօր
34 քեզ ծնայ։ Եւ որ զանիկայ մեռելներէն յարուց, ու ժէյմին ալ ապականութիւն պիտի չտեսնէ, ասանկ կ'ըսէ թէ, Ձեզի պիտի տամ Դաւիթին հաւատարիմ
35 սուրբ խոստմնդիրը։ Ուստի ուրիշ մը մէջ ալ կ'ըսէ. Քու Սուրբիդ ապականութիւն տեսնել
36 պիտի չտաս։ Ինչու որ Դաւիթ իր գարուն մէջ Աստուծոյ կամացը ծառայելով՝ նմեռաւ, ու իր հայրերուն քովը գրուեցաւ, և ապա-
37 կանութիւն տեսաւ։ Բայց ան որ Աստուած յարուց, ապականու-
38 թիւն չտեսաւ։ Ուրեմն յայտնի ըլլայ ձեզի՝ մարդիկ եղբայրներ, Որ ասոր միջոցովը ձեզի մեղայ-
39 թողութիւն կը քարոզուի. Եւ ան ամէն բաներէն՝ որ Մովսէսին օրէնքովը չկրցաք արդարանալ,

Ցամք Տեառն 45

Մատ. ա. 21։ Հռով. ժա. 26։
Մատ. գ. 1։ Ղուկ. գ. 3։
Մատ. գ. 11։ Մար. ա. 7։ Ղուկ. գ. 16։ Յովհ. ա. 20, 27։
– Մատ. ժ. 6։ Ղուկ. իգ. 47։ Հմր 46։ Գլ. գ. 26։
Ղուկ. իգ. 34։ Գլ. գ. 17։ ա Կոր. ր. 8։
Հմր 14. 15։ Գլ. ժե. 21։
Ղուկ. իգ. 20. 44։ Գլ. իգ. 22։ իը. 23։
Մատ. իե. 22։ Մար. ժե. 13. 14։ Ղուկ. իգ. 21. 22։ Յովհ. ժթ. 6. 15։
Գլ. գ. 13. 14։
Ղուկ. ժը. 31։ իգ. 44։ Յովհ. ժթ. 28, 30. 36. 37։
Մատ. իե. 59։ Մար. ժե. 46։ Ղուկ. իգ. 53։ Յովհ. ժթ. 38։
Մատ. իը. 6։ Գլ. ր. 24։ գ. 13. 15. 26։ ե. 30։
Մատ. իը. 16։ Գլ. ա. 3։ ա Կոր. ժե. 5. 6. 7։
Գլ. ա. 11։
Գլ. ա. 8։ ր. 32։ գ. 15։ ե. 32։
Յով. գ. 15։ ժր. 3։ իր. 18։ Գլ. իգ. 6։ Հռով. գ. 13։ Գաղ. գ. 16։
Սաղ. ր. 7։ Երր. ա. 5։ ե. 5։
Ես. ժե. 3։ Սաղ. ժգ. 10։ Գլ. ր. 31։
Թագ. ր. 10։ Գլ. ր. 29։
Երեմ. լա. 34։ Դան. թ. 24։ Ղուկ. իգ. 47։ ա Յով. ր. 12։ Ես. ծգ. 11։ Հռով. գ. 28։ ր. 3։ Երր. ե. 19։

Ցամք Տեառն 45

սով՝ ամէն ով որ հաւատայ, կ'ար-
40 դարանայ։ Ընդ՝ զգուշացէք որ
չըլլայ թէ ձեր վրայ գայ ան որ
/ մարգարէներուն մէջ ըսուած է.
41 Նայեցէք արհամարհողներ՝ և զար-
մացէք, ու ոչնչացէք. ինչու որ
գործ մը պիտի ընեմ՝ ձեր օրերուն
մէջ, անանկ գործ մը՝ որ եթէ
մէկը ձեզի պատմէ, պիտի չհաւա-
տաք։
42 Ու երբոր անկէ դուրս ելան,
* կ'աղաչէին որ * հետեւեալ շաբաթ՝
ալ նոյն խօսքերը իրենց խօսուի։
43 Եւ ժողովուրդը երբոր արձակեցաւ,
Հրէաներէն ու նորահաւատ բարե-
պաշտներէն շատերը Պօղոսին ու
Բառնաբասին ետևէն կ'երթային.
որոնք կը խօսէին անոնց հետ, ու
/ կը յորդորէին զանոնք, որ միշտ
Աստուծոյ շնորհքին մէջը հաս-
44 տատ կենան։ Եւ հետեւեալ շաբաթ
օրը գրեթէ բոլոր քաղաքը ժող-
վուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու։
45 Իսկ Հրէաները երբոր տեսան ան
բազմութիւնը, նախանձով լե-
ցուեցան, ու Պօղոսի դուրցածնե-
րուն դէմ կը խօսէին՝ հակառակե-
լով ու հայհոյութիւն ընելով։
46 Ան ատեն Պօղոս և Բառնաբաս
համարձակեցան ու ըսին. Պէտք
էր որ * առաջ ձեզի խօսուի Աստու-
ծոյ խօսքը, Բայց որովհետև դուք
անիկայ կը մերժէք, ու ինքզինքնիդ
յաւիտենական կենաց արժանի չէք
սեպեր, Դահա մենք հեթանոսնե-
47 րուն կը դառնանք։ Ինչու որ
Տէրը ասանկ պատուիրած է մեզի.
Քեզ հեթանոսներուն լոյս դրի,
որ դուն փրկութեան պատճառ ըլ-
48 լաս մինչև երկրի ծայրերը։ Ա-
սլսելով հեթանոսները՝ կ'ուրախա-
նային, ու Աստուծոյ խօսքը կը
փառաւորէին. և որոնք որ յաւի-
տենական կենաց սահմանուած էին,
49 հաւատացին։ Ու Տէրոջը խօսքը
բոլոր գաւառը կը տարածուէր։
50 Բայց հրէաները դրդռեցին բարե-
պաշտ և ազնիւ կնիկները՝ ու քա-
ղաքին մեծերը, և * Պօղոսին ու
Բառնաբասին վրայ հալածանք հա-
նելով՝ զանոնք իրենց սահման-
51 ներէն դուրս ըրին։ Անոնք ալ
իրենց ոտքերուն փոշին անոնց դէմ
52 թօթվելով՝ Իկոնիոն եկան։ Ու
աշակերտները * ուրախութեամբ և
Հոգւով Սրբով կը լեցուէին։

ԳԼ. ԺԴ

1 Պօղոս և Բառնաբաս Հալածուելով կը փախչին Իկոնիոնէն։ 7 Լիւստրայի մէջ Պօղոս կը բժշկէ ի ծնէ կաղ մը, և աս պատճառով ա-նոնք աստուածներ ըլլալ կը կարծուին։ 19 Պօղոս կը քարկոծուի։ 21 Անոնք զանազան նկեղեցիներ կը պարսին, Հաստատելով աշա-

Ցամք Տեառն 45

կերտները Հաւատքի և Համբերութեան մէջ. 26 Եւքը Անտիոք գառնալով՝ կը պատմեն եղբայրներուն ո՛րչափ բան որ Աստուած ըրեր էր իրենց։

1 Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք
մէկտեղ Հրէաներուն ժողովա-
րանը մտան, և այնպէս խօսեցան՝
որ խիստ շատ Հրէաներ և Յոյներ
2 հաւատացին։ Բայց չհաւատացող
Հրէաները դրդռեցին ու չարութեան
գրգռեցին հեթանոսներուն սիրտը
3 եղբայրներուն դէմ։ Իսկ անոնք
շատ ժամանակ հոն կենալով՝ հա-
մարձակ կը քարոզէին Տէրոջմով,
որ իր շնորհաց խօսքին վկայէր,
և նշաններ ու հրաշքներ ընել կու-
4 տար անոնց ձեռքովը։ Եւ քա-
ղաքին բազմութեանը մէջ երկպա-
ռակութիւն մը եղաւ. ոմանք Հր-
էաներուն կողմն էին, ոմանք
5 ալ Առաքեալներուն։ Ու երբոր
հեթանոսները և Հրէաները իրենց
իշխաններովը վրայ յարձակեցան՝
զանոնք նախատելու ու քարկո-
6 ծելու, Իրենք իմանալով՝ Լիկայո-
նացւոց քաղաքները Փռիգիան՝
Լիւստրա ու Դերբէ, և շրջակայ
տեղուանքը, ու հոն աւետարանը
7 կը քարոզէին։ Եւ Լիւստրայի մէջ մարդ մը
նստեր էր՝ ոտքերովը տկար, իր մօր
որովայնէն կաղ եղած, որ քնաւ
8 քալած չէր։ Անիկայ Պօղոսին
խօսքերը մտիկ կ'ընէր. անիկայ ալ
նայեցաւ անոր՝ և տեսնելով թէ
9 բժշկուելու հաւատք ունի, Բարձր
ձայնով մը ըսաւ. Ելիր ոտքերուդ
վրայ շիտակ կայնէ. ան ալ ցատ-
10 կելով կը քալէր։ Եւ ժողո-
վուրդները երբոր Պօղոսին բրածը
տեսան՝ ձայներնին վերցնելով Լի-
կայոնարէն ըսին. Աստուածները
մարդոց նմանութիւնով մեզի իջեր
11 են։ Ու Բառնաբասին Դիոս կը
կանչէին, և Պօղոսին Հերմէս,
ինչու որ անիկայ էր գլխաւոր խո-
12 սողը։ Իսկ քաղաքին առջևը և-
ղած Դիոսին քուրմը ցուլեր և
պսակներ բերելով դռներուն առ-
ջևը, բազմութեանը հետ մէկտեղ
13 կ'ուզէր որ զոհ ընէ։ Բայց Բառ-
նաբաս ու Պօղոս առաքեալները
երբոր լսեցին, Իրենց հանդերձները
պատռելով՝ յուրա ցատկեցին բազ-
մութեանը մէջ. կ'աղաղակէին,
14 Ու կ'ըսէին. Մարդիկ՝ Ինչո՞ւ հա-
մար ատ բաները կ'ընէք. Մենք ալ
ձեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ
ենք, ու կը քարոզենք ձեզի Որ ատ
փուճ բաներէն Կենդանի Աստու-
ծոյն դառնաք, Որ ինքը ստեղծեց
երկինքը ու երկիրը և ծովը, ու բոլոր
15 անոնց մէջի եղածները։ Որ ան-

Ցամք Տեառն 45

/ Ես. խթ. 14։ Ամբ. ա. 5։

* Կ՚շաբթու մէջ

Գլ. ժա. 23։ ժգ. 21։

Տիտ. բ. 11։ Երբ. ժբ. 15։ ա Պետ. ե. 12։

Գլ. ժբ. 6։ ա Պետ. դ. 4։ Յուդ. 10։

Մատ. ժ. 6։ Գլ. դ. 26։ Հմբ. 26։ Հռով. ա. 16։

Եղ. լբ. 10։ բ Օր. լբ. 21։ Ես. ծե. 5։ Մատ. իա. 43։ Հռով. ժ. 19։

Գլ. ժբ. 6։ Իբ. 28։

Ես. խբ. 6։ խթ. 6։ Դան. բ. 32։

Գլ. բ. 47։

Տիմ. գ. 11։

Մատ. ժ. 14։ Մար. գ. 11։ Ղուկ. թ. 5։ Գլ. ժբ. 6։

Մատ. ե. 12։ Յօհ. ժգ. 22։ Գլ. բ. 46։

կերտները Հաւատքի և Համբերութեան մէջ. 26 Եւքը Անտիոք գառնալով՝ կը պատմեն եղբայրներուն ո՛րչափ բան որ Աստուած ըրեր էր իրենց։

– Մար. ժգ. 20։ Երբ. բ. 4։

Յօ. Տ. 46

Գլ. ժգ. 3։

Տիմ. գ. 11։

Մատ. ժ. 23։

Գլ. գ. 2։

Գլ. բ. 10։ Իբ. 6։

Դան. բ. 46։

Մատ. իգ. 65։

Գլ. ժ. 26։

Յակ. ե. 17։ Յուդ. ժե. 10։

Գործ. ժե. 21։ գ Թագ. ժգ. 13։ Երեմ. ժգ. 22։ Ամով. բ. 4։ ա Կոր. ը. 4։

ա Թես. ա. 9։

Ծն. ա. 1։ Սաղ. լգ. 6։ Ճխզ. 6։ Յուդ. ժգ. 7։

Սայ. ձա. 12։ Գլ. ժէ. 30։ ա Պետ. գ. 3։

Ցամի Ցեառն 46

յԳԼ. ԺԷ. 27, Հառվ. ա. 20,
ՂԱԼ. Իգ. 4, բ Օր. Ժա. 14, Իբ. 12, Ցոր. Ե. 10, Սաղ. կե. 10, կը. 9, Ճխէ. 8, Երեմ. Ժգ. 22, Մաա. Ե. 45,
* Ո՛ՉԽԱՑՈՒԹԻՒՆ
† Ո՛ՉԽԱՑՈՒԹԻՒՆ
ֆ ԳԼ. Ժգ. 45,
ՀԲ ԿՈՐ. Ժա. 25, Բ ՏԻՄ. գ. 11,

յ Մաա. Իբ. 19,

ՆԳԼ. Ժա. 23, Ժգ. 43,
ՂՄաա. Ժ. 38, Ժգ. 24, Ղա. Իր. 28, 29, Հեզռվ. բ. 17, Բ ՏԻՄ. բ. 11, 12, գ. 12,
ՀՏիտ. ա. 5,

ՂԳԼ. Ժգ. 1, 3,
ՀԳԼ. Ժե. 40,
ԼԳԼ. Ժե. 4, 12, իա. 19,
ՀՀԱ ԿՈՐ. Ժգ. 9, Բ ԿՈՐ. բ. 12, Կող. գ. 3, Ցայտ. գ. 8,

ՀԳԱԼ. բ. 12,
ՔՆԴՒ. Ժե. 10, ՂԱ. Ժբ. 3,

Ցա. Ս. 51
ֆՑՕՂ. Է. 22, Հմր 5, Գաղ. Ե. 2, Փիլ. գ. 2, Կող. բ. 8, 11, 16,
Ցա. Ս. 52

ցած դարերուն մէջ թող տուաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները
16 երթալու։ Այսու ամենայնիւ ինքզինքը առանց վկայութեան չթողուց, բարերարութիւնով՝ երկինքէն * ձեզի անձրևներ՝ ու պտղաբեր եղանակներ տալով, կերակուրնեբով և ուրախութիւնով † ձեր սիրտերը լեցընելով։ 17 Ու ասանկ բաները ըսելով՝ հազիւ կրցան ժողովուրդները դադրեցընել, որ իրենց զոհ չընեն։
18 Սակայն ֆԱնտիոքէն ու Իկոնիոնէն Հրէաներ հասան, ու ժողովուրդները համոզեցին, յև Պօղոսը քարկոծեցին, ու քաղաքէն դուրս քաշեցին՝ կարծելով թէ մեռած է։
19 Բայց աշակերտները երբոր անոր բոլորտիքը պատեցին, եւս քաղաքը մտաւ. ու հետևեալ օրը Բառնաբասին հետ Մկոնեղ Դերբէ
20 եւս։ Եւ անոնք ան քաղաքին մէջ աւետարանը քարոզելով, յու շատերը աշակերտ ընելով՝ Լիւստրա ու Իկոնիոն և Անտիոք դարձան,
21 ձան, Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և Նյորդորելով որ հաստատ մնան հաւատքի մէջ. և ԱՒԸՆԷՒ, թէ շատ նեղութիւններով պէտք է մեզի Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ 22 Ու երբոր ամենուն ամէն մէկ եկեղեցիին երէցներ ձեռնադրեցին, ծոմապահութեամբ աղօթք ընելով՝ զանոնք յանձնեցին Տէրոջը՝ որուն հաւատացեր էին։
23 Եւ Պիսիդիայի մէջէն պտըտելով՝
24 եկան Պամփիւլիա։ Պերգէի մէջ ալ Տէր-ը խօսքը խօսելէն ետև՝
25 Աթալիա իջան։ Անկէ ալ նաւով Անտիոք գացին, Նուսկից որ Աստուծոյ շնորհքին յանձնուած էին ան գործին համար՝ որ կատարեցին։
26 Ու երբոր եկան, եկեղեցին մկոնեղ ժողվելով՝ Նպատմեցին ինչ որ Աստուած բերէր էր իրենց հետ, և որ Հեթանոսներուն հաւատքի դուռ
27 բացեր էր։ Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ կեցան։

ԳԼ. ԺԶ

1 Մեծ հակառակութիւն կը ծագի Թլփատութեան վրայով։ 6 Ասոր համար առաքեալները ժողովելու կ'երթեն, 22 և նամակ գրելով եկեղեցիներուն, իրենց վճիռը կը խրկեն անոնց։ 36 Պօղոս և Բառնաբաս կը խորհին որ մկոնեղ երթան եկեղեցիները այցելութիւն ընելու, բայց մէջերնին վէճ մը ծագելով՝ իրարմէ կը զատուին։

1 Ու Մկ քանիները Հրէաստանէն իջած՝ եղբայրներուն կը սորվեցընէին՝ որ Եթէ Մովսէսին սովորութեանը համեմատ չթլփատուիք, չէք կրնար փրկուիլ։
2 Ուստի Պօղոս և Բառնաբաս ա-

Ցամի Ցեառն 52

Ժ Գաղ. բ. 1,

ՅՀառվ. Ժե. 24, ա Կոր. Ժգ. 6, 11,
ՂԳԼ. Ժգ. 26,

ՆՀԺ 12, Գլ. Ժգ. 26, իա. 19,

ՀԳԼ. ա,

ՅԳԼ. Ժ. 20, Ժա. 12,

ՃՄԱՐ. Իբ. 9, ԳԼ. ա. 24,
ՆԳԼ. Ժ. 44,
ԼՀառվ. Ժ. 12,
ՆԳԼ. Ժ. 15, 28, 43, ա Կոր. ա. 2, ա Պետ. ա. 22,
ՃՄաա. Իգ. 4, Գաղ. Ե. 1,
ԼՀառվ. գ. 24, Եփե. բ. 8, Տիտ. բ. 11, գ. 4, 5,

ՀԳԼ. Ժգ. 26,

ՅԳԼ. Ժբ. 17,

ՂՀԲ. 7,

ֆՂՄառվ. Թ. 11, 12,

Ցամի Տեառն 52

17 անիկայ . Որ մնացած մարդիկը Տէրը փնտռեն , և բոլոր հեթանոսները՝ որոնց վրայ իմ անունս կոչուած է , կ'ըսէ Տէրը՝ որ ասոնք բաները
18 կ'ընէ : Յայտնի է Տէրոջը իր բոլոր գործերը աշխարհիս սկիզբէն հե-
19 տէ : Ասոր համար ես յորմար կը դատեմ նեղութիւն չտալ անոնց՝ որ հեթանոսներէն Աստուծոյ կը
20 դառնան . հապա թուղթ մը գրել անոնց՝ որ ետ կենան կոզոց պղծութիւններէն , և պոռնկութենէ , ու խեղդուածէ , և արիւ-
21 նէ : Ինչու որ Մովսէս հին դարերէն ի վեր ամէն քաղաքի մէջ զինքը քարոզողներ ունի , և ժողովարաններու մէջ ամէն շաբաթ օր կը կարդացուի :
22 Ն ատենը առաքեալներուն ու երէցներուն՝ բոլոր եկեղեցիին հետ միտեղ ազէկ երևցաւ՝ որ իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք խրկեն Պօղոսին ու Բառնաբասին հետ , Բարսաբա մականուանեալ Յուդան և Շիղան՝ գլխաւոր մար-
23 դիկ երէց եղբայրներուն մէջ . Ու անոնց ձեռքովը ետ խրկեցին այսպէս գրուած :

Առաքեալներ ու երէցներ և եղբայրներ՝ Անտիոքի ու Սիւրիայի և Կիլիկիայի մէկ հեթանոսներէն և-
24 դած եղբայրներուդ ողջոյն : Որովհետև լսեցինք՝ թէ Հոմանք մեր մէջէն ելլելով՝ ձեզ խօսքերով խռովեցուցեր են՝ և ձեր անձերը խախտեր են , ըսելով թէ պէտք է թլփատուիլ ու օրէնքը պահել , որ անոնց մինչ-
25 ու երկնքը պահել , որ անոնց մինչ . Մեզի՝ միաբանութեամբ ժողովուածներուս ազէկ երևցաւ , որ մարդիկ ընտրելով ձեզի խրկենք մեր սիրելիներուն Բառնաբասին ու Պօղոսին
26 հետ , Որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը համար անձերնին
27 մատնած մարդիկ են : Ուստի խրկեցինք Յուդան և Շիղան , որ իրենք ալ բերնով նոյն բաները
28 յայտնեն : Ինչու որ ազէկ երևցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ՝ ձեր վրայ աւելի բեռ չդնել , աս հարկաւոր բաներէս զատ ,
29 Որ ետ կենաք կուռքերու զոհուածէ , և արիւնէ , ու խեղդուածէ , և պոռնկութենէ . որ աս բաներէն ինքզինքնիդ պահելով՝ ազէկ պիտի ընէք : Ողջ եղէք :
30 Անոնք ալ ճամբայ դրուելով՝ Անտիոք գացին , և ժողովուրդը միտեղ ժողվելով՝ թուղթը տուին :
31 Ու երբոր կարդացին , ուրախացան
32 ան մխիթարութեանը վրայ : Իսկ Յուդա ու Շիղա՝ որ իրենք ալ մարգարէ էին , շատ խօսքերով
33 մխիթարեցին եղբայրները՝ ու հաս-
տատեցին : Եւ ատեն մը հոն կենալէն ետև՝ եղբայրներէն խաղաղութեամբ ճամբայ դրուեցան ա-
34 ռաքեալներուն Բառնաբասէ : Բայց Շիղային ազէկ երևցաւ հոն մը-
35 նալ : Պօղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ կը կենային , և ուրիշ շատերու հետ Տէրոջը խօսքը կը սորվեցընէին ու կը քարոզէին :
36 Եւ քանի մը օրերէ ետև Պօղոս ըսաւ Բառնաբասին . Դառնանք ու այցելութիւն ընենք եղբայրներուն՝ ամէն մէկ քաղաքները , ուր որ Տէրոջը խօսքը քարոզեցինք , Ի՞նչ-
37 պէս թէ ինչպէս են : Իսկ Բառնաբաս կ'ուզէր որ Յովհաննէսն ալ առնեն , որ Մարկոս կ'ըսուէր .
38 Բայց Պօղոս արժան չսեպեց որ Պամփիլիայի մէջ իրենցմէ զատուողը՝ ու իրենց հետը գործի չե-
39 կողը հետերնին առնեն : Այսպէս դէլէրէն անմիաբանութիւն մը եղաւ , մինչև որ իրարմէ զատուեցան . և Բառնաբաս առաւ Մարկո-
40 սը՝ ու նաւով կիպրոս գնաց : Պօղոսն ալ Շիղան ընտրեց՝ ու ելաւ , եղբայրներէն Աստուծոյ շնորհացը
41 յանձնուելով . Եւ Սիւրիայի ու Կիլիկիայի մէջ կը պտրտէր , ու եկեղեցիները կը հաստատէր :

Ցամի Տեառն 52

բ ա Կոր . Ժգ . 11 : Երբ . ժա . 31 :

ե Տես Հմր 28 : յ ա Թես . ա . 9 :

ն Ծն . լե . 2 , Եւ . ի . 3 . 23 , Եզեկ . ի . 30 , ա Կոր . բ . 1 , ժ . 20 , 28 , Ցայտ . բ . 14 . 20 :

ղ ա Կոր . գ . 9 , 18 : Գաղ . ե . 19 : Եփես . ե . 3 : Կող . գ . 5 , ա Թես . գ . 3 , ա Պետ . գ . 3 :

ծ Ծն . թ . 4 , Ղե . գ . 17 , Բ Օր . ժբ . 16 , 23 :

ճ Գլ . ժգ . 15 , 27 :

չ Գլ . ա . 23 :

ի Հմր 1 : Գաղ . բ . 4 : ե . 12 : Տիտ . ա . 10 , 11 :

ձ Գլ . ժգ . 50 : ժդ . 19 : ա Կոր . ժե . 30 : բ Կոր . ժա . 23 , 26 :

ա Հմր 20 : Գլ . իա . 25 : Ցայտ . բ . 14 . 20 :

Ղղ . ժէ . 14 :

ա Գլ . ժգ . 21 : ժբ . 23 :

Գ Ի Ա Զ

1 Պօղոս կը թլփատէ Տիմոթէոսը . 7 Սուրբ Հոգիին հրամանովը քաղաքները կը պտրտի . 14 Լիդիան հաւատքի կը բերէ , 16 և հարցուկ ոգի ունեցող աղախին մը կը բժշկէ : 19 Ան պատճառով Պօղոսը ու Շիղան կը ծեծուին , և բանտը կը դրուին : 26 Բանտին դռները հրաշքով կը բացուին : 31 Բանտապետը դարձի կու գայ . 37 և անոնք կ'ազատուին :

1 Ետ Հասաւ Դերբէ ու Լիւստրա . և ահա հոն աշակերտ մը կար
Տիմոթէոս անունով , որ հաւատացեալ Հրեայ կնկան մը զաւակ
2 էր , և Հայրը Յոյն էր . Որ Լիւստրացի ու Իկոնացի եղբայրներէն
3 ալ Բարի վկայուած էր : Պօղոս ուզեց որ ասիկայ իր հետը ելլէ , և առաւ թլփատեց զանիկայ՝ ան տեղուանքը եղած Հրէաներուն համար . ինչու որ ամէնն ալ գիտէին
4 թէ անոր Հայրը Յոյն էր : Ու քաղաքներէն անցնելով , Երուսաղէմ եղած առաքեալներէն ու երէցներէն ապսպրուած հրամանները կ'աւանդէին անոնց՝ որ պահեն :
5 Եկեղեցիներն ալ հաւատքի մէջ կը հաստատուէին , և օրէ օր անոնց թիւը կ'աւելնար :
6 Եւ Փռիւգիա ու Գաղատացւոց կողմերը պտրտեցան . և Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Ասիոյ
7 խօսքը Ասիայի մէջ չխօսին , Միսիայի կողմերը որ եկան , կը ջա-

ե Գլ . ժգ . 6 :

Բ Գլ . ժթ . 22 : Հռով . ժգ . 21 : ա Կոր . գ . 17 : Փիլ . բ . 19 : ա Թես . գ . 2 : ա Տիմ . ա . 2 : բ Տիմ . ա . 2 :

Բ բ Տիմ . ա . 5 :

Գ Գլ . զ . 3 : Ես Գաղ . բ . 3 , 5 . 2 :

Ը Գլ . ժե . 28 , 29 :

Ի Գլ . ժե . 41 :

Ցամի Տեառն 53

Նային դէպ 'ի Բիւթանիա եր-
թալ . և *Ցիսուսի Հոգին թող
8 չտուաւ անոնց : Եւ Միւսիայի
քովէն անցնելով՝ ‡Տրովադա ի-
9 ջան : Եւ հոն գիշերը Պօղոսին
տեսիլք մը երեցաւ . Ր Մակեդոնա-
ցի մարդ մը կայներ կ'աղաչէր ա-
նոր՝ ու կ'ըսէր . Մակեդոնիա
10 անցիր , և օդնէ մեզի : Ու երբոր
ան տեսիլքը տեսաւ , շուտ մը ու-
զեցինք †Մակեդոնիա ելլել , հաս-
կրնալով որ Տէրը մեզ կը հրաւի-
րէ անոնց աւետարան քարոզելու :
11 Ուստի Նաւով Տրովադայէն ե-
լանք՝ ու շիտակ Սամոթրակէ գա-
ցինք , ու հետևեալ օրը Նէապո-
12 լիս . Եւ անկէ ալ †Փիլիպպէ , որ
է Մակեդոնիայի Ա' մասին գլխա-
ւոր քաղաքը՝ †Կողոնիա . և ան
քաղաքին մէջ քանի մը օր կե-
13 ցանք . Ու շաբաթ օրը քաղաքէն
դուրս ելանք գետեզերքին քովը՝
ուր որ սովորութիւն ունէին ա-
ղօթք ընելու , ու նստելով՝ ժող-
վուած կիներուն կը խօսէինք :
14 Եւ Թիւատիր քաղաքէն ծիրա-
նավաճառ կին մը՝ Լիդիա ա-
նունն , որ աստուածավախ մէկ մըն
էր , մեր կ'ըսէր . Տէրոջը սիրտը
Տէրը բացաւ Պօղոսին բանեներուն
15 ուշադրութիւն ընելու : Ու երբոր
մկրտուեցաւ ինքը և իր տունը ,
աղաչեց ու բաւ . Թէ որ զիս Տէ-
րոջը հաւատացեալը կը սեպէք ,
իմ տունս մտէք բնակեցէք . Եւ
ստիպելով տարաւ մեզ :
16 Ու եղաւ որ երբ մենք աղօթքի
կ'երթայինք , աղախին մը պատա-
հեցաւ մեզի , որ †Հարցուկ ոգի
ունէր , Նոր գուշակութիւն ընե-
լով՝ իր տէրերուն շատ վաստակ
17 կը բերէր : Ասիկայ Պօղոսին և
մեր ետևէն իյնալով կը պոռար՝
ու կ'ըսէր . Ա՛ս մարդիկը Բարձ-
րեալ Աստուծոյ ծառաներն են ,
որ ‡մեզի փրկութեան ճամբան կը
18 քարոզեն : Եւ ասիկա շատ օրեր
կ'ընէր . իսկ Պօղոս վշտանալով՝
դարձաւ ու բաւ ան ոգիին . Ցի-
սուս Քրիստոսի անունովը Հրաման
կ'ընեմ քեզի , ելլէր ատկէ . Եւ նոյն
19 ժամուն ելաւ : Ըներոր տեսան
անոր տէրերը՝ որ իրենց վաստակին
յոյսը կորնցան , §Պօղոսը ու Շի-
ղան բռնեցին՝ ու /հրապարակը
քաշեցին իշխաններուն առջեւ :
20 Եւ տարին զանոնք զօրագլուխնե-
րուն քովը՝ ու բսին . Ա՛ս մարդիկ-
21 ները /մեր քաղաքը իրար կ'անգր-
նեն . իրենք Հրեայ են , Եւ անսկ
սովորութիւններ կը քարոզեն , որ
արժան չէ մեզի ընդունիլ , ոչ ալ
ընել , ինչու որ Հռովմայեցի ենք :
22 Եւ բազմութիւնը անոնց վրայ դի-
զուեցաւ . զօրագլուխներն ալ
բռնութեամբ անոնց հանդերձները
հանեցին , Ա և հրաման ըրին որ ջո-
23 Նռէ ծեծեն . Եւ անոնց շատ վէր-
քեր տալէն ետև՝ բանտը դրին ,
պատուիրելով բանտապետին որ
զգուշութեամբ պահէ զանոնք :
24 Ան ալ ասանկ հրաման առնելով՝
զանոնք ներսի բանտը դրաւ , ու
ոտքերնին կոճղի մէջ ամուրցուց :
25 Եւ կէս գիշերին Պօղոս ու Շի-
ղա աղօթք կ'ընէին՝ և զԱստուած
կ'օրհնէին , ու բանտարկեալներն ալ
26 անոնց մտիկ կ'ընէին : Ընդ յան-
կարծակի մեծ շարժ մը եղաւ , ա-
նանկ որ բանտին հիմերը սասանե-
ցան , և անմիջապէս Բոլոր դռները
բացուեցան , ու ամենուն կապերը
27 արձկուեցան : Եւ բանտապետը
երբոր արթնցաւ՝ ու բանտին դռ-
ները բացուած տեսաւ , թուրը
քաշեց՝ և ինքզինքը պիտի սպան-
նէր , կարծելով թէ կապուածները
28 փախեր են : Բայց Պօղոս բարձր
ձայնով կանչեց ու բաւ . Դուն
քու անձիդ վնաս մը մի ըներ , ին-
29 չու որ ամենքս ալ հոս ենք : Եւ
անիկայ ճրագ մը ուզեց ու ներս
վազեց , և դողալով՝ Պօղոսին ու
30 Շիղային առջեւը ինկաւ . Եւ ա-
նոնք դուրս բերելով՝ բաւ . Ցէ-
րեր՝ ինծի ի՞նչ պէտք է ընել , որ
31 փրկուիմ : Ընոնք ալ բսին . Դէա-
ւատա Տէր Յիսուս Քրիստոսին ,
ու պիտի փրկուիս դուն՝ և քու
32 տունդ : Եւ Տէրոջը խօսքը խօսե-
ցան անոր , ու ան ամենուն՝ որ իր
33 տանը մէջն էին : Եւ առաւ զա-
նոնք գիշերուան նոյն ժամուն՝ ու
անոնց վէրքերը լուացց , և շուտ մը
մկրտուեցաւ ինքը ու բոլոր իրեն-
34 ները : Եւ զանոնք իր տունը տա-
նելով , Նռէնց առջեւը սեղան դրաւ ,
և բոլոր տունովը ուրախ եղաւ՝ Ա-
35 տուծոյ հաւատալով : Ու երբոր
առտու եղաւ , զօրագլուխները
խրկեցին սպասաւորները ու բ-
36 սին . Արձակէ ատ մարդիկը : Բան-
տապետն ալ ան խօսքերը Պօղոսին
պատմեց թէ , Զօրագլուխները
խրկեցին որ արձակուիք . ուստի
հիմա ելէք՝ և խաղաղութեամբ գա-
37 ցէք : Բայց Պօղոս բսաւ անոնց .
Մեզ յայտնապէս ծեծելով՝ որ չը-
դատապարտուած Հռովմայեցի
մարդիկ ենք , բանտը դրին , ու
հիմա գաղտնի կը հանեն մեզ .
առանկ չէ , հապա թող իրենք
38 գան ու մեզ հանեն : Եւ սպասա-
ւորները զօրագլուխներուն պատմե-
ցին ան խօսքերը . անոնք ալ երբոր
լսեցին թէ Հռովմայեցի են , վախ-

Ցամի Տեառն 53

Ն բ Կոր . գ . 5 ; ժա . 23 , 25 ; աԹես . բ . 2 ։

Ղկ . գ . 31 ։

Գկ . ե . 19 ; ԺԲ . է . 10 ։

Ղկ . գ . 10 ; Գկ . բ . 37 ; Թ . 6 ։

ԳՅՈՆ . գ . 16 , 36 ; է . 47 ; ա Յով . ե . 10 ։

Ղկ . ե . 29 ; ԺԹ . 6 ։

Գկ . իբ . 25 ։

Ցամի Տեառն 53

- Մատ. ը. 34։
Հ Հմր 14։

ցան , ու եկան քաղցրութեամբ
39 խօսեցան անոնց հետ . Եւ դուրս
հանելով՝ կ'աղաչէին որ ան քա-
40 ղաքէն երթան ։ Անոնք ալ բան-
տէն ելլելով՝ Լիդիային փո՛նը
մտան , ու եղբայրները տեսան՝ ու
մխիթարեցին զանոնք , և գացին ։

Գ Լ · Ժ Է

1 Պօղոս կը քարոզէ Թեսաղոնիկէի մէջ, 4 ուր
ոմանք կը հաւատան , և ոմանք կը հալածեն
զանիկայ ։ 10 Պօղոս Բերիա կը խրկուի , ու
հոն ալ կը քարոզէ · 13 Թեսաղոնիկեցիներէն
հալածուած՝ 15 Աթէնք կ'երթայ , ուր տեղ
կը քարոզէ անոնց չճանչցած կենդանի Ա-
ստուածը ։ 34 Շատ մարդիկ Քրիստոսի կը
հաւատան ։

1 Եւ Ամփիպօլիսէն ու Ապողոնիա-
յէն պտըտելով՝ Թեսաղոնիկէ
եկան , ուր որ Հրէաները ժողո-
2 վարան մը ունէին ։ Պօղոս ալ իր
սովորութեանը պէս անոնց մէջը
մտաւ , և իրեք շաբաթ օր խօսեցաւ
3 անոնց հետ գիրքերէն , Մեկնելով
և առջևնին դնելով , թէ Քրիստոս
էր Քրիստոսի յարչարուիլ , ու մե-
ռելներէն յարութիւն առնել , և
թէ՝ Ան Յիսուսը որ ես ձեզի կը
քարոզեմ , ըսաւ , Քրիստոսն է ։
4 Եւ անոնցմէ ոմանք հաւատացին ,
ու Պօղոսին և Շիղային հետ մի-
ացան , աստուածավախ Յոյներէն
ալ մեծ բազմութիւն , ու երևելի
կիներէն ալ հազարապետները քիչ-
5 ուր չէին ։ Բայց չհաւատացող
Հրէաները նախանձեցան , և քանի
մը դատարկապորտ անօրէն մար-
դիկ առնելով՝ աղմուկ հանեցին ,
ու քաղաքը տակնուվրայ բրին . և
Յասոնին տանը վրայ յարձակելով՝
կ'ուզէին զանոնք ժողովքին առջևը
6 տանիլ ։ Ու երբոր զանոնք չը-
գտան , Յասոնը ու մէկ քանի եղ-
բայրներ քաշելով տարին քաղա-
քապետներուն առջևը , կանչուրտ-
տելով՝ Թէ Ա՛նոնք որ աշխարհը
տակնուվրայ բրին , հոս ալ հասեր
7 են . Որոնք Յասոնը ընդուներ է .
և ասոնք ամէնը կայսրին հրամա-
նացը դէմ կը գործեն , Բսնելով
Թէ՝ ուրիշ Թագաւոր մը կայ Յի-
8 սուս ։ Եւ խռովեցուցին ժողովուր-
դը ու քաղաքապետները , որ աս
9 բաները կը լսէին ։ Բայց երբոր
Յասոնէն և ուրիշներէն երաշխաւո-
րութիւն առին , արձակեցին զա-
10 նոնք ։ Էսկ եղբայրները շուտ մը
գիշերով Պօղոսը և Շիղան Բերիա
խրկեցին . որոնք հոն հասնելով՝
11 Հրէից ժողովարանը գացին ։ Ա-
սոնք Թեսաղոնիկէի մէջ եղողներէն
աւելի ազնիւ մարդիկ էին , որ
Ա՛նոնք խօսքը կատարեալ յօ-
ժարութեամբ ընդունեցին , և Բա-

Ցամի Տեառն 53

մէն օր Գիրքերը կը քննէին՝ Թէ
12 ասոնք բաները սա՞նկ է ։ Ուստի
անոնցմէ շատերը հաւատացին . և
պատուաւոր Յոյն կիներէն՝ ու
մարդիկներէն հազարապետներ ալ
13 քիչ ըր չէին ։ Բայց երբոր իմա-
ցան Թեսաղոնիկեցի Հրէաները
Թէ Բերիայի մէջ ալ Աստուծոյ
խօսքը քարոզուեցաւ Պօղոսէն ,
հոն ալ եկան՝ ու ժողովուրդը
14 դրդռեցին ։ Ի՛ն ատենը եղբայր-
ները շուտ մը Պօղոսը խրկեցին՝
որ մինչև ծովեզերքը երթայ · բայց
Շիղա ու Տիմոթէոս հոն մնացին ։
15 Եւ անոնք որ Պօղոսը կը տանէին ,
մինչև Աթէնք բերին անիկայ . և
Երէն հրաման առնելով Շիղային ու
Տիմոթէոսին համար՝ որ շուտով
իրեն գան , գացին ։
16 Եւ Պօղոս Աթէնքի մէջ անոնց
սպասելով՝ Իր հոգին անհանդիստ
էր Նէրսի դին , վասն զի քաղաքը
բոլորովին կռապաշտութեան մէջ
17 ընկղմած կը տեսնէր ։ Ուստի ժո-
ղովարանին մէջ կը խօսէր Հրէա-
ներուն ու բարեպաշտ մարդոց , և
ամէն օր հրապարակներուն մէջ ո-
18 րոնց որ պատահէր ։ Ու Եպիկու-
րեան և Ստոյիկեան փիլիսոփաննե-
րէն մէկ քանիները իրեն հետ հա-
կաճառութիւն կ'ընէին . և ոմանք
կ'րսէին . Ա՛ս սերմանաքաղը ի՞նչ
րսել կ'ուզէ . ուրիշներն ալ՝ Ի՛ր-
է՛ն . Կ'երևի Թէ Ա՛նէ Հը օտար աս-
տուածներու քարոզիչ է . ինչու
որ Յիսուսը ու յարութիւնը կ'ա-
19 ւետարանէր անոնց ։ Եւ առին
անիկայ Արիսպագոսը տարին , ու
